ՎԱՐԴ
ԲԴՈՅԱՆ

ԱԿԱՅՔԻ ՀԱՅՈՑ ԱՌԳԱՅԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՎԵՍՏԸ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2014

ՀՏԴ 391/395=919.81
ԳՄԴ 63.5(2Հ)
Ք 409

Կազմեց, առաջաբանը գրեց և տեքստային անհրաժեշտ ծանոթագրումները կատարեց **Ռաֆայել Ղարիբյանը**

Նկարիչներ՝ **Հենրիկ Մամյան**
Խորեն Հակոբյան

Վարդ Քոջյան
Ք 409 Ջավախքի հայոց ազգագրությունը և ժողովրդական բանարվեստը,
Եր., ԵՊՀ հրատարակչություն, 2014.- էջ:

Ժողովածուում ամփոփված Արզրում-Կարինյան բնաշխարհի հարուստ հիմնաշերտով Ջավախքի նախագո ազգագրությունը և ժողովրդական բանարվեստի գոհարները ոչ միայն ջավախահայոց աշխարհային սարթ նկարագիրը, կենսասիրությունը, փշոտ միտքն ու անբավ հարստությունն են, այլև հնամենի ժողովրդի հոգու հանքերակից պեղված ազնվափայլ ոսկու անհատնելի պաշարը, որ հավիտենապես առնչելու է մեզ Անհունի մեծազարմ անդաստանի համատիեզերական կշռույթին:

ՀՏԴ 391/395=919.81
ԳՄԴ 63.5(2Հ)

ISBN 978-5-8084-1882-0

© ԵՊՀ հրատարակչություն, 2014
© Կազմողի համար. 2014

Գիրքը հրատարակվում է Գ. Գյուլբենկյան հիմնադրամի աջակցությամբ:

CALOUSTE
GULBENKIAN
FOUNDATION

Հարգելի ընկեր Ստ. Դոնդոշյան

Երբ հիշում եմ, ապա դարերի ստվերում մեր հեղինակած «Զարմանքի ևոց ժողովածուն» քաղաքակրթության ժողովածուն, «Ամենատարածված գիրք» հանրագիտարանը հայրենի գրքի դասագիրքն է հարկավոր:

Դիմենք մի մեծագրաքննի ու գրականագետի ուսումնասիրությունը: Լիովին ժողովածուն նշանակալից է. այն մեր դարի գրքագիտության մեջ նոր էջ է բացել: Այս հեղինակի գրքերի մեջ հայերենի ազգագրության ոլորտի հոսանքներն ու գաղափարները ներկայացնող գրքերի մասին:

Գանձասարի իմաստունի գանձարանում հարյուր գրքերի թարգմանությունը:

Հարգանքով՝ Ալեքսան Իսրայելյան

25.11.1985

Երևան

Առաջաբան

Վաղուց է նկատված, որ մարդկանց նման գրքերը ևս ունենում են իրենց ուրույն առաքելությունը, խորհուրդը, հմայքն ու համբավը, իրենց ճակատագիրը՝ հանդերձ իրենց արտաքին շուքուփայլի կամ առանց դրա... Ճակատագիրը խորքայինի կրողն է, խորքայինի առարկայացված մարմնավորումը, որտեղ գեղազարդությունը ընդամենը արտաքին է, գրեթե զուրկ որևէ դերակատարումից, ուստի որոշ գրքեր, առանձին մեծ անհատների նման, լինելության առանձնակի հետագիծ են ունենում, որոնցում հստակ ցոլանում են ժամանակն ու բարքերը, հազարամյակների կյանքը՝ ոճական իրենց հույժ հակադրամետ կենսափիլիսոփայությամբ, բնական-երևակայածին դարձդարձիկ պատկերներում, զավեշտաողբերգական իրենց բազմակերպության մեջ:

Ցուրտ, անլույս 90-ականների սկզբներին, երբ դժնի Սումգայիթն ու աղետալի երկրաշարժը, պատերազմն ու շրջափակումը վաղուց հայաստանյան իրողություններ էին, և գորշ, կաթվածահար կյանքը վայրենական ռիթմեր էր պարտադրել մարդկանց, հայությունը ցավալի անկումներ արձանագրեց բազմաթիվ ոլորտներում: Կեցության համատարած մի նահանջ, որի ճզմող մամլիչի տակից կարողացավ հարաբերորեն ողջանդամ դուրս պրծնել թերևս դավթյան ոգեղեն ըմբոստանքը միայն, դարերով անպատիժ ոսոխի դեմ ահագնացած բռնկուն-պոռթկուն մեր հայրենասիրությունը՝ ազատելով մեզ դառնության լեցուն բաժակը ցմրուր ըմպելու ծանր հարկադրանքից: Հիմնախախտ, համակործան մեր իրականության դաժան ֆոնի վրա պատկերացնո՞ւմ եք, թե ինչպիսի՜ն կլիներ արցախյան մարտադաշտերում նույնպես պարտություններ արձանագրող հայության վիճակը:

Ահա այս գիտակցումով է միմիայն հարկավոր չափել նվիրյալ մեր հայորդիների սխրանքի իրոք անբաղդատելի մեծությունը, սերնդի մեծագործությունն առհասարակ Արցախյան Ազատամարտում:

Ինչևիցե, առանց չափազանցության, ցուրտ, անլույս տարիներին «Սովետական գրող» նշանավոր հրատարակչության գործունեությունն այլևս նույնիսկ մեզ՝ աշխատակիցներիս, մարած մեղվափեթակ էր հիշեցնում: Վաղուց հիմնանորոգման կարոտ սենյակները չէին ջեռուցվում, ելումուտ անողները դեռևս չկրճատված հատուկենտ աշխատակիցներն էին, ովքեր խմբվում էին տնօրենի աշխատասենյակում դրված միակ վառարանի շուրջ, ուր գրքերի վերածված հեղինակային հին ձեռագրեր էին նետվում տաքացնող վառարան: Օրվա վերջում որոշակիորեն հոգնած, մրսած

ու մրոտված՝ վերադառնում էինք տուն, որտեղ ժամեր անց իրական ցրտին գումարվում էր նաև հուսահատեցնող մութը, հոգում խտացող խավարը:

Խմբագիրներից մեկը, որպես ջավախքցու, ինձ է մեկնում հերթական ձեռագիրը՝ առնվազն հինգ հարյուր մեծադիր էջից բաղկացած Վարդ Բդոյանի ստվարածավալ անտիպ թղթապանակը («Ջավախքի հայ ժողովրդական բանահյուսությունը»), որը, այո, տառացիորեն դիպվածով է փրկվում կրակի բաժին դառնալուց: Տպագրության հեռանկարը այլևս անհուսորեն փակված էր, և ես, որոշ փնտրտուքներից հետո, գտա և ընտանիքին վերադարձրի բնագիրը: Հարազատները, թեպետև երախտագիտությամբ ընդունեցին իմ քայլը, սակայն ասացին, որ գիտնականի մահվանից հետո իրենք երբևէ հազիվ թե զբաղվեն այդ ձեռագրերով, ուստի ինձ ի տնօրինություն հանձնեցին հեղինակի դեռևս տպագրության չպատրաստած նաև մեկ այլ ձեռագիր («Ջավախահայոց ազգագրությունը»): Եվ թերևս այդ օրից սկսած՝ ձեռագրերը գրքի վերածելու խնդիրը պատվի գործ դարձավ ինձ համար: Թե որքան ջանացի ես այդ գործը գլուխ բերելու համար, հայտնի է շատերին: Բազմաթիվ կարող անհատներ և կազմակերպություններ լավագույն դեպքում խոստումներից այն կողմ չանցան: Տարիների ողիսականս միայն Ջավախքով, Երևանով, Հայաստանով չսահմանափակվեց: Եվ, ցավ ի սիրտ եմ ասում, չգտնվեց անգամ մեն ու մենիկ, մեկ ազգանվեր-մշակութային անձ, նույնիսկ իմ հայրենակիցներից, որ գիտակցեր այս գործի կարևորությունը, խոհեմություն ունենար փառքով ու օրհնությամբ պսակելու իր անունն ու հիշատակը: Պատրաստակամորեն ինձ վրա վերցնելով գրքի լույսընծայման հրատարակչական մասը՝ ոչ մեկին, նաև ոչ մի դեպքում երբևէ ես չեմ խնդրել. դա ես համարել եմ անարգանք նախ հեղինակի կեսդարյա խստականոն, լուռ ու տքնաջան գործունեության, ինչպես և նրա անբասիր հիշատակի հանդեպ: Ավելին, զուսպ, բայց և չմարսվող հեգնանքով, արժանապատվորեն ներկայացրել եմ խնդրի միայն բարոյական կողմը: Պարզաբանել եմ, որ ազգերը հարատևում են բացառապես հոգևոր իրենց գանձերի շնորհիվ միայն, որ, այո, մշակութային ցանկացած կորուստ աղքատացնում, բարոյազրկում և դիմազրկում է ժողովրդին ճիշտ այնպես, ինչպես փողատերերի անմտորեն վատնած միլիոնները բարոյազրկում, դիմազրկում են այն շռայլողին:

Համեստափայլ ու անվանի գիտնականի բազմամյա գործունեության արդյունքը իրոք պատմամշակութային անգնահատելի արժեք ունի, որի պատմաքաղաքական նշանակությունը անուրանալի է ապագա սերունդների համար հատկապես: Տարիներ առաջ Հովհաննես Այվազյանի նախաձեռնությամբ և իմ ներկայացմամբ Ջավախքի ՀԲՄ պաշտոնաթերթ «Ասպնջակի» 38 համարներում լույս տեսան Ջավախքի ազգագրության առանձին հատվածներ, որոնց հանդեպ անչափ մեծ հետաքրքրություն առաջացավ ընթերցողների շրջանում: Այդ պահից սկսած իմ մեջ սևեռուն գաղափար դարձավ հեղինակի երկու ծավալուն աշխատությունները միա-

սին, մեկ առանձին շքեղ հատորյակում («Ջավախքի հայոց ազգագրությունը և ժողովրդական բանարվեստը») ամփոփելու միտքը:

Տարիների հետ ինքնաբերաբար ձևավորվել էր գրքի տպագրությանը նախանձախնդիր և իմ ջանքերին անկեղծորեն սատարող ջավախահայերից կազմված մարդկանց փոքրիկ մի խումբ՝ Գևորգ Բդոյան, Հովհաննես Այվազյան, Յուրա Հովհաննիսյան, Վահագն Սարգսյան, նաև ուրիշներ էլ, ովքեր մեծարժեք այս ժողովածուն հայ ընթերցողի սեղանին դնելու համար արել են իրենց ձեռքից եկածը: Այս առումով առանձնահատուկ երախտագիտությամբ ցանկանում եմ նշել, որ ԵՊՀ հրատարակչության տնօրինության հոգածու վերաբերմունքի և Գյուլբենկյան հիմնադրամի ֆինանսական աջակցության շնորհիվ միայն ձեռագիրը գրքի վերածվեց և դարձավ ընթերցող շրջանակների սեփականությունը:

Ջավախքի հայոց բանահյուսության հավաքումն սկսվել է 19-րդ դարի վերջերին՝ ականավոր ազգագրագետ և բանահավաք Երվանդ Լալայանի կողմից: Ջավախքում ուսուցչությամբ զբաղվելու տարիներին մի Կարծախցուց (1888թ. մարտ) Ե. Լալայանը գրի է առնում «Միսո» խորագրով հեքիաթը, որը ինքն էլ հետագայում հրատարակել է 1910 թվականին «Ազգագրական հանդեսի» մի համարում (ԱՀ, 19, 1910, էջ 158-163):

Այնուհետև Երվանդ Լալայանը, շարունակելով սկզբնավորած գործը, Թիֆլիսում հրատարակել է «Ջավախքի բուրմունք» բանահյուսական գողտրիկ ժողովածուն, որի նյութերը ամենայն հավանականությամբ գրառել է հենց ինքը միևնույն՝ 1880-ական թվականներին, ուր զետեղված են եղել հայ ժողովրդի կենցաղն արտացոլող երգեր, աղոթքներ, պատմական, կրոնական ավանդություններ:

1898-ին Երվանդ Լալայանը «Ազգագրական հանդեսի» էջերում զետեղել է նաև Չամղուրա գյուղի բնակիչ, բանահավաք Հ. Ազնավուրյանի ձեռքով գրի առնված որոշ քանակի Վիճակի երգեր (ԱՀ, 3, 1898, էջ 91-104): Ենթադրելի է, որ Ազնավուրյանն այդ երգերը գրի է առել հենց Ե. Լալայանի հանձնարարությամբ:

1909-1910 թվականներին Ե. Լալայանը գրի է առնում Ջավախքի չորս հեքիաթ և 1911-ին «Պառավաշունչ» խորագիրը կրող պրակով հրատարակում Ալեքսանդրապոլ քաղաքում: «Պառավաշունչ» պրակի ազդից հստակ հասկանալի է դառնում, որ հայոց ազգագրական ընկերությունը դեռևս 1908 թվականի մարտի 30-ին որոշել է առանձին գավառներում ստեղծել ժողովրդական բանահյուսությունը գրառող-հավաքող խմբեր: Դրանցից մեկը Ջավախքի ճյուղն էր, որի առաջին արգասիքն էլ լինում է հենց նշված «Պառավաշունչի» հրատարակումը: Սակայն, ցավոք, դրա գործունեության հետագա ընթացքը կարծես թե շարունակություն չի ստանում: Համենայն դեպս, անհայտ մնալը և կամ տպագիր պրակների տեսքով մեզ հասած չլինելը դեռևս չի նշանակում, թե այդ կարգի աշխատանքներ Ջավախքում չեն կատարվել առհասարակ: Գանձա մեր գյուղի օրինակով միայն կարող եմ վկայել, որ քիչ չեն

եղել ոչ միայն ժողովրդական բանավոր հարուստ ավանդույթը փոխանցող բանասացներ և կատակաբաններ, ինչպես, ասենք, Լուլուկյան Լևանը (Լևան բիձան), Լուլուկյան Վոլոդյան (Չլո Վալոդ), ողջ Ջավախքում հայտնի Գրիգորյան Հմայակը, Փուրեղ Ղարիբյանը, Սիմոն Նալբանդյանը, նաև, անշուշտ, ուրիշներ էլ, ովքեր, հմուտ պատմողներ և ժողովրդական անբավելի իմաստնությունը լավագույնս գնահատողներ լինելուց բացի, որոշ գրառած-հավաքած նյութ էլ են թողել եկող սերունդներին:

Եվ այնուամենայնիվ, երկար ժամանակ Ջավախքի ժողովրդական բանարվեստը բանասերների ուշադրությունից դուրս է մնում: 1960-ական թվականներին Դիլիսկա գյուղում հնագետ Գրիգոր Կարախանյանը գրի առնում և հրատարակում է 14 հեքիաթ («Հայ ժողովրդական հեքիաթներ», հ.-9, էջ 501-543):

Վարդ Բդոյանի գրառումներից պարզում ենք, որ 1938 թվականին Երևանում իր անձնական նախաձեռնությամբ նա փորձել է շարունակել նախորդների սկսած գործը: Առաջին գրառումը կատարել է Երևան մշտական բնակության տեղափոխված ծերուկ առակախոս Գարեգին Հայրապետյանից (գյուղ Չամդուրա) և իր ազգական, ախալքալաքցի Գևորգ Բդոյանից:

1940 թվականի ամռանը, հայրենի գյուղում Բդոյանը, նպատակային աշխատանք կատարելով, գրի է առել առակներ, հեքիաթներ, ավանդություններ, պարերգեր, սիրո երգեր և այլն: Ասացողները եղել են հիմնականում տարեց տղամարդիկ, կանայք, նաև, ինչն ինքնին ուրախալի երևույթ է, խմբված աղջիկներ ու պատանիներ: Ասացողների մեջ աչքի են ընկել Վարվառե, Անուշ և Բալասան Բդոյանները, Նվարդ Ավագյանը, Եվա և Մուշեղ Հակոբյանները, Եղիշե Պոտոսյանը, Վերոն և Նազո Եսոյանները, Մինաս Իսկանյանը, Սանդուխտ Իսպիրյանը և ուրիշներ:

1941-1944 թվականներին Փոքր Խանչալլի, ինչպես նաև Փոքր և Մեծ Գյոնդուրա գյուղերում Վարդ Բդոյանի կողմից հետևողականորեն շարունակվել են գրի առնվել բանահյուսական տարբեր ժանրերի նոր, տարաբնույթ նյութեր: Միևնույն գործը, նույն լարվածականությամբ, հեղինակը իրականացրել է նաև Երևանում:

1947-ին հեղինակը բանահավաքչական գործունեություն է ծավալել հատկապես Մշո աշխարհից տեղափոխված գյուղերում՝ Թորիայում և Ուճմանայում: Նախկինում որևէ մեկի կողմից ընդհանրապես գրի չէր առնվել հայոց այս հատվածի բնակչության բանահյուսությունը: Նշյալ գյուղերում գրի են առնվել հեքիաթներ, երգեր և աղոթքներ, զվարճախոսություններ, առակներ, նաև այլ ժանրի նյութեր, որոնց ասացողներն էին թորիեցի Պողոս Գալոյանը, Հովիկ Ասլանյանը, Պողոս Դոշոյանը, ուճմանեցի Վաչիկ (Վաչագան), Մկրտիչ և Լևոն Թումասյանները, Ներսես Գասպարյանը, տիկին Չեչիլ Խաչատրյանը, Անուտկա Շահինյանը և ուրիշներ:

1965-ին «այլևս որոշակիորեն ուշացած» բանահավաքը Ջավախքի Աբուլ գյուղից Երևան տեղափոխված երգիչ ամուսիններ Ռուբեն և Սիրուն Բդոյաններից

(թերևս՝ մոտ կամ հեռու ազգականներ և կամ՝ պարզ ազգակիցներ) գրի է առել բավականաչափ թվով նոր ու բազմաբնույթ երգեր:

Մերենիա գյուղից Երևան տեղափոխված Մամբրե և Բեթխեմ Գոմկցյաններից գրի են առնվել (1980թ.) ազգագրական հարուստ նյութեր, ինչպես նաև որոշ քանակության առակներ, ասացվածքներ և այլն:

Ամբողջության մեջ էլ հավաքած այս նյութերն են կազմում ներկա ժողովածուի մաս: Նյութեր, որոնք հավիտենական մոռացումից փրկված լինելով ժողովրդի գալիքի հանդեպ խորապես զգայուն անհատի կողմից, այնուամենայնիվ ներկայացնում են Ջավախքի հարուստ բանահյուսության սոսկ աննշան հատվածը: Այլևս 21-րդ դար թևակոխած հայ նորագույն սերունդները, եթե անտարբեր գտնվեն և արհամարհեն մեր խորագետ նախնյաց իմաստնությունն ու փորձը, այդ ծովական իմաստնության մեջ տարրալուծված գերճշգրիտ գիտելիքը, ապա մյուս ազգերի նման իրենք էլ մի օր կկորցնեն մեր Տեր Աստծուն, ինչն այլևս անդառնալի աղետ կլինի առաջին հերթին մեզ ու նաև ողջ մարդկության համար: Այո՛, ժողովրդական հարուստ բանարվեստը մեզ Աստծուն հարաբերող, Աստծուն հասցնող կարևորագույն մայրուղիներից է:

Ջավախք հայաշխարհը հազարամյակների ընթացքում պարբերաբար ունեցել է նաև վերաբնակվածների մեծ հոսքեր, որոնք աստիճանաբար խորացել են Վրաստանի խորքերը, մասամբ ձուլվել դավանակից եղբայր ժողովրդին: Վերջին վերաբնակված հոսքի մեծամասնությունը 1828-1830-ական թվականներին եկել է Կարնո նահանգից, իսկ փոքրամասնությունը՝ Տուրուբերանի նահանգից: Առաջինը պատկանում է Կարնո բարբառին, երկրորդը՝ Մշո բարբառին: Այդ երկու հատվածներն էլ վերջին մեկուկես հարյուրամյակում չաղարտված պահպանել են պապենական կենցաղավարությունը հատկապես այն պատճառով, որ մայր Հայաստանի հետ շփումներն ու մշակութային կապերն ամենատարբեր պատճառներով ակտիվ չեն եղել: Բարբառը, որով գրառվել են բանահյուսական նյութերը (1930-1970-80-ական թվականներ), դպրոցների շնորհիվ աստիճանաբար փոփոխության է ենթարկվել: Գրական լեզվի բազմաթիվ բառեր, ոճեր ու գրական-գեղարվեստական լեզվական «կառույցներ» մուծվել են նշված բարբառներ, թեպետ բոլոր դեպքերում էլ հստակ նկատելի է բարբառներին և հնչյունաբանությանը հարազատ մնալու գրառողի զգայուն վերաբերմունքը:

Եվ թեև բարբառները որոշակիորեն անխուսափելի փոփոխություններ են կրել, այնուամենայնիվ բանահյուսությունն իր էության մեջ պահպանել է 19-րդ դարի ոգին: Այստեղ առաջին հերթին խոսքը վերաբերում է ավանդական բանահյուսությանը: Մինչդեռ 1930-ական թվականներից Ջավախքում առաջացել են բանահյուսական նոր շերտեր, որոնք արտացոլում են գավառի աշխարհագրական, պատմաազգագրական և կենցաղային նոր երևույթները: Առանձնապես այս տեսակետից աչքի է ընկնում երգը (երգային արվեստը): Ցանկության դեպքում էլ դժվար կլինի իս-

պառ մոռացության տալ, ասենք, առաջին և երկրորդ աշխարհակործան մեծ պատերազմների, կոլտնտեսային կարգերի, դասակարգային անհաշտ պայքարի, ինչպես նաև հարակից այլևայլ երևույթների ակնհայտ արտացոլումները, ուր, գաղափարագեղարվեստական առումով էլ, աղաղակող է հորինվածքների թեմատիկ-ժանրային, նաև հուզական նահանջը, անպարտակելի՝ շինծու, արհեստական խանդավառությունը:

Եվ այնուամենայնիվ, մասնակիորեն ներկա են նաև բացառություններ, որոնցով միշտ էլ հատկանշվում են ժամանակները, սերունդները և անհատները: Մինչ լուրջ ու «բազմագրագետ գլուխները», իբրև դարակազմիկ գիրք ու տեսություն, փիլիսոփա և հասարակագետ, այլևս մի քանի հարյուրամյակ աշխարհը հակամարտ ճամբարների վերածած (դեռևս այսօր էլ նահանջող սոցիալիզմի «հիշատակի» առջև ծնրադիր տարփողումներ են հնչեցվում), վիճում ու թունդ բանավիճում են սոցիալիզմի անփոխարինելիության առասպելի շուրջ, հեռավոր 1947-ի օգոստոսին, իբրև բանահյուսական նյութ, Ջավախքի Թորիա գյուղում գրի է առնվում «Կոլխոզնիկն ու մենատնտեսը» դիալոգային ոտանավորը (ընդամենը 21 տող), ուր գյուղաշխարհի մարդու պայծառ ու նախագոյաբանական անսխալ «երիշով» բացահայտված և մատնացույց է արված ամենակարևորը՝ ադամորդու կամքը, որն այնուամենայնիվ բռնադատվում-բռնաբարվում է կոլխոզի ու կոլխոզնիկների կողմից, որքան էլ մենատնտեսը, ամենաանհավատալի մի համառամտությամբ, **կոլխոզ** չմտնելու ճիգեր է գործադրում: Բայց չէ՞ որ խորագետ Բարձրյալը, բանական լույսի և հավիտենական կյանքի հետ մեկտեղ, հեռատեսորեն ազատ էր թողել նաև մարդ-արարածի կամքը:

Ինչպես տեսնում ենք, երկարուձիգ տասնամյակներ (շուրջ վաթսուն տարի) են ընկած նրանց՝ Լալայանի և Բդոյանի ծավալած հավաքչական գործունեության միջև: Ցավոք, մեկ-երկու այլ բանահավաքների կատարած աշխատանքը իրոք դիպվածային է, անշարունակական և գիտական առումով ոչ նպատակային ու չհամակարգված: Մինչդեռ հայոց Գուգարք նահանգի (ժամանակին՝ եզերային զորավոր բդեշխություն) Ջավախք և Լոռի հատվածները, ապա և Էրզրումյան բնաշխարհը բանահյուսական անհատնելի շտեմարաններ էին, ակունքային անգնահատելի հարստություն, որոնց գիտական հետազոտման բարձիթողությունը որևէ հիմնավոր արդարացում ունենալ չէր կարող:

Պատկերը իսկապես որ ներելի չէ: Ջավախահայության բանավոր ստեղծագործ մտքի բեղուն արգասիքի փրկման և գիտական ուսումնասիրության գործում որքան էլ կարևոր լինի այս մարդկանց դերը, միևնույն է՝ ահռելի են կորուստները և, ավա՜ղ, անվերադարձ: Թերացման պատճառները թերևս կարող են նաև հարգելի լինել, բայց կորուստների հանդեպ չկա և չի կարող լինել արդարացման որևէ փաստարկ: Ամեն մի հարցադրում այսօր այլևս ժամանակավրեպ է: Նշանավոր բանասեր և բանահավաք Երվանդ Լալայանը ավելի քան դիպուկ է ձևակերպել. *«...քաղաքակրթության*

հուրը լափում է անցյալի բոլոր հիշատակները»: Անցյալից միշտ էլ, այո, դժվար է լինում բաժանվելը: Պատճառը սովորույթի շրջանառու ուժը չէ միայն. մեծ ու անփոխարինելի արժեքներ են անվերադարձորեն կորչում-անհետանում:

Ժողովրդական բանարվեստով զբաղվողների գործունեությունը, գիտականորեն վերցրած, իրապես տքնություն է, որ թերևս հիշեցնում է մեր միջնադարի լուսաղավան գրիչների խնկարկելի կյանքն ու գործը, որոնց անաղմուկ, անձնուրաց աշխատանքը, անհավակնոտությունը, ծայրագույն նվիրումն ու ծայր համեստությունը հավիտյանս մնալու են մեր միջնադարյան հայ իրականության չխամրող արժեքներից: Բողոքելով աչքերի նվազող լույսից, ձեռքերի դողից՝ անապահով, միայնակ-մենկուսի, երբեմն նաև կիսաքաղց այս պարզ մարդիկ ընդօրինակած մատյանում հաճախ արձանագրում էին ընդամենը.

- *Ես մեռանիմ դառնամ ի հող, գիրս մնա հիշատակող:*

և կամ՝

- *Կարդացեք զգիրս և տվեք զողորմին...*

Ո՛չ անուն ու ազգանուն, ո՛չ ծնող ու ծննդավայր, ի՛ր իսկ անձը կարևորող ոչ մի մատնանշում: Ի՞նչ է սա. կատարած գործի նշանակության անգիտացո՞ւմ, Հիսուսյան ըմբռնո՞ւմ առաքինության, մատյանների և մատյան ստեղծողների նկատմամբ խորն ու անհունորեն անսահման պատկառա՞նք: Ինչ էլ լինի՝ արժանի է խորունկ հիացմունքի և, այո, անպարագիծ հարգանք է ներշնչելու միշտ: Գուցե ժողովրդական բանարվեստի գոհարները և գիրք-մատյանների խորհուրդը մաքրում, սրբագործո՞ւմ են մարդկանց երկրային նսեմ կրքերից... Մի՛գուցե: Անառարկելի է, սակայն, որ հաճախ ձիգ տարիներ ու տասնամյակներ է տևել այս մարդկանց տքնությունը: Հաճախ տկար, մելանոտ գրիչը ձեռքին, դժգոհելով մարմնի թուլությունից, տանջահար հոգին լուռ, անաղմուկ ավանդել է ի Տեր՝ անանձնական, նաև անջինջ հիշատակ թողնելով հետնորդներիս:

Մասնավոր զրույցի կարգով մեզ է հասել հետևյալը. գրող Դերենիկ Դեմիրճյանը, անուղղակիորեն տեղեկանալով տակավին երիտասարդ Վարդ Բդոյանի ծրագրերին ու ծավալած գործունեությանը, միտք է հայտնել, որ Ջավախքը, հազարամյակների դեռևս քիչ ուսումնասիրված իր պատմությամբ, ճակատագրով հայ ժողովրդի բնօրրաններից է և ենթակա է գիտական բարեխիղճ հետազոտության: «Արդեն մեկ դարից ավելի է, - պարզաբանել է մեծանուն գրողը, - տեղի հայոց ժողովրդական ստեղծագործությունը խառնվել-հյուսվել է Կարնո դաշտի բանավոր հարուստ ավանդությանը: Պետք է մենք էլ մեր Գարեգին Սրվանձտյանը ունենա՞նք, թե՞ ոչ: Ի վերջո մեկը պե՞տք է շարունակի մեր Պատվական փեսայի գործը»: Ակնհայտ է, որ նա նկատի է ունեցել ականավոր ազգագրագետ, հայագետ ու բանահավաք Երվանդ Լալայանին, ով դեռևս անցյալ դարավերջին, դասավանդելով Ախալքալաքի թեմական դպրոցում, ամուսնացել էր տեղի հասարակական գործիչ Արտեմ Հարութ-

յունյանի դստեր՝ Հայկանուշի հետ, նրա հետ էլ ուսանել Եվրոպայում և նշանակալի ավանդ բերել տարածաշրջանի բանավոր ստեղծագործության հավաքման և ուսումնասիրության գործում:

Պատմական գիտությունների դոկտոր Վարդ Հարությունի Բդոյանի «Զավախքի հայոց ազգագրությունն ու ժողովրդական բանարվեստը» ստվար ժողովածուն գալիս է շահեկանորեն լրացնելու Երվանդ Լալայանի «Զավախքի բուրմունքը» գրքին, որի նյութերը մեծ երախտավորը տակավին 1880-ական թվականների վերջերին անձամբ էր գրառել-հավաքել, և, իհարկե, «Զավախք» արժեքավոր աշխատությանը:

Մեզանում բանահյուսական նյութերի գրառում-հետազոտումը, ցավոք, նույնպես հետ մնաց համաեվրոպական ընթացքից, չունեցավ, սկզբնական փուլում գոնե, պարզ ու համակարգված բնույթ հանրահայտ այն պատճառով, որ Հայաստան հնավանդ ու մոռացված երկրում «Ժամանակը դուրս էր ժայթքել իր շավղից», արյուն ու ավեր էր. տեղահանված հազարամյա իր հայրենիքից, քշվում-սրածվում էին հայասերունդ հոծ բազմություններ՝ ինքնասպանություն գործող ապիրատ մարդկության աչքերի առջև:

Խոսելով ցեղասպանության մասին՝ մենք աներկբա ու առաջնահերթ նշում ենք միլիոնավոր անմեղ զոհերին ու բռնազավթված հայրենիքը: Եվ դա ինքնին բնական ու հասկանալի է: Մինչդեռ ցեղասպանության, որպես առհասարակ մարդկության դեմ գործված հանցագործության, աղետաբեր հետևանքները շատ ավելի ընդգրկուն են, շատ ավելի խորքային ու հեռագնա: Սպանվում է ոչ միայն կյանքը, վերապրողների համար խաթարվում է ոչ միայն կյանքի բնական ռիթմը, այլև սերունդների համար խզվում-խաթարվում է դարավոր ավանդներն ու հոգևոր արժեքները փոխանցելու բնականությունը, ինչն էլ ցավալիորեն հանգեցնում է հանրության հոգևոր նկարագրի խեղման ու անցանկալի այլասերումի:

Պատմական էքսկուրսը այս իմաստով ավելի քան տխուր է. Հայաստան երկրում գրեթե անհնար է գտնել չտեղահանված նահանգ ու գավառ: Շատերը՝ ոչ մեկ անգամ: Բնականաբար, ապրողների համար առաջնահերթը դառնալու էր բանահյուսական նյութեր հավաքելն ու կորստյան երախից դուրս կորզելը: Գիտնական-բանահավաքի գործունեությունը այսուհանդերձ ավելի քան կարևորվում էր: Վարդ Բդոյանը եղավ այն եզակիներից, ով, ժողովրդի կենսական շահին հետամուտ, աճապարեց կատարել նահանջող պատմության տագնապաշեշտ հրահանգը:

Տասնամյակներ շարունակ Վարդ Բդոյանի գրառում-հետազոտում-գիտական դասակարգումը այլ բան չէ, քան հավիտենական մոռացումից ամենայն արժեքավորը փրկելու գիտակցական մղում և ճիգ, ով իր անվանի նախորդի նման բանահյուսական նյութը, գեղարվեստաճանաչողական նշանակությունից բացի, անշուշտ դիտարկում էր նաև որպես պատմաազգագրական տեղեկությունների անգնահատելի սկզբնաղբյուր: Նպատակը ազնիվ էր և հազարապատիկ արդարացված, քանի որ

մայր ժողովրդին էր վերադարձվում այն ամենը, ինչը ժողովրդի հոգու և ինքնության մասն է կազմում, նրա հավաքական նկարագրի գույնն ու բույրն է, համն ու հոտը, Աստվածադրոշմ կնիքը:

Ժողովածուում նուրբ, խորագետ գիտնականի բարեխղճությամբ ուշադրություն է դարձվել բանահյուսական թե՛ վիպական, թե՛ քնարական որոշակի ժանրատեսակների վրա (ավանդություններ, հեքիաթներ, առակներ, զրույցներ, զվարճախոսություններ, վիճակի, հայրենասիրական և պանդխտության երգեր, կատակերգեր և այլն), որոնց աղերսը ազգագրությանը ակնառու է: Ընդսմին, ժողովրդական աղոթքները, անեծք-օրհնանքների մի զգալի մասը հեթանոսական արմատներ ունեն և կարող են թերևս առաջին հայացքից անհարիր թվալ քրիստոնեական աշխարհայեցողությանը: Պետք չէ, սակայն, պարզապես իներցիոն մղումով տուրք տալ ավանդաբար մեզ պարտադրված, միտքն ու հոգին բռնադատող կարծրատիպերին: Ձերբազատվել է հարկավոր իրենց դարն ապրած կեղծ մտքերից ու մտայնությունից, ոսկրացած կաղապարներից, և ամեն ինչ նոր լույսի տակ ի հայտ կգա, նորովի կընկալվի: Հնավանդ ասացվածքներն ու ասույթներն իմաստային առումով երբեմն վերափոխվել են ճիշտ իրենց հակոտնյա հասկացությանը: Այս վերջին միտքս ընդհանրական իմաստ ունի և հատկապես սույն ժողովածուին չի վերաբերում: Կարծում եմ՝ խորապես կկարևորվեր դրանց նախահիմաստների բացահայտում-վերականգնումը ժողովրդի մտածողության և աշխարհընմբռնման պարզաբանման խնդրում: Նախահիմաստներ, որոնք առանց Աստվածաշնորհի բարեհաճ բացահայտման, երբևիցե և ըստինքյան հետ չեն վերադառնա և չեն թարմացնի մարդկության մթագնած հիշողությունը, ինչը թերևս օդ ու ջրի նման է անհրաժեշտ Աստվածային լույսից անհուսորեն շեղված մարդկությանը: Առանց հիմնավորումների, հպանցիկ բերենք պարզապես մի քանի օրինակ: Այսպես.

- *Որտեղ հաց, էնտեղ կաց:*
- *Շունը տերը (տիրոջը) չի ճանաչում:*
- *Հայի հետին միտքը (խելքը) իմը լիներ:*
- *Վերին արտի ցորենը չէս* (...և այլն):

Առաջին օրինակը մերժվում է մերօրյա սերունդների «սթափ և զգաստ» գիտակցությամբ, որպես թե անհատի և հավաքականության արժանապատվությունը վիրավորող մի կարգախոս: Երկրորդ օրինակը պահպանել է ընդհանրացված-փոխաբերական իմաստը սոսկ: Երրորդ օրինակը ընկալման և պարզաբանման առումով թվում է հեշտ, մինչդեռ չափազանց խաբուսիկ ու թվացյալ է այդ հեշտությունը, և բոլոր նրանք, ովքեր միամտությունը կունենան մեկնաբանելու և կամ էլ բացատրել սույն խորախորհուրդ ասույթը, կամա-ակամա ընկղմվելու են պարզունակության ճահիճը և արդյունքում միմիայն մանկամտություններ և հիմարություններ են դուրս տալու: Իր «Արարատ» բացառիկ բարձրարվեստ ֆիլմում հայ աշխարհահռ-

չակ կինոբեմադրիչ Ատոմ Էգոյանը հիշյալ այս ասույթի պարզաբանման անդրադարձ-անհրաժեշտությունը ունի ասելիքի բերումով: Եվ կատարել է նախնական ինֆորմացիայի (նախահիմաստի) բացահայտում, ուր, իբրև գեղարվեստական ճշմարտություն, հենց գեղարվեստական հարթության մեջ միանգամայն սպառիչ մեկնաբանություն ու հիմնավորում է ապահովել:

Չորրորդ օրինակի մասնակի մեկնաբանումն անգամ ենթադրում է մուտք գործել անսահմանության տիրույթ, ինչն այս գրքի խնդիրներից դուրս է:

Մարդկային միտք-մտածողությունն, այո՛, լրջագույն «վթարման» է ենթարկվել, և վերակենդանացման (նախահիմաստների վերականգնման) առումով Վարդ Բդոյանի գիրքը, առաջին էջից մինչև վերջին տողը, բացառիկ արժեք է ներկայացնում: Թերևս հոգուս մեղք չանեմ. հարգարժան գիտնականը հազիվ թե ակնարկվող դիտանկյունով է գործել և կամ վերաբերվել իր գործունեությանը:

Բարբառային անպաճույճ պատումներում ժողովրդական իմաստնության անգին գոհարներ են ամբարված, ընտրության հմտություն և գեղարվեստական անուրանալի ճաշակ է առկա ինչպես չափածո, այնպես էլ արձակ ժանրատեսակներում: Ելակետ ու չափանիշ, նյութի հավաքման սկզբունք և դիսցիպլին որպես, այստեղ անտարակույս ընտրված է ոչ միայն հասարակայնորեն բնորոշը, գեղարվեստորեն ընդհանրացվողը, այլև ժամանակների քննությունը բռնածը, ժամանակների քննախույզ մաղից անցածը, հազարապատիկ զտվածը, որոնք, ցավոք, ժամանակի դարձ-դարձիկ հոլովույթում, կրելով դարաշրջանի պատմաքաղաքական, տնտեսական, էթնո-մշակութային առումով հարափոխ կյանքի, հանրության և անհատ մարդկանց ներգործության դրոշմը, լեզվաքերականական, բառիմաստային նկատելի աղավաղումների են ենթարկվել: Ժամանակը, որպես անփույթ մի ավարառու, մանրախնդիր մի հետևողականությամբ, այսպես ու անխղճորեն թալանի է ենթարկել աղամական մարդկային ցեղը՝ մթագնելով, անընկալելի դարձնելով նախնական իմաստ ու խորհուրդ:

Խոսքս առաջնահերթ վերաբերում է հեքիաթի ժանրին, ավանդապատում-ավանդազրույցներին, ժողովրդական երգերին, վիճակի երգերին ու հին ասքերին, ուր տեղեկատվական երկնառաք թաքնախորհուրդ իմաստնության ծովն է երերածուփ տարուբերվում՝ գաղտնակուլ ժամանակի հանդեպ անտարբեր թավալումով: Երբևէ պարզել է հարկավոր հեքիաթ ստեղծողի ինքնությունը, որքան էլ մարդկային սերունդները, հազարամյակներ ի վեր, ցավալի, ողբալի և ամոթաբեր միամտությամբ հեքիաթները համարեն պատմություն երազների մասին: Դրանք ավելի շուտ երջանկության հասնելու բանաձևեր են, որոնց անգիտանում են մարդկանցից ամենաուսյալներն անգամ, և ամեն անգամ, երբ իրենց անհրաժեշտ է լինում հերքելու-ժխտելու սուտը, կեղծիքը կամ էլ որևէ անմտություն, իրենք են հենց անմտանում ու թեթևամտորեն եզրափակում՝ **Հեքիաթներ մի՛ պատմիր:**

Թումանյանը գտնում էր, որ նույնիսկ հանճարն անընդունակ է հեքիաթ ստեղծել, միաժամանակ հավաստելով, թե հեքիաթի ժանրի վերաբերյալ ոչ միայն մեզանում, այլև լուսավորյալ Եվրոպան էլ բավարար պատկերացում չունի. այնտեղ, ուր իշխում են հավերժական սիմվոլները... Ինչևէ, մարդկությունը իրոք որ կորցրել է ոտքի տակի հողը, կառչել է նյութից, բռնված է մամոնական տենդով, և դեպի Աստվածայինը վերադառնալու համար նրան, այո՛, ամուր «հենման կետ» է հարկավոր:

Զարմանալի նմանություն է երբեմն նկատելի գրառված այս հեքիաթների և «Հազար ու մեկ գիշեր» ժողովածուի հեքիաթների միջև: Արաբական հեքիաթների ժողովածուն ցավոք թարգմանություն է ռուսերենից և, թեպետ, այնտեղ զգալի են ճապաղ և անհարկի կրկնվող հատվածները, որոշ հեքիաթներում, այնուամենայնիվ, պատմելաեղանակը, գործողությունների զարգացման ընթացքն ու պատումի ոճը, իսկ սակավ դեպքերում , ինչպես օրինակ՝ «Ճիտու խրատը» հեքիաթի ամբողջական հատվածներ ճշգրտորեն նույնանում են արաբական «Եզան և էշի պատմությունը» հեքիաթի սյուժետահիմաստային կողմին: Այս խնդիրը կարող էի նաև չնշելու աստիճան չկարևորել, սակայն համոզմունք ունեմ, որ կրկնվող համանման վարիացիաների, թափառող սյուժեների խնդրով մասնագետները հարկադրված կլինեն մեկ անգամ հիմնավորապես զբաղվելու, մեկ անգամ և հիմնավորապես գիտական լուրջ քննության առնելու առկա անհերքելի իրողությունները, որոնք վերաբերում են հեռու և մոտ ժողովուրդների ընդհանրական-միասնական պատմությանը և կարող են լույս սփռել նրանց և ողջ մարդկության խոր անցյալի վրա:

Ճիշտ նույն կերպ էլ ժողովրդական երգերի պարագայում մասնագետները, հայ ժողովրդական երգերի հիմքը հոգևորը մատնանշելով, մեկ անգամ և հիմնավորապես պարտավորված կլինեն նաև համակարգված հիմնավորումներ բերելու, խորն ու համակողմանի ընդհանրացումներ կատարելու: Նման այն մարդուն, ով Անհուն-Անսահմանի գեղաքանդակ շքամուտքի առջև ձեռքը դռան բռնակին տարել, սակայն բաց չի անում ու չի մտնում ներս:

Հավատալիքների հետ կապված երգերի համանմանությամբ, հիշողությանս մեջ մնացել էին արտասանվող տեքստային հատված ունեցող խաղեր, որոնք, մասամբ կամ ամբողջական, փորձեցի վերականգնել հայրենի Գանձայում և Երևանաբնակ գանձացիների օգնությամբ (Տե՛ս, Հավատալիքներին առնչվող երգերի բաժինը):

Ինչպես ժողովրդական երգերի պարագայում երգվելու հանգամանքը, այնպես էլ խաղերի վերածելու նպատակը եղել է մեկը. ուղեկցվող տեքստերի պահպանումը և գալիք սերունդներին հնարավորինս անխաթար դրանց փոխանցումը, որքանով որ այդ տեքստերը չափազանց կարևոր տեղեկատվություն են բովանդակում:

Բնութագրականը զուտ տղայական այս խաղերում ճարպկության, ցատկ-թռիչքների թեթևատլետիկական ուղղվածությունն է, որոնցում տղաներից մեկը կռանում է ձիու նման (Կարսում, օրինակ, խաղը կոչվել է «Ձիականգ»), իսկ ընտրված

վարպետը, թռչելով նրա վրայով, հրահանգում է. «Ինձ հետ եկեք, տղաներ» և արտասանում տեքստի հերթական տողը: Բառերը խառնողը կամ մոռացողը ինքն էր կռանում: Կտրականապես արգելվում էր մոռացողին հիշեցնել հերթական տողը: Միտումը հստակ է՝ իմանալ, ճիշտ մտապահել տեքստը:

Խաղերի այս տեքստերում առանձնահատուկ հիշատակվում-կարևորվում է Երևան բնակավայրը, որը տվյալ դեպքում հստակ նկատելի է Երևան-Վան-Արզրում-Ջավախք շրջագծում (Երևանը հիշատակվում է նաև վիճակի թուրքերեն երգերում իր երեք նշանավոր եկեղեցիներով): Դիտարկվող փաստը, կարծում եմ, որքան հետաքրքիր, նույնքան էլ դուրս է սույն ժողովածուի նյութերի քննությունից:

Բանահյուսական գոհարները մեր օրերից մինչ հազարամյակների խորքը ձգվող Ջավախք հայաշխարհի խոսք ու զրույցն են, երգը, ինքնատիպ, անկրկնելի, վիպերգող հոգու լուսաբաղձ ելևէջումները, որոնց արժևորմանն ուղղված ավանդական մեր հայացք-նայվածքը, գիտական միտքն ու ինտելեկտուալ մեր ողջ խորաթափանցությունը, ամենայն պատասխանատվությամբ ու ամոթախառն խոստովանումով եմ վկայում, անարժեքորեն անբավարար են այլևս: Մարդկության անցյալը զննելու, հասկանալ-իմաստավորելու առումով մարդկությանն է հենց անհրաժեշտ ինչ-որ կերպ, ինչ-որ մի հրաշքով մաքրել սեփական փառակալած աչքերը:

Հինկտակարանային Սողոմոն Իմաստունին առնչվող պատումները, որոնք հայոց մեջ հազարամյակներ ի վեր պատմվել-պահպանվել են Աստվածաշնչյան համանուն կերպարից որոշակի շեղումներով, ինքնին հետաքրքիր չե՞ն արդյոք: Գիտական-վերլուծական մեր միտքն իրավամբ ասելիք չունի՞ այստեղ:

Ուշադրությունս հատկապես կանգ առավ այն ընթացակարգի վրա, որ վիպական բանաձևային ստեղծագործություններից, ի թիվս հանելուկների, շուտասելուկների, առած-ասացվածքների, երդումների, օրհնանքների և, մանավանդ, նզովք-անեծքների «շարունակություն» որպես չի գրառված, թեկուզև սահմանափակ քանակով, ոչ մեկ հայհոյանք, առօրյա հրապարակավ գործածվողներն անգամ, նույնիսկ ակնարկված չէ նրանց մասին: Մինչդեռ հայհոյանքները մարդկային շատ որոշակի հոգեվիճակների պատկեր-արտահայտություններ են, մարդկային հարաբերությունների բնութագրեր, որոնց գիտական ուսումնասիրությունը շահեկան կլիներ բազմաթիվ առումներով: Ի դեպ, կարող էի սա նաև բացթողում և կամ թերացում համարել, եթե այս ուղղությամբ անձնական իմ պրպտումները զարմանալի մի եզրահանգման բերած չլինեին ինձ. լեզուն (նախալեզուն), որով համայն մարդկությունն է նախապես հաղորդակցվել, զերծ է եղել հայհոյանքներից: Այլ կերպ ասած՝ նախալեզուն հայհոյանք չի ունեցել: Եվ ժամանակի մեջ առաքինություններից աստիճանաբար հրաժարվող ադամական մեր վարքն է, որ ծնունդ է տվել հայհոյանքին ու հայհոյությանը՝ առանձին բառերի ու արտահայտությունների մեջ բևեռացնելով անհատի սուբյեկտիվ վերաբերմունքը, ժամանակաշրջանն ու բարքերը, իրավահարաբե-

թությունները: Այս կերպ միայն կարող եմ թերևս մասնակիորեն արդարացնել սիրելի գիտնականի փոքրիկ զանցառումը:

Կարծում եմ՝ ժողովածուն կարող էր իրապես թերի լինել, եթե նրանում ներառած չլինեի ջավախահայության ինքնատիպ հոգեբանության ու ակունքային նախաբարբառ լեզվամտածողության թանձրասերուցքը հանդիսացող «համադամ» զվարճախոսությունները՝ սրամտություն, անեկդոտ, հումոր-հումորեսկներ, որոնց կոլորիտային, հյութեղ պատումը ծավալվում է ցրտաշունչ ու բարձրիկ բնաշխարհի նրբանուրբ զգացողությամբ: Հետևաբար ժողովածուն, առավել ամբողջական տեսնելու ակնկալիքով, հավելեցի նաև տակավին 1992-ին իմ իսկ առաջաբանով, խմբագրումով, գիտական դասակարգումով և նաև անհրաժեշտ ծանոթագրումներով հրատարակած Հմայակ Գրիգորյանի «Սրամտում է Ջավախքը» գողտրիկ գրքույկը: Հասկանալի է՝ որոշակի լրացումներով և կրճատումներով, նաև ժամանակին տպարանի կողմից թույլ տրված վրիպակների վերախմբագրումով, որի գեղարվեստական ձևավորումը իրականացրել էր ճանաչված և սիրված ծաղրանկարիչ Ալեքսանդր Տաշչյանը:

Ծալկահայոց բանավոր ստեղծագործության նմուշներից ժողովրդական մանիների՝ ժողովածու «մուտքագրելու» ջավախքցու բնական իմ ցանկությունը որևէ կերպ չէր համերաշխվում գրքի աճող ծավալների հետ. տպագրության խնդիրը մշտապես աչքիս առջև՝ չէի կամենա հազար էջի սահմանախախտումը թույլ տալ: Ի վերջո, ելքը կարծես թե գտա. ժողովրդական խաղիկներին զուգահեռ, միևնույն էջերում զետեղեցի նաև դրանք՝ խոր ափսոսանքով մտաբերելով Ախալցխայի, Ասպինձայի և հայաբնակ մյուս շրջանների բանավոր ստեղծագործության անմար ու անհամար գանձերը:

Փոքր Խանչալլի գյուղում գրառված թուրքերեն վիճակի երգերը (135 քառյակ) ես նախապես հակված էի հայերեն տողացիներով ներկայացնել: Հանդիպել և բազմաթիվ թուրքագետների հետ քննել եմ խնդիրը: Թարգմանության առումով պարզվեց՝ առկա էին դժվարություններ. թուրքերեն բառերին հավասար, գուցեև ավելի, քրդերեն բառեր էին գործածված, որոնք այսօրվա քրդերենից էականորեն տարբերվում էին: Եվ քանի որ բոլորին հայտնի են վիճակի երգերի ընդհանրական մոտիվներն ու բովանդակային ընդհանուր ուղղվածությունը, և հայերեն տողացիները այդ առումով շատ քիչ բան էին փոխելու: Ի վերջո հրաժարվեցի նաև այդ մտքից: Կարծում եմ՝ հարգարժան հեղինակն էլ, այս նկատառումով միայն, անձնապես հեռու էր մնացել նման գայթակղությունից: Եվ այնուամենայնիվ, որոշակիորեն աչքի առջև ունենալով իհարկե շարքային հայ ընթերցողին, նպատակահարմար և ճիշտ համարեցի շուրջ մեկուկես տասնյակի չափ հայատառ թուրքերեն վիճակի երգեր զուգահեռաբար ներկայացնել նաև հայերենով (թեկուզև մոտավոր իմաստը), ինչն էլ, սիրահոժար հանձնառությամբ, կատարեց բանիբուն բանասեր, թուրքագետ Արամ Թումաս-

յանը: Թեև, դարձյալ կրկնեմ, իմաստ կունենար գեղարվեստորեն հույժ համարժեք, արարող մեր ժողովրդի մտքին, սրտին, ոգուն ու ոճին հարազատ թարգմանությունը միայն:

Հավելված 1-ում ներկայացված հայատառ թուրքերեն վիճակի երգերը, կարծում եմ, հետազոտողների կողմից կարժանանան պատշաճ ուշադրության: Սույն երգերը տեղեկատվական հարուստ նյութ կարող են տալ ոչ միայն հայ-քուրդ-թուրք եռակողմ, տարաբնույթ փոխառնչությունների առումով առհասարակ, այլև Կաթնապրի նույն այդ երգերում, որքանով որ դրանք ելնում են Համբարձման ծիսակատարությունից և ծառայում են նրան, որևէ կապ չունեն մահմեդականության հետ, ուստի կարինահայի շուրթերից հնչվող բնաշխարհիկ երգերը, ուր հայի հազարամյա խնդությունն է, պարզ ձգտումները, հոգսն ու կարիքը, թշվառությունը, չեն կարող նախնական, ակունքային թանկ ինֆորմացիա չպարունակել: Հետազոտողի սուր աչք է միայն հարկավոր, ով սեփական պատմության վրա հին և հավատավոր հայի հայացքով կնայի: Եվ իհարկե՝ տիրոջ իրավունքով, երբ ինքն էր ու իր Աստվածը: Ահա այդ հայն էր, Հիսուսով այլևս զորավոր դարձած հայը, որ վերհիշելով արտաբերեց. *«Հացն ու Գինին, Տէր Կենդանին, Մարուքա բարդ Աստուածածին»:*

Հավելված 2-ում Նարեկացու, աշուղ Ջիվանու, Վահան Տերյանի մասին գրառված պատումները իրենց պարզության մեջ զարմանալի խորը, զարմանալիորեն ճշմարիտ ու կյանքային են՝ նորովի և յուրովի բնութագրելով մեր մեծերին...

Ահավասիկ ամենայն հայոց բանաստեղծի «շիկացած» խոհը, որը հիմնովին ներդաշնակում է ժողովրդական պատկերացումներին**:** Դե իսկ ժողովուրդը միանգամայն անկեղծ է ու շիտակ իր բնութագրումներում. «***Իրեն հոքին սուրբ ըլլելով, գիրքնե լուս հոքով լցվեցավ: Էնիկ գրրվավ Աստու բեյնով, Աստու շնչով, էպոր համար էլ Նարեկը դառցավ կրոնի գրքերուն մեջ ամմենեն ունքունականը աշխարհին վրա...»:*** Եվ ապա՝ Թումանյանական նժարումը «***...այսպեղ արդեն հայի լեզուն չի, որ խոսում է, բերանը չի, որ պապմում է, կրակված սիրտն է, որ այրվում է երկիրը բռնած, տանջված հոգին է, որ մռնչում է մինչև երկինք»:***

Աշուղ Ջիվանու (Սերոբ Ստեփանի Լևոնյան) մասին գրառված պատումները նոր նրբագծեր կհաղորդեն անշուշտ շուրջ 800 երգ հեղինակած և ժողովրդի անպարագիծ սիրուն արժանացած ժողովրդական երգչի ու երգահանի, հայոց մեր տան խաթարված կյանքի նորոգմանը նախաձախնդիր ազատախոհ, ըմբոստ զավակի, փիլիսոփայի և բարոյագետի լուսաշող կերպարին: Հավելված 4-ում թերևս կկարդաք նաև մեծանուն Ջիվանուն նվիրված Միքայել Հովսեփյանի սրտառուչ բանաստեղծությունը:

Ինչպես որ վառ, գույնզգույն թելերից երանգ առ երանգ, նախշ ի նախշ շքեղորեն հյուսվում-ամբողջանում է երփնագորգը, այդպես էլ Տերյանի մանկության խաղընկեր-տարեկիցների անսեթևեթ պատումներում դանդաղորեն շնչավորվում ու շարժ-

վում է ասես գեղատեսիլ Գանձան՝ իր բարձրադիր շրջագծի մեջ կենդանացնելով «Գեղին դեմն» ու «Գլնդրլիկ թրփրն», «Լուսախպուրն» ու «Շապկանենց ջաղացը», «Ավճալու Գելն» ու «Քորօղլու բերթը»: Եվ Վահանի կերպարը՝ մանկորեն միամիտ, անհանգիստ ու անաղարտ, անգամ «ճրղրզ» (անհաշտ, չզիջող)՝ բնավ չիդեալականացված, բայց և սիրելի, խորհրդավոր ու առինքնող, վսեմական...Գանձան՝ շրջանի ամենամեծ գյուղը, թասի պես լայն շրջաբացվող հեռակաց սարերի մեջտեղում, բարձրադիր իր դիրքի վրա, զմրուխտյա կանաչի մեջ հիշեցնում է աղքատ ու գեղադեմ լեռնուհու, ում աչքը ջուր դառավ սիրեցյալ իր յարի ճամփին...Երևանից Գանձա մտնող ճանապարհը թեք ոլորանով շրջանցում է Սաղամո լիճը, որի հանդիպակաց ափին, 70 աստիճան վերձիգ բլրակի վրա, հսկում է շրջակա գյուղերի համար ուխտատեղի դարձած ս. Հովհաննեսի մատուռը: Վարդևոր-Վարդավառի ժամանակ ժողովրդական տոնախմբությունները հորինում են այլ իրականություն. համատարած խնդությունը Գանձան շրջակայքով վերածում է զանազան խաղերի, ջահելության համար ջրջրոցի ու լողալու, մարդկանց խմբային խնջույք-խրախճանքի, պարի և ձիամրցման հրապարակի: Դհոլ-զուռնան ու տոնականորեն զգեստավորված մարդկանց բազմությունները, մեծաքանակ հյուրերը, կազմակերպվող աշխույժ առևտուրը ուրախությունը դարձնում էին գերկատարյալ՝ մոռացության տալով մտրակող հոգսն ու կարիքը, ժողովրդի չարքաշ առօրյան: Եվ սա վերհուշ է լոկ, պատառիկներ են սրանք իմ անուրախ, թե հրճվալի մանկությունից, որ կրկնվում է այսօր էլ, արդեն ուրիշների մանկության հրաշք որպես, ուրշների կյանքի անմոռաց տոն ու խնդություն: Գանձան աջակողմով եզերող ճանապարհը հասնում է Ծալկա, հասնում է Թիֆլիս, հայի համար նույնքան թանկ ու սիրելի մի քաղաք, որքան թանկ ու հարազատ է այն վրացու համար: Մի օր, չափազանց գեղեցիկ մի օր հայն ու հպարտ վրացին կհիշեն վերջապես, որ եղբայրներ են իրենք, հարազատ ու հոգեկից եղբայրներ, և հոգնել են այլևս կեղծ բարեկամության սնամեջ խոսքերից: Եվ իրական մեծ տոն ու խնդություն կլինի, որին հավատացել են հայ թե վրացի մեծ մարդասերները: Գյուղից մի քանի կիլոմետրի վրա, Թիֆլիսի ճանապարհին, Փարվանա լիճն է, որից սկիզբ առնող Թափարվան գետը, անցնելով գյուղի միջով, թափվում է գյուղի ոտքերի մոտ ծվարած Սաղամո լճակը: Գյուղից քիչ վերև՝ Աբուլն ու... Մըթին սարեր... Հին, հավատավոր հայը մշտապես էլ հավատարիմ է մնացել հոգում ու սրտում ծնվող պարզ, հոգևին գաղափարներին, հավատում է այսօր էլ, որ բացվելու, ճառագելու է մի օր համընդհանուր երջանկության արշալույսը, երանավետ խաղաղությունն է տիրելու ամենուր, ինչպես որ սահմանված է եղել վաղուց ի անդր, Բարձրյալի կողմից:

Հավելված 3-ում են ամփոփված «Անուշ ապլայի երգերը»: Ստեղծագործական առումով ժողովածուի անհատական կնքադրոշմը ունեցող թերևս ամենից հուզական, ամենից թանկ ու մեծախորհուրդ պատառիկներ են դրանք, որոնք, իբրև իր վշտախորով սրտի պատվիրան-պատգամներ, մեզ է կտակել 1880 թվականին ծնված անգ-

բաճանաչ մի կին (անգիր հիշել է իր բոլոր երգերը, որոնք տարաբախտ իր կյանքի պարզ արձագանք-արձանագրումներն են եղել: 1918-ի մայիսին ամուսինը սպանվել է Դիլիֆի լեռնանցքում՝ թուրքերի դեմ ճակատամարտելիս, մեկ տարի անց սպանվել է նաև տեգրը, դարձյալ թուրքերի ձեռքով, ովքեր վերաբնակվել էին Փոքր Խանչալ-լի գյուղում, զավակները 1941-42 թթ. զոհվել են Մեծ Հայրենականում): Առաջացած տարիքում նույնիսկ անգիր հիշել է իր հորինած բոլոր ոտանավորները, երգախառն արտասանել է ու մորմոքուն լաց եղել: Այս զարմանալի կինը սովորական իմաստով Աստվածապաշտ, կրոնասեր ու եկեղեցասեր չէր միայն. մարտնչող Աստվածուրաց-ների դեմ բացահայտ պայքար է մղել Ջավախք մոռացված մեր աշխարհում՝ հա-մարելով իրեն եկեղեցիների պաշտպան: Ուղղել, սխալների համար հաճախ դիտո-ղություններ է արել կիսագրագետ քահանաներին ու տիրացուներին: Անգիր հիշել է «Նարեկի» շատ հատվածներ: Անուշ ապլային առանձնահատուկ ցավ ու անհանգս-տություն է պատճառել Չամդուրա գյուղի եկեղեցու քանդման միտքը: Առհասարակ եկեղեցիների քանդման վայրենի արշավը, որ ձեռնարկեց **սովետական-սոցիալիս-տական** բնութագրումով հանրահռչակված ամենից Աստվածուրաց կայսրությունն աշխարհում, մարդկության պատմության ամենից անբարո ու ամոթալի էջերից է, թերևս՝ ամենից անբարոն ու ամենից ամոթալին:

Այս թեմայով Անուշ ապլայի չափածո երկնումը առանց չափազանցության պատ ու պարիսպ է ասես քաշում հոգուդ շուրջբոլորը և ակամա մասնակից դարձնում քեզ թակարդված հոգու ցավատանջ բռնալլկումին, որը խոցոտվում էր հեռու-հեռավոր այն օրերում: Պատրանք ես ունենում, թե վերընթերցում ես «Սասնա ծռեր» էպոսից զգայացունց մի հատված և կամ էլ մասնակից ես ուղղակի Հիսուսի խաչելությանը:

Անուշ ապլան, հազարամյակներով բյուրեղացած տոկուն, ողջախոհ, Աստվա-ծավախ այս հայուհին, որպես հայ կնոջ լուսաշող մի օրինակ, մոմի նման վառվեց հարազատ ժողովրդի մթնած ճամփեքին՝ այսօր և առմիշտ ուսուցանելով մեզ Լույ-սը որպես հավիտենական արժեք դավանելու հրամայականը: Ընդօրինակումով նրա սուրբ գործի՝ խոնարհվենք նրա լույս հիշատակի առջև միշտ և հավիտյանս նաև մենք՝ արժանի-անարժաններս, իբրև նրան ցեղորեն ժառանգորդ ու հետնորդ:

Հավելված 4-ում (Այն, իբրև կազմող և պատասխանատու խմբագիր, ամբող-ջությամբ ինքս եմ հավելել ժողովածուի մեջ) նպատակահարմար գտա զետեղել Միքայել (Միշա) Հովսեփյանի (գյուղ Փոկա) մի քանի բանաստեղծություններ ևս, որոնք միանգամայն մերձ ու հարազատ են ժողովրդական բանարվեստի ոգուն, սիմ-վոլիկային, ժողովրդական պատկերավոր մտածողությանը, այլև պատճենային մի գունագեղությամբ հաղորդում են ջավախքյան բնաշխարհի շունչը՝ պսպղում որպես հազարամյակների մութ ու մշուշից պեղված ակունքային նախագիտելիքի ոսկեղե-նիկ երակաշերտ:

Ջավախքի հայոց ազգագրությունը, էրզրումյան իր ուրույն հետագծով, արժա-

նի է առանձնահատուկ ուշադրության և գնահատանքի: Եթե, Աստված մի արասցե, ինչ-որ կերպ չեզոքացվեր երկրամասի կենսաբանական պատկերը, մնար աշխարհագրական լերկ միջավայր որպես, ապա բեղուն ու բանիբուն հեղինակի սույն համապարփակ աշխատության օգնությամբ, այո, ամբողջական ու համակարգված, վերականգնել էր հնարավոր 18-19-րդ դարերի ջավախքյան համապատկերը: Առանձնապես գովեստի է արժանի Էրզրումի բնաշխարհիկ ավանդույթի գրեթե չընդհատված կապ-կոլորիտի անկորուստ փոխանցումը Ջավախք: Եվ ոչ միայն: Մանրամասներ են հաղորդվում, որոնք վկայում են ոչ միայն չընդհատված այդ կապի մասին, այլև պայմանավորում են նրանց հատուկ կենսագործունեության շարունակական ընթացքը նոր պայմաններում և պատմաքաղաքական, պատմահիրավական փոխված նոր իրականության մեջ: Այսպես, հաղորդվում է, որ նախաբնիկ Ջավախքի հայերը իրենց եկիրը նվաճած և տիրող թուրքերի մեջ գրեթե միակ շինարարներն են եղել, ովքեր կառուցել են Արևմտյան Հայաստանից Ջավախք տեղափոխված թուրքերի շենքերը: Արևմտյան Հայաստանում էլ թուրքերի գոմակերտ-շինարարները հայերն են եղել: Ուստի հստակ է՝ Ջավախքում թուրքերի շուրջ 300 տարվա բնակավայրերն ունենալու էին կիսագետնափոր շենքերից գոյացած կցաթաղերով հայկական գյուղերի ձևեր:

Առանձնահատուկ խորագիտությամբ և մեծ սիրով է ներկայացված բնաշխարհի պատմաազգագրական ուրույն բնութագիրը՝ երկրագործությունը, այգեգործությունը, անասնապահությունը, տնտեսությունը և նյութական մշակույթը, տնայնագործական համապատկերն ու արհեստները, բնակավայրերը, շենքերը, կահկարասին և, իհարկե, կեցության ավանդական կենցաղագրությունը որպես ինքնատիպ համակարգ:

Ի դեպ, համաձայն գիտնականի հաղորդման, Ջավախքում **թաղ** բառը ցավոք չի պահպանվել: Այն գործածությունից դուրս է եկել դեռևս Էրզրումում, որը փոխարինվել է իբր արաբերեն մահալլաթ (հոգն.) մահալլե (եզ.) բառով: **Մահլա** կամ **մայլա** հնչումով է բառը «քաղաքացիություն» ստացել Ջավախքում ու Գյումրիում: Հետաքրքիր ևս մի դիտարկում. ազգակցական թաղը հիմնականում անվանվել է ազգի մեծի անունով: Ջավախք տեղափոխված գրեթե բոլոր ազգերի անունները պահպանել են Կարինում ունեցած իրենց կոչումները, որոնք եղել են գաղթից առաջ: (**Ազգ** բառը, **ազգակցական թաղ** բառակապակցությունը, անշուշտ, պետք է հասկանալ սոսկ նեղ-արյունակցական իմաստով միայն): Վարդ Բդոյանի այս դիտարկումները բնավ էլ անկարևոր չեն: Մեծ գիտնականը անցյալի նահապետական կենսակերպը իբրև ամբողջական համակարգ է ներկայացրել՝ ուսուցանելով մեզ, որ անկարևոր ու երկրորդական ոչինչ չկա և չի էլ կարող լինել: Այդ համակարգում յուրաքանչյուր անդամ իր տեղն ու դիրքն ուներ, իր տեսակարար կշիռը, և յուրաքանչյուրը վերահիսկելի էր հասարակության կողմից: Նա, ով կորցրեց իր վարկը, հեղինակազրկվեց, խարան-

վում էր հավիտյանս: Հիշենք միայն. *«Համայնքը չի ների: Համայնքը զորավոր է»:* Այդ զորավոր համայնքը խաղուպարով խաղից դուրս է թողնված մեզանում ներկայումս: Ուսանելի, նաև արժեքավոր թերևս շատ բան կա այնտեղ. հազարամյա փորձ և իմաստնություն, թե ինչպե՞ս է հնարավոր առհասարակ հասարակություն կազմակերպել և կամ էլ իշխանություններ ձևավորել: Արևմուտքից հրամցված տեսություններն ու քաղաքական բարքերը լավագույն դեպքում արևմտյան իրականություն են տալու մեզ, ինչը հազիվ թե փափագելի մի բան լինի մեզ համար: Փորձված լավն ու առաջավորը, որ բյուրեղացվել է ժամանակների խստականոն, դժվարահաճ ու ծանրաբարո ճնշմամբ, պետք չէ արհամարհել և օտարից վերցնել է պետք միմիայն պիտանին, առաջավորն ու արժեքավորը:

Ամենատարբեր բնագավառների հայ և այլազգի գիտնականները, այդ թվում նաև հարգարժան Վարդ Բդոյանը, լեզվական փոխառությունների խնդիրն ընդունում է ի գիտություն, որքանով որ առանձին լեզուների «փաստացի» գոյությունը անվիճարկելի իրողություն է համարվում գիտության կողմից: Մինչդեռ իմ կարծիքը տրամագծորեն այլ է այս հարցում. հակագիտական և, ըստ էության, անընդունելի է որևէ բառ որևէ լեզվից «գիտականորեն» բխեցնելու համոզմունքը: Իմ դիրքորոշման սույն մեկնակետի ամենից զորավոր փաստարկումը այս դեպքում մագաղաթյա Աստվածաշունչն է, որը հաճախ և հանիրավի մոռացության է մատնվում հենց գիտության մարդկանց կողմից:

Ջավախքը, ինչպես և հիմնավորվում է հնագիտական պեղածո նյութերով, եղել է մարդկության զարգացման բոլոր փուլերում բնակեցված: Այն Առաջավորասիական (Հայկական Լեռնաշխարհի) զարգացման միասնական-ընդհանրական ծիրում է, որի անառարկելիությունը վավերականություն ստանում է «Սասնա Ծռեր» հայոց անմահ մեր էպոսում: Եվ Հայաստանում թեև տեղեկատվական հարուստ նյութ, ազգագրական բազմաբնույթ գիտելիքներ կուտակվել են հազարամյակներ առաջ, ազգագրությունը, սակայն, որպես գիտություն, հիմնավորվել է 19-րդ դարում: Մասնավորաբար նշված ընդարձակ տարածքների վրա պատմականորեն ձևավորված և ապրած հայ ժողովրդի մասին ազգագրական բնույթի տեղեկությունների ենք հանդիպում անխտիր ամենուր՝ ժայռապատկերներում և, անհաշվելի ժամանակ, նաև դրանից էլ առաջ, «տարալեզու» սեպագիր արձանագրություններում, այբուբենագիր Աստվածաշնչում, հայ, նաև օտար անջատալեզու մատենագրություններում, գրական հնավանդ ստեղծագործություններում, «բարբառագիտական»-բանահյուսական, ինչպես և հնագիտական տարատեսակ նյութերում՝ սիմվոլ-խորհրդանիշներով միասնաձույլ ու անօտարելի:

Արդեն 19-րդ դարի առաջին տասնամյակներում Մեսրոպ Թաղիադյանը, Ղևոնդ Ալիշանը, Խաչատուր Աբովյանը և ուրիշներ հատուկ զննության նյութ դարձրին ոչ միայն իրենց ժամանակի հայ ազգաբնակչության կյանքի ու կենցաղի ամենատար-

բեր ոլորտները, այլև խոհեմ գտնվեցին ի մի հավաքելու պատմական գրականության մեջ ամփոփված ազգագրական բնույթի բազմաթիվ հիշատակություններ: Մինչև դարի 2-րդ կեսին Հայաստանում, ժամանակի մի շարք ճանաչված կենտրոններում (Թիֆլիս, Մոսկվա, Պետերբուրգ) հրատարակվող պարբերականներում բավականաչափ նյութ է տպագրվել հայ ազգագրության վերաբերյալ: Փոքր-ինչ ավելի վաղ, նպատակային մի շարք այցելություններ իրականացնելով Հայաստանի որոշ վայրեր և, հետևողական ու համակարգված բանահավաքչական գործունեությամբ զբաղվելով, ազգագրական մեծ ու նշանակալի գործունեություն է ծավալել Գարեգին Սրվանձտյանը:

Ընդօրինակելով ու հետևելով նրան՝ մի խումբ բանահավաք-ազգագրագետներ՝ Ա. Սեդրակյանը, Գ. Շերենցը, Հ. Ալահվերդյանը, Հ. Նազարյանցը, Վ. Տեր-Մինասյանը, Գ. Տեր-Աղեքսանդրյանը և ուրիշներ գրի առան, հավաքեցին, ապա և հրատարակեցին ազգագրության և բանահյուսության տարբեր ոլորտների նյութեր:

1887-ին Մոսկվայում Գրիգոր Աբրահամի Խալաթյանցը կազմեց ազգագրական կարևոր նյութերի հավաքման գիտականորեն հիմնավորված ծրագիր («Ազգագրական հարցարան»), համաձայն որի Երվանդ Լալայանը իսկույն հավաքեց և հրատարակեց նմանաբնույթ բավականաչափ հարուստ նյութ: Նաև հիմնադրվեց «Ազգագրական հանդես» մասնագիտական պարբերականը (1895-1916թթ.), ուր և շուտով տպագրվեցին Հայաստանի ամենատարբեր նահանգների ու գավառների (Ջավախք, Վասպուրական, Գողթն, Արցախ ևն) վերաբերյալ արժեքավոր ուսումնասիրություններ:

Պատկառելի նյութ հրատարակվեց նաև «Էմինյան ազգագրական ժողովածուում» (1901-1913թթ.): Նշանակալի էր ազգագրագետներ Ս. Հայկունու, Ա. Երիցյանի, Գ. Տեր-Հովհաննիսյանի, Ս. Եղիազարյանի, Խ. Սամուելյանի և այլոց ավանդը:

Արդեն այս շրջանում էլ (19-րդ դարի վերջ և 20-րդ դարի սկիզբ) աստիճանաբար տարանջատվեցին ազգագրությունն ու բանահյուսությունը՝ վերածվելով գիտության միանգամայն ուրույն բնագավառների:

Ե. Լալայանը, Խ. Սամուելյանը, Ս. Լիսիցյանը և ուրիշներ, խորհրդային կարգերի հաստատումից անմիջապես հետո, բեղմնավոր գործունեություն ծավալեցին: Հիշյալ մեր հայրենանվեր ազգագրագետները խելամտորեն օգտագործեցին նաև նորագյուտ տեխնիկական միջոցները՝ լուսանկարում, ձայնագրում, չափագրում, քարտեզագրում, կինոնկարահանում և այլն: Այլևս 20-րդ դարի կեսերին գործել սկսեց ազգագրագետ-բանահավաքների հերթական սերունդը, որոնց մեջ երևելիներից էր Վարդ Բդոյանը: Սերունդ, որ հանգամանորեն ի մի բերեց և հրատարակեց կյանքի տարբեր կողմերին վերաբերող արժեքավոր հետազոտություններ՝ հնարավորություններ ստեղծելով հայ իրականության մեջ մշակութային առումով արժեքավոր նյութերի քարտեզագրման և ատլասավորման, մարդաբանական և էթնո-

սոցիոլոգիական ուսումնասիրությունների արդյունավետ կատարման համար: Այս մեծավաստակ մարդկանց ջանքերի շնորհիվ հրատարակվեցին և լայն լսարանի սեփականությունը դարձան ինչպես թեմատիկ-ուսումնասիրական բնույթի աշխատություններ, այնպես էլ ոչ քիչ ընտրովի նյութեր՝ ըստ Հայաստանի պատմաազգագրական շրջանների:

Կատարված է իրոք մեծ և շնորհակալ աշխատանք: Ճշմարիտ գնահատականը և Վարդ Բդոյան գիտնականի կեսդարյա տքնության արժեորումը հայտնապես գալիք սերունդների խորունկ երախտիքն է լինելու, որը սրընթաց ժամանակի հետ առավել բազմապատիկ զգայելի, առավել սրտաբուխ ու հոգևին կդառնա:

Մեկ արձանագրում միայն, որը բազմավաստակ հեղինակի հասցեին, սակայն, թող բնավ մեղադրական նրբերանգ իսկ չունենա՝ գրառում կատարած բնակավայրերի սակավությունը: Ինչպես, ասենք, թուրքերեն վիճակի երգերի դեպքում (ընդամենը մեկ գյուղից), ինչը, ցավոք, չէր կարող չբերել տարբերակային-որակական կորուստների:

Արդարորեն, ի նշան Վարդ Բդոյանի անձի և նրա կատարած գործի հանդեպ խոր և ակնածալի երախտագիտության, նկարի հետ նպատակահարմար գտա զետեղել նաև նրա կողմից ժամանակին հրատարակչությանն ուղղված նամակի ֆաքսիմիլեն, ուր անզարդորեն մտահոգ բառերից էլ ճառագում է հեղինակի մեծ սերը ժողովրդական բառ ու բանի հանդեպ: Միաժամանակ և միևնույն մղումով՝ անխաթար պահպանել եմ նաև տեղանունների գրության հեղինակային նախընտրելի բոլոր ձևերը:

Ցանկում «Ժողովրդական երգեր» բաժնի հեղինակային համարակալումը հանված է, ճշգրտորեն պահպանված է դրանց հերթականությունը, մինչ տեքստում, զուտ պոլիգրաֆիկ-գեղագիտական նկատառումով չգրանցված թվերը, որոշակի դիրքերում, փոխարինված են էրզրումյան մանրանկարչության զարդանախշերով:

Հեղինակի ձեռագրերում և հրատարակության պատրաստած հատվածում նույնպես ժողովրդական երգերի բաժինը փոքր-ինչ «անկանոն» էր ներկայացված. ի մասնավորի՝ երգերի ցանկում ազգագրագետ-բանավաքը խառնիխուռն ներառել է նաև խաղիկներ՝ հավանաբար գրառման ժամանակագրական կարգը պահպանելով: Կարծում եմ՝ ընտրություն կատարելու առանձնահատուկ դժվարություն չկար. ես կարևորեցի ժանրային առումով դասակարգումը:

Բարբառագիտական տեքստերում ձայնավորների վրա լայնորեն տեղադրված զույգ կետերը, որոնք գրության և արտասանության (հնչումի) պարտադիր տարբերություն են ենթադրում, հանվել են իմ կողմից, որով էջերը զերծ են մնացել համատարած կետադրումի միապաղաղ ծանրաբեռնումից: Նկատառումս հստակ է. բարբառը տիրապետողները ճիշտ արտասանության (հնչում-ընթերցումի) որևէ խնդիր չեն ունենա, միանգամայն ավելորդ դարձնելով կետերի կիրառությունը, իսկ չտիրապե-

տողները ճշգրտորեն, ըստ Կարնո բարբառի առանձնահատկությունների, կծանուցվեն բառերի գրության իրական հնչյունակազմին, որոշակի փորձառությամբ՝ թերևս կընտելանան նաև հնչյունավոխվող ձայնավորների ճիշտ արտասանությանը:

Ինչպես ազգագրության, այնպես էլ բանահյուսության բաժնում առկա են հնօրյա ժամանակների, նաև՝ 19-20-րդ դարերի չափային ամենատարբեր միավորներ: Ելնելով ընթերցողի շահերից՝ պարզապես անհրաժեշտ համարեցի ժողովածուի վերջում հնարավորինս ներկայացրել նաև չափակշռային միավորների բացատրությունները՝ կցելով որոշակի ցանկ:

Ժողովածուն արժեքավոր սկզբնաղբյուր կարող է հանդիսանալ բանասերների, ազգագրագետների, հնագետների, պատմաբանների, կովկասագետների, մշակութաբանների, կենցաղագետների, ինչպես նաև կեցության առտնին խնդիրներով զբաղվող հասարակական լայն շրջանակների համար: Կարծում եմ, ավելին՝ համոզված եմ, որ սույն ժողովածուի խորազնին ուսումնասիրությունը մեծապես օգտակար կլիներ արվեստի և գրականության մարդկանց, կինոսցենարիստների, կինոբեմադրիչների, դերասանների, թատրոնի մարդկանց, տարազագետների, պարուսույցների, առհասարակ պատմական լայնակտավ երկ ստեղծող հեղինակների համար նույնպես:

Ժողովածուն ունի բառարան, հարուստ ծանոթագրություններ, որոնք որոշակիորեն լրացվել են իմ կողմից:

Ռաֆայել Ղարիբյան
25. 11. 2013թ.

Հեղինակի կողմից

ավախքը պատմական Գուգարք նահանգի գավառներից է: Նրա «Հնագույն կենտրոնն էր **Քաջատուն** քաղաքը, որը կոչվում էր նաև **Ծունդա**» (Հայաստանն ըստ «Աշխարհացույցի», Երևան, 1963, Ս. Տ. Երեմյան): Ավելի ուշ Ջավախքը վերանվանվել է Ախալքալաքի գավառ՝ նույնանուն կենտրոնով:

Վրաստանում 1921 թվականին խորհրդային կարգեր հաստատվելուց հետո այդ գավառից կազմվել են Ախալքալաքի և Բոգդանովկայի շրջանները, իսկ արևմտյան մասը միացվել է Ասպինձայի շրջանին:

Գավառի կյանքն ու կենցաղն իր արտացոլումն է գտել 19-րդ դարի հայկական, վրացական և ռուսական մամուլում ու գրականության մեջ: Երկրամասն առանձնակի լայն ուշադրության է արժանացել «Մշակ», «Նոր Դար», «Արձագանք», «Արարատ», «Փորձ», «Կռունկ Հայոց աշխարհին» և «Ջավախք» պարբերականների կողմից: Նրա քաղաքական կյանքը միջնադարում արծարծվել է հայ և վրաց մատենագրության մեջ (Մովսես Խորենացի՝ «Պատմութիւն Հայոց», Փաւստոս Բուզանդ՝ «Պատմութիւն Հայոց», «Աշխարհացույց», 1963, Ստեփանոս Օրբելեան՝ «Պարմութիւն Նահանգին Սիսական», Թիֆլիս, 1911, Մատթէոս Ուռհայեցի՝ «Ժամանակագրութիւն», Բ տպագրություն, 1898թ., Վաղարշապատ, Լ. Մելիքսեթ-Բեկ՝ «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հ. Ա, Երևան, 1934, հ. Բ, Երևան, 1936): Վրաց մի շարք պատմագիրների երկերը հենց Լ. Մելիքսեթ-Բեկի հայերեն թարգմանությամբ ամփոփվել են երկու գրքում:

1828-1829 թվականների ռուս-թուրքական պատերազմի հետևանքով առաջացած արևմտահայերի արտագաղթի և Ջավախքում, Հայաստանում, ինչպես նաև զանազան վայրերում նրանց տեղավորվելու վերաբերյալ համառոտ ուսումնասիրություններով ու լուսաբանող ակնարկներով հանդես են եկել Հովակիմ Գեղամյանցը (Կարապետ արքեպիսկոպոս, տե՛ս «Փորձ», 1876, թիվ 1), Վ. Պոտտոն («Կովկասյան պատերազմը», Թիֆլիս, 1887), Գյուտ ավագ քահանա Աղանյանցը («Կարնո գաղթը», Թիֆլիս, 1891), Աղ. Երիցյանցը («Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում», հ. Ա, Թիֆլիս, 1894), Հակոբ Կարենյանցը («Խապրիկներ հայրենիքից», տե՛ս 1862 թվական, թիվ 31, «Կռունկ հայոց աշխարհին») Ինչպես նաև ուրիշներ. ասենք՝ Կ. Գ. Ղաֆադարյանը, («Նյութեր Ախալցխայի հայ համայնքի պատմության վերաբերյալ», տե՛ս ՊԲՀ, 1967, թ-1):

Գաղթին հաջորդող շրջանում Ջավախքի մասին տեղեկություններ են հաղորդել Ի. Ի. Պանտյուխովը. դարավերջին զբաղվել է գավառի առողջապահության հարցե-

րով («Ախալքալաքի գավառ, բուժա-մարդաբանական ակնարկ», Թիֆլիս, 1892), նաև՝ Ի. Պ. Ռոստոմովը. հետազոտել է այս գավառի ճարտարապետական հուշարձանները («Ախալքալաքի գավառը հնագիտական տեսանկյունից». պրակ 25-րդ, 1898 թ., Թիֆլիս): 1918 թվականին Ջավախքի հայ ժողովրդի եղեռնական պատմությունն առանձնակի արտացոլում է գտել «Մշակ» թերթում և այլ պարբերականներում (տե՛ս «Մշակի» 1918-1919թթ. համարները):

Ախալքալաքի գավառի ֆիզիկա-աշխարհագրական հարցերը տեղ են գտել Ե. Լալայանի «Ջավախք» աշխատությունում (տե՛ս «Ազգագրական հանդես», Շուշի, 1896), Հ. Կարապետյանի 1929 թվականին Թիֆլիսում լույս տեսած «Ախալքալաքի գավառի երկրաբանական նկարագրությունը» աշխատությունում, Հ. Ս. Էփրիկյանի «Պատկերազարդ բնաշխարհիկ բառարանում» և այլոց ուսումնասիրություններում: Մասնավորաբար՝ Ջավախեթիայի «Նյութեր Ախալքալաքյան լեռնաշխարհի բնական պաշարների ուսումնասիրության վերաբերյալ»:

Ջավախքի երկրագործության և վերջինիս տեխնիկայի վերաբերյալ նյութերը թերևս առաջին անգամ 19-րդ դարի վերջին գրի է առել ազգագրագետ Հովհաննես Մալխասյանը («Հայ գեղջուկի ալբոմ», տե՛ս ԱՀ, 3-րդ, 1898 թիվ: Համեմատել մեր «Երկրագործական մշակույթը Հայաստանում» աշխատության հետ, Երևան, 1972թ. էջ 150-165):

Գավառի այգեգործական գոտու (Կուրի և Թափարավանի գետախառնուրդի ավազան) դարավանդային հողագործությանն է նվիրված Ն. Չիճավաձեի կողմից կատարված ուսումնասիրությունը (Ն. Չիճավաձե, «Տեչասուլի մոշաթմոքմեղեբա սաքառթվելոշի», Բաթումի, 1976):

Ջավախքի և Բարձր Հայքի նյութական, նաև հոգևոր մշակույթի, տնտեսական զբաղմունքների և այլ բնագավառների վերաբերյալ լրացուցիչ տվյալներ գրի առնելու նպատակով մենք հատուկ ծրագրով նյութեր ենք հավաքել 1915 թվականին Շիրակ գաղթած Կարնո գյուղացիներից և Ջավախքի բանասացներից: Այս աշխատանքին մենք ձեռնամուխ ենք եղել 1950-ական թվականներից սկսած (տե՛ս իմ անձնական արխիվը, թիվ... թիվ... 6, 7, 107ա, 107բ, 108, 109, 110, 111, 112):

19-րդ դարի վերջերի և 20-րդ դարի սկզբների արհեստագործությունը մեզ են ներկայացրել մի քանի գիտնականներ: Այսպես, օրինակ, Հ. Գեղամյանցը դեռևս 1870-ական թվականներին հեղինակած մի աշխատության մեջ նկարագրել է Ախալքալաքի արհեստների մի մասը («Ախալցխայից մինչև Անի», «Փորձ», 1879, թիվ 12): Խ. Ա. Վերմիշևը գրել է «Թիֆլիսի նահանգի Ախալցխայի և Ախալքալաքի գավառների պետական գյուղացիների տնտեսական կացությունն ու կենցաղավարությունը» (տե՛ս «Նյութեր Անդրկովկասյան երկրամասի պետական գյուղացիների տնտեսական կենցաղավարության ուսումնասիրության համար», հ. 3-րդ, Թիֆլիս, 1886):

Գրիգոր Վանցյանը, Երվանդ Լալայանը և Վրթանես Փափազյանը Ախալքալաքի հայ բոշաների տնայնագործությանն անդրադարձել են 1890-ական թվականներին: Գր. Վանցյան, «Հայ բոշաներ», «Մուրճ» ամսագիր, 1892, թիվ 7-8, Վ. Փափազյան, «Հայ բո-

շաներ», ԱՀ, 3-րդ, էջ 74-90, 4-րդ, էջ 203-275, Ե. Լալայան, «Հայ բոշաներ», ԱՀ, 1-ին, էջ 178-185:

Ջավախքի արհեստներին վերջերս անդրադարձել են նաև Վ. Աբրահամյանը և Ս. Շիրինյանը: Վ. Աբրահամյանը հեղինակել է «Հայ համքարությունները Անդրկովկասի քաղաքներում» (Երևան, 1971թ.): Ս. Շիրինյանի գրչին է պատկանում. «Ախալքալաքի արհեստները» (Երևանի համալսարան, 1980, թիվ 3) գիրքը:

Ե. Լալայանը, Հովհ. Մալխասյանը և Ստ. Լիսիցյանը տարբեր ժամանակներում, հակիրճ նկարագրությամբ, նյութեր են հրատարակել գյուղական ու նաև քաղաքային զգեստների, ժողովրդական կառույցների, փոխադրամիջոցների ու կահկարասիների վերաբերյալ: Ե. Լալայան, «Ջավախք», ԱՀ, 1, էջ 227-231, էջ 224-226: Ստ. Լիսիցյան, «Բարձր Հայքի գյուղական կացարանները», «Կովկասյան պատմա-հնագիտական ինստիտուտի տեղեկագիր», Թիֆլիս, 1926, հ. 4, էջ 55-70, Հովհաննես Մալխասյան, «Հայ գեղջուկի ալբոմը», ԱՀ, 3, էջ 384-388, նշված աշխատությունը, ԱՀ, 6, էջ 193-230:

Վերոհիշյալ նյութերը, սակայն, խիստ պակասավոր են: Ուստի տարիների հետ անհրաժեշտություն է առաջացել գրի առնել, լրացնել ու նաև ամբողջացնել նյութական մշակույթի բոլոր բնագավառների վերաբերյալ տեղեկությունները: Ցավոք, համարյա իսպառ բացակայում են լուսանկարչական նյութերը: (Տե՛ս իմ անձնական արխիվը, թիվ ... թիվ 110, 111, 112, 113ա, 113բ):

19-րդ դարի և 20-րդ դարի առաջին քառորդի հետազոտողները Ջավախքի իրերի, բնակավայրերի և շենքերի լուսանկարահանումներով չեն զբաղվել: Կամա-ակամա՝ այդ ցավալի թերացման հետևանքով բազմաթիվ իրերի պատկերները գիտության համար այլևս կորած են համարվում: Սույն բացթողումը ուղղելու համար գիտական մեր արշավների ժամանակ ախալքալաքցի հմուտ լուսանկարիչ Մ. Բդոյանի միջոցով լուսանկարվել են հարյուրավոր առարկաներ ու տեսարաններ: Իսկ այն իրերը, որոնք կորստյան մատնված են համարվում, համենայն դեպս, դրանց մի զգալի մասը, որոնց արտաքին ձևը պահպանվել էր ժողովրդի հիշողության մեջ, վերականգնվել են մեր կողմից արված նկարագրությունների, պարզաբանումների հիման վրա, հարգարժան նկարիչ Վահան Սողոմոնյանի ձեռքով:

Ծանուցողական հակիրճ իմ խոսքում խորին երախտագիտությունս եմ ուզում հայտնել բոլոր նրանց, բոլոր այն մասնագետներին և հասարակ մարդկանց, կազմակերպություններին, ովքեր տասնամյակներ շարունակ անշահախնդրորեն օգնեցին և թիկունք եղան ինձ իմ գործունեության մեջ՝ գիտակցելով մեր հոգևոր գանձերի պահպանման կարևորությունն ու հրատապությունը մեր ժողովրդի դժվարին ընթացքի մեջ, դժվարին վերելքների ճանապարհին:

Հարգանքով՝

Վարդ Հարությունի Բդոյան



ԱՎԱՅԻՆ ՀԱՅՈՑ ԱՌԳԱՎԳՐՈՒԹՅՈՒՆԸ



ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՊԱՏՄԱՆՇԻՎՐԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ջավախքի սահմանները: Բուսական ու կենդանական աշխարհը: Զրագրություն: Հին բնակավայրերը: Հին բնակչությունը: Պատմական համառոտ ակնարկ. 1830թ. գաղթը: Գաղթականության վիճակագրությունը: Գաղթողների տեղաբաշխումը: Քաղաքը: Թուրքական արշավանքը և Ջավախքի հայոց նոր գաղթը 1918թ.: Թուրքական երկրորդ արշավանքը և ժողովրդի ազատագրումը Վրաստանում սովետական կարգեր հաստատվելու շնորհիվ: Ջավախքի կուլտուրական կյանքը:

Ջավախքի արևելյան սահմանը կազմում են Սամսարի և Ջավախքի լեռները, արևմուտքում Կուր գետի հովիտն է, հարավում՝ Ախալքալաքի սարավանդի շարունակությունը կազմող Ղուկասյանի շրջանի սարահարթը, հյուսիսում՝ Թռեղքը: Ջավախքի այժմյան տարածությունը հաշվում են մոտ 700 կմ^2 և միջին բարձրությունը՝ 1800 մ.[1]: Ե. Լալայանը այդ սահմանները ներկայացնում է բոլոր մանրամասներով, որ մեջբերում ենք ամբողջությամբ. «Սրա սահմաններն են, հյուսիսից Գորվա գավառի Բորժոմի հասարակությունը Տավ-Գոթելի սարով, որ գտնվում է Ախալքալաքի, Բորժոմի և Ծալկայի սահմաններում, Տմսխուր (Տաբաձղուրի) լճով, Մոլիտ գյուղից հարավ ձգվող փոքրիկ բլրակներով, Ախալցխայի գավառը՝ Ճռուչ սարով, Ցիպիրետիսկեղի լեռնաշղթայով և Կյուպոկլու սարով: Արևմուտքից՝ Ախալցխայի գավառը՝ Կուր գետով: Հարավից՝ Արտահանի գավառը Խոզապին լճով, Գյոգդաղի լեռնաշղթայով, Ուչ-թափալար լեռով, Օրթուլ-դաղ սարով, որ կանգնած է Ախալքալաքի, Արտահանի և Ալեքսանդրապոլի սահմանագլխում. Ալեքսանդրապոլի գավառը՝ Մատատապի սարերով: Արևելքից՝ Ծալկան՝ Ղարախաչի լեռնաշղթայով, Մոկրիտ սարերով, Դավաղրան շղթայով, Մարսևի ձորով, Իլան-դաղ, Ղոյուն-դաղ, Պիկետ, Գրեչիշնի սարերով, Սամսարի լեռնաշղթայով, Ղարաղուզեյ, Շավնաբաթ կամ Դալի-դաղ, Բեբեր և Տավ-Գոթելի սարերով:

Այս գավառը ձգվում է զուգահեռականների ուղղությամբ 40-55, իսկ արևմուտքից արևելք՝ 30-60 վերստ: Ամբողջ տարածությունն է՝ 2392, 86 քառակուսի վերստ^2»:

Սա Ախալքալաքի նախկին գավառն է, որ գտնվում էր 61^0-61^{0}35 հյուսիսային լայնության և 41^{0}35-41^{0}5 արևելյան երկարության տակ[3]: Նրա սահմանային և կըտրող լեռնաշղթաներն ու խոր ձորերը խիստ բազմազան են դարձնում երկրամասի

1 Հայկական սովետական հանրագիտարան (այսուհետև՝ ՀՍՀ), հ 1, Երևան, 1974, էջ 198: (Տարբեր հեղինակներ Ջավախքի պատմա-աշխարհագրական թերևս տարբեր սահմաններ են նշում: Ծանոթագրումը՝ կազմողի՝ Ռ. Ղ.):

2 Ե. Լալայան, Ջավախք (ԱՀ, 1, էջ 125-126):

3 Ե. Լալայան, նշվ. աշխ. (ԱՀ, 1, էջ 125):

մակերեսը և կլիման: Աբուլ-Սամսարի կամ Խոնավ լեռների լեռնաշղթան, որը միջին հաշվով ծովի մակերևույթից բարձր է 2865 մ., ունի մի շարք լեռնագագաթներ. Մեծ Աբուլը ծովի մակերևույթից բարձր է 3300 մ., Փոքր Աբուլը՝ 2801 մ., Սամսարը՝ 3264 մ., Գոդերեբին՝ 3190 մ., Քյոռ-Օղլին՝ 2925 մ. և Տավ-Գոբելին (Տավկվետիլի)՝ 2807 մ.[4]: Աբուլ-Սամսարին զուգահեռ ձգվում են Չլդրի լեռները՝ բարձր գագաթներով, որոնցից Օրթուլու-դաղը՝ 2447,5 մ., Ուչ-թափալարը՝ 2677 մ., Ինակ-թափան՝ 2884,6 մ. և Գյոգ-դաղը՝ 2603 մ.[5]:

Ջրագրություն: Ջավախքը ջրային պաշարների միջին ապահովվածություն ունի:

Գլխավոր գետը Թափարավանն է, որը, երկրամասի միջով անցնելով, իր մեջ աջից ու ձախից ընդունում է մի շարք գետեր, գետակներ ու բազմաթիվ աղբյուրների ջրեր: Այն սկիզբ է առնում Փարվանա լճից, հոսում է Գանձա գյուղի միջով և Խրթվի-սի ամրոցի մոտ խառնվում Կուր գետին: Վերին հոսանքում նա ընդունում է Դիլիֆի աղբյուրներից գոյացող Քառասունաղբյուր գետը[6]:

Թափարավանը, Գանձայով անցնելով, թափվում է Տուման կամ Սաղամո լիճը, ապա այստեղից հասնում Ղաուրմայի ձորն ու խառնվում Սաթխա գետակին:

Մադաթափինկա գետակն սկիզբ է առնում Մադաթափա լճից և, 11 կմ հոսելուց հետո, Գորելովկա գյուղի մոտ միանում է Բուղդաշենի լճից սկիզբ առնող գետակին: Այս միախառնված գետակները կազմում են Օրլովկա գետը, որը ևս թափվում է Թա-փարավանի մեջ: Խոջաբեկ գյուղի միջով հոսող գետակը, որ հայտնի է Ագրի-չայ անունով և սկիզբ է առնում Խանչալլի լճից, նույնպես միանում է Թափարավանին:

Ներկայիս Ախալքալաքի շրջանի տարածքում Թափարավանը, ձախ կողմից Քառասունաղբյուրն ընդունելուց հետո, աջ կողմից ընդունում է Մեծ Ջուր և Ճոբա-րեթ գետերը: Ճոբարեթ գետը կազմվում է Ճոբարեթ և Թեթրով գետակներից, որոնք սկիզբ են առնում շրջանի հյուսիսային սահմանից և իրար են միանում Խանդո գյու-

4 Օ. Կարապետյան, Ախալքալաքի գավառի երկրաբանական նկարագրությունը, Թիֆլիս, 1929, էջ 7. հմմտ. Ե. Լալայան, նշվ. աշխ. (ԱՀ, 1, էջ 127-128):

5 Օ. Կարապետյան, նշվ. աշխ., էջ 8:

6 Քառասուն աղբյուրը հայտնի է նաև Կըրխ-բուլախ (Օ. Կարապետյան, էջ 56) և Գենդարսու անուններով (Վ. Պոտտո, Կովկասյան Պատերազմը, հ. 4, թող. 1, 1887, էջ 100, 105): «Գենդար» բառը ծագել է Մեծ Գյոնդուրա գյուղի անունից, որի միջով անցնող գետը ուղղվում է դեպի Ղուլալիս: Մեծ Գյոնդուրա, Փոքր Գյոնդուրա, Դիլիֆ, Մամզարա և Ղուլալիս գյուղերը տեղավորված են այն հարթ տարածության վրա, որի ամբողջ հարավ-արևելյան սահմանը գրկում է Դիլիֆից մինչև Մամզարա ձգվող լեռնապարը: Մեր համոզմամբ, Գյոնդուրա տեղանունը ծագել է աշխարհագրական այս դիրքից՝ գյոնդ-գովանդ քրդ. «պար» բառից, որը խորհրդանշում է լեռնապարը և դուրան-հարթ բառից՝ «Պարահարթ» նշանակությամբ:
(Որևէ տեղանուն կամ բառ որևէ օտար լեզվի բառիմաստով բացատրելը մեր կարծիքով գիտական հիմնավորում ունենալ չի կարող. «Աստվածաշունչը» հստակ հուշում է, որ գոյություն ունեն ոչ թե առանձին լեզուներ, այլ խառնակված մեկ հիմնալեզու: Ծանոթագրումը՝ կազմողի՝ Ռ. Ղ.):

ղից ներքև: Մեծ Ջուրը կամ Կորխ գետը, որը Թափարավանի ամենամեծ վտակն է, գոյանում է Ջալիլ, Խմեթի Խևի և այլ գետակներից:

Ղաուրմա գյուղից սկսած՝ Թափարավանը մտնում է խոր և ժայռապատ կիրճի մեջ և, շարունակելով ընթացքը, միանում է Կուր գետին:

Ջավախքը հակառակ հոսող ջրերի սակավության, հարուստ է լճերով, որոնք մեծ մասամբ առաջացել են երկրաշարժերից և հրաբխային լավաներից առաջացած փոսորակներից: Լճերից շատերը ծանծաղ են, ոչ նավարկելի: Լճերի ընդհանուր թիվը հասնում է 9-ի: Դրանք են՝ Փարվանան, Խոզապինը, Տաբածղուրին, Խանչալլին, Տուման գյոլը (Սաղամո), Մադաթափան, Օրլովկան, Բուղդաշենը և Վաչիանը: Կան նաև աննշան լճակներ:

Փարվանա լիճը գտնվում է Ջավախքի հյուսիս-արևելյան սահմանում, շրջապակող լեռների մեջ, ծովի մակերևույթից 2075,5 մ. բարձրության վրա[7]: Հյուսիսից հարավ ձգվող երկարությունը 9,5 կմ է, և լայնությունը՝ 5 կմ՝ 36,68 կմ^2 մակերեսով և 0,70-2,4-2,80 մ. խորությամբ[8]: Այս ձկնառատ լճի մեջ թափվում են հյուսիսից՝ Քառսունակ կամ Չաշկա, արևելքից՝ Մակարդարասու և Մարսևու գետակներն ու արևմուտքից՝ Տամբովկա գետակը[9], որոնք, բացի Քառսունակից, ամռանը բոլորն էլ չորանում են: Ասփարայի և Տամբովկայի միջև կա ավելի քան 20 աղբյուր. մի քանի աղբյուր էլ կա Ասփարայի և Վլադիմիրովկայի միջև[10]:

Տուման-Սաղամո լիճը ծովի մակերևույթից բարձր է 1997,4 մ., երկարությունը 3 կմ է, լայնությունը՝ 1-2 կմ, հայելին՝ 4, 66 կմ^2, խորությունը՝ 1,5-2,6 մ.[11]: Բացի Թափարավան գետից, Տուման գյոլի մեջ թափվում են մի շարք աղբյուրների ջրեր և Բոյուկդարայի (Մեծ ձորի) գետը:

Մադաթափա լիճը գտնվում է Տուման լճից 13-14 կմ հարավ: Նրա ափին են գտնվում Եֆրեմովկա և Տրոիցկոյե գյուղերը: Այն ծովի մակերևույթից բարձր է 2111 մ., մակերեսը 8,5 կմ^2 է, և խորությունը՝ 1,4 մ.: Աղբյուրների բացակայության պատճառով բնակչությունն օգտվում է լճի ջրից: Սրա հյուսիսային ափին է կառուցված Ժդանովական գյուղը: Լճում ձուկ չի բազմանում. նրա մեջ թափվող մի քանի առվակները, բացի Կուրյանչայից, ամռանը չորանում են:

Գորելովկա գյուղի մոտերքում է գտնվում Բուղդաշեն լիճը, ծովի մակերևույթից 2041,9 մ. բարձրության վրա, 0,35 կմ^2 մակերեսով, 1,4 մ. խորությամբ[12]: Այս լճից 4 կմ

7 Օ.Կարապետյան, էջ 37:

8 Անդ, էջ 38:

9 Ե. Լալայան, նշվ. աշխ. (ԱՀ, 1, էջ 130):

10 Օ. Կարապետյան, էջ. 38-39:

11 Անդ., էջ 40:

12 Օ. Կարապետյան, էջ 45-46:

հյուսիս-արևմուտք, Օրլովկա գյուղի մոտ, գտնվում է համանուն լիճը՝ մի քանի հարյուր մետր խորությամբ:

Օրլովկա լճից դեպի արևմուտք գտնվում է Խանչալլի լիճը, որը տարածվում է հարավ-արևելքից հյուսիս-արևմուտք՝ Գյոկ-դաղ և Ինակ թեփե լեռների հյուսիսային ստորոտում՝ ծովի մակերևույթից 1929,9 մ. բարձրությամբ, 7 կմ երկարությամբ, 1,5-3 կմ լայնությամբ, 13 կմ^2 մակերեսով, 0,5-0,8 մ. խորությամբ: Ձկներ գրեթե չեն բազմանում:

Խանչալլի լճի մեջ են թափվում Մեծ Խանչալլի գետակը և Փոքր Խանչալլի գյուղի լեռներից հոսող մի շարք առուներ:

Խանչալլի լճի արևելյան ափին են հաստատված Մեծ Խանչալլի, իսկ հարավային ափին՝ Փոքր Խանչալլի գյուղերը:

Այս լճից հյուսիս-արևմուտք, ծովի մակերևույթից 1749,5 մ. բարձրության վրա, Սուրբ սարի ստորոտում, Վաչիան գյուղի մոտ է գտնվում համանուն լճակը: Դրանից դեպի հյուսիս-արևմուտք 5 կմ հեռավորության վրա, ծովի մակերևույթից 1721,6 մ. բարձր գտնվում է Ջրես լճակը[13]:

Ծովի մակերևույթից 1900,6 մ. բարձրության վրա, Ջավախքի հյուսիսային սահմանագլխին, տարածված է Տաբաձղուրի լիճը՝ 4 կմ երկարությամբ, 3,5 կմ լայնությամբ, 14 կմ^2 մակերեսով և 1-24,7 մ. խորությամբ: Այն բոլոր կողմերից շրջափակված է լեռներով. հյուսիսային ափին կառուցված է հայկական Ղզլքիլիսա գյուղը: Լճի մեջ թափվում են միայն Ղզլքիլիսա գյուղի մոտով հոսող աղբյուրների ջրերը, իսկ նրանից տեսանելի արտահոսք չկա: Ենթադրվում է՝ Մեծ Ջուր գետի ակունքները գոյանում են Տաբաձղուրի լճից: Լճի ջուրը քաղցրահամ է, հատակում ունի տաք աղբյուրներ, որի հետևանքով էլ նա բոլոր լճերից ուշ է սառչում և գարնանը շուտ էլ ազատվում է սառցաշերտից: Նախկինում այս լճի մեջ միայն իշխան ձուկ էր ապրում, իսկ այժմ այլ ձկնատեսակներ նույնպես կան: Ջավախքի խոշորագույն լճերից է Խոզապինը, որը հայ մատենագրության մեջ հայտնի է Ծովակն Հյուսիսոյ[14], իսկ վրաց մատենագրության մեջ՝ Պաղակացիս: Այս լիճը փաստորեն կապ չունի Թափարավանի ջրավազանի հետ: Այն գտնվում է գավառի հարավային մասում, ծովի մակերևույթից 1880,7 մ. բարձրությամբ, 9 կմ երկարությամբ և 5 կմ լայնությամբ: Նրա մեջ թափվում են մի քանի աղբյուրներ և մի փոքրիկ գետակ հյուսիսային կողմից: Բայց արտահոսք չունի: Ջուրը հագեցած է հանքային նյութերով, ուստի ձկներ չունի[15]: Լճի մեջ կա չորս կղզի, որոնց վրա վայրի բադեր են բնադրում[16]:

13 Օ. Կարապետյան, էջ 49:

14 Ս. Տ. Երեմյանի այս վկայությունը տե՛ս «Աշխարհացոյց», էջ 87:

15 Օ. Կարապետյան, էջ 53:

16 Ե. Լալայան, նշվ. աշխ. (ԱՀ, 1, էջ 132):

Խոզապին լճի կեսը գտնվում է Ջավախքի և մյուս կեսը՝ Արտահանի տարածքում. կենտրոնով անցնում է ԽՍՀՄ և Թուրքիայի պետական սահմանը:

Ջավախքի հանքային ջրերը սակավ են և բուժման տեսակետից ցայսօր օգտագործվում են ժողովրդական եղանակով: Այդպիսին են Սարոյի, Ալաստանի մերձակայքի, Վառոյի, Ել-ջերմուկի, Խանդոյի, Խրթվիսի ճանապարհի վրայի, Կուր գետի ափի, Խոզապինի մոտերքի, Մրագվալի մերձակայքի, Չխարտբելիի, Ջագյուրտան լեռան ստորոտի ջերմուկները[17]:

Շնորհիվ մթնոլորտային տեղումների, Ջավախքի բուսական ծածկույթը, հատկապես լեռնային վայրերում, հարուստ ու փարթամ է: Սքանչելի արոտավայրերը և մարգագետինները մեծապես նպաստում են անասնապահության զարգացմանը: Կուրի հովտում՝ Խրթվիսի ձորակում և Մարդաստանում, աճում են պտղատու ծառեր, բայց խիստ սակավ են անտառները: Երբեմնի տարածուն անտառներից մնացել են Ճոբարեթի, Չըխըդջուրի և Սամսար սարերի անտառները՝ ընդամենը 7000 հա տարածությամբ:

Ջավախքը հարուստ է թռչնաշխարհով և աղքատ՝ վայրի կենդանիներով: Այստեղ ձմեռը տևում է համարյա 6-7 ամիս՝ հոկտեմբերի կեսից կամ նոյեմբերի սկզբներից մինչև ապրիլի վերջը կամ մայիս ամիսը:

Ջավախքը բնակեցված է եղել հնագույն ժամանակներից սկսած: Այստեղ հայերը ապրել են նախաուրարտական ժամանակներից: Միջնադարյան քաղաքներից և բերդաքաղաքներից հայտնի են Քաջատունը (Ծունդա), Թմկաբերդը (Թմոգվի), Վարձունիքը, Խրթվիսը և Ախալքալաքը:

Միջին դարերից, սակայն, գյուղական բնակավայրերի վերաբերյալ վկայություններ և վիճակագրական տեղեկություններ մեզ չեն հասել, թեև դրանց ավերակների թիվը տասնյակների է հասնում: Ինչ որ կարելի է ցույց տալ, վերաբերում է միայն 19-րդ դարի վերջերին, որ կատարվել է շնորհիվ ռուսական հաստատությունների գործունեության: Այսպես, օրինակ, բնակավայրերի թիվը Ջավախքում 1886 թվականի տվյալների համաձայն հասնում էր 110-ի՝ առանց քաղաքի: Ընդ որում, 110 գյուղերը բաժանված էին 10 հասարակության, կենտրոն ունենալով Արագովան՝ 13 գյուղով, Բարալեթը՝ 23, Վարնանը՝ 9, Վաչիանը՝ 11, Գարելիան՝ 8, Դիլիսկան՝ 9, Կարծախը՝ 10, Սաթխան՝ 8, Խրթվիսը՝ 11, Հեշտիան՝ 8 գյուղերով[18]:

Ստ. Օրբելյանի վկայությամբ՝ Ջավախքի բնակչությունը **ջավախուրնի** էր կոչվում: Դրա մեջ մտնում էին գերակշիռ մեծամասնություն կազմող հայերը, այնուհետև՝ թուրքեր, վրացիներ և վերաբնակված այլ ժողովուրդների ներկայացուցիչներ:

1894թ. Ջավախքի սահմաններում ապրում էին 49.807 հայեր (71%), 7272 ռուս-

17 Անդ, էջ 136. Օ. Կարապետյան, էջ 61-62:

18 Ստ. Օրբելյան, հմմտ. «Աշխարհացոյց», էջ 78:

ներ (11%), 4372 թուրքեր (6,6%), 3714 վրացիներ (5,6%), 590 քրդեր, 52 հրեաներ և 6 լեհեր (5,8%), ընդամենը՝ 65.813 մարդ: 1895-ին բնակչության ընդհանուր թիվը հասել էր 66.502 մարդու:

Վրաստանի Հանրապետության Ախալքալաքի, Բոգդանովկայի և Ասպինձայի ներկայիս տարածքը՝ 2672 կմ^2, կազմում է Ջավախքի գավառը: Աշխարհագրական բարձր դիրքի պատճառով այս գավառը միջին դարերում հայտնի էր նաև **Ջավախք վերին գավառ,** իսկ վրաց մատենագրության մեջ՝ Քվեմո Ջավախեթի անունով: Ըստ 7-րդ դարի «Աշխարհացոյց»-ի՝ Ջավախք Վերինը Գուգարաց բդեշխության 8-րդ գավառն էր Քաջատուն կենտրոնով[19]:

1872-ին, երբ Ախալցխան ուներ 18.269 բնակիչ, Ախալքալաքում ապրում էր 3120 հոգի (տե՛ս ՊԲՀ, 1967, թիվ 1, էջ 120), իսկ 1970-ին՝ 10.8 հազար բնակիչ (ՀՍՀ, 1, էջ 197):

Լինելով վրաց աշխարհին սահմանակից գավառ՝ Ջավախքը հաճախակի է ենթարկվել վրացական իշխանությունների և կովկասյան լեռնականների հարձակումներին: Խաշնարածության համար խիստ նպաստավոր արոտավայրերի տիրապետման կապակցությամբ մղվող կատաղի մարտերը մշտապես մեծ ավերմունքներ են պատճառել գավառին: Խրախուսվելով ֆեոդալական իշխանությունների հրահրումներով՝ վրացական զորքերը պարբերաբար խախտել են հայոց բդեշխության սահմանները, նաև տիրել Ջավախքին: Երկրամասը ետ առնելու համար հայկական իշխանությունները մեկ անգամ չէ, որ կատաղի կռիվներ են մղել:

Վրացական աղբյուրներում կան այդպիսի կռիվների որոշ նկարագրություններ: Դրանցից մեկը կոնկրետ վերաբերում է հայոց Արտաշեսյան հարստության (1-ին դար, մ.թ.ա.)[20]:

Վրաց պատմագիրներից մեկը տրտունջ է հայտնում, որ հայոց Երվանդ թագավորը միացել է Փարսման Արմազեցու հետ և մտել-գրավել «Քարթլիի սահմանները, քաղաք Ծունդան և Արտահանը (Արտանը), մինչև Կուրը և բնակեցրեց Ծունդայում գազանաբարո մարդիկ՝ դևերին ազգակից, և կոչեց Ծունդան (նոր) անունով՝ Քաջատուն, որ թարգմանաբար կոչվում է դևերի տուն»[21]:

Ըստ վրացական մի վկայության, հայերը հարկադրված են եղել Ջավախքը, Ծունդա-Քաջատուն կենտրոնով հանդերձ և Արտահանը հանձնել թագավորությա-

19 Ե. Լալայան, նշվ. աշխ. (ԱՀ, 1, էջ 186, 188, 189): Ի դեպ, նշենք, որ Ախալքալաք քաղաքի բնակչության թիվը 1860-ին 2967 էր, 1893-ին՝ 4303, որից 4084-ը հայեր էին (ՀՍՀ, 1, էջ 198):

20 «Վրաց աղբյուրները...», Ա, էջ 158-159:

21 «Վրաց աղբյուրները...», Ա, էջ 155: Հայերենում **քաջք** բառը մեծ մասամբ չար ոգի է նշանակում: Երվանդ թագավորին վերագրված այս կռիվը որոշ առասպելներում վերագրվել է հայոց Սմբատ սպարապետին: Առասպելն ասում է, թե իբր Սմբատ սպարապետի զորքը այդ քաջքերից է կազմվել, և Ծունդան գրավելիս քաղաքը վերանվանվել է Քաջատուն, որ նշանակում է Դևերի տուն: (Տե՛ս Ի.Պ. Ռոստոմով, ՍՄՕՄՊԿ, թող.25, Թիֆլիս, 1898, էջ 125:

նը, ինչպես դա տեղի է ունեցել Արտաշես 2-րդի օրոք, վրացիների կողմից հետագա օգնության ակնկալությամբ[22]:

Չորրորդ դարում, երբ Արշակ 2-րդի օրոք Գուգարքի բդեշխը դավաճանում է հայոց թագավորությանը և անցնում վրաց կողմը, մեծն սպարապետ Մուշեղ Մամիկոնյանն իր զորքով արշավում է վրաց թագավորի վրա. «Եւ նեղէր զնա մեծապես...և բդեշխն Գուգարաց, որ յառաջն ծառայէր թագաւորին Հայոց և ապստամբեաց, կալեալ գլխատէր...Սոյն օրինակ և որ միանգամ ի կողմանն յայն էին նախարարքն, և ի թագաւորէն Հայոց եղեն ապստամբ, զամենեսեան գլխատէր. և թափէր զամենայն գաւառն և առնոյր պանդանդս, և մնացեալսն ի հարկի կացուցանէր: Եւ զհին սահմանն, որ յառաջուն էր լեալ յերկիրն Հայոց և ընդ երկիրն Վրաց, որ է ինքն մեծ գետն Կուր, այնուհետև յինքն վտարեալ՝ դառնայր անտի»[23]:

Սասանյան Պարսկաստանի տիրապետության շրջանում տեղի է ունենում Հայաստանի առաջին բաժանումը (387թ.), երբ Գուգարքի այլ գավառների հետ Ջավախքն էլ միացվում է Վրաց մարզպանությանը: Որոշ ժամանակ անց Ջավախքին տիրելու համար ծագում են նոր հարցեր: Նույն Սասանյանների օրոք հայերը փորձում են վերագրավել Ջավախքը և, սակայն, պարտություն կրելով, նահանջում են[24]:

Վրաց ժամանակագրության մեջ նշված է նաև Ջավախքում հայեր ապրելու փաստը: Մի այդպիսի ակնարկ կա 4-րդ դարում քրիստոնեություն տարածելու առնչությամբ Վրաստան մտած Նունեի ուղևորության նկարագրության մեջ, ուր ասված է, Փարվանա լճի ափին, ձկնորսների մոտ գտնվող հովիվները հայերեն էին խոսում: Եթե հայերեն խոսողները նույնիսկ վրացի էլ լինեին, այդ լեզուն իմանալն ինքնին հաստատում է Ջավախքի հայաբնակ լինելը:

Հինգերորդ դարում Ջավախքի տերն էր Գուրամ Կուրապալատը[25]: Իսկ արաբական արշավանքների ժամանակաշրջանում Ջավախքի, Թռեղքի, Արտահանի տերն էր Գուրամը: Արաբական տիրապետության շրջանում, երբ Թիֆլիսում նստած էր ամիրա Ալիի որդի Ջափարը, Վրաստանն ավերակների վերածող Աբուլ-Կասիմ Աբու Սաջիի որդին ավերեց նաև Ջավախքը:

Իններորդ դարում Ջավախքի հարավային մասը՝ Գոգշենը, միացվեց հայ Բագրատունիների թագավորությանը, իսկ Ախալքալաք քաղաքը շարունակեց մնալ Վրաստանի կազմում: 11-րդ դարի սկզբին (1008-1012թթ.) Վրաստանի և Աբխազիայի Սմբատ-Բագրատ Բագրատունի թագավորի ձեռքով կառուցվում են Ախալքալաքի բերդի աշտարակները, իսկ Բագրատ 4-րդի օրոք (1044-1047թթ.) կառուցվում են

22 «Վրաց աղբյուրները...», Ա, էջ 159-160:

23 Փավստոս Բուզանդ, 5-ԺԵ:

24 «Վրաց աղբյուրները...», Ա, էջ 175:

25 «Վրաց աղբյուրները...», Ա, էջ 204-205:

բերդի պարիսպները: Ախալքալաքն այնուհետև, իբրև Ջավախքի կենտրոն, փոխարինել է Ծունդային:

11-րդ դարում վրաց Գեորգ թագավորը Դավիթ Կուրապալատին պատկանող Ջավախքը, Տայքի ու Արտահանի հետ, հանձնում է Վասիլ թագավորին: Այդ նույն դարում՝ 1084-ին, վրաց Բագրատ 4-րդ թագավորի օրոք, ինչպես վկայում է Մատթեոս Ուռհայեցին, պարսից բարբարոս Ալփասլան թագավորն ավերում է Ախալքալաքը. «Սուլտանն (Ալփասլան) ահագին բազմութեամբ իւրով մտաւ յաշխարհն Վրաց և մեծավ սրտմտութեամբ մատնեաց զնոսա ի սուր և ի գերութիւն. և իջեալ բանակեցաւ (բնակեցավ) ի գաւառն, որ կոչի Ջաւալիս (Ջավախք), և պատերազմաւ մեծաւ պատեաց զքաղաքն՝ որ կոչի Ախալ (Ախալքալաք) քաղաքն. և առհասարակ զամենայն քաղաքն սրով կոտորեաց՝ զայր և զկին՝ անողորմ և զամենայն քահանայսն և զկրոնաւորսն և զիշխանսն սրախողխող արարեալ. և լցաւ զամենայն քաղաքն արեամբ. և անհամար մանկունս և աղջկունս տարան ի Պարսիկս ի գերութիւն, և գանձս ոսկւոյ և արծաթոյ՝ ականց և մարգարտացն որ ոչ էր թիւ (որոյ ոչ գոյ թիւ)»[26]:

1266 թվականին կազմավորվել է Ախալքալաքի և Ախալցխայի կիսանկախ Սամցխե-Սաաթաբագոյի իշխանությունը[27]: Միջանկյալ տեղեկությունների համաձայն, 13-րդ դարում Ջավախքի կուսակալներ են հանդիսացել Սարգիս Մխարգրձել Թմոգվեցին և Շալվա Թորեցին[28]: Այլ տեղեկություններով՝ 13-րդ դարում Ջավախքը, Սամցխեն ու Կարնո քաղաքը հանձնվում են Թորեցի Գամրկելիին: Խվարազմացիները, ավերելով Տփխիս քաղաքը, բնաջնջում են Ջավախքը, Քարթլին, Թռեղքը և Արտահանը[29]: 1484-ին մոնղոլ Յաղուպ խանը Ախալքալաքն այրում և բնակիչներին գերի է տանում[30]:

Հաճախակի ավերումների ենթարկված Ջավախքն ի վերջո ընկնում է թուրք զավթիչների ձեռքը: 1637-ին թուրքերն այն դարձնում են Ախալցխայի փաշայության կցորդ սանջակը և, այնուհետև, երկար ժամանակ, մինչև 1828 թվականը, տիրում և բոլոր ձևերով կողոպտում են հայերին, ինչպես նաև վրացի վերաբնակիչներին: Հայերն այստեղ հիմնականում զբաղվում էին դաշտամշակությամբ, իսկ Կուրի հովտում, նաև վրացիների հետ միասին, բանջարաբուծությամբ և այգեգործությամբ: Այդ 200 տարիների ընթացքում, հարաբերորեն խաղաղ պայմաններում, նրանք իրենց և թուրք վերաբնակիչների համար կառուցում էին բնակարաններ և տնտեսական շենքեր, իրենց ձեռքին պահում նաև քաղաքի արհեստներն ու գյուղական

26 Մատթեոս Ուռհայեցի, էջ 146:

27 ՀՍՀ, 1, էջ 198:

28 «Վրաց աղբյուրները...», Բ, էջ 34:

29 Անդ, էջ 53:

30 Հ. Խ. Էփրիկյան, Ա, էջ 62:

տնայնագործությունը: Թուրք տիրապետողները զավթել էին Ջավախքի ամենաընտիր վարելահողերը և արոտավայրերը: Հայերն ու վրացիները վարում, ցանում և բերքի զգալի մասը թուրք բեկերին տալով՝ ծայրաստիճան չքավորության մեջ քարշ էին տալիս իրենց գոյությունը: Թուրք բեկերի հողային իրավունքները պահպանվել էին նաև ցարական տիրապետության օրոք: Նրանց կամայականություններին ենթարկվեցին նաև Կարինից ու այլ վայրերից այստեղ տեղափոխված հայերը, և դա՝ ընդհուպ մինչև հեղափոխությունը:

Բռնություններն այն աստիճանի էին հասել, որ Կուրի հովտի բոլոր այգեգործ վրացիները մահմեդականություն էին ընդունել: Դրանց վերջ տալու միտումով 1772 թվականին Կախեթի Հերակլես և Իմերեթի Սողոմոն թագավորները փորձում են ազատագրել Ջավախքը, բայց դա չհաջողվեց:

1801 թվականին Վրաստանը Ռուսաստանին միացնելու շնորհիվ Ջավախքի ազատագրումը Թուրքիայի լծից դառնում է օրակարգի հարց: Մի հանգամանք, որը համընկնում էր նաև ռուսական կայսրության սահմանների ընդարձակման ու ամրապնդման գաղափարին: Ռուսական զորքը քանիցս փորձել է գրավել Ջավախքը, բայց այն հաջողությամբ չի պսակվել: Այսպես, օրինակ, 1807-ին ռուսները Կուրդովիչի հրամանատարությամբ պաշարում են Ախալքալաքը, բայց 2000 զոհ տալով նահանջում են: 1810թ. նոյեմբերի 4-ին դարձյալ գրոհում են Ախալքալաքը և, սակայն, այս անգամ ևս ստիպված են լինում նահանջել: 1811 թվականի դեկտեմբերի 7-ին ռուսական զորքերն ի վերջո գրավում են Ախալքալաքը և նրա բերդը, սակայն Բուխարեստի հաշտության պայմանագրով կրկին այն վերադարձնում են թուրքերին[31]:

Ջավախքի վերջնական ազատագրումը վիճակված էր զորավար կոմս Պասկևիչին (Կոմս Էրիվանսկի): 1828-ին, Կարսը գրավելուց հետո, նա իր զորամասով շարժվում է դեպի Ջավախք՝ Ախալքալաքի բերդը գրավելու: Վ. Պոտտոյի հաղորդման համաձայն, հուլիսի 21-ին նրա բանակը հասնում է Գյոգ-դաղ, այնուհետև, տեղացած ձյան և սաստիկ ցրտի պատճառով, իջնում է Գյոնդուրայի ցածրությը, ամենայն հավանականությամբ տեղավորվում Մեծ Գյոնդուրա հայկական գյուղում, որին պատմագիրը *Գենդարի* անունով է հիշատակում: Հուլիսի 23-ին բանակն արդեն գտնվում էր Ախալքալաքի մերձակայքում, որտեղից պարզ երևում էր, որ քաղաքի լավ ամրացված բերդը գրավելու համար ռազմական հմտություն ու հնարքներ էին պետք: Պասկևիչի հրամանով դիվանագիտական բաժնի աստիճանավոր Սախնո Ուստիմովիչը և մայոր Բերնսը, բերդը հանձնելու առաջարկով, ներկայանում են բերդի կայազորի պետին: Բայց նրանց ներս չեն թողնում, և չորս զինված թուրքեր, ելնելով պարսպապատի վրա, բանակցություններ են սկսում և հայտնում, թե. «Մենք

31 Հ. Խ. Էփրիկյան, էջ 62:

ոչ Երևանի և ոչ էլ Կարսի բնակիչներ չենք, մեք ախալցխացիներ ենք, մեզ մոտ չկան ոչ կանայք, ոչ կայք, մենք կմեռնենք պատերի վրա, բայց բերդը չենք հանձնի»:

Թուրքերին հաղթելու և մեծ կորուստներից խուսափելու նպատակով կոմս Պասկևիչը վճռում է բերդը գրավել թնդանոթահար անելով, և դրա համար հարմար կետ է ընտրում Քառասունաղբյուրի (պատմիչն այն անվանում է Գենդար-սու) ձախ ափը, որը գերիշխում է բերդի վրա: Այստեղ ամրանում է գրոհող Գուդովիչը, իսկ բերդից 3 կմ հեռու տեղավորվում է Պասկևիչի կորպուսը: Գիշերով տարբեր զորախմբեր անցնում են Քառասունաղբյուրի աջ ափը և շրջապատում բերդը: Սկսվում է գնդակոծումը, որի հետևանքով բերդը և պարիսպները աստիճանաբար փլվում են, իսկ ուժասպառ եղած թուրքերը՝ պարտվում: Սկսվում է փախուստը դեպի Թափարավանի ձորը: Փախչող զինվորներից հետ չմնալով՝ անհետանում է նաև բերդապահ Ֆարխաթ-բեկը: Եվ որովհետև թուրքերից ոչ ոք գերի չի հանձնվում, 400 հոգի, Ֆարխաթ-բեկի հետ միասին, ոչնչացվում են: Ռուսներն այս ահեղ կռվում ունենում են 20 զոհ[32]: 1828 թվականի հուլիսի 23-ի նշանավոր օրը վերջ է տրվում թուրքական արյունոտ տիրապետությանն ու բռնություններին Ախալքալաքում:

Ախալքալաքի բերդապահներին օգնության հասնելու նպատակով Կիոս փաշան, 1500 լազերի գլուխն անցած, Արտահանի կողմից շտապում է մտնել Ջավախք: Բայց տեսնելով, որ բերդն արդեն կործանվել է, և պաշտպանները էլ ոչնչացվել են, հեռանում է դեպի լեռները[33]:

Այս մեծ հաղթանակի համար ռուս զորավարներն արժանանում են թագավորական պարգևների:

Ախալքալաքն ազատագրելուց հետո, 1828 թվականի հուլիսի 26-ին, առանց կռիվների Պասկևիչը գրավում է նաև Խրթվիսը[34], որով ամբողջ Ջավախքն անցնում է ռուսական զորքերի տիրապետության տակ:

1829 թվականին ռուսները գրավում են նաև Կարինն ու Բաբերդը: Այդ առաջշարժումն անհանգստացնում է Եվրոպական տերություններին: Նրանց դեսպանների դրդումով՝ Թուրքիան Ռուսաստանին հաշտություն է առաջարկում: 1829թ. սեպտեմբերի 2(14)-ին Ադրիանուպոլսում[35] տեղի է ունենում հաշտության պայմանագրի կնքումը: Պայմանագրի կետերից մեկի համաձայն, այլ վայրերի թվում «Ախալցխայի փաշայությունը՝ Ախալքալաք և Ախալցխա բերդերով», միացվում է Ռուսաստանին: Իսկ 1828-1829թթ. գրավված Կարինը, Կարսը, Բայազետը և Բաբերդը դարձյալ

32 Վ. Պոտտո, Հ. 4, թող. 1, Թիֆլիս, 1887, էջ 104-109:

33 Վ. Պոտտո, նշվ. աշխ., էջ 109:

34 Վ. Պոտտո, նշվ. աշխ., էջ 112-113:

35 Թուրքերը Ադրիանուպոլիսը Էդիրնէ են անվանում: Այն գտնվում է Թուրքիայի Եվրոպական մասում: Քաղաքը կառուցվել է Հռոմի Ադրիանոս կայսեր (117-138 թթ.) կողմից: «Հայ համայնքն այստեղ ձևավորվել է դեռևս բյուզանդական կայսրության վաղ շրջանում», (ՀՍՀ, 1, էջ 42):

վերադարձվում են Թուրքիային: Դավադրորեն ծանր այս պայմանագիրը, որը խիստ անհանգստություն պատճառեց ողջ քրիստոնյա արևմտահայությանը, անմիջապես ծնեց արտագաղթի զարհուրելի միտք ու հեռանկար: Դարերով թուրքական ստորացուցիչ լծից ազատագրվելու հայության թափած արյունն ու հուսավառ ձգտումները դեռ շատ երկար էին շրջափակվելու քրիստոնյա Եվրոպայի և Ռուսաստանի քաղաքական մութ հաշվարկներով ու «քրիստոնեական» բարոյականությամբ: Դա վատթարագույնն էր, որ մահվան դատավճիռ էր հիշեցնում: Հուզված ու խիստ հուսահատված էին հայերը, ովքեր մեծապես նպաստել էին ռուսական բանակի հաղթարշավին: Չարյաց փոքրագույնն ընտրելու հարկադրանքն էր հայերին բաժին ընկել, և նրանք նույնիսկ մտածելու էլ թերևս ժամանակ չունեին: Կարնո հոգևոր առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու և 29 նշանավոր անձանց ստորագրությամբ, 1829 թ. դեկտեմբերի 15-ին գրվում է աղերսական դիմում՝ ուղղված զորավար Պասկևիչին, որով խնդրվում է թույլ տալ, որ Թուքիայից Ռուսաստան գաղթեն այն բոլոր հայերը, ովքեր իրենց հավիտենական հայրենիքում թուրք զավթիչների դրոշն անարգելու և քրիստոնյա ռուսների դրոշի տակ մտնելու հանդգնության համար անխուսափելիորեն դատապարտված են հալածանքների և հոշոտման: Այդ դիմումը, որն այժմ պահվում է Վրաստանի կենտրոնական արխիվում և պատճենը՝ Ախալցխայի գավառագիտական թանգարանում, 1940 թվականին, մանրամասն ծանոթագրությամբ, հրատարակվել է Լ. Մելիքսեթ-Բեկի ձեռքով[36]:

Մենք ներկայացնում ենք այդ դիմումն ամբողջական տեսքով, այնպես, ինչպես կա:

Ի 1829 ի դեկտ. 15, ի Կարին որ է Արզրում Ձերդ պայծառափայլութիւն ֆեռմառշալ գրաֆ Պասկևիչ Երևանու

Ողորմած Տէր մեր

Աղերս ի կողմանէ Արքեպիսկոպոսին Հայոց Կարնո քաղաքի և միաձգամայն ի դիմաց իշխանացն Հայոց նոյն քաղաքի առ Նորին Պայծառափայլություն

Զկնի տիրապետութեան քաղաքիս Կարնոյ ի հաղթական զօրաց Նորին Մեծաշուք Կայսերականի Տէրության ամենայն Ռուսաց՝ մինչ ցայսօր առանց յափշտակութեանց ընչից և վնասման իրիք մերայնոց խաղաղութեամբ և գովանի հանգստութեամբ ի գեղեցիկ պաշտպանութեան և ապահովութեան անցուցաք զաւուրս մեր:

Ապա յուսամք թէ՝ մինչ արժանաւորեցիմք յայտուկ շնորհիւ Ձերին ողորմածութեան բնակիլ մշտնջենաւորապէս ի ներքոյ Հովանաւորութեան Նորին Բարձրաշուք Կայսերականի Մեծութեան յերկրին Ռուսաց առաւել ևս ունիմք ապանալ անշուշտ

36 Տե՛ս ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի «Տեղեկագիրե, թիվ 3, Երևան, 1940, էջ 37-40:

զևս գերագոյն ապահովութիւն քան զայս և հաւրկացեալ խնամոց վայելմունս:

Երևի թէ զօրքն Ռուսաց զկնի քանի ամսոյ թողլոց են զայս նահանգս Էրզրումոյ և մեք ի վաղուց հետե քաջ տեղեակ գոլով բարբարոսական բարուց օսմանյան ազգին և կառավարութեան՝ գիտեմք՝ անշուշտ վտանգիմք:

Եւ որովհետև ազգս մեր յայսմիկ միջոցի ականատես իսկ եղև քաղցրաբարոյութեան և ողորմութեան Ռուսաց կառավարութեան. վասն որոյ առ ի չվտանգիլ մեր յօսմանեանց աղերս արկեալ՝ աղաչեմք և խնդրեմք զպաշտպանութիւն Ռուսաց. և անմիջաբար ի Ձերդ Պայծառափայլութենէ նշանակել վասն նուաստութեան մերոյ զտեղի ինչ արժենաւոր յերկրի Ռուսաց ի բնակութիւն. յորում մինչ ցերկու հազար տունք Հայոց (կամ ավելի կամ պակաս) ելանելով ի յերկրէ աստի, բնակեցիմք անդր:

Ուստի ամենախոնարհաբար դիմեմք ահա աղերսական գրութեամբ առ յուրս բարձր Պայծառափայլութեան հաճեսցի, կամիմք մեք բնակիլ յԱխալցխայ քաղաք և ի մերձակա գաւառսն նորին:

Վասն որոյ խոնարհութեամբ աղերսեմք և հայցեմք արժանաւորեցուցանել զանարժանութիւն մեր գրաւոր պատասխանոյ, որպէսզի և մեք նվաստքս սկսանիցիմք յայսմ յետէ նախապատրաստիլ մինչև ցհասանիլ գարնան:

Մնամք ահա ազգովին ակնկալ խնամոց և ողորմութեան շնորհի Ձերդ Բարձր Պայծառափայլութեան, որով եմք և մնամք Հանդիսավեհութեան Ձերոյ յամենայնի ամենախոնարհ և հպատակ ծառայք.

Ն. Ծ. Կարապետ խոնարհ եպիսկոպոս Հայոց Կարնոյ և այլոց (կնիք)

Ստորագրություններ.

1. *Ն. ծոյ մէի Գրիգոր Տէր Սիմոնեան*
2. *Ն. ծոյ մէի Սիմօն Հա(յ)րապետեան*
3. *Ն. մէի Ղազար Ստեփօեան*
4. *Ն. մէի Յոհաննէս Էփրիկեանց*
5. *Ն. մէի Մինաս Ազնաւորեան*
6. *Ն. մէի Մնացական Սաղաթելեան*
7. *Ն. Կարապետ Քիրիշճեան*
8. *Ն. Ալեքսան Մըսրրլեան*
9. *Ն. Յակոբ Մարաքեանց*
10. *Ն. մէի Սիմօն Մուրաֆեանց*
11. *Ն. Ստեփաննոս Թէալիկչեան*
12. *Ն. մէի Կարապ(ետ) Չարրճեան*
13. *Ն. Յարութիւն Չօմառեան*
14. *Ն. մէի Պ(ա)ղրա(սար) Միսօեան*

15. *Ն. Յարութիւն Մուրաֆեան*
16. *Ն. Յակոբջան Մեռկելեան*
17. *Ն. Գէորգ Էքսիւզեանց*
18. *Ն. Նազարեթ մէի Մուրադեանց*
19. *Ն. ծոյ. Գրիգոր Շիրճեան, վարժապետ հայոց Կարնոյ*
20. *Ն. մէի Յակոբ Քրիստոսդրեան*
21. *Ն. Սարգիս Յակոբջանեան*
22. *Ն. մէի Աղաճան մէի Գէորգեան*
23. *Ն. Շիրին Ռառանճր Սարգսեան*
24. *Ն. Պապոյ Յառնեան*
25. *Ն. Պարսամ Էնֆիէճեանց*
26. *Ն. Ալեքսան Տիւրիւքճեան*
27. *Ն. Յոհաննէս Զիրիպեան*
28. *Ն. մէի Յարութիւն Միրզէեան*
29. *Ն. մէի Պաղտասար մէի Վարդանեան*[37]

Պասկևիչը, քաջատեղյակ լինելով Թուրքիայի պետական վրիժառական քաղաքականությանը, որով, ռուսական զորքերը հեռանալուց հետո, կարող էր ոչնչացվել ռուսամետ ամբողջ հայությունը, հատուկ գրությամբ դիմում է կայսրին՝ այդպիսով գաղթն իրականացնելու և հայ ժողովրդի տվյալ հատվածին նյութական որոշ օգնություն սահմանելու համար: Այդ գրության մեջ, ի միջի այլոց, նաև ասված էր. «Բայազետում երկու հազար հայ էր կռվում մեր զինվորների շարքերում, Էրզրումում քրիստոնյա բնակչության մեծ մասը ընդառաջ եկավ դիմավորելու առաջացող մեր զորքերի շարասյուներին՝ իրենց հոգևոր առաջնորդների հետ միասին, Կարսում հայերից կազմված էր մի գումարտակ՝ 800 մարդուց բաղկացած, որի հեծյալները սահմանն էին պաշտպանում վերահաս ասպատակություններից: Նրանց ընտանիքների մոտավոր թիվը, որոնց անխուսափելի վտանգ է սպառնում, կարող է հասնել մինչև 10 հազարի:

Այսու հանդգնում եմ խնդրել Ձերդ Կայսերական մեծության ամենաողորմած թույլտվությունը՝ ինձ իրավունք շնորհելու և այդ ընտանիքներին բնակության համար հող հատկացնելու Վրաստանում և Հայկական մարզում, իսկ եթե դրանք (այդ հողերը - Կ. Ղ.) չբավականացնեն նրանց բոլորին տեղավորելու՝ նաև Կովկասյան մարզում (Հյուսիսային Կովկասում - Կ. Ղ.): Այս մարդկանց բնակեցումը թեև սկզբում կպահանջի զգալի ծախսեր, բայց դրանք, անկասկած, հետագայում առատությամբ

37 Տե՛ս ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի «Տեղեկագիր», թիվ 3, Երևան, 1940, էջ 37-40: Ծանուցումը երկրորդաբար ցուցակի վերջում տրվում է հատուկ, որպեսզի հեշտացվի պատմական փաստաթղթի կոնկրետ ուսումնասիրումը (Ծանոթագրումը՝ կազմողի՝ Ռ. Ղ.):

կհատուցվեն այն շահույթներից, որոնք սպասելի են նրանց աշխատասեր և արդյունագործ դասակարգից...

Իմ կարծիքով, գաղթականներին իբրև նպաստ կլոր հաշվով բավական կլինի ամեն մի ընտանիքին 25 ռուբլի՝ արծաթով, որը կկազմի մեկ միլիոն ռուբլի թղթադրամ բոլոր գաղթականության համար[38]:

Քանի որ Ադրիանուպոլսի հաշտության պայմանագրի 13-րդ հոդվածով սահմանված էր փոխադարձ գաղթի իրավունք, Կայսեր և Պասկևիչի թույլտվությամբ թուրքական հպատակությունից հրաժարվող հայերը կարող էին իրենց շարժական գույքով տեղափոխվել Հայկական մարզ և Վրաստան[39]:

Այս թույլտվությունը լսելուն պես հայերից շատերը ցանկություն են հայտնում հեռանալ մայր հայրենիքից, քան ընտրել դավանափոխությունը, հալածանքները կամ էլ ստույգ մահը: Թուրքական պետության համար հայ ժողովրդի այս որոշումը մեծ անակնկալ էր, որովհետև գաղթի հետևանքը պիտի լիներ հողագործության և արհեստների մեծ մասի կործանումը, գյուղական և քաղաքային արտադրության դադարը: Սուլթան Մահմուդը, լավ գիտակցելով, որ իր երկրից հեռանում է պարզապես թուրքերին ձրի կերակրող մի ժողովուրդ, հատուկ հրովարտակով և բաբերդցի Գէորգ վաճառականի միջոցով, առատախոստումներով, դիմում է հայերին՝ հրաժարվելու գաղթի գաղափարից: Եվ, սակայն, դիմումը անհետևանք է մնում. այդ առումով հայերը պատրանքներ չէին կարող ունենալ: Միևնույն նպատակով Պոլսո հայոց պատրիարքարանն էլ, Բարդուղիմեոս եպիսկոպոսի միջոցով, դիմում է ժողովրդին և դարձյալ մերժման է արժանանում[40]:

Ժողովուրդը պատրաստվում է գաղթել և հոգով ու մարմնով ազատվել հետագա աղետներից, թեև նրա համար մահու չափ ծանր էր օտարին թողնել իր հավիտենական սուրբ հայրենիքը՝ թեկուզև ինչ-որ անորոշ մի ժամանակով: Բայց բազում եվրոպացիներ, ովքեր մոտիկից ծանոթ էին հայ ժողովրդի անտանելի կացությանը, թուրքերի անմարդկային հարստահարումներին, բռնություններին ու լկումներին, նրանց կրոնական անհանդուրժողականության էությանը, լիովին հասկանում էին հայերին: Կարապետ արքեպիսկոպոսը ամեն կերպ ձգտում էր թեթևացնել գաղթի նախապատրաստությունը, օգնում էր ժողովրդին վաճառքի հանել ինչ հնարավոր է, թեպետ հաճախ չնչին գներով, որպեսզի հայերը գաղթին նախապատրաստվեն հնարավորինս քիչ կորուստներով[41]:

---

38 Տե՛ս «Կովկասյան հնագիտական հանձնաժողովի հավաքած արձանագրությունները», 7-րդ, Թիֆլիս, 1878, էջ 830, որից և քաղվածաբար թարգմանել է Կ. Ղաֆադարյանը:

39 Գյուտ քահանա Աղանյանց, «Կարնո գաղթը», էջ 4, Ա. Երիցյանց, հ. Ա, էջ 437, Հ. Գեղամյանց, «Կարապետ արքեպիսկոպոս» («Փորձ», 1876, թիվ 1, էջ 186), ՀՍՀ, 1, էջ 92:

40 Ա. Երիցյանց, Ա, էջ 438-439:

41 Հ. Գեղամյանց, («Փորձ», 1876, թիվ 1, էջ 187), Գյուտ քահանա Աղանյանց, Կարնո գաղթը, էջ 6:

Թուրքական իշխանությունների վայրագ քաղաքականության նկատմամբ ունեցած ատելությունից Կարնո, Բայազետի և Կարսի հայերից շատերը չհամբերեցին, որ գաղթը տեղի ունենար հաջորդող գարնանը, այլ 1829 թվականի ձմռանը, հոկտեմբերի 14-ին սկսեցին հեռանալ երկրից և անցնել ռուսական սահմանը: Շտապողականության առաջն առնել չկարողացան ոչ կազմակերպությունները և ոչ էլ գաղթը կազմակերպող Կարապետ արքեպիսկոպոսը[42]: Առաջին հիսուն ընտանիքը, որ Կարսից դուրս էր եկել տարերայնորեն, Պասկևիչի կարգադրությամբ ունեցավ ուղեկցող զինվորների մի խումբ[43], որովհետև գաղթողներին թալանելու համար արդեն աշխուժացել էին քուրդ կողոպտիչները:

Միակ ուղին, որով էլ կարող էին շարժվել գաղթողները, Կարս-Գյումրի ճանապարհն էր: Բայց 1829-1830 թվականների ձմեռային գաղթն ի վերջո դադարեցվեց, որպեսզի գաղթողները խելամտորեն կազմակերպեին իրենց տեղաշարժը. քաղաքներից ու գյուղերից հեռացողները նախապես ենթարկվեին կանոնավոր ցուցակագրման, որովհետև հենց հաշվառումից էր կախված տեղահանվածներին նյութական օգնություն հասցնելու մտադրությունը, ինչը նախապատրաստել էին Պասկևիչն ու իր հրամկազմը՝ կայսեր համաձայնությամբ: Գեներալ Բանգրատևը հատուկ զբաղվում էր գաղթողների ցուցակագրմամբ:

Արևմտահայերի գաղթը պատշաճորեն կազմակերպելու համար Պասկևիչը Թիֆլիսում ստեղծում է հատուկ կոմիտե: Կոմիտեն գաղթողներին բաժանեց երեք ենթախմբերի՝ հիմք ընդունելով նրանց սոցիալական կազմը: Դրանք էին՝ առևտրական խավերը, արհեստավորները և հողագործները: Առաջին երկու խմբերին գաղթականական կոմիտեն հատկացրեց քաղաքները կամ ավանները, որտեղ կարելի էր զբաղվել առևտրով ու արհեստներով, իսկ հողագործ մեծամասնությանն անխտիր հատկացրեց գյուղական բնակավայրերը՝ դաշտամշակությամբ զբաղվելու համար: Կոմիտեն նույնիսկ հաշվի էր առնում ժողովրդահատվածի հին հայրենիքի բնակլիմայական պայմանները, որպեսզի նոր բնակավայրերը հնարավորինս համապատասխանեին նրանց բնակության հին վայրերին: Դա հիմնականում հետապնդում էր երկու նպատակ՝ հարմարվողականության առումով, առաջին հերթին ժողովրդի առողջապահական խնդիրների տեսանկյունից, ապա և բնական պայմանների հետ ավանդական կապվածության, մասնագիտական դրսևորման առումով: Առաջնորդվելով այս տեսանկյունով՝ առաջարկվում էր պահպանել նաև հին համայնքային կազմը, իսկ եթե դա չէր բավարարում, գոնե համախմբվել միևնույն աշխարհագրական գոտուն պատկանողների հետ[44]:

---

42 Ա. Երիցյանց, Ա, էջ 437-438:

43 Գյուտ քահանա Աղանյանց, Կարնո գաղթը, էջ 6:

44 Վ. Պոտտո, հ. 4, Թիֆլիս, 1888, էջ 475-476:

Պասկևիչը նշված կոմիտեի առաջարկությունների հիման վրա հատուկ գրություն է ուղարկում Կարին, գեներալ Բանգրատևին, որի մեջ նշված էին նոր գաղթավայրերը: Բանգրատևը վերաբնակվողներին առաջարկում է ընտրել այդ նշանակված վայրերը: Նախընտրած նոր բնակավայրերի նպատակահարմարությունն ստուգելու համար գաղթողների ներքին կազմակերպություններն իրենց ներկայացուցիչներն են ուղարկում Կովկաս: Այսպես, օրինակ, կարնոհայերի «...կողմից ընտրվեցան պատգամավորներ, որ գան, որոնեն և գտնեն հայսկույս Կովկասյան աշխարհքումը իրենց համար հարմար բնակության տեղեր: Այս պատգամավորները, իհարկե, չունենալով այդ մեծ պաշտոնին հարմար գիտությունքը և հմտությունքը, ընտրեցին այն տեղերը, որոնք որ ցույց տվին տերության պաշտոնակալքը»[45] (Խոսքը վերաբերում է Շիրակին, Ջավախքին և Ախալցխային):

Այդ նույն նպատակով Կովկաս ներկայացուցիչներ էին ուղարկում նաև Էրզրումը գրաված ռուսական զորամասից: Այդպես վարվեց, օրինակ, Բանգրատևը, երբ Կարապետ արքեպիսկոպոսն իր 38 պատվավոր ազգակիցներով բնակության վայր ընտրեց Ախալցխա քաղաքը: «Այդ ժամանակ Բանգրատևը մարդ ուղարկեց Ախալցխայի հրամանատար Տրեշեր փոխգնդապետի մոտ՝ հարցնելու, թե քաղաքում որքան տեղ կա բնակության համար: Մի այլ տեղեկության համաձայն Ախալցխա քաղաքում և շրջակա գյուղերում բնակության տեղեր ընտրելու համար Կարինից այնտեղ ուղարկվեցին լուսավորչական Պողոսը և մահտեսի Կարապետը, իսկ կաթոլիկներից՝ Լալօղլու Հոհանջանն ու Գրիգոր Էփրիկյանը, որոնք իրենց հետ ունեին Բանգրատևի հանձնարարական գրությունը[46]»:

Կարապետ արքեպիսկոպոսը նույնպես երեք մարդ ուղարկեց՝ զննելու քաղաքի և շրջակա գավառների (այդ թվում՝ նաև Ջավախքի) գյուղերը: Պատվիրակները հետ էին դառնում՝ բարի լուրեր բերելով: Այնուհետև ժողովրդին տեղյակ պահվեց եղելությունը: Գարնանը վստահորեն դուրս գալու համար:

Ինչպես Կարինում, երկրի մյուս մասերում էլ հարկադրագաղթը տեղի էր ունենում զինվորական կազմակերպության համագործակցությամբ, նրանց վերահսկողության պայմաններում: Զինվորական կազմակերպությանը զուգակցող տեղական հանձնաժողովները ներկայացնում էին ժողովրդի վերնախավերը, մարդիկ, ովքեր նաև հեղինակություն էին վայելում: Կարինում նմանօրինակ հանձնաժողովը ղեկավարում էր Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունին, Կարսում՝ Ստեփանոս արքեպիսկոպոսը, կաթոլիկներինը՝ Եփրեմ Վարդապետը: Զինվորականության կողմից գաղթի կազմակերպության ընդհանուր ղեկավարն ու գործնական քայլեր ձեռ-

45 Հակոբ Կարենյանց, Խապրիկներ հայրենիքից («Կռունկ Հայոց աշխարհին», թիվ 3, 1862, էջ 228):

46 Գյուտ քահանա Աղանյանց, «Կարնո գաղթը», էջ 17-18:

նարկողը հանդիսանում էր գեներալ Պասկևիչը: Նրան Կարինում երբեմն փոխարինում էր գեներալ Բանգրատևը: Բայազետում և Ալաշկերտում՝ զորավար Ռեութը: Գաղթի հոգսերը թեթևացնելու գործում որոշակի դեր էին կատարում նաև առանձին ազգանվեր անձինք:

1830 թվականի մայիսի 15-ին (ըստ ոմանց՝ մայիսի 10-ին) Կարնո, Բայազետի, Կարսի և այլ վայրերի հայերի զգալի մասը, ծանր սրտով ու ողբահառաչ, թողեց հայրենի բնաշխարհը: Վերադառնալու հույսը անմար պահողները շեշտելով հիշեցին, որ Կարին-Արզրում իրենց ապուպապոց քաղցրանուն քաղաքում բարձրացվել է Տիրոջ Սուրբ խաչը, և իրենք երբեք ու երբեք դա չեն մոռանա, եթե անգամ հազար տարի էլ անցնի: Եվ որ իրենց տունդարձը մի օր անպայման է լինելու: Արդեն մինչև հունիսի 5-ը «...դատարկվեցան ողջ Կարինը, Կարնո շրջակա դաշտը, Դերջանը, Թորթումը, Վերին և Ներքին Բասենները, Դիքմանը և Խնուսը»: Նախապես սահմանված կարգով գեներալ Բանգրատևը զինվորներ էր կցում գաղթականներին, նրանց անվտանգությունն ապահովելու նպատակով[47]:

Անձրևառատ և ցրտաշունչ գարուն էր, ցեխոտ ճանապարհներն անասելի դժվարություններ էին ստեղծում, բայց գաղթողներն անտրտունջ հաղթահարում էին դրանք: Որքան էլ գաղթը լավ էր նախապատրաստված, այնուամենայնիվ, փոխադրամիջոցները չէին բավականացնում: Գեներալ Բանգրատևի կարգադրությամբ Կարսի չգաղթող հայերից ու թուրքերից վարձով սայլեր էին բերվում, բայց դա էլ չէր թեթևացնում գաղթողների վիճակը[48]: Ճանապարհները թեև անվտանգ էին, բայց և այնպես քրդերը, պատեհ առիթներ գտնելով, քարավանի որոշ հատվածներում կոդոպուտներ էին կազմակերպում[49]:

Փոխադրությունների պակասության պատճառով գաղթը բավական ձգձգվում էր: Շատ խմբեր Կարինից Կարս և ապա Ախուրյանի հովիտը հասնելուց հետո երկու-երեք ամիս հարկադրված էին ապրել վրաններում[50]:

Եվ երբ լրանում է ռուսական բանակի՝ Թուրքիայում մնալու ժամկետը, Բանգրատևը Կարինը հանձնում է թուրքերին: Մինչդեռ գաղթողների ծայրը դեռևս չէր երևում: «Պետք էր տեսնել, թե ինչպես էր վերջին օրը (1830թ. հունիսի 5-ը) Արզրումից ու գյուղերից ժողովուրդը գունդագունդ խռնվում, երբ Բանգրատևը զինվորական հանդիսով քաղաքը հանձնեց Փահլյուլ փաշային: Կարելի է ասել, թե Կարնո դռներից մինչև Հասան-գալե, որ վեց ժամվա ճանապարհ է ձիով, ամբողջ ճանապարհը բռնված էր զորքով, գաղթականներով և նոցա կարասիներով ու անասուններով: Եվ

47 Գյուտ քահանա Աղանյանց, «Կարնո գաղթը», էջ 17-18:

48 Անդ, էջ 14-15:

49 Անդ, էջ 18:

50 Վ. Պոտտո, «Կովկասյան պատերազմը», հ. 4, թող. 4, էջ 491, Հ. Գեղամյանց, «Կարապետ արքեպիսկոպոս» («Փորձ»), 1876, թիվ 1, էջ 188, Գ. Ք. Աղանյանց, «Կարնո գաղթը», էջ 15-16:

որովհետև դեռ գյուղերում շատերը կային, որ ցանկություն ունեին գաղթելու, ուստի Բանգրատևը թողեց քաղաքի մեջ Քրիստոֆոլոս վոյնիկով հույնին, որ տաճիկ լեզվին տեղյակ էր, մասնավոր հեծելազորի հետ միասին, և նորա հետ էլ մի քաջ մարդու՝ Մկրտիչ Թոշոյենց անունով, որ պատվված էր հազարապետության անվամբ, որպեսզի նոքա մնան մինչև...հավաքեն չվող ժողովրդյան մնացած «զկաց մնաց» բաներն ու հասցնեն յուր ետևից[51]»:

Գաղթականների ճանապարհի միակ հանգուցակետը, ինչպես ասվել է, Կարսն էր, որով պետք է անցնեին բոլոր վայրերից եկողները: Այդ պատճառով էլ ճանապարհը երկարում էր: Կարսից հետո հաջորդ կայան էր համարվում Գյումրին, որտեղից հետո արդեն գաղթողները ճյուղավորվում և ուղղություն էին վերցնում դեպի ընտրած վայրերը՝ Գյումրի ավանը, Շիրակ, Փամբակ, Լոռի-Բորչալու, Սևանի ավազան, Արագածոտն, Ջավախք, Ախալցխա, Ծալկա, Արցախ և այլն:

Ըստ աղբյուրների, Արևմտյան Հայաստանից 1829-1830թթ. հեռացել է 90-100 հազար հայ: 1831թվականի մարտի 26-ին Նիկոլայ կայսերը գրած նամակում Պասկևիչը հավաստել է, թե Կարինից ու Կարսից գաղթող հայերի թիվը հասել է շուրջ 90 հազարի (14 հազար ընտանիք[52]): Նույնն է հաղորդել Վ. Պոտտոն[53]: Մի պաշտոնական գրության համաձայն, Էրզրումից գաղթել է 7298, Արտահանից՝ 67, Կարսից՝ 2264, Բայազետից՝ 4215 ընտանիք[54]: Օ. Հաքստհաուզենի հաշվումներով, արևմտահայոց գաղթողների թիվը 85 հազար էր լինելու[55]: Հ. Գեղամյանցը և Հակ. Կարենյանցը այդ թիվը հասցնում են 95 հազարի[56]: «Բացի 95 հազար հայերից Արևմտյան Հայաստանի զանազան գավառներից Ռուսաստան գաղթեցին 10. 700 հույներ և 6000 բուլղարներ», գրում է Հ. Գեղամյանցը[57]:

Ինչպես և պարզ երևում է ներկայացվող նյութերից, գաղթականության ստույգ վիճակագրություն չկա: Այնուամենայնիվ, գաղթողների թիվը, հաշվի առնելով

51 Գյուտ քահանա Աղանյանց, Կարնո գաղթը, էջ 21-22:

52 Ա. Երիցյանց, Ա, էջ 440: Պետք է կարծել, որ 14 հազար ընտանիքը կազմելու էր ոչ թե 90 հազար հոգի, այլ ավելի քան 98 հազար մարդ: Այս ենթադրության համար հիմք ենք համարում այդ ժամանակների ընտանիքների միջին թվաքանակը, որը 7 շնչից ավելի էր լինելու:

53 Վ. Պոտտո, Կովկասյան պատերազմ, հ. 4, թող. 4, էջ 488:

54 Կովկասյան հնագիտական հանձնաժողովի հավաքած արձանագրությունները, հ. 7, Թիֆլիս, 1876, էջ 847, հմմտ. ԺԲՀ, 1967, թիվ 2, էջ 110, հմմտ. Ա. Երիցյանի տվյալները, որտեղ նա Կարսից գաղթողների թիվը2467 գերդաստան է հաշվել, որով ընտանիքների թիվը հասնում է 14, 044-ի: (Տե՛ս Ա. Երիցյան, Ա, էջ 441-442):

55 «Օ. Հաքստհաուզենի ճանապարհորդությունից» («Կռունկ Հայոց աշխարհին», 1862, թիվ 2, էջ 108): Հմմտ. Ա. Վ. Սեդրակյան, «Ճանապարհորդություն» («Արարատ», 1873, թիվ 4, էջ 131):

56 Հակոբ Կարինյանց, «Խապրիկներ» («Կռունկ Հայոց աշխարհին», 1862, թիվ 3, էջ 228-229), Հ. Գեղամյանց, Կարապետ արքեպիսկոպոս, 1, «Փորձ», 1876, թիվ 1, էջ 188:

57 «Փորձ», 1876, թիվ 1, էջ 187:

ստեղծված ծանր կացությունն ու վախի, վտանգի աստիճանը, նաև երևույթի գրեթե տարերային ընթացքը, պետք է որ հեռացողների թիվը անցներ 100 հազարի սահմանը: Ընդունված է, որ պաշտոնական ցուցակների մեջ չմտնող հայերի թիվը թերևս 5000 ից պակաս չէր կարող լինել, ինչը կարող է նույնպես մոտավոր մի թիվ լինել:

Ինչպես արդեն ասվեց, արտագաղթողների համար նոր բնակավայրեր ընտրելու խնդիրը թողնված էր հենց գաղթողների կամքին, պայմանով, որ որոշ չափով պահպանվեր Թիֆլիսում գործող գաղթականների կոմիտեի որոշումը, այսինքն՝ բնակավայր ընտրել նախկին բնակության բնակլիմայական պայմաններին համապատասխանող տեղերում: Սակայն հասկանալի պատճառներով այդ կարգը լիովին պահպանելն անկարելի էր: Եղան ոչ քիչ դեպքեր, երբ համագյուղացիները և նույնիսկ ազգակիցները, չհավանելով ընտրած բնակավայրը, բաժանվեցին և ցրիվ եկան տարբեր վայրեր: Վերաբնակեցման առումով համագյուղացի լինելը մեծ մասամբ պահպանվում էր, և դա թերևս միմյանց նեցուկ լինելու կարևոր պայմաններից էր: Համագյուղացիներից կամ հարևան գյուղացիներից կազմվում էին նոր համայնքներ: Այս տեսակետից ճիշտ էին վարվել Կարնո դաշտից գաղթածները, ովքեր նոր բնակության վայր էին ընտրել Ջավախքը և Ախալցխան: Կարին քաղաքի բնակիչները ընտրել էին Գյումրի ավանը, Ախալցխա և Ախալքալաք քաղաքները, իսկ երկրագործները՝ գլխավորապես Ջավախքի և Ախալցխայի գյուղական բնակավայրերը:

Ընդհանուր առմամբ ենթադրվում է, որ Ախալքալաքում և նրա գավառում բնակություն է հաստատել վեց հազար ընտանիք[58]: Նույնը՝ Ախալցխայում և նրա գավառում: Եթե նկատի ունենանք, որ գաղթի ժամանակներում յուրաքանչյուր ընտանիք միջին հաշվով պետք է կազմված լիներ առնվազն 7 անձից, կստացվի 42. 000 բնակիչ, որից, ըստ Հ. Գեղամյանցի, 6-7 հազար հոգի հաստատվել է Ախալցխայում[59], մնացած 35-36 հազարը՝ Ջավախքի գյուղերում: Այստեղ էլ հիմնադրվել է հիսուն նոր գյուղ: Շատերը բնակություն էին հաստատել ոչ միայն այժմյան Ախալքալաքի և Բոգդանովկայի շրջանների, այլև Ազոռի, Խրթվիսի շրջակա գյուղերում[60]:

58 Կ. Գ. Ղաֆաղարյան, «Նյութեր Ախալցխայի հայ համայնքի պատմության վերաբերյալ» (ՊԲՀ, 1967, թիվ 1, էջ 120):

59 Հ. Գեղամյանց, «Կարապետ արքեպիսկոպոս» («Փորձ», 1876, թիվ 1, էջ 188): թիվ 1, էջ 188):

60 Գյուտ քահանա Աղանյանց, Կարնո գաղթը, էջ 25:

Ջավախքի նոր բնակիչների մեծ մասը գալիս էր Կարնո նահանգից և փոքր մասը՝ Խնուսից, Արտահանից[61], Բասենից, Կարսից և այլ վայրերից[62]: Խնուսցիները տեղավորվեցին Հեշտիա, Ուճմանա, Թորիա և Դիլիֆ գյուղերում, արտահանցիները՝ Փոկայում, Բավրայում, Խուլգումայում և Կարտիկամում:

Կարին քաղաքի բնակիչների զգալի մասը տեղավորվեց Ախալցխա քաղաքում, գյուղացիները՝ գավառում: Կարնեցիների և բաբերդցիների մի փոքր մասը բնակվեց Ծալկայում: Այստեղ հաստատվեց նաև 600 ընտանիք կազմող հույների մի մասը, իսկ նրանց մի մասն էլ ցրվեց Վրաստանի և Հայկական մարզի տարբեր վայրերում:

Կարին և Կարս քաղաքների բնակչության մի մասը հաստատվեց Գյումրիում: Այստեղ են վերաբնակվել նաև որոշ թվով բայազետցիներ և բաբերդցիներ: Իսկ Կարնո և Կարսի գյուղացիության մի մասը ցրվեց Շիրակի գյուղերում: Կարսեցիների և բայազետցիների մի զգալի մասը նոր բնակավայրեր ընտրեցին Փամբակի գյուղերում և Ղարաքիլիսա ավանում:

Կարին քաղաքից գաղթող կաթոլիկների մի մասը տեղափոխվեց Լոռվա Շահնազար, Մոլլասուլեյման, Ղարաքիլիսա և Սարչապետ գյուղերը:

Քարավանի 2000 ընտանիքների մի մասն անցավ նաև Բորչալու: Բայազետցիները մեծ զանգվածով բնակավայր ընտրեցին Գեղարքունիքը և հիմնեցին Նոր Բայազետ քաղաքը: Բայազետցիների մի մասն էլ վերաբնակվեց Ախտայի շրջանում և Կարբիում: Որոշ կարնեցիներ անցան Ապարան և Արագածի հարավային փեշերը, նաև՝ Թիֆլիս:

Այսպիսին էր 1829-1830 թվականներին արևմտահայոց գաղթականների տեղափոխման ու տեղավորման ընդհանուր պատկերը:

---

61 Բոգդանովկայի շրջանի Ասփարա գյուղի կոլտնտեսության նախագահ Միսակ Թումանյանի կողմից մեզ ուղղված մի պատասխան նամակից պարզվում է, որ այժմյան Կարտիկամ, Բավրա, և Խուլգումա գյուղերի բնակիչները, որ սերում են Արտահանի Վել գյուղից, Ջավախք են գաղթել մեծ գաղթից երկու տարի առաջ, 1828 թվականին, հետևյալ պատճառով. 1828թ.-ին Վել հայկական գյուղ են գալիս փաշայի երկու ասկյար՝ գյուղի յուզբաշուց փաշայի հաճույքի համար երկու հայ օրիորդներ պահանջելու: Յուզբաշին, չունենալով այլ ելք, հարկադրված է լինում փաշային ուղարկել իր դստերը և նորահարսին: Աղջիկներին կառքով տանելիս, ասկյարներին է հանդիպում վելցի արիասիրտ Սրաբ Երանոսյանը և, լսելով աղջիկների ողբն ու լացը, օգնության աղերսանքները, հարմար պահ ընտրելով, սպանում է առևանգիչներին, փրկում է աղջիկներին ու նրանց պատիվը և բերում գյուղ: Կոտորածներից փրկվելու համար շուրջ 1000 ընտանիք ունեցող Վելը նույն գիշերը տեղահան է լինում, գաղթում դեպի Օլթի, Կաղզվան և շարժվում դեպի ռուսական սահմանը: Մոտ վաթսուն ընտանիքի գլուխ անցած՝ Սրաբը, արնախում ու անբարո թուրքերից մազապուրծ փախստականներին հասցնում է Ախալցխայի Դվիր գյուղը, բայց տեղը չհավանելու, թե ուրիշ պատճառով, վելցիները շարժվում են դեպի Ջավախք: Նրանցից 17 ընտանիք բնակության վայր է ընտրում Կարտիկամ ավերակ գյուղը: Նույնքան ընտանիք հաստատվում է Բավրայում: 10-12 ընտանիք ընտրում է Խուլգումա, և 10 ընտանիք էլ՝ Տուրցխ գյուղերը: Այժմյան Ասփարա գյուղը հիմնել են բավրացի 32 ընտանիք, 1924թ.-ին: Իսկ Նոր Խուլգումա գյուղը հիմնել են Խուլգումայից եկած 25 ընտանիք, 1925թ.-ին:

62 «Ընդհանուր տեղեկություններ», Տե՛ս Վ. Պոտտո, հ. 4, թող. 4, էջ 491, Հակոբ Կարենյանց, «Խապրիկներ», («Կռունկ Հայոց աշխարհին», 1862, թիվ 3, էջ 229), Ա. Երիցյանց, Ա, էջ 442:

Գաղթի ընթացքում և գաղթականների տեղաբաշխումից հետո էլ ռուսական տերությունը նյութական օգնություն ցույց տվեց նրանց: Նախ՝ բնակության վայրերից մինչև թուրքական սահմանն անցնելը, ռուսական զորքերը փրկարար դեր խաղացին տեղաշարժվող խմբերին կողոպտիչներից պաշտպանելու գործում: Եվ ապա՝ ճանապարհներին յուրաքանչյուր ընտանիք ստանում էր 25 ռուբլի նպաստ, որի մեկ երրորդը տրվում էր ճանապարհ ընկնելիս, մնացածը՝ տեղ հասնելուն պես: Գաղթականության վրա, այդպիսով, Պասկևիչը ծախսել է 90 հազար ռուբլի: Այնուհետև կայսրից պահանջել և իրավունք է ստացել ծախսել ևս 380 հազար ռուբլի[63]: Հետագայում ծախսած ողջ գումարը հասնում է մեկ միլիոն ռուբլու:

Գաղթի ընթացքում, բնակատեղիներ հասնելիս, կայսրությունը ալյուր և ցորեն էր բաշխում: Պակասը լրացվում էր ներքին փոխադարձ օգնությամբ՝ աղքատացածներին և ցուցակներից դուրս մնացածներին գաղթողները հանգանակությամբ դրամ էին հատկացնում[64]: Օգնության այս ձևերը շարունակվում էին նաև մարդկանց տեղաբաշխումից հետո էլ. նրանց տրվում էին սերմացու, ալյուր և դրամական վարկ, մինչև սեփական բերք ստանալը: Բացի այդ, 1832 թ. հունվարի 19-ի՝ Կարապետ Բագրատունու խնդրագրով կառավարությունը ժողովրդին 7 տարով ազատեց հարկերից ու տուրքերից[65]:

Բնակարանով և տնտեսական շենքերով ապահովելու հարցը շատ կարևոր նշանակություն ուներ: Ախալցխան այդ տեսակետից ամենաանապահովն էր, քանի որ քաղաքի զինվորական պարետը պարզապես հրաժարվել էր նախապատրաստված ընդունել նորեկներին, ուստի երկար ժամանակ քաղաքաբնակները վրաններում էին ապրում: Մինչև այդ վիճակում էր նաև Ախալքալաք քաղաքը: Դրությունը փոքրինչ այլ էր Ջավախքի գյուղական բնակավայրերում: Այստեղ գաղթողները մատչելի գներով ձեռք էին բերում տներ այն թուրքերից, ովքեր Ադրիանուպոլսի պայմանագրի համաձայն գաղթում էին Թուրքիա:

Ինչպես հայտնի է, մինչև 1828-1829 թվականները Ջավախքում և Ախալցխայում տեղաբնիկ հայեր շատ կային: «Թուրքերը, վախենալով, թե հայերը կօգնեն ռուսական հաղթական զորքին, իրենց նահանջի ժամանակ նրանց հետները տարան դեպի Արտահան և ճանապարհին կոտորեցին: Միայն ռուսական զորքի օգնությամբ ազատվածները կարողացան վերադառնալ իրենց տեղերը»[66]: Ահա այդ սպանված հայերի բնակավայրերում գաղթողները ձրի բնակարան էին ստանում: 1831 թվականից Ջավախքում սկսվում է ծավալվել նոր շինարարություն, նոր տների կառուցում՝

63 Վ. Պոտտո, հ. 4, թող. 4, էջ 491:

64 Գյուտ քահանա Աղանյանց, Կարնո գաղթը, էջ 15-16:

65 Հ. Գեղամյանց, Կարապետ արքեպիսկոպոս, «Փորձ», 1876, թիվ 1, էջ 190:

66 Կ. Գ. Ղաֆադարյան, նշվ. աշխ. (ՊԲՀ, 1967, թիվ 1, էջ 118):

Կարնո շինարարական ավանդների համաձայն[67]:

Ախալքալաքը բերդաքաղաք էր համարվում: Այն կառուցվել է Թափարավան և Քառասունաղբյուր գետերի միախառնման տեղում առաջացած յուրօրինակ հրվանդանի վրա՝ Աքալքալաքի սարավանդում: Ախալքալաքը Ախալցխայից հեռու է 74 կմ դեպի հարավ-արևելք, Գյումրի-Ախալցխա խճուղու վրա[68]: Քաղաքը հարավային, հյուսիսային և արևմտյան կողմերից շրջափակված է խոր ձորերով, որոնք անցյալում պաշտպանական կարևոր նշանակություն են ունեցել:

Պասկևիչի մղած ճակատամարտի ժամանակ քաղաքն ու բերդը լիովին ավերվում են: Հայերը հեռանում են քաղաքից, որոշակիորեն ենթարկվում են բռնագաղթի: Ամենայն հավանականությամբ քաղաքից հեռանում են նաև թուրք բնակիչները:

Ավերված և դատարկված քաղաքն այդպես ավելի քան երկու տարի մնում է առանց բնակիչների: Որոշ հաղորդումների համաձայն՝ քաղաքն ի նորո վերակառուցվում է Կարինից նախ Ախալցխա, իսկ հետո նաև Ախալքալաք տեղափոխված հայերի ձեռքով, 1830 թվականին: Կա տեսակետ էլ, թե իբր հենց այդ թվականին 300 կարնեցի ընտանիք, Յաղուբյան Կարապետ աղայի առաջնորդությամբ, հիմնում է գյուղաքաղաքը[69]: 300 ընտանիքի վերաբերյալ Հակոբ Կարենյանցի այս հաղորդումը բացահայտ սխալմունք է. սկզբնապես կարող էր այն լինել ոչ ավել, քան 30 ընտանիք: Եթե մեկ ընտանիքը միջին հաշվով կազմված լիներ 6 անձից, ապա քաղաքի առաջին բնակիչների թիվը կկազմեր 180 հոգի: Բացի այդ, Ախալքալաքը վերակառուցվել է ոչ 1830-ին, քանի որ Կարին քաղաքից բնակիչները հազիվ աշնանն էին այստեղ հասել, այլ 1831 թվականին, որի վերաբերյալ ավելի ստույգ տվյալներ ունի Հ. Խ. Էփրիկյանը: Վերջինս գրում է, թե 1831-ին «Ախալցխայեն մի քանի հայեր գալով, բերդի հարավային կողմը կկառուցանեն սրճատուն, փուռ և քանի մը բնակարաններ: Այնուհետև, հետզհետե ուրիշներ ևս գալով, բնակություն կը հաստատեն, և կսկսի ձևանալ փոքրիկ գյուղ մը»:

1890-ական թվականների վերջերի տվյալներով Ախալքալաքն ուներ յոթ լայն և կանոնավոր փողոց, որոնք խաչաձևվում էին վեց այլ փողոցների հետ: Այդ կանո-

67 Նշենք, որ Թիֆլիսի գաղթականական կոմիտեն առաջարկել էր, որ հայերը նոր բնակավայրերում կառուցեին ռուսական խրճիթների ձևի տներ: Իսկ Պասկևիչը գտնում էր, որ ժողովուրդը պետք է կառուցի ըստ իր ավանդների: Եվ Վ. Պոտտոյի մռայլ նկարագրության համաձայն, իբր թե Ջավախքում կառուցվել են ամբողջապես գետնափոր տներ, ինչը պատմականորեն չի հաստատվում:

68 Հին քաղաքը, որ շինված է եղել բերդի հյուսիսային կողմի զառիվայրերու վրա, այժմ (1902 թ) բոլորովին ավերակ է... 1882-ին գտնված են քանի մը գերեզմաններ, խաչքարեր, քարի աշտանակ մը, եկեղեցվո դրան քարե բարավոր մը, հազիվ ընթեռնելի ՁՌ (1451) թվականավ, նաև՝ ցարդ դեռ մնացած է վրացերեն մեսրոպեան հին տառերով համառոտ արձանագրություն մը: Ավերակաց մեջ այժմ նշմարելի են եկեղեցիներ, հացի հորեր, ստորերկրյա ճանապարհներ, զանազան տանց որմեր...

69 Հակ. Կարենյանց, Խապրիկներ, «Կռունկ Հայոց աշխարհին», 1862, թիվ 3, էջ 221:

նավոր փողոցները 19-րդ դարի վերջին խճապատված են եղել, իսկ մյուս փողոցները՝ փոշոտ ու ցեխոտ: Այդ հաղորդման համաձայն՝ միահարկ տները քարաշեն էին, դրսից՝ սպիտակեցված[70]:

Պետք է ասել, որ, չնչին բացառությամբ, Ախալքալաքի փողոցները և տների մեծ մասը 1930-ական թվականներին պահպանված էին նույնությամբ: Երկհարկանի տները, որոնք ամբողջապես կառուցվել էին 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին, պատկանում էին ունևոր խավերին: 1980-ական թվականների սկզբներին քաղաքի հին փողոցներն ու մեկհարկանի տները տակավին իշխում են քաղաքում: Դանդաղ զարգացման պատճառն այն էր, որ Ախալքալաքը մինչև 1859թ. մնում էր Ախալցխայի գավառի մեջ և վարչական տեսակետից խաղում էր ենթագավառի կենտրոնի դեր: 1860 թվականին Ախալքալաքն արդեն երրորդ կարգի գավառական քաղաք էր, 1890-ին՝ երկրորդ կարգի քաղաք, իսկ 1896-ին ստանում է քաղաքային ինքնավարություն[71], որով ձեռք է բերում հետագա զարգացման հեռանկարներ ու հնարավորություն:

Ախալքալաք քաղաքն այժմ ծավալվում է դեպի հարավ ընդարձակ տարածության վրա, ուր այսօր էլ մեծավ մասամբ կառուցվում են 1-2 հարկանի մասնավոր առանձնատներ:

Ախալքալաքը 1860-ին ունեցել է 2180 բնակիչ, 1874-ին՝ 2967[72], 1886-ին՝ 4303[73], 1894-ին՝ 4454[74], 1895-ին՝ 4602[75]:

Ջավախքի հայ բնակչությունը 88 տարում հազիվ էր ստեղծել կայուն տնտեսություն, երբ Առաջին աշխարհամարտի հարվածը հասավ նաև նրան և ամեն ինչ տակնուվրա արեց: Թուրքիան, օգտվելով միջազգային խառնակ դրությունից, Արևմտյան Հայաստանում, ըստ հիվանդի իր երևակայության, ձեռնամուխ եղավ «Այդ անտանելի հայերի» հետ հաշիվները մեկընդմիշտ փակելու ցեղասպանական դիվային ծրագրի իրագործմանը: Հայերի տեղահանումն ու բնաջնջումը օրակարգի միակ հարցը դարձավ, որը, որոշ ժամանակ անց, տեղափոխվեց նաև Արևելյան Հայաստան ու Ջավախք-Ախալցխյան տարածք: Դեռ ավելին, Թուրքիան, կայսերական իր նկրտումների մեջ, ողջ Կովկասը կուլ տալու ախորժալի ձգտումներ էր դրսևորում: 1918-ի մայիսի 26-ի վերջնագրով Թուրքիան Բաթումի կոնֆերանսում «սահմանների ուղղման» անվան տակ Անդրկովկասյան Սեյմին ներկայացրեց հեռուն գնացող

70 Հ. Ս. Էփրիկյան, Ա, էջ 63:

71 Անդ, էջ 62-63:

72 Անդ, էջ 63:

73 ԱՀ, 1, էջ 187:

74 Անդ, էջ 189:

75 Անդ, էջ 186:

իր նախնական պահանջները, որը հստակորեն կոնկրետ էր. իրեն միացնել «Նախիջևանի գավառը..., Շարուր-Դարալագյազի գավառի կեսը, Սուրմալուի ամբողջ գավառը, Էջմիածնի գավառը, Երևանի գավառի կեսը, Ալեքսանդրապոլի գավառի մեծ մասը՝ Ալեքսանդրապոլ քաղաքով և Ախալքալաքի ողջ գավառն ու Ախալցխայի գավառը[76]»:

Սեյմում մուսավաթականներն անվերապահորեն ընդունեցին Թուրքիայի պահանջները: Դաշնակցականներն, ինչ խոսք, լիովին ու անվերապահորեն մերժեցին վերջնագիրը: Իսկ ահա, վրաց մենշևիկները ամեն կերպ ձգտում էին և ջանք չխնայեցին հայկական տերիտորիաների հաշվին[77] հասնել իրենց համար ձեռնտու հաշտության պայմանների: Ուստիև 1918թ. մայիսի 31-ին թուրքական վերջնագիրն ընդունեցին նաև վրացի մենշևիկները: Իսկ «...դա նշանակում էր, որ Ռուսաստանի ու Թուրքիայի միջև հաստատվում է այն պետական սահմանը, որը գոյություն ուներ մինչև 1829թ. Ադրիանուպոլսի հաշտության պայմանագիրը: Այդպիսով, Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը խախտելով, վրացական մենշևիկները զավթած տարածքներից օսմանյան կայսրությանը զիջեցին Ախալքալաքի և Ախալցխայի գավառները[78]»:

Մենշևիկները հայկական տարածքների հաշվին անկախություն ձեռք բերելու ձգտումով էր, որ քայքայեցին Անդրկովկասյան Սեյմը և 1918-ի մայիսի 26-ին Վրաստանը հռչակեցին «անկախ հանրապետություն[79]»: Մայիսի 29-ին Ստեփան Շահումյանը ցավով և խոր վրդովմունքով գրում է. «Վրաստանի անկախության հայտարարումը վկայում է մենշևիկների նոր ոճրագործության մասին: Դա հեղափոխական ելք չէ ստեղծված դրությունից: Դա դավաճանության մի նոր փորձ է հանդեպ Վրաստանի հարևան հայ ժողովրդի,- աներևակայելի, անամոթ դավաճանություն: Նրանք ծանր վիճակ ստեղծեցին Անդրկովկասում ու այժմ լվանում են իրենց ձեռքերը[80]»:

Մենշևիկյան հանրապետությունը, մի կողմից անջատվելով Ռուսաստանից և մյուս կողմից՝ Անդրկովկասյան Սեյմից, մեծապես թուլացրեց վրաց ժողովրդի և իր բանակի դիմադրողականությունը ու այդպիսով, փաստորեն, ազատ արձակեց թուրքական զավթիչների ձեռքերը: Եվ ահա, սանձարձակ ձևերով, Թուրքիան անցավ Ախալքալաքի և Ախալցխայի գավառները զավթելու իր անզուսպ քաղաքա-

76 Ե. Ղ. Սարգսյան, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914-1918թթ. Երևան, 1964, էջ 374:

77 Անդ, էջ 374:

78 Անդ, էջ 376:

79 Ե. Ղ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 374:

80 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, Երևան, թիվ 19, էջ 221:

կանության իրականացմանը[81]: Վրացական զորքերի նահանջին հետևում է թուրքական զորքերի առաջխաղացումը: Ջավախքի հայ բնակչությանը մնում էր ամեն գնով պաշտպանել հայրենի հողը, դիմագրավել թուրքական կանոնավոր զորքերին այլևս աշխարհազորայինների միջոցով: Սակայն զենքի և զինատեսակների խիստ պակասավոր լինելը և ռազմամթերքի սակավությունը թուլացնում է աշխարհազորայինների դիմադրողականությունը: Ավելի քան 50 կմ սահմանագծի երկայնքով աշխարհազորայինները պաշտպանում են Ջավախքը՝ նպատակ ունենալով նպաստել գաղթի կազմակերպմանը և կանխել զանգվածային կոտորածը: 1918թ. մայիսի 7-ին թուրքերն արդեն գրավել էին Խզաբավրա և Սարո գյուղերը[82]:

Մայիսի 15-ին ընկնում է Ալեքսանդրապոլը[83]: Սկսվում է Ջավախքի զանգվածային արտագաղթը երկու ուղղությամբ՝ դեպի Ծալկայի գավառ և Բակուրիան: Ծալկայի հայերն անում են հնարավոր ամեն բան գաղթականներին տեղավորելու համար, բայց որովհետև ազատ շենքերը չէին բավականացնում, գաղթականների մեծ մասը պատսպարվում է անտառներում ստեղծված քողտիկներում և վրաններում:

Դեպի Բակուրիան գաղթողներն ավելի մեծաթիվ էին, ովքեր ամբողջապես ապավինում էին անտառներին, քողտիկներին ու վրաններին:

Գաղթող ժողովուրդն իր հետ վերցրեց ամենաանհրաժեշտ իրերը և անասունները, մնացած ամբողջ ունեցվածքն ու հարստությունը թողնվեց զավթիչներին: Աշխարհազորայինների դիմադրության շնորհիվ գաղթողների մեծ մասը կարողացավ պահպանել վերցված շարժական գույքը և անասունները, որոնց պահպանումով կարողացավ փրկվել սովամահությունից, քիչ թե շատ կազմակերպել իր ապրուստը և դուրս գալ ստեղծված ծանր կացությունից: Բայց եղան նաև շատ գաղթողներ, ովքեր, ճանապարհների չափազանց ծանրաբեռնվածության պատճառով, չհասցրին անցնել Ջավախքի սահմանը և փախուստի դիմեցին առանց գույքի և անասունների: Հետապնդող թուրքերը ոչնչացնում էին ամեն ինչ: Աշխարհազորայինները հետևում էին գաղթողներին և նահանջում՝ մղելով պաշտպանական մարտեր: Եվ երբ ռազմամթերքի սպառման հետևանքով աշխարհազորայինները գրեթե դադարեցրին դիմադրությունը, թուրքական առաջապահ զորքերը որոշ հատվածներում, հասնելով գաղթողներին, զանգվածային կոտորածներ իրականացրին:

Այդպես, ժողովուրդը դեռ չէր ավարտել անցումը Սաթխայի կամրջի վրայով, երբ թուրքերը հասնում են նրանց և բոլորին կոտորում: Թաքչա գյուղը հասնելիս, թուրքերը գաղթողներին հավաքում են մարագի մեջ և հրդեհում՝ գազանաբար ոչնչացնելով նրանց: Թուրքերի բարբարոսությունը նույնությամբ կրկնվում է նաև Խորենիա գյու-

81 «Մշակ» օրաթերթ, 1918, 29 մայիսի, թիվ թիվ 98:

82 «Մշակ», 1918, 12 մայիսի, թիվ 87:

83 «Մշակ», 1918, 19 մայիսի, թիվ 93:

ղում: Այստեղ նախ կոտորում են տղամարդկանց, և ապա, շուրջ 1000 կին ու երեխա լցնելով մարագներն ու փլցնելով շենքերը նրանց վրա, ոչնչացնում-վերացնում են բոլորին[84]: «Փոքր Սամսար գյուղում թուրքերը, բռնելով 25 տարեկան մի երիտասարդի, մաշկել են երեսը, կտրել ձեռքը և հանել աչքերը, ապա՝ սպանել[85]»: Թուրքերը, իրենց սովորության համաձայն, գերիների միջից առանձնացնում են գեղեցիկ կանանց ու աղջիկներին, իսկ մնացածներին գնդակահարում:

Այսպիսին էր դրությունը Ջավախքի, Ծալկայի ու Բակուրիանիի ողջ սահմանագծում[86]:

Ի պատիվ Ջավախքի գյուղացիության, պետք է ասել, որ նրանք պատրաստակամ են լինում ուժեղ դիմադրություն կազմակերպելու: Սակայն դրան հակառակ, քաղաքի ունևոր խավերն ու ղեկավարությունը, խուճապի մատնված, լքում են քաղաքը և թուլացնում աշխարհազորայինների կամքն ու զորությունը: Ջանգվածային գաղթը կատարվում է անկազմակերպ ու խուճապահար: Գրեթե միևնույն այդ իրավիճակն էր նաև տիրում Ախալցխայում: Հանուն արդարության պետք է փաստել, սակայն, որ վրաց մենշևիկներն ու պետությունը, նշյալ տարածքները պետականորեն Թուրքիային թողնելով, այլևս մեծապես և դավադրորեն կոտրել էին այդ տարածքների վրա ապրող բնիկ տերերի կամքն ու դիմադրողական ոգին: «Մշակի» հաղորդման համաձայն՝ խուճապի խորացմանը նպաստում էին նաև վրացական կողմի ձեռնարկած քայլերը: «Բորժոմի ձորում նրանց առաջը կտրում են վրացի պահակները և թույլ չեն տալիս առաջ շարժվելու... Փախստական հայությունը, շուրջ 100 հազար մարդ, ահա 4-5 օր է՝ սոված, բացօթյա մնացել է Բորժոմի ձորում[87]»:

Բորժոմի շրջանի կոմիսարը Վրաստանի ազգային խորհրդին ուղղված իր հեռագրում հաղորդում է, թե հազարավոր փախստականներ լցրել են շրջակա ողջ անտառներն ու լեռները: «Ճանապարհը 15 վերստ տարածությամբ բռնված է նրանցով. բժիշկների ու բժշկական օգնության բացակայության պատճառով և բաց երկնքի տակ...մարդիկ հիվանդանում և մեռնում են: Ինչպես երևում է. «Փախստականները կտրականապես հրաժարվում են վերադառնալ իրենց տեղերը՝ գերադասելով գնդակահարվել տեղնուտեղը» արտահայտությունից, վրացական մենշևիկյան կառավարությունը բռնություն է գործադրել գաղթականներին Ախալցխա և Ջավախք վերադարձնելու համար: («Համոզվելով, թե ինչ է կատարվում այժմ Ախալքալաքի գավառում, հանցանք է նրանց առ այժմ վերադարձնել»): Այնուհետև ասված է, թե

84 «Մշակ», 1918, 29 հունիսի, թիվ 124:

85 «Մշակ», 1918, 29 հունիսի, թիվ 124:

86 «Մշակ», Այս եղեռնագործությունը, ինչպես նաև գաղթի կազմակերպումն ու համաճարակներին զոհ գնացած ժողովրդի վերաբերյալ տեղեկությունները հանգամանորեն արտացոլվել են այն ժամանակվա հայտնի «Մշակ» օրաթերթում:

87 «Մշակ», 1918, 1 հունիսի:

«Ախալքալաքի, Ախալցխայի, Կարսի և Արտահանի ամբողջ շրջանների ազգաբնակությունը կարավաններով շարժվում է դեպի Բակուրիանի: Նրանք, որոնք չեն կարողանում ժամանակին փախչել, գնդակահարվում են մուսուլմանների ձեռքով: Ականատեսները պատմում են, որ մուսուլման ավազակախմբերը սրի և հրի են մատնել Ախալքալաքի գավառը... Հարյուր հազար փախստականներ դատապարտված են մահվան»[88]: Մի այլ հաղորդագրությամբ միևնույն պարբերականը հայտնում է, թե Բակուրիանիի բարձունքների վրա բացօթյա ապրող գաղթականությունը կտրականապես հրաժարվում է վերադառնալ իր բնակավայրերը և մեռնում է խմբերով: Պահանջում են, որ ժողովրդին ժամանակավորապես տեղավորեն շրջակա գյուղերում, որովհետև հիվանդություններն ու կողոպուտները սաստկանում են[89]:

Հայ ազգային խորհրդի և համերկրացիական միությունների լիազոր Արամ Տեր Գրիգորյանը Բակուրիանիից հաղորդում է, թե Ախալքալաքում վիճակը (սարսափը) աննկարագրելի է. հայերը և վրացիները զանգվածաբար գաղթում են դեպի Բակուրիանի և Ծալկա, երեխաները մեռնում են հարյուրներով: «Քաղաքական օրիենտացիայի լիակատար բացակայություն է»,- գրում է նա: Տեր Գրիգորյանի ուղարկած պատգամավորներին, որ թուրքերի հետ պիտի բանակցեին ժողովրդին վերադարձնելու համար, թուրքերը չեն ընդունում: «Բակուրիանիի բարձունքներում դեռևս ձյուն կա, ուր բացօթյա ապրող բնակչությունը անտանելի վիճակում է: Զինված ավազակախմբերն ահաբեկում են. վրաց կառավարության միջամտությունն է խնդրվում, որպեսզի թուրքական բանակի հսկողությամբ հայերը վերադառնան տեղերը և ավազակախմբերի զոհ չդառնան[90]»: Նույն Արամ Տեր Գրիգորյանը հաջորդ օրը բողոքում է, որ ձգձգվում է «միջազգային պատվիրակության» կազմումը՝ հայերին տեղերը վերադարձնելու կապակցությամբ, մինչդեռ սպեկուլյանտները միամիտ գյուղացիներին ուղղակի կողոպտում են[91]:

Վրաց կառավարությունը, գաղթականության անելանելի վիճակը հաշվի առնելով, կազմում է «...փախստականներին նպաստող նոր մարմին, որի անդամները կլինեն կառավարության կողմից նշանակված պաշտոնյաներ և ազգային (հայոց, վրաց և թուրքաց) խորհուրդների մի-մի ներկայացուցիչ[92]»: Սակայն գործը տեղից չի շարժվում, քանզի թուրքերը հրաժարվում են ընդունել հայերին: Այդ պատվիրակությունը, որի մեջ մտել են Ռուբեն արք. Բեկգյուլյանը, Արամ Տեր Գրիգորյանը, Տիգրան Գյոզալյանը, նաև վրացիներ ու մահմեդականներ, նպատակ ուներ թուրք հրամա-

88 «Մշակ», 1918, 9 հունիսի, թիվ 108:

89 «Մշակ», 1918, 12 հունիսի, թիվ 110:

90 «Մշակ», 1918, 12 հունիսի, թիվ 110:

91 «Մշակ», 1918, 13 հունիսի, թիվ 111:

92 «Մշակ», 1918, 13 հունիսի, թիվ 111:

նատարի ուղեկցությամբ մեկնել Ախալքալաք, որպեսզի բանակցությամբ հաշտեցնեին հայերին ու թուրքերին[93]:

Վրաստանի նախարարների խորհրդի նախագահին, ներքին գործերի նախարարին և տասնյակ այլ կազմակերպություններին ու թերթերի խմբագրություններին Արամ Տեր Գրիգորյանի հղած հեռագրերով պահանջվում է կանխել մուսուլմանական ավազակախմբերի խժդժությունները: Նրանք խլել ու քշել էին Բակուրիանիի գաղթականների անասունների մեծ մասը: Ավելին, մենշևիկյան տեղական իշխանությունները փախստականներին զինաթափ են անում:

Արամ Տեր Գրիգորյանի դիմումը կոմիսարին՝ պաշտպանել Վրաստանի պետական սահմանը, մնում է անհետևանք[94]:

Հրանոթներով և գնդացիրներով զինված՝ մահմեդական հրոսակախմբերը Ախալքալաքի գավառից անցնում են սահմանը և հարձակվում անպաշտպան գաղթականության վրա, և դա՝ վրացական սահմանն անտեր լինելու պատճառով[95]: Այդպիսով, թուրքերի ոճրագործ ձեռքերն ազատ են արձակվում հայերի նկատմամբ նոր ոճիրներ իրականացնելու համար:

Դրության ծայրահեղ լրջացումը գյուղագիր Հովի. Մալխասյանին հարկադրում է դիմել թիֆլիսաբնակ ախալքալաքցիներին՝ ընդհանուր ժողով գումարելու և միջոցառումներ մշակելու նպատակով[96]: Միաժամանակ «Մշակը» ժողովրդին կոչ է անում՝ օգնելու փախստականներին հագուստով, դրամով և այլ միջոցներով[97]:

Գ. Ալթունյանի նախագահությամբ տեղի է ունենում ախալքալաքցիների հայրենակցական միության ընդհանուր ժողովը: Գործերը հոգալու համար ընտրվում է վարչություն: 10 հոգուց բաղկացած վարչության կազմում էր նաև Հովի. Մալխասյանը: Ընտրվում է նաև վերստուգիչ հանձնաժողով[98]:

Ախալքալաքի դրության բարդացման համար Իվ. Պիճիկյանը սուր քննադատության է ենթարկում Ախալքալաքի նախկին քաղաքագլուխ Մկր. Մարգարյանին:

Իվ. Պիճիկյանը մեղադրում է նաև Ազգային խորհրդին, «...որը ոչ մի դրական քայլ չարավ դասալիքների դեմ»: Մեղադրում է տեղական այն գործիչներին, որոնք «...գաղթի ժամանակ ժողովրդին թողին անպաշտպան. նրանցից մի քանիսն, օրինակ, դաշնակցականների շեֆը՝ Ն. Դեմիրչօղլյանը, փախավ գաղթից առաջ, մյուսները փախան գաղթի ժամանակ՝ փրկելով իրենց կաշին ու գույքը: Երկիրը ամայաց-

93 «Մշակ», 1918, 15 հունիսի, թիվ 112:

94 «Մշակ», 1918, 16 հունիսի, թիվ 113:

95 Անդ:

96 Անդ:

97 Անդ, 1918, 19 հունիսի, թիվ 115:

98 «Մշակ», 1918, 21 հունիսի, թիվ 117:

ին, իսկ 80.000 հայ գյուղացիությունը նեղվում ու տառապում է, մաշվում ձորերում և անտառներում, ձյան և անձրևի տակ[99]»:

Տեղին է վերհիշել, որ սկսած 7-րդ դարի սկզբից, վրաց ազնվասիրտ ժողովուրդը, վրաց թագավորները նույնպես, պատմության ընթացքում ոչ մեկ անգամ են զորավիգ կանգնել մշտապես իր վրա ծանր հարվածներ կրող հայ ժողովրդին, նրա տեղահանված, փախստական մեծ հատվածներին, որոնք պարսկական, արաբական, բյուզանդական, սելջուկյան վայրագություններից խույս տալով, ապավինել են Վրաստանի օգնությանն ու հոգածու վերաբերմունքի արժանացել միշտ, հյուրընկալ օջախ գտել նրա քաղաքներում ու շրջաններում: Ցանկության դեպքում էլ չենք կարող մոռանալ վրացական լայնասրտությունն ու հոգու ջերմությունը: **Հիշենք հայկական այն բազմաթիվ գաղութները, որոնք գոյացել են հատկապես 7-12-րդ դարերի, ինչպես նաև հետագա ժամանակների ընթացքում՝ Գորի, Փոթի, Շամշուլդա, Կախեթ, Թելավ, Սուրամ, Այինու ձոր, Կրցխուլա, Ախլգոր, Սայրիսքա, Անանոթ, Դուշեթ, Սաարսաթյան և Քիսղև[100]:**

Բայց ահա, 20-րդ դարի սկզբին վրաց մենշևիկների վարած քաղաքականության հետևանքով թուրքերի կողմից կոտորվող եղբայր հայերի մուտքը Վրաստանի ներքին շրջաններ ոչ միայն մերժվում է, այլև թուրքամետ դիրքորոշումով հրահրվում, որ հայ գաղթականությունը վերադառնա հենց վրաց մենշևիկների դավաճանությամբ թուրքական բռնության տակ դրված Ջավախք և Ախալցխա: Ինչո՞ւ: Պատասխանը Նոյ Ժորդանիայի արտահայտած ցինիզմով առլեցուն խոսքի մեջ է. «Եթե հայերը խեղդվում են, ապա վրացիները պարտավոր չեն նրանց հետ միասին խեղդվել... Վրաստանը սովոր չէ թուրքերի տիրապետության տակ գտնվել, իսկ հայերը ընտելացել են դրան, և եթե մահմեդականներն անջատվում են Անդրկովկասից, Վրաստանը կգնա նրանց ետևից[101]»:

Բակուրիանիի գաղթականությանն արգելվել է տարածվել ավելի խորքերը, իսկ սովը գնալով սաստկանում էր: Մինչդեռ տարբեր տեղերից ևս 1500 գաղթականներ են ավելացվում Բակուրիանիի անտառների գաղթականների քանակի վրա[102]: Բակուրիանիի գաղթականությունը, սակայն, անկախ մենշևիկների բռնած բացասական դիրքից, վրաց ժողովրդի գործուն աջակցությամբ շարժվում է դեպի երկրի խորքերը, դեպի Ալազանի հովիտը և Սղնախ, Գորի ու Սուրամ:

Մի տեղեկության համաձայն, գաղթական գյուղացիները նաև Թիֆլիս են հասել: Բացի Վրաստանից, գաղթականությունը տարածվել է նաև Հյուսիսային Կովկասի և

99 Անդ, 1918, 23 հունիսի, թիվ 119:

100 Ա. Գ. Աբրահամյան, «Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության», Երևան, 1964, էջ 106:

101 Ե. Ղ. Սարգսյան, Նշվ. աշխ., էջ 375:

102 «Մշակ», 1918, 27 հունիսի, թիվ 122:

Ռուսաստանի հարավային շրջաններում, թեև այդ շրջաններում նույնպես կռիվներ էին գնում Կարմիր բանակի և դենիկինյան բանակի մնացորդների միջև՝ խլելով զոհեր նաև գաղթականներից:

Գաղթավայրերում՝ Բակուրիանիում և Ծալկայում համաճարակներ են սկսվում, որբանում են հազարավոր երեխաներ: Ստեղծվում են որբանոցներ Բակուրիանիում, Սուրամում, Մանգլիսում և այլուր, ուր հավաքվում են Ջավախքի և Արտահանի որբերը[103]: Երեխաներն այս որբանոցներում, կիսաքաղց կյանք վարելով, մեռնում էին զանգվածաբար: Ծալկայի հատվածում որբանոցներ չունենալու հետևանքով մահացության ցուցանիշը ավելի բարձր է եղել: Իսկ սովյալների համար Թիֆլիսում և այլուր հավաքվող մթերքը շատ անգամ տեղ չէր հասնում[104]:

1918-ի սեպտեմբերի սկզբին լուր է ստացվում, թե. «...ինչպես լսում ենք, օսմանյան կառավարությունը թույլատրել է Ախալքալաքի և Ախալցխայի փախստականներին վերադառնալ իրենց տեղերը: Այդ առիթով թուրքական միսիան Թիֆլիսում դիմել է վրաց կառավարության, խնդրելով իրեն ներկայացնել այդ շրջանների փախստականների ցուցակը, նկատի առնելով միաժամանակ՝ ո՛ր ազգին պատկանելու հանգամանքը և կրոնական դավանանքը[105]»: Հոկտեմբերի 2-ին հաղորդվում է, թե «Հայկական դիվանագիտական հավատարմատարը Վրաստանում երեկ Կ. Պոլսից՝ մեր պատվիրակությունից և Բաթումից՝ Էսադ փաշայից հեռագիրներ ստացավ, որ օսմ. կառավարությունը Ախալքալաքի փախստականներին թույլատրում է վերադառնալ Ախալքալաքի մի մասը: Թյուրքական դեսպան Քերիմ փաշան, սակայն, այդ մասին տակավին հրահանգ չի ստացել իր կառավարության կողմից[106]»:

Սեպտեմբերի 7-ի կիսաբերան խոստմանը վստահելով՝ Ալաստան, Վարևան, Տուրցխ գյուղերի բնակիչները վերադառնում են տեղերը[107]: Սակայն, ինչպես մեզ ուղղած նամակում գրում է ալաստանցի մանկավարժ Սարգիս Սիմավորյանը, թուրքերը և այդ բնակավայրերում վերահաստատված քրդերը անասելի տառապանքներ են պատճառում նրանց. ծեծ, թալան, աղջիկների առևանգում, սպանություններ և, այլևայլ բռնություններով, նախկին իրենց տեղերը՝ Բակուրիանի, Չխիշվարի, Ջաղվերի անտառներ վերադառնալու հարկադրանք:

Այսպիսով, քանի դեռ թուրքական կառավարության իրական թույլտվությունը բացակայում է, անելանելի պայմաններում հայտնված ժողովուրդը չի ցանկանում վերադառնալ և, սովի, ցրտի, համաճարակների տեսքով առատորեն իր հունձը անող

103 «Մշակ», 1918, 9 հուլիսի, թիվ 131:

104 «Մշակ», 1918, 31 օգոստոսի, թիվ 173: Համանման տեղեկություններ տես «Մշակի» 1918-ի հուլիսի 16-ի, 20-ի, 24-ի, 28-ի, օգոստոսի 5-ի, 15-ի, 23-ի, 31-ի համարներում:

105 «Մշակ», 1918, 7 սեպտեմբերի, թիվ 179:

106 «Մշակ», 1918, 2 հոկտեմբերի, թիվ 198:

107 «Մշակ», 1918, 8 սեպտեմբերի, թիվ 180:

մահը դառնում է ամենօրյա, ամենժամյա դաժան իրականություն: Ցանկության դեպքում էլ դժվար է մոռանալ, որ հայ գաղթականության դրության վատթարացման անմիջական պատճառը մենշևիկյան կառավարության անհասկանալիորեն անպատասխանատու վերաբերմունքն է եղել: «Մշակը» «Ժողովրդի ձայն» թերթից մի հոդված է արտատպել, ուր ասված է, թե հայ գաղթականությանը դիտավորյալ կերպով տանջելու գործում ամբողջ հանցանքը ընկնում է վրաց շովինիստական կառավարության վրա:«Ալազանի հովտում, Սղնախի ու Բակուրիանիի բարձունքներում, Սուրամի ու Գորիի փողոցներում տառապող մարդկանց համար պատասխանատուն Ժորդանիայի կաբինետն է[108]»:

Ախալքալաքի հայրենակցական վարչությունը Վրաստանում Հայաստանի կառավարության դիվանագիտական ներկայացուցչին բողոք է ներկայացնում՝ տեղեկացնելով, որ Ծալկայում և Բակուրիանիում 80.000 գաղթականներից մնացել է 55.000-ը, որ ազգային կազմակերպություններն անտարբեր են այս հարցերում, թեև վերջերս նրանք Բակուրիանիի տառապյալների մի մասին տեղափոխել են այլ վայրեր: Մնում է փրկել մնացածներին: Հնարավոր համարելով, որ ժողովուրդը ձմռանն էլ կարող է մնալ այդ վայրերում, առաջարկվում է նրանց ապահովել շենքերով[109]: Որքան արագ է մոտենում ձմեռը, նույնքան սաստկանում են թուրք ավազակախմբերի թալանչիական գործողությունները՝ անցնելով լկտիության բոլոր ահմանները: Ախալքալաքից Ծալկա թափանցելով՝ թուրքերը Նարդվանում և Այազմայում գտնվող գաղթականներից փախցնում են հազար գլուխ տավար և նույնքան էլ ոչխար՝ նախապես սպանելով չորս հովիվներին[110]:

Որոշ հաղորդագրությունների համաձայն՝ թուրքերը պատրաստվում են նահանջել և Ախալքալաքի և Ախալցխայի գավառները վերադարձնել Վրաստանին: Բայց հետագա իրողությունները ցույց տվեցին, որ Թուրքիան դեռ ձգձգելու է իր նահանջը, հույս ունենալով, թե իրենք թերևս հնարավոր է ամրանան Ջավախքում: Թուրքերը Չըլդրից, Իսպիրից, Էրզրումից, Աղբաբայից և այլ վայրերից տեղափոխելով՝ այնտեղ բնակեցրին իրենց ազգակիցներին, որպեսզի Ջավախքը կրկին թրքանար: Այնպես որ մի քանի ամսվա ընթացքում դատարկված Ջավախքի բոլոր բնակավայրերի բոլոր տները ունեին թուրք տերեր:

Թուրքական ձգձգումներն ունեին նաև այլ նպատակ՝ քաշքշուկ ստեղծել, մինչև որ կսպառվեր, կոչնչանար հայությունը անտառներում: Իսկ այդ հաշվարկները ավելի քան իրական էին. օրեցօր մաշվում, քչանում էին ինչպես ապրողները, այնպես էլ նրանց վերջնական վերադարձի հույսը:

108 «Մշակ», 1918, 3 հոկտեմբերի, թիվ 199:

109 «Մշակ», 1918, 8 հոկտեմբերի, թիվ 203:

110 «Մշակ», 1918, 15 հոկտեմբերի, թիվ 209:

Ցավոք, կրկին գլուխ է բարձրացնում մենշևիկյան շովինիզմը. մենշևիկների բերանով վրացական «Սախալխո սաքմե» թերթը 1918 թվականի հոկտեմբերի 18-ի համարում կոնկրետ պահանջել է, որպեսզի Հայոց ազգային խորհուրդը հրաժարվի Արևմտյան Հայաստանից Վրաստան գաղթած հայերին Ախալքալաքում և Ախալցխայում վերատեղավորելու մտքից: «Մենք չենք կարող Պասկևիչյան ժամանակվա սխալն այժմս էլ կրկնել և ցեղագրորեն գունավորել մեր երկիրը», եզրափակում է նույն թերթը[111]: Թունավորելով հայ և վրաց եղբայր ժողովուրդների դարերի քննությունը բռնած բարեկամությունը՝ մենշևիկները շարունակում էին իրենց միտումնավոր ձգձգումները և թուրքերի նահանջի վերաբերյալ իրենց քաղաքական դիրքորոշումն ու վերաբերմունքի հարցը ամեն կերպ մղում հետին պլան: Մինչդեռ ցրտերի սաստկացման պատճառով ժողովրդի մահացության աստիճանը անշեղորեն ավելանում է: Պերճախոս փաստեր են բերվում այն մասին, որ Գանձայի երկու հազար բնակչից մնացել է 720-ը, Մեծ Խանչալլիի 1700 հայից մնացել է 550-ը[112]:

«Մշակն» այնուհետև գրում է, թե Աբդյուլ Քերիմ փաշան հատուկ հեռագրով հաղորդել է Վրաստանում Հայկական դիվանագիտական միսիային, թե ինքը մեծ վեզիրից հրաման է ստացել, հոկտեմբերի 24-ից սկսած, մաքրել Անդրկովկասի գրավված մասերը թուրքերից, մինչև Բրեստ-Լիտովսկի պայմանագրով իրենց մնացած սահմանները[113]:

Վրաց կառավարությունն իր դիմումով, ուղղված Ախալքալաքի և Ախալցխայի ազգաբնակչությանը, չքմեղանում է, որ ինքն իբր հնարավորություն չի ունեցել օգնելու գաղթականությանը, բայց որ այժմ նա վերադառնում է իր վայրերը, խոստանում է օգնել[114]: Հետևում է գեներալ-մայոր Մականի կոչը երկու գավառների ազգաբնակչությանը, ուր ասված է, որ ինքը Վրաստանի կառավարության կողմից, նահանգապետի իրավունքներով, նշանակված է այդ տեղերի զորքերի հրամանատար: Նա նաև պարզաբանում է, որ զորքի մուտքը նպատակ ունի կանխել անկարգությունները, ոչնչացնել ավազակախմբերին, պաշտպանել վերադարձող, այդ թվում նաև մահմեդական, ժողովուրդների շահերը[115]: Նոյեմբերի 15-ին նույն գեներալը տրտնջում է թուրքերից, որոնք պայմանավորված օրը դուրս չեն գալիս գավառներից: Նա դիմում է Խալիլ բեյին, առաջարկելով, որ մուտք գործող հայերի կյանքը և գույքը վտանգի չենթարկվի: Խալիլը համաձայնում է, պնդելով, որ թույլտվություն տա նաև վրաց կառավարությունը: Այդ թույլտվությունը, սակայն, նույնպես ձգձգվում է: Մինչդեռ Մականը հայերին խորհուրդ չի տալիս առանց լիակատար համաձայնության մուտք

111 «Մշակ», 1918, 20 հոկտեմբերի, թիվ 214:

112 Տե՛ս «Մշակի» 1918թ.-ի հոկտեմբերի 2-ի համարը, թիվ 215:

113 «Մշակ», 1918, 5 նոյեմբերի, թիվ 226:

114 «Մշակ», 1918, 10 նոյեմբերի, թիվ 231:

115 «Մշակ», 1918, 13 նոյեմբերի, թիվ 233:

գործել Ջավախք: Կասկածից դուրս էր, որ նրանք կենթարկվեին թալանի և սպանության, այնպես, ինչպես այդ տեղի ունեցավ Բարալեթի մոտ, ուր ներս աճապարող փախստականների մի մասը պարզապես կոտորվեց, մյուս մասը գերի տարվեց՝ իսպառ զրկվելով ունեցվածքից ու ընտանի կենդանիներից[116]:

Դրության լրջությունը ստիպում է Հայոց ազգային խորհրդի գործադիր մարմնին Ժորդանիայի մոտ ուղարկել Հ. Արղությանին և Ա. Երզնկյանին՝ պարզելու համար, թե ինչ է սպասվում հոգևարքի մեջ գտնվող մարդկանց: Ժորդանիան հավաստում է, որ եթե 10 օրվա ընթացքում գաղթականների վերադարձը չհաջողվեց, ապա վրաց կառավարությունը նրանց կտեղավորի Բակուրիանիի, Բորժոմիի, Ծալկայի և Մանգլիսի զորանոցներում, իսկ կարսեցիներին և ալեքսանդրապոլցիներին առաջարկում են վերադառնալ Հայաստան[117]:

Մենշևիկյան կառավարության այդ ուշացած որոշմանը հետևում է հայ գաղթականության զգալի մասի տարածումը Վրաստանի ներքին շրջաններ[118]: Մոսկվայում հրատարակվող «Կոմունիստ» շաբաթաթերթի հաղորդման համաձայն (1918թ., թիվ 9, էջ 14)՝ «Վրաստանի զանազան վայրերում կուտակված են 150 հազար գաղթականներ[119]»: Փորձանքի մեջ հայտնված գաղթականների ծանր վիճակը կառավարությունը, համենայն դեպս, չի թեթևացնում բնավ: Մենշևիկների և թուրքերի քաշքշուկներից գլուխ չհանվեց (գեներալ-նահանգապետի խոստովանական հաղորդման համաձայն, գաղթականները իրենք իրենցից երկուսին նոյեմբերի 14-ին ուղարկում են թուրքական զորահրամանատարի մոտ՝ Ագանա գյուղը, վերադարձի պայմանների ստացման-ապահովման հույսով: Թուրք հրամանատարը, սակայն, մերժում է): Եվ գաղթականությունը, համբերության բաժակի վերջին կաթիլը հատած և դեմհանդիման կանգնած լինելով ծանր ձմռան առջև, գրեթե ներխուժում-նվաճում է իր հին հայրենիքի մաս Ջավախքը: Թորոսյանը նոյեմբերի 24-ին Բակուրիանիի գաղթականների բաժանմունքին գրած հեռագրում հայտնում է, որ «...այսօր եղանակը ջերմ էր. գաղթականների վերադարձը հայրենիք շարունակվում է: Արդեն 10 հազարից էլ ավելի գաղթականներ գնացել են՝ համաձայն զորամասի պետ կապիտան Կանդելակիի խոսքերի: Ասկերները կողոպտում են գաղթականներին և հափշտակում կանանց[120]»:

116 «Մշակ», 1918, 15 նոյեմբերի, թիվ 235:

117 «Մշակ», 1918, 16 նոյեմբերի, թիվ 236:

118 Հեղինակի կողմից բնութագրված «ուշացած որոշումը» Վրաստանի մենշևիկյան կառավարության կողմից խորամանկության պարզունակ չափաբաժին ունի, ինչը միշտ էլ հատուկ է շովինիզմի ախտով տառապող ազգերի ուղեղներին. այն, որ իրենք երբեք էլ դեմ չեն անհատապես կամ փոքր խմբերով կուլ տալ, կլանել դժբախտության մեջ հայտնված հարևանին, ինչը կատարվել է շարունակաբար և անաքող: (Ծանոթագրումը՝ կազմողի՝ Ռ. Ղ.):

119 «Կոմունիստ», շաբաթաթերթի տեքստում նշված տեղում:

120 «Մշակ», 1918, 26 նոյեմբերի, թիվ 246:

Երբ որոշվում է թուրքական բանակի նահանջի հարցը, եկվոր թուրքերն էլ սկսում են զորքի հետ վերադառնալ իրենց նախկին տեղերը՝ իրենց հետ տանելով թալանված Ջավախքի ողջ հարստությունը[121]: Իսկ դեռևս մնացած զորամասերի թուրք բանակայինները կողոպտում են Ծալկայից վերադարձող գաղթականներին: Նյութական կորուստների պակասը լրացվում է հոգեկան տառապանքով, որի լեփ-լեցուն բաժակը հայ ժողովրդի ջավախքյան հատվածը այդ տարիներին ըմպում է ցմրուր: Ի վերջո վրացական զորքերը գործնական քայլերի են դիմում: 1918 թվականի դեկտեմբերի 4-ին այդ զորքը մուտք է գործում Ախալքալաքի և Ախալցխայի գավառները[122]: Դեկտեմբերի 5-ի առավոտյան ժամը 10-ին վրացական զորքը մտնում է Ախալքալաք, որն ամբողջապես կողոպտված է եղել: Գաղթավայրերում պաշտոնական հայտարարություններ են արվում, որպեսզի վերադարձն սկսվի ու շարունակվի: Մակակը հայտնում է, որ թուրքերը հրդեհել են հացահատիկի պահեստներից մեկը[123]: Վրաստանի մենշևիկյան «Պայքար» թերթը շատ ուշացումով կոկորդիլոսի արցունքներ է թափում, իբրև թե ցավելով, որ հայ ժողովուրդը 7 ամիս շարունակ անասելի տառապել է թուրքերի գազանությունների պատճառով[124]: Դեկտեմբերի 20-ին Ռուխաձեն էլ հաղորդում է, որ հայ գաղթականներն աստիճանաբար վերադառնում են, որոնք իբր թե Ջավախքում 30 տոկոս էլ չեն կազմում (այս մասին գրված է միևնույն օրաթերթի դեկտեմբերի 22-ի թիվ 263 համարում):

Վրաստանի կառավարությունը, օգտվելով Հայաստանի հետ պատերազմի մեջ գտնվելու առիթից, որոշում է «վերացնել Թիֆլիսի քաղաքային վարչությանը կից փախստականների բաժանմունքը» և ամբողջ գաղթականությանը, որ Վրաստան է թափանցել Կարսից ու Արտահանից, վտարել Հայաստան[125]:

Գաղթականությունը 1918-ի վերջին մեծ մասամբ վերադարձել էր: Բայց փոխադրամիջոցներ չունեցողները, նյութական պայմաններից զրկվածները, որբացածներն ու ծերերը դեռևս մնում էին գաղթավայրում կամ թափառական կյանք վարում զանազան շրջաններում: Բելիկլյուչիկից[126] (շուրջ 2000 գաղթական), Բեշտաշենից, Արմավիրից և բազմաթիվ այլ տեղերից փախստականները դեռևս չէին վերադարձել: Աստիճանաբար կատարվող տունդարձը ձգձգվեց ևս մի քանի ամիս:

Վրաստանի շրջաններում թափառողների և այրիների ու որբերի վերադարձի հարցը որոշելու համար Թիֆլիսաբնակ 8.000 ախալքալաքցիները ժողով են գու-

121 «Մշակ», 1918, 29 հոկտեմբերի, թիվ 220:

122 «Մշակ», 1918, 6 դեկտեմբերի, թիվ 252, 7 դեկտեմբերի, թիվ 253:

123 «Մշակ», 1918, 7 դեկտեմբերի թիվ 253:

124 «Մշակ», 1918, 11 դեկտեմբերի, թիվ 256:

125 «Մշակ», 1919, 5 հունվարի, թիվ 4:

126 Նույն օրաթերթը, 1918, 29 հոկտեմբերի, թիվ 220:

մարում: Գաղթականական բաժնի կառավարիչ Հ. Արղությանը ձգտում է փոխադրամիջոցներ գտնել և օգնել նրանց: Բայց գործնական քայլերի համար պակասում էին ֆինանսական միջոցները և, մանավանդ, եռանդը: Մամուլն այդ պատճառով քննադատում է Հայ ազգային խորհրդի գործունեությունը, նշելով, որ նրա «Կատարողական մարմինը մշտական մի տեղ չունի խնդրողներին ընդունելու համար, այլև անդամները ոչ մի տեղ չէին երևում և հետաքրքրվում, թե ինչ վիճակում են գտնվում գաղթականները[127]»: Այդ էր պատճառը, որ հունվար ամսին էլ դեռ շատ գաղթականներ, անտերության մատնված, Թիֆլիսում սովահար էին լինում[128]:

Քննադատությունը անկասկած տեղին էր, բայց այդ կազմակերպությունները, նյութական հիմքից զուրկ լինելով, ավելին անելու հնարավորություն պարզապես չունեին: Հիշյալ կազմակերպությունների մեջ ընդգրկված, նաև չընդգրկված բազմաթիվ անձինք (Արամ Տեր Գրիգորյան, Գր. Պապոյան, Հ. Արղության, Իվ. Պիճիկյան, Հովհ. Մալխասյան, Պ. Աբելյան և ուրիշներ) մամուլի օգնությամբ տեղերում նշանակալից գործունեություն ունեցան:

Տուն դարձած ջավախեթցիները օգնության մեծ կարիք ունեին: Բայց Թիֆլիս տեղափոխված ունևոր հայրենակիցները մեծ մասամբ անտարբեր գտնվեցին: «Մշակի» թղթակիցը գրում էր, թե քանի դեռ ժողովուրդը իր վրեժի խոսքը չի ասել, պարոն հարուստները պետք է օգնության ձեռք մեկնեն[129]: Անտարբեր մնացին նաև Թիֆլիսի բնիկ մեծահարուստները, ուստի, ձեռքը փրփուրներին մեկնողի հոգեբանությամբ, Ախալքալաքի հայրենակցական խորհուրդը նախագահի տեղակալ Գր. Պապոյանի և քարտուղար Պ. Աբելյանի ստորագրությամբ 1919-ի հունվարի 15-ին օգնության խնդրանքով դիմում են Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, ինչպես նաև ամերիկյան բարեգործական ընկերության ներկայացուցիչներին[130]: Եվ իզուր...

Մյուս կողմից, այն օգնությունը, որ ցուցաբերում էր քաղաքաբնակ աշխատավորությունը, վատնվել է՝ չստանալով նպատակային կիրառում: Այսպես, օրինակ, Ե. Ն. անձնավորության հաղորդման համաձայն, Արամ Տեր Գրիգորյանը հաստատել է, որ Ծալկայի և Բակուրիանիի սովյալներին օգնելու համար նախատեսված սննդի կայաններ չեն բացվել: Զանազան պաշտոնյաներ, լիազորներ վաճառել են գաղթականների համար հատկացված ապրանքներ և բազմաթիվ զեղծումներ կատարել: Մինչդեռ գաղթականական բաժինը անհրաժեշտ զսպիչ միջոցներ չի ձեռնարկել: Որոշում է կայացվում հետաքննություն անցկացնել և մեղավորներին խստագույնս պատժել[131]: Թեև դա էլ, ի վերջո, մնում է անհետևանք:

127 Նույն օրաթերթը, 1919, 5 հունվարի, թիվ 4

128 Նույն օրաթերթը, 1919, 16 հունվարի, թիվ 12:

129 «Մշակ», 1918, 25 դեկտեմբերի, թիվ 265:

130 Նույն օրաթերթը, 1919, 19 հունվարի, թիվ 14:

131 Նույն օրաթերթը, 1919, 1 մարտի թիվ 46:

Ինչպի՞սի կորուստներով վերադարձավ Ջավախքի գաղթականությունը:

Մամուլում արձանագրված 80 կամ 100 հազար ջավախեթցիների թիվը, եթե մոտավոր հաշվենք 90 հազար, որն ավելի ստույգ կարելի է համարել, ապա պիտի ընդունենք, որ նրանց կեսը և նույնիսկ ավելին զոհ գնաց կոտորածներին, սովին ու համաճարակներին: Կորստի այդ մեծ թվի մեջ մտնում են նաև այն հազարավոր որբերը, որոնց ամերիկացիները գաղթից հետո տարան Ամերիկայի Միացյալ Նահանգներ:

Գաղթից վերադարձածների մի զգալի մասը, թերևս 10 տոկոսը, համաճարակների պատճառով մահացավ տեղում: Գաղթականական բաժանմունքի քարտուղար Պ. Աբելյանն իրավացի էր, երբ հավաստում էր, թե ժողովրդի տառապանքը շարունակվեց նաև հայրենիքում, քանզի նրա կեսը հիվանդ է և մահացության տոկոսը՝ մեծ: Բացի այդ, գրում է նա, Ջավախքից հեռացող թուրքերը հայերին ստիպել են իրենց սայլերով թալանված բեռները տանել սահմանի մյուս կողմը, որտեղից հայերն այլևս չէին վերադարձել[132]:

Սա էր 1919 թվականի ձմռանը Ջավախքում տիրող իրական պատկերը: Ընչազրկության հետևանքով էլ ժողովրդի մի մասը ստիպված էր զբաղվել բատրակությամբ կամ հեռագնա աշխատանքով: Սովն ընդգրկել էր ողջ գավառը: Ժողովուրդը տարբեր միջոցներով աղուն և սերմացու էր ձեռք բերում հարևան գավառներից, Ջավախքի չգաղթած կաթոլիկ գյուղերից ու դուխաբորներից:

1919 թվականի գարնանացանը Ջավախքում կատարվեց սննդի ծայրահեղ խնայողությունների հաշվին՝ երկրորդաբար սնունդ հայթայթելով վայրի բույսերից ու զանազան արմտիքներից:

Հաջորդ՝ 1920 թվականի գարնանացանն ավելի բարեհաջող էր: Ժողովուրդը, դարձյալ խնայողության ռեժիմի գնով, հաստատուն քայլեր կատարեց նաև անասնապահությունը զարգացնելու ուղղությամբ:

Պատմությունը կարճ ժամանակում ցույց տվեց, որ 1919-ին երկրամասից հեռացած թուրքերը Ջավախքին նորից տիրելու անհագուրդ մոլուցքով էին տոգորված: Օգտվելով այն հանգամանքից, որ վրաց մենշևիկյան կառավարությունը, Ռուսաստանից անջատվելու հետևանքով, խիստ թուլացել էր, Թուրքիան դարձյալ ագրեսորի լկտի պահվածք ստանձնեց:

1921 թվականի սկզբին Թուրքիան կրկին զավթեց Ջավախքը, մտնելով սահմանամերձ գյուղերը, որոնք բնավ էլ դիմադրության փորձ չարեցին: Քեմալականները, հայերին ահ ու սարսափի մեջ պահելու համար, բազմաթիվ անկարգություններ ու սպանություններ կատարեցին: Վրաց մենշևիկյան զորքերը կրկին լքեցին Ջավախքը: Ի դեպ, այս բազմակի լքումները, և հայ ժողովրդի ջավախքյան հատվածին թուրքական «ողորմածությանը» թողնելը շատ խոսուն փաստեր են ինքնին, որոնք

132 «Մշակ», 1919, 5 հունվարի, թիվ 4:

մեկնաբանման կարիք իսկ չունեն: Երբ ամենուրեք հաստատվեցին թուրքական իշխանության մարմիններ, ժողովրդի մեջ չարագուշակ լուրեր տարածվեցին քեմալականների կողմից հայերին սրի քաշելու վերաբերյալ: Այդ լուրերի անստուգությունն իսկ ժողովրդին ահ ու սարսափի մեջ էր պահում:

Ծանր ձմեռ էր, հետևապես նորից բռնել գաղթի ճամփան՝ ստույգ մահ կնշանակեր: Եվ թեև քեմալական Թուրքիան այս անգամ զանգվածային ջարդեր չէր սկսել, այնուամենայնիվ սանձարձակ ասկյարները օր ցերեկով կողոպտում էին կանանց ոսկյա և արծաթե զարդերը: Երբեմն թուրքական բանակի առանձին զորատեսակների գումակների կարիքների անվան տակ նաև լծկան անասուններ էին քշում Չըլդրի ուղղությամբ: Այս կարգի անվերջ թվացող ապօրինությունները կատարյալ պատուհաս են դարձել հայության համար՝ մղձավանջի վերածելով նրա առանց այն էլ չարքաշ կյանքը:

Վերջապես վրա հասավ Զավախքի հայության փրկության ժամը:

1921 թվականի փետրվարի 11-ի լույս 12-ի գիշերը Վրաստանում սկսվում է զինված ապստամբություն ընդդեմ մենշևիկյան կառավարության, իսկ փետրվարի 25-ին հաստատվում են սովետական կարգեր: Պարբերաբար ավեր ու ավարի ենթարկված, բզկտված Զավախքի համար ևս նոր պատմություն սկսվեց: Այնուամենայնիվ Զավախքի հայերի տնտեսական վիճակը ծանր էր մնում սաստիկ: Նեղության ծանր այդ ժամանակներում, ասես առատության եղջյուրից, նյութականից առավել բարոյական մեծ ու անգնահատելի օգնություն ստացվեց ՀՕԿ-ի միջոցով, որի նախագահն էր Ամենայն Հայոց բանաստեղծ Սեծն Թումանյանը: Ինչպես հայտնի է, Կ. Պոլսում և ամենուրեք հայերը հանգանակություններ և նվիրատվություններ կազմակերպեցին հօգուտ մահամերձ հայրենիքի և համառորեն տոկացող հայրենաբնակ հայության: Չանցած մեկ-երկու ամիս, Հայաստան, նաև՝ հարազատ Զավախք և Ախալցխա, հույսի փարոսի շողարձակում որպես, հասան ալյուր, հագուստեղեն, դեղորայք, դրամ և կենսապահովման այլևայլ միջոցներ: Եվ տարիների հետ ոտքի կանգնեց նաև Զավախքը, վերականգնվեց տնտեսությունը, աստիճանաբար աշխուժացավ նաև մշակութային կյանքը:

Զավախքը հայկական պետականության, ինչպես նաև Զաքարյանների տիրապետության շրջանում ունեցել է մշակույթի և կրթության ինքնուրույն օջախներ: Ինչպես առհասարակ պատմական Հայաստանում, Գուգարաց աշխարհի այս մասում նույնպես եղել են պետական հիմնարկություններ և ճարտարապետական բազմաթիվ հուշարձաններ, եկեղեցիներ, մատուռներ են կառուցվել, խաչքարեր քանդակվել, ինքնատիպ շիրմաքարեր պատրաստվել և այլն: Երկրամասը հարուստ է գերեզմանական ունիկալ այնպիսի հուշարձաններով (խոյի, ձիու կերպարանքով), որոնք մեծարվեստ քանդակվել են միջին դարերում: Դրանք աներկբա հայկական հուշարձաններ են, հայկական աշխարընկալման յուրօրինակ նմուշօրինակներ, որոնց հա-

մանմաններն այժմ պահպանվում են Հայաստանի ողջ տարածքում[133]: Բայց որովհետև Ջավախքը շարունակ կռվախնձոր է եղել հայերի, վրացիների, ինչպես նաև անընդհատ այս ուղղությամբ արշավող օտար նվաճողների միջև, հուշարձանների մեծագույն մասը, ցավոք, ավերվել ու կորստյան է մատնվել: Դիպվածային պեղումներից պարզվում է, որ հատկապես Ջաքարյանների շրջանից հետո կործանված հուշարձանները ցայսօր պահպանվում են հայերեն արձանագրություններով հանդերձ: Հնագետների վկայությամբ այժմ «Ախալքալաքում և շրջանում պահպանվել են բազմաթիվ պատմական հուշարձաններ՝ Աբուլի եկեղեցին (10-րդ դար), Ջրեսկի անապատը, Բարալեթի եկեղեցին (11-րդ դար), Կառնուտը, Ախալքալաքի ամրոցը և այլն[134]»:

Սկսած 19-րդ դարի առաջին կեսից մինչև դարավերջը՝ եկեղեցիներ կառուցվեցին Ջավախքի բոլոր վայրերում, այդ թվում նաև Ախալքալաքում՝ Սուրբ Խաչ եկեղեցին, որ կառուցվել է1856 թվականին[135]:

19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբներին սկսվում է եկեղեցիներին կից կամ առանձին դպրոցների հիմնումը՝ ուսուցիչներ ունենալով տարրական և ոչ լրիվ միջնակարգ կրթության տեր անձանց:

Ախալքալաք քաղաքի առաջին սբ. Մեսրովբյան հայոց եկեղեցական ծխական տղայոց երկդասյան ուսումնարանը հիմնվել է1836 թվականին՝ Կարապետ Բագրատունու նախաձեռնությամբ և ծախսով, տարեկան 140-160 աշակերտով և 4-5 վարժապետով: Քաղաքի երկրորդ դպրոցը, որ կոչվում էր սբ. Սանդխտյան հայոց եկեղեցական-ծխական օրիորդաց երկդասյան ուսումնարան, հիմնվել է1870 թվականին՝ մտավորականներ Հովհաննես Քաջազնունու և Խորեն Բարսեղյանի ջանքերով, «որոնք հանձն են առել առաջին տարին ձրի դասեր ավանդել»: 1890-ական թվականներին այն տարեկան ունենում էր 150-160 աշակերտուհիներ, երկու վարժուհի և չորս վարժապետ:

1889-ին հիմնվել է ռուսաց քաղաքային չորսդասարանային դպրոցը՝ տարեկան 130-140 աշակերտով և հինգ վարժապետով[136]:

---

133 1977 և 1980 թվականներին Ջավախքում մենք ականատես եղանք տխուր փաստերի. Թբիլիսի քաղաքից որոշ կազմակերպություններ ապօրինաբար, պատմական հուշարձանների պահպանության վերաբերյալ պետական հատուկ օրենքները ոտնատակ տալով, վերոնշյալ մի շարք խոյածև հուշարձաններ տարել են քաղաքի իբր հիմնարկների բակերը զարդարելու: Այդպիսի 3 (երեք) խոյարձան է տարվել միայն Օրջա գյուղի տարածքից, իսկ տեղական կազմակերպությունները քար լռություն են պահպանել: Մի խոյարձան էլ տարվել է Թորիայի մերձակայքից: Սակայն տեղի երիտասարդության և Բոգդանովկայի շրջանային «Արշալույս» թերթի (գլխ. խմբագիր՝ Մոլիկ Սեդրակյան) համառ պահանջներով խոյարձանը վերադարձվել է իր նախկին տեղը:

134 ՀՍՀ, 1, էջ 198:

135 Հ. Ս. Էփրիկյան, Ա, էջ 63:

136 Ե. Լալայան, նշվ. աշխ. (ԱՀ, 1, էջ 218-219):

Գավառի գյուղերում մինչև 1881 թվականը եղել են հայոց գյուղական տարրական դպրոցներ, սակայն «...երբ կառավարությունը բացեց արքունի դպրոցներ, դրանք հետզհետե փակվեցան, և այժմ (1885 թ.) ոչ մի հայոց ուսումնարան չկա[137]»:

19-րդ դարի երկրորդ կեսին Ջավախքի բնակավայրերում տարբեր թվականներին ստեղծվել են ռուսական ժողովրդական միդասյան դպրոցներ: Այսպես, օրինակ, Բարալեթում այն հիմնվել է 1868 թվականին, Քիլդա վիրաբնակ գյուղում՝ 1869-ին, Սաթխայում՝ 1875-ին, Գանձայում, Մեծ Գյոնդուրայում, Դիլիսկայում, Հեշտիայում, Խզաբավրայում, Կարծախում, Հոկամում և Վաչիանում՝ 1881-ին, Ալաստանում և Արագովայում՝ 1882-ին և Խրթվիսում՝ 1885-ին: Այդ դպրոցներում 1890-ական թվականներին սովորում էին 980 տղա և 48 աղջիկ[138]:

1918-1921 թվականներին գաղթի հետևանքով բոլոր դպրոցները փակվեցին: 1920 թվականին վերականգնվեցին խալիֆայական տնային դպրոցները: 1921-ին, սովետական կարգեր հաստատվելուց հետո, պետությունը հոգ տարավ վերականգնելու տարրական դպրոցները և վերակառուցելու թուրքերի ձեռքով ավերված դպրոցական շենքերը: Քաղաքում վերականգնվեցին տարրական և միջնակարգ դպրոցները: 1930-ական թվականներին մեծ գյուղերում հիմնվեցին միջնակարգ կամ ոչ լրիվ միջնակարգ դպրոցներ: Քաղաքում հիմնված մանկավարժական տեխնիկումը և Թիֆլիսի մանկավարժական տեխնիկումը Ջավախքին ապահովում էին մանկավարժական կադրերով: 1930-ական թվականներից սկսած միջնակարգ դպրոցներում քիչ թվով մանկավարժներ հայտնվեցին նաև բարձրագույն կրթությամբ: Մեծ հայրենականից հետո նրանց թիվը տասնապատկվեց: 1970-ական թվականներին Ախալքալաքում և շրջանում գործում էին «75 հանրակրթական, գիշերօթիկ, երաժշտական դպրոցներ, գյուղատնտեսական տեխնիկում[139]», Բոգդանովկայի շրջկենտրոնն այդ ժամանակ ուներ երեք հայկական և մեկ ռուսական միջնակարգ դպրոց, մեկ հեռակա միջնակարգ, մեկ ութամյա գիշերօթիկ և մեկ երաժշտական դպրոց[140]: Շրջանի բոլոր մեծ գյուղերում գործում են 1-2 միջնակարգ և որոշ գյուղերում՝ ոչ լրիվ միջնակարգ դպրոցներ:

Հասարակության նախաձեռնությամբ դեռևս 1880 թվականի մայիսի 24-ին բացվել է Ախալքալաքի «Հայոց երկսեռ դպրոցներին կից» գրադարան-ընթերցարան, որն ուներ տղամարդկանց և կանանց բաժիններ: 1895-ին այս գրադարանն ուներ 1440 հայերեն և ռուսերեն գիրք: Այն տարեկան ստանում էր 21 անուն պարբերական[141]:

---

137 Անդ, էջ 219:

138 Ե. Լալայան, Նշվ. աշխ. (ԱՀ, 1, էջ 319-320):

139 ՀՍՀ, 1, էջ 197:

140 Անդ, 2, էջ 499:

141 Ե. Լալայան, Նշվ. աշխ. (ԱՀ, 1, էջ 222-223):

Այժմ ինչպես Ախալքալաքը, այնպես էլ Բոգդանովկան ունեն հարուստ գրադարաններ:

Ինչպես Հայաստանի բոլոր շրջաններում, Ջավախքում էլ ժողովուրդն ուներ հինավուրց իր թատերախաղերը, որոնց մեջ ամենից տարածվածն ու սիրվածը ստվերների թատրոնն էր՝ **Ղարագյոզ** տիկնիկային թատրոնը[142]:

Ե. Լալայանի հաղորդմամբ՝ սբ. Սանդխտյան օրիորդաց դպրոցի ընդարձակ դահլիճն ունեցել է հարմար բեմ, որտեղ ուսուցչական խմբերը, քաղաքի սիրողների մասնակցությամբ, տարեկամ 3-5 ներկայացում են տվել[143]:

Ախալքալաքը թատրոնի համար հատուկ շենք ունեցավ 1980 թվականին: Մինչ այդ քաղաքի սիրողական խմբերը, ինչպես նաև 1934-1940 թվականներին քաղաքում գոյություն ունեցող Հայկական պետական թատրոնն իր թատերախաղ-ներկայացումները կազմակերպում էր լոկ դպրոցների բեմերում: 1944-ից Ախալքալաքում գործում է Ս. Մ. Կիրովի անվան մշակույթի տան հայկական թատերախումբը:

Ջավախքի մշակութային կյանքը նախախորհրդային շրջանում արտացոլվում էր «Ջավախք» անունով թերթի էջերում (1913-1916թթ.): Այժմ Ախալքալաքում լույս է տեսնում «Փարոս», իսկ Բոգդանովկայում՝ «Արշալույս» թերթերը:

142 Ջավախքի ստվերների թատրոնի ամբողջական նկարագրությունը տես՝ Ժ. Կ. Խաչատրյան, («Ղարագօզ. Հայ ազգագրություն և բանահյուսություն», թիվ 7, 1975, էջ 105-124):

143 ԱՀ, 1, էջ 223:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԶԱԿԱՅՔԻ ՀԱՅՈՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆՑԱՂԸ

Երկրագործությունը և նրա տեխնիկան[144]: Երկրագործական համակարգեր: Մշակվող կուլտուրաներ: Ցանքերի խնամքը: Այգեգործություն և բանջարաբուծություն: Բերքահավաքը և նրա տեխնիկան: Կալսոցը և նրա տեխնիկան:

Համանմանությամբ պատմական Հին Հայաստանի՝ Բարձր Հայքում, Ջավախքում նույնպես երկրագործությունն ունեցել և այժմ էլ ունի երկու զուգահեռ ձևեր՝ **բրիչային երկրագործությունը,** որն արտահայտվում է մասնավորապես բանջարաբուծության և այգեգործության մեջ և **արորա-գութանային երկրագործությունը**, որի բաղադրիչներն են դաշտամշակությունը, բերքահավաքը և կալսոցը:

Բրիչային երկրագործությունը նախնադարյան երկրագործություն էր՝ արորի առաջացումից հազարամյակներ առաջ: Երկարատև այս երկրագործությանն իսպառ անհայտ է եղել **քաշելով** վարուցանք կատարելու առաջավոր եղանակը: Դրա փոխարեն նախնադարյան մարդը Հայկական Լեռնաշխարհում օգտագործել է **ձեռքի ճնշմամբ աշխատող գործիքներ** (փայտաձող բրիչներ, երկաթե ծայրակալ ունեցող բիիրներ և այլն), **ոտքի ճնշմամբ աշխատող գործիքներ** (բահեր, եղանաձև փորող գործիքներ) և **հարվածային գործիքներ** (քլունգներ, թոխրեր, հողուտագներ և այլն):

Արորա-գութանային երկրագործությունը, որը բրիչային երկրագործության զարգացման նոր աստիճանն էր, Բարձր Հայքում նույնպես հազարամյակների պատմություն ունի: Ընդ որում, նրա բնիկ վարող տեխնիկան, ինչպես կտեսնենք, վաղ միջնադարում լրացվել է Այրարատյան նահանգի **վեսկի** կոչված արորով, որից Կարնո նահանգում առաջացել էին **ճղլա** նախագութանը և **սև գութանը,** որը հար և նման էր նշված **վեսկուց** Այրարատյան նահանգում առաջացած գութանին[145] և, լինելով Բարձր Հայքի լեռնային գործիք, ավելի ծավալուն էր և ավելի հզոր:

Նշված երկրագործական հարուստ տեխնիկան հնագույն ժամանակներից մինչև տրակտորի դարաշրջանը տարածվել է նախ Կարնո նահանգում, ապա վերջինիս բնակչության նաև նորանոր գաղթավայրերում (Շիրակ, Ջավախք, Ախալցխա, Ծալկա և այլն):

Բարձր Հայքի երկրագործական հնավանդ տեխնիկան լայն տարածում է գտել նաև Կարնո նահանգի մշակութային ազդեցության տակ գտնվող Բագրևանդ (Դիատին, Գարաքիլիսե, Ալաշկերտ), Ծաղկոտն, Վանանդ (Կարս), Աբեղյանք (Ստորին

144 Բրիչային երկրագործության ուսումնասիրության փորձը տես մեր ԵՄՀ աշխատության (1972թ.) առաջին մասում:

145 Հմմտ. ԵՄՀ, էջ 169, տախ.-ԱԲ: (Հեղինակի նշած բոլոր տախտակները նայել իր այդ աշխատության մեջ. այսուհետ՝ ՀՏ՝ համապատասխան տախտակը: Ծանոթագրումը՝ կազմողի՝ Ռ. Ղ.):

Բասեն), Բասեն (Վերին Բասեն-Հասանղալա), Գաբեղյանք (Կաղզվան), Հավնունիք (Արևելյան Վերին Բասեն), Արշարունիք (Կաղզվան), Կողբ (Գյոլենի շրջան), Արշամունիք (Բյուրակն գետի հովիտ), Տարոն, Մարդաղի, Դասնավորք, Տվարածատափ (Ղարայազի դաշտ), Դալառ (Էլմալի դերե), Վարաժնունիք (Խնուս), Հարք (Բուլանըխ), Ապահունիք (Մանազկերտ), Խորխոռունիք, Արտահան գավառներում:

19-րդ դարից սկսած, Կարնո տեխնիկան տարածված էր նաև Ապարանում, Սևանի ավազանում, Թալինում, Արագածոտնի լեռնային մասերում, Գառնիում և այլուր:

Բարձր Հայքից տարածված երկրագործական տեխնիկան նշված բոլոր վայրերում 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի առաջին կեսին կառուցվածքային տեսակետից միօրինակ էր, թեև հարթավայրերի և լեռնային մասերի վարող գործիքներն ունեին չափային որոշ տարբերություններ:

1840-ական թվականներին Ջավախք տեղափոխված դուխաբորները փոխ առան հայկական արորը՝ եզներով աշխատեցնելու ձևի հետ միասին և գութանը՝ հայկական ձևով եզներ լծելով կամ գութանի բռնելի քարշակը ձիու լծասարքերին հարմարեցնելով: Վերջիններիս մեջ այս երևույթը հարատևեց մինչև 19-րդ դարի վերջերը, երբ երևան եկած գործարանային փոքր գութանները փոխարինեցին հայկական արորներին և մեծերը՝ սև գութանին:

Գործարանային գութանը մասամբ տարածվեց նաև հայերի և ազգային փոքրամասնությունների մեջ, բայց հայկական հին տեխնիկան մինչև 1930-ական թվականների վերջերը լիովին զուգակցում էր նորագույն տեխնիկայի հետ: Դեռ ավելին, 1940-ական թվականներին Հայրենական մեծ պատերազմի հետևանքով արորն ու փայտե գութանը լիովին վերականգնվեցին: 1950-ական թվականներին հին արտադրամիջոցները կրճատվեցին 50-60 տոկոսով, իսկ 1960-ական թվականներին կոլեկտիվ տնտեսություններում փայտե արորներով մշակվում էին գութանի և տրակտորի համար անմատչելի տեղերը: 1970-ական թվականներին Ջավախքում արորների կարելի էր հանդիպել միայն որոշ տնտեսություններում: Դրանցով շարունակում էին տնամերձ հողեր մշակել:

Բարձր Հայքի վարող գործիքներին զուգակցում էին օժանդակ միջոցները՝ փխրեցնող և հարթեցնող փոցխերն ու տափանները:

Վարող և հարթեցնող արտադրամիջոցներին համապատասխանում էին բերքահավաքի գործիքները, որոնք իրենց ձևերի մեջ առավել շատ էին պահպանել նախնականությունը: Նույնը կարելի է ասել նաև կալսելու տեխնիկայի՝ կամի, թակերի, և հարակից միջոցների վերաբերյալ: Հարկ է նշել, որ կամը, որը մեզ է հասել դեռևս բրոնզի դարաշրջանից, ընդհանուր էր ոչ միայն Կովկասի, այլև ամբողջ Առաջավոր Ասիայի ժողովուրդների համար:

Ինչպես և ստորև կտեսնենք, Ջավախքի հայերը նշված տեխնիկայով վարու-

ցանք կատարելիս պահպանում էին աշխատանքի կոոպերատիվ ձևերի մնացուկներ, համայնքային առանձին սովորույթներ, որոնք մեծապես նպաստում էին աշխատանքի արտադրողականության որոշ բարձրացմանը: Դրանք արտահայտվում էին հերկոցին՝ գութանը հարակաշությամբ օգտագործելիս, ցանոցին՝ իրար հետ վար անելիս, բերքահավաքին՝ հասած մարգագետիններն ու արտերը հերթով քաղելիս, կալոցին՝ հերթականությամբ կալսելիս և այլն: Թերևս այս կոոպերատիվ ձևերի մեջ ամենաուշագրավը, որն առավելապես հասարակական բնույթ ուներ, գութանի հարակաշությունն էր: Անշուշտ պահպանված էր նաև խոտքաղի ժամանակ համփա կազմելու սովորությունը (չբաժանած խոտհարքերը քաղելիս): Օգտագործվում էին նաև փոխօգնության կամ միակողմանի օգնության հասնելու ձևերը:

Երկրագործական տեխնիկա և վարուցանք:

Բարձր Հայքը, հետևապես նաև Ախալցխան, Ջավախքը և Ծալկան, 19-րդ դարի տվյալների համաձայն, ունեցել են ինչպես սեփական, այնպես էլ Այրարատին հատուկ վարող գործիքների համալիրներ: Այդ գործիքներն օժտված էին յուրահատուկ կառուցվածքներով և գործառույթներով[146]:

Բարձր Հայքի տեղական վարող գործիքները: Այն հնագույն արորատեսակը, որ սկզբնավորվել և գործել է նախնադարում, ստույգ ձևով մեզ հայտնի չէ: Դրա առաջացման և զարգացման վերաբերյալ մեր առաջարկած վարկածը մենք շարադրել ենք մի այլ աշխատության մեջ[147]:

Բարձր Հայքին հատուկ է եղել նաև մի տարրական կառուցվածք ունեցող արոր, որը փոխառվել և պահպանվել է Վասպուրականում[148]:

Անբուն հարօր-խարօրը 1980 թվականին դեռևս օգտագործվում էր տնամերձ հողամասերը վարելու համար: Ամուր չլինելու, թուլության պատճառով այն սակավ էր տարածված (նայել՝ ՀՏ):

Բուն ունեցող հարօր: Բոլոր տարբերակներն էլ օժտված էին կոր պարանոցով (ՀՏ): Համի ագին մտցվում է առատամի փորածո բնի մեջ: Այս հարօրը Բարձր Հայքի գավառներում, ինչպես նաև Ջավախքում, Ախալցխայում և այլուր պահպանել է նույն կառուցվածքն ու դերը[149]:

Բարձր Հայքում և Ջավախքում հայտնի էին երեք այդպիսի հարօրներ, որոնք իրարից տարբերվում էին լոկ մեծությամբ: Փոքրը, որն օգտագործվում էր միայն հերկերը կամ հերկատակերը ցանկի ժամանակ վարելիս, կոչվում էր **ցանքի հարօր** և

146 Քանի որ մեր ԵՄՀ-ի մեջ Բարձր Հայքի երկրագործական գործիքները նկարագրված են առանձին բաժնում, մենք դրանք կներկայացնենք համառոտ կարգով:

147 ԵՄՀ, էջ 241, (ՀՏ): Վերականգման նման փորձ տես և հմմտ.Յու. Ա. Կրասնով, Վարելու հնագույն լծասարքային գործիքներ, Մ., 1975, էջ 173, նկ. 60:

148 Տե՛ս ԵՄՀ, էջ 172, ՀՏ:

149 Տարբեր վայրերում դրանց տարբեր անունները տե՛ս ԵՄՀ, էջ 153:

գործում էր մեկ-երկու լծկանով: Միջակը, որ կոչվում էր **հերկի հարօր**, գործածվում էր հերկ կատարելիս, երկու-երեք զույգ լծկանով: Երրորդը **ճղլան** էր: Բուն Ջավախքում այդ հարօրները հայտնի էին նաև լծկանների անուններով: Փոքրը կոչվում էր **աչըռան հարօր**, միջակը՝ **էզի հարօր** և մեծը՝ **գոմշի հարօր:**

Ճղլա (ՀՏ): Կառուցվածքով այն ամենամեծ հարօրն էր Կարնո բոլոր գավառներում: Այն կատարում էր նախագութանի դեր, որով հերկում էին խամ ու խոպաններ-ը, կորնգանի, նաև առվույտի արմատակալված արտերը, լծում էին հինգ-վեց զույգ լծկան, որից մեկ-երկուսը՝ գոմեշ: Երկկողմանի տախտակները հողը դիզելու համար էին: Փոքր Գյոնդուրա գյուղում ճղլան **հառել** էր կոչվում:

Անճար գութան: Կարնո բնիկ արորատեսակները վերջավորվում էին այն գութանով, որի մնացուկը Հայքում հայտնի էր **անճար (բեչարա) գութան** անունով: Փաստը վկայված է Բենսեի կողմից: Նա գրում էր. «Փոքր գութան, որ անիվներ չունի և համր առատամի վրա կը դրվի արորի նման[150]»:

Գութանը, ինչպես երևում է, ճղլայի զարգացումն է, որի բերած նորությունը թևն է[151]:

Մեծ գութան: Անճար գութանից առաջացած այս տեսակը մեզ տակավին անհայտ է:

Այրարատին հատուկ արորատեսակները Բարձր Հայքում: Վերևում մենք արդեն նշել ենք, որ Այրարատյան վեսկին փոխ է առնվել Բարձր Հայքում և ունեցել է ինքնուրույն զարգացում: Այդ վեսկուց առաջացել են նախագութանը և մեծ գութանը: Վերջինս գրեթե նույնն էր, ինչ Այրարատում նույն վեսկուց առաջացած գութանը:

Ներկայացնենք Այրարատյան վեսկուց առաջացած գործիքների տարատեսակները:

Արօնա կամ հարօնա (ՀՏ): Արորի մի տեսակն է, որի համձողի ծայրը մտնում է մաճի մեջ և ամրացվում քրով: Դրանց մեծ մասն ունի կոր պարանոցով համձող (հեջ): Վերջիններս ներկայացնում են մեզ անհայտ արորից դեպի ճղլա նախագութանն անցած աստիճանը:

Ճղլա նախագութան: Հարօնայից հետո հայտնի է **ճղլա** կոչված նախագութանը: Չնով, մեծությամբ ու գործածությամբ ճղլան հարօնայի և գութանի միջնաստիճանն է: Առատամի վերջնամասը լայն կամ երկճղի ու ականջավոր է (ՀՏ)՝ ակոսը լայնացնելու և հողը շրջել-դիզելու համար:

Այս նախագութան ճղլան անվավոր է. նրա անիվները իրար հավասար են, որովհետև հերկած մասի անիվը վարածի վրայով է ընթանում:

1980 թվականի ամռանը, մեր գիտարշավի միջոցին, Դիլիսկա գյուղի հին գե-

150 Բենսե, ԱՀ, 5-60:

151 ԵՄՀ, էջ 151, (ՀՏ), 7: Հմմտ. «Վասպուրականի անճար գութանը» (ԵՄՀ, էջ 191, ՀՏ):

բեզմանատանը գտնվեց ձիաձև տապանաքար, որի հարավային լանջակողին միջնադարի հայ քանդակագործ վարպետը ճշգրիտ պատկերումով կերտել է անձնիչ ճղլայի հարթաքանդակը՝ իր գռնելով, հավասար մեծության անիվներով, հինգ զույգ լծկանի լծերով, ինչպես նաև մաճկալի ուրագով ու ձիավորի թրով:

Ջավախքում եղել է նաև միևնույն կառուցվածքի, սակայն ձևիչ ունեցող ճղլա[152]:

Գութան: Արարատյան գութանի տարբերակն ինչպես Հայաստանի մեծ մասում, այնպես և Բարձր Հայքում, Ջավախքում վարող գործիքների բարձրագույն աստիճանն է ներկայացնում: Ջավախքում, Ծալկայում, ինչպես նաև Ախալցխայում այս գութանը հարատևեց մինչև 1930-ական թվականները: Նրան զուգակցում էին գործարանային գութանները:

Կարին-Ջավախքի արորները, արօնա-հարօնաները, ճղլաներն ու գութանները ունեին համապատասխան մեծության **խոփեր**: Արորների և ճղլաների խոփերն ունեին երկկողմանի «ականջներ» և իրարից տարբերվում էին միայն մեծությամբ, իսկ գութանի խոփը միակողմանի «ականջավոր» էր, բայց նախորդներից կրկնակի-եռակի մեծություն ուներ:

Արոր և գութան կապել: Ջավախքի անտառամերձ գյուղերում արոր, նաև գութան պատրաստող վարպետները միաժամանակ հումք հայթայթող ու այդ գործիքները պատրաստողներն էին: Նրանք երբեմն ձեռք բերում և վաճառում էին նաև գործիքների կիսամաշ փայտանյութեր, որոնք վերստին մշակվում էին իրենց ձեռքի տակ անտառանյութ չունեցող վարպետների կողմից[153]: Այդ գործիքները պատրաստելը հայտնի էր **հարօր կապել և գութան կապել** բառակապակցություններով:

Փխրեցնող և հարթեցնող գործիքներ: Այս կարգի գործիքներից են տեղական և փոխառված փոցխերն ու տափանները: Փոցխը, որը Ջավախքում փոցը է կոչվում, ամենակարևոր գործիքն էր: Փայտե հաստահեղ չորսու թաթն ընտրվում էր հասարակ կամ ամրկենի փայտից: Այս գործիքն ուներ երկու դեր. նրանով կատարում էին կրկնավար և փխրեցնում, որը վկայում էր փոցխի՝ նախապես վարի միջոց լինելու մասին: Փոցխին «լծում էին 4-6 լուծք եզ ու գոմեշ, մի քանի հոգով կանգնում վրան ու նրա ատամներով փորում արտը: Մի փոցխով մի օրում այնքան կարելի էր վարել, որքան 3-4 արորով միասին վերցրած[154]»: Փոցխի երկրորդ դերը ցանոցին, սերմերը ցանելուց հետո, փոցխելն ու փխրեցնելն էր, հատիկը թաղելը և միաժամանակ հարթելը: Տարածված էին փայտե, ինչպես նաև ծառի ճյուղերից պատրաստվող տափանները: Ընդ որում, բնորոշը երկրորդն էր: Փայտե տափանը շինվում էր փայտե փոցխի թաթի նման և դրա մեծության: Հայտնի է **փետե տափան** անունով: Գործածվում էր հատկապես հարթավայրային հողերում:

---

152 Այս նախագութանի փոքրածավալ ձևիչը այժմ պահվում է Ախալքալաքի գավառագիտական թանգարանում:

153 Մանրամասնությունները տես ԵՄՀ, էջ 213-232:

154 Հ. Մալխասյան, Նշվ. աշխ. (ԱՀ, 3, էջ 380-381):

Կարնո նահանգում և Ջավախքում ցախից պատրաստված տափանն ավելի լայն տարածում ուներ, որովհետև այն հավասարապես պիտանի էր թե հարթավայրերում և թե լանջային հողամասերում: Նրան լծում էին 2-3 զույգ եզ ու գոմեշ:

Լծեր և լծասարքեր: Լծերն ըստ չափերի ու ձևերի երեքն էին՝ **գոմշի լուծը, համոռքի լուծը և չորոսկի լուծը**: Գոմշի լուծը համեմատաբար մեծ է լինում, քան մյուսները[155]: Սամիները միշտ երկաթից էին և սամոտենները՝ կաշվից:

Լծերի հետ օգտագործվում էին օժանդակ լծասարքեր, որոնց մեջ ամենակարևորը լծափոկն էր, որը նույնպես պատրաստվում էր կաշվից[156]:

19-րդ դարում բարակ կաշեփոկերից (սըրըմ) պատրաստում էին գութանի երկար բանտա, որին լծում էին 10-12 զույգ եզ ու գոմեշ: Սակայն արդեն նույն դարի վերջերին կաշվե բանտային փոխարինել էր գործարանային մեծ շղթան[157]:

Հերկոց: Բարձր Հայքի, Ջավախքի, Ախալցխայի ու Ծալկայի, ինչպես և այլ վայրերի հայությունը պահպանել էր **հերկոց և ցանոց** տերմինները: Ընդհանուր առմամբ հերկոցի սեզոնը ամռանն էր և մասամբ՝ վաղ աշնանը: Հերկում էին թե՛ հարօրներով ու հարօնաներով, թե՛ ճղլաներով ու գութաններով: Արորներով հերկելը կապված էր գյուղացիների տնտեսական դժվարությունների հետ. ճղլաներից ու գութաններից զուրկ տնտեսությունները մոտկամ դառնում և, հարօնաներին 2-3 լծկան լծելով, մեծ դժվարությամբ հերկում էին խամերն ու հարոսները:

Արորի հերկը կոչվում է **հարօրի հերկ** և գութանինը՝ **գութնի հերկ**:

Արորի հերկը մեծավ մասամբ համայիլ էին անում (վարում), այսինքն՝ վարը սկսում էին նախ արտի մի անկյունից և ապա կատարում շեղակի վար, որը նախապես ուղղանկյուն եռանկյան ձև էր ստանում[158]: Հարօրի ակոսի խորությունը հասնում էր մինչև 27-28 սմ:

Ճղլաներով վարելու գործողությունը նման էր գութանավարին, այսինքը՝ ակոս-

155 ԱՀ, 3, էջ 375:

156 Պատրաստման եղանակը տես ԵՄՀ, էջ 288-289:

157 Հմմտ. ԵՄՀ: Շղթան գութնոցից հետո փաթաթում էին սյան վրա և պահում մինչև հաջորդ գութնոցը: Այդ սովորությունը գալիս էր կաշվե բանտան չոր պահելու և փտելուց պաշտպանելու եղանակից:

158 Ինչպես երևում է, համայիլ (եռանկյունի) վարելածևը ներքին աղերս ու կապ է ունեցել հմայական գործողության հետ, որի նպատակն էր ապահովել տարվա վարուցանքի և բերքի բարեբերությունն ու հաջողությունը: Կարծում եմ՝ **Համայիլ վարը** իր եռանկյունաձև եզրագծումով, եթե իրոք աղերսվում է մարդ արարածի կրոնա-հավատքային պատկերացումներին, իսկ դա ինքնին այդպես է որ կա, ապա այն, իբրև հին սովորույթ, կենցաղ ու կենսակերպ, փաստումակնարկումն է քրիստոնեական վարդապետության էությունը կազմող Սուրբ Երրորդության հնավանդ ուղղադավանության (ուղիղ անկյուն), նախքան այն, որպես ընկալում և վկայաբանում, կարձանագրվեր քրիստոնեական թղթերում ու մեկնություններում: Վաղ պատանությանս օրերին հայրենի իմ Գանձայում տեսել եմ նույնաձև վար նաև տրակտորով կատարելիս (Կազմողի ծանոթագրումը՝ Ռ. Ղ.):

ները ծրվում էին արտերի երկարությամբ, որովհետև այդ գործիքներին լծվում էր 5-6 զույգ եզ ու գոմեշ: Նրա ակոսի խորությունը հասնում էր 35-38սմ:

Այլ էր գութանահերկը. խոփը, միակողմանի լինելով, գութանի պոկած ակոսաշերտը շրջում էր ձախից աջ: Խամը հերկելիս ժապավենաձև վիթխարի առը, ամբողջ արտի երկարությամբ, պառկեցնում է կիսաթեք վիճակում: Առը կտրելուն մեծապես նպաստում էր ձևիչը՝ ուղղահայաց կտրելով հողաշերտը: Ակոսի առը շուռ տվողը գութանի տախտակի թևն էր, որի վրա մաճկալը հաճախ նստում էր, ակոսը խորացնելու և առի շրջումն ապահովելու համար:

Գութանի ակոսի լայնությունը տատանվում էր 35-45 սմ միջև[159], իսկ խորությունը հասնում էր 30-40 սմ: Ընդ որում, խամի ակոսը հարոսի ակոսից բնականաբար ծանծաղ է լինում: Գութանի հերկի արտը որքան երկար լիներ, այնքան արդյունավետ կլիներ վարը: Սովորության համաձայն, ակոսը բացում էին (ակոսի գործը սկսել) թմբերի կողքից կամ արտի կենտրոնից: Կողքից վարածը հայտնի էր **առափ (առափ կապել), փորվար (փորվար կապել), նաղարա (նաղարա կապել)** անուններով: Այս դեպքում, վարի ավարտին (վերջին արտի կենտրոնում) փոս էր առաջանում: Տարիներ անց, երբ այս նույն արտը նորից պիտի **գութանվեր**, առաջին ակոսը ծրվում էր կենտրոնից՝ փոսի ձախ ափից՝ ակոսի առը նրա մեջ շրջելով: Վերադարձին՝ փոսի մյուս ափից ծրվում էր երկրորդ ակոսը՝ առը դարձյալ այնտեղ շրջելով, որով նախկին փոսը վերանում էր: Այս երկու ակոսը միասին կոչվում էին **նարզիկ (նարզիկ կապել)** *կամ* **կանդարա (կանդարա կապել)** [160]:

Գութանն ունենում է 9-12 զույգ լծկան, որոնցից 1-2 զույգը՝ գոմեշ:

Գութանի հոտաղները, որ 14-20 տարեկան տղաներ էին, ներկայացնում էին համկալի մեջ մտածների որդիները և կամ պատանի, որը հող վարել տալու պայմանով մտնում էր հարակաշի մեջ: Իսկ այն ընտանիքը, որը հոտաղացու տղա չէր ունենում, դրամով կամ հերկով հոտաղ էր վարձում: Բոլոր հոտաղներն էլ հերկի նորմայի իրավունք ունեին. վերջինս կազմում էր 0,5 օրավար կամ 0,5 հեկտար:

Գութանի համկալությունը հերկի նորմայով **մալի մաճկալ** էր ունենում, որը կարող էր լինել երիտասարդ կամ միջին տարիքի տղամարդ: Նրա պարտականությունն էր գիշերն արածացնել և հանգստացնել գութանի լծկանները: Այդ աշխատանքը սկսվում էր արևամուտին, երբ գութանն արձակվում էր, և տևում մինչև **Բազունքի (Բազումք)** կամ **Լուսու աստղի (Արուսյակի)** երևալը: Նրա վարի նորման 1 օրավար էր կամ 1 դեսեթին[161] (դեսյատին):

Մաճկալ կարող էր դառնալ միայն գութանի տերը: 40 օրում նրան հասնում էր

159 Հ. Մալխասյանի հաղորդումն այն մասին, թե գութանի ակոսն ունենում է մեկ արշին լայնություն (ԱՀ, 3, էջ 377), մեղմ ասած, չափազանցություն է:

160 Հմմտ. ԵՄՀ, էջ 295, նայել՝ ՀՏ:

161 Հ. Մալխասյանը գտնում էր, որ մեկուկես օրավարը հավասար էր 1 դեսյատինի (ԱՀ, 3, էջ 364):

2,5 օրավար նորմա, իսկ 25-30 օրում՝ 1-1,5 օրավար: Այդ նորմաները նույնությամբ հասնում էին նաև յուրաքանչյուր զույգ եզներին, իսկ գոմեշի զույգին՝ կես նորմա ավելի[162]:

Ցանոց: Բարձր Հայքի և հարակից մի շարք գավառների բարբառներում ցանոց է նշանակում ցանկի սեզոնը, որին ժողովուրդը դիմավորում էր սերմացուի պատրաստմամբ՝ զտումով, վարող և հարթող գործիքների, լծերի և լծասարքերի պատրաստումով կամ նորոգումով, լծկանի խնամքն ուժեղացնելով:

Լծկանը չար աչքից պաշտպանելու «միջոցառումներից» հետո, ցանքի դուրս գալուց 2-3 օր առաջ, **խամե հանելու** ծիսական բնույթի գործողություններ էին կատարում:

Տանտիկիններն ամենուրեք դուրս բերվող անասունների ճակատներին ձու էին խփում, որով ակնկալում էին բերքառատություն: Լծկանների դուրս բերման օրերին դրանց վզներին լուծ էին դնում և դատարկ ման ածում կամ սայլին լծում և շրջում գյուղամիջում: Շատերը երկրորդ օրը արորով արտերում առափներ էին վարում և շուտ էլ վերադառնում: Վարուցանքից խամացած անասուններին գետերի մեջ ման էին ածում կամ աղաջրով ոտքերը լվանում: Ներս բերելիս, թաքնված կանայք լծկանների և մաճկալների վրա հանկարծակի ջուր էին շաղում (սրսկում), որ տարին անձրևառատ լինի: Եվ այդ բոլորից հետո միայն սկսվում էր վարուցանքը:

Սովորության համաձայն մաճկալ կարող էր դառնալ ամուսնացած տղամարդը, ինչն աղերսվում էր դարձյալ հավատքային-դիցաբանական հարցերի հետ: Դեռևս 1880-ական թվականներին Ջավախքի հայությունը պահպանել էր սերմնացանին ժուժկալության մեջ պահելու սովորությունը, որը հեթանոսական հախուռն ու վարարուն ոգուն հակառակ, մուծել, սահմանել էր քրիստոնեությունը. մաճկալն, ըստ այդմ, իրավունք չուներ կենակցել այդ ընթացքում: Նա առանց հանվելու, առանց գոտին ու սերմի գոգնոցը քանդելու, պիտի քներ առանձին՝ մեկուսի: Սերմնահատիկները գոտու և տրեխների հողերի մեջ պետք է ծլեին և ապահովեին ակնկալվող բերքառատությունը:

Բարձր Հայքի երկրագործները արորով վարը ևս մեծ մասամբ կատարում էին արտի անկյունում գործ դնելով, թեև լայնկեկ արտերում վարում էին նաև լայնքի ուղղությամբ: Երկու դեպքում էլ հարօրով վար սկսելը կոչվում էր **հարօրի գործ:** Ընդ որում, լավ մշակված հերկի վրա սերմը ցանում և միայն մեկ անգամ անկյունավար էին կատարում: **Հերկի ոտքի**[163] վրա ցանելիս, նայած արտի փխրունության (փափկության) աստիճանին, վարը կատարում էին 1-2 անգամ: Մի խոփ վարելիս արտը

162 Հմմտ. Շիրակի տվյալները (ԷԱԺ, հ. Ա, էջ 296-297):

163 Գութանով հերկած արտը ցանելիս առաջին տարում **հերկ** էր կոչվում (հերկի ցանք), իսկ երկրորդ տարում՝ **հերկի ոտք**, (հայերեն-թուրքերեն՝ **հերկայաղի**, որ գործածում էին թուրքերը):

կորիների էին բաժանում, որպեսզի **ցանվորը** հստակ պատկերացներ իր ցանածի սահմանները և ցանքը հավասար կատարեր: Սովորաբար երկու լայնքը հասնում էր 3-4 մետրի, որը արորով գծվում էր ակոսին զուգահեռ և կոչվում էր **կորի քաշել**: Երկու անգամ վարելու դեպքում ցանքն արվում էր առաջինի վրա:

Հարոս արտում ցանք կատարելու համար վարում էին 2-3 բերան և հարօրի վերջին վարին հակառակ ուղղությամբ, իսկ տափանումը կատարվում էր փոցխածին հակառակ:

Հարօրավարը փափուկ արտերում կատարվում էր մեկ զույգ եզով, իսկ հարոսներում ու խամերում՝ երկու զույգով: Երկու զույգ լծկան չունեցողները միավորում էին իրենց մեկական զույգերը և այս համկալությամբ վարուցանք էին կատարում: Նրանցից մեկը մաճկալություն էր անում, և մյուսը հոտաղ էր դառնում:

Տնից երկու զույգ լծկան ունեցողները հոտաղներ ընտրում էին տան տղաներին և ծայրահեղ դեպքերում՝ աղջիկներին, որոնք շալվար էին հագնում: Եթե երեխաները փոքր էին լինում, նրանց համար լրացուցիչ հարմարանք-սարք էին ստեղծում. եռանկյունաձև ելարանի լայն կողմի ծայրերը միացնում էին լծին, մանուկը նստում էր վերին աստիճանին, ոտքերով հենվում մյուսին ու մի կերպ քշում-ղեկավարում լծկանները:

Երկրագործական համակարգեր: Ջավախքում առկա է գյուղատնտեսական տարբեր գոտիականություն՝ բնական ու ցանովի բուսական ծածկույթի բազմազանությամբ: Այդ պայմաններում կիրառելի էին երկրագործական 4 (չորս) համակարգեր, որոնք այժմ էլ գրեթե անփոփոխ կիրառվում են:

Նախ նկատենք, որ Բարձր Հայքում և Ջավախքում վարելահողերի տեսակները բնորոշվում էին այսպես. **1. Խամ** էր կոչվում բնավ չվարած հողը, **2. Հարոս՝** երկու և ավելի տարի չվարած արտատեղը, **3. Խոզան՝** հերկի վրա ցանված և առհասարակ ցանված արտի առաջին հնձած տեղը՝ ցողունների կտրվածքներով հանդերձ (ի դեպ ասենք, որ որոշ վայրերում խոզան էր կոչվում նաև երկու տարի ցանված արտը[164]), և վերջինը՝ **4. Հերկ**:

Մի այլ տարբերակով վարելահողերն անվանում էին՝ **1. Հերկ՝** հերկած արտի վրա առաջին տարվա ցանքը, **2. Հերկի ոտք**, որին կիսահայերեն վերանվանում էին **հերկայաղի՝** հերկի երկրորդ տարվա ցանք, **3. Խոզան՝** երրորդ տարվա ցանված արտը, հնձելուց հետո: Որոշ տեղերում նաև խոզան էր կոչվում 4-5 տարի անվար մնացած արտը: **4. Հարոս՝** 4-5 տարի չվարած արտը, եթե դարձյալ չէր հերկվում, վեցերորդ տարուց սկսած հարոս էր կոչվում:

164 ԱՀ, 3, էջ 361:

Երկրագործական չորս համակարգերն էին.

1. **Եռադաշտային համակարգ,** երբ կիրառվում էր վարելահողերի մեկ երրորդի պարբերական հանգիստը[165]:

2. **Ցանքաշրջանառության համակարգ,** երբ տեղի էր ունենում ցանվող կուլտուրաների հերթափոխություն, որի դեպքում որևէ կուլտուրայի համար լավագույն նախորդ էր համարվում մի այլ բույսի խոզանը: Ամենալավ հիմքերն էին՝ հերկերը, կտավատ, վիկ, գլուլ[166], քուշնա կուլտուրաների տեղերը: Հերկի և խոտաբույսերի խոզանների վրա գերադասում են ցանել գարի, գարու խոզանի տեղը՝ ցորեն, ցորենինը՝ կտավատ, վիկ, գլուլ, քուշնա: Քուշնայից հետո ցորեն էին ցանում, ցորենից հետո խոզան էին թողնում մեկ տարի: Վերջինիս հերկի վրա առավելապես գարի էին ցանում, սրա խոզանի վրա՝ ցորեն կամ խոտաբույսեր:

3. **Հարոս թողնելու համակարգ:** Հարոս է կոչվում այն հողամասը, որը մի քանի տարի խամ էր թողնվում: Որոշ վայրերում այդպես էին կոչվում երկու և ավելի, և այլ բնակավայրերում՝ վեց և ավելի տարիներ խամ թողնված հողամասերը: Հարոս թողնելու նպատակը մեկն էր՝ հողի հանգստացումը և հումուսի հարստացումը: Դրան հետևում էր գութանով հերկելը:

4. **Դարավանդային համակարգը** Ջավախքին ծանոթ է եղել հնագույն ժամանակներից ի վեր այն տաք գոտիներում, որոնք այժմ մտնում են Ասպինձայի շրջանի կազմի մեջ և որոնք հնում հատկացված էին պտղատու բույսերի մշակմանը: Այգեգործական բնակավայրերում դարավանդավորումը շատ կարևոր միջոցառում էր բավական թեք լանջերում խնձոր, տանձ, շլոր, բալ, թուք և այլ պտուղներ աճեցնելու համար: Այժմ Խրթվիսի կիրճում, թեք լանջերի վրա պահպանված են դարավանդների վկայահետքերը[167]:

Դարավանդային համակարգից օգտվել և օգտվում են բոլոր բանջարաբույծները, մասնավորապես Թափարավան և Քառասունաղբյուր գետերի հովիտներում: Իսկ հացահատիկային կուլտուրաների դաշտերը պարզապես դարավանդներ չեն ունեցել, քանզի արհեստական ոռոգում չի եղել:

Ցանովի կուլտուրաները Ջավախքում հացաբույսերն էին, յուղատու բույսերը և

---

165 Առաջին հերթին հանգիստ էին տալիս այն արտերին, որոնք առավելապես ուժասպառ էին լինում այս կամ այն կուլտուրական բույսերից: Այդպիսի հոգնեցնող բույսերից էր աշնանացան տարեկանը կամ չավդարը: Ի դեպ ասենք, որ Հայբուսակը չավդարը համարում է հաճարը: Ջավախքում, սակայն, հաճարը **ղաբլիճա** է կոչվում:

166 Ժողովուրդը քիլիլ է անվանում:

167 Հմմտ. Ն. Չիճավածեի «Դարավանդային երկրագործությունը Վրաստանում» վրացերեն աշխատությունը:

խոտաբույսերը: Հացաբույսերն էին՝ գարին, ցորենը, աշորան[168] (չավդար) և հաճարը[169] (ղաբլիճան):

Աշորա-տարեկանը ժողովուրդը չափազանց քիչ էր մշակում. այն միակ հացահատիկն էր, որ աշնանացան էր:

Հաճար-ղաբլիճան գրեթե բացառապես կորկոտի ու բլղուրի համար էր մշակվում: Յուրաքանչյուր գյուղում միջին հաշվով հաճար էր մշակում հինգ ընտանիք՝ հատկացնելով քառորդ հեկտար տարածություն:

Ջավախքի հայոց մեջ գրեթե յուրաքանչյուր ընտանիք մի արտ հատկացնում էր ցորենի ու գարու խառնուրդին, որը **քարտիկա** էր կոչվում:

Ցիթատու բույսերից մշակվում էին շալկին, կտավատը և հասմիկը:

Շալկին գնդաձև հատիկներով կտավատն է, որից ստացվում է մեծ քանակությամբ, սակայն ցածրորակ ձեթ: Այն օգտագործվում էր կերակուրների մեջ և լուսավորության ու գոմեշները ճիթելու համար:

Կտավատը հայտնի էր **տապպակ կթավատ** անունով՝ տափակավուն հատիկ ունենալու համար: Սրա ընտիր ձեթն օգտագործվում էր կերակուրների և ժողովրդական բժշկության մեջ:

Հասմիկը հայտնի է **եամիկ** և **էամիկ** անուններով: Այն ունի մանր և մասամբ ձվաձև ու ոսկեգույն սերմեր: Վերջինից ստացվում էր ընտիր ձեթ, որը գործածվում էր միայն կերակուրների մեջ: Բացի հատիկներից, օգտագործվում էին նաև ցողունները (դրանցից ավել էին պատրաստում): Հասմիկի մշակման և օգտագործման վերաբերյալ մանրամասն նկարագրությունը տվել է Հ. Մալխասյանը[170]:

---

168 Ջավախքի հայերը **աշորա** բառի փոխարեն թուրքերեն **չավդար** բառն էին օգտագործում: Ի դեպ ասենք, որ աշորա բառի բացատրության մեջ բավական մեծ թյուրիմացություն կա: Մխիթար Աբբան իր «Բառգիրք յաշխարհաբառէ՛ ի գրաբառն. նոյնանշան բառից յարադրութեամբ» բառարանում (Վենետիկ, 1769), Ղ. Ալիշանն իր «Հայբուսակ կամ հայկական բուսաբառություն» բառարանում (Վենետիկ, 1895), Հակովբոս Պոզաճյանն իր «Համառոտ բառարան տաճկերեն-հայերեն» բառարանում (Կ. Պոլիս, 1858. տես **Չավտար** բառը), Հր. Աճառյանն իր «Արմատական բառարանում» (Երևան, 1971. տես **Աշարայ** բառի տակ), ինչպես նաև «Թուրքերենի փոխառյալ բառեր հայերենի մեջ» բառարանում (Մոսկվա-Վաղարշապատ, 1902. **Չավտար** բառի տակ), Ա. Մ. Սուքիասյանն իր «Հայոց լեզվի հոմանիշների բառարանում» (Երևան, 1967) և «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում» (Երևան, 1969) **աշորան հաճար** են անվանել, որը սխալ է: Ճիշտ բացատրությունը պատկանում է Ստ. Մալխասյանցին, որը **աշորա** բառը մեկնել է այսպես. **Աշորա՝** երկայն, ծայրը սուր, վտիտ, կապտավուն ցորեն, շլել, տարեկան, չավդար (տես «Հայերեն բացատրական բառարան, առաջին հատոր, Երևան, 1944»):
Հր. Աճառյանը **աշորան աշորայ** բառի տակ քննելիս փաստում է, որ Երևանի համալսարանի գյուղատնտեսական բաժնի դասախոսները գտնում են, որ **աշորա** և **հաճար** բոլորովին տարբեր բույսեր են. այսօր էլ մեր ժողովուրդը զանազանում է այդ երկուսը. առաջինը կոչելով աշորա կամ տարեկան (ռուս. **ռոժ**, գերմ.՝ **ռոգեն**), իսկ երկրորդը՝ **աճառ** (ռուս.՝ **պոլբա**):

169 **Հաճար** բառի բացատրության մեջ կրկնվում է նույն սխալը՝ առաջինը համարում են աշորա-տարեկան-չավդար:

170 Հ. Մալխասյան, նշվ. աշխ. (ԱՀ, 3, էջ 361):

Ջավախքի խոտաբույսերից են վարսակը (ուլաֆ), քիլիլը (գլուլ, քյուլուլ), վիկը և **քուշնան**[171]: Վարսակի հատիկը և խոտը ձիու ընտիր կեր են համարվում, մանավանդ գարու հետ խառն ցանելիս, իսկ քիլիլը, վիկը և քուշնան փաստորեն առվույտի փոխարեն են մշակվում և օգտագործվում իբրև լավագույն անասնակեր: Առվույտը սակավ է մշակվում[172]:

Ցանքերի խնամքը: Ցանքերի խնամքի մեջ մտնում են պարարտացումը, քարհավաքը, քաղհանը, ոռոգումը և ճահիճների չորացումը:

Ժողովուրդն անցյալում հողը պարարտացնում էր փտեցրած աղբով: Գարնանը սերմերը նրա փռվածքի վրա ցանում և ապա վարում էին:

Պարարտացվող արտը **աղբին (ախբին)** էր կոչվում, պարարտացնելը՝ աղբել (ախբել):

Գոմաղբից վառելիք պատրաստելու պատճառով պարարտանյութը սակավ էր լինում, ուստի յուրաքանչյուր ընտանիք պարարտացնում էր միայն 1-2 աղբին: Պարարտացնում էին նաև արտում ոչխարի հոտը մակաղել տալով: Գյուղին մոտիկ գտնվող ոչխարի ընդհանուր մակաղատեղիում հավաքված աղբը աճուրդով վաճառվում էր:

Բերքահավաքը կատարվում էր տղամարդկանց, կանանց և երեխաների միջոցով: Քարոտ արտերում քարակույտերը տեղ-տեղ տասնյակների էին հասնում: Վերջիններս ոմանք հեռացնում էին, իսկ որոշ սնահավատներ կարծելով, թե իբր քարակույտը դուրս բերելիս արտը կզրկվեր բերրիությունից, պահում և ակամայից մկնաբների էին վերածում:

Քաղհանը **քախան** էր հորջորջվում: Քաղհանվում էին բանջարանոցները, պարտեզները և արտերը:

Ոռոգում: Ջավախքում արտերը ոռոգելը հազվադեպ երևույթ էր: Միայն Խրթվիսի ու շրջակայքի պտղատու այգիները և Վաչիանի, Կուլիկամի, Բավրայի և այլ վայրերի բանջարանոցներն էին գտնվում ոռոգման տակ: Սակայն 1970-ական թթ. սկսած, երբ զարկ տրվեց կարտոֆիլի և ճակնդեղի մշակմանը, ջրհան կայաններով և տարբեր սարքերով վերջիններս ոռոգվում են անձրևացման եղանակով:

Ինչպես Կարինում,[173] Ջավախքում էլ որոշ ճահճացած հողեր չորացնում էին խրամատներ փորելով և դրանք սալաքարերով ու հողով ծածկելով. ճահճաջրերը ծծվում էին դրանց մեջ և հեռացվում:

---

171 Քուշնա բառը ասորերեն է, փոխ է առնվել արաբերենի միջոցով (տես Հ. Աճառյան, «Արմատական բառարան» հ. 4, Երևան, 1979, էջ 593):

172 Առվույտ-յոնճայի արմատը երբեմն 1-1,5 մ. երկարություն էր ունենում: Այն հանում և եզան վարոց էին դարձնում կամ ջվալի բերան կապում:

173 Կարնո ճահիճ չորացնելու նկարագիրը տես ԵՄՀ, էջ 334 և դրա պատկերման սխեմաները՝ էջ 333, նկ. 5-7:

Այգեգործություն և բանջարաբուծություն: Ջավախքի միայն տաք գոտիներում՝ Խրթվիսի և Նաքալաքևի ձորերում էր, որ հնարավոր էր աճեցնել ոչ ցրտադիմացկուն մրգատու ծառեր և խաղող: Վերջինս, սակայն, 613,5 դեսյատին ընդհանուր այգիների մեջ զբաղեցնում էր միայն 36 դեսյատին տարածություն, որը լրիվ չհասունանալու պատճառով այն թթվաշ գինու հետ սպառվում էր տեղերում: 1885-1889 թթ. այդ այգիներից ստացվել է 961 դույլ գինի[174]: 1889-ին պտղատու այգիները նույն տեղերում զբաղեցնում էին 577,5 դեսյատին տարածություն, ուր աճում էին կեռասի, հոնի, սալորի, խնձորի, տանձի, սերկևիլի, դեղձի, ծիրանի, թթի, կաղինի և ընկույզի ծառեր, որոնցից ստացված թարմ և ընտիր միրգը, նմանապես և պաստեղը, քյոման ու փարվարդան ձիերով տեղափոխում էին Ալեքսանդրապոլ, Թիֆլիս[175], Ախալքալաք, մրգազուրկ բնակավայրերը՝ վաճառելու և փոխանակման նպատակով:

Այդպիսին էր այգեգործության ընդհանուր պատկերը մինչև 1940-ական թթ. կեսերը: 1944-45 թթ. նշված վայրերի պտղատու և խաղողի այգիներն իսպառ վերացան:

1950-ական թթ. վերջերին պտղատու այգեգործությունը նոր վերածնություն ապրեց. Ջավախք մուտք գործեցին ցրտադիմացկուն միչուրինյան մրգատեսակներ, որոնք 1970-ական թթ. արդեն բավական լայն տարածում գտան գրեթե բոլոր բնակավայրերում: Դրանց մի մասը Թավարավան գետի հովտում և տաք գոտիներում բավական լավ են հասունանում: Մրգի արտադրությունը մասամբ բավարարում է բնակչության պահանջը, իսկ բարձրադիր վայրերում միրգը տակավին լիարժեք չի հասունանում:

Ջավախքի տարածքում անցյալում խիստ սակավ էին այն բնակավայրերը, որոնք խոր ձորամիջերում գտնվելով՝ ջերմությամբ ապահովում էին կուլտուրական բույսերի աճը: Այդպիսիք էին Խրթվիսը, Խզաբավրան, Սարոն, Մարգաստանը, Նաքալաքևը և այլն, ուր մշակվում էին կաղամբ, գազար, գլուխ և կանաչ սոխ, սխտոր, վարունգ և կանաչեղեն: Իսկ մյուս բոլոր վայրերում կլիմայի խստությունը, ինչպես նաև տարերային աղետների՝ կարկտի և եղյամի հաճախականությունն ստիպում էին հրաժարվել այդ բույսերի մշակությունից: Բնակավայրերի մեծ մասում բացասական դեր էր խաղում նմանապես ոռոգման ջրի և դրա համակարգի բացակայությունը: Ոռոգման հնարավորություն ունեցող Կուլիկամ, Բավրա, Մեծ Գյոնդուրա, Վաչիան, Ջամդուրա և այլ գյուղերում մշակվում էին շաղգամ, բազուկ, սոխ, սխտոր, կարտոֆիլ, գետնախնձոր, գազար, բողկ ու կանաչեղեն: Վաչիանում, Կուլիկամում, Մեծ Գյոնդուրայում և մի քանի այլ վայրերում մշակվող շաղգամի արտադրությունն ուներ ապրանքային բնույթ: Երվանդ Լալայանի վկայությամբ՝ հատկապես «Նշա-

174 Ե. Լալայան, «Ջավախք» (ԱՀ, 1, էջ 205-206):

175 Անդ, էջ 137, 205:

նավոր էր Գյոնդուրու և Վաչիանու շաղգամը, որ մեծ քանակությամբ տանում են Ալեքսանդրապոլ՝ վաճառելու»[176]: Նաքալաքևը եզան թեռերով քաղաքի շուկա էր հասցնում կաղամբ և մրգեր: Առավել բնորոշը, սակայն, ապրանքափոխանակումն էր, որը մեծ մասամբ կատարվում էր արտադրող գյուղերում՝ Կուլիկամում, Վաչիանում և Գյոնդուրայում: Սայլերով այնտեղ գարի, պանիր, յուղ, խոտ էին տեղափոխում և փոխանակում շաղգամի հետ: Նույն ձևը կիրառվում էր նաև կարտոֆիլամշակ գյուղերում: Ապրանքափոխանակումը նմանապես տեղի էր ունենում քաղաքի շուկայում. արհեստավորներն իրենց արտադրած ապրանքները շուկայում փոխանակում էին բազմատեսակ բանջարեղենի հետ: Նույնն էին անում նաև գյուղացիները:

Այսուհանդերձ, նշված բանջարամշակ գյուղերը Ջավախքի 110 գյուղերի պահանջմունքները չէին կարող բավարարել, ուստի շատերն իրենց սայլերով գյուղատնտեսական մթերքներ էին տեղափոխում Ախալցխա և այնտեղ ապրանքափոխանակությամբ կամ գնմամբ ձեռք էին բերում անհրաժեշտ կաղամբ, կարտոֆիլ և մրգեր:

Հայկական և ռուսական լեռնային գյուղերում, ինչպես վկայում է Ե. Լալայանը, մշակում էին կարտոֆիլ, ճակնդեղ, գազար, շաղգամ, սոխ, նաև՝ համեմունքներ, որոնք 1885-1889 թվականներին կազմել են 24. 063 փութ՝ 6019 ռուբլի ընդհանուր արժեքով[177]:

Համենայն դեպս, ցրտության և եղանակի արագ փոփոխվելու պատճառով գյուղատնտեության այս ճյուղը մի առանձին օգուտ չի տալիս, որովհետև բույսերը հաճախ մրսում են[178]: Դրանով էլ պետք է բացատրել, օրինակ, կարտոֆիլի մշակության շատ դանդաղ զարգացումը, որը, ըստ երևույթին մուտք գործելով 19-րդ դարի կեսերին, 1800-ական թթ. տարեկան մշակվել է շուրջ 790 դեսյատին հողատարածության վրա՝ կազմելով ընդհանուր հողերի միայն 0,85 տոկոսը[179]:

Բանջարեղենին ամենուրեք զուգակցում էր սեղանի կանաչիների մշակումը, բայց յուրաքանչյուր բնակավայրում՝ միջին հաշվով 10 ընտանիքներում, որովհետև նախ՝ դրանց ոռոգումը կատարվում էր դույլերով ջուր կրելով, և ապա՝ ժողովուրդը հիասթափությունից աստիճանաբար լքում էր բանջարամշակումը: Մշակաբույսերն էին **ռեհանը, կոտեմը, համեմը, մաղադանոսը, պռասը, սամիթը, սպանլըխը, սոխը, տերաղոթին[180], մշակովի դաղձը, բազուկը, թարխունը, սխտորը, վարունգը** և այլն:

Բանջարանոցները տնամերձ հողամասերում էին, որպեսզի անընդհատ հսկողության տակ լինելուց բացի, դյուրին լիներ բույսերի օգտագործումը: Անասուններ-

176 ԱՀ, 1, էջ 137:

177 ԱՀ, 1, էջ 207:

178 Անդ, էջ 207:

179 Անդ, էջ 205:

180 Անդ, էջ 137:

ից պաշտպանելու նպատակով սահմանափակ քանակությամբ մշակվող բանջարեղենի **բոստանները** քարով պարսպապատում էին: Գարնանը բահով աշխատելիս անջրդի բոստաններում ածուներին թմբահարթակային ձև էին տալիս: Սովորաբար ընտանիքում դրանով զբաղվում էր տղամարդկանցից մեկը՝ կանանց քաղհանին և ջրելուն մասնակից դարձնելով: Իսկ ջրովի տեղերում բոստաններ հիմնում էին դաշտերում կամ գետահովիտներում:

Խրթվիսի ձորում, Մարգաստանում, Նաքալաքևում, Ծունդայում և այլ գյուղերում[181] մշակվում էր նաև ծխախոտ, որը և շուկա էր հանվում: Այդ բույսը աննշան չափով մշակում էին թերևս նաև այլ բնակավայրերում, սեփական սպառման համար: Այդ տաք վայրերում 1885-1889թթ. մշակվել է 5131 դեսյատին ծխախոտ՝ 1026 ռուբլի արժողությամբ[182]:

1940-ական թվականներից հետո բանջարաբուծությունը, այդ թվում նաև կանաչեղենի մշակումը, նոր թափ առնելով, ուղղակի վերածնունդ ապրեց: Այնուհետև այդ զբաղմունքը բոլոր բնակավայրերի թվում, նաև քաղաքում դարձավ ընտանիքների մեծամասնության օժանդակ զբաղմունքներից մեկը: Սակայն անջրդի վայրերում պահպանվել է ուսով ջուր կրելու և թումբ-տախտակները ջրելու ավանդական ձևը:

Կաղամբի, շաղգամի, գազարի ու կարտոֆիլի մշակությունն ամենուրեք հասցված էր ապրանքային արտադրության մակարդակի: 1960-ական թթ. սկսած Ջավախքի գազարը և կարտոֆիլը հասցվում են Լենինականի (Գյումրի), Երևանի, Թբիլիսիի և այլ շուկաները: Իսկ կոլտնտեսությունները պետությանն են հանձնում, որպես անասնակեր, հազարավոր տոննաներով կարտոֆիլ, նույն նշանակությամբ մշակում էին նաև մեծ քանակությամբ ճակնդեղ:

Այնուամենայնիվ, բնությունը հաճախ դաժան է գտնվում, և այդ մշակաբույսերը հաճախ ենթարկվում են ցրտահարման, կարկտահարման և երաշտի:

Անցյալում մշակովի բանջարեղենի գործածությանը զուգահեռ օգտագործվում էին նաև վայրի բանջարներ, որոնք տեղանքի բնակլիմայական պայմաններից քիչ էին տուժում և լրացնում էին ժողովրդի սննդանյութերի պակասը: Հիշենք մոտ մեկուկես տասնյակ բանջարներից **ավելուկը, եղինջը, ղմի-շուշանը, քեխը, սիպեղը, ժախը, սամիթը, օղորմակոթը, սարի ղմին, ճըռճըռ բանջարը, լուպազե բանջարը, սունկը** և այլն: Այստեղ հարկ է հիշատակել նաև այն արմատներն ու կանաչիները, որոնք ուտելի են և այժմ էլ օգտագործվում են թե՛ հում, թե՛ եփած վիճակում: Դրանց մեջ ամենակարևորը **ատոլ** կոչված արմատապտուղն էր, որ հավաքվում էր գարնանը և աշնանը[183]: Այն ունի 2-3 սմ. երկարություն և 1-1,5 սմ. հաստություն: Սրա ցողունն է,

181 ԱՀ, 1, էջ 137, 206:

182 Անդ, էջ 206:

183 Ատոլը հայտնի էր նաև **ղմի**, **հատ ղմի**, **թեթռռ**, **բաթմաթ** և **կընճռ** անուններով:

որ ղմի կամ շուշան է կոչվում, որը նույնպես ուտում են ինչպես հում վիճակում, այնպես էլ թթու դրած:

Ատոլը նման է գետնախնձորի, որն ուտում են հում վիճակում և կճուճում խորովելով: Դժվար տարիներին ողջ Ջավախքում ատոլից քաղցրահամ բոքոն հաց էին թխում: Աշնան ատոլը հավաքում և թաղում էին սառը տեղում, Ամանորին նրանով կաղանդելու համար: Հավաքում, հում կամ եփած վիճակում ուտում էին նաև **կանկառը (գառնանգաճ), մատուկը, սինձը, խըրխընտուկը, կարմիր բանջարը, թթոկիչը, վարդկոշիկը, բալդրղանը, թել բանջարը, դեղին մանանեղը, բաթաթուկը** և այլն:

Այգեգործության, բանջարաբուծության և բուսահավաքչության գործիքները պատրաստվում էին դարբնոցներում՝ ատաղձագործների ձեռքով: Այդ գործիքներն էին վերևում հիշատակված բահերը, փետատները, հողուրագները, բիիր-բրիչները (փայտե սրածայր ձողեր), փորող եղանները և այլն:

Բերքահավաքը և նրա տեխնիկան

Բերքահավաքի սեզոնը Ջավախքում, Ախալցխայում, Ծալկայում և Բարձր Հայքում **քաղոց** էր կոչվում: Այդ սեզոնի բոլոր պարզունակ գործիքները ժառանգվել էին Կարնո նահանգից: Այստեղից է սերում նաև աշխատաեղանակների մեծ մասը:

Ազգային գերանդին[184]լավ էր պահպանել մայր հայրենիքը՝ Կարնո նահանգը: Այն հարատևեց մինչև 19-րդ դարի վերջերը, թեև զուգակցում էր նաև Եվրոպական գերանդին: Ազգային գերանդին, երկու երեսներով հարթ լինելով, կարող էր աշխատել թե՛ աջից ձախ, և թե՛ ձախից աջ ուղղությամբ, ուստի այն կոչվում էր **Էրկութևանի գերանդի**:

Եվրոպական գերանդին Ջավախք մուտք գործելուց հետո դառնում է քաղի ու հնձի հիմնական գործիքը, որն այժմ էլ օգտագործվում է խոտքաղի ժամանակ:

Մանգաղի փոքր ու մեծ տեսակները Կարինում, գերանդուն զուգահեռ, պահպանվում էին մինչև 1915 թվականը: Իսկ Ջավախքում գործարանային գերանդու տարածման հետևանքով հին մանգաղը 1890-ական թվականների վերջերին խիստ սակավացել էր:

Արարատյան հովտին, նաև այլ վայրերին հատուկ **բանոգիի** փոխարեն Կարնո շրջաններում օգտագործվում էր նախնադարյան բրիչ հիշեցնող **դաստի մալուխը**[185], որով լաս էին հավաքում և խուրձ կապում:

Ինչպես Կարինում, Ջավախքում էլ ծառի ճյուղերից երկժանի էին պատրաստում, որոնցով լաս էին հավաքում, բուլուլ, եղրն դիզում և կալում օրան կրկղնում[186]:

184 Տե՛ս ԵՄՀ, էջ 364:

185 Նայել ԵՄՀ, էջ 359:

186 Անդ, էջ 362:

Գործածվում էին նաև երկաթե տեղական եղաններ, որոնք պատրաստվում էին դարբինների ձեռքով և կոչվում էին **դարբնի էղան**[187]:

Գործարանային եղանները՝ երկժանին և եռաժանին, երկար ժամանակ զուգակցելով նախորդներին, էժանության և հարմարավետության շնորհիվ, կենցաղից դուրս մղեցին տեղական եղանները և ցայսօր հարատևում են:

Խոտի և օրանի ցրվածքները հավաքելու համար օգտագործվում է սովորական փայտե փոցխը:

Բերքահավաքի սեզոնում ընտանիքն իր աշխատունակ ամբողջ անձնակազմը դուրս էր հանում դաշտերը:

Աշխատանքի էին դուրս գալիս վաղ առավոտյան՝ հաշվի առնելով հնձելիքի խոնավության աստիճանը:

Օրեր առաջ կազմված աշխատախմբին՝ **դազգահին**, միանում էին օգնության եկող հնձվորները՝ ազգականներ, բարեկամներ, փեսաներ, հարևաններ և այլն: Այսպես էին վարվում այն ընտանիքները, որոնք կծղած արտ էին ունենում, իսկ օգնության եկողները դեռ սպասում էին իրենց արտերի ու մարգագետինների հասունացմանը:

Սովորությունները: Ինչպես Հայաստանի բոլոր շրջաններում, Ջավախքում նույնպես 19-րդ դարում և հետագայում էլ պահպանվում էին համայնքային սովորությունների որոշ վերապրուկներ: Դրանք արտահայտվում էին տարվա բոլոր եղանակներին, աշխատանքային բոլոր սեզոններում և ամենօրյա կենցաղավարության մեջ: Հնձի և կալի ժամանակ մարդիկ փոխադարձորեն միմյանցից պակասող աշխատանքային գործիքներ էին խնդրում. ավանդական կարգ կար՝ ունեցողները խնդրողին չէին մերժում: Մերժումը **դրկցության մեջ** ամոթ էր համարվում: Ունեցողները, մանավանդ միջակ տնտեսությունները, երբեմն նույնիսկ չէին խնայում սայլը լծով տրամադրել հարևանին կամ բարեկամին՝ խոտը և օրանը տեղափոխելու համար:

Քաղոցին պահպանված համայնքային ամենաուշագրավ սովորությունը **համփա** կազմելը և կոլեկտիվ կարգով գյուղի ընդհանուր համարվող խոտհարքները քաղելն ու բաժանելն էր:

Մինչև հեղափոխությունը խոտհարքի արդյունքը բաժանում էին ըստ անձերի, ուստի և առանձին աշխատախմբերը կազմվում էին այդ սկզբունքով: Յուրաքանչյուր խումբ կազմվում էր մի քանի ընտանիքից, որոնք **համփա** էին կոչվում[188]: Ասենք՝ տվյալ գյուղն ուներ 500 անձ, իսկ ընդհանուր խոտհարքը 100 հեկտար էր: Այս պարագայում հարմար էր գյուղը բաժանել 10 համփայի: Ընդ որում, համփան

187 Անդ, էջ 56:

188 **Համփա** բառը պարսկերեն է՝ ընկեր, օգնական, մասնակից նշանակությամբ: Սաթխա գյուղում համփայի հոմանիշը **ղոլ** բառն էր, որ **ձեռք**, **թև**, **խումբ** էր նշանակում:

որքան քիչ անձեր ունենար, այնքան լավ ու հարմար էր, որպեսզի խոտը բաժանելիս անարդարությունները քիչ լինեին:

Նշված գավառի Փոքր Խանչալլի գյուղի օրինակով կարելի է մոտավոր պատկերացում ունենալ համփայի կանոնների մասին[189]: Այստեղ համփան կազմվում էր 30-40 անձից: Հեղափոխությունից հետո այդ ձևին փոխարինեց նորման: Նորմա ասելով հասկացվում էր ամուսնացած զույգը՝ անկախ երեխաներ ունենալու կամ չունենալու հանգամանքից: Մի նորմա էր համարվում նաև որբացած տղա երեխան: Իսկ բացառիկ դեպքերում, երբ մի ամուսնական զույգից բազմանդամ ընտանիք էր կազմվում, գյուղական հասարակության ժողովի որոշմամբ նրա անչափահաս մեկ տղային ևս մի նորմա էին ճանաչում:

Համփա կազմակերպվում էր ըստ ազգակցական կապերի: Տասնամյակներ շարունակ այդ համփաները պահպանվում էին գրեթե անփոփոխ կերպով: Դրանցից էին՝ Իսպիրենց համփեն, Ավագենց համփեն, Բդոյենց համփեն, Դավիթենց համփեն, Էսոյենց համփեն, Վարդանենց համփեն, Մղդեսանց համփեն, Պոտոսենց համփեն և այլն:

Բոլոր համփաներն ունեին իրենց նշանը՝ գործը ղեկավարողի ազգանվան սկզբնատառը, որը խոտկտրիչ սուր բահով փորագրվում էր վիճակահանությամբ տվյալ անձին ընկած վիճակի գլխին և հետո՝ դիզած եղջնի կողքին:

Համփաները հավասարեցնելու պատճառով ազգակցական խմբակայնացման սկզբունքը երբեմն խախտվում էր. մեծ ազգականության ավելացած ընտանիքները մտնում էին փոքր ազգականության համփայի մեջ կամ տվյալ համփան մերժում էր իր որևէ ազգակցին, որը պիտի միանար այլոց հետ: Համփան երբեմն մերժում էր ընդգրկել նրանց, ովքեր ծույլի, փնթու և կռվարարի համբավ ունեին: Եղել են դեպքեր, երբ համփաները չքավոր ընտանիքներին դժկամությամբ են ընդունել: Իսկ փնթի տանտիկինների կերակուրները չէին ուտում:

Համփան 5 անձի և մեկ նորմայի դիմաց պահանջում էր 1 քաղվոր և 2 հավաքող (էղնվոր ու փոցխվոր): Եթե 5 անձի կամ 1 նորմայի տերը քաղվոր չէր ունենում, համփան նրա քաղը կատարում և հասանելիք խոտի կեսը իբրև վարձ էր վերցնում: Ավելի ու պակաս քաղվորներ ունեցողների միջև տեղի էր ունենում համաձայնեցում. քիչ անձ ունեցողի ավելորդ քաղվորին վարձատրում էին խոտով, ցորենով, գարով կամ դրամով: Ընդ որում, համփակից քաղվորին կամ վարձվողին բնամթերքով վճարելիս առաջնորդվում էին տվյալ տարվա հացի գնով: 5 անձի կամ մեկ նորմայի տերը քաղվոր չունենալու դեպքում այդպիսին վարձում էր՝ իր հասանելիք խոտը նրան իբրև վարձ տալով: Այսպիսին կոչվում էր **կիսողի քաղվոր**: Վարձու քաղվորներ լինում էին թե գյուղի միջից, և թե հարևան գյուղից (գեղեդուս):

189 Այս նյութերի մի մասը գրի է առել նույն գյուղացի, մանկավարժ Վաղինակ Վարդանյանը:

Երբ համփաները կազմ ու պատրաստ էին լինում, ամբողջ գյուղը դուրս էր գալիս քաղի: Համփաբաշիները, խոտհարքն ըստ որակի և ըստ առատության տեսակավորելուց հետո, բաժանում էին այնքան համփաների, որքան կազմվել էր: Տարածությունը բաժանում էին քառանկյունների. աշխատողներից մեկը սաժենով քառանկյունու մի գլուխն էր չափում, մյուսը՝ մյուս գլուխը: Այս երկուսը չափած տեղերում կանգնում էին, իսկ երրորդը, գերանդիով թեթևակի կտրելով և ուղիղ դիմացինին նայելով, գծում էր սահմանը: Բոլոր սահմաններն այդ ձևով գծելուց հետո վիճակ էին գցում: Համփաբաշին կամ ուրիշը հիշյալ սուր բահով քառանկյունու գլխին փորագրում էր համփայի նշանը: Այսպես, համապատասխան նշանների փորագրումը և ըստ համփաների բաժանման կատարումը տեսնել հաջորդ էջի գծապատկերում.

Ա	Բ	Դ	Է	Ի	Մ	Պ	Վ
Ա վ ա գ ե ն ց	Բ դ ո յ ե ն ց	Դ ա վ ի թ ե ն ց	Է ս ո յ ե ն ց	Ի ս պ ի ր ե ն ց	Մ ղ դ ե ս ա ն ց	Պ ո տ ո ս ե ն ց	Վ ա ր դ ա ն ե ն ց

Նշանների փորագրումից հետո սկսվում էր քաղը: Մինչև որ քաղվորները մի վիճակը քաղում էին, համփաբաշիները մի այլ տեղ միևնույն բաժանումն էին կատարում:

Եղանավորներն ու փոցխավորներն իրենց գործն սկսում էին խոտը չորանալուց հետո. նախ՝ բուլուլներ, ապա կես սայլաբեռ կափնաներ և կամ եղջներ էին դիզում և դրանց մոտ փորագրում համփայի նշանը՝ բուլուլների թվով հանդերձ: Օրինակ՝ Ա-15, որ նշանակում էր՝ Ավագյան-15 բուլուլ, Բ-30, որ նշանակում էր՝ Բդոյան-30 բուլուլ:

Խոտի քաղն ավարտելուն պես յուրաքանչյուր համփա իմանալով, թե իր հասանելիք խոտի կափնաներից և եղջներից որքանն ինչ որակի է, ցուցակով կամ բանավոր կարգով տեսակավորում էին ու վիճակ գցելով բաժանում իրար մեջ:

Ինչպես անհատական, այնպես էլ համփային հնձի ժամանակ աշխատավորներն ակրատի հացն ու պանիրը հետներն էին տանում: Կեսօրին, երբ արևը զենիթում էր լինում, շալակով կամ գրաստով հնձվորներին՝ առանձին և հավաքողներին՝ ուտելիքներ՝ էրիշտով փլավ, խաշիլ կամ ճմուռ ու մածուն էին տանում: Համփան 1-2 ձիավոր էր ուղարկում, որոնք բաժնետերերի տներից խուրջինների մեջ էին հավաքում կավե կամ պղնձե ամաններով ճաշերը և տանում դաշտ: Հնձվորները միասին

և հավաքող տղամարդիկ ու կանայք առանձին-առանձին վայելում էին բերված ճաշերը և հանգստանում կամ քնում 1-2 ժամ: Ջուրը մոտիկ կամ հեռավոր աղբյուրից պատանիները դաշտ էին տանում փայտե կժերը շալակած, իսկ համփայի դեպքում՝ ձիով կամ գրաստով: Պատանիները հանգստի ժամերը երբեմն անց էին կացնում երգ ու պարով, կատակներով ու զվարճություններով: Այդ կատակների մեջ մտնում էր նաև վարձու մշակների կողմից **արտխլիսի** խուրձ մատուցելը: Կարինում, օրինակ, ունևոր արտատերը արտը կամ մարգագետինը քաղվորներին այցելելիս կապավորը, խուրձը գլխին դրած, դիմավորում էր նրան և, դնելով նրա առջև, ասում էր. «Աղա, էս խուրձը քեզի փեշքաշ»: Աղան նրան մի քանի ղուրուշ նվեր էր տալիս: Այդ նույնը պահպանված էր նաև Ջավախքում: Այստեղ առկա էր նաև հետևյալ սովորույթը. երբ արտխլիսի օրը տնից կերակուր էր բերվում, հնձվորներն այն վայելելուց հետո փարչը կոտրում էին:

Ինչպես արտատիրոջը խուրձ մատուցելը, փարչ կոտրելն էլ զոհ մատուցելու խորհուրդն ուներ այն աստվածությանը, որը հեթանոսական հավատքի տեսակետից հովանավորում էր դաշտերն ու այգիները:

Կալսոցը և նրա տեխնիկան

Կարնո բարբառում կալսոցը **կալոց** է կոչվում: Հացահատիկը, հատիկավոր և ձիթատու բույսերը կալսվում էին **կալ** կոչվող հրապարակում, որտեղ գործող միջոցներից գլխավորը կամն էր: Իսկ խրձերով որոշ հատիկներ կալսվում էին թակերով:

Հնագույն կալսիչներից մեկը, որը թակով կալսելու համեմատ առաջադիմություն է եղել, հանդիսանում էր կոռին՝ անասունների կճղակներով կալսելը:

Կամը լավագույն կալսիչն էր: Կարինում այն պատրաստում էին Թորքումի թրքախոս հայերը, իսկ Ջավախքի, Ախալցխայի, Ծալկայի և Ալեքսանդրապոլի գավառներին սպասարկում էին Ախալքալաքի շրջանի անտառամերձ գյուղերի վարպետները:

Մեկ կամը մեկ զույգ եզով օրական կալսում էր մեկ սայլաբեռ օրան: Այդ պատճառով էլ երբեմն չկալսված օրանը մնում էր ձյան տակ: Այն ձմռանը կալսում էին հղկած և սառցակալած կալի վրա:

Կալի օժանդակ գործիքները բազմազան էին:

Հոսելին այն գործիքն էր, որով կալ շրջելուց բացի նաև երնում էին ավարտված կալը: Ամենատարածվածը թաթավոր հոսելին էր, որն ունենում էր 4, 5 կամ 6 ատամ: Մեծ հոսելիները առավելապես կալ շրջելուն և քթոցները հարդ լցնելուն էին ծառայում:

Ջավախքի Հեշտիա, Թորիա, Ուճմանա և Դիլիֆ գյուղերում, ուր ապրում են Մշո գավառներից գաղթածները, գործածում էին առավել տարածված և Մուշին հատուկ

հոսելին՝ **հորսելի** անունով: Սա կազմվում էր ձեռքի թաթը հիշեցնող ձևով՝ մատները կոթին կպցնելով և թաթը մորթով ծածկելով: Կալի մյուս օժանդակ գործիքներն ու միջոցներն էին՝ թիերը, կալքաշը, հալը, մաղերը, քթոցները և այլն:

Կալսոցին կային փոխադարձ օգնության և վարձով աշխատանքի սովորությունները: Բոլորովին անօգնական ծերերի և պառավների արտերի մշակումը, արտահունձը, օրանի տեղափոխումը և գիշերով կալսումը կատարում էին պատանիների խմբերը, մի երևույթ, որ նույնությամբ արտացոլված է բանահյուսության մեջ:

Փոխադարձ պայմանավորվածության համաձայն, ունևորները չքավորների օրանը տեղափոխում և կալսում էին՝ փոխարենը հնձվոր ստանալով:

Կից կալատերերը հարկ եղած դեպքում փոխադարձորեն լծված կամերով օգնում էին հետ ընկածներին:

Արհեստավորները և այլ անձինք, լծկան և կալսելու փորձ չունենալով, հացը վարձով կալսել էին տալիս:

Աղքատ կանայք կալոցին շրջում էին կալերում և **կալմաս** աղերսում: Կարինում, հարկահավաք շահնային բավարարելուց հետո, կալատերերը 2-3 ողջբուռ կալմաս էին տալիս: Կալսման նկարագրված հայկական այս ամբողջ տեխնիկան և աշխատեղանակը նույնությամբ փոխ էին առել դուխաբորները՝ կամերին միայն զույգ ձիեր լծելով:

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱԹՆԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Պարոն նահանգից և Տարոնից Ջավախք գաղթած հայերը այստեղ ներկայացան անասնապահության այն ձևերով, որոնք հայտնի էին իրենց բնաշխարհում և մայր հայրենիքի սահմաններում: Ջավախքի հայկական բնակավայրերում 19-րդ դարի ընթացքում, իսկ որոշ տեղերում նույնիսկ մինչև 1970-ական թվականները, տարածված էին խոշոր եղջերավոր անասունների այն տեսակները, որոնք հարմարված էին տեղական պայմաններին: 1930-ական թվականներից սկսած, տարածվեցին խոշոր եղջերավոր անասունների ցեղական տեսակներ: Մինչև հայերի այս գաղթը Ջավախքում տարածված եղել է վրացական **հռիկ** կոչված ոչխարը, որը տեղական պայմաններին լավ էր հարմարված: Հայերն այստեղ տարածեցին նաև **մազրխ** կոչված ոչխարը, որով այդ երկու տեսակները զուգակցում էին մինչև 1940-1950-ական թվականները, երբ վրա հասավ նրբագեղ ոչխարների տեսակների տարածումը: Վերջինիս հետևանքով իսպառ վերացան նախորդ ցեղատեսակները:

1830-ի գաղթից հետո, մինչև ամառանոցների կառուցումը, անասնապահությունն ուներ նստակյաց բնույթ: Տեղ-տեղ երկու և տեղ-տեղ էլ երեք տասնամյակ անց կիրառվեց նաև հեռագնաց անասնապահությունը, որը շատ մեծ զարկ տվեց այս զբաղմունքի հետագա զարգացմանը:

Ինչպես Արևմտյան Հայաստանում, Ջավախքի հայկական բնակավայրերում էլ անասնապահությունը երկրագործությունից հետո զբաղեցնում էր երկրորդ տեղը: Արոտավայրերն ըստ պատկանելության երկուսն էին՝ արքունի և աղայապատկան: Այդ երկուսը միասին կազմում էին 39.350 հեկտար տարածություն: Իսկ մարգագետինները կազմում էին 11.000 հեկտար տարածություն: Ե. Լալայանը ցույց է տվել նաև ձմեռանոցներ 3725 հեկտար տարածությամբ՝ առանց տեղը նշելու[190]: Մեզ հայտնի ձմեռանոցը Կախեթն էր, որտեղ տարվում էին որոշ կուլակային տնտեսությունների հոտերը:

Մանր և խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 1886թ. Ջավախքի միայն արքունի 70 գյուղերում հասնում էր 208.386-ի, որից 16.072-ը լծկան անասուններ էին: Այդ նույն ժամանակ ձիերի գլխաքանակը հասնում էր 10.528-ի, էշերինը՝ 994-ի, խոզերինը՝ 517-ի, ոչխարներիննն ու այծերինը՝ 152.310-ի[191]:

Վիճակագրական մեկ այլ տվյալի համաձայն՝ 1889 թվականին Ջավախքում կար 41.418 տավար, 100.516 ոչխար ու այծ, 9564 ձի, 4 ջորի, 100 էշ և 20 խոզ: Ե. Լալայանի հաշվումներով յուրաքանչյուր ծխին միջին հաշվով հասնում էր 6 տավար, 14,7 ոչխար ու այծ, 1,5 ձի,: Այս թվերը բերելով՝ հեղինակն իրավացիորեն նշել է, որ Ջավախքում անասնապահությունը, համենայն դեպս, այնքան էլ զարգացած չէր, և

190 Ե. Լալայան, «Ջավախք» (ԱՀ, 1, էջ 208):

191 Խ. Ա. Վերմիշև, էջ 234-237:

«սրա գլխավոր պատճառն այն է, որ արքունի արոտատեղերը փոխանակ ժողովրդյան մատչելի գնով տալու՝ աճուրդի են դնում, որ շատ անգամ սաստիկ բարձրանալով, ձեռնտու չի լինում անասուններ պահել կամ ավելացնել»[192]: Դրանով վերելք էր ապրում ունևոր տնտեսությունների անասնապահությունը: Սոցիալական այս ճնշմանը չդիմանալով՝ շատ տնտեսություններ սնանկանում և աղքատանում էին:

Ունևոր տնտեսությունները 19-րդ դարի կեսին և մինչև 1910-ական թթ. սկզբները, մեծ քանակությամբ խոշոր եղջերավոր անասուններ ունենալով, յուրաքանչյուր անասնատեսակի համար կառուցում էին կից գոմեր՝ **եզանոց, գոմշնոց, կովանոց, ձիանոց, մոզկնոց**: Սակայն այդպիսի տնտեսությունները գյուղերում եզակի էին: Բնորոշը բոլոր տեսակի անասունները միևնույն գոմում կապելն էր, ուստի և դրանք լինում էին բավական մեծ չափերի (7x20մ): Միջակ տնտեսություններն ունենում էին միջին մեծության գոմեր, իսկ չքավորներն ու աղքատները՝ փոքր գոմեր և գլխատան մեջ՝ անասունների անկյուններ:

Ոչխարանոցները **(օչխըրնոց)** մեծ մասամբ կառուցվում էին շենքերի ընդհանուր համալիրների մեջ, բայց մեծ քանակությամբ ոչխարահոտ ունեցողները, առողջապահական պայմանները հաշվի առնելով, կառուցում էին առանձնացված փարախ[193]:

Մարագները մեծ մասամբ կառուցվում էին տան համալիրից բավական հեռու, երբեմն՝ կալին կից: Տարողունակ դարձնելու նպատակով սովորաբար մարագը գոմերից ավելի բարձր էին կառուցում և ծածկում ուղղահայաց ուղղությամբ իրար հաջորդող երեք **էզգերաններով** ու **կոնդագերաններով**: Այնտեղ լցվող հարդը մոտակա կալից տեղափոխում էին քթոցներով, իսկ հեռու կալից՝ հոռով **(չաթան)**:

1850-60-ական թթ. ունևոր տնտեսությունները հին սովորությամբ սկսեցին հեռավոր արոտավայրերում քարաշեն ամառանոցներ **(յայլա)** կառուցել: Նրանց հետևում էր նաև միջակ տնտեսությունների մի մասը: Ամառանոցների մոտ կառուցում էին նաև պարսպապատ մակաղատեղիներ՝ չկթվող անասունների **(յոզ)** նախիրների համար: Ջավախքը բավական հարուստ է բնական խոտհարքներով, որոնք ավանդական կարգով լավ էին պահպանվում հատուկ վարձված հանդապահների կողմից: Արոտներով հարուստ գյուղերը մարգագետինները որպես արոտատեղի չէին օգ-

192 Ե. Լալայան, նշվ. աշխ.(ԱՀ,1, էջ 208):

193 Հմուտ խաշնարածները փարախը թերթաքարերով սալահատակում էին և պատերին առընթեր մսուրքներ պատրաստում: Բուք օրերին ոչխարը կերակրվում էր ներսում: Այստեղ էին կերակրվում և գոլ ջրով ջրվում հիվանդ և նոր ծնած ոչխարները: Փարախում տախտակներով **գառնոց** էին պատրաստում, ուր պահում էին գառներին և ուլերին: Մինչև արածելու դուրս բերելը, գառներին և ուլերին օրական երեք անգամ **մորն էին տալիս**: Օչխըրնոցի մի գերանից շղթայով կապում էին 2-3 փթանոց աղաքար՝ ձմռանը ոչխարի համապատասխան պահանջը բավարարելու համար: Խոշոր եղջերավոր անասունների և սմբակավորների համար աղաքարը հերթով դնում էին մսուրքները:

տագործում: Իսկ սակավ արոտներ ունեցող բնակավայրերում, գարնանը 15-20 օր արածեցնելուց հետո, արգելվում էր նախիր-հոտերի մուտքը այնտեղ:

Ժողովուրդը սեփական և ընդհանուր խոտհարքներից հավաքում էր անասնակերի պաշարը և դիզում խոտանոցներում:

Ամռանը քաղած խոտը կուտակումներով՝ եղջյուրներով, պահում էին մարգագետիններում: Հացահատիկային կուլտուրաների հնձին զուգահեռ, այդ եղջյուրները սայլերով կրում էին բնակավայրեր և մեծ քառանկյունի դեզեր էին դնում: Վերջիններս ունենում էին սեպաձև-կլորավուն մեջք, որպեսզի անձրևաջրերը դյուրությամբ ցած հոսեին: Քամուց պաշտպանելու համար կեմերով ոլորված երկտակ կեմեր էին կախում, որոնց երկու ծայրերին կապում էին 4-5-ական կգ ծանրության քարեր:

Խոտանոցները անասուններից պաշտպանելու համար քարե պարիսպներ էին շարվում դաշտային գոնդոլ քարերից առանց շաղախի՝ 70-100 սմ բարձրությամբ:

Սովորաբար 1-3 սայլ խոտի դեզերը երբեմն դնում էին կտուրին:

Առանձնակի հոգ էր տարվում արոտավայրերը լավ պահպանելու համար: Խորհուրդ չէր տրվում նախիրը կամ հոտը անձրևոտ օրերին հախուռն ընթացքով քշելով խոտը փչացնել:

Ջավախքի բնակավայրերի կեսից ավելին հարակից արոտներ ուներ, իսկ մնացած մասի արոտատեղերը գյուղերից բավական հեռու էին: Այդ պատճառով էլ նրանց մի մասը նստակյաց և մյուսը՝ հեռագնաց անասնապահությամբ էր զբաղվում: Հեռագնացը ամառվա երեք ամսին էր վերաբերում, երբ գյուղերը՝ Մերենիան, Բուռնաշեթը, Ղադոն, Ագանան, Բարալեթը, Խանդոն, Կոթելիան և այլն, հարկադրված էին յայլա բարձրանալ:

Անասնապահությունն անցյալում, ինչպես ամենուրեք, Ջավախքում էլ իր սեզոններն ուներ: Յուրաքանչյուր սեզոն բնորոշվում էր աշխատանքային ուրույն պատկեր-երևույթներով: Հետևապես նպատակահարմար է այն ներկայացնել ըստ տարվա եղանակների:

Ձմեռային պահվածք: Տավարը աշնանը մեկ ամիս շուտ, մոտավորապես նոյեմբերի սկզբներին կամ կեսերին, պահվում էր գոմում (մսուրային շրջան): Այդ ժամանակներում եզներին, գոմեշներին ու մատակներին բակում լողացնում էին գոլ ջրով: Առավոտյան լողացրած գոմեշներին ու մատակներին երեկոյան ձեթ էին քսում: Ոչխարը, որ կարող էր կեր գտնել և ցրտին էլ դիմանալ, մսուրային շրջան էր մտնում մեկ ամիս ուշ: Բայց ոչխարը դաշտային կերով լիովին բավարարվել չէր կարող. նրան առավոտյան խոտ էին տալիս, ապա քշում արոտատեղերը: Իսկ երեկոյան կեր չէր տրվում:

Այն գյուղերը, որ գտնվում էին անտառներին մոտ, նույնիսկ ձյունը նստելուց հետո էլ մեկ-երկու շաբաթ ոչխարն ու այծը քշում էին՝ թփերն ու շիվերի բողբոջները ծերատելու:

Որոշ գյուղերում այծերը շարունակում էին ձմռան սկզբին արածեցնել լճափերի ճահճախոտերի մեջ:

Գոմում տավարի և սմբակավորների ամփոփումը կատարվում էր ցուրտ եղանակին: Բայց այն տարբերությամբ, որ սմբակավորներն էլ, ոչխարի նման կարողանալով գետափերին ու լճափերին ինչ-որ չափով կեր ճարել, դուրս էին արվում ձմռան սկզբին: Տավարը և սմբակավորները մսուրին կապում էին շղթաներով: Մսուրքը շինվում էր խզարով երկարությամբ կիսված կիսագերաններով: Պատին կից շարված մսրաթմբիկի վրա, մսրքան առաջամասում ամրացվում էր հիմնապատի մեջ խրած ձողի ծայրը՝ գամելով: Թևի հաստության այդ ձողը զետեղվում էր յուրաքանչյուր զույգի արանքում:

Մի զույգի մսուրքը մյուս զույգի մսուրքից բաժանում էին տախտակներով:

Հին սովորությամբ կովերը, եզները և ձիերը կապում էին զույգերով:

Ինչպես դրսում, տանն էլ անասնապահությունը հիմնականում տղամարդու զբաղմունք էր համարվում: Ունևոր տնտեսություններում աշխատանքի մեջ էին ներգրավվում մշակներ:

Անասնապահները տանը կատարում էին աշխատանքի մասնակի բաժանում, որոնցից միայն մեկը՝ կթելը, համարվում էր կնոջ գործ:

Գոմում աշխատանքները բազմազան էին. ավլումը՝ մի քանի անգամ, կերակրումն ու ջրումը՝ երկու անգամ, թիմարումը և այլն:

Կեր տալուց առաջ, գոմի ստորին ազատ անկյունում կամ նախասրահում, պատրաստի դրվում էր խոտը կամ հարդը: Խոտը այդտեղ բերելու համար դեզի մի ծայրից կտրում էին բահաձև **խոտկտրիչով**: Սակավ քանակությամբ խոտ տանելու համար կար դեզից խոտ քաշող **խոտկեռ**:

Կերակրելու պահերն էին՝ վաղ առավոտը, աքաղաղի առաջին կամ էլ երկրորդ կանչին և էտընքվան: Ծնած կովերին որոշ ժամանակ կերակրում էին նաև կեսօրին: Էտընքվան կերակրելն ու ջրելը պետք է ավարտվեր արևամուտին: Իսկ բտվող անասուններին երրորդ կեր էին տալիս նաև արևամուտից հետո: Անասնակերի պակասությունն ստիպում էր գյուղացիներին տավարի մի մասը պահ տալ կերառատ գյուղերում:

Անասնակերով առատ գյուղերից էին Մեծ և Փոքր Խանչալլիները, Վաչիանը, Դիլիսկան: Ձմռանը պահ տալու այդ սովորությունն էլ անվանվում էր **ղըշլա**, որ ձմեռոց իմաստն ուներ: Բանավոր պայմանավորվածության համաձայն՝ անասնատերը ձմեռն սկսվելուց մինչև արոտի բացվելը տավարի մի մասը թողնում էր պահողի մոտ՝ դրամական վճարով: Կովը այդ ընթացքում կթվում էր պահողի օգտին, ուստի նրա վարձը կիսվում էր:

Անասուններին ջրելը ձմռանը մեծ մասամբ կատարվում էր գոմում, ջրհորի կամ դրսից բերվող ջրով: Ջրհոր չունեցող և սակավաջուր գյուղերում անասուններին

ջրում էին նաև ձյունից հալեցված ջրով[194]: Ծնի շրջանում կովերին ջրում էին գոլ ջրով և կերակրում խոշորահատիկ գարեալյուրից պատրաստված խյուսով:

Ջրելուն հաջորդում էր անասուններին թիմարելը, որը կատարվում էր դարբնի շինած երկաթե քերոցով, ինչպես նաև ոզնու փշոտ մաշկից ձեռք բերած թաթաձև քերոցով:

Գոմում ամենից կարևոր և ծանր գործը գոմաղբը դուրս տանելն էր: Դրա համար կար երկու միջոց՝ պատգարակաձև տաշտը և կողովը: Կողովներով կու կրող գյուղերում կար երկու ձեի իշուկ-պատվանդան[195]:

Բակերին կից հարթության վրա **կունարկ (բաամա)** էին գցում, որի տակը նախապես հարդ կամ խզարի թեփ էին փռում: Իսկ այն ընտանիքները, որոնց կունարկի տեղը տնից հեռու էր գտնվում, ձմռանը գոմաղբը կուտակում էին դրսում և գարնանը տեղափոխում այնտեղ:

Գարնանային պահվածք: Ցնհալը անասունների գարնանային պահվածքի սկիզբն է: Մինչև ոչխարը և տավարը հովիվներին ու նախրապաններին հանձնելը, տան պատանիները իրենց սեփական անասունները արածեցնում էին ձյունից ազատված և կանաչած տեղերում: Այդ ժամանակ էլ գյուղերում սկվում էր հովիվների ընտրությունը: Հովվի ընտրության հիմքը տարածքային սկզբունքն էր, այսինքն՝ հաշվի էր առնվում թաղը, որը հայտնի էր **մայլա** անունով: Թաղի մեջ մտնում էին տարածքով իրար կից կամ իրար հարող տները: Գյուղի տնօրինությունը, հասարակական ժողով հրավիրելով, ընտրում էր հովիվներ ու նախրապաններ **(չոբան, նախրճի)**:

Եթե գյուղը փոքր էր, հովիվները միանում, մեկ ընկերություն էին կազմում, իսկ եթե մեծ էր՝ երկու ընկերություն: Ընկերության ընդգրկած տարածքը որոշ վայրերում **փեյրանգ** էր կոչվում: Մեկ ընկերությունը **մե փեյրանգ** էր, երկուսը՝ **էրկու փեյրանգ**: Վերջինիս դեպքում գյուղը կիսող բաժանարարը բնակավայրի կենտրոնում կառուցված եկեղեցին էր կամ գլխավոր փողոցը, որոնցից վեր կամ վար գտնվելու

194 Դրա համար գոմի ազատ մի անկյունում երդիկ էին բացում և տակը քարե գուռ դնում: Գռի վրա դրվում էր տախտակե ցանցավոր ծածկոց: Երդիկից ձյունը թափում էին այդ ցանցի վրա, որտեղ այն հալվում էր ուղղակի անասունների տաք շնչից և լցվում ջրամանը: Գիշերն այդ երդիկը ծածկում էին:

195 Դրանցից մեկը իսկական թիկնակավոր աթոռ էր՝ **թրխիճ** անունով: Իսկ մյուսը բարդ սարվածք էր սյուներից մեկի վրա: Մոտ 80-90 սմ բարձրության վրա սյունը հորիզոնական դիրքով ծակում էին և միջովն անցկացնում գլան այնպես, որ սա պտտվեր անցքի մեջ: Սրա դուրս ցցված երկու ծայրերի մեջ մտցնում էին ծակված զույգ ձողեր ու սեպերով ամրացնում էին: 30 սմ երկարության այդ ձողերի ծայրերի մեջ էին մտցնում մի այլ ձող և ամրացնում սեպերով: Դրանով ստացվում էր քառակուսի շրջանակ, որի վրա պիտի դրվեր կուի քթոցը: Որպեսզի քառակուսին հորիզոնական դիրք ընդուներ, տակը կանգնեցնում էին երկճղանի շարժական գլխով հենակ: Այդ սարվածքը **դազգայ** էր կոչվում: Քթոցը դրա վրա դրվելիս հենվում էր սյանը: Կու կրելն ավարտելուց հետո հենակը հեռացնում և քառակուսի շրջանակը կախում էին սյան երեսին, որը մշտապես մնում էր այդտեղ:

հանգամաքով էլ **վերի մայլա** և **ցածի մայլա** էին անվանում գյուղի թաղերը: Ամեն մի այդպիսի մայլան հովիվներ ընտրելիս վերանվանվում էր **վերի մայլի փեյրանգ, ցածի մայլի փեյրանգ**:

Փեյրանգներն ընտրում էին իրենց հովիվների կազմը և ներկայանում գյուղական ընդհանուր ժողովին: Պայմանագրով հաստատված հովվական ընկերությունը պետք է արածեցներ **ծնած օչխարի հոտը, թոխլու հոտը, գառի հոտը և խոյերը**:

Որոշ բացառությամբ, ոչխարի հոտն արածեցնում էին մեկ հովիվ և մեկ պատանի, որը հայտնի էր **յանճի**[196] անունով, գառան հոտը՝ մեկ հովիվ ու մեկ յանճի, թոխլու հոտը՝ մեկ հովիվ ու մեկ յանճի և խոյերը՝ մեկ հովիվ (պատանին)[197]: Ասել է թե՝ 4 հովիվը և 3 յանճին կազմում էին փեյրանգի ընկերությունը:

Հինավուրց սովորույթի համաձայն, 20 ոչխարին հասնում էր 1 գառ, իսկ 10-ին՝ մեկ ուլ: Եկվոր հայ և այլազգի հովվի վարձը թեև նույնն էր, բայց դրսից վարձվածը բավական արտոնություններ ուներ. նա ոչխարների գլխաքանակի համեմատ հերթով օրապահիկ էր ստանում: Նրան սեզոնում հասնում էր մի ձեռք վերնազգեստ և ագանելիքներ, որի դիմաց ստանում էր կաշի և բուրդ:

Որպեսզի փեյրանգները միմյանց հոտերից ոչխար չյուրացնեին և անախորժություններ չծագեին, որոշ գյուղերում, գյուղի ղեկավարության գիտությամբ, կողմերի կորուստները նրանք համատեղ պիտի մարեին և ստացված վարձը հավասար պիտի կիսեին:

Փեյրանգներն իրենց տարբեր հոտերը առանձին արոտավայրեր պետք է քշեին հերթով:

Ընդհանուր ապահովության համար երկու թաղերի հոտերի մակաղատեղերը գտնվելու էին **յոզի աղբլի** շուրջը:

Այսպես կոչված նստակյացների (ամառանոց չգնացողների) և ամառանոցավորների հոտերի մակաղատեղերը միաձև-միանման էին: Գործում էին նաև նույն կարգապահական կանոնները: Երկու տեղերում էլ կար գիշերային հերթապահություն: Գիշերվա ընթացքում հերթապահությունը փոխվում էր երեք անգամ, որի համար, ժամանակի որոշիչներ որպես, ծառայում էին աստղերը: Շատ բնակավայրերում փեյրանգային ձևը չէր կիրառվում: Այդ վայրերում վերի ու վարի թաղերի հոտերը կազմվում էին իրարից անկախ: Նույնիսկ երբեմն լինում էին երեք թաղերի հոտեր

196 **Յանճի**, պարս. **յամճի՝ ձիաբույծ** բառից, բայց այստեղ այն ծառա, հովիվ իմաստն ուներ: (Որոշ բնակավայրերում բառն ունի **յանչի** հնչումը: Բառի պարսկական ծագումը հավաստի կարելի է համարել միայն մեկ դեպքում, եթե պարսկերենի՝ որպես միանգամայն ինքնուրույն լեզվի ծագման խնդիրը գիտական անվիճարկելի հիմնավորումով չհակասեր Աստվածաշնչին (կազմողի ծանոթագրումը՝ Ռ. Ղ.):

197 Ոչ բոլոր դեպքերում էր, որ խոյերի հովիվը մտնում էր հովիվների ընկերության մեջ: Շատ վայրերում ամբողջ գյուղի խոյերի համար ընտրվում էր միայն մեկ հովիվ, որը ոչ մի կապ չուներ փեյրանգների հետ:

և ընկերություններ, որոնք կորուստների համար միմյանց նկատմամբ որևէ պատասխանատվություն չէին կրում:

Հովիվները կաթ կթելու իրավունք ունեին. շատից՝ շատ, քչից՝ քիչ սկզբունքով կթելով: Ոչխարի կաթով նրանք նաև սնվում էին, իսկ այծի կաթը շներին էին տալիս: Որոշ գյուղերում, հնավանդ սովորությամբ, Վարդևոր-Վարդավառի օրվա կաթը տալիս էին հովիվներին: Վերջիններս կաթի հավաքման վայր էին ընտրում իրենցից մեկի տունը, որտեղ պատրաստված գլուխ պանիրը բաժանում էին իրար մեջ: Այս սովորությունը **հալֆալա** անվանումն էր կրում[198]:

Գարնանամուտին սկսվում էր նախրապահի ընտրվելու մրցապայքարը: Վեց հոգուց կազմվող ընկերության մեջ մտնելու համար մրցում էին թե՛ հին տավարածները և թե՛ տավարած դառնալ նորովի ցանկացողները՝ բոլորն էլ համայնքի չքավորական խավերից: Վեց հոգուց երկուսը պետք է արածեցնեին կովերի նախիրը, մեկը՝ մատակներինը, դարձյալ երկուսը՝ **յոգը** և մեկը՝ հորթերը: Հորթերին գնացողն ունենալու էր մի **յանճի**, որին սեզոնում վճարում էին 15 կոտ գարի, ինչը գրեթե 10 անգամ ցածր էր նախրապահի աշխատավարձից:

Տնտեսական առկա դժվարությունները նկատի ունենալով՝ հովիվը կամ տավարածը, հորթերն արածեցնելու հերթի ժամանակ, յանճի էր դարձնում իր տղային կամ աղջկան:

Բացի համագյուղացի չքավորներից, գյուղի այդ տարվա նախրապահ էին դառնում նաև դրսից եկած թուրքերը, ինչպես նաև հարևան գյուղերից եկած հայերը, որոնք կերակրվում էին անասնատերերի հաշվին՝ հերթական կարգով, անասունների գլխաքանակին համապատասխան: Սակայն ձեռնտուն և բնորոշը համագյուղացիներից նախրապահ ընտրելն էր, ում օրապահիկ չէր տրվում:

Նախրապահներ ընտրելուց հետո որոշվում էր վարձաչափը: Սար (յայլա) գնացող գյուղերում կովի համար որոշվում էր վճարել 3-4 ռուբ գարի, մատակի համար՝ 6 ռուբ գարի, ձիու համար՝ 4 ռուբ գարի և մեկ զույգ տրեխ, մոզիկների համար՝ 3-4 ռուբ գարի, հորթերի և էշերի համար՝ 2-ական ռուբ գարի: Նախրապահներին սեզոնի համար հասնում էր 150-ական կոտ գարի:

Նախրապահներն օգտվում էին նաև Վարդավառի օրվա **հալֆալայի** սովորույթից. նրանք այդ օրը դույլերով անասնատերերի տներն այցելում և ծեսի պահանջով տանտիկիններից ստանում էին 2-3 գրվանքա կարագ կամ էլ 4-5 գրվանքա ջիվիլ պանիր և 10-20 ձու: Այդ օրը հալֆալա տալու հնարավորություն չունեցողը մեկ այլ անգամ օրապահիկ էր տալիս:

198 **Հալֆալա** բառը հավանորեն թուրքերեն **հէլվալըգ** բառի աղավաղումն է՝ **պարգև** նշանակությամբ: (Մեր վերաբերմունքը բառերի պատկանելության և, մանավանդ, ծագման վերաբերյալ արդեն մենք հստակ արտահայտել ենք վերևում և, համանման դեպքերում, խնդրին այլևս որևէ անդրադարձ չենք կատարի: Կազմողի ծանոթագրումը՝ Ռ. Ղ.):

Անասունների առանձին տեսակների անվանումները տրվում, ճշգրտորեն բնորոշվում են նրանց սեռահասակային դասակարգումներով: Արու և էգ անասունները ծնված օրից մինչև հասունանալը (մինչև լծկան, հեծկան և կթան դառնալը) անվանափոխության են ենթարկվում: Յուրաքանչյուր տեսակ անվանափոխվում և վերջնական անուն-կոչում է ստանում երեք և կամ չորս տարեկան հասակում: Այսպես, օրինակ, ոչխարի ձագը մինչև 6-7 ամսական հասակը **գառ** էր կոչվում, մինչև երկու տարեկան դառնալը՝ **շիշակ** կամ **թոխլի**, երկու տարուց սկսած՝ **ոչխար (օչխար)** կամ **խոյ (ղոչ)**: Տավարի ձագը մինչև մեկ տարեկան դառնալը **հորթ (հորթ)** էր կոչվում, մեկ-երկու տարեկամ դառնալիս՝ **մոզիկ**, երեք տարեկանում՝ **արջառ (աչառ)** կամ **երինջ (էրինջ)** և չորս տարեկանում՝ **ցուլ (բուղա)** կամ **կով:**

Ընտանի որոշ կենդանիների անասնապահները մարդկային անուններ էին տալիս: Օրինակ՝ կովը կարող էր կոչվել **Խանում**, եզը՝ **Ջեյրան**, գոմեշը՝ **Շեկո**, ձին՝ **Մուրազ**, էշը՝ **Լուսիկ**, ոչխարը՝ **Ծաղկառ**, այծը՝ **Սատանա**, շունը՝ **Ջանգի**[199] և այլն:

Ջավախքում կովերի նախիրը **նախիր** էր կոչվում, որի մեջ մտնում էին նաև ցուլերը և, սակավաթիվ լինելու դեպքում՝ մատակները: Իսկ 50-100 մատակ ունեցող գյուղերում կազմվում էր **մատկի նախիրը**:

Մատակները տվյալ դեպքում կովերից անջատում էին դանդաղաշարժության և արագաշարժ կովերի հետ չհամակերպվելու պատճառով: Բացի դրանից, մատակների կճղակները քարքարոտ տեղերում չէին դիմանում և **օտրնտում էին** (կճղակները ցավում էին), որի համար էլ ոմանք մատակներին պայտում էին:

Մոզիկներից և երինջներից կազմվող նախիրը **յոզ** էր կոչվում, որի մեջ մտնում էին նաև ձիերը: Հորթերի խումբը **հորթեր** անունն ուներ: Բացառիկ էին այն գյուղերը, որոնց արոտը մոտիկ գտնվելով, կազմում էին եզների նախիր, որը փաստորեն անուն չուներ: Այդ պարագայում **մալ** բառը երկրորդաբար **լծկանի խումբ** էր նշանակում (Էզները տար, մալին խառնե: Մալը սարն էլավ): Այստեղից էլ **մալի չոբան** անվանումը:

Բնորոշը, սակայն, եզներին առանձին՝ տանու եզնարածների կողմից արածեցնելն էր, որով զբաղվում էին 8-15 տարեկան երեխաները:

Եզներն ու գոմեշներն ամառանոցներ չէին տարվում, որովհետև հերկելու, աղուն տանելու, անտառ գնալու և ամեն տեսակ բեռներ տեղափոխելու համար հաճախ պետք էր լինում նրանց ձեռքի տակ ունենալ:

Անցյալում կովերի նախրին խառնում էին մասնավոր անձանց պատկանող ցուլեր, որոնք վարձվում էին բնամթերքով: Ջգալի թվով գյուղեր էլ համայնապատկան ցուլեր էին պահում: Գարնանամուտին գնում էին ցեղական երկու-երեք ցուլ և, կովե-

199 Արևմտահայաստանի և մասամբ Ջավախքի այդպիսի անվանումների վերաբերյալ տվյալները տես Յու. Ի. Մկրտումյան, **Անասնապահության ձևերը Արևելյան Հայաստանում** աշխատության մեջ (Հայ ազգագրություն և բանահյուսություն,1974, թիվ 6, էջ 21-23):

րի թվին համապատասխան դրամով կոպտոն ու փաղաղ գնելով, կերակրում տավարածի տանը: Այս երևույթը պերճախոս ցույց է տալիս, որ համայնքները մի ժամանակ մշտապես պահվող ցուլեր են ունեցել:

Գոմշատերերը վարձում էին գոմշացուլ՝ յուրաքանչյուր մատակի դիմաց մեկ գրվանքա կարագ վճարելով:

Ամառանոց բարձրանալուց առաջ անասունները գիշերը տուն էին բերում: Տաքերն ընկնելուն պես, մայիսի վերջերին, յոզը և թոխլին քշում էին ամառանոց, իսկ կովերն ու մատակները սար էին տարվում հունիսի վերջերին:

Արոտավայրերը բնակավայրերին կից լինելու դեպքում կթան կովերը սարում չէին պահվում. դրանք առավոտյան կթվում և տարվում էին սար, երկրորդ անգամ կթվում էին երեկոյան և կապվում գոմում, իսկ ունևորները դրանց պահում էին աղբլի մեջ:

Լիներ ամառանոցում, թե այլ վայրերում, հովիվները և տավարածները պատասխանատու էին անասունի յուրաքանչյուր կորստի, նաև ոտքը խփելով կոտրելու համար: Բայց եթե անասունի ոտքը կոտրվում էր քարացրոնի մեջ ընկնելու հետևանքով, ինչպես նաև եթե անասունը գայլկեր էր դառնում և նյութական ապացույցներ էին լինում, հովիվն ու նախրապահը պատասխանատու չէին:

Ամառային պահվածք: Ամառային պահվածքը տևում էր երեք ամիս: Պիտի ասել, որ առհասարակ սար բարձրացողների և սար չբարձրացողների աշխատանքային գործունեության մեջ տարբերությունները գրեթե աննշան էին:

Այն գյուղերում, որոնք ցանքատարածություններին կից արոտատեղիներ գրեթե չունեին կամ ունեցածներն էլ չափազանց փոքր էին, սար բարձրանալ և կամ չբարձրանալու խնդիրը անվերապահորեն լուծված էր հօգուտ առաջին տարբերակի: Գյուղին իբրև ամառանոցավայր էր հատկացվում 3-20 կմ հեռավորության վրա: Սակայն չքավորները և միջակ տնտեսությունների կեսը յայլա կառուցելու կարողություն չէին ունենում: Յայլա կառուցում էին ունևորները և հնարավորություն ունեցող մյուս տնտեսությունները: Կառուցում էին քարե պատերով և հասարակ գերանածածկերով: Շենքերը երեք բաժանմունքից ավելին չէին ունենում: Դրանցից մեկը **թնդրտունն** էր, որը փոքրածավալ էր լինում, գոմածածկով էր, որտեղ գտնվում էին նաև խոհանոցն ու ննջարանը:

Կաթնոցը առնվազն 3 x 3 մետր մեծություն էր ունենում, բայց մեծահարուստներն ունենում էին ավելի մեծ կաթնոց: Այստեղ էին տեղավորվում **կաթ փռելու ամանները՝** կավե քարսանքները և տախտակե տաշտերը, որոնցում թթվեցվում էր կաթը և անջատվում սերուցքը: Սերուցքի հումը, թանը, աղած կարագը, աղաջրով պանիրները և այլն, նույնպես այս սառը տեղում էին պահվում:

Հորթնոցը կառուցվում էր մատղաշի գլխաքանակին համապատասխան: Այս բաժինը, որ ունենում էր մսուրքներ և կապեր, անհրաժեշտ էր հորթերը սարում տաք և անկորուստ պահելու համար:

Իբրև լրացուցիչ կիսակառույցներ էին ծառայում աղլլները: Սրանց թիվը երեքն էր. **կովերի, օչխարի,** և **գառների աղլլ**: Երեք աղլլն առնվում էր մեկ ընդհանուր պատի մեջ և միջնորմներով բաժանվում միմյանցից: Ամեն աղլլ իր փայտե հասարակ դուռն ուներ:

Կովերի աղլլի պատի վրա ամեն մի կթանի համար մի սեպաձև և գլուխ ունեցող բիլիր էր խրվում, որին կապվում էր ծամ ունեցող պարանը: Կթելու համար կովերն ու մատակները կապվում էին:

Յայլայում թաղերը ազգակցական համախմբումը հստակորեն չէին պահպանում, որովհետև հողամասերը, ազգակցական սեփականություն չհանդիսանալով, ով որտեղ հարմար էր գտնում՝ այնտեղ էլ կառուցում էր: Սակայն այն դեպքերում, երբ ազգակիցները յայլան միաժամանակ էին կառուցում, կից տներ էին ունենում: Այդպես էին վարվում նաև բարեկամացած երկու տարբեր ազգակցականություն ունեցող անձինք և ընտանիքներ: Յայլան գյուղի ձև էր ունենում և ինքնապաշտպանության նպատակով կլոր (շրջանաձև) պատկեր էր ներկայացնում: Որոշ տներ, որ իրար կից էին լինում, ակնատներ էին ունենում:

Ջավախքում յայլաներ հայերը կառուցել են 1830 թվականից բավական ուշ. մինչ այդ, հավանորեն վրաններից են օգտվել: Բարալեթի յայլան գուցե կարելի լիներ համարել ամենահինը, որտեղ համատեղ ամառանոց էին գնում բնիկ հայերն ու վրացիները՝ շուրջ 150 տուն-ընտանիք: Այստեղ նրանք ամառանոցային տներ ունեին: Յայլա բարձրանալու հին սովորությունը հարատևեց մինչև կոլտնտեսությունների կազմակերպումը: Վերջիններիս ժամանակաշրջանում եղած յայլաները վերածվեցին կաթնային ֆերմաների, ուր ամառվա սեզոնում ապրում էին կովկիթները և կաթ մշակողները:

Յայլա էին բարձրանում նախապես լավ կազմակերպված. հոտին ու նախրին հետևում էին բեռնված սայլերը, որոնք տանում էին անկողինները, թախտ կապելու տախտակները, փռոցները, կճուճներն ու ծափերը, պղնձե ամանները, տաշտերն ու քարսանքները, խնոցին, աթարը, հաց թխելու պարագաները, գիշերային լուսավորության իրեր, լուցկի, շորեր և այլն: Ընդունված էր, որ սայլով գնում էին երեխաներով մայրերը, ձիերով՝ հղի կանայք, մյուսները հետիոտն էին:

Ընդհանուր կարգի համաձայն, ամառանոց ունեցող գյուղում, բացի լծկանից, պահում էին նաև մեկական կով:

Սարում ամառանոց չունեցողներն իրենց ազգականների յայլաներն էին ուղարկում կանանց, որոնք համատեղ ուտեստով ապրում էին նույն հարկի տակ և մշակում իրենց կաթնեղենը առանձին-առանձին: Տանտիրուհին և ազգակից կինը գիշերում էին թնդրտանը:

Կար փոխօգնության մի այլ ձև ևս: Սակավաթիվ տավար ու ոչխար ունեցողը խնդրում էր իր մերձավորներից մեկնումեկին՝ կթելու և խաբը տալու իր կաթի տե-

սակները: Այդպիսիք բարեխղճությամբ կթում և խաբի հերթը հասնելուց օր առաջ լուր էին ուղարկում, որ տիկինը գնար և ոչխարի ու կովի կաթն ստանար ու կաթնամթերքներ պատրաստեր: Վերջինս գալիս էր, գործը կատարում և մթերքներով վերադառնում տուն:

Յայլայի պաշտպանության ապահովման համար գյուղի ղեկավարությունը ամառանոցավորների հաշվին հատուկ զինված գիշերապահ էր վարձում, ով պետք է ապահովեր յայլայի անվտանգությունը, կանխեր գողերի հարձակումները և այլն: Պետք է ասել, որ որոշ գյուղերի յայլաներ չունեին նման պահակներ:

Ինչպես գյուղում, ամառանոցում էլ կովերը կթվում էին երկու անգամ՝ առավոտյան և երեկոյան: Բայց որոշ վայրերում մասնակի տարբերություն կար: Յայլայում սեփական աղբլի մեջ երեկոյան կթելուց հետո կթանները տարվում էին գյուղական համայնքի աղբլը: Առավոտյան ետքըծեգին նախիրը քշվում էր արոտ, որտեղ վերջինս արածում էր մինչև ժամը 10-ի մոտերքը և բերվում էր կթելու: Յուրաքանչյուրն իր աղբլում կովն ու մատակը կթում և խառնում էր նախրին: Դրանից հետո արոտ էին տարվում հորթերը[200]:

Ոչխարը գյուղերում մեծ մասամբ կթվում էր հով շվաքներում, առանձին դեպքերում՝ տներին կից աղբլներում: Իսկ ամառանոցներում այդ գործը կատարվում էր միայն բաց աղբլներում: Աղբլները մեծ լինելու դեպքում, հարյուրավոր ոչխար կթողների համար, ունենում էին երկու-երեք դուռ, իսկ կոլտնտեսություններինը երբեմն ավելի շատ դռներ էին լինում:

Անցյալում շատ քչերն էին միայն, որ ոչխարը կթում էին մեկ անգամ, որի նպատակն էր ապահովել գառների արագ աճը: Բայց ժողովրդի մեծ մասը կթում էր երկու անգամ՝ **առչընկիթ** և **էտընկիթ** (առչընկիթը վերջացնելուց հետո սկսվում էր էտընկիթը):

Խուզելուց առաջ ոչխարը և գառը լողացնելու սովորություն կար: Հյուսիսային գյուղերը Տաբածղուրի լիճն էին տանում հոտը և քշում ջրի մեջ: Նույն բանն էին անում նաև մյուս լճերում: Իսկ լճերից հեռու գտնվողները ոչխարը լողացնում էին ջրվեժների (շռռշռռ, չըռչըռ) տակ՝ ընտանիքներով: Շատերը ոչխարը քշում էին առատաջուր գետերի մեջ և, մի քանի անգամ գետանցում իրականացնելով, մաքրում էին բուրդը:

Տաբածղուրիում լողացնում էին նաև տավարը:

Ամառանոցներում կանանց զբաղմունքը չէր սահմանափակվում միայն կաթնամշակությամբ: Նրանք լվանում և չորացնում էին խուզված բուրդը, մանում գզած բուրդը, գործում էին գուլպա, ձեռնոց, երեսնոց, հաց էին թխում և կերակուրներ եփում, լվացք ու կարկատան անում: Բրուտագործ կանայք նաև ամաններ էին պատրաստում, չորացնում և թրծում էին դրանք:

Հովիվն ու նախրապահը գրեթե նույն հասարակ հագուստն ու գույքն ունեին:

200 Ջավախքում 1970-ական թթ. վերջերին անասունները կթելու համար սահմանել են երեք նվագ (առավոտ, կեսօր և երեկո):

Զգեստների համալիրը բաղկացած էր շալե շալվարից ու բաճկոնից, հասարակ չուխայից, փափախից և տրեխներից: Իբրև վերարկու էին օգտագործում շալե հաստ **ֆարաճիկը** և **այծենակաճը**: Նրանց գույքն ու զենքերն էին կազմում՝ մախաղը **(տավարճուղ)**, մահակը, մտրակը, դանակը, դաշույնը, հազվադեպ՝ հրացանը: Նրանց ամենօրյա կերածը հաց ու պանիրն էր, ոչխարի կաթը, ինչպես նաև ոչ միշտ պատահող խորովուն, որը եփվում էր հողաշերտի տակ, մորթու մեջ փաթաթված վիճակում՝ գետնի վրա կրակ վառելով:

Հովիվները քնում էին բաց երկնքի տակ, իսկ գույքը պահելու համար ունենում էին միայն մեկ երեսբաց **քող**: Հոտի պահպանությանն էին ծառայում գամփռ շները, որոնցից շատերն ունենում էին **խըշտ**[201] կոչված վզնոցներ:

Հովիվներն ու տավարածները, անշուշտ, ոչխարի ու տավարի հիվանդությունները բուժելու որոշ փորձառություն ունեին: Ձեթի ճրագով ծծումբ էին ծխեցնում, որով յուրօրինակ ախտահանում էր իրականացվում: Յամանի (սիբիրախտ) հիվանդությամբ վարակված անասունին պառկեցնում էին, ոտքերը կապում և շիկացած երկաթաձողով դաղում ուռուցքի չորս կողմը, ապա ծեծում ու ծածկում ձեռնաթաթի չափ տախտակի վրա խրած սուր գամերով: Դաբաղը բուժում էին կճղակներին ու դրանց արանքների միջնամասերին նավթ քսելով, իսկ բերանը բուժելու համար լեզուն դուրս էին քաշում, աղով տրորում: Երբ ոչխարի պճեղների արանքում վերք էր առաջանում և որդնոտում էր, որդերը փայտե մալոխով դուրս էին թափում և վրան՝ մաքրված տեղին, անալի լոռ **վազնաթ** էին կապում: Եթե այս միջոցը չէր օգնում, ապա վերցնում էին **ղըլըճօթի** կոչված բույսը (դեղաբույսը), երկու քարի արանքում ծեծելով վերածում էին խյուսի և կապում վերքի վրա: Երկու-երեք անգամ կրկնելով՝ վերքը լավանում էր: Ոչխարի պճեղի արանքում մսից գոյանում է ասկարիդի նման, նրա հաստության և 5-6 սմ երկարության սպիտակավուն գոյացություն, որը **մաղկուլ** է կոչվում: Դրա միակ բուժումը դրա արմատախիլ անելն էր: Ուստի դրա չորս կողմը դանակով մաքրում, բաց էին անում և աքցանով կամ ձեռքով քաշում, դուրս էին հանում, վերքին՝ ղըլըճօթի կապում: Ոչխարը ճահճուտներում արածացնելիս, լյարդի վրա որդեր էին գոյանում: Դրանք մաքրելու համար ոչխարի մսուրքներում հարդ լցնում, գարի ու նավթ խառնում իրար և ուտեցնում էին: Խոզանի կաթնոտ և շաղաթաթախ խոտը արածող տավարը գազերից վքնում է: Փրկության միջոցներն էին թթու թան կամ աղաջուր խմեցնելը և կամ **կամռաշա** ճիպոտների կճեպներն ուտեցնելը: Ոչխարի վրա առաջացած վերքերը և մկրատի կտրածները բուժելու համար **աչիչ քարի** (պղնձարջասպի) փոշի էին ցանում: Ոչխարի և կամ այծի ոտքը կոտրվե-

201 **Խըշտ** բառը (խիշտ) ծագում է պարս. **խըշթ** բառից, որ նշանակում է տեգ, նիզակ, գեղարդ: Խըշտը շան պարանոցին կապվող սլաքավոր մանյակ է՝ կազմված շղթայի նման իրար միացվող մետաղական որոշ հաստության տափասալիկներից, որոնցից յուրաքանչյուրը ունենում է 3-ական սուր-սուր մետաղաբզեր՝ գայլին կամ հարձակվող շներին խոցելու համար:

լիս, հովիվները լեղի ձթով պատրաստած **յախուով** և բարակ ու նեղ տախտակներով այն հմտորեն կապում, լավացնում էին:

Կաթնամշակություն: Կովի և ոչխարի կաթի մշակումը կատարվում էր երկու եղանակով՝ անհատական և ընկերովի: Առաջին դեպքում կաթից բավարար ու պատշաճ արդյունք չէր ստացվում, ուստի ոչ միայն Ջավախքում, այլև ողջ պատմական Հայաստանում կազմակերպվում էր կաթնափոխանակության ընկերություն, որը հայտնի էր **խաբ, խար տալ, խաբ ու խազ, խապ**[202] և նմանատիպ անուններով:

Ուշ աշնանից մինչև ձմռան վերջը ցուլը չառած կովը շարունակում էր կթվել: Հունվարից մինչև խաբն սկսվելը նոր ծնած ոչխարների և կովերի առաջին երկու օրերի թանձր և դեղնավուն կաթից **դալ** էին պատրաստում: Այնուհետև կթված կաթը անհատական մշակման էր ենթարկվում, մինչև որ սկսվում էին խաբն ու խազը: Անհատական մշակման էր ենթարկվում նաև խաբի սեզոնը դադարելուց հետո կթվող կովերի կաթը:

Կովի և ոչխարի կաթը ծափերի մեջ **հում** էին լցնում, և 7-10 օրում հավաքված ու թթված այդ հումը հարում, կարագ ու թան էին ստանում: Տարոնցիները ավելի առաջադիմական ձև ունեին. կաթը մածուն մերում և ձեռքի ձձումով կամ մեծ խնոցիով հարում, կարագ ու թան էին ստանում: Նրանց այս եղանակը կանխում էր բրուցելոզի տարածումը մարդկանց մեջ՝ կաթը եռացնելու շնորհիվ:

Անհատական կաթնամշակության այդ ձևերի ժամանակ, երբ կաթն ունեոր տնտեսություններում բավական շատ էր լինում, նաև գլուխ և ջիվիլ պանիր էին պատրաստում, որին նախորդում էր կաթը թմրեցնող մերանի պատրաստումը, որը **դեղ բռնել** էր կոչվում[203]:

Խաբը ամանով կաթը փոխ տալու սովորությունն ու կարգն էր: **Խազը՝** ճիպոտը, որի վրա **ծոնթ-խազեր** էին անում կաթը չափելիս: Խաբի համար դեռևս ձմռան կեսին խաբի գլխավոր ունեոր անդամը իր շուրջն էր հավաքում այն ընտանիքներին, որոնց հետ լավ հարաբերությունների մեջ էր գտնվում: Այդպիսի ընտանիքը խաբի մեջ **խաբգլուխ** էր կոչվում: Ընդ որում, թեև այստեղ հիմնական գործող անձինք կանայք էին, սակայն վերջնական, վճռական խոսքը տղամարդկանց էր պատկանում:

---

202 Ջավախքում, Ախալցխայում, Շիրակում և այլուր խաբ տալը կաթի փոխատվություն էր նշանակում: **Խաբ** բառը Հր. Աճառյանը բացատրելիս դիտել է, թե «Գրաբարում ունինք **յանօթ տալ** - փոխ տալ ոճը, որ կուգայ թրք. **աման** բառեն: Նույն կազմությունն ունի **խաբ տալ**, որ կուգայ թրք. **գաբ-աման** ձևեն, որը նույնն է ստացվում հայ ռամկական արտասանությամբ՝ **խաբ**»: (ԳԲ, էջ 444): Ինչպես երևում է **յանօթ տալ** թարգմանվել է թուրքերեն:

203 Դեղ ստանալու համար ոչխարի շրտանը չորացնում էին, փոքր կճուճի մեջ գցում, շիճուկ լցնում և ավելացնում երկու բուռ ջիվիլ պանրի դեղի համար՝ քառորդ բուռ աղ, սխտորի պճեղի չափ շիբ, երկու բաժակ խաշած ցորենի ջուր և խակ խաշած մի քանի հատիկ ցորեն: Երբ մի քանի օրվա ընթացքում հատունանում էր, օգտագործում էին: Ընդ որում, ոչխարի կաթով լցված մեծ պղնձի մեջ լցնում էին երեք շերեփ դեղ, որով նա թմրում էր երկու ժամում: Իսկ ջիվիլ պանրի նույն քանակի թթված (փռած) կաթին լցնում էին երկու շերեփ դեղ:

Երբեմն այնպես էր պատահում, որ խաբը կազմվում էր միայն ազգակիցներից: Բայց ոչ բոլոր դեպքերում էր հաջողվում դա, որովհետև ամենատարբեր պատճառներով ազգակիցների որոշ անդամներ ոչ թե իրենց հարազատների, այլ հարևանական խաբի մեջ էին մտնում: Հիմնական պատճառներից էին՝ որևէ ազգականի տունը թաղից հեռու գտնվելը, ազգակիցներից մեկի հարաբերությունների խզումը մյուսներից, խաբկից ազգակիցներից մեկի խարդախության բացահայտումը և այլն:

Խաբը կազմավորելուց հետո տղամարդիկ գրեթե այլևս դրա ներքին գործերին չէին խառնվում, որով խաբը ինքնին դառնում էր կանանց միավորում:

Եթե տվյալ գյուղը յայլա ուներ, խաբվորները իրենց կապերը նույնությամբ պահպանում էին նաև սարում, մանավանդ եթե բնակարաններն իրար մոտիկ էին: Գյուղում մնացած մեկական կովերի կաթը նույնպես խաբն էին տալիս:

Բացի զուտ ազգակիցների՝ խաբկից լինելուց, կար նաև հարևաններից կազմված խաբ: Այսպիսին կազմվում էր հատկապես տարածքային սկզբունքով, որի մեջ կարող էին մտնել 2-3 ընտանիքներ: Երբեմն ընտանիքների քանակը շատ ավելին էր լինում:

Խաբ ու խազի ընկերությունը չգրված կանոններ ուներ, որոնց ենթարկվում էին նրա մեջ մտնող բոլոր անդամները: Այդ կանոններն էին՝ կաթը ժամանակին տեղ հասցնել, ապահովել կաթի մաքրությունը, կաթը չխարդախել՝ ջուր չխառնել, կամ փոխադրելիս կաթնամանի բերանը ծածկել, եթե անձրև է տեղում, այծի կաթ չխառնել, այն նվազ յուղայնություն ունի, խաբի մեջ հավասարություն պահպանելու համար կաթը շրջանառության մեջ մտցնել յուրաքանչյուր ենթասեզոնում, գարնան և ամռան սեզոնների միջև ընկած շաբաթներին, որպեսզի շատ կամ քիչ կաթ ունեցողը հավասարապես մթերքներ պատրաստեր, այսինքն՝ ունենար միևնույն յուղայնությունը: Թեև բացարձակ հավասարություն պահպանելն անհնար էր, քանի որ կաթի որակը նույնիսկ տարբեր արոտներում արածացնելիս էլ տարբեր էր լինում: Այնպես որ կարևորվում էր ինքնին հավասարությունը պահելու մշտական ձգտումը բոլորի կողմից, որպեսզի բոլորն էլ բավարարված զգային իրենց: Ունևորները, օգտվելով հովիվներին և տավարածներին կաշառելու հնարավորությունից, կարող էին նրանց պարտավորեցնել, որ խաբը իրենց վրա լինելու ժամանակամիջոցում նախիրը և հոտը արածեցնեին առավել յուղատու խոտով հարուստ արոտներում: Այսպիսի դեպքերում խաբի անդամները բողոքում էին և անարդարությունը կանխում. խաբվորին իրավունք չէր վերապահվում ոչխարի կաթին կովի կաթ խառնել և հակառակը, կաթի փոխատվության կարգը սահմանվում էր ըստ կաթնաքանակի. առաջինը տալիս էին ամենաշատ կովեր և ոչխարներ ունեցողին, և այդ սկզբունքով ամենավերջինը կաթ ստանում էր ամենաքիչ ունեցողը, մատակի կաթը կովի կաթի հետ խառնել չէր թույլատրվում, ուստի մատակատերերը կաթնափոխատվություն միմյանց միջև առանձին էին իրականացնում: Իսկ եթե այդպիսի ընտանիքները միմյանցից հեռու էին

ապրում, ապա մատակի կաթը ամեն օր **հում** էին լցնում, թթվեցնում և հարում էին, իսկ տարոնցիները, ինչպես տավարի կաթը, մածուն մերում և ձձումով հարում էին:

Ենթադրենք, թե **կաթը Հոռոմսիմայի վրա էր լինում**. առավոտյան և երեկոյան՝ կովի ու կեսօրին՝ ոչխարի կաթը խաբի անդամները (խաբվորները) դույլերով տանում էին նրա տունը: Յուրաքանչյուր փոխատու կաթը տալիս էր մի հայտնի ամանով, որը ստացողը տարվա սեզոնում պիտի հիշեր և չսխալվեր, թեև նրան խաբելու փորձեր չէին արվում, որովհետև հավատում էին, թե խաբողն ու կեղծողը դժոխք է գնալու: Այդ ընտրած դույլի կաթը տանողը չափում էր ծոնթով՝ ստացողի ներկայությամբ: Ծոնթը (մատի հաստությամբ փայտե կլոր ձող) իջեցնում էր կաթի մեջ, հասցնում հատակին. որտեղ որ կաթի մակերեսը նշան էր անում, տվողը դանակով ծոնթում (խազում) էր ու նորից մտցնում, ճշտում: Երբ դույլից կաթն ավելանում էր, այդ էլ յուղահալիկով կամ ջրխմիկով էր չափում: Ընդ որում, յուղահալիկը լիքը լցվածը համարվում էր մեկ միավոր, իսկ կիսատը կամ քառորդը տարբեր անուններ էին ունենում:

Երբ **խաբը դառնում էր**, փոխ տվողը փոխ առնողի հետ այդ բոլորը շիճուկով կամ ջրով իրար գումարում, ամբողջական դույլերի էին վերածում և, այդպիսով, բազմաթիվ ծոնթերը իրար գումարելով պարզում էին, թե որ քուղայով (դույլով) որքան է փոխ տված: Այժմ էլ դրա համար ստեղծվում էր մի նոր ծոնթ և, վերջնահաշվարկում, կատարյալ ճշգրտությամբ որոշում էին իրենց տալիք-առնելիքը:

Բոլոր դեպքերում կողմերը երկուստեք պետք է հաշվեին նաև փոքր ամանով տրվող կաթի քանակը (կես, մեկ քառորդ և այլն):

Կար նաև կաթի փոխատվության հաշվարկման այլ տարբերակ ևս, որն էլ իր հերթին նույնպես ծառայում էր կաթի փոխատվության կարգի հստակ կազմակերպմանը:

Ինչպես երևում է, խաբ ու խազը համայնքային սովորույթներից և կենսակենցաղայի հարաբերություններ կազմակերպելու ձևերից լոկ մեկն է եղել: Թեև այն հետագայում որոշ փոփոխություններ է կրել: Վերևում տեսանք, որ ամառանոց մեկնող շատ կանայք օգնում էին իրենց հարազատներին՝ կթելով նրանց կովերն ու ոչխարները, և այն խաբ էին տանում: Որոշ ընտանիքներ իրենց խնամքին հանձնված կովերն ու ոչխարները կթում և կաթը խառնում էին իրենց կաթին ու մշակում միատեղ: Յայլայի խաբը վերջանալուն պես նրանք իրենց հարազատներին էին տալիս պանիր, յուղ, վազնաք՝ ըստ անասունների գլխաքանակի:

Այս սովորություններից կարելի է գալ որոշ հետևության. այն, որ համայնքային հարաբերությունների ժամանակաշրջանում, ըստ երևույթին, թե գյուղում և թե ամառանոցում կաթը մշակվել է համայնքի համապատասխան մասնագետների կողմից և արդյունքը բաժանվել ըստ անասունների գլխաքանակի:

Կաթնամթերքների պատրաստման միջոցները կաթսաներն էին, ծափերը,

կճուճները, կավե և տախտակե տաշտերը, հնագույն, շարքայի ձվաձև կաթքամիչը, որ հելունով գործում էին այծի հաստ մազից:

Կաթքամիչի երկրորդ տարբերակը, որ 20-րդ դարի սկզբներին ավելի էր տարածված, ձիու պոչի մազից գործած ալյուրմաղի փոքր տեսակն էր: Մաղի մեջ փռում էին 2-4 ծալ տված շղարշը և նստեցնում կաթսայի բերանին դրված երկու բարակ ձողերի վրա[204]: Շղարշի և վերոհիշյալ այծամազ կաթքամիչի միջով անցնող կաթի մեջ մազի անցումը բացառված էր:

Կաթ փռել էր կոչվում հով տեղում կաթը կավե կոնքերի (քարսանք) և տաշտերի մեջ լցնելը, որտեղ 2-3 օրում սերուցքը հավաքվում էր մակերեսին: Երբ համտես անելով ստուգվում էր կաթի թթված լինելը, սերուցքը նրա երեսից քաշում էին տափակ և ծանծաղ կավե, փայտե և հախճապակյա ափսեներով:

Փռած կաթը թթվելուն պես սերը հավաքում, ծափն էին լցնում, որ շարունակեր թթվել: Իսկ կաթը լցնում էին վառած թոնրին դրած պղնձի մեջ: Կաթը տաքանալուն պես դեղը մեջը լցնում և շերեփով դանդաղորեն ու անընդհատ խառնում էին, որպեսզի չկտրվեր (չփսորվեր): Որոշ ժամանակ անց ջիվիլ պանիրն առանձնանում էր կաթից ու առաջացնում շիճուկ: Պանրաթելերը հավաքվում էին շերեփի վրա: Շարունակելով պանիրը դանդաղ պտտել կաթսայի մեջ, նրան էին միանում պանրային մասնիկները, և շիճուկն սկսում էր կապտել: Շերեփի վրա գոյացած պանրի մեծ զանգվածը **քաշ** էր կոչվում, որն այդ ժամանակ պղնձից հանվում, դրվում էր տաշտի մեջ, ձեռքերով շաղվում էր, ձգվում, ծալվում, նորից ձգվում ու կոխվում էր, որ ամրանար, առաձգական դառնար ու շիճուկը քամվեր: Այնուհետև քաշը կախում էին հորիզոնական դրված փայտից, որ քամվեր 24 ժամում: Դրանից հետո քաշը նորից պառկեցնում էին տաշտի մեջ, մի քիչ աղ էին ցանում ու վազնաթից քամված շիճուկ էին լցնում, որ լճանար և բորբոսնելը կանխվեր: Հաջորդ անգամ այդտեղ էին դնում նոր **քաշեր**, մինչև որ խաբը դառնար: Այս անգամ պանիրը հանում էին, մի քիչ չորացնում և կտրատելով՝ շերտ առ շերտ դարսում տակառի կամ կարասի մեջ ու ամեն մի շերտը աղում: Այդ վիճակում թողնում էին լիքը լցված պանիրը 24 ժամ, որ **աղն ուտեր**, որից հետո աղաջուրը լցնում էին այնքան, որ կարասի պանրի երեսը ծածկվեր: Եթե ծափ կամ կարաս էր, երեսին շոր էին փռում, քարը դնում շորի վրա, իսկ եթե տակառ էր, պանրի վրա փայտե խաչ էին դնում և քարով ծանրացնում, որպեսզի պանիրը աղաջրից դուրս չմնար: Այս վիճակում ջիվիլ պանիրը կարելի էր պահել 8-10 ամիս:

Երբ կաթը շատ էր թթվում կամ դեղ խառնելու և շերեփով պտտելու կանոնները խախտվում էին՝ կաթը կտրվում էր, և ստացվում էր վազնաթանման **փսոր** պանիր: Այն, նման լինելով վազնաթին, երբեմն խառնում էին նրա հետ և թաղում մոխրի մեջ: Գործածում էին նաև աղ ցանելով:

204 Հմմտ. ԱՀ, 6, էջ 225:

Ջիվիլ պանրից և փսորից անջատված շիճուկը նույն պղնձի մեջ շարունակում էին եփել երկար ժամանակ, որով վազնաթն անջատվում, երեսն էր ելնում: Շիճուկը լցնում էին նաև բարակիրան կարասի մեջ և դնում բարկ թոնրի մեջ, որտեղ եփվելուց ևս վազնաթն անջատվում էր: Պղինձը թոնրից հեռացնելով, և կարասը թոնրից հանելով՝ շիճուկախառն վազնաթը լցնում էին շալե տոպրակի մեջ՝ քամելու[205]:

Քամված վազնաթը դատարկում էին քարսանքի մեջ, աղ էին ցանում և, աղի կամ անալի լինելն ստուգելուց հետո, կոխում կճուճը և թաղում մոխրի մեջ: Վազնաթի կճուճի բերանը կտոր էին կապում, կավով ծեփում և գլխիվայր իջեցնում էին 10 սմ հաստությամբ լցված մոխրի մեջ, որից հետո հարկ էր մոխրով ծածկել բոլոր կճուճները, որոնք թողնվում էին մի քանի ամիս: Վազնաթը պահածոյացվում էր, համեղանում և օգտագործվում:

Փռած կաթից քաշված սերուցքը ծափի մեջ մի քանի օր թթվելուց հետո խնոցիով հարում, կարագ էին ստանում: Հարում էին փայտե խնոցիով, մեկ հոգով՝ ոտքերով հրելով:

Գլուխ պանիր պատրաստելու համար բացառապես օգտագործում էին ոչխարի և այծի կաթ: Խաբվորների բերած կաթը քամում էին պղնձի կամ լայնաբերան տակառի մեջ, լցնում էին դեղն ու խառնում և բերանը ծածկում: Երկու-երկուսուկես ժամում **թմրած** կաթը դառնում էր **դալամա**: Այդ ժամանակ դալամայի մեջ կես կամ մեկ դույլ տաք ջուր էին լցնում և շերեփով հանդարտ խառնում, որով թույլ թմրվածքը դառնում էր մածուցիկ, և անմիջապես անջատվում էր շիճուկը: Այս վիճակին հասնելիս, պանիր պատրաստողը կտավե խիստ գործվածքով տոպրակն էր լցնում դալաման այնքան, որքան պիտի լիներ տվյալ կավե կամ թիթեղյա ամանի չափով գլուխ պանիրը: Լցնելուց հետո այն թեքությամբ դրված սեղանի վրա թեթևակի ճնշում էին ու շփում այնքան, մինչև որ շիճուկը բավական քամվեր և լցվեր սեղանի ստորին ծայրին դրված տաշտը: Այդ գործողությունը կատարվում էր տոպրակի մի անկյան մեջ հավաքված դալամայի վրա, որպեսզի դյուրին լիներ պանիրը ձևավորել: Որքան լավ էր քամվում, այնքան ավելի ճնշումն ուժեղացնում էին: Ընդ որում, տոպրակի ազատ մասը ոլորելով ճնշումն ավելացնում էին, որպեսզի շիճուկն ավելի լավ քամվեր:

Երբ քամումը բավարար աստիճանի էր հասնում, տոպրակով հանդերձ պանիրն իր սուր ծայրով դնում էին կավե կամ թիթեղյա ձևավոր կամ ծակոտկեն ամանի մեջ՝ սրա տակի ու կողքի ծակերով շիճուկը քամելու համար: Կարճ ժամանակ անց վարպետը հանում էր տոպրակից և նորից տեղավորում նույն ամանի մեջ, այս անգամ՝ հակառակ կողմով: Քանիցս կրկնում էին այս գործողությունը, և պանիրը երկու կողմից միանման ձև էր ստանում: Այնուհետև վարպետը նույն ձևով պանիր էր պատ-

205 Տոպրակի վազնաթը քամվում էր 10-12 ժամ, կախված վիճակում: Դրանից հետո տոպրակի բերանը կապում ու դնում էին հարթ քարին, տախտակը դնում էին վրան, իսկ սրա վրա՝ ծանր քար, որով շիճուկը շարունակում էր քամվել ևս 12 ժամ անընդմեջ:

բաստում մնացած դալամայից և ձևավորում նկարագրված ձևով: Երբ պանրի բոլոր գլուխները ամանների մեջ էին լինում, մի ընդհանուր տախտակ որոշ բարձրության վրա կախում, և ամանները շարում էին վրան, որպեսզի 24 ժամ ևս շարունակվեր քամումը: Այնուհետև պանիրն իջեցնում էին տակառի աղաջրի մեջ[206]:

1898-ին Ախալքալաքում Սարգիս Եսայու Աբովյանը, ով ծագումով լոռեցի էր, հիմնել է կաթնամշակության ֆերմա[207]: 20-րդ դարի սկզբներին նման ֆերմաներ ունեին Անրո, Նիկո և Սարո Մարոյան եղբայրները, որոնց գերդաստանը հարյուրավոր ոչխարներ և 100-ից ավել կով էր պահում: Գերդաստանն ուներ իր ամառանոցը, որը գտնվում էր Ագանայի և Ալաթումանի սահմանների մոտ: Այստեղի շինություններում տեղադրել էին սերզատ և կաթնամշակության այլ հարմարանքներ ևս: Խնոցին պտտվող սարք ուներ: Գերդաստանի ֆերմայում կովերն ու ոչխարները կթում էին վարձու կանայք, որոնց ղեկավարում էին երկու տանտիկինները:

Փոքր Խանչալլիում 1910-ական թվականներին ոչխարի գլուխ պանրի ֆերմա հիմնել էր նաև շուրջ 1000 ոչխար ունեցող Մաթևոս Իսպիրյանը:

Աշնանային պահվածք: Աշնան ցրտերին տավարը և ոչխարը լեռներից տեղափոխում էին ցածրադիր վայրերը: Աստիճանաբար տեղափոխվում էին նաև ամառանոց չբարձրացած գյուղերի հոտերն ու յոզերը՝ ընտրելով տաք ձորերն ու ժայռատակերը:

Սարերից իջնելուց հետո էլ տավարը և ոչխարը դեռ երկար ժամանակ արածեցնում էին դրսում: Երբ գիշերվա ցրտին այլևս չէին դիմանում, յոզը և նախիրը կապում էին ներսում, իսկ ոչխարը շարունակում էր մակաղել: Եվ երբ ոչխարը նույնպես սկսում էր մրսել, քշվում էր փարախ:

Գառ-վարձի հավաքումը տեղի էր ունենում ամառանոցից վերադառնալուց մեկ ամիս անց: Կողմերի սահմանած պայմանի համաձայն ոչխարատիրոջն իրավունք էր վերապահվում հինգ[208] ընտիր գառ առանձնացնել, որից հետո միայն հովիվը մնացածներից ընտրում էր լավագույնները: Հավաքելով մի տեղ՝ հովիվներն, ընկերների թվին համապատասխան, գառնախմբեր էին կազմում և չոփով վիճակ գցում՝ կատարելով այն 9-10 տարեկան երեխայի ձեռքով:

Հովիվների և տավարածների կողմից նախիրը կամ ոչխարի հոտն արածեցնելու

206 1970-ական թթ. կաթնամթերքների պատրաստման ձևերը անհատական տնտեսություններում պահպանվում են, բայց կաթ փռելու և սերուցքը հավաքելու եղանակին փոխարինել է սերզատ մեքենան: Իսկ գլուխ պանիր պատրաստելու սովորությունը պահպանվում է կաթնայուղային գործարաններում:

207 Տես ՀՍՀ, հ. 1, Երևան, 1974, էջ 34:

208 Ջավախքի տարբեր բնակավայրերում, կապված նաև ոչխարատիրոջ գառների քանակից, թերևս հեղինակի նշած գառ-վարձի համար ոչխարատիրոջ առանձնացրած գառների կոնկրետ 5 թիվը պետք է որ հաստատուն թիվ չլիներ ողջ Ջավախքի համար (Կազմողի ծանոթագրումը՝ Ռ. Ղ.):

դաղարեցումը հայտնի էր **թափել** անունով **(էսօր նախիրը թափեցին)**: Բայց թափելը կատարվում էր աստիճանաբար: Առաջինը թափում էին հորթերը՝ **հորթընթող** անունը ուներ: Երկրորդը՝ նախիրը՝ **նախըրթող** և երրորդը՝ ոչխարը՝ **օչխըրթող** անունով էին կոչվում:

Նախըրթողից և օչխըրթողից հետո մի տեսակ վերականգնվում էր անհատական արածեցման ձևը: Դրանից հետո հորթերն այլևս արոտ չէին տարվում, իսկ տավարի և ոչխարի հետագա արածեցումը կազմակերպվում էր այսպես. լծկանը շարունակում էին արածեցնել պատանիները, տավարը հանդ էր տարվում ընկերակցությամբ (իրար հետ միանում էին 5-10 տուն և անասունների գլխաքանակի հաշվով հերթով արածեցնում էին), իսկ այն ընտանիքները, որ արածեցնող չէին ունենում, վճարում էին դրամով: Ընդ որում, արածեցնողը անասունի կորստի դեպքում պատասխանատու էր լինում: Պատասխանատու էին նաև ընկերակցողները:

Ոչխարը նույնպես ընկերովի էին արածեցնում. 2-3 ունոր կամ 5-10 միջակ տներ միավորվում էին և հերթով, ըստ ոչխարի գլխաքանակի, տանում արոտ:

Խոյ ունենում էին 20-ից ոչ ավելի մաքի ունեցող բոլոր ընտանիքները, որից էլ օգտվում էին սակավ թվով ոչխար ունեցողները: Նոյեմբերին խոյը խառնում էին ոչխարին՝ **ղոչը խառնել** անվանումով: Այդ ամիսը կոչվում էր **ղոչի ամիս**: Խոյը ոչխարին խառնելիս հատուկ ծիսակատարություն էր տեղի ունենում. նրա **գլուխը խաչաձև ներկում էին կարմիր ներկով: Ներկում էին նաև մեջքը՝ մեկ-երկու տեղ:** Որպեսզի խոյից ծնված բոլոր գառներն էլ էգ լինեին, նրա մեջքին մի աղջնակ էին նստեցնում և ման ածում:

Շատերը ոչխարի բեղմնավորման ողջ սեզոնի ընթացքում խոյին հատուկ էին կերակրում, տուն բերելիս անմիջապես առանձնացնում և ընտիր խոտ ու հարդով գարի էին տալիս: Իսկ առավոտյան նրան 3-5 հում ձվի պարունակություն էին խմեցնում:

Երբ տվյալ օրը մերձավորվում էր հարևանի մաքին, խոյը պետք է նրա հետ գիշերեր, ուստի ոչխարատերը նրան նշված ձևով կերակրելու պարտավորությունն ուներ:



ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Մինչև 19-րդ դարի 50-ական թվականները Ախալքալաք և Ախալցխա քաղաքները գլխավոր արհեստների գծով պահպանում էին արտադրության հին ավանդներն ու եղանակները, իսկ գյուղը՝ տնայնագործության այն ճյուղերը, որոնք կապված էին հողագործության, անասնապահության, կաթնատնտեսության և գյուղական կենցաղի այլ բնագավառների հետ: 1860-1870-ական թվականներին, սակայն, ռուսական արդյունաբերական ապրանքների և տեխնիկայի աստիճանական տարածման ազդեցության ներքո Անդրկովկասի, այդ թվում նաև Ջավախքի, արհեստագործության մեջ նկատելի են դառնում որոշակի տեղաշարժեր: Եվրոպական և ռուսական ֆաբրիկա-գործարանային ապրանքների ներթափանցման հետևանքով Կովկասում մոռացվում են մի շարք տեղական արհեստներ, որով «ռուսական կապիտալիզմը Կովկասը ներգրավում էր համաշխարհային ապրանքաշրջանառության մեջ, համահարթում էր հինավուրց նահապետական ինքնամփոփվածության տեղական առանձնահատկությունները, իր գործարանների համար շուկա էր ստեղծում[209]»: Այս համահարթման շոշափուկները հասել էին նաև Ախալքալաք և Ախալցխա, որի հետևանքով այդ քաղաքներում, ինչպես կտեսնենք, առաջացել էին և՛ տեղական, և՛ եվրոպական ոճի զգեստների դերձակների, գդակ կարողների և այլ արհեստավորական խավեր: Գյուղական բնակավայրերում, սակայն, տնայնագործության մեջ երկար ժամանակ հարատևում էին համայնքային հարաբերությունների վերապրուկները, որոնք էին՝ համագյուղացիների համար փոխադարձորեն ձրի գործիքներ ու իրեր պատրաստելն ու տրամադրելը, զգեստներ կարելը, բուրդ գզելն ու մանելը, ասեղնագործելը և այլն:

Տնայնագործության մեջ մտնում էին բրդի մշակումը, շալագործությունը, թաղիքագործությունը, գորգագործությունը և կարպետագործությունը, դերձակությունը, կաշվի մշակումը, խեցեգործությունը և այլն, որոնց նկարագրությանը կանդրադառնանք առանձին-առանձին: Ջավախքի գյուղական տնայնագործները և արհեստավորները, տեղերում աշխատելուց բացի, շրջում և աշխատում էին նաև մոտիկ ու հեռավոր գյուղերում: Այսպես, պայտարները սեփական գյուղերին սպասարկելուց բացի, աշխատում էին նաև հարևան գյուղերում՝ դրանց տնօրինության հետ նախօրոք պայմանավորվելով: Այս կերպ պայմանավորվելը **գեղ բռնել** էր կոչվում, և մեկ ուրիշ պայտար այդ գյուղում աշխատել չէր կարող: **Գյուղ բռնելու** սովորություն ունեին նաև վարսավիրները: Իսկ մյուս շրջիկ արհեստավորներն անարգել մուտք էին գործում ցանկացած բնակավայր:

Բրդի մշակմամբ զբաղվում էր իգական սեռը, եթե նկատի չունենանք ոչխար խուզելը: Բրդի մշակման բոլոր միջոցները, բացի ճախարակներից, ամբողջապես հասարակ ու պարզունակ էին: Իլիկով մանելը, ինչպես նաև հյուսել-գործելու գրեթե

209 Ժամանակի մարքսիստական գրականությունից և ռուսական բոլշևիկյան մամուլի նյութերից:

բոլոր եղանակները և գործիքները հայտնի էին հնագույն անցյալից: Ոչխար խուզելու մկրատին Բարձր Հայքում և Ջավախքում 19-րդ դարի վերջերին փոխարինել է եվրոպական մկրատը: Հին մկրատը, որը մեզ էր հասել վաղ ժամանակներից, բաղկացած էր երկու մասից, և դրանով խուզում էին երկու ձեռքով: Իսկ եվրոպականը, որը գործում էր դերձակի մկրատի սկզբունքով, աշխատավորության մեջ լայնորեն տարածվելով՝ դուրս մղեց հինը:

Բուրդը թակերով լվացվում էր գետափերին և աղբյուրների մոտ:

Բուրդը գզելու գործիքներն էին սանդերքը և անեղը: Սանդերքով աշխատում էին կանայք, իսկ անեղով՝ տղամարդիկ: Սակայն Ջավախքում անեղ գործածողները հազվագյուտ էին: Որոշ վայրերում դրանով կանայք էլ գզում էին կարճ բուրդ, չոփ, մազ և տֆտիկ:

Սահմանափակ քանակությամբ բուրդը գզում էին տան կանայք և աղջիկները: Իսկ մեծ քանակությամբ բուրդ ունեցողները գզող աղջիկներ ու հարսներ էին հրավիրում ազգական և հարևան ընտանիքներից: Նրանց թիվը երբեմն հասնում էր նույնիսկ 30-ի: Այդ հավաքը **մաճի**[210] էր կոչվում:

Բուրդ մանելու միջոցները 3 (երեքն) էին՝ հնագույն մանիչ **քարմանը**,[211] իլիկը և ազգային ճախարակը: 20-րդ դարի սկզբներին Ռուսաստանից մուտք էր գործել նաև եվրոպական ճախարակը, որն էլ կարճ ժամանակամիջոցում դուրս մղեց տեղականը:

Իր պարզությամբ հայտնի մանիչն էր իլիկը՝ կազմված **գնդից, պոչից** և **ճեռից**: Գունդը պատրաստվում էր փայտից և ոսկրից: Մանելիս օգտագործում էին փոքրիկ, գոգնոցաձև կաշվե **փոստալ**, որը կախում էին աջ կողքից ցած՝ իլիկը նրա վրա դյուրությամբ պտտեցնելու և միաժամանակ, հագուստը պաշպանելու նպատակով:

Խ. Ա. Վերմիշևը հավաստում է, թե Ջավախքի տնայնագործության մեջ ամենակարևոր բնագավառներն էին շալագործությունը, գորգագործությունը, թաղիքագործությունը և այլն: Նա հատուկ ուշադրություն է դարձնում Հեշտիայի և Ուճմանայի տնայնագործների վրա, որոնք ամենանշանավորներն էին հատկապես թաղիքագործության ու կարպետագործության արտադրության մեջ: Այս գյուղերում և Ախալ-

---

210 **Մաճի-մէճի**, արաբ. բառացի **գալուստ** է նշանակում: Իսկ Ջավախքում դա նշանակում էր բուրդ գզող կանանց և աղջիկների խումբ: Այլ վայրերում էլ պահպանված էր **գեղտուն** տերմինը՝ **բուրդ գզելու տուն** պարզ նշանակությամբ:
(Գանձայում երևույթը հայտնի էր **մըճի** անվանումով, որը երկրորդաբար ուղեկցվում, նաև ընկալվում էր աղջիկ տեսնել-հավանելու լավ հնարավորություն: Իմ Արշալույս՝ միջնեկ քեռայրիս համար ինձ՝ դեռևս մատնաչափ երեխայիս է հրահանգվել բուրդ գզող աղջիկներից ընտրություն կատարելու պատիվը, և ես մատով անսխալ ցույց եմ տվել իմ ապագա Լուսիկ քեռեկնոջը: Կազմողի ծանոթագրումը՝ Ռ. Ղ.):

211 Քարմանը մատիտի հաստության և 20-22 սմ երկարության ձողիկ էր: Պատանի հովիվները դրանով հաստ թելեր էին մանում: Աշխատանքը կատարվում էր քարմանն աջ ձեռքի մեջ պտտեցնելով և ձախ ձեռքով բուրդ մատակարարելով:

քալաքում կային գզրարներ,[212] որոնք, շրջելով, բավարարում էին ժողովրդի պահանջները, մասնավորապես թաղիքագործության գծով: Հեղինակի հավաստմամբ Ախալքալաքի, նաև Ախալցխայի հայերի մեջ գործվում էր երկու տեսակ շալ. լավագույնը **եռշալի** էր կոչվում[213], իսկ սովորականը՝ **չուլֆաշալի**[214]: Եռշալին գործում էին լավագույն բրդից, որին խառնում էին ցածրորակ մետաքս[215]: Իսկ սովորական շալի համար օգտագործում էին բոլոր տեսակի բրդերը:

Խ. Ա. Վերմիշևը Ջավախքի տնայնագործության և արհեստների վերաբերյալ հաղորդումներում նշում է, որ 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմի հետևանքով 1880-ական թթ. դրանք որոշ աշխուժություն ապրեցին: Յուրաքանչյուր տան մեջ կարելի էր տեսնել 2-ական գործվածքային դազգահ: Նույնիսկ Մաճատիայում և Մեծ Գյոնդուրայում յուրաքանչյուր ընտանիքում կար 4-ական դազգահ: Այդպիսի արտադրության շնորհիվ գյուղացիները դրսից ամենևին գնումներ չկատարելով, օգտագործում էին իրենց սեփական գործվածքները: Նրանք նույնիսկ **ալաջա** կոչված կիսամահուդը և գործվածքների մյուս տեսակները տներում էին պատրաստում:[216]

Շալագործությունը, Ե. Լալայանի հավաստմամբ, նույնպես արագ զարգացում ապրեց նշված ռուս-թուրքական պատերազմից հետո. «Շատերը,- գրում է նա,- միայն ման ու փոխ առնելով, ամբողջ գերդաստանի հանդերձը լիովին հոգում էին»: Սակայն, հենց պատերազմից հետո գյուղական հիմնական բնակչությունը, առավել կարևորություն տալով ֆաբրիկայի արտադրությանը, որոշ չափով թուլացնում է

212 Խ. Ա. Վերմիշև, նշվ. աշխ., էջ 182:

213 Եռշալին **գետնագործ** կոչվածն է, որից մեծ մասմաբ չուխա էին կարում: Այն գործվում էր գետնի վրա փռված ու ձգված վիճակում: Գործող կանայք երկու շաբաթ անընդհատ աշխատում էին ծնկաչոք դրությամբ:

214 **Չուլֆաշալի** կիսաթուրքացված բառն առաջացել է **ջուլհակի շալ** բառերի թարգմանությունից:

215 15 արշինանոց կտորի բրդին խառնում էին 1 գրվանքա վատորակ մետաքս: Եռշալիի արշինն արժեր 50 կոպեկից մինչև 1 ռուբլի, իսկ չուլֆաշալիի արշինը՝ 25-30 կոպեկ: Եռշալիի լայնությունը 8 վերշոկ էր, երկարությունը՝ 15 արշին (քաշը՝ 2 հոխա կամ 6 գրվանքա): Ջուլհակը դրա վրա աշխատում էր 15 օր: Չուլֆաշալիի լայնությունը 6 վերշոկ էր, երկարությունը՝ 16-18 արշին, քաշը՝ 8 գրվանքա: Ի դեպ, շալի լայնությունը կախված էր պատվիրատուի պատվերից: Վերնազգեստի համար նախատեսված շալի լայնությունը 6 վերշոկ էր, իսկ շալվարի համար նախատեսվածը՝ 8 վերշոկ, որը և շուկայի պահանջն էր, իսկ սովորական շալի լայնությունը 10 վերշոկ էր (անդ, էջ 185: Հմմտ. Խ. Ա. Վերմիշևի նույն աշխատության 188 էջը): Նշենք, որ 1920-ական թվականներին սովորական շալի 10 վերշոկ լայնությունը պահպանվում է նույնությամբ:

216 Խ. Ա. Վերմիշև, նշվ. աշխ., էջ 183:
Անդրադառնալով դուխաբոռների տնայնագործությանը, Խ. Ա. Վերմիշևը նշում է, որ այստեղ կապույտ և ավելի նուրբ շալ-մահուդ էին արտադրում, հակառակ հայկական շալ-մահուդի, որ առհասարակ շագանակագույն էր (անդ, էջ 185): Դուխաբոռների գործվածքները 4 տեսակ էին, որոնց նախընտրությունը կատարվում էր ըստ համապատասխան զգեստի և շորատեսակի ընտրության (անդ. էջ 187):

տնայնագործական շալի արտադրությունը: Այնպես որ, այլևս 19-րդ դարի վերջերին «...միայն դուխաբոռներն ու քրդերը շարունակում են իրենք պատրաստել իրենց բոլոր հանդերձների կտորները[217]»: Տնայնագործության այս ճյուղն իր հին դերի մեջ էր մինչև 1920-ական թվականների վերջերը: 1930-ական թվականների կեսերին շալագործությունը նվազեց և նույն տասնամյակների վերջերին լիովին վերացավ: Այս արհեստի երկար պահպանվելու հիմնական պատճառն այն էր, որ տղամարդկանց անդրավարտիքները, բաճկոնները, չուխաները, երբեմն արխալուղները, ֆարաճիկները, կանանց աշխատանքային դռվրերը (փեշ), նաև գոգնոցները, երբեմն էլ խրխաները կարվում էին շալից: Երեխաների վերնազգեստներն էլ հաճախ շալից էին կարվում: 1930-ական թվականներին գյուղ թափանցեցին արդյունաբերական արտադրության հագուստներ, որոնք աստիճանաբար դուրս մղեցին շալե հագուկապը:

Ավելի նուրբ կտավի վերաբերյալ որոշ տեղեկությունները դարձյալ ստանում ենք Խ.Ա.Վերմիշևի միջոցով: 1880-ական թվականների կեսերին նա հիշատակել է **բյազի** կամ վերջինիս նման գործվածքի մասին, ասելով, թե բյազ գործելու համար գյուղացիները բամբակ էին գնում և թել մանում, թելը շուկայում ավելի թանկ վաճառելով՝ նորից հավելյալ դրամով բամբակ էին գնում և, այս ձևով փոքր բամբակ ձեռք բերելով, օգտագործում էին տարբեր գործվածքների համար[218]: Ե. Լալայանը նույնպես վկայում է, թե գյուղական կանայք «գործում են տեղական բրդից կտավ[219]»: Տնայնագործության մեջ կարևոր նշանակություն ուներ հայերի հնամենի հյուսվածքագործությունը, որ այսօր էլ կատարվում է ճաղերով ու հելուններով: Այս երկու գործիքներն էլ պատրաստվում էին երկաթե բարակ ձողիկներից: Ճաղի հինգ ձողիկներով գուլպա, հողաթափեր, թևնոցներ, ձեռնոցներ էին գործում և հելունով՝ թիկնոց շալ, կարճ վերնազգեստ, վզնոց (շարֆ), տաք հագուստներ և այլն:

Ինչպես երևաց, Ջավախքում ջուլհակությունը 19-րդ դարի վերջերին ուներ անհատական-ընտանեկան արտադրության բնույթ: Մինչդեռ Ախալցխայում այդ նույն ժամանակամիջոցում տնտեսագետ Խ. Ա. Վերմիշևը դիտել է այդ արհեստի մասնագիտացման ձևավորումը[220]:

---

217 Ե. Լալայան, **Ջավախք** (ԱՀ, 1, 1896, էջ 211-212): Ընդհանուր առմամբ ոստայնանկությամբ պարապողների թիվը 1885-1889 թվականներին Լալայանը հաշվել է 4528 մարդ, միջին հաշվով՝ 906 մարդ (նույն տեղում, էջ 212):

218 Ըստ Վերմիշևի՝ բյազանման կտավը գործվում էր բոլոր գյուղերում: Այդ գործվածքի լայնությունը 7-8 վերշոկ էր և երկարությունը՝ 16 արշին, որի համար պահանջվում էր 4,5 ֆունտ բամբակ: Բյազի արշինն արժեր15 կ.. իկ ամբողջ կտորը՝ 2ռ. 40 կոպեկ (Խ. Ա. Վերմիշը, նշվ. աշխ., էջ 183-184):

219 Ե. Լալայան, նշվ., աշխ. (ԱՀ, 1, էջ 211): Կ. Գրիգորովը 1893-ին հաղորդել է, թե միայն Կարծախ գյուղում գործվածքի արհեստով զբաղվում էին 50 տղամարդ և 5 կին: Բացի դրանից այստեղ 120 կին զբաղվում էր կավագործությամբ, 22 տղամարդ՝ փայտագործությամբ և 97 կին՝ կողովահյուսությամբ (Կ. Գրիգորով, Կարծախ գյուղը, **ՍՄՕՄՊԿ**, թող. 17-րդ, Թիֆլիս, 1893, էջ 96):

220 Խ. Ա. Վերմիշև, նշվ. աշխ., էջ 182-183:

Շալագործության դազգահը **շալի հոր** էր կոչվում, որը կրկնում էր Հայաստանի բոլոր նահանգների ջլկահորերի կառուցվածքը և չափերը: Նույնն էին նաև նրա ասպն ու սանրը, մանճուկն ու մյուս մանրամասները:

Շալի հոր անունը ծագել է նրանից, որ խոր անցյալում շալագործի ոտքերով գործվող սարվածքը գետնափոր տեղում էր հաստատվում, և այդ իսկ պատճառով էլ անշարժ էր մնում: Իսկ 19-20-րդ դարերում բոլոր դազգահները դրվում էին հողե կամ տախտակե հատակի վրա և շարժական էին:

Շալագործները հիմնականում կանայք էին, բայց փոխնիփոխ գործում էին նաև տղամարդիկ: Կողմնակի մարդիկ օգնում էին հինելիս, մանճուկը լցնելիս և այլ դեպքերում: Շալից, որ սովորաբար միագույն էր լինում, կարում էին ցանկացած զգեստ: Ոմանք կանանց աշխատանքային զգեստացու սպիտակ շալի եզրերին կամ միջին մասերում սև շերտեր էին պատվիրում: Իսկ ամենօրյա և տոնական զգեստներ կարելու համար գործում էին զարդարուն շալ: Դրա համար հենքին սպիտակ, սև, գորշ և կարմիր թելերով շերտեր էին անում և փորը (մեջը) գցում տարբեր գույնի թելեր՝ համապատասխան լայնությամբ քառակուսիներ ստանալով: Այդպիսի շալը հիմնականում գործվում էր նուրբ մանվածքներից:

Շալ լմել: Բրդից գործված շալը առանց վերամշակման չէր կարող հագուստի նյութ դառնալ: Այն պետք էր տաք ջրով թրջել և երկար ժամանակ տրորելով խտացնել: Եվ այդ երևույթը **շալ լմել** էր կոչվում:

Լմելու ավելի հարմար ձևը երկու հոգով (ոտքերով) տրորելն էր, որը կատարվում էր գոմասենյակի տախտակե բազմոցի վրա: Տախտակե բազմոցը պատին հենվող բազրիք ուներ: Դրանից 40-45 սմ հեռու և զուգահեռ կանգնեցնում էին մի այլ բարձր տախտակ, որով առաջանում էր յուրօրինակ արկղ: Նրա մեջ, իրար դիմաց նստողների համար, փափուկ հենարան-նստարաններ էին ստեղծում ծալված կարպետներից և թաղիքից այնպես, որ նստողների ոտքերը հասնեին իրար: Շալվարները մինչև ծնկները քշտած երիտասարդները բոբկանում, թեքությամբ նստում էին այդ արկղի մեջ, մեջտեղում ունենալով տաք ջրում թրջած ու կիսաքամ արած շալի գունդը: Այնուհետև հերթով նախ նրանցից մեկն էր ոտնաթաթով այդ զանգվածը գլորելով հրում ընկերոջ կողմը, վերջինս էլ իր ընդունածը կրունկով գլորում-հրում էր ներքև՝ դեպի ընկերը: Ապա գործն սկսողն այս անգամ մյուս ոտքով էր հրում շալի գունդը, և դիմացինն ընդունածը մյուս ոտքով էր կրնկահար անում, հրում մյուսի կողմը: Այս գործողությունը շարունակ և անընդհատ կրկնվում էր, և շալագունդը չորս ոտքերի մեջ գլորվում ու գլորվում էր: Այնպես որ, շարժումն ընդունում էր գրեթե մեքենայական բնույթ: Որպեսզի տրորվող շալն ավելի արագ լմվեր, զանգվածին ոտնահարվածներ էին տալիս մրճաձև թակի նման: Սա զգուշություն էր պահանջում, որպեսզի ոտքերով դիմացինի ոտքերին չհարվածեին:

Մոտ 45-50 րոպե լմելուց հետո, ընդմիջում էին անում, իսկ տանտերը շալը նորից

թրջում էր տաք ջրի մեջ, և լմելու գործողությունը արդեն շարունակում էր հաջորդ զույգը:

Լմողները, որ հրավիրվում էին ազգական և հարևան ընտանիքներից, լինելու էին առնվազն 2-3 զույգ: 20-25 արշին շալի լմումը տևում էր ակրաստից մինչև էտընք-վան: Գործն ավարտելուց հետո տանտերը շալը մի անգամ ևս տաք ջրով թրջում էր, քամում և սեղան-տախտակի վրա բարակ գլանով գլանում: Փաթաթում-գլանումը կատարելիս նա իր քշտած բազուկներով գլանը հետ ու առաջ գլորելով՝ միաժամանակ տրորում, բազուկներով հարվածում, լմումը լրացնում էր, եզրերն ուղղում, կոկում, ձգում, որպեսզի գլանի եզրերը լիովին հարթ լինեին: Գլանողին օգնում էր մի ուրիշ տղամարդ՝ դիմացը նստելով ու շալը ձիգ պահելով: Սեղանի վրա այս վերամշակումը հայտնի էր **բազկըլումք** անունով:

Գլանված թաց շալը այդպես պահում էին երկար ժամանակ և հաջորդ առավոտյան բացում, պարանից կախում ու չորացնում էին:

Բացի նստած լմելուց, կար շալ լմելու մի ավելի հին ու դժվարին եղանակ: Դա **գռով շալ լմելն էր**: Գուռը երեք-չորս մետր երկարության տաշտաձև հարմարանք էր՝ շինված երեք տախտակից: Տակը (հատակը) ատամնավոր էր: Կողերը հաստ տախտակներ էին: Սրանց ծայրերն ունեին մեկական գոտի, որոնցով ամրանում էին: Հատակի լայնքը 35-40 սմ էր, բերանինը՝ 50-55 սմ: Ծայրերը բաց էին:

Գուռը թեք դիրքով հենում էին գոմի առորմիին, իսկ ստորին ծայրին դեմ էին տալիս ծանր քար, որ աշխատանքի ժամանակ անշարժ պահեր:

Առորմիի վրա, գռի աջ ու ձախ անկյունամասերին մոտիկ, երկաթե օղակներ էին գամում, որոնք մշտապես ծառայում էին նույն նպատակին: Պարանի մի ծայրը կապում էին աջ, մյուսը՝ ձախ օղակին: Ստացվում էր երկտակ պարան, որի ստորին ծայրը պիտի մոտենար գռի ստորին ծայրին: Պարանը շալ լմողի համար էր: Երբ շալի զանգվածը տաք ջրում թրջվելուց հետո գցում էին գռի մեջ, լմողը, բոբիկ ու ոտքերը քշտած, մտնում էր գռի մեջ ու բռնում չվանի օղակից: Աջ ձեռքով կառչում էր օղակի աջ թևին, ձախով՝ ձախ թևին: Եվ, մերթ աջ ու մերթ ձախ ձգելով, լմողը շալագունդը, ոտքերով տրորելով, հրում էր վեր: Հասցնելով վերին ծայրը՝ լմողը, ոտնատակերին տրորելով շալի զանգվածը, աստիճանաբար այն ցած էր բերում: Տրորելով ու խփելով, չվանից կախվելով՝ նա հասնում էր ելքի մոտ ու այստեղից, շալը կրկին հրելով վեր, բարձրացնում էր այն՝ նորից ու նորից կրկնելով նույնը: Չվանի օղակաձևությունը նրա համար էր, որ բարձրանալիս և իջնելիս, ձեռնափոխ անելու ժամանակ, շալի զանգվածը լմողի ձեռքից վայր չընկներ:

Այս լմելածևի ժամանակ, նայած շալի քանակությանը, աշխատանքի էին հրավիրվում ուժեղ պատանիներ, որպեսզի նրանք տան տղաների հետ կազմեին 7 զույգ: Հրավիրվածները չէին վարձատրվում, բայց 2-3 անգամ, սրտալի ու առատասեղան, հյուրասիրվում էին: Որպեսզի շալը չսառեր, և աշխատանքը նպատակային ընթա-

նար, հոգնող զույգերն անմիջապես փոխարինվում էին նորերով: Շալը չորանալիս երբեմն-երբեմն տաք ջուր էին ցողում, որպեսզի խտացումն արագանար:

Լմումն ավարտելուց հետո, վերոհիշյալ ձևով **բազկըլումք** էին տալիս: Աշխատանքը տևում էր 6-7 ժամ, եթե, ասենք, լմվում էր 10-12 արշին շալ:

Մինչև 5 արշին շալը, որից գոգնոց էին կարում, եռման ջրում թրջում, քամում և լմում էին այսպես. տղամարդը, երբեմն նաև կինը քթոցը թեք կործում էր, տակի մասը հենում էր փորին և շալը մերթ աջ ձեռքով, մերթ ձախով տրորելով, իջեցնում ու բարձրացնում էր: Ժամանակ առ ժամանակ կամ էլ հանգստից հետո շալը նորից էին թրջում տաք ջրում՝ կրկնելով անհրաժեշտ գործողությունը: Ավարտում էին՝ բազկըլումք տալով: Աշխատանքը տևում էր 3-4 ժամ:

Ջավախքի ազգաբնակչությունը, գյուղերում և քաղաքներում համատարած, գորգագործական արհեստն ու արվեստը էապես իր հետ բերել, մուծել էր այստեղ Կարնո նահանգից: Ջավախքցու բարբառում **գորգ** բառի փոխարեն այսօր էլ գործածվում է **խալի** բառը: Բրդաթելերն անցյալում ներկում էին բուսական ներկերով: 19-րդ դարի վերջերից օգտագործում էին նաև քիմիական ներկեր[221]: Բոլոր դեպքերում գորգի համար ընտրվում էր ոչխարի գարնան բուրդը: Կանայք գորգը գործել և այժմ էլ գործում են տորքի վրա: Անցյալում գորգը մեծ մասամբ պատվերով էին գործում, իսկ ոմանք էլ գործում էին և վաճառում: Գորգագործը երբեմն գորգի ծայրին թողնում (գործելով գրում) էր տիրոջ կամ էլ գործողի անունը:

Կարպետը և բրդե պարկերը պատրաստում էին միևնույն տորքի վրա: Աշխատանքը հիմնականում կատարվում էր կանանց ձեռքով: Յուրաքանչյուր մեծ գյուղում մեկից ավելի կարպետագործ էր լինում: Կարպետագործ ընտանիքները մեծ մասամբ կատարում էին հարևանների պատվերները: Եվ վարձն էլ հաճախ տրվում էր բնամթերքով: Ինչպես գորգերը, կարպետներն էլ գործողները երբեմն վաճառում էին:

Ըստ որակի՝ կարպետները ևս տարբեր էին լինում: Կային գորգի բարդ զարդանախշերով կարպետներ, որոնց գույները մեծ մասամբ ընտրվում էին կարմիրի տարբերակներից: Գույների գամմայում ներկա էին լինում նաև սևը, կապույտը, սակավ՝ դեղինը: Առհասարակ հայկական մեր գորգի հիմնագույնը մուգ-բալագույն կարմիրն է համարվել, կարմիր գույնը՝ իր թունդ, վառվռուն, թերևս նաև խամրուն-անփայլ նրբերանգների մեջ:

Երկրորդ կարգի հասարակ կարպետները զոլավոր էին լինում. իշխող գույներն էին սևն ու սպիտակը: Սրանց բուրդը նույնպես երկրորդ կարգի բուրդ էր լինում:

---

221 Քաղաքում, ուր կային հմուտ ներկարարներ, օգտագործում էին միայն քիմիական ներկեր: Դրանց օգտագործումը հավանորեն սկսվել է ավելի վաղ՝ 19-րդ դարի կեսերին: Գյուղերում այդ ներկերը տարածողները փերեզակներն էին: Խ. Ա. Վերմիշևը 1880-ական թվականներին հիշատակել է գորգեր, որոնք 4x1,5 արշին մեծություն են ունեցել՝ 15 ռուբլի արժեքով (Խ. Ա. Վերմիշև, նշվ. աշխ. էջ 188):

Երրորդ և փաստորեն ամենահասարակ կարպետը գործվում էր հասարակ բրդից կամ բրդի ու չոփի խառնուրդից:

Թեև կարպետի նյութը հիմնականում բուրդն էր, բայց առանձին դեպքերում օգտագործում էին նաև գնված էժանագին բամբակը: Գորգի և կարպետի գործվածքով գործվում էին նաև անկողնապարկեր և խուրջիններ:

Տնայնագործության մեջ կարևոր տեղ էր զբաղեցնում խեցեգործությունը, որը մինչև մեր օրերը պահպանել է Կարնո և Մշո կիրառական արվեստի ավանդական ոճերը:

Խեցեգործությունը նույնպես հիմնականում ստեղծվում էր կանանց ձեռքի աշխատանքով: Մինչդեռ դուրգով աշխատանքը, կարելի է ասել, աննշան տեղ էր զբաղեցնում:

Արհեստների մեջ ամենազարգացածը մետաղագործությունն էր՝ երկաթի մշակումը, պղնձագործությունը, ոսկերչությունը, անիվագործությունը, պայտար-նալբանդությունը և այլն: Երկաթի մշակման գործում առաջատարը դարբնությունն էր, որը հիմնականում կենտրոնացած էր քաղաքում և սպասարկում էր գյուղերին նույնպես: Դարբնոցներ ունեին նաև քաղաքից հեռու գտնվող որոշ գյուղեր: Քաղաքում դարբնության հետ որոշակի կապ ուներ փականագործությունը՝ սառը մետաղի մշակումը:

Տնտեսական տեսակետից երկրորդ տեղն զբաղեցնում էր պղնձագործությունը, որի քաղաքային արհեստանոցները պատրաստում և նորոգում էին գավառի պղնձյա ողջ սարվածքներն ու ամանեղենը:

Քաղաքում էին գտնվում նաև սակավաթիվ ոկերիչները, ովքեր զբաղվում էին ոսկյա և արծաթյա ամեն տեսակ զարդերի և պերճանքի առարկաների պատրաստմամբ ու նորոգմամբ: Աստիճանաբար գյուղերում նույնպես, ըստ մշտական կարիքների և պահանջարկի, ի հայտ եկան տեղական ոսկերիչներ:

Ախալքալաքի արհեստակիցներն ունեին իրենց համքարությունները, որոնց մեջ առավել աչքի ընկնողը եղել է երկաթագործների միությունը: Բայց համեմատաբար սակավաթիվ լինելու իրողությունը Ախալքալաքի համքարական ընկերություններին դասական այն ուժն ու հզոր տեսակարար կշիռը չէր հաղորդում, ինչը, ասենք, ունեին Կարնո, Ախալցխայի, Գյումրիի համքարությունները:

Քաղաքում և մեծ մասամբ նաև գյուղերում լայնորեն տարածված էին շինարարական արհեստները՝ քարհատությունը, քարտաշությունը, որմնադրությունը, ատաղձագործությունը և այլն: Այս արհեստների հմուտ մասնագետների ձեռքով էին կառուցվում ամեն կարգի շենքերն ու շինությունները:

Թաղիքագործությունը: Ջավախքում թաղիքագործներ այնքան էլ շատ չկային: Այդ իսկ պատճառով էլ Մշո, Վասպուրականի, ինչպես նաև Ապարանի շրջիկ թաղիքագործները գալիս, ամբողջ ձմռանը թաղիք էին պատրաստում: Ժողովուրդը նրանց

քաչա թափող անունն էր տալիս[222]: Թաղիքի նյութը հիմնականում սպիտակ բուրդն էր: Ոմանք այն պատրաստում էին նաև սև կամ շագանակագույն բրդից: Սպիտակ թաղիքի վրա՝ սև և սև թաղիքի վրա սպիտակ բրդով նախշեր էին ձևավորում:

Գզումը տեղի էր ունենում գզրարարների ձեռքով, որ նույն թաղիքագործներն էին: Գզող գործիքը **անեղն** էր: Հսկայական թակով սիմետրիկ հարվածներ տալով՝ վարպետը թրթռացնում էր լարը, որը քրքրելով գզում էր բուրդը: Գզված բուրդը հետո մշակվում էր այսպես. թաղիքագործներն ունեին քաթանե, իսկ ավելի հնում՝ կտավից պատրաստված լայն ու երկար փռոց, որի վրա, ըստ պատվերի, փռում էին բուրդը հավասար հաստությամբ: Ապա բրդի վրա տաք ջուր էին ցնցուղում, որպեսզի խոնավությունը բրդաթելիկները իրար միացներ: Այդ գործողությունն ավարտելուն պես, վարպետները քաթանով ծածկում էին փռվածքը և գլանում էին:

Գլանումը կատարում էին 10 սմ հաստության փայտե գլանի վրա՝ մի քանի հոգով: Գլանը հաստանում և հասնում էր 25-30 սմ հաստության: Ապա այն կապում էին բարակ պարանով այնպես ամուր, որ բուրդը չտեղաշարժվեր: Պատրաստի գլանն այնուհետև, ոտքերով ու փայտե մրճաձև թակերով ծեծելով, գոմի **տափներեսի** վրա, տանում-բերում էին աշխատող երիտասարդները: Այս գործի համար գործատերը հրավիրում էր համայնքից երիտասարդների, ովքեր, 15-20 զույգ կազմած, կեսօրից մինչև լուսադեմ բանում էին միանգամայն ձրի: Ծեծելը տեղի էր ունենում ահա այսպես. մի զույգը, միմյանց ուսերից բռնելով առջևից, հետ-հետ գնալով և մյուսը՝ ետևից դեպի առաջ գալով ոտնահարված էին տալիս: Ընդ որում, դասավորվում էին այսպես. առաջ մղողների միջև մտնում էր հետ գնացողներից մեկը, և բոլորը միասին աջ ոտքով տալիս էին առաջին հարվածը և ինչ-որ չափով գլանը գլորում առաջ: Հաջորդ անգամ հարվածում էին ձախ ոտքով և նույնչափ էլ այս անգամ էին մղում առաջ: Եվ այդպես, տափներեսի վրա մեկ ծայրից գլանը տանում էին դեպի մյուսը և այնտեղից էլ՝ հակառակ կողմը:

Վարպետն իմանալով, թե քանի անգամ գնալ-գալով կարող էր առաջին պրոցեսն ավարտվել, կապերը քանդում և թաղիքը բաց էր անում: Երեսին տաք ջուր ցողելով՝ վարպետն այս թույլ թաղիքի վրա տեղադրում էր բոլոր զարդանկարները և պատրաստման թվականը: Դրանք ևս թրջելով, վարպետը թաղիքը նորից էր գլանում, կապկպում և հանձնում էր թակողներին: Այս անգամ առաջ գնացողները հարվածում էին ոտքերով, իսկ հետ-հետ գնացողները՝ թակերով հարվածները տեղում

222 Թաղիքագործներից ոմանք հմուտ հեքիաթասացներ ու երգիչներ լինելով, երբեմն հանգստի երեկոյան ժամերին, գոմասենյակներում հավաքված բազմության առջև, սիրով և բավականությամբ ցուցադրում էին պատմողի և երգողի բնատուր իրենց արվեստը: (Դժվար է ասել, թե հատկապես գնի վրա ազդո՞ւմ էր ժողովրդական բանարվեստի այսօրինակ ինքնագործունեությունը, սակայն անկասկած էր, որ մեծ էր հետաքրքրասիրությունը, և մարդիկ լսում, թամաշա էին անում շունչները պահած (կազմողի ծանոթագրումը՝ Ռ. Ղ.):

էին այնպես, որ դրանք համաչափ ու միաժամանակ տեղի ունենան: Աշխատանքն այս ձևով շարունակվում էր հարվածող զույգերի անընդհատ փոփոխմամբ: Իսկ թաղիքագործները ժամանակ առ ժամանակ քանդում, թաղիքի թերությունները ուղղում, կրկին թրջում և կապում-կապկպում էին:

Խսիրագործություն: Խսիրը տներում, կենցաղում տարածված փռոցներից էր, որը փռվում էր մյուս փռոցների տակը՝ հողե կամ քարե բազմոցների վրա, խոնավությունը մեկուսացնելու նպատակով: Եվ այս իմաստով խսիրը միանգամայն գտնված ու անփոխարինելի փռոց էր:

Խսիրը գործում էին առանձնահատուկ մի խոտից, որը **ջիլ** էր կոչվում (այլ վայրերում, ինչպես, օրինակ, Գանձայում և նրա շրջակայքում՝ **ղրոնա**): Վերջինս առատորեն աճում էր լճամերձ ու գետամերձ ճահճուտներում, նաև՝ ջրարբի ու ջրամերձ տարածքներում: Ջիլի կանաչ, դալար ցողունները, սխալ քաշել-հանելու դեպքում, ձեռնափի մեջ սուր դանակի նման կտրվածքներ կարող էին առաջացնել: Հավաքած բույսը տեղափոխում էին թևշալակով կամ սայլով: Խրձերը չորացնում և խնամքով պահում էին առիքներում և ձմռանը խսիր գործում: Խսիրը հյուսում էին երկու ձևով. լավագույնը կեմե հենքի մեջ ջիլ միջադիր օգտագործելն էր, իսկ հասարակի միջադիրը նույնպես կեմ էր: Առաջինը փափուկ և շատ գեղեցիկ տեսք էր ունենում, մինչդեռ երկրորդը՝ անհամեմատ կոշտ:

Խսիր գործողները թեև կանայք էին, սակայն նրանց օգնում էին ջահել պատանիները կամ էլ տղամարդիկ[223]:

Ժապավենագործություն: Այս ասպարեզում նշանավոր էին տոնական գոգնոցի գոտի գործող կանայք: Մետաքսաթելից հյուսած այս գոտիներն օժտված էին գեղեցիկ, նուրբ ու զուսպ զարդապատկերներով և այն կրողներին ուղղված մակագրություններով:

Կանանց գուլպաներն ունենում էին ժապավենաձև նեղ կապիչներ, որոնք կանայք ու աղջիկները հյուսում էին իլիկի ճեռին ամրացրած մեկական շարք տարբեր գույնի թելերով:

Մազմանությունն իրականացնում էին յուրահատուկ ճախարակ ունեցող տղամարդիկ: Տարվա տաք եղանակներին շրջելով գյուղերը, մազմանները այծի մազից, տավարի պոչի մազից և բրդի տեսակներից պարաններ և սայլի ճոպաններ էին պատրաստում: Այս արհեստը վերացվեց 1930-ական թթ.: Իսկ ժողովուրդը մազմանության տնայնագործական ձևերը պահպանեց մինչև 40-50-ական թվականները՝ պատրաստելով հորթի պարաններ, ձի էրքելու չվաններ՝ 6 կամ 12 թելերով:

Օգտագործվում էին բրդի մնացուկները, այծի մազը և տավարի պոչի մազը: Հա-

223 Խսիրագործության վերաբերյալ մասնակի նկարագրություն է թողել Խ. Ա. Վերմիշևը (Նայել նշվ. աշխ., էջ 189):

սարակ չվանները հյուսում էին կնոջ մազերի նման, իսկ մյուսները, որ կատարում էին տղամարդիկ, կեմարներով ոլորում էին մի քանի հոգով՝ **ճոպան թափելով**:

Մաղագործություն: Ախալքալաքում և այլուր հաստատված մաղագործների ազգագրական հանգամանալից ուսումնասիրության համար պարտական ենք հայ գրող Վրթանես Փափազյանին[224]: Այդ ընդարձակ հետազոտության մեջ, սակայն, նա բուն մաղագործության վերաբերյալ ունի հակիրճ ակնարկ[225]: Մյուս բոլոր գործիքներն ու միջոցները տակավին չեն ուսումնասիրված: Ուստի մենք կաշխատենք մաղագործական գործիքները ներկայացնել որոշակի մանրամասնությամբ, նախապես նշելով, որ մաղագործները բացի մաղերից պատրաստում էին նաև տախտակե դույլեր, խոզանակներ, ձիթահանքերի մազե սալաներ, կողովներ, զամբյուղներ և քամիչ սալաներ: Վերջիններիս համար որպես հումք էին ծառայում հորթի կաշին, մորթիները, ձիու պոչի մազը, տախտակաթերթը և ծառաճյուղերը: Կաշին, մորթին և մազը[226] նրանք ձեռք էին բերում գյուղերում, ապրանքափոխանակության կարգով, իսկ տախտակաթերթը և պղնձե ձարի ցանցը գնում էին պատրաստի վիճակում: Ծառաճյուղեր հայթայթելու համար տղամարդիկ խմբերով մեկնում էին մերձակա անտառ՝ հումք հայթայթելու:

1930-ական թթ. կեսերին Երևան եկավ մաղացանցը խեմքին միացնելու նոր, դյուրին, բայց թերևս անորակ ձև, որի հետևանքով մեջտեղ եկան նաև նոր գործիքներ, որոնք հների հետ կներկայացնենք այստեղ:

Քյարգահ: Այսպես է կոչվում քարգահը, որն իրենից ներկայացնում է քառանկյունի շրջանակ՝ 70/85 սմ մեծությամբ: Սրան են միացվում մի շարք շարժական տարրեր, որոնցով քյարգահը վեր է ածվում այսպես կոչված ջլկահորի, որի վրա հինվում ու գործվում են մաղատեսակները: Վ. Փափազյանը քյարգահով աշխատանքը այսպես է նկարագրել. «...մաղագործը դրա վերին ծայրը կռթնեցնում է գետնի նեջ ցցված փայտին, ներքին ծայրը դնում ծնկների վրա: Հետո ձիու պոչի մազը չորս-չորս փունջ արած, պարզում է շրջանակի վերից մինչև ցած՝ իբրև հինվածք, իսկ երկաթե փոքրիկ կարթով երկու-երկու մազ անցկացնում է լայնությամբ, նրանց արանքով, ամրացնում որքան որ ինքը մաղի ծակերը ուզում է լայն կամ նեղ ունենալ և այդպիսով հյուսում էին մաղի ցանցը՝ երբեմն՝ սև, երբեմն էլ՝ գույնզգույն[227]: Հյուս-

224 Վ. Փափազյան, Հայ բոշաներ (ԱՀ, 3, էջ 74-90, 4, էջ 203-275):

225 Անդ, 4, էջ 226:

226 Գ. Վանցյանի հաղորդմամբ, բոշաները երբեմն գողունի քաշում էին այլոց ձիերի պոչի մազը (**Մուրճ**, 1892, 7-9): Վ. Փափազյանը դիտել է տալիս, թե բոշան գող չլինելով՝ նմանատիպ երևույթը առհասարակ պետք է համարել բացառիկ դեպք (ԱՀ, 4, էջ 229): Իրոք, վերջինս ճիշտ էր. բոշան գողությամբ անհրաժեշտ քանակությամբ մազ հավաքել չէր կարող, որպեսզի մաղեր հյուսեր: Գյուղացիներն, իմանալով բոշաների պահանջարկը, ձիերի պոչերից ընկած մազերը պահում էին և մաղերի հետ փոխանակում:

227 Մաղերը լինում են զանազան տեսակ. **փոկե մաղ**՝ կաշվե թելերից հյուսված, **մազե մաղ** և

վածքը, պատրաստած իր ուզած մեծությամբ, մի քանի անգամ քաշում է **ղասնաղի** (կլոր շրջանակի) վրա և ծայրերը գամում, որից հետո կիսովին այդ գամերի և փոքրինչ հյուսվածքի վրա դնում է թրջած ու մաքրած կաշի և վերին ծայրերից փայտյա գամերով ամրացնում ղասնաղի վրա: Մաղը պատրաստ է[228]»: Այնուհետև հեղինակը նշում է, որ մաղագործը օրական կարող է հյուսել 6-8 մաղ[229]:

Շաղափ: Քամանակի օգնությամբ (ծակիչ հնագույն գործիք), որով մաղագործները ծակում էին մաղի և դույլի խեմքերը: Այն ձեռք էին բերում դարբիններից կամ որոշ երկաթագործ բոշաներ իրենք էին պատրաստում:

Ղազաղու: Կլոր թաթով քերիչ, որի բերանի բոլոր կողմերը դանակի նման սուր են: Սրանով քերում էին հատակին կամ գետնին փռած հորթի կաշվի մազը. չոքում էին, աջ ձեռքով բռնում էին կոթից և ձախով՝ թաթից ու քերում՝ դեպի իրենց քաշելով:

Զինար: Երկաթե ճող, որի բարակ ծայրի կեռիկով խլում և դուրս էին քաշում փոկերը մաղերի խեմքերի անցքերից:

Բալնիք: Ոսկրե կամ փայտե փոքր ճողիկ, որով հյուսում էին քուջինը: Այսինքն՝ բալնիքը դրվում էր ալրմաղի մազի և ձարկապի վրա փաթաթվող թելի արանքը, որպեսզի հյուսվող քուջին թույլ մնար:

Ուշու: Երկաթե գործիք, որով քերում էին ուշուի տախտակի վրա փռված մորթիների ու հորթի կաշվի մսեղիքը՝ դեպի իրենց ձգելով:

Ուշուի տախտակ: Ընտիր փայտից կոկիկ տախտակ, որը թեքությամբ դնում, թրջած կաշին ու մորթին փռում էին դրա վրա և ուշուով քերում մսեղիքը:

Ղսաճ: Ընտիր փայտի երկու մասից կազմված գործիք, որով սեղմում էին իրար վրա դրված խեմքի ծայրերը: Սեղմումն ապահովելու համար սրա ստորին ծայրից մտցնում էին կաշվե քթլանկը և ամուր պահում, ապա շաղափով խեմքի իրար հենած ծայրերը ծակում էին ու փոկերով կարում իրար:

Հերուն: Պողպատե փշով ծակող գործիք, մաղի խեմքը ծակելու համար:

Իլիկ: Սովորականից մեծ իլիկ, որով մեկտակ ոլորում էին միայն փոկեմաղի թրջված փոկերը: Ոլորվող փոկը կծկում էին, որպեսզի ոլորքը պնդանար, իսկ մաղը գործելուց առաջ և գործելու ընթացքում կծիկը պահում էին տաշտակի ջրի մեջ:

Տաշտակ: Մետաղե փոքրածավալ աման, որի մեջ թրջոց էին դնում մաղերի փոկերը և դրանց կծիկները: Ընդ որում, միայն փոկե մաղի փոկերը իլիկով մեկտակ ոլորում էին, իսկ շատրարի և քարմաղի փոկերը չէին ոլորում, այլ միայն կծկում էին և գործում:

Մկրատ: Սրանով կտրատում էին փոկեր, կաշի, կտորեղեն, մորթի ևն:

ձարե մաղ՝ պղնձե նուրբ թելերից պատրաստած: Այս վերջինի հյուսվածքը մաղագործները պատրաստի գնում են (ԱՀ, 4, էջ 226):

228 ԱՀ, 4, էջ 226-227:

229 Անդ:

Կրկրոիկ դանակ: Կեռ ծայրով դանակ, որի գոգավոր բերանով կտրում էին ուռեր:

Դանակ ուղիղ քթով: Քթի վրա ուներ երկու ճեղք: Այդ ճեղքերից մեծով քաշում էին խեմքի վրա ծռված մեծ և փոքրով՝ փոքր մեխերը: Այս դանակը երևան է եկել 1930-ական թվականներին, փայտե գամերը վերանալու հետևանքով:

Սանդռ: Պատրաստվում էր սանրագործների ձեռքով, եղջյուրից, խոշոր, հաստ ատամներով: Դրանով բաժանում էին քյարգահի խտացած մազերը: Բայց այդ դեը հիմնականում կատարվում էր աջ ձեռքի բութ մատի եղունգով: Այդ պատճառով վարպետը իր եղունգը երկարացնում և հարդարելով հարմարեցնում էր իր գործին:

Երկաթե սալիկ, որը երևան է եկել 1930-ական թվականների կեսերին՝ մաղի խեմքի գամերը գնդացնելու համար: Վարպետն այն դնում է գոգը, գամում խեմքը, և, մեխի բարակ ծայրը ծալելով, ամրացնում մուրճով:

Մուրճ, որ նոր է գործածվում, խեմքերը գամելու համար:

Աքցան, որ նոր է՝ ծռված գամերը քաշելու համար:

Ահա այն արտադրամիջոցները, որոնցով պատրաստվում էին մաղի վերոհիշյալ պարագաները: Այդ աշխատանքների մեծ մասը, օրինակ՝ կողովահյուսությունը, զամբյուղագործությունն ու դույլաշինությունը, զուգահեռաբար և առավելապես հարատևում էին նաև գյուղական բնակավայրերում: Այնպես որ բոշաների համար վերջիններս ունեին երկրորդական նշանակություն, որովհետև դրանք նրանց ավելի ուշ յուրացրած զբաղումներն էին: Առհասարակ պետք է ընդունել, որ բոշաների բուն մասնագիտություն մաղագործությունը ևս ներմուծովի չի եղել: Մեր Տեր Հիսուս Քրիստոսին վերագրված ավանդության[230] պատմագիտական առումով խիստ արժեքավոր կողմն այն է, որ մաղագործությունը բոշաները ձեռք են բերել Հայաստանում և, հետևաբար, մինչև Հայաստան թափանցելը հնդկական[231] վաչկատուն այս ցեղը բոլորովին այլ զբաղմունքներ է ունեցել: Ինչը հաստատվում է նաև մաղագործության գործիքների անվանումներից, որոնք ամբողջովին տեղական են, հայերենի և հայացի լեզվամտածողության արգասիք:

Դերձակություն: Մեր գյուղերում յուրաքանչյուր ընտանիք ուներ բոլորի ներքնազգեստները կարող դերձակուհին, ով շարունակաբար պահպանում էր այդ հա-

230 Բոշաներն իրենց մաղագործական զբաղմունքը Քրիստոսատուր են համարում: Ավանդության համաձայն, երբ ժողովուրդները հավաքվում են Քրիստոսի մոտ արհեստ ստանալու, բոշաները ուշացած են ներկայանում: Քրիստոս Տերն այդ ժամանակ ասում է. «Դուք բոշին եկաք», այսինքն՝ վերջին, շատ ուշ, գրեթե բոլոր լավ արհեստները բաժանվել, պրծել են: Այս **բոշ** բառից էլ ծագել է իբր բոշաների նոր անունը: Տնայնագործությունից Քրիստոս Տիրոջ շնորհաբաշխության ներքո մնացել էր միայն մաղագործությունը, որն էլ Տերը, հանձնելով նրանց, հավաստել է՝ եթե նրանք սիրով աշխատեն, իր ձեռքը նրանց վրա կպահի:

231 Կարծում եմ՝ պատմագիտությունը, հայագիտությունը մասնավորաբար, հենց լեզուների խորքային փոխառնչությունների հիմքով, այլևս հակագիտական պետք է ընդունի ազգերի (տվյալ դեպքում՝ հնդկական վաչկատուն ցեղ) ու լեզուների սահմանազատման կեղծ, երբևէ և ոչնչով չհիմնավորվող տեսությունը: (Կազմողի ծանոթագրումը՝ Ռ. Ղ.):

գուստների ազգային ձևերը: Իսկ յուրաքանչյուր գյուղում 2-5 կանայք վերնազգեստների ձևարարներ ու կարողներ էին, որոնք իրենց հերթին պահպանում էին տեղական ազգային տարազի ձևերը: 20-րդ դարի սկզբներին աստիճանաբար գյուղ թափանցեցին երրորդ կարգի դերձակներ, որոնք արդեն մեքենայով էին կարում և գյուղական հասարակության մեջ վարձով զգեստներ կարելու սովորություն մտցրին: Յուրացրած լինելով քաղաքային տոնական զգեստների ձևերը՝ 1920-ական թթ. կերպարանափոխեցին պատանիների ու աղջիկների տարազ-հագուկապերը:

Մի այլ կարգ էին ներկայացնում մուշտակակարները, որոնք, բացի սեփական բնակավայրերից, սպասարկում էին նաև հարևան գյուղերը: Շրջելով գյուղերը՝ նրանք բնակվում էին ծանոթների տներում և իրենց ձեռքով աղն էին դնում պատվիրատուների մորթիները, վերամշակում էին, ներկում և կարում ինչպես սովորական մուշտակներ ու գլխարկներ, այնպես էլ թուլումբներ, որոնց դիմաց դրամական վարձատրություն կամ բնամթերք էին ստանում:

Ինչպես ցույց են տալիս ստորև ներկայացվող վիճակագրական տվյալները, Ախալքալաք քաղաքում 1860-ական թթ. կային երկու կարգի դերձակներ. առաջինները, ովքեր պահպանում էին **թարզի** կոչումը, զբաղվում էին տեղական տարազով, իսկ երկրորդները **դերձակ** էին կոչվում՝ եվրոպական նորաձև տարազով:

Խեցեգործություն: Կավի մշակումը և խեցեղեն պատրաստելու տնայնագործական արհեստը Ջավախքի գյուղական կարևոր զբաղմունքներից էր և լայն տարածում ուներ: Մինչև 1920-ական թթ. խեցեգործությունը պահպանված էր լիակատար կերպով: 1930-ական թվականներից, գործարանային ամանների տարածումով, տնայնագործության այս ճյուղն սկսեց նահանջել: Ամենից առաջ կենցաղից դուրս մղվեցին ափսեներն ու քարղանները, այնուհետև՝ եփելու և կարասու տեղ ծառայող ամանները: Այն ընտանիքները, որոնք տակավին օգտագործում են ավանդական թոնիրը, մասամբ պահպանում են կճուճները:

Ունենալով տնայնագործական բնույթ՝ խեցեղենի արտադրությունը կիրառվում էր երեք կերպ. առաջինը և ամենատարածվածը տնային արտադրությունն էր՝ սեփական սպառման նպատակով, երբ արտադրողները կանայք էին: Երկրորդը շրջիկ բրուտագործ տղամարդու ձեռքով տարբեր գյուղերում թոնիր պատրաստելն էր: Երրորդ եղանակը խեցեղենի ապրանքային արտադրությունն էր՝ աշխատանքում ընտանիքի նաև տարբեր անդամների ներգրավումով: Այդ տեսակետից աչքի էին ընկնում Ջակ և Թորիա գյուղերի կին բրուտագործները, որոնք թնդիր, կարաս, ծափ և կճուճ շինում և վաճառում էին: Կատարվում էր նաև ապրանքափոխանակում:

Ապրանքային արտադրության տեսակետից աչքի էին ընկնում նախ Ախալքալաքի, ապա՝ Ջակ գյուղի աղյուսի հասարակ գործարանները:

Բրուտները հիմնականում կանայք էին, որոնք, մեծ մասամբ չունենալով ձեռքի դուրգ, իրենք պտույտ էին գործում պատրաստվող ամանի շուրջ: Իսկ սակավ դեպ-

քերում ձեռքի դուրգ **(տուրք)** ունեցողները նստած էին աշխատում:

Կավը վերամշակելու միջոցները թեև տարրական, բայց միաժամանակ անհրաժեշտ պարագաներ էին, որոնցով նախապատրաստվում էր հումքը և պատրաստվում խեցեղենը: Այդ միջոցներն էին.

1. Մաքուր սալահատակ, որի վրա տեղի էր ունենում կավի ու ավազի խառնումը:

2. Հորքի կաշի կամ **այծենի** և կամ **ոչխարենի**, որի վրա կոխվում, հասլացվում էր կավը:

3. Սեղան կամ շուռ տված **լվացքի տաշտ**, որի վրա կավը գլանում, լոլոզ էր արվում:

4. Որևէ **պատվանդան**, որի վրա էր դրվում հողկալով ամանը և պատրաստվում էր:

5. Հողկալ տախտակ, որի վրա նստեցվում էր պատրաստվող ամանի տակը:

6. Ձեռքի դուրգ (ժողովուրդը **տուրք** է անվանում), որի վրա աման էր պատրաստվում:

7. Կուռիկ, որի մեջ պահվում էր ջուր՝ ձեռքը կամ կոկիչները թաթախելու համար:

8. Քերոց, տախտակե բարակ գործիք, որով կոկում էին ամանի վրա ծեփված լոլոզները:

9. Լեզվանք, նուրբ լաթի կտոր, թաշկինակի մեծության, որը թրջելով, քսում էին պատրաստվող ամանին և հոկում այն:

10. Ջրկոկիչ, ձվաձև կամ գնդաձև, կնոջ բռունցքի չափ ծովաքար, որը, ջրի մեջ թաթախելով, չորանալ սկսող ամանն էին կոկում, որպիսի գործողությունը **ջրկոկ էնել** էր կոչվում:

11. Կոկիչ, նույնպիսի քար, որով կոկում էին չորացած ամանը՝ հոկելու և փայլեցնելու համար, որպիսի գործողությունը **չորկոկ էնել** էր կոչվում:

12. Փայտե **մալոխ՝** պատրաստվող ամանի օնկի (ունկ, բռնակ) տեղը ծակելու համար:

13. Փայտե բարակ **մալոխ՝** քավկիրը ծակծկելու համար[232]:

---

232 Եթե կավը բնական վիճակում ավազի խառնուրդ չէր ունենում, երկու չափ կավին մեկ չափ ավազ էին խառնում, իսկ երբ ավազախառն էր լինում, երեք չափ կավին մեկ չափ ավազ էին խառնում: Այդ գործողությունը կատարվում էր ահա այսպես. մաքուր սալահատակի վրա նախ փռում էին կավը և դրա վրա՝ ավազը: Այնուհետև, 2-3 անգամ կրկնելով նույնը, ամեն մի շերտի վրա ջուր էին սրսկում: Եվ այդ փռվածքը պահում էին 3 օր՝ հավասար չափով խոնավացնելու համար: Այդ ընթացքում կավը չորանալիս նորից էին թրջում և չորրորդ օրը այդ փռվածքից բահով մաս առ մաս կտրում, դնում էին մորթու վրա, դարձյալ թրջում էին ու սկսում էին բորիկ ոտքերով կոխել, հասլացնել: **Երեք բերան** կոխելուց հետո, հասլն առած կավը փոստով չորս կողմից վար ծալելով **բալուլ** էին անում և մորթին հեռացնելով գլանաձև զանգվածը կանգնեցնում էին՝ **գունդ** անունը տալով: Եվ այսպես, մի շարք գլաններ կանգնեցնելուց հետո, դրանք թողնում էին մեկ-երկու օր՝ **նստելու** համար: Իսկ աշխատանքն սկսելուց առաջ նորից էին կոխում, թարմացնում և գունդը վերստին գլանում էին:

Խեցեղենի թրծումը կատարվում էր թոնրի և կամ դրսում՝ խոր փոսի մեջ[233]:

Ոսկրի և եղջյուրի մշակումը: Գյուղական տնայնագործները ոսկրից և եղջյուրից պատրաստում էին գործածության իրեր և առարկաներ:

Գոմշի և եզան կոտոշներից սանրագործները սանր էին պատրաստում: Կոտոշների ծայրերից սարքում էին թազբեհի հատիկներ: Եզան կոտոշի միջուկը հանելուց հետո, նրանից հովվական և դաշտային աղաման էին պատրաստում (տես հովվի գույքը): Հնձվորները կափարիչավոր կոտոշի մեջ հեսանի կարագ էին պահում: Գոմշի մեծ կոտոշը սայլի սապոնաման (սապոնլուղ) էին դարձնում, որի մեջ պահվող սապնահյութով թրջում էին պտտվող սռնին՝ այրումը կանխելու համար:

Որձ այծի երկար կոտոշից դանակագործները դանակի կոթ էին պատրաստում:

Բոլոր դեպքերում, կոտոշների վերամշակումը կատարվում էր տաք ջրում երկար ժամանակ պահելով կամ կրակի վրա տաքացնելով ու ճնշման տակ դնելով:

Ցիու ոլոքը համարվում է ամենաընտիր ոսկորը, որից պատրաստում էին հովվական մալոխներ, ջվալ և ներքնակ կարելու մախաթ, հյուսվածք հյուսելու հելուններ և այլն: Ոսկրագործները շան ոսկրից նարդու քարեր և դեղձի կորիզներից՝ թազբեհի հատիկներ էին պատրաստում:

Կողովահյուսությունը զարգացած էր Մերենիա, Ազավրետ և Դամալա գյուղերում, ուր անտառներ կան: Ամեն տեսակ քթոցներից բացի, այս գյուղերում պատրաստվում էին նաև զամբյուղներ, որոնք **ծղիկ** էին կոչվում: Օգտագործվում էին նաև հացենու, կաղնու թփի ճյուղեր: Կողովի ճյուղերի պակասը լրացնում էին Բակուրիանիի անտառից: Ճյուղահավաքը տեղի էր ունենում խոր աշնանը, տերևաթափից հետո, քանի որ դրանք այնուհետև ևս շաբաթներով դեռևս թարմ էին մնում: Քաղում էին **մանգիզոնով**, որը հենց ճիպոտ քաղելու հատուկ մանգաղ էր:

Արհեստները քաղաքում: 1860-ական թթ. Ախալքալաք քաղաքում հիշատակվել է 19 արհեստ՝ 165 արհեստավորով:

233 Շիկացած ամանները դուրս բերելիս դրանց մեջը, նայած մեծության, 1-6 բաժակ թան կամ շռատ էին լցնում: Վերջինս կայծակնային արագությամբ եռում և փրփրելով լցվում էր ամբողջ ամանի մեջ ու չքանում: Դրանով նվազեցվում էր ամանի հետագա ծծողականությունը: Թթվի, աղաջրի և յուղի համար հատկացվող կարասներն ու ծափերը կեչի ծառի կճեպից պատրաստված քաղցրահամ ձթով ձթում էին, որով կանխվում էր ծծողունակությունը: Ոմանք սովորություն ունեին ձթի ճողիկով զարդարել կարասի, ծափի և կճուճի լանջը՝ դեռևս տաք ժամանակ: Իսկ ուրիշները խեցեղենը փայլեցնում էին **յոշա** կոչված ներկով: Դրա համար ամանը արևով տաքացնում էին, յոշան ջրով բացում, թաղիքով քսում, որով ամանը ստանում էր կարմիր գույն ու փայլ:

1.	Դերձակներ եվրոպական	10
2.	Դերձակներ ասիական	4
3.	Հացթուխներ	11
4.	Մորթեգործներ	5
5.	Ջուլհակներ	1
6.	Կոշկակարներ	19
7.	Մաշկակարներ	8
8.	Ոսկերիչներ	15
9.	Հյուսներ	20
10.	Դարբիններ	23
11.	Խառատներ	2
12.	Պղնձագործներ	7
13.	Նալբանդներ	10
14.	Թիթեղագործներ	4
15.	Ջինագործներ	4
16.	Ներկարարներ	6
17.	Թամբագործներ	5
18.	Վարսավիրներ	6
19.	Փորագրիչներ	5[234]

Հ. Գեղամյանցը 1879-ին հիշատակում է 15 արհեստ՝ 97? (148) արհեստավորով, ինչը թերևս նաև կասկածելի է.

1.	Ոսկերիչներ	6
2.	Պղնձագործներ	6
3.	Անագագործներ	6
4.	Դարբիններ	20
5.	Երկաթագործներ	20
6.	Պայտագործներ	8
7.	Կոշկակարներ	16
8.	Մաշկարարներ	16
9.	Դերձակներ	7
10.	Ջինագործներ	5
11.	Սափրիչներ	6
12.	Հացթուխներ	8
13.	Պայտարներ	6
14.	Կաշեգործներ	9
15.	Խաղախորդներ	9[235]

234 Վ. Ա. Աբրահամյան, Հայ համքարությունները Անդրկովկասի քաղաքներում, Երևան, 1971, էջ 79-80:

235 Հ. Գեղամյանց, Ախալցխայից մինչև Անի, **Փորձ**, 1879, թիվ 12, էջ 116:

Հ. Գեղամյանը տվյալներ է ներկայացրել նաև 1874-1878 թվականների արհեստավորների, արհեստանոցներում ընդգրկված բանվորների ու աշակերտների թվակազմի վերաբերյալ, որն ունի հետևյալ պատկերը[236]

Տարիներ	Արհեստավորներ	Արհեստանոցներում աշխատող վարպետներ	Արհեստանոցներում աշխատող աշակերտներ	Վաճառված ձեռագործների արժեքը
1874	189	237	189	15.814 ռ.
1875	150	180	115	21.000 ռ.
1876	127	160	96	17.780 ռ.
1877	110	120	50	22.000 ռ.
1878	124	140	160	19.000 ռ.
Ընդամենը	700	837	610	95.594 ռ.

Նույնպիսի աղյուսակ է ներկայացրել Ե. Լալայանը 1885-1889թթ. հետևյալ տվյալներով[237].

Տարիներ	Արհեստանոցներ	Վարպետներ	Աշակերտներ	Արդյունաբերության արժեքը
1885	164	182	104	12.400 ռ.
1886	174	125	103	10.500 ռ.
1887	140	158	106	10.000 ռ.
1888	186	231	176	13.000 ռ.
1889	175	215	164	12.600 ռ.
Ընդամենը	839	911	653	58.500 ռ.
Միջին թվով	167	182	131	11.700 ռ.

Այս տվյալների հիման վրա, հեղինակի եզրակացությամբ, աշխատանքով զբաղված վարպետները քաղաքում կազմում էին տղամարդ բնակչության 16,5 և աշակերտները՝ 24,7 տոկոսը:

236 Հ. Գեղամյանց, նշվ. աշխ., **Փորձ**, 1879, թիվ 12, էջ 214:

237 Ե. Լալայան, Ջավախք, ԱՀ, 1, էջ 214:

Նկատենք, որ 1860-1870-ական թվականներին վերաբերող քաղաքային արհեստների թիվը բավականաչափ պակասավոր է: Ներկայացված այդ թվերին կարող են թերևս նաև որոշակիորեն լրացնել Ե. Լալայանի առաջ բերած տվյալները՝ 1894 թվականի փաստերի համաձայն[238]:

238 Պետք է ենթադրել, որ Ջավախք երկրամասի արհեստների և արհեստավորների քանակության մասին բերված տվյալները վավերական հիմք և գիտական հիմնավորվածություն ունեն: Համենայն դեպս, անվիճելի է, որ ինչպես հարգարժան ազգագրագետ-հետազոտողներ Հ. Գեղամյանցը, նույնպես և Ե. Լալայանը ներկայացվող ոլորտի վերաբերյալ որոշակի ստույգ տվյալներ ունեցել են իրենց ձեռքի տակ: Եվ միայն տվյալ ժամանակաշրջանի գիտական համակարգված ուսումնասիրությունը կարող է որոշակի լույս սփռել նրանց օգտագործած սկզբնաղբյուրների հավաստիության վրա: Ամեն դեպքում ակնհայտ է, որ նրանց կողմից արհեստների և արհեստավորների ներկայացվող համապատկերը ժամանակագրորեն, թեպետև տարիների կարճ ժամանակամիջոցի կտրվածքով, միմյանց շարունակություն են հանդիսանում՝ մի տեսակ լրացնելով միմյանց: Մեր կողմից նկատենք միայն, որ զուտ ազգաբնակչության կենսապահովման տեսանկյունից էլ ժամանակի արհեստների պակասավոր ներկայացված լինելը երկրորդ կարծիք չի կարող ունենալ, մանավանդ որ արհեստների հիշատակումը առավելաբար քաղաքային շեշտադրում է ունեցել (Կազմողի ծանոթագրումը՝ Ռ. Ղ.): Տես ԱՀ, 1, էջ 213:

Ընդամենը	205	164	2		8			
Լուսանկարիչներ	1	-						
Կազմարարներ	1	-						
Մսավաճառներ	9	9						
Սափրիչներ	6	6						
Թամբագործներ	4	4						
Թիթեղագործներ	4	2						
Ապակի գցողներ	3	-						
Ներկարարներ	13	-						
Ատաղձագործներ	4	4	1					
Սղոցարարներ	6	-						
Հյուսներ	17	17						
Քարտաշներ	12	-			6			
Ժամագործներ	2	-						
Պողպատագործներ	3	3						
Վառարանագործներ	2	-						
Հրացանագործներ	4	2						
Ոսկերիչներ	16	17						
Պղնձագործներ	7	7			1			
Դարբիններ	30	32			1			
Գլխարկակարներ	6	4						
Ներկարարներ (պոյաճիներ)	8	5						
Մաշկակարներ	13	15						
Կոշկակարներ	9	9						
Դերձակներ	17	14	1					
Խոհարարներ	14	-						
Հացարարներ	1	-						
Հացթուխներ	12	14						
	վարպ.	աշակ.	վարպ.	աշակ.	վարպ.	աշակ.	վարպ.	աշակ.
	Հայեր		**Ռուսներ**		**Հույներ**		**Վրացիներ**	

Այս բերված թվերից երևում է, որ «քաղաքի գրեթե բոլոր արհեստավորները հայեր են»[239]:

Գործարանային ապրանքների սակավ տարածման պատճառով մինչև 1918-ի գաղթը Ախալքալաք քաղաքում մետաղագործական արհեստները բավականաչափ զարգացած էին: Գաղթի պատճառով այդ արհեստները հնգամյա ժամանակամի-

239 Անդ, էջ 214:

ջոցում գրեթե ամբողջովին վերականգնվեցին, իսկ որոշ ճյուղեր նույնիսկ ավելի ընդարձակվեցին:

Այդ մասին որոշ տվյալներ է հաղորդել Ս. Շիրինյանը: Ըստ այդմ, մինչև 1916 թիվը եղել են երկու ոսկերիչներ, որոնց թիվը 1940 թվականին արդեն հասնում էր 8-9-ի[240]:

Ժամագործությամբ զբաղվում էին1-2 հոգի:

Պղնձագործները 1910-ին երկուսն էին, իսկ 1940-ին՝ 4-5 հոգի (էջ 40):

Կլայեկողները 1910-1920-ական թվականներին 3-4 հոգի էին (էջ 42), որոնք ժամանակ առ ժամանակ շրջում էին գյուղերը և կլայեկում պղնձե ամանները:

Դարբինները, ովքեր տեղավորված էին Ախալքալաքի Դամրչնոց կոչված փողոցի մի շարքում, պայմանագրային կարգով կապվում էին որոշ գյուղերի հետ (էջ 39-40):

Դարբինների շարքում էին տեղավորված նաև անիվագործները, որոնց թիվը 1940-ական թվականներին 4-ից չէր անցնում (էջ 40):

Գամ պատրաստողների թիվը երբեք էլ 1-2-ից չէր անցնում, որոնք, սակայն, լիովին բավարարում էին պայտարների պահանջը:

Քաղաքում 1910-ական թվականներին կար միայն մեկ զինագործ, ապա և հայտնվեց երկրորդը: Նրանց հիմնական զբաղմունքը սառը և տաք զենքերի նորոգումն էր (էջ 40): Որոշ տեղեկությունների համաձայն, զինագործները հանպատրաստից (ինքնուրույն) հրացաններ և ատրճանակներ էին պատրաստում:

Քաղաքի թիթեղագործներն ունեին իրենց արհեստանոցների շարքը, ուր պատրաստվում էին նավթամաններ, ճրագներ, վառարաններ, խողովակներ, դույլեր, տաշտակներ, ջրամաններ և այլն: Մինչև 1910 թվականը նրանց թիվը հասնում էր 3-4-ի, իսկ 1930-ական թվականներին՝ 12-ի (էջ 40):

Քաղաքում որոշակի տեղ ու դեր ունեին շինարարական արհեստները: Բացի որմնադիրներից, ովքեր քաղաք էին գալիս գյուղերից, մնացած արհեստավորները տեղացիներ էին:

Կրախառն կավահողից սվաղ կատարողները միաժամանակ տներում թրծած աղյուսից պատի վառարաններ և ծխնելույզներ էին պատրաստում (էջ 42): 1920-1930-ական թվականներին նրանց թիվը չէր անցնում 6-7 հոգուց: Գրեթե նույնքան էին նաև ներկարարները, ովքեր մինչև 1920-ական թվականները որոշ շենքերի գլխավոր ճակատները և ներսի որմերը ներկում էին կրով: Երբ երևան եկան յուղաներկերը, ներկարարները ձեռնարկեցին և յուրացրին նաև դռները, պատուհաններն ու հատակները ներկելու արհեստը (էջ 41):

240 Ս. Շիրինյան, Արհեստները Ախալքալաքում («Երևանի համալսարան», 1980, թիվ 3, էջ 40: Այսուհետև բնագրում կհիշատակենք հանդեսի այս համարի միայն էջերը):

1930-ական թվականներին այլևս երևան էին եկել շենքերի կտուրները թիթեղապատող առաջին թիթեղագործները, որոնց թիվը նախապես չէր գերազանցում մեկ տասնյակը (ընդամենը՝ 5-6 հոգի, էջ 40):

Սահմանափակ թվով մարդիկ զբաղվում էին նաև ապակեգործությամբ:

Շինափայտի վերամշակման գործում կարևոր դեր ունեին տախտակ քաշող խզարչիները: Մինչև էլեկտրական սղոցարանների երևան գալը 2-4 հոգի էր նրանց թիվը (էջ 40):

Ատաղձագործ վարպետները, ովքեր միաժամանակ զբաղվում էին նաև շինարարությամբ (շենք ծածկել, հատակ տախտակապատել, դուռ և լուսամուտ պատրաստել և այլն), 1900-թվականներին Ախալքալաքում ընդամենը 4-5 հոգի էին, որոնց արհեստանոցները գտնվում էին հենց իրենց սեփական տներում: Հեղափոխությունից հետո նրանց թիվը կրկնապատկվեց, ուր, բացի շինարարական զբաղմունքներից, պատրաստվում ու վաճառվում էին նաև տնային բազմապիսի իրեր ու կենցաղային առարկաներ: Ինքնին հասկանալի է, որ նման ծավալի աշխատանքներ կատարելու համար պահանջվելու էին հատուկ դրա համար հարմարեցված արհեստանոցներ (էջ 40):

Քաղաքի ոտնաման կարող ունորոգող արհեստավորները 1900-ական թվականներին շուրջ երեք տասնյակի էին հասնում: 1940 թվականին պետական արտելներում աշխատող կոշկակարների թիվը հասնում էր 70-ի (էջ 39): Մինչդեռ 1910 թվականից առաջ նրանց թիվը եղել է 3 հոգի, 1940-ին՝ 13 հոգի (էջ 39):

Մի առանձին խումբ էին կազմում այն արհեստավորները, ովքեր մասնագիտացել էին ոտնամանների, չուստերի, ինչպես նաև եվրոպական ամեն տեսակ կոշիկների երեսացուներ պատրաստելու գծով, որոնց **օլթան կարող** անունն էին տալիս: Պայմանավորվածության համաձայն, նրանք պատրաստի երեսացուներ էին մատակարարում և 10 օրը կամ էլ ամիսը մեկ փակում էին իրենց դրամական հաշիվները:

Ախալքալաքում կար հատուկ արհեստանոց-խանութ, որտեղ թամբագործ-սանձագործները պատրաստում և վաճառում էին թամբեր, խամութներ, սանձի տարատեսակներ և այլ պարագաներ (էջ 42): Նրանց թիվը 1910 թվականին եղել են 3-4 հոգի:

Քաղաքում մշտնջենապես, գրեթե մինչև 1940-ական թվականները, կար 1-2 սանրագործ, ովքեր գոմշի և եզան եղջյուրներից, փայտից և երբեմն էլ ոսկորից ամեն տեսակ սանրեր էին պատրաստում:

Կարուձևի արհեստները քաղաքում երկու ուղղություն ունեին. մի ուղղությանը պատկանում էին ազգային տարազը պահպանողները, իսկ մյուսին՝ եվրոպական տարազը տարածողները: Հայոց ազգային տարազի մասնագետ դերձակները կարում էին արխալուղ, չուխա, վերարկու, հնաոճ շալվար, կնոջ ջուպպա, խրխա, փու-

թալի, ֆարաջա և այլն, իսկ օտարասեր-օտարամոլները՝ եվրոպական վերարկու, շալվար, սերթուկ և այլն: Հին վարպետները 1910-ական թվականներին 12 հոգի են եղել, որոնք էլ 1930-ական թվականներին այլևս ասպարեզից հեռացան: Իսկ նորերն էլ 1940 թվականին շուրջ 20 հոգի էին, որոնք աստիճանաբար ավելանում էին նաև (էջ 39):

Մի ընդհանուր արհեստանոցում տեղավորված էին **փափաղ** և **շապխա** գլխարկ կարողները: Փափաղ կարողների թիվը 1910 թվականին հասնում էր 6-ի, իսկ 1940 թվականին՝ 2-ի: Շապխա կարողների պարագան ճիշտ հակառակն էր. անցյալի 3 թիվը 1940-ին հասել էր 7-ի:

Քաղաքում ներկարարները 1910 թվականին հաշվվում էր շուրջ 3-4 հոգի, իսկ 1940 թվականին՝ արդեն 15-17 մարդ էր զբաղված այդ աշխատանքով (էջ 41):

Ախալքալաքի վերոհիշյալ արհեստներն, ըստ Շիրինյանի, ամբողջապես հայերի ձեռքին էր, ովքեր հայրենի Կարնո արհեստներն ու նրանց կատարողական վարպետությունը զարգացման նոր աստիճանի հասցնելուց բացի, յուրացրել էին նաև եվրոպական շատ արհեստներ:

Գործարաններ: Հ. Գեղամյանցի հաղորդման համաձայն, Ախալքալաքում 1879 թվականին կար 6 գործարան՝ 9 աշխատավորով: Դրանք էին՝ գարեջրի գործարանը 1 վարպետով, կրինը՝ 1 աշխատող, աղյուսինը՝ 2 աշխատող, կաշվինը՝ 2 աշխատող, օճառինը՝ 2 աշխատող, ծխախոտինը՝ մեկ աշխատող: Գեղամյանցը միաժամանակ նշել է նաև, որ Գանձա բազմամարդ գյուղում կար օղու մի գործարան, որտեղ, բացի հացահատիկից, օղի էին քաշում նաև չամիչից: Ընդ որում, այս վերջինից ստացված օղին ամսական կազմել է շուրջ 1400 դույլ[241]:

Ե. Լալայանի հաղորդման համաձայն, 19-րդ դարի վերջերին քաղաքում կային տնայնագործական եղանակներով գործող 10 գործարան: Դրանք էին՝ կաշվի 4 գործարան՝ 7 վարպետով, օճառի 2 գործարան՝ 4 վարպետով, աղյուսինը ՝ 3 և կրի 2 գործարան՝ 4 վարպետով: Սրանք գործարաններ էին ոչ այսօրվա իմաստով, սակայն սրանք որոշակիորեն բավարարում էին տեղական պահանջմունքը, և արտադրանքն էլ սպառվում էր հենց քաղաքում ու գավառում[242]:

241 Տե՛ս «Փորձ», 1879, թիվ 12, էջ 116:

242 Տե՛ս ԱՀ, 1, էջ 215: Ըստ Ս. Շիրինյանի, քաղաքում կաշվի գործարան (տապախանա) 1900-ական թվականներին եղել է 1-2 տեղ՝ պզտի ձորի եզրին, որտեղ այծենուց մշակվում էր բարձրորակ **սեկ**, ոչխարենուց՝ **մեշին**, կաշվից՝ **լոս**: 1920-1922-ական թվականներին կար միայն մեկ օճառի գործարան: Իսկ կրի և աղյուսի գործարանների վերաբերյալ թվական տվյալներ չի բերում: (Տե՛ս «Երևանի համալսարան», 1980, թիվ 3, էջ 40): Հեղափոխությունից հետո քաղաքն ուներ և այժմ էլ ունի լիմոնադի գործարան, որի արտադրանքը տեղական համբավ ու հռչակ է վայելել:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՆԵՐ



Ջավախքի գլխավոր ճանապարհը մեկն է՝ Ախալցխա-Ասպինձա-Ախալքալաք-Բոգդանովկա-Լենինական հին խճուղին[243]: Դրանից ճյուղավորվում են Ախալքալաքը Բակուրիանիի և Բոգդանովկան Թբիլիսիի հետ կապող ճանապարհները: Միևնույն այդ գլխավոր ճանապարհից են ճյուղավորվում նաև գյուղական բնակավայրեր տանող ուղիները: Թափարավան գետի, ինչպես և այլ գետակների վրա կան մի շարք կամուրջներ:

Ջավախքում, մինչև մեր դարի առաջին տասնամյակները, հիմնական փոխադրամիջոցները եղել են սայլատեսակները և սահնակները, որոնց լծում էին եզներ, գոմեշներ և ձիեր, հազվադեպ՝ նաև ավանակներ: Հիշյալ այս թվարկման մեջ էլ առավել օգտագործվողներն էին եզները, ավելի ուշ՝ ձիերը: Սովորաբար ձիերն, իբրև սայլի ու սահնակի լծկաններ, սակավ էին օգտագործվում ոչ միայն բուն Ջավախքում, այլ նաև, արտագաղթից առաջ, Կարին քաղաքում նույնպես: 19-րդ դարում միայնակ ձին լծում էին երկանիվ ձիասայլակին, իսկ 20-րդ դարի սկզբներից, դուխաբոռների օրինակով՝ նաև ֆուրգոնին:

Ինչպես Կարնո ամբողջ նահանգում, Ջավախքում էլ սայլի տեսակները հիմնական փոխադրամիջոցներն էին: Արտագաղթից հետո Ջավախքում երկար ժամանակ երկանիվ սայլերը պահպանվեցին՝ կրելով որոշ փոփոխություններ: Գավառի առավել բարձրլեռնային մասերում մինչև 1960-ական թվականները պահպանվում էին դրանց մնացուկները:

Մարան սել: Այսպես էր կոչվում փոքր սայլը, որի այլ անվանումներից էին **մառան սալ** և **կոռնի սել**: Մարանի անիվները երեք հաստ տախտակներից էին կազմվում և պնդացվում էին երկաթե դողերով: Երկրորդ տախտակի կենտրոնում բացվում էր քառակուսի անցք, որի մեջ մտնում և ամրացվում էր փայտե սռնու ծայրը: Սռնին պտտվող էր, որով նա պտտեցնում էր զույգ անիվները: Այս անիվները պատրաստում և վաճառում էին Ախալքալաքի անվագործ վարպետները: Գյուղական սայլագործը արդեն պատրաստի անիվների վրա հարմարեցնում էր սայլի թափքը, որը պատրաստված էր լինում մայրի ծառի փայտից: Իսկ սայլի անիվները, սռնին և բարձերը սարքվում էին անհամեմատ դիմացկուն փայտերից:

Հովի. Մալխասյանը բնութագրում է. «Կոռնի սայլը գործ են ածում ամեն ժամանակ. թե դաշտային և թե տնային պարապմունքների ժամանակ. ցանոցին կոռնի սայլին բառնում են սերմացուն, կենդանիների կերը՝ խուրձերով խոտը, շատ ան-

243 Հայտնվում է ի գիտություն. թեպետ որոշ բնակավայրեր պաշտոնապես վաղուց են անվանափոխվել, սակայն մենք, հավատարիմ մնալով հատկապես տեղանունների գրության հեղինակային նախընտրած անվանաձևերի պահպանման մեր անխախտ սկզբունքին, տուրք չենք տալիս այլևս քաղաքացիություն ստացած իրողությունների առջև նույնպես՝ պահպանելով հեղինակի գրության ձևերը՝ հնչյունական առումով առաջին հերթին: (Կազմողի ծանոթագրումը՝ Ռ. Ղ.):

գամ արորը. քաղոցին նրա վրա բառնում են բոլոր գործիքները, կժով կամ տակառով ջուրը, իրենք էլ նստում վրան և գնում են քաղը. հերկոցին բառնում են գութանն յուր բոլոր սարքով (բացի գռնելից), կալոցին հացը կալից կրում են տուն, բնաղոնը տանում ջրաղաց, ալյուրը ջրաղացից բերում տուն. բացի այդ՝ նրա վրա ամառը նստում՝ ուխտ, հարսանիք, հրավեր են գնում գյուղից գյուղ. նրանով կրում են շինության համար անտառից փայտ, դաշտից՝ քար, քրեի տանում զանազան տեղեր, Կաղզվանից աղ բերում, քաղաքը աթար, փայտ, ալյուր, աղ և ուրիշ բաներ տանում ծախելու և այլն:

Կոռնի սայլն այնքան կարևոր գործիք է գյուղացու համար, որ, չնայած նրա թանկ նստելուն՝ գրեթե ամեն տուն ունի[244]»:

Օրնի սել անունն էր կրում (որա) կրելու սայլը, որը նույնպես պտտվող սռնիով էր և տախտակե անիվներով: Ընդ որում, կոռնի սայլի և օրանի սայլի անիվներն իրար հավասար էին: Օրանի սայլը 1/3 չափով մեծ էր նախորդից, որի թափքը ամբողջովին չէր տախտակապատվում, որովհետև միայն օրան ու խոտ էին կրում: Եվ, եթե փոքր սայլին լծում էին 1-2զույգ, ապա օրնի սայլին՝ 2-4 զույգ այն դեպքում, երբ անբարեկարգ ճանապարհները նաև վերելքներ էին ունենում:

Մարանի սելի չորս կարճ ցցերը, ուղղահայաց ձևով, վերևից մտնում էին թառերի մեջ. օրանի սելի հետևի ցցերը, ուղղահայաց ձևով, ներքևից դեպի վեր, մտնում էին թառերի մեջ, իսկ թառերի առջևի ծայրերը հորիզոնական ուղղությամբ մտնում էին ցցերի մեջ: Օրնի սելի ցցերը կրկնակի երկար ու սրածայր էին՝ 40-60 փութ օրանն ու խոտը թափքի վրա պահելու համար: Տեղ-տեղ օրնի սելն ունենում էր 3 կոպ:

19-րդ դարի վերջին պտտվող սռնիով և տախտակե անիվներով սայլերը դեռևս լիովին պահպանվում էին: Շատ կարճ ժամանակ անց, 1900-ական թվականներին, ռուսական սայլաշինության ազդեցությամբ, մարան սայլերի տախտակե ծանր անիվներին փոխարինեցին ճաղավոր անիվները: Սակայն այս նոր անիվները ևս պտտվող սռնի ունեին:

Աստիճանական զարգացման արդյունքում երևան է գալիս փոքր սայլի այն նոր տարբերակը, որ կոչվում էր **տուլքա սել**: Սրա սռնին լրիվ երկաթից էր, ինչպես ռուսական ֆուրգոնի սռնին, իսկ անիվները՝ ճաղավոր ու փոքր գնդով: Գնդի մեջ **տուլքա** կոչված երկաթե խողովակ դրվելով սռնին դառնում էր անշարժ: Անիվները պտտվում էին սռնու շուրջը:

Ինչ փոփոխություն որ կրում էր պզտի սելը, նույնը կրում էր նաև օրնի սելը, որի սռնին ևս երկաթից պատրաստելով, անիվները նշված ժամանակամիջոցում նույնպես ճաղավոր դարձան:

---

244 Հովի. Մալխասյան, Հայ գեղջուկի ալբոմը (ԱՀ, 3, էջ 384): Մարան սելը կալոցին հոռի (չաթան) էին վերածում. չորս կողմից տախտակներով արկղ էին դարձնում, որը մեկուկես մետր խորություն էր ունենում: Տախտակների փոխարեն երբեմն խսիր ու կարպետ էին օգտագործում:

Քառանիվ եզնասայլը ֆուրգոնի վերասերումն էր, այսինքն՝ քարշաձողի փոխարեն կովկասյան սայլի առեղներ տեղադրելով, եզան սայլ դարձնելը, որը Ջավախքում երևան եկավ 1910-ական թվականներին: Իսկ 1920-ական թվականներին ներմուծվում էին Լենինականից և Գանձակից: Սրանք առավելապես տարածվեցին այժմյան Բոգդանովկայի շրջանի տարածքում, ուր ավելի նպաստավոր էին ճանապարհները, հանդերն ու խոտհարքները:

Ավտոմեքենաների լայն տարածմամբ՝ այս սայլատեսակը 1970-ական թվականներին այլևս հազվադեպ էր հանդիպում:

Ֆուրգոնը տարածողները դուխաբոռներն էին, որոնցից 1900-ական թվականներին առաջին ընդօրինակողները եղան Խոջաբեկը, Մեծ Խանչալին և այն գյուղերը, որոնք մոտիկ ու անմիջական շփման մեջ էին դուխաբոռների բնակավայրերին:

1970-ական թվականներին ֆուրգոններն էլ այլևս հազվադեպ էին:

Միաձի քառանիվ սայլն ուներ զույգ քարշակներ. սրանով քաղաքի մեջ տեղափոխում էին ամեն տեսակ ապրանքներ ու մթերքներ: Մուտք գործելով 1920-ական թվականների սկզբներին՝ այն հարատևեց մինչև 1930-ական թվականների վերջերը:

Կառքին լծում էին 2-3 ձի և ներքաղաքային տարածքում հիմնականում զբաղվում մարդ տեղափոխելով: Գլխավոր ճանապարհով միևնույն գործն էին կատարում նաև Ախալցխա, Խոջաբեկ, Գորելովկա և Ալեքսանդրապոլ տեղափոխելով մարդկանց: Դեպի Ախալցխա և Ալեքսանդրապոլ հարսնառի նույնպես կառքերով էին մեկնում, որին հիմնականում լծում էին 2-3 ձի: Այս ինքնատիպ երթևեկության միջոցը իր տարածումը գտավ 1900-ական թվականներին և ափսոսալի մայրամուտը ապրեց մի քանի տասնամյակի ընթացքում:

Տեղական սահնակները հասարակ էին, որոնց եզ էին լծում և այդ պատճառով էլ հետագայում ձիու սահնակից տարբերելու համար տալիս էին **էզի խզակ**[245] անունը:

Հովի. Մալխասյանը ներկայացրել է խզակի 19-րդ դարի ձևը, ըստ որի այն ցցավոր է և կոպերից բացի, թափքի վրա ծածկոցներ չունի: «Սրանով,- գրում է հեղինակը,- գյուղացին ձմեռը ջուր է կրում գետակից կամ ավազանից... Հորերից փայտանյութ, աթար, նաև այլևայլ իրեր են տանում քաղաք՝ ծախելու, ձմեռը նստում վրան, տեղ են գնում: Սահնակ պահում են միմիայն մեծ օջաղները[246]»: Եվ որ կարևոր է, այդ սահնակին զույգ եզ էին լծում, լծին լորխելով քարշակների ծայրերը[247] (առեղի ձև տալով):

Այդ սահնակի օրինակով անտառամերձ գյուղերում պատրաստում էին **ձեռաց**

245 Խզակ բառը ծագում է պարսկերեն **գըզագ** բառից, որը թուրքերենում ընդունել է **խըզախ** կամ **խըզէնտէ** ձևերը:

246 Հովի. Մալխասյան, նշվ. աշխ. (ԱՀ, 3, էջ 387):

247 Անդ, էջ 388:

խզակ[248], որով անտառից վառելափայտ էին փոխադրում: Քաշող մարդը մտնում էր ծայրերը սահնակին կապած չվանի օղակի մեջ և ձգում կրծքով, իսկ վայրէջքներում նույն չվանը, սանձի նման հետևից բռնելով ու զսպելով, իջեցնում էր ցած:

Կար նաև ցամաքի **քաշան-սահնակ**, որը սայլի նման առեղներ էր ունենում: Գլուխը աննշան չափով դեպի վեր կեռ էր, որտեղից էլ լծվում էին շղթայով և զույգ եզներով քաշում էին բարձած սալաքարեր, շիրմաքարեր և այլ ծանր բեռներ:

Ձիու սահնակ (սանքա): Անունն առաջացել է ռուսերեն **սանի** ձևից: Սրա ձևը և ձի լծելու կերպը հայերին անցել է դուխաբոռներից:

1970-ական թվականներին սահնակները նույնպես գնալով հազվագյուտ դարձան:

Գրաստային փոխադրամիջոցները, իբրև այդպիսին, աստիճանաբար հետընթաց զարգացում էին ունենում: Ձի գրաստը հայերը սակավ էին օգտագործում: Կարնո արտագաղթից հետո Ջավախքի որոշ լեռնոտ վայրերում խրձերը ձիերով էին դաշտերից կրում տուն: Ձիերով նաև հեռավոր քաղաքներ արկղերով ապրանքներ էին տեղափոխում, որը կարճ ժամանակաշրջան տևեց: Կարելի է վստահաբար ասել, որ ձիագրաստները լիովին օգտագործվում էին մրգաբեր շրջանների մահմեդականների կողմից, թեպետ, օրինակ, Նաքալաքևի քրդերը բանջարեղենը և մրգերը, թեռերով բարձելով եզների մեջքին, տեղափոխում էին շուկա՝ վաճառելու:

Ուրախությամբ պետք է նշեմ, որ գավառում հեծկան ձիեր պահողները շատ էին: Հեռու վայրեր և կամ գյուղից գյուղ գնացողները օգտվում էին հենց հեծկան ձիերի ծառայությունից, ինչը նաև արժանապատիվ էր, գեղեցիկ ու դիտարժան: Ջավախքի գյուղերում գրեթե անխտիր բոլոր ընտանիքներն ունեին ձիեր. շատ ընտանիքներ հաճախ մի քանի ձիեր էին ունենում, որոնք առավելաբար բեռնաձիեր էին և օգտագործվում էին գյուղատնտեսական աշխատանքներում: Գյուղական համայնքները՝ կոլտնտեսությունները, դաշտավարական բրիգադների աշխատանքների գործունեությունը կազմակերպում էին հենց բեռնաձիերի միջոցով, որոնց էլ գյուղտեխնիկան ի վերջո աստիճանաբար դուրս մղեց ասպարեզից: Գյուղական կյանքին առանձնահատուկ հմայք ու հրապույր էր տալիս հեծկան ձիերի մասնակցությունը տոնական միջոցառումների հանդիսություններին: Մասնավորաբար գյուղական գրեթե ողջ երիտասարդությունը ամիսներ առաջ էր նախապատրաստվում այդպիսի մրցումներին, լավագույն նժույգներն էին ընտրում, վարժեցնում ու զարդարում այդ նպատակով: Այս առումով առանձնահատուկ հանդիսավորությամբ էր կազմակերպվում Վարդենորի տոնակատարությունը Գանձայում: Շրջակա բոլոր գյուղերից հավաքվում էին այստեղ հաղթության կանխավայելումով արբած հեծյալ տղաները՝ ձիերի գլուխներն ու թամբերը գույնզգույն ժապավեններով զարդարած: Թեթև վար-

248 Այս խզակի երկարությունը 1, 2 մետր էր:

գելով ու կոկոզավիզ՝ սլանում էին նրանք աջ ու ձախ, զարդարուն մտրակները տեղի-անտեղի գործի դնելով, ցուցադրում իրենց ու իրենց նժույգը, նախապատրաստվում, տրամադրվում մրցությանը: Առավոտը վաղ, լուսաբացի հետ, տոնական հագուկապով ու տոնականորեն տրամադրված ժողովուրդը, հեծյալ ու հետիոտն, մեքենաներով, ով ինչպես կարողանում, հասնում էր նախ **Ժամին սար** կոչված գեղադիր բարձունքը, ուր Սբ. Հովհաննեսի մատուռն է իշխում շրջակայքի վրա: Մոմ էին վառում, մատաղ էին անում ու բաժանում սիրով, ընդունելի լինելու համար բաժանում էին անխտիր, հրճվում-ուրախանում ու քեֆ էին անում՝ դհոլ-զուռնան, երգն ու պարը խառնած իրար: Կեսօրվա կողմ, արդեն գյուղամիջում, հիմնական տոնակատարությունն էր սկսվում, պարերն ու համատարած ուրախությունը, աղջիկ-տղա թաքուն սիրախաղերը և, իհարկե, ամենից շատ սպասված ձիամրցությունը...Հաղթողին մեծ հանդիսությամբ ողջունում էին, սահմանված մրցանակը հանձնում էին նրան, և այլևս ինքն ու իր ձին էին տվյալ տարվա հերոսը: Իհարկե, կռիվ-տուրուդմբոցներն էլ էին անպակաս լինում այդ օրերին, հատկապես հարևան գյուղերի ջահելության միջև, հետո էլ հաշտվում ու միասին քեֆի էին նստում, որոնք, ամբողջությամբ, ի վերջո, մաս էին կազմում ժողովրդական տոնախմբության: Եվ ժողովրդական վարդևորյան անկրկնելի այս տոնախմբությունները ամենամյա ու համատարած են ողջ Ջավախքում:

Ավելի վաղ ժամանակներում, ձիամրցություններին զուգահեռ, անցկացվել են նաև նիզակախաղեր, որոնք ավելի մեծ հմտություն ու վարժվածություն էին պահանջում, առավել տեսարանային էին ու սպասված և, անշուշտ, հեծկան ձիերի առավել բարձր ու տնական վարժանք էր անհրաժեշտ:

Մոտավորապես այս պատկերով էր ներկայանում Ջավախքի հայոց փոխադրամիջոցների ընդհանրական բնութագիրը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին կեսին: Իսկ այն խավերը, ովքեր սոցիալական և այլևայլ պատճառներով չունեին ձիեր, թեթև բեռները շալակով էին կրում:

Անցյալում փոխադարձ կապ պահպանելու ժողովրդի ունեցած միջոցները բազմազանությամբ շատ աչքի չեն ընկել: Նախորդ դարաշրջաններից չեն մնացել և 1830-ից հետո էլ չեն ստեղծվել դիտողական արհեստական կառույցներ: Օգտագործվել են բնական բարձունքները և եկեղեցական զանգերը, որոնց մի մասը այսօր էլ անհրաժեշտության դեպքում օգտագործվում է: Սրանք են, որ համարվել են կապի տեսողական և լսողական միջոցներ:

Լսողական միջոցները ավելի հարուստ են: Դրանց մեջ զգալի տեղ ունեն համայնքային-հասարակական նշանակություն ունեցող միջոցները:

Կարինում և Ջավախքում կարևոր դեր ուներ ակնատային համակարգը՝ ազգական և հարևան ընտանիքների միջնապատերում փոքր պատուհաններ ունենա-

լը: ճիշտ է, որ դրանք մեծ մասամբ օգտագործվում էին կենցաղային հաղորդակցման նպատակով, բայց առանձին դեպքերում դրանց նշանակությունը մեծանում էր՝ կապված ժողովրդի անվտանգության խնդիրների և ապահովության հետ: Ակնատներից հաղորդվում էր ցանկացած լուր, ինչը անհրաժեշտ կապ ունենալու ամենօրյա պահանջմունք էր: Մյուս միջոցը կատարածուի ծառայությունն էր. նա գյուղական ղեկավարության հրահանգի համաձայն, ժողով գումարելու, նաև այլևայլ հայտարարություններ անելու համար փողոցներն էր շրջում կամ կանգնում բարձր տների կտուրներին և բարձրաձայնում էր իր ասելիքը:

Կենցաղային տեսակետից կարևոր ծառայություն էին մատուցում մունետիկները: Ախալքալաքում և Ախալցխայում նրանք իրենց դերը կատարում էին մինչև 1920-1930-ական թվականները: Մունետիկը, ձեռքը ականջին դրած, անցնում էր փողոցից փողոց և բարձր հայտարարում լուրը, ինչը հանձնարարված էր իրեն քաղաքային հաստատությունների կողմից: Նա էր մարդկանց հրավիրում ժողովի, կամ էլ հասարակական որևէ այլ հավաքի: Քաղաքացիների հոժարությամբ թալլալ[249]-մունետիկը հայտարարում էր որևէ բանի կորստի մասին և հայտնում կորստի տիրոջ հասցեն:

Պատերազմական լուրեր հաղորդելու, նաև վտանգներից զգուշացնելու, ինչպես և պաշտպանվելու համար միջոցառումներ կազմակերպելու տեսակետից կարևորվում էր եկեղեցու զանգի ղողանջներով ժողովրդին արագ հավաքելու ձևը: Միևնույն այս նպատակին էին ծառայում նաև հրացանաձգությունը, սուլիչով տագնապաշեշտ սուլելը և այլն:

Կապի տեսողական միջոցներն անհամեմատ քիչ էին: Նույնիսկ չափազանց հազվադեպ էր օգտագործվում, օրինակ, ծուխ բարձրացնելը, որով արագացված շտապ օգնություն էր ակնկալվում: Բավական տարածված կիրառություն ուներ ճանապարհներին ձողեր տնկելու հինավուրց սովորությունը, հատկապես բքառատ ձմռանը չմոլորվելու համար: Ցրտաշունչ ձմեռներին այս առումով բավական վատահամբավ էր Բակուրիանիի լեռնանցքը, և բքի ժամանակ ձողերով կողմնորոշվելը դառնում էր ստեղծված վիճակից հնարավոր ելք:

249 **Թալլալ** բառը արաբերեն տէլլալ-տէլլալի բառից է ծագում՝ միևնույն մունետիկ նշանակությամբ:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ

Ինչպես և ցույց են տալիս հնագիտական պեղածո նյութերը, Ջավախքը անհիշելի ժամանակներից բնակեցված է եղել մարդկային հասարակության զարգացման բոլոր փուլերում: Պատմական այդ փուլերի ուսումնասիրությունը մեր նպատակների և պարտականությունների մեջ չի մտնում: Մենք խնդիր ու նպատակ ենք դրել մեզ 19-րդ դարի առաջին կեսից մինչև մեր օրերն ընկած ժամանակահատվածի բնակավայրերի և կառույցների ուսումնասիրությունը, որը, ոչ թե բնիկ ջավախահայերի, այլ մասնավորապես վերաբերում է 1830-ին Կարնո նահանգից Ջավախք տեղափոխված հայերի ընդունած և վերակառուցած բնակավայրերի պատմությանը:

Հայտնի է, որ հենց բնիկ Ջավախքի հայերը տիրող թուրքերի մեջ համատարած և բացառապես միակ շինարարներն են եղել, որոնք էլ կառուցել են Արևմտյան Հայաստանից Ջավախք տեղափոխված թուրքերի շենքերը: Բուն Արևմտյան Հայաստանում նույնպես թուրքերի գոմակերտ շինարարները հայերն են եղել: Հետևապես Ջավախքի թուրքերի՝ շուրջ 300-ամյա բնակավայրերն ունենալու էին հայկական գյուղերի ձևեր՝ կիսագետնափոր շենքերից գոյացած կցաթաղեր:

1830-ական թվականները եղել են նոր շինարարության սկզբնավորման տարիներ. տեղերում նույնիսկ ձեռք բերված հին շենքերը փոխարինվել են նորերով: Եվ որովհետև հայերը հին ավանդների համաձայն վերաբնակումը հաստատում էին ազգակցական թաղեր կազմելու եղանակով, ձեռք էին բերում ոչ միայն առանձին տներ, այլև ամբողջական թաղեր:

Հաջորդ տասնամյակներում նույնպես, բնակելի և տնտեսական շենքերը վերակառուցելիս, շարունակում էին ազգակցական կցաթաղերը պահպանելու և նորերը հիմնելու ավանդույթը: Քանի որ անհանդուրժելի էր համարվում ազգականի կենտրոնախույս ձգտումը, ազգակցական թաղից հեռու և մեկուսի տուն կառուցելու հակումը: Չէ՞ որ այդօրինակ մեկուսացումը թուլացնում էր ազգի[250] ինքնապաշտպանական զորությունը:

Ջավախք տեղափոխված հայերն, ըստ պապենական սովորության, ազգակցական թաղեր կազմելիս և աստիճանաբար յուրացնելով իրենց միջև ընկած հողամասերը, միացվում էին: Ստացվում էին նաև հարևանական կցաթաղեր: Անցուղիների կամ էլ փողոցների հակադիր կողմերում կցաթաղերն, առանց բացառության, կազմում էին ընդհանուր, թանձր զանգվածներ, որոնց կտուրներն ունենում-թողնում էին մարգագետնի տպավորություն: Այդօրինակ համաձույլ կտուրները երբեմն նույնիսկ 200 մետր երկարություն էին ունենում: Ընդունված կարգի համաձայն բոլոր մարդիկ կարող էին օգտվել համագյուղացու ելարաններից ու կտուրներից՝ ամենակարճ ճա-

250 Այս համատեքստում ազգ բառը գործածված է բացառապես նեղ արյունակցական իմաստով միայն. (կազմողի ծանոթագրումը՝ Ռ. Ղ.):

նապարհով տեղ հասնելու համար: Կտուրներն այդպիսով վեր էին ածվում հետիոտների «փողոցների», որոնք այդ տեսքով պահպանվում էին մինչև 1940-1950-ական թվականները ներառյալ[251]:

19-րդ դարից մինչև 20-րդ դարի առաջին քառորդը կցաթաղային սկզբունքով կառուցապատված և գրեթե անփոփոխ հարատևած գյուղերը այդպիսով ունենում էին մի քանի հարևանական թաղեր, որոնք միմյանցից բաժանվում էին անցուղիներով ու փողոցներով: Իսկ արդեն 1930-ական թվականներին, երբ հիմնվեցին կոլտնտեսությունները, երբ փոքրանում էին մեծ ընտանիքները, երբ նոր օրենքների ներգործմամբ նվազեցին-վերացան ազգակցական կռիվները և թուլացան ազգակցական փոխօգնության որոշ ձևեր, և երբ բավական նահանջ ապրեցին հին տոհմային ու համայնքային հարաբերությունների վերապրուկները, սկսվեց ազգակցական և հարևանական կցաթաղերի քայքայման փուլը: Այդ ժամանակաշրջանում, բնականաբար, ուժեղացան կենտրոնախույս ընտանիքների՝ իր ազգակիցներից և նրա ճնշող մթնոլորտից մեկուսանալու ձգտումները: Առանց ձեռք տալու պապենական կցաթաղերին, երբեմն էլ շինանյութերի օգտագործման նպատակով քանդելով իրենց բաժին շենքերը, առանձնացողները նոր շենքեր էին կառուցում:

1980 թվականին դեռևս պահպանված էր կցաթաղերի զգալի մասը: Դրանք այն շենքերն ու թաղերն են, որոնք 19-րդ դարի կեսերից սկսած ամուր ու հաջող կառուցված լինելով՝ այժմ էլ ծառայում են բնակիչներին: Դրանք պահպանվել են նաև այն պատճառով, որ 1920-ական թվականների վերջերին և 1930-ական թվականների ընթացքում շենքերի համալիրներին կից կառուցվել են ամառնատներ: Իսկ բնակ-

251 Թաղային կտուրները համայնքի կողմից օգտագործվում էին նաև այլ նպատակներով: Աշնանը և գարնանամուտին, երբ փողոցներն ու հրապարակները ցեխոտ էին լինում, իսկ ձմռանը, երբ ամենուրեք ձյան հաստ շերտ էր նստած լինում, կտուրները պատանիների, երիտասարդության ու առհասարակ տղամարդկանց համար ժամանցի հարմար վայր էին դառնում: Տարվա տարբեր եղանակներին երբեմն նույնիսկ կանայք էլ էին խմբվում, իլիկ էին մանում, գուլպա գործում ու զրուցում էին: Պատանիները չոր ու հարթ կտուրների վրա լախտի, գծագնդակ և այլ խաղեր էին խաղում: Մեծահասակները հաճախ պատանի-երիտասարդներին հրահրում, դավադրորեն մղում էին նաև անհատական մենամարտերի: Ոչ միայն ուրախ ժամանցների, ամենօրյա զրույց-բանավեճերի հանդիպավայր էին կտուրները, այլև լուրջ ժողովներ ու հավաքներ էլ էին կազմակերպվում-անցկացվում այստեղ: Օրակարգում դրվում և լուծվում էին հարցեր, որոնք վերաբերում էին դպրոցական, եկեղեցական խնդիրներին, ճանապարհաշինական կամ աղբյուրաշինական հարցեր էին քննվում, ինչպես նաև նախարապահներ ու հովիվներ ընտրում, 1-2 ցուլ վարձելու որոշում կայացնում և այլն: Գոմասենյակներում մշակված օրակարգերը ի վերջո լուծում էին գտնում տանուտերի կողմից ժողովի բացումից հետո, երբ սկսվում էր ակտիվ ու շահագրգիռ քննարկումների փուլը: Կտուրների վրա աշնանն ու ձմռանը կազմակերպվում էին հարսանեկան պարահանդեսներ, բարեկենդանյան և Տեառնընդառաջի ծիսակատարություններ ու թատերականացված խաղեր և այլն: Այնպես որ կտուրն այս լեռնաշխարհում ինքնատիպ խորհուրդ ուներ, յուրօրինակ հրապարակի դեր էր կատարում, որտեղ ժողովուրդը, գոմերում երկար չմնալու նպատակով, տարաբնույթ և հետաքրքիր ժամանակ էր անցկացնում:

չության մեծամասնությունը 1950-ական թվականներից սկսած կառուցել և այժմ էլ կառուցում է միայն երկաստիճան և երբեմն էլ եռաստիճան ընտանիքներին բավարարող ամրանիստ շենքեր: Ոմանք այդ տները կառուցում են չքանդված հին տների առջևում, իսկ աճող ընտանիքները՝ նաև նոր հողամասերի վրա: Բոլոր դեպքերում, նոր շենքերը բավական քաղաքատիպ լինելով՝ բացառեցին կցաթաղերը: Հազվադեպ են այն ազգակիցները, ովքեր իրար մոտիկ, ավանդական սկզբունքները դավանող նոր տներ են կառուցում: Սակայն կան նաև այնպիսիները, ովքեր, ունենալով նաև լայն հնարավորություններ, չեն լքել իրենց նախկին թաղամասը, և հին տան կողքը կամ վրան նոր տուն են կառուցել:

Թաղ բառը, ինչպես արդեն հիշատակել ենք նախկինում, չի պահպանվել մեզանում և մոռացվել է դեռևս Կարինում ապրած ժամանակաշրջանում: Այն փոխարինվել էր մահլա արաբերեն բառով, և ավանդաբար կոչվում էր ազգի տարեցի-ավագի անունով: Գյուղը երկու մասի բաժանելու հիմքը աշխարհագրական դիրքն էր. բարձր դիրքում հաստատվածը հորջորջվում էր՝ **վերի մայլա,** ցածրում հաստատվածը՝ **ցածի մայլա:**

Ազգակցական և հարևանական թաղերն իրար ոչ միայն պատկից էին, այլև ունեին հաղորդակցման ակնատային համակարգ, որը և հատուկ էր ողջ պատմական Հայաստանին: Ակնատը հայտնի է նաև **փանջարա** անունով[252]:

Փոքր Խանչալլի գյուղը, որը տեղադրված է Խանչալլի համանուն լճի ափին, լեռնային գյուղի տիպիկ օրինակ է: Այս գյուղը դեռևս 1950-ական թվականներին լիովին պահպանել էր 1910-ական թվականների ստատիկ վիճակը, եթե, իհարկե, չհաշվենք 1910-1930-ական թվականներին գյուղից դուրս կառուցված մի շարք տներ:

Գյուղի հին թաղերից պոկված տնտեսությունները նոր տներ էին կառուցել ազգակիցների օգնությամբ: Այդ պատճառով էլ ազգակցական թաղերը բավական անխաթար էին մնացել:

1950 թվականին Քուռչ կոչված ժայռաբլուրի վրայից մենք փորձեցինք գծել և նկարագրել (ուրվապատկերել) հին համայնապատկերի թաղամասերը՝ բացառելով առկա նորակառույցները: 1910-ական թվականները ներկայացնող այդ գյուղի թաղերի նկարագիրը հետևյալն է: Գյուղը բաժանված էր երկու մասի՝ **վերի մայլի** և **ցածի մայլի**:

Վերի մայլայի մեջ մտնում էին 4 թաղախմբեր, որոնք ինչպես ազգակցական, այնպես էլ հարևանական կցաթաղեր էին:

Առաջին թաղախումբ

1. Մաթևոս Իսպիրյանի տներ,

252 **Փանջարա** բառը պարսկերեն **փէնչէրէ,** պատուհան բառի աղավաղված ձևն է:

2. Մինաս Իսպիրյանի տուն,
3. Օվանես Ստամբոլցյանի տուն,
4. Մերգել Ստամբոլցյանի տուն,
5. Արութիկ Սերոբյանի տուն:

Երկրորդ թաղախումբ

6. Ստեփան Իսպիրյանի տուն,
7. Սահակ Իսպիրյանի տուն,
8. Մաքնոս Իսպիրյանի մարագ:

Երրորդ թաղախումբ

9. Մուշեղ և Միսակ Հաբոյանների տներ,
10. Մ. Հաբոյանի տուն,
11. Օսկան Նազարյանի տուն,
12. Առաքել Պոտոսյանի տուն,
13. Մոսես Պոտոսյանի տուն,
14. Ստ. Պոտոսյանի տուն,
15. Արութ և Գիրքոր Մանասյանների տներ,
16. Նիկո, Համբար և Պողոս Մահտեսյանների տներ,
17. Գաբրել Մահտեսյանի առանձնատուն:

Չորրորդ թաղախումբ

18.Մարգար Պոտոսյանի և եղբայրների առանձնատուն:

Ցածի մայլի մեջ մտնում էին հետևյալ թաղախմբերը.

Առաջին թաղախումբ

19. Աղաբեկ Այվազյանի տուն,
20. Համո Այվազյանի տուն,
21. Սեթո և Սիսակ Այվազյանների տներ,
22. Փիլոս Սերոբյանի տուն,
23. Մկրտիչ Եսոյանի տուն,
24. Ներսես և Պողոս Եսոյանների տուն,
25. Երեմ Եսոյանի տուն,
26. Մինաս Վարդանյանի տուն,
27. Սրապ Վարդանյանի տուն,
28. Հարություն Բդոյանի տուն,
29. Գրիգոր Բդոյանի տուն,
30. Անտոն և Դավիթ Բդոյանների տուն,
31. Մեսրոբ Բդոյանի տուն,

32. Զաքար Բդոյանի տուն:

Երկրորդ թաղախումբ

33. Աղասի Եսոյանի տուն,
34. Սարգիս Եսոյանի տուն,
35. Ներսես և Հակոբ Եսոյանների տուն,
36. Մինաս Եսոյան-Իսկանյանի տուն,
37. Մինաս Եսոյան-Իսկանյանի սրբատուն,
38. Ալեք Եսոյանի տուն,
39. Ղուկաս Եսոյանի տուն,
40. Մեսրոբ Եսոյանի տուն:

Երրորդ թաղախումբ

41. Սմբատ Ավագյանի տներ,
42. Գաբրել Ավագյանի տուն,
43. Համո և Արմենակ Ավագյանների տներ,
44. Սարգիս և Վաչո Ավագյանների տներ,
45. Գաբրել Մանասյանի տուն,
46. Վախթանգ Մանասյանի տուն,
47. Մաքնոս Իսպիրյանի տուն:

Չորրորդ թաղախումբ

48. Խաչատուր Եսոյանի տուն,
49. Արես Եսոյանի մենատուն:

Հինգերորդ խումբ

50. Եղիա Ավագյանի առանձնատուն:

Առանձնատներ գյուղից դուրս

51. Աբրահամ Իսպիրյանի տուն,
52. Ունան Ստամբոլցյանի տուն:

Հասարակական կառույցներ

53. Եկեղեցի (1875),
54. Դպրոց (1910-ական թթ. սկզբներ):
55. Աղբյուր:

1950-1970-ական թվականներին Փոքր Խանչալլին պարզապես կիսվեց. վերի թաղից առանձին, Դիլիֆի ճամփի վրա, երկու շարք շենքերով կազմվեց նոր թաղամաս՝ Նորաշեն անունով: Ցածի թաղից դուրս, ցրված կարգով, կառուցվեցին բազմաթիվ նոր տներ, որով երբեմնի կլորավուն գյուղն ընդունեց ձվաձև համայնապատկեր:

1980 թվականի դրությամբ, սակայն, իր տեղում է մնում հին գյուղի տների ու թաղերի 3/4-մասը: Դրանց մի մասը օգտագործվում է անասնապահության նպատակով, մի մասն էլ լքված է:

Փոքր Խանչալլիի կառուցապատման ձևերը բնորոշ էին նաև մյուս գյուղական բնակավայրերին: Միայն թե լեռնային գյուղերը 20-րդ դարի առաջին կեսին ավելի շատ էին պահպանել կառուցապատման հին ավանդույթները, քան հարթավայրային գյուղերը: Կցաթաղային համակարգն ուներ համընդհանուր բնույթ ոչ միայն լեռնային գյուղերում, և ոչ միայն Ջավախքում, այլև նույնիսկ Արարատյան հովտում: Եվ դա, որքանով որ բացատրվում է պատմական հանգամանքներով, որին մենք տալիս ենք առաջնային նշանակություն, քանզի էապես առնչվում է ինքնապաշտպանության հետ, նույնքան էլ սեյսմիկ առումով հակաերկրաշարժային հիմնավորում ուներ: Կցաթաղով տներ կառուցելու միտքը հակաերկրաշարժային միջոցառումների մեջ ամենաիմաստունն է եղել: Այդ երկու հանգամանքներն էին ընկած ոչ միայն Հայկական լեռնաշխարհի, այլ նաև ամբողջ Առաջավոր Ասիայի կցաթաղային շինարարության մտահղացման հիմքում: Դրանով էլ պետք է բացատրել այդ երկրների գյուղերի սեղմվածությունը, կլորության հասնելու ձգտումը և այլն: Միայն այս հիմնավորվածությամբ և ոչ թե սոսկ ձմռան պայմաններում տաք լինելու հաշվարկումով պետք է բացատրել պատմական խոր ու խորքային այս փորձառությունը, հայկական տան և ողջ գյուղի կիսագետնափորության հանգամանքը:

19-րդ դարի վերջերին բացառություն էին կազմում այն գյուղերը, որոնք քաղաքի ազդեցությամբ հեռացել էին կցաթաղային համակարգից: Այդպիսիներից էր Խոջաբեկը, որը, գտնվելով գլխավոր ճանապարհի վրա և կից լինելով ենթագավառային կենտրոն Բոգդանովկա գյուղին, ցրված տներ էր կառուցում: Այդ մասին 1890-ական թվականներին ահա թե ինչ էր վկայում Լինչը: Նկատի ունենալով Բոգդանովկան ու Խոջաբեկը, նա գրում է, թե Բոգդանովկան «Հայկական գյուղեն մեծ տարբերություն մը չունի. անշուշտ, կարելի է, որ փոխադարձաբար իրարու վրա ազդած ըլլան...Թե մեկ և թե մյուս գյուղը ունեին ցիրուցան քարաշեն բնակարաններ, տափակ տանիքներով, ուր կիզահող թափված էր. գլխավոր պողոտայի վրա նայող արահետները աղտոտ ու խորդուբորդ են[253]»:

Լինչի այս դիտարկումը ճիշտ է. խոջաբեկցիները, պահպանելով ազգային շինարարության ձևերը, ընդօրինակում էին ցրված տներ կառուցելու ռուսական եղանակները, իսկ ռուսները՝ հայկական հողածածկ ձևերը: Ցրված տներ կառուցելու միտում է նկատվել նաև Կարծախ գյուղում: Կ. Գրիգորովը 1893-ին գրել է, թե Կարծախը 1880-ական թվականներին բաժանվում էր 3 մասի. բուն Կարծախ, Քիլերտու

253 Հ. Ֆ. Պ. Լինչ, Հայաստան, ուղևորություններ և ուսումնասիրություններ, հ. Ա, Կ. Պոլիս, 1913, էջ 53:

և Նորաշեն, որը կառուցվել է 1884-ին: Առաջինում տները գրեթե հատակագծով էին կառուցված, բայց իրար կցված էին: Այնպես, որ նրանց միջև կալատեղերի համար բացատներ չէին մնացել: Իսկ երկրորդ և երրորդ թաղերում տների առջև կալատեղեր կային[254]:

Կցաթաղային կառուցման համակարգն ակամայից ենթադրում էր նեղ ու ծուռ անցուղիներ և փողոցներ: Անցուղիները, որ սակավ էին պատահում, նախատեսվում էին հետիոտների և գրաստների, իսկ փողոցները՝ մեծ ու փոքր սայլերի և եզան սահնակի շարժման համար: Փողոցը պետք է ունենար այնքան լայնություն, որպեսզի մեծ սայլն ազատ անցներ: Դրանից ավելի լայն փողոցներ հազվադեպ էին պատահում:

Բացառությամբ բնիկ հայկական և վրացախառն-հայկական գյուղերի, Ջավախքի այժմյան հայկական գյուղերի մի զգալի մասը գոյություն է ունեցել նախքան Կարնո գաղթը: Միայն մի քանի գյուղեր կարելի է ցույց տալ, որոնք հիմնվել են գաղթից հետո, մանավանդ 1920-ական թվականներին (Մեծ և Փոքր Սամսարներ, Կաթնատու, Ժդանովական, Նոր Խուլգումո, Ասփարա[255]):

Այնպես որ, այդ հնագույն բնակավայրերը նախապես տեղավորված են եղել տնտեսական, պաշտպանական և ջրամատակարարման տեսակետից հարմար վայրերում:

Ջրի կենսական նշանակությունն էլ հաշվի առնելով՝ գյուղերի մեծ մասը կառուցվել է գետերի, գետակների ու առուների ափերին: Պաշտպանական տեսակետից ել-

---

254 Կ. Գրիգորով, Կարծախ գյուղը, (տես ՍՄՕՄՊԿ, թող. 17-րդ, 1893, էջ 90-91):
Կարծախը 1893-ին բաղկացած էր 240 ծխից, 1055 արական, 935 իգական անձերից: Միջինը՝ 8 անձ յուրաքանչյուր ընտանիքում: Ամենամեծ ընտանիքն ուներ 27 անձ: Տոմարագրքի համաձայն, 1882-1892 թվականներին ծնվել է 1134 և մահացել՝ 676 մարդ: Աճը կազմում էր 458 մարդ, 3 տոկոս 10 տարում, ամուսնացել է 166 մարդ, ծնվել է 585 տղա և 549 աղջիկ: (Տես Կ. Գրիգորով, նշվ. աշխ., էջ 92):
Մինչև 1830 թվականը Կարծախի տերը եղել է Նագի-Բեկ-զադե թաթարը, բնակիչները նույնպես թաթարներ են եղել: Հայերն այստեղ են եկել Կարնո չորս գյուղերից՝ Մեծդուից, Օգոմայից, Ավգավերից և Նիստից (անդ, էջ 92):

255 Փոքր Սամսարի դպրոցի մանկավարժներ Մ. Մ. Մկրտչյանի և Վ. Ռ. Ավագյանի վկայությամբ (1981թ.), Սամսարները կառուցվել են 1830-ական թվականների սկզբներին՝ Էխտիլայի բնակչության մի մասի ձեռքով: Կաթնատուն կառուցվել է 1930-ին՝ այստեղ տեղափոխված աբուլցիների ձեռքով: Նույն 1930-ին է կառուցվել նաև Ժդանովականը, որի բնակիչները տեղափոխվել են Հեշտիայից: Ինչպես հաղորդել է Ասփարայի կոլտնտեսության նախագահ Մ. Թումանյանը (1981թ.), Նոր Խուլգումոն հիմնվել է 1925-ին Ախալքալաքի շրջանի Խուլգումո գյուղից տեղափոխված 25-26 ընտանիքների կողմից: Միևնույն նամակագիրը հաղորդում է, թե Ասփարա գյուղն անցյալում **Կըզլ վերանա** (**Կարմիր ավերակ**) անունն է ունեցել: 1924-ին, երբ Ախալքալաքի շրջանի Կարտիկամ գյուղից 32 ընտանիք տեղափոխվում է այստեղ, գյուղը վրացերեն լեզվով վերանվանվում է Ասփարա՝ **100 հոտ** նշանակությամբ:
1840-50-ական թվականներին ամբողջովին նոր են հիմնվել նաև դուխաբոռական բնակավայրերը:

նելով՝ Խրթվիսը կառուցված էր Կուրի և Թափարավանի գետախառնուրդի մոտ, իսկ Նախալաքևը՝ Կուրի ափին: Գանձան, Սաղամոն, Ղաուրման և Մարտունին կառուցվել են Թափարավանի ափերին: Ջրառատ աղբյուրների ակունքների վրա են հաստատվել Էխտիլան, Դիլիֆը, Հեշտիան, Կուլիկամը և այլ գյուղեր: Սակավաթիվ են այն գյուղերը, որոնք հիմնվել են ձորափերին: Իսկ միջին դարերում պաշտպանական նկատառումներով բնակավայրեր են հիմնվել նաև ձորալանջերին, որոնցից մեկի ավերակները պահպանված են Թափարավան գետի ձորի լանջին, Ալմալի կոչված վայրում:

Ջավախքն ունի նաև լճափնյա գյուղեր, որոնք ճահիճներից և ընդհանուր խոնավությունից տուժում են:

Գյուղերի մի զգալի մասը հիմնված է սարավանդերի վրա, թեև մեղմ թեքության շնորհիվ շենքերն այստեղ այնպես չէին կառուցվում, ինչպես Զանգեզուրում: Այնուամենայնիվ, բնակարանների ետնամասերը, մխրճվելով լանջերի մեջ, խոնավ էին լինում:

Ալեքսանդրապոլ (Լենինական, Գյումրի)-Ախալցխա գլխավոր ճանապարհի վրա կառուցված բնակավայրերը բավական սակավ են. դրանցից միայն մեկն է հայկական (Խոջաբեկ), որը 19-րդ դարում գտնվում էր ճամփի մի կողմում, իսկ այժմ տարածված է ճանապարհի երկու կողմերին: Մյուսները ռուսական են (Բոգդանովկա, Օրլովկա, Գորելովկա և Եֆրեմովկա), ի սկզբանե տները կառուցում էին ճանապարհի երկու կողմում, որով և գյուղերը երկարում էին:

Հայկական բնակավայրերը 1830-ական թվականներից մինչև նույն դարի 70-ական թթ. նոր եկեղեցիներ էին կառուցում, որոնք տեղադրվում էին գյուղերի կենտրոնական մասերում: Եկեղեցու հրապարակը (տեղը) նախապես էր ճշտվում՝ գյուղի հիմնադրման կամ վերաբնակության առաջին իսկ օրերին: Այնպես որ մինչև ֆինանսական միջոցների հայթայթումը տասնյակ տարիներ էին անցնում, սակայն ընտրված տեղը ազատ էր մնում, որն անձեռնմխելի դարձնելու նպատակով քար էր դրվում և քահանայի ձեռքով օծվում էր:

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին եկեղեցիներին կամ նրանց հրապարակներին կից կառուցվում էին դպրոցական շենքեր: Այս երկու կառույցներին մոտ, ոչ բոլոր գյուղերում, լինում էին նաև ընդհանուր հրապարակներ կամ օգտագործվում էին գյուղացիների կից կալերը, որտեղ տեղի էին ունենում պատանեկան և երիտասարդական խաղային մրցումներ, մենամարտեր, լարախաղացություններ, համայնքային ընդհանուր ժողովներ կամ ծառայում իբրև զրուցատեղիներ: Սրանք հին բնակավայրերի բնորոշ կողմերն էին:

Ախալքալաքի գավառը 19-րդ դարի վերջերին ուներ 110 գյուղ, ուր ապրում էին հայեր, ռուսներ, վրացիներ և մահմեդականներ: Բնակավայրերից 70-ը արքունա-

պատկան էին, իսկ մնացածները պատկանել են աշխարհիկ և հոգևոր կալվածատերերին[256]: Ստորև ներկայացվող աղյուսակը, որ մեջ ենք բերում Խ. Ա. Վերմիշևի աշխատությունից, ցույց է տալիս նշված գավառի 1886թ. արքունի բնակավայրերը՝ ազգաբնակչության վիճակագրությամբ հանդերձ:

Թիվ	Բնակավայրեր	Ընտանիքներ	Բնակչությունը արական սեռ	Բնակչությունը իգական սեռ	Ծանոթություն
1	2	3	4	5	6
1	Աբուլ	64	374	334	Հայեր
2	Ագանա	47	196	171	Հայեր
3	Ազավրեթ	99	575	517	Հայեր
4	Ալաթուբան	29	180	166	Հայեր
5	Ալաստան	165	662	606	Հայ կաթոլիկներ
6	Արագովա	106	422	395	Հայեր
7	Արագյալ Մեծ	44	265	252	Հայեր
8	Բալխո	37	204	180	Հայեր
9	Բավրա	34	128	130	Հայ կաթոլիկներ
10	Բարալեթ	92	429	390	Հայեր, վրացիներ
11	Բեժանո	65	439	366	Հայեր
12	Բզավեթ	36	172	175	Հայեր
13	Բոգդանովկա	82	399	380	Դուխաբոռներ
14	Բուղաշեն	29	180	150	Հայեր
15	Գանձա	113	557	540	Հայեր
16	Գյոնդուրա Մեծ	75	414	373	Հայեր
17	Գորելոյե	138	621	656	Դուխաբոռներ
18	Գումուրդո	118	559	515	Հայեր
19	Գոմ	92	402	348	Հայեր

256 Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունին 1830-ական թվականների կեսերին մատչելի գներով ձեռք բերեց մի շարք հողամասեր, խանութներ և տներ, ինչպես նաև Ջավախքի Կարծախ, Խավետ, Երկու Դաղեշներ, Վերանա Կարծախ, Խոզապին, Կարավ, Կոնճղա, Չուրչուտո, Կանաթխև, Սյուր, Ծիրա, Կոկաշե, Պխիսցիխար, Թուտրութուբան, Բալաթուբան գյուղերը, ավերակներն ու ագարակները: «Այդ կալվածներից Ախալցխայի ս. Փրկիչ եկեղեցուն մնացին Ախալքալակա գավառում Տաճկաստանի Չլտր նահանգին սահմանակից եղածներ Կարծախ, Խավետ, Դաղեշ գյուղ, ավերակ Դաղեշ, Խոզապին և Կարավ՝ յուրյանց մեջ գտնված վարելահողերով, լեռներով, լճերով, առուներով, մարգագետիններով, արոտներով և դաշտերով, որոնք Կարապետ արքեպիսկոպոսը գնել էր 1834-1840 թվականներում տաճկահպատակ Թույր-բեգ-Նազի-բեկ օղլուց 44.000 օսմանյան ղուռուշի (այն ժամանակվա ընթացիկ գնով 2315 ռուբլի ռուսաց փող) և որոց Կուպչան հաստատված է հետո Թիֆլիզի քաղաքական և քրեական դատարանում 31-ն դեկտեմբերի 1852 ամի թիվ 16»: (Հովակիմ Գեղամյանց, Կարապետ արքեպիսկոպոս, «Փորձ», 1876, թիվ 1, էջ 194-195):

20	Դավնիա	4	42	30	Մահմեդականներ
21	Դիլիֆ	73	338	298	Հայեր
22	Եֆրեմովկա	83	354	335	Դուխաբոռներ
23	Զակ	38	196	176	Հայեր
24	Էրինջա	9	52	42	Մահմեդականներ
25	Թախչա	16	81	79	Հայեր
26	Լոմատուրցխ	20	123	117	Հայեր
27	Խանչալլի Մեծ	82	446	402	Հայեր
28	Խանչալլի Փոքր	35	188	188	Հայեր
29	Խոջաբեկ	49	273	254	Հայեր
30	Խրթվիս	156	632	490	Մահմեդականներ
31	Խումրիս	2	15	16	Վրացիներ
32	Կարտիկամ	79	410	385	Հայ կաթոլիկներ
33	Քիլդա	36	211	210	Վրացիներ
34	Կորխ	71	339	280	Հայեր
35	Կվարշա	6	57	38	Քրդեր
36	Կուլիկամ	54	294	244	Հայեր
37	Հեշտիա	187	739	669	Հայ կաթոլիկներ
38	Ղադոլար	31	176	171	Հայեր
39	Մադիրյա[257]	--	--	--	--
40	Մաճատիա	67	297	259	Հայեր
41	Մամզարա	49	235	200	Հայեր
42	Մարգաստան	11	39	36	Մահմեդականներ
43	Մերենիա	90	413	375	Հայեր
44	Միրաշխեն[258]	16	56	54	--
45	Չամդուրա	83	343	320	Հայեր
46	Չունչխել	37	178	161	Վրացիներ
47	Պատկանա	8	54	37	Մահմեդականներ
48	Ջիգրաշեն	108	468	439	Հայեր
49	Ռոդիոնովկա	97	404	374	Դուխաբոռներ
50	Սաթխա	152	803	736	Հայեր
51	Սամսար Մեծ	40	188	168	Հայեր
52	Սամսար Փոքր	42	207	163	Հայեր

257 Բնիկները տեղափոխվել են Կարսի մարզ. նրանց տեղում ապրում են արքունի Ազավրեթ գյուղի վարձակալները:

258 Միրաշխեն. այս բնակավայրի թվերի դիմաց ազգության սյունակում որևէ ազգ նշված չէ. թողնված է դատարկ:

53	Սարո	51	221	211	Վրացիներ
54	Սիրքըվ	7	41	36	Վրացիներ
55	Սպասսկոյե	70	313	345	Դուխաբոռներ
56	Վաչիան	154	655	527	Հայեր
57	Վարգավ	18	62	60	Վրացիներ
58	Վարևան	74	346	283	Հայ (կաթոլիկ)
59	Վերտոխան	6	34	39	Քրդեր
60	Տամբովկա	58	248	256	Դուխաբոռներ
61	Տըրկընա	17	74	60	Հայեր
62	Տրոիցկոյե	90	323	334	Դուխաբոռներ
63	Տուրցխ	39	216	207	Հայեր
64	Ուճմանա	35	166	153	Հայ (կաթոլիկ)
65	Ուչարուլա	28	161	141	Վրացիներ
66	Փոկա	96	383	343	Հայեր
67	Օլավերդ	63	267	269	Հայեր
68	Օրլովկա	119	479	500	Դուխաբոռներ
69	Օրջա	80	338	281	Հայեր
70	Օրոջալար	50	290	252	Հայեր
Ընդհամենը		**4351**	**20,448**	**18,693**	

Այդ աղյուսակում բերված 70 արքունի և այդտեղ տեղ չգտած 40 գյուղերը միասին 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին կազմում էին 10 հասարակություն: Ստորև կբերենք Հ. Ս. Էփրիկյանի կազմած աղյուսակը, որտեղ կան վիճակագրական տեղեկություններ հենց 110 գյուղերի մասին:

	Հայեր				Օտարներ		Տներ	Ընդամենը 2 սեռից
	Լուսավորչական		Կաթոլիկ					
	արակ.	իգ.	արակ.	իգ.	արակ.	իգ.		
Արագովա՝ 13գ.	2871	2562	759	715	139	114	818	7160
Բարալեթ՝ 23գ.	4218	3788	--	--	815	705	1014	9526
Վարևան՝ 9 գ.	1081	1007	1860	1683	586	509	768	6726
Դիլիսկա՝ 9գ.	1565	1445	--	--	865	823	519	4628
Խրթվիս՝ 11 գ.	13	12	--	--	1510	7282	417	2817
Վաչիան՝ 11գ.	3879	3405	--	--	297	256	851	7833
Գարել՝ 8գ.	--	--	--	--	3322	3326	829	6646
Կարծախ՝ 10գ.	1092	950	--	--	1054	877	441	3973
Սաթխա՝ 8գ.	2813	2609	--	--	321	260	656	6003
Հեշտիա՝[259] 8գ.	922	849	1165	1044	76	57	496	4114
Ընդամենը	**18.454**	**16.626**	**3784**	**3442**	**8981**	**8209**	**6809**	**59.496**

Այս տասը հասարակության բնակչության թիվը 1902-ին եղել է 59,496, որին ավելացնելով նաև քաղաքի բնակչության թիվը, Էփրիկյանը ստանում է 63,799 բնակիչ, որի 50,467-ը հայեր են եղել[260]:

Այժմ փորձենք բնորոշել Ախալքալաքի և համեմատաբար վերջերս հիմնված Բոգդանովկա ավանի բնակավայրային հատկանիշները:

Ախալքալաքը 19-րդ դարում կայուն վիճակով բերդաքաղաք էր: Այն կառուցված է Ախալքալաքի սարավանդի վրա, Թափարավան և Քառասուն աղբյուր գետերի միջև, Ախալցխա-Լենինական խճուղու վրա: 1860 թվականին անջատվելով Ախալցխայի գավառից և, Ախալքալաքի գավառական կենտրոն դառնալով, քաղաքն այնուհետև դարձավ արհեստավորական ու որոշ առումով նաև մշակութային հաստատություններով հաստատված կենտրոն:

19-րդ դարի վերջերի տվյալների համաձայն, Ախալքալաքը վերակառուցվել է՝ ունենալով ուղիղ փողոցներ: Գետերին զուգահեռ գցված փողոցներն ընդհատվում են խաչաձևվող փողոցներով: Բացի մի քանի մասնավոր երկհարկանի տներից և Կտոյի երկհարկանի հյուրանոցից, այստեղ բոլոր տները միհարկանի էին: Վերջիններս իրար կից կառուցված էին փողոցների ամբողջ երկարությամբ: Փողոցները նախապես եղել են առանց սալահատակի: 1950-ական թվականներին նշված փողոցների մեծ մասը մնում էր անբարեկարգ վիճակում, թեև սկսվեց որոշ փողոցների ասֆալտապատումը: Եվ այնուամենայնիվ, 1980-ական թվականներին էլ քա-

259 Տես Հ. Ս. Էփրիկյան, Ա, էջ 65:

260 Հ. Ս. Էփրիկյան, Ա, էջ 64:

ղաքի փողոցների վիճակը մնում էր գրեթե նույնը: Տեղական շինաքարի վիթխարի պաշարները չեն շահագործվում, ուստի մասնավոր անձինք քարը ներմուծում են Արթիկից:

Քաղաքը 1950-1970-ական թվականներին կրկնակի ընդլայնվել է մասնավոր տնտեսությունների կառուցած 1-2 հարկանի շենքերի հաշվին: Ցավոք, այստեղ ևս փողոցները բարեկարգված չեն: Ինչպես հին տների մեծ մասը, նորակառույցներն էլ այժմ ծածկվում են թիթեղով կամ շիֆերով: Պետական 3-4 հարկանի բնակելի և հասարակական շենքերը քանակով շատ քիչ են: Քաղաքային արդյունաբերությունը աննշան լինելով՝ բնավ չի ապահովում ազգաբնակչության զբաղվածությունը:

1900-1910-ական թվականներին հիմնադրված զինվորական քաղաքը՝ երկհարկանի հարմարավետ շենքերով, կառուցվել է Փոքր ձորի ափին: Այժմ այս քաղաքամասը այնպես է բարեկարգված, որ կարելի է համարել միանգամայն ժամանակակից քաղաք:

Բոգդանովկա ավանը համեմատաբար նոր է: Այն ձևավորվել է 1960-ական թվականներից սկսած՝ հիմք ունենալով նախկին Բոգդանովկա և Խոջաբեկ գյուղերը: Ավանի մեծացումը պայմանավորվեց այստեղ հաստատված շրջակա գյուղերի բնակչության հաշվին, թեպետ այն տակավին գյուղ է, քաղաքայնացող կենցաղով: Փողոցներն ուղիղ են, սակայն անխնամ են ու անբարեկարգ:

ՇԵՆՔԵՐ

Ջավախքի բնիկ հայերը մինչև Կարնո գաղթը թեև բավական սակավացել էին, այնուամենայնիվ, կարևոր դեր են խաղացել այս գավառի թուրք վերաբնակիչների մեջ հայկական շինարարական արվեստի տարածման գործում: Բնակավայրերի որոշ տիպերի և շենքերի վերապրուկների վրա հենվելով՝ Ստ. Լիսիցյանն իրավացիորեն նշել է, որ կան բոլոր հիմքերը կարծելու, թե Կարինից ներգաղթող հայերը պիտի որ իրենց ջավախքցի հայրենակիցների մեջ գտնեին ազգային շենքերի տիպեր[261]:

Հայերի նոր, ամենամեծ զանգվածը, ինչպես վերևում նշել ենք արդեն, 1830 թվականին Ջավախք է տեղափոխվել Կարնո և մասամբ էլ Երզնկայի գյուղական բնակավայրերից: Ջգալի թիվ էին ներկայացնում նաև միևնույն Բարձր Հայքի ազգագրական շրջանի մեջ մտնող բասենցիները և արտահանցիները: Ջավախք տեղափոխվածների հետ էին նաև Տուրուբերանի ազգագրական շրջանի մեջ մտնող սակավաթիվ համայնքներ, որոնք այստեղ կազմեցին 4 գյուղ՝ Հեշտիա, Ուճմանա, Թորիա և Դիլիֆ:

261 Ստ. Լիսիցյան, Բարձր Հայքի գյուղական կացարանները, (Կովկասյան պատմա-հնագիտական ինստիտուտի տեղեկագիր, հ. 4, Թիֆլիս, 1926, էջ 56):

Գաղթից հետո, անկասկած, խնուսցիներն ու հարքեցիները շենքեր են կառուցել ըստ հայրենի (բնաշխարհի) ավանդների: Բայց 19-րդ դարի վերջերից մեզ հասած հին կառույցներից երևում է, որ Հեշտիա, Դիլիֆ և մյուս գյուղերում Մշո և Կարնո շինարարական արվեստը խառն (էկլեկտիկ) վիճակում է գտնվում:

Ջավախքի նոր հայերը Բարձր Հայքից ժառանգել և մինչև օրս պահպանել են մեկ բաժնով, երկու բաժնով և բազմաբաժին կառույցների բոլոր ձևերը: Ընդ որում, մեկ բաժնով շենքերը բազմաֆունկցիոնալ կառույցներ էին, որոնց մեջ ընտանիքն ապրում էր ամբողջ ունեցվածքով հանդերձ: Այն կառույցները, որոնց մենք **մենատուն** անվանումն ենք տալիս, պահպանում էին ծայրահեղ չքավոր ընտանիքները: Ինչպես ստորև կտեսնենք, որպես այդպիսիք Ջավախքում, նաև պատմական Հայաստանի բոլոր նահանգներում եղել և մինչև 20-րդ դարի սկզբներն են հասել խոր նախնադարից:

Երկու բաժնով տները մենատներից տարբերվում էին նրանով, որ գլխատունն անջատվում էր գոմից, և ընտանիքի համար որպես բնակարան ծառայող թնդրտանը զուգակցվում էին գոմի անկյունում կապված ժամանակավոր թախտերը: Այսպիսի կառույցները նույնպես խոր անցյալից էին գալիս:

Երեք բաժնով կառույցները մեծ մասամբ միջակ տնտեսության տեր ընտանիքներն էին օգտագործում, որտեղ ավելացված երրորդ բաժինն, ըստ հայեցողության, կարող էր լինել գոմասենյակ կամ էլ մեկ այլ բան:

Բարգավաճող միջակ տնտեսությունները և ունևոր խավերը կառուցում էին 4-ից մինչև 15 բաժնից բաղկացած համակառույցներ, որոնք հիմնականում ծառայում էին անհամեմատ մեծ գերդաստաններին կամ եռաստիճան ընտանիքներին:

Եռաստիճան ընտանիքները բաղկացած էին լինում 15-20, իսկ մեծ գերդաստանները՝ մինչև 60-80 անձից: Բնական է, որ համատեղ ապրող այդպիսի տնտեսությունները բնակարանային մեծ պահանջի հետ մեկտեղ նաև մեծ քանակության հասնող անասունները տեղավորելու համար մի քանի բաժին էին ունենալու: Անխուսափելիորեն առաջացող ներքին տրոհումն այդ գերդաստաններին մղում էր դեպի ննջարանների անջատում, ինչն էլ դեմ էր գերդաստանական կանոններին: Ուստիև մեծաքանակ տավարի 2-3 գոմերում առաջանում էին եղբայրական ընտանիքներին հատկացվող նույնքան և ավելի գոմասենյակներ: Այդպիսի համակառույցների նկարագիրը մենք կներկայացնենք ստորև, որից պարզորոշ կերևա, որ Կարնո և Մշո հայերը պահպանած էին եղել երդիկային համակարգով և գետնատարած (հորիզոնական ուղղությամբ փռված) շինարարության հին ավանդները:

Բացի բնակարաններից և անասնապահական շենքերից, Ջավախքում կարևոր դեր ունեին նաև տնտեսական-պահեստային շենքերը և արտադրական կառույցները:

Համակառույցներ: Մենատան առաջին տարբերակի վրա գոմի ավելացումով խմորվում է բազմաբաժին շենքերի ստեղծման գաղափարը: Առաջին համակա-

ռույցը կազմվում է պատով իրարից բաժանված գոմի և մենատան միավորումով: Այս հանգամանքից ելնելով՝ պետք է ասել, որ ընդհանրապես շենքերի համակառույցներն առավելապես ստեղծվել են նախապես գոյություն ունեցող մեկ բաժնով տներն իրենց հատուկ ծածկաձևերով ու գործառույթներով իրար կցվելով, թեև անժխտելի է նաև շինարարական ստեղծագործական ընթացքի մեջ հանպատրաստից մտահղացման դերը:

Շենքերի գործառույթներից ելնելով՝ հատակագծերը կցման տեղերում ևս չէին փոխվում, որովհետև, բացի նպատակահարմարության խնդրից, այդ ձևերը գաղափարական իմաստ էլ են ունեցել: Գուցե հենց դրանով էլ պետք է բացատրել, որ Շենգավիթի պղնձեղարյան բնակավայրում համակառույցը քառակող հատակագծերի հետ ունեցել է նաև կլոր հատակագծեր[262]:

Ինչպես արդեն ասել ենք, Ջավախքում այժմ առկա են երկու ազգագրական շրջանների՝ կարնոհայերի և տուրուբերանցիների կառուցողական արվեստի տարբերակային առարկայացումներ: Այժմ կներկայացնենք այդ տարբերակներն առանձին-առանձին:

Կարնոհայերի համակառույցներ: Ունենալով անկասկած շինարարական բարձր կուլտուրա, կարնոհայերը Բարձր Հայքում, Ջավախքում և Շիրակում ժողովրդական ճարտարապետության գլուխգործոցներ են ստեղծել: Ժողովրդական տան համակառույցների մեջ մտնող միավորների մեծ մասի ներքին հարդարումը կատարվել է բարձր արվեստով: Սակայն այդ նույնը չենք կարող ասել շենքերի արտաքին ձևավորման ու հարդարման տեսակետից, որը, ինչպես կտեսնենք, մի շարք այլ պատճառների հետ, որպես ժողովրդի դարավոր ճնշման հետևանք, գեղեցիկը թաքցնելու ակնհայտ, միաժամանակ նաև հարկադրական միտումով էր արվում:

Ժողովրդական տան համակառույցներից մեկն էր մերենեցի Ավետիս (Ավեն) Ադամյանի գերդաստանի տան համալիրը. բնակելի և տնտեսական շենքերի համալիրն ուներ 9 բաժանմունք՝ ենթաբաժիններով հանդերձ:

Ա. Նախասրահ, չարդաղ այունազարդ, հովանոց:

Բ. Բակ, շվաք հարթածածկ, երեք երդիկով:

Գ. Մեծ գոմ, եղջերավոր անասունների և ձիերի համար: Նրա մեջ տեղավորված էր երեք գոմասենյակ.

- **Մեծ գոմասենյակ**՝ 4 բազմոցով, 6+6 դարսագերաններով, 1+1 աղվեսով, պորտազարդով զարդարված առաստաղով, օջախի երեսին քանդակված կենաց ծառի երկու կողմերում՝ կորճառյուծներ՝ **ասլան ու ղափլան**: Թարեքներն ընտիր նախշազարդերով էին:

262 Խ. Հ. Սարդարյան, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան, 1967, աղյուսակ՝ 35: Հենց այդ է ցույց տալիս նաև **համակառույց** բառը, որ նշանակում է բազմաթիվ մասերից կազմված միասնական կառույց, նաև՝ մասերը միացնելով կառուցված, բաղկացած, կազմված:

- **Պզտի գոմասենյակ,** որ զետեղված էր մեծ գոմասենյակի մուտքի դիմաց, 2 լայն և 1 նեղ բազմոցով, 3+3 դարսահեծաններով, 1+1 աղվեսով, սովորական վառարանով:
- **Պզտի գոմասենյակ**՝ մեծ գոմի մյուս անկյունում, 2 լայն և 1 նեղ բազմոցով, 3+3 դարսագերաններով, 1+1 աղվեսներով ծածկ և հասարակ վառարանով:

Դ. Պզտի գոմ մոզիկների համար, որում զետեղված էր գերդաստանի չորրորդ պզտի գոմասենյակը, որն ուներ 2 լայն և 1 նեղ բազմոց, 3+3 դարսահեծաններով ու 1+1 աղվեսներով ծածկ և հասարակ վառարան:

Ե. Թնդրտուն, որի թնդրափը **վերի տուն** էր կոչվում և ստորին ընդարձակ մասը՝ **ցածի տուն**: Վերի տունը ցածի տնից բաժանվում էր ձևավոր տախտակե վարագույր հիշեցնող միջնորմով: Վերի և ցածի տներն առանձին-առանձին **հազարաշեն (դա-ռնաուճ)** ծածկեր ունեին:

Թնդրտունը առավելապես ծառայում էր իբրև խոհանոց և կանանց հանգստի բաժանմունք: Այստեղ տեղավորված էին հաց թխելու պարագաները, կերակրի և այլ ամանները. պատերին կից շարքեր էին կազմում համաչափ կարասները և դրանց վրա որպես երկրորդ հարկ՝ կճուճները: Վերի տունն ուներ մի մեծ և մի փոքր թնդիր, ինչպես նաև երկու պատուհան:

Զ. Մառան մեծ, որ գոմի ծածկ ուներ: Այստեղ կարասներով պահվում էին բոլոր մթերքները:

Է. Ամբրտուն, որի հողե հարթ հատակի վրա ոչ թե ամբարներ, այլ սյուների հետ քամփորներով միացած տախտակե կտրվածքներ էին՝ ամբարին հատուկ աչքերով: Տարբեր տեսակի հացահատիկի կամ կտավատի համար հատկացված ամբարի վերևում մի երդիկ կար, որտեղով հատիկը լցնում էին ներս և ծեփում: Ամբարտան հարավային կողմում, բարձր դիրքով, ճաղավոր փոքրիկ պատուհան էր բացված: Ամբարների շուրջը միջանցքներ էին թողնվում:

Թ. Օչխրնոց, գոմի ծածկով և 3 մեծ երդիկով: Տեղավորում էր շուրջ 200 ոչխար ու այծ: Պատերին կից ցածրիկ մսուրքներ կային: Տան անասնապահներից մեկը ձմռանը քնում էր այստեղ՝ 1 մետր բարձրության կախովի թախտի վրա:

Ժ. Մարագ, որը մեծ գոմի չափ էր և գոմի պատերից մեկուկես անգամ բարձր պատեր ուներ: Ձեղունը գոմի ծածկով էր, 2 երդիկով: Հրդեհի դեպքում տան համա-կառույցն անվտանգ պահելու նպատակով մարագը կառուցված էր նրանից մի քիչ հեռու:

Այսօրինակ տան համալիրը լիովին բավարարում էր գերդաստանի անդամների պահանջմունքները: Անհատական ընտանիքները բավականաչափ ազատ էին իրենց առանձնացված ննջարաններում: Տան արտաքին (դրսի) միակ մուտքով ելու-մուտ էին անում մարդիկ, կենդանիները և թռչունները:

Վարևանցի Մարտին Գաբրիելի Մելիքյանի տան համալիրը ենթաբաժիններով հանդերձ կազմված էր հետևյալ 14 միավորներից.

- **Բակ** լայնարձակ և սյունազարդ, որից դռներ են բացվում դեպի մյուս բաժինները: Ամռանը ծառայում է իբրև հովանոց, աշխատանոց, խոհանոց և սեղանատուն: Ծածկը հարթ և հասարակ է:
- **Ներսի տուն.** թոնրատան տիպի քառանկյունի բաժանմունք, առանց թոնրի, կառուցված 1907-ին, ծածկը անկրկնելիորեն գեղեցիկ հազարաշեն է՝ 9 դարսվածքով և մեկ լուսավոր երդիկով: Ամբողջ ծածկը հանգչում է չորս սյունազարդ առորմաների վրա: Ներսում ունի 1,5 մետրանոց կտրվածք՝ առանձին, կոնդաշար ծածկով: Հատակը տախտակապատ է կառուցման օրից. պատերին կից բազրիք-քյաներ ունի. նախկինում և այժմ էլ ծառայում է իբրև ննջարան:
- **Թնդրտուն,** որն ունի հազարաշեն ծածկ և օգտագործվում է իբրև խոհանոց:
- **Գոմ,** որը նույնպես 10 զույգանոց էր. հետագայում փոքրացվել է և այժմ 6 զույգանոց է: Այստեղ զետեղված գոմասենյակն ուներ 4 բազմոց և 5+5 դարսահեծան՝ 1-ական աղվեսով:
- **Մեծ գոմ,** 10 զույգանոց, որում զետեղված էր երկրորդ գոմասենյակը՝ երկու բազմոցով, 3+3 դարսահեծաններով և 1-ական աղվեսներով:
- **Գոմ՝** 8 զույգանոց, որում զետեղված էր երեքբազմոցանի գոմասենյակը՝ 4+4 դարսագերանով և 1-ական աղվեսով: Այժմ ավերակ են:
- **Թնդրտուն՝** հազարաշեն ծածկով:
- **Մարագ,** որ կից է համալիրին: Այժմ ավերված է:
- **Մարագ,** որ կալին կից էր և կիսագետնափոր. հարդը կալից լցվում էր երդիկով ներս: Այժմ ավերակ է:
- **Մարագ,** որն այժմ համալիրի մեջն է և օգտագործվում է: Բոլոր մարագները գոմածածկով էին:
- **Բակ՝** նախորդ բակի կողքին, որից դուռ էր բացվում ամառնատան մեջ: Այժմ ավերակ է:
- **Ամառնատուն՝** երկու լուսամուտով: Այժմ՝ ավերակ: Հյուրեր ընդունում էին այստեղ:
- **Ամբրտուն՝** կառուցված համալիրից քիչ հեռու՝ լանջի վրա, որով և շինության թիկունքը հենվում է փորված և ուղղահայաց ժայռոտ հողաշերտին: Մինչև այժմ պահպանված այս ամբրտունը սյուներով-քամփորներով բաժանված է 3 մասի, որտեղ հարդ է լցվում:
- **Ջաղասք՝** 3 քարով և 1 դինգով: Այժմ ունի 2 քար, 1 դինգ, որն անցել է կոլտնտեսությանը: Ճնշման նախկին 3 խողովակները պատրաստված են քառակուսի, 20 սմ հաստության բազալտե սալաքարերից՝ կարերը կրաշաղախով ծածկելով: Բերան-բացվածքները երկաթե ցանցեր են ունեցել: Ամրակուռ և գեղեցիկ տեսքով այս խողովակները եզակի էին այն ժամանակ Հայաստանում: Այժմ կոլեկտիվ տնտեսությունը ջրաղացը վեր է ածել էլեկտրաաղացի:

Էխտիլեցի Միքայել Դիլանյանի տան համալիրը կառուցվել է 1900-ական թվականներին. լրացումներն արվել են 1910-ական թվականներին, երբ միջին մեծության ընտանիքը համատեղ էր ապրում: Շինարարական աշխատանքներին մասնակցել է նաև Միքայելի ավագ որդի Ստեփանը:

Միքայել Դիլանյանի, իսկ այժմ Թորոս Դիլանյանի տան համալիրն ունի 10 բաժանմունք, որի գլխավոր ճակատը հյուսիսային կողմնորոշում ունի: Այս ճակատը գետնի մեջ է խրված 15-20 սմ, իսկ հարավային ճակատը՝ երեք քառորդի չափով: Կիսագետնափորության պատճառով համալիրը դրսից մի առանձին փայլ չունի, մինչդեռ համալիրի բոլոր բաժանմունքները ներսում բավական նորմալ բարձրություն ունեն:

Համակառույցի առանձին բաժինները հետևյալներն են, որոնք 1920-ական թվականներից հետո գործառույթային որոշ փոփոխություններ են կրել:

- **Նախասրահ-չարդաղը** խիստ փոքրածավալ է, որն ամռանն իբրև հովանոց-աշխատանոց է ծառայել: Սրանից բացված միակ դռնով էր, որ ելումուտ էին անում մարդիկ ու կենդանիները:
- **Բակ,** որի դրսի դուռը բացված է նախասրահից: Նեղ և կարճ շվաք է, որից դռներ են բացվում դեպի մյուս բաժինները:
- **Թնդրտուն-ննջարան.** սա Ջավախքում երկրորդն է, որն իր մեջ թոնիր չի ունեցել: Շինությունը կառուցվել է 1913-1914 թվականներին, մերենեցի հմուտ շինարար-գոմակերտ Կյուրեղ Հովհաննիսյանի ձեռքով: Հատակագիծը անկանոն քառանկյունի է: Կենտրոնական մասում 4 առորմիներով մի քառակուսի շրջանակ է ստեղծվել: 9 սյուների վրա հանգչող այդ շրջանակի վրա բարձրանում է 12 շարք ունեցող գեղեցիկ հազարաշեն ծածկը: Մի փոքր հազարաշեն ծածկ էլ ունի **թռափը**: Այս երկու հազարաշեններից դուրս մնացած մասերը հարթ առաստաղներ ունեն, որոնց կոնդերն էլ ծածկված են խիտ շարված տախտակներով:

Թնդրտուն-ննջարանի ողջ կենտրոնական մասը տախտակապատված է հարթ հատակով, իսկ աջ և դիմացի պատերին առընթեր հատվածը՝ գոմասենյակային բազմոցներով: Ննջարանի ձախ կողմում կային տախտակե թարեքներ՝ խեցեղեն և այլ կարգի իրեր դասավորելու համար: Սենյակը կահավորված էր տեղական և քաղաքային որոշ կարասիներով: Մեկ պահարան հատկացված էր ծալքին և մյուսը՝ ամաններին: Կային սնդուկներ և այլ պարագաներ: Հարթ հատակի վրա դրված էին նստելու և քնելու երկու թախտեր: Նույն նպատակին էին ծառայում նաև բազմոցները:

Տան աջ կողմի սկզբնամասը տախտակով կտրված մառան էր հողե հատակով, իսկ թռափում դրված էին հացի փոքր ամբարը և կարասները:

Երբեք թոնիր ու ծուխ չունեցող ննջարանի հազարաշեն ծածկերը այսօր էլ արտակարգ մաքուր են:

- **Թնդրտուն** փոքրաձավալ, հազարաշեն ծածկով:
- **Գոմ** լծկանների, 10 զույգանոց, բարձր ծածկով: Սրա մեջ է զետեղված հասարակ կառուցված գոմասենյակը, սովորական օջախով:
- **Գոմ** կովերի և մատակների համար, որտեղ գտնվում է ջրհորը:
- **Ներսի գոմ**. կառուցվել է անասունների համար, բայց օգտագործվել է որպես թնդրտուն և ամբարանոց:
- **Բակ** ամառնատան համար:
- **Ամառնատուն** երկու սենյակով, որ կառուցվել է 1954-ին: Այժմ օգտագործվում է իբրև ուսուցչական բնակարան:
- **Գոմ** 5 զույգանոց, որ կից է ամառնատանը:

Ջավախքին հայտնի է եղել կլոր հատակագծով գլխատան շուրջը համալիր կազմելու սովորությունը: Վերջերս դրանցից մեկը վերացվեց Գանձայում և մյուսը՝ Սուլդայում:

Գանձացի Գրիգոր Ծառուկյանի և իր երկու եղբայրների կլոր թոնրատան համալիրը պահպանվել է մինչև 1910-ական թվականները: Այն կառուցվել է 19-րդ դարի կեսերին: 1980-ին այս համալիրի նախնական վիճակը վերականգնեցինք 93 տարեկան Եղիշ և 82 տարեկան Շահեն Ծառուկյանների միջոցով, որոնք ապրել են այդ տան մեջ: Ընտանիքը մեծ էր. գյուղի երեք ձիթհանքերից մեկը, որը կից էր շենքերի համալիրին, պատկանում էր այս ընտանիքին: Համակառույցն, այդպիսով, ուներ 11 բաժանմունք:

- **Նախասրահ-չարդաղ**, որը սյունազարդ էր: Ծավալուն լինելով՝ այնտեղ, ստվերի մեջ պահվում էին սայլերը, սահնակը և այլ իրեր:
- **Բակ,** որ նախասրահի շարունակությունը լինելով, լայնարձակ էր և երկու երդիկով: Սրա միակ դռնով էր, որ անցուդարձ էին անում մարդիկ և կենդանիները: Բակից 3 դուռ էր բացվում դեպի թնդրտունը, փարախը և գոմը:
- **Թնդրտուն** 10 մետր տրամագծով, որ բաժանված էր վերի տան և ցածի տան. թնդրափը քարապատնեշով հողալից էր, որտեղ թաղված էր թնդիրը: Թնդրտնից մի դուռ բացվում էր մառանի մեջ և 3 դուռ էլ՝ ննջարանների մեջ:
- **Ննջարաններ,** որոնք հատկացված էին երիտասարդ զույգերին:
- **Մառան,** որը երբեմն նաև ննջարան էր ծառայում:
- **Օչխրնոց,** որի մեջ ձմռան սեզոնում գառնոց էր պատրաստվում:
- **Մեծ գոմ,** 12 զույգանոց, որի մեջ էր զետեղված 4 բազմոցանի մեծ գոմասենյակը:
- **Ձիթհանքի բակ,** ընդարձակ շվաք, որտեղ տեղավորվում էին հերթի սպասողների կտավատի պարկերը և այլ գույք: Սրա դռան բացվածքը և առաստաղի բարձրությունը հարմարեցված էր ուղտերի համար. ցուրտ եղանակին

վերջիններստեղավորվում էին հենց այստեղ: Բակը երբեմն միրգ բերող ուղտապանների համար էլ իբրև գիշերելու իջևան էր ծառայում:

- **Ձիթիանք,** իր երկու գլխավոր ենթաբաժիններով՝ աղացաքարի ու բովտան բաժնով և գերանատնով: Քարերին լծվող 8 գոմեշները կապվում էին ձիթիանքի ձախ կողմի կեսում:

Կլոր գլխատան երկրորդ օրինակը պահպանվում էր Սուլդայում մինչև 1960-ական թվականների վերջերը: Այն 1840-ական թվականներին կառուցել է ծագումով Բասենի Թորքան գյուղացի Թորոս Թորոյանը՝ Արտահանից հրավիրված վարպետների ձեռքով: Ուշագրավ է, որ կլոր տանը կից ստեղծված բնակելի և տնտեսական շենքերը, հակառակ Բարձր Հայքի կառուցողական տեխնիկայի, գլխավոր մուտքից բացի առանձին մուտքեր ունեին մեղվատունը, պահեստը, մարագը, ամբարտունը և փարախը: Այստեղ, ըստ երևույթին, պահպանվել են հիշյալ բաժանմունքների սեփական ավանդները. չէ՞ որ այդ շենքերը համալիրից դուրս էին կառուցվում իրենց բացվածքներով: Հետևապես համալիրին միացվելիս կարող էին պահպանել սեփական դռները՝ հետևյալ նկատառումներով: Փարախի ծանր ու անառողջ օդից հեռու մնալը, մեղվատունը, ամբարտունը և պահեստը կայուն ջերմաստիճանով ապահովելը, մարագը հրդեհներից վտանգազերծ պահելը և այլն: Բացի այդ, այսպիսի համալիր կարող էր ստեղծվել քիչ թե շատ ապահով մի երկրամասում, ինչպիսին ռուսական տիրապետության տակ գտնվող Ջավախքն էր:

Թորոյանի տան համալիրի հատակագիծը վերականգնել ենք Թորոսի ծոռան՝ մանկավարժ Պետրոս Թորոյանի օգնությամբ: Ըստ այդմ, համալիրն ունի հետևյալ բաժինները.

- **Սրահ**, փակ **չարդաղ**՝ 2 մետր լայնություն ունեցող դռնով: Այստեղ կային հաստատուն թախտեր՝ նստելու և զրուցելու համար: Սրահի երկրորդ լայն դուռը բացվում էր բակի մեջ:
- **Բակ**, որ լայն ու կարճ էր: Բակի ձախ կողմում տեղավորված էր 4 բազմոցանի գոմասենյակը, որն ուներ կորճառյուծներով զարդարված օջախ:
- **Տան նախասրահ**, որը բակի աջ թևի շարունակությունն էր և թնդրտան համար իբրև նախասրահ էր ծառայում: Այստեղ էին տեղադրված հացահատիկի և ալյուրի ամբարները, խմելու ջրի գուռը և բազմաթիվ այլ իրեր: Մի անկյունում տեղավորված էր Թորքանի հայրենի սրբատնից բերված խաչքարը, որն ավանդաբար այս գերդաստանի սուրբն է համարվել:

Բակը, գոմասենյակը և տան նախասրահը տաքացվում էին գոմի միջոցով:

- **Թնդրտուն** բոլորաձև հատակագծով, որի տրամագիծը 18 մետր է: Մեկ թոնիրով թնդրափը ցածի տնից բաժանված էր 3 աստիճան բարձրության քարապատնեշով: Սա ուներ երկու պատուհան: Ցածի տան երկու կողմերին կային տախտակե հաստատուն թախտեր, որոնց վրա հանգստանում

կամ աշխատում էին կանայք: Աջ պատի մեջ կար ծալքի մեկ **պատրհան**: Պատերի վրա շուրջանակի թարեքներ կային, որոնց մեջ պահվում և ցուցադրվում էին գեղաճաշակ ամաններն ու իրերը: Ծածկը վիթխարի մեծության հազարաշեն էր՝ **ղառնաուշ** անունով: Թնդրափը և ցածի տունը լուսավորվում էին մեկական երդիկներով: Վերջիններս ունեին **մխաշ թարեր**՝ քամուն հակընդդեմ (քամու կողմից) դնելու համար: Ծուխը քաշվելուց հետո ցածի տան երդիկը ծածկվում էր շուրջանակավոր ապակով: Պատերի տակ տեղավորվում էին խեցեղեն, պղնձեղեն ամանները և այլ իրեր:

- **<u>Մառան</u>**:
- **Գոմ,** 12 զույգանոց:
- **Օչխրնոց,** ոչխարի պահպանման-պատսպարման համար: Սրա մուտքի մոտ գտնվում էր հովվի թախտը:
- **Մեղվատուն,** որտեղ ձմռանը պահվում էին մեղվափեթակները:
- **Պահեստ,** ուր պահվում էին անհրաժեշտ գործիքներ և այլ իրեր:
- **Մարագ:**
- **Ամբրտուն:**

Թորոս Թորոյանն ուներ նաև առանձին կառուցված իջևան-պանդոկ, որին ստորև դեռ կանդրադառնանք:

Մոտավորապես այսպիսին էր Ջավախք տեղափոխված Կարնոհայոց բնակելի և տնտեսական շենքերի համակառույցների ընդհանուր պատկերը: Կարելի է ասել, որ այդ համալիրները փոխադարձորեն լրացնում էին միմյանց պակաս կողմերը: Միջին հաշվով յուրաքանչյուր համալիր 11 բաժանմունքից է բաղկացած: Սակայն կային նաև մինչև 14-15 բաժանմունք ունեցող համակառույցներ: Վերջիններս ցույց են տալիս, որ կարող գերդաստանները կամ եռաստիճան ընտանիքները պետք է որ 14-15 բաժանմունքը գերազանցող աչքեր ունենային: Պակասողներն էլ հանդիսանում են՝ ձիանոցը, գոմշնոցը և հորթնոցը, որոնք 19-րդ դարում միանգամայն սովորական էին մեծ ընտանիքներում:

Մշո հայոց համակառույցները: Այժմ մենք կներկայացնենք Տուրուբերանի հայոց շենքերի համալիրները, որոնց տրամադրումը կկատարվի Հեշտիա, Ուճմանա, Թորիա և Դիլիֆ գյուղերի շինարարական համապատկերով: Սակայն, ինչպես ակնարկվել է մեր կողմից առաջ, այս գյուղերը չեն կարողացել և չէին կարող ամբողջությամբ, այն էլ անկորուստ, պահպանել Մշո գավառների շինարարական անաղարտ տեխնիկան: Նրանց վրա նկատելի ներգործություն է ունեցել հենց Բարձր Հայքի շինարվեստը: Ուստի մենք էլ պետք է ներկայացնենք ոչ թե անաղարտ, այլ խառն վիճակը, ինչը պահպանվել է որպես Տարոն աշխարհի շինարարական տեխնիկային հոգեհարազատ ու բնաշխարհիկ:

Հեշտիայից Հովհաննես Սիմոնյանի տան համալիրը բաղկացած է 8 միավորից, կառուցված 1885 թվականին՝ հետագայում կատարված լրացումներով:

- **Նախասրահ-չարդաղ**, միջին մեծության: Նրա աջ կողքին քարե ելարան կա կտուր բարձրանալու համար:
- **Բակ,** որ է շվաք: Կարճ և լուսավոր է, որով տարբերվում է կարնոհայոց երկար ու հաճախ կիսախավար բակերից:
- **Թունդրատուն**, որի թնդրափը **աշխանա** է կոչվում (որը պարսկերեն խոհանոց է կոչվում), իսկ ստորին մասն էլ՝ տուն: Խոհանոցի և ցածի տան ծածկերը հազարաշեն են, որին **խառնաուճ** անունն են տալիս: Այս վերջինը կարնոհայոց հազարաշենից տարբերվում է իր հասարակ ոճով:
- **Ախոռ** են անվանում տավարի գոմը, որն այս համալիրում միայն 6 զույգանի է: Ծածկը կարնոհայկական է: Ունի 3 հաջորդական երկայնական գերան, որոնց վրա առանձին-առանձին կոնդաշարեր կան: Երրորդ երկայնական գերանը դրվել է լուսավորությունն ուժեղացնելու նպատակով: Այս պարագայում երկու ճակատներից բացվել են մեկական թեք երդիկ, որոնցով լիովին լուսավորվել է գոմը:
- Գոմի երկու բացվածքով կցված է 4 բազմոցանի գոմասենյակ: Ծածկը բազմագերան է: Մի բազմոցն այժմ քանդված է: Կառուցման ոճը կարնոհայկական է:
- **Ամբար** է կոչվում այն հարթածածկ սենյակը, որն ունի բարձր առաստաղ և բարձրադիր ու փոքրիկ լուսամուտ իր երկաթե խաչով: Այստեղ էին դրված երկու մեծ ամբարները: Բաժանմունքներում էին պահվում նաև սննդամթերքները: 1947-ին ամբարը վերածել են սենյակի՝ բանալով մեկ լուսամուտ:
- **Գոմ.** այսպես է կոչվում ոչխարանոցը՝ գոմի ծածկով:
- **Մարագ,** որ կիսագետնափոր էր և 10 մետր համալիրից հեռու:
- **Մարագ,** որ կառուցվել է նոր տեղում:

Նույն տեղում Սրապ Էգնատոսյանի տան համալիրը կառուցված է 19-րդ դարի երկրորդ կեսին, իսկ հետո արվել են լրացումներ: Այն բաղկացած է 10 միավորից:

Գերդաստանը 1900-ական թվականներին 37 անձից էր բաղկացած, որ գոյացել էր 4 եղբայրների սերնդից: 1910-ին ընտանիքը բաժանվել և կազմել էր 2 նոր ընտանիք:

Այստեղ մենք կներկայացնենք 1900-ական թվականների ամբողջական պատկերը, թեև մի քանի բաժանմունքներ արդեն ավերված են:

- **Նախասրահ-չարդաղ,** որ շատ փոքր ու հասարակ է, ինչը մեծ մասամբ հատուկ էր Տարոնին:
- **Բակ,** որ երկար ու կիսախավար էր, փոխառված կարնոհայկականից:

- **Ամառնատուն,** երկու լուսամուտով, կառուցված համալիրի աջ կողմի շարունակության վրա՝ մուտքը բակից: Նկուղավոր էր, տիպիկ Մշո ոճով կառուցած:
- **Թոնդրատուն,** փոքրածավալ, հազարաշեն ծածկով: Բաժանքից հետո մառան են դարձրել:
- **Ախոռ**-տավարի գոմ, որի մեջ տեղավորված էր 4 բազմոցանի գոմասենյակ: Օջախի քարի վրա գրված է 1910 թ., որ նշանակում է, թե գոմասենյակը ուշ է կառուցվել:
- **Գոմ,** ոչխարանոց, փոքրածավալ և այժմ ավերակ:
- **Ախոռ մեծ,** որ այժմ ավերակ է:
- **Թունդրատուն,** մեծածավալ և հազարաշեն ծածկով, որն այժմ նույնպես ավերակ է:
- **Ամբար,** այսինքն՝ ամբարտուն 4 ամբարով, որը շենքերի համալիրից 10 մետր հեռու էր և որն այժմ ավերված է:
- **Մարագ,** որ կառուցվել է 150 մետր հեռու գտնվող կալին կից: Կիսագետնափոր էր և գոմի ծածկով:

Շատերի պես այս գերդաստանն էլ ուներ հացի հորեր:

Հեշտիեցի Սիմե Տեր Անտոնյանի տան համակառույցը կառուցվել է 19-րդ դարի վերջերին և այժմ պահպանված է: Գերդաստանը, որ բաղկացած էր 25 անձից, այս համակառույցում ուներ միայն մեկ ելևմտի դուռ: 1927-ին գերդաստանը բաժանվում է երկու ճյուղի. կեսի տերն է դառնում Սահակ Անտոնյանը և մյուսինը՝ Կարապետ Անտոնյանը:

Սա բացառիկ տներից մեկն էր, որի բնակելի տարածությունն առանձնացված էր անասնապահական կառույցներից (բացի թերևս՝ ընդհանուր մուտքից): Բնակելի մասը ներկայացնում էին երկու լուսամուտով մեծ ամառնատունը և երդիկավոր թոնրատունը: Մենք այստեղ ներկայացնելու ենք բաժանքից առաջ գոյություն ունեցող համալիրը.

- **Նախասրահ-չարդաղ,** փոքրածավալ:
- **Բակ, երկարավուն,** լայն և լուսավոր:
- **Մառան,** որը հարմարեցված էր բակի մի լայն մասում՝ երկու պատերի անկյունում:
- **Ամբար,** այսինքն՝ ամբարների տուն, որն ուներ մի փոքրիկ լուսամուտ բարձր տեղում: Նրա մեջ տեղավորված էր 3 ամբար, որոնց վերևի մասում կտուրն ուներ հացահատիկը լցնելու ծակեր: Տախտակներից շինված ճագարները ամրացվում էին այդ անցքերին: Լցումն ավարտելուց հետո այդ ծակերը ծեփվում էին:

- **Թունդրատուն,** փոքրածավալ: Թնդրափի աջ կողմում թոնիրն է, ձախում՝ ռուսական մեծ փուռը, սեփական ծխնելույզով: Ցածի տան աջ պատին և թիկունքի պատին առընթեր ուներ հաստատուն, գոմասենյակային բազմոց-թախտեր, որոնց վրա ցերեկը հանգստանում և գիշերը քնում էր ընտանիքի անդամների մի մասը:
- **Ախոռ,** այսինքն՝ տավարի մեծ գոմ՝ գեղեցիկ ծածկով:
- **Գոմ,** այսինքն՝ փարախ:
- **Մարագ,** կիսագետնափոր, համալիրից 10 մետր հեռու:
- **Ամառնատուն,** մեծածավալ, 2 լուսամուտով: Ուներ տախտակե երկու անշարժ բազմոց, ինչպես գոմասենյակը: Ամառնատունն այժմ էլ պահպանված է, թեև բազմոցներին փոխարինել է տախտակե հարթ հատակը: Սենյակը գլխատնից բաժանվում է տախտակե միջնորմով. այն ունի երկու կամարավոր դուռ: Անցյալում, վառելիքի սղության պատճառով, ամառնատունը տաքացվում էր թունդրատան միջոցով. մինչև ծուխը քաշվելը դռները փակվում էին, իսկ այնուհետև՝ բացվում և տաքացվում:

Տարոնի ազգագրական շրջանի ներկայացված շենքերի նկարագրի մեջ, ինչպես երևաց, իրոք ծանրակշիռ տեղ ունի կարնոհայկականը, որը փոխ է առնված Ջավախքում՝ համատեղ ապրելու հետևանքով:

Այս երկու ազգագրական շրջանների կառույցների համալիրների հետ ծանոթանալուց հետո մենք այժմ կներկայացնենք շենքերի առանձին միավորների կառուցման տեխնիկան և դրանց գործառույթները:

Շենքերի կառուցման տեխնիկան: Շենքեր կառուցող վարպետները Հայաստանում հանդիսանում են որմնադիրները, որոնց **պատ շարող** էին անվանում և գոմակերտները, որոնց թուրքերեն **յափուջի** էին կոչում: Սակավ էին այն գյուղերը, որոնք որմնադիրներ չունեին, իսկ գոմակերտներ կային ամենուրեք: Հաշվի առնելով կատարման որակը, տուն կառուցողները վարպետներ էին հրավիրում այլ գյուղերից: Պատահում էին գոմակերտներ, որոնք կարող էին գոմ և բակ ծածկել, բայց անկարող էին կառուցել հազարաշեն կամ գոմասենյակ: Կային գոմակերտներ էլ, որոնք հատուկ զբաղվում էին հազարաշենով և գոմասենյակով: Այդպիսիք մեծ մասամբ գտնվում էին անտառամերձ բնակավայրերում, որոնց և հրավիրում էին տարբեր վայրերից: Ինչպես գոմակերտ, այնպես էլ որմնադիր վարպետների մի մասը, դաշտային աշխատանքներն ավարտելուց հետո, անհատապես կամ խմբով շրջում էին գյուղերը և առաջարկում իրենց ծառայությունը: Բոլոր դեպքերում, դրսից հրավիրված շինարարները ապրում և ձրի կերակրվում էին հրավիրող ընտանիքում, անկախ ժամանակի տևողությունից: Հրավիրողի հաշվին կերակրվում էին նաև համագյուղացի վարպետները:

Տուն կառուցողները 1-2 տարի շարունակ նախապատրաստվում էին շինանյութեր ձեռք բերելու համար: Սայլերով քանիցս անտառ էին գնում: Հիմքերի համար քարեր էին քաշում և կուտակում: Շարու քարը հիմնականում հավաքում էին դաշտերից:

Շենքի համար նախատեսվող տարածության ամբողջ մակերեսի հողը 15-20 սմ խորությամբ փորում և հեռացնում էին, ապա միայն փորում հիմքերը: Իսկ եթե, ասենք, 4 մետր բարձրության գետնափոր մարագ էին կառուցում, դրա տեղը փորում էին 2,5-3 մետր խորությամբ այնպես, որ պատի դուրս ընկած մասը 1-1,5 մետր էր կազմում: Այստեղ ևս հիմք էր փորվում, որը կարող էր կես կամ լրիվ պատի լայնություն ունենալ:

Հիմքի և առհասարակ պատի լայնությունը 19-րդ դարում 1 մետրից պակաս չէր լինում, իսկ առանձին դեպքերում այն հասնում էր 120-130 սմ-ի:

Ամուր, երկրաշարժադիմացկուն տուն կառուցելու համար ոմանք նույնիսկ ամբողջական ժայռաբեկորներ էին հիմքերում դնում, թեպետ բնորոշը հիմքը սովորական քարերով լցնելն էր:

Պատի քարը որմնադիրների ձեռքով նախապես մշակվում-հղկվում էր: Բացի շարու քարից, դաշտերից հավաքվում և կուտակվում էր մեծ քանակությամբ մանրիկ քար՝ պատերի ծուծը լցնելու և որպես խիպար օգտագործելու համար:

Ցեխն օգտագործվում էր շարու քարերը նստեցնելու և միաձույլ դարձնելու նպատակով: Պատի մեջ լցվող քարն ու խիճը նախապես լվանում, հողաշերտից մաքրում էին, որով ավելի ամուր էին կպչում իրար:

Գործիքներ: Քար կտրելու գործիքներն են՝ **քիլինգը** կամ **ծերին**, որ երկկողմանի կտուցավոր է: Սա ուղղակի պատրաստվում է տեղում, ավանդական կարգով: Սրանով **կասում** են ճեղքվող քարը: Բացի կասելուց, ծերին օգտագործվում է նաև քար հարդարելիս[263]:

Վայրա է կոչվում ամենածանր մուրճը, որի մի կողմը թակ է, մյուսը՝ **նարեկ** (սեպաձև): Սրանով քարագործը քար է ճեղքում: Քարագործի գործիքներից է **սեպը**, որ պատրաստվում է պողպատից: Գործիքի դերը միայն քար ճեղքելն է: Մյուս գործիքն է **լոմը** (լինգը), որն ունենում է 2 մետր երկարություն: Քարհատության մեջ լոմը գործ է ածվում քարեր տեղաշարժելիս:

---

263 Մեծ ժայռի վրա, երկու ծայրամասերում, 10-15-ական սեպի տեղ ծրելուց հետո, որոնք ունենում են 5-8 -10 սմ խորություն, այդ ակոսներում եզան մաշված պայտեր կամ դրանց նման երկաթասալիկներ են խցկում, որոնք **նալփարա** են կոչվում: Ապա դրանց մեջ սեպեր են խրում և վայրոցով հարվածում. ամեն մեկին մեկ անգամ և նույնը կրկնում այնքան անգամ, մինչև որ քարը ճեղքվում է: Այս եղանակով քարը երբեմն տալաշ է տալիս և խափանում ճեղքումը: Այդ պատճառով վերջերս նոր եղանակ են գտել. նալփարաների փոխարեն ակոսների մեջ չոր և **հլուն** (հատիկավոր) հող են լցնում և, առանց պնդացնելու ու առանց տալաշ տալու, սեպերը խրում և ճեղքում են քարը:

Քարտաշի գործիքներից գլխավորը մուրճն է, որին նաև թուրքերեն **չէքիճ** բառի աղավաղված ձևով **չակկիճ** են անվանում: Թակով տալաշ տալով տաշում են քարը և քթով հարդարում այն: Պատրաստում են պողպատից:

Սրբատաշ քար մշակելու, ջրաղացքար և շիրմաքար նրբորեն հարդարելու համար գործածվում է **տարաղ** անունով պողպատե գործիքը, որ պատրաստվում է Երևանում: Սա երկկողմանի, 2-3 սմ հաստությամբ ուրագաձև գործիք է:

Նոր գործիքներից է այն մուրճը, որը պողպատից է և դարձյալ շինվում է Երևանում: Սրա երկու քառակուսի թակերն էլ ուղիղ և խաչաձևող գծերով ակոսված են, ստացված տասնյակ մեխանման հավելվածներով քար են հարդարում:

Հատիչ-դուրը գործածվում է քարերի վրա գրեր և զարդեր փորագրելիս: Հատիչին հարվածելու գործիքը փոքրածավալ մուրճ է՝ **մուշտակ** անունով: Անկյունաքարեր և գերեզմանաքարեր պատրաստելիս գործ են ածում **անկյունաչափը**:

Որմնադրի գործիքներից էին **ուղղալարը (շավուլ), հարթաչափը** և երկար լարանը՝ պատի հարթությունները որոշելու համար:

Պատ շարել: Որմնադիր և որմնադրություն բառերը մոռացված էին, գործածական էր **պատ շարող** և **պատ շարել** ձևերը:

Յուրաքանչյուր տուն կառուցող վարձում էր 1-3 որմնադիր: Ընդ որում, 3 վարպետներից մեկը գրեթե անընդհատ զբաղվում էր քարտաշությամբ և 2-ը՝ շարելով: Գործատերը պարտավոր էր ապահովել բանվորներով՝ քար, խիպար, հող ու ցեխ սպասարկելու համար: Շարողներից մեկն աշխատում էր պատի ներսի և մյուսը՝ դրսի երեսի կողմում: Որոշ վայրերում պատի լիցքը կատարվում էր խոնավացած հողով ու խճաքարերով, մինչդեռ այլ տեղերում՝ խճախառն ցեխով: Երկու դեպքում էլ պատի շարքի երեսի կարերը ամբողջովին ցեխապատում էին:

Այժմ պատերը մեծ մասամբ շարում են ցեմենտի շաղախով, իսկ բնակարանների կառուցման համար օգտագործում են Արթիկի տուֆը, որը ձեռք են բերում պատրաստի տաշած վիճակում:

Տուն ծածկել: Անցյալում շենքերը ծածկվում էին անտառանյութերով և սակավ դեպքերում մարդակների փոխարեն փռվում էին **լապպիկ** կոչված թերթաքարերը: Մարդակների կամ թերթաքարերի վրա ցախախոտ կամ փալախոտ ու ծղոտ էր փռվում, սրա վրա՝ խոնավ հող: Ջրհորդաններ չկային կամ հազվագյուտ դեպքերում դրվում էին միայն հարթածածկ ամառնատների վրա:

Հողով շենքը ծածկելու գործողությունը կարնոհայոց մեջ **հողանք** է կոչվում: Այս ծանր աշխատանքի ժամանակ գործատերը օգնության էր կանչում համայնքի հարևան բոլոր տնտեսություններին: Վերջիններից 1-2 երիտասարդ կամ տղամարդ բահով կամ կողովով հասնում էր օգնության: Նայած ծածկի մեծությանը, հավաքվում էր 30-80 մարդ: Որմնադիրները նախապես պատի դրսի երեսի շարունակության վրա 30-50 սմ **հողկալ** էին շարում՝ կտուրի վրա լցվող հողը պատնեշելու համար:

Աշխատավորների մի խումբը հող էր փորում և կուտակում, երկրորդ խումբը իշուկների վրա դրված կողովները հող էր լցնում: Երիտասարդներն ու պատանիները կողովներով կտուրն էին բարձրացնում այդ հողը: Իսկ մի խումբ տարեցներ ցրում, հավասարեցնում էին կտուրի վրայի հողը և ապա՝ կոխոտում, շերտ առ շերտ պնդացնում:

Բնակարանները և նրանց գործառույթները (ֆունկցիաները): Դատելով 19-րդ դարից ժառանգված այն համակառույցներից, որոնք ներկայացվեցին վերևում, կարելի է ասել, որ Բարձր Հայքի գյուղական բնակարանները բավական բազմազան են եղել: Դրանց մեջ առաջնակարգ տեղ է գրավել գոմասենյակը, մինչդեռ Հայաստանի մեծ մասում, իբրև բնակարան, առաջինը գլխատունն էր: Արևմտյան բոլոր գավառների նման Բարձր Հայքում ու Ջավախքում էլ գոմասենյակը հայտնի էր **օդա**[264]**, նեսի օդա** և **սաքու**[265] անուններով, որոնց թուրքական անվանումը, ինչպես և շատ ու շատ առումներով այլ իրողություններում նույնպես, դիպվածային է, զուտ թուրքական ժամանակավոր տիրապետության արդյունք:

Թուրքերը **օտա-օդա** կամ **օթաղ**[266] են վերանվանել նաև հայկական և բյուզանդական լուսամուտավոր սենյակները, որը լայն տարածում է գտել հենց հայերի մեջ: Օդա տերմինով են կոչվել Թուրքիայում բոլոր հասարակական իջևանատները, որոնք բառացիորեն կրկնում էին հայկական գոմասենյակի թուրքերեն անունները[267]:

Ահա այսպիսի խառնաշփոթն էր պատճառը, որ հայերը հարկադրաբար գոմին կից սենյակը կոչել են **գոմի օդա** կամ **նեսի օդա** և լուսամուտներով սենյակը՝ **դրսի (դըսի) օդա:**

19-րդ դարի վերջերին բոլոր բանահավաքների և մամուլի թղթակիցների հետ Ե. Լալայանն էլ իր ազգագրական գրառումներում օգտագործել է թուրքերեն տերմինը[268]: Համակերպվելով այս տխուր իրողությանը՝ Ստ. Լիսիցյանը 1926-ին իր մի

---

264 Օտա-Օդա բառը Հ. Աճառյանը բացատրել է որպես «Գոմի քով ծառաներու հատուկ ննջասենյակ», (Թուրքերենե փոխառյալ բառեր հայերենի մեջ, ԷԱԺ, 3 Մոսկվա-Վաղարշապատ, 1902, էջ 370): Հակովբոս Վ. Պոզաճյանը **օտա-ն** թուրքերենում համարում է **սենյակ, խուց, գունդ զինվորաց.** օտա-խասս-սենյակ արքունի (Համառոտ բառարան տաճկերեն-հայերեն, Բ տպագրություն, Վիեննա, 1858, էջ 874): Դ. Ա. Մագազանիկն իր թուրքերեն-ռուսերեն բառարանում ավելի լայն բացատրություններ է տալիս, ըստ որի բառը նշանակում է սենյակ, կաբինետ, գյուղական ժողովրդական խրճիթ, գյուղական անվճար հյուրատուն, ննջարան, սեղանատուն, նաև՝ բյուրո, հիմնարկ, պալատ, առևտրական պալատ, գրասենյակ (Թուրքերեն-ռուսերեն բառարան, Մ. 1945, էջ 460):

265 **Սաքու,** թրք. բազմոց, նստարան, տան առջև բարձր տեղ՝ բազմելու համար:

266 Օթաղ, թրք. օթևան, խորան, վրան:

267 Լևոն Սարգսյանց, Այց Թյուրքաց Հայաստանին, Թ., 1890, էջ 211, 212, 217, 220:

268 ԱՀ, 1, էջ 226 և այլն:

ուսումնասիրության մեջ օգտագործել և, դժբախտաբար, գիտական շրջանառության մեջ է դրել **գոմի օդա**[269] անհաջող տերմինը, որի օրինակը տեղ է գտել նաև այլ ազգագրագետների և բանագետների ուսումնասիրություններում[270]:

Ելնելով ստեղծված դրությունից՝ օտար տերմինների փոխարեն մենք գոմում գետեղվող սենյակն անվանում ենք **գոմասենյակ**:

Գոմասենյակը զուտ հայկական կառույց է, առաջացած Հայկական Լեռնաշխարհի գրեթե 6-7 ամիս տևող ծանր ձմռան պայմաններում ջեռուցման դժվարությունները հաղթահարելու հարկադրանքից: Այն մեկ, երկու կամ երեք բացվածքներով կցվելով գոմին կամ սակավ դեպքերում՝ նաև գլխատանը, օգտվում է անասունների շնչից և թոնրի ջերմությունից: Այս էր պատճառը, որ գոմասենյակը լայնորեն տարածված էր պատմական Հայաստանի բոլոր նահանգներում:

Մենք մի այլ ուսումնասիրության մեջ ցույց ենք տվել, որ մինչև գոմին կցվելը գոմասենյակի նախատիպը ինքնուրույն սրբատուն է եղել, ուստի այստեղ այդ սենյակի զարգացման ընթացքի վրա կանգ չենք առնի: Նշենք միայն, որ տարբեր հանգամանքների, այդ թվում նաև վառելիքի պակասության հետևանքով վաղագույն ժամանակներում նշված սրբատունը կցվել է գոմին և վերածվել է զրուցարանի ու բնակարանի՝ պահպանելով մի շարք պաշտամունքներ՝ կապված կրակի և այլ երևույթների հետ:

Առաջավոր Ասիայի մյուս երկրներում գոմասենյակը լիովին անծանոթ է եղել: Այդ պատճառով էլ այն նույնությամբ փոխառել են Հայաստանի և հայ ժողովրդի հետ սերտ կապի մեջ եղած հույները, ասորիները, քրդերը, լազերը, թուրքերը, Ջավախքում, Ախալցխայում, Ծալկայում բնակվող վրացիները, մյուսները...

Այս բացարձակ ճշմարտությունը գիտեն բոլորը, արժանապատիվ, նաև բարեխիղճ բոլոր օտար մասնագետները՝ ներառյալ նաև մեր այսօրվա անմիջական հարևան վրացի և ադրբեջանցի ազգագրագետներն ու ճարտարապետները: Եվ այնուամենայնիվ, հարգելի ազգագրագետ Տ. Ա. Չիքովանին 1960 թվականին հրատարակել է հակիրճ մի հաղորդում «Արևմտավրացական **օդա-սախալի** կացարանի մի քանի տարատեսակության մասին» վերնագրով[271]: Այստեղ հեղինակն իբրև սկզբնաղբյուր է ընտրել Ջավախքը, Ծալկան, Աջարիստանը և, ինչպես ինքն է հայտարարում, Ջավախքում և այլուր իբրև թե տարածված լազերը, որ իբր թե գոմի

269 **ԻԿԻԱԻ**, Նշվ. աշխ. հ.4, էջ 57-70: (Ռուսատառ աղբյուրը բերված է հայատառ: Կազմողի ծանոթագր.):

270 Սրբուհի Լիսիցյան, Հայ ժողովրդի հնագույն պարերն ու թատերական ներկայացումները, հ.1, Երևան, 1958, էջ 46-47: Դ. Վարդումյան, Լոռեցիների նոր կենցաղը, Եր., 1956, էջ 113: Վ. Բդոյան, Հայ ազգագրություն, Եր., 1974, էջ 73-84: Ժ.Կ. Խաչատրյան, Ջավախքի հայ ժողովրդական պարերը (ՀԱԲ, թիվ 7, էջ 9-14):

271 **ԻԷԿՍ,** 34, 1960, էջ 49-53: (ռուսերեն տառերով նշված աղբյուրը բերված է հայատառ գրությամբ):

օդաներ կառուցող վարպետ ու նախշարարներ են եղել: Նա ոչ մի խոսք չի ասել այն մասին, որ **օդա** կամ **գոմի օդա** կոչվող կառույցը Ջավախք, Ախալցխա և Ծալկա են բերել Կարնո նահանգից 1830 թվականին տեղափոխված հայերը: Քար լռություն է պահպանել Վրաստանում դեռևս 12-13-րդ դարերում հայտնված-տեղափոխված հայերի ներկայության վերաբերյալ, որոնք և լայնորեն տարածել են ոչ միայն գոմի օդան, այլ նաև Արարատյան հայտնի գութանը, Արարատյան ճոլա նախագութանը և հայերին հատուկ գետնատարած-հորիզոնական շենքեր կառուցելու տեխնիկան: Եվ, ինչպես սպասելի էր, հարյուրամյակների ընթացքում և հարյուրամյակներ շարունակ հարյուր հազարավոր հայեր, իրենց մշակութային ժառանգությամբ հանդերձ, ձուլվել, վրացացել են հյուրընկալ և համեստ մի ժողովրդի մեջ, որպեսզի Տ. Ա. Չիքովանի «հնարագետ հայրենասերը» նրանց տարածած նյութական մշակույթը հեշտորեն համարեր լազական-վրացական: Այս գիտական անբարեխղճությունը քողարկվել է Մեսխեթ և Թրիալեթ (Ջավախք և Թռեխք) բառերի տակ, որով անտեղյակ ընթերցողին թյուրիմացության մեջ դնելով, հեղինակը **գոմի օդան օդա-սախլի** թարգմանել և «փառավորապես ազգայնացրել» է: Իսկ Աջարիստանը և լազերին վկայակոչել է լոկ այն նպատակով, որպեսզի նրանց օդա (սենյակ, լուսամուտավոր բնակարան) բառով ստանա **օդա-սախլի** կեղծ ձևը և ծածկի **գոմի օդա** հանրահայտ հայկական բնակարանի էությունն ու պատկանելությունն այն պարագայում, երբ սրա կառուցողներն ու մեջը ապրողները Ջավախքում, Ծալկայում և Ախալցխայում գերազանցապես հայերն են:

Սակայն սա չի բացառել Ջավախքի 5,7 տոկոս կազմող վրացիների կողմից հայկական գոմի օդայի փոխառությունը: Եվ պետք է ասել, որ օդան փոխ առնող ինչպես վրացին, այնպես էլ լազը կամ հույնը Ջավախքում ու Ծալկայում երբեմն ներքին հարդարումը կատարել են հունական կամ վրացական նախշազարդերով: Հույնը և վրացին երբեք էլ գոմասենյակին համատիպ կառույց չեն ունեցել, և եթե նրանք սովորել և ընդօրինակել են այն, ուրեմն դա նրանց պետք է եղել: Այս դեպքում ընդօրինակելը շարքային լազի, վրացու կամ հույնի մեջ նաև երախտագիտություն զգացում է ծնել ժամանակին: Իսկ ահա Տ. Ա. Չիքովանին ունեցել է այլ մոտեցում. մարդը քշտել է թևերը և գործի անցել՝ հայտնագործելով անվանումներ ու շինարարական հիմնավորումներ՝ «վրացական ավանդույթի լիակատար համապատասխանությամբ[272]»:

Գոմասենյակի կառուցվածքային առանձնահատկությունները: Ըստ հատակագծման, գոմասենյակը Ջավախքում եղել է երկբազմոցանի, երեքբազմոցանի,

272 **ԻԷԿՍ**, Նշվ. տեղում, էջ 53: (ռուսերեն տառերով նշված աղբյուրը բերված է հայատառ: Կազմ. ծնթգր):

չորսբազմոցանի, նաև սակավ դեպքերում՝ վեցբազմոցանի: Բազմոցները վառարանի ուղղությամբ ձգվող ամբողջական և անշարժ թախտեր էին: Ընդ որում, մուտքից մինչև վառարանը հասնող նավը 80-90 սմ լայնությամբ հողե հատակ էր ունենում: Սրա աջ ու ձախ կողմերում ձգվում էին նստարանի բարձրության բազմոցները, որոնց տակը դատարկ էր՝ ոտնամանները տեղավորելու և, օդի ազատ հոսանքի շնորհիվ, խոնավությունը կանխելու համար: Չորս բազմոցանի գոմասենյակում հաջորդ երկու բազմոցները, որ կից ու զուգահեռ էին, նույնպես նստարանի չափով բարձր էին նախորդներից: Այդպես էին նաև վեցբազմոցանի 5-րդ և 6-րդ բազմոցները, որոնք նույն բարձրությամբ ձգվում էին նախորդներին կից: Բոլոր բազմոցներն էլ ունեին հենման տախտակ-բազրիքներ՝ **քան** անունով:

Այսպիսով, գոմասենյակի հատակն ընդունում էր մի տեսակ երկկողմանի ամֆիթատրոնի ձև, որի աստիճաններն ունենում էին 100-130 սմ լայնություն, որոնց վրա աշխատում, հանգստանում և քնում էին:

Որոշ դեպքերում, գոմի կողմում՝ ոմանք անկողինը ծալք դնելու համար, հավելյալ թախտ էին կապում:

Հազվադեպ էին այն գոմասենյակները, որոնց ստորին բազմոցները սրբատաշ բազալտից էին:

Բացի նշված բազմոցներից, շատերը, գոմի ազատ տարածության հաշվին, առաջին և երկրորդ բազմոցի շարունակության վրա, այուներին հենվող նոր բազմոց էին կառուցում 2-2,5 մետր մեծությամբ, որը հաճախ իր գեղեցիկ բազրիքներով և վարագույրով **հարսնատուն** էր կոչվում: Այն հատկացվում էր նորապսակներին իբրև ննջարան:

Ըստ ծածկի հատակագծի, Բարձր Հայքի գոմասենյակները Ջավախքում մեզ են ներկայանում երկու հիմնական տարբերակով և զարգացման ամենաբարձր աստիճանով: Առաջինը և ամենատարածվածը եռանավ ծածկն էր, որի կենտրոնական նավը նման էր շրջված խոր տաշտի: Երկու քառակող մայր գերաները, երկարության համաձայն հանգչում էին 2 կամ 3 այան վրա: Այս գերանների վրա բարդվում էին 3-12-ական բարակ, դարձյալ քառակող դարսահեծաններ՝ առաջակարկառ եզրերով, որի հետևանքով էլ կենտրոնական նավը որոշ չափով նեղանում էր: Հազվադեպ էր, երբ կենտրոնական նավը ոչ թե հարթ, այլ կամարաձև ծածկ ուներ, որին էլ **ժամածածկ** անունն էին տալիս:

Բոլոր երեք նավերն էլ ծածկվում էին կոնդերով, իսկ կոնդերը՝ թավաններով: Դարսագերանները, թավանների տախտակները և այուները ունենում էին եզրազարդեր՝ **մատնեքներ**:

Գոմասենյակի ամբողջ քառանկյունին, որը նախապես շինվում էր գետնի վրա և ապա հավաքվում իբրև ծածկ, իր 4 առորմիների քառանկյունիով հանգչում էր 10-12 այան վրա: Այդ ձևը կիրառվում էր հակաերկրաշարժային նպատակով: Միջին

ուժգնության երկրաշարժից կամ այլ պատճառով պատերը փլվելու դեպքում այդ սյուները հաճախ հուսալիորեն կանգուն էին պահում ամբողջ ծածկը:

Գոմասենյակի ծածկի երկրորդ տարբերակը բազմանավությունն էր: Այսինքն՝ առորմիները չհաշված՝ 4 գերաններ երկայնքով հանգչում էին գոմասենյակի երկու լայնական ճակատների վրա, առաջացնելով մոտավորապես կլորավուն տեսք՝ 5 նավով: Այս պարագայում բոլոր նավերը ծածկվում էին կիսված կոնդերով, որոնց հարթ երեսները զարդարվում էին մատնեքով:

Գոմասենյակի ներքին հարդարումը բնականաբար կատարվում էր կառուցումն ավարտվելուց հետո: Զարդարողները կարող էին լինել նույն կառուցողները, թեև կային նաև այդ առումով հատուկ մասնագիտացած վարպետներ: Վերջիններս հրավիրվում էին գործատերերի կողմից, ովքեր շաբաթներ կամ նույնիսկ ամիսներ շարունակ ստեղծում էին թարեքներին ու սրանց պսակներին, գլխավոր սյուներին, օջախի կողմի փայտե ճակատին և թավանի կենտրոնին հատուկ տախտակե զարդեր: Այս զարդերը՝ մարդկային, կենդանիների և թռչունների պատկերներ, երբեմն կատարվում էին շատ բարձր արվեստով ու ճաշակով: Առանձնապես բարձրարվեստ էին ստացվում ձիերի, օձերի, կորճառյուծների պատկերները, որոնք ընդունակ էին բեկելու գյուղաշխարհի, նրա մարդկանց կյանքի չարքաշության, և կամ գեղեցիկից ու գեղագիտականից նրանց՝ իբրև թե հեռու կամ խորթ լինելու ընդհանրական և, ըստ էության, թվացյալ պատկերացումները:

Քանի որ գոմասենյակը գոմում գտնվելու բուն նպատակը ջեռուցման ապահովումն էր, գոմակերտներն այդ կցումը կատարում էին հնարավորինս առավելագույնը օգտվելու համար: Մեկ կամ երկու բացվածքով գոմին միանալիս, գոմասենյակի 3 կամ 2 պատերը դրսում էին մնում, որով և ջեռուցումը սպասվող արդյունքը չէր տալիս: Այդ պատճառով աշխատում էին այնպես անել, որ դուրսը մնար միայն գոմասենյակի ծխնելույզի պատը, ինչը պարտադիր կարգ էր: Այս դեպքում գոմասենյակը ներառվում էր գոմի և հարակից բնակմասերի մեջ: Պատահում էին նաև այնպիսի գոմասենյակներ, որոնք գոմի երկար պատի կողմից երեք բացվածքով մխրճվում էին նրա մեջ և լիովին օգտվում գոմի գոլությունից:

Մեծ գերդաստանները երբեմն ոչ թե մեկ, այլ 2-4 գոմասենյակ էին զետեղում գոմերի մեջ՝ անհատական ընտանիքներին հատկացնելու նպատակով:

Անցյալում սակավաթիվ անասուններ ունեցող ընտանիքները գոմասենյակը ոչ թե գոմին, այլ թնդրտանն էին կցում:

Ունևոր տնտեսությունները հատուկ փոքրածավալ գոմասենյակներ էին կառուցում նաև մշակների և հյուրերի համար, որոնք զետեղվում էին կամ գլխավոր գոմասենյակի նախասրահում և կամ գոմերի տարբեր անկյուններում՝ **մշակի օդա** և **միսավիրի օդա** անուններով:

Գոմասենյակն ուներ մի շարք գործառույթներ, որոնցից ամենակարևորը որ-

պես բնակարան օգտագործվելն էր: Ձմռան երկարատևության հետևանքով տան անդամների մեծ մասը կամ ողջ ընտանիքը այդ ժամանակամիջոցն անց էր կացնում գոմասենյակում: Յուրաքանչյուր ամուսնական զույգ զբաղեցնում էր 4-6 բազմոցներից մեկը կամ դրա կեսը, իսկ նորապսակները՝ հարսնետները:

Գոմասենյակը կատարյալ հասարակական զրուցարանի դեր ուներ: Ուշ աշնանից մինչև գարուն ծերունիները երեկոյան այստեղ էին հավաքվում և զրուցում ամենատարբեր թեմաների շուրջ: Ծերերի մոտ զրույցի էին հավաքվում տարբեր տարիքի տղամարդիկ, երիտասարդներ, նաև՝ հյուրեր, երաժիշտներ, հեքիաթասացներ ու ժողովրդական կատակաբաններ: Մինչ կանայք, այդ զրույցների ընթացքում, վերին բազմոցների վրա կամ էլ գլխատանը զբաղվում էին բրդի մշակմամբ, այլևայլ գործերով[273], որոնք գյուղաշխարհի կյանքից ու մարդկանց առօրյայից գրեթե անպակաս էին:

Գյուղավագի գոմասենյակը, բացի տղամարդկանց մի խմբի զրուցատեղի լինելուց, ծառայում էր նաև իբրև գյուղական ակումբ՝ ժողովրդական թատերական ելույթներ, աշուղական երգ ու երաժշտություն, ինչպես նաև թատերականացված հեքիաթասացության երեկոներ կազմակերպելու համար, որի վերաբերյալ ընդարձակ տեղեկություններ է հաղորդել Հովհաննես Մալխասյանը 19-րդ դարի վերջերին[274]:

Վերջապես, գոմասենյակը հնուց ի վեր ծառայել է իբրև դպրոց, որի բազմոցների վրա ծալապատիկ նստում և դաս էին սերտում գյուղի մանուկները: Խնդրո առարկա սենյակի այս գործառույթը հարատևեց մինչև 1920-ական թվականների կեսերը:

Բնակարաններից մեկը **ամառնատունն**[275] էր, որտեղ ամռանն ապրում էր ընտանիքի անդամների մի մասը: Այն համարվում էր նաև հյուրատուն:

Որոշ ամառնատներում պահպանվում էր նաև վառարանը: Բոլոր ամառնատները եռանավ ծածկ ուներին, որոնց երկու գերանները հանգչում էին մեկական սյան վրա: Ծածկի կենտրոնական նավերը մեծ մասամբ թավանապատ էին, իսկ կողմնային թևերը՝ կոնդածածկ կամ տախտակածածկ: Լուսավորվում էին մեկ-երկու լուսամուտներով:

Այս ամենից երևում էր, որ ամառնատները, որպես գոմասենյակների հետագա զարգացումը, ինքնուրույնացել և կատարելագործվել են դեռևս հին ժամանակներում:

---

273 Իմ հուշերում, խոր մանկությանս օրերից, սրբազան ծես որպես, անմոռաց է մնացել **Հիշտեկը**, երբ շաբաթ երեկոյից սկսած ոչ ոք այլևս որևէ գործ կատարելու իրավունքը չուներ, հատկապես ձեռքի աշխատանք՝ կարուձև և այլն: Միմյանց զգուշացնելով՝ դադարեցում էին բոլոր գործերը (կազմողի ծանոթագրումը՝ Ռ.Ղ.):

274 ԱՀ, 2, էջ 254-262:

275 Ամառնատուն ասելով պետք է հասկանալ լուսամուտավոր այն սենյակը, որը ծածկի և հատակագծի տեսակետից կրկնում էր գոմասենյակի ներքին տեսքը: Այն ունենում էր երկու բազմոց և հողե նավ, ինչպես գոմասենյակը: Դրան ժողովուրդը **յազլըղ** անունն էր տալիս: Այն չպետք է շփոթել հարթ հատակով սենյակների հետ, որոնք կառուցվում էին քաղաքի օրինակով:

Ամառնատները, ավանդական կարգի համաձայն, կառուցվում էին մշակված բազալտ քարով և կրաշաղախով: Ավանդական էր նաև ամառնատունը շենքերի համալիրին առջևի մասից կցելը, որի մուտքը նույնպես միշտ բացվում էր շվաքից:

Մինչև 1980-ական թվականների սկզբները Ջավախքում դեռ պահպանված էին 19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դարի առաջին կեսի բազմաթիվ ամառնատներ, որոնք մեծ մասամբ լքված են քաղաքային նորատիպ սենյակների կառուցման պատճառով:

Դրանք միակ շենքերն էին, որոնք, հազվագյուտ դեպքերում հարթածածկ լինելով, ունենում էին քարե գեղեցիկ ջրհորդաններ: Այդպիսիներից երկուսը 1980-ին հայտնի դարձան Հեշտիայում: Մեկը 20-րդ դարի սկզբներին սրբատաշ քարով, երկու լուսամուտով, նկուղով և զույգ ջրհորդաններով է: Մյուսը այժմ ամառնատուն է, որի ճակտին կան ձիու և խոյի գլուխ պատկերող ջրհորդաններ: Ջրհորդանները քանդակված են իրապաշտական ոճով և սպիտակ քարից, որով էլ դրանք թանգարանային գողտրիկ նմուշներ են հիշեցնում:

Ինչպես ողջ պատմական Հայաստանում, Բարձր Հայքում էլ **գլխատունը** ննջարան-բնակարանի դեր ուներ: Սակայն ի տարբերություն այլ շրջանների, Բարձր Հայքում գլխատան այդ գործառույթը, գոմասենյակների տարածվածության հետևանքով, երկրորդական էր դարձել:

Հանգստի, աշխատելու և քնելու համար թնդրտան պատերին առընթեր գերդաստանական տները երկար, անշարժ ու բազրիքավոր թախտեր էին պատրաստում:

Որոշ գլխատներ, ինչպես արդեն տեսանք վերևում, թոնիր չէին ունենում և տախտակապատ հատակներով վերածվում էին ննջարանների:

Գլխատունը գյուղական տան համակառույցի գրեթե միակ խոհանոցն ու հացատունն էր, որտեղ պատրաստվում էին բոլոր կերակուրները, թխվում հացատեսակները: Այդ պատճառով նրա հետ առավելապես կապված էին կանայք: Վերջիններիս մեծ մասը առավոտից մինչև ուշ երեկո երեխաների հետ իր ժամանակն անցկացնում էր թնդրտանը: Այս իմաստով էլ գլխատունը յուրահատուկ կանանոց էր, հավաքատուն: Սա էր նրանց միակ սեղանատունը, ուր տարեց կանայք առանձին և հարսներն առանձին էին ճաշում: Այստեղ և գոմասենյակում տեղի էր ունենում բրդի մշակումը, այդ թվում նաև շալագործությունը: Կանայք գոմասենյակում և թնդրտանն էին գործում գորգը, կարպետը, ջեջիմը, ջվալը, մեզարը, խսիրը և այլն: Տղամարդիկ այստեղ սակավ էին մտնում:

Ամբարտուն չունեցողները, որ կազմում էին ժողովրդի ավելի քան 90 տոկոսը, սերմացուի և ալյուրի ամբարները զետեղում էին գլխատներում և հարմար բակերում:

Գլխատունը Հայաստանում մենատան զարգացման բարձր աստիճանն է: Բարձր Հայքի շինարարական արվեստից մեզ հասած և այժմ Ջավախքում գոյատևող բոլոր տվյալներն այդ են ցույց տալիս: Մենատան և գլխատան հատակա-

գծային առանձնահատկությունները նույնն էին: Բայց և գլխատունն առանձնանում էր իր ծածկի բարդ կառուցվածքով: Առանձնանալով մենատան անասնապահական գործառույթից, գլխատունը ձեռք է բերել ոչ այնքան հատակագծային նորություններ, որքան նոր գործառույթներ:

Գլխատան առանձին ենթաբաժիններն ունեն առանձնահատուկ հատակագծեր: Հազարաշեն ծածկ ունենալու պայմանը նրա համար քառակուսի հիմք ստեղծելն էր: Ուստի աբսիդն առանձին և ցածր տունն առանձին քառակուսի հատակագիծ էր ունենում: Այդ նպատակին կարող էին ծառայել նաև կլոր հատակագծով տները: Սակայն միշտ չէր, որ պահպանվում էին այդ ձևերը, որովհետև առավել մեծ տուն ունենալու համար պետք էր ցածի տունն օժտել քառանկյունի հատակագծով: Ավելի ստույգ՝ այս քառանկյունությունը ցածի տունն իբրև ժառանգություն է ստացել մենատնից, որը հասարակ գոմածածկ էր ունենում: Եվ այժմ էլ քիչ չեն այն ցածի տները, որոնք ունեն գոմի ծածկ, որը ևս մենատնից է գալիս:

Սովորաբար գլխատան թնդրափն իրենից քառակուսի կամ կիսաաղեղնաձև աբսիդ է ներկայացնում, որը ժողովրդի մեջ հայտնի է **թնդրափ, թրռափ, վերի տուն** և **թմբիկ** անուններով: Այն ցածի տնից բաժանվում է քարով պատնեշված հողաթմբով, որտեղ թաղվում էր մեկ կամ երկու թոնիր:

Թմբիկը պատերի մեջ ունենում էր 1-3 պատրհան՝ մանր իրեր և թթխըմորի ամանը պահելու համար: Նրա պատերի տակ շարվում էին սննդամթերքներ պարունակող բազմաթիվ կճուճներ և հացթուխի պարագաներ:

Ցածի տան ծուխը նվազեցնելու նպատակով, ունևոր տնտեսությունները թնդրափը բաժանում էին տախտակե միջնորմով և դուռ էին կախում: Իսկ ուրիշներն էլ նույն տեղում ձևավոր տախտակե վարագույրանման կիսամիջնորմ էին կախում, որը տանը ճարտարապետական առումով գեղեցիկ տեսք էր տալիս:

Ցածի տունը, ինչպես ասացինք, մեծ մասամբ քառանկյուն հատակագիծ էր ունենում, թեև ծանոթ էին նաև քառակուսին և բոլորածիրը: Ի դեպ, ասենք, որ քառակուսի հատակագծով ցածի տները մեծ մասամբ հատուկ էին միջակ տնտեսություններին և չքավորներին: Նրա պատերի մեջ ևս մեկից ավելի պատրհաններ և որմնադարաններ էին լինում:

Այստեղ էին տեղավորվում վերևում նշված շարժական և անշարժ բազմոցները, ամբարները, խեցեղենն ու պղնձե ամանները: Նրա պատերին առընթեր շարվում էին թթուներ, պանիր, ղմի (աղը դրած շուշան), փոխինդ, կորկոտ, բլղուր և այլ մթերքներ պարունակող, ինչպես նաև դատարկ կարասի ու կարասներ: Վերջիններիս գլխին հարմարեցված տախտակի վրա շարվում էին կճուճներ, իսկ երբեմն էլ սրանց գլխին՝ մանր ամաններ: Գեղեցիկ տեսք տալու համար դրանք երբեմն հարդարվում էին ձյութով արված զարդերով և կամ էլ ներկվում էին օխրայով: Այդ սովորությունն այժմ էլ որոշ տեղերում դեռ պահպանվում է:

Ունևորների ցածի տները և թնդրափները թարեքներ էին ունենում, որտեղ նույնպես ցուցադրվում էին գեղեցիկ իրերը:

Թնդրափների ծածկաձևերը խայտաբղետ են. ելնելով պատերի ձևերից՝ դրանք երբեմն կողքերում հարթ են, երբեմն էլ՝ գոմածածկի և հարթ ծածկի խառնուրդ, բոլոր դեպքերում կենտրոնում ունենալով գմբեթավոր երդիկ: Ծուխը լավ քաշելու տեսակետից լավագույնը հազարաշենն է: Ծխի հեռացումն արագացնելու համար դեռևս Կարինում, իսկ այնուհետև նաև Ջավախքում, Ծալկայում և Ախալցխայում սովորություն կար երդիկի բացվածքի վրա ավելացնել 70-100 սմ բարձրության կոնաձև ծխաքաշ, որը պատրաստվում էր քթոցի ձևով կամ փայտաձողերից շինված կմախքով՝ դրսից սվաղելով: Դրա թերևս եզակի օրինակը հայտնի է Ծուղրուտում: Հարկ է նշել, սակայն, որ այս երդիկային **գլխարկը** սովորաբար մթնեցնում էր տունը, ուստի 19-րդ դարի վերջերից սկսած աստիճանաբար այն վերացավ: Այդ գմբեթին տեղ-տեղ փոխարնել էր կլորավուն ճմերից դրվող **խողովակը**, որը 40-50 սմ տրամագծով անցք էր ունենում:

1950-ական թվականներին թնդրափի կիսաաղեղնաձև կամ ուղիղ պատը վերածեցին ավելի կլորավուն և սրածայր բուխարու: Թոնիրը թողնում են այդ բուխարու տակը, որով ծուխը տան մեջ չի տարածվում: Այդ ծխնելույզն ունի տախտակե **երդսկալ**, որը մի երկաթալարով ծածկվում է և երկրորդով՝ բացվում:

Ծխնելույզի այս տեսակը կարնոհայերին վաղուց էր հայտնի, բայց չի նկարագրվել: 1959-ին ճիշտ այդպիսի մի բուխարի ենք չափագծել և նկարագրել Լենինականի հին տներից մեկի համալիրում՝ կառուցված 1830-ական թվականներին: Այդ թնդրտան շուրջը կառուցված էր 6 լուսամուտ ունեցող սենյակ[276]:

Ցածի տան ծածկը նույնպես բազմազան է: Այժմ Լոմատուրցխում թոնրատներից մեկն ունի հարթ ծածկ, թեև սա Ջավախքում հազվադեպ երևույթ է: Բայց գոմածածկ թնդրտներ կարելի է ցույց տալ բոլոր բնակավայրերում: Վերջիններս երբեմն մարագներ են եղել, ապա վերածվել գլխատան կամ էլ՝ այդ ծածկը, հարթ ծածկի նման, ավանդաբար գալիս է մենատներից:

Ծածկի երկրորդ տիպը *հազարաշենն է՝ դառնաուն, դառնավուն, դառնաղուն, դառնաղուշ և խառնախուն* անուններով[277]:

Բարձր Հայքից մեզ է հասել ծածկի մի տարբերակը, որը կիրառվել է Կարնո իջևանատան վրա: Նրա ներքնատեսքը լուսանկարով մեզ հայտնի է դարձել Ն. Կ.

276 20-րդ դարի սկզբներին տունը պատկանել է Ավ. Իսահակյանի սիրելի Շուշիկի ծնողներին, իսկ 1930-ից՝ Մուշեղ Բարսեղյանին: Ներկայիս առևտրի տունը այդ մեծարժեք տան տեղն է կառուցվել:

277 Համաձայնելով այլոց կարծիքներին՝ Ստ, Լիսիցյանը գտնում է, թե դառնաուճը և դառնաղուշը թուրքերենում դառնաք-թև է նշանակում և դուշը՝ թռչուն: Ուրեմն դառնաղուշը թռչունի բացված թև է իմաստավորում, որը համապատասխանում է հազարաշենի կառուցվածքին (տես **ԻԿԻԱԻ**, հ.4, նշվ. աշխ. էջ 60):

Օկունևի միջոցով, Արևմտյան Հայաստան կատարած գիտարշավի արդյունքում: Այդ լուսանկարը պահվում է ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի Ն. Մառի անվան նյութական մշակույթի պատմության ինստիտուտում, որտեղ այն հայտնաբերել և առաջին անգամ օգտագործել է ճարտարապետ Վ. Հարությունյանը[278]:

Այդ իջևանատան հազարաշեն ծածկի տարբերակը Ջավախքում կրկնվում է ամենուրեք, որոնք այժմ էլ գոյատևում են:

Հազարաշեն տարբերակներն առաջացել են շարվածքի երկու ձևերի կիրառումից: Ամենատարածված ձևի դեպքում տվյալ շարքի հավասարաչափ երկարության քառակող կամ կլոր գերանների ծայրերն իրար հասնում և անկյուն են կազմում: Այդ շերտը լրացնելուց հետո գալիս է նոր շերտ, որի գերանները նախորդներից կարճ են լինում և նույն շարվածքն ունեն: Այսպես աստիճանաբար կարճանում են բոլոր շերտերի գերանները, որով և համապատասխան չափով նեղանում է շրջանակը:

Շարվածքի երկրորդ տարբերակի դեպքում հավասարաչափ գերանների գլուխները իրար չեն հասնում, քանզի նրանց միջև դրվում է ընդմիջարկող և **հայելի** անունը կրող կարճ փայտ:

Երկու տարբերակում էլ երդիկը քառակուսի ձև է ունենում: Վարպետների հազարաշենի բոլոր դարսագերանների եզրերը խնամքով նախշում էին մատնեքազարդերով:

Ինչպես ասված է, հազարաշեն ծածկի պայմանը քառակուսի կամ կլոր հիմք ունենալն է: Այդ պատճառով ցածի տան քառանկյունուց ստանում էին մի քառակուսի, որտեղ երրորդ պատի դերն ստանձնում էր հաստ և սյունազարդ գերանը: Երեք պատերին առընթեր կցվում էին երեք առորմիներ, որոնք 3-ական որմնասյուն էին ունենում: Այսպիսով, ստացված 4 գերաններն իրենց 12 սյուներով փաստորեն 4 առորմիներ էին, որոնց քառակուսու վրա էլ հյուսվում էր մեկ բաժանմունքով հազարաշեն: Քառակուսուց դուրս մնացած հավելյալ մասը միշտ ունենում էր կոնդերով ծածկ, ըստ որում, երբեմն այդ կոնդերի մշակված ծայրերը կարկառուն էին հազարաշենի մեջ և տանը գեղեցիկ տեսք էին տալիս: Սակայն կոնդերով ծածկված մասերը վատ էին լուսավորվում:

Ցածի տան քառանկյունի հատակագծի արտակարգ երկարությունը բանավոր տվյալների համաձայն երբեմն հանգեցրել է մեկից ավելի մասերի (բաժանմունքների) ստեղծման[279]: Օրինակ, Կարնո Դինարիգոմ գյուղի թնդրտունը, որի մեջ 4 գոմասենյակ էր զետեղված, անկասկած պետք է ունենար գոնե 2 մասով հազարաշեն, որպեսզի կարողանար լուսավորել երկու ճակատներում գտնվող գոմասենյակները:

278 Տե՛ս «Հայկ. ՍՍՀ ԳԱ հաս. գիտ. տեղեկագիր», թիվ 4, 1947, և «Դվինի 5-7-րդ դարերի ճարտարապետական հուշարձանները», Երևան, 1950, էջ 72, նկ. 23:

279 Հմմտ. Կարճկանի 2-3 բաժանմունքներով ծածկերը (Հ. Խ. Խալպախչյան, Քաղաքացիական ճարտարապետությունը Հայաստանում, Մ., 1971, էջ 69, նկ. 47):

Սակայն Ջավախքում մեզ չի հաջողվել գտնել նման տներ, որի բուն պատճառը գերդաստանների վերացումն է եղել:

Հազարաշեն ծածկի վերջավորության նման գմբեթ էին ունենում նաև հարթածածկ և գոմածածկ տները՝ ծուխը արագ քաշելու նպատակով: Բոլոր դեպքերում քառակուսի բացվածքով երդիկները վերջին տան նման լրացուցիչ կարգով ծխաքաշ բուրգեր էին ունենում, որոնք նույնպես 19-րդ դարի վերջերից անհետացան:

Այդպիսիք էին գլխատան ծածկերը, որոնց մեջ ամենատարածվածը հազարաշենն էր[280]:

Ճարտարապետները հազարաշենի կոմպոզիցիայի ստեղծումը կապում են միայն անտառանյութի խնայողության հետ: Սակայն խնայողությունն այստեղ միայն մի կողմն է: Մյուս կողմն աղերսվում է շինարարության գաղափարական խնդրի հետ ոչ միայն Հայաստանում: Չէ՞ որ մեզ մոտ գլխատունն ամենուրեք տաճար[281] է համարվել, որը բոլոր նահանգներում կնունքի, պսակի և այլ արարողությունների տեսակետով փոխարինել է եկեղեցուն: Խնդրո առարկան հետևապես հոգևոր-կրոնական (հեթանոսական-քրիստոնեական) հայեցողությունն է եղել, որով սրբատան գմբեթը դեպի վեր, դեպի անհասնելին հայել-ձգտելն էր, տան առաստաղին տիեզերական տեսք հաղորդելը, որով էլ բացատրվելու է Ամանորին, ժամանակից սնացած ձեղունի վրա ալյուրով աստղեր պատկերել-ձևացնելու համատարած սովորությունը: Ժողովուրդն, այս տանը այսօրինակ նշանակություն տալով էլ, այն զարդարել է իր կարողացածի չափով, պակասը լրացնելով սյուների, ճաղ սյուների և խոյակների սքանչելի զարդարվեստով, ինչպես նաև վերի տունը ցածի տնից բաժանող տախտակե կամարավոր, զարդարուն միջնորմերով: Միայն սրանով պիտի բացատրել, որ Ջավախքում որոշ թնդրափների պատրիաններից մեկը նվիրվում էր սրբացված որևէ գրքի պահպանմանն ու տունը սրբատան վերածելու սովորությանը[282], որը, որպես հացի տուն, ամենայն հավանականությամբ աղերսվելու է Վա-

280 Ճարտարապետության պատմությունը հավաստում է, որ **հազարաշեն** ծածկը համընդհանուր է ողջ Առաջավոր Ասիայի, միջերկրածովյան, Հնդկաստանի և այլ երկրների համար: Հնդկաստանում այժմ պահպանված հազարաշեն տները լիովին նման են հայկական հազարաշեններին: Հնդիկներն այդ տունն անվանում են **գարբհա-գրիհա,** հույները՝ **մեգարոն**, վրացիները՝ **էրթոբիս սախլի**:

281 Հին Կտակարանում հրեաների տաճարը, որպես Աստուծո տուն, հոգևոր-գաղափարական իմաստով Բարձրյալի հետ միասնության առհավատչյան էր անշուշտ: Տաճարում էր, ըստ Հակոբոս Տեառնեղբոր պատումի, որ ծերունազարդ Գամալիելը հրաժարվեց վարդապետել յոթնամյա Հիսուսին, երբ վերջինս անակնկալ արտաբերեց մի ասույթ, որից հետո պատկառելի ուսուցիչը խոստովանեց, թե ի՛նքը նրանից սովորելու կարիքը ունի և ոչ թե հակառակը (կազմողի ծանոթագրումը՝ Ռ. Ղ.):

282 1980-ին մեզ հայտնի դարձավ, որ Դիլիսկա գյուղում Փ. Իրիցյանի մեծածավալ թնդրտունը **Նարեկի տուն** անունն է կրում: Իրիցյանների ընտանիքը Կարինից այստեղ է եկել Նարեկը հետը և տունը կառուցել է հայրենի **Նարեկի տան** ձևով: Այս նոր տան պատի մեջ կա տախտակապատ որմնադարան 60 x60 սմ մեծությամբ, որտեղ 150 տարի շարունակ պահվել է այդ Ս.Գիրքը, որին Ս. Սարգսի տոնի օրը ուխտի են եկել հարյուրավոր հավատացյալներ: Տունն

նատուրի և Ամանորի պաշտամունքի հետ: Գլխատան սրբատուն լինելն են մատնանշում նաև նրա հատակագծի վրա կից բաժիններից առաջացած խաչերը: 1920-ական թվականներին Ստ. Լիսիցյանը Ջավախքում վկայել է թնդրտանը կից զույգ մառաններ, որոնք թնդրափի աջ ու ձախ կողմերին անկասկածելիորեն ներկայացնում էին իբրև խաչի զույգ թևեր, իսկ երրորդ թևը հենց ցածի տունն էր կազմում[283]: Եվ եթե Ջավախքում 20-րդ դարի սկզբներին գլխատան կազմում պահպանվել են խաչի միայն 2-3 թևերը, թերևս պետք է բացատրել միայն պաշտամունքի հին ավանդների մոռացման և, դարձյալ, գերդաստանների վերացման հետ[284]:

Գլխատան հնագույն, մինչքրիստոնեական պաշտամունքներից էին նրա պատի միջի վառարանը և գլխավոր սյուները: Վառարանը գործնական տեսակետից տան մեջ օգտակար էր՝ հանպատրաստից կերակուրներ եփելիս և այլն: Բայց թոնրի հետ նրա զուգահեռությունը սոսկ գործնականով չի կարելի բացատրել: Կրակապաշտական տեսակետից նա նույնն էր, ինչ գոմասենյակինը:

Ինչ վերաբերում է տան 1-2 գլխավոր և զարդարվող սյուներին, որոնց մոտ դրվող քարերին նստում էին տան մեծերը, մենք դրանց մեծարանքները կապում ենք նախնիների, թերևս նախնի հոր ու մոր պաշտամունքի հետ: Սրանով պիտի բացատրել, որ Ջավախքում մեծ վիշտ ապրողները և հալածվողները ողբալիորեն փաթաթվում էին այդ սյուներին՝ կարծես թե օգնություն աղերսելով:

Այսպես, ուրեմն, մենք ներկայացրինք Բարձր Հայքին և Ջավախքին հատուկ այն բնակարանները, որոնք հինավուրց ավանդների համաձայն ունեին կոլեկտիվ օգտագործման կարգ ու կանոն և որոնք սրբագրվում էին կրոնա-բարոյական նորմերով: Մի երևույթ, որն էլ անկասկածելիորեն առնչվում էր գերդաստանների ներքին պահանջների և գաղափարական հիմքերի հետ:

Այժմ որոշակիորեն կանդրադառնանք անհատական օգտագործման ենթակա ննջարանների խնդրին: Վերջիններս, ինչպես տեսանք համալիրների նկարագրութ-

---

ունի կիսաշրջանաձև աբսիդ, որ հիշեցնում է եկեղեցու ավագ խորանը՝ երեք պատրհանևներով: 1979-ին այսպիսի սրբատուն նկարագրեցինք Թալինի գյուղական մի համակառույցի մեջ՝ **Կարմիր Ավետարան** անունով, որ պատկանել է Դիլանյանների ընտանիքին: Կարմիր Ավետարանը 1830-ին այստեղ է բերվել և նրա համար սրբատուն է կառուցվել Կարնո Դուքաղ գյուղի օրինակով՝ թոնրատան ներսում: Այս սրբատունը բացարձակորեն կրկնում է բազմանավ ծածկ ունեցող գոմասենյակի ձևը: Այժմ այս արժեքավոր շինությունը պահպանվում է Հայաստանի ազգագրության պետական թանգարանի կողմից:

283 Ստ. Լիսիցյան, նշվ. աշխ. էջ 63, նկ. Բ 3:

284 Ազգային ավանդների մոռացման հիմնավոր փաստարկումով, երբ հարգարժամ հեղինակի կողմից երկրորդաբար նշվում է նաև գերդաստանների քայքայման-վերացման իրողությունը, խաչի վերաբերյալ հիշատակումը թեման ուղղակիորեն ներառում է քրիստոնեական շրջագիծ, մինչդեռ շինարարական արվեստի ձևավորման և զարգացման մշակույթը հեթանոսական խոր անցյալ ու արմատներ ունի, որի անտեսում-անգիտացումը, ցավոք, այս դեպքում համարժեք կդառնա մեծ և կարևոր ճշմարտություններ մեկընդմիշտ մոռացության տալուն, թաղելուն: (Կազմողի ծանոթագրումը. Ռ.Ղ.):

յան մեջ, գլխատանը կից փոքրիկ, մառանի չափ սենյակ-խուցեր էին, որոնց դռները բացվում էին ցածի և վերի տան մեջ և ջեռուցվում թոնրի ջերմության հաշվին: Այդ սենյակները գերդաստանական և եռաստիճան ընտանիքներում հատկացվում էին նորապսակներին և մյուս երիտասարդ զույգերին: Գանձացի Գրիգոր Ծառուկյանի տան համալիրում 20-րդ դարասկզբին դեռևս պահպանվում էին նախորդ դարում կառուցված կլոր տանը կից 3 ննջարաններ և մի մառան, որը ևս երբեմն նորապսակների համար որպես ննջարան էր ծառայում:

Այս տան օրինակը թույլ է տալիս մեզ ենթադրել, որ Բարձր Հայքի միջնադարյան և ավելի վաղ շրջանի գլխատները, մառանից բացի, պետք է որ մինչև 5-6, գուցե և ավելի ննջարան ունենային, որոնք պատշաճորեն տաքացնելու համար պիտի որ վառվեին զույգ թոնիրներ:

Այս ննջարանները հարթածածկ էին՝ մեկական երդիկով: Կահկարասին համեստ էր՝ մի շարժական թախտ, պատրհան, օրորոց և այլն:

Անհատական ննջարանների թվին պետք է դասել նաև վերևում հիշատակված հարսնատունը:

Բացի վերոհիշյալ բնակարաններից, հին տներում կային նաև օժանդակ ննջատեղեր, որոնք մեծ մասամբ օգտագործվում էին տաք եղանակներին: Դրանցով ընտանիքների մեծ մասը 4-5 ամիս ապահովվում էր մաքուր օդով: Այդպիսիք էին լայնարձակ շվաքները և երբեմն էլ նախասրահները: Գարնան կեսից մինչև աշնան սկիզբը ժամանակավոր թախտերի, նաև շարժական մահճակալների վրա էին անցկացնում ընտանիքներն իրենց ժամանակը:

Օժանդակ ննջարանների դեր էին կատարում նաև մառանները և շենքերի համալիրներում գտնվող մարագները: Իսկ սոցիալապես տկար ընտանիքները հարկադրված էին տարվա այս սեզոնում ևս մնալ գոմերում կամ գլխատներում ու մենատներում: Դրանց թվում էին նաև մշակները, ովքեր առանձին **մշկի օդա** չունենալու պարագայում տարին բոլոր գիշերում էին գոմերի առղելների վրա:

Հյուրատներ և իջևաններ: Հայ ժողովուրդը հյուրասիրության ազգային ավանդույթը, ընդհանրացված սովորությունները մեզ է հասցրել հնագույն ժամանակներից, թեպետև ձիգ ժամանակների մեջ որակական և բովանդակային առումով որոշակիորեն փոփոխություններ կրել, անգամ կերպարանափոխվել է՝ ըստ դարաշրջանային իրականության և կեցության պայմանների: Այդ սովորություններից և պատկերացումներից էլ ածանցյալ էր դառնում առանձին հյուրատներ կամ սեփական տանը մասնակիորեն առանձնացված անկյուններ ունենալու սովորությունը: «**Հյուրը Աստծունն է**» նշանաբանով՝ իրենց հյուրասիրությամբ աչքի էին ընկնում ողջ Արևելքը, Հայկական քաղաքակրթական ողջ արեալը, նաև Բարձր Հայքն ու Ջավախքը:

20-րդ դարի սկզբներին Ջավախքի շատ գյուղերում դեռևս պահպանվում էր հյուրերի համար հատուկ գոմասենյակ ունենալու սովորությունը: Այս գոմասեն-

յակը, ինչպես տեսանք, փոքր ծավալով տեղադրված էր լինում մեծ գոմասենյակի մուտքին կից, որտեղ էլ գիշերում էին հաճախակի պատահող հյուրերը:

Բոլոր հիմունքներով, որպես առանձին հյուրատուն էր համարվում նաև ամառնատունը:

1800-ական թվականներին Ախալքալաքում կառուցվել է հատուկ հյուրանոց Տիգրան Հարությունյանի ձեռով: Ժողովուրդը վերջինիս Կտո անունն էր տալիս, որով և հյուրանոցը **Կտոյի գաստինցա** էր կոչվում: Այժմ այդ երկհարկանի և խոր նկուղով շենքի առաջին հարկը հիմնարկի է վերածված, իսկ երկրորդ հարկը հատկացված է բնակիչներին: Շենքը երկկողմանի պատշգամբներով է, փողոցահայաց պատշգամբը սյունազարդ է և զարդարված: Նկուղը ծառայում է իբրև գինետուն: Առաջին հարկը գործում էր որպես ճաշարան, ուր տեղավորված էր նաև գրասենյակը: Իսկ երկրորդ հարկն ուներ 7 ննջարան, որոնցից մեկը ընդհանուր էր:

Այս հյուրանոցին այժմ Ախալքալաքում փոխարինում է նորը:

Ջավախքում կային նաև մի շարք իջևանատներ, որոնցից 3-ը գտնվում էին հենց քաղաքում: Դրանցից մեկը պատկանում էր Սաղաթենց ընտանիքին, երկրորդը՝ Խորենին, երրորդը՝ Միկիտին, որոնք բոլորն էլ պարտադիր ծառայում էին իրենց նպատակին և գինետուն ունեին:

Ախալցխա հայաշունչ քաղաք տանող ճանապարհի վրա գտնվում էին *Խանդոյի խանը, Խրթզի խանը և փեշամալի խանը:*

Իսկ Ախալքալաքից Արտահան տանող ճանապարհի վրա, Սուլդա գյուղում 19-րդ դարի երկրորդ կեսին իջևանատուն էր կառուցել գյուղի բնակիչ Թորոս Թորոյանը: Այդ շենքի համալիրը բաղկացած էր երեք լուսամուտավոր սենյակից, գոմից ու թոնրատնից: Երկու կից սենյակները հատկացված էին հյուրերին, երրորդը գինետուն-խոհանոց էր: Հաց թխելուց բացի թոնրատանը երբեմն հյուրեր էին գիշերում: Հյուրասենյակներն ունեին երկար թախտեր և մաքուր ու զովասուն էին: Գինետանը դրված էին սեղաններ և աթոռներ: Ննջարանների հատակները տախտակապատված էին, իսկ գինետուն-խոհանոցինը հողե գետին էր: Երեք սենյակներն էլ հարթ ծածկ ունեին՝ թավանած ձեղուն-ձեղնահարկով:

Ամբողջ իջևանատան համալիրն առնված էր 2,5 մետր բարձրության քարե պարսպի մեջ: Լայն դարպասից ընդարձակ բակ մտնող սայլերը, կառքերը և ֆուրգոններն ազատորեն տեղավորվում էին և պահպանվում:

Իջևանատան կառավարիչն ու գինետուն-խոհանոցի տնօրենը Թորոսի ավագ որդի Պետրոսն էր: Իջևանի հինգ մշակները պանդոկատիրոջ հաշվին կերակրում էին հյուրերի փոխադրամիջոց հանդիսացող կենդանիներին և խնամում նրանց: Նրանք էին մշակում նաև ընդարձակ բանջարանոցը:

Տնտեսական շենքեր: Այստեղ ներառված էին գլխավորապես պահեստային կառույցներ, որոնք հատուկ էին ունևոր և, որոշ չափով, նաև միջակ տնտեսություն-

ներին: **Մառանն** այդ կառույցների մեջ ամենատարածվածն էր: Մեկ կամ երկու մառան կցվում էր գլխատան թնդրափին, որից էլ բացվում էին նրանց դռները: Հողե էր այս մառանների հատակը, որտեղ թաղվում էին **հոգեպահուստ** յուղի կճուճները և ձեթի ծափերը: Ծածկը հարթավուն էր՝ մեկ երդիկով: Կային նաև այսպես կոչված ներդիր մառաններ: Սրանք գլխատան մեջ առանձին կտրվածքներ էին, երբեմն սրանք լինում էին նաև շվաքների լայնարձակ անկյուններում:

Ամբար կոչված ամբարտունը կառուցվում էր հարթ ծածկով. լուսավորվում էր բարձր տեղից բացված 1-2 փոքր լուսամուտով: Հատակված էր, որի վրա հաստատվում էին շարժական և անշարժ ամբարները: Հացը ամբարների մեջ լցվում էր հատուկ երդիկներից, որից հետո երդիկները ծեփվում էին:

Որոշ մեղվապահներ ունենում էին հարթածածկ կտուրով և հողե հատակով **մեղվատներ**, որտեղ ձմռանը դրվում էին մեղվաընտանիքները:

Մեծ ընտանիքներին հատուկ էր կառուցել հարթածածկ ու մեկ երդիկով պահեստ՝ բոլոր տեսակի իրերը, ինչպես նաև քամհար մեքենան պահելու համար:

Պահեստային շենքերի մեջ իր կարևոր դերն ուներ նաև **մարագը**, որի մեջ, հարդից բացի, պահվում էր նաև ընտիր խոտ:

Իբրև օժանդակ պահեստարաններ էին ծառայում շվաքների ազատ անկյունները. այստեղ էր շարվում աթարն ու տարթը, երբեմն էլ՝ հացի ամբարը: Առանձին պահեստ չունենալով՝ բոլորը դաշտային մեծ, ծանր գործիքները, քանդած սայլերի մասերը և այլ իրեր ուղղակի բակում էին պահում, հաճախ՝ բացօթյա: Սրա սյանն էին փաթաթում գութանի շղթան և փոկերը: Բերքահավաքի բոլոր գործիքները պահում էին առիքներում:

Անասնապահական շենքեր: Զարգացած անասնապահության շնորհիվ Զավախքի գոմերն ու փարախները, ըստ կառուցվածքի և գործառույթների, բազմազան էին: Անասնապահության ձմեռային խնամքի բաժնում մենք արդեն ակնարկել ենք, որ գոմերը երբեմն կառուցվում էին անասնատեսակների խմբավորման համաձայն՝ եզնոց, գոմշնոց, կովնոց, մոզկնոց-հորթնոց, ձիանոց, օչխընոց և օժանդակներ: Բնականաբար այսպիսի գոմերն հատուկ էին այն հարուստ տնտեսություններին, որոնց **տնից գութան կելլեր** և վարձու մշակների, հոտաղների ու հովիվների միջոցով կառավարվում էր այդ ամբողջը: Մինչև 1918 թվականի ավերիչ գաղթը նմանօրինակ տնտեսություններ կային համարյա ամենուրեք, շատ ու շատ գյուղերում: Սակայն գաղթը շատ բան փոխեց մարդկանց կյանքում և հոգեբանության մեջ՝ տնտեսապես հետ շպրտելով, իսպառ քայքայելով և խլելով նրանցից տասնամյակներ շարունակ արյուն-քրտինքով ձեռք բերած, տնտեսած հարստությունը: Եվ գաղթից հետո ու հետևանքով բնորոշը դարձավ 1-2-3 գոմերում անասունները խառն ձևով պահելու սովորությունն ու ընթացքը:

Մեր ձեռքի տակ եղած տվյալներից մեկը Ղադո գյուղի բնակիչ Սերոբ Քոչոյանի այն վիթխարի գոմն էր, որի մեջ 1890-1910-ական թվականներին 3 գոմասենյակ

էր զետեղված: Գոմի ընդհանուր մեծությունը, գոմասենյակներով հանդերձ, 14,5 x 7 մետր էր, 101,5 քմ: Նրա յուրաքանչյուր կողմում կար 11 զույգ անասունի տեղ: Այդպիսի գոմ ուներ նաև Ադամենց Ավենը՝ Մերենիա գյուղում, որի մեջ մինչև 1918 թիվը գործածական էին 4 գոմասենյակներ: Դիլիֆցի Կարապետ Բաղդասարյանի մեծ գոմը կառուցված է 1882-ին: Այն նախատեսված է եղել 20 զույգի համար, բայց մեկ զույգի տեղը զբաղեցնում էր ջրի հորը: Այժմ գոմն իր գոմասենյակներով և շենքի ամբողջ համալիրով պահպանվում է: Գանձացի Գրիգոր Ծառուկյանի և Փոքր Խանչալլեցի Աղասի Վարդանյանի գոմերում կապվում էին 12-ական զույգ անասուններ:

Հնից մնացած միջակ մեծության գոմերը, որոնք համապատասխանում էին միջին ունևորության խավերին, նախատեսվել են 8-10 զույգի համար:

Մեծ թե փոքր գոմերը միշտ քառանկյունի հատակագիծ էին ունենում, իսկ եթե գոմասենյակն էլ կառուցվում էր նրա ծայրամասում, ավելի էր երկարում: Այս իմաստով էլ գոմերի շինության՝ բազիլիկ ոճին պատկանելը արդարացված պետք է համարել:

Ամենափոքր գոմի լայնությունը 5 մետրից պակաս չէր լինում, իսկ երկարությունը կախված էր արդեն անասունների գլխաքանակից:

Գոմի հատակի սալապատումը պարտադիր կարգ էր: Այն կատարվում էր մշակված, 20 սմ հաստության բազալտ քարերից: Դրանք կարող էին լինել քառակուսի, քառանկյունի կամ այլ ձևի, սակայն ուղիղ եզրերով էին և բոլոր դեպքերում հարմարեցվում էին փռվածքին: Համեմատաբար աղքատները սալահատակ էին անում դաշտային սալաքարերից և նույնիսկ հաստ լապպիկներից, ուստի ստացվում էր որոշակիորեն անհարթ և անասունների կճղակ-սմբակների համար այնքան էլ ոչ նպաստավոր քարե հատակ:

Բարձր Հայքին հատուկ գոմերը միշտ ունենում էին զույգ, միմյանց նկատմամբ զուգահեռ **կռանոցներ** (կույանոց): Վերջիններս ձգվում էին գոմի գրեթե ողջ երկայնքով և ունենում էին բահի և կամ էլ թիակի լայնություն: Դա պարտադիր էր մաքրելը կազմակերպելու համար: Եզրերը ուղիղ էին և հատակները՝ տախտակապատ, որով թին ու բահը դյուրությամբ էին գործում: Անկանոն սալահատակով գոմերում կռանոցներն էլ կանոնավոր չէին. տախտակին փոխարինում էին սալաքարերը:

Զույգ կռանոցների միջև ընկած տարածությունը, որն ունենում էր 1,3-2 մետր լայնություն, կոչվում էր **տափներես**: Վերջինս, որ ձգվում էր գոմի ամբողջ երկարությամբ, անասունների զբաղեցրած տեղից ցածր էր 5-7 սմ: Գոմի կենտրոնում տափներեսը այն ուղիղ ճանապարհն էր, որը տանում էր մինչև գոմասենյակի հողահատակ նավը:

Այն դեպքում, երբ գոմի երկու ծայրերում մեկական և մուտքի դիմաց երրորդ գոմասենյակն էր կառուցվում, գոյացնում էր երկու խաչաձևվող ճանապարհ:

Գոմի հատակագծում կարևոր տեղ ունեին մսուրքները, որ միշտ կցվում էին պատերին:

Գոմի ծայրամասում 7-8 մետր խորությամբ ջրհոր էր փորվում, որի առջևում քարե գուռ էր դրվում:

Փարախների զգալի մասը գոմերի նման քառանկյուն ձև ունեին, որոնք ըստ երևույթին տեղանքի թելադրանքով կամ հին սովորույթի համաձայն, երբեմն նեղ ու արտակարգ երկար էին լինում: Ոմանք գոմի կանոնավոր ծածկ ունեցող փարախներ էին կառուցում շենքերի համալիրից անջատ: Բայց փարախների մեծ մասն անկանոն հատակագիծ էր ունենում այն պատճառով, որ դրանց հատկացնում էին համալիրից առաջացած հավելյալ, տձև տեղերը: Նրա հատակը հող էր. միայն հազվագյուտ դեպքերում էր, որ ոմանք դաշտային սալքարերով սալապատում էին:

Տեղի անկանոնության դեպքերում ծածկերն էլ նույնն էին լինում. ծածկի խառը ձևեր էին հաճախ կիրառվում:

Գոմերի ծածկերը բավական բարդ և ճարտարապետորեն էլ գեղեցիկ կոմպոզիցիաներ են կազմում, որոնք, մեր ձեռքի տակ գտնվող տվյալների համաձայն, 5 գլխավոր ձև են ներկայացնում:

Պարզից դեպի բարդը գնալով՝ մենք դրանք կթվարկենք պատի գլխից դեպի վեր, ուղղահայաց ուղղությամբ:

Ա. Հարթ ծածկ՝ լայնական գերաններով, որ գոմի համար անսովոր էր: Երդիկը հասարակ էր կամ 2-3 շարքով ստեղծված գմբեթով: Գերանները ծածկվում էին մարդակներով կամ թերթաքարերով:

Բ. Եռանավ գոմածածկ՝ առանց առորմայի.

- **Էզգերաններ սյունազարդ:**
- **Կոնդեր,** որոնք մի ծայրով հենվում էին պատի գլխին և մյուսով՝ էզգերաններին՝ 50-60 սմ լայնության խեռնիքներով:
- **Կոնդագերաններ,** որոնք հանգչում էին կոնդերի փոսացրած ծոծրակներին:
- **Լայնական գերաններ,** որոնք հանգչում էին կոնդագերանների վրա և հորինում կենտրոնական նավը: Այս շերտում ձևավորվում են հասարակ կամ գմբեթավոր երդիկներ: Վերջիններիս կանլիչները պատրաստվում էին ճմից կամ փալախոտի խրձից:
- Բոլոր կոնդերը և կենտրոնական նավի գերանները ծածկվում էին մարդակներով կամ կիսված կոնդերի հարթ երեսներով: Հազվադեպ էին մարդիկ, ովքեր մարդակների փոխարեն թերթաքարեր էին օգտագործում: (Ծածկանյութի այս տեսակները նույնությամբ օգտագործվում էին նաև հաջորդ ծածկաձևերում):

Գ. Եռանավ գոմածածկ՝ առորմայով:

- **Առորմաներ** սյունազարդ, դրված պատերի եզրերին առընթեր, որի վերին մակերեսը հավասարվում է պատի գլխի հարթությանը:
- **Էզգերաններ** սյունազարդ:
- **Կոնդեր,** որոնք մի ծայրով հենվում են առորմաներին և մյուսով՝ էզգերաններին:
- **Կոնդագերաններ,** որոնք հանգչում են կոնդերի փոսացրած ծոծրակներին:
- **Լայնական գերաններ,** որ նստում են կոնդագերանների վրա և ձևավորում կենտրոնական նավը: Այս շերտում են բացվում հասարակ, հորիզոնական դիրք ունեցող կամ գմբեթավոր 2-3 երդիկները: Երբեմն կիսաթեք և ավելի լուսավոր երդիկ է բացվում նաև այս երրորդ նավի ճակատից, որը 20-րդ դարի ընթացքում հաճախ շուրջանակավոր ապակի էր ունենում:

Դ. Եռանավ գոմածածկ՝ երկու կոնդագերաններով.

Այս հազվադեպ գոմածածկերից մեկը կիրառված էր փոքրխանչալլեցի Համո Այվազյանի՝ 1840-ական թվականներին կառուցված գոմում: Այն մենք նկարագրել ենք և լուսանկարել 1949-ին, որից հետո գոմը քանդվել է: Սրա ավելի գեղեցիկ օրինակը Ստ. Լիսիցյանը լուսանկարել է 1936-ին, Ախալցխայի Ծղալթբիլա հայկական գյուղում[285]:

- **Առորմաներ** սյունազարդ:
- **Էզգերաններ** սյունազարդ:
- **Կոնդեր,** որոնք մի ծայրով հենվում են առորմաներին և մյուսով՝ էզգերաններին:
- **Կոնդագերաններ,** որ հանգչում են կոնդերի փոսացրած ծոծրակներին:
- **Երկրորդ կոնդաշարեր,** որոնց մի-մի ծայրերը հենվում են նախորդ կոնդերի ծայրերին և մյուսները՝ կոնդագերաններին:
- **Երկրորդ կոնդագերաններ,** որ հենվում են երկրորդ կոնդաշարքերի ծոծրակների վրա:
- Կենտրոնական երրորդ նավի *հարթ ծածկ՝ լայնական գերաններով,* որոնք հանգչում են երկրորդ կոնդագերանների վրա, որով առաջանում է 3 **գերանահարկ**: Կենտրոնական նավից բացվում են 2-3 գմբեթավոր երդիկներ և ճակատից՝ 1 լուսավոր երդիկ:

Ե. Հնգանավ գոմածածկ՝ առորմայով:

- **Առորմաներ** սյունազարդ:
- **Էզգերաններ** սյունազարդ:
- **Կոնդեր,** որ շարվում են առորմաների և էզգերանների վրա: Բալխոյում Քաջվան Կիրակոսյանի գոմը հազվագյուտներից մեկն է, որի կոնդերը խեռնեք չունեն, այլ իրար կպած-շարված են ծայրից ծայր:

285 Տես ՀՊՊԹ ազգագրության ֆոնդերում:

- **Կոնդագերաններ,** որ հանգչում են կոնդերի ծոծրակներին:
- **Կամուրջներ** (միլեր), լայնական գերաններ, որ հանգչում են կոնդագերանների վրա: Շատերը կամուրջները զույգ-զույգ են գցում՝ **ջուխտ միլ** կամ **ջուխտ կամուրջ** անվանելով: Նայած գոմի երկարությանը, միլերը կարող են լինել 2-7 տեղ: Կամուրջ-միլերը անհրաժեշտ է դիտել իբրև հորիզոնական **սյուների** դերակատարում ունեցող միջնորդ գերաններ, որով իրենց վրա նստող երկայնական գերանները սյուն չեն պահանջում:
- **Նիգ-սուրմաներ**[286]. սրանք այն երկու երկայնական գերաններն են, որոնք գոմի ամբողջ երկարությամբ հանգչում են կամուրջների վրա իբրև հինգերորդ նավի լայնական գերանների հենարաններ:
- **Լայնական գերաններ,** որոնք, հանգչելով նիգերի վրա, ստեղծում են կենտրոնական հինգերորդ նավը: Սրանք ավելի լավ հնարավորություն են տալիս գոմի ծածկի մեկ կամ երկու ճակատներից բացել թեք ու լուսավոր երդիկներ: Մեջքից բացվող երդիկները գմբեթավոր են:

Զ. Այն գոմերը, որ անկանոն հատակագիծ են ունենում, անկանոն են լինում նաև ծածկերը: Նման դեպքերում փորձառու վարպետները ծածկի հատակագիծը վերածում են քառանկյունիների և, դրանց վրա կանոնավոր ծածկ դնելուց հետո, ծածկի ուրիշ ձևերով ծածկում են հավելվածները (նայել Ավետ Ավագյանի և Քաջավան Հարությունյանի գոմածածկերը):

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

Ջրաղացներ: Ջավախքում ջրաղացները հիմնավորապես բավարարում էին ժողովրդի պահանջները և կառուցվում-գործում էին առավելապես հորդաբուխ աղբյուրների, հոսող առատաջուր ձորերի ու ձորակների մեջ:

1940-1950-ական թվականներին շատ տեղերում ջրաղացներին փոխարինեցին էլեկտրաաղացները: Սակայն գյուղական բնակչությանը պատրաստի ալյուրով ու թխած հացով ապահովելու արդյունքում, 1960-ական թվականներից սկսած, ջրաղացների և էլեկտրաաղացների թիվը կտրուկ նվազեց:

Ծալկայից բերված ջրաղացքարերի տեղադրումը, ինչպես նաև ջրաղաց տանող ճանապարհի կառուցապատումը կատարվում էր ջրաղացպանի բարեկամների և համայնքի օգնությամբ:

Ջրաղացին կից կառուցվում էր նաև ջրաղացպանի հանգստի փոքրիկ սենյակը, որտեղ հանպատրաստից բաղարջ թխելու, կերակուրը և սենյակը տաքացնելու նպատակով թոնիր էր թաղվում: Վերջինիս միջոցով ինչ-որ չափով մեղմացվում էր խոնավությունը: Շարժական թախտի կամ թմբիկի վրա հանգստանում և քնում

286 Սուրմա բառը պարսկ. սյուրմէ բառի աղավաղված ձևն է, որ նաև նիգ-գերան է նշանակում:

էր ջրաղացպանը, որոնցից օգտվում էին նաև աղունատերերը: Ջրի քանակության համապատասխան, ջրաղացներն ունենում էին 1-10 աղացաքար և 1-2 դինգ: Այսպես, օրինակ, ղզլքիլիսեցի Ալեքոյենց Արութիկի ջրաղացն ուներ 10 քար և երկու դինգ: Մամզարայի ջրաղացում գործում էր 7 քար և 1 դինգ: Դիլիֆի Քառասունաղբյուրների ակունքներում կառուցված 9 ջրաղացներն ունեին 20 քար և մի շարք դինգեր, որոնցից օգտվում էր 10-12 գյուղ: Նման ջրաղացաշարքեր ունեին նաև Հեշտիան, Էխտիլան և այլ գյուղեր նույնպես:

Ջրաղացների շենքերը, որոնք մեծ մասամբ կիսով չափ մխրճվում էին հողի մեջ, խրճիթի տպավորություն ունեին: Հատակը և կտուրը հողե էր: Ցերեկը լուսավորվում էր երդիկով և գիշերը՝ ձեթի կամ նավթի ճրագով: Նրա ճնշման խողովակները մեծ մասամբ պատրաստվում էին տախտակից: Ամենատարածվածը կլոր խողովակն էր՝ սեղմված երկաթե օղակներով: Երբեմն օգտագործվում էին տախտակե չորսու խողովակներ: Հազվադեպ էին քարե խողովակները, որոնցից երեքը այժմ պահպանվում են Վարևանում: Դրանք Մարտին Մելիքյանի ջրաղացի 3 քարե խողովակներն են՝ պատրաստված բազալտից: Դրանց քարերը, որ 20 սմ հաստության քառակուսի տախտակներ են, դեպի ներքև աստիճանաբար փոքրանում են: Շարվածքն ամրացված է կրաշաղախով: Անվտանգության ապահովման համար բացվածքները երկաթե ցանց ունեին:

Ջրաղացի օժանդակ հիմնական միջոցը երկանքն էր, որը, բացի հմուտ վարպետներից, պատրաստում էին նաև տան շնորհալի տղամարդիկ: Յուրաքանչյուր երրորդ-չորրորդ ընտանիքը երկանք էր ունենում: Այժմ էլ շատերը դեռևս ունեն և օգտագործում են այն: Համայնքային սովորության համաձայն, երկանք չունեցողները վերցնում էին ունեցողներից:

Ջրաղացների դինգերը ջրով են գործում, ավանդական այդ ձևը առանձին տեղերում պահպանվում է նաև այժմ: Սրանցով էին իրականացնում ցորենի, իսկ անցյալում նաև գարու թեփահարումը, կորկոտ պատրաստելը:

Կորկոտ պատրաստելու համար կային ձեռքով գործող այլ միջոցներ էլ՝ **աղաքարեր**, որ առավելաբար բնորոշ էին կարնոհայերին և **սանդեր**, որ հիմնականում գործածում էին մշեցիները:

Աղաքարերը 1-1,5 մետր տրամագծով, հաստահեղ և հարթ կամ մասնակի գոգավոր քարեր էին: Դրանց սղկող քարերն ունեին գնդի կամ ձվի ձև ու մինչև 4-5 փութ ծանրություն: Թրջված հատիկների վրայով գլորելով և պտույտներ տալով, կանայք թեփահան էին անում կորկոտացուն:

Խանդո գյուղում, Միսակ Ավետիսյանի բակում1980-ին կար քարե գրտնակ՝ փայտե բռնակներով: Դրա երկարությունը 32 և հաստությունը՝ 25 սմ էր: Այս ձևը հավանորեն նոր է ստեղծված, որով դյուրացել է կորկոտ ծեծելը: Քարե սանդը, որի վրա հավասարապես աշխատում էին կանայք և տղամարդիկ, նույն դերն ուներ:

Ձիթահանքեր: Ձիթահանքը կարնոհայոց բարբառում արտաբերվում է **ձիթի-անք**, իսկ մշեցիների բարբառում՝ **ձիթխաց**:

Հին կենցաղում ձեթն անհամեմատ շատ էր օգտագործվում: Այդ պատճառով էլ կտավատի տեսակները Ջավախքում մշակվում էին մինչև 1930-ական թվականները: Այստեղից էլ ձիթահանքերի տարածվածությունը:

Մինչև 1930-ական թվականները Ջավախքում կար մոտ 20 ձիթահանք: Աշնանից սկսած մինչև մարտ ամիսը ձիթահանքերն աշխատում էին լարվածությամբ, գիշեր ու ցերեկ:

Ձիթահանքերը կառուցվում էին շենքերի համալիրներից դուրս, հազվադեպ՝ նաև նրանց կից: Հատակագիծը կարող էր լինել քառակուսի և քառանկյունի: Նրանում ներառվում էր նաև գոմը, ուր կապվում էին քարերը պտտող եզներն ու գոմեշները:

Գործարանային ծանր գործողությունները, որ ցնցում էին ամբողջ շինությունը, թելադրում էին ձիթահանքը կառուցել կիսագետնափոր ու լայն պատերով: Այն պատը, որի մեջ խորշ էր լինում ճնշման գերանների հաստ ծայրերը զետեղելու համար, կրկնակի լայն էին լինում: Խորշի չորս կողմի քարերը պետք է լինեին ամբողջական և ծանր: Եվ այդ մասը առհասարակ շարվում էր նվազագույնը մեկ տոննանոց և առավելագույնը՝ կրկնակի մեծ քարերով, որպեսզի ծանրության շնորհիվ լիապես ապահովվեր շինության և աշխատողների անվտանգությունը:

Տեղանքը որոշ չափով թեք լինելիս գերանածայրի խորշի պատը երեք քառորդով գետնափոր էր լինում, որը թեև խոնավ, բայց առավել լավ էր ապահովում այդ պատի կայունությունը:

Պատերը շարվում էին դաշտային և կտրած քարերով, ցեխաշաղախով:

Աղացաքարը, կախքարը և ճնշման գերանները տեղավորվում էին պատերը շարելուց առաջ: Պատահում էր, որ գերանները ներս էին բերվում շենքը կառուցելուց հետո: Այդ դեպքում հարմար պատի հիմքի վրա միջին մեծության պատուհան էին թողնում, որի միջով էլ ներս էին քաշում գերանները և անցքը փակում էին:

Ջավախքի ձիթահանքերը գոմի ծածկ ունեին: Այժմ կիսականգուն ձիթահանքերից մեկը, որը կառուցվել է 19-րդ դարի վերջերին և պատկանում է հեշտիեցի Թումասնու Սակին (Սահակ Թումասյան), մի վիթխարի գոմի տեսք ունի: Նրա բարձր ծածկը, կամուրջներ ունենալու շնորհիվ, հինգնավանի է:

Ձիթահանքի հատակագիծը բաժանվում էր երկու գլխավոր մասի: Մեկը կոչվում էր **բովտուն** և մյուսը՝ **գերանատուն**:

Բովտան ենթաբաժիններն էին՝ **փուռը, գուռը, կալը** և **փոխնդտունը**: Իսկ գերանատան ենթաբաժիններն էին՝ **ճնշման ավազանը** կամ **կարասա-տունը** և **կախատունը:**

Ըստ դերերի, բովտան և գերանատան ենթաբաժիններում կատարվում էին հետևյալ գործողությունները.

Ա. Փուռ: Այստեղ բովվում էր կտավատը: Փռան վրա դրվում էր հաստ սալաքար. կրակարանում վառվում էր տարք: Տաքացած սալաքարի վրա բոված կտավատը տեղափոխվում էր գռի մեջ:

Բ. Գռուռ: Սա սալաքարից պատրաստված քառակուսի և մեծ տաշտ էր, որի վրա փռվում, պաղեցվում և ալրմաղով մաղվում էր բոված կտավատը:

Գ. Կալ: Այսպես էր կոչվում 3 մետր տրամագիծ ունեցող (եզրաչափով) հիմնաքարը, որի վրա ուղղահայաց աղացաքարով սղկում էին բոված ու մաղած կտավատը: Պտտվող քարին մի գոմեշ կամ մի եզ էին լծում, որը, ժամացույցի ուղղությամբ պտույտ գործելով, սղկում էր կտավատը, վերածում փոխնդի:

Դ. Փոխնդտուն: Սա սալահատակված փոս էր, որտեղ մեծ ալրմաղով մաղվում էր կալից բերված փոխինդը: Մաղողի աշխատանքը դյուրացնելու համար մաղը կշռաթաթի նման կախվում էր փոխնդտան առիքից: Փոխնդտանը մաղված 7-8 փութ փոխինդն այնուհետև նորից լցվում էր կալը՝ գելաստ (մածուկ) անելու համար: Փոխինդը գելաստի վերածելու համար նրա վրա 2-3 դույլ գոլ ջուր էին լցնում և մի հոգի, ոտաբոբիկ մտնելով կալը, բահով խառնում, շաղվում էր զանգվածը:

Ե. Պատրաստի գելաստը, մոտ 5 կգ քաշով, լցնում էին ճիպոտահյուս սալաները և իջեցնում ճնշման ավազանի մեջ, դարսում իրար վրա և, համապատասխան փայտակոճեր դնելով դարսվածքի վրա, կախքարի օգնությամբ գերանները դանդաղորեն իջեցնում էին ցած: Իջնող գերանը, ուժեղ ճնշելով ավազանի վրա, ձեթը մղում էր կարասատանը դրված կարասի մեջ:

Զ. Կախտուն էր կոչվում ճնշման գերանները վեր բարձրացնող և ցած իջեցնող պողոսակի տեղամասը, որը ձիթահանքի ընդհանուր մակերեսից 1 (մեկ) մետր խորն էր և ուներ կլոր հատակագիծ: Սրա կենտրոնում պողոսակի քարն էր, որի միջով դեպի վեր էր բարձրանում պողոսակը: Վերջինս գայլիկոնի նման գալարներ ունեցող գերան էր՝ մտած ճնշման գերանների գլխին ամրացված փայտե պտուտակամոր (գայկայի) մեջ: Պողոսակը կախքարի միջոցով պտտվում էր թե բանվորների ձեռքով և թե լծված եզով: Կախքարը աջից դեպի ձախ պտտվելիս գերանը վեր էր բարձրանում և ձախից աջ պտտելիս՝ իջեցվում էր:

Ջավախքի հայոց շինարարության մեջ կամ նրան զուգահեռ պահպանված էին և այժմ էլ բավական պահպանված են նույն արվեստի *նախնականության մի շարք հետքեր: Քոխ և խիլակ* կոչված փոքրիկ տնակները, որոնք միշտ երեսբաց են, ընդհանրապես ամենանախնական տնակներն են եղել[287]: Ինչպես երևում է, որսորդ

287 Հեղինակի ուշագրավ սույն դիտարկումը կարծում եմ մինչև իսկ բնազդականի սահմանները հասնել-թափանցելու անհրաժեշտություն է պարտադրում, երբ մարդ արարածի՝ լայն իմաստով ինքնապաշտպանության բնական-բնազդական մղումը, երկրային կենսապահով-

և վաչկատուն նախամարդը ցախերից ու խոտերից ստեղծած այդպիսի տնակների մեջ ապրել է հազարամյակներ: Ցախին ու խոտին ավելի ուշ փոխարինել են տորֆի պատրաստի կտորները և ապա՝ քարը: Ցարդ խիլակ են կառուցում բանջարանոցների և դաշտերի պահակները, որոնք պատ են շարում ճմից և դաշտային մանրոտ քարերից, առանց ցեխաշաղախի և ծածկում այն ճողերով, խոտով ու հողով: Հնարավորության դեպքում ծածկի ճողերի վրա լապպիկ կոչված բարակ թերթաքարեր էին դնում և հողով ծածկում, որն էլ ամենանախնական ձևն է հիշեցնում: Ընդ որում, քոխը մեկ ոտնաչափ գետնափոր էր լինում, որի հատակին հաստ շերտով չոր խոտ լցնում և դրա վրա հանգստանում ու քնում էին:

Խիլակի մեծությունը կախված է նրա մեջ պատսպարվողների թվից: Մեկ պահակի համար կառուցված քոխի հատակը 1x1,5 կամ 1x2 մետր է, բարձրությունը՝ 1 մետր: Այնպես որ բնակիչը կռացած է մտնում մեջը: Երկու հոգու համար կառուցված խիլակի երկարությունն ու բարձրությունը նույնն է մնում, իսկ լայնությունը հասնում է 1,3-1,4 մետրի:

Ցրտերի դեպքում խիլակի մեջ կրակ էին վառում, որի ծուխը քաշվում էր բացվածքից, քանզի երդիկ չէր ունենում:

Հովվական քոխը, որը կրկնում էր դաշտային խիլակի ձևը, վերջինիցս կրկնակի մեծ էր, որտեղ պահվում էին հովիվների մոտ գտնվող անձնական գույքը և ամանեղենը՝ մուտքը հսկող շանն ի պահ հանձնած:

Քոխ-խիլակների յուրօրինակ մանրակերտներ են հանդիսանում մանկական **տունտուլիկները**[288], **շների տնակները** և **հավանոցները:**

Շինարարության մեջ նախնականության իսկական հետքեր էին պահպանել գետնափոր և կիսագետնափոր կառույցները: 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին այդպիսի կառույցներ պահպանվում էին մի շարք բնակավայրերում, որոնք էությամբ անմիջական կապ ունեին Քսենոփոնյան տան հետ:

Տնամերձ հողամասերի, բանջարանոցների, անասունների պատսպարանների,

---

ման նախապայման որպես, ինչպես որ շատ կենդանատեսակների մոտ, տուն-պատսպարան ունենալու պահանջ է դառնում: **Խիլակը** ցախ, ոստ ու ճյուղով ծածկել-կառուցելու պարագան ստուգապես մեզ երևույթը բացատրելու թյուր պատկերացում է տալու. նույնը նաև **տունտուլիկը**: Իրողության մեջ բուն-տուն բառերը տեսակարար մեծ կշիռ են ձեռք բերում, որոնց անգիտացումը աններելի սխալի կհանգեցնի: Մանավանդ եթե հիշենք, որ **խիլը** ծեղ, շյուղ, փայտի միջի ոստ նշանակելուց բացի նաև **հիմք** է նշանակում, որը իմաստային բոլորովին այլ մեկնակետ է: Եվ միթե Կիլիկիայի հնավանդ անվանումներից **Խիլակիան**, որպես տեղանուն, ստուգաբանորեն այլ ինֆորմացիա և ճշմարտություն չի բացում-բացահայտում մեզ: Ամենամեծ վրիպումն ու մեղանչումը, որ մարդը և մարդկությունը շռայլորեն թույլ է տվել իրեն, եղել է, ցավոք, մարդկային լեզվի ասպարեզում: Լեզուն էլ կօգնի շտկելու վիճակը: (Կազմողի ծանոթագրումը՝ Ռ. Ղ.):

288 Տունտուլիկ էր կոչվում նաև չորացման նպատակով փայտի ճղոնները քառակուսի շրջանակներով իրար վրա դարսելը, որը, ինչպես երևում է, կրկնում է գմբեթավոր երդիկի կառուցվածքը:

որոշ կալերի և սրբատեղերի շուրջը դաշտային քարերով 70x100 սմ բարձրությամբ անշաղախ պատեր էին շարում, որոնց մեծ մասը գյուղերում տակավին պահպանվում է: Մի շարք եկեղեցիների պարիսպներ շարված են 1-3 տոննանոց ժայռաբեկորներից և բազալտից կտրած խորանարդաձև քարերից. 1,5 մետր բարձրությամբ, առանց շաղախի: Պատ շարելու այս ձևերը մեզ են հասել նախնադարյան ժամանակներից:

Ժողովրդական կառույցների զգալի մասի պատերի ծուծը ցեխի շաղախի փոխարեն խճախառն հող էր լցվում: Թեև պատի երկու երեսն էլ ցեխի օգնությամբ էր շարվում, հողալից ծուծի պատճառով պատերը թույլ էին լինում: Այս երևույթը նույնպես գալիս էր հնագույն ժամանակներից և զուգակցում էր կրաշաղախով կառուցվող եկեղեցիների, ամառնատների նայլ շենքերի շինարարական տեխնիկային:

Նախնադարյան կրոմլեխների[289] և դամբարանների քարե ծածկերի ձևերից էր մեզ հասել Ջավախքում բարակ թերթաքարերով (լապպիկ) գոմերի, շվաքների, փարախների և այլ շենքերի կոնդերը ծածկելու եղանակը, որ կարելի է տեսնել մի շարք բնակավայրերի հին շինություններում:

Նախնականության հետքեր են պահպանված նաև քարանձավաբնակությանը վերաբերող առասպելների մեջ: Իսկ իրականում քարանձավները Ջավախքում տեղ-տեղ օգտագործվել են իբրև թաքստոցներ, նաև ոչխարի մակաղատեղեր:

Նախնադարյան քոխից առաջացել են ավելի մեծ բնակելի կառույցների տարբերակներ, որոնք նստակեցության պայմաններում ջեռուցումն ապահովելու համար արդեն դուռ ունեին, իսկ լուսավորությունն ապահովելու համար՝ երդիկ: Ընդ որում, դրանց հատակագծերը կարող էին լինել քառակուսի, քառանկյունի և բոլորշի, որոնցից Բարձր Հայքում տարածվածը և Ջավախք անցածը քառանկյունին էր: Այդպիսի **մենատունն** սկզբնապես ապահովվում էր քարերից ձևացրած բաց օջախով, որը, ինչպես վկայում է հնագիտությունը, հետագայում փոխարինվել է կավե շարժական օջախով: Ավելի ուշ սույն մենատան մեջ զետեղվում է թաղվող թոնիրը, որին նաև հետևում է **թնդրապ** կոչված քարապատնեշ հողաթմբի առաջացումը:

Այսօրինակ տները 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին աննշան չափով տարածված էին Ջավախքի աղքատ խավերի շրջաններում, որոնք անասնապահությամբ չէին զբաղվում:

Կասկածից վեր է, որ մենատան այս տարբերակը 20-րդ դարի սկիզբն էր հասել հենց նախնական շրջանից և իր ողջ էությամբ ներկայացնում է ապագա գլխատան հիմքը: (Նկատենք, որ 19-րդ դարի վերջերին Աղձնիքում, նաև այլուր շատ գլխատներ բաց օջախ էին ունենում, որոնք, ըստ էության, մենատան նախնականության առհավատչյաներից էին):

Մենատան մեջ ի սկզբանե առկա են եղել մի կողմից **կրակապաշտությունը**, մյուս

289 Մեգալիթյան հուշարձան, **կրոմլեխ**, սալաշեն տուն: (Կազմողի ծանոթագրումը՝ Ռ. Ղ.):

կողմից՝ **հացապաշտությունը:** Մի հանգամանք, որով պետք է բացատրել ապագա գլխատան երկրորդ՝ **կրակատուն** կամ **հացատուն** անվանումները:

Մենատունն ապագայում ձեռք է բերում նոր գործառույթ: Երկրի ծանր ցրտերը հաղթահարելու նպատակով, վառելիքի խիստ սակավության պատճառով մենատունը և առանձին գոյություն ունեցող գոմը համատեղվում են՝ իրենց հետ բերելով ծածկի յուրահատուկ ձևերը: Այսինքն՝ մենատունը պահպանում է գմբեթավոր իր ծածկը և գոմը՝ երկլանջ-կլորավուն ծածկը: Կրակի ջերմությանն է միանում անասունների տաք շունչը և քիչ թե շատ, առողջապահական, թե հակաառողջապահական՝ նորմալ ջերմությունը:

Սեփական չափագրությունների և միջնադարյան ուղևորների հաղորդումների հիման վրա ճարտարապետներ Ս. Վարդանյանը և Ն. Պապուխյանը հավաստում են, որ Հայաստանին հատուկ են եղել այն գետնափոր և գետներեսի վրա կառուցված մեկ բաժնով տները, որոնց մեջ մարդիկ ապրել են կենդանիների և թռչունների հետ մեկտեղ[290]:

Գլխատան և գոմի գործառույթները համատեղող այդ տները հատուկ էին նաև Բարձր Հայքին և հետևապես՝ Ջավախքին:

Ֆրանսիացի ճանապարհորդ Կոնտ դի Շոլինը Էրզնկայի տան մասին գրել է. «Էրզնկայի գավառում տները սովորաբար գետնի կամ լեռնակողի մեջ փորված խոռոչներ են. շատ անգամ գոմը բաժանված չէ նրանից միջնորմով[291]»: Ինչպես երևում է, ճանապարհորդը հենց մենատան մասին է վկայում:

Ջավախքում այս մենատները թեև սակավ էին, բայց յուրաքանչյուր գյուղում կարելի է գտնել 1-2 օրինակ գետներեսի, կիսագետնափոր և գետնափոր տեսքով, որոնք հարատևեցին մինչև 1920-ական թվականների վերջերը: Դրանք ըստ հատակագծի լինում էին քառանկյունի ձևեր, առանց գավթի:

Ոմանք ձմռան խիստ ցրտերը հաղթահարելու համար աշնանը աթարաշարճմաշար հանպատրաստից գավիթ էին կառուցում մուտքի դիմաց, որը գարնանը նորից քանդում էին:

Լիներ աբսիդավոր թե առանց աբսիդի, մենատան մի ծայրը (խորքի մասը) հատկացվում էր թոնրին ու բնակելի մասին և մյուսը՝ անասուններին: Խոհանոցը թմբիկավոր էր, որի վրա պահվում էին ամանները, հացթուխի պարագաները և այլն: Ստորին մասի պատերին առընթեր երբեմն լինում էին հանպատրաստից կապված կամ շարժական թախտեր, ինչպես նաև հացահատիկի և ալյուրի ամբարներ:

---

290 Ս. Վարդանյան, Հայկական ժողովրդական բնակելի տների ճարտարապետությունը, Երևան, 1959, էջ 21-35: Ն. Ծ. Պապուխյան, Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը, Երևան, 1972, էջ 55-56:

291 Le Comt de Cholet, Armenie Kurdistan et Mesnpotamie, Paris, էջ 195 (օգտվել ենք Ս. Վարդանյանի թարգմանությունից: Տես Ս. Վարդանյանի նշված աշխատությունը, էջ 23):

Տավարը կապվում էր մենատան ստորին մասում. ոմանք այս մասում սակավաթիվ ոչխարների համար տախտակե պատսպարան էին պատրաստում: Թնդրափերի և ստորին մասերի պատերի մեջ պատրհանքներ էին լինում:

Մենատան նշված երկու տարբերակներից ոչ մեկն էլ լիակատար կերպով չէր ներկայացնում ազգային գլխատան ամբողջությունը, քանզի առաջին տարբերակը միայն հասարակ ծածկ էր ունենում իր գմբեթավոր երդիկով և երկրորդը՝ գոմի ծածկ՝ գմբեթավոր երդիկով:

Միայն այն բանից հետո, երբ գոմը մենատնից անջատվելով կցվում էր նրա կողին, մենատան ստորին մասը, որը գոմն էր զբաղեցնում, թնդրափի օրինակով հազարաշեն ծածկ է ստանում: Սակայն 20-րդ դարի երկրորդ կեսին դեռևս գոյություն ունեցող որոշ գլխատներ Զավախքի գյուղերում պահպանում են թնդրափի հազարաշեն ծածկը և նրա ստորին մասը, որտեղ գոմն էր տեղավորվում՝ չորս սյուների վրա հանգչող գոմածածկը:

Այսպես, ուրեմն, մենատան երկու տարբերակներն էլ հանդիսանում են այժմյան հազարաշեն տան հիմքը ոչ միայն Բարձր Հայքում և Զավախքում, այլև ողջ պատմական Հայաստանում, իր նախնական սահմանների մեջ:

Մինչև 1920-ական թվականների սկիզբը Զավախքի գյուղական բնակչությունը բնակարանները տաքացնում էր միջնադարյան ձևերով ու միջոցներով: Ջեռուցման հիմնական աղբյուրը երկուսն էին՝ թոնիրն իր կրակով և գոմը՝ անասունների շնչով: Թնդրտունը ձմռանը ապահովվում էր բավարար տաքությամբ, որովհետև ամեն օր հաց թխելու սովորության պատճառով թոնիրում աթար ու տարթ էր վառվում: Ծուխը և վնասակար գազերը հեռացվելուց հետո թնդրտան երդիկը շուրջանակավոր ապակով ծածկվում էր, իսկ գիշերը՝ կալլվում (նաև կանլվում ձևը կիրառական է որոշ վայրերում): Անթեղի շնորհիվ թոնիրը գրեթե 20-24 ժամ տաք էր մնում: Այստեղ քնողները ապահովվում էին քիչ թե շատ մաքուր օդով և ջերմությամբ:

Գոմասենյակի հազիվ բավարար տաքությունը մշտապես զուգակցվում էր խոնավությամբ և օդի անմաքրությամբ, ուստի և գոմի երդիկները ցերեկն ամբողջապես բաց էին պահվում, իսկ գիշերը՝ դրանց մի մասը կանլվում էր: Օդի անընդհատ մաքրում էր տեղի ունենում բաց երդիկի և գոմասենյակի վառարանի ծխնելույզի միջոցով:

Գոմասենյակը և որոշ թոնրատներ ունեին պատի քարաշեն վառարաններ, որոնք ջեռուցման խնդրում միայն օժանդակ դեր ունեին: Գոմասենյակը ցրտելու դեպքում վառարանում տարթ ու ցախեր էին վառում, իսկ գլխատան վառարանն օգտագործում էին հանպատրաստից կերակուր եփելիս և ջուր տաքացնելիս:

Ամառնատանը հյուրեր ընդունելիս օգտագործում էին կավե կրակարաններ, որոնց համար փայտածուխ էին օգտագործում:

Կրակարանները ոմանք օգտագործում էին նաև թոնրատներում՝ քուրսու ձևով:

Գյուղական այդ ձևերին 1910-ական թվականներին ավելացել էր թիթեղյա վառարանը, թեև այն մասսայական տարածում չուներ:

Ախալքալաք քաղաքում մետաղյա և կավե կրակարաններին 19-րդ դարի վերջերին փխարինել էին նախ պատի, ապա նաև թիթեղյա վառարանները: Վառելափայտ և տարբ քաղաքացիները ձեռք էին բերում գյուղացիներից, որոնք շուկա էին գալիս գրաստներով և սահնակներով: Քաղաքացիների համար օժանդակ միջոց էին նաև փայտածուխով տաքացվող կրակարանները: Այստեղ ջեռուցման թերևս առավել բնորոշ միջոցը թիթեղյա վառարանն էր, որին 1950-ական թվականներից սկսած զուգակցում են քարածուխի չուգունե վառարանները:

1960-1970-ական թվականներին չուգունե վառարանները բավական լայն տարածում գտան նաև գյուղական բնակավայրերում:

1940-1950-ական թվականներին Երևանի օրինակով որոշ չափով տարածում էին գտել նաև **թեփի**, իսկ այնուհետև՝ նաև **նավթի** թիթեղյա վառարանները: Տեղ-տեղ այժմ էլ նավթի վառարանները դարձյալ որոշակիորեն օգտագործվում են:

Գյուղական բոլոր տնտեսական և անասնապահական շենքերի ցերեկային լուսավորության աղբյուրը միևնույն երդիկներն էին, իսկ ամառնատներինն ու քաղաքային սենյակներինը՝ լուսամուտները: Ընդ որում, երդիկներն էլ երկու տիպի էին՝ ուղղահայաց բացվածքով նեղ երդիկներ, որոնք վատ էին լուսավորում և թեք երդիկներ, որոնք, պատուհանի նման լինելով, համեմատաբար լավ էին լուսավորում: Վերջիններս բացվում էին գոմասենյակի և որոշ գոմերի թեք լանջերից՝ արևելյան և հարավային կողմնորոշմամբ:

Գիշերային լուսավորության աղբյուրը հնագույն ժամանակներից մինչև 19-րդ դարի երկրորդ կեսը եղել է ձեթի ճրագը, որի միակ վառելիքը շալկու ձեթն էր:

1870-ական թվականներին Զավախք մուտք է գործում նավթը՝ վերջինիս ճրագով ու աստիճանաբար տարածվող լամպի տեսակներով: Ճրագն օգտագործվում էր բոլոր տնտեսական շենքերում, իսկ լամպերը՝ գոմասենյակում, ամառնասենյակում և քաղաքային սենյակում:

Ձեթի ճրագն ունենում էր երկաթե և փայտե շարժական **ճրագդիլ (ճրագդիր)**, իսկ նավթինը՝ սյուների վրա ամրացված ճրագդիլ:

Ձեթի ճրագների մնացուկները վերացան 1910-ական թվականներին, իսկ նավթինը՝ 1960-ական թվականներին՝ էլեկտրական լուսավորության կիրառման շնորհիվ:

Գործարանային լուցկու տարածումից առաջ ձեթի ճրագներն ու լամպերը վառվում էին **քուքուրթով**[292]:

292 **Քուքուրթը** 2մմ հաստության և 15 սմ երկարության փայտե ձողիկ էր, ինչպես լուցկու ձողիկը: Մարմանդ կրակի վրա ձեթի ճրագում հալված ծծմբի մեջ, ձողիկի ծայրերը թաթախելով ու պաղեցնելով, ստանում էին լուցկու հանգույն (ձևի) վառիչ, որը և **քուքուրթ** անունն էր կրում:

ԿԱՀԿԱՐԱՍԻ

Ջավախահայությունը շարժական կահկարասիի տեսակետից հարուստ չէր: Տեղական այն կարասիները, որոնք գրեթե անխառն կերպով հարատևում էին մինչև 1920-ական, տեղ-տեղ էլ՝ մինչև 1930-ական թվականները, օգտագործվում էին անշարժ կարասիի հետ համահավասար չափով: Անշարժ կարասու՝ հովվական կախովի թախտի, գոմասենյակների տախտակե բազմոցների, ժամանակավոր կապված տախտակե բազմոցների, ինչպես նաև քարապատնեշներով հողե դարավանդների լայն օգտագործումով ժողովուրդն ապահովվում էր քիչ թե շատ տանելի պայմաններով:

Ախալքալաք քաղաքի ունևոր խավերը դեռևս 19-րդ դարի կեսերից սկսած օգտվում էին Թիֆլիսի, Ախալցխայի և մասամբ էլ Ալեքսանդրապոլի քաղաքային կահույքի տարատեսակներից: Այստեղ քաղաքային կարասիի հիման վրա ատաղձագործները վերարտադրում էին դրանք և հարմարեցնում տեղական պայմաններին: Ունևոր խավերին հետևում էին նաև արհեստավորները: Իսկ 20-րդ դարի սկզբներին ինչպես ունևոր, այնպես էլ արհեստավոր քաղաքացիներն արդեն օգտագործում էին ներմուծված կահույք:

Գյուղական բնակավայրերում կարասիների տիպերն ու օգտագործման ձևերը բավական տարբեր էին: Այստեղ կար երկու տիպի կարասի՝ շարժական, որ բավական սակավ էր և անշարժ, որն ավելի բնորոշ էր գյուղական պայմաններին: Այսպես, օրինակ, գոմասենյակի 2-4 բազմոցները, գլխատների տախտակե անշարժ բազմոցները, հողե թմբիկները, լայն պատերի մեջ պատրաստվող ծալքի, ամանների, թեյի սպասքի պատրհան-պահարանները և այլն, պատկանում էին անշարժ կահույքի տեսակներին ոչ միայն Ջավախքում, այլև ամբողջ պատմական Հայաստանում:

Կարինն ու Ջավախքը այն վայրերից էին, որտեղ ծանր բնակլիմայական պայմաններում գոմասենյակաշինությունը բարձր զարգացման էր հասել: Գոմասենյակը, որպես ձմեռային կացարան, գոմից անբաժան էր: Նրա և գլխատան անշարժ կահույքի անտեսման հետևանքով էր, որ Հ. Մալխասյանը գրեթե ժխտում էր կահույքի գոյությունը[293]:

Մեր փաստական տվյալները ցույց են տալիս, որ ժողովրդի մեծամասնությունն ապահովված էր կահույքով և կարասիով: Ճիշտ է, դա խիստ նահապետական էր, բայց և այնպես ապահովվում էր նստարաններով, սեղաններով, պահարաններով, սնդուկներով, հացահատիկն ու ալյուրը պահելու ամբարներով և այլն:

Վերջինս անթեղի կամ էլ **չախմախ** - կրակարանի վառված **դավի** վրա դնելով կպցնում և լամպ ու ճրագ էին վառում: Ոմանք քուքուրթի փոխարեն օգտագործում էին մարխի, ցորենի կամ գարու ծղոտի ձողիկներ:

293 ԱՀ, 6, էջ 214:

1920-ական թթ. վերջերին և 30-ական թթ. ընթացքում Ջավախքի գյուղեր մուտք գործեցին քաղաքային սեղանները, նստարանները, մահճակալները և այլն, որով աստիճանաբար նահանջ ապրեցին հին շարժական և անշարժ կարասիները: Ժողովրդի նկատելի մասը, վառելիքով ապահովվելով, դուրս եկավ գոմասենյակներից: Գյուղական ազգաբնակչության մեծամասնությունն աստիճանաբար սեփական տնաշինության և տունը կահավորելու տեսակետից ձգտում է նմանվել անհամեմատ զարգացած քաղաքին, որտեղ բավական նկատելի տեղաշարժեր էին կատարվել կենցաղում: Հեղաշրջող մեծ նշանակություն ունեցան գազօջախների և էլեկտրական սալօջախների օգտագործումը:

Ջավախքի հայոց մեջ կահույք բառը չի պահպանված: Բայց իրերը մեծ մասամբ կոչվում են տեղական բարբառով: Այսպես, օրինակ, գոմասենյակի տախտակե բազմոցը կոչվում էր **թախտ** կամ **դառապա**, իսկ ոմանց մոտ նաև **սադը** էր կոչվում, որ արաբերեն **սադր** բառն է: Այս բազմոցները շինվում էին կիսված գերաններից և հաստ տախտակներից, որոնք ձգվում էին վառարանից մինչև մուտքը: Երկուսից մինչև վեց բազմոցները մի կուռ միասնություն էին կազմում և անշարժ էին: Այս բազմոցաձևը 19-րդ դարից վկայվում է նաև ամառնատներում, բայց ոչ ավելի մեկ զույգից, որոնք պահպանվեցին մինչև 1940-ական թվականները: Երկու սենյակներում էլ անշարժ բազմոցները միաժամանակ և հավասարապես ծառայում էին իբրև նստարաններ և մահճակալներ:

Տախտակե բազմոցների փոխարեն գոմասենյակներում հազվադեպ օգտագործվում էին նաև քարե բազմոցները, ինչպես նաև քարապատնեշված հողե դարավանդները գլխատներում՝ **թմբիկ** կամ **թնդրափ** անուններով:

Ինչպես տախտակե, այնպես էլ քարե և հողե բազմոցներն ունենում էին համապատասխան փռոցներ՝ խսիրներ, կարպետներ, թաղիքներ, գորգեր և այլն: Հողի վրա նստողների համար էլ փռվում էին նաև **տապաստակներ**, որոնք բարբառում կոչվում էին նաև թուրքերեն **մինդար**: Ամեն տեսակ բազմոցների, ինչպես նաև քարե նստարանների վրա տարեց մարդկանց և պատվավոր հյուրերի համար փռվում էին ոչխարենի, այծենի, բրդալից քառակուսի օթոց (ներքնակաձև), ինչպես նաև գույնզգույն կտորներից կարված տապաստակ:

Թոնրի շուրջը փռվող հասարակ տապաստակները կարվում էին շալե հին հագուստների մասերից և կարպետների կտորներից:

Գոմասենյակների մեծ մասը փռոցների հետ ունենում էր նաև 2-4 բարձ:

Սակավաթիվ տներում պատերին առընթեր չորսու գերան էին դնում և իբրև նստարան օգտագործում. դրանք առավելապես դրվում էին գավիթներում՝ ամռանը հանգստանալու նպատակով (Ղարաբաղում ճիշտ այդպիսին **միլ** անունն էր կրում): Սրան նման էին տախտակե երկար նստարանները, որոնք հայտնի էին **իշոտնուկ** կամ **իշուկ** անունով:

Իբրև նստարան են ծառայել ծառաբնից կտրված կոճերը, որոնց վրա տապաս-

տակ կամ ոչխարի մորքի էր փռվում: Բակերում, ստվերոտ տեղերում դրվում էին մշակված քարե նստարաններ, որոնք օգտագործվում էին որևէ օթոց կամ էլ մորքեղեն փռելով վրան: Մինչև մեր ապրած ժամանակներում էլ շատ տների մուտքերի աջ ու ձախ կողմերում պահպանվում էին մաշված քարե այդ նստարանները: Քիչ չէին նաև գավիթների պատերի տակ քարապատնեշով երկար դարավանդները, համատեղ զրույցի սիրահարների համար դրված երկար նստարանները: (Սեբաստիայում այդպիսին, ինչպես նաև փայտե երկար նստարանը **լրիկ** էր կոչվում):

Քաղաքում և ունևոր գյուղացիների տներում «6 կամ երբեմն 8 կողմանի ձևով, կտրված նախշերով աթոռք էր գործածվում, որի վրա օթոց գցում և նստեցնում էին եկած բարձրաստիճան հյուրին[294]»: Մի նստարան, որը դեռևս միջին դարերում օգտագործվում էր բարձր խավերում և հոգևոր կենտրոններում:

Քառատոտ նստարանները Ջավախքում հայտնի են 19-րդ դարի վերջերից: Առաջին հերթին այն գործածվում էր քաղաքի հարթահատակ սենյակներում: Գյուղական նույնատիպ սենյակներում այն օգտագործվել է 20-րդ դարի 10-ական թվականներից սկսած՝ քաղաքային սեղանի հետ միասին:

Միջին դարերում Հայաստանում լավ հայտնի բազկաթոռները Ջավախքում վերստին կենցաղ մտան 1930-ական թվականների վերջերին: Գյուղական բնակավայրերում դրանք լիակատար տարածում ունեցան Երկրորդ Աշխարհամարտից հետո: Ժողովրդի կենցաղի մեջ, բացի վերոհիշյալ նստարաններից, պահպանվում են նաև տարբերական նստարաններ էլ, ինչպիսին էին կովկիթի եռոտանի աթոռը, լվացքի տաշտը դնելու աթոռը և այլն:

Գոմասենյակի նավի վրա դրված սեղանի շուրջը բոլորվելիս տախտակե կամուրջ նստարաններ էին դնում:

Հաց թխելու սեղանը մեծ մասամբ կլոր էր լինում, որի մոտ չոքած կանայք հաց էին թխում և ապա՝ ճաշում: Իսկ ճաշելու ցածրաոտ սեղանը, որը մեծ մասամբ ծառայում էր տղամարդկանց, առավելապես քառակուսի էր լինում:

Հնագույն սեղաններից մեկը մատուցարան-սկուտեղն էր, որի շուրջը ճաշում էին 2-4 անձից բաղկացած ընտանիքները: Ճիշտ նույն դերն ունեին ընտիր փայտի բնից շինված **տեփուր** մատուցարանները:

Փոքր ընտանիքները կամ մեծ ընտանիքների կանանց խումբը թոնրին դրված և ջեջիմով ծածկված քուրսին օգտագործում էին իբրև ճաշելու կամ ընթրելու սեղան: Սակավանձն ընտանիքներում իբրև հացի սեղաններ էին ծառայում ծղոտից կամ ճյուղերից հյուսած սալաները: Հին սովորությամբ, սեղան էին համարվում նաև սփռոցները:

1890-ական թվականներից սկսած՝ քաղաքում տարածված էին նաև գրասե-

294 ԱՀ, 6, էջ 229, տախ. 8-5:

ղանները, որ օգտագործում էին գերազանցապես մտավորական մարդիկ: Գյուղական մտավորականության շրջանում այն մուտք գործեց համեմատաբար ուշ՝ 1920-ական թվականներին:

Ջավախքում մահճակալները երկու տիպի էին՝ շարժական և անշարժ թախտեր: Ընդ որում, շարժական թախտերն օգտագործվում էին քաղաքային ու գյուղական հարթահատակ սենյակներում ու թնդրատներում: Թախտերի մի մասը քաղաքում և գյուղում երբեմն օժտվում էր ճաղավոր կամ տախտակե բազրիքով:

Ավելի հաստատուն էին գոմասենյակների ամբողջ երկարությամբ վերոհիշյալ 2-6 բազմոցները, որոնք միաժամանակ ծառայում էին իբրև նստարաններ ու մահճակալներ և որոնք պատվում էին տարբեր զարդերով: Յուրաքանչյուր երկար բազմոցի վրա ննջում էին 1-2 անհատական ընտանիքներ: Մեծ գոմասենյակներում տեղավորվում էին ողջ գերդաստաններ:

Գոմասենյակների վառարանի աջ ու ձախ կողմերում դրվող բրդե բարձերը երբեմն ունենում էին տախտակից շինված թեք բարձակալներ:

Տեղական մահճակալներին Ախալքալաքում 19-րդ դարի վերջերին զուգակցում էին եվրոպական փայտե մահճակալները: Սկզբնական շրջանում դրանք օգտագործում էին միայն ունևոր խավերը, իսկ 1900-ական թվերին մատչելի դարձան նաև մյուս խավերին նույնպես: Քաղաքում 1920-ական թվականներից մուտք էին գործել երկաթե մահճակալները, որոնք 1930-ական թվականներին որոշ տարածում գտան նաև գյուղական մտավորականության շրջանում:

Ախալքալաքում ֆաբրիկային պահարանները նույնպես մուտք են գործել 19-րդ դարի վերջերին, Թիֆլիսի և Ալեքսանդրապոլի ազդեցությամբ: Դրանից առաջ քաղաքային և գյուղական պահարանները գրեթե միատեսակ էին, որովհետև արտադրվում և տարածվում էին Ախալքալաքում: Քաղաքի ազդեցությամբ գյուղերի հարուստ, բայց ոչ բոլոր ընտանիքներում մասնակի չափով մուտք էր գործել տախտակե շարժական պահարանը՝ 1-2 դռնով: Նշված ժամանակաշրջանում որոշ տարածում էր գտել նաև եվրոպական **կոմոդ** կոչված պահարանը միայն քաղաքացիների ունևոր տնտեսություններում, որը հետո՝ 1930-1940-ական թվականներին մատչելի դարձավ գյուղական բնակչությանը նույնպես: Կոմոդից հետո, 1930-ական թվականների վերջերին նախ Ախալքալաքում, ապա հետպատերազմյան շրջանում նաև գյուղերում, արագորեն տարածվեցին Լենինականում պատրաստվող զգեստապահարանները և այլն:

Բուն տեղական պահարանները, բավական համեստ ձևերով, հնուց ի վեր ծառայում էին ժողովրդի տարբեր խավերին: Դրանց մեջ կարևոր տեղ ունեին պատրիան -պահարանները: Այսպես, օրինակ, գոմասենյակի երկու կողմերում խոր պատրիաններ էին թողնվում, որոնց մեծությունը համամասնվում էր ընտանիքի անդամների քանակին (50x50, 50x60, 50x70 սմ մակերեսով այդ պատրիաններն ունեին 35-45

սմ խորություն): Ունևորները դրանք ծածկում էին տախտակե, գեղեցիկ մշակված դռներով: Դրանց մեջ պահվում էին շարունակական գործածվող պարագաներ և, առավելապես, թեյի սպասք, շաքար, որոշ տներում նաև՝ սրուճի սպասք և այլն: Ճիշտ այսպիսի պատրհաններ էին ունենում նաև թոնրատների թնդրափները և ցածի տները՝ մանր իրեր պահելու համար: Թնդրատունն իբրև ննջարան օգտագործողները պատի մեջ ունենում էին նաև ծալքի մեծ պահարան: Գյուղական սովորությամբ այսպիսի պատրհան-պատուհան էին ունենում նաև քաղաքի ննջասենյակները:

Գոմասենյակի մուտքի մեկ կամ երկու կողմերում լինում էին բազրիքներին հենվող 1-2 դռնով տախտակե պահարաններ: Սրանց մեծությունը կախված էր պահվող իրերի ծավալից: Եթե միայն մանր սպասքի համար էին, ունենում էին 60x70 սմ մեծություն, 40-45 սմ խորություն: Իսկ ծալքի համար նախատեսվածները 200x150 սմ մակերեսով և 50-60 սմ խորության պահարաններ էին: Ինչպես նախորդները, այս մեծերն էլ երկփեղկ դռներով էին՝ երբեմն գեղարվեստորեն ճոխ դրվագազարդումներով:

Ծալք դնելու շարժական մեծ պահարանը, որը երբեմն երկփեղկ դռներով էր լինում, դրվում էր գլխատանը կամ հարթահատակ ամառնատանը: Գլխատան մեջ դրվող պահարանը անկողինը բավական մաքուր էր պահում, որը փոխարինում էր հնագույն ժամանակներից մեզ հասած **անկողնապարկին (մաֆրաշ)**: Վերջինս կարպետի գործվածքով գործված և ծաղկազարդ պարկ էր, որի մեջ հավաքվում, կապվում էր անկողինը: Այն առավելապես օգտագործվում էր տեղափոխումների՝ ամառանոց և այլ վայրեր անկողնով գնալու ժամանակ:

Գյուղական և քաղաքային տներում տարածված էին նմանապես սնդուկ-պահարանները: Պահարան չունեցող ընտանիքներում իշխողն այն էր: Յուրաքանչյուր ընտանիք ունենում էր ամենատարբեր նպատակների ծառայող 1-10 սնդուկ:

Շորեղենի սնդուկը Ախալքալաքում շինում էին նոճու հոտավետ տախտակից: «Դրա մեջ գեղջկուհին պահում էր յուր զգեստը, երեխայոց շորերը և այլն: Սնդուկը մեծ մասամբ յուղաներկով ներկած է լինում... նկարներով[295]»: Սրան նման էր հարսի օժիտի սնդուկը, որի կարմիր ֆոնի վրա գամվում էին մուգ գույնի թիթեղյա ժապավեններ և զարդարվում նախշերով:

Թանկարժեք իրերի համար Ախալցխայում և Ախալքալաքում տեղական վարպետները շինում էին մեծ սնդուկներ՝ 150x70 սմ մակերեսով և 70-80 սմ խորությամբ:

Թանկարժեք իրեր պահելուն էր ծառայում նաև Եվրոպայում պատրաստված **ֆռանգի սնդուկը**՝ ձայն արձակող փականքով:

Սնդուկներից մեկը հատկացվում էր հացի կամ սննդամթերքի պահպանմանը:

Կանանց զարդեղենը ոմանք պահում էին ընտիր փայտից պատրաստված և

295 ԱՀ, 6, էջ 228, տախ. 8-4:

զարդանախշերով ձևավորված զարդատուփերի մեջ: Կային նաև մետաղից պատրաստված գործարանային զարդատուփեր:

Գանձարկղը, որ լինում էր տարբեր մեծության (25x30, 30x40 սմ մակերեսով, 15-20 սմ խորությամբ), շինվում էր ընտիր տախտակից և գեղազարդվում էր: Գյուղերում այդպիսիները շինվում էին հասարակ տախտակից: Երկու դեպքում էլ այս գզրոցը փականքով էր, որի մեջ պահում էին ոսկե և այլ դրամներ, զարդեր և թանկարժեք այլ իրեր, երբեմն նաև «թղթեր, ծխախոտ, օղի և այլն[296]»:

1920-1930-ական թվականներին քաղաքում մոդա էր դարձել դեղարկղ ունենալը և ննջարանում (ընդունարանում) պատից կախելը: Անհրաժեշտ և նպատակային սովորություն, որն այժմ էլ պահպանվում է:

Ինչ-որ չափով նաև պահարանների դեր էին կատարում թարեքները, դարակները և կախիչները: Բոլոր գոմասենյակներում, բայց ոչ բոլոր թոնրատներում տախտակե թարեքներ էին պատրաստվում, որոնց մեջ պահվում և ցուցադրվում էին գեղեցկատես իրեր, ամաններ, ափսեներ, բաժակներ, տիկնիկներով զարդարված շշեր և այլն: Թարեքների հորիզոնական տախտակները պատվում էին զարդանախշերով:

Թոնրատան և մառանի պատերին առընթեր դարավանդների վրա տախտակ էին ամրացնում և վրան խեցեղեն ամաններ շարում: Ոմանց տներում այդ դարակները 3-4 հարկ էին կազմում:

Կային պարզունակ գոգառ-կախիչներ՝ կեռ փայտ, ուղիղ ձող, մեխ, երկաթե կեռ, որ ամրացվում էին սյուներին ու պատերին:

Կահույքի մաս են կազմում գրեթե ամբողջապես բրդից պատրաստվող բոլոր տեսակի փռոցները, որոնցով հարուստ է Ջավախքը:

Փռոցների մեջ խսիրն ամենագործածականն էր, որովհետև խոնավությունը մեղմացնելու նպատակով այն փռվում էր գետնին և բազմոցներին՝ բոլոր փռոցների տակը:

Երկրորդ կարևոր փռոցը, որ ծառայում էր նույն նպատակին, թաղիքն էր: Այն գործածվում էր նաև իբրև տաք փռոց, որի սպիտակ ֆոնի սև նախշերն ունեին գեղագիտական արժեք:

Սիրված փռոցներից մեկը կարպետն էր, որի գործման մեջ կարևոր տեղ էր տրվում զարդարվեստին: Այն գործածում էին առավելապես գոմասենյակներում, խսրի վրա փռելով: Զարդարուն բարակ կարպետը կամ ջեջիմը ոմանք օգտագործում էին իբրև ծալքի ծածկոց:

Փռոցների մեջ ամենաընտիրը և թանկարժեքը լինելով՝ գորգը բոլորի տները չէ, որ զարդարում էր: Այն արտադրվում էր նաև շուկա հանելու կամ ապրանքափոխանակության նպատակով: Քաղաքացիները գորգը փռում էին հարթ հատակին

296 ԱՀ,6, էջ 228:

կամ կախում պատերից: Գյուղերում այն օգտագործվում էր պատվավոր հյուրերի այցելության ժամանակ:

Գորգագործությամբ ավանդաբար զբաղվում էին մեծ ընտանիքներում՝ մասնագիտացնելով դուստրերին ու հարսներին:

1930-ական թվականներին՝ քաղաքում, իսկ 1950-ական թվականներին՝ գյուղերում, մուտք գործեցին գործարանային ուղեգորգերը:

Ննջարաններում քաղաքացիներից շատերը մահճակալների մոտ փռում և օգտագործում էին գազանի մորթի, ոչխարենի, այծենի, ինչպես նաև գունավոր կտորներից կարված փռոցներ:

Կահույքի մաս կազմող անկողինները սովորաբար ծալք էին դրվում: Թոնրատներում ծխից պաշտպանելու համար ծալքը դրվում էր որմնադարաններում: Գոմասենյակներում ոմանք որմնադարան կամ տախտակե անշարժ պահարան էին ունենում նույն նպատակով: Սակավ տարածված էր նաև անկողնապարկը, որն օգտագործվում էր բնակավայրից բնակավայր կամ ամառանոց գնալու ժամանակ:

Կարասիներ: Տան կարասիներն ամբողջապես տախտակից էին: Հյուսածոկավածեփ փեթակները Ջավախքին հայտնի չէին: Ախալքալաքում և Ախալցխայում ամբարները և նմանները շինվում էին Կարնո ձևով՝ տախտակների հորիզոնական դասավորությամբ:

Հացի ամբարը շինվում էր 4 կամ 6 ոտքի վրա հորինելով. առաջինի դեպքում ստացվում էր երկու, իսկ երկրորդի դեպքում՝ երեք աչք: Տախտակների ծայրերն ագուցվում էին ոտքերի երեսներին փորված ակոսների (քամփոր) մեջ: Որպեսզի երկու տախտակների միացման գծում ճեղք չմնար, տակի և վրայի տախտակների եզրերը կիսափորվածքով գրեթե հերմետիկորեն փակվում էին: Սյուների գլուխները ձևավոր էին՝ գնդաձև և գմբեթաձև: Տախտակները և սյուներն ունենում էին մատնեքանախշ զարդեր:

Ամբարները տեղավորվում էին գլխատներում, շվաքներում և մառաններում՝ սերմացուն, աղունը և ալյուրը պահելու համար:

Ունևոր տնտեսություններն ամբարները տեղավորում էին ամբարատներում, որոնք կայուն ջերմաստիճան (միապաղաղ օդ) ունենալու համար կառուցվում էին շենքերի համալիրից դուրս: Հմուտ վարպետները դրանք կառուցում էին շենքի սյուներին քամփորներով կցելով՝ շարժման համար թողնելով միայն միջանցքներ:

Յուրաքանչյուր ամբար բաժանվում էր առանձին աչքերի: Աչքերն ունենում էին մեկական դռնակ՝ հատուկ փակիչով: Ամբարը գետնից 35-40 սմ բարձր էր կանգնեցվում:

Գլխատան մեջ դրվող ալյուրի ամբարը կառուցվածքով նույնն էր, ինչ հատիկների ամբարն էր: Նրա մեջ նույնպես միջնորմներ էին լինում, որով առաջացած աչ-

քերի մեջ լցվում էր տարբեր որակի ալյուր:

Կային նաև մթերքների փոքրածավալ ամբարներ, որոնք մառան չունեցողների համար մեծ սնդուկի դեր ունեին: Տանտիկինը դրա մեջ պահում էր ամենատարբեր մթերքներ[297]:

Ամբարների ոտքերը և տախտակները ոմանք զարդարում էին շրջագծերով, անիվներով, մարդու, ձիու և խոփի գծային պատկերներով և այլն:

Հացը և կարտոֆիլը պահում էին նաև հորերի մեջ:

Հացի ավելցուկը, ալյուրը, փոխինդը, ձավարեղենը և այլն պահում էին նմանապես խեցեղեն ամաններում, շալե, մորթե և ֆաբրիկային պարկերում: Կային խուրջիններ և թեռեր:

Այլ կարասիներից և իրերից էին մատուցարանները՝ տեփուրը, փայտե և պլղնձե սկուտեղները, ծղոտից և ուռենու ճյուղերից հյուսած սալաները, գուլպաների տախտակե կաղապարները և այլն: Կարասիների կոմպլեքսներ էին կազմում լվացքի տաշտերը, թեշտերը և հարակից պարագաները: Նաև լուսավորության պարագաները՝ ճրագներ, լամպեր, մոմ ու մոմակալներ, լապտերներ և այլն:

297 ԱՀ, 6, էջ 228:

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ԶԳԵՍՏՆԵՐ ԵՎ ԶԱՐԴԵՐ

ավախքի դաժան կլիմայի պայմաններում ինչպես հայերը, նույնպես և վրացիներն ու ռուսները հարկադրված էին և այժմ էլ հարկադրված են հագնել թանձր զգեստներ: Վերջիններիս զգալի մասը, աստառապատ լինելով, դարձել է կրկնակի հագուստ: Տարվա 6-7 ամիսներին ազգաբնակչությունն ստիպված է եղել օգտագործել ծանր մուշտակներ կամ թիկնոցներ:

Հագուստի այդ թանձրությունը ջավախքցի հայերի համար նոր չէր: Այն, կարելի է ասել, ժողովրդի հետ այստեղ էր բերվել 1830-ի արտագաղթի ժամանակ. Կարնո բնակլիմայական պայմանները նույնն են, ինչպիսին որ Ջավախքինն է: Գաղթից հետո առաջին տասնամյակներին Ջավախքում լիովին պահպանվում էին զգեստների բոլոր ձևերը: Կլիմայական պայմաններից ոչ պակաս որոշիչ դեր ուներ նաև զգեստի ձևերի ավանդապահությունը, որին, ինչպես հետո կտեսնենք, զուգակցել, խթանել են նաև հնագույն կրոնական ըմբռնումների՝ ենթագիտակցականի շերտերում ապրող, ինչ-որ տեղ արթունորեն գիտակցվող-չգիտակցվող մնացուկները: Այս նոր երկրամասում, ուր ավելի արագորեն էին տարածվում քաղաքային տարազի ձևերը, այնուամենայնիվ Կարնո տարազը շատ երկար ժամանակ պահպանում էր ազգային առանձնահատկությունները՝ ավատատիրական արխայիկ կարգերի հարատևման հետևանքով: Մինչև 19-րդ դարի վերջերը հին հայկական տարազն այստեղ աննշան փոփոխություններ է կրել: Եվ եթե ինչ-որ բան էլ փոխվել էր, ապա դա բացառապես վերաբերում էր արական սեռի զգեստներին: Իսկ դրա պատճառն այն էր, որ տղամարդը առավել չափով և ավելի մեծ շրջագծով էր շփումներ ունենում տարածաշրջանի մեծ քաղաքների՝ Թիֆլիսի, Ալեքսանդրապոլի և Ախալցխայի հետ:

Իգական սեռի զգեստների առավել պահպանողականության բուն պատճառներից էին նմանապես գերդաստանային հին ու համակարգային հարաբերությունները, որոնք գրեթե նույնությամբ տարածվում էին նաև փոքր ընտանիքների վրա: Տղամարդը չէր հանդուրժում կնոջ զգեստի փոփոխությունը՝ ելնելով նաև այն ըմբռնումներից, ըստ որոնց զգեստի փոփոխությունը կարող է ուղղակիորեն անդրադառնալ բարոյական նորմերի վրա: Այս և այլ պատճառներով էր, որ Ախալքալաք, Ախալցխա և Ալեքսանդրապոլ քաղաքներում կնոջ գլխավոր վերնազգեստներն ու գլխի հարդարանքները ոչ թե փոխվում, այլ աստիճանաբար, ըստ քաղաքային կուլտուրական զարգացման, կատարելագործվում, հարմարեցվում էին նոր պահանջներին: Զարգացումն այս տեսակետից թերևս այնքան զգալի էր, որ 20-րդ դարի սկզբներին Ջավախքի խրխա-ջուպպաները Կարնո նույն զգեստների տարբերակներն էին դարձել: Դա կնոջ տարազի քաղաքայնացման ակնհայտ գործընթացն էր: Ինչպես կտեսնենք զգեստների նկարագրության մեջ, այդպիսի զարգացում են ապրել նաև տղամարդկանց հագուստները՝ կրելով քաղաքային

տարազի ուղղակի ազդեցությունը: 20-րդ դարի սկզբներին դրանք, որոշակի փոփոխությունների ենթարկվելով, ինչ-որ չափով քաղաքայինը «ազգայնացնելու» ճանապարհին էին գտնվում, երբ վրա հասած հեղափոխությունը 1920-ական թվականների, վերջերին և մանավադ երեսնական թվականներին զգեստների գծով հանգեցրեց նաև կուլտուրական հեղափոխության: Այլևս պատրաստի հագուստեղենի արագ տարածումը հեղաշրջող դեր խաղաց. ազգային վերնազգեստների մեծ մասը տեղի տվեց: Այնուհետև, մինչև 1940-ական թվականների վերջերը, ազգային-ավանդական և քաղաքային զգեստների համազուգակցման ընթացք եղավ: Դա, կարելի է ասել, նաև վերջը եղավ ազգային հագուկապի, որից հետո ջավախքցու հագուստը, աննշան տարբերությամբ, դարձավ քաղաքային: Գյուղերում միայն տարեց կանայք էին, որ պահպանեցին գլխաշորերը և գլխակապման ավանդական ձևերը: Թեպետ հանուն արդարության պետք է ասել, որ ավանդական այդ ձևերից գյուղերում դեռ նկատվում են, քիչ չեն չհրաժարվողներ (գուցե նաև մի գեղեցիկ օր էլ, ըստ տեղական բնակլիմայական պայմանների և, ինչը շատ կարևոր է, իմաստնացած մոտեցում ու ցանկալի վերադարձ դեպի ազգայինի, ավանդականի վրա հիմնված նոր ու նորացված զգեստաձևերին: Դա իրոք կլիներ, առարկայորեն կհանդիսանար հայոց վերադարձող ինքնահարգանքի, նաև հուսավառ ապագայի խոստումնալից սկիզբը): Ներքնազգեստներից իրենց հին ձևերը պահպանում են միայն տեղերում կարած շապիկները, ելակները և աննշան չափով՝ դովրերը (յուբկա):

Պատմական Հայաստանում 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի առաջին քառորդին պահպանված էին խոր անցյալից ժառանգված և աստիճանաբար զարգացում ապրած մի շարք տարազաձևեր, որոնք նախ համապատասխանել են վաղ միջնադարյան նախարարական տոհմերի, իսկ այնուհետև՝ որոշ նահանգների բնատարածքներին:19-րդ դար հասած տարազների այդ ձևերը, սակայն, չէին ներկայացնում պատմական Հայաստանի հնագույն հագուստների բոլոր տարբերակները, որովհետև ժողովրդի հազարամյա կեցության անկայուն վիճակը, բռնությամբ իրականացված մեծ տեղաշարժերը խստորեն կրճատել էին ցեղային վաղեմի զգեստների առանձնահատուկ ու բազմազան ձևերը: Հրապարակի վրա մնացել էին սահմանափակ թվով և իրարից հստակորեն տարբերվող տարազաձևեր: Հարատևած այդ տարազաձևերից էին՝ **Բարձր Հայքի, Արարատյան, Սյունիք-Արցախյան,** նաև **Վասպուրականի** տարազները: Հինգերորդ տարազաձևը 19-րդ դարում հաստատագրվել է Կիլիկիայում, որը 13-16-րդ դարերում ձևավորվել էր այնտեղ ստվարացած հայահոծ տարբեր ազգագրական շրջանների տարազների խառնուրդից, որի մեջ դժվար չէր նկատել, օրինակ, Բարձր Հայքի, Վասպուրականի և այլ շրջանների տարազների տարրերի հետքերը[298]:

298 Հմմտ. մեր «Հայ ազգագրություն. համառոտ ուրվագիծ», Երևան, 1974, էջ 103-109:

19-րդ դարում և մինչև 1915-ի ցեղասպանական եղեռնումը, Կարնո նահանգի կանանց ազգային տարազների համալիրներն ավելի անաղարտ էին պահպանված, քան արական սեռինը: Քաղաքային եվրոպական տարազաձևերն առավել չափով տարածվում էին տղամարդկանց շրջանում: Կանանց տարազների անաղարտությունը պարզապես հետևանք էր ընտանիքում նահապետական սովորույթների հարատևության:

Դսի մարդը՝ տղամարդը, ավելի արագորեն էր ենթարկվում եվրոպական ազդեցություններին: Ուստի և 20-րդ դարի վերջին Կարին ու Երզնկա քաղաքների տարազների մեջ արդեն թափանցել էին եվրոպական վերարկուներն ու բաճկոնները: Շատերը կրում էին նաև օտար ֆասը: Գյուղական ունևոր խավի տղամարդիկ նույնպես գործածում էին եվրոպական հագուստի այդ նույն տարրերը: Միայն աշխատավորությունն էր, որ չէր ենթարկվում այդ փոփոխություններին: Եվ վերջիններիս պահպանած տարազների համալիրների մի մասն էր, որ ժամանակին օտար հետազոտողների և հայ նկարիչների շնորհիվ հաստատագրվել ու հասել է մեզ: Պահպանվածի մեծ մասը կնոջ տոնական տարազներ են: Տղամարդկանց տոնական տարազաձևերից աննշան բան է մնացել: Իսկ չէ՞ որ տարազի ամբողջականությունից է կախված նրա ողջ պատմությունն ու արվեստի նկարագիրը: Ինչ վերաբերում է պատանեկության ու երիտասարդության տարազին, դժբախտաբար մեզ գրեթե ոչինչ հայտնի չէ: Ուստի և մենք ակամայից պետք է բավարարվենք այն ամենով, ինչ ունենք մեր ձեռքի տակ՝ ըստ 20-րդ դար հասած նյութերի:

Այս նույնը պետք է ասել նաև Ջավախքի, Ախալցխայի և Ծալկայի հայոց տարազների վերաբերյալ: Կապիտալիստական վերահաս հարաբերությունները ահա այս գավառներում արագորեն տարածեցին քաղաքային տարազը: Քաղաքաբնակ հայ տղամարդկանց տարազը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբներին մեծ մասամբ այլևս օտարացած էր: Նոր փոխառությունները թափանցել էին նաև գյուղական բնակավայրերը: Եվրոպական բաճկոնը, շալվարը, վերարկուն, ճտքավոր կոշիկները, նաև գլխարկը իշխող տարրերն էին քաղաքի տղամարդկանց մեծ մասի հագուկապի մեջ: Փոխառվել էին չերքեզական **չուխան**, վրացական **քուդի** կոչված թաղիքե գդակը, ռուսական **թուլումբը** և այլն:

Այստեղ մենք կներկայացնենք Կարնո նահանգի արական, նաև իգական տարազաձևերը և Ջավախքի՝ միայն կանանց տարազը, որոնք քիչ թե շատ պահպանել էին իրենց ազգային հատկանիշները:

Կարևոր տղամարդկանց 19-րդ դարի և 20-րդ դարի սկզբի տարազների համալիրներ:

Ա. Միջին տարիքի տղամարդու տոնական տարազի համալիրը ներկայացնում են լայն աղով և նեղ փողերով ու խոնջանով շալվարը, շալե լայն գոտին, կեղծ թեզանիքներով բաճկոնը (սալթան), փաթթոցավոր գլխարկը[299]:

Բ. Տարեց տղամարդու տոնական տարազի համալիրը՝ կազմված կախ շալվարից[300], բաճկոնից (սալթան), փուշի փաթաթած քոլոսից[301]:

Գ. Գյուղացի ծեր տղամարդու տարազի համալիր՝ կազմված լայն աղ ունեցող սև շալե շալվարից, սպիտակ շալե գոտուց, մուգ գույնի շալե բաճկոնից (սալթան) և կապուտակ յազմա փաթաթած քոլոսից[302]:

Ըստ Ն. Ք. Ավագյանի հիշատակած **Բարձր Հայքի ժող. տարազը**, (ՊԲՀ, Երևան, 1971, թիվ 4, էջ 195-ի)՝

Կախ շալվարը գոտկատեղում շատ լայն էր և վերնամասը երկարավուն այն աստիճան, որ կախվում էր փողերի վրա անգամ մինչև ծնկներից էլ ներքև: Լայն գոտկատեղը խոնջանադարձի մեջ անցկացրած գոտեկապի միջոցով հավաքվում էր շարով և կապվում առջևում: Մեկ անդրավարտիք կարելու համար անհրաժեշտ էր 22 արշին (15,62 մ.) 35-40 սմ լայնություն ունեցող տեղական բրդյա կտոր, որ անվանում էին **Ղարա մանդուլա,** միևնույն անունն ուներ և անդրավարտիքը: Այս տարբերակը կողքերում գրպանաճեղք ուներ: Այն տարածված էր Կարինի շրջանում, գաղթից հետո՝ Ախալցխայում, Լենինականում, մինչև 20-րդ դարի սկիզբը:

Կարևոր հայ կանանց 19-րդ դարի և 20-րդ դարի սկզբի տարազների համալիրը

- Երիտասարդ կնոջ տարազի համալիր՝ կազմված առջևը բաց և կողքերը ճեղքված պարեգոտից, շորե լայն գոտուց, գլխի մետաղյա զարդարուն թասակից, կրծկալից ու վզնոցից[303]:
- Նորահարսի տարազի համալիր փութալիով, բազմիցս փաթաթած գոտիով, կրծկալով, գլխի արծաթե թասակով և վզնոցով[304]:

---

299 Տե՛ս **Առաքել Պատրիկ**, Հայկական տարազ, Երևան, 1967, էջ 37 և տախ. 48, նկ. 2, (այսուհետև՝ Ա. Պատրիկ):

300 Ն. Ք. Ավագյան, Բարձր Հայքի ժող. տարազը. տես ՊԲՀ, 1971, թիվ 4, էջ 195:

301 Ա.Պատրիկ, էջ 38, տախտակ 48, նկ. 3:

302 Ա.Պատրիկ, էջ 38, տախտակ 49, նկ.1:

303 Ա. Պատրիկ, էջ 38, տախ. 49, նկ. 6: Մեզ թվում է, թե այս տարազը քաղաքային օրիորդական է, ուստիև՝ թասակավոր: Իսկ թասակը փոխառություն է Վասպուրականից կամ Տրապիզոնից:

304 Նկար Վ. Սուրենյանցի. **Ֆլորա Գրիգորյան, Հայկական տարազներ**. 20 համալիր բացիկներ, Երևան, 1965 (այսուհետև՝ Ֆ. Գրիգորյան): Ավելի ստույգ կլիներ անվանել հարսնացուի տարազ, քանզի հարսը չէր կարող անքող լինել:

- Նորահարսի տարազի համալիր՝ կազմված անգոգնոց և առջևը բաց խըրխայից, կրծկալից, թեզանիքներից կախված կախիկներից, գլխի բարդ հարդարանքից ու քողից և ոսկեշար վզնոցից[305]:
- Խոտորջուրցի երիտասարդ կնոջ տարազի պակասավոր համալիր՝ կազմըված փութալուց, գոգնոցից, կրծկալից, բաճկոնակից[306]:
- Խոտորջուր ավանի երիտասարդ կնոջ տոնական տարազի համալիր՝ կազմըված ջուպպայից և գոգնոցից, փուշի գլխաշորից, կրծկալից՝ կենաց ծառի զարդով[307]:
- Միջին տարիքի կնոջ տոնական տարազի համալիր՝ կազմված ջուպպայից, թեզանիքները զարդարող կախիկներից, գոգնոցից, գլխի շերիտից, վարդից և քողից[308]:

305 Նկար Ս. Խաչատրյանի. տես Ֆ. Գրիգորյանի ալբոմը:

306 Նկար Ֆ. Գրիգորյանի. տես հեղինակի ալբոմը: Այս գունավոր նկարում կնոջ գլխի հարդարանքից պակասում են՝ ոսկեշար ճակտընոցը, վարդը և քողը, իսկ շալովին գագաթի վրա հանգուցելը ազգային չէ: Այն պետք է կզակի տակին իրար մեջ ագուցվեր առանց հանգույցի:

307 Նկար Ա. Պատրիկի. տես նրա աշխատության էջ 38, տախ. 49-4: Նկատենք, սակայն, որ խոտորջուրցու այս ջուպպան Ա. Պատրիկը կարդացել է իբրև տակի շրջազգեստ և կրծկալը՝ որպես նրա վրայից հագնվող. «գոգնոցանման ինքնատիպ վերնազգեստ, եզերված ոսկեգույն մետաքսե ասեղնագործությամբ: Կլապիտոնով հյուսված մի կրծքազարդ աքողում է կրծքի բացվածքը: Մեր տարազային քարտեզում նրա կողքին նկարել ենք նաև այդ տարազի մեկ ուրիշ փոփոխակը» (**Ա. Պատրիկ**. էջ 42, տախ. 63, նկ. 2 և **Տարազային քարտեզ հայ ժողովրդի ԺԹ դարից Ի դարի առաջին քառորդը, թիվ 27**): Այսպիսով, ստեղծվել է ոչ միայն նշված մտացածին տարազը, այլև նույնիսկ նրա տարբերակը: Կեղծ է նաև այդ կնոջ աղջնակի գոգնոցը, որը հատուկ էր միայն ամուսնացած կնոջը: Այս վերջին սխալն էլ կատարվել է մեկ այլ պատճառով: ՀՊՊ թանգարանում կան մանկական ջուպպաներ և գոգնոցներ, որոնք Ա. Պատրիկը և Ֆ. Գրիգորյանը նկարել և հրապարակ են հանել իբրև աղջկական զգեստներ: Դա ևս լուրջ թյուրիմացություն է, որովհետև այդ տարազը կրողները 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին եղել են հարսներ կամ հարսնացուներ, որոնք այլևայլ պատճառներով (գեղեցիկը հայոց ազգի մեջ պահելը, հողի նորմա ձեռք բերելը և այլն) հարսնացել են 8-12 տարեկան հասակում: Այս երևույթն անտեսելուց էլ առաջացել է նշված մոլորությունը: (Հարգարժան հեղինակի կողմից նշված այս երկու կարևոր պատճառները իրողության մեջ շատ ավելի խորքային դրդիչներ ունեին, քան կենցաղն ու նույնիսկ առտնին օգտաշահության հույժ կարևորագույն խնդիրներ լուծելն էր: Կարծում եմ՝ պատասխանը մրափում է հայի ենթագիտակցականի խոր շերտերում: Ընդհանրական իմաստով, հայ ժողովուրդը անգիտանում է դեռևս այս հարցում և միայն ազգի հավաքական բնազդն է ի զորու ի նորո վերարծարծելու այն՝ որ է՝ հնարավորինս մաքուր ու անխառն պահպանել Աստվածային ազնիվ արյունը, հոգևոր-բարոյական մաքրությամբ հանդերձ՝ հանուն համայն մարդկության փրկության և դեպի Աստծո կենարար լույսը դառնալու հնավանդ ճանապարհի առաքելության իրականացման: Կազմողի ծանոթագրումը՝ Ռ. Ղ.):

308 Ա. Պատրիկ, էջ 37, տախտակ 48-3:

Ջավախքի և Ախալցխայի իգական սեռի 19-րդ դարի և 20-րդ դարի առաջին քառորդի տարազների համալիրներ:

Ջավախքի, Ախալցխայի և Ծալկայի աղջիկներն ու կանայք 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի առաջին քառորդում պահպանել էին տոնական տարազների մի շարք համալիրներ, որոնց գրեթե միշտ ուղեկցում էին ոսկե, արծաթե, թանկագին քարերից կամ ուլունքներից պատրաստված զարդերը:

Աղջիկների հագուստի համալիրները ամուսնացած կանանց համեմատ բավական համեստ էին և բաղկացած էին հետևյալներից՝

- Ընտիր կտորից կարված բաճկոն՝ հասարակ կամ արծաթե գոտիով և ծալաբոլորք ունեցող փեշով ու գունավոր լաչակով:
- Բոլորածալով օժտված անձով դայրա (շրջազգեստ), գոտի, հասարակ կամ գունավոր գլխաշոր:
- Շրջազգեստ՝ հասարակ գոգնոցով և ֆաս ու ծոպով (փիսկիլ):

Ամուսնացած երիտասարդ և միջին տարիքի կանանց տարազների համալիրներն ավելի շքեղ էին ու նաև բարդ՝ մշակվածությամբ ու արվեստով: Այսպես.

- Երիտասարդ կնոջ ոսկեկարի համեստ զարդերով օժտված մուգ մանուշակագույն ջուպպան մուգ կարմիր գոգնոցով, ասեղնագործված նուրբ կրծկալով, գլխի ֆաս ու ծոպով, վարդով ու ոսկե շերիտով, հարսանուցներով ու քողով համալիր:
- Միջին տարիքի կնոջ մուգ կանաչ գույնի ֆարաջա կոչված վերարկուն, ոսկեթել ճոխ ասեղնագործությամբ, երբեմն վիշապների պատկերներով-ոսկու ճակատակալով ու վարդով, քողով ու կրծկալով:
- Ջահել կնոջ շքեղ ասեղնագործած բաճկոնակով, բոլորածալ փեշով, ասեղնագործած կարմիր գոգնոցով, շքեղ զարդարված կրծկալով, արծաթե գոտիով, գլխի վարդով, ոսկու շերիտով ու քողով համալիր:
- Տարեց կանանց տարազի համալիր՝ կազմված մուգ կտորից կարված ջուպպայով ու գոգնոցով, հասարակ և մուգ գույնի կրծկալով, գլխի ոսկե շերիտով ու վարդով, նաև գլխաշորով (շալովի)՝ ծայրերը կախած:

Նկատենք, որ աղջիկների և կանանց տոնական բոլոր տարազներին զուգընթաց կային հասարակ կտորներից և մեծավ մասամբ շալից կարված տարբերակներ, որոնք օգտագործվում էին ամենօրյա կենցաղում և աշխատանքի ժամանակ: Այդպիսիք թեև պահում էին տոնական տարազների ձևերը, բայց հազվադեպ պարագաներում էին զարդարվում: Այս հասարակ ձևերի տարազներին միշտ ուղեկցում էին գլխի ոսկե ճակատակալը (երբեմն ոսկե փուլերին փոխարինում էին դեղին մետաղից պատրաստված կեղծ փուլերը), վարդը և գլխաշորը:

Տարազի այս և ստորև կատարված նկարագրությունից երևում է, որ Կարնո հայոց կնոջ տոնական զգեստները և գլխի տոնական հարդարանքի տարրերը ոչ միայն արտակարգ և բարձր արվեստով են օժտված, այլև այդ զարդարվեստի մեջ պահպանել են պատմական խոր անցյալի հետքեր: Այդ հարդարանքների մեջ **վարդ անունը կրող ճակատազարդը**[309] ամբողջական ու անվերապահ գալիս է նախաքրիստոնեական ժամանակներից: Վարդի երկու ծայրերում տափակ նստած անվաձև վերադիր զարդերն, անկասկած, հեթանոսական ծագում ունեն: Ներկայացնելով ցուլի կամ երնջի եղջյուրներից կազմված երբեմնի դիմակի մնացուկները, դրանք մեզ կռահել են տալիս, որ վարդը ամբողջապես քրմական ծագում ունի: Անշուշտ, հեթանոս կանայք և կին քուրմերը պիտի որ գործածեին այդ դիմակը որպես **անահտական** զոհերի խորհրդանշան, որպես պտղաբերության առհավատչյաններ: Գուցե դա Անահիտի տաճարներում նախապես վարսակալ-դիմակ է եղել, որը օգտագործվելիս է եղել ուխտագնացությունների ժամանակ: Միանգամայն հնարավոր է, որ վարդ-դիմակն ունեցել են բոլոր ուխտագնաց ամուսնացած կանայք՝ պտղաբերելու ակնկալությամբ: Այդ դիմակով ուխտի գնացողները շրջելու էին Անահիտի արձանի շուրջը և զոհաբերություններ էին կատարելու: Դրա օգտին է խոսում այն ծիսակատարությունը, որ տեղի էր ունենում Վայքում, հարսանիքի ժամանակ. հարսնառին դիմավորող պատանին ոսկրե կախիկներով և ցուլի պոզերով զարդարված՝ կատակներ էր անում: Հետագայում էր, որ անահտական այս ցուլի եղջյուրներով քրմական-կախարդական ծիսակատարությունը խաղի ու կատակի էր վերածվել[310]: Եվ միայն այն բանից հետո, երբ քրիստոնեության բռնության ներքո անհնարին էր շարունակել հեթանոսական պտղաբերական ծիսակատարությունը, երբեմնի եղջյուրավոր վարսակալը վերածվեց ծպտյալ գլխազարդի: Նույնիսկ վարդի ծաղկազարդ ասեղնագործությունն էլ հիշեցնում է սրբազան Եփրատի ափերին տարածված անահտական զոհերի նախիրների ծաղկավետ մարգագետինները:

Աղջիկների և նորատի հարսների կողմից օգտագործվող **ֆասն** ու **ծոպը** նույնպես Անահիտի պաշտամունքի հետ են կապված: Մանուշակագույն մետաքսե

309 **Վարդ** գլխազարդը Կարնո որոշ խոսվածքներում կրում էր նաև **թանթանա** անունը, որը արաբերենում շուք, մեծություն, մեծ շքեղություն, փառավորություն, պերճ հանդիսավորություն իմաստներն ունի (տես **Հր. Աճառյան**, Թուրքերենե փոխառյալ բառեր հայերենի մեջ, Մոսկվա-Վաղարշապատ, 1902, էջ 118: **Հ. Պոզաճյան**, Համառոտ բառարան տաճկերեն-հայերեն, Կ. Պոլիս, 1858, էջ 187):
(Եթե բանինուն ու վաստակաշատ գիտնականը, մի հրաշքով հետ գնար իր իսկ շեշտած նախաքրիստոնեական ժամանակները, երբ կարնոհայերը **վարդ** գլխազարդին իրապես **թանթանա** էին ասում և, դարձյալ մի հրաշքով, ճշտեր ու ճշգրտեր այդ բառի նախիմաստը, այնժամ կընդուներ նաև, թե որքան մոտավոր ու խղճուկ են արաբերենի՝ տվյալ բառիմաստի թարգմանություն-մեկնություն վկայումները: Եվ միգուցե մեծահամբավ Աճառյանն էլ տվյալ դեպքում արաբերենին անդրադառնար նշյալ առումով միայն: Կազմողի ծանոթագրումը՝ Ռ. Կ.):

310 Տես մեր «Հայ ժողովրդական խաղերի» 1-ին գրքի (1963թ.) 258 էջը:

հսկայական այս ծոպը ոչ այլ ինչ էր, քան թե անահտական զոհի՝ ցուլի կամ ձիու պոչի խորհրդանշանը: Պտղաբերության հետ էին աղերսվում նաև գոգնոցի, բաճկոնի, կանանց գուլպաների, կրծկալի ասեղնագործված գոտու, նաև այլ իրերի վրայի կենաց ծառերն ու նշաձև զարդերը: Խոտորջուրի կնոջ կարմիր գոգնոցի ստորին եզրազարդը մանկան կերպարանք ունի[311]: Այդ զարդաձևը կրկնում է այն զույգ մանուկների ձևերը, որոնք քանդակված են Անահիտ դիցուհու արձանը ներկայացնող մի աղամանի լանջին, մոր գրկում: Այս երկու դեպքերում էլ մանուկները Անահիտ դիցուհու պարգևներն ենք համարում:

Կարնո կինն առհասարակ տարվա ցուրտ եղանակներին հազարամյակներ շարունակ նահապետական փակ տնային կյանք վարելու հետևանքով իր զգեստի համալիրի մեջ կատարելության հասած վերարկու չի ունեցել:

Ինչպես ցույց են տալիս վերնազգեստի մի քանի տեսակները, նա ունեցել է վերարկուի այն նախատիպը, որ առաջացել է շրջազգեստի հետագա զարգացումից:

Հայտնի է, որ կնոջ շրջազգեստն առհասարակ շրջափակ է: Բայց ահա կային վերնազգեստներ, որոնց առջևամասը լիովին բաց լինելով՝ կանայք դրանք հարկադրված էին հագնել դռվրի վրայից՝ լայն գոգնոցի առկայությամբ: Այդպիսիք էին՝ խրխա-ջուպպան, ֆարաջան, փութալին և անքարին: Այդ վերանզգեստները կանանց վերարկուների նախատիպերն էին Բարձր Հայքում և պատմական Հայաստանի բոլոր նահանգներում:

Մասնավորապես Ջավախքի հիշյալ վերնազգեստները վերարկուի նախատիպերն էին, որոնց օգտին են խոսում նաև թանձր կտորների և շալեղենի ընտրությունը, դրանց արտակարգ երկար և աստռուն լինելը, և թանձր գոգնոցը: Վերարկուի նախատիպեր, որոնց ձևի ու գույների պահպանումով, ամռան սեզոնի համար կարվում էին շրջազգեստի տեղ ծառայող անաստառ, բարակ կտորներից ջուպպաներ, ֆարաջաներ ու անքարիներ՝ կտորից կարված գոգնոցներով:

Այժմ փորձենք համառոտ ուրվագծել Մշո տարազի համալիրները, որոնք մեզ են հասել ազգագրական նկարագրությունների, գեղանկարչության և լուսանկարչության միջոցով: Միայն այդ նյութերով է, որ մենք պիտի ցույց տանք, թե ինչպիսին էր Մշո գավառներից Ջավախք գաղթած հայոց փոքրամասնության տարազը 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներին, որովհետև նրանց զգեստները նոր հայրենիքում ոչ ոք չի նկարագրել, և դրանց նմուշները թանգարաններում չկան:

311 Տես «Կարնո կանանց 19-րդ դարի և 20-րդ դարի սկզբի տարազների համալիրներ», §-4:

Մշո տղամարդկանց տարազների համալիրները 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին:

- Մուշ քաղաքի երիտասարդների տարազի համալիրներ՝ կազմված լայն աղով շալե շալվարներից, ելակներից և մահուդե սալթանբաճկոններից, շալե գոտիներից ու փուշի փաթաթած գդակներից[312]:
- Միջին տարիքի տղամարդու առօրյա տարազի համալիր՝ կազմված շալե լայն շալվարից, չթից կամ մանուսայից կտրված իշլիկից, սրա վրա կապվող շալե լայն գոտուց, այծի չուռից (բրդից) գործած մազոտ կտորից կարված ապայից (քեզախիկ) և փուշի փաթաթած քոլոսից[313]:
- Խնուսցի միջին տարիքի տղամարդու տարազի համալիր՝ կազմված շալե զոլավոր լայնավող շալվարից, մանուսայից կարված իշլիկից, սրա վրա կապված շալե լայն գոտուց, անթև բաճկոնակ-ապայից և փուշի փաթաթած քոլոսից[314]:
- Տարեց գյուղապետի տարազի համալիր՝ բաղկացած Կարինին հատուկ շալե շալվարից, թևավոր իշլիկից, սրա վրա կապվող զոլավոր շալե լայն գոտուց, շալե թիկնոց-վերարկուից և փուշի փաթաթած քոլոսից[315]:
- Ծերունու տարազի համալիր՝ բաղկացած կապույտ, լայնավող շալվարից, կապույտ իշլիկից, սրա վրա կապված շալե կարմիր գոտուց, այծի չուռի գործվածքից կարված ապայից և փուշի փաթաթած քոլոսից[316]:

Մշո կանանց տարազների համալիրները 19-րդ դարի 2-րդ կեսին և 20-րդ դարի սկզբներին:

- Աղջկա տոնական տարազի համալիր՝ կազմված դեղին ֆոնով զոլավոր կտորե փեշից, վարդագույն կտորից կարված բաճկոնակ-վերնաշապիկից, սրա և փեշի վրա փաթաթված գոտուց և գույնզգույն լաչակից[317]:
- Երիտասարդ կնոջ տոնական տարազի համալիր՝ կազմված անթարի շրջազգեստից, կտավե գոգնոցից, զոլավոր շալե լայն գոտուց, գլխաշորից և վզնոցից[318]: Այս հագուստը, ինչպես իրավացիորեն դիտել է Ա. Պատրիկը, կրում է Բարձր Հայքի կանանց տարազի ազդեցությունը:

---

312 Տե՛ս Ա. Պատրիկ, էջ 37 և տախ. 46: Օգտվել է «Փարոս Հայաստանիե 1881, թիվ 4-ից:

313 Ե. Լալայան, Մուշ-Տարոն (ԱՀ, 26, էջ 152):

314 Նկար Ս. Խաչատրյանի. տես Ա. Պատրիկ, էջ 41, տախտակ 62, նկար 5:

315 Հ. Ֆ. Պ. Լինչ, Հայաստան, հ. Բ, էջ 188 և Ա. Պատրիկ, էջ 38, տախ. 49-3:

316 Նկար Վ. Սուրենյանցի. տես Ա. Պատրիկ, էջ 41, տախ. 62, նկ. 2:

317 Նկար Վ. Սուրենյանցի. տես Ա. Պատրիկ, էջ 41, տախ. 62, նկ. 3:

318 Հ. Ֆ. Պ. Լինչ, նշվ. աշխ., էջ 188 և Ա. Պատրիկ, էջ 38, տախ. 49-2:

- Միջին տարիքի կնոջ տոնական տարազի համալիր՝ կազմված զոլավոր փեշի վրա հագնվող, կողքերին ճեղքվածքներ (չաքեր) ունեցող անթարուց. (որ իրոք համապատասխանում է Բարձր Հայքի փութալլիին) և կտավե գոգնոցից ու կարմիր գլխաշորից[319]:

Բ. Նյութեր գյուղական զգեստների սեռատարիքային առանձնահատկությունների վերաբերյալ

Ներկեր: Մինչև քիմիական տարբեր ներկերի տարածումը Ջավախքի հայերը հիմնականում օգտագործել են բնական ներկեր, որոնք էլ ստացվում էին բույսերից, բուսարմատներից, քարաքոսից, նաև այլ նյութերից: Բնական ներկերի օգտագործումը շարունակվեց մինչև 1940-ական թվականները, իսկ այնուհետև լայն կիրառում ստացան քիմիական ներկերը:

1920-1930-ական թվականներին տարածված գույներն էին՝ մուգ կարմիրը, վառ կարմիրը, բաց կարմիրը, մանուշակագույնը, մուգ կապույտը, բաց կապույտը, մուգ կանաչը, բաց կանաչը, մուգ դեղինը, բաց դեղինը, նարնջագույնը, սևը և ճերմակը: Այս բոլոր գույներն էլ, եթե պատրաստվում էին բնական նյութերից, չէին խունանում, մինչդեռ քիմիական ներկերի գույները միևնույն կլիմայական պայմաններում այսօր էլ արագորեն խունանում են:

Բնական ներկեր ստանալու եղանակները Ջավախքում ժամանակին չեն նկարագրվել, և դրանց զգալի մասը մոռացվել է:

Այստեղ կներկայացնենք Ջավախքի բնական ներկերի նյութերը և նրանցից ներկեր ստանալու եղանակները, որ գրի ենք առել դեռևս 1944 թվականին:

Փոքոքից սև ներկ: Փոքոքի ցողունը քառակող է, ծաղիկները՝ մուգ կապտագույն, մանր և առատ: Սրա հասունանալուց և ծաղկաթափ լինելուց առաջ արմատով կամ միայն ցողունը քաղում էին, մեծ պղնձամանով եռացնում ջրում մինչև գույնը տալը: Խաշված փոքոքը քամում և թափում էին, իսկ ներկաջուրը լցնում ծափի, կճուճի կամ կաքսայի մեջ, այնտեղ գցում ժանգոտ երկաթներ, դնում տաք թոնրի շուրթին՝ մինչև **թթվելը**: Այս գործողությունը կոչվում է **ղոռթնել**, որ դարձյալ նշանակում է **թթվեցնել**:

Թթված լինելը որոշվում էր երեսին հավաքված սպիտակավուն բորբոսից, որն առաջանում էր 8-10 օրում: Թթվելուց հետո երկաթները հանում և ներկաջուրը դնում էին թոնրին, տաքացնում. եռալուց առաջ ներկելիք շալը կամ շալե հագուստը գցում էին մեջը, թեթև եռացնում և ետ առնում կրակից: Շալը կամ շորը միջին՝ ներկաջուրը մնում էր 24 ժամ, ապա հանվում էր, քամվում, դրսում փռվում, չորացվում: Չորանալուց հետո ներկվածը պաղ ջրով լվանում էին, նորից չորացնում և գործածում:

319 Նկար Լանսերեի. տես Ա. Պատրիկ, էջ 41, տախ. 62, նկ. 1: Մշո ամեն տեսակ զգեստների մանրամասն նկարագրությունները, որոնք մեր նպատակի մեջ չեն մտնում, տես Բենսե, Բուլանըխ կամ Հարք գավառ (ԱՀ, 5, էջ 45-48) և Ե. Լալայան, Մուշ-Տարոն (ԱՀ, 26, էջ 149-155):

Տվալուկի արմատից կարմիր ներկ: Այս բույսը կլոր ու մեծ տերևներ ունի և երկար կոթուն, որը մեծ մասամբ նման է ավելուկի: Արմատը թարմ-թարմ կամ չորացնելուց հետո խաշում էին ջրում, քրքրվելուց հետո դրանք հեռացնում էին և թելը կամ շալը մտցնում մեջը, եռացնում 20-25 րոպե: Երբ ներկը բռնում էր, որևէ թթվի ջրից 2-3 բաժակ և մի բուռ աղ էին լցնում, որ ներկը գույնը չթափեր, կայունանար: Այնուհետև ներկվածը պաղեցնում և պաղ ջրով մաքրաջրում էին ու փռում չորանալու: Ստացվում էր մուգ կարմիր գույնի թել կամ շալ:

Սոխի կճեպից կարմրավուն ներկ: Հավաքում էին մեծ քանակությամբ սոխի կճեպ և ջրում խաշում էին մինչև գույն տալը: Դրանից հետո շալը կամ շալե շորը մտցնում էին մեջը և դարձյալ եփում, մինչև ներկվելը: Ապա պաղեցնում էին, ներկվածը քամում, չորացնում և մտցնում կովի մեզի մեջ, թողնում 1-1,5 ժամ: Անասունի մեզը գույնը մգացնում և կայունացնում է: Սրա միջից հանելուց հետո չորացնում էին, պաղ ջրով լվանում: Ստացված գույնը հենց սոխի կճեպի գույնին էր նման, որոշ չափով նույնիսկ մուգ:

Սոխի կճեպից և ավելուկի արմատից կարմրավուն ներկ: Սոխի կճեպը և ավելուկի արմատը միասին ջրով եփում էին մինչև գույները տալը: Արմատը պետք է քայքայվեր: Դրանից հետո կճեպն ու արմատը հանում էին և շալը ներկում: (Ներկելու գործողությունը նույնն էր, ինչ սոխի կճեպով ներկելը): Գույնը նույնպես նման էր սոխի կճեպի ներկի գույնին, բայց ավելի մուգ:

Ավելուկի արմատից կարմրավուն ներկ: Ավելուկի արմատը հավաքում, կտրատում և չորացնում էին, ջրով եփում այնքան ժամանակ, մինչև որ գույնը տար: Քայքայված արմատը ներկաջրից հեռացնում, շալը մտցնում էին վերջինիս մեջ և կրկին եռացնում, մինչև գույնը բռնելը: Եռքից հետ էին առնում, ներկաջուրը պաղեցնում էին, շալը քամում, չորացնում ու դնում անասունի մեզի մեջ, պահում 1-1,5 ժամ: Ապա մեզի միջից հանում, չորացնում էին, պաղ ջրով մաքրաջրում, նորից չորացնում: Ստացվում էր սոխի կճեպից ստացված կարմրավուն գույնի նման ներկվածք:

Քարաքոսից կարմրավուն ներկ: Սա այն քարաքոսն է, որն ունի լայն տերևներ և որը հավաքում են դանակով քերելով: Ներկելիք բրդե թելը, շորը կամ թիկնոցը և կամ էլ գործած շալը քարաքոսի հետ միասին եռացնում էին ջրում: Ամանի մեջ նախապես քարաքոսը և ներկելիքը դարսում էին շերտ առ շերտ, ապա նաև ջուրը լցնում և եռացնում էին մարմանդ կրակի վրա: Գույնը բռնելուց հետո պաղեցնում էին, քամում, չորացնում: Եթե գույնը լավ չէր մգանում, ներկելիքը դնում էին տավարի մեզի մեջ վերևում նկարագրված ձևով: Ստացվում էր սոխի կճեպի ներկի գույն:

Բոքու ծաղկից դեղին ներկ: Բոքին 1-1,3 մետր բարձրության սնամեջ բազմաճյուղ բույս է՝ դեղին ծաղիկներով: Ծաղիկը հավաքում և, չորացնելուց հետո, ցանկացած ժամանակ ջրով եռացնում էին այնքան, մինչև գույն տար: Ապա ներկաջրի մեջ էին

մտցնում ներկելիք բրդաթելը կամ գործած շալը: Վերջինս «մի բերան» եռացնելուց հետո հետ առնում, պաղեցնում էին, քամում, չորացնում, պաղ ջրով մաքրաջրում և նորից չորացնում էին: Ստացվում էր բոքու ծաղկի գույնի բաց դեղին ներկվածք[320]:

Իշակաթնուկից դեղին ներկ: Իշակաթնուկի ցողունը չորացնում էին և եփում, դնում հովացած թոնրի մեջ, ներկելիք բրդաթելը կամ շալը գցում մեջը: Գույնը հավասար բռնելու համար ներկվող զանգվածը երեք անգամ խառնում էին: Հաջորդ օրը ամանը այլևս թոնրից հանում, ներկվածը քամում, չորացնում և ապա դնում էին կովի մեզի մեջ ու պահում 24 ժամ: Այստեղից հանում էին, չորացնում և մաքրաջրում: Ստացվում էր դեղին գույն:

Մասուրի արմատից լիմոնագույն ներկ: Մասուրի արմատը հանում, չորացնում և եփում էին մինչև հլլրզելը: Դրանից հետո բրդաթելը կամ շալը արդեն գցում էին ներկամանը և դնում հովացած թոնրի մեջ՝ եռալու: Եռում էր և թոնրի մեջ մնում մինչև հաջորդ առավոտ: Հետո հանում էին, ներկվածը քամում, չորացնում և դնում կովի մեզի մեջ, պահում 24 ժամ: Ապա հանում էին այստեղից, չորացնում ու մաքրաջրում էին պաղ ջրով: Ստացվում էր մուգ լիմոնագույն ներկվածք:

Դաղձից կարմրավուն ներկ: Վայրի դաղձը չորացնում էին և ապա եփում: Ներկելիքը մտցնում էին մեջը և նորից դնում թոնրի մեջ՝ եռալու: Հաջորդ առավոտ ներկվածը հանում և քամում էին, չորացնում, դնում կովի մեզի մեջ. մեկ օրից հետո մեզից հանում, չորացնում էին, մաքրաջրում: Ստացվում էր կարմրավուն ներկվածք:

Մայասիլի արմատից շագանակագույն ներկ: Այս արմատը եփում էին մի շաբաթ, որը ամեն օր մի նոր գույն էր տալիս. վերջին օրվանը շագանակագույնն էր: Գոլորշիացող ջրի վրա նոր ջուր էին ավելացնում: Բրդաթելը մտցնում էին մեջը և դնում թոնրի մեջ, եռացնում 24 ժամ: Ընդ որում, պետք է եռար հանդարտ: Ժամանակ առ ժամանակ ներկվող զանգվածը խառնում էին, որպեսզի ներկվեր հավասար չափով: Գույնը թույլ լինելիս, հաջորդ օրն էլ դնում էին թոնրի մեջ, ապա հանում թելերը, դնում կովի մեզի մեջ, պահում 24 ժամ: Այստեղից հանած թելերը չորացնում էին, մաքրաջրում և նորից չորացնում:

Ավելուկից քիմոնի գույնի ներկ: Չորացած ավելուկը խաշում էին, քամում և կանաչը թափում: Ներկաջուրը նախ թթվեցնում էին թոնրի մոտ 2-3 օր: Ապա «մի բերան» եփում էին և եռալու ժամանակ մեջը գցում ձեռնաչափ թարմ կամ չոր տարթ, կրակից ամանը հետ էին առնում, ներկելիքը գցում մեջը, դնում հովացած թոնրի մեջ, ուր և պահում էին 24 ժամ, ապա հանում էին, ներկվածը քամում, չորացնում, դնում կովի մեզի մեջ, պահում ևս 24 ժամ: Ինչպես եռացնելիս, մեզի մեջ գտնվելիս էլ երբեմն խառնում էին ներկվող զանգվածը, որ հավասար ներկվեր («խամ ու խեղ

320 Այս ներկվածքը եթե երկրորդ անգամ ներկվեր քիմիական կանաչ գույնի ներկով, կստացվեր վառ կանաչ գույն:

չմնար»): Ապա մեզից հանում էին, չորացնում, մաքրաջրում, նորից չորացնում:

Ստացվում էր քիմոնի գույն[321]:

Որոշ գույների հետ ծանոթանալուց հետո, այժմ մենք անդրադառնանք Ջավախքի հայոց զգեստների ու զարդարվեստի հարցերին՝ հիմք ընդունելով մեր գրառումները և այն տվյալները, որ թռուցիկ կերպով մեզ են ներկայացնում ազգագրական մամուլը և թանգարանները: Առկա նյութերը մենք ներկայացնում ենք ըստ հասակային դասերի, որպեսզի միանգամայն հստակ երևան յուրաքանչյուր սեռի հագուստների աստիճանական անցումները, նաև գաղափարական ու գործնական պահանջներին բավարարելու հանգամանքները: Դրան մեծապես կնպաստի մանկական զգեստներով ուսումնասիրություն սկսելը և ծերերի զգեստներով ավարտելը:

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԱՐԱԿԱՆ ՍԵՌԻ ԶԳԵՍՏՆԵՐ

Տղամանուկների զգեստներ: Այստեղ հաշվի են առնվում 1-11 տարեկան տղամանուկները և նրանց զգեստները: Զգեստներ, որոնք Ջավախքի սահմաններում ունեցած ընդհանրությունների մեջ, այնուամենայնիվ, որոշ տարբերություններ էլ ունեին: Մեզ հասած տվյալները վերաբերում են 19-րդ դարի վերջերին և 20-դարի առաջին կեսին:

Շապիկ հագցնում էին մեկ տարեկանից սկսած: Կարում էին միտկալից, չթից և նման փափուկ կտորներից: **Վարտիքն** այս տարիքում բացառված էր:

Տաբատ (շալվար) կարվում էր մուգ գունավոր կտորներից: Ցածի գյուղերում 3-4 տարեկանի շալվարը **չաթալ շալվար** էր կոչվում, որովհետև տակի մասն ամբողջովին ճեղքված ու եզրակարված էր, որպեսզի հարկավորության դեպքում երեխան անհարմարություններ չունենար նստելու և բնական կարիքները արագ հոգալու առումով: Վերին գյուղերում 4-6 տարեկաններից քչերն էին, որ առջևը ծակ շալվար էին հագնում: Բնորոշը փակ շալվարն էր: Մանկական շալվարը կոճակավոր էր:

Վերնաշապիկը (բլուզ, փոյքա) կարվում էր բամբակե կտորից, չթից և գունավոր

---

321 Քիմոն կոչվածը հավանորեն **լիմոնի** գունն էր լինելու:
Հարգելի գիտնականը, որքանով որ գիտե, ծանոթ է չորացած ավելուկից ստացվող այդ ներիկի գույնը, անշուշտ, գոնե մոտավոր չափով, ճիշտ է իր ենթադրության մեջ, սակայն, համոզված եմ, որ ճշգրիտ չէ բառի «թաքցրած» ստուգաբանական իմաստի և նշանակության առումով: Բառը, որքան էլ զարմանալի է, որևիցե բառարանում արտացոլված չէ (բացառությամբ թերևս բարբառագիտական բառարանների), Հր. Աճառյանը նշում է **Քիմէ** մերձավոր ձևը՝ անծանոթ բույս պարզաբանումով, որը «Հայբուսակում» է միայն առկա (§ 3194): Տեղին չհամարելով բառի ստուգաբանական խնդիրների մեջ մտնելը՝ վկայեմ միայն, որ ցորնագույն-մարմնագույնն է քիմոնագույնը, իր բաց և մուգ երանգների մեջ, որում հանդիպում են նաև կիտրոնագույնի բոլոր երանգ-նրբերանգները: Ելնելով զուտ բառի «պարտադրանքից»՝ թերևս սոսկ նկատեմ, որ ցորնագույն է նաև մարդու արևահար դեմքը՝ բնակլիմայական կոնկրետ պայմաններում որոշակիորեն մերձենալով-նույնանալով կիտրոնագույնի տարբեր երանգներին, ինչը, կարծում եմ, պիտի որ չհակասի բառի նախիմաստին: (Կազմողի ծանոթագրումը՝ Ռ. Ղ.):

կտորներից՝ աստառով հանդերձ: Երբեմն շալվարն ու վերնաշապիկը կցվում էին: Վերնաշապիկն օձիքով էր՝ 1 կոճակով: Այն հագնում էին շապիկի վրայից՝ փեշերը շալվարի մեջ դնելով:

Արխալուղը (արխալուղ) մուգ գունավոր կտորներից՝ թիկունքն աստառով: Մեջքը փոքերով էր, փեշերը՝ լայն: Առջևը բաց էր: Օձիքը՝ նեղ՝ մեկ չափռաստով: Կրծքամասը կոճկվում էր: Հագնում էին բլուզի վրայից: Այն նախատեսվում էր 6-7 տարեկանների համար:

Պիչակը կարվում էր սպիտակ կամ սև ու կապույտ ներկած շալից: Ընտրում էին նաև բնական սև ու շագանակագույն թելերից գործած շալից: Առջևը բաց էր: Ուներ կանգուն օձիք՝ մեկ կոճակով կամ առանց դրա: Կուրծքը կոճակավոր էր: Ստորին մասերում ուներ երկու գրպան: Այն հագնում էին՝ հիմնականում տաք ժամանակ՝ վերնաշապիկի և ցուրտ եղանակներին՝ արխալուղի վրայից:

Պիչակը շատ վայրերում սերթուկ անունն էր կրում: Երկու անուններն էլ ռուսերենից էին, թեև զգեստը բուն հայկական բաճկոն էր:

Ագանելիք: Գուլպաները և ոտնամանները պատրաստվում էին տեղում: Միայն ունևորները կարողանում էին գնել քաղաքային կոշիկներ:

Մանկական գուլպաները գործում էին գարնանային փափուկ բրդից: Գույներն էին՝ ճերմակը, սևը, բնական կարմիրը և սրանցից սպիտակի ֆոնի վրա՝ հորիզոնական սև զոլերը: Ոմանք կարմիր ու կապույտ մեկտակ թելերը իրար հետ երկտակում, ոլորում և ստանում էին խատուտիկ թել, որից և գործում էին գուլպա 4-5 տարեկան երեխաների համար: Գուլպայի վիզը, որ կիպ նստելու հատկություն ուներ, գործվում էր թարս ու շիտակ ձևով[322]:

Մանկական գուլպաների վրա, տան մեջ, **մասեր** էին հագցնում, որոնք գործվում էին սև, կարմիր և շագանակագույն թելերից:

Մասերի վրայից հագնում էին **փոփոլները**, որոնց տակը կաշվից և երեսը մորթուց կարում էին օտնելման կարող տեղական վարպետները: Այսպիսի փոփոլները հագցնում էին 1-3 տարեկան տղաներին: Նրանցից մեծերի համար կարում էին հասկարով փափուկ, իսկ չունևորների համար՝ կոշտ կաշվից տրեխներ:

Գլխարկներ: Անցյալում մանուկների գլխարկները մեծ մասամբ ազգային էին:

Ղավուղը և արախչինը[323] բնորոշ էին մինչև 19-րդ դարի վերջերը: Ղավուղի

322 Ծառզարդարին «Նշանած աղջկա փոքրիկ տեգրերը մի կամ երկու ապասի (20 կ.) առած գնում են հարսի տունը: Հարսը լվանում է այս տեգրիկի...ոտները և նոր գուլպա հագցնում»: (Ե. Լալայան, Ջավախք, ԱՀ, 1, էջ 269):

323 Ե. Լալայանի հաղորդմամբ, Ծառզարդարին հարսնացուին տոնական այցի գնացող փոքրիկ տեգրը, որը 20-40 կոպեկ դրամ նվեր էր տանում, փոխնվեր էր ստանում արախչին: (ԱՀ, 1, էջ 269): Նույն հեղինակի հավաստմամբ, նշանդրեքի ժամանակ տղայի տնից աղջկա տունը տարվող նվերների հետ լինում էին նաև արախչինի համար 1 արշին փաթուխա: (ԱՀ, 1, էջ 238:)

մնացուկները պահպանվում են նաև այժմ՝ օրորոցային երեխաների համար (ղավուղի նկարագիրը տես աղջիկների զգեստների բաժնում): Արախչինն ուներ գլորավուն գագաթ, կարվում էր վառ գույնի կտորից և ասեղնագործվում էր (նկարագիրը տես պատանեկան զգեստների բաժնում):

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին արախչիններին փոխարինեց վրացական թաղիքե **քուդի** անունով տափակ ու ծանծաղ գլխարկը, որին տալիս էին **քաչա** անունը:

Ձեռնոցները, որ գործածվում էին ցուրտ եղանակին, հագցնում էին 3-4 տարեկան դառնալուց սկսած: Գործում էին տֆտիկից և բրդաթելից: Ընտրում էին սպիտակ, կարմիր ներկած, սև, բնական կարմրավուն գույները: Մանուկների համար բնորոշ էին մեկմատնանի ձեռնոցը: Մեկմատնանի ձեռնոցները ոմանք հյուսում էին հորիզոնական զոլերով՝ սև ֆոնի վրա: Դրանք տեղ-տեղ զարդարվում էին մեխակ կոչված զարդանախշերով:

Երեսնոցը հարկ եղած դեպքում գործում էին տֆտիկից:

Մարմնի հարդարումն սկսվում էր ծնված օրից: Նորածնին անմիջապես աղելով կոփում էին: Լողացումը միշտ կատարվում էր մարմնամարզական ձևերի կիրառմամբ: Օրորոցային և գրկային շրջանում մանուկը ենթարկվում էր որոշ շարժումների, այդ թվում՝ կախված խաղալիքներով խաղալուն: Այն երեխաները, որոնք նախախոստումով պիտի սրբերին ներկայացվեին 7 տարեկան հասակում, մազերը չէին խուզում: Իսկ այդպիսիք հարդարվում ու զարդարվում էին: Երբ տղան արդեն ինքնուրույն քայլել էր սովորում, մազերը մկրատով խուզվում, մերկացվում էին: 5-6 տարեկան դառնալիս հոգետան վրա մազերի խոպոպ էին թողնում: 10 տարեկան տղամանուկի աջ ականջը ծակում էին և կախում **մանգիշ օղ**[324]:

Տղամանուկները, 9-11 տարեկան հասակում գառնարած դառնալով, եղունգները և ափերը ներկում էին քարաքոսով կամ **կարմիր քարի ջրով** բացված փոշով: Մի սովորություն, որ մեզ էր հասել խոր նախնադարից:

Պատանի տղաների զգեստներ: Այս դասի մեջ մտնում են 12-21 տարեկան տղաների զգեստներ, որոնք մանկական հագուստներից տարբեր ձևերի հետ ունեն նաև ընդհանրություններ:

Շապիկը բոլորի համար էլ կարվում էր ամիրկայից, որի կրծքի բացվածքը և նեղ օձիքը կոճկվում էին մեկական կոճակով:

Վարտիք հագնում էին 14-15 տարեկանից սկսած: Վարտիքը նույնպես կոճակավոր էր, ինչպես շալվարը:

Իշլիկը հագնում էին ունևորների պատանիները շապիկի վրա, ցուրտ եղանակ-

324 **Մանգիշ** բառը հավանորեն ծագում է արաբերեն մենգուշ՝ նկարյալ բառից, այսինքն՝ քանդակազարդված: Մանգիշ օղը ստորին մասում եռանկյունաձև ծակ ուներ: Այն ընդունող մանուկն իր հետ հասցնում էր մինչև ծերություն:

ներին: Իշլիկը անթև էր, կարվում էր գունավոր կտորներից: Սրա վրայից էլ հագնում էին վերնաշապիկը:

Վերնաշապիկը կարվում էր բամբակե գործվածքից (բամբազյա), չթից և այլն: Լայն օձիքը և կուրծքը կոճակով էին: Միագույն վերնաշապիկը ոմանք զարդարում էին գունավոր թելերի նախշերով: Այդ զարդերի տարրերից էին՝ բալը, վարդը, կակաչը և այլ ծաղիկներ: Կրծքի բացվածքը երբեմն շեղ էր լինում: Թեզանիքներն ունենում էին մեկական կամ երկուական կոճակ: Լինելով ջահելության ցայտուն նշան-խորհրդնիշերից՝ բլուզն արտացոլում է գտել ժողովրդական սիրերգերի մեջ:

Շալվարը կոճակավոր էր: Այն ունևորները կարում էին սև ու շագանակագույն շալերից, իսկ աղքատ խավերը՝ մոխրագույն կամ նույնիսկ սպիտակ շալից: Հարուստները նաև կտորից կարված շալվար էին հագնում, որը, քաղաքի օրինակով, հագնում էին նույն գույնի արխալուղի հետ, ինչը նաև տոնական էր համարվում:

Արխալուղը պատրաստվում էր ծաղկազարդ ֆանելից, սև ու կապույտ կտորներից: Ուներ նեղ և չկոճկվող օձիք: Մեջքը սեղմվում էր փոքերով, փեշերը լայն էին և փռվում էին կոնքի վրա: Կուրծքը կոճկվում էր չափրաստներով: Եզրերը և թևաբերանները տրեզավոր էին: Կրծքի երկու եզրամասերը զարդարվում էին նույն գույնի թելի կեռմանաձև թակալկարով:

Գոտին կապվում էր արխալուղի վրայից: Ոմանք,18-20 տարեկան դառնալիս, ունենում էին արծաթե ոսկեզօծ գոտի: Ուրիշները դրա փոխարեն ունենում էին գնովի կաշվե գոտիներ, որոնցից կախում էին փոկե կախիկ՝ դանակը կախելու և շալվարի գրպանը դնելու համար: Որոշ գոտիներ ունենում էին արծաթե կամ վարշաղե զարդակոճակներ և կախիկներ աջ ու ձախ կողքերին[325]:

Բաճկոնը, որ տեղ-տեղ սերթուկ կամ պիչակ է վերանվանվել, կարվում էր սև, կարմրավուն և մոխրագույն շալերից: Առջևն ամբողջապես բաց էր, և կրծքամասը կոճկվում էր կոճակներով: Ունենում էր 2 կամ 4 գրպան: Կարում էին հմուտ կանայք, իսկ 1920-ական թվականներից սկսած՝ գյուղական դերձակները: Գրպանները

325 Գոտու գեղեցկությանը կարևոր տեղ էր տրվում, որովհետև մինչև 19-րդ դարի կեսերը պահպանված շալե ընտիր ու զարդարուն գոտին պատանիների կտրիճության նշանն է եղել ոչ միայն Ջավախքում ու Կարինում, այլև ողջ պատմական Հայաստանում: Կտրիճի սիմվոլիկ նշաններից էր ձին, հրեղեն նժույգը, որը նույնիսկ տիրոջ հուղարկավորության ժամանակ էլ տարվում էր գերեզմանոց: Ահա այս առումով ուշագրավ է հեքիաթում այն հանելուկը, թե ինչն է, որ հորս հեծա, մորս հագա և ինձ կապեցի: Նժույգը հորական ժառանգությունն է, որ հեծնում է կտրիճը, մորը հագնելը խորհրդանշում է մորական օժիտի հետ եկած ժառանգությունը, որ հարսը բերում էր իր զավակներին հագցնելու միտումով: Իսկ գոտին կտրիճի սեփականն է, նրա ինքնուրույնացման խորհրդանշանը: Մենք ունենք **գոտեմարտիկ** տերմինը, որն ամբողջապես վերաբերում է կտրիճին: Սա այն գոտուց է ծագում, որը կապվում էր կտրիճի մերկ մեջքին՝ նրանից կառչելու համար: Ամենայն հավանականությամբ այս կաշվե գոտին հնագույն ժամանակներում ունեցել է նաև կրոնական սրբազան նշանակություն, որպես մենամարտության հաջողության նշան: Գոտին բռնելուց են ծագել **գոտեմարտ**, **գոտեմարտիկ** և **գոտեմարտություն** ձևերը:

վերադիր էին, որպիսի ձևը հայկական բաճկոնի վրա է ավելացել քաղաքայինի ազդեցությամբ: Ցուրտ ժամանակ հագնում էին արխալուղի վրայից, ամռանը՝ առանց արխալուղի:

Չուխան պատանիները հագնում էին 12-13 տարեկան հասակից: Կարում էին գառան բրդից, մոխրագույն շալից, իսկ ունևորները՝ նաև սպիտակ մահուդից, որը մասրա էր ունենում: Ինչպես մեծերի, պատանիների չուխան էլ կոճակ չէր ունենում: ունևորները սրա վրայից կապում էին կաշվե կախիկավոր գոտի՝ փոքրիկ դաշույն-ներով հանդերձ:

Չուխան փոխ է առնված չերքեզներից՝ Վրաստանի միջնորդությամբ:

Գլխարկները մի քանիսն էին՝ ազգային և ոչ ազգային: Ազգայինը, որ հատուկ էր պատանիներին, **արախչինն** էր: Դրա վերապրուկները Փոքր Խանչալլիում պահպանվել էին մինչև 1880 ական թվականները: Այն գլանաձև էր՝ կլորավուն գագաթով: Այստեղ արախչինը կարում ու զարդարում էին աղջիկները և դրանից մի քանիսը դնում օժիտի մեջ, փեսացուների տան պատանիներին նվիրելու համար: Կտավե հիմքի վրա գույնզգույն թելերով զարդեր էին ասեղնագործում:

Արախչինն զուգահեռ գործածվող սուր կոնաձև **փափաղը** հատուկ էր նաև ամուսնացած երիտասարդներին, բայց այն առավելապես պատանեկան էր: Պատանի հովիվները սիրում էին գործածել սպիտակ և երկար բուրդ ունեցող մորթուց կարած այդ գդակը[326]:

Այս գլխարկը ազգային էր, նաև միանգամայն հարմար լեռնային-ամառանոցային կենցաղին, ինչպես և ձմռանը: Դրա տեսակները կարվում էին նաև կարմրավուն ոչխարենուց: Պատահում էին նաև սև-սպիտակ խատուտիկ գլխարկներ: Բոլոր դեպքերում պատանեկան մորթե գլխարկը պահպանում էր կոնաձևությունը:

Պատանիները, երիտասարդները և միջին տարիքի տղամարդիկ ամռանը գործածում էին վրացական **քուդին՝ քաչա** հորջորջմամբ:

Երեսնոցները տֆտիկից և սպիտակ բրդաթելից էին գործում:

Գուլպաներ: Պատանիների գուլպաները սովորականներից ավելի գեղեցիկ զարդեր էին կրում, սակայն տոնական լինելով՝ աշխատանքի ժամանակ օգտագործում էին սպիտակ գուլպաներ: Վերջիններս հյուսվում էին նաև ոչխարի բնական սպիտակ-շիկավուն բրդաթելից, որի վիզը (ռեզին) գործվում էր **էրկու թարս, էրկու շիտակ** ձևով:

12-15 տարեկան պատանիների **դոլաբ-դոլաբ** կամ **սրա-սրա** գուլպաները[327]

326 Հետագա օրերի ընթացքում պատանին բուրդը ծեղ առ ծեղ ոլորում էր, երկտակ ոլորք տալիս և ծայրը հանգուցում էր:

327 Դոլաբ-դոլաբ կամ սրա-սրա էին նշանակում հորիզոնական զոլերը: Մեր ձեռքի տակ գտնվող այս զոլավոր գուլպաների ֆոնը սպիտակն է: Թաթերի երկարությունը 21, իսկ բկերինը՝ 15 սմ է: Իսկ 20-21 տարեկանների սպիտակ և այլ գույնի գուլպաների թաթերն ունեն 24, բկերը՝ 18 սմ

հյուսվում էին սպիտակ և մուգ կապույտ թելերից: Վիզը գործվում էր **էրկու թարս, էրկու շիտակ** ձևով:

Կային բարդ հյուսվածքով տարբեր գույնի գուլպաներ, որոնք 18-21 տարեկան պատանիների համար միայն տոնական էին և որոնք ամուսնության դեպքում հագնում էին նաև պսակի գնալիս: Աղջիկները փեսացուների համար օժիտի մեջ ունենում էին նաև այդպիսի գուլպաներ: Թեև սրանք պատանեկան էին, որովհետև ծաղկում էին ծաղկող տղաների հետ, բայց այդպիսիք օգտագործում էին նաև ամուսնացած երիտասարդները:

Ոտնամանները գերազանցապես տրեխներ էին: Ընդ որում, հարուստ տնտեսություններում շուլալկարից բացի, ունենում էին նաև հասլկարով կամ բարդ հյուսվածքներով տրեխներ:

Զարդեր: Պատանիները շարունակում կամ 12-15 տարեկան հասակում սկսում էին այլևս ծակել-կրել աջ ականջից կախվող **մանգիշ օղը**: Ունենում էին պղնձե դրամից ինքնաշեն մատանի: Վերնաշապիկի լայն թեզանիքի վրայից կապում էին բազկի փաթաթաններ, որոնք պարզապես պատանեկան ապարանջաններ էին 5-7 սմ լայնությամբ ու զարդարվում էին գունավոր թելերով և ուլունքներով: Կոճկվում էր երկու կոճակով: Հարսնացուներն այս ապարանջանը երբեմն հյուսում էին հելունով, գունավոր թելերից և դնում օժիտի մեջ՝ ազաբ տեգորը նվիրելու համար:

Պատանիներն ունենում էին նաև զարդարուն փաթաթաններ, սրունքներին կապելու համար: Ժողովուրդը հիմնականում գործ էր ածում **տոլաղ** անունը[328]: Այն գետնագործ շալ էր 13 սմ լայնքով և 150 սմ երկարությամբ, միշտ սև կամ էլ մուգ կապույտ գույնի: Մեկ ծայրն ուներ 15-20 սմ երկարության ծոպաթելեր, որոնք գործվածքի հենքի շարունակությունն էին կազմում: Ծոպավոր ծայրին՝ 10-12 սմ երկարության վրա համամեջ քառակուսի շրջանակներ էին ստեղծում կարմիր, կանաչ և կապույտ գույնի կտորներով՝ իբրև զարդեր: Փաթաթում էին այնպես, որ այդ զարդարուն մասը ոտքի դրսի մասում լիներ: Ծոպերը մտցնում էին փաթաթածի վերևի արանքը՝ մի փունջ կախ գցելով:

Պատանիները այն փաթաթում էին սրունքների բարակ մասերին՝ գուլպաների վրա: Ժամանակի ընթացքում սովորություն դառնալով՝ փաթաթանն օգտագործում էին նաև երիտասարդները և միջին տարիքի տղամարդիկ:

Հովիվ պատանիները սրունքներին քարմանով մանված գունավոր հաստ թելից փաթաթան էին ձևացնում:

Մարմնի զարդարում: Պատանին շարունակում էր հոգետան վրա խոպոպոք թողնել, որի երկարությունը երբեմն հասնում էր մինչև կզակը և սրանով էլ տարբերվում էր մանկականից: Իսկ գլխի մյուս մասերն ամբողջությամբ խուզվում էին:

երկարություն:

328 **Տոլաղ** բառը թրք. **տօլագ, տօլաղ** ձևերից է:

Զենքերը: Պատանիները որոշ վայրերում մինչև 20-րդ դարի սկզբները պահպանել էին կոպալով զինվելու սովորությունը՝ արտահագուստի տակ՝ ուսից կախելով: Շատերը դաշույն և դանակ էին ունենում:

Երիտասարդների զգեստներ: Երիտասարդական զգեստներ ենք համարում 22-ից մինչև 35-ն անց տղամարդկանց հագուստները: Այստեղ են հաշվվում նաև նորապսակների զգեստները, որոնք որոշ չափով տարբերվում են պատանեկանից: Ընդ որում, երիտասարդների շարքն անցած պիտի համարել նաև այն պատանիներին, որոնք ամուսնանում էին 21 տարին չլրացած:

Երիտասարդների զգեստներ: 22-25 տարեկան տղամարդկանց շապիկը, որ կարվում էր ամիրկայից, 1-2 սմ լայնության օձիքով էր՝ 1 կոճակով: Կրծքի բացվածքը ևս մեկ կոճակ էր ունենում: Չքավորը, որ շապիկ չէր ունենում, մարմնի վրա ամիրկայից օձիքավոր կրծկալ էր կապում, որը ստորին ծայրերին կապիչներ էր ունենում:

Վարտիքը մինչև 20-րդ դարի սկզբները խոնջանով էր: Կարվում էր ամիրկայից, իսկ ավելի հին ժամանակներում՝ տեղական կտավներից: Փողաբերանները թելերով կամ կոճակով էին: 1910-ական թվականներից հետո երևան են եկել կոճակավոր վարտիքներ: Չքավոր երիտասարդները մինչև 35 տարեկան դառնալը անձնական վարտիք չէին ունենում. մարմնի վրա հագնում էին կոպիտ շալվար: Այդպիսի ընտանիքներն ունենում էին մի-մի ընդհանուր վարտիք, որը հագնում էր հյուր գնացողը:

Իշլիկը, որ կարվում էր ամեն տեսակ գունավոր և չիթ կտորներից, անթև էր, աստառով: Այն օգտագործվում էր ցուրտ ժամանակ: Կուրծքը փակվում էր կոճակներով կամ չափռաստներով:

Վերնաշապիկը (բլուզ) կարվում էր կապույտ, նաև այլ մուգ կտորներից: Չքավորները նույնիսկ չթից էլ էին կարում: Օձիքը 2 սմ էր՝ 1 կոճակով, իսկ կրծքի բացվածքը՝ մի քանի կոճակով: Ձախ կողմում երբեմն ունենում էր փոքրիկ գրպան, թաշկինակի համար:

Վերնաշապիկը ոմանք հավաքում էին շալվարի մեջ և ուրիշները՝ արձակում նրա վրա և գոտի էին կապում:

Ելակ, որ փայ էր տրվում փեսացուին: Զարդարված լինելով տրեզով, այն կոչվում էր «կլապիտոնով ելակ[329]»:

Շալվարը կարվում էր ոչխարի սև, շագանակագույն և մոխրագույն բրդի շալից: 1920-ական թվականներից առաջ խոնջանավոր էր, հետո՝ կոճակավոր: Այն ուներ զույգ գրպան: Փողքերը, որ ներս էին ծալվում ու թակալվում, դրվում էին գուլպաների մեջ:

Արխալղը (արխալուղ) կարվում էր սև, շագանակագույն և մոխրագույն շալե-

329 ԱՀ, 1, էջ 243, 256:

ից: Ունևորները պատրաստում էին նաև սև կտորից: Կոճկվում էր չափռաստներով: Վրայից կապում են կաշվե գոտի: Հագնում էին վերնաշապիկի վրայից:

Բաճկոնը, որը որոշ գյուղերում **պիչակ** էր կոչվում, որոշ գյուղերում էլ՝ **սերթուկ**, կարվում էր սև ու մոխրագույն շալից: Ունևորներին հատուկ էր առաջինը, երկրորդը՝ ունեզուրկ խավն էր հիմնականում հագնում: Ձմռանը հագնում էին արխալղի վրայից, իսկ ամռանը չէին հագնում:

Պիչակն ունենում էր 2-4 գրպան:

Ինչպես երևում է, այս զգեստը հայկական այն բաճկոնի կատարելագործումն էր քաղաքային ազդեցությամբ, որը արխալղից տարբերվում էր փոքր չունենալով:

Բաճկոնը առավելապես հագնում էին մինչև 30-ը չլրացրած երիտասարդները, այդ թվում նաև նորապսակները:

Չուխան հարուստ երիտասարդների համար կարվում էր սև, իսկ չքավորների համար՝ մոխրագույն կամ շագանակագույն շալից: Ունևորները քաղաքի օրինակով կարում էին նաև սպիտակ մահուդից[330]: Բոլոր դեպքերում չուխան գոտկատեղից վեր և թևերը աստառով էին: Երկար թևաբերանները երբեմն հետ էին ծալում, որը ընդունված էր համարել բարձր տրամադրության նշան: Եզրերը զարդարվում էին տրեզով:

Հանդիսության մասնակից կամ հյուր գնացող երիտասարդները չուխայի վրայից արծաթե գոտի կամ կախիկավոր գոտի էին կապում, որի համալիրը հաճախ լրացնում էր արծաթապատ պատյանով դաշույնը: Այսպես էր զարդարվում նաև նորապսակ երիտասարդը:

Գլխարկներ: Երիտասարդների գլխարկները մինչև հեղափոխությունը բավական բազմազան էին: Մինչև 25 տարեկան տղաները պահպանում էին սուր կոնաձև գդակը (փափաղ) և վրացական քուդին: Քաղաքի օրինակով նրանք օգտագործում էին նաև շապխան (շապկա), որը կարվում էր Ախալքալաքում: Քսանհինգն անց երիտասարդները նախընտրում և դնում էին **գալիբալդի** կոչված գլխարկը:

Երեսուն տարին լրացրած երիտասարդները գործածում էին նաև մորթե այն փափաղը, որն ուներ կլորավուն-տափակավուն ձև:

Երեսնոցը գործում էին տֆտիկից և սպիտակ բրդաթելից:

Գուլպաներ: Երիտասարդների գուլպաները հյուսվում էին սև, սպիտակ, նաև՝ շիկավուն-սպիտակավուն ոչխարների բնական բրդի թելերից: Բկի ռեզինը գործվում էր միևնույն՝ երկու թարս, երկու շիտակ ձևով: Փեսայացող պատանու կամ երիտասարդի գուլպաները, Երվանդ Լալայանի հավաստմամբ, զարդարվում էին կլապիտոնով[331]:

Գունավոր թելերով բարդ գործվածք ունեցող գուլպաները Ջավախքի լուսա-

330 Փեսայացողի մահուդե չուխայի մասին վկայում է նաև Ե. Լալայանը: (ԱՀ, 1, էջ 240, 256):

331 ԱՀ, 1, էջ 243:

վորչականների մեջ ավելի շուտ են վերացել, քան կաթոլիկների մեջ: Ե. Լալայանը նշում է, թե Թորիայի, Ուճմանայի և Հեշտիայի կաթոլիկները, որ տեղափոխվել էին Խնուսից, 1880-ական թվականների վերջերին շարունակում էին հագնել **նախշուն գուլպաներ** և դրանով էլ ճանաչվում էին[332]:

Տրեխները կարվում էին բոլոր երեք ձևերով, որոնց մեջ տոնական էին համարվում հասլկարով և բարդ հյուսվածք կարով տրեխները: 20-րդ դարի սկզբներին ցածրադիր վայրերում սակավորեն տարածվել էր նաև Արցախի տրեխաձևը, որի երեսի կեսը ծածկվում էր սև թելերի խիտ ցանցով:

Օտնըմանը կամ **օտրմանը** երիտասարդները սակավ դեպքերում էին հագնում:

Ընդհանուր զգեստներ: Անցյալում տնտեսական անբավարար վիճակի պատճառով Ջավախքի հայոց ընտանիքներում միայն ունևորներին էր վիճակված ունենալ ամենօրյա և դսնավուր զգեստների լրակազմ-համալիր: Գյուղական ընտանիքների երիտասարդների և ավելի մեծերի համար ստեղծվում էր տոնական մի ձեռք ընդհանուր զգեստների լրակազմ-համալիր, որի կազմի մեջ մտնում էին ծայրահեղ անհրաժեշտները՝ վերնաշապիկը, շալվարը, արխալուղը, չուխան, արծաթե կամ կախիկավոր գոտին, թանկարժեք գդակը, օտնըմանները, դաշույնը և այծենակաճը:

Պատահում էին դեպքեր, երբ մարդիկ տան մեջ անձնական կամ ընդհանուր տոնական զգեստներ չէին ունենում: Այդ պարագայում երիտասարդները պսակվելիս և կամ հյուր գնալիս հարկադրված դիմում էին ունեցողներին և օգտագործում նրանց զգեստները, դաշույնն ու գոտին, որպիսի սովորությունը համայնքային կենցաղավարությունից էր գալիս:

Անցյալի երիտասարդները շարունակում էին կրել պատանեկան զարդեր:

Մինչև 25-27 տարեկան դառնալը երիտասարդները շարունակում էին խոպոպիք թողնել: Ոմանք հավի ճրագու էին քսում խոպոպիքին և սանրում դեպի ձախ: Այնուհետև, խոպոպիքի փոխարեն գագաթից մնչև ճակատը մազերը կարճացնում էին, իսկ մնացած մասերը՝ լրիվ խուզում: Այդ կարճ թողած մազերը հոգետան շուրջը՝ փաստորեն խոպոպիքի նոր դրսևորումն էր, որով երիտասարդն անցում էր կատարում միջին տարիքի տղամարդկանց շարքերը:

Ձեռքերն էին՝ դանակը, որ մշտապես երիտասարդի մոտ էր լինում, քչերի մոտ՝ **դաշույնը**, իսկ հազվադեպերի մոտ՝ նաև **ատրճանակը**: Որոշակիորեն զինատեսակ էին ընկալվում նաև **գավազանն ու մտրակը**: Սրանք երիտասարդը օգտագործում էր հաճախ գյուղամիջում, երբ այցելում էր շուն ունեցողների տները: Հատկապես մահակ-գավազանը անբաժան էր երիտասարդից գյուղից դուրս գործով տեղ մեկնելիս:

Միջին տարիքի տղամարդկանց զգեստներ: Այս դասի մեջ մտնում են 40-50 տա-

332 ԱՀ, 1, էջ 174:

րեկան տղամարդիկ, որոնց **շապիկը** մինչև 1880-ական թվականների վերջերը կարվում էր ամիրկայից և կտավից, որ հասնում էր մինչև ծնկները. «Կուրծքը մինչև պորտը բացված է և կոճկվում է բկի մոտ: Թևերը հետզհետե նեղանալով՝ հասնում են մինչև դաստակը, ուր և կոճկվում են[333]»:20-րդ դարի սկզբներին կարվում էր նաև միտկալից, երբ, ինչպես երևում է, տեղական կտավն այլևս չէր օգտագործվում: Կարվում էր ձեռքով և երբեմն՝ մեքենայով: Կռնակը երկտակ էր և փեշերը՝ ձագերով[334]: Ձագերով էին նաև կռնատակերը:

Վարտիքը «հագնում են...շապիկի տակից: Կարում են կտավից կամ ամիրկայից: Փողքերի լայնությունը մեկ քառորդ արշին է լինում, կապում են կողքից, վարտեցկապով[335]»: 19-րդ դարի վերջերին և 1900-ական թվականներին այն տակավին խոնջանով էր: 1900-ական թվականներին խոնջանին փոխարինելու էր կոճակը: Ստորին փողքերը ճեղքված էին մեկական վարտեցկապերով կամ օղակ-կոճակներով:

Ելակ: 1880-ական թվականների վերջերին, ինչպես հաղորդում է Ե. Լալայանը, ելակը անթև զգեստ էր, նման եվրոպական ժիլետին. «Միայն ամբողջապես ծածկում է կուրծքը, գրպաններ չունի, կոճկվում է դայթնե օղակ կոճակով: Կրծքի մեջտեղը ելակի առաջի՝ երևացող մասը կարում են պոլուսուկնոյից, լաստիկից, մահուդից և այլն, իսկ հետևի՝ չերևացող մասը՝ հասարակ չթից[336]»: Ելակն աստառով էր: Հագնում էին ցուրտ եղանակներին:

Կրծկալ, որ և դոշլուդ. «Հագնում են ելակի փոխարեն, նրան նման է, միայն աստառ չունի և ձախ կողմի երկու ծայրերը կողքից, թևի տակ, կապվում են իրար: Սրա կուրծքը հաճախ ասեղնագործած է լինում[337]»:

Ֆուֆայկա-փոյկայի կուրծքը շապիկի նման բացվածք ուներ. կոճկվում էր 3 կոճակով: Կարվում էր գունավոր, տաք կտորներից: Օձիքը 2-3 սմ էր: Հագնում էին ելակի վրայից:

Շալվարը «Կարում են շալից. իջնում է մինչև ոտների երեսը և 3 քիլ լայնություն ունի: Վերի մասը մի քիլ լայնության կարում են կապույտ ամիրկայից կամ կարմիր կտորից. այս մասը կոչվում է **փոխ**. սրա միջից անցնում է **ուշխուրը**, որ ամուր կապում են կողքից: Շալվարի կողքերից գրպանի փոխարեն թողնում են բացվածքներ[338]»:

Խոնջանավոր շալվարի նստատեղը 19-րդ դարի սկզբներին դեռևս բավական լայն էր ու կախ, ինչպիսին որ եղել էր Կարինում: Փողքերը ներս ծալած եզրերով

333 Ե. Լալայան, Ջավախք (ԱՀ, 1, էջ 230):

334 Առածն ասում է. «Ձաք ունեցողը ձաքով շապիկ չի հագնի», որ նշանակում է՝ չքավոր է, շապիկի կողքերին խնայում է ձագեր դնել:

335 Ե. Լալայան, նշվ. աշխ. (ԱՀ, 1, էջ 230):

336 ԱՀ, 1, էջ 230:

337 ԱՀ, 1 էջ 230:

338 Անդ. (ԱՀ, 1, էջ 230):

էին: Բայց 40-45 տարեկանների համար, 1900-ական թվականներից սկսած, առավել բնորոշը կոճակավոր շալվարն էր, որը սև ու կարմրավուն շալերից կարվում էր քաղաքայինի ազդեցությամբ: Չունորները մեծ մասամբ գորշավուն շալից էին կարում: Ամռանը փողքերը կախվում էին գուլպաների վրա, իսկ ցրտերին՝ գուլպաների մեջ:

Արխալուղը «Հագնում են ելակի և շալվարի վրայից: Կարում են կապույտ ամրիկայից, պոլուսուկնոյից, սև դաղիֆից և այլն: Արխալուղի մեջքի վրա, բյուզմայով սեղմվելով՝ մի թիզ վայր է իջնում, որը և կոչվում է փեշ: Սրա վրա կողքերից բացած է մի -մի գրպան: Արխալուղի կուրծքը եռանկյունաձև բացված է և պորտի մոտ երկու կամ երեք դայթնե կոճկով կոճկվում է[339]»: Գաղթից հետո, երբ 1918-1920 թվականներին շատ դժվար ժամանակներ էին կյանքի պայմանների առումով, գրեթե բոլոր արխալուղները շալից էին: Բնական կարմիր և սև բրդից հագնում էին ունևոր և միջակ խավերը, իսկ գորշից՝ չքավորները: Օձիքը կանգուն էր՝ 3-4 սմ լայնությամբ. կրծքի բացվածքը և օձիքը կոճկվում էին չափռաստներով: Մեջքը սեղմված էր, փեշերը՝ ճագերով: Վերջիններս հասնում էին մինչև ազդրերի կեսը: Կրծքի ձախ կողմում ոմանք գրպան էին ունենում ժամացույցի համար: Ունևորները կարում էին նաև սև լաստիկից: Գոտին կապում էին արխալուղի վրայից:

Այս տարիքի տղամարդկանց շալե արխալուղը, որ վկայված է 19-րդ դարի վերջերի լուսանկարով, ամբողջովին կրկնում է **արմենական** կարծվող այն զգեստը, որը հաստատագրված է Պերսեպոլիսի հայտնի հուշարձանի վրա՝ հարկատուների տեսքով, մ.թ.ա. 5-րդ դարում[340]:

Այս նմանությունը կասկած չի հարուցում, որ արմենական այդ վերնազգեստը հայ-պարսկական մոտիկ հարաբերությունների ժամանակ, անշուշտ, լայն տարածում է գտել փոխադարձաբար երկու ժողովուրդների ու երկրների սահմաններում:

Դոշով արխալուղ էր կոչվում բլուզաձև զգեստը, որի «Կուրծքը ձախ թևի անրակի մոտից կոճկվում է մինչև պորտը դայթնե կոճակով. այդպիսի կոճակների մի շարք ևս կարվում է աջ կողմում ներդաշնակության համար»[341]:

Պիչակը սովորաբար կարվում էր սև, կարմրավուն և գորշ շալերից: Առավել սիրվածը սև գառան բրդից գործած շալն էր: Գոտկատեղը սեղմված էր, որից սկսած կողքերին երեքական ճագ ուներ: Օձիքը կանգուն էր՝ 4 սմ լայնքով ու 1 չափռաստով: Ուներ զույգ գրպաններ: Ցրտի դեպքում հագնում էին արխալուղի վրայից:

Չուխան ունևորները կարում էին սև, կոշտ կամ գետնագործ շալից, իսկ չունևորները՝ գորշ շալից: Չքավորականը մասրա չէր ունենում: Եվ դա ըստ էության բուն ազգային չուխան էր՝ սերված ֆարաճիկից:

---

339 Անդ, էջ 230:

340 Այդ պատկերը տես E. Schmidt, Persepolis, Chicago, 1953, նկ. 29, Առաքել Պատրիկ, Հայկական տարազ, Երևան, 1967, էջ 19, և տախ. 4-2 և Ա.Ա.Մարտիրոսյան, Թեյշեբանի քաղաքը, Երևան, 1961, էջ 140:

341 Ե. Լալայան, նշվ. աշխ. ԱՀ, 1, էջ 230:

Ընդհանուր առմամբ չուխայի «Մեջքի վրա բյուզմայով սեղմվելով և գրկելով մեջքը՝ լայն իջնում է մինչև ծնկներից քիչ ցած. այս մասը կոչվում է փեշ: Կուրծքը եռանկյունաձև բացված է և պորտի մոտ երեք դայթնե կոճակով կոճկվում է: Թևերը հետզհետե լայնանում են մինչև 9-12 վերշոկ և հասնում են մինչև ձեռքի կոճիկները. գործի ժամանակ թևերը հետ են ծալում, այնպես որ ամբողջ դաստակը մնում է բաց: Չուխայի բոլոր եզրերին կարում են դայթան[342]»:

Մեջքը և թևերը աստառով էին:

Ֆարաճիկ վերարկուն սակավ էին օգտագործում և այն էլ մեծ մասամբ ուսերին առնելով: Կարվում էր սև և կարմրավուն՝ չունևորների շրջանում՝ սպիտակ շալից: Օձիք չուներ և կուրծքը եռանկյունաձև բացվածքով էր: Ցրտի դեպքում հագնում և վրայից գոտի էին կապում: Առավելապես օգտագործում էին գութանավորները և հովիվները, որոնց համար ֆարաճիկը այծենակաճի դեր էր կատարում:

Ջավախքի որոշ գյուղերում ֆարաճիկի մեջքը զարդարում էին կենաց ծառի նախշով:

Մուշտակը[343], որպես տաք վերարկու, գործածվում էր աշնանը, ձմռանը և գարնանամուտին ոչ միայն մեծերի, այլև շատ երիտասարդների կողմից նույնպես: Շատերը հագնում էին նույնիսկ չուխայի վրայից: Կոճկվում էր մորթուց պատրաստված օղակ-կոճակներով:

Թուլումբ (ռուսերեն՝ տուլուպ) մորթե այս մեծ վերարկուն արտակարգ լայն էր ու երկար թևերով: Դուխաբոռների թուլումբի թևերը 10-15 սմ ձեռքի մատների ծայրերից ավելի երկար լինելով՝ միաժամանակ ձեռնոցի դեր էին կատարում: Չէր կոճկվում: Չուխայի, ֆարաճիկի և մուշտակի վրայից հագնող ձմեռային ճանապարհորդը, ձիապանը և ուրիշները փեշերը կրկնակի ծածկում էին: Հետ ծալվող մեծ օձիք-գլխանոցը բքի ժամանակ կապիչներով կապվում էր ճակատին:

Մուշտակը և թուլումբը կարվում էին տեղացի մուշտակագործների կողմից:

Այծենակաճը Բարձր Հայքին ու նաև ամողջ պատմական Հայաստանին հատուկ վերարկուներից է եղել: Այն հիմնականում ծառայում էր ձմռանը, իսկ լեռներում՝ հովվական կենցաղում՝ ամառ, ձմեռ: Հասարակ այծենակաճը պատրաստել են սովորական թաղիքից՝ սուրանկյուն ուսագլուխներով: Ձախ փեշի վրա երբեմն հատուկ գրպան էր ունենում, հովվական մահակը նրա մեջ կանգնեցնելու և վերևից կապելու համար: Բնիկ ջավախահայերի օրինակով՝ Կարինից և շրջակայքից այստեղ տեղափոխված հայերը նույնպես լայնորեն սկսել էին գործածել Հյուսիսային Կովկասում արտադրվող յափունջիները, որոնցից հասարակը լերկ թաղիքից էր, իսկ տոնականը՝ բրդոտ թաղիքից:

342 Ե. Լալայան, նշվ. աշխ. Ա հ, 1, էջ 230-231:

343 Հմմտ. խրխի («...արմ. խրոխ կամ խրխա, ոչխարի մորթուց կարված մուշտակ: Նաև՝ Կենդանու մորթ, որի տակ մարդիկ ծպտում՝ իբրև կենդանի էին երևում. օրինակ՝ հեքիաթների մեջ»: Տե՛ս Ստ. Մալխասյանց, Հայերեն բաց. բառ., հ. 2, էջ 309):

Գուլպաներ: Մինչև 45 տարեկանների համար գուլպաները հյուսվում էին ճերմակ թելից, որպիսիք ընդհանրապես կարճավիզ էին: 50-55 տարեկանն անց տղամարդիկ հագնում էին սև ու շագանակագույն գուլպաներ: Բոլորն էլ իրենց թելերից կապիչներ ունեին:

Փաթաթաններ: Միջին տարիքի տղամարդիկ շարունակում էին երիտասարդներին հատուկ փաթաթանների օգտագործումը՝ առանց ծոպերի և նախշազարդի: Գուլպաների վրայից կապվող այս փաթաթանները ոլորքը տաք պահելու համար էին:

Երեսնոցը մեծ մասամբ սպիտակ բրդաթելերից էին գործում:

Մասեր: Տղամարդիկ գոմասենյակների բազմոցների վրա բարձրանալիս մասեր էին հագնում, որ սովորաբար գործվում էին մուգ գույնի թելերից: Բայց լինում էին նաև կարմիր ներկած թելից գործած մասեր:

Տրեխներ: Տղամարդիկ մեծ մասամբ, իսկ չքավորները՝ գրեթե միշտ, օգտագործում էին շուլալկարով տրեխներ: Հալկարով տրեխը տոնական էր: Շատ քչերն էին, որ բարդ հյուսվածքով տրեխ էին ունենում:

Օտնըմանները, որ նաև օտըման են կոչվում, ձևով ընդհանուր էին երիտասարդների և ծերերի համար: Տակը հաստ կաշվից էր, երեսը՝ սև կաշվից:

Գլխարկները բազմազան էին: Ամենաբնորոշը կարմրավուն ոչխարենուց կարված կլորավուն-տափակավուն փափաղն էր՝ մորթե աստառով: Աննշան սրացողկոնաձև փափաղը շատ քչերն էին օգտագործում: Ֆասը հազվադեպ էր: Վրացական քուդին մեծ մասամբ տաք եղանակին էին գործածում: Կովկասյան գլանաձև սև փափաղները տոնական էին համարվում: Շապխան քաղաքային էր:

Տոնական զգեստները մեծ մասամբ ընդհանուր էին, որպիսիք տեսանք երիտասարդական հագուստների լրակազմը ներկայացնելիս:

Զարդերից էին՝ մատանին, որ արծաթից կամ վարշաղից էր և մանգիշ օղը աջ ականջին, որ գալիս էր մանկությունից: Երկար թաշկինակը և ծխախոտի մեծ ու նախշուն պարկը կապում էին գոտուց:

Սանրվածքը: Գյուղացի տղամարդը բեղեր էր պահում, որովհետև հավատում էր, Աստծմե եկած բան է, և նրանով նա երդվում էր: Բեղերը ոմանք կարճ և ոմանք շատ երկար էին թողնում: Վերջինիս դեպքում ծայրերը խնամքով ոլորում էին: Այդպիսի բեղեր ունեցողները երբեմն երեսն ամբողջապես ածիլում էին: Կային նաև ինչպես բեղեր, այնպես էլ միաժամանակ մորուք թողնողներ: Ոմանք թողնում էին կարճ մորուք և կարճ բեղեր: Հազվադեպները ունենում էին նաև այծամիրուք:

Սգո զգեստներ: Հայ գյուղացին հազվադեպ պարագայում միայն ունենում կամ էլ անհրաժեշտաբար ներկելով ստեղծում էր սգո սև զգեստներ: Սակայն եթե նա մինչև ննջեցյալ ունենալը կանոնավոր ածիլվում էր, ապա հարազատի կորստյան օրից մինչ քառասունքը լրանալը երեսին ածելի չէր մոտեցնում: Այս սովորույթը այսօր էլ պահպանվում է գրեթե բոլոր դասերի մեջ:

Ծերունական զգեստներ: Բացի ունևորներից, ծերունիները մեծ մասամբ առօրյա հագուստներով էին լինում միշտ: Իսկ տոնական օրերի համար նրանք ևս ունենում էին ընդհանուր, պահած զգեստներ, գլխարկ և ագանելիքներ:

Շապիկը ձևով ու չափերով նույնն էր, ինչ միջին տարիքի տղամարդկանցինն էր: Ծայրահեղ չքավորները շապիկ չէին ունենում. դրան փոխարինում էր ֆուֆայկան:

Սովորույթի համաձայն զավակները ծերացած ծնողներին միտկալից շապիկ էին հագցնում, որ հարգանքի-ծնողասիրության և պարտաճանաչության նշան էր ընկալվում: Որոշ վայրերում ժողովուրդը (համայնքը) նույնիսկ սովորությունը վերահսկելու հավակնություն էր ստանձնել:

Վարտիքը կարվում էր ամիրկայից կամ միտկալից, որը 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին խոնջանավոր էր: 1900-ական թվականներին զուգակցվում էին նաև կոճակավոր վարտիքները:

Ելակ: Անթև զգեստ էր: Հագնում էին շապիկի վրա: Բացվածքը կոճակավոր էր: Ծերերի համար առավել բնորոշը մորթե ելակն էր, որ կարվում էր մշակված ու կարճ խուզած մորթուց: Օղակները մորթուց էին, իսկ կոճակները՝ մորթե գնդիկներից, կամ փայտիկներից: Մորթու բացակայության դեպքում ելակի երեսի և աստառի մեջ բուրդ լցնում և կարում էին վերից վար ուղղությամբ:

Ֆուֆայկան ուներ շապիկի կարվածք. օձիքը կանգուն էր՝ 1-2 սմ լայնությամբ: Կրծքի բացվածքը կոճկվում էր 3 կոճակով: Կարվում էր տաք կտորներից և հագնում էին ելակի վրայից:

Շալվարը կարվում էր սև շալից: Ոմանք հագնում էին նաև գորշ շալից, որ ստացվում էր սև ու սպիտակ բուրդը խառն գզելուց: Աղը բավական լայն էր ու կախ. խոնջանը և աղի այդ մեծությունը ցույց են տալիս, որ 1910-ական թվականներին այս շալվարը պահպանել էր Կարնո տաբատի ձևը: Խոնջանի փողը, ինչպես տեսանք Ե. Լալայանի վկայաբերումից, կարվում էր կարմիր կամ կապույտ ամիրկայից: Ոտների փողաբերանները աստիճանաբար նեղանում էին, որը հատուկ էր հնին և դրվում էին գուլպաների մեջ: Բայց սոնապաններ չհագնողները փողերը բաց էին թողնում գուլպաների վրա:

Արխալուղը կարվում էր սև շալից. ոմանք օգտագործում էին նաև բնական կարմրավուն և արհեստական գորշավուն շալից արխալուղներ: Ձևը նույնն էր, ինչ տեսանք միջին տարիքի տղամարդկանց մոտ: Արխալուղի վրայից շալե կամ այլ գոտի էր կապվում:

Գոտիներ: Տարեցները երկու տեսակ գոտի ունեին. մեկը կաշվե գոտին էր, որ երբեմն տեղերում հասված կաշվից էին պատրաստում և երբեմն՝ գնում ֆաբրիկայի գոտին: Երկրորդը շալե գոտին էր, որ պատրաստում էին գույնզգույն կամ զոլավոր կտորներից՝ թեթև ոլորք տալով: Կապում էին արխալուղի վրայից՝ 2-3 անգամ փաթաթելով: Կտորը փոխարինել էր 19-րդ դարին հայտնի գույնզգույն շալին, որը

հատուկ գոտու համար էր գործվում: Կարնո սովորությամբ այն ուներ երկու նշանակություն՝ մեջքը հավաք ու տաք պահելը և ծիսական լինելը: Այս գոտու մեջ երբեմն դրամ էին պահում, իսկ վարժապետները՝ կոթավոր թանաքաման:

Պիչակը կրկնում էր այն ձևերն ու չափերը, որոնք տեսանք միջին տարիքի տղամարդկանց մոտ: Հագնում էին ցրտերին՝ արխալուղի վրայից:

Չուխան կարվում էր թե հորի վրա գործած և թե գետնագործ շալից: Ծերունու համար ընդունվածը սև գույնն էր: Սակավապետները հագնում էին գորշ չուխա: Վերին կեսը և թևերն աստառով էին: Ցուրտ եղանակին սրա վրայից գոտի էին կապում:

Ֆարաճիկը սև էր: Չքավորները հագնում էին նաև սպիտակ ֆարաճիկ:

Գլխարկներ: Կարինից գաղթած տարիներին գործածել են **քիլլահ**[344] գլխարկը: Գլխարկը կանգուն պահելու համար սրա միջուկը իբրև թիթեղից է եղել: Վերջինիս վրա փաթաթելիս են եղել այն փաթաթանը, որը շագանակագույն կամ կապույտ կտորից էր լինում:

Գալիբալդի էր կոչվում այն փափաղը, որը գյուղերում կարում էին նորածին գառան գանգուր մորթուց[345]: Սրա գագաթը փոքր-ինչ նեղ էր, որը սեղմելով երկծալ էր արվում ճակատի ուղղությամբ: Գլխարկը տոնական էր: Այն մտնում էր ընդհանուր տոնական տարազի լրակազմ-համալիրի մեջ և գործածվում համապատասխան անձանց կողմից:

Փոստե փափաղը կարվում էր հասարակ մորթուց: Այն թեև ուներ գալիբալդի փափաղի ձևը, բայց գագաթը ներս էր ճնշվում:

Ֆասը, որ 5 սմ երկարության ծոպով էր, օգտագործվում էր տան մեջ, իսկ տաք եղանակներին՝ նաև դրսում:

Գուլպաները սև էին լինելու, բայց հագնում էին նաև բնականից շագանակագույն գուլպաներ: Առնապանը ծերունուն շատ էր հատուկ: Իսկ եթե առնապաններ չէր ունենում, շալվարի փողաբերանները իջեցնում էր գուլպաների վրա: Այսպես էին հագնում հատկապես տիրացու վարժապետները, քահանան և գյուղական մտավորականները: Իսկ եթե ծերունին առնապան էր հագնում, շալվարը նույնպես գուլպաների մեջ էր դնում:

Ձեռնոցներ ունենում էին բոլոր հասակի տղամարդիկ: Գործում էին 1, 2, 5 մատնանի ձեռնոցներ բրդաթելից և տֆտիկից:

Սև Մասեր ծերունին օգտագործում էր ցրտերին՝ հագնելով գուլպաների վրայից:

Տրեխները կարում էին հասլած կաշվից, հասլկարով, բայց շատ ծերունիներ

344 Այս բառը ծագում է պարսկերեն **քուլահ** (գլխանոց) բառից: Թուրքերենում այն **քյուլախ** էր կոչվում:

345 Գանգուր ունեցող գառանն իսկույն շապիկ էին հագցնում և երկու ամիս հետո սրա սև ու փայլուն մորթին աշն էին դնում:

հասարակ տրեխներով էին լինում: Ցրտերի դեպքում տրեխների մեջ ոչ միայն ծերունիները, այլև բոլոր տղամարդիկ և կանայք դուրս գնալիս փափուկ խոտ էին դնում:

Օտնըմանները ձևով ընդհանուր էին:

Զարդեր: Ծերունին զարդարման էր դիմում հատկապես տոնահանդեսներին մասնակցելիս: Այդ պարագայում նա արծաթե գոտի էր կապում ու տոնական գլխարկ դնում: Իսկ իբրև անբաժան զարդ՝ նա իր կողքից կախ էր պահում գունազարդ մեծ թաշկինակը և ծխախոտի նախշուն պարկը. իբրև քրտինքը և արցունքները քամող միջոց և որպես պատշաճության նշան: Մանգիշ օղը հազվագյուտ ծերունիների էր հաջողվում պահպանել մինչև մահը և իր հետ գերեզման տանել:

Սանրվածքը կայուն ձև չուներ, թեև բնորոշը չածիլվելն էր, երկար բեղեր ու մորուք թողնելը:

Քաղաքային արական սեռի զգեստներ: Ե. Լալայանը քաղաքացի տղամարդկանց զգեստները ներկայացրել է երկու պարբերությամբ, իսկ երիտասարդների զգեստների մասին ակնարկ էլ չունի: Այստեղ կներկայացնեմ Լալայանի ակնարկները:

Շապիկ, որ կարվում էր «...քաթանից, ոչ այնքան երկար, որքան գյուղացիներինը, կուրծքը երբեմն ասեղնագործած:

Վարտիք. նույնպես քաթանից կամ ամիրկայից, հագնում են շապիկի վրա. վարտիքի փողը դնում են գուլպայի մեջ. իսկ սրա վրայից ոմանք փաթաթում են **տոլաղ**մի վերշոկ լայնության և մի արշին երկարության քաթան, մի ծայրը թել կապած:

Արխալուղ. կուրծքը չափռաստով կոճկած. կարում են լաստիկից, մախմուրից և այլն:

Շալվար. սովորաբար մահուդից, 1/4 արշին լայնության:

Չուխա կամ **չերքեսկի (չարքասկի)**. մահուդից, բավական երկար, բոլոր եզրերը բյուքմա կարած:

Արծաթե քամար. **չերքեսկու (չարքասկու)** վրայից են կապում:

Վերարկու կամ **յափունջի** (տառատոք) առնում են ձմեռը:

Գլխին ծածկում են գդակ (շափխա) կամ գալիբալդի:

Ոտներին հագնում են կոշիկ և կրկնակոշիկ[346]»:

Պատանեկան տարազ: Մինչև 1918-ի գաղթը, քաղաքի պատանի տղաները հագնում էին շքեղ օձիքով (կոսովորոտկա) վերնաշապիկ: Ճտքավոր **չուստերն** ամենօրյա կոշիկներ էին, որ նորույթ էր, ըստ երևույթին Ալեքսանդրապոլից կամ Թիֆլիսից ներմուծված: Դրա հետ մեկտեղ այդ նույն վայրերից մուտք էր գործել սև սատինից կարվող լայնափող շալվարը, որ հայտնի էր **լոթու շալվար** անունով: Սրա փողքերը

346 ԱՀ, 1, էջ 231:

դրվում էին նշված չուստերի ճտքերի մեջ: Չուխան կարվում էր մահուդից: Գլխարկներն էին՝ շլապկան, ղազախի փափաղը և գլանաձև փափաղը:

Ձեռնոցները և երեսնոցները մեծ մասամբ տֆտիկից էին, որ գործում էին քաղաքացի կանայք և կամ ձեռք էին բերում գյուղացիներից:

Գյուղական աղջնակների զգեստներ: Այստեղ ներկայացվում են մեկից հինգ տարեկանների հագուստները, որոնք 19-րդ դարի վերջերից մինչև 20-րդ դարի առաջին քառորդը պատրաստվում էին ֆաբրիկայի կտորներից և աննշան չափով՝ շալերից: Ֆաբրիկային կտորներից առաջ էլ մանկական հագուստները կարվում էին տեղական նուրբ կտորներից՝ միշտ նկատի ունենալով մանկան առողջապահությունը:

Շապիկը կարվում էր փափուկ չթերից ու միտկալից, առանց օձիքի:

Ոտաշորն անցյալում 1-5 տարեկան աղջնակների համար անծանոթ էր:

Փեշը[347] կարում էին նուրբ կտորներից՝ նաև չթից՝ աստառով: 1-3 տարեկաններիի բամբազե փեշը ուսերից կախվում էր երկու կապիչներով: Կոճկվում էր որովայնի վրա և երբեմն՝ կողքից: 4-5 տարեկանների փեշերը կարող էին պահել միայն մեկական կոճակները:

Դայրան 1-5 տարեկանների համար անձով էր, այսինքն՝ վերից վար ամբողջական էր: Կարվում էր սև ու կապույտ լաստիկից, ծաղկավոր կտորներից և, մանավանդ, վառվռուն չթերից: Թեզանիքը նեղ էր, երբեմն՝ կոճակով: Պատահում են վերևը կապույտ կամ կանաչ գույնով, իսկ ներքևը՝ կարմիր դայրաներ: Ոմանք նույնիսկ թևի կեսը կարմիր և մյուս կեսը՝ կանաչ էին անում:

Գոգնոցը, որ կտորից էր կարվում, գործածվում էր 2 տարեկանից սկսած: Գրպանով էր: Կարվում էր վառ գունավոր չթից կամ միագույն կտորից:

Բաճկոնակը 2-5 տարեկան աղջնակների համար կարում էին գունավոր լաստիկներից և այլն: Այն քաղաքային ձևով ծալվող օձիք էր ունենում, կոճկվում էր 2 կոճակով: Հագնում էին դրսում:

Գուլպաները խայտաբղետ էին: Հյուսվում էին ճերմակ, կարմիր, սև, շագանակագույն թելերից: Բերանները հասնում էին մինչև ծնկատակերը և թելերով կապվում էին: Կային նաև աղջնակների կարճավիզ կրկնագուլպաներ[348]:

Մասերը, որ նույնպես կրկնագուլպաների դեր ունեին, գործում էին հաստոտ թելից: Սիրված գույներն էին՝ կարմիրը, կապույտը և կանաչը: Բացվածքի եզրին կոճակ էր կարվում: Ուշ մաշվելու և չոր մնալու համար մասերի տակերը փոստ էին կարում: Կոճկվում էին մեկական կոճակով:

---

347 Այստեղ և այսուհետև ամենուրեք փեշ կամ դովր բառերը գործ ենք ածելու յուրկա բառի փոխարեն:

348 Ե. Լալայանը հաղորդում է, թե «Մանր տղաներն ու աղջիկները... Տեառնընդառաջի օրը հատուկ այս նպատակի համար գործված գուլպաներ կամ արախչիներ են ձգում կրակը, որպեսզի Տիրոջից շնորհք ստանան» (ԱՀ, 2, էջ 264):

Փոփոլ էր կոչվում մանկան ոտնամանը, որ կարվում էր քաղաքում և գյուղերում: Երբեմն կոճկվում էր մեկ կոճակով:

Ղավուղը կարում էին սպիտակ, կարմրավուն և այլ կտորներից՝ ժանյակներով զարդարելով: 1-5 տարեկան աղջնակներն ունենում էին 3 տեսակ գլխանոցներ: Երեխան որքան փոքր էր, այնքան սազական էր ղավուղը: Ղավուղի կենտրոնին կարում էին սև ֆոնով և սպիտակ պուտերով **ակնիլուն** կամ կիսալուսնի ձև ունեցող փուլ:

Երկրորդը բրդաթելից հյուսած գլխանոցն էր՝ հորիզոնական զոլերով: Օրինակ, կարմիր ֆոնի վրա զոլեր էին ձևացնում սպիտակ և կապույտ թելերով: Գագաթի վրա միշտ առկա էր ֆասին հատուկ ծոպը՝ ընդհանուր ֆոնի գույներով: Ստորին մասը ռեզինով էր՝ գլխարկի մեկ երրորդի չափով, թարս ու շիտակ գործվածքով: Սիրված գույներն էին՝ ճերմակը, կարմիրը, կանաչը, կապույտը և զոլավորությունը:

Երրորդը լաչակն էր, որ սպիտակ, նաև չքչքիկ կտորներից էր: Հանգուստում էին ծոծրակի կամ ճակատի վրա:

6-11 տարեկան աղջնակների հագուստներ:

Շապիկը չքից էր, միտկալից, թևերով, երբեմն մեկ կոճակով կամ առանց կոճակի:

Օտնըշորը կարվում էր միտկալից կամ բյազից: Երկար էր և դրվում էր գուլպաների մեջ: Կոճակը պորտի վրա էր, իսկ կապիչավորի կապերը՝ երկու կողքերին:

Իշլիկը թևավոր էր, կարված բամբազյայից և այլ կտորներից՝ գունավոր կամ սպիտակ: Թևաբերանն առանց թեզանիքի էր: Հագնում էին շապիկի վրա:

Փեշը գունավոր կտորներից էր՝ 1 կոճակով. կոճկվում էր որովայնի վրա:

Անձով փեշ (անձով յուբկա) էր կոչվում պարզապես ռուսական սարաֆանի ձևի զգեստը, որ կախվում էր ուսերից լայն ժապավեններով:

Դայրան կարվում էր կարմիր, կապույտ, կանաչ կտորներից: Թևաբերանները կոճակով էին կամ անկոճակ:

6-11 տարեկան աղջնակների զարդերը ուլունքե մանյակներն ու վզնոցներն էին և արծաթից, ոսկուց ու վարշաղից պատրաստված օղերը: Հմայիլ զարդերը կրճատվում էին: Ձմռանը 1 կամ 5 մատնանի ձեռնոցներ էին ունենում: Գործում էին կարմիր, ճերմակ, սև թելերից:

Պատանի աղջիկների զգեստները: Այս խմբում ընդգրկվում են 12 - 21 տարեկան աղջիկների հագուստ-կապուստները: Օրինաչափորեն՝ որքան մոտենում էր աղջիկների ամուսնությունը, զգեստներն սկսում էին ավելի ճաշակավոր դառնալ, թեև ձևերը հիմնականում նույնն էին մնում:

Շապիկը կարվում էր միտկալից, ամիրկայից, երբեմն նաև չքից: Օձիքը 4 սմ էր՝ 1 կոճակով, կուրծքը՝ ճեղքված: Թևաբերանները թեզանիքներով էին, 1-ական կոճակով: Կռնատակերին եռանկյունի ձագեր էին դնում, ինչպես որ հատուկ էր մեծերի շապիկներին: Ձագեր ունենում էին նաև կողքերը՝ կռնատակերից սկսած:

Ոտաշորը ամիրկայից, կապույտ ու գորշ կտորներից էր կարվում: Աղի տեղում եռանկյունի ձագ էր ունենում:

Իշլիկը, որ թեավոր էր, աստառով կամ անաստառ էր: Թևաբերաններն ազատ էին: Կարվում էր բամբազից, գծավոր կամ վանդակավոր, գորշագույն, կապույտ, նաև բաց կարմիր գույնի կտորներից:

Ելակը կարվում էր բամբազից և այլ տաք կտորներից, երբեմն՝ աստառով: Հագնում էին ամռանը: Փեշը կարվում էր բամբազից, լաստիկից և այլն, աստառով: Լաստիկից կարվածը սովորաբար տոնական է համարվում: Դրա սեփական գոտու լայնքը 3 մատնաչափ էր, որը 1-2 կոճակով կոճկվում էր ձախ կողքին: Ընդհանրապես կողքերից կոճկվելը կամ կապվելը համեստության նշան էր համարվում:

Անձով յուբկան կարվում էր բամբազից՝ ամենօրյա և լաստիկից՝ հիմնականում տոների համար:

Բաճկոնակը, որին երբեմն **կուռտուշկա** ոչ ճիշտ անունն էին տալիս, հագնում էին փեշի հետ: Երբ փեշը կարմիր էր լինում, բաճկոնակը պետք է լիներ ճերմակ, կապույտ կամ կանաչ: Առջևը վերից վար կոճակներով էր, իսկ երբ չափռաստներով էր կոճկվում, կոճակները որպես զարդեր էին կարվում: Իսկ վերջիններս սովորաբար կտորի գույն էին ունենում:

Օձիքը կանգուն էր՝ 2-3 մատնաչափ լայնությամբ և զույգ կոճակով: Ուսերը ուսագլխի վրա հավաքվում, փունջ էին ձևացնում: Թևերի վերին մասերը լայն էին և ստորինը՝ նեղ ու անկոճակ: Ոմանք թևի ստորին կեսը այլ գույնի կտորից էին կարում: Եթե բաճկոնակը կարմիր էր, թևի կցորդը կապույտ կամ կանաչ էր լինում: Փեշերը սեփական, 10 սմ լայնության գոտի ունեին, որին կցվում էր ծալաբոլորքը, որ փռվում ու ծածկում էր փեշ-դայրան:

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբին Ջավախքում, Ախալցխայում, Ալեքսանդրապոլում և Կարսում կնոջ տոնական բաճկոնը (**սալթակըլդր**) հայտնի էր երկու տարբերակով:

Առաջին տարբերակը պահպանել է հին ձևվածքը, իսկ երկրորդը համեմատաբար նոր էր և ավելի շքեղ: Առաջին տարբերակի բոլոր ենթատեսակները կարվում էին մետաքսյա կանաչ, կապույտ, վարդագույն կտորներից:

Առաջին տարբերակի առաջին ենթատեսակի կուրծքը փակվում էր ինքնաշեն գնդաձև կոճակներով ու օղակներով, թևատակին ունենում էր ամբողջական եռանկյունաձև հավելված՝ իրանը և անուքը լայնացնելու նպատակով. փեշերը և ուղիղ թևաբերանները ալիքավոր էին. օձիքը կանգուն էր. «Եզրերը զարդարում էին ոսկեթելի տրեզով և մեկ շարք ոլորված ոսկեթելի գծով[349] (բիքմայով)»:

Առաջին տարբերակի երկրորդ ենթատեսակի բաճկոնի կուրծքը լայն բացվածքով

349 Տե՛ս ՀՊՊԹ ազգ. ֆոնդ, թիվ 8156/3 բաճկոնը:

էր, որ ծածկվում էր հատուկ կրծկալով. անութատակի կտորները եռանկյունաձև էին. թևերի հիմքում հավելվածներ ուներ. թևաբերանները ձևավոր էին և դրանց ճեղքերը զարդարվում էին ոսկեթելի տրեզով և ոսկեթելից հյուսած նեղ ժապավենով[350]:

Առաջին տարբերակի երկրորդ ենթատեսակի բաճկոնի անութներում և կողքին ավելացված կտորները միացվում էին ուղիղ լայնակի կարով. կուրծքը բացվածքով էր. թևաբերանները սրածայր և ալիքավոր էին. եզրերը զարդարվում էին ոսկեթելի տրեզով և մեկ շարք ոլորած ոսկեթելի գծով[351]:

Կնոջ տոնական բաճկոնի երկրորդ տարբերակը ձևվածքով շատ էր տարբերվում առաջին տարբերակից: Այն կարվում էր բացառապես թավշյա մանուշակագույն, կապույտ կամ մուգ կարմիր կտորից[352]: Ուսերը թեք էին, թևատեղերը՝ փորված, թևաբերանները՝ լայն և ձևավոր. թիկունքը ձևավոր կարերով էր և իրանը՝ սեղմված. կողքերը և թիկունքը զարդարվում էին բուսանախշերով:

Բաճկոնի երկրորդ տարբերակն ուներ 4 ենթատեսակ:

Երկրորդ տարբերակի առաջին ենթատեսակի եզրերը ալիքաձև էին, վզի կլոր բացվածքով, ճոխ ասեղնագործությամբ[353]:

Երկրորդ տարբերակի երկրորդ ենթատեսակն «...ուներ ուղիղ եզրեր (ոչ ծոնթաձև), առջևամասում՝ կոր[354]»:

Երկրորդ տարբերակի երրորդ և չորրորդ ենթատեսակները «Սրածայր աջ ու ձախ փեղկով էին. ընդ որում, չորրորդը առջևում ուներ երկու երկայնակի կար[355]», որի շնորհիվ բաճկոնը կիպ նստում էր իրանի վրա:

Ն. Ավագյանի կարծիքով, կնոջ տոնական բաճկոնի երկրորդ շքեղ տարբերակի ենթատեսակները նորաձևության արդյունք են եղել: Դրանք առավելապես տարածված էին Կարսում և ապա՝ Ալեքսանդրապոլում[356]:

Դայրա (փեշ), որ հագնվում էր բաճկոնակի հետ: Գոտու լայնքը 3 մատնաչափ էր՝ ձախին՝ 2 կոճակով: Կարվում էր հասարակ կտորներից առօրյա գործածության համար և ընտիր կտորներից՝ տոնական գործածության նպատակով: Այդ ընտիրներից էին լաստիկը, ծաղկավոր, ինչպես նաև կարմիր ու կապույտ կտորները: Ծալաբոլորքը նման էր բաճկոնակի համապատասխան մասին:

Անձով դայրան կարվում էր նույն կտորներից: Օձիքը կանգուն լինելիս 2 մատ

350 Ն.Ք.Ավագյան, Բարձր Հայքի ժողովրդական տարազը (ՊԲՀ, 1971, թիվ 4, էջ 190):

351 Անդ, էջ 190-191:

352 Տե՛ս ՀՊՊԹ ազգ. ֆ. թիվ 921, 924, 925, 929, 930, 932 բաճկոնները:

353 Ն.Ք.Ավագյան, նշվ. աշխ., էջ 191:

354 Անդ, էջ 191:

355 Անդ, էջ 191:

356 Անդ, էջ 191-192:

լայնության էր լինում, 1 կոճակով, իսկ երբեմն կարվում էր նաև ծալվող օձիք: Բացվածքն ուներ 3 կոճակ: Ծալաբոլորքը նույն կտորից էր և ծալ-ծալ արված:

Պիչակը մեծությամբ երկու տեսակ էր: Կարճը հասնում էր ազդրերի կեսը և հետևապես իսկական բաճկոն էր: Երկարը ծածկում էր ծնկները, որով նա դառնում էր կիսավերարկու:

Կուրծքը եռանկյունաձև բացվածքով էր, օձիքը՝ ծալովի, կոճկվում էր իր գույնի կոճակներով: Ետևում ուներ կիսագոտի՝ ծայրերին մեկական կոճակներով: Կար նաև սեփական կտորից կարված գոտի, որն առջևում կոճկվում էր մեկ կոճակով:

Շալ թիկնոցը պիչակ չունեցող աղջիկներն օգտագործում էին ճմռանը՝ գլխին փաթաթելով ու թիկունքին փռելով: Գործում էին սպիտակ, մոխրագույն, բնական կարմրավուն բրդաթելերից:

Գոտիները մի քանիսն էին՝ **ա/.** կաշվե գոտի, **բ/.** արծաթե, պղնձե և վարշաղե գոտիներ, **գ/.** հաստ կտորե գոտի 3 մատնաչափ լայնությամբ, որ զարդարվում էր մետաքսաթել ասեղնագործությամբ: Մանր ուլունքները կիրառվում էին նախշազարդերի մեջ: Այդ գոտու զարդարանքների մեջ մեծ տեղ ունեին եռանկյունիները, որոնք ասեղնագործվում էին կոնտրաստային գույների թելերով, ինչպիսիք էին կարմիրը, կապույտը, դեղինը, նարնջագույնը, կանաչը: Ուլունքների մի շարքը կանաչ էր, երկրորդը՝ դեղին, երրորդը՝ կապույտ:

Ճարմանդը 1-2 փայլուն կոճակով էր:

Գուլպաները հասնում էին ծնկատակերը, որտեղ և կապվում էին կապիչներով: Վերջիններս իլիկի ճեռի վրա հինում և գործում էին 4-5 կարմիր, ճերմակ, ոչխարի բնական կարմիր գույնի թելերից՝ ծայրերին ծոպեր թողնելով:

Գուլպաները գործում էին բնական կարմիր և ճերմակ թելերից: Այդ նույն գույներով գործում էին **խառը** շ գուլպաներ, որ նշանակում է հորիզոնական զոլերի խառնուրդ: Որոշ գուլպաներ էլ ունենում էին կենաց ծառի զարդանախշեր՝ **ծառ** անունով: Կային նաև ծաղկավոր գուլպաներ:

Տրեխներ: Աղջիկները, եթե անգամ գունավոր կոշիկներ ունենում էին, համենայն դեպս, տրեխներ էին հագնում ոչ միայն մինչև ամուսնությունը, այլև հարսնանալիս էլ: Ունևոր տնտեսություններում իշխողը հասկարով տրեխներն էին, իսկ չունևորների համար՝ շուլալկարով սովորական տրեխները: Հասկարի վարպետները աղջիկների տրեխների վրա դեղին կոճակներ էին հարմարեցնում, որին գցվում էր փոկե օղակը: Տրեխի կենտրոնում կոճակն իբրև զարդ էր համարվում:

Օտնըմանները, որ կարվում էին քաղաքում և գյուղերում, ոչ բոլոր աղջիկներն էին ունենում: Չքավորի աղջկան բախտ էր վիճակվում օտնըման հագնել ամուսնության հասած տարիքում: Իսկ քաղաքային կրունկավոր տուֆլիկը և կիսաճտքավոր կոշիկը հազվադեպ էին:

Գլխի հարդարանքներ: Պատանի աղջիկների **լաչակը**, որ պատրաստվում էր

սպիտակ ու խատուտիկ կտորներից, ամենատարածվածն էր և ամենօրյա գլխակապը: Երբ տարիքը մոտենում էր ամուսնության, նրանք կրում էին **փուշի** կոչված գունավոր, մետաքսե գլխաշորը: Լաչակը և փուշին հանգուցում էին ծոծրակի վրա՝ պոչ ձևացած մասի տակին: Ոմանք դրանց ծայրերը ծոծրակից բերում էին ճակատի կամ հոգետան վրա և հանգուցում էին:

Լաչակը բոլոր հասակների աղջիկների անմեղության նշանն էին համարում: Ուստի և բնորոշ գույնը սպիտակն էր: Իսկ փուշին, որ հազվադեպ գլխաշոր էր, տոնական էր և ընկալվում էր աղջկա հասունացման նշանը:

Տոնական էր նաև ֆասը իր 30 սմ երկարության մետաքսե մանուշակագույն, փարթամ ծոպով: Սա ուներ գլխի ձև: Նրա կենտրոնում և ծոպի սկզբնամասում արծաթե զարդեր կային, որոնք և իրար էին միանում: Ֆեսը լրացուցիչ կարգով զարդարվում էր 2-4 գնդասեղներով: Նրա ծոպը փաստորեն ծամքելի տարբերակ էր, որն իր փռվածքով հասնում էր մինչև գոտկատեղը:

Հ. Ֆ. Պ. Լինչը 19-րդ դարի վերջերին մի լուսանկարով ներկայացրել է Կարին քաղաքի աղջիկների խմբի տարազը «Հայ աղջիկներ» մակագրությամբ: Այդ աղջիկները հագնված են ճիշտ այնպես, ինչպես հագնում էին նորահարսները՝ ջուպպա, ոսկեշար, վարդ ճակատազարդ և քող չիքիլա[357]: Այս զգեստը աղջկական համարելը լուրջ թյուրիմացություն է, քանզի կույս աղջիկը Բարձր Հայքում պատմականորեն և սեռահասակային խմբին վերապահված իրավունքի տեսակետից երբեք կնոջ զգեստի մեջ չի եղել: Նշված զգեստի համալիրը աղջկանը **հարս դարձնելու** առաջին պայմանն էր: Հետևապես, Լինչի ներկայացրած քաղաքացի աղջիկները պարզապես նկարվելու նպատակով և կամ Լինչի պատվերով հարսանեկան գեղեցիկ զգեստներ են հագել:

Այս իմաստով ճիշտ չէ նաև այն տեսակետը, թե Բարձր Հայքի ժողովրդի մեջ տարիքով քսանն անց աղջիկների տարազը «նույնն էր, ինչ ամուսնացած կանանցը, միայն բացակայում էին գոգնոցն ու գլխի հարդարանքի որոշ մասերը[358]»:

Աղջիկների զարդերը բազմազան էին: Մանյակը[359], որ ձեռք էր բերվում պատրաստի վիճակում, երբեմն կազմվում էր տարբեր գույնի թանկարժեք քարերից կամ ուլունքներից՝ կենտրոնում ունենալով որևէ գույնի շրջանակավոր ակ: Բայց մանյակները մեծ մասամբ հասարակ ուլունքներից էին:

Վզնոցը պատրաստվում էր ուլունքներից, արծաթե կամ վարշաղե կախիկավոր զարդերից:

---

357 Հ. Ֆ. Պ. Լինչ, Հայաստան, հ. 2, 1897, էջ 275:

358 Ն. Ք. Ավագյան, Բարձր Հայքի ժողովրդական տարազը (ՊԲՀ, 1971, թիվ 4, էջ 183):

359 Մենք այստեղ մանյակ ասելով ցույց ենք տալիս պարանոցը գրկող զարդը, որը լիովին համապատասխանում է օղամանյակ բառին: Դրան հակառակ **վզնոց** ենք անվանում լանջի վրա փռվող զարդը:

Օղերը աղջիկների սիրած զարդերից էին: Դրանցից էին ակ ունեցող տափակ օղերը և գնդաձև օղերը, որ ոսկուց, արծաթից ու վարշաղից էին պատրաստում:

Մատանիները, որ շինվում էին արծաթից, անցկացնում էին աղջկմության մատին (մատանեմատին), հակառակ որի պսակվող աղջիկը մատանին դնում էր միջնամատին:

Սանրվածքը: Աղջկա բաց գլուխն, իր հյուսած ծամերով՝ առաջին զարդն էր: Հյուսելուց առաջ նրանք մազերը **իվով** բաժանում էին երկու մասի, որոնք **զիլիֆ** էին կոչվում: Աղջիկը երբ մեկ ծամ էր ունենում, ժապավենը հետը հյուսում էր: Երկու ծամի դեպքում, դրանք որոշ հեռավորության վրա պահելով, ժապավենը դարձյալ հյուսերի հետ հյուսվում ու ծայրերը կախվում էին: Բնորոշը, սակայն, ըստ 19-րդ դարի վերջերի տվյալների, մի քանի ծամ հյուսելն էր: Հյուսերի թիվը, ոմանց հաղորդման համաձայն, կենտ պիտի լինեին, որը, ըստ երևույթին, ամուրի լինելու նշանն էր: Դրանք թիկունքի վրա փռված ու կոկիկ պահելու նպատակով թիակների տեղերում շորի վրա մի ժապավեն էին կարում, որի տակ մազերը տեղաշարժ չէին լինում: Մազկախը կազմվում էր ակնհլունից, կապույտ, կանաչ, կարմիր, սպիտակ ուլունքներից, որոնց թիվը հասնում էր 10-20-ի: Դրանք միաժամանակ **ակնահարությունից** պաշտպանվելու և գեղեցկության համար էին:

Նորահարսի զգեստներ: Պսակվող աղջկա զգեստի զգալի մասը փոխվում, **հարսի տարազի** էր վերածվում: Իսկ մյուսը պահպանում էր օրիորդականի հատկանիշները:

Շապիկը հարսի շապիկ էր կոչվում, որը կարում էին օտընշորի հետ՝ հերանց կամ սկեսրանց պատվերով: Երբեմն սպիտակեղենի պատրաստման պարտականությունն էլ ընկնում էր քավորանց վրա: Իսկ սպիտակեղեն ասելով հասկացվում էր ոչ միայն շապիկն ու վարտիքը, այլև կրծկալն ու սպիտակ փեշը, որը քավորկինը հանձնում էր հարսին: Շապիկը հասնում էր մինչև սրունքի կեսը:

Վարտիքը կարվում էր միտկալից, երկու կողքերին ունենալով կապիչներ: Բայց լինում էր բուն պսակի օտընշոր, երբ այն, քաղաքի օրինակով, ոմանք զարդարում էին ժանյակով: Հասնում էր մինչև ծնկների վրա: Աբուլ գյուղում ազգային-ավանդական ձևը առավել ամբողջական էր պահպանվել: Այն երկգույն էր՝ ծնկներից վեր սպիտակ և ծնկներից ցած՝ կանաչ-կարմիր կամ կապույտ: Սա վերջանում էր **փոթիկով**, որը կոճկվում էր 1-2 կոճակով: Փոթիկը զարդարվում էր սադափներով: Ծնկից ցած, ինչպես վերևինը, լայն էր: Սրունքամասը զարդարվում էր գունավոր թելերի զարդակարերով և ճմփուլներով՝ ոսկեգույն կամ արծաթագույն փուլերով: Նաև որպես տոնական վարտիք, այն պետք է իր շքեղությամբ աչքի ընկներ ու առանձնանար:

Հարսնացողը պետք է այնքան սպիտակեղեն ունենար, որ մինչև մի քանի երեխա ունենալը սկեսրանքը անհարմարություն չզգային անձնահագուստի այդ տեսակի մասին խոսել-հիշատակելու: Այսպես, օրինակ, օժիտի մեջ ունենում էր 3

ձեռք սպիտակ, երբեմն ժանյակավոր վարտիք և 3 ձեռք էլ **էրկուղբաթ** ծայրերով (գունավոր կտորներից երկտակ կարած) վարտիք՝ հետագայում հագնելու համար:

Կրծկալը, որ կարվում էր միտկալից, երկտակ էր: Լայնությունը 15 սմ էր. երկու կապերով կախվում էր ուսերից. կրծքի կողմում կոճկվում էր երեք կոճակով կամ կապվում էր մեջքի կողմում՝ 4 կապիչներով: Այն զարդարվում էր սեփական սպիտակ թելերով, **լիմոն** կոչված և **ծառ-ծառ** կոչված նախշազարդերով: Կապվում էր շապիկի վրայից՝ կրծքերը ճնշելու և թաքցնելու նպատակով:

Փեշը կարվում էր միտկալից և այլ ճերմակ կտորներից ու երկտակ էր: Փեշերը վերջանում էին ժանյակներով, որ ընդօրինակված էր քաղաքայինից: Գոտին 5 սմ էր, որ կոճկվում էր 2 կոճակով, ձախ կողքին: Այն համարվում էր պսակի շոր:

Դայրա, որ կարում էին կարմիր, նարնջագույն, կանաչ գույնի ընտիր կտորներից: Օձիքը քոպայով էր, նեղ, որ ունենում էր մեկ կոճակ: Լինում էին նաև կանգուն, 3 սմ լայնության, 1-2 կոճակով և հետ ծալվող օձիքներ: Կրծքի բացվածքը կոճկվում էր իր գույնի կոճակներով: Կուրծքը զարդարում էին տարբեր գույնի թելերի ասեղնագործության, նաև մանր, մեծ մասմաբ սպիտակ ուլունքներով: Փեշերը ծալաբոլորքով էին: Զգեստի կրծքի զարդերից էին ասեղնագործված քառանկյունները, որոնք լցվում էին ուլունքներով ու գունավոր թելերով: Եթե շրջանակը կազմում էին կապույտ հլուններով, ապա դրա ներսում կարվում էին դեղին ու կանաչ հլուններ և այլն: Շրջանակի գույնը փոխվելիս փոխվում էին նաև մյուսների գույները:

Գոտին ընտրում էին ըստ հայեցողության և կարողության՝ ասեղնագործած, արծաթե կամ կաշվե գոտի, որը կապում էին դայրայի վրայից:

Ֆանել էր կոչվում նույնանուն կտորից կարված ամբողջական դայրա հիշեցնող զգեստը, որ հագնում էին չուխայի տակից: Կտորը պտպտիկ նախշերով էր:

Շալե փեշը գործում էին հելունով, բնականից կարմիր կամ ներկած կարմիր թելերից: Ունենում էր հորիզոնական զոլեր՝ կարմիր, կապույտ, կանաչ գույներով: Հագնում էին ձմռանը:

Չուխա էր կոչվում ջուպպան որոշ վայրերում, որ կարվում էր նույնանուն կապույտ կտորից, հասնում էր մինչև սրունքների կեսը: Թևերը երկար էին: Կրծքաբաց էր, որը ծածկելու համար ունեին ասեղնագործված կրծկալ: Կրծքի վրա կոճակվում էր երկու կոճակով:

Գոգնոցը կարմիր մահուդից էր: Չուխայի և գոգնոցի զարդերը կատարվում էին քաղաքում, դերձակների ձեռքով: Աջ կողմում գրպան ունեցող **փառքուկը**, որ կարվում էր մուգ գույնի կտորից, կապվում էր գոգնոցի վրայից՝ տակինը մաքուր պահելու նպատակով: Կրծկալը հենց չուխա-ջուպպայի կիսաաղեղնաձև բացվածքը ծածկելու համար էր: Զարդարվում էր ծաղիկներով, ծառերով և այլն:

Ղատիֆա խրխան չուխա-ջուպպայի ձևն ուներ: Կարվում էր սև, կապույտ և կանաչ կտորներից: Չքավոր հարսը սա հագնում էր չուխայի փոխարեն:

Գլխի հարդարանքները հետևյալ տարրերից էին կազմվում.

- Կարմիր **ֆաս**՝ մանուշակագույն ծոպերով.
- **Հարսանուցը** (քունքերից կախվող զարդերը), որ պատրաստվում էր մանրահատիկ մարգարիտները թելերի վրա շարելով ու կախելով, ծայրերին ոսկեդրամ կախիկներ էր ունենում: Մի շարք կախիկներ շրջանաձև ժապավենի երկու կողմից կախում և այդ օղակը հագցնում էին ֆասի վրա:
- Պսակադրությունից հետո շատերը հարսանուցը խաչաձև փռում էին գլխի վրա, որով ճակատի վրա դրանք խաչ էին ձևացնում:
- **Շերիտ**, որը ոսկե դրամների շար է, շատերի մոտ զույգ լինելով՝ **ջուխտ շերիտ** էր կոչվում: Չունևորները ոսկեդրամների փոխարեն ոսկեգույն կեղծ դրամներ էին օգտագործում: Այն կապվում էր հարսանուցից հետո, դարձյալ ֆասի վրայից:
- **Վարդ**, ճակատի ասեղնագործ զարդ, երկու բոլորշի ուռուցիկ զարդերով, որոնք տեղ-տեղ **կոտոշ** էին կոչվում: Վարդի ծաղկազարդերը՝ գյուղերում և ժապավենները՝ քաղաքում, կանայք ու աղջիկներն էին ասեղնագործում: Դրա համար ընտրում էին շատ նուրբ մետաքսաթելեր: Վարդի լայնքին ձգվող ժապավենիկը հյուսում էին ձիու մի մազի վրա՝ հասցնելով 4-5 մմ լայնության: (Մազը մշտապես մնում էր ժապավենի մեջ): Շատ վայրերում վարդի ծաղիկների ձևերն ու գույներն ստեղծում էին դաշտից հավաքած մանր ծաղիկների հիման վրա: Վարդը հագցվում էր շերիտից հետո, ֆասի վրա:
- Սպիտակ քողը կիսաթափանցիկ ու ծաղկավոր գործվածք էր, հարմարեցնում էին հարսի գլխին, երկու ծայրերը հասցնելով վերնազգեստի քղանցքներին: Իսկ առջևից քողը պետք է ծածկեր դեմքը:
- Գունավոր **քող** (թոռ), որ կարվում էր հասարակ ու կիսաթափանցիկ գործվածքից, որն իր կարմիր կամ կանաչ ֆոնի վրա դաջված ծաղիկներ էր ունենում: Սրանով ևս հարսը ծածկում էր երեսը:
- Գլխի հարդարանքի մի տեսակը, որին ոմանք **պիլոմպի** անունն էին տալիս, ծաղկավոր գլխաշոր էր: Սրա ծայրը գնդասեղով ամրացվում էր ճակատից վերև և մյուս ծայրերը կախում մինչև կոնքը:

Պսակվող հարսը հագնում էր իր ձեռքով գործած ընտիր գուլպաներ, որ միշտ հյուսվում էին բրդաթելից: Պատանի աղջիկներին հատուկ **ծառով գուլպաները** և ծաղկավոր այլ գուլպաներ նորահարսը շարունակում էր օգտագործել: Նորահարսն ունևոր տնտեսության մեջ օգտվում էր կոշիկների մի քանի տեսակներից (կրունկավոր տուֆլիկներ, որ նվիրում էր քավորը, օտնըման, որ կարում էին հերանքը,

սապոգներ, որ գնում էին հերանքը կամ սկեսրանքը[360], չուստիկներ, որ օտնըմանի նման էին և բարակ:

Ծայրահեղ չքավոր աղջիկները, հարսանեկան զգեստներ չունենալով, ութ օրով, օգնության կարգով, ունևորները տրամադրում էին վերևում նկարագրված զգեստների և ագանելիքների մի մասը և գլխի հարդարանքները: Շաբաթը լրանալուն պես նորահարսը հարկադրված էր հագնել իր հասարակ հագուստները և տրեխները:

Նորահարսին հարուստ գյուղացին զարդարում էր հնարավոր բոլոր զարդերով: Գնդաձև գինդերը կնոջ անբաժան զարդերն էին: Լինում էին մանյակներ ոսկուց կամ թանկարժեք քարերից՝ կենտրոնում կախվող ոսկե խաչով: Արծաթե վզնոցը փարթամ ու ճոխ զարդ էր՝ շերեփուկ հիշեցնող կախիկներով: Կենտրոնում եռանկյունի արծաթե տախտակ էր ունենում: Մեծ վզնոց էին ձևացնում ոսկեդրամներով, որոնք տարածվում էին ամբողջ կրծկալի վրա: Ոսկե մատանիները մեկից ավելի էին լինում: Իսկ ապարանջանները ոսկուց կամ ոսկեզօծ արծաթից էին: Չունևոր հարսերն ունենում էին էժանագին ուլունքազարդեր՝ մանյակ, վզնոց և ապարանջաններ, իսկ գնդաձև օղերը արծաթից էին:

Միջին տարիքի կանանց զգեստներ: Այստեղ ներկայացվում են 30-45 տարեկան գեղջկուհիների զգեստներ, որոնք ըստ ձևի և գործածության միանման էին: Նրանց **շապիկը**, որ պատրաստվում էր ամիրկայից և միտկալից, ծածկում էր ծնկները: Կային նաև ճերմակ ֆոնի վրա ծաղկավոր կտորներից շապիկներ: Օձիքը 3-4 սմ էր, 1 կոճակով: **Օտընշորը** ձագով և խոնջանով էր. ոտքերի փողքերը կապվում էին (ծնկատակերին մոռոտելով) գուլպաների վրա: Ազդրերի կեսից սկսած մինչև փողքածայրերը օտընշորի վրա կարմիր, կապույտ և կանաչ գույնի կտորներով երկտակ էր կարվում, տաք պահելու նպատակով: Գունավոր կտորի ծայրին էլ ծալվածք էր արվում, որի միջով անցնում էր կապիչը:

Այս վարտիքների ծայրամասերը տեղ-տեղ երևացնելը սովորական բան էր, որ գալիս էր անցյալից, քանզի այն չցուցադրող կնոջը մեղադրում էին անհամեստության մեջ՝ **վարտեթափ** անունը տալով: Թեպետ մինևնույն Ջավախքի այլ հատվածներում ամոթաբեր էր համարվում դրա ցուցադրումը: Այս պարագայում երկար վարտիքը դրվում էր գուլպաների մեջ և երկտակ չէր լինում:

Իշլիկը հագնում էին շապիկի վրայից:

Փեշը, բացի կտորներից, կարվում էր նաև շալից, որը հագնում էին աշխատանքի ժամանակ:

Խրխան կարվում էր կապույտ մահուդից, դատիֆա կոչված կտորից: Կուրծքը

360 Ե. Լալայանը հիշատակել է նաև **ճզմա** կոչված կոշիկներ, որոնք փայի ժամանակ ընծայում էին հարսնացուին նրա սկեսրանքը: (ԱՀ, 1, էջ 245): Ճզմա բառը թուրքերենից է ծագում: Ճզման այսպիսով, համապատասխանում էր քաղաքի պատանեկան ճտաքավոր **չուստին**:

կիսաաղեղնաձև բացվածք ուներ՝ եզրերը տրեզով զարդարված: Մեջքը կիպ էր՝ 2-3 չափռաստով: Նույն կտորներից լինում էին նաև տոնական խրխաներ:

Ըստ Ն. Ավագյանի, Բարձր Հայքում կնոջ միևնույն վերնազգեստը, կտորների տեսակների համաձայն, ունի 4 տարբերակ, որոնք «միմյանցից տարբերվում էին ոչ միայն կտորի որակով, այլև զարդաձևերով: Մահուդից կարված վերնազգեստը կոչվում էր **ջուպպա**, մետաքսիցը՝ **ֆայ**, **լահուր**, **խրխա**, թավշիցը՝ **ղատիֆա**, բրդյա գծավոր կտորից կարվածը՝ **փուքալի**: Ղատիֆան, խրխան, փուքալին տոնական վերնազգեստ էին, իսկ ջուպպան երկու տեսակ էր լինում՝ ամենօրյա և տոնական»:

Հայաստանի պատմության պետական թանգարանի ընձեռած նյութերի հիման վրա Ն. Ավագյանը այդ 4 տիպի վերնազգեստները, ըստ ձևվածքի, բաժանել է 6 տարբերակների, որոնց «...ասեղնագործության մոտիվը բուսանախշերն են, որ կատարվում էին երկու եղանակով՝ ուռուցիկ հարթակարով, նաև հաստ ոլորված ոսկեթելով: Վերջին եղանակի դեպքում ոսկեթելն ամրացվում էր կտորի վրա ուղիղ բամբակյա թելով՝ աննկատելի կարով[361]»:

Շալե խրխան կարվում էր սև ու շագանակագույն շալերից, որպես աշխատանքային զգեստ: Ձևը նույնն էր, ինչ տոնականինը:

Ֆարաջա կոչված երկար ու սև զգեստը կարվում էր թանձր կտորից: Ձևով նման էր ջուպպա-խրխայինին, բայց գոգնոց չուներ: Փեշերը այնքան լայն էին, որ կըրկնակի ծալվում էին իրար վրա: Գոտկատեղում կոճկվում էր ճարմանդով: Օձիքը և կրծքամասը կրկնում էր ջուպպա-խրխայի համապատասխան մասերի ձևերը: Թևերը նեղ էին: Ունևոր կանայք հագնում էին տոներին, ջուպպայի վրայից, ինչպես վերարկուն:

Կրծկալը, որ պատրաստվում էր խրխայի գույնի կտորից, զարդարվում էր տարբեր գույնի թելերով:

Գոգնոցը կարվում էր կարմիր մահուդից ՝ խրխայի (ջուպպայի) վրայից կապելու և կարմիր շալից՝ շալե խրխա-ջուպպայի վրայից կապելու համար: Առաջինը զարդարվում էր ոսկեգույն բանվածքով Ախալքալաքում, իսկ շալե գոգնոցը չէր զարդարվում:

Փառքուկ կոչված գրպանավոր գոգնոցը կարվում էր սե սատինից: Տան մեջ սա կապում էին մահուդի կամ շալե գոգնոցի փոխարեն:

Արծաթե գոտին կապում էին գոգնոցի վրայից, տոներին:

Գուլպաները հյուսում էին սպիտակ, սև, բնական կարմիր, կալաքարով ներկված կարմրավուն թելերից: Երիտասարդ կանայք ևս օգտագործում էին մի շարք ոտնամաններ: Օտնըման, չուստիկ, որի երեսը զարդարում էին գունավոր թելերով, մասեր, որ կարում էին սև ու կարմիր սեկից: Սրանց վրայից էլ բաբուճներ էին հագնում:

361 ՊԲՀ, Երևան, 1971, թիվ 4, էջ 184-186:

Բաբուճներ, տակը կաշվից և կիսաերեսը՝ մահուդից, որ օգտագործում էին տան մեջ: Կիսաճտքավոր կոշիկներ, որ ձեռք էին բերում Թիֆլիսում, Ալեքսանդրապոլում և այլուր: Նալիկներ, որ պատրաստվում էին փայտից, քթամասի կաշվե օղակով. սա ունենում էր երկաթե պայտեր կրկնամասի և քթի տակ: Վերջիններս, սակայն, տարածված էին միայն քաղաքում, բաղնիքում օգտագործելու համար: Մազերը երկու ծամով էին, որոնք մեծ մասամբ հավաքվում էին ֆասի մեջ, բայց կային նաև կախ պահողներ: Ֆասը, ոսկու շերիտը և վարդը դրվում էին այնպես, ինչպես նորահարսինն էր: Հարսնանալուց 10-15 տարի անց գործածում էին շալովի, որով քիթն ու բերանը կապելու Կարնո ձևը **պիրիկ** էր կոչվում:

Երբեմն շալովու վրա քող էր գցվում: Գլխաշորի վրա իբրև զարդեր գնդասեղներ էին խրում: Պիրիկ կապելաձը կիրառվում էր տղամարդկանց առկայության դեպքում: Իսկ կանանց շրջապատում շալովին սովորաբար կախվում էր այտերի վրայով ցած. կամ մի տուտը կախ էր պահվում, մյուսը անփույթ ծալվում էր գլխի վրա և կամ երկու տուտն էլ գցվում էին գագաթին: Այս տեսակետից կնոջ ազատությունն ակնհայտ էր ողջ Բարձր Հայքում, Կարսի մարզում, Բասենիներում, Խոտորջրում և այլուր:

Զարդերը նույնպես բազմազան էին՝ օղեր, մատանիներ, մանյակներ, վզնոցներ, ուլունքե կամ արծաթե և ոսկյա ապարանջաններ, ասեղնագործած ապարանջաններ[362] և այլն:

Զավախքի հայոց կանանց կտածումները19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին հազվագյուտ էին: Ճակատի վրա դաջվում էր մեկ «խալ» և աջ ձեռքի բութի ու ցուցամատի միջև ընկած տարածության վրա՝ 5 կետեր: Դաջումը կատարվում էր 1 կամ 4 ասեղներով, որ իրար էին կապվում: Մարմնի դաջվող հատվածը օղիով թմրեցնում էին և, թեթև հարվածներ տալով, ծակծկում ու սև թանաք քսում: Չորանալուց հետո դրանք մնում էին մինչև կյանքի վերջը:

Շալը ամենատարածված թիկնոցն էր գյուղերում: Այն հելունով հյուսում էին բոլոր կանայք: Թիկնոցն ունենում էր քառակուսի ձև՝ 1,5 x1,5 մետր մեծությամբ, որը ուսերին գցելիս եռանկյունի երկծալ էին տալիս: Հյուսում էին սպիտակ թելերից, որը ոմանք, ըստ ճաշակի, ներկում էին: Սրա փոքր տեսակը կապում էին մեջքին՝ ուսից անուքը տանելով և մեջքին հանգույց տալով: Իսկ մեծը, ուսերին առնելուց հետո, ծայրերը պահում էին ձեռքով: Շալն ուներ և այժմ էլ ունի շուրջբոլոր ծոպեր: Ֆաբրիկային **շալն** ավելի, քան բրդից գործածը, գործածում էին քաղաքացի կա-

362 Կային նաև երկաթե զարդեր, որոնք հմայիլների դեր ունեին: Դրանք **անժըմի** անունն էին կրում, որոնց վերաբերյալ Ե. Լալայանը գրում է.«Գիշերը դարբինները, մի ոտի վրա կանգնած, բոլորովին լուռ՝ յոթ ամրոցի դռներից հավաքած երկաթից շինում են ապարանջաններ, փոքրիկ մատանիներ, որ **անժըմի** են կոչվում: Մյուս օրը այդ բոլորը եկեղեցու դռանը անխոս կանգնած վաճառում են: Անժըմին քաշ են անում երեխաների օրորոցից, իսկ ապարանջանները դնում աղջիկների և կանանց թևերը, որպեսզի ամեն չարից ազատվին»: (ԱՀ, 2, էջ 271-272):

նայք: Բայց ունևոր գեղջկուհիները նույնպես ձեռք էին բերում: Սրա գործածությունը սկսվել է 19-րդ դարի վերջերին: 1930-ական թվականներից սկսած այն լայն տարածում ունի և առավելապես գործ է ածվում տան մեջ:

Հմայիլը բոլորովին էլ երկրորդական դիրքում չէր հայոց մեջ. գեղեցկուհիները սաստիկ վախենում էին ակնահարությունից (աչքով տալուց), ընդհանուր էր չարքերից հիվանդանալու մտայնությունը: Այդ երկու դեպքում էլ զգուշավոր կանայք դիմում էին գիր կապողին և հմայիլ էին պատվիրում, որը թելով աջ ուսից ձախ անութի տակ տանելով՝ կախում էին կաշվե պատյանով: Ունենում էին նաև բարձի տակ պահելու հմայիլներ և վզից կախելու ոսկե կամ արծաթե խաչ:

Տարեց կանանց զգեստներ: Գեղջկուհի տարեց կանայք համեստ էին հագնվում, որը հիմնականում ուներ նաև սոցիալական նախապատճառ: Առավելաբար դրանով էլ բացատրվում էր գրեթե համատարած սև գործվածքներից պատրաստված հագուստների օգտագործումը: Սպիտակեղենը գործվածքներով և ձևերով նույնն էր, ինչպես որ նկարագրեցինք վերևում[363]:

Վարտիքի երկարությունը կրկնվում էր՝ հասնելով մինչև կոճիկները և կապվելով մոդոտումով: Սրունքի վրա փողքերի երևալը պատշաճում էր տարեց կանանց: Թեպետ մեծամասնությունը այն դնում էր գուլպաների մեջ: Այն գյուղերում, ուր վարտիքի ցուցադրումը ընդունված նորմ էր, դադարեցվեց կամ վերացվեց 1920-ական թվականներից սկսած:

Իշլիկը նույնպես մուգ գույնի կտորներից էր կարվում:

Փեշը աստառով էր, մուգ կտորներից: Կապվում էր առջևում՝ խոնջանով, որի ծայրերը մեկ անգամ փաթաթում էին մեջքին: Կային նաև կոճակով փեշեր, դարձյալ առջևում դրված, որ նախորդ բոլոր հասակների կանանց անծանոթ էր:

Փեշը կարվում էր նաև շալից, որը սոցիալական հիմնավորվածություն ուներ և համարվում էր աշխատանքային լի օրվա հագուստ: Բոլոր դեպքերում փեշը տակից տոպրակի նման կախվող փոքր գրպան էր ունենում, որտեղ կինը պահում էր մանր առարկաներ, դրամ, քթախոտատուփը, երբեմն՝ քաղցրավենիք, համրիչ և այլն: Փեշի տակից կախվում էր **ասըղբունը**:

Անթարի էր կոչվում առջևը լրիվ բաց և մինչև գոտկատեղը կոճկվող երկար զգեստը, որը լիովին կրկնում էր դրա հնագույն ձևը: Այն հայտնի էր նաև Վասպուրականին, Բարձր Հայքին և այլն: Օձիքը նեղ քոպա էր՝ 1 կոճակով: Կարվում էր բամբազից, վիկոնից, ֆանելից և գունավոր այլ գործվածքներից: Հագնում էին փեշի

363 1940-ական թվականների վերջերից սկսած ազգային կարաճնով շապիկը որոշակիորեն տեղի տվեց: Դրանց փոխարինեցին թևով և անթև մայկաները: Բայց ավագ սերունդը տակավին պահպանում է բյազից ու միտկալից կարվող սպիտակեղենի ձևերը՝ երբեմն նորի զուգակցումով:

վրայից՝ եթե առանց աստառի էր և առանց փեշի, եթե աստառով էր: Անթարին 20-րդ դարի սկզբներին պահպանված էր միայն ցածրադիր գյուղերում:

Խրխան (ջուպպա), որ ձևով նույնն էր, ինչ վերը տեսանք, կարվում էր կապույտ կտորից, առանց աստառի: Բացվածքը ծածկվում էր մահուդից կամ շալից կարված կարմիր գոգնոցով:

Կրծկալը խրխայի կտորից էր: Օձիքը կոճկվում էր ծոծրակի վրա, իսկ ստորին ծայրերը մեկական թելերով էին կապվում հետևում:

Փառքուկը սև էր, գրպանով: Թիկունքի կողմում կոճկվում կամ կապվում էր թելերով: Այն կապվում էր մահուդե գոգնոցի վրայից՝ տակինը մաքուր պահելու համար:

Փուքալին կարվում էր ուղղահայաց զոլավոր ընտիր կտորից, որը նման էր խրխային (Զոլերը դասավորվում էին ուղղահայաց դիրքով):

Թիկնոցը սև, կարմիր կամ կապույտ շալն էր. օգտագործում էին նաև ֆաբրիկային շալեր:

Գուրպաները գործում էին սև թելից:

Մասերը նույնպես մուգ գույնի էին, որոնց բերանի եզրին ծոպ կար: Բերանի կայունությունն ու ամրությունը ապահովում էր դայթանը: Գործում էին նաև մուգ կարմիր և մուգ կապույտ թելերն իրար հետ դթելուց և ոլորելուց հետո: Կենտրոնը զարդարում էր սև կոճակը:

Բաբուճները, որ կիսաերեսով մաշիկներ էին, կարում էին սև կամ կապույտ սեկից: Ներբանը կաշվից էր: Հագնում էին տան մեջ, մասերի վրա:

Օտնըմանները սովորական էին և միակը, որ տարեց կանայք մշտապես օգտագործում էին:

Չուստերը գնվում էին քաղաքում: Տարեց կանանց տարիքի առաջացմանը զուգընթաց, նրանք աստիճանաբար ժուժկալ էին դառնում պերճանքի առարկաների նկատմամբ: Բայց նրանց մեծ մասը պահպանում էր գլխի հարդարանքի հիմնական տարրերը՝ ֆասը, շերիտը, վարդը և շալովին: Թեպետ շերիտից ու վարդից հրաժարվողներ էլ էին լինում՝ մնալով լաչակով ու շալովիով: Կային նաև բոլոր հարդարանքները պահպանող և այդ հարցում նախանձախնդրորեն ուշադիրները նույնպես:

Շալովին, որ սև էր, պիրիկ կապը պահպանում էր հազվադեպ օգտագործելով, որովհետև կանայք նույնիսկ այս տարիքում տղամարդկանց ներկայությամբ էլ շալովու ծայրերն արձակում էին կամ մեկը կախ պահում, մյուսը ծալում էին գլխի վրա և կամ երկուսն էլ ծալում էին գագաթին: Պատկառելի անձանց, այդ թվում՝ քավորի ներկայությամբ շալովու տուտերը քթկապ՝ պիրիկ էին անում:

Երկրորդ տարբերակում տարեց կինը, ֆասի համալիրը չօգտագործելու դեպքում, մազերն ամփոփում էր սև ու բարակ գլխաշորի մեջ, որի ծայրերը, ծոծրակի վրայից աջ ու ձախ անցկացնելուց հետո, հանգուցում էին հոգետան վրա: Դրա վրայից կապվում էր սև շալովին պիրիկ կապով:

Երրորդ տարբերակում կինն ունենում էր սև քթկալ թաշկինակ, որ քիթն ու բերանը, ցածից ծածկելուց հետո, գլխի վրա հանգուցվում էր: Սրա վրայից կապվում էր սև շալովին: Այս քթկապը հնագույնն էր, որի մնացուկները ցածրադիր որոշ գյուղերում պահպանվեցին մինչև 1920-ական թվականները:

Սգո զգեստներ: Ահել թե ջահել կանայք, ննջեցյալ ունենալիս, զգեստները և գուլպաները սևացնում էին: Շալովին սև էին ներկում: Երիտասարդ կանայք քողի տակից սև շալովի էին կապում: Մեծ կանայք սև էին ներկում նաև ճերմակ ու կարմիր թիկնոցները: Ոմանք զգալով վերահաս դժբախտությունը, սև զգեստները պատրաստի պահում էին սնդուկներում: Սուգը տևում էր մինչև քառասունքը: Մեծ կանայք հաճախ, ծանր կորուստների և այլ հոգսերի բեռի տակ ճնշվելով, քթախոտ էին քաշում և համրիչ օգտագործում:

Ձեռնոցներ և երեսնոցներ ունենում էին հատկապես ձմռանը դրսի աշխատանքով զբաղվող աղջիկներն ու հարսները (աղբյուրից ջուր կրել, խոտնոցից խոտ կրել, բակի ձյունը մաքրել, եկեղեցի գնալ և այլն):

Քաղաքային իգական սեռի զգեստներ: Քաղաքի իգական սեռի զգեստներն ու զարդերը Ե. Լալայանը գրի է առել 1887-ին: Նախաբանում նա ասում է, թե ինքը նկարագրել է Ջավախքի միայն Կարնո գաղթականության զգեստները: Ընդ որում, նա դիտում է, թե «Գյուղացի և քաղաքացի կանանց զգեստները միայն կտորով և ճաշակով են տարբերվում, իսկ տարազը միևնույնն է»:

Նկատի ունենալով, որ նրա նկարագրությունը հազվագյուտ է, այստեղ այն առաջ կբերենք ամբողջությամբ:

«**Շապիկ**. կարում են միտկալից, աղքատները՝ ամրիկայից, կտավից. իջնում է մինչև ծնկները. կուրծքը մինչև պորտը բացված է և բկի մոտ կոճկվում է: Թևերը երկար են և դաստակի մոտ կոճկվում են:

Իշլիկ. հագնում են շապիկի վրա. կարում են անթիքմոռից, ատլասից, մատերիայից, գյազիից: Կուրծքը եռանկյունաձև բացվում է, եզրերը ղայթան և կլապիտոնե բյուքմա են կարում: Թևերի բերանները վերջանում են եռանկյունաձև, որ մի քիչ ծածկում են ձեռքերի երեսները և որոնց շուրջը ղայթան և կլապիտոնե բյուքմա է կարած:

Վարտիք, ամրիկայից, փաթուսխից. երկու կողքերը կապում են ձախ կողմում:

Դյուզլուկ. վարտիք է, միայն փոխերը ֆանելից է. հագնում են ձմեռը:

Անթարի. կարում են անթիքմոռից, սավայիրից, ատլասից, գյազիից և այլն: Հասնում է մինչև ոտները. թևերը շատ երկար չեն անում, այլ հասցնում մինչև դաստակը:

Կըլդր (բաճկոնակ). ոմանք հագնում են անթարու վրայից. իշլիկի նման է. կարում են անթիկմոռից, գյազիից, սավայիրից, ատլասից:

Կրծկալ. մուգ կարմիր թավշից կամ լաստիկից կես արշին երկար և մեկ քառորդ արշին լայնության կտոր է, որ վերևում գրկում է վիզը, իսկ մեջքի մոտ շորե կապերով կողքի մոտ կապվում է: Սրա օձիքը և երբեմն նաև կուրծքը կլապիտոնով ասեղնագործած է:

Ջյուպպա. հագնում են կըլդրի կամ անթարու վրա. հասնում է մինչև ոտները. կարում են ղատիֆից, անթիքմոռից, մահուդից կամ կապույտ ամրիկա կոչված կտորից:

Գոգնոց. կարում են միայն կարմիր մահուդից և տանը գործած կարմիր շալից: Գոտին գործում են առանձին խնամքով և վրան շատ անգամ գրում են իրենց անունը՝ ավելացնելով «ի վայելումն» խոսքը: Գոգնոցի շուրջը կլապիտոնով և երբեմն արծաթե թելերով (թըռթըռ) ասեղնագործում և ներքևի երկու անկյունում գեղեցիկ ծաղիկներ են լինում: Գոգնոցը գոտիով կապում են ջյուպպայի վրա:

Սրանից մի քսան տարի առաջ (1867թ) գրեթե բոլորը, իսկ այժմ (1887թ) շատ քչերը փողոց դուրս գալիս իրենց վրա առնում էին էհրամ. սա բրդի սաստիկ բարակ թելից գործած մի քառանկյուն կտոր է, որի լայնությունը միշտ համապատասխանում է առնողի բարձրությանը: Էհրամը մի քիչ հետ ծալած ձգում են գլխին, ապա առջևից, ոտքերից մինչև մեջքը հավասարեցնելով, ծայրերը մտցնում գոգնոցի գոտու մեջ, իսկ ավելին՝ կախ ձգում. հետո իրենց ձեռքերը կրծքերին, բկի մոտ բռնում են էհրամի ծայրերը և այսպես բռնած ման գալիս:

Աղջիկների էհրամին լիմոն, բաղամ է կարած, այսինքն՝ կիտրոնի և բաղամի նմանությամբ մանծե թելով ասեղնագործած է: Միջահասակներինը սոսկ սպիտակ, իսկ հասակավորներինը՝ կապտախառն է:

Այժմ քաղաքացիները գլխավորապես եվրոպական ձևով, թեերով, երկար վերարկու են հագնում, իսկ գյուղերում սովորաբար շալ են առնում:

Սովորաբար աղջիկներն ու հարսները հագնում են բաց կապույտ, կանաչ և մանուշակագույն, իսկ պառավները՝ մուգ շագանակագույն շորեր:

Գլխի հարդարանք: Նախ և առաջ մազերը սանրում են, մեջտեղից մի հետագիծ **(իվ)** թողնում, առջևի մազերը ճակատի և ականջների վրայից տանում և գյուղացիները մի քանի փոքրիկ, իսկ քաղաքացիները երկու մեծ ծամ հյուսում: Գյուղացի աղջիկները ծամերի ծայրերին գույնզգույն հլուններ և մեխակ են անցկացնում:

Հետո ծածկում են կարմիր ֆաս, մոտ կես արշին երկարությամբ փյուսկյուլով, որ իջնում է մեջքի վրա: Փյուսկյուլի գլուխը և ֆասի մեջտեղը երբեմն կլապիտոնով և արծաթագույն թելով ասեղնագործած է լինում:

Ֆասի վրա կապում են **գիլիֆլըղը**՝ երկու շարք մարգարիտներ, որ այտերի վրայից իջնում է մինչև կուրծքը: Յուրաքանչյուր շարքը բաղկացած է 4-6 առանձին թելերից, մարգարիտներ անցկացրած և ծայրը մի փոքրիկ ոսկեդրամ (պաճախլի) կապած: Շարժվելիս այս ոսկիները միմյանց են դիպչում և ձայն հանում: Աղքատ գյուղացիները մարգարիտների և ոսկիների փոխարեն սուտ մարգարիտներ և փուլ (ոսկեգույն մետաղից) են անում:

Զիլիֆլըղի վրայից կապում են շերիտը. սա մի դեղին ժապավեն է. վրան մի կամ երկու շարք, 20 մինչև 200 փոքրիկ ոսկեդրամներ (ուռուպիա) կարած, որ պսպղում են ճակատի վրա, տարածվելով մի ականջից մինչև մյուսը: Ոսկիների տակից, շերիտի մեջտեղը կարած է լինում մի մեծ ոսկի (մահմուդիա): Պառավներն այս ոսկին չեն դնում:

Միևնույն շերիտի վրա, ոսկիների վրայից կարած է լինում **կտուցը**՝ մարգարիտներ, որ երբեմն միայն, իսկ երբեմն մոտավորապես 8-ի ձև ունեցող փոքրիկ ոսկիների (ջավշակ) շուրջը բոլորվելով՝ տարածվում է շերիտի երկարությամբ:

Շերիտի վրա անցնում (անցկացնում) են **վարդը**: Սա պատրաստում են հետևյալ ձևով. մի յազմա[364] խաչաձև 6-7 սմ լայնությունով ծալում են. ապա բռնելով կրողի ճակատին, քունքերի մոտ այդ միևնույն յազման ծալելով՝ երկու վարդ են շինում ու մնացած ծայրերը կրողի գլխին չափելով՝ միմյանց հետ կապում: Հետո թե վարդերը և թե սրանց միջի տարածությունը զարդարում մետքսի գույնզգույն թելերից շինած ծաղիկներով:

Աղջիկները վարդի վրայից այլևս ոչինչ չեն առնում, իսկ հարսները գցում են տանը՝ յազմա, հրավեր գնալիս՝ չիքիլա, որ իջնում է մինչև սրունքները: Կանայք և պառավները փաթաթում են գլուխները շալե (շալովի) կամ մետաքսե (բաղդադիա) փաթթան, իսկ հրավեր գնալիս՝ սրա վրա ավելացնում են և մի յազմա:

Աղջիկները և մատաղահաս կանայք գցում են կրծքներին մի կամ մի քանի շարք ոսկիներ, ականջներին անց են կացնում օղեր, ձեռներին դնում ոսկե միապաղաղ ապարանջաններ (բյուլազուկ), մատներին՝ մատանիներ:

Ագանելիք: Աղջիկներն ու հարսները հագնում են դեղին մաս բապուճ, իսկ պառավները՝ դեղին մաս, կարմիր բապուճ[365]»:

364 Քիսիայի նման բամբակե, շատ բարակ, գույնզգույն, քառակուսի փաթաթոց:

365 Ե. Լալայան, նշվ. աշխ. (ԱՀ, 1, էջ 227-229):



ԱՎԱՅՔԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՐԿԵՍՏԸ

ՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՏՐԹԱՏ ԹԱՔԱՎՈՐԻՆ ԲԵՐԹԸ

Վոր վախտն օր Տրթատ թաքավորը բերթը շինել է, լավ ուստաներ չէ ունեցե, քընացել է Հռոմայից ուստաներ է փերե, շինել է տվե: Հռոմական թաքավորը թամբեյ է էրե իրեն մարթոցը, թե օր կերթաք բերթը շինելու, ինչքան օր գողտուց տեղեր կըլլին, լա՜վ մըտվիդ կը պայեք, օր ետ դառնալնուդ ինձի պատմեք:

Եվ օր քուքան, Տրթատին բերթը շինեն պրծնին կը, թաքավորը էտոնց հախերը կուտա, ճամփու կը թընե: Ուստանին օր կերթան հռոմական թաքավորին քովը, պատմեն կը իրենց շինած բերթին բիտտուն գողտու ճամփընները, ծակն ու ծուկը:

Կանսնի մե քանիմ վախտ: Տրթատ թաքավորը կռվի կը հռոմական թաքավորին հետ: Էտ վախտը հըռոմները քուքան մտնին կը բերթի գողտուց տեղաները, զորքին կը ջարթեն, բերթնա կրակը կուտան, կերթան:

Էն օրին մինչի էսօր էլ ատպես ջարթած կը մնա:

ՆԱԴԻՐ ՇԱՀՆ ՈՒ ՀԱԿՈԲ ՄԶՄՆԱՆ

Ակոբ Մզմնա Հայրապետը ճքներ կը Մասըսա ըստվերը՝ քառսուն տարի: Կելլեր մինչև Մասիսու կեսը, սուրբ Ակոբա ախպըրին քովը, ջուր կը խմեր և տխրութենը կառներ իրան: Աչքը կը բանար, տեսնիրկը օր էլի Մասըսի տակն է, ըստվերն է: Քառսուն տարի էտման աշխատավ, չկրցավ սուրբ սարի գլոխը էլլեր:

Մե երիտասարդըմ էկավ, ըսավ.- Ակոբ Մզմնա, էստեղ դու ի՞նչ կը չարչըրվիս էս քառսուն տարի: Հըպը՝ ես գուզեմ օր էս սարն գլոխը էլլեմ, չեմ կրնա էլլե:

- Է՛, օր դու գուզես սարին գլոխը էլլել, մորեդ օր էղել ես, միտքըդ քուքա՞,- հարցուց երիտասարդը: Դու կրնա՞ս մորըդ արգընթին մեջը բնակվիլ նորեն:

Ըսաց.

- Մորես ըլլիլը չեմ հիշե, մորս արգընթին մեչը ի՞նչըդ կարելի է բնակվիլ:

Երիտասարդըն ըսաց.

- Դե օր չես հիշե ու մորըդ արգանթը չես կրնա բնակվիլ, Մասիսա սարի գլոխը կարելի՞ է օր էլլես: Չէ՞ որ էտիկ Նոհա տապանի տեղն է. Նոհա տապանը աշխրիս մերն է. էնիկ ազատեց Նոհա ջրհեղեղեն: Թե օր էտքան շատ

բաղցանք ունիս, ըսավ երիտասարդը, կըրնըս դորի հավատարիմ կենթանու քարափունք նշանը էլլես, էն օր Ասսու հավատքի ուխտն է: Եսա կերթամ Նոհա տապանին նշանը կը փերեմ:

Էտ երիտասարդը քնաց, Նոհա տապանից փերեց մե անփույտ[366] փետե խաչմ (հիմի էտիկ գտնվի կը Էչմիածնա վանքին մեչը. մեռոն էփած վախտը քաշեն կը էտ խաչը, խաչեն էտև՝ Գեղարքը, օր տա մեռոնը, թե չէ չի էփի): Խաչը տվեց Ակոբ Մզմնային, ըսավ.

- Ա՛ռ, քընե, դու էսօրով շատ մեծ զորություն ցուց կուտաս աշխըրին էրեսը:

Էտիկ ըսավ ու աներևութացավ էտ երիտասարդը: Դու մի՛սե, էնիկ հրեշտակ է էղե: Ակոբ Մզմնան զարմանք մնաց: Տեսավ օր խաչը արևի պես լուս կուտա, չունքի էտիկ Քրիստոսի խաչելությունն էր: Նոհա տապանին վրեն Քրիստոսի խաչելությունը ցույց էր տված, օր վախտովը Քրիստոս պիտի քա աշխար, էտևէ խաչվի պիտի:

Ակոբ Մզմնան օր խաչը փատտեց ապրեշումե խաս փուշեսներով ու թրեց ծոցը, իջավ ցած տեսավ օր էտտեղ, բաղերուն մեչը մարթիք կաշխատին կը:

Ողջում տվեց, էնոնք վրեն խնդացին: Չէ՞որ վրեն-գլոխը հին էր. քառսուն տարի ճքնել էր: Եվ օր խնդացին Ակոբ Մզմնայի վրա, էնիկ հարցուց.

- Ի՞նչ կենեք, սիրելիներ:

Կըսեր, հըմը ինքը գիտեր, օր հաղող բուն կենեն: Էտոնք ըսին.

- Փուշ կը քաղենք:

Ակոբ մզմնա տեսավ օր նորեն վրեն կը խնդան, ըսավ.

- Է՛, օղուլ, փուշ է, և փուշ դառնա:

Ըսավ, անցավ քնաց: Էտ ըսելն ու բաղը փուշ դառնալը մեկ էղավ: Կըսեն օր էտ բաղը մինչև հիմի էլ փուշ կը բուսնի:

Էտտից էլավ, անցավ Արազի ջուրը, էրկու հոքի դեմեն քուքային: Էտոնք իրար հետ խորաթա կենեն թը՝ արի մեկըս սուտ մեռել ըլլինք, մեկըս էլ խափենք, քանիմ կափեկ առնենք: Արթըղ մեկը սուտ մեռել կըլլի, մեկնե քուքա Ակոբ Մզմնային խընթըրվի կը, թե քանիմ կապեք տա, օր տանի, սել քիրա-

366 **Անփուտ** - Որ ոչ փտի. անփտելի. կարծր, երկարատև. **Փայտս անփուտս.** Ընդէ՞ր ի փայտից անփտից տապանակն: **Անփիռ** կամ **Անփիռն - Խաչ** (նաև, ըստ Հր.Աճառյանի Հայերեն արմատական բառարանի, **գավազան**), զոր կրէ եպիսկոպոսն ի ձեռին: **Նշանն յաղթութեան**՝ որ կոչի ըստ մերում լեզուի **կնիք**, և ըստ եբրայեցւոցն **անփիռն**, զոր ունի քահանայապետն ի ձեռին իւրում: Մաքրութեան ցուպ ի ձեռին անփիռն յիշատակ չարչարանաց: (Նոր բառգիրք Հայկազեան լեզուի): Կազմողի ծանոթագրումը՝ Ռ.Ղ.:

յե, մեռելը տանի: Ակոբ Մզմնան էտոր խորհուրթը հասկըցավ, հանեց քանիմ կափեք տվեց և էկավ սուտ մեռնողին գլխուն ձեռք թրեց ու ըսավ.

- Մեռյալ ես, մեռյալ մնաս:

Ու էտ մարթը էլ չզարթավ: Ինքն օր հեռեցավ, մեռնողի ընկերը ձեն տվեց.

- Ել, խափեցի, քանիմ շայի առա: Տեսսավ օր ընկերը ղորթ է մեռե: Վազեց Ակոբ Մզմնայի էտնը, ըսավ.

- Դո՛ւ գիտես, ես խափեցի, սխալվեցա, արի սաղցու, թող էլլե:

Ակոբ Մզմնան ետ դառցավ, ըսաց.

- Եղիցի ողորմութուն ըստեղծողիս, ընթ իս, շունչ ոգուս եղե անբաժանորեն մի:

Այսինքն՝ ըլլի ըստեղծող Տիրոչ էս շնորքը, հոքին սուրփ՝ մտնի մարմնին մեչը, միանա, էլլե օտքի:

Հըմը էտիկ ըսելը գիտեր, մարթը սաղցավ, էլավ օտքի կայնավ: Ակոբ Մզմնան ըսավ.

- Մերմե կըլլի մեկել անքամ էտման բան չէնեք, անփորց մարթուն ծաղրածուի տեղ չը թընեք:

Ակոբ Մզմնան էլավ քնաց Էջմիածին: Տեսսավ օր էկեղեցին պատարաք են կայնե: Կաթողիկոսն էլ ինքը կայնել է պատարաքիչ: Պատարաքին վախտը տեսսավ օր բիրատիքը կուլան կը: Էտտեղ պատասխան տվին, թե. «Ախպար, դու ո՞ւրտեղ կապրիս, ո՞ւրտից քուքաս օր խապար չես աշխըրեն»:

Ըսավ օր ինքը քառսուն տարի է ճքնիր կը Մասիսու սարը, ահան նոր էկել է:

Էնոնքա ըշտը ըսին.

- Չես ըսէ, Նատըր շայը մեր հայերուն վրա, Էչմիածնա վրա կռիվ պիտի քա, հայերուն ոչնչացնե պիտի, թալան պիտի էնե:

Էսիկ օր էտ բանն իմացավ, վանքեն դուս էլավ, հարցրեց, թե ո՞ր կողմեն քուքա Նատըր շայը:

Ըսին՝ Արևելքեն քուքա:

Ակոբ մզմնան էլավ վանքին առաջին պարսպին կայնավ ու ծոցեն խաչը հանեց, դեմի արևելք Նատըր շայի զորքին բռնեց ու ըսաց.

- Երևելով սուրփ խաչի նշան, աներևութ կործանին չար իշխանք:

Եվ Էջմիածնա կողմեն ըսկըսեց փիկալակ (վայրի մեծ ճանճ) էրթալ դեմի Նատըր շայի զորքին մեչը: Ըսկըսեցին կծոտել շայի զորքին ու ձիանուն, կատղեցուցին բիրըտուն: Մինչև անքամ ընկան սարեսար, ձորեձոր, քարե-

քար: Մի քարեմ զորքին մեչը ջարթը ցրգին: Հա՛մ ձիանը ջարթըվան, հա՛մ մարթիք:

Նատրը շայն ըսավ.

- Ասու սիրուն, էս ի՞նչ բան էր, էս ի՞նչ կրակ էր, օր թափավ մեր գլխուն: Էստեղ մե բանըմ, մե գաղտնիքըմ կա:

Ըսավ ու մարթըմ ղրկեց, թը.

- Քընա, մտի Էջմիածին, իմացի, թը ի՞նչ կա, ինչքա՞ն զորք ունին, էս փի-կըլըկը ո՞ւրտից էկավ: Մեզի լավ խապարըմ փեր:

Էդ մարթը քնաց, մտավ Էջմիածին, տեսսավ օր եպիսկոպոսները, վար-թապետները, կաթողիկոսը կայնել են պատարաք կենեն. ուրուշ նա զորք կա, նա էլ բան: Ետ դառցավ, Նատրը շային ըսավ տեսսածնին:

Մտածեցին, օր մե քանիմ մարթով Էչմիածինը կառնեն: Էքսի օրը Նատրը շայը, մնացած զորքին գլոխն անցած, ելան ճամփա: Էդ վախտը Էչմիած-նի վանքին մեչը Ակոբ Մզմնան ու մեկելոնք պատրաստվան: Ակոբ Մզմնան դուս էլավ, խաչը հանեց, կայնավ պարսպին վրեն, դեմի Նատրը շային զոր-քին դառցավ ու խաչակնքեց, ըսավ.

- Երևելով սուրփ խաչի նշան, աներևութ կործանին անօրէն իշխանք:

Հրմը էտ վախտը Նատրը շայը դիրբինը թրեց աշքին, աշեց Էչմիածնա բոլորը: Աշկին էրևեցավ միլիոններով զորք, ու զարմացավ, թե էս մարթուն օր ղրկեցի, ինչի՞ չը տեսսավ էտ զորքը: Կանչեց էնոր, ըսավ.

- Ա՛ռ էս դիրբինը, աշե դեմի Էչմիածին:

Աշեց, տեսսավ օր, օհո՜, աստղին համրանք կա, զորքին համրանք չկա: Հարցուց.

- Զորք տեսսա՞ր:

Մարթը պատասխան տվեց, թե՝ տեսսա:

Արթեն համբերութունը կորցրած ու նոթերը կիտած շայը ըսավ.

- Հրպը դու կըսեիր չկա՞: Ըսել է, թը դու գուզեիր օր մենք էրթանք ջար-թըվի՞նք: Արթըղ է՛լ խոսելու չթողեց, մարթիկ կանչեց, հրամայեց.

- Գլոխը վրեցեն վեր առեք:

Տարան, գլոխը վրայեն վեր առան:

Նատրը շայը հիմի էլ ինքը, լալան վազիրը, ճերմակ բայրաղ քաշեցին, ընկան ճամփա, թե՝ էրթանք, տեսնինք, ինչ կա, չկա: Էկան տեսսան օր Էչ-միածին մա՜րթ չկա, մեննակ վարթապետնին ու եպիսկոպոսնին կայնել, կա-

թողիկոսին հետ պատարաք կենեն:

Նատըր շայը քնաց կաթողիկոսին քովը, իրան օթևանը, ըսաց.

- Ես Նատըր շայն եմ: Գուզեմ իմանալ, թե ինչո՞վ է, օր դուք էսման հրաշքներ ցուց կուտաք, մեզի էսման մոլորեսնեք կը, փորցանքի կը փերեք:

Կաթողիկոսը տեսավ օր շայը մոլորյալ ու վախեցած գառնուկի աշկեր ունի, ուստի իր հերթին ինքն էլ կամեցավ իմանալ, թե շային հետաքրքրողը ի՞նչն է հատկապես: Հարցուց՝ ի՞նչ գուզես իմանալ:

Պատասխանեց, ըսավ.

- Գուզեմ իմանալ, թը ինչո՞վ է օր էտ զորքը ցուց կուտայիք, իսկ էստեղ զորք չկա, չունիք:

Կաթողիկոսը շիտակ պատասխան տվեց, ըսավ.

- Մենք զորք չունինք, հըմը սուրփ հավատ ունինք և մեր սուրփ խաչի զորութունն ունինք:

Նատըր շայը ըսավ.

- Եփ օր էտման սուրփ զորութուն ունի ձեր խաչն ու հավատը, ես կը խընթըրվիմ, օր ինձի մկրտես, հոգով դառնամ քրիստոնա:

Էդտեղ լալա վազիրն ըսին.

Եփ օր դու դառնաս քրիստոնա, մեր ժողովուրթը բիրատի կերթա, կը կորի: Նատըր շայն ըսավ.

- Դառնամ կը քրիստոնա, հըմը չեմ հայտնե ժողովրթին. հոգով կը մնամ քրիստոնաների սուրփ օրենքի տակը:

ԿԱԹՔԱՐԸ

Քուրըմ ու ախպերմ են էղե, կռապաշտին ձեռքեն փախչին կը էղե: Էտոնք փախել են մե ուրուշ էրկիրըմ, օչխար կարծեն կը էղե: Մեմե կիմանան օր էտ կռապաշտը իրենց էտտին կը պտտի, օր տանի ձեռք ցըգե, չարչըրե:

Քուր ու ախպար նըստին, Աստըծմեն խնթրեն կը, թե՝ Տեր Աստված, մենք քու դուլըդ ենք, մեզի իստեղ քար դառցու, թաքի էտ կռապաշտին էրեսը չըտեսնինք: Աստված էսոնց խնթիրը լսե կը ու իրենց էլ, օչխըրին էլ քար կը դառցընե: Էտտից ետև շատ-շատ ժամանակներ են անցէ. քարը մեկիմ էրծել է, թե մենք քուր ու ախպար էինք, կռապաշտին ձեռքեն փախանք, Աստըծմեն խնթրեցինք քար դառցանք: Աստված մեզի մարիֆաթ է տվե, օր կաթ չունեցող կընկտիքը իրենց բալուլով տղեն վերցնեն, ախպորն էլ հետը փերեն մեր

քովը, մե հավրմ մատղեն, կովին արթար կարաքն էլ ծրծերուս քսեն, նորեն առնեն ծրծերուս քսածը քսեն իրենց ծրծերուն, էն ժամանակ իրենց բաղձանքը կը կատարվի, ծրծերը կաթ քուքա:

Հիմի վեվ օր էրթա էտ կաթքար-քուրոչը քովը, ամմենեն առաջ պզտի ախպորնե հետը պիտի տանի, չունքի քարերնա քուր ու ախպար են: Էտով ուխտը ունթունական կըլլի:

Քովն էրթըցող կընկտիքը հավ կը մատղեն, ետևկաթքարին ծրծերուն եղ կը քսին: Էրեխինա թընեն կը էտ քարին առաչը, կըխտեն ու քարին քսած եղը իրենց ծրծերուն կը քսեն: Հըմը քսելուն պես ծրծերը կաթը լիքը կը լըցվի:

ՄՈՒՐՃԱԽԵԹՈՒ ԿԱԹՔԱՐԸ

Մե քուրըմ ու ախպերըմ ճամփա կերթան էղե: Էտ վախտը քուրը կըսէ թը՝ ախպար ջան, չըլլի՞ սխալիս, ետ աշես, քար կը կըռիս: Հըմը ախպերը պզտիկ է էղե, միտքը չէ պայե: Չարխին սըրըմը կապած վախտը բիրտան ետ կաշե ու քար կը կըռի: Քուրը կաշե օր ախպոր ձենը չի քա, ետ կաշե օր տեղնուտեղը քար է կըռե: Արթըղ ինքնա քիչըմ ախպորեն հեռու քար կը կըռի: Դիորի հիմիա էտ ախպարը Մուրճախեթու արտերուն մեչը կուզ կեցած կերևա: Քուրոչ քարնա մե բոյով քարմ է: Էնոր քովն օր էրթան կաթ չունեցող կընկըտիքը, պզտի տղին բալուլով թընեն տակը, լացընեն, ու օրորեն, էնթից ետև քարին վրեն արթար եղ քսեն, մոմ վառեն, Աստծու տված զորութենովը էտ քարը կաթ կուտա կընկանը: Էտոր համարա անունը Կաթքար է մնացե:

Չե՞ս հավատա: Դիա քու հորոխպորդ կընիկը, օղորմած հոքի Գուհարը Գինոյով օր տղոսկան էր, Աստված հետ ու հեռու էնե, հե՛չ կաթ չունիր: Գինոն կուլա՜ր, կուլա՜ր, հեչ հնար չկար, ձենը չէինք կըրնա կըտռե: Աշեցինք օր չիլլի, կերսարըս ու կեսուրըս, ես ու Գուհարը առանք Գինոյին բալուլը, սելով քընացինք Մուրճախեթ: Էտ քարին քովը ինչըղ օր կըսեին, էմանա էրինք. Գինոյին թըրինք Կաթքարին օտվընուն քովը, լացե՜ց, լացե՜ց, օրեցինք-օրեցինք, հետնե քարին եղ քսեցինք: Եղն օր քսեցինք քարը պտու՜ղ-պտուղ քըրտընավ: Մոմ վառեցինք, մեռնիմ զորությանը, Գուհարին ծրծերը կաթը լիքը լցվավ:

ԽԱՉԱՓԱՅՏԻ ԱՂԲՅՈՒՐԸ

Դինարիգոմից հինգ ժամ հեռու խաչափայտ անունով մի սար կա: Այստեղ հայերը բերել են Քրիստոսի խաչափայտի մեծ մասը և, հետապնդումներից խուսափելով, թաղել: Երբ մահմեդականները (արաբները) դադարում են հետապնդել, հայերը խաչափայտի մասունքները հանում ու մի ինչ-որ տեղ են տանում: Այդ ժամանակ նրա թաղված տեղից բխում է մի սքանչելի ջուր, որ շատ սառը և համեղ է: Այնքան առատաբուխ էր, որ մի ջրաղացաքար էր պտտեցնում:

Ահա այստեղ շատ անգամ հիվանդ անասուններ էին բերում, լողացնում, սառը ջրի մեջ էին մտցնում, և Աստծու զորությամբ բոլոր անասունները առողջանում էին:

Մի այդպիսի արարողության մասնակից է եղել իմ խորագետ և իմաստուն բանասաց Սիմոն Դավթյանը, ով անվերապահ հավատում էր, թե մալի կոտորումը դանակի պես կտրեց:

Աղբյուրին ուխտի էին գնում և աղերսում, որ հայի մեր Աստվածը բոլոր խշիմներից ազատ պահեր:

Խաչափայտի աղբյուրը հայրենի Եփրատի ակունքներից մեկն է, և կբխի առատորեն:

ՄԾՈ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Մուշը թանգ աշխար է: Էսոր հողն ու ջուրը մտնողը ջայիլնա կը: Կըսեն թը էնտեղի ախպըրներեն անմահական ջուր կը վազզե:

Մե անքամըմ մե պառավ կընիկըմ ղազին ու էրտըգնուն փորերուն ալաթները տանիկօր ախպրին ջրին մեչը լվա: Լվացած վախտը ղազն ու էրդագը սաղնան կու պառավին ձեռնեն թռնին կը էրկինք: Պառավը մաթ կը մնա ու այիլ-մայիլ էղած քուքա տուն:

ԽՈՂԱՊԻՆ ԼՃԻ ԱՆՈՒՆԸ

1921 թվականին, երբ քամալիստը եկավ Ջավախքը նորից ավերելու, տղամարդիկ փախան Վրաստանի խորքերը: Փախան նաև Կարծախի տղամարդիկ ու երիտասարդները: Թուրքերը Կարծախ չէին մտել, երբ գյուղի ծերունիների խորհուրդը որոշեց մի մարագում թաքցնել գեղեցիկ կանանց ու

աղջիկներին: Այդպես էլ արին: Օրապահիկը գաղտնորեն տալով կանանց՝ մի կերպ պահում են, մինչև որ տեսնեն, թե Աստված ինչ կտա:

Հենց այն է, հա՛, հա՛, թուրքերը պիտի նահանջեին, երբ ծերունի Ապինը մտքափոխվում ու գնում է թուրքերի մոտ, հայտնում բանի եղելությունը: Թուրքերն իսկույն ջարդում են մարագի դուռը և գեղեցկուհիներին բաժանում իրար մեջ, տանում Չըլդրը: Գյուղում վայնասուն է ընկնում, բայց դե դժբախտության առաջն առնելու ոչ մի ճար չի լինում:

Երբ թուրքերը, այնուամենայնիվ, նահանջում են, և հեռացած տղամարդիկ վերադառնում են տները, կանանց չեն գտնում: Ի վերջո գաղտնիքը բացվելուց ու իմացվելուց հետո, ատելի Ապինին քարշ են տալիս լճափ, անդամահատելով ու մարմնի մասերը մեկ-մեկ կտրատելով, ասում են.

- Ահա՛ քեզ, խոզ Ապին, ահա՛ քեզ, խոզ Ապին ու նետում են ջուրը:

Այստեղից, և ամոթալի այս պատմության համար է, ասում են, լճի անունը մնացել՝ Խոզապին...

ԱՆԻ ՔԱՂՔԻՆ ԱՆԱՍՏՎԱԾՆԵՐԸ

Անի քաղքին մեչ հայերն էնքան էին լրփացե օր, ժամին մեջը էրկան տիրացուին կարճ կըռաքալ կը թընեին, կարճինա՝ էրկան, օր էրկանը կուզ կենար, կարճընե վեր էրկընննար, ու իրենքե վրեստանը խընդային: Շատ օր էրկան-բարակ էտման կենեն, Աստված բարկանակըու մե հրեշտակըմ կը ճամփե թը.

- Քնա, ըսա՝ անեցիք դառց քան, չէ նա կրակ կը թափեմ, ձունը հալերուն քուքա:

Հրեշտակը քուքա կաշեկրօր էտոնց մեջը թաք մե մարթըմ արթար է: Կերթա Աստծուն կըսե: Էտ մարթնե չիտեմ վեվ է էղե սա, Աստված էնոր հրամայե կը քաղքեն դուս էլլել:

Մարթը քաղքեն օր դուս կելլե, մեկալոնց վրեն կրակ կը թափե ու բիտտունին վառե կը: Հըպը Աստծուն մըտյան կենե՞ն, ժամին տըռըսխա կենե՞ն, ինչըղ օր հիմի դուք կենեք: Էտտից էտև Անին անիծված է մնացե:

Էտոր համարե հրաման չկա, օր շենլիկ բնակռի:

ՀԱԲՍ - ՂԱԲՍ

Միսավիրնին նստած կըլլին մե հարուստ մարթում տունը, կուտեն, կխմեն, քեֆերն օր կը դիզնին, կաշեն օր ժամանակը անցավ, օրը իրիկուն էղավ: Տանտերը հարսին կանչեկը ու կըսե.

- Սամավար ցիկ, չայ խմենք:

Հարսը սամավար կը ցգե, խոնչան կը սրփե, ըստաքան-թապաղ կը շարե խոնչին վրեն, հաց-պանիրը կը փերե, կերթա կաշեկըօր սամավարին ջուրը կեփի կը: Վերցնե կը սամավարը, փերե թընե կը օդին փեքին թըրած մե պզտի ֆուրղունիմ վրեն: Ու թեերը վեր կը քաշե, խզմաթ կենե կը: Էտ վախտը կաշեկը օր էտ ֆուրղունը փեքին վրեցեն ա՛լա հա՛ցած կը վազզե: Միսավիրնին մաթ կը մնան, թը էս ի՞նչըղ բան ըլլի օր ֆուրղունը տեղեն ժաժ քա: Կելլեն կաշեն, կաշեն, բան չեն հասկընա, հըմը ուշկը վրան հարսը հասկըցած է էղե, օր սամավըրին ջրին էփելեն է, օր ֆուրղունը ժաժ քուքա:

Աշվիդ սիրեմ, հարս խանում, սամավարին օրինակովը մե պզտի մաշինեմ կը շինե, էտեն մե խոշորըմ կը շինե ու դառցընե կը պոյե՞զ:

Էտ հարսին հինըրին համար էտ քաղքին անունը թնեն կը Հարս, ետև քիչ-քիչ, քիչ-քիչ Հարսը դառնակը Ղարս:

ՀԱՅԲԱՀ - ՀԱԲԱՀ

Մե հայ հարուստըմ կըլլի, կերթա էրկըրեն դուս: Ինքնե հայերուն բաշն է էղե: Մարթիք էս մարթուն անունը չեն տա էղե, ընթունված ձևով բոլորը նրան միշտ ու ամենուր ըսել են Հայ բաշ, այսինքն՝ բոլոր հայերուն առաջնորդը:

Ժամանակի հետ էս բառը կը ձևափոխվի, բառի էրկու մասերը կը միանան, կը դառնա միաձույլ մե բառըմ՝ Հաբաշ: Էս Հաբաշ հային անունով է, ըշտը, օր էտ էրկըրին անունը Հաբաշ է մնացե:

Քանի օր էտ էրկիրը հայ քրիստոնա է դառցե ու մեզնից շատ բան է վերուցե, մեզի հարազատ ու մոտիկ է էղե շատ հին ժամանակներում էլ, միշտ էլ առաջներում էրթալ-քալը, կապը էղել է: Հնում էլ սովորույթ է էղել, որ Էչմիածնա մեչը մեռոն էփելու վախտը հաբաշներեն մե մարթըմ կը կանչեն էղե, օր էնոնքե սուրփ մեռոնը էփելուն մասնակից ըլլենան:

ՀԱՅՐ ԱԲՐԱՄԻՆ ՏՂԵՆ

Հայր Աբրամը տղա չի ունենում, և էրիկ-կընիկ Աստըծուն էնքան կաղաչեն, օր անիկ կըսե.

- Հայր Աբրամ, տղա կուտամ, հըմը էնոր մատաղ պիտի էնես:

- Լավ կըլլի, Տեր իմ, կըսե, դու տղամ տուր, ես թող մատաղ էնեմ:

Կուտա: Տղեն կը մեծնա ու քուքա մատղելու վախտը: Էրիկ-կընիկ կելլեն, իշուն կը բառնան փարխաճ, հաց ու պանիր, օր էրթան Աստծու ցուց տված տեղը, սրփին քով մատաղ կտրելու: Դըրկըցնին կաշեն օր ատոնք մատաղի պատրաստութեն կը տեսնին, հըմը ճամփա կըյնին առանց մատղըցուի: Հասնին կը սարին ծերը, սրփին քովը, հայր Աբրամը դանակը կառնե, քաշեկը օր տղին մատղե:

Ասվածութենը վերեն ձեն կուտա.

- Հայր Աբրամ, ատ ի՞նչ կենես. մեմ վեր աշե:

Վեր կաշե օր ժընջըլով ղոչը կախվի կը ցած: Արթըղ տղին տեղը ղոչը կը մատղե, Աստծուն փառք կուտա: Հըմը տղին բկին կռածը կոշտ կը կնա: Ատտիցա էրիկմարթոց խըռթլաղը դուս կը մնա:

ՄԱՐԻԱՄ ԱՍՏՎԱԾԱԾԻՆԸ

Մարիամ Ասվածածինը հայր Աբրամի հետ գողտու գործ կունենա էղէ: Ու ծանդռվոտք էղած վախտը թաքավորը էրած կը տեսնի: Տեսնի կը օր իրեն պալատեն մե պզտի քարըմ կըյնի: Առավոտ թաքավորը թալլթալ կը կանչե ու ճվալ կուտա օր լալավազիրնին, իրեն տասներկուսը, իմաստունները հավաքվին:

Հավաքվին կը: Նըստին կը ու կաշին, թը էս մարթը ի՞նչ պիտի ըսե:

Թաքավորը էրածը պատմե կը ու հարցնե կը.

- Ի՞նչ մանա է: Վեվ կըրնա էրածս հասկընա:

Կը մտածեն, կը մտածեն ու կըսեն.

- Թաքավորն ապրած մնա, էրծեդ կերնա օր աս տարվա ծանդռոտք կընկտացեն մեկը մե տղամ պիտի փերե, ատ մանչը պիտի մեծնա, ու թաքավոր պիտի դառնա:

Թաքավորը մատը կը խածե ու կըսե.

- Օր ատանք է, բիտտուն ծանդռոտք կընկտացը սուրը պիտի քաշել, օր էտ մանչը ծնունդ չունենա:

Մարիամը աս հրամանին ձենն օր կառնե, կերթա մտնի կը մե մաղարեմ: Վախտն օր քուքա, պառկի կը ու մե մանչըմ կը փերե: Ըշտը աս մանչնա Աստու կամքով կելլե, Քրիստոս կը դառնա ու սաղ աշխարըի կը թաքավորե:

ՁՈՒԿ ԴԱՌՑՈՂ ԻՐԻՍԿԻՆԸ

Մե տերտերըմ կըլլի, կունենա մե շա՜տ ըռընդլիկ իրիսկինըմ: Մե օրմա տերտերը ժամ օր կերթա, իրեն տունը մե աղկատըմ քուքա: Էտ ախկատը իրիսկանն օր կը տեսնի, խելքը գլխեն թըռնի կը: Իրիսկինն էտ վախտը հաց կեփե էղե: Աղկատը օղորմություն գուզե, կառնե, հըմը դուս չի էրթա: Կայնի կը ու աշկը կը ցըգե իրիսկանը էրեսը: Շատ օր կաշե, իրիսկինը կըսե.

- Այ մարթ, էտ ինչ շատ աշեցիր ինձի, կըսե չըլլի՞ ճանչեցիր: Ախկատը վերցընե շիփ-շիտակ ու արթար ժպիտով կըսե թե.

- Իրիսկի՛ն, մայիլ մընացի քու ըռընդութանըդ, ինչքան օր կաշեմ, քեզնեն չեմ կըշտանա:

Արթեն ամոթխածորեն կարմըրած՝ իրիսկինը, քիչմա մեղքանալով, կըսե.

- Ըռունդ օր էղանք կրա՞կն ընկանք, օր թարկըս չես տա:

Ախկատը հմայվածի պես, աշկը չհեռացնելով իրիսկընկա լույս ու պայծառություն ճառագայթող էրեսեն, ամոթը բուռը կառնե, կըսե.

- Իրիսկին, թե Աստվածդ կը սիրես, գոնյա մի թուշըդ տուր պաքնեմ, էրթամ:

Իրիսկինը շատ Ասվածավախ կընիկ կըլլի: Եվ օր ախկատը Աստըծու անունը կուտա, կըսե.

- Է՛հ, արի, թուշս պաք, թարկըս տուր, քընա՛:

Ախկատը էտ իմանալը գիտեր, թըռնի կը թընռափն ու իրիսկանը կսկուծըմ կը պաքնե: Թուշն օր կը պաքնե, հըմը էտ վախտը ժամին մեչ տերտերին խորուրթը կը խանքարվի, կիրքը քուքա: Խորուրթն օր կը խառնըվի, ժամը կիսատ-միսատ, ափալ-թափալ կընկնի կը տուն: Օր քուքա, տեսնիկը օր իրիսկինը սաղ-սալամաթ, հաց կեփե: Կըսե.

- Իրիսկին, շիտակն ըսա, քիչըմ առաջ մեր տունն ի՞նչ էղավ օր ժամին մեչը, կարթունքիս խորուրթը խանքարվավ:

Իրիսկինը բայան չի էնե: Էտև օր տերտերը կըսե թը.

- Իրիսկին, դուն ու քու Աստվածդ, շիտակ ըսե, մեր տունը ի՞նչ է էղե:

Իրիսկինը Աստծուն անունը իմանալուն պես կըսե.

- Տերտեր, եփ օր Աստծուն անունը տվիր, շիտակն ըսեմ. հալ հեքաթ, էսման-էսման բան պատայավ:

Շիտակն օր կը պատմե, տերտերին հերսը սաստիկ կելլե:

- Այ, կընիկ, կըսե, ամեն մարթ օր Աստծուն անունը տալով քեզնեն բան ուզե, դու հըմը դե՞մ պիտի վազզես: Ահա՛ն, եսե քեզի կըսեմ՝ Աստծու սիրուն, ընկի թընդիրը, վառվե, դու պիտի ընկնի՞ս:

Իրիսկինը Աստծուն անունը իմանալուն պես դառնա կը թընդռին մեչը: Մեռնիմ Աստծուն զորութանը, հըմը է՛տ դախխային թընդռին կրակը կը դառցընե ջուր, իրիսկաննե դառցընե կը ըռընդլիկ ձուկ: Էնդից էտև էտ թընդիրը դառնա կը Տիրամոր ըխտատեղ: Որպես թե Տիրամարը սուրբ կը դառնա: Վեվ օր Տիրամոր յարա կունենա, կերթա էտ ըխտատեղը, հավուզին մեչը կաշե, կըսե.

- Իրիսկին, մեմ մարմինըդ բաց տեսնիմ: Արթըդ իրիսկինը ղամչըլամիշ կըլլի, դառնա կը մեշկին, ցուց կուտա գյովդան, հիվանդին յարաները բիրտան-բիր լավցընե կը: Կըսեն՝ էտ թընդիրը Մուղնիա մեչն է, կամ էլ՝ Հաբաշին մեչը:

ՔԱՐՎԱՆ - ՂԸՌԱՆ

Քարվանն օր քուքա մեշին քանարը կը հասնի, մութը կըյնի: Քարվանբաշին կըսե օր գիշերըս էստեղ մնանք, ճամփեն գեշ է, փորցանքի չը քանք: Եփ օր լուսաստղը կելլե, էլլենք էրթանք: Էտմանա կենեն: Քնին կը: Քարվանբաշին բիրտան կը զարթի օր՝ օհո՜, մե մեծ աստղըմ դուս է էկե:

- Էլե՛ք, կըսե, տղե՛ք, վե՛ր էլեք, ուշը մնացինք:

Կելլեն բեռները կը բառնան ու շիտակ դեմի էտ աստղը կերթան: Հըմը կերթա՜ն, կերթան, լուսը չի՛ բացվի: Դու մի՛սե, սխալվել են, մութ ու խարապ ճամփեստանը անցնել չեն կըրնա, կըյնին ձորերը, սա՜ղ քարվանը ջարթըվի կը:

Ըշտը այտի աստղին է, օր քարվան-ղըռան անունը կուտան:

ԿԱՂԸՆԴԻՆ ԳԻՇԵՐՎԱ ՁՈՒՐԸ

Կաղընդին գիշերը կերսարը կելլե, հարսեն ջուր գուզե օր լվասվի: Հարսը կերթա ախպըրեն ջուր կառնե ու վազզե կը տուն, լըլե կը կերսարին ձեռքերուն: Օր կը լըլե, կերսարը կաշե օր օսկի է:

Կըսեն թը ավալքվա վախտերը կաղընդին գիշերը ջուրը մե սահաթըմ օսկի կը դառնա էղե, հըմը մեննակ անմեղներուն բաժին կըյնի էղե:

ՃՔՆԱՎՈՐ ՏՂԱՆ

Մե տղամ հորեն-մորեն ճորի կը ու կերթա սարը, ճքնե կը: Շատ օր կը մնա, կանսնի մե քանիմ տարի, կըսե՝ հըլը էրթամ աշեմ թը գեղը ինչ կա, չկա:

Քուքա կաշե օր բիրատի քնացել են ժամ: Ինքնա կերթա, մըտնի կը ժամ, տեսնի կը օր բիտտունին շալկընին քեխ կա: Տերտերին կաշե, էնոր շալակն էլ քեխ կը տեսնի: Կաշե օր մեննակ ինքն է, օր շալկին քեխ չունի: Որոշե կը օր էրթա մե քեխմա իրեն համար առնե: Կերթա, քեխը շալակը կառնե քուքա ժամ: Մե էրկան դագինակմա ձեռքը կունենա: Կաշե օր էնոնք ճաշակվին կը:

Ժողովուրթն օր քեխն ու դագինակը տեսնի կը, զարմանակը.

- Էս ի՞նչ մարթ է, էս ի՞նչ կենե իսիկ: Մեղա՜ քեզ, Տեր, մեղա՜, կըսեն՝ մեղաց մեչ պիտի կորինք:

Ճքնավորը դագինակը էրկըսնե կը տերտերին, օր ճաշակ առնե: Տերտերը կը զարզըմբի, բիրատիքը վրեն կը խնդան, կըսեն.

- Ա՛յ ջանըմ, ինչի էս քեխը ումուզիդ առե, դագինըկով էլ ճաշակ գուզես:

Տղան ինքնա, շփոթված ու զարմացած, շուրջբոլորը բիրըտուն հերթով կաշե, ավելի զարմացած կըլլի, քան իրան հարց տվողները ու, քանի օր իրեն հարց էին տվե և բոլորի հարցական հայացքը հենց իրեն էր ուղղված, կըսե.

- Հըպը ի՞նչըղ էնեմ. դիա բիտտունիդ վրեն էլ քեխ կա. աշեցե՛ք, տերտերին շալակնե քեխ կա:

Գյուղացիք տարօրինակ էս մարթուն վրա չիտեն՝ լան, թե խնդան. վերջը արմանք-զարմանք կըտրած կըսեն.

Ջանըմ, էս մարթը իսկական սարեն իչած արչ է: Հարցընեն կը, թե.

- Իտի դագինակն ի՞նչի ես առե:

- Հըպը ճաշակն ինչով պիտի առնեմ,- շիտակ ու պարզ պատասխան կուտա էս երիտասարթ ու ծիծաղելի տղան:

Գյուղացիք, օր արթար ու բարի են, ճիշտ է՝ կը խնդան, բայց նաև խրաթ կուտան, թե՝ ինչն-ինչոց է, կարգն ու ծեսը ինչըղ պիտի պահեն, օր ամոթ ու էդման սխալ, էդքան խընդալու չըլլի: Դու արի տես օր ճքնավոր տղեն շատ արթար է էղե, արթար ըլլելուն աշկին կերևա էղե, օր բիտտուննա իրապես մեղավոր ըլլելնուն ունեցած մեղքերը շալկընին կերևա էղե:

ՄԵՂԱՎՈՐՆԵՐԻ ՔԵԽԵՐԸ

Էրկու ախպար կըլլին, մեկը տերտեր, մեկալը՝ չոբան: Աս չոբանը կյանքին մեչը ժամ մտած չիլլի: Ատոր համար շենլիկը տերտերին մեղթըրե կը: Տերտերնա ախպորը սարեն կանչե, կըսե օր ժամ պիտի քաս:

Չոբան ախպերը խաթրեն չի անցնի, քուքա ժամ: Ժամ օր կը մտնի, տեսնի կը օր ի՞նչ տեսնի. բիտտունին կըռնըկին վրեն մեկ-մեկ իշու քեխ կա, հըմը տերտերին վրեն՝ երկու քեխ:

- Վա՜յ, կըսե, ըլլի թը ժամ էրթըցողի աղաթն է, օր կըռնըկին վրեն քեխ պիտի ունենա, եսա էրթամ մեր իշուն քեխը առնեմ մեշկիս, քամ, օր ատոնց հավասարվիմ: Կերթա, քեխով օր ժամ կը մտնի, ժողովուրթը կը բոռա, հիլիլա կենե թը.

- Ա՜յ մարթ, ատ իշուն քեխը ժամը ի՞նչ գործ ունի:

Չոբանը զարմանա մնա կը: Կըսե.

- Ախպա՛ր, ահան բիտտունիդա վրեն քեխ կա, ձերը չը տեսսաք, ի՞մը տեսսաք:

Ասոնք օր իրար կառնեն, տերտերը բեմբեն վար կիշնի, ախպորը քըշե, դուս կենե: Ժամն օր պրծնի կը, տերտերը տուն քուքա, ախպորը բեաբուռ կենե: Հըմը սրտնեղած չոբան ախպերը կըսե.

- Տերտեր ջան, ախր բիտտուննա քեխ ունին, դունա էրկու քեխ ունիս:

Տերտերը մտածմունքի մեջ կըյնի: Կաշե օր իրեն ախպարը արթար է, ատոր համարա աշվնուն քեխ կերևա: Կասկածները շատ օր կը խորանան, տերտերը գուզե անպայման իմանա, թը՝ էսքանի մեջ ախպարն է մեննըկ արթար: Կհարցնե.

- Ախպար ջան, հըբը սարերուն վրեն ի՞նչըղ կապրիս. նա ժամ կա, նա պատարագ:

- Տերտեր ջան,- կըսե չոբան ախպերը,- ես օր օչխարը փերեմ կը ախպըրին վրեն ու հաց կուտեմ, էրկընքեն խորոզի ձեն կառնեմ. ըշտը ատովա յոլա կերթամ:

Էքսի օրը տերտերը ախպորը հետ սար կերթա, ախպըրի կուշտը կը նստի և էրկնքեն խորոզի ձեն կառնե: Ձեն կառնե ու մատը կը խածե: Կաշե օր ախպերն արթար է, ինքը՝ մեղքի մեջ կորած:

ՀԱԲԱՇ ԷՐԹԸՅՈՂ ՏԵՐՏԵՐԸ

Կռապաշտ թուրքերն օր շատ կը զոռեն հայերուն, հայերը թողնեն, ամենը մե թարաֆըմ փախչին կը: Հայերուն տերտերն էլ գլոխը կառնե էնքան հեռու կը փախի, օր հասնի կը Հաբաշին հողը: Օր կը հասնի, գիշեր կըլլի: Մըտնի կը մե գեղիմ մեչ, մոտենա կը մե տանըմ, դուռը կը ծեծե: Ճրաքը վառած՝ մե հաբաշ կընիկըմ դուռը ծերպ կենե, կը հարցընե.

- Վե՞վ ես, ի՞նչ գուզես գիշերվա էս ուշ ժամին:

Էսիկե կըսե թը՝ ըշտը հայ տերտեր եմ:

- Է՛,- կըսե հաբաշ կընիկը զարմացած,- ինչի՞ ես էկե:

Էսիկա գլխուն էկածը պատմե կը: Հաբաշ կընիկը գուզե օր դուռը հեթ թընե, տերտերը կաղաչե, պաղատե կը, օր նես առնե: Բայց հաբաշ կընիկը հեչ մոտիկ չի քա, ուր մնաց դուռը բանա. սառը ձենով կըսե.

- Դու օր իսկական հայի տերտեր ըլլեիր, թուրքերը ձեզի մոտիկ քալ չէին կըրնա: Քանի թեզ է, հեռեցի, քընա, թե չէ մանչըս քուքա, կիմանա օր հայի տերտեր ես ու չես կըրցե քու հավատովդ թուրքերուն հախեն քա, քեզի կը բռնե ու կը մորթե:

Տերտերը նորեն կաղաչե, թե՝ ախըր դուսն եմ մնացե, նալըմ էրա:

- Լավ,- կըսե կընիկը,- նես կառնեմ, հըմը քեզի կուտամ դագինակըմ, կը տանիս, կը տընկես օթաղիդ մեչը, կառնես սաղմոսքը, կը կարթաս. էնքան կը կարթաս, օր էտ փետը կանընչի, ծառ դառնա, թը չէ Աստված քու մեղքերուդ թողուբեն չի տա:

Տերտերը էսոր ըսածը կը կատարե. կառնե սաղմոսքը, գլոխը կը բանա, կարթակը ու մեղա կը կանչե, կարթակը ու մեղա կը կանչե: Դիորի լուս օր կը կարթա, մեմե կաշե օր դագինակը կանընչավ:

Հաբաշին մանչը լուսուն նես կը մտնի, կաշե օր մոր ըսածն էղել է: Արթըղ տերտերին հետ ծանոթանա կը ու էնոր իրենց քովը պայեն կը: Վախտըմ օր կանսնի, տերտերը դառնա քուքա Հայաստան, կաշե կը օր իրեն վրեն հեչ մե անհավատըմ ծուռ չի կըրնա աշե: Տերտերը ինքը փոխվել էր ու իր համար իր շրջապատն էլ փոխվել, ուրիշ էր դառցե:

ՀԱՅԵՐԻ ՈՒ ԵԶԴԻՆԵՐԻ ՓԱՐԴԵՆ

Եվ որ ճըֆտըները Քրիստոսին բռնեցին տարան խաչելու, իրենց քովը ունեին հինգ հատ մեծ մըխ: Էնոր մըխեցին թեերեն ու օտվըներեն. չորս մըխը վերչացավ: Մեկել մըխը ճըֆտըները պիտի զայնեին Քրիստոսին դոշին, վրա հասսավ եզդուն մեկըն ու ափերեն խլեց, հեռացավ:

Էտոր համարե եզդուն ու հային արեն մեննակ մե բարակ սոխի զարի պես ֆարդեմ կա:

ԳԱՅԼԵՐԻ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՀԱՅԸ

Մե ճամփորթըմ ձմեռը գեղ կերթա էղե, մութը կըյնի կը: Մութն օր կըյնի, տեսնիկը օր մե բելիկըմ ջանավար քուքան դեմի իրեն: Չելին օրթենե մե եղը-նըմ խոտ է էղե:

Անտեր, ամայի տեղ: Էս մարթը կաշե կը օր իրեն պիտի ուտեն, կելլե էտ եղընին գլխուն, խոտը կը ծակե ու մտնի կը մեչը: Ջանավըրնին քուքան եղընը կը փատտեն ու կուլուլան, կոռնան կը:

Մեմե բիրտան վերեն ամմեն մեկին համար մե հատըմ սոմինի պես բանըմ կըյնի կը: Էտոնցեն մեկը կըյնի մարթուն գլխուն, մեկելոնք իրենց փայը կառ-նեն ու կերթան: Հըմը ջանավըրնուն մեկը կուլուլա, կուլուլա ու կաշե օր իրեն փայը չկա, թողնե կերթա իր ընկերտանցը քովը:

Մարթը կաշե օր լուսացավ, կելլե, եղընին գլխեն կիշնի, էտ սոմինը կառնե ու քուքա կը գեղ: Ինձի պատմողնին սոմինը աշկերովը տեսել են էն մարթուն ձեռքը: Կըսեն թը էտ սոմին ըսածը իսկական փթած փետի ու հացի պես բան է էղե՝ նա հաց է, նայե փետ: - Հըպը՜: Աստված օր ջանըվըրնուն հաց չտա, ի՞նչըղ կըրնան օր ապրին:

ՕՁԱՂ ԽԱՌՆՈՂ ՀԱՅԸ

Մե հայըմ կերթա թուրքիմ տունը միսըվիր կըլլի, հըմը այտնի չիլլի, թը՝ ի՞նչ ազգ է: Թուրքին կընիկը տղին կըսե.

- Քընը հըլը աշե իտի մարթը ի՞նչ կենե:

Տղան կերթա կաշե օր մարթը նստել է օջղին կուշտը, մե փետըմ առել ու խառնեկը կրակը: Վազզե քուքա մորը կըսե թը.

- Մարի՛, էտ մարթը փետըմ առե, օջաղ կը խառնե:

- Է՛, օղուլ,- կըսը կյանք տեսած մարը,- հասկըցանք օր մեր միսավերը հայ է:

ՔԱ՞Մ, ԹԵ՞ ՉԸՔԱՄ

Մե վերանա ջաղասկըմ կըլլի, էտոր պատնե ուռած կըլլի: Վեվ օր կերթա էտ ուռած պատին տակը կը կայնի, էտ պատը կըսե.

- Քա՞մ, թե՞ չքամ:

Վախենալնուն բիտուննա կըսեն՝ մի՛ քա:

Քալողներին մեկը էտ օրը լա՜վ խըմած կըլլի, օլըրթվելով պատին օր կը մոտենա, պատը նորեն իր հին հարցը կուտա, կըսե.

- Քա՞մ, թե՞ չքամ:

Էս մարթը ո՛չ էս, ո՛չ էն, խմածին համար ծովը ծնկներեն է, չէ՞, կըսե.

- Ծո տը հե՛րիք զայլա տանիս, քաս պիտի, արի՛:

Մերի էն կը տեսնի օր՝ ի՜նչ, կա՜րմիր օսկին շըռալեն թափի կը ցած:

Մարթը օսկին փեշերը կը լըցնե ու կերթա կը տուն:

ՕՉԻԼԸ՝ ՄԱՏԱՂ

Կըլլի, չիլլի, մե քուրթ չոբանըմ կըլլի: Էտոր սարը հեչ մե ախպուրըմ ու ջուրըմ չիլլի: Ծոքին ինքն էլ, հայվանն էլ շատ օր կը ծառվընան, քուրթ չոբանը ձեռվին վեր կը տնկե, կըսե.

- Աստվա՜ծ, այսի նստած տեղես մե ախպուրըմ հանե, ես քեզի համար մե լավ ղոչըմ մատաղ կենեմ:

Աստված քրթին աղաչանքը լըսե կը, տեղն ու տեղը մե ախպուրըմ կը բըխեցնե: Ջուրն օր կուշտըմ կը խմե, հացնա կուտե, կելլե կերթա:

Քուքա մատղին խոստացած օրը, չոբանը հանվի կը, օչիլ կը քրթվե, հետն էլ ինքն իրան խոսի, կարթարանա.

- Ջանըմ, էնե մե բանըմ էր, էղավ քընաց, հիմի իտոր համար սաղլամ ղոչըն ի՞նչըղ մատղեմ:

Բռնե մե ղոճա օչիլըմ կառնե, մատղե կը ղոչին տեղը:

Աստված օր կը տեսնի էս արարմունքը, սաստիկ վիրավորված կըզգա իրեն, ու բռնե տեղն ու տեղը չոբնին ու իրեն օջխըրներուն քարասնե կը:

ԵՔԻՎԹՆԵՐ

ՂԱՍԱԲՕՂԼԻ

Կըլլի, չիլլի, մե թաքավորըմ ու մե թաքուհինըմ կըլլի, կունենան մե մանչըմ, անունը՝ Մուրադ: Թաքավորը Մուրադին անպես կը մեծծընե, օր հեչ արև չի տեսնի: Թընեն կը մե օդին մեչը, դռվին ու էրթեստանը գոցեն կը, ուտելիքը կուտան, դուս էլլելու չեն թողնե: Էտ տղեն մեննակ չորս մարթու կը ճանչեր՝ մորն ու հորը, վարժապետին ու բովեռին: Մինչևական Մուրադը չի գիտցե, օր մսին մեջ օսկոռ կըլլի, չունքի կիրակուրն օր կեփեին Մուրադին համար դաղած մսին միչեն օսկըռտանքը հանեին կը:

Օրվան մե օրըմ էլ բովեռը կը փոխվի, ուրուշ բովեռ քուքա: Թաքավորն էտոր թամբեյ չի էնե, թը մըսին միչեն օսկոռը պիտի հանե, ու էս թազա բովեռը ջոկե կը համով օսկըռոտ թիքեստանն ու տանի կը Մուրադին: Միսը տանի թընե կը ըստոլին վրեն, ու ինքը կերթա իրեն բանին: Թաքավորին տղեն բիրտան նես քուքա, աշկը կը ցըգե ըստոլին վրեն օր ի՛նչ, թապղին մեչը մսի հետ բան կա: Կաշե՜-կաշե՛, ու կը որոշե, օր էդիկ իսկական դև է: Է՜, հասնի կը վրա, կառնե կը առկընուն տակը, խածե կը էսթին, խածե կը էնթին, զայնե կը էսթին, զայնե կը էնթին, կուտա պատեպատ. մեմե ուժով թապլե կը օրա, դիպչի կը աքոշկին ֆարդին ու պատռեկօրա բիրտան արևի լուսը նես կը մտնի: Էս տղեն գիտնա կը, թը արևը այրուծ է, իրեն սաղ-սաղ պիտի ուտե, փատթըվի կը էտոր հետ: Փատթըվիկը օրա, արևը տեղեն չի շարժվի. ինքն իրեն կուտա էսթուն, կուտա էնթուն, բան չի կըրնա էնե: Էնքան կը չարչըրվի, օր փըրփըրներուն մեչ կը կորի, կըյնի կը վեր: Մե խեյլի վախտըմ օր կանսնի, վարժապետին նես քալուն վախտը կըլլի: Քուքա կը, նես կը մտնի, տեսնե կը օր ի՜նչ տեսնի. Աստված հետ ու հեռու էնե, թաքավորի տղեն փրփրած, ընկած է վար, մութ օթաղը լուսավորվել է, դրախտ է դառցե: Վարժապետը Մուրադխանին ձեն կուտա՝ Մուրա՜դ, Մուրա՛դ... Մուրադխանը բիրդան աշկերը կը բանա, էլի ձեռքը ցըգե կը արևին: Վարժապետը կանչէ կը թաքավորին ու թաքուհինին: Քուքան կը նես, կանչեն կը՝ Մուրադխա՛ն, Մուրադխա՛ն, մե կերպըմ խելքը գլոխը կը փերեն, կառնեն տանին կը իրենց քովը ու պատմեն կը, թը՝ օղուլ, աշխար կա՜, մարթ կա՜, անասուն կա՜, ամմեն բան կա:

Պատմեն ու հասկնեն կը: Էտտից էտև Մուրադխանը դուս օր կելլեր ապշած-ապշած պըտրտիր կը էսթուն-էնթուն ու աշխըրին գործեն հեչ բան չէր հասկընա:

Մուրադխանենց պալատնուն տակը մե լավ ախպուրըմ կար, ուրտից օր ամմեն մարթ ջուր կը տանիր: Մե օրմե Մուրադը մորը կըսե.

- Մարի, տուր ամընները, էսօր ես էրթամ ջուրը:

- Օղուլ,- կըսե մարը,- մենք ջուր փերող չունի՞նք օր դու էրթաս ջուրը:

- Չէ՛,- կըսե,- մարի, տո՛ւր ամընները, ես էրթամ ջրի, քիչըմ սեյր էնեմ, մեր շենլոցը, հարսներուն ու աղչըկներուն տեսնիմ:

Մերը խաթրը չի կոտռե, տղեն կառնե ամընները ու կերթա ջուրը: Ջուրն օր կերթա, նըստի կը ախպըրին գլոխը, ամընները թընե կը վար ու սեյր կենե հարս ու ախչըկանցը: Տեսնի կը օր ամմենեն վերչը մե պառավըմ քուքա, էտ ջրեն կը լըլե օր էրթա: Էս տղեն վեր կելլե, քարը կառնե ու զայնե, ջարթ ու փշուր կենե պառվին կժերը, իրեն ամընին ջուր կը լըլե ու կերթա տուն: Էտ պառավնե կաշե էս տղի էրեսին, գլոխը թափ կուտաու ձեն չի հանե, կերթա իրեն գործին: Էքսի օրը նմանապես պառավը ամմենեն վերչը քուքա ջրի, Մուրադխանը էլի քարջարթ կենե էնոր կըժերը, կերթա տուն: Խեղճ պառավը էլի կաշե թաքավորին տղին էրեսը, էլի բան չիսե: Վրա մեկել օրը թաքավորին տղեն էլի կերթա ախպուր, քարերը կառնե, ջարթ ու փշուր կենե պառվին կըժերը ու կերթա տուն:

Պառավը կըսե.

- Է՜յ, թաքավորի տղա, ի՞նչըղ անիծեմ, որ ինչըղ ըլլի:

Տղեն օր ետ կը դառնա, պառավը կըսե.

- Բան չեմ ըսե. Մուրադխանը Սուրադխանին հասնի:

Էտ խոսքը կըսե ու հեռենա կը: Օր հեռենա կը, Մուրադխանն իրեն ամընին զայնե կը քարեքար, ջարթե կը ու դիշիմմիշ ըլլելեն տուն կերթա: Թե յարափ, կըսե, Մուրադխանը որ կա, ես եմ, հըպը էդ Սուրաթխա՞նը վով է: Ատպես օր շատ կը մտածե, խելքին բան չի հասնի, կելլե պտտվելեն կերթա չարսու: Տեսնի կը օր մե դասաբըմ իրեն խանութին փեքին վրեն նստած դիշիմմիշ կըլլի, ճանճերնա մսին վրեն վժան կը

- Բարե՛վ, կըսե, Ղասաբօղլի, ու կանցնի:

Էքսի օրը լըմանապես քուքա, բարև կուտա ու կանցնի: Էս Ղասաբօղլուն մեչը մտածմունքը կը շատընա, թե ես վո՜վ, թաքավորին տղեն վով, օր քուքա, բարև կուտա, կանցնի, կերթա: Էստեղ մե բանըմ կա:

Օրվանըմ մեկնա Մուրադխանը քուքա, մտնի կը Ղասաբին խանութը,- բարև, կըսե, Ղասաբօղլի:

- Ասու բարի՜ն, բարով հազար բարի, թաքավորի տղա,- կըսե Ղասաբօղլին: Խեր ըլլի, ի՞նչ կա:

- Աստված շառեն հեռու պայե, կըսե Մուրադխանը, շառի հետ ի՞նչ գործ ունիմ:

- Ամմեն, Աստված շառեն հեռու պայե, նորեն կըսե Ղասաբօղլին,- գուզե իմանալ, թը թաքավորին տղեն ի՞նչըղ օր իրեն էսքան մոտիկ ցուց կուտա:

- Հետըդ ախպերանալ գուզեմ, կըսե Մուրադխանը:

- Շատ լավ,- կըսե Ղասաբօղլին,- հըմը գուզեմ իմանալ, թը ի՞նչ կա միտքըդ, թաքավորի տղա:

- Իմ միտքըս,- կըսե մե հարցըմ է. դու գիտես օր ես Մուրադխանն եմ, հըպը Սուրաթխա՞նը վեվ է:

- Հե՜յ,- կըսե Ղասաբօղլին,- դու քու հորըդ օրը կը տեսնի՞ս, թը ի՜նչ օրի է ընկե, բիտտուն իրան ուժը փչացուցել է և ջարթվել է էտ Սուրաթխանին համար: Սուրաթխանը օխտը դևի քուրն է: Թե գուզես ինձի հետ ախպերանա՜լ, շատ լավ, քու բաղցանքըդ ես կը կատարեմ, հըմը էտ Սուրաթխանի հարցը մե քիչըմ դժվար է:

Ճըկըթնին կը կըտռեն, մեկը մեկին արունը կը խմե ու դառնան կը ախպեր:

Ղասաբօղլին կըսե.

- Հիմի ես քեզի ինչ օր կըսեմ, դու պիտի էնես. կերթաս հորըդ խազնցեն օխտը մեշոք օսկի կը վերցնես և կը տանիս մեր քաղքին դամրչուն կուտաս ու կըսես, օր քառսուն փըթնոց գյուրզըմ շինե, շաբաթ օրը հազըր էնե: Էտիկ էնելեն ետև քուքաս քովըս:

Մուրադխանն էր, քընաց հորը քովը, ըսավ թը.

- Հայրի՛կ, ինձի պետք է օխտը մեշոկ օսկի:

Հերը տղին շատ կը սիրեր, հարցուց թը.

- Բալա ջան, ի՞նչ պիտի էնես:

Տղան շիփ-շիտակ վերուց ու ըսավ հորը.

- Հայրիկ, տանիմ պիտի դամըրչուն, օր քառսուն փըթնոց գյուրզըմ թափել տամ:

- Հը՜մ: Ինչի՞ համար:

- Պիտի էրթամ Սուրաթխանին առնելու, ըսավ Մուրադխանն ու քաշվավ քանար:

Եփ օր էտիկ իմացավ, հարը սարսափելի հերսոտավ, թը՝

- Դու վո՜վ, Սուրաթխանը վո՛վ:

Թաքավորը տղին աշկին լուսին պես գուզեր: Հըմը էտ բանն օր իմացավ, տղեն աշկեն ընկավ: Ըսավ.

- Քընա, հեռացի, ես քեզի հեչ մե բանըմե չեմ տա:

Մուրադխանը գլոխը կախեց ու քնաց մորը քովը:

- Մարի՛ ջան, ըսավ, ինձի օխտը մեշոկ օսկի է հարկավոր:

Մարն ըսավ՝ բալա ջան, քընա հորդ քովը:

- Մարի ջան, հորըս քովը քընացել եմ: Էնիկ չի տա:

- Ինչի՞ չի տա,- զարմանքով հետաքըրքըրվեց մայրը, որ տղուն օգնել էր ուզում:

- Էնոր համար, օր ես պիտի էրթամ Սուրաթխանին փերելու:

Մարը գլխու ընկավ, ըսավ.

- Լավ, բալա, ես քեզի էտ օսկին տալ կուտամ:

Էս ըսելն ու թաքավորին քովը էրթալը մեկ էղավ.

- Ինչի՞ տղին օսկի չես տա,- ըսավ թաքուհինը,- ախըր Մուրադըս մուրադի համար տեղ պիտի էրթա:

Թաքավորը բանլիքը նետեց կընկանն ու ըսավ.

- Քընա տուր, ջալլամը էրթա:

Մարը բալնիքը առավ, քնաց խազնին դուռը բացեց, լցեց օխտը մեշոք օսկին ու տվեց տղին:

Տղեն օսկին թրեց սելին, տարավ դամըրչուն, ըսավ.

- Ա՛ռ էս օսկին, ինձի համար քառսուն փթնոց գուրզըմ շինե: Հըմը լավ իմանաս՝ շաբաթ օրը պետք է հազըր ըլլի:

Գըլխուս վրա, թաքավորի տղա, ըսավ դամըրչին. շաբաթ օրը համեցի՛ր, տար:

Մուրադխանն էր, քընաց Ղասաբօղլուն քովը, ըսավ.

- Ամմեն ինչ էրի, գյուրզը պատրաստ կըլլի:

Ղասաբօղլին ըսավ.

- Հիմի կերթաս հորըդ թավլիխանան,, կաշես էնտեղ հորըդ ձին առանձին կապած է. էտիկ կառնես ինձի համար, քեզի էլ՝ որն օր գուզես: Մորըդ էլ կըսես, օր քեզի համար ճամփու պաշար հարզե:

Մուրադխաանը էտտից քընաց հորը քով, ըսավ.

- Հայրի՛կ, ձիդ պիտի տաս ինձի:

- Ջալլամ էղի,- ըսավ,- քընա տար, աշկիս չերևաս:

Մուրադխանը դուս էկավ, քընաց թավլիխանան, իյարը զարկեց ձիուն վրան, մե հատըմ էլ իրեն համար ջոկեց, իյարեց, էկավ մորը քովը, ըսավ.

- Մարի ջան, ինձի ճամփու պաշար հարզե:

Ճամփու պաշա՞րն էր պակաս: Մերը քընաց պաշարն էրավ: Տղեն հապիկով պաշարը կապեց ձիուն իյարին, մնաս բարով էրավ, քընաց գյուրզը վերուց ու Ղասաբօղլուն հետ ձիանը քշեցին, հասսան մի տեղ, ձիաներեն իչան: Ղասաբօղլին թաքավորին տղուն ըսավ.

- Մուրադխան, արի օր քեզի հետ մե բանըմ պիտի պայմանավորվինք: Առաջինն օր՝ ուր օր էրթանք, ինչ օր էնենք, դու իմ խոսքես դուս չպիտի էլլես: Էս մեկ: Երկրորդն օր՝ վեվ օր ում լավութեն էնե, լավութենը էրես չպիտի զայնե: Վեվ օր էրես զայնե, էնիկ թող քար դառնա: Էսիկ էրկուս:

Թակար էսոնք քեզի ձեռք կուտա՞ն, էրթանք առաչ, թակար օր ձեռք չեն տա, ես կերթամ, կը նստիմ իմ փեքիս, դունե քընա նստե քու թաքավորական թախտիդ վրեն:

Մուրադխանը համաձայնավ. պռոշտի էրին ու նստան ձիերը: Քընացին առաչ: Շատ քընացին, քիչ քընացին, շատն ու քիչը Աստված գիտե, մեմե բիրտան Ղասաբօղլու ձին տրաքավ:

- Վա՜յ,- ըսավ Մուրադխանը,- հրպը ի՞նչ պիտի էնենք: Ըսավ ու քաշեց թուրը, զարկեց իրան ձիուն ճտին, գոխը կըտռեց ու ինքն էլ առանց ձիու մնաց:

- Է՛հ, ըսավ Ղասաբօղլին, գիտե՞ս օր մենք արթըղ մոտենանք կը դներուն սինոռին: Սինոռն օր կը մտնինք, չվախենաս՝ քանի ես սաղ կըլլենամ: Եվ օր մեռա, էնտից էտև դու գիտես քու բանըդ:

Քընացին մե չայիր-չիման տեղըմ, մե գեզիմ քովը նըստան՝ հաց ուտելու: Հըմը էտ գեզան դներուն գեզան էր: Ղասաբօղլին էտ բանը գիտեր: Մուրադխանին նստեցուց իրեն էտտին, չունքի գիտեր օր դներն էլլելուն-էրևալուն պես շնչով պիտի իրենց նես քաշեն: Մուրադխանին մեկեն կը քաշեն փորերը: Ինքն էլ գյուրզը թրեց գիրկը, նստավ:

Թող էնոնք նստին, ուտեն-խմեն, մենք քանք դներուն քովը: Դներուն օխտն ախպոր մեկն ըսավ.

- Ծո՛, ծո՛, էտ ի՞նչ ինսընի հոտ քուքա:

Էտոնց պզտի ախպարնե թոփալ էր, էտորա ըսին.

- Ծո՛, ծո՛, մեմ ել դուս աշե, թե էտ ի՞նչ բան է: Թոփալ դնն էլավ էրթիք, ձեռքը թրեց աշվընուն, սրխրլմիշ էնելեն աշեց օր իրենց գեզին վրեն էրկու ինսընի դարարթի կերևա:

- Հեհե՜յ, ըսավ, ինսանօղլի են, ինսանօղլի՛:

Ի՜ի՜ֆ՜ էրավ, շունչը իրեն քաշեց օր էտ ինսընենուն քաշեր փորը, տեսսավ օր հեչ տեղեն ժաժ չեղան: Տեսսավ օր բան չըկըրցավ էնե, սուս ու փուս քընաց ախպըրտանցը քովը:

Ղասաբօղլին թոփալ դևին շունչը առավ, տեսսավ օր Մուրադխանը կպավ իրեն, կանընչնինե քամու ուժից շարժվան:

Դևը իջավ տուն, ախպըրտանցը խապար տարավ, թը.

- Մի՛ք ըսե, մեր ախպըրին վրեն էրկու ինսանօղլի են նստե. ի՜ի՜ֆ էրի, տեղերեն ժաժ չեկան:

- Հա՛յ, հա՛յ, ըսավ ախպերը, էրկու ինսա՞ն էլ չըկըրցար փորդ քաշե: Ըսելն ու դուս էլլելը մեկ էղավ:

Ղասաբօղլին գիտեր օր դևերուն ուժովը պիտի դուս քա, Մուրադխանին քաշեց, իրեն ավելի մոտեցուց, գյուրզի մե ծերը թրեց էնոր վրեն: Դևը դուս էկավ ու մե հատըմ ուժով ի՜ ի ի՜ ֆ ֆ՜ ֆ քաշեց, տեսսավ օր հեչ մեկը տեղեն չի խըթխըթա: Սուս ու փուս նես մտավ ու, կանչեց թոփալ ախպորը, ըսավ.

- Քընա, էտոնց կանչե քան. էտոնք թաքիմ մարթիք չեն. յա մեզի են էկե, յա թե չէ ճամփեստանն են կորուցե: Դևը դուս օր էկավ, գետինն ըսկըսեց խաղալ: Մուրադխանը գետնին ժաժեն վախեցավ ու ճվաց.

- Ամա՜ն, ախպեր ջան,- ըսավ,- էս ի՞նչ բան էր էղավ: Ղասաբօղլին սիրտ տվեց, ըսավ.

- Ես քեզի ըսել եմ, օր քանի սաղ եմ, մի՛ վախենա:

Դևը մոտիկցավ: Մուրադխանն օր դևին տեսսավ, վախեն պռունկն օրթայեն պատռավ: Ղասաբօղլին աշեց օր ախպորը պռունկը ճոռթավ, ըսավ.

- Էհե՜յ, ախպեր, ի՞նչ կենես:

- Հեչ բան չկա,- ըսավ: Հըմը լիզուն առնըվավ:

Դևը ավելի մոտեցավ, թամալ տվեց ու կայնավ: Ղասաբօղլին դևին մոտենալը տեսնելու վախտը գյուրզը թապլեց կանընչնուն մեչը: Դևը բարև տալեն ետև հարցուց.

- Ո՞րտից քուքաք, ո՞ւր կերթաք, չըլլի՞ ճամփեստանդ եք կորուցե:

Ղասաբօղլին ըսավ.

- Այսինչ երկրեն ենք, կերթանք այնինչ երկիրը, ճամփընիս կորուցինք, ընկանք էստեղ:

- Լա՛վ, լա՛վ,- հանգըստացնող տոնով ըսավ դևը,- էկեք ես ձեզի տանիմ

մեր տունը. սապախտան ցուց կուտանք ձեր ուզած ճամփան, Աստված հետ-նիդ, քընացեք, ուր օր գուզեք:

Ղասաբօղլին էլավ, Մուրադխանին առավ, քընացին դներուն տունը: Հասսան օրա, տեսսան օր օխտը ախպերնե կայնած էին իրենց դուռը:

- Բարև,- ըսավ,- դև ախպըրտիք:

- Ա՜յ, հազար բարի՛, ինսանօղլիներ, ըսին դներն ու տարան նես:

Տարան նես, հաց կերան, չայ խմեցին: Անցավ խեյլըմ ժամանակ, դներուն մեծ ախպերը թը.

- Պառկելու վախտ է, էլեք քընինք:

Դու արի տես, օր էս դներուն միտքը ծուռ է. գուզեին գիշերը էտոնց ուտեին: Հըմը Ղասաբօղլու մերը չըմեռնի, էնոր մըտքեն բան դուս կը մնա՞: Էնիկ իրեն բանը գիտեր: Դները ցուց տվեցին հարամօղասին, իրենք քնացին իրենց տեղերը: Ղասաբօղլին դուռը բացեց նես մտավ, տեսսավ օր էրկու տեղ է ցըգած. մեկը՝ մեծ, մեկը՝ պզտիկ (ախըր Ղասաբօղլին շատ հաղթանդամ մարդ էր): Ղասաբօղլին ըսավ.

- Մուրադխան, դու պառկե էս մեծ տեղը:

Մուրադխանը պառկավ: Ղասաբօղլին մե մեծ քիթիկըմ թրեց պզտի տեղին մեչ, ինքն էլ մտավ ախպորը ծոցը: Կեսգիշերին դևը դուռը ուսուլով բացեց.

- Ո՜ւ ու ո՜ւ ֆ ֆ՜ ֆ ֆ՜ քաշեց ու քիթիկ-միթիկ, սաղ-սաղլամ բիտտուն փախուց փորը: Ահա՜ն ձեզի ճամփա կորցընել,- ըսավ ու գիտնալով օր ինսընուն փորը քաշեց, քընաց պառկավ:

Առավոտ կանուխ Ղասաբօղլին օր էլավ դուս, աշկերը սրփեց, դները տեսսան ու զարմացան մնացին:

- Բարի լո՛ւս, ըսավ, ախպըրտիք:

- Ասսու բարին, ըսին, ինսընօղլի, ու նստան հաց կերան, չայ խմեցին ու պըրծան օրա Ղասաբօղլին թը.

- Մենք պիտի էրթանք: Էլան դուս, մնաս բարով էրին, ըսին թե՝ ցուց տվեք մեր ուզած էրկըրին ճամփան, էրթանք: Դները ցուց տվին, ըսին.

- Է՛ն է ձեր ուզած ճամփան, քընացեք, Աստված ձեզի հետ:

Ղասաբօղլին իրան թիթինին ղուտտիկն ու մուշտուկը մախսիզ թրել էր դներուն էն մինդրրին տակը, որին վրեն օր նստել էր: Ընկան ճամփա: Մե պիճիլի սարիմ պես տեղ կար. էսոնք անցան էտոր էտտին, նստան:

Նստան էնքան, մինչև արևը մարը մտավ: Էտտից ետ դառցան, էկան նորեն դևերուն տունը: Դևերն օր տեսսան, զարմացան: Ըսին.

- Ներողութեն կենեք, դև ախպըրտիք, մեր թիթինին դուտտիկն ու մուշտուկը մըտյան ենք էրե, թողել ենք մեր նստած մինդըրին տակը:

Դևը ըսավ պզտի ախպորը.

- Ծո՛, ծո՛, մեմ քընա, աշե: Քընաց տեսսավ օր դորթ. մուշտուկն ու դուտտիկը մինդըրին տակն է: Փերեց: Էրին թը ետ դառնային, դևերուն մեծ ախպերը թը.

- Էլ ու՞ր կերթաք, էսօրա մնացեք, էքվան կերթաք. մութն ընկել է:

Էկան նես: Ուզածնին էլ էտ էր: Նստան, հաց կերան, անցավ մե ժամանակըմ, Ղասաբօղլին ըսավ.

- Է՛հ, դև ախպըրտիք, թոփ էղիք էստեղ օր բան ունիմ ըսելու:

Թոփ օր եղան, Ղասաբօղլին ըսավ.

- Մենք շիտա՛կ էկել ենք ձեր քովը: Մենք էկել ենք օր ձեր քուրոչը՝ Սուրաթխանին առնենք էս ախպորը՝ Մուրադխանին:

Օխտը ախպերն իրար էրես աշեցին: Ղասաբօղլին թը.

Հա՛, հա՛, ի՞նչ շատ աշեցինք իրար էրես, պատասխանեցեք՝ տեսնիմ, ի՞նչ կըսեք էս բանին: Թե գուզեք միշաֆարա էնել, քընացեք դուս, խոսեցեք:

Դևերը մեկը մեկին էտտեցեն դուս էկան, բաշլայեցին միշաֆարա էնելը: Մեկը կըսեր՝ տանք, մեկելը կըսեր՝ չը տանք: Հեչ մե բանըմ չը կըրցան որոշե: Մեծ դևը թե.

- Արիք ըսենք կուտանք, ու իրենց ուտենք վերչանան: Էկան նես, ըսին.

- Տվինք քընաց:

- Շատ լավ, եփ օր տվիք, հիմի Մուրադխանը պետք է ըլլի Սուրաթխանին քովը,- Ըսաց Ղասաբօղլին:

- Թող ըլլի,- համաձայնեցին դևերն ու Մուրադխանին տարան Սուրաթխանին քովը, իրենք բաշլայեցին քեֆ էնելը: Մուրադխանն ու Սուրաթխանն էլ էնտեղ:

Սապախտան էլան վեր, չայ, դայֆա խմեցին, հաց կերան, Ղասաբօղլին ըսավ.

- Գիտե՛ք, ախպըրտիք, ես թազբեյի սորված մարթ եմ, թարսի պես թազբեյըս մտյան եմ էրե, թողել եմ ձեր գեղի քովը: Կեցիք էլլեմ էրթամ փերեմ:

Դևերուն մեծը թը.

- Չէ՛, ջանըմ, դու ինչի՞ էրթաս:

Պզտի ախպորը ճամփեց: Սա քընաց, էկավ, թը՝ թազբեյը չկա: Մեծ դևն էս անքամ էրկու հոքու ճամփեց, էտոնքե չրգտան: Ղասաբօղլին ըսադ.

- Է՛հ, ախպըրտիք, ես կերթամ կը փերեմ:

Դևերը չըհամաձայնան, էլան օխտը հոքով Ղասաբօղլու հետ քընացին: Գեղին օր հասսան, Ղասաբօղլին քընաց, կանընչնուն միչեն գյուրզը հանեց, ժընջըլնուն հետ խաղալեն-խաղալեն էկավ դևերուն քովը: Դևերն օր տեսսան, դողը ջիգըրնին անցավ: Ըսին.

- Բա՜հո՜, էտիկ օր էսոր թազբեյն է, հըպը ո՛ւժը վերն է:

Թե մինչև հիմի մտքերեն կանսնիր, թը Ղասաբօղլուն գլխուն մե օյինըմ կը խաղան, հիմի իրենք իրենց ըսին.

- Ախպա՛ր, մեր քուրոչը թող տանին, թաքի էստից հեռենան:

Քնացին տուն: Ղասաբօղլին գուրզը թապլեց դուռը թը չէ, սաղ տունը թընդաց: Մտան նես: Դևերուն մեծ ախպերը թը.

- Ղասաբօղլի ախպեր ջան, մենք պիտի էրթանք աղվուշութան, արի կըլլի դու կեցի տունը, մենք էլենք էրթանք: Ղասաբօղլին չըհամաձայնավ. եսե քուքամ, ըսավ: Դևերը մըտքերուն մեչը ըսին.

- Ծո՛, շատ լավ էղավ, էսոր կը տանինք աղվուշութան, ճամփենք կը ուշապին ճամփան, ուշապն էտոր կուտե, մենքա քուքանք Մուրադխանին կուտենք: Խոսքմեկ էղան, ընկան ճամփա, հասսան ինը ճամփուն գլոխը, կայնան: Էդ ինը ճամփեսնուն օխտը գետան գալան էր, հըմը էրկուսը՝ գետան գալմազ: Էս գետան գալմազ ճամփեսնուն ուշապինն էր, մեկելն էլ՝ աժդահարինը: Դևերուն մեծ ախպերը, սաքի տը խամ էր, հեչ բանե խապար չէր, ըսավ.

- Ղասաբօղլի ախպեր, դու քընա է՛ս ճամփով, մեկալ ախպըրտիքըս թող էրթան՝ մեկը է՛ս ճամփով, մեկը է՛ն ճամփով, ես էլ է՛ս ճամփով:

Ղասաբօղլուն ցըգեց աժդահարին ճամփան ու մտքին մեչ ըսավ.

- Դե քընա տեսնիմ ինչ տղա ըլլիլդ:

Միշավարա էրին, օր աղվուշութեն էնելեն էտև ետ քան, իրարու տեսնին ինը ճամփուն մեծ քարին քովը:

Ղասաբօղլին էր, քընա՜ց-քընաց, հեչ մե բանիմ չը հանդիպավ՝ գետնու ճիճու բիլա չկար:

- Ծո՛,- ըսավ ինքն իրեն,- դևերը ինձի մախսիզ ղրկեցին էս ճամփով, օր հեչ

բանըմ չը կըրնամ էնե, վրես խնդան:

Խոսքը բերանը՝ մեմե աշեց օր ի՞նչ աշե, էման մե թոզ ու դումանըմ քուքա դեմի իրեն, օր Աստված հեռու պայե: Ղասաբօղլին կարծեց, թե սատանի քամի է: Դու մի ըսե, աժդահարն է. հըմը էն էր, հասսավ օր Ղասաբօղլուն փարա-փարչա էնե, գեզանասավտիգըմ մանչ, գյուրգն օր բաց թողեց աժդահարի վրա, թիքա-թիքա էրավ, թափեց վար: Սըպանելեն էտև աշեց օր անտանելի բան էր.

- Իսոր ի՞նչը տանիմ տուն,- ըսավ ինքն իրեն,- ու դառցավ անգըճնին կըտռեց, մեկը թրեց հապիկին մե աշկը, մեկնա՝ մեկել աշկըն ու քընաց ետ:

Դևերն էտ վախտը ետ էկել, թոփ էին էղե քարին կուշտը, գեզաթ կենեին Ղասաբօղլուն: Էսիկ օր շատ ուշացավ, դևերուն մեկը թը.

- Արիք էրթանք, ջանըմ, էնիկ մեռավ պրծավ: Մեկալները թը. քիչմա գեզաթ էնենք, էտև էրթանք: Քիչմա կեցան, էլի չերևաց:

- Քելեք էրթանք, ջանըմ, հիմի էնոր սաղ տեղը անգաճն է մնացե,- ըսավ մեկալ դևը:

Քիչըմ էլ օր կեցան, տեսսան օր դե՜ հեռվեն դարաթիմ կերևա կը:

- Ծո՛, ըսին, հըլը բանի աշեցեք, վախեցել փախել է: Ամպաճճառ վախեցել փախել է:

Ղասաբօղլին էկավ, բարև տվեց ու ըսավ.

- Ըլլի օր ինձի կը բաքլայեյիք:- Ըսին՝ հա: Ընկան ճամփա դեմի տուն: Հասսան: Տուն օր հասսան. ամմենքը հանեցին խուրջիններեն իրենց ավարը՝ մեկը մե եղնիկըմ, մեկը մե դուշըմ, մեկալը մե ուրիշ բանըմ: Ղասաբօղլինա թը՝ ես մե բանըմ զարկել եմ, հըմը չիտեմ ինչ էր, անգըճնին եմ փերե: Խուրջինին միչեն օր հանեցին, տեսան օր ի՜նչ ավար, ի՜նչ բան, հենց աժդահարին անգճնին են, օր կան: Դևերը պըռկընին խածեցին:

Էքսի օրը էլի՛ քընացին ավղուշուբան. էս անքամին Ղասաբօղլուն ճամփեցին ուշապին ճամփով, իրենք քընացին գետան գալան ճամփաներեն: Ղասաբօղլին էր, քընաց-քընաց, հեչ մե բանիմ չը հանդիպավ, ըսավ.

- Ծո՛, էս ինչ տեսակ մարթիք են, ինձի միշտ դարտակ ճամփով կը ճամփեն: Էս բանը մտածելուն պես, տեսսավ օր իրեն աշկերը մթնդեն կը ու լուսանան կը: Աշկերը սրփեց, տրորեց, ուզեց օր հասկընա, թը էս ի՞նչ բան պատայավ իրեն: Մեմե բիրտան վեր աշեց, օր մե թոզ ու բորանըմ է էլե, աշխար կավըրե: Ըսավ.

- Էս ի՞նչ բան է,- ու գյուրզը հազրեց:

Տեսսավ օր թոզ ու դումանին միչեն մե ղոճա ուշապըմ դուս էկավ: Գյուրզը բաց թողեց ուշապին վրեն, ուշապին էրավ փարա-փարչա, նստավ հանքշելու: Դիշիմմիշ էղավ, թը էս անտերին ի՞նչը տանի տուն: Որոշեց քիթ ու պռունգը կտռել, թընել խուրջինը: Ատպեսա էրավ, ընկավ ճամփա:

Դևերն ու Ղասաբօղլին թող թոփ ըլլին, մենք խապարը տանք Մուրադխանին: Մուրադխանն օր Սուրաթխանին քովն էր քընացե, Սուրաթխանն էնոր ամմե՜ն տեղ ցուց էր տվե՝ է՛ս օսկու խազնեն է, էս՝ արծըթինը, էս ինսընի գլխով շինված պաղչան է, էս օսկըռներով շինած պալատն է, էլ ի՞նչ գիտեմ, հազար ու մի բան: Հըմը ախչիկը մե դուռըմ չբացեց. էնոր մասին բան չըսավ:

Մուրադխանին փորը չըտարավ, թը՝ էս ի՞նչ դուռ է, ի՞նչ կա մեչը, օր ինձի չըսավ:

Էկան իրենց հարամօդասին: Շատ օր ման էին էկե, դաթռել էին: Սուրաթխանը գլոխը թրեց Մուրադխանի ծնկին՝ հանքշելու: Քունը տարավ օրա Մուրադխանը բաշլայեց Սուրաթխանին մազերուն հետ խաղալը: Մուրադխանը մազերուն հետ խաղալու վախտը տեսսավ օր ախչըկան անգճին տըկեն մե պզտի բանլիքըմ է կախած ու միտքը պղտորավ:

- Ահա՜ ա ա՜, ըսավ իրան իրան,- էսիկ օր կա, էն դռան բանլիքն է: Էն դուռն օր կա, Սուրաթխանը իրեն սիրականն է պայե: Ուրուշ բան չի կըրնա ըլլի: Ուսուլով գլոխը ծնկեն վար թրեց ու քընաց դեմի դուռը: Բացեց, տեսսավ, օր ի՞նչ տեսսավ. մե մարթըմ կպրե կարասին մեչըն է թրած, զընջըլներովա կապած ու հաց ու ջուրը իրենեն հեռու թրած: Էտ մարթն օր տեսսավ Մուրադխանին, ըսավ.

- Վա՜յ, ես քու հոքո՜ւն մեռնիմ, թաքավորի՛ տղա, ի՜նչ կըլլի, քաս, էտ մե կտորըմ հացը տաս, ուտեմ: Էս անսուրփները անոթի մեռուցին ինձի:

Մուրադխանին մեղքը տվեց: Հացը տաշտով հրեց դեմի էն մարթը: Էտ մարթը վրա պրծավ ու ղովտի պես հափ-հափ էրավ, կուլ տվեց: Հացն օր կուլ տվեց, ըսավ.

- Հոքո՜ւդ մեռնիմ, թաքավորի՛ տղա, բըկիս ընկավ, ի՜նչ կըլլի, էտ ամանով ջուրն էլ տաս խմեմ, քեզի օղորմի տամ: Մուրադխանը ամանով ջուրը օտոքը հրեց դեմի էտ մարթը: Ջուրը խմեց ու ուժով վեր թռավ, կպրե կարսին միչեն դուս էկավ, քաշեց մե սիլլամ օր տվեց Մուրադխանին, ցըգեց էսոր կպրե կարասն ու ուշաթափ էրավ, ինքը քընաց դևերուն տները՝ չամ-չրաղները մարեց,

ջարթ ու փուրթ էրավ, Սուրաթխանին առավ ու էլավ էրկընքի մե ղաթը, ղըժ-ժալով քընա՜ց, իչավ Սև ծովին ու Ճերմակ ծովին ատան:

Էտոնք թող մնան ատան, մենք խապարը տանք Ղասաբօղլուց: Էսիկ էտ օրը շատ թթու էր: Օր էկավ դև ախպըրտանցը հասսավ, ըսավ.

- Էհ, ախպըրտիք, էսօր իմ սիրտըս մե թավիրմ է:

- Ըսին՝ ի՞նչ կա:

- Ըսավ՝ Չիտեմ:

Ընկան ճամփա: Տուն չհասսած՝ տեսսան օր չամ-չրաղները մարած են:

- Հա՛յ վախ, հա՛յ,- ըսավ մեծ ախպերը ու ճվաց,- տղե՛ք, չըլլի՞ թե մեր պզտի դուռն է բացվե: Ըսավ ու պզտի ախպորը ըշտապով ճամփեց տուն: Ղասաբօղլին թը՝ ի՞նչ պզտի դուռ, ի՞նչ կըսես:

- Էհ՛, ի՛նչ ըսեմ,- ըսավ,- էտ դուռն օր կա էն դուռն է, օր մենք ջանսըզ Փոլատին խափել էինք, թը մեր քուրը կուտանք իրեն, փերել թրել ենք կպրե կարսին մեչը, զընդընններով ամրցուցել ենք, օր դուս չընքա, թը չէ էնիկ հոքի չունի, ինչ կենես էրա, չի մեռնի: Ինքընե մեր քուրոչը գուզեր տանի:

Հասսան տուն, տեսսան օր ի՛նչ, Մուրադխանը ընկած է կպրե կարսին մեչը, ուշքընե անցած է: Ղասաբօղլին էր, հասսավ վրա, ճվաց՝ Մուրադխա՛ն, Մուրադխա՛ն: Մուրադխան չկա: Ուշուրեկ Մուրադխանը աշկերը բացեց, տեսսավ օր Ղասաբօղլին կայնած է գլխուն վերըթին: Ղասաբօղլին մտքին մեչ ըսավ. «Ա՛յ Մուրադխան, ես էսքան լավութուն արի, քեզի մուրադիդ հասսուցի, պայմանըս պիտի խախտվի, լավութուն էրածըս պիտի էրեսովը տամ. չըսե՜մ, ախըր, էսմանէ բան կըլլիր, օր դու փերիր իմ գլոխըս»:

Մուրադխանին կպրին կարսեն հանեց, սիրտ տվեց, վրան, գլոխը լավ մաքրեց, ըսավ.

- Ախպեր ջան, հեչ մի՛ վախենա, ես էլի քու մուրազիդ կը հասցընեմ ու կանչեց դներուն, պահանջեց օր կշեռք փերեն:

- Հա՛, հա՛, ըսավ, փերե՛ք կշեռքը: Էսոնք կշեռքը փերին, ինքը ըսավ.

- Ախպորըս քաշով ձեզի կուտամ, քառսուն օր էլ ձեզնեն մոհլաթ կառնեմ, թե քառսուն ավուր էկա՜, էկա, թե չէկա սա ախպերըս ձեզի ձեր մորը կաթին պես հալալ ըլլի: Հըմը օր էկա հասսա իրեն վախտին ու տեսսա օր ախպերըս մե մսխալըմ պակսել է, վա՛յը քուքա ձեր օր ու արևին:

Ախպորը կշռեց, հանձնեց սրանց, ինքը էլավ, ընկավ ճամփա ու քընաց: Շատ քընաց, քիչ քընաց, էտիկե Աստված գիտե, տեսսավ օր էրկու դև իրար

հետ, քափ ու քրրտինք մրտած, կը կրռվին: Դևերը տեսսան օր ինսրնօղլի քուքա, ըսին.

- Էսիկ շատ լավ էղավ, օր ինսրնօղլին էկավ, մեր վեճը հիմի մենք կլուծենք:

Ղասաբօղլին մոտեցավ, բարև տվեց ու հարցուց, թե՝ վեճն ու կռիվը ինչի՞ համար է, ի՞նչ պատճառով է սկսվե: Դևերնե պատասխանեցին թե՝ հրպը պապական մեզի էս խալին ու չիբուխն է մնացե, չենք կրրան կիսե իրար մեչ: Ղասաբօղլին հարցուց, թե՝ էտ խալին ու չիբուխը ի՞նչ շնորք ունին: Ըշտը ըսին, օր էս էրկուսնա շնորք ունին ահա այսպես. օր նրստիս խալուն վրա, չիբուխը զայնես էս խալուն, ըսես, «Խալի, քեզի գուզեմ այսինչ տեղը», էնիկ քեզի ղրժժալով կրտանի, կիչրսնե էնտեղ:

- Ծո՛,- ըսավ ինքն իրեն,- էսիկ իսկական ինձի էր պետք: Ուրեմն՝ Աստված իմ թրրֆես է ու իմ գործերուս Տերը տիրութեն կենե:

Հարցուց, թը իրենք նետ ու աղեղ ունին: Ըսին, հա, ունինք: Ըսավ շուտ քնացեք փերեք: Ես կը թապլեմ, դուք վազզեցեք փերեք: Վերրդ օր թեզ հասսավ ինձի, խալին ու չիբուխը թող էնոր ըլլի:

- Ծո՛,- ըսին կռվող դևերը,- ի՛նչ լավ ըսավ ինսրնօղլին:

Ղասաբօղլին էր, առավ նետ ու աղեղը, անպես թապլեց օր օխտը սարին էտտին ընկան: Դևերը գրմփգրմփալով վազզեցին փերելու: Դիորի հասսան, դառցան ետ քալու, Ղասաբօղլին էր՝ խալին փատտեց չիբխին, թրեց թևին տակն ու քնաց: Շատ օր քրնաց, էլի տեսսավ, օր էրկու դև էլի կրկռվին էտտեղ:

- Բարև,- ըսավ,- դև ախպըրտիք, ինչի՞ կը կռվիք:

- Ասսու բարին,- ըսին,- ինսանօղլի, մեզի պապական մնացել է էս քուլլահը. ես կրսեմ ինձի ըլլի, էն կրսե ինձի ըլլի:

- Լավ,- կրսե,- ձեր քուլլահը ի՞նչ շրնորք ունի:

- Մեր քուլլահը,- կրսեն,- սրրքուլլահ է, վեվ օր էնիկ գլոխը թնե, չի էրևա:

Ղասաբօղլին մտքին մեչ ըսավ՝ էս էլ լավ էղավ: Էստեղ էլ դևերուն գլխուն նրմանապես օյին խաղաց ու քուլլահն առավ, ընկավ ճամփա: Շատ ու քիչ օր քնաց, հասսավ Սև ծովին քանարը: Խալին հանեց, փռեց, նստավ վրեն, չիբուխը զարկեց ու ըսավ.

- Հա՛, հա՛, խալի, քեզի գուզեմ Սև ծովին, Ճերմակ ծովին ատան:

Խալին էր՝ ղրժժալով էլավ էրկնքի մե ղաթը, իչավ Սև ծովին, Ճերմակ

ծովին ատան: Իչավ, ուսուլով խալին փատտեց, չիբուխը թրեց մեչը, քընաց դեմի սարայները: Քընաց հասսավ, մտավ սարայնուն տակը, խալին թրեց էտտեղ, քուլահը թրեց գլոխն ու էլավ վեր: Քընաց սարայն օր հասսավ, տեսսավ օր Սուրաթխանն ու մե ուրուշ ախչիկըմ իրար հետ խորաթեն կը: Սուրաթխանն ըռունդ, էնիկ Սուրաթխանեն ըռունդ: Էտ վախտը Սուրաթխանն ըսավ թը.

- Ախչի՛, հըլը մեմ ըռամ քըցե, աշենք թը ի՞նչ կենե Ղասաբօղլի դաքրըս:

Ախչիկը ըռամ քըցեց ու ճվաց.

- Ըխչի՛, ըխչի՛, դաքրըդ էստեղ, մեր օդան կայնած կերևա:

- Ի՞նչ կըսես, ըխչի, ըսավ, իմ դաքրըս պիճի՞ մարթ է, օր էստեղ ըլլի, չերևա: Հըլը մեմ էնոր բոյը տեսնի՞ս, բուսաթը տեսնի՞ս:

Ղասաբօղլին էր՝ քուլլահը վերուց գլխեն, էրևցավ ախչըկնուն: Սուրաթխանն օր տեսսավ դաքերոչը, ընկավ ճիտը, լացեց: Ղասաբօղլին ըսավ.

- Վախտը չէ, Սուրաթխան, պետք է էրթանք:

- Ա՛ման, ախչի, ըսավ մեկել ախչիկը, ինձ էլ տարեք հետվընեերդ, Աստծու սիրուն:

Սուրաթխանն ըսավ.

- Ղասաբօղլի, Ասսու սիրուն, հիմի էրթըլու վախտը չէ. դու քընա պայ մտի, հիմի Ջանսըզ Փոլատի վախտն է, քուքա: Թող մնա, էքվան կը խոսինք:

Ղասաբօղլին քուլլահը թըրեց գլոխը, իչավ վար, մեկ էլ տեսսավ օր ի՞նչ. էրկինք, գետինք, ջուր ու ծով իրար խառնվան, Ջանսըզ Փոլատը ղըժժալով իչավ վար: Իչավ վար ու ըսավ.

- Հա՞, հա՛, Սուրաթխա՛ն, էս ի՞նչ ինսընի հոտ քուքա:

- Աման քա, ի՞նչ կը խոսիս,- ըսավ Սուրաթխանը,- ու՞րտից իստեղ ինսան: Ըլլօր իմ վրայիս ինսընի հոտն է, օր քուքա:

Ջանսըզ Փոլատն ընկավ պառկավ: Վախտ օր անցավ բարի լուսը բացվավ, բարի լուսը բացվի ձեր վրեն, Ջան Փոլատը օցը ղամչի էրավ, խընոցցին՝ ձի, նստավ ու էլա՞վ էրկընքին մե ղաթը, քընաց: Թող էնիկ էրթա, մենք դառնանք Ղասաբօղլուն: Ղասաբօղլին էր՝ էլի էլավ վեր, ըսավ.

- Հա՛, հա՛, ախչիկներ, էրթըլու վախտն է, խելքերըդ ժողվեցեք:

Ախչիկներն էին՝ ժողվըռթեցին ունեցած-չունեցածներն ու էլան դուս, նստան Ղասաբօղլու խալուն: Ղասաբօղլին չիբուխը զարկեց խալուն ու ըսավ.

- Խալի՛, գուզեմ Սև ծովի, Ճերմակ ծովի քանարը: Խալին էր՝ ղը՞ժժալով էլավ էրկինք, իչավ գետինք, Սև ծովի ու Ճերմակ ծովի քանարը:[367]

ԴԱՐՎԵՇԸ

Ժամանկոց մե խեղճ, օրփնարի պառավ կընիկըմ կըլլի, կունենա կը իրեք ախչիկ: Էս պառավը էնքան խեղճ կըլլի կը օր, ախչըկնուն առնող չիլլի: Օրվան մե օրը նես կը մտնի էս պառվի տունը մե դարվիշըմ, բարև կուտա պառվին, բարև կառնե: Վախտըմ օր կանսնի, պառվին կըսե.

- Գիտե՞ս, էկել եմ մեծ ախչիկըդ ինձի ուզելու:

Պառավը խելքը էսթուն կը զայնե, էնթուն կը զայնե, կաշիկը օր իրեն ախչըկնուն առնող չպիտի ըլլի, վերցընե կըսե.

- Հայտե տվի, դարվիշ պապա, Աստված թող բարի վայելուբուն տա, մե բարցիմ ծերանաք:

Դարվիշը խընդրլուն կըլլի, վերցնե կը մեծ ախչըկանն ու հայտե բալամ՝ դեմի տուն: Հասնին կը տուն, դարվիշը հալավը կը հանե, թեթևնա կը, ախչըկան ձեռքեն բըռնեկը ու տանի կը նեսի օթաղները: Մեմե ախչիկը ի՞նչ կը տեսնի: Տեսնի կը օր սա՞ղ պատերեն չըփլաղ մեռելներ են կախած: Խելքը գլխեն թռնի կը: Կըսե.

- Մա՛րթ, դու ինձի ո՞ւր ես փերե:

Դարվիշը վերցնե կըսե կը, թը.

- Էս մեռելների մսեն կուտեմ, կապրիմ կը. դունե՛ պիտի ուտես էտ մսեն, օր չուտես, գիտցի օր դունե էտման մեռնիս պիտի. օր կերար, զաթի իսկական կընիկս ես ու կընիկրս էլ կը մնաս:

Էս ախչիկը սրտապատառ կըլլի, կընկնի դարվիշին օտվին, կաղաչե, պաղատեկը, թը ինքը մարթու միսչի կըրնա ուտե. հրմը հնար չիլլի: Դարվիշը դանակը կուտա ախչկա ձեռքը, հրամայե կը.

- Կըտռե մսեն, փեր տապկե, ուտենք:

Ախչիկը ճարահատյալ կըտռե կը մսեն, փերե տապկե կը: Դարվիշը կըսե՝ կե՛ր:

Ախչիկը կըսե.

- Դու կեր, ես էտև կուտեմ:

367 Բանասացը հեքիաթի շարունակությունը չի հիշել:

Դարվիշը կուտե, կելլե կը վեր, կըսե.

- Ես կերթամ դուս, դու կեր:

Համաձայնի կը ախչիկը ու կըսե՝ Լավ, դու քընա՛, ես կուտեմ:

Դարվիշն օր դուս կելլե կը, էս ախչիկը բռնե միսը թաղե կը ու, քուքա նստի կը: Դարվիշին կատուն տեսնի կը էտ բանը: Հըմը դարվիշն օր նես քուքա, կատվին հարցընե կը թը.

- Կերա՞վ:

Կատուն գլխով կենե, թը չէ՛, չը կերավ: Դարվիշը օ սահաթ կելլե, շիշը տաքցնեկը ու փերե կոխե կը ախչկա սիրտը, տանի կախե կը մեռելնուն կուշտը: Մեկել օրը դարվիշը կերթա պառվին տունը, կըսե.

- Գիտե՞ս, զոնքանչ խանում, ախչիկըդ էսօր լվացք է էրե, գործերը շատ են, ըսավ, թող քուրըս քա, ինձի քյոմագ էնե:

Պառավը կըսե.

- Ի՞նչ կըլլի, թող քա:

Վերցընե կը օրթանճիլ քուրոչը, տանի կը տուն: Տուն օր կը տանի դռվին կը կողպե, ախչկա ձեռքը դանակ կուտա, տանի կը շիտա՛կ քուրոչը ջանդրկին կուշտը, կըսե.

- Կըտռե քուրոչդ մսեն, վերթիցն օր գուզես, տար տապկե, օր ուտենք:

Ախչկան չումը կը չորնա: Ի՞նչ էնե. կըտռե կը քուրոչ միսը, տանի տապկեկը ու մոլրրի մընա կը, թը ի՞նչըդ ուտե: Կըսե.

- Չեմ կըրնա, ձեռքըս չի՛ էրթա:

Կըսե.

- Օր չես կըրնա, քեզե կը կախեմ էտոնց կշտեն. հըմը օր կըրցար, դու կըլլիս իմ հալա՛լ կընիկըս:

Էս ախչիկը չարասըզ քուրոչը միսը թնե կը դարվիշին առաչը, ինքնե քաշվի կը քանար:

- Ինչի՞ չես ուտե,- կըսե դարվիշը:

- Դու կեր,- կըսե, ես ետև կուտեմ:

- Լավ,- կըսե, ես կուտեմ կերթամ դուս, դու ետև կեր, հըմը օր չը կերար, լա՛վ գիտնաս հա՛, քեզե քուրոչըդ օրին կը ցըգեմ:

Դարվիշն ինքը կուտե, բերանը կը սրփե, կելլե դուս: Էնոր կատուն քուքա կը առաչ, սեյր կենե, կաշեկօր էս ախչիկը միսը տանի կը էնթուն ու թաղե կը: Ուշուրեկ նես կը մտնի դարվիշը:

- Հը՞ը,- կերա՞ր,- կըսե, համո՞վ էր:

Կըսե.- կերա, անուշ էր: Մեմե կատուն առաջ քուքա:

Դարվիշը դառնա կըսե.

- Կատու՛, էս ախչիկը միս կերա՞վ:

Կըսե.

- Չէ՛, չկերավ, տարավ պատին քովը թաղեց:

Դարվիշը կուտը կուտե, էրկինք կելլե: Վերցընե կը շիշը, տաքցընե կը ու կոխե կը էս ախչկան սիրտը, տանի կախե կը պատեն, քուրոչը կուշտը:

Կանսնի կը էրկօրըմ, կելլե կերթա կը պառվին բարով, Աստծու բարի կըսե ու կնստի քեֆ ու հալ կըհարցընե: Ջոքանչ խանումը կըսե.

- Էս ո՞ւր է, մեր աղչիկը չեկավ տուն հըպը:

- Ձեր ախչիկը քուրոջը քյոմագ կենե կը,- կըսե,- էկել եմ օր պզտի քենուսա տանիմ:

Պառավը համաձայնի կը, կըսե՝ թող քա, բայց թող գործը շուտ վերջացնեն ու թեզըմ ղրկե տուն քան: Կառնե կը էս ախչըկաննա ու կերթա տուն: Էս քուրը պզտիկ կըլլի, ինքնե հըլը պուրպիկ կը խաղա էղե: Էս քուրը մեմե մե կատում է ունեցե: Կատուն ու պուրպիկը հետը կը վերցընե օր էնտեղ խաղա: Կերթան տուն: Օր կը հասնին, դարվիշը էլի առաչվա պես դռվիքը կախե կը ու ախչըկանը ձեռքը կուտա դանակը, տանի կը մեռելներուն մեչ, կըսե.

- Էսոնք օր կան, քու քուրերդ են, էնոնք օր կան քուլլի քեզի պես ախչիկ են: Էդոնց բիրատունին մսերեն կերել եմ, չունքի փերել եմ կընիկ էնելու, հըմը հեչ մեկը ինձի անգաճ չի էրե, մարթու միս չէ կերե, եսե սըպանել, կախել եմ: Հիմի քեզի փերել եմ, օր դունե քուրվընտանցդ մսերեն կտռես, տանինք տապկինք, իրար հետ ուտենք: Էն վախտը դու կըլլիս հալա՛լ կընիկըս: Հըմը օր չկերար, լավ գիտցած ըլլիս, քեզե էնոնց օրին կը ցգեմ:

Էս ախչիկը շատ խելացի կըլլի. կըսե՝ լավ, ու քուրոչ մսեն կտռեկը ու տապկե կը: Տապկե պրծնիկը օրա, դարվիշը քուքա կըսե՝ փե՛ր ուտենք: Ախչիկը լըսնե կը սաֆը, փերե թնե կը դարվիշին առաչը, կըսե.

- Դու կեր, ես էտև կուտեմ:

Դարվիշը կուտե, կըշտանա կը ու կելլե դուս: Էս ախչիկնե, գյոզընա սավտիկըմ ախչիկ, հասկըցած կըլլի դարվիշին կատվին սըռը. կելլե, կատվընուն համար մե թոփըմ կը շինե, ցըգե կը առչփվնին, խաղցընե կը, օյիններ կը սարքե, օյալամիշ կենե ու մե քարեմ սամթ կը ցըգե, տանի միսը թալե կը ու

դառնա քուքա, օր կատվընին հլլը խաղան կը:

Ուշուրեկ դարվիշը նես կը մտնի, կաշե իրեն կատվին էրեսը: Հըմը էտ վախտը կատվին միտքը կըյնի կը, չորս թարաֆը կաշե կը օր միսը չկա, շաշ-մի կը. էլ չիտե, թը ինչ ըսե, տիրոչը խափե կը, թը՝ կերավ: Դարվիշը հավա-տա կը: Էտ վախտը փերե կը քալփաթինը, էս ախչըկանը առչի առկեսներեն մեկը քաշեկը ու էտոր տեղը թընե կը մե անգին քարով առկեմ, օր գիշերները փառլաթմիշ կըլլի ու լուս կուտա կը էղե: Առկեն թնելեն էտև ախչըկանը հետ պսակվի կը ու կըսե.

- Այ հիմի դու էղար իմ հավատարիմ կընիկըս:

Տանի կը կընկանը ցուց կուտա իրեն ամարաթները, կարողութենը, ամմեն բան: Դու մի ըսե, էս դարվիշը ունեցել է գետնի տըկի տներ. էտ տըներուն մեչ-նէ շա՜տ սունյաթքարներ, խալի գործողներ, շալ գործողներ ու ուրուշ բաներ: Ունեցել է մե հատըմ էլ թիրմա: Էտ թիրմին մեչը պայե կը էղե չըսեպողներուն: Էտոնք բիրատի ցըցընելեն էտև դարվիշը կընկանը տանի կը օդեն ու կըսե.

- Կնիկ ջան, ես էսյաթ եմ էրե, օր պիտի էրթամ հաջ: Օր էրթամ հաջ, կու-շանամ իրեք տարի. տունըս-տեղըս, կարողութենըս, թիրմեն ու սունյաթքար-ներըս կը պայես էման, ինչըդ օր տեսնիս կը. մե բանըմ պակսեց, մե բանըմ պատայավ, լավ գիտցած ըլլիս, ճիտըդ ջալաթ էնել կուտամ:

Էս խոսքերն ըսելն ու գավազանը ձեռքը առնելը մեկ կըլլի. մնաս բարով կենէ ու կերթա կը հաջ:

Դարվիշն օր կերթա, մութը կը կոխէ, կընիկը կերթա դռվին կը կողպե ու քուքա նստի կը օդեն, բաշլայե կը լալն ու օրոտալը: Շատ օր կուլա մեմե կա-շե կը օր բարի լուսը բացվավ. էտ բարի լուսնե ձեր վրեն բացվի: Մայրըմով աշվին սրփելով կերթա մալը կը դարմընե, ձիանուն կաշէ ու բաշլայե կը թար-քարտան լալը: Շատ օր կուլա, կօրոտա, ճերմակ ձին Աստըծու հրամանով լիզու կառնե ու կըսե.

- Խանո՛ւմ, ինչի՞ կուլաս, դարդըդ ի՞նչ է:

Էս ախչիկը կերթա չոքի կը ճերմակ ձիուն առաչը, ու լալով կըսե.

- Դարդըս կապուտ է. մարթըս քընաց հաջ, իրեք տարի կուշանա, ի՜նչըդ պիտի քաշեմ էնքան մարթու ավուզարը. կեսը թիրմեն կը փըթին, կեսը գետ-նին տըկի տըներուն մեչ, արևի էրես չեն տեսնի, կընիկտղի էրես չեն տեսնի. ինձե թամբեյ կենե թը. «Օր մե բանըմ պակսեց, մե բանըմ պատայավ, գիտ-ցած ըլլիս օր ճիտըդ ջալլաթ էնել կուտամ»:

- Մի՛ մտածէ,- կըսե ճերմակ ձին,- Աստված օղորմած է, հըլբըթ մե հնարըմ կըլլի, դունե կազատվիս կը:

- Ի՞նչըդ չը մտածեմ, քայլան ձի ջան,- կըսե կընիկը: Տեսնիկը օր էսե եսիրի պես էղա. Աստված սև ու մութ բախտի արժանցուց ինձի. էրկու քուրոչըս մորթեց, մսերը կերավ, ինձի եսիր թողեց ու քընաց:

- Դե, արի, օր էտման է, ես քեզի խրատըմ տամ, դունե ազատվե, եսե ազատվիմ,- ըսավ ձին:

- Ըսա,- ըսավ,- ի՞նչ գուզես ըսա, կենեմ:

- Էքվան կերթաս մտնիս կը թիրմեն ու սունյաթքարնոցը, կըսես.

- Ժողովո՛ւրթ, ես էկել եմ ձեզի ազատելու, թե օր գուզեք ազատվիլ, առե՛ք փետատները, առե՛ք քիսկիները, քակեցեք թիրմեն ու դարվիշին տները, մուխը էրկինք հանեցեք, տակն ու վրա էրեք, քարը քարին մի՛ թողնե. իստըկեցեք տներուն տեղը, թամալին հետ հողը գութնով հերկեցե՛ք, տեղը գարի ցանեցեք ու դուքէ պրծիք, եսե պրծնիմ էս սև ու մութ դարվիշի ձեռքեն: Եվ օր ըսիր պրծար, էնոնք քուլլի ըրազի կըլլին, կառնեն քիսկիներն ու փետրտնեը, դարվիշի տունը խա՛ն ու խարապա կը դառցընեն: Էն վախտը դու գլոխըդ կառնես ու փախչիս կը մե թարաֆըմ:

Էտիկ ըսելը գիտեր, կնիկը աշվին սրփեց, պաքեց ճերմակ ձիուն էրեսըն ու պատռաստուբեն տեսսավ, օր սապախտան կանուխ էլլե ու ըսածն էնե: Խընդրլուն գիշերը քունը չտարավ: Եփ օր լուսացավ, էս կընիկն էր, քընաց վերուց բանլիքները, զարկե՛ց, բացեց դարվիշի փեչատած դռվիքն ու մտավ թիրմեն, ըսավ.

- Ժողովո՛ւրթ, ես եկել եմ ձեզի ազատելու էս մութ թիրմեցեն: Ես դարվիշի կնիկն եմ. դարվիշը քնաց հաջ. կուշանա իրեք տարի: Հիմի Աստծու հրամանով ձեր վրեն լուս պիտի բացվի, թե ըրազի եք, առե՛ք փետրտները, առե՛ք քիսկիները, դարմատաղըն էրեք դարվիշի տունն ու տեղը, քակեցե՛ք պատերը թամըլներեն հետ, հեռեցուցե՛ք քարն ու քուռչը, տեղը գարի ցանեցեք, էտև Աստված ձեզի ուղուղուբեն տա, ո՛ւր գուզեք քնացեք:

Էսիկ օր էս ճառախոսուբենընն էրավ, թիրմին մարթիքը գոռուն-գոչունով վրա պրծան, էս կնկանը էրկինք հանեցին ու գետին իչուցին: Էսոնք օր ըրազի էղան, էտ կնիկը քընաց իչավ գետնի տակի տները, կանչեց սունյաթքարնուն, էլի էտ բանն ըսավ, էնոնցե ըրազի էրավ ու մեքարեմ բաշլայեցին դարվիշի տները քակելը: Տները քակեցին, խան ու խարապա էրին, տեղը գարի ցա-

նեցին. դարվիշի կնկա հրամանով էնոր կարողութենը իրենց մեչ հավասար բաժնեցին ու մնաս բարով ըսին էս կընկանն ու էրկընուց գետին շնորակալ էղան, քընացին ամմենն իրենց թարաֆը:

Էտոնք օր քնացին պրծան, էս կընիկը մե վախտըմ դիշիմմիշ էղավ, թը. «Հիմի ո՞ւր էրթամ, օր դարվիշի ձեռքեն ազատվիմ»: Շատ օր մտածեց, մտյան էրավ մորն ու ամմեն բան, դայրին փեշը զարկեց մեջքին ու, հայտե բալամ, էրկրեն դուս: Թե էրիկը դեմի արևմուտք էր քընացե, ինքը արևելք քընաց: Շատ քընաց, թե քիչ քընաց, էտ էլ Աստված գիտե, քընաց հասսավ մե ուրուշ էրկրիմ սինոռը: Անոթցել էր: Մտավ մեշին մեչընն օր բանըմ գտնի, ուտե: Էտ վախտը, էտ էրկընի թաքավորին տղեն ավճութեն կենե էղե:

Մեմե բիրտան տեսսավ էս կընկանն ու մոտեցավ, ըսավ.

- Է՜յ, ինսանօղլի, ի՛նս ես, ջի՛նս ես, էս ի՞նչ գործ ունիս մեր էրկընրին մեչը:

- Ինսանօղլի եմ,- ըսավ,- անտեր, անտիրական ման քուքամ:

- Վե՞ր էրկընրեն ես,- հարցուց,- ինչի՞ մեշեն ես մտե:

Ըսավ օր էսինչ էրկընրեն է ու գլխուն էկածը սաղ պատմեց թաքավորին տղին: Թաքավորին տղեն մաթ մնաց էս կընկա պատմութենեն ու ըռընդութենեն: Շատ օր խոսան, ըսավ.

- Ես թաքավորին տղեն եմ: Արի դու ինձի առ, պրծի դարդ ու ցավերեդ: Ախչիկը համաձայնավ, ու թաքավորին տղեն առավ, տարավ տուն: Օր տարավ տուն, քընաց հորը կուշտը, ըսավ.

- Թաքավորը ապռաստ մնա, մեշին միչեն էս ախչընկանը գտա, ուզեցի ինձի առնելու համար: Ակար օր գուզես քու հարսընդ էնել, մեզի պսակե, թե օր չէ, ես ուրուշ ախչիկ չեմ առնե:

Թաքավորը վերուց ըսավ.

- Օղո՛ւլ, եվ օր քեզի ձեռք կուտա, Աստված բարի վայելում տա, մե բարցիմ ծերանաք:

Արքընը թաքավորը հարսնիքը բռնեց, օխտը օր, օխտը գիշեր հարսնիք էրավ, տղին պսակեց, մուրադին հասսուց ու իրեն օրը թըմմավ, մեռավ: Եվ օր մեռավ, էլլիկը տղին թաքավոր նստեցուց:

Անցավ մե վախտըմ, էս նոր թաքավորը ունեցավ մե մանչըմ: Մանչն օր իրեք տարեկան էղավ, դարվիշին հաջեն քալու տարին թըմմավ: Դարվիշը ետ էկավ, քընաց տան տեղը էսթուն աշեց, էնթուն աշեց, տունը չը գտավ:

- Է՜ս ի՜նչ օյին էր գլուխըս էկավ,- շվարած, շփոթված նստավ քարին:

Չորս բոլորը աշեց, էտև ուշուրեկ գլխու ընկավ, օր էս բանը իրեն կընկանը բանը կըլլի: Դարվիշը կատղավ, կուտը կերավ, էրկինք էլավ:

- Ես էլլիմ դարվիշն ու դու իմ գլուխըս էս տեսակ օյինը փերե՞ս:

Ըսավ ու ձեռվին էրկինք տնկեց, Աստված կանչեց, էրթում կերավ, օր էրկըթե չարոխ հաքնի, աշխըրե-աշխար անսնի, կընկանը գտնի ու հախիցը քա: Քընաց մտավ դամըրչնոց, զակազ տվեց ջուխտըմ էրկըթե չարոխ շինելու: Քընաց մե սազըմ առավ, տեսակ-տեսակ հալավներ առավ: Հաքավ, սազը մեշքեն կախեց ու յա՛ Աստված ըսավ, ընկավ ճամփա: Վերտեղ օր կերթար, կըսեր՝ ես աշշըղ եմ: Վերտեղ օր քընաց, ըսավ ես մասխարութեն էնել գիտեմ: Վերտեղ օր քընաց, էնոր մեծամեծները իրենց տները կանչեցին ու հեքաթ յա խաղ ըսել տվին, յա թե չէ մասխարա բաներ էնել տվին: Հըմը դարվիշն օր մասխարութեն կեներ, թոփ էղած շելլոցը մեչը աշկը կընկտացը կըլլեր, թը չըլլի՞ կնիկնե էտոնց մեչն է: Սա՛ղ թաքավորության հողը անցավ, կորուցածը չը գտավ: Իլլաճը կըռավ, անցավ էն թաքավորության հողը, վերտեղ օր պայվել էր կընիկը: Էլի խաղ ըսելով, աշշըղութեն էնելով, մասխարութուն տալով գեղե-գեղ, քաղքե-քաղաք անցավ, հըմը հեչ մե տեղըմ չը գտավ կընկանը: Հասավ թաքավորին քաղաքը: Խապարը հասավ թաքավորին անգաճը, թը՝ չես ըսե, էսման-էսման մե անվանի աշշըղըմ է էկե, լավ բաներ կը պատմե ու խաղ կըսե:

Թաքավորը կանչել տվեց էտոր իրեն տունը: Աշշըղը նես մտնիլն ութաքավորին կընկանը սև դուրը վեր տալը մեկ էղավ, չունքի ճանչեց: Հըմը դարվիշը չը ճանչեց կընկանը: Իրիկուն օր էղավ թաքավորին զալին մեչը թոփ էղան շատ կընկտիք ու էրիկմարթիք, աշշըղը բաշլայեց խաղ կանչելն ու մասխարա բաներ պատմելը: Եփ օր կը պատմեր շելլիկը խընդըլեն ջարթիր կը. հըմը աշշըղը կաշեր օր կընկտացը մեչը մեկըմ կա, հեչ չի խընդա, չի ուրախանա: Էսոր մեչը մե քարեմ ֆասֆասութեննն ընկավ, թը՝ ախըր, ի՞նչըղ բան ըլլի օր սաղ աշխըրի էրիկմարթ ու կընիկմարթ իրեն մասխարութեննեն կը խնդան, էսիկ չի խընդա: Էս անքամ թարքըրե կը մասխարութենը. է՛լի չի խընդա: Մեկ, էրկուս, իրեք, մեմե բիրտան, ինչըղ կըլլի սա, կընիկը կը խնդա: Եփ օր կը խնդա, դարվիշը հավարոքըմ առկընուն կաշե: Տեսնի կը օր, ահա՜ն, իրեն թըրած առկեն բերանն է: Հըմը էս վախտը ձեռքը կը թընե սրտին, կըսե.

- Ուխա՜յ, ջալլամ թը ինչ էղավ. ես ուզածս գտա:

Հեչ մեկը բան չի հասկընա դարվիշին խոսքեն, հըմը կնիկը հասկընա կը

ու սև դուրը վեր կուտա: Քեֆ ուրախութենն օր կը վերչանա, շելլիկը կերթա տները, մնա կը դարվիշը: Թաքավորին կըսե թը.

- Իզին չե՞ս տաէսօր քու տունըդ մնամ:

Թաքավորնե վերցընե կըսե՝ պաժալուստա, ինչի՞ չեմ տա:

Թաքավորին կընիկը կերթա մարթուն կըսե.

- Մարթ, էս մարթուն վռնդե, էսորեն մեր գլխուն մե դազեմ քուքա:

- Հեչ բանըմ էլ չիլլի,- կըսե,- ես ըլլիմ թաքավոր, էտիկ ըլլի մե գեղացիմ, ի՞նչըդ ըլլի օր մե գիշերըմ տունըս միսըվեր ըլլիլ ուզե, չթողնեմ:

Կընիկը էլի կըսե. հըմը թաքավորը անգաճ չի էնե.

- Ա՛յ կնիկ,- կըսե,- սաղ աշխարը թևիս տակն է, չես վախենա էնոնցեն, էս մե մարթեն ի՞նչըդ վախեցար:

- Դու գիտես, մեղքը քու ճիտդ,- կըսե կընիկը:

Ըշտը գիշերը կերթան ամենքը իրենց տեղերը կը պառկին: Աշշըղինէ մե ուրուշ տեղըմ կը պառկեսնեն: Քնինկը: Քնին կը, հըմը թաքավորին կընկան ճռվին դողան կը, թը՝ հըճըվի ի՞նչ պիտի ըլլի:

Կեսգիշերին դուռը կը ճռռա. կընկա չումը կը չորնա, թը էս վե՞վ պիտի ըլլի: Դարվիշը նես կը մտնի ու գոռա կը.

- Էկա՛, շնե ծնված, էկա, գրող չունեիր, գրողըդ եմ, մայ չունեիր, մայրդ եմ փերե, դե ճար ունիս, ճարըդ տեսսի:

Կնիկը պոռա կը, ճվա կը, մարթուն կը քաշքշե, տղին կը քաշքշե, հե՛չ. փե-տի պես ձեն չըկա:

- Դե՛, տեսնիմ, ուրուշ ճար ունիս, ճարիդ աշե, էտոնցով բան դուս չի քա, գիտցի, օր վերչիդ օրըն է, կըսե դարվիշն ու քիչ-քիչ մոտենա կը էսոր:

Կընիկը էլի կը ճվա, էլի կը պոռա, կաշե կը օր հընար չկա, կաղաչե կը դարվիշին թը՝ ինչ գուզես ուզե, թաքիտա ինձի մի սրպանե:

- Չէ՛, կըսե, դու ձեռնես էլ չես պըրծընի, մենակ թը՝ քեզի թուլ կուտամ, դուս էրթաս, ինտատ-հավար կանչես:

Կընիկը կերթա դուս կը պոռա. Հա՜յ, հավա՜ր, հա՜յ ինտատ, հասսե՜ք, հասսե՜ք, հըմը մարթ չիլլի, օր ինտըտութան հասնի: Հոքուն կըսկըծուն, մա-զերը պոկելով, լալով, օղբալով նես կը վազզե, թարքարտան ճանկըռթե կը էրկանը էրեսը, տղին էրեսը, ձեն չի էլլե: Դարվիշը նորեն կը վախեսնե: Կը-նիկը օխրալոգ խնթրե կը օր, էլի թուլ տա՝ հավար կանչե: Դարվիշը էլի թուլ կուտա: Կնիկն օր դուս կելլե, հավար կը կանչե, հեչ ձեն-ձուք չի քա: Քուքա

նես, խելքը կորուցած քաշքըռտե կը մարթուն, պատերը կը ճանկըռթե, չոքի կը դարվիշին առաչն ու կաղաչէ, որ կընքին չը դիպչի: Շատ օր կը տանջվի, դարվիշը կըսե

- Դե, էլի ճար ունիս, ճարըդ տես: Էս դրեթին կնիկը կելլե էրթիքը, չոքի կը ու Աստված կը կանչե: Մեմե բիրտան անգաճը կընկնի մե խորունկ ձենըմ: Շատ օր անգաճ կը թընե, կիմանա կը օր էդ ձենը կըսե.

- Չո՛ռ, գրո՛ղ, զայրմա՜ր, ի՞նչ կըսես, ի՞նչ էնեմ, ախպերըս է, ի՜նչ էնեմ:

Էսիկ էսթույեն կաղաչե, կը պաղատե, թը՝ «Հասսի, մե տղեմ ունիմ, քեզի մատաղ կը խոստընամ, հասսի՜ ինտըտի»:

Դու մի՛ըսե, էտ ձեն տվողը դարվիշին մեծ ախպերն է, ինքնե հեռու սարերուն մեչ, մաղարաները կապրի: Եվ օր կիմանա տղին մատաղ էնելը, մեղքը կուտա, կըսե.

- Քնա՛նես, դուռը բաց. աշե դռանը էտտին թըրած է մեշոքըմ, ա՛ռ էտ մեշոքը օտվընուտ տակը, կոխկըռտե՛, լուսանա կը: Բիտտունը կը զարթին, դունա կը պրծնիս էտ զուլումեն, եսա՝ քու ձենեն:

Կընիկը վազե կը նես, բանակը դուռը, հանե կը մեշոքը, ցրգե կը օտվընուն տակն ու բաշլայե կը կոխկըռտելը: Մեմե կաշ օր բիրտանբիրա լուսը բացվավ, մարթն ու տղեն զարթան, քաղքին մարթիքը զարթան: Կընիկը կըյնի թաքավորին գիրկն ու հոնգուր-հոնգուր կուլա կը: Դարվիշին խելքը գլխեն կը թռնի. էսթո՛ւն կը վազզե, էնթո՛ւն կը վազզե, օր սըռն իմանա, մեմե կաշե օր մեշոքը թըրած տեղը չընկա: Արթըղ մոլորի կը իշու պե: Թաքավորն օր կը զարթի, շաշմի մնա կը.

- Էս ի՞նչ է էղե, ա՛յ կընիկ, կըսե, ինչի՞ կուլաս, ինչի՞ ես խառնվե իրար:

Կընիկը էս եղելութենը տըկետակ պատմե կը էրկանն ու ցուց կուտա դարվիշին, օր էտ վախտը մեյմունի պես կայնած փետցել էր դռանն էտտին: Դու մի՛ըսե դարվիշը քարացուցած է էղե բիրատոնցը, օր կընկանը հախեն քա: Թաքավորը պատմութենն իմանալեն էտև կանչե կը ծառաներուն: Օխտը տարի արևի էրես չընտեսսած մե ղաթըրըմ կը փերեն,, դարվիշին կապեն կը պոչին ու բաց կը թողնեն: Գեզընասավտիկըմ ղաթըր. սարեր կը տռճիկե, քարեր ու քռչեր կը թռչի, էս դարվիշին սաղ տեղը անգաճը կը թողնե:

Էքսի օրը թաքավորին կընիկը դավին կը բառնա շատ համով, տեսակտեսակ տապկոցներ, գաթա, հալվա, տղինե կառե տանիկը օր տա իրեն ազատալամին: Եվ օր հասնի կը մաղարեն, փեշկըշնին օր կուտա կը, ամե-

նեն էտնե տղին կուտա: Դարվիշ ազատլամեն կըսե.

- Եվ օր էտման խոսքիդ տերն էղար, տղիդ քեզի բաշխեցի:

Կընիկը էրկընուց գետին շնորակալ կըլլի, դառնա կը տուն: Էնքից էտև կուտեն-խմեն, իրենց համար կապռին կը:

ՊԵԽՈՆ

Ժամանակով կըլլի, չիլլի, մե հատ ավճի կըլլի: Ատիկ կերթա ավճութան, մեշին մեչը ըռաստ քուքա մե ուրուշ ավճում: Ատոնք միանան կը իրար հետ, մե հատ էղնիկ կը զայնեն ու տանին կը տուն: Քերթեն կը, կաշին ցըգեն կը սելին թափքին գլխուն, օր չորնա, միսնա կուտան կընկանը, օր էփե: Իրենքա քուքան օղեն, դեյմի օր միսը էփի, օր նստին սեղան:

Կերակուրն օր կեփեն կը, փերեն կը օղան, օր ուտեն: Հազըրվորեյին կը, օր ուտեն, հըմը ամնին միչեն կորի կը կիրակուրը: Մեկը մեկին էրեսը կաշե, թը՝ էս ի՞նչ բան էր: Կելլեն դուս օր փոստնա չըկա: Ետ քուքան, նըստին կը: Մտածեն կը: Էտ մտածելուն դուռը ծեծեն կը: Նես քուքա մե մարթըմ, կըսե.

- Ա՛յ մարթիք, ի՞նչ եք զարմացե, ատիկ հե՛չ, ատիկ օր կա ե՛ս եմ: Իսկականն օր գուզեք, Պեխոյին գլխուն էկածն է. ա՛յ զարմանալու բանն էնոր գլխուն քալածն է:

- Էտ մարթն ըսավ ու քընաց, կորավ: Էս ավճիները մոլըրան մնացին:

Ավճիներեն մեկը մնաս բարով ըսավ մեկալին ու ընկավ ճամփա դի՜զ Պեխոյենց էրկիրը: Աս ավճին շատ քընաց, թը քիչ քընաց, շատն ու քիչը Աստված գիտե, հասսավ Պեխոյենց գեղը, հարցուց Պեխոյենց տունը: Ցուց տըվին՝ դեյյան է, հա՛, գեղին քանարը:

Քընաց տանը քովն օր հասսավ, տեսսավ օր մե էխտյար կընիկըմ նստել է. ըսավ՝ բարով մայրիկ ջան:

- Բարո՜վ, հազար բարի, բալա ջան,- ըսավ պառավը:

- Պեխոյին տունն էսի՞կ է, մայրիկ:

- Հա, օղուլ,- ըսավ,- էսիկ է օր կա:

- Պեխոն ո՞ւրենե:

- Քընացել է մեշան, բալա ջան, հիմի քուքա կը:

Մեմե տեսսան օր Պեխոն էշը փատ բառցած, տընգ-տընգ քուքա կը:

- Բարև ձեզի,- կըսե աս ավճուն ու տանի կը նես: Նես օր կերթան Պեխոն մորը կըսե.

- Հաց փեր, դաթռած-բերզած մարթ է, անոթի կըլլի:

Հաց կը փերեն, կուտեն, չայ կը խմեն, էտոնցեն էտև էս ավճին թը.

- Պեխո ջան, ես հեռու աշխարքե եմ էկե քովը, մե բանըմ ունիմ քեզի հարցնելու, հըմը կաղաչեմ օր ատկազ չենես:

- Ըսա, ինչ օր ձեռքես քուքա, կենեմ,- կըսե միսըվիրին տանտերը:

Արթըղ աս մարթը իրեն գլխուն քալածը պատմե կը Պեխոյին: Պեխոն կըսե.

- Եփ օր էդքան ճամփա էկել ես, պատմեմ կը. լավ անգաճ էրե: Էլավ աս մարթուն տարավ հարամ օդասին, վերտեղ օր էտ դեպքը պատայել էր իրեն: Հիմի անգաճ էրա, ըսեմ.

- Ես օր կամ, աշխըրի ուժեղ, քաչ մարթն էի: Էրկընքեն օր դուշ կանսնիր, ես փաջ (մաքս) կառնեի էնոնցեն: Եփ օր վախտըս էկավ, նշանվա: Հարսնիքն օր էրինք պրծանք, առաչի գիշերն օր նշանածս հանվավ պառկելու, եսա հանվեի պիտի օր պառկեի, բիրտան դուռը ծեծեցին: Ես էլ մաթ մընացի, թը էս վո՞վ պիտի ըլլի իմ դուռըս ծեծողը: Էլա դուռը բացի: Հըմը բացի օրա՛, էտ մարթը ինձի մե դագինակըմ օր զարկեց, ինձի ձի էրավ ու հեծավ վրես, դե՜յ լուս ինձի էսթուն-էնթուն քշեց, դաթռած, փրփրած փերեց մեր դռանը քովը, դագինակով էլի զարկեց, է՛լի էրավ մարթ: Էկա նես: Մտածեմ կը, թը՝ «Ես ըլլիմ Պեխոն, գլխուս ասպես բան քա՞»: Էհ: Էլա,- կըսե,- քընացի իմ գործին: Մեկալ իրիկունը էլի էկավ ան վախտը, դողը ընկավ սիրտըս, թը՝ չըլլի՞ էլի քա ատ մարթը: Նշանածս էլի հանվավ, պառկավ, եսա ուզեցի հանվել, բիրտան դուռը ծեծեցին: Հիմի ես կը մտածեմ, թը չերթամ, արթըղ նշանածս պիտի ըսե թը. «Էս Պեխո-Պեխո օր կըսեն, է՞ս է օր վախենակը»: Էհ: Չըրըսի՞ նա՛: Ուզե՜մ, չուզեմ, բանամ պիտի: Բացի, հըմը բանալըս գիտեմ, է՛լի դագինակով զարկեց, ինձի էրավ ձի, դեյ լուս քշե՜ց, քշեց, դաթռեցուց, փրփրեցուց,. օր լուսացավ, փերեց դռանը քովը, է՛լի զարկեց դագինակով, ինձի էրավ մարթ, նես էրավ ու կորավ: Նշանածըս ինձի հարցուց, թը.

- Ա՛յ Պեխո, էս էրկօր է ո՞ւր կերթաս կը օր սաղ գիշերը տունը չես մնա:

Է՜, ի՞նչ ըսեմ. ըսեմ թը՝ ինձի ասպես բան կենեն կը, հավատալու բան չէ: Էհ: Նշանածիս խափեցի, ըսի թը՝ Տղեքն էկել էին կանչեցին, քնացինք: Հըմը ես մտածեմ կը, թը՝ ի՞նչ պիտի դառնա էսոր վերչը:

Էլի էկավ իրիկունը: Սիրտըս էլի դողն ընկել է: Հանվեցինք օր պառկեինք, դուռը ծեծեցին: Նշանածըս թը.

- Մի՛ էլլի դուռը բանա:

Ի՞նչ ըսեմ նշանածիս. ատ մարթը ախըր հընարք ունի, էրթեցեն էլ կը մտնի:

Էլա,- կըսե խեղճ փու-փու (ֆուֆու) Պեխոն,- դուռը բացի, հըմը բանալուս պես, մե հատըմ գոբալով գլխուս տալուն պես ինձի էշ էրավ: Այսի հայվընին ախոռնա օր կը տեսնիս, ինձի բերեց ըշտը աստեղա՛կապեց: Այսի թախտնա օր կա, նշանածըս էր պառկած: Ինձի էշ էնելեն էտև, մարթը անպես ինձի կը լմանիր, օր գիտես թե մե խնձորըմ կիսես: Նշանածս բիլա չը ճանչեց: Նշանածըս անոր հարցընե կը թը.

- Պեխո, աս ի՞նչ էշ էր, օր նես փերիր:

- Մեր տղաքն էին փերե, առա: Էշ է էլի, պետք քուքա,- անհավես, անտարբեր կըսե անիկա:

- Ի՞նչ պիտի էնեիր ա՛յ մարթ, էշը ինչներո՞ւս էր պետք, օր առար:

- Լավ, թող հըլը էրթա մնա, էտևա ծախենք կը. էշ ո՞ւմ պետք չի քա:

Ատ ըսելեն ետքը, հանվավ ու մտավ նշանածիս ծոցը: Ես էշ եմ, հըմը հասկընամ կը աշխըրիս բանը: Ախըր մարթ եմ, է՞: Զըռա՛մ կը, օտներըս գետնեգետին կը զայնեմ, մե խոսքով չեմ թողնե քընելու: Նըշանածըս թը.

- Ա՛յ մարթ, էս ի՞նչ էր փերիր, օր մարթու չի թողնե դաթար:

- Է՛, լավ, կընիկ, սապախտան տանիմ կը ծախելու, կը պրծնինք զռզռոցեն, բան չկա:

Հըմը ես՝ հե՛չ արտ ու արա չեմ տա. հա կը զռամ ու կը զռամ, օտներըս գետնեգետին կը զայնեմ:

Լուսացավ: Մարըսա՛ չի ճանչե՝ իրեն տղե՞ն է, թը՞ չէ:

- Օղուլ,- կըսե մարըս,- ատ ի՞նչ ես առե, օր հիմիա կը տանիս ծախելու:

- Էհ, մարի ջան,- կըսե փոշմընած մարթու ձենով,- ուզեցա մե էշըմ ունենայինք, հըմը աս թերմաշը գեշը դուս էկավ, զռզռակը, հա՛զռզռակը:

Յուլարն անցուց գլոխըս, տարավ գեղեն դուս հանեց, բալքամ զարկեց ինձի, շինեց մե ղոջա կոլը շունըմ, էտտին ցրգեց, ինձի թարքար փերեց տուն: Կընիկըս թը.

- Ա՛յ մարթ, էշը ծախեցի՞ր:

- Հա՛,- ըսավ,- էշը ծախեցի, էս շունը առա: Հըմը գիտես, կընիկ, ասօրվանից բաշլայես կը մե գրվանքամ հաց տալ. ամմեն օր քիչ-քիչ պակսեսնես կը, օր թեզըմ սատքի, հարկավոր չէ:

Արթը կընիկը բաշլայեց ատպեսա էնել: Տեսսա օր ես պիտի անոթի սատքիմ, վերչանամ, ըսի քանի ուժ կա վրես, գլոխը առնեմ էրթամ: Քնացի էլա չոբնին օչխըրին քով. մե հատ վազզեցի, օչխըրին չորս թարաֆեն թոփ էրի (ախըր ես մարթ եմ չէ՞, հասկընամ կը գործը): Չոբանն օր ինձի տեսսավ, կանչեց: Կանչեց մե լա՜վըմ կաթ կթեց, թրեց առաչը, կուշտ կերա: Անպե՜ս կերա, անպե՜ս կերա, օր փորը էլավ շալակը, էղավ թուշի շան փոր: Ըսի՝ ջալլամը, էստեղ լավ է, կապրիմ էստեղ: Հըմը չոբանին խելքը կերթար ինձի համար: Էլ կըրնար օր մե ջանավարըմ մոտենա օչխըրին. բզիկ-բզիկ կենեմ:

Իմ անունը սաղ աշխըրքին մեչը հրատարակվավ, թը՝ ասպես մե չոբանըմ, ասպես մե շունըմ ունի: Անունը ընկավ թաքավորին անգաճը:

Թաքավորին կընիկը ատ վախտերը պառկիր կը օրա, տղան չի էրևա էղե: Ի՞նչ բան է սա՝ կորի կը էղե: Թաքավորն օր իմացել է անունը, հրամայել է իրեն սեյիդին, թը.

- Քընա չոբնին քովը, ինչ օր գուզե՝ տուր, էտ շունը փեր:

Սեյիդը փարեն կառնե ու քուքա դի՜զ չոբնին քովը: Բարև, Ասսու բարիից հետո, կըսե օր թաքավորին հրամանով էկել եմ քովը:

- Խեր ըլլի, սեյիդ, ի՞նչ խապար է,- հարցընե կը չոբանը:

- Էկել եմ, օր շունը տանիմ,- կըսե սեյիդը:

- Յաման, սեյիդ, կյանքը տար, թաքի շունը մի տանի,- կըսե չոբանը:

- Չեմ կըրնա, չոբան ախպեր,- ազնիվ ու շիտակ կըսե մարթը,- թաքավորի հրամանն է, պիտի տանիմ. ինչ օր գուզես, կուտամ, բայց պիտի տանիմ:

Էհ: Ես նստել եմ, անգաճ կենեմ, թը՝ էս ի՞նչբան է. թագավորն ինձի ինչի՞ պիտի տանի:

Սեյիդը աս չոբնին շատը փարա տվեց: Չոբանն էկավ ճիտը փաթըթվավ, լացեց, աշկերեն գունդ-գունդ արտունքը թափավ:

- Ավելի լավ էր ինձի զայնեիր, քանց թե շունս տանեիր,- ըսավ տերը:

Անտից էտև ժընջիլը թրին ճիտս, մնաս բարով ըսավ սեյիդն ու ընկանք ճամփա: Շատ քընացինք, թե քիչ քընացինք, շատն ու քիչնե Աստված գիտե, էկանք հասսանք թաքավորի պալատը: Ինձի տարան թաքավորին պալատը. հրամայեց բովեռին, թը՝ լավ բան ժառիթ էրեք, փերեք թող ուտե, ճամփեցե քալած է, անոթի կըլլի:

Թաքավորն օր տեսնի կը շարժմունքը, զա՜ր ու զարմանք կմնա, թը ասպեսա շուն կըլլի՞: Ախըր ես գիտեմ, թը ինչը ինչոց պիտի ըլլի: Հըմը եսա չի-

տեմ, թը թաքավորը ինձի ինչու համար է փերե: Կուտե՞մ, խմե՞մ, պալատները ման քուքամ. մեկըմ իրավունք չունի ինձի բան ըսելու: Էստեղ ինձի ավելի լավ էղավ: Իննը ամիս անցնելեն էտև ինձի տարան մե օդամ, ուրտեղ օր թաքավորին կնիկն էր: Էհ, նստա, մտիկ կուտամ, թը՝ ինչ պիտի ըլլի: Թաքավորին կնիկն օր պառկավ, ես կամընչեմ օր կընկանը էրեսն աշեմ, չունքի չըփլաղ է, հըմը ի՞նչ պիտի ընես օր շուն եմ: Հըմը էստեղ քիչըմ հասկըցա, օր ինչու համար են ինձի փերե: Էտ վախտը տղան օր աշխարի էկավ, մե մեծ, սև կատում է՛ն էր, թռա՛վ օր տղին պիտի տանի՛ր, հըմը էս խեխտեցուցի ու չոքեցուցի: Ուզեցա բզիկ-բզիկ էնել, կատուն թը.

- Պեխո՛, դու ինձի թո՛ղ, եսա քեզի կազատեմ: Ատիկ օր իմացա, կատվին բաց թողի, հըմը մազերնա բերանս մնացին: Տղին փրկեցի: Աշկի լուսն ընկավ թաքավորին.

- Թաքավորը սաղ ըլլի, կընիկըդ պառկել, մանչ է փերե:

Թաքավորը գլոխը բաց վազզեց: Վազզե՛ց, հըմը, տղին չնայածտան, ինձի փաթթըվավ, տեսսավ օր ես նստել եմ, մազերնա բեյնիս մեչ են: Մազն առավ բերնես, շատ երկար, խաղաղված նայեց աչքերիս ու ըսավ.

- Ա՛յ, ա՛ս էր, ինչ օր կեներ: Էտև աշեց տղին, կընկանը, էկավ քովըս ու, մազերս շոյելով, ըսավ.

- Էսիկ շուն չէ. էստեղ բանըմ կա՛: Հրաման տվեց իրան թաքավորութան էրկիրը, թը ինչքան օր թըլըսումճիներ կան, թող քան: Իսկ ինձի տվեց գեներալի պաշտոն, ումուզնուս չիներ թրեց և իրան թաքավորութան հրաման տվեց, օր «ասպես մե շունըմ աս պաշտոնին տերն է, բիրատիքը պետք է ենթական ըլլենան անոր»:

Օրվանըմ մեկը, ֆոռմով ու չիները վրաս, քընացի քաղաք պտտելու: Պաշտոնավորները, զինվորները, բիրատիքը չեստ կուտային ինձի: Մե բախչեցեմ անցնեի պիտի, մե հատ գեներալ իրան կընկանը հետ քուքար կը: Ատիկ անքան գոռոզ էր, օր չեստ տալ չուզեցավ ինձի, յանի մըտքումը ըսավ. «Էտիկ ի՞նչ է, օր շուն հալովը եսա ատոր չեստ տամ»: Հըմը տեսսա, օր չեստ չը տվեց, հասսա ու յախեցեն բռնեցի, յախեցեն մինչև փեշը պատռեցի: Էսիկ ճըվճըվալը ցգեց, թե էս ի՞նչ խայտառակութուն է, կատղած շունը կարելի է սոխըխները վերվարել:

Բռնեցին ու մեզի տարան թաքավորին քովը: Էս գեներալը պատմեց, թը.

- Թաքավորը սաղ ըլլի, էս տեսակ բան կըլլի՞:

Թաքավորը հարցուց գեներալին, թե դու աս շանը չեստ տվե՞լ ես: Անիկա, թը՝ չէ: Ուրեմն՝ անիկ լա՛վ է էրե, իրան հանդեպ պատիվն է պահանջե:

- Քընա,- ըսավ թաքավորը,- մեկալ անքամ էսոր ըռաստ քուքաս թե չէ, չեստ կուտաս, թե չէ՝ պատիճըդ գեշ կստանաս:

Մե քանիմ օրից էտև մե պառավ կընիկ էկավ ըսավ.

- Ես թըլըսումճի եմ. էն թըլըսումճին եմ,- ըսավ,- օր ի՞նչ բան ծնված է իրան մորեն և դառցուցած է ուրուշ կերպարանք, անոր կենեմ թարքար էն կերպարանքին, ինչ օր ծնած է մորեն:

Էհ, թաքավորն ըսավ.

- Եթե աս շունըս ինչ է օրա, դառցընես թարքար ինքն իրեն, կշեռնորթովըդ օսկի կուտամ:

Հա՛, թաքավորը սաղ ըլլի. թող ատպես ըլլի: Մե քանիմ տախխա էտև ինճի էտ պառավը դառուց էն Պեխոն, որն օր ես կայի: Թաքավորը զար ու զարմանք մնաց.

- Հըպը ես օր կըսեյի ասիկ շուն չէ, աստեղ բանըմ կա, հըմը ասպես էղավ: Տարեք,- ըսավ ուրախացած,- էս կընկանը քաշովը մեկ օսկի տվեք:

Տարան անոր քաշովը մեկ օսկի տվին, ճամփեցին: Էհ՛, նըստանք թաքավորին հետ խորաթեինք կը: Թաքավորը վերուց ըսավ.

- Պեխո, հար վեր սանջաղն օր գուզես, ըսա, քեզի տամ, էրթաս էնտեղ կառավարես:

Ես էլ մտքով գուզեի, օր իմ ծննդավայր-հայրենիքըս ձեռքս անսնի, էրթամ տեսնիմ, աշեմ, թը ի՞նչ կենեն մարս ու նշանածս: Պաշտոն ըստացա, էկա: Էկա էտ քաղաքն էլա, ունթունեցի քաղաքը, հըմը խելքըս, միտքըս էնթին էր, թե հըլը էրթամ աշեմ մերոնք ի՞նչ կենեն: Քընացի: Քընացի մոտեցա դռանը, մարթ չըկար: Դուռը բացի, հըմը դուռը բանալըս գիտեմ, աս մարթը է՛լի դեմս էլավ, մե չըբուխըմ քաշեց, ինձի էրավ մե խորոզըմ, խառնեց հավերուն մեչը: Հիմի առչի իրիկվընե անպե՞ս կը կանչեմ, անպես կուկուլիկու կը կանչեմ, օր սաղ գեղին խորոզները հետըս ձեն կուտան կը: Տունն էլ հեչ չեմ թողնե քընելու, հավերուն կը խեխտռտեմ, չեմ թողնե դաթար: Կընիկըս թե.

- Ա՛յ Պեխո, էս ի՞նչ բան էրիր, աս ի՞նչ զուլում փերիր դու մեր գլոխը. առչի իրիկվընե զայլաներըս տարավ: Ախըր խորոզն օր առչի իրիկորե կը կանչե, չարերը քուքան. աստեղ մե բանըմ կա:

Ձունը գլխուդ, կընիկ, հեչ խապար չէ, թը ինչ կա էս լուսումութ աշխարը:

- Ե՛լ,- ըսավ,- ախչի, ե՛լ բռնե ատ թերմըշին, թիր քըթոցին տակը, սապախ-տան կանուխ ես կելլեմ, կը մորթեմ, կերթա կը պըրծնի:

Սիրտըս դողն ընկավ. կըսեմ. «Հըլը աշխըրքին բանին աշե. համ կընկա-նըս տիրել է, համ էլ մորթե պիտի օր պրծընին»: Էհ՛, կընիկս էկավ, ընկավ էտտիս. ես կըչկըչամ կը ու փախնիմ կը էս թառեն էն թառը: Թըռվըռալեն շատ օր դաթռա, ինձի բռնեց, կոխեց քթոցին տակը: Իրենքա քընացին ու պառ-կան: Նստել եմ քըթոցին տակը, մտածեմ կը. թե՝ էս ի՞նչ էր վերչապես իմ գլխուս քալածը: Էշ էի, շուն էի, ձի էի, մարթ դառցա, հիմիյա՝ խորոզ: Ի՞նչ էնեմ, ի՞նչ է վերչըս: Մեմե բիրտան տեսնիմ օր մեկըմ քթոցըս ճանկըռտե կը: Քթոցս վեր վերուց, մե հատըմ չբխով զարկեց ինձի, դառուց մարթ ու ըսավ.

- Պեխո՛, ահան քեզի չիբուխը, միանքամից ինչ օր գուզես դառցու ատ մարթուն: Հըմը դառցընես կը ու չիբուխը կորցընես, ցըգես կը անթունդը: Ատ ըսողը ան կատուն էր, օր ես թաքավորին տունը բռնեցի, հըմը չըխեխտեցի, բաց թողի: Արթըղ ուշացնել պետք չէր. հըմը առա էտ չիբուխն ու էտ մարթուն մե հատըմ օր զարկի, դառցավ էշ, ու տարա չիբուխը սավսեմ կորուցի:

Ահա աս էշնա օր տեսնիս կը, ըշտը ան մարթն է, օր կա: Հըմը հե՜չ մեկնա չիտե, կնիկս էլ չիտե, թը աշխարքն ինչ բաներ էղան ու անցան:

ՇԻՏՈՒ ԽՐԱՏԸ

Կէղնի, չէղնի, մե մարթ մի կէղնի: Էտ մարթ շատ քյասիբ, խեղճ, անտանե-լի դրության կէղնի: Շատ օր կը մտածի, կերթա յանի թե աշխատելու: Կերթա, ճամփան մեծ ծառ մի կէղնի, ճնճղներ վրեն կը զրուցեն: Մե ճընճուղ մի կըսե.

- Հիտը մարթու կայնած տեղ բղիկ մի օսկի կա: Երանիկ էտոր, օր հասկը-նար մեր լիզուն, հաներ տաներ: Մեկել ճընճուղն ըսեց.

- Օր տաներ, պիտի մարթու չըսեր. օր ըսեց, կը մեռնի:

Էտ մարթ ճընճըղնու լիզուն բիրտան կը ասկընա: Տո՛, կըսե ինքն իրեն, իտը լավ բան էղավ. հըլը կեցի աշեմ օղո՞րթ ը: Կը փորե կայնած տեղ, կը հանե բղիկ մի օսկի: Տո՛, կըսե նորեն՝ իտը լավ էղավ: Կհանե, կտանե տուն, կսկսե տուն շինել: Մե խոսքով, կեղնի աղա: Գուբան միննակ կլծե, օխչըրի շատ սուրու, խաթրներ, նախրներ կունենա, մե խոսքով, հարուստ մարթ կէղ-նի:

Էտ մարթու կնիկ կըսե.

- Ախպե՛ր, մենք օր կանք, էն ժողով էրող մարթ ու կնիկն ենք. իտը իմ մարթ

ո՞ւրդից գտավ հարստություն: Քունն ու հանգիստը կը կորցընե, ու մե օր կը-սե.

- Մա՛րթ, իտը ո՞ւրդից գտար մեր հարստություն:

Կըսե,- կնիկ, ո՛ւրդից կէղնի, թրխ էղնի, քու ապրելուն իշե:

Սըտընեն մտեր է կնկան, քուն չի գա: Էս ու էնթուն շատ կոլրրթվի, կըսե.

- Մա՛րթ, պիտի ըսես, ո՞ւրդից գտար հարստությունդի:

Շատ օր մարթուն հոգուն կը հասու, մարթ կըսե, թե օր ըսիմ, կնիկ, կը մեռ-նիմ:

Կնիկը մեննըկ իրան էշը քշե կը առաչ՝ չէ ու չէ...Պիտի իմանամ: Կըսե.

- Ըսե՛ ու մեռի՛:

- Կըսե, կնիկ, ես օր մեռնիմ, դու անտեր կը մնաս:

- Ջայնըմին անտեր կմնամ,- կըսե,- թաքիլան ըսե ու մեռի:

Ավուր մեկ մարթ կերթա ախոռն: Էշն ու եզ կը զրուցին իրարու հետ: Եզ կըսե.

- Էնքան իմ լծվե, օր դաթրեր եմ, չեմ գինե, ի՞նչ էնեմ:

Էշ բերված եզանը խրատական կըսե.

- Դու խելք չունիս: Իրկուն օր կիգաս տուն, խոտ մի ուտի, նստի-էլի, նստի-էլի, կըսին, թե եզն հիվանդ ի, չըն լծի, կմնաս տուն, կը հանկըջիս:

Եզն իշու խոսքը կլսի, էտմալ լը կենե: Իրկուն կիգա, խոտ չուտե, նստի, կելլա, կըսին օր եզն հիվանդ ը:

Աղեն օր կլսե էտ զրույցը, կը հասկընա: Կըսե.

- Մշակնե՛ր, իշուն կը լծեք գութան էգա տեղ: Մշկընին առավոտ իշուն կլծեն էգա տեղ գութան: Իրկուն կիգան, եզ կելլա, կըսե.

- Էշ ախպեր, ինձի համար ի՞նչ կսեն հեչ:

Էշ շատ էր դաթրե: Կըսե.

- Տո ախպե՛ր, քու համար կը զրուցեն, օր մորթեն, առավոտ մշկընին ու-տեն: Եզըն օր չէր ըսպասե էս տեսակ փորձանք, վախեցած հարցուց.

- Ա՛յ էշ ախպեր, ըպը ի՞նչ էնեմ:

- էլի բոռբըռա՛,- կըսե,- փռտիկ էրե, խոտ լավ կի, ջուր խմե, կլծեն գութան:

Խազեին էլի լսեց էտոնց զրուց, քընծղաց: Կընիկն էլ նորեն հիշեց հինը.

- Հա՜, հարստությանդի վրե՞ն կը քընծղաս: Ըսը՛, ո՞ւրդից գտար հարս-տությունդի:

Մարթուն հոգուն օր հասավ, օղորթմա պիտի ըսեր ու մեռներ, ըսեց.

- Կնիկ կ, կեցի իմ ձեռքով ընձի գուբի շինեմ, հոգուս հաց տամ, ըսիմ ու մեռնիմ:

Շուն նստուկ էր դուռ, կիշեր, թե մըր տեր կը մեռնի: Մեկ լը ճէտն էկավ դեռնեն գոռոզլամիշ էղնելով: Շունն ըսեց.

- Հողը գլխուդի, մըր տերն էսօր կը մեռնի, դու ուրախ կը պարիս:

Ճետն ըսեց.

- Իմա՞լ թե կը մեռնի:

Շունը պատմեց իր լսածը, եղելութենը, որ կատարվելու էր:

Ճետն ըսեց.

- Էտմալ տեր վըր պոչիս, թե կմեռնի: Տեսնա՞ս, ես քառասուն կնիկ ունիմ, հեչ մեկ իմ խոսքեն կելլա՞ն: Ինչն օր ըսիմ, էն լը կենին:

- Էտոր կնիկ անզգամ է,- ըսեց շունը,- հոգին չկըրցավ ազտեր:

- Եվ օր պիտի էրթա ըսելու,- իր միտքը հայտնեց ճետը,- թող կընկան տանի թայնա տեղ մի, կապե սուն, դաստեմ ի վարոց ջարթե վրեն ու գիշեր էնի դուս: Է՛լ էտ կնիկ չհարցու, թե հարստությունդ ո՞ւրդից էր:

Մարթն էտտեղ կայնած, կլսեր շան ու ճետի զրուցն:

- Տո՛,- ըսեց ինքն իրեն,- իտը լավ էղավ, ամեն տեղ օրի՞ մեռնիմ:

Առավ դաստեմի վարոց, կնկան ըսեց, թե արի էրթանք, ըսիմ: Տարավ կապեց սուն, էնքան զարնեց, օր համարյա թե միս չմնաց վրեն: Զարնելը չըդադարեցնելով էլ հարցուց՝ էլ կըհարցո՞ւս, թե ուրդի՞ց է հարստությունդի: Ու ի՞նչ օր լսեց, արթըղ ուրախացրեց ու հանգըստացրեց մեռնելու նախապատրաստված մարթում:

- Մարթ,- ըսեց ուժասպառված կինը,- էլ չեմ հարցու, թաքիլան, ինձի հերիք է զարկիս:

Էտև մարթն հարցկեց, տարավ տուն: Կնիկը քառասուն օր հիվանդ պառկավ, օր լավցավ: Հըմը է՛լ չըհարցուց՝ ուրդի՞ց է քո հարստություն:

ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Ժամանակով թաքավորին մեկը իրան լալին կըսե թը.

- Եվ հաքնինք թաբտիրի ղըլըղ, էրթանք ման քանք, տեսնինք՝ ի՞նչ կա, ի՞նչ չկա:

Ադպես կենեն: Մըտնին կը թաբտիրի ղըլըղ, նստին կը ձիաները, կընկնին ճամփա: Շատ կերթան, քիչ կերթան, Աստված գիտե, հասնին կը մե գեղըմ:

Գեղը մտնելու վախտը ում օր ղոհնան մեծ է, էնտեղ կերթան, չունքի էնտեղ հարուստ կըլլին: Թագավորը ըսաց.

- Լալա՛, քշե՛, էրթանք էն ղոհնան, էն տունը անպատճառ հարուստ է:

Քշեցին, էկան հասսան էտ տունը: Իչան ձիաներեն վար, քաշեցին ձիաները նես, իրենքա նստան փեքին: Էկավ տան տերը.

- Բարո՛վ եք էկե, հազար բարով եք էկե,- ըսավ:

Չայ, հաց բերին, կերան-խմեցին, հըմը ուտելեն ետև արարկա կենեին, էտ վախտը տան տիրոչը կնիկը դուռը բանա՞ր-խփեր կը, բանա՞ր-խփեր կը: Թաքավորը տան տիրոջը ըսավ թը.

- Ա՛յ մարթ, քնա մեմ աշե՝ կնիկըդ ինչ կըսե:

Մարդը գնաց տեսսավ, օր ի՞նչ տեսնի. նշանածը ցավ է: Դուս էկավ թե.

- Ղոնաղներ ջան, դուք հոս նստեցեք, ես էրթամ մե դայեկըմ առնեմ, քամ, նշանածըս ցավ է:

- Քնա՛, ախպար, քնա՛, թե՛զ էրա,- ըսավ թաքավորը:

Քնաց, դայեկն առավ, փերեց, ազատեց, էղավ մե մանչ տղամ: Սապախտան էլավ պիտի էրթար չարսուեն բան-ման առնելու, ըսավ.

- Ղոնաղներ ջան, դուք նստեցեք, ես էրթամ չարսուն ու քամ:

Թաքավորն ըսավ՝ քնա՛: Քնաց: Էնոր էրթըլեն էտև թաքավորն ու լալան խորաթեին կը. մե հատ էխտյար մարթ մտավ նես, դուզ քնաց տղոսկնին քովը, էրկու մինուտ չքաշեց, դուս էկավ: Թաքավորը էտ էխտյարին թևը բռնեց, թե.

- Ու՞ր կերթաս, կեցի, մինչի տան տերը չքա, քեզի բաց չեմ թողնե. վե՞վ գիտե, դու ինչ մարթ ես. բալքի վնասըմ տվիր: Էխտյարը պատասխանեց, թե.

- Ես նը վնաս տվող եմ, նայա բան, ես մարթու ճակտին գիրը գրողն եմ: Թաքավորը հարցուց, թը.

- Ի՞նչ գրեցիր ետ տղոսկանին տղին ճակտին:

Էտ մարթը պատասխան տվեց, ըսավ.

- Էտ տղին ճակտին գրեցի օր ըլլի մինչի քսան տարեկան, նշանվի, հըմը ղսմաթ չըլլի պառկելու իրան նշանածին քովը: Ըսավ ու բիրտան կորավ: Տան տերը նես մտավ, ինչ օր առել էր նես տարավ, դուս էկավ, միսավիրներուն քովը նստավ ու բաշլայեցին խորաթելը: Թաքավորը գիտնալով նոր ծնված մանչուն բանը, ըսավ.

- Ես գուզեմ ըլլիլ քու մանչուդ կնկարը: Տանտերը շատ ուրախացավ, փե-

րին տղին կնքեցին, կնունքը պրծան օրա, թաքավորը պատմեց թը.

- Ես ձեր թաքավորն եմ, վեր վախտ օր պիտի նշանես մանչուտ, ինձի իմաց կուտաս: Իսկ եթե քեզի բան-ման պատահի կը, էլի քուքաս իմ քովը, իմաց կուտաս: Ըսավ ու մնաս բարով էրավ, քաշեցին ձիանը դուս, նստան, ընկան ճամփա, քնացին:

Թող թաքավորը էրթա իրա բանին, մենք խապարը տանք էնոր սանիկին: Էհ: Հեքթի տղա է. թեզըմ մեծըցավ, վով՝ տարով, էնիկ՝ ամսով, վով՝ ամսով, էնիկ օրով մեծըցավ: Էղավ քսան տարեկան: Կերթար կը դամրչութան: Սավտա ցգեց մե հարստիմ ախչկանը վրեն: Մորն ըսավ.

- Մարի՛, քընա բազիրգընին ախչկան ուզե:

- Օղու՛լ, մի՛ էնե, մի՛ ըլլի, մենք վո՞վ, էնոնք վո՞վ, էնոնք մեզի ախչիկ չեն տա,- ըսավ մարը:

- Քեզ ինչ կա. դու քնա. կուտան, չեն տա, քու բանըդ չէ:

Էհ: Ի՞նչ էներ խեղճ մարը. էլավ քնաց: Առաչվա օրենքներուն կար էրկու քար դռան առաջը. մեկը խնամաքարն էր, մեկնա աղքատաքարն էր: Մարը քնաց, նստավ խնամաքարին: Ըսին.

- Ջանըմ, էտ կնիկը անպատճառ սխալ է նստե: Ծառային ըսին՝ առ էս քանիմ փարան, տար էտ կնկանը, ըսա օր դու սխալ էս նստե, է՛ս է աղքատաքարը: Ահա՛ն քեզի քանիմ փարա: Քնաց, ատպեսա ըսավ:

- Չէ՛, ըսավ, օղուլ, ես դուզ եմ նստե էս քարին վրեն. ես աղքատ չեմ. ես էկել եմ խնամքարի վրա նստելու:

Ծառան քնաց բազըրգընին քով, թը էտ կնիկը կըսե՝ ես սխալ չեմ նստե:

- Կանչեցեք, թող քա վեր, աշենք ինչ կնիկ է,- ըսավ բազըրգանը: Կանչեցին, ըսավ՝ նստե, անա ջան, նստե աշեմ ինչ կըսես:

Կնիկը նստավ, ըսավ:

- Ես էկել եմ Աստու հրամանով քու ախչիկըդ մանչուս ուզելու:

- Շատ բարի,- ըսավ բազըրգանը,- ըսա իմանամ, թը մանչտ ինչ գործով կը պարապի:

- Իմ մանչըս դամրչի է,- ըսավ կնիկը:

- Դամրչի՞: Անա ջան, իմ ախչիկըս պզտիկ է, հըլը չեմ կրնա նշանել:

Կնիկն էլավ, փո՞ռ-փոշման էկավ տուն: Մանչուն պատմեց, ըսավ. «Օղուլ, ես չըսի՞ թը բազըրգանը մեզի ախչիկ չի տա: Ըշտը ըսավ օր, ախչիկըս պզտիկ է, չեմ նշանե»:

Հայհա՛յ,- ըսավ տղան,- մարի՛, քնա ըսա օր, եթե չտաս, տակ ու վրա կենեմ տունն ու տեղը:

- Ծո, օղուլ, մի՛ էնե, մի ըլլի, ախըր էնոնք մեզի ախչիկ չեն տա:

- Քու բանը չէ, դու քնա ուզե:

Մոր ջիգար է, ի՞նչ էնե. շալն առավ գլխուն, էլավ քնաց: Քնաց, ըսավ.

- Ախչիկը պիտի տաս, թե չտաս, մնաչըս ձեր տունն ու տեղը քար ու քանդ կենե:

Էս ըսելուն պես էդ մարթուն հերսը կելլե, կըսե.

- Բռնեցեք էտ տղին, թրեք նապախտը:

Թնեն կը նապախտը և վճռեն կը օր զայնեն սպանեն: Հարն ու մարը կուլան-կերերան, թե էս ինչ զուլում էր, օր էկավ գլխընուս: Մեմա էս մարթուն միտքը ընկավ, օր ախըր թաքավորն իրեն թամբեյ էր էրե, թե՝ նեղն ընկար, խապար էրա, օր օքնեմ քեզի: Հըմը դագինակը քաշեց, չարխընին հաքավ ու դեմի թաքավորը: Էկավ թաքավորին պալատին օր մոտիկցավ, նարդըվընեն օր պիտի վեր էլլեր, դարաղոլները հրդընդեցին էտոր, նես չթողին: Թաքավորը վերեն տեսսավ, ճվաց թը.

- Միք դիպչի, թողեք թող նես քա:

Թողին, էլավ վեր, քընաց թաքավորին քովը, թաքավոր կընկարին բարևեց ու սպասեց անոր պատասխանին:

- Ասսու բարի՜ն, սանահեր ջան, ի՞նչ կա, ի՞նչ չկա,- սրտալի ու հին հարազատ մարթու ձենով հետաքրքրվեց թաքավորը:

- Ի՞նչ պիտի ըլլի, թաքավորը սաղ ըլլի, չոռեն-գրողեն տղիս համար մե ախչիկըմ ուզեցինք բազիրգընեն, տղիս տարավ թրեց նապախտն ու վճիռ են էրե, օր զայնեն պիտի: Էլ իլլաջըս կտռավ տրորվելեն, էկել եմ քովը, օր իլլըջիս աշես:

Թաքավորը լա՜վ ու լրիվ անգաճ էրավ, կանչեց սեյիդներուն, թե.

- Քնացեք, ասեք էտ բազըրգնին, թող իրեն ախչըկանն ու սանորս տղին առնե, քանի հերսս չէ էլե ու քա:

Հըմը ըսելը գիտեր, սեյիդները մե քարեմ զոռ տվին օտվընուն ու հասսան բազըրգնին: Բարև տվին-առան իրար ու էսոնք ըսին.

- Բազըրգանը սաղ ըլլի, չես ըսե, մեր թաքավորը հրաման է տվե մեզի, թե քանք քովը, ըսենք, օր դու, քու ախչիկը ու իրեն սանիկին տանիս իրեն քովը:

Բազըրգանը զարմանք մնաց, թը էս մարթիքն ի՞նչ կըսեն, ի՞նչ սանիկ, ի՞նչ բան:

- Հըպը՛, բազըրգանը սաղ ըլլի. դու չիտես օր նապախտը թրած մանչը թաքավորի սանիկն է:

Բազըրգնին իլլըջը կտրավ, քոռ-փոշման էլավ, տղին նապըխտեն հանել տվեց, ախչըկանե, տղինե հանեց ճամփա ու քնացին թաքավորին: Հասսավ, բարև տվեց թաքավորին, բարև առավ ուու հարցուց.

- Ի՞նչ կա, թաքավորը սաղ ըլլի, մեզի ինչի՞ ես կանչե:

- Հա՛,- կըսե թաքավորը,- էտ դու՞ ես, օր սանիկիս նապախտն էս թրե:

- Հա՛,- կըսե բազըրգանը,- ես եմ:

- Ես կանչել եմ, օր ախչիկըդ տաս սանիկիս, բռնենք հարսնիքը, ես էլպիտի կնկար ըլլիմ էնոնց:

Բազըրգանը ուրախացավ, օր թաքավորի պես բարեկամ պիտի ունենա, վերուց ախչիկը տվեց թաքավորի սանիկին:

Հարսնիքը բռնեցին. հարսնի՛ք, ի՛նչ հարսնիք, փառավորվիս կընք. է՛լ ուտել, է՛լ խմել, է՛լ խաղալ. հաշիվը կորա՛վ:

Թաքավորն օր հարսնիքը բռնեց իրեն պալատին մեջը, էտ վախտին զաքազ տվեց մե չուգունե օղամ, շինել տվեց գլոր ձևի, չորս թարաֆը գոցած, մե՛ դուռըմ թողեց ու էտ դուռն է անպես ամուր շինեց, օր քակելու բան չէր: Շինել տալեն, պրծնելեն էտև օխտը զօր, օխտը գիշեր քեֆ էրին: Էտև հարսնևորնին տարտղնան, թաքավորը քնաց բռնեց մանչուն ու աղջկան ձեռվնին, ըսավ.

- Արեք ձեզի տանիմ ձեր օղան, պառկեցեք:

Տարավ հարս ու թաքվորին նես էրավ, էտ չուգունե օղան, մե մոմըմ տվեց, ըսավ՝ էս մոմն էլ վառեցեք, լուս չկա:

Նես մտան, մոմը վառեցին, թաքավորը դուռը դսեն կողպեց, փեչատեց, իրեն թուրը քաշեց ումուզին թրեց, ճկուբնե կտռեց, կտռածին մեջը աղ լցեց, օր կսկծե քուն չըլլի, ղարաղոլ քաշե: Ու ինքն իրան մտածեց, ըսավ.

- Ես պիտի կայնիմ դիյո՛րի լուս, աշեմ թե էտ ճակատագիրը ինչ բան է օր պիտի քա, էս խեղճ տղին ղսմաթը կտրե, չթողնե օր ախչկա ծոցը պառկի:

Էտ վախտը ախչիկն ու տղեն խոսան, պրծան, խոշ-պեշ էղան, էլան օր պառկեին. ախչիկը հանվավ, մտավ կողինքը, տղանե պիտի հանվիր, օր կողինք մտնիր, մեմե բիրտան մոմին միչեն մե պիճիլի ճիճվի պես բանըմ էլավ, էկավ կպավ տղին ճտին, ծծե՛ց-ծծե՛ց, մանչուն կուլ տվեց, թը ի՛նչ էրավ,

մանչը կորավ: Ախչիկնե էտ վախտը Ասսու հրամանով էր, ինչ էր, տեղին մեչը փետցավ, չկրցավ ձեն-ձուն հանե: Ուշուրեկ խելքը գլոխն էկավ օրա, պաշլայեց լացը: Բիրտան թաքավորը դռնեն անգամ էրավ օր լացի ձեն քուքա, դուռը բացեց, նես մտավ, օ՜յ, Աստված կարոտ պայե, տեսսավ օր տղեն չկա՜: Հարցուց, ըսավ.

- Ջանըմ, ի՞նչ էղավ տղեն, ու՞ր քնաց...

Ախչիկն ըսավ թը՝ հալ-հեքաթ, ասպես, ասպես բան: Թաքավորը թուլացա՜վ, կըսես թը թեերը կոտռան, օտվին չոլխան, ընկավ գետնին: Արթըղ ըսավ.

- Է՜, ղորթ է ըսած թը՝ գրվածը չի ջնջվի:

ՆԱԽԸՐՃԻՆ ՈՒ ԹԱՔԱՎՈՐԻ ԱԽՉԻԿԸ

Թաքավորի մեկ ըսեց.

- Լալա՛, էլլանք էրկիր պտտինք, թե իմա՞լ կապրի ժողովուրթն:

Պտտան էրկիր, էկան հովվու քովն, տեսան հարուր տարեկան մենձ մարթ, նստեր ը, թուղթ գրե ու թալե ծովն: Բարև տվին, բարև առան էս ըխտյար մարթու հետ ու հետո էլ հարցուցին թե.

- Էտ ի՞նչ կենիս:

- Հեչ, մարթու բախտ կը որոշիմ,- ըսավ էս պառավ մարթը:

- Իմա՞լ, թե մարթու բախտ,- զարմացան հարցընողնին:

- Գրեմ, կըսիմ, թե մարթն իմա՞լ պիտի էղնի, ջուր կը թալեմ:

- Է՜, դատարկ բան ը:

- Ի՛նչ կուզե էղնի, իմ պաշտոն իտա ը:

Թաքավորն՝ հըպը՝ լավ, իշե՛ իմ ախչկան, ի՞նչ պիտի էղնի:

- Իշեմ,- համաձայնավ հալիվորը,- գրեց թուղթ ու կարթաց, ըսեց.

Լավը վատին, վատն էլ լավին, վարթը փշին, քու ախչիկ կառնե նախըրճու տղին:

- Լալա՛, ջալլաթ:

- Օրի՞, ըսավ, ջալլաթ: Ի՞նչ էրեր ի օր:

- Օրի՞ ըսեցիր, օր քու ախչիկ կառնի նախրճու տղին:

- Ըսեր իմ,- ըսավ մարթը,- կըսիմ. քու ախչիկ կառնե նախրճու տղին:

Թաքավոր ներեց ըխտիյարին ու գացին տուն: Հասան տուն, մեկել թաքավորն էկավ էտ թաքավորի ախչիկն ուզելու: Էս թաքավորն վերուց ախչիկն ու տվեց էս թաքավորի տղին: Հիշեցրեց, ըսեց.

- Լալա՛, տեսա՞ր, ըխտյարին կավտաս, թե իմ ախչիկ կառնե նախըրճու տղին, հիմի ինչ՞ կըսես:

Լալան վերուց թաքավորին ըսեց.

- Թաքավորն ապրած կենա, գրվածը չի քանդվի:

Ու կտռեցին քառսուն օր ժամանակ: Էկան ախչիկ տանելու: Գարնան մայիս ամսին հարսնվորն էկավ, ախչկան առան, դրին կառեթին ու քաղքից խեյլի ճամփա գացին, մեկ լը թիփին բռնեց: Թիփի՜, ի՜նչ թիփի, մերը մանուկ ուրացավ: Թողին քուլլի հարսնվոր, փեսա, քավոր, փախան ամեն մի կողմ, մենակ հարսը մնաց կառեթի մեջ: Ջունն էկավ, ծածկեց: Մեկալ սապախտան նախրճին առավ հորթեր, գնաց էտ թարաֆն, տեսավ օր ճամփու վրեն կառեթ կա, ձի կա սատկած, մարթ կա մեռած, ըսեց.

- Յավաշ իշեմ տեսնամ իտ ի՞նչ բան ը: Մեկ լը տեսավ՝ ախչիկն չարչըրվի կառեթին մեչ, օր ձան միչեն դուս իգա: Հարցուց, թը էտ ի՞նչ կենիս, ախչի:

- Հեչ,- ըսեց,- չըս տե՞սնա, կը չարչըրվիմ, օր ձան տըկեն էլլամ:

Նախըրճին հանեց ախչկան ձան տկեն, շորերը թափ տվեց: Ախչիկը դառցավ ըսեց.

- Ապե՛ր, ընձի տար ձըր տուն:

- Իմա՞լ տանիմ քըզի մըր տուն,- ըսավ նախրճու տղեն,- դու թաքավորի ցե՜ղ, խորոտիկ ախչիկ, ես խեղճ նախրճի. տուն լը չունիմ, օր տանիմ մեր տուն:

Ախչիկն նորեն իրանը ըսեց.

- Տո՛, ախպեր, տար, ի՞նչ կեղնի:

- Իմա՞լ տանիմ, հորթերսի կը կորին,- էլի իրանը պնդեց տղան:

- Հորթերուդ գինն ի՞նչ աժե,- հանգիստ չէր թողնում ախչիկը տղուն:

Տղան, ըշտը, ըսավ օր հորթերը հարուր մանեթ աժեն: Ախչիկն ըսավ.

- Ա՛ն քըզի էրկու հարուր մանեթ: Ընձի տար ձըր տուն:

Նախրճին ախչըկան տարավ ուրան տուն: Թաքավորի ախչիկ իրկուն շորվեն կերավ, էլավ քաշեց բալթոն գլխուն, պառկավ թունդրա կուշտ, խոլի վրեն: Մե քանիմ օր, օր ապրավ, ըսեց.

- Ապե՛ր, ընձի ուզե քու տղին:

Ամբողջ կյանքը նախրրճի էղած էս մարթը ըսեց.

- Գառս, դու թաքավորի ցեղ, ես նախրճի, իմ տղեն խլնքոտ: Ես քըզի իմա՞լ ուզեմ:

- Չէ՛ ու չէ՛,- ըսեց,- պիտի որ ուզես քու տղին:

Նախրճին մտածեց, թե իդա թաքավորի ախչիկն օր իմ տղին կուզի, ես լը կառնիմ: Էլավ ուզեց, ապուրն էփեց, էրեց հարսնիք, կարգեց պրծավ: Մնաց առ ժամանակ, թաքավորի ախչիկ բերեց երեք տղա. անուններ դրեց՝ մեկին «Ի՞նչ օր էր», մեկելին՝ «Ի՞նչ օրով ծնվար», դահա մեկելին՝ «Ի՛նչ օրի ես»: Հարսն կանչեց նախրճուն ըսավ.

- Գնա ֆլան գեղ, ինչքան օր պատի ուստա կա, դամրչի կա, բի՛ր. պալատ պիտի շինինք:

- Ա՛յ հարս,- ըսավ,- մենք ուտելու հաց չունինք՝ ուտինք, պալատ ինչո՞վ շինինք:

- Գնա բի՛ր,- ըսավ,- քու բան չէ:

Նախրճին գնաց թոփ էրեց, բերեց: Թաքավորին ախչիկն շինեց պալատ, հասուց վեր, հոր պալատեն բարձր, օր ըսավ՝ առաջ արևն առնե իմ պալատին, էտև պապուս պալատին:

Ավուր մեկ թաքավոր ըսեց.

- Լալա՛, էլի՛ էրթանք, հեչ օր չէ, ախչկաս սաղ չը գըտնամ, գոնե գերեզման գտնանք:

Էլան պտտան, պտտան, էկան հասան Թոյրա (Թորիա գյուղ), տեսան օր Թոյրան՝ իտմըլա խորոտիկ պալատ: Հարցուցին, ըսին.

- Իտ ո՞րն ի շինե: Իտ պալատ օր էտքան խորոտիկ ը, միջումն դահա խորոտիկ կեղնի: Քըշե, էրթանք էղնինք էտուր տուն խոնախ:

Կառեթն օր էկավ, ախչիկն ու փեսան կայնած ին բալքոն. տեսավ ախչիկն, օր իտա պապն ու լալեն էկան: Ըսեց մարթուն.

- Մարթ, ըտոնք մըր տուն խոնախ կեղնին, պատվով ընթունե:

Ինքն գնաց թաքավորական լայեխ կերակուր պատրաստելու: Ու տղեն ընթունեց պատվով ու մեծարանոք, տարավ նես: Ախչիկն մարթուն թամբի էր էրի, եփ օր էս էրեխեքն կողորկիմ քու քով, դու կըսիս մենձ տղին.«Բալա ջան, «Ինչ օրի էր», գնա ըսե մամուդ, հաց բերե»: Եփ օր օրթանջա տղեն կիգա, կըսես՝ բալա ջան, «Ի՞նչ օրով ծնվար», գնա ըսե մորըդ ձավարով ճաշ բերե: Եփ օր պզտի տղեն կիգա, ըսե՝ «Ի՛նչ օրի ես» բալա ջան, գնա մորըդ ըսե, թըխ քռչիկ բերե:

Նախրճու տղեն թաքավորի քովը էտ խրատը կատարեց: Թաքավորն ըսեց. «Լալա՛, ի՞նչ անուն, ի՞նչ բան, իտ ի՞նչ բաս ը, իտ ի՞նչ բան ը»:

Ճաշն օր պրծավ, հետ քաշվան, թաքավորը նախրճուն ըսեց.

- Իտ ի՞նչ անուն ը, իտ ի՞նչ պալատ ը:

Նախրճին պատասխան տվեց, ըսավ.

- Իտ պալատ շիներ ը իմ հարսն՝ թաքավորի ախչիկ:

- Իդ ի՞նչ ախչիկ ը. ըսավ՝ լալա՛, լալա՛, ջալլա՛թ:

- Է՜, ըսավ թաքավոր. ի՞նչ բաս ը. կայնի, համփերե, տեսնանք, ճնճուղ ը, դռխ ը, էտ ի՞նչ ջալլա՛թ կը կանչիս:

- Թաքավորն ըսեց. «Կանչե իգա իտը պալատ շինողին»: Կանչեցին էկավ, ուրան հաքած զգեստը, որը իրա տնից հարս էրթլու վախտն էր հաքի, էկավ, նես մտավ, թաքավորը տեսավ օր իրա ախչիկն ը, հասան պագտրվան, խնդացան: Լալին ըսեց. «Բախտը մարթու չի քանդվի. Լավը վատին, վատն էլ լավին, վարթը փշին, քու ախչիկն՝ նախրճու տղին»:

ՁՐԱՏԱՐՆ ՈՒ ԳԱՅԼԱՏԱՐԸ

Ժամանակով մե մարթըմ ու կնիկըմ կըլլին, կունենան էրկու պզտի մանչ տղա: Էտոնք գեղին մեչը Ասսու կարողութունն ունին էղե, հըմը ինչ կենես օր էս ուրախութենը էրկար չի տևե: Օրերից մե օրըմ, օր քնին կը, էս կնիկը էրազ կը տեսնի. էրծին մեչ մե միրուքավոր էխտյար մարթըմ քուքա, կըսե.

- Կնի՛կմարթ, ձեր դռան գլխուն օրըմ չէ օրըմ մեծ դժբախտութենըմ պիտի պատայի. զարթիս կը օրա, մարթուդ ըսա, հիմի, ջայիլ վախտերդ գուզե՞ք, թը՞ էխտյար վախտերըդ:

Կնիկն օր զարթի կը, օյմըռիկը ու ինքն իրեն կըսե՝ Էրած էր, ջանըմ, բան չկա: Մարթուն բան չիսէ: Օրը կանցնի, գիշերն օր կը քնին, էտ մարթը էլի էրածը քուքա ու կըսե.

- Ա՛յ կընիկմարթ, ես էրեկ քեզի ի՞նչ ըսի:

- Մըտյան էրի,- կըսե,- օր մարթուս ըսեի:

- Էսօր,- կըսե էրածն էկած էտ մարթը,- վերչի օրն ըլլի, օր մարթուդ ըսես:

Կընիկն էլի օր կը զարթի, էլի էղելութենը մարթուն չիսե: Նորեն քնին կը: Էս էխտյարը նորեն կերևա ու հերսոտ-հերսոտ կըսե.

- Ա՛յ կընիկմարթ, ես քեզի ի՞նչ ըսի:

- Մեղա Ասսու,- կըսե էս կնիկը,- էս անքամ օր զարթա, էսսե, պիտի ըսեմ: Արթըղ զարթիլն ու պատմելը մեկ կըլլի: Մարթն օր իսի բանը կիմանա, կընկանը հետ խորուրթ կէնե ու կըսե.

- Կընի՛կ, ըշտը էսօր իտի մարթն օր կերևա, ըսա օր դժբախտութենը թե պիտի քա, թող հիմի քա, քանի ջայիլ ենք: Ասված օղորմած է, նորեն դատինք, նորեն կապրինք:

Վրա քուքա դժբախտութան գիշերը. էրծին մեչ կընիկը էխտյարին կըսե մարթուն ըսածը:

Լուսը բացվի ձեր վրեն, լուսն օր կը բացվի, էսոնք զարթին կաշեն, օր իրենց կարողութենեն բա՞ն չէ մնացե: Մա՞լ, օչխարը սատկել է, խոտն ու դարմանը վառել է, հացին ամբարները դարտըկվել են, հալավ, կողինք բիտտուն չուլ են դառցե: Վերանան քեզի օրինակ: Էլի փառք կուտան Աստուն ու մտածեն կը, թը՝ ի՛նչըղ էնեն, օր տղաքը անոթի չըմնան: Էս մարթուն կընիկը կըսե թը,

- Մի՛մտածե, ես կերթամ մեր գեղի իշխանին լվացքը կենեմ, քանիմ փարա կը վաստըկեմ, դիորի տեսնինք՝ ինչ լուս պիտի բացվի: Ատանքա կենեն. կանցնի մե քանիմ ամիս, էտոնք լվացքի փարով յոլա կերթան: Դու մի՛սե, Աստված որոշել է, օր էլի փորցե, էլի՛ դժբախտութան մեչ ցըգե: Օրեր օր կանցնին մե հարուստ վաճառականըմ քուքա, իրա քարվանով, զանգանաթով կիշնի իշխանի տունը: Իշխանն իսոր ինչըղ օր պետք է, կընթունե, ծառաները բեռները նես կը փերեն ու կուտեն, կը խմեն օրա, վաճառականի աշկը կընկնի լվացք էնող կընկա վրեն: Կընի՛կ, ի՞նչ կընիկ. մարթ ախտը խանա էրեսը չի կըրնա աշե: Իշխանին կըսե թը.

- Իսի կընիկը վե՞վ է, օր չեմ ճանչե:

- Էսիկ մեր գեղի էսինչի կընիկն է,- կըսե,- մեզի լվացք կենե օր տղաքը պայե: Վաճառականի միտքը կը փոխվի: Մե քանիմ օր էվել կը մնա, օր ծանոթանա, գլոխն օյին փերե: Մե օրմա մեննակ օր կը մնան, վաճառականը կըսե.

- Հարս խանում, եսե լվալու շորեր ունիմ, չե՞ս լվա:

- Փիր,- ըշտը կըսե,- ինչի չեմ լվա:

Արթըղ շորերը կուտա, էս կընիկնա լվա կը: Մեկել օրն օր լվացած շորերը փերե կը տալու, վաճառականը էս կընկանը ցուց կուտա մե խորունկ սընդուկըմ ու կըսե՝ շորերըս թիր էտտեղ: Կընիկնե բանից բեխաբար, կըզկըթի կը օր շորերը սընդուկին մեչը դարսե, վաճառականը օտվընեներեն բռնե կը ու ցըգե կը մեչը: Էտնա արագըմ սընդուկը կողպե կը ու, ծառաներուն հավարը կը թընե, թը.

- Վախտն անցել է, թեզ էրեք բառցեք, օր էրթանք պիտի: Հըմը օ՛ սահաթ քարվանը կելլե ճամփա: Վաճառականը իշխանին էրկնուց-գետին շնորա-կալ կըլլենա, կերթա, հըմը սիրտը դողը կը բռնե: Իշխանն է բանեն բեխա-պար՝ գիտե թե լվացք էնող կընիկը իրեն տուն է քընացե: Կընկա էրիկնա դուս կելլե, նես կը մտնի, կընիկը չի քա: Դիորի իսան-ինան, վաճառականը մանզիլը կառնե: Խեղճ մարթը իշխանին կերթա. էստեղ կաշեն, էնթեղ կաշեն, կընիկ թրել ես սա՝ արի տար. կորի կը ու կորի կը: Մե քանիմ օրա օր կըմնա, էս մարթը գլոխը կորցընե կը.

- Ծո՛,- կըսե ինքն իրեն,- իսի մատղաշ տղեքս պիտի սովի հասսըսնե՞մ, լավ է առնեմ, էրթամ մե թարաֆըմ, մի՛գուցե դատիմ, պայեմ, մեծըսնեմ: Ատանկա կենե: Մե մեծ խուրջինըմ կառնե, տղոցը մեկին մե աշկը կը թընե, մեկելին մեկել աշկն ու կառնե ումուզին, կըյնի ճամփա: Շատ կերթա, թե քիչ կերթա, Աստված գիտե, հասնի կը մե մեծ ջրիմ. հիմի պիտի անցնի, վախենա կը: Շատ կուտա-կառնե ու մեմե որոշե կը օր՝ մտնի: Գավազանով ազմըզե կը ջրի տակը. կաշե՝ խորունկ է: Կերթա դիորի կեսին մոտիկ, ջուրը քիչ կըմնա օր պառկեսնե: Դառնա կը ետ. կը որոշե օր տղին մեկին թողնե ջրին քանարը, մեկալին տանի անցընե, էտև դառնա էնոր տանի: Ատանկա կենե. օր քուքա հասնի կը ջրին կեսը, ջուրը կը զոռե, խուրջինը տղին հետ ձեռնեն կառնե տա-նի կը օրա, էս մարթու խելքը գլխեն կը թընի: Դիորի կելլե կայնի կը օր էրթա մեկալին հասնի, կաշե կը օր ի՞նչ աշե, գելը առել ա տանիկը: Հա՛յ կուտա, հարա՛յ կուտա, ծնկին կը զայնե, գլխուն կը զայնե, էս տղենա ասանք ձեռքեն կելլե՞: Էլի փառք կուտա Ասուն ու ինքը ջուրը կանսնի, կերթա: Շատ կերթա, քիչ կերթա, Աստված գիտե, կերթա հասնի կը մե գեղըմ, օր գիշերը հանքշի, էրթա քաղաք: Թող ինքը էտտեղ հանքշի, մենք խապարը տանք տղոցեն:

Էս ջուրն ընկած տղեն կերթա-կերթա, դեմ կառնե ջաղչիմ օլուղին: Ջախ-չըպաննե իրեն պառվին կըսե թը.

- Կընի՛կ, քարին աշե, էրթամ տեսնիմ ջուրն ինչի՞ քչըցավ: Կերթա կաշե կը օր մի տղեմ օլուղին կռնակը տվել, կայնել է:

- Ծո՛ կըսե էսիկ մեզի Աստված է ղրկե. թեեն բռնե քաշե կը իսթին օր, կի-սամեռ է: Թափին կը կախե, թափ կուտա, ջուրը կը քամսըտեսնե, տղին ուշքի կը փերե: Ուշքի օր կը փերե խնդլուն գրկե կը ու տանի կը նես, կուտա պառ-վին ձեռքը.

- Կընիկ,- կըսե,- աշկըդ լուս, մենք տղա ունեցանք, Աստված մեզի հալբաթ օր խըղճացե, տղա է ղրկե:

Կընիկնա կուրախանա, աշխըրով մեկ կըլլի: Հանվեսնե, լողասնե կը, թազա հալավ կը հաքցընե ու հաց ու ջուր կուտա, անունը կը թընեն՝ Ջրատա՜ր: Էտ վախտը ավճուն մեկը տեսնի կը օր գելը մե տղիմ դոշեն թոփլամիշ է էրե, լացրսնելով տանի կը օր ուտե: Հըմը թիվընքը կը բռնե, նշան կառնե, էտոր կսպանե, տղին սաղ-սալամաթ բեյնեն կառնե: Էսիկա դու մի՛սե, տղա չունի էղե: Էտոր համար ըշտը շատ կուրախանա, տանի կը տուն, կընկանը կը պատմե: Կնիկնա աշխըրով մեկ կըլլի, հանվեսնե լողասնե ու հաքցընե կը, կիրակուր կուտա, անունը կը թնեն՝ Գայլատար:

Էս էրկու տղան թեզըմ կը մեծնան, ու մեկը ավճութեն կը սորվի, մեկալը՝ ջաղչըբանութեն, թազա ծնողնուն հետ վախտ կանցընեն:

Թող էտոնք էտտեղ մնա,, մենք խապարը տանք իրենց հորեն: Հերն օր մեկալ օրը քաղաք կը հասնի, կաշե օր սա՜ղ ժողովուրթը դուս է թափե, իրար է խառնըվե, մեկին լաածը մեկալը չի իմանա: Դու միսե, իսոնց թաքավորը մեռել է, գուզեն օր թազա թաքավոր ընտրեն: Էտոր համար իմաստուն թռչունը բաց են թողել, օր ում գլխուն կայնի, էնիկ թաքավոր ըլլի: Քարիմ կուշտը կը նստի, օր տեսնի, թե ի՞նչ պիտի ըլլի: Մեմե կաշե օր թռչունն էկա՜վ, իրեն գլխուն կայնավ: Թռչունին զարկեց, օր հեռենա, էտիկ թռավ, էլի էկավ կայնավ գլխուն: Շենլիկը ճվալով-բոռալով վրա էկավ, իշխանին հասսան ու ըսին.

- Տարե՛ք, իտոր թրեք փակ օդամ: Տարան, թրին փակ օդան: Էկան, իմաստուն թռչունը էլի բաց թողին: Էսիկ էր՝ թռավ, պտտավ-պտտավ, էկավ էտ օդի բաց փանջարեցեն նես մտավ ու կայնավ էս մարթուն գլխուն: Էս անքամ իշխանները հասկըցան, օր էտ մարթը Աստված իրենց թաքավոր է ղրկե: Վերուցին տարան բաղնիք, լողացուցին, թրաշ էրին, թաքավորական հալավը հաքուցին, թագը թրին գլոխը, նստեցուցին թախտին: Էս խեղճ մարթը արևը գլխուն մոլըրավ, թը ինքը մե տունըմ պայել չըկըրցավ, իսի թաքավորութենը ի՞նչըղ պիտի ղեկավարե: Էտև-էտև իրեն ժողվեց, ըսկըսեց հրամաններ տալ, կառավարել: Հըմը իրա խելքն ու միտքը կորած կնիկն ու տղերքն էին: Կարքաթրեց, օր քաղքին քանարը մե խեյրաթխանեմ շինեն, օր ինչքան օտարական մարդիկ ու վաճառականներ կանսնին ու կը դառնան, թող էստեղ ուտեն-խմեն, քնեն ու առանց փարա տալու էրթան: Ասանկութենով գուզեր, օր կորուցածները գտներ:

Շինեցին, կայնեցուցին:

Թող էտտեղ օտարականնին էրթան ու քան, մենք հասնինք թաքավորին տղոցը: Ջաղչըպանին տղան օրեցօր մեծցավ ու խելքը կտրեց, օր իրեն հերը կոտին մե կուռիկըմ հախ կառնե, մե կուռիկմա գողնա կը: Էտ գողութենը հազը չեկավ ու օրվան մե օրըմ ըսավ.

- Հայրի՛կ, ինչըղ օր ես էկել եմ, տեսնիմ կը օր դու սըդը գողութեն կենես. խեղճ մարթկանց կոտին էրկու կուռիկ հախ կառնես:

- Օղուլ, ըշտը ապրելու ճար չըկա, սաղ աշխարն է էսման, մենքա աշխըրին պես ասանքութենով հըպը կապրինք կը:

- Չէ՛, ասանքութենով, հարամ մալով ապրիլն, հայրիկ, ինձի հարամ ըլլի,- ըսավ: Ես գուզեմ, օր հալալ աշխատիմ, փերեմ, ձեզի պայեմ:

- Օղուլ,- ըսավ հերը,- մենք լավ կապրինք, դու ո՞ւր պիտի էրթաս, ի՞նչ պիտի էնես, օր արթար հաց ուտենք:

- Չէ՛ ու չէ՛, դիորի վերջ իրանը պնդեց տղան,- ես պիտի էրթամ, իմ աշխատանքով արթար հաց վաստըկեմ:

Էլ չըկրցան պայել. մերը տոպրակըմ կարեց, հաց-մաց թրեց, տղեն էլ ընկավ ճամփա: Էտ վախտը Գայլատարը հորը հետ ավճի օր քընացել էր, տեսավ օր հորը զարկած թռչունը վիրավորված, արնաքամ էղած, անջաղ էկավ ընկավ բունն ու սատկավ: Ջաքերը վրա պրծան, մորը փաթըթվան, ճըլվըլացին, լացին, օղփացին, հըմը բանը բանեն արթեն անցել էր: Իսի անխըղճութենն օր տեսավ, Գայլատարը հորն ըսավ.

- Հայրի՛կ, իսի քու էրածդ Աստածամերժութեն է. դու իսի ձաքերուն մուխը կը մարես, օր մենք միս ուտենք: Չէ՛, ես էլ ավճութեն չեմ էնե:

- Օղուլ,- ըսավ հերը,- մեր ապրուստը էսիկ է. էսիկ օր չըլլի, անոթի կը մեռնինք:

- Չէ՛, հայրիկ,- ըսավ,- ես պիտի էրթամ արթար հաց վաստըկեմ, մեզի պայեմ:

Ըսավ ու էսիկե տոպրկով ճամփու պաշարն առավ, ընկավ ճամփա: Քընաց, տեսավ օր իրեն պես մե տղամե կերթա կը: Դու մի՛սե, էնիկե Ջրատարն է: Իրար օր կը հասնին, բարև կուտան, բարև կառնեն, իրար պիտվընան կը: Իսոնք իրար պատմեն կը էն բաները, ինչ օր ես պատմեցի ձեզի: Էտևա իրար կըսեն.

- Ախպա՛ր, եփ օր մենք էրկուսսա մե խելքիմ ենք, արի իրար հետ էրթանք մե աշխատանքըմ գտնինք, արթար հաց ուտենք:

Կերթան, կերթան, հասնին կը քաղաք: Կիմանան օր թաքավորը խեյրաթ-խանա է շինե: Կերթան էնտեղ: Թաքավորը խապար կառնե, կիմանա օր էրկու ջայիլ տղա են էկե, գուզեն աշխատիլ, ապրիլ: Կանչե կը քովը, էսոնց խեյրաթխանեն կուտա, ըռոճիկ կը խոստանա: Կուրախանան: Կերթան համ կապրին, համա կաշխատին, էրթող քալողին կընթունեն, ճամփու կը թընեն: Թաքավորը կըսե, օր ծառանին պետք է իրեն իմաց տան, թը վե՛վ քուքա, վե՛վ կերթա:

- Շատ լավ,- կըսեն,- թաքավորն ապրած կենա, թող ատանք ըլլի:

Ասոնք կաշխատին, մեմե կաշեն օր մեծ զանգանաթով վաճառականն իրեն քարվանով էկա՜վ, խեյրաթխանին դուռը կայնավ: Վաճառականին ծառանին Ջրատարի և Գայլատարի հետ բեռները կիչըսնեն, մե մեծ օդիմ մեչ կը տանին: Վաճառականը կըսե, օր այսի սընդուկը լիքը բրիլյանտ է լցած, էտոր համար լավ, ապահով տեղ պիտի թըրվի: Տանին թընեն կը մե լավ ապահով տեղըմ: Վաճառականը կերթա թաքավորին քով, մոտիկեն ծանոթանա կը, մե լավ ծանոթութուն-բարեկամութենըմ կը հաստատե: Էսիկ վերցընե կըսե.

- Թաքավորն ապրած կենա, իմ կարողութանըս մեչ կա մե մեծ սընդուկըմ, մեչը լիքը բրիլիանտ: Ես օր քու պալատըդ քընիմ, էնիկ վեվ պիտի պահպանե:

- Ես էրկու ծառա ունիմ,- կըսե թաքավորը,- անուննին Ջրատար ու Գայլատար, էնոնք արթար կաշխատին, արթար կապրին: Դու էնոնց ըսա, լավ կը պայեն:

Մարթը էտմանա կենե, կերթա կըսե, քուքա: Դու մի՛սե էսիկ էն վաճառականն է էղե, օր իրենց հարազատ մորը գողցել, փախուցել է, անցել է Հընդըստան, Չինաստան ու դառցել էկել է, օր էրթա իրա քաղաքը:

Ջրատարն ու Գայլատարը խոստանում են հավատարմորեն պայպանեն կարողութունը: Հըմը սընդուկի վրա նստած վախտը տեսնին կը օր քընները տանի կը: Մեկը մեկին կըսե.

- Ջրատա՛ր, արի դու քու գլխուդ անցածը պատմե ես իմանամ, եսա կը պատմեմ՝ դու իմացի: Էն վախտը քընեռս կը փախչի ու գողութուն չի ըլլի: Արթը Ջրատարը պատմե կը իրեն գլխուն էկածը, մորը կորիլը, խուրջինով հորը ումուզեն կախվիլը, ջուրը տանիլը, ջախչպանին էրեխա դառնալը. մե խոսքով, ինչ օր ես ձեզի պատմեցի: Էտ վախտը սընդուկին մեչեն ձենըմ քուքա.

- Ա՜խ, քոռնամ ես, կըսե ու կուլա:

Տղեքը կոյմռին: Կըսեն ու կաշեն իրար զարմացած...

Սընդուկի միչինը ձենը կը կըտռե, օր էս պատմութիւնուն վերչը իմանա: Էս անքամն Գայլատարը կպատմե իրան գլխուն էկածը: Սնդկի միչինը եվ օր կիմանա, օր գելը տղուն փախուցել է, հորը թողել լաց ու կոծի մեչ, էլ չի դիմանա, կուլա ու կերերա: Տղաքը կաշեն օր էս սնդկի մեչը բրիլյանտ չկա: Կելլեն վեր, ուրաքը կառնեն, սնդուկը կը ջարթեն ու մորը միչեն կը հանեն: Մերն օր կելլե, ճտերը կը փատտըվի, կուլա, կերերա, չի կըրնա հանքշի: Էտև կըսե.

- Օղուլ, դուք էրկուստե իմ տղեքն եք: Այսի վաճառականն օր կա ինձի ասանք-ասանք փախուց, սա՜ղ աշխարը պտըտցուց, օր էլ մարթ չիմանա, հիմիա տուն կը տանի:

Տըղաքն օր կիմանան, մորը տանին կը մե լավ օղամ, կը տեղավորեն ապահով, իրենք է ուրախութունից դիորի լուս կուլան ու կը խոսին, կուլան ու կը խընդան: Օր կը լուսանա, վաճառականը նես կը մտնի ու վազզե կը սնդկին, կաշե օր ջարթած է: Վա՜յ կուտա գլխուն, հա՜յ, հարա՜յ կը կանչե, թաքավորին իմաց կուտա, կը կանչե:

- Թաքավորն ապրած կենա,- կըսե խառնըված,- իսի սնդուկըս լիքը բրիլյանտ էր, քու ծառաներդ թանլել տարել են:

Թաքավորը դատ կը բանա: Նըստի կը թախտին, կանչե կը Ջրատարին ու Գայլատարին: Վաճառականը մեթուն կը նստի, տղաքը՝ մեթուն: Թաքավորը կըսե.

- Ջրատար, Գայլատար, իսի մարթուն բրիլյանտը ո՞ւր տարաք:

- Թաքավորն ապրած կենա,- կըսեն տըղաքը,- էս մարթը սնդկի մեջ բրիլյանտ չէ ունեցե:

- Հըպը ի՞նչ է ունեցե ու պայ տվե ձեզ,- կըսե թաքավորը:

- Էս սնդկին մեջ, թաքավորն ապրած կենա,- կըսեն տղաքը,- էս վաճառականը պայել էր մեր մորը, օր տաներ իրեն կընիկ էներ: Բիտտուն էղելութունը կը պատմեն, հալեն, թաքավորին անգաճը կը լցնեն: Թաքավորը կըհարցընե՝ ո՞ւր է էտ կնիկը:

- Թաքավորն ապրած կենա,- կըսեն էսոնք,- խեյրաթխանայի այսինչ օղեն է: Հրաման տուր փերենք, թող ինքը պատմե գլխուն էկածը:

Թաքավորն 0 սահաթ գըլխու կըյնի ու սիրտը փորին մեչ վառի, կանցնի կը: Հրամայե կը՝ փերեք էտ կընկանը:

Եվ օր կընկանը չե՛ն փերե, թաքավորը տեսնի կը ու քիչ կը մնա թախտեն

ընկնի: Իրեն կը տիրապետե, կը զսպե: Կընիկն օր թաքավորին կը տեսնի, 0 սահաթ կը ճանչե, հրմը զարմանա կը. կըսե՝ Մի՛գուցե լմանն է: Հետն էլ կուլա ու կերերա: Թաքավորը հարցեր կուտա կընկանը, էտև՝ վաճառականին, էտև՝ տղոցը: Արքըղ իրեն էղածը լրիվ այտնի կը դառնա ամմեն բա՜ն: Վաճառականին կըկապեն օխտը տարի լուս չտեսած ջորու պոչին ու վեր կը վարեն: Էնոր սաղ տեղը անգաճը կը մնա: Թաքավորը փառք կուտա Աստծուն, կընկանն ու տղոցը պալատ կը տանի ու էլի փառք տալով Բարձրյալին, կըսե.

- Կընի՛կ, ինչըղ օր Աստված առավ, անանկա ետ տվեց:

Էտտից էտև կընիկը թաքուի կը դառնա, և Ջրատարն ու Գայլատարը՝ լալա-վազիր: Էնոնք կը հասնին իրենց մուրազին, դուքա հասնիք ձեր մուրազին:

ԹԱՔԱՎՈՐԻՆ ԿԸՆԿՏԻՔԸ

Գեղացին արտ քշած տեղը խաղ կանչեր ու պար կը խաղար: Հասնիր կը էնքույի ակոսին ծերը, կանչեր ու կը խաղար: Մե օրմա թաքավորը իրեն վազիրին հետ օր ման քուքար, օր ժողովրքին դարդերն իմանար, տեսնի կը օր էտ մարքը խաղ կըսե ու պար կը խաղա: Քուքան էտոր քովը, բարև կուտան, բարև կառնեն, կըսեն.

- Ախպա՛ր, էտ ի՞նչըղ օր ատպես ուրախ ես, խաղ կը կանչես, քեչակ կը խաղաս: Հոքս ու դարդ հեչ չունի՞ս դու:

- Ի՞նչի ուրախ չեմ ըլլի,- կըսե գյուղացի մարքը,- գործըս աչող, կընիկըս ըռունդ, խոսքե դուս չելլող օղլուշաղ: Տուն օր կերթամ, ջուրն ու սապոնը փերե օտվիս կը լվա, նըստինք կը խոնչա, կուտենք, կը խմենք, մըտնինք կը տեղերըս ու անուշ-անուշ պառկինք կը: Ի՞նչըս է պակաս օր ուրախ չըլլիմ: Աստըծմեն ես ուրուշ բան չեմա պահանջե:

Թաքավորը էտտից կերթա իրեն բանին ու կըսե.

- Ծո՛, ես երեք հատ կընիկ ունիմ, հեչ մե ուրախ օրըմ չեմ տեսնի: Էտ մարքը ինչքան բախտավոր է, օր մե կընիկըմ ունի ինձենա ուրախ է: Ըսել է թե էտ մարքուն ուրախութան պատճառը կընիկն է, ոչ թե ինքը:

Թաքավորին կընկան մեկը շատ գող էր, մեկը՝ բոզ, մեկնա՝ ստախոս: Մտածե կը օր իրեն իրեք կընիկը տա էս գեղացուն, էնոր կընիկնա ինքը առնե: Թե գեղացին շնորք ունի, թող կընկտացըս խելքի փերե, ե՛ս ինչ էնեմ, դու ինչ էնես: Մարթ կը կանչե, կըսե.

- Քնացեք էսինչ գեղից, էսինչ գեղացուն կանչեցեք, ըսեք՝ թող կընկանն առնե, քա քովը:

Կերթան մըտնին կը էտ գեղը, գտնին կը էտ մարթուն տունը, կըսեն.

- Ըռաշպար ախպար, թաքավորը քեզի կանչե կը. կըսե՝ թող կընկանն առն, քա քովը:

Գեղացին շաշմի մնակը, թը՝ ջանըմ, էս թաքավորն ինձի ու կընկանս ինչի՞ կը կանչե: Ես՝ վե՜վ, թաքավորը՝ վե՜վ: Քիչըմ չեմ-չում կենե, հըմը ի՞նչըղ չերթա. զոռով կը տանին, չէ՞: Ճարը կը կտռի, կելլե, կընկանը կառնե, էտ մարթոցը հետ կերթա, էտման շըշման-շըփոթվածա թաքավորին նից կըլլի, կհարցընե, կըսե.

- Թաքավորն ապռաստ կենա, ինձի ինչի՞ ես կանչե:

- Ես,- կըսե թաքավորը էս գյուղացուն,- իրեք հատ կընիկ ունիմ. մեկը գող է, մեկը՝ բոզ, մեկնա՝ ստախոս: Քու կընիկդ տու ինձի, իմ կընկտիքըս իրեքնա քեզի: Թե խելացի ու զորավոր մարթ ե՜ս, տար, էտոնց խելքի փեր, կընիկ էրա, թե չես կըրնա, ե՛ս ինչ էնեմ, դու ինչ էնես:

- Ջանըմ,- կըսե էս գյուղացի մարթը,- թաքավորը թող շատ ապռաստ մնա, մի՛ էնե, մի՛ ըլլի, ինձի իմ ուրախութենեն մի՛ զըրկե:

- Ջանըմ-մանըմ չիտեմ,- կըսե իր կընկտոցեն վառած թաքավորը, ինչ օր ըսի, խելքդ գլոխդ հավաքե, էտմանա էրա՛:

Թաքավորի հրաման է, Աստծու հրաման է՝ ի՞նչ կըրնաս էնե:

Էստեղ իրեն կընիկը կուտա թաքավորին, էնոր կընկտացը կառնե ու կերթա գեղ: Տանի կը գեղ, կանսնի մե էրկօրըմ, բռնե իրեք հատ լավ օդա կը շինե: Մե օդին իրեք հատ դուռ կը թողնե, մեկալ օդեն անպես կը շինե, օր կիսալուս, կիսամութ կըլլի, մեկելնա տանի անպես տեղ կը շինե, օր մտնող էլլողին հեչ հաշիվ չըլլի: Իրեք դռնանի օդին մեչ կը թնե էտ բոզ կընկանը, ինքնա թողնե կերթա կը: Կերթա կը օրա, կնիկն էլ չիտե՝ օրական ըշտը քանիսին նես կառնե, քանիսին դուս կենե. էնքա՜ն ու էնքա՜ն, օր վերջապես ինքնա կը բերզի:

Կիսալուս օդին մեչընա աշխարը ինչ օր կա փերե լըլե կը՝ կակալ, միս, բրինձ, քիշմիշ, արիկ, եղ, պանիր, էրիշտա, կորկոտ, ցորեն, գարի, մե խոսքով՝ ամեն բան: Ատտեղա թնե կը գող կընկանը, կերթա: Մարթն օր կերթա, էս կընիկը ապրընքնուն մեկեն բռնե, մեկալին վրա կը լըլե, մեկեն կառնե ջեբը կը լըլե, մեկեն կառնե տանի կը քեշան կը պայե: Մե խոսքով՝ ինքնա չիտե, թե ինչ կենե, ումեն կը գողնա, ում կուտա: Էն մեկալ օդան, որն օր տարել չելին

օրթան էր շինե, ատիկա ստախոս կընկանը կուտա, կերթա: Դուս օր կելլե, էս կընիկը էրթող քալողին մե սուտըմ կը խոսի ու ճամփու կը թընե:

Կանսնի մե քանիմ օր: Էս մարթը կերթա բոզ կընկանը քովը կըսե.

- Ի՞նչըղ ես, լա՞վ ես:

- Ջանըմ,- կըսե կընիկը,- էս իրեք դուռ ինչո՞ւ համար ես թըրե. մե դուռը մե օղին հերիք չէ՞ր:

- Էնոր համար եմ իրեք դուռ թրե, շիփ-շիտակ կըսե մարթը,- օր քեզի համար նես քալողն ու դուս էլլողը իրար չըտեսնին:

Կընիկը ձե՜ն չի հանե:

Էտտից կելլե, կերթա կիսալուս օդան, կըմտնի էտ օղին կընկաննա քեֆը կը հարցընե օրա, կընիկը կըսե.

- Ա՛յ մարթ, էս սաղ աշխարըն ի՜նչ օր կա փերել լցել ես էստեղ, ես էսոնք ի՞նչ պիտի էնեմ: Գոնյա օղին մեչ մե ազատ տեղըմ ու լուսըմ բիլա չկա, օր մարթ չորս բոլորն աշե, իմանա՝ ի՞նչ կենե:

- Ես էտոնք էնոր համար եմ փերե,- հանգիստ ու հոգատար ձենով կըսե մարթը,- օր ինչքա՜ն ուզես գողնաս ու կըշտանաս, քեզի մարթ չի տեսնի. գողցի՛, հա՛ գողցի՛, էս աշխարը էտորեն էլ լավ բան չկա:

Կընիկը անգըժնին կը թափե:

Մարթը կերթա մեկալ կընկանը կըսե.

- Ի՞նչըղ ես, քեֆըդ, հալըդ լա՞վ է:

Կընիկը վերցընե կըսե.

- Ա՛յ մարթ, դու ինձի փերիր չելին օրթան ինչի՞ թրիր: Մարթ նա քալողեն է խապար, նայա էրթողեն:

- Քեզի ատպես պետք է,- կըսե մարթը,- չունքի դու սուտ խոսիլ կը սիրես. քեզի խանքարող չի՛լլի, ինչքա՜ն օր սիրտդ տա, ինչքա՜ն օր կըրնաս սուտ խոսե, բալքի մե օրմա կըշտանաս:

Կընիկը մըռթընին կը կախե ու թթվի կը:

Էտև էս կընկտիքը աշեցին, օր իրենց էրածը դավթըրի կող չի հավքի, թոփ էղան, քընացին էրկըտանցը առաչը ծունկ չոքան ու էրթըմցան.

- Ի սե՜ր Ասսու, մեզի տար քու օդադ: Մենք մեր պակասութիւններեն ետ կը կայնինք, քեզի դուլ կըլլինք:

Կընկտիքը կուղղվին. էս մարթը կենա կըլլի առաչվանը:

Եփ օր արտը կերթար ու տուն քուքար, արթըղ առաչվա կընկանեն լավ

ասոնք խզմաթ կենեին՝ օտվին տաք ջրով կը լվային, կը լողասնեին, կուտեսնեին, կը խմցընեին, ետև կելլեին պառկեին կը:

Էտ վախտերը թաքավորը վազիրին կըսե թը.

- Արի՛ հըլը էլի հաքուստնիս փոխենք, էրթանք աշենք էտ էլի առաչվա պես ուրա՞խ է, թե՞ մարթկային բնութենը փոխվել է: Քուքան, կերթան արտերը, տեսնին կը օր, օհո՜, էս մարթը առաչվընեն երջանիկ է. խաղ կը կանչե ու խաղա կը: Կերթան մարթուն քովը, բարև կուտան, Ասու հազար բարինը կառնեն ու կըսեն.

- Ըռաշպար ախպեր, էս ի՞նչ ուրախութան մեչ ես, խաղ կը կանչես ու պար կը խաղաս:

- Ինչի՞ ուրախ պիտի չըլլիմ,- կըսե գյուղացին,- ի՞նչըս է պակաս: Ժամանակոց մե կընիկըմ ունեի, հիմի իրեք կընիկ ունիմ: Իրիկունն օր տուն կերթամ, մեկը ջուր կը փերե, մեկը օտվիս կը լվա, մեկը կը սրփե, կըսենք, խոսինք, խընդանք կը, ետևա կելլենք պառկինք կը:

- Ըռաշպար ախպեր,- կըսե թաքավորը,- էսոր մեզի տունըդ միսըվիր չես տանի:

- Բարով, հազար բարի, գլխուս վըրա տեղ ունիք, համմեցեք էրթանք,- կըսե գյուղացին:

Ըսելն ու էզները դեմի գեղ քշելը մեկ կըլլի: Տուն օր կը հասնին, էզներուն ու սելին ձենեն էս մարթուն կընկտիքը դեմ կելլել, մեկը էզներուն լկամը կը քակե, մեկը լուծը կը վերցնե, մեկնա էզները նես կը տանի ու կը կապե: Էսդից կը դառնան էրկանն ու միսըվիրնուն համար ջուր կը փերեն, օտվին կը լվան, խզմաթ կենեն: Իրիկուննա խոնչան կը թնեն, հաց կը քաշեն միսըվիրնուն, տեղանը կը ցգեն, առոք-փառոք պառկեսնեն կը: Սապախտան թաքավորն ու վազիրը մատվին կը խածեն ու կըսեն.

- Հըլը իսի գեղացուն աշե՜, իրեն բռնած գործին աշե, մենքա պիտի ըսենք թը՝ մարթ ենք, էս մարթնա:

Էտ օրը էնոնք ետ կը դառնան պալատ, ու թաքավորը նորեն հրաման կուտա, կըսե.

- Կանչեցեք ըռաշպար ախպորը, թող էլլե, քա քաղաք:

Մարթիկ կերթան կանչեն կը: Ըռաշպար գյուղացին մտքի մեչ մտածե, ինքը իրան կուտա-կառնե, կըսե.

- Ախպա՛ր, ես էս մեր թաքավորին ձեռքը հաստատ օր կրակն ընկա. կընի-

կըմ ունեի, ձեռնես առավ, իրեն կընկտիքը ջանիս քաշեց, հիմի նորեն կանչե կը, ի՞նչ գուզե:

Կերթա քաղաք, թաքավորին օր կից կըլլի, թաքավորը հարց կուտա.

- Ա՛յ մարթ, շատ կը զարմանամ. էտ ի՞նչըղ էրիր, օր իմ կըկտանցըս պակասութունները թարկ էնել տվիր:

Էս մարթը տկետակ պատմե կը, թը՝ հա՜լ, հեքաթ, ասպես, ասպես էրի, իրենք իրենց օտովն էկան, ծունկ չոքան, թարկ էրին: Թաքավորը կըսե.

- Քընա՛, ախպար, քընա՛, քեզի հալալ ըլլի: Ո՞ւմ մտքեն կանսնիր թը՝ գեղացին էտքան խելք կունենա:

ՕՑՆ ՈՒ ՄԱՐԹԸ

Կէղնի-չէղնի մե թաքավորմի կէղնի: Էտ թաքավոր հրովարտակ կը հանե, թե էրած իմ տեսի, ոյն օր էկավ գիտցավ՝ ինչ էրածիմ տեսի, և մեկնուութեն թե տվեց, ուր կշեռնոցով օսկի կիտամ ուրին:

Ինչքան օր մարթ կար, քոման գացին, հեչ մե մարթ մի չը գիտցան, թե ի՛նչ էրած էր տեսի: Մե խեղճ մարթ մի մտածավ, թե էլլամ էրթամ, ես մեկնիմ էտոր էրած: Էլավ գնաց, ճամփեն օցմի էկավ ըռաստ:

- Բարեկամ ջան,- ըսեց օցը,- դոր կերթաս:

- Կերթամ,- ըսեց,- թաքավորն էրած է տեսի, կերթամ մեկնելու:

- Է՛, գինա՞ս՝ ինչ էրած է տեսի:

- Չէ՛, չըմ գի՛նա,- պատասխանեց մարթը:

- Է, օր չըս գինա, ըպը դո՞ր կերթաս:

- Է՛հ, շա՞տ գինամ,- անտարբեր ըսեց մարթը,- թաքավորին էրածը թաքավորական կըլլի. կերթամ ըշտը բան մի կըսեմ:

- Օր չըս գինա, արի՛ խրատ տամ, գնա ըսե: Բայց ինչ օր կառնիս, բիրիս, իրար հետ կիսենք:

- Է՛, դը ըսե, ի՞նչ ըսիմ,- ուրախացավ մարթը:

- Կերթաս թաքավորին կըսիս, թե դու էրածդ ու վեր տեսար օր էրկինքեն աղվեզ կը թափեր:

Թաքավորը քըզի կհարցնե, կըսե, թե ի՞նչ բան է: Դունա կըսիս օր հիմա քու ժողովուրթի մեչ խաբեբայություն է տարածվի:

Էլավ մնաս բարով էղավ, գնաց: Գնաց հասավ թաքավորի դիվանխանեն, ներստավ թաքավորի դեմ, ըսեց.

- Թաքավորն ապրած կենա, դու էրածդ ու վեր տեսեր իս, օր էրկնքեն աղվեզ կը թափեր:

- Դե մեկնե,- թաքավորն հարցուց էս մարթուն,- ի՞նչ կնշանակե աղվես թափիլ:

- Աղվեզ թափիլ կնշանակի, օր քու ժողովուրթի մեջ խաբեբայություն կը տարածվի,- միտքն պարզաբանեց ու ըսեց մարթը:

Թաքավոր կանչեց ըտուր, տարավ խազինեն, դրեց էտ մարթուն կշեռքի մե թաթ, օսկին լցեց մե թաթ, քաշեց, տվեց ու ճամփցուց: Մարթ ելավ, շալակեց օսկին ու ընկավ ճամփա, էկավ ելավ օցուն մոտեցավ, ճամփեն փոխեց, ուրիշ դիյով գնաց:

Կեցավ խեյլի ժամանակ մի, թաքավոր ուրիշ էրած տեսավ: Գենա հրովարտակ թալեց, թե ոյն օր էկավ իմ էրած գիտցավ, ի՞նչ էրած իմ տեսի և մեկնեց, ուր կշեռնոցով օսկի կիտամ ուրան:

Հարի որն օր էկավ, չգիտցան, ետ դառցան: Էտ մարթն էլի էլավ գնաց: Ճամփեն գենա էն օցն էկավ ըռաստ, ըսեց.

- Ախպեր ջան, էտ դո՞ր կերթաս:

- Թաքավորն էրած ի տեսի,- ըսեց,- կերթամ մեկնելու:

- Է՛, գինա՞ս ինչ էրած ի տեսի:

- Չէ՛, չեմ գինա,- ըսեց մարթը:

- Է՛, օր չես գինա, ըպը դո՞ր կերթաս: Արի խրատ տամ, գնա ըսե, բայց ինչ օր կառնիս, բերիս՝ կիսենք:

Մարթը համաձայնեց, օցն էլ հուշեց, ըսավ.

- Թաքավորն ապրած կենա,- կըսիս,- դու էրածդ ու վեր տեսեր իս, օր էրկընքեն գել կը թափեր:

Հետո թաքավորի մյուս հարցին, թե ի՞նչ կնշանակե էրկնքեն գել թափել, կըսիս.

- Գել թափել կնշանակե, օր ժողովուրթդ դարցեր է գել ու գազան: Ուժն անուժին կուտե, կը խըժռե:

Էտ մարթ գնաց թաքավորին պատմեց, հետո էլ մեկնեց էրածը, ու թաքավորը գենա կշեռնոցով օսկի տվեց ու ճամփեց: Մարթը շալկեց օսկին, ընկավ ճամփա: Էկավ հասավ օցու դուռ, մտածավ էտ մարթն, օր օցուն ըսպանե: Բայց օցը իմաստուն էր. գիներ օր էտ մարթն ուրին անպատճառ վնաս կը հասու, ուր բնեն իսկի դուս չեկավ: Մարթն ըսպասեց օցու դուռ, դուս չեկավ: Շալկեց օսկին, էկավ տուն:

Կեցան ժամանակ մի, թաքավոր գենա էրած տեսավ: Հրովարտակ թալեց: Ոյն օր գնաց էրածն մեկնելու, չգիտցավ: Գենա էտ մարթ էկավ գնաց հասավ օցու դուռ: Օց տեսավ, հարցուց՝ դո՞ր կերթաս, բարեկամ:

Մարթը պատմեց էղելութենը: Օցը գենա հարցուց՝ գինաս՝ ի՞նչ էրած ի տեսի: Մարթն ասեց՝ չէ, չեմ ի գինա: Օցն էլի տեղը-տեղին բիրատի խրատ տվեց մարթուն, ըսավ.

- Կերթաս կըսես օր, թաքավորն ապրած կենա, դու էրածդ ու վեր տեսիր իս, օր էրկընքեն գել ու գառ կը թափեր:

Կըսե,- մեկնութուն ի՞նչ է:

- Թաքավորն ապրած կենա,- կըսե մարթը թաքավորին,- գելն ու գառ կնշանակի ժողովուրթ համերաշխ կապրին:

Մարթը քընաց, հասավ թաքավորին ըսեց էն ամենը, ինչ իմաստուն օցն խրատել էր իրեն: Գենա թաքավորից մարթը օսկին առավ, քընաց հասավ օցու քով: Տեսավ օր օց դուռ տաք քարի վրա նստուկ-պառկուկ էր: Օսկին դրոց հոտի, ըսեց.

- Արի՛, օց ախպեր, իտ օսկին բաժնինք:

- Էն առչի օսկեստան օր տարար,- ըսավ օց,- դո՞ր են:

- Էն օսկեստան տունն ին,- ըսեց մարթ,- իտա կիսենք, էրթամ էնոնք լե բերիմ, կիսենք:

Վերուց օցն ըսեց.

- Ախպեր ջան, էտ օսկին ընձի հարկավոր չէ. ես քըզի փորցեցի: Էն առչի անգամն օր բերեցիր, էրկընքից աղվեզ թափեր: Ուզե՞ր-չուզե՞ր, ընձի խափեր պիտի: Էտի անգամն լը դու ուզեցար ընձի ըսպանել, էտուր համար օր գել կը թափեր էրկընքեն: Հիմի լը օսկին բերել ես կիսելու էնուր համար, օր գառ ու գել կը թափիր էրկընքեն: Գնա, օսկին՝ քըզի:

ԻՐՈՒ ԴԵՄ ԽԱՂՑԱԾ ԹԱՔԱՎՈՐԸ

Մարթու մեկ կբոռեր. քարից հասկացող եմ, մարթուց հասկացող եմ, ձիուց հասկացող եմ: Թաքավոր լսեց, կանչեց էտ մարթուն, դրեց տուրմեն: Մանցին մե ժամանակ մի: Մարթումի մեկ պզտի խորոտիկ քարըմ ի բերեր էր ծախելու: Թաքավորն առավ էտ քար, օր ուր կշռնոցով օսկի տա: Տարան էտ քար դրին կշեռքի մե թաթին, օսկին լը լցին մեկել թաթ. խազնեն ինչքան օսկի կար, լցին մեկել թաթ, քար գետնեն չկտրավ: Թաքավորն ըսեց.

- Կանչեցեք էն մարթուն, օր կըսեր՝ քարից կասկընամ:

Բերեցին էտ մարթուն, վերուց էտ քարը, իշեց, թքուց քարա վրեն, թաբլ-ցուց հողի մեջ, նորեն դրեց կշեռքի թաթ: Օսկին դարտկել տվեց կըշեռքի թա-թեն, թողեց հինգ հատ օսկի: Քարի թաթը թռավ էլավ: Թաքավոր զարմացավ: Մարթն ըսեց.

- Թաքավորն ապրած կենա, էսի օր կա քար չէ. իդա իսանի աչք է, ինչ-քան օր էղնի, չկշտանա իսանի աչք. կուզե օր գենա էղնի: Իսանի աչք մե լուփ մի հողով կքոռնա: Էտուր համարլը ես տզկեցի քարը, հողոտեցի, կշտացուցի:

Օսկին տվեց քարի դիմաց, քարն առավ ու ըսեց.

- Տարեք էտ մարթուն գենա դրեք տուրմեն:

Տարան դրին տուրմեն: Կեցան մե ժամանակ մի, թաքավորին մեկ յոթ հատ ձի էր օղորկի իդը թաքավորին: Էտ ձիանը յոթ լը մե տեսակի ձի են, չըն ջոկվեն իրարուց, թե ո՛յն է մեծ, ո՛յն է պզտիկ: Թե չը գիտցար, կռիվս կռիվ է: Էտ թաքավոր լե ինչքան օր պրիֆեսորներ ուներ, կանչեց բերեց բան մի չաս-կըցան: Թաքավոր ըսեց.

- Կանչեք էն մարթուն, օր կըսեր ձիուց հասկանող իմ:

Գացին, տուրմից հանին բերին էտ մարթուն: Էտ մարթն էկավ, տեսավ ձիանուն, ըսեց.

- Թաքավոր, իտ ձիան տարեք յոթն օր կերակրեք, ջուր հեչ մի տվեք խմելու:

Տարան էտմըլ էրեցին: Նորեն գնաց էտ մարթ: Ձիան բերեց՝ ջրելու: Որն օր մեծ էր քուլլընուց, էնիկ գլուխը կոխեց հարի անգճներ ջրի մեջ ու խմեց: Էնուրից պզտիկ քըչումի քիչ, վերջապես քուլլընցուց պզտիկ մոթներն դրեց ջրի վրեն, խմեց: Մարթն ըսեց.

- Քուլլընցուց մեծն իտա է, քուլլընցուց պզտիկ լը իտա է:

Թաքավորն ամեն ձիան տարին գիտցավ, ըսեց.

- Տարեք իտ մարթուն գենա դրեք տուրմեն:

Թաքավորն ամեն ձիան իրա տարին գրեց ուրանց վրեն, օղորկեց էն թա-քավորին: Էտ վախտն ըսեց.

- Գացեք, էտ մարթուն բերեք:

Գացին բերին: Թաքավորն ըսեց.

- Ա՛յ մարթ, օր դու քարաց հասկըցար, ձիուց հասկըցար, կըսեր օր մար-թուց լը կը հասկընամ: Ըսե՛, տեսնամ՝ ես իմալ մարթ ի՞մ:

- Թաքավորն ապրած կենա,- ըսեց,- դու իշու պես մարթ իս:

- Ես օրի՞ եմ իշու պես մարթ,- հարցուց թաքավորը:

- Էնուր համար,- ըսեց մարթը,- օր դու քու սա՜ղ խազինեդ կիտեր մե քարըմի պիտի առներ, բայց ես՝ հինգ օսկով, գենա ըսիր տարեք դրեք տուրմեն: Էտև ետ ձիանն օր օղորկած էն հեչ մարթ չգիտցավ էտոնց պատասխան գտնալ. ես գտա: Գենա ըսիր տարեք դրեք տուրմեն: Էտուր համար կըսիմ օր դու իշու պես մարթ իս: Թե չըս հավատա, կանչե գա մամուդ հարցու՝ դու իշու դեմ խաղցե՞ր իս, թե չէ:

Թաքավոր կանչեց ուր մամուն, ըսեց.

- Մա՛, ըսե՝ ես իշու դեմ խաղցե՞ր իմ:

- Օղորթ ը,- ըսեց,- դու իշու դեմ իս խաղցե: Ես քըզի էրկու հոգով ենք դուրս էլա, բոշեքն իշվըներով էկած էն, մաղ կը ծախեն: Էտ վախտ դու փորուս մեչ խաղցար իշու դեմ:

Իտ անգամ թաքավորն ազատեց մարթուն տուրմից:

ԿԱՐԿՏԻ ՏԱՐՎԱ ՀԱՐՍԸ

Պառվին մեկը կունենա իրեք հատ մանչ տղա, մեկը ըռաշպար, մեկը ջուլակ, մեկնա ջաղըցպան: Էս պառավը սաստիկ խապար տալ գիտե էղե: Օրվան մեկը ըռաշպարը արտ քշած տեղը, իրիկվան պային տեսնի կը օր մե բեռով դավեմ դեմեն քուքա կը: Հոտղին կըսե տը,

- Ծո հըլը դունա՛ աշե, ըշկիդ ի՞նչ կերնա:

Հոտաղը կաշե, կըսե՝ Ավո՛, հաստատ բառցուկ դավա է:

- Դե քընա առ, էկե՛:

Հոտաղը կերթա դավան փերե կը: Մալը կը թողնեն, դավանա հետը կը խառնեն ու տանին կը տուն: Ջաղչըպանն ու ջուլակնա քուքան, իրեքով խորուրթ կենեն, գուզին օր դավեն մորթեն, հըմը մորերեն վախենան կը: Գիտեն օր խապար կուտա: Մենծ մանչը ֆանդ կը խաղա: Կըսե.

- Մարի՛, գիտե՞ս, քեզի ըշտը նշանել ենք, էս դավանա քու հարսնոցդ մորթենք պիտի: Էտև մանչերուն մեկը դսեն քուքա, կըսե.

- Ի՜նչ կենեք, տերտերն ըսավ, թը ամպել է, քարե կարկուտ պիտի քա: Մարի՛ ջան, կըսեն, արի դու թընդիր մտիր, մեղք ես, թազա նշանած ես, օր կարկուտը չըվնասե: Տանին թընեն կը թընդիրը, չոր կաշինա ցըգեն կը թընդռին բեյնին, վրանա ցորեն կը ցանեն, հավերուն վեր կը վարեն, օր էրթան ուտեն: Հավերուն ջանի՜ն է միննաթ: Վրա կը թափին, ցորենը քը՛թ-քը՛թ էնե-

լեն կուտեն. պառվին սև դուրը վեր կուտա թը ղորթ օր կարկուտն էկավ: Էտև տղաքը դավան կը մորթեն, պայեն կը ու մորը թընռեն կը հանեն: Կըսեն.

- Իշալլա՛, կարկտեն ազատանք:

Էտև կանչեն կը իրենց մոտիկ մարթոցը. մորը հարսնիքը կը բռնին, քեֆ կենեն, մարնա գիտե, թը ղորթ հարսնիք կենեն:

Կանսնի մե ժամանակ, ամենը իրեն գործին կերթա, պառավը մնա կը տունը: Ըռաշպար տղեն արտը քշած վախտը իրեն Շաշ անընով հոտաղը կաշե, տեսնի կը օր մե մարթըմ քուքա.

- Ափո՛,- կըսե,- մեկըմ քուքա, վալլա դավին տերը կըլլի: Քուքա կելլե քովերը: Տեսնի կը օր ըռաշպար են, բարև կուտա, հըմը ըռաշպարը կըսե.

- Արտ կը ցանեմ:

- Ախպե՛ր,- կըսե,- բառցուկ դավեմ եմ կորուցե, չտեսա՞ք:

- Հակոսը ծու՞ռ է. տղին աշկերին աշե:

- Ախպե՛ր, ես դավա եմ կորուցե, տեսե՞լ ես,- կհարցնե մարթը:

- Էսթունա կը թապլեմ, էնթունա,- կըսե: Սըխ կըլլի, նորս կըլլի, Ասված հավսըրե:

Կաշեկը օր էս մարթեն բանըմ չի հասկընա, հերսեն թողնե, կերթա կը: Կերթա, ռաստ քուքա ջաղչին: Մտնի կը նես, ջաղչըպանին կըսե.

- Բարև, ջաղչըպան ախպեր:

- Քար կը կռանեմ,- կըսե:

- Ախպեր,- կը հարցնե,- ես դավա եմ կորուցե, դավա, տեսե՞լ ես:

- Ախպեր,- կըսե,- ջաղասկընն է՛ս է, քարն է՛ս է, թեփը ալըրին կեսն է, կաղաս էս է, չես աղա՝ էս է:

Աս մարթը էտտիցա բանըմ չի հասկընա, թողնե կերթա: Կերթա մտնի կը գեղ. գեղին քանարը ջուլակին տունն է. մտնի կը նես, կըսե՝ բարև, ախպեր ջան:

- Շալ կը հինեմ,- կըսե ջուլակը:

- Ախպեր,- կըսե,- ես դավա եմ կորուցե, դավա չըտեսա՞ր:

- Քու իրավունքըդ է,- կըսե,- գուզես սըխ սանդրռ կըցգեմ, գուզես նորս սանդրռ:

- Ախպար, ես դավա կը հարցնեմ, դուք ամենքդ մե բանըմ կըսեք. դու իմ հարցիս պատասխանե, դավա, տեսե՞լ ես:

- Իհարկե, լավ շալը լավ թելեն դուս քուքա,- կըսե ջուլակը:

Էս մարթը շըշմի մնա կը: Կելլե դուս, կերթա: Կերթա, էրթիքը կայնած պառվին քովը: Պառավը կըսե, կը կանչե.

- Ախպա՜ր, արի՛, արի՛, ի՞նչ ժուռ քուքաս:

- Մարի,- կըսե մարթը,- դավա եմ կորուցե, բալքի տեսսած ըլլիք:

- Հա՜,- կըսե էս տղոց մարը,- քու դավադ իմ մանչերս են մորթե:

- Ե՞փ են մորթե մարի ջան,- հարցնե կը մարթը:

- Իմ հարսնոցըս վախտը:

- Քու հարսնիքըդ ե՞փ էր, վե՞ր վախտն էր:

- Քարե կարկըտին տարին էր,- կըսե:

- Դու օր նշանվար քանի՞ մանչ ունեիր:

- Իրեք հատ,- կըսե:

- Մաշալլա՛,- կըսե մարթը,- ինչ ճերմակ էրես ախչիկ ես էղե, օր հարսնոցըդ վախտը իրեք մանչ ես ունեցե:

Արթըդ էտտիցա բանըմ չի հասկընա ու կերթա մտածելեն.

- Ախպա՛ր, իսոնք սաղ գեղովի խելառ են:

Էն էրթալն էր, հլը կերթա:

ԹԱՔԱՎՈՐ ԳՈՂՑՈՂ ՏՂԵՆ

Ժամանակով մե քաղքիմ մեչը մե խեղճ ու կրակ պառավըմ կըլլի, կունենա մե մանչըմ ու ղազըմ: Ախկատութունն օր վրա կը կոխե, ղազը փերե, մանչուն մորթել կուտա, ու կըսե.

- Տար չարսուն, էս ղազը ծախե, ուտելու հաց փե, տեսնինք էստից էտև Աստված ինչ կուտա:

Մանչըն օր ղազը տանի կը չարսուն, ըռաստ քուքա մե աղա մարթըմ ու, մատով ցուց տալով թռչունը, կըսե.

- Ծո մա՛նչ, ղառղառըդ ի՞նչ աժե:

- Աղա,- կը պատասխանե տղան,- էսիկ ղառղառ չէ, էսիկ ղազ է:

- Չէ՜, կըսե էս մարթը,- էտիկ ղառղառ է, ըսա ի՞նչ աժե:

- Ախպա՛ր,- կըսե տղան,- խելքեդ ինչ դուս կուտաս, էսիկ ղազ է, քիչըմ առաջ մորթեցի, փերի օր ծախեմ, հըլը ապրինք, տեսնինք ինչ կըլլի էտև:

Էլի՛ էտ մարթը վրա կը կախե, զայլեն օր կը տանի, թողնե հեռենա կը: Կերթա, չարսուին մեկալ ճոթեն պըտըտի, քուքա էլի առաչը կառնե՝ ի՞նչ տամ ղառղըռիդ:

- Ջանըմ,- կըսե տղան,- ըռատ էղի գլխես, էսիկ ղազ է, ղառղառ չէ ու իրար ավել-պակաս խոսքեր կըսեն: Տղան նորեն հեռենա կը: Էտ մարթը սատանի պես քուքա-քուքա, էլի առաչը կայնի կը, կըսե.

- Լա՛վ մանչ, արի ղառղըռիդ մե մանեթըմ տամ, տուր տանիմ:

- Ծո՛, ջալլամը թե ղառղառ է,- կըսե հոգին բերանը հասած տղան,- ա՛ռ, տուր մանեթը:

Ղազը կուտա էտ մարթուն, մանեթը կառնե, մտքին մեչը կըսե. «Մեմ, կեցի, թե քեզի մե աղամ չը շինեցի, եսե պառվին մանչը չըլլիմ»:

Աղան ղազը կառնե, տանի կը դուզ փուռը, կարմըրցընել տալու համար: Էս տղեն էտնեն կերթա կը, օր իմանա, թը՝ ի՞նչ պիտի ընե: Աղան օր փուռը կը մտնի, ղազը կուտա փռնճուն, տղեն դսեն անգաճ կենե, օր աղեն կըսե.

- Փռնճի ախպար, ում հետ օր էս քայրըբար թազբեյըս ճամփեցի, ղազը էնոր կուտաս, թող փերե:

Աղեն թողնե, կերթա կը տուն: Տղեն էսիկ իմանալը գիտե, վազզե կը տուն, հալավը փոխե կը ու, քուքա աղին տունը, խեղճ-խեղճ նես կը մտնի, կըսե.

- Աղա՛ ջան, օտվընուտ տակը հող ու մոխիր ըլլիմ, ի՞նչ կըլլի, մեմ թազբեյըդ տաս, տանիմ մորըս քաշե. հոքին պիտի տա, թազբեյ չը քաշած չի կըրնա մեռնի:

- Ջանըմ,- կըսե աղան,- մեռնողնե թազբեյ քաշե՞, ի՞նչ կը խոսիս:

- Հավալլա, շիտակ կըսեմ,- կարթարանա տղան,- աղա ջան, մենք առաչ հարուստ ենք էղե, մերըս քայրըբար թազբեք է ունեցե. էտև օր ախկտցել ենք, ծախել հացի է տվե. հիմի հոքին տալու վրա է, կըսե մուրադըս աշկըս կը մնա, քնա թազբեյըմ գտի, քաշեմ, մեռնիմ:

Աղան թազբեյը կուտա, բայց կըզգուշացնե՝ թեզ կը փերես:

Տղեն թազբեյը կառնե, դուս կը պրծնի, շիտակ կերթա փուռը:

- Փռնճի ախպար,- կըսե տղեն,- աղան ըսավ, օր ղազը թե էփել է, տուր տանիմ: Փռընճին կը հարցընե. հըլը թազբեյը ցուց տուր տեսնիմ: Էս տղեն թազբեյը ցուց կուտա, լավաշներով, սոխով փատտած ու լավ կարմըրցրած ղազը կառնե, կելլե դուս: Էտև ետ կը դառնա, կավիճով դռան վրա կը գրե. «Ղազըս, ղազըս, ղազի տերն եմ, տեսակ-տեսակ օյինների տերն եմ. էսիկ հըլը պըզտիկն է, մեծը էտտեցեն քուքա: Ու, հա՛յտե բալամ, դեմի՛ տուն: Տանի կը տուն, ղազը թընե կը մորը առչնը, կըսե.

- Կեր, մարի ջան. ես էտման աղին հերն անիծեցի. հա՛մ փարեն առա,

հա՛մ իրա քայրրբար թազբեյը, համ էլ ղազը: Հրպը առավոտից զայլես տարավ, թե ղառղառրդ մանեթիմ տուր, էնքան էրավ օր վեց մանեթի ղազը մե մանեթիմ առավ: Մեննրկ թե չկերավ ու չը վայելեց էտ շենք-շնորքով ղազը: Ղազը մեր ու տղա նրստան կերան, թասմե ջուրը վրեն խմեցին, էլան վեր:

Ուշուրեկ էս աղին տունը ղրլբրլթին կրյնի թը՝ ջանըմ, էտ շան լակոտը վեվ էր, օր էկավ թազբեյը տարավ, չեկավ, չէլավ: Մշկին կը ղրկեն էստեղ-էնտեղ, խեր-խապար չրկա, բան դուս չի քա, թազբեյը չեն կրրնա գտնի: Թարքար մարթ կը ղրկեն փռնճուն, թը՝ ղազը տուր: Փռնճին կրսե.

- Ա՛յ ջանըմ, դուք ինձի քանի՞ ղազ եք տվե. ըշտը մե քիչրմ առաչ ձեզնեն մեկը թազբեյը փերեց ցուց տվեց, ղազը տարավ:

Էտ մարթը կը դառնա ետ, քուքա աղին կրսե: Աղան ինքը վեր կը կենա, կերթա փռնճուն քովն, օր իմանա՝ վե՞վ էր քալողը, ի՞նչրդ մարթ էր: Փռնճին կը հարցրնե, թե՝ մե ախկատ տղամ էր: Էտնա կաշեն օր դռան վերրթին գրել է՝ «Ղազրս, ղազրս, ղազի տերն եմ, տեսակ-տեսակ օյինների տերն եմ. էսիկ հրլը պզտիկն է, մեծը էտտեցեն քուքա»:

- Վա՜յ,- կրսե աղան,- հրլը իտի շունշանորթուն էրածին կաշե՞ս կը: Էտտեղ շատ կը քրրֆեն, բան-ման կրսեն էտ տղի հասցեին, հրմը տղանե չրլտո ղրլրղով էնթույեն սեյր կենե ու կրսե.

- Հրլը յավա՜շ, հրլը յավա՜շ, ժլատ ու անամոթ աղա, դու ղազրս ղառղառ տեյնա կառնես կը:

Կանսնի մե քանիմ վախտ, ղազի տերը կիմանա օր ղազ առնող աղեն թատառիկին կաշե, օր բաղնիք պիտի էրթա: Էն վախտրնե ախրը բաղնիք օր կերթան էղե, սաղ մե օրրմ լողանան կը էղե: Ղազի տերը առաչուց կերթա բաղնիք, բաղնիքպանին կրսե, թե.

- Աղա ջան, մնացած տղա եմ, ի՜նչ կրլլի, ինձի քիսաճութան առնես, քանիմ կափեք առնեմ, ապրիմ: Բաղնիքպանը թը.

- Օղո՛ւլ, եսե ըշտը քիսրճի կուզեի:

Ղազի տերը կրլլի քիսրճի, մտնի կը բաղնիքը, մեմե կաշե կը օր աղեն էկավ: Բաղնիքնե էտ օրը մարթ չկար: Աղեն հանվի, մտնի կը բաղնիք: Ղազի տերը հարցրնե, կրսե՝ քիսա չե՞ս ուզե: Աղեն համաձայն կրլլի: Ղազի տերը սապոնը կը քսե, կը փրփրցրնե, մե քարեմ բաշլայե կը դիմսիգով-դիրսրկով, թաքմիկով թրնելը թլակշտին ու կրսե.

- Ա՛ռ էսիկ ղազին տեղը, էսիկ՝ ղառղրռին տեղը, էսիկ՝ թազբեյին տեղը,

ա՛ռ էսիկ օռիդ կարկըտան... Էս աղին ուշքը կը վերցընե ու կելլե դուս: Հաքնի կը հալավը, կավիճով դռան վրեն գրե կը. «Ղազըս, ղազըս, ղազի տերն եմ, տեսակ-տեսակ օյիններեի տերն եմ, էսիկ հըլը պզտիկն է, մեծը էտտեցեն քուքա»:

Ու, հա՛յտե բալամ: Մեմե ուշուրեկ քուքան, կաշեն օր ի՞նչ աշեն. աղեն փրփրոտ, լերթին ընկել է բաղնիքին քարերուն վրեն, կող-կուշտ կապուտկել է: Կելլեն կաշեն օր դռան վրեն էլ ղազին տերը էսման ու էսման բաներ է գրե ու փախե: Կուլան, կերերան, աղին խելքունցուց տանին կը տուն: Տանին կը տուն, օր ցուց տան հեքիմին: Էն հին վախտերը հեքիմնին խոտ տունը չէին նստի. էնոնք քաղքին սոխըխնուն օրթան մե ըստոլըմ կը թընեին, հիվընդնին քուքային քովանը, դարման կենեին, ճամփեին կը: Ըշտը էտ վախտը աղին կաշկին վրա կը թընեն, տանին կը հեքիմին: Ղազի տերն օր կիմանա էնոնց միտքը, կերթա ու մե հեքիմին ղըլըղըմ կը մտնի, մե ըստոլմ կառնե առաչը, կայնի կը չարսուին մե անգաճը, գեզլիկնին թընեկը աշվընուն վրեն: Տեսնողն է կըսե, թե էս ի՞նչըղ հեքիմ է:

Աղին փերեն կը էս հեքիմին քովը:

- Հեքիմ ջան,- կըսեն,- դու գիտես, մեր հիվընդին լավցընելուն աշե, աբովըդ ենք մնացե:

- Հարցընե կը, թե՝ ի՞նչ հիվանդ է, ի՞նչը կը ցավի:

- Հա՛լ, հեքա՛թ,- կըսեն,- էսման, էսման բան. մե չըռզարկածըմ կա, բռնել չենք կըրա, օր ճիվը այըրմիշ էնենք, աշխըրեն վերչանա: Բռնել բաղնիքի մեչը էնքան է ծեծե օ՞ր, խեղճ մարթը դիա թըլմիշ ընկել է, չենք կըրնա զարթեսնե:

- Հա՞,- կըսե հեքիմը,- իմացել եմ, կըսեն թե էտ մարթուն վնաս եք տվե, էնիկե հայիֆ կը քշե, հա՞:

- Ջըռ աթկազ կենեն, կըսեն,- չէ՛, չէ՛, հեքիմ ջան, սուտ է:

Հեքիմը հիվընդին կառնե քովը օր լավցընե, տիրվըտանցը ետ կը ճամփե: Տիրվըտանքն օր ետ կերթան, ղազի տերը աղու կուտա, մեռցընե կը աղին ու ըստոլին վրեն է՞րկան կերկընցընե ու դոշին վրեն գրե կը. «Ղազըս, ղազըս, ղազի տերն եմ, տեսակ-տեսակ օյիններեի տերն եմ. էսիկ հըլը պզտիկն է, մեծը էտտեցեն քուքա»:

Գրեկը ու ինքնե թողնե փախնի կը տուն: Հիվընդին տիրվըտիքը կերթան օր փերեն աղին, տեսնին կը օր օ՞, աղա թրել ես սա, կա. չոր փետ է դառցե: Դեշին վրայինն օր կը կարթան, սուք ու շիվանը հասնի կը թաքավորին ան-

գաճը: Էս խայտառակութենը կիմանան սաղ գեղանքն ու քաղաքները: Կըյնին ժուռ քուքան, օր բռնեն ղազին տիրոչը, չեն կըրնա գտնի: Ո՞ւրդից պիտի գտնին. օրական տասը չլտո ղըլըղ կը մտնի:

Էս խապարը հասնի կը շատ ու շատ ուրուշ թաքավորնուն անգաճը. բիրադի կըսեն,

- Ա՜լահե՜ե՜յ, էս ի՞նչըղ թաքավոր է, օր չի կըրնա էտման մե ժուլիկիմ բռնե, բանտը թնե, սատքեսնե: Վերցընեն իրար հետ մե նամակըմ կը գրեն էն թաքավորին, հետնե մե լաչակըմ կը թնեն, կըսեն.

- Դու կնիկմարթ ես, թաքավոր չես. քեզի էս լաչակն է լայեղ, թաքավորական թագի տեղ կապե գլոխըդ:

Էս թաքավորն օր նամակը կստանա, արունը թափան կը թռնի, կըսե.

- Ծո՛, ծո՛, հըլը բանի աշեցեք. ես ըլլիմ էս տեսակ թաքավոր, գըլխուս էս տեսակ օյին խաղան. ես էլ ո՞ր օրվա համար կապրիմ: Կելլե իրեն ժանդարմեսնուն հրաման կուտա, օր ընկնին քաղքընին, ինչ տեսակ գուզե ըլլի, գտնին փերեն ղազին տիրոչը: Ժանդարմեստանը կըյնին քաղքընուն մեչ, թրով, թվանքով ման քուքան, հա՛ ման քուքան, ղազին տիրոչը չեն գտնի:

Էտ վախտը ղազին տերը կիմանա ժանդարմեսնուն միտքը, կերթա մե քիրքըճի մարթում խանութը, կըսե.

- Ուստա, ի՞նչ տամ, օր էսօր սաղ օրը թիքանդ ինձի տաս, դու էլլես, էրթաս տուն, քու գործերով զբաղվիս:

Կես թիմանի կը համաձայնին: Ուստեն կառնե կես թիմանը ու կերթա: Ղազի տերը հաքնի կը ուստին քիրքը, էրես-մերեսը ճերմակցընեկը ու ասեղը կառնե մեմ էսթուն, մեմ էնթուն կը զայնե, նընի կար կենե: Քիչըմ կանցնի, մեմե կաշե օր էտոնք էկա՜ն: Էկան թրով-թիվընքով միազըմ ժանդարմեստան սկսեցին խուզարկելը:

- Պարոն ժանդարմեստան,- կըսե,- խեր ըլլի, ի՞նչ կաշեք:

- Խեր է,- կըսեն,- ուստա, դու ղազի տիրոչը չե՞ս տեսե, կըսեն թե քու քովդ է էկե քանիմ օր առաչ:

Ուստան էրեսը խաչ կը հանե. մեղայ Ասու, մեղայ Ասու՝ ըսելով, ի՞նչ ղազի տեր, ի՞նչ բան, էտ վե՞վ է: Իրան կհարցընեն՝ դու չիտես վեվ է ղազին տերը: Ուստանա կըսե թը.

- Վալլա, թե օր գիտեմ, էն իսանաթիս խերը չտեսնիմ:

Ժանդարմեստանն էլ իրենց հերթին կը զարմանան, թը՝ ջանըմ, ինչղոր

սաղ աշխարքը իմացավ, դու ի՞նչըղ օր չիմացար: Էղելութունը կը պատմեն, կը հասկըսնեն ուստին, օր էտման մե մարթըմ կա, չենք կըրնա բռնե, օր տանինք տանք թաքավորին՝ գլոխը թռցրնե:

- Հիմի հասկըցա,- կըսե ուստեն: Օր էտման է, արիք ձեզի խրատըմ տամ, ինքնիրեն կը բռնվի:

- Ըսա տեսնինք,- կըսեն ժանդարմեստանը,- խելացի խրատը վնաս չէ:

- Դուք օր էտման թրով-թվանքով ընկել եք ժուռ քուքաք, էնիկ ձեզի տեսնի, վե՞վ գիտե, վե՞ր ծակը կը մտնի: Ինձի օր անգաճ էնեք, թուր ու թվանքնիդ կը թողնեք խանութը, դուք կելլեք ուրուշ ղըլըղ կը մտնիք, առանց զենքի ժուռ քուքաք, թե չէ էնիկ չի բռնվի:

- Ծո՛,- իրար մեչ խորուրթ կենեն ժանդարմեստանը,- կըսեն ուստան լավ կըսե, արիք էտման էնենք:

Թուր ու թվանք թընեն կը էստեղ, իրենք կերթան օր ղազին տիրոչը գտնին: Ղազին տերն էլ կելլե դուս, դուռը կախե կը, տանի թուր ու թվանքը ծախե կը դուսը: Դռանն է վրեն գրե կը. «Ղազըս, ղազըս, ղազի տերն եմ, տեսակ-տեսակ օյինների տերն եմ, էսիկ հըլը պզտիկն է, մեծը էտտեցեն քուքա»:

Ժանդարմնին քափ-քըրտինք մտած ժուռ քուքան, ժուռ քուքան, չեն կըրնա գտնի, քուքան քիրք կարող ուստին խանութն օր զենքերը տանին: Մտնին կը նես, բարև կուտան ուստին, բարևնին կառնե, կըսեն.

- Ուստա, փիր մեր թուր ու թվանքնին տուր, մենք էլլենք էրթանք: Ըշտը չըկրցանք գտնի ղազի տիրոչը:

- Ի՞նչ թուր ու թվանք,- զարմացած կըսե ուստան,- ջանըմ ի՞նչ կըսեք. խոշ էրած չե՞ք տեսսե:

- Ուստա,- կըսեն,- էրեկ չէ առչի օրը քեզի մեր զենքերը պայ տվինք, քնացինք, միտքդ չէ՞:

- Ախպար՛,- կըսե ուստան,- դուք յաղլըշ եք ընկե. էրեկ չէ առչի օրը էս խանութիս մեչը ուրուշ մարթ կաշխատիր. էնոր գործը կըլլի:

- Վա՛ղլա,- կըսեն,- էտ շանորթին ղազի տերն է էղե, ու ծնկներուն կզայնեն: Կելլեն դուս, դռանը վրեն կաշեն օր, ի՞նչ աշեն. նույն գիրը գրել ու քընացել է:

Խայտառակութունը կերթա կըյնի թաքավորին անգաճը: Անգաճն օր կըյնի, էս անքամ համփերութենը կռի կը, արունը աշկերը կը զայնե, հըմը ի՞նչ պիտի էնե, էղածն էղած է, անցածն՝ անցած: Հայտարարութեն կը զայնե, թե.

- Ո՞վ ղազի տեր, վեվ ես, ինչ ես օրա, դո՛ւս արի քովս, մուրաղրդ ուզե,

մուրադրդ տամ: Թաքավորութենովս կը երթըվնամ, օր քու խաթրիդ դիպչող չի՛լլի:

Ղազի տերը քիչըմ կը մտածե, կաշե օր խելքի բան է: Դե թաքավոր է, խելք ունի, խոսքեն դուս չի էլլե: Պիտի ելլեմ, էրթամ. կըսի ու կերթա: Կերթա թաքավորին պալատը, թամալլա կենե, կելլե կողնիկը ու կըսե.

- Թաքավորն ապրած կենա, ղազի տերը ես եմ:

Ըսելուն պես թաքավորին աշվին լուս քուքա: Կելլե էսոր ճակատը կը պաքնե, կըսե.

- Եփ օր ղազին տերը դու ես, հալալ է, քեզի էլ բան չկա, հեչ մի՛ վախենա, արխեին պտտե: Հըմը խընթիրքըմ ունիմ: Գուզեմ օր էրթաս Գերմանու թաքավորին գողնաս, սաղ-սալամաթ փերես իմ քովս:

- Գլխուս վրա, կերթամ, կը փերեմ,- կըսե տղան:

Մեննակ էտոր համար ինձի հարկավոր կըլլի մե դավեմ, մե սընդուկըմ, մե կեչու տիկըմ, ամմեն մազեն մե բոժոժըմ կախած:

- Շատ լավ,- կըսե թաքավորը ու կանչե կը ծառանուն, օր տղին ուզած բաները բիրատի տան:

Ղազի տերը քանիմ օր հանքշի կը: Թաքավորն էտոր կուտեսնե, խըմցընե, ճամփու կը թնե: Աստված քեզ հետ, կըսե, ու տղան կերթա:

Շատ կերթա, քիչ կերթա, Աստուն է հայտնի, վերչապես հասնի կը գերմանու թաքավորին հողը: Դավան կը կայնեցնե, քիչըմ հաց-մաց կուտե, ջուր կը խմե, յա՜ Աստված, կըսե, ու կերթա, հասնիկը թաքավորին քաղաքը: Հասնիկը, հըմը հեչ չի կրնա իմանա, թե ի՞նչըղ էրթա, օր մարթ չըտեսնի: Հարց ու փորց կենե, կիմանա թաքավորին պալատին տեղը, կերթա դավին մե տեղըմ սիթար կենե, ինքնե կերթա կաշառե կը պալատին ղարաղոլնուն, օր իրիկունը իրեն թողնեն էրթա նես: Մութը կըյնի: Սիրտը կը դողա: Ճըրքընին օր կը մարին, էսիկ տիկը կառնե թևին տակը, կերթա թաքավորին պալատին քովը, ղարաղոլնին թողնեն կը նես: Կերթա, կելլե ուղիղ թաքավորին կառավաթին քովը: Կաշե կը օր թաքավորը մեշկին ընկել ու խըռկա կը: Տիկը կը հագնի, կերթա օտվընուն տակը կայնի կը, մե հատըմ իրեն օր թափ կուտա ու հետնե ֆը՜ռռ՜ռ կենե, թաքավորը սրտապատառ վեր կը թռնի. կաշե կը օր ի՜նչ աշե. մե անճոռնի բանըմ, կայնել է, ժընկըրտասնե կը: Մայվան դողը կըյնի կը ջիգարը:

- Թաքավոր,- կըսե,- ես օր կամ Գափրել հրիշտակն եմ, էկել եմ, օր հոքիդ

առնեմ: Թեզ էրա. ինչ օր պիտի ըսես՝ ըսա, օր ես կշտապիմ, ուրուշ տեղ ունիմ էրթալու:

Թաքավորի լիզուն կառնվի: Չի կըրնա խոսի. բա՜, բա՜, բա՜ էնելով հասկըսնե կը, թը՝ Գափրել հրիշտակ ջան, էսօր ինձի խնայե, մե օրըմ ժամանակ տուր, էքվան հոքիս կուտամ: Էլլեմ,- կըսե,- սապախտան խեր-խեյրաթութենըս էնեմ, էտև մեռնիմ:

- Լավ,- կըսե,- մե օրըմ քեզի սրոք: Հըմը հիմիկվընեն քեզի թամբեյ կենեմ, օր էքվան ու մեկալ օրը հրաման պիտի տաս, օր քու ժողովուրթըդ դուս չելլե, չունքի դու Ասու քովը շատ ունթունական ես, քեզի պիտի սաղ-սաղ տանիմ էնոր քովը: Դուսն օր մարթ չըլլի, ըշտը անարատ դուս քուքաս, կը մտնիս շիտակ դրախտին մեչը:

- Հա՛,- կըսե գերմանու թաքավորը,- մեռնիմ զորութանըդ, Գափրել հրիշտակ:

Ղազի տերը կելլե, ուսուլով կերթա իրեն բանին:

Գերմանու թաքավորը շատ խերսըզ է էղե: Ժողովըրթին հետ էնքան գեշ է վարվե օր, բիրըտիքը էտոր մեռնիլը գուզեն էղե: Սա՜ղ խազնեստանը օսկով լցել է ու հեչ մեկիմ մե լավութենըմ չէ էրե: Ըշտը էտոր համար մե օրըմ սրոք է ուզե, օր խեր-խեյրըթութեն էնե, բալքի ժողովուրթը օհնե, հոքին դրախտըն էրթա:

Հըմը Գափրել հրիշտակը դուս կերթա թե չէ, թաքավորը կելլե, հալավը կը հաքնի, ծառանուն ձեն կուտա, ծառանին լալա-վազիրնուն ձեն կուտան, լալա-վազիրնին դիորի էսթուն-էնթուն, լուսանակը ու մե քարեմ հրաման կուտա, խազնեն սաղ բաժնե կը աղքըտնուն: Ժողովուրթը կըսե,

- Ա՛յ ջանըմ, թե իսիկ մեր թաքավորն է՜, էսման բան չպիտի էներ: Էս ի՞նչըղ էղավ, օր խեյրըթութեն կենե կը:

Թաքավորը էման մե խեյրըթութենըմ կենե օր, բիտտուննե գոյ կերթան: Խեյրըթութենեն էնելեն էտև էնիկ ապելեննի կուտա ժողովուրթին, օր ուրփաթ-շափաթ օրերը, հեչ մե մարթըմ թող դուս չելլե, ում դուսը տեսսան, գլոխը կը կտռեն, ջանդակը ցցերուն վրեն կը ցգեն: Եվ վե՞վ կըրնա ապելեննեցեն դուս բան էնե, բիրըտի սրտապատառ կըլլին, մտնին կը տներն ու կըսեն.

- Ծո՛, վալլա, մեր թաքավորը խելքը կորուցել է:

Դռվին կը փակեն, ճըրքընին կը մարեն, քուն կըլլին: Քուն օր կըլլին, ղազի տերը կելլե, սընդուկը կառնե, դավին առաչը կըյնի, տընգ-տընգ, լոնգ-լոնգ

քուքա կը պալատին քովը: Փոստն ու սնդուկը կառնե, կելլե վեր, մտնի կը թաքավորին օթաղը, տիկը կը հաքնի, մե քարեմ իրեն թափ կուտա և ո՜ւ ո՜ւ ո՜ւ կենե օրա, թաքավորին չումը կը չորնա:

- Թաքավոր,- կըսե Գափրել հրիշտակը,- դե թեզ էրա, ես ուրուշ տեղերե գործ ունիմ, պիտի էրթամ:

- Հնազանդ եմ, Գափրել հրիշտակ,- կըսե թաքավորը...

- Թե օր հնազանդ իս,- կըսե Գափրել հրիշտակը,- արի մտի սնդուկն օր սաղ-սաղ էրկինք հանեմ:

Թաքավորը մտնի կը սնդուկը, Գափրել հրիշտակը սնդկին դապպաղը կողպեկը ու կառնե շալակը: Համ էլ իրեն-իրեն կը մտածե՝ էս բեռով մընաց դրախտ մտնիլը:

Էհ, հիմի էրթանք դրախտ: Տանի կը թընե կը դավին վրեն, կապկպե կը ու ինքն իրեն նետե կը դավին վրեն: Քշեկը՝ ղոնթ-ղոնթ-ղոնթ, հասնի կը սարերը: Էրթած տեղն օր դավան օր շատ սար ու ձոր կիշնի, կելլե, թաքավորը կըսե.

- Ա՛յ, քեզ բան. էս էրկընքին մեչնե՞ դար ու փոս կա, սար ու ձոր կա, քար ու քըռա կա: Գիտե թե էրկընքի մեչն է: Քիչմե կերթան, բիրտան դավեն քընթարի կը. Գափրել հրիշտակը կըսե.

- Անտեր դավա, քեզի ի՞նչ էղավ:

Թաքավորնա մտածե, մտածե ու զարմանա կը, քանի օր իրեն համար դրախտում դավա գոնե չպիտի ըլլիր: Էտման-էտման կերթան, հասնին կը ղազի տիրոչ թաքավորին հողը: Արթըղ առչնեն աշկիլուս կերթա կը.

- Թաքավորը ապռաստ կենա, չե՞ս ըսե, թաքավոր գողցող տղեն լոնգ-լոնգ քուքա կը:

Թաքավորին խելքը գլխեն թըռնի կը, ղըլպըլթին կըյնի, դեմ կերթան, մե թասախուշտովըմ փերեն հանեն կը պալատ: Գերմանու թաքավորը իրեն-իրեն կմտածե, կըսե.

- Ի սե՜ր Աստու, էս դրախտին մեչնե ուրեմն թաքավոր կա էղե, էս ի՞նչ բան է:

Սընդուկը կիչեսնեն կը դավին կըռնըկեն, տանին կը թաքավորին պալատը: Կանչեն կը թաքավորին սինոթապետներուն, մեծամեծներուն: Թոփ օր կըլլին, թաքավոր գողցող տղեն թեերը վեր կը քաշե, սընդկին բերանը կը բանա, կըսե.

- Թաքավոր, ել հասել ենք դրախտ, հըմը քու մեխքըդ շատ ըլլելուն համար դժոխքն ես ընկե:

Թաքավորը վեր կենալը գիտեր, էս նըստողնին բաշլայեցին փոթկալը: Փըռթկացին ու զառաֆաթի առան, թը.

- Տեսսա՞ր, լաչակ կը ղրկես, թը՝ օղլուշաղ ես թաքավոր, գլոխդ կապե: Հը՞, ի՞նչ կըսես: Ա՛ռ լաչակըդ,- ըսավ էս թաքավորը գերմանու թաքավորին,- կապե գլոխդ, օր սաղ-սաղ քընացիր դրախտ հասար:

Գերմանու թաքավորին լիզուն առնվավ:

Ղազի տերն օր էտ քաչութենն էրավ, թաքավորը էտոր ճակատը պաքեց, իրեն թաքավորութան կեսը բաշխեց էնոր, նշանեց, կարքեց. օխտը օր, օխտը գիշեր ուրախ-զվարթ հարսնիք արին, կերան-խմեցին: Էնոնք հասան իրենց մուրադին, դուքե հասնիք ձեր մուրադին:

ԿԵՑԻ ՄԵՄ ՉԱՐԽ ՈՒ ՖԱԼԱԿԻՍ ԱՇԵՄ

Մե աղքատ մարթըմ կըլլի, իրենց թաքավորին մե էզիմ բեռ քառթոլ փեշ-քաշ կը տանի: Թաքավորին ծառաները էտոր օր կը տեսնին, հեռվեն ձեն կուտան.

- Ո՞ւր քուքաս, ծո քուրթ հարիֆ, ու չեն թողնե, օր նես մտնի:

Հըմը թաքավորը իրեն պալատին վրայեն տեսնիկը օրա, հրաման կուտա, օր նես թողնեն: Քուրթն էլ էզով-բեռով նես կը մտնի, բարև կուտա, բարև կառ-նե, կըսե.

- Թաքավորն ապռաստ կենա, քեզի փեշքաշ քառթոլ եմ փերե:

- Շնորակալ եմ,- կըսե թաքավորը,- շատ սաղ ըլլիս:

Էտև շատ խորաթա կենեն, հարց ու փորց կենեն, ու թաքավորը կըսե.

- Քուրթ ախպար, հիմի ըսա, թը՝ ի՞նչ տամ քեզի, օր օժար ըլլիս:

- Թաքավորն ապռաստ կենա,- կըսե քուրթը,- մե էզիմ բեռ էլ դու օսկի տուր, էրթամ:

- Քուրթ,- կըսե թաքավորը,- էտիկ շատ էղավ, մե քիչըմ իչի:

- Մե խուրջինըմ տուր,- կըսե,- էլլեմ, էրթամ:

- Էլի շատ է,- քուրթ, կըսե թաքավորը,- մե քիչմա իչի:

- Է՛, օր շատ է, թաքավորըս ապռաստ կենա,- փիր ինձի, նորեն կըսե քուր-թը,- մե ըռուղըմ տուր, ելլեմ էրթամ:

- Էտ էլ է շատ, ա՛յ քուրթ,- կըսե թաքավորն ու կառաչարկե,- արի քեզի մե խարաբեմ տամ, քընա տընով տեղով ապրե:

Քուրթը դիշիմմիշ կըլլի, դիշիմմիշ կըլլի ու կըսե.

- Լա՛վ, թուխտը գրե՛:

Թաքավորը քթին տակը իրան-իրան կը խնդա, թուխտը կը գրե, կուտա ձեռքը, կըսե.

- Դե, քընա, ապռե:

Քուրթն օր թուխտը կառնե կերթա, վազիրը նես կը մտնի ու կըսե.

- Թաքավոր, վա՛ղլա, դու խելառ ես:

Թաքավորը կը հարցնե, թե՝ ինչո՞ւ, վազիր, ինչի եմ խելառ:

- Ջանըմ,- կըսե վազիրը,- մեզի թողած, անխելք քուրթ հայվընին խարաբա կուտաս:

- Վազիր,- կըսե,- ոչ ես եմ խելառ, ոչ էլ քուրթն է անխելք:

- Վա՛ղլա,- կըսե,- էրկուստե խելառ եք ու կըսկըսեն վիճելը:

- Եվ օր էտման է,- կըսե թաքավորը,- արի ես ու դու մե բասըմ բըռնենք:

- Բռնենք,- կըսե վազիրը:

- Պայմանը էս է,- կըսե թաքավորը,- թակար դու քրթին ձեռնեն իմ տված թուխտըս ետ առա՛ր, հախ Ասված, ես էլ եմ խելառ, քուրթն էլ:

Վազիրին հերսը կելլե, վեր կը կենա, հաքնի, կապե կը, զենքը վրեն կախեկը ու խուրջինըմ օսկի ձիուն թարքը կառնե, կըյնի ճամփա: Թաքավորը դիրբինը աշկին կը թնե ու սեյր կենե պալատին վրայեն, թը տեսնի վազիրն ի՞նչ պիտի էնե: Տեսնիկը օր վազիրը հասավ քրթին: Վազիրն օր կը հասնի քրթին, կըսե՝ բարո՛վ քիրվա:

- Ասսու բարի՜ն, բարով էկար,- կըսե քուրթը:

Խոշ-բեշ օր կենեն, վազիրը կըսե.

- Քիրվո՛, արի էտ քու խարաբին թուխտը տուր ինձի, ես քեզի մե խուրջինըմ օսկի տամ, քընա ապռե:

Քուրթը օ՛ սահաթ գլխու կըյնի, օր իսիկ իրեն գլխին օյին պիտի խաղա: Կըսե.

- Ինչի՞ չէ: Ջիեդ իչի, ես մե հատըմ իմ չարխ ու ֆալակիս աշեմ, տեսնիմ՝ ի՞նչ կըսե, էտև տամ:

Վազիրը ձիյեն կիշնի: Թաքավորը հեռվեն տեսնի կը. քուրթը, կըրնկին վրեն իրեք անքամ դառնալեն ետև, կըսե.

- Վազիրը սաղ ըլլի, չարխ ու ֆալակս ըսավ, թը՝ թող վազիրը իրեն հալավը հանե, քեզի տա, դուն էլ քու հալավըդ հանե, իրեն տու, օր իրավունք տամ թուխտը տալու: Վազիրը նազով-տուզով հանե կը հալավը, կուտա քըրթին,

էնորեն կառնե կը իրեն հալավը, դառնա կը քուրթ: Քուրթը վազիրին հալավը կը հաքնի, սիլայը կը կապե, դառնա, կըսե.

- Վազիր, հըլը յավաշ, մեմա չարխ ու ֆալակիս աշեմ՝ տեսնիմ ի՞նչ կըսե: Վազիրը համաձայնի կը: Քուրթը կըրնկին վրեն իրեք անքամ կը ֆռա ու կըսե.

- Վազիրը սաղ ըլլի, չարխ ու ֆալակս ըսավ՝ թող վազիրը ձին տա քեզի, մե անքամըմ հեծի, քնա ու արի, աշենք՝ ի՞նչ կըլլի:

Վազիրը ձին կուտա քրթին: Քուրթը ձին կը հեզնի, մե հատըմ կերթա ու քուքա, կիշնի:

- Դե տուր թուխտը,- կըսե վազիրը:

- Չէ՛, կըսե. խաղը իրեք անքամ կըլլի: Յավաշ մեմ էլի աշեմ չարխ ու ֆալակիս, տեսնիմ՝ ի՞նչ կըսե:

Քիրվոն կըրնկին վրեն իրեք անքամ ֆռալլեն էտև կըսե.

- Վազիրը սաղ ըլլի, չարխ ու ֆալակն ըսավ՝ ձին մեմե հեծի, խուրջինը թարքը կապե, մե հատմե քընա ու արի, էտև թուխտը տուր:

Վազիրը էլի համաձայնավ: Հըմը վախը սիրտն առավ: Քուրթը ձին հեծավ, սիլայը կապեց, խուրջինը ձիուն թարքն առավ, մաթռաղը քաշեց մե քարեմ առաչ քընաց, ետ էկավ ու ըսավ.

- Վազիր, շընորակալ եմ, մնաս բարով, ես հիմի իսկական խարաբին տեր դառցա: Էս ըսելն ու ձիուն հա՜յ տալ, էրթալը մեկ էղավ: Վազիրը ծնկին զարկեց, օտքին զարկեց, ուշ էր: Քուրթը մանզիլն առավ:

Թաքավորը էս բաները բիտտուն տեսսավ: Ծառաներուն ըսավ.

- Քուրթը վազիրին չըփլըղցուց, հալավ ու ձի տարեք, թե չէ հերսեն կը տրաքի:

Հալավը տարան, վազիրն էկավ: Թաքավորը ըսավ.

- Քուրթը քեզնենա, ինձենա խելոք է: Մեկ էլ էտման խալթ չենես:

ՀԱՎՔԵՐՈՒՆ ԹԱՔԱՎՈՐԸ

Հավքերուն թաքավորը կըսե թը՝ մեմ էրթամ աշխարը պըտըտիմ, քամ: Կելլե կերթա, պըտըտի կը ու հասնի կը մե թաքավորիմ պալատ: Կաշե օր լավ-լավ ծառեր, լավ-լավ բաղչաներ, լավ-լավ սարայներ ունի: Քաղաքը պըտըտելու վախտը տեսնի կը, օր էրկու-էրկու, իրեք-իրեք հարկանի տներ կան, օսկեջրած պալկոններ կան, մե խոսքով, շատ հարուստ քաղաք է էղե էտ թաքավորին քաղաքը:

Էս թռչուններուն թաքավորը պըտըտելեն վերչը կերթա կայնի կը թաքավորին բաղչին ծառին վրեն: Թաքավորին իմաց կուտան, թե մե մեծ, ըռունդ հավքըմ էկել բաղչիդ ծառին է թառե: Թաքավորը տեսնի կը ու հրաման կուտա, թե էտ հավքը մեզի միսըվիր է էկե, պետք է գոմեշ մորթել, բաղչան թընել, օր իշնի, ուտե, էլլե քընի: Թաքավորին հրամանը մեկեն կատարեն կը: Հավքը անոթի կըլլի էղե: Կիշնի կուտե, կելլե քընիկը էղե: Մե խեյլի վախտըմ օր կապռի, կաշեկը օր գոմշին միսը պարպի կը, մընքին մեչ թաքավորեն ու էտ էրկըրեն շնորակալ կըլլի, էրկրպաքութեն կուտա ու կերթա իրեն էրկիրը:

Կանսնին մե խեյլըմ տարեստան: Էս հավքը կէխտյարնա, կըսե.

- Քանի օտքե-ձեռքե չեմ ընկե, էլլեմ մեմ էրթամ էլի պըտըտիմ, տեսնիմ թը՝ էն թաքավորն ու իրեն էրկիրըն ի՛նչ էղան, ի՛նչ չէղան:

Կերթա՜, հասնիկը էտ քաղաքը, տեսնի կը օր քաղքին տները պզտըկցել են, օսկեջրած պալկոնները դառցել են էրկըթե պալկոն, թաքավորի տունն էլ առաչվանը չէ: Դու միսե, առաչվան թաքավորը մեռած կըլլի, իրեն սիլսիլեցեն նոր թաքավոր կայնած կըլլի էղե: Էտ թազա թաքավորն օր էս հավքին կը տեսնի, խորուրթ կընստի լալա-վազիրներուն հետ, որոշեն կը, օր մե ուլըմ մորթեն, տան, ուտե, էրթա: Ուլը կը մորթեն, թընեն կը բաղչեն: Հավքը քանիմ օրվա մեչ վերչասնե կը ու էլի շնորակալ կըլլի, կերթա իրեն էրկիրը:

Վրա քուքան էլի խեյլըմ տարեստան: Հավքերուն թաքավորը համարյա թը օտքե-ձեռքե կըյնիկը: Մտքեն էլի կանսնի, օր մեմե էրթա, պըտըտի, իրեն ծանոթ էրկիրը տեսնի, դառնա հետ քա: Կերթա, շատ օր կը պըտըտի, թաքավորի քաղքին տեղը անջաղ կը գտնի: Կաշե կը, օր թաքավորին պալատեն հեչ բան չէ մնացե, մարթիքը գետընփոր տներուն մեչը կապռին էղե: Իսոնք կերթան թաքավորին իմաց կուտան, թը՝ թաքավորն ապռաստ մընա, բաղիդ մեչ մե հավքըմ է իչե: Թաքավորը կըսե թը՝ չե՞ք կըրնա զայնե: Կըսեն՝ կըրնանք: Կելլեն էս պիճիլի-պիճիլի մարթիք նետ-աղեղներով վազեն կը օր զայնեն: Հավքը օ՛ սահաթ գըլխու կըյնի ու կըսե.

- Ծո՛, էսոնք ինձի պիտի սըպանեն, նալլաթ ըլլի իրենց էրկիրն էլ, իրենց միսն էլ, թաքավորն էլ ու, էխտյար թներուն զոռ տալով, անջաղ ձեռվընեն փախչի կը:

ԱՍՏՎԱԾ ՕՐ ՉԸՏԱ, ՄԱՀՄՈՒԴՆ ԻՆՉ ԷՆԵ

Կըլլի, չիլլի, մե շա՜տ ախկատ մարթըմ կըլլի: Էսիկ օր ժողվորթ կենե էղե, ուրդից օր կանանի դառնա կը, ճվա կը՝ Մահմո՛ւդ, Մահմո՜ւդ:

Դու մի՛սե, Մահմուդ էտ երկըրին թաքավորին անունն է էղե: Էս ախկատը մե քանիմ վախտ էլ թաքավորին դռնեն կանանիկը օրա, Մահմո՜ւդ, Մահմո՜ւդ ըսելեն կերթա: Թաքավորը աքոշկեցեն դուս կաշե, օղորմութեն կուտա, ճամփեկը էղե:

Էտ ախկատը ունեցել է մե դըրկիցըմ: Էս դըրկիցը իրեն-իրեն ըսել է.

- Յավաշ հըլը մեմ եսեէրթամ մեր ախկըտին հետ պըտըտիմ, էրթամ թաքավորին դռնեն անանիմ: Էտ ախկատը թող կանչե՝ Մահմուդ, ես է կանչեմ՝ Մահբուբ: Աշենք թաքավորը էնոր ի՛նչ կուտա, ինձի ի՛նչ կուտա:

Էքսի օրը էտ ախկըտին հետ ընկեր կըլլի, կերթան մուրալու: Ախկատը կը ճվա Մահմո՜ւդ, դըրկիցը՝ Մահբուբ: Թաքավորը աքոշկեցեն դուս կաշե, զարմանա կը: Կանչե կը էրկուսինե: Թաքավորը էրկու ղազ բռնել կուտա. մեկը մորթե կը, փորը կը բանա, օսկի կը լըլե, մեկնե չի մորթե: Մորթած ղազը կուտա Մահմո՜ւդ ճվացողին, սաղ ղազնե կուտա Մահբուբ ճվացողին: Կուտա, ճամփու կը թնե: Էսոնք օր ղազերը կառնեն դուս կելլեն, աղքատը կաշե մորթած ղազին, գլոխը կը փարտե: Դըրկիցն օր կը տեսնի ախկըտի գլոխ փարտելը, կըսե.

- Ինչի՞ կը փարտես գլոխըդ:

- Ի՞նչ էնեմ օր չըփարտեմ,- կըսե ախկատը,- թաքավորը սաղ ղազը տվեց քեզի, մորթածը՝ ինձի: Գոնյա սաղ ղազն օր ինձի տար, եսա տանեի քանիմ կափեկի ծախեի, տան համար հաց կառնեի:

Դըրկիցը կը խղճա, վերցընե սաղ ղազը կուտա ախկըտին, մորթածը կառնե տանի կը տուն: Տուն օր կը տանի, փետել կուտա, ղազի փորը բանալ կուտա, տեսնի կը օր, օհո՜, թաքավորը էտոր փորը լիքը օսկի է լըցե: Հըլը աշե,- կըսե դըրկիցը ինքն իրեն,- ախկատը թաքավորին անունը կուտար տեյի, ըշտը էնոր օսկի է տվե, ես օր Աստծուն անունը կուտայի, դարտակ ղազը:

Արթըղ մեխկը կուտա ախկըտին, կըսե.

- Աստված օր չըտա, Մահմուդն ի՞նչ էնե:

Կանանի մե օրըմ, էրկուս, ախկատը ղազը տանի կը բազար, ծախե կը մե քանիմ փարով, քուքա կը տուն: Էքսի օրը նորեն կելլե կերթա մուրալու: Մահմուդ, Մահմուդ թաքավորին դռնեն ճվալեն օր կանանի, թաքավորը մաթ կը մնա, թը՝ էս ի՞նչ օյին է: Էնքան օսկի տվի, էլ կը մուրա: Կանչե կը նես, կըսե.

- Ա՛յ մարթ, ես քեզի մորթած ղազ տվի, դու ի՞նչ էրիր:

Ախկատը եղելութենը կը պատմե: Թաքավորը մատը կխածե. Աստված օր չըտա, Մահմուդն ի՞նչ էնե: Բայց թաքավորը նորեն օսկի կուտա, կըսե՝ քընա ապռե:

ՐՈՒՅՑՆԵՐ ԱՌԱՎԿՆԵՐ ԵՎ ԶՎԱՐՃԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱԼԱԼ ՈՒ ՀԱՐԱՄ ՍԵՐՄԵՐԸ

Մարթուն մեկը աշխըրին ի՛նչ բանի օր ձեռք կուտա, անաչողութան կը հանդիպի: Իշքան օր կաշխատի, ի՞նչ օր կենե, չի կըրնա հարըստանա:

Մե օրըմե մե բարի մարթում քովը կերթա, կըսե թը.

- Ի՞նչըղ էնեմ, օր ձեռքըս կուշտ փորիս թընեմ: Էս մարթը վերցընե կըսե.

- Հըլը փորցի խաթրու վերու մե հատըմ հալալ, մե հատմե հարամ սերմ, ցանե: Թե հալալ սերմը բուսնա՞վ, զաթի քընա հալալ ճամփով, կը հարըստանաս, թե օր հարամ սերմը բուսնա՞վ, զաթի կերթաս սարերը, դառնաս կը հարամի, էն վախտը կապռիս:

Էս խեղճ մարթը կերթա, ըսածին պես ցանե կը հալալ ու հարամ սերմերը, կաշեկը օր հարամին կը բուսնի, հալալինը չէ: Կերթա խրատ տըվողին քովը.

- Էհ՛,- կըսե խրատ տվողը,- օր հարամը բուսնավ, դու պիտի էրթաս հարամութան: Հըմը հարամութան էրթած վախտըդ էլ խիղճըդ ձեռքիդ պիտի պայես:

Էս մարթը կելլե կերթա կը տուն, զենքը կառնե ու կընկնիկը սարերը: Սարերն օր կընկնի, ըռաստ քուքա սարին քառսուն հարամեսնուն, դառնա կը ընկեր:

Էսոնք ամեն օր մե վաճառականիմ կը բռնեն, թալան կենեն ու իրենե կը սըպանեն: Թանլած ապրանքը օրական մեկը կառնե կը էղե: Վեվ օր պիտի առնե, էնիկ պիտի սըպանե էղե վաճառականին:

Էտ քառսուն հարամեսնուն բաժին կը հասնի, մնակը մեննակ էս նոր ընկերը:

Պըտըտած վախտերը մե խորունկ ձորիմ մեչ ըռաստ քուքա էսոր ղըսմաթ ընկած վաճառականը. դավեն շատըմ բառցած: Էտոր կը բռնեն, ապրանքը ձեռքեն կառնեն, իրենա կուտան թազա հարամուն, կըսեն.

- Տա՛ր, դիա իսոր սըպանե՛, արնոտ շապիքն էլ փեր, օր ապրանքը տանիս քեզի: Էսիկ վաճառականին կառնե կերթա, օր սըպանե: Ճամփեն ինքն իրեն կը մտածե, թը ի՞նչըղ կըլլի օր սըպանեմ էս անմեղ մարթուն, ի՞նչըղ էս անմեղ մարթուն արունքը մտնիմ:

Մտածելու վախտը վաճառականը կըսե՝ ի՞նչ կը մտածես, այ մարթ: Կըսե, հըպը ի՞նչ էնեմ, քեզի տանիմ կը, օր սըպանեմ, արնոտ շապիքըդ տանեմ, հըմը խելքըս բան չի կտռե:

- Օր էտքան խղճով մարթ ես,- կըսե վաճառականը,- արի ինձի բաց թող, այսաներեն հավքըմ կը բռնենք, շապիկըս էտոր արնով կարընոտենք, տար

ըսա, օր սըպանեցի, էկա:

Հարամուն սիրտը մե անքամըմ խիղճը թոփ էր էղե. բիրտան միտքը ընկավ իրեն խրատ տվողին խոսքերը, թը հարամութենա օր կենես, դու էլի խիղճըդ ձեռքդ պայե:

Այդաներեն մե հավքըմ կը բռնեն, արունը քսեն կը վաճառականին շապքին, հարամին կերթա ընկերտանցը: Բայց վաճառականը ոտքը կախ կը ցըգե ու ձեն կուտա էս մարթուն, կըսե.

- Դու օր իմ ջանիս չըդիպար, դու օր իմ արունըս գնեցիր, արի փալի ես էլ քու արունըդ գնեմ: Կերթաս օրա ընկերտանցըդ քովը, բանաք կը իմ շեյ-շեյբաթըս, էնոր միչեն մե ճերմակ լաչակով կապոցըմ դուս կելլե. էտ կապոցին մեչը մե գաթամ կա, հալվա կա և ուրուշ բաներ էլ կան: Էտոնք բիտտունը թունած են: Դու հեչ մեկին ձեռք չես տա, թող էնոնք ուտեն, դու ուրուշ բանովըմ օյալամիշ էղի, մի ուտե: Դու արժանի ես, օր սաղ-սալամաթ մնաս, ապրիս:

Հարամին կերթա, կաշե կը օր ընկերտանքը վաճառականին շեյ-շեյբաթին չորս թարաֆը նստել, խորաթա կենեն կը: Քովերնին օր կը հասնի, բանան կը բոխչեստանը, տեսնին կը օր ի՜նչ ըսես կա: Ըշտը սարերի սոված մարթ, վըրա կընկնին, կուտեն կը, ինքնե գուլպա-չարխընուն հետ օյալամիշ կըլլի, բանիմա ձեռք չի տա: Քիչըմ օր կանսնի, կաշե օր բիտտունին աշվին չաթալլամիշ կըլլին: Մե քիչըմ էտնա բիտտունը կը ճողին: Էս մարթը կառնե էղած-չեղածն ու կերթա տուն: Տուն օր կերթա, վաճառականը ճամփին ըռաստ քուքա: Սաղ ապրանքը իրար հետ հալալ կը կիսեն: Էտ մարթը վաճառականին ճամփու կը թընե ու էնոր սայեցովը հարուստ մարթ կը դառնա ու խիղճը չկորցրած էլ իր կյանքը կապրի:

Աստված էտ մարթուն երկար կյանք տա:

ԷՏ ԷԼ ՉԻ ՄՆԱ

Ժամանակոց մե մարթըմ կըլլի, ձիով ճամփա էրթըցած վախտը տեսնիկը օր ըռաշպարըմ արտ կը քշե: Լծել է մե եզըմ ու մե մարթըմ: Էս մարթը մաթ կը մնա, թը՝ ի՞նչըդ կըլլի օր մարթուն հարօր լծեն: Կերթա կը քովը:

- Բարի աչողում, այ մարթ,- կըսե:

- Աստըծու բարի, հազար բարի էկար,- կըպատասխանե:

- Ամոթ չըլլի հանցընելը,- կըսե էս անցվորը,- էս ինչի՞ ես մարթուն եզի հետ հարօր լծե:

- Ի՞նչ էնեմ,- բացատրեց արտ քշողը,- մե եզրս սատկավ, ընկեր գըտնել չըկըրցա, եզինա ընկեր գնելու փարա չունիմ: Քընացի քաղքին խափանը, տեսա օր մեկըմ էս մարթուն աժան ծախեր կը, առա, փերի, եզիս հետ լծեմ կը:

- Է՛, ըսավ, եզն աժե քառսընընիինգ մանեթ: Ահան քեզի էտքան փարա, քընա քաղաք, խափանեն մե եզըմ առ, էս մարթուն թող, թող էրթա: Հանեց փարեն տվեց, մարթուն բաց թողեց ու ինքը ձին հեծավ, քընաց: Խայլըմ քընացել էր, մեմե էս լծվող մարթը ետ դառցավ, բռնեց խազեինին, թըրեց օտվընուն տակը, փարեն զոռով հանեց ջեբեն ու վազզեց ձիավորին էտտին: Եփ օր հասսավ, ըսավ՝ կայնե, ախպեր, կայնե:

Մարթը կայնավ, հարցուց՝ ի՞նչ կա:

- Բան չըկա,- ըսավ լծվող մարթը,- ես գուզեմ, օր դու էս փարեդ ետ առնես, եսե լծվիմ հարօրին, չունքի էտ մարթուն ճանկեն պրծնիլ չեմ կըրնա:

- Ա՜յ մարթ,- ըսավ,- ես քեզի ազատեցի, օր պրծընիս, դու ի՞նչ կը մտածես:

- Քընա,- ըսավ,- էնիկ ինձի թող լծե. էտիկ էտման չի՛մնա: Ձիավորը փարեն ետ առավ, մտածելով քընաց:

- Ի՞նչըղ թե՝ էտիկ էտման չի մնա:

Անցավ քանիմ տարի: Էս մարթը ձի հեծած էլի կանցներ մարթ լծողի գեղին քովեն: Մտքովն անցավ էրթալ հետաքըրքըրվիլ, թե ի՞նչըղ էղավ էտոնց բանը: Հարց ու փորց էնելեն էտ մարթուն տունը գտավ: Տեսսավ օր խազեինը չկա, հըմը լծվողը կա: Իտոնք իրար ճանչեցին: Ձիավորը հարցուց՝ ո՞ւր է խազեինդ:

- Խազեինըս մեռավ,- ըսավ լծվողը,- ես առա էնոր կընկանը, տուններ մնաց ինձի: Հիմի տեսսար օր էն էլ չմնաց: Էս մարթը զարմացավ, ըսավ.

- Լա՛վ բան է էղե, լծվելեն պրծար, կընկանն ու մալին էլ տեր էղար:

- Էս էլ չի մնա,- ըսավ էս մարթն ու միսըվիրին ճամփեց:

Ճամփեն էրթըցած վախտը էս մարթը ինքն իրեն կուտար-կառներ, կուտար-կառներ, թե՝ հըլը աշխըրին բանին աշեցեք. վախտ կար, օր էս մարթը լծկան էր, էտն դառցավ խազեինին կընկա տերը: Հիմիա կըսե՝ էտ էլ չի մընա:

Անցավ էլի քանիմ տարի: Էս մարթը նորեն հեծավ ձին, էլավ քընաց ծանոթին տեսութան: Տուն օր հասսավ, իմացավ, օր էն էլ է մեռել: Տեղնուտեղը նստավ, մտածեց ու ըսավ.

- Դորթ օր էն էլ չըմնաց:

Գեղացոնց հարցուց՝ ուրտեղ է թաղված էտ մարթը: Գյուղացիք տարան

գերեզմանոցը, ցուց տվեցին շիրմաքարը: Վարավիրտով աշեց օր քարին վրեն գրած է՝ Էս էլ չի մնա:

- Վա՜յ քու տունըդ շինվի, էստից էտև էլ ի՞նչ է մնացել, օր էտ էլ չըմնա:

Ցիավորը քշեց, քընաց տուն: Ծա՜տ ու շա՜տ տարիներ էլի՛ անցան: Էս մարքը էնքան էխտյարցավ, օր դագընըկով անջաղ քելեր կը: Մտածեց, մտքովն անցավ, ըսավ, օր պիտի էրթա էն մարքու գերեզմանին տեսուքան: Ու ձին հեծավ, քընաց: Քընաց ի՞նչ տեսսավ. սաղ գերեզմընին գետնին են հավասարվել: Հարցուց, թե՝ ո՞ւր է էսինչ մարքու քարը:

- Է՛,- ըսին,- ժամանակ առաչ մե ուժեղ սելավըմ էլա՜վ, բիտտուն սրփեց տարավ:

- Էնտի՛օղորմած հոքին քարին գրել էր տվե՝ Էս էլ չի մնա...

ԱՏԱՆՔ ՕՐ ՉԸԼԼԻՐ, ԱՍԱՆՔԱ ՉԷՐ ԸԼԼԻ

Մե շալ գործողըմ շատ ըռունդ կընիկըմ կունենա, օր ըսեր արեգակ մի Էլլե, ես պիտի էլլեմ: Հըմը ինչ կենես օր, օրե կաշխատին, անջաղ օրե կուտեն էղե:

Գեղն օր քեֆ կունենա, աս ըռունդ կընիկը թեզըմ կերթա, օդին օջղին քովը կը նստի: Մեմե կաշեն օր ուզբաշուն կընիկն էկավ: Ըսին.

- Ըխչի՛, քիչըմ ցած իչի, օր անիկ նստի:

Մեմե կաշեն օր մեկալ մեծին կընիկը էկավ: Էլի ըսին.

- Ըղչի՛, քիչըմ ցած իչի, օր անիկա նստի:

Մե խոսքով, ասանկա ցած կիչըսնեն իրիսկընկա, հարստի ու մեկալներու համար, ու էս ըռունդ կընիկը կաշե օր հասսել է օդին օտքը: Շատ կառնըվի, շատ դարդ կենե, կուտը կուտե, էրկինք կելլե, թը հըլը բանի աշե, ես ըլլիմ շալ գործողին ըռունդ կընիկը, պատիվը տան ուրուշներուն: Մե օրմա կըսե.

- Քա մա՛րթ, ես ալ քեզի կընկտուքեն չեմ էնա: Ես քեզի պիտի թողնեմ, էրթամ գլխուս ճարին աշեմ:

- Ա՜յ կընիկ,- ըսավ,- դու խո չըխելըռա՞ր, իսի մեր էրեխաները, տուն, տեղը ի՞նչըղ պիտի կառավարեմ քեզնեն էտև:

- Ալ չեմ դիմանա,- ըսավ կընիկը,- Եվ օր ես իսի ըռընդուքենովըս օդին մեչ տեղ չունիմ, էս գեղը մնալըս ինձի հարամ է:

- Ջանըմ,- ըսավ մարթը,- ատանկ բան չի՛ըլի, խելքդ գլոխդ փեր:

- Չէ՛ ու չէ՛,- համառեց կընիկը,- կամ ես պիտի աս գեղեն հեռենամ, կամ տնով-տեղով պիտի էլլենք, թարաֆըմ էրթանք:

Աս մարթուն իլլաճը կըռավ: Էլան, շալին հորը քակեցին, իրար կապեցին, քոչ ու քարվանը շալկեցին ու ընկան ճամփա: Կերթան, կերթան, շատ կերթան, թե քիչ, մըտնին կը մե թուրքիմ գեղ: Կաշեն օր մոլլեն էրթիքը կայնե, իրենց կաշե ու հարցընե կը.

- Ի՞նչ մարթ եք, ո՞ւր կերթաք:

- Հըբը,- կըսեն,- ասանք, ասանք. կերթանք օր մե լավ տեղըմ աշխատինք, ապրինք: - Ծո՛,- կըսե,- ըշտը եսա շալ գործող, բուրթ մանող ժուռ քուքայի: Ինձենա լավ մարթ: Էկեք իմ տունըս, ձեզի տուն-տեղ էնեմ, բուրթ տամ, մանեք, գործեք, ապրեք: Ալ ո՞ւր պիտի էրթաք:

Աս շալ գործողը համաձայնի կը ու մտնին կը տուն: Մոլլեն իտոնց տուն կուտա, տեղ կուտա ու բարդընններով բուրթը ցուց կուտա: Ասոնք շալին հորը շինեն կը ու կըսկըսեն աշխատիլը:

Կանսնի մե վախտըմ: Աս մարթը կաշե օր, ի՞նչ աշե. մոլլեն իրա կընկանը զավթել է: Շատ կը մտածե: Մտածմունքին մեչ ինքը իրեն խոսիկը ու շալ կը գործե: Սանդռը առաչ կը հրե ու կըսե.

- Ես իմ ձեռքովըս էրա, ես իմ ձեռքովըս էրա...

Ու նորեն գործե կը: Բիտտուն զարմանան կը, թը՝ չըլլի՞ մարթը խելքը թըռուցել է: Մոլլին կընիկը քուքա, հարցընե կը.

- Ուստա, ատ քեզ ի՞նչ է պատայե, օր սանդռը առաչ տանիս, կըսես՝ ես իմ ձեռքովըս էրա, ետ կը փերես, կըսես՝ ես իմ ձեռքովըս էրա...

Էս խեղճ մարթը մոլլին կընկանը քովը սիրտը կը բանա ու կըսե եղելութենը: Մոլլին կընիկը օ՛սահաթ կըսե.

- Ուստա՛, եփ օր ատանք է, հայդե, դունա ինձի՛ արի:

Մարթը իրիկունը կերթա մոլլին կընկանը ծոցը: Էտտից էտև շալ գործողը սանդռը առաջ կը փերե ու ետ կը տանի կըսե.

- Ատանք օր չըլլիր, ասանքա չէր ըլլի,

Ատանք օր չըլլիր, ասանք ա չէր ըլլի:

Մոլլեն այս անքամ քիչըմ զարմանա կը, հըմը բան չի հասկընա:

ԻՄԱՍՏՈՒՆ ՍՈՂՈՄՈՆՆ ՈՒ ՔՈՌ ԲՈՒԲԲՈՒՆ

Իմաստուն Սողոմոնն, օր իրա գիտութենովը աշխարքը հրատարակվավ, մե կընիկըմ առավ, մտավ աշխար: Կընիկն առավ, աշխար մըտավ, հըմը էլի իմաստուն մնաց:

Մե օրըմ իմաստուն Սողոմոնը քընաց պտըտտավ-պտըտտավ, դառցավ տուն օր էկավ, կընիկը մռթընին կախել էր: Մարթը հարցուց.

- Կընիկ, էսօր քեզի ի՞նչ է էղե: (լռություն): Մեմե հարցուց՝ Կընիկ, ինչի՞ ձեն չես հանե:

- Ի՞նչ ձեն հանեմ,- նեղեցած ըսավ կինը,- դու ըլլիս աշխըրի իմաստունը, դու ունենաս աշխըրիս բուսերուն լեզուն, հավքերուն հետ խորաթա էնես, եսե էսման նստիմ խարապա տներուն մեչը ու հայվընի պես մնամ:

- Է՛, ի՞նչ գուզես,- ըսավ իմաստուն Սողոմոնը, ի՞նչըդ տուն ըլլի օր, դու ուրախ ըլլիս:

- Ես գուզեմ,- ըսավ,- օր դու աշխըրին հավքերուն օսկըռներովը մե պալատըմ շինես, բըմբուլներովը վրեն ծածկես, օր եսե մեչը ֆըռֆըռամ, ըսեն՝ ա՜յ, իսկական Սողոմոն իմաստունին կընիկն է:

Իմաստուն Սողոմոնին ամռայը բռնեց, թը՝ էս կընիկն ի՞նչ գլխեն դուս բաներ կը մտածե:

Վախտըմ օր անցավ, կընիկն էլի սկսեց զայլեն տանիլ: Իմաստուն Սողոմոնն էլավ, քընաց սարը, կանչեց բիտտուն հավքերուն: Էնիկ սարին գլոխը մե շատ մեծ տունըմ էր շինե, ուրտեղ օր թոփ կըլլեին աշխըրին հավքերը: Իմաստուն Սողոմոնին հետ խորաթա կենեին: Եվ օր հավքերուն էտտեղ կանչեց, թոփ էղան աշխըրքի հավքերը էրամ-էրամով, սկըսեցին իրար հետ խոսելը: Հըմը քոռ բուբբուն հըլը չըկար: Շատ օր խոսան աշխըրի մասին, մեմե աշեցին օր ո՜ւշուրեկ քոռ բուբբուր իրեն երամովը էկավ, այման հեռուն իչավ: Իմաստուն Սողոմոնն ըսավ.

- Ծո քո՛ռ բուբբու, դու ինչի՞ ուշացար:

- Եսսիմ,- ըսավ,- մտածեի կը՝ թե ինչի՞ համար ես կանչե:

- Ես ձեզի կանչել եմ, օր ձեր օսկըռներով ու բըմբուլներովը կընկանըս համար մե պալատըմ շինեմ,- ըսավ իմաստունը:

Էտիկ օր ըսավ, հավքերը ջուրը քաշվան: Քոռ բուբբուն առաչ էկավ, ձեն ուզեց ու ըսավ.

- Իմաստուն Սողոմոն, ես քեզի իրեք հատ հարց պիտի տամ, թե օր դու

կրրցար պատասխանել, զաթի քու ուզածդ կենես, թե օր չէ՝ հավքերուն պիտի վեր վարես:

Համաձայն էղան: Տուր քու հարցերը, ըսավ.

- Իստից վերն է ծանդրը,- քոռ բուբբուն ձեռքը թրեց բկին,- թը՝ ցածը:

- Իհարկե, բկից ցածն է ծանդրը,- ըսավ Սողոմոն իմաստունը:

- Չէ՛,- ըսավ քոռ բուբբուն,- ահան դու սխալվար: Մարթուն գլոխն է ծանդրը, չունքի էնիկ կը պըտրտեցնե իրեն:

Սողոմոն իմաստունը սքլավ ու ըսավ՝ լա՜վ, մեկել հարցրդ տուր աշեմ: Քոռ բուբբուն հարցրեց.

- Աշխըրին էրեսը ծնվողնին են շա՞տ, թը՞ մեռնողնին:

- Իհարկե ծընվողնին են շատ,- ըսավ իմաստունը,- չունքի հազարը կը մեռնի, հազար ու մեկը կը ծնվի:

- Չէ՛,- ըսավ քոռ բուբբուն,- առաչ էտման էր, հըմը էսօրվընեն փոխվել է էտ բանը, չունքի վեվ օր խիղճը կորուց, էնիկ մեռելնուն կը խառնըվի, կըլլի հավասար:

Իմաստուն Սողոմոնը էս խոսքից չասկըցավ օրա, քոռ բուբբուն պարզեց ըսածը. ա՛յ, օրինակի համար, դու էսօր խիղճ չունիս. կընկանդ համար պիտի մտնիս էս սաղ աշխըրի հավքերուն արունքը:

Իմաստուն Սողոմոնը էլի՛ սըքլավ: Բուբբուն մեկել հարցը տվեց.

- Իմաստուն Սողոմոնը սաղ ըլլի, կըրնա՞ս ըսե աշխըրին էրեսը կընիկմարթն է շատ, թը՝ էրիկմարթը:

- Ջուխտ են,- ըսավ իմաստուն Սողոմոնը:

- Չէ՛,- ըսավ քոռ բուբբուն: Դու հախտըվար:

- Ինչի՞ հախտըվա,- ըսավ իմաստուն Սողոմոնը ու հերսը էլավ: Չէ՞ օր Ասված Աթամին ու Էվային ջուխտ ըստեղծեց, մինչի օրըս էլ էման կերթան արն ու էքը:

Չէ՛,- ըսավ քոռ բուբբուն: Հիմի օր մե տղամարթըմ իրան կընկանը խոսքին անգաճ էնելով աշխըրին մեչը ավուզարը ցըգե, էնիկ կընիկմարթ կը համարվի:

Ըսավ քոռ բուբբուն ու քաշվավ քանար:

- Իմաստուն Սողոմոնը օ՛սահաթ վրեն առավ:

Ձեռքը զարկեց բուբբուին մեշկին ու ըսաց.

- Քընա, քոռ բուբբու, դու փրկեցիր սաղ աշխըրին սիրուն հավքերուն: Ըսավ, թողեց հավքերուն ու քընաց տուն:

ԻՄԱՍՏՈՒՆ ՏՂԱՆԵՐԸ

Իմաստուն Սողոմոնը գուշակեց, օր մե իմաստուն աստղըմ պիտի էլլե: Էնիկ ուներ մե բելիկըմ նախըը, չոբանը քուրթ էր, և մալը դուսը կը պառկեսներ: Օրվանըմ մե օրը էսիկ քըրթին ըսաց.

- Քո՛ւրթ, մուղաթ կեցի, ապրիլի վերչին էսման մե ըռունդ, կարմիր աստղըմ պիտի դուս քա: Եվ օր տեսնիս կը, արի ու ինձի խապար տուր:

Քուրթ չոբանը ըսավ՝ Լա՛վ, աղա ու քընաց:

Օրվանըմ մե օրը, գիշերը գեզրթ էրած վախտը, քուրթը տեսսավ, օր էտ աստղը դուս էկավ: Վազելով էկավ գեղ, հասսավ իրեն տան քովը, կայնավ, դիշիմմիշ էղավ. ըսավ՝ էստեղ մե բանըմ կա: Մտածեց՝ առաչ էրթամ ֆաթեիս քովը, էտև էրթամ Սողոմոն իմաստունին ըսեմ: Քուրթը քընաց ֆաթեին կուշտը քիչըմ մնաց, էտև էլավ քնաց իմաստուն Սողոմոնին քովը, ըսաց.

- Աղա, չե՞ս ըսե, ըսածդ աստղը կեսգիշերին դուս էկավ: Սողոմոնն էլավ, ափալ-թափալ վազզեց, աշեց, օր հախխաթ, իրեն գուշակած աստըղն է: Աստղին աշեց ու քընաց քընավ կընկանը կուշտը:

Արթըղ ինը ամիս, ինը սահաթ, ինը դախխեն օր թըմմավ, իմաստուն Սողոմոնին ու քըրթին կընկտիքը ծունկ չոքեցան ու մեկ-մեկ ըռունդ մանչ տղա ունեցան:

Էտ տղաքը էլան մեծըցան, իրենց համար էպպեճա կարթային կը: Մե ցորեկըմ քուրթը նախըրն օր տուն փերեց կթելու, իրեն տղեն ու Իմաստունին Սողոմոնին տղեն նախրին մեչը մե ծանդըռ կովըմ տեսսան: Իմաստուն Սողոմոնին տղեն քրթին տղին ըսավ.

- Գիտես, քըրթի տղա, էս կովը ծնի կը, փերե կը ճակատը դաշխա մե հորթըմ:

Քըրթին տղեն չհամաձայնեց, ըսավ.

- Չէ՛, Իմաստուն Սողոմոնի տղա, էտ կովին հորթին ճակատը դաշխա չէ. հորթին պոչին ծերն է դաշխա. թրել է ճակտին, քեզի էտման կերևա: Էս տղերքը ըսպոռի էղան. մեկը ըսավ ճակատն է դաշխա, մեկելը թը՝ պոչն է դաշխա: Իմաստուն Սողոմոնը էտ վախտը անգաճ կեներ: Դանակը քաշեց, կովը մորթել տվեց: Հորթը փորեն հանեցին տեսսան, օր հախխաթ, քըրթին տղին ըսածն էր: Իմաստուն Սողոմոնը հերսոտավ ու քրթին կանչեց, ըսավ.

- Քուրթ, շիտակ ըսա, էն օրը չէ, էն ավուր Աստվածն է, էն աստղն օր տեսսար, դու առաչ մե՞րը էկար, թը՞ ձերը քնացիր: Քուրթն էլ չկըրցավ սուտ խոսի, ըսավ.

- Աղա, վալլա, առաչ մեր տունը քընացի, էտև էկա ձերը:

Իմաստունն Սողոմոնը քրթին բան չըսավ, հըմը իրեննէ իրեն կերավ:

ԻՄԱՍՏՈՒՆ ՍՈՂՈՄՈՆԻՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳԻՆԸ

Իմաստուն Սողոմոնը աշխըրին մեչը շինեց ամենաըռունդ շինութենը: Էսիկ էման մե բանըմ էր, օր չորս թարաֆեն արևը մեչը կառներ: Պալատին անունն օր շատ հրատարակվավ, իրեն էրկըրին մարթիքն ու ուրուշ էրկըրնե-րու մարթիքը փեշքըշներով էկան տեսութան: Իմաստուն Սողոմոնը էտոնց հարքեց, պատվեց ու էլան շինութան չորս թարաֆը պըտտան: Իմաստուն Սողոմոնը ըսաց.

- Ի՞նչ գին կը թնեք պալատիս:

Հեչ մեկը չըկրցավ գին թընե: Քաշեց էտոնց բիտտունին ճիտը կտռեց: Էտ-տից էտև էկան Ըստամպոլուց. անոնքա ըսին էրթանք տեսնինք էտ պալա-տը, աշենք ինչո՞վ է շինած, ի՞նչըդ է շինած, օր սաղ աշխարը մաթ է մնացե: Էսոնք ճամփեն ըռաստ էկան մե քուրթ չոբնիմ: Բարև տվին-առան իրար, և քուրթը, քանի օր գլխի էր ընկե արթեն, հարցուց, թը՝ ո՞ւր են գնում:

- Իմաստուն Սողոմոնին պալատը տեսնելու կերթանք,- ըսին:

Քուրթը ըսավ, օր շատ չըթին կըլլի ձեր էրթալը, քանի օր տեսնլուց, պատ-վի ու հարգանքի արժանացնելուց հետո, Իմաստունը հարց կուտա, թե՝ ի՞նչ գին կը թընեք պալատիս, ըսեք օր պալատիդ գինն է ապռիլի արեքակը, մա-յիսոցվա թոնը: Չունքի աշխարք լիասնողը էս էրկուսն են: Չէ նե զայնե բիտ-տունիդ ճիտը կը կտռե:

Էս մարթիքը էլան քընացին, Իմաստուն Սողոմոնը էսոնց հարքեց, պատ-վեց, էտև տարավ պալատին չորս թարաֆը պտըտցուց ու հարցուց.

- Հ՞ը, շինութանըս հավնա՞ք:

Մարթիք ըսին, օր հավնանք, շա՜տ հավնանք: Սողոմոն Իմաստունը երկ-րորդ հարցը տվեց, ըսավ.

- Ի՞նչ գին կը թընեք պալատիս:

- Քու պալատիդ գինը,- ըսին ըստամպլցիք,- ապռիլի արեքակն է, մե-մե մայիսոցվա թոնը:

Իմաստուն Սողոմոնը մատը խածեց.

- Քընացե՛ք, ըսավ, քըրթին էք ըռաստ էկե, թե չէ վեվ գիտե՝ հիմի ուր պիտի ճամփեի ձեզի:

ԻՄԱՍՏՈՒՆ ՍՈՂՈՄՈՆՆ ՈՒ ՍԱՏԱՆԵՆ

Իմաստուն Սողոմոնը գուշակեց, օր մե սատանեմ սիրե կը իրեն մորը: Հըմը սատանին ու Իմաստուն Սողոմոնին տներուն մեչը էրկու մեծ սար է էղե: Սատանեն իրեն այմանեն (տնից) օր քուքա էղե, ինչըղ օր մե ուշապըմ քա: Սատանեն իրեն սարեն էսթուն անցնելեն էտև կըլլի էղե մե թելիմ պես բարակ բանըմ: Էտման թելիմ պես բարակ քուքա, մտնի կը Իմաստուն Սողոմոնին մորը տունը: Հըմը Իմաստուն Սողոմոնը թեզըմ գուշակե կը, օր սատանեն լավ բանի համար չի քա: Գուշակեց, գտավ օր սատանի թըլլըսումը իրեն սարին մեչն է: Կանչե կը ժողովրթին, փարա կուտա, կըսե.

- Փորեցեք էս մեր սարը: Ինչ օր կը գտնիք, փերեք տվեք ինձի:

Կելլեն փորելու: Շատ օր կը փորեն, մե օրմե էտոնցեն մեկը, ինձի պես խելքեն թեթև կըլլի, գտնի կը մե օսկեցե ղուտտիկըմ: Հըմը ինքը չի հասկընա, օր օսկի է: Կըսե.

- Տղե՛ք, արիք տեսսիք, թե ինչըղ ըռունդ պիպիլմ եմ գտե: Էս ղուտտիկը տանին կուտան Իմաստուն Սողոմոնին: Իմաստուն Սողոմոնը ըշտը վարցքը կուտա ու ճամփու կը թընե էտոնց: Էնտից էտև բանա կը գտած ղուտտիկը, կաշե օր մե սիրո՜ւն մատնիմ կա մեչը: Սատանին փեչատնե վրեն: Թընե կը ջեբը: Էքսի օրըն օր սատանեն իրեն սարեն քուքա կը շորորլամիշ ըլլելեն, ինքն իրեն վրա զարմանա կը, թե ինչի՞ թուլ է: Առաչվա պես էլի դառնա կը մե բարակ թելի պես բանըմ, քուքա Իմաստուն Սողոմոնին մորը քովը, հըմը քալեն հեչ բան չի հասկընա: Իմաստուն Սողոմոնն օր տեսնի կը սատանին քալը, մորը քովը մտնիլը, կերթա ղուռը դսեն կախե կը ու սատանին մատանիով ղուռը կը փեչատե: Դուռն օր կը փեչատե, էլ չի բացվի, չունքի սատանին մատնուն թըլըսումը վրեն է: Փեչատելուն բաշտան սատանեն կընկնի ծընկի ու կըսկսե աղաչելը Իմաստուն Սողոմոնին ու կըսե.

- Իմաստուն Սողոմոն, դու ինձի ազատե, ես էլ քեզի ինչքան օր նեղ տեղն ընկնիս, օքնեմ, ազատեմ:

Հըմը Իմաստուն Սողոմոնը անգաճ չէրավ, ըսաց.

- Դու սատանա ես, օտքեդ գլոխ մուխաննաթ ես, օր քեզի թողնեմ, կերթաս, էլ միտքդ չես փերե:

Սատանեն էրթում կուտե, էրթում կըրակը կը մտնի, հըմը Իմաստուն Սողոմոնը չէրավ ու ըսաց.

- Թե գուզես, օր քեզի ազատեմ, արի պատմե ինձի, թե աշխըրքի իպտիտայեն ղիորի վերչը ի՞նչ պիտի ըլլի:

Սատանեն ըսաց.

- Մեննակ մե բանըմ կըսեմ, օր օղլուշաղըդ մնաց հղի (հղիացավ), կըլլենա էրկու ճիճու. էտոնք իրար հետ կը կռվին, վերն օր էխտեց, էնիկ կը մնա, մեկելը կը մեռնի:

ՍՈՒՐԲ ՍԱՐՔԻՍԸ

Կեղնի թաքավորմի, հրովարտակ կը հանե, թե ոյն օր Սուրբ Սարքիս բռնեց բերեց քովսի, ուր կշեռնոցով օսկի կիտամ ուրին: Էտ քաղքի մեջ կար մե քյասիբ մարթմի, գերդաստանից շատվոր: Ըսեց.

- Կընիկ, մեր թաքավորն հրովարտակ է հանե, թե ոյն օր Սուրբ Սարքիսին բռնեց բերեց քովսի, ուրին ուր կշըռնոցով օսկի կիտամ: Պիտի էրթամ, իմ կշըռնոցով թաքավորից օսկի առնեմ, ըսիմ օր ես կըբերիմ Սուրբ Սարքիսին:

Էս մարթու կինը մտածեց, ըսավ.

- Տո՛, ա՛յ մարթ, դու դոր, Սուրբ Սարքիս դոր. դու ուրդի՞ց կըյնաս Սուրբ Սարքիս բերիս. ըշտը օրական կաշխատիս, օրական կապրինք: Գացիր օսկին բերեցիր, Սուրբ Սարքիս լը չը կըրցար գտար, էն ժամանակ գլուխդի կը զարկե:

- Տո՛, այ կընիկ,- ըսեց,- կերթամ օսկին կը բերիմ, քառսուն օր սրոք կառնիմ: Քառսուն օր էտև յա էշ կը փիտնա, յա իշու տեր:

- Տո՛ մարթ, խիամթին՝ քու մուր քու ճակատ, դու գինաս,- ըսեց կընիկը:

Մարթն էլավ, գնաց թաքավորի քով, ըսեց թաքավոր սաղ մնաս, ըս կըբերիմ Սուրբ Սարքիս: Թաքավորն հարցուց՝ գինա՞ս ինչ պայմանով: Եթե Սուրբ Սարքիսն բերիր, քու կշռնոցով օսկի կիտամ, թե օր չբերիր, գլուխդի կզարկիմ:

- Թաքավորն ապրած կենա,- ըսեց էս մարթը,- ընձի քառսուն օր սրոք տուր:

Պայման էրեցին, առավ օսկին ու գնաց: Տարավ տուն, ըսեց՝ կընի՛կ, բերիր իմ: Մեկել օր էլան իրիկ-կընիկ, գնացին բազար, շոր առան էրեխոց, կոդինք, ուրանց համար՝ հաց, վերջապես քյասիբ մարթ էր, էտ օսկով ուր ըմմեն նեղութուն հոքաց:

Էկա՜վ, քառսուն օր թըմմավ: Մեկ լը բիրտան չափռներ գացին էտ մարթու տուն, հետ ուրանց մե պզտի տղեմի ներս մտավ: Էտ տան տեր գիտցավ, թե չափռնու տղեն էր, չափռներ լե գիցան, թե էտ մարթու տղեն է: Ըսեցին.

- Էլի՛ էրթանք, թաքավոր քըզի կանչե: Էտ մարթն էլավ, կնկան մնա բարով էղավ, ճժերու էրես պագեց, էլան գնացին: Մտան թաքավորի դիվանխա-

նեն, էտ պզտի տղեն լե հետ ուրանց մտավ ներս: Թաքավոր հարցուց էտ մարքուն. «Դո՞ր է Սուրբ Սարքիսն»:

Էտ մարք խեղճ-խեղճ վիզն օլրեց դեմի էտ պզտի տղեն (կուզեր ըսել՝ եսի՞մ): Իրեք անգամ հարցուց, իրեք անգամն էլ էտմալ էրեց: Վերուց թաքավորն ըսեց ուր ատենակալին.

- Պարոն ատենակալ, մե մարքըմ օր ուր կշռնոցով օսկի տանե, թե Սուրբ Սարքիսին կը բերիմ, հիմա չը բերեր է, էտմալ մարքու դիվան իմա՞լ կը կտրիս:

Ատենակալն ըսեց.

- Էտմալ մարքուն կտոր-կտոր էնել, շշի վրեն շարել, փուռը կոխել:

Վերուց էտ պզտի տղեն ըսեց.

- Խասպի՛ տղա, խասպի՛ տղա (տղեն գիներ, օր էտ ատենակալ խասպի տղա էր): Թաքավորը վերուց մեկել ատենակալին հարցուց, թե մե մարքըմ օր թաքավորին խափե, ուր կշռնոցով օսկի տանե, թե Սուրբ Սարքիս կը բերիմ, հիմա չբերեր է, էտոր դիվան իմա՞լ կը կտրիս:

- Էտմալ մարքուն կտոր-կտոր էնել, պուտուկն ըլլալ, փուռը տալ: Պզտի տղեն ըսեց՝ ներկրարի տղա, ներկրարի տղա, գիներ, օր էտ ատենակալ ներկրաճու տղա էր:

Թաքավորն վրա իրեքին հարցուց: Էտ ատենակալ լե ըսեց.

- Թաքավորն ապրած կենա, մե մարք օր էրթա Աստծուն խափե, քըզի ընչի՞ համար չպիտի խափե: Պզտի տղեն վերցուց ըսեց.

- Աֆֆարըմ, աֆֆարըմ: Ասլի եկ, ջնսի փակ, բիր սան, բիր շայզադա (էտ լը թաքավորի տղա էր):

Պզտի տղեն էտ խոսքեն էտն բիրտան կորավ: Էտ մարքը էն սահաթ հասկըցավ, օր էտ պզտի տղեն չափռնու տղեն չէր, Սուրբ Սարքիսն էր:

Թաքավորը մեկ լը հարցուց.

- Տո, ա՛յ մարք, դու օրի՞ չբերեցիր Սուրբ Սարքիսն:

- Թաքավորն ապրած կենա,- ըսեց էս մարքը,- քառսուն օր ընկա էնոր էտն, համոզելով-համոզելով անջաղ բերեցի, հանեցի հուտա. դու օր ընձի կը հարցուցներ, թե Սուրբ Սարքիս բերեցի՞ր, ես քըզի քանի գլխով էրի, դու չհասկըցար: Եթե բերած վախտն ըսենք, թե ահա՛ն, թաքավոր, Սուրբ Սարքիսն, դու էրկու ըրոպե չը կըյնա տեսնե էտոր: Ես գլխով կենենք, օր դու լավ մի իշեր, օր չը ս կըրցեր գիցի, ես ի՞նչ էնիմ:

Թաքավորն ըսեց.

- Գնա՛, ազատ ես: Մարքն էլավ ուրախ գնաց ուր տուն:

ԱԿՈԲ ՊԱՏՎԻՐԱՔՆ ՈՒ ՍՈՒԼԹԱՆԸ

Ըստամբոլու մեչը Ակոբ պատվիրաքը կարթար կը Համիթ սուլթանի հետ, քանի օր էնիկ հըլը սուլթան չէր: Եվ օր թաքավոր նստեցավ Ըռեշիդ սուլթանը, Ակոբ պատվիրաքն էլ նստեցավ պատվիրաք: Իրար հետ օր կարթային կը, էնոնք իրար մտյան չէրին: Սուլթանին պալատը Ակոբ պատվիրաքին համար միշտ բաց էր. Աստծուն իրեն օրը կերթար սուլթանին:

Ժամանակին Համիթ սուլթանը կատվին ուսում էր տվե, օր իրենց խզմաթ կեներ: Օրվանըմ մեկը Ըռեշիդ սուլթանը հարց տվեց պատվիրաքին, թե.

- Ադամըն նասլի՞ գարակ, յոխսա ուսլի (Մարթու ցեղն է կարևոր, թե՞ ուսումը):

Ակոբ պատվիրաքը էտ օրը էտ հարցին չպատասխանեց: Անցավ մե քանիմ ժամանակ, սուլթանը է՛լի հարց տվեց, թե.

- Փաթիկ աֆանդի, նա՞իչուն բանըմ սեզըմի սախլատը, օնըն ջուհապընի վերմատը (Պատրիարք էֆենդի, ինչո՞ւ իմ հարցը թաքցրիր և նրա պատասխանը չտվեցիր):

- Փատիշայ. սաղ օլսուն (Սուլթանը ողջ ըլլի),- ըսավ հայ պատվիրաքը,- ես էտոր պատասխանը կուտամ, եթե դու իմ ազգութանըս վրեն չնախանձվիս և վնաս չըտաս: Ու քընաց տուն, մե մուկըմ բռնեց, թրեց իրեն աֆիոնին դուտտիկը, սապախտան քընաց պալատը: Եվ օր քընաց, սուլթանը ուրախությամբ ընթունեց պատվիրաքին ու ըսկսեցին դայֆա խմելը: Խմելու վախտը սուլթանը թարքարդան հարցուց.

- Մարթու ուսո՞ւմն է կարևոր (պետք), թե՞ սնունքը (ցեղակցությունը, տեսակը):

Էտ վախտը օր կատուն իրեն թաթերովը բռնած ըստաքան-թապաղով դայֆա կը փերեր, Ակոբ պատվիրաքը ջեբեն աֆիոնին դուտտիկը հանեց, բերանը բացեց ու մուկը թռուց դուս: Մուկն օր թռավ և ուզեց փախչիլ, կատուն թաթերեն ըստաքան-թապաղը բաց թողեց, ջարթ ու փշուր էրավ, վազքացատկեց ու մուկը բռնեց, գլոխը սխմեց, ջարթեց:

Էտ վախտը Համիթ սուլթանին մազերը գլխուն վրեն թիքինա տնկվան, աշվըներեն արտըսունքը կաթեց, թը.

- Հա՜յ վախ, հա՜յ, մե կտորըմ հային առաչը ես էղա խայտառակ:

Ակոբ պատվիրաքը էտ վախտը խոսեցավ սուլթանի հետ, թը.

- Համիթ սուլթան, ըսե խընթրեմ, ի՞նչըն էր պատճառը, օր կատուն ուսումը

թողեց իրեն ոտքին տակը, քընաց բռնեց մուկը: Տեսա՞ր օր սընունքը հաղթեց իրեն ուսումին: Սուլթան Համիթը ոխ առավ սրտին մեչը: Պատվիրաքը պալատեն քընաց: Սուլթանը դուխուրա՜վ, մնաց:

Առավոտ կանուխ սուլթան Համիթը ջվթին ախչկանը կանչեց, ըսաց.

- Ի՞նչըղ թըլըսումըմ էնենք, օր Ակոբ պատվիրաքը դայփախանեն (հասարակաց տուն) մտած տեսնինք, խայտառակենք:

Ջվթին ախչիկն ըսավ.

- Էտոր էման թուխտըմ էնեմ, օր խախկ ու խայտառակ ըլլի: Եփ ժամանակ, օր Ակոբ պատվիրաքը քու պալատեդ կերթա իրա տունը, գրիս զորութենովը կը մտցընեմ դայփախանեն: Անցավ մե օրըմ պատվիրաքը էկավ սուլթանին քովը՝ խորաթա էնելու: Եփ օր ժամանակը թըմմավ, էլավ: Էլավ ու նարդըվանին վրեն թաքառլամիշ էղավ, ուշքը քընաց: Մեմե աշկը բացեց, օր ինքը դայփախանին մեչը կայնած է: Ինքը կառանդաշը զարկեց թըչընա, թըլըսումը բացվավ, թռավ դուս էլավ: Դուս օր էլավ թուրք թե հայ բաշլայեցին տըռըսխա էնելը: Ետև քընացին սուլթանին ուրախացուցին, թը.

- Փատիշայ, սաղ օլսուն, չե՛ս ըսե, քու սրտակից զրուցընկեր դայփախանեցեն կելլեր:

Գիշերն անցավ: Ակոբ պատվիրաքը սապախտան քընաց սուլթանին: Էտ էլ ըսեմ, օր էնոնք պայման էին կապե՝ իրար քով սայթով էրթային, օր մեկը մեկին նըստած չտեսներ. պետք է օտքի ըլլեին, օր քալողին դեմ քային, դռան օրթան ձեռքը բռնեին, բարևեին ու նստեին: Էտմանե էրին: Սահաթը օխտին պատվիրաքը քընաց, նստեցին ու խորաթա էրին: Սուլթանն ըսեց.

- Փաթրիկ աֆանդի, դու ինչու համար դայփախանա էիր մտե ու էնտիցե փախչեիր կը:

Պատվիրաքը պատմեց էղելութենը: Սուլթանը զարմանքով ըսեց.

- Պատվիրաքը սաղ ըլլի, էտման բան կըլլի՞, օր մարթ թըլըսումով դայփախանեն ընկնի:

- Սուլթանը սաղ ըլլի, ինչի՞ չէ, կըլլի: Արի,- ըսավ պավիրաքը,- Ըստամբոլու կրակը ես քառսուն օր ու գիշեր չթողնեմ վառելու: Հըմը ինձի թուղթ կուտաս, օր չնեղեսնեն:

Սուլթանը թուղթը տվեց: Պատվիրաքը քընաց ու թըլըսումը կատարեց: Քառսուն օր, քառսուն գիշեր էնիկ չթողեց, օր վառվի թուրքական կըրակը: Օրն օր թըմմեցավ, սուլթան Համիթը Ակոբ պատվիրաքին կանչեց, ըսաց.

- Փաթրիկ աֆանդի, սաղ օլ, միլլեթ ալտան կետտի, աթա՛շ (Պատրիարք աֆանդի, կեցցես դու: Բայց ժողովուրդը ձեռից գնաց, կրակ է հարկավոր):

Ակոբ պատվիրաքը սուլթանին ըսաց.

- Փի՛մե տասվերկու առշիննոց քութուկըմ Ըստամբոլու օրթան թաղէ, կանչե ջվթին ախչրկանը, օտվին թի՛ ծնկերեն հետ քութուկը, էտև ես թուրքութան կրակը վառեմ: Ես օր թըլըսումը կը գրեմ, ջվթին ախչկան մարմնեն (իգական օրգանից) դուս պիտի քա. արթըղ քու ժողովուրթըդ քուքա, կրակ կը վերցնե էնորեն:

Սուլթան Համիթը տախխայիմ կատարե կը պատվիրաքին առաչարկը: Քութուկը կը տընկեն, գլուխը կը ճեղքեն, ջվթին ախչկանը օտվընին կը թնեն ճեղքին մեչ, կը սխմե: Փարթիկ աֆանդին էտ օր կը տեսնի, թըլըսումը կը զայնե, ջվթին ախչրկանը մարմընեն կրակը կը բխա: Կրակն օր կը բխա, թուրքութունը բիրտան կը տեսնի. վերը քուքա աթարը դեմ կենե կը վառե, վերը՝ ձեթին ճրաքը, վերը՝ մարխը, վերը՝ մոմը... Խուլասա, Ըստամբոլը կըլիանա:

Մեկել օրը, սապախտան կանուխ Ակոբ պատվիրաքը կերթա սուլթանին պալատը: Բաշլայեն կը դայֆա խմելն ու յարանութեն էնելը: Հըմը սուլթանը շատ թթու էր: Օր խոսան պրծան, սուլթանը ըսավ.

- Փաթրիկ աֆանդի, դուն օր կըսեիր, թը թըլըսումը կըլլի, ըս չէի ավտա: Հըմը հիմի ավտամ կը:

Հայ պատվիրաքը ըսավ.

- Մեր կրոնքին զորութունը մեծ է: Ամմեն բան կըրնա օր ըլլի:

Անցավ քանիմ մինութ, սուլթանը հըլը ձենը կըտռել էր, կաշեր: Հըմը իրար խոռ կաշեին: Ձեռք տվին, բարըշան, հըմը օքուտ չունեցավ:

Էս պատմութենեն անցել է էրկու հարուր քառսընըէրկու տարի: Էտ ոխը հըլը կա ու կերթա:

ՊՅՈՏՐ ՎԵԼԻՔԻՆ ՈՒ ՎԱՐԹԱՊԵՏՆԵՐԸ

Պյոտր Վելիքին մե անքամ ման քալու վախտը կանսնի կը մե հատ մանաստիրի առչնեն, տեսնի կը օր էտոր ճակտին բան է գրած. կայնի կարթակը օր գրածէ.

- Ի՛նչ մարթ, ինչ վախտ, ինչ ուզե, ինչ մտածէ, ինչ մտածել է, ինչ գուզե, կըրնա էտոնց բիտտունին պատասխանն ըստանա մեզնեն:

Պյոտր Վելիքին զարմանք կը մնա: Կերթա մանաստիրին առաչը, մարթ

կը ճամփե նես, կերթան կսեն թը.

- Կաթողիկո՛ս, չես ըսե, Պյոտր Վելիքին էկել է, ձեզի կը կանչե:

Կաթողիկոսն օր կիմանա, լիզուն կատիկը կը փախչի: Կըսե.

- Էս հոքէառը ա՞նջաղ պիտի քար էստեղ: Կելլե դուս, կաշեկը օր, օհո՛, Պյոտր Վելիքին ձիով կայնած է: Իրար բարև կուտան օրա Պյոտրը Վելիքին կըսե.

- Կաթողիկոս, էս ի՞նչ եք գրե:

Վեհափառ Տերը պատասխան կուտա, կըսե.

- Գրել ենք՝ վաշի իմպերատորըսկի վելիչեստվո:

- Է՜, լա՛վ,,- կըսե տիրակալը,- դուք ինչ օր գրել եք, կրնա՞ք պատասխան տա:

Կաթողիկոսը չոր փետ կը կըռի: Կըրնա՞ ըսե թը՝ չէ. գըլխընին կը թռցընե: Պատասխան կուտա, կըսե.

- Կըրնանք տա, վաշի իմպերատորսկի վելիչեստվո:

- Լավ, կըսե, եփ օր կըրնաք պատասխան տա, ես իրեք հարց պիտի տամ ձեզի. պատասխանը տվի՜ք, տվիք, չտվի՛ք, գիտցիք օր կաթողիկոսիդ հոգևոր դասի վարքապետնուն բիտտունի գլոխը պիտի քաշեմ:

Կաթողիկոսը կըզկըթի մնակը: Բայց թեզըմ հավաքե կը իրան, կըսե՝ վաշի իմպերատորսկի վելիչեստվո, ըսա՛:

- Առաջինն օր՝ իմացեք,- կըսե,- քանի՞ վերս է էրկրեն էրկինքը. էս մեՀ:

Կաթողիկոսը կըսե՝ էտ մեՀ, վաշի իմպերատորսկի վելիչեստվո:

- Երկրորդն օր՝ իմացեք,- կըսե,- ըս ի՞նչ աժեմ: Էս էրկո՛ւ:

Կաթողիկոսը կըսե՝ էտ էրկու. վաշի իմպերատորսկի վելիչեստվո:

- Երրորթն օր՝ իմացե՛ք,- կըսե,- թե ըս ի՞նչ կը մտածեմ: Էս էլ իրեք:

Էտ էլ իրեք. վաշի իմպերատորսկի վելիչեստվո,- կըսե կաթողիկոսը:

Պյոտրը, որ Պետրոս կըսվի, էս հարցերը կուտակը ու կըսե.

- Ձեզի իրեք օր սըրոք, պատասխանը տվի՛ք, տվիք, չտվի՛ք բաներդ բուրթ է:

Կըսե, ձիուն դիզգինը կը ծռէ, կերթա իրեն գործին: Էրկօր էտև սալդատըմ, կշտեկուշտ ընկնելեն, չապալամիշ ըլլելեն դեմուդեմ ըռաստ քուքա էտ մանաստիրին: Իրենե վորը Քրիստոս կը փսփսար, էման օր դարտակ էր: Տեսնիկը, օր մանաստիրին դռանը առաչը վարքապետնին ու կաթողիկոսը նստել են, ճըտերը ծռել ու ցածր ձենով խորաթա կենեն: Հարցընեկը, կըսե.

- Ի՞նչ կըլլի, մե կտորըմ հաց տաք ուտեմ, անոթի մեռնիմ կը:

- Դարդերըս մեզի հերիք չէր,- իրար կայեն ու կըսեն վարքապետնին,- էս էլ էկել հաց գուզե:

- Դարդերդ ի՞նչ է,- հարցընե կը սալդատը:

- Էտիկ քու բանըդ չէ, այ տղա,- կըսեն,- գործիդ քընա:

- Մե կտորըմ հաց տվեք, էտեա դարդերդ ըսեք, ես դարման կենեմ,- թարքըրեկը իր հարցը սալդատը:

- Ծո՛, անոթի սալդատ, դու ի՞նչ ես օր քու դարման էրածդ ինչ ըլլի,- կըսեն վարթապետնին:

Սալդատը թըթընկի կը օրա, կաթողիկոսը կըսե.

- Տարեք իտոր մե լավըմ կըշտացուցեք, աշենք՝ ի՞նչ պիտի էնե:

Տանին կըշտասնեն կը օրա, սալդատը կըսե՝ դե դարդերդ ըսեք:

Ամեն ինչ պատմեն, կըսեն հերթով, Պյոտր Վելիքիին թըրած պայմանը կըսեն ու կաշեն, թե սալդատը ՝ ի՞նչ պիտի ըսե ու էնե:

- Ա՛յ, ձեր տունը շինվի,- կըսե սալդատը,- եսե գիտեմ հարց է տվե, դուքե դարդլամիշ կըլլիք: Դուք ինձի էսօր ու էքվան պայեցեք, կերուխումըս տեղն ըլլի, մեմե մե ձեռքըմ վարթապետի շոր կարեցեք ինձի համար, ես էնոր էման պատասխան տամ, օր թափփան ֆռասնեմ:

Ամեն ինչ կենեն ուզածին պես, մեմե կաշեն օր պայմանի ժամին Պյոտրը ձին նստած էկավ ու.

- Հա՜յ, հա՜յ,- ըսավ,- հարցերուս պատասխանը:

Էս մեր վարթապետը առաչ էկավ, մե մեծ կըծիկըմ թել հանեց թևին տըկեն ու պատասխան տվեց առաջին հարցին.

- Վաշի իմպերատորսկի վելիչեստվո, քընացի ես անձամբ չափեցի, էրկընքեն իչել եմ քիչըմ առաչ, այսի կըծիկին ճիշտ էրկու չափը էղավ: Ճամփի ուղիղ կեսին թելը կլոր բանի դեմ առավ, կըտռավ: Կամ մարթ ուղարկե վերեն թելին կեսը փերեն չափենք, կամ էլ ինքդ բարձրացի, օր աշկովդ տեսնիս, հավատաս:

- Սուտ կը խոսիս,- ըսավ Պյոտր Վելիքին,- շա՛տ կըլլի:

- Ըշտը էտոր համարե գուզեմ, օր ինքդ էլլես աշկովդ տեսնիս, վաշի իմպերատորսկի վելիչեստվո:

Պյոտր Վելիքին էլ բան չըկրցավ ըսե: Պահանջեց երկրորդ հարցի պատասխանը:

- Մեր Քրիստոսը, օր էրկընքի ու էրկըրի թաքվորն էր, մենք քառասուն մանեթի ծախեցինք: Վաշի իմպերատորսկի վելիչեստվո, դուք էսօր մեր էրկրի թաքավորն եք, էնորեն ցած եք, էտոր համար դունա արժես համարյա էռսընըլինը մանեթ:

Պյոտր Վելիքին էստեղե ըսելու բան չունեցավ: Բայց անհամբեր էր, ըսավ՝ հրբը հիմի ես ի՞նչ կը մտածեմ:

- Հենց հիմի,- վաշե իմպերատորսկի վելիչեստվո, մտածես կը, թը,- էս ի՞նչ վարթապետ է, օր իմ հարցերուն պատասխան կուտա: Հըմը ես վարթապետ չեմ, սալդատ եմ. ըսելն ու շորերը հանելը մեկ կենե:

ԿԱՇԱՌՎԱԾ ՏԵՐՏԵՐԸ

Թուրքին սուլթանն ու հայոց կաթողիկոսը կրոններուն վրա վեճ կունենան էղե: Սուլթանը կըսե թը.

- Դու ձեր կրոնով շատ մի պարզենա: Գուզե՞ս, օր ես ձեր ամենահավատավոր կրոնավորին կաշառք տամ, կրոնն ուրանա:

- Ըլլելու բան չէ,- կըսե հայ հավատքի առաջնորդը, չունքի մեր կրոնը աշխըրիս հիմք ու սուրփ կրոնն է, ճըշմարտորեն էնոր նվիրյալ հավատացյալը չի կաշառվի ու կրոնը չի ուրանա:

Բաս կը բռնեն ու կը բաժնըվին: Սուլթանն էր, կանչե կը ձիապանին ու կըսե.

- Աշխըրի ամենալավ ձին կը թիմրես, կը զարթըրես, օսկուն մեչ կը կորցընես:

Ձիապանը ամենալավ ձին կը թիմրե, սուլթանի հրամանով օսկերիչը էս ձիուն իյարը, ղանթարման, շորը, սաղ սարքերը օսկու մեչ փառլամիշ կենե, կորցընեկը: Քանի մը օրեն էտև օսկու մեչ կորած էս ձին կփերեն սուլթանին: Սուլթանը էտ ձին կուտա մե թուրքիմ ու կըսե.

- Հային զատկին օրը կը տանիս ժամին դուռը, բիտտուն հավատացյալներուն կըսես. «Վեվ օր հայի իր հավատը փոխե, այսի ձին իր ոսկի սարքովկարքով փեշքեշ ըլլի իրեն»:

Թուրքը էտմանա կենե: Ժամին դուռը կայնիկը ու սուլթանին ըսածը կըսե: Եվ ժամանակ օր բիտտունը ալ ու խաշխաշ հաքած-կապած սուրփ ժամ քուքան, էս թուրքը էտ առաջարկով պաղ ջուրը լըսնե կը գլխըներուն: Վե՞վ է խելըռե, օր հայի իր լուս կրոնը ձիում հետ փոխե: Թքնեն կը, մրեն կը ու գլխնին ծռած թուրքեն հեռենան կը: Թուրքը կայնի կը, դիորի վերչին մարթը դուս քա: Վերչին մարթը տերտերն է էղե: Էսիկ օր սուլթանին ըսածը տերտերին թուրքերեն կըսե, տերտերը ֆարաջեն կը հանե ու ձին կը հեզնի, ժամին բանլիքը կուտա ժամկոչին ու հա՛յդա բալամ, սուլթանի քովը: Սուլթանը շատ կուրախանա ու կը կանչե կաթողիկոսին:

- Տեսա՞ր,- ըսավ,- ձեր ամենաթունդ հավատացյալը հավատը փոխեց՝ մի ձիով կաշառքվելով:

Կաթողիկոսը շատ ցավավ ու զարմացավ: Վեճն օր տաքցավ, ըսավ.

- Չի կըրնա ըլլիլ, օր իսկական հայ մարթը հավատը ձիուն հետ փոխե: Էստեղ մե հարամ բանըմ կա, օր պետք է գտնինք: Ասաց ու կանչեց տասվերկու վարթապետ ու եպիսկոպոս, առաչ փերեց մեռել սաղցընող կարթունքնին, սուլթանին հետ քընացին էտ կաշառքված տերտերին մորը գերեզմընին քովը կայնան: Տասվերկու հոգով էտ կարթունքն էրին, պըրծան օրա, մեմե աշեցին օր հողը երերաց ու բացվավ, տիրամերը էրևաց ու աչքերը բացեց, զարթավ:

- Ո՜վ, դու տիրամեր,- ըսին,- էկել ենք օտքըդ, շիտակը պիտի ըսես. իտի տերտեր էղած տղեդ ումե՞ն է էղե:

Տիրամերը գլուխը վերուց, ըսաց.

- Մենք օր կապրեինք Արզրում, քաղքի փաշեն զոռով ինձի հետ էղավ. տերտեր էղած մանչըս էտ անհավատ շընեն ծնվավ:

Ինչքան օր կաթողիկոսն ուրախացավ, էտքանա սուլթանը տխրավ:

- Դե, իմացիր,- ըսավ հայոց հին հավատքի զորավորը,- չէ թե հայ քահանան, այլ թուրքը կաշառքվեցավ:

ՄԵԿ ՕՐԸ ՏԱՍԸ ՏԱՐԻ

Մարթու մեկ բոռեր, թը՝ Աստված մե օր կըյնա շինե տասը տարի, տասը տարին՝ մե օրըմ: Անկարծ մե յավուդի լսեց ձենը, կանչեց ուր քովն, ըսեց.

- Ա՛յ տղա, էտ ի՞նչ կը զրուցիս:

Մարթը նորեն կըրկընեց ասածը, թը՝ Աստված մե օրը կըյնա շինե տասը տարի, տասը տարին կըյնա շինե մե օրմի: Յավուդին չհամփերեց, շափալաղմի քաշեց էրեսին ու ըսեց.

- Գնա՛, շան որթի, էտմալ բան չէ՛ղնի:

Էտ մարթը թողեց հեռացավ: Յավուդին խանթի դուռը փակեց, գնաց տունը, կընկան ըսեց.

- Կընիկ, սամավարը քցե, հաց պատրաստե, հարի ես ծով լողկնամ իգամ: Ու յավուդին գնաց լողկնալու, հանեց շորեր, դրեց ծովու պըռունկ, ինք մըտավ ծովն, սկսեց լողկնալ: Մեկ լը տեսավ՝ դառցել է օղլուշաղ: Էլավ դուս, օր հալվընները հագներ, տեսավ էտտեղ հալվըներ չկան: Ամչըցավ, դառցավ մտավ ծովը: Տեսավ օր էնտեղեն քուրթ չոբանը օխչար բերեց ջրին: Չոբանն

տեսավ ջրի մեջ մե օղլուշաղըմ կա շվար մանցուկ: Քիչմ էլ սպասես, սպասեց ու ըսեց.

- Կընիկմարթ, օրի՞ իս մանցի ջրի մեջ, օրի՞ դուրս չըսի գաս:

Պատասխանեց, թը՝ շոր չունիմ, կամչընամ:

Քուրթը թալեց վրայու կալաբը, ըսեց՝ իտա առ վրեդի, արի դուրս: Օղլուշաղը էլավ դուրս, կուլաբն առավ իրա վրեն: Քուրթն փաթթըվավ օղլուշաղին, տարավ ուր տուն, էրեց կընիկ: Էտ կընիկն յոթ տարի քըրթին կնկություն էրեց, ունեցավ էրկու հատ տղա: Մեկը էղավ հինգ տարեկան, մեկել լը՝ իրեք: Օրմը լը կնիկն առավ իրա էրկու տղեկտիքն, գնաց ծովն լողկնալու: Հալվընին հանեցին, դրեցին ծովու պռունկն ու իրեքն էլ մտան ծովը՝ լողկցան: Քչումի լողկցան, կնիկ տեսավ օր տղեկտիք չկան: Մեկ լը տեսավ, օր ինքն էղեր է տղամարթ: Էլավ դուրս, տեսավ օր յոթն տարի առաչվա շորերը իրան տեղը դրած է: Վերուց հագավ, գնաց դեմի խանութ, բացեց խանթի դուռ, տեսավ՝ ապրանքնին իմալ օր կար, հըմալ լը կը մներ: Փակեց խանթի դուռ, գնաց տուն: Կնիկ նեղացավ.

- Տնաշենի մարթ, օրի՞ անկըցար. իդա լը իրեք անգամ է թաժացում սամավարն:

Յավուդին ըսեց. «Լողկցանք, պապիրոս քաշեցինք, քըչում լը խորաթա էրինք, անկըցա»: Նստավ հաց կերավ, չայ խմեց, էլավ դուրս: Էտ տըղեն գենա կըբռեր, թե Աստված մե օր կըյնա շինե տաս տարի, տաս տարին՝ մե օր: Յավուդին ձեռքով էրեց, թե՝ օղուլ, արի՛, արի՛:

Տղեն էկավ քովն: Յավուդին հանեց հարուր մանեթ տվեց, ըսեց.

- Օղորթ ը, տղաս, օղորթ ը, օր Աստված մե օրը կշինե տաս տարի, տաս տարին լը՝ մե օրմի: Տղեն լը ըսեց.

- Մինչև օր քրթի ծոց չպառկար, չհավատացիր:

ՏՈՒՆ ՇԻՆՈՂ ՏՂԵՔԸ

Թաքավորն ուներ իրեք հատ տղա: Օրմի թաքավոր կը կանչի տղեքտոցն, շատ փարա կիտա էնոնց, կըսե.

- Գացեք, ձըզի համար տուն շինեք:

Մենձ տղեն փարեն կառնե կելլա Աբուլու սար, տուն կը շինե: Օրթանջ ախպերն գեղի քանար տուն կը շինե: Պզտի ախպեր լե փարեն կառնե, կերթա մե մենձ քաղաքըմի, հոնի ընկերտանք կը ճարե: Եվ օր տարին կը թմմի,

պապ կը կանչե ուր տղեկտոցն, կըսե.

- Արեք էրթանք ձեր տըներն իշինք:

Առաջ կերթան մենձ տղի տուն, տեսնան ի՞նչ, աղվըզներ մեջն չուռ կիտան: Էտև կիգան օրթանջա ախպոր տուն, տեսնան ի՞նչ, գեղի քանարն, էրկու հարկանի, վրեն լը գրիշով տուն էր շինե: Էտև կերթան պզտի ախպոր տուն. մեկ լը էնթու թարաֆեն, մեկ լը էսթու թարաֆեն ընկեր տղեք կը թափին, կիգան, պապուն քաշին էսթուն-էնթուն, տանին կը տուն: Կուտին-կխմին, կելլան կիգան:

Պապն կըսե՝ տղեք, արեք, բան պիտի ըսիմ:

- Խոյ փարեն չտվի՞, թե գացեք էտմըլ տուն շինեք սարերուն գլխուն, օր աղվըզներն չուռ տան մեչն: Ես տվեցի, օր էրթաք ընկեր տղեք ճարեք, ամմեն տեղ տուն մի ունենաք, իմալ օր ձեր պըզտի ախպերն:

ԱՌԱՆՑ ԲԱԽՏԻ ԲՐԴՈՒՃ ՉԵՍ ՈՒՏԻ

Թաքավորն ու իմաստունը արտերուն մեչը տեսսան օր գեղացիք թոփ են էղե, կաշեն ու իրար հարցընեն կը.

- Ախպա՛ր, ի՞նչըղ օր իսի քալլեստանը իրար գլոխ կուտան:

Թաքավորն աշեց իմաստունին էրեսը. ուզեցավ, օր էտ հարցի պատասխանը տա: Իմաստունը գլխու ընկավ ու ըսավ.

- Գլոխ տալը էնոր համար է, օր էտոնք ղըսմաթ պիտի ըլլենան թաքավորին ու լալային:

Արտին տերը իմաստունին խոսքը իմացավ, էկավ, գլոխ տվող քալեստանը թոփ էրավ, մե դաստեմ էրավ, տարավ տուն ու կընկանը ըսավ ու հատուկ զգուշացուց.

- Կընիկ, այսի դաստեն կպայես առիքը, օր մնա մինչի ձմեռը, էտիկ պիտի ուտենք մե զուլում թիփի օրըմ, օր հեչ մե մարթըմ չերևա: Տեսնիմ, թե թաքավորին ու լալային ի՞նչըղ պիտի ղըսմաթ ըլլենա:

Ձմեռն էկավ. մե օրըմ էման թիփի բռնեց, օր Աստված հետ ու հեռու էնե, դուս էլլել չէր ըլլի:

- Կընիկ,- ըսավ մարթը,- էսօրվընեն լավ օրը չկա. իտի ցորենը խաշիլ էրա, ուտենք:

Կընիկը քալլեստանը խըրշեց, էրկընքով քաշեց ու խաշիլն էփեց, օր պիտի ուտեին: Թը՛խկ, թը՛խկ մեմե դուռը զարկին: Գեղացին դուռը բացեց ու

ի՞նչ (ում) տեսավ. թաքավորն ու լալան:

- Մեզի միսավիր չե՞ս ընթունե,- ըսին էս մեծամեծ հյուրերը:

- Միսավիրը Աստծունն է,- զարմացած, ուրախացած ըսավ գեղացին ու առաջնորդեց նրանց լավ օդան:

Ըշտը էտ խաշիլն օր կուտեին, գեղացու զարմանքը հըլը չէր անցել ու ինքն էլ, մե քիչըմ իմաստուն դարձած, ըսավ. «Եթե ղորթ է, օր առանց բախտի բրդուճ չես ուտի, իմաստուն ըլլիլը շատ զորավոր ղորթ է»:

Թաքավորն ու լալեն գովեցին գյուղացու միտքը, առանց խորը իմանալու անցուդարձ էղածը:

ՕԽՏՆ ԱԽՊՈՐ ԱՌԱԿԸ

Օխտն ախպեր կըլլին, կունենան մե հին, փթած գոմըմ: Գոմի առիքի փետերուն մեչը մե հավքըմ բուն թըրած, ձաքեր է հանած էղե: Ախպըրտիքը միշտ մտածեն կը էղե, թե գոմը պետք է քանդեն, մե թազա գոմըմ շինեն: Էտ խորուրթը անգած էնելով՝ հավքը թըռչի կը Աստծուն քովը, գանգատ կենե, թե՝ Տեր, չես ըսե, այսման-այսման բան: Ձաքերըս անթև, անօքնական, պիտի էրթան, կորին: Աստված կըսե.

- Քընա ու հանգիստ էղի, ախպըրտիքը գոմը չեն քակե:

Հավքը քուքա տուն, հըմը խելքը, միտքը էլի ախպըրտոց վրեն է: Մի իրիկունըմ էլի կիմանա, օր կըսեն.

- Ախպա՛ր, էկեք քակենք, գոմը փթել, հայ-հայը քընացել, վայ-վայն է մնացել: Մե քանիսը կըսեն՝ քակենք, մե քանիսը ձեն չեն հանե, հըմը խեղճ հավքին սիրտը փորին մեչ թպըրտակը: Լուսը բացվելուն պես էլի ճվճվալով կըյնի ճամփա, հասնի կը Աստծուն:

- Հըպը չես ըսե, ախպըրտիքը էլի խորուրթ էրին, օր գոմը քակեն, բունըս ավըրեն:

- Քընա,- հանգըստասնե կը Տերը,- հանքիստ մնա, ախպըրտիքը գոմը չեն քանդե:

Կանցնի էլի մե քանիմ ժամանակ, հավքի ձաքերը կարքին ոտ ու ձեռք կառնեն: Մի իրիկունըմա օխտն ախպերը էլի խոսք կը բանան գոմի մասին ու, էրկան-բարակ խոսելեն էտև, մեկը կըսե.

- Ախպա՛ր, ի՞նչ տեսակ մարթ ենք. կըսենք, կըսենք, բանըմ չենք էնե: Էկեք էս անքամ յաԱստված ըսենք ու քակենք:

Բաց աշկով դիորի լուսացուց, հավքին դողդողացող սիրտը փորեն փախավ, իրեննա իրեն հասսավ: Մութուլուսին հասսավ Աստծուն ու ըսավ.

- Տեր իմ, ախպըրտիքը ըսին՝ արիք էս անքամ յա՜ Աստվա՛ծ ըսենք, էլլենք գոմը քանդենք:

- Է՛, հիմի իմացի,- ըսավ Տերը,- ախպըրտիքը գոմը կը քակեն: Դե քնա, ուժ տուր ձաքերուդ, թող բնեն թռչին:

Հավքն էկավ, ձաքերուն մայրավարի խափխըփելով, երգելով դուս կանչեց, ամենքին մե քացիմ տվեց, հրեց ցած ու մե քարեմ էսոնք ճըվճըվալով թռան: Հըմը էտ վախտնա ախպըրտիքը էլան, գոմը ըսկըսեցին քակելը:

ԼՈՐԵՐՆ ՈՒ ԾՈՒՅԼ ՀՆՁՎՈՐԸ

Մարթը կերթա իր հեռվում գտնվող արտը պըտըտելու, տեսնիկը օր արտը հասսել է, կըսե.

- Էրթամ մերոնց տղոցը ըսեմ, թող քան քաղեն: Դու մի՛սե, արտի մեչը լորը ձաք էր հանե: Ձաքերը կիմանան էտ մարթուն ըսածը: Իրիկունը մարն օր քուքա կը, իմաց կուտան, կըսեն.

- Մարի,՛տղեքը էքվան պիտի քան, օր արտը քաղեն, արիք թոմառի իստից շուտըմ էրթանք:

Մարը կըսե՝ վո՞վ ըսաց: Կըսեն ըշտը արտին տերն ըսաց, օր արտըս հասել է, էրթամ տղոցը ըսեմ, քան քաղեն: Արտը էքվան չի քաղվի, կըսե մերը, արխեյին կեցիք:

Մեկալ օրը արտին տերը կերթակը օր, նա՛ քաղող կա, նայա՛ շելլիկ կա: Էտոնք, ուրեմն՝ ինձի խափեցին, չեկան, մտածե կը մարթը, էրթամ կընկարանցըս ըսեմ, քան քաղեն:

Իրիկունը լորն օր քուքա, ձաքերը նորեն կըսեն.

- Մարի՛, արտին տերը էլի էկավ, ըսավ՝ էրթամ կընկարանցըս ըսեմ, քան քաղեն:

- Հանքիստ կեցիք, արտը չի քաղվի,- կըսե մարը:

Մեկալ օրը արտին տերը էլի՛ քուքա. ծո՛ կըսե, էնոնքա չեկան: Էրթամ աներանցըս ըսեմ, քան քաղեն:

Լորը քուքա օրա, ձաքերը վախեցած կըսեն, թե էքվան աներանքը պիտի քան օր արտը քաղեն: Լավն էն է, շուտ էրթանք իստից:

- Արտը չի քաղվի,- կըսե մարը,- մի՛ք վախենա:

Վրա չորսին արտին տերը մեմա օր քուքա տեսնի կը, օր քաղած չէ, գլուխը տարուբերելով կըսե.

- Է՛, ջանըմ, էլ իլլըջ չկա, էքվան գերընդին ումուզիս առնեմ, քամ քաղեմ:

Լոր մայրիկը, օր քուքա, հասնիկը իր բունը, կուրախանա արթըղ, օր ձաքուկները խաղաղվել են, էլ վախեցած չեն, էս անգամը բայց ինքը կհետաքըրքրվի, թե՝ հիմա արտը քաղելու ո՞ւմ հերթն է: Ձաքերեն մեկը կըսե, ըշտը, արտին տերն էկավ, աշեց չքաղած արտին ու ըսավ.

- Էսոր-էնոր ըսելեն իլլաջ չկա, արտըս ձեռքե էլավ, էքվան քամ, քաղեմ:

- Է՛,- ըսավ լոր մայրիկը,- ա՛յ հիմի թոփ էղիք, էրթանք ուրուշ տեղ. արթըղ հիմի իսկական քուքա քաղելու: Ձաքերուն առավ ու տեղափոխվավ ապահով տեղըմ:

Սապախտան, լուսումութին արտին տերը քուքա ու կը քաղե արտը:

ՏԵՐՏԵՐԻՆ ՀԱՐՄՆԻՔԸ

Ձալոըճեստանը չալոի էնելու են քընացե, ետ են դառցե օր տուն էրթան: Գեղը հեռու է էղե. մութն օր կըյնի, գեղեն դուս կելլեն, մե մարաքըմ կը մտնին, օր լուսանա, էրթան: Մտնին կը մարաքը, խոտին վրեն պառկին կը: Մեմա տեսնին կը օր հարսըմ ու տերտերըմ մտնին կը նես: Մտնին կը, մոմը կվառեն, բան-ման են փերե, կուզեն օր ուտեն խմեն, է, բաներուն աշեն: Խոսակցութուն էրած տեղը տերտերը հարսին կըսե.

- Ախչի՛, պատմե, իմանամ հըլը՝ ախըր դու ինձի վե՞րտեղ հավնար, օր էտքան սերդ ցըգել ես վրես:

- Ես քեզի էն վախտը հավնա,- կըսե հարսը,- օր զատկին իրիկունը հաքել էիր պատարոց ղըլըղը, փուռվարն օր փերիր կընիկմարթոց մեչ, ծխեցիր, էկար իմ առչնես օր անցար, իմ խելքըս գլխես քնաց:

- Տերտեր ջան, հըպը դու ինձի ե՞փ հավնար,- հարցընե կը հարսը:

- Ինի ծուռճիտ դըրկըցին նշանտվեքը մի՞տքդ է, օր ես էնտեղ էի,- կըսե տերտերը,- թաք պար օր խաղցուցին քեզի. դու օր բաշլայեցիր շորոր խաղալը, ես էն վախտը վրեդ սիրահարվա:

- Տերտեր,- կըսե հարսը,- հըլը մեմ ել, իտի կեմը նորեն առ, փուռվար դեյնա ծխե, աշեմ էլի էն սերը վրաս քուքա՞:

Տերտերը կեմը կառնե, ծերը կը հանգուստե ու կըսկըսե ծխելը: Ձալոըճիքա սեյր կենեն:

- Հա՛,- կարմրելով կըսե ամոթխած հարսը,- տերտեր ջան կըսես թե էն սահաթն է:

- Է՛, ել հըլը դունա մե շորորըմ խաղա,- կըսե տերտերը,- տեսնիմ ի՞նչ կըլ-լի: Տեսնիմ իմ սիրտըսա քուկիդ պես տեղեն թըռնի՞ կը նորեն, թե՞ պաղել, քարացել է արթեն:

Հարսը վերցընե կը թևերը, կըսկըսե կը շորորալը: Էնտիյեն չալղըճիք կըս-կըսեն չալելը: Կաշեն օր սուտ հարսնիքը ղորթ էղավ: Տերտերը արթըղ իրան չի կորցընե, կըսե.

- Հարս, ես Աստծուն զորավոր կերպով աղոթեցի, իսի չալղըճին Աստված ճամփեց, խաղա, մի ամընչե:

Քեֆը կենեն պրծնին կը օրա, կելլեն էրթըլու: Զուռնաճին կըսե.

- Տերտեր, շաբաշ չըտա՞ս պիտի:

- Ծո ի՞նչ շաբաշ,- կըսե անակնկալի էկած տերտերը:

- Հըպը հարսնիքըդ օր չալեցինք:

- Հա՛, որթի, տամ պիտի: Ու քանիմ մանեթ կուտա:

Տերտերը ժամ կը մտնի քիմնա, չալղըճին կերթա հարսին քովը, դուս կը կանչե, կըսե.

- Հարս խանո՛ւմ, ինի քանիմ մանեթը չըտա՞ս պիտի:

- Ի՞նչ մանեթ,- զարմանա կը հարսը:

- Գիշերն օր հարսնիքըդ չալեցի. մտքեդ էլե՞լ է:

- Ա՛ռ ախպար ջան,- կըսե հարսը,- առ ուսուլ խոսե:

ՏԵՐՏԵՐՆ ՈՒ ՄՇԱԿԸ

Տերտերին մեկը մե մշակըմ է ունեցե, օխտը տարի դաղեցուցել է, հախ չի տվե: Էս մշակը մե օրըմ կելլե կերթա ժամ, տերտերը հըլը նես չըմտած, մե տեղըմ պայ կը մտնի: Եփ օր տերտերը քուքա ժամ, բաշլայե կը աղոթելն ու կըսե.

- Տե՛ր, օղորմյա զիս, չարե, փորցանքե ազատե՛,- հըմը էտ վախտը մշակը պայ մտած տեղեն կըսե.

- Չե՛մ օղորմե, չե՛մ օղորմե:

Հանկարծակիի էկած ու վախեցած՝ տերտերը հարցընե կը, թը.

- Տեր, ինչի՞ չես օղորմե:

- Էնոր համար չեմ օղորմե,- կըզգուշացնե Տերը,- օր դու մշակ կը պայես, հախը չես տա:

Տերտերը շաշմի մընա կը, թը էս մեր Տերը ուրդից գիտե ամմեն բան: Արթը մեմե օր կը խընթրե Տիրոչեն, Տերը կըսե.

- Մեղքերուդ թողութուն ըլլելու համար վեղարիդ փեշերը ետ ծալե մեշկիդ վրա, իրար կապե:

Տերտերը Տիրոչը հրամանը կը կատարե: Ու Տերը հրահանգ կենե.

- Դը հիմի գավազանդ վերու, կապե մեշկիդ վրեն, աղոթե, մեղքերուդ թողութուն կուտամ:

Ծունկ կը չոքի, աղոթե կը, Տեր օղորմյա կըսե: Մեմե էտտեցեն մշակը մե գերոնովըմ օր կը զայնե, տերտերին խելքը գլխեցեն կը թռցնե: Խելքը գլխեն թռած վախտն օր կը փախչի, դռնեն անցնելու ժամանակը գավազանին ծերերը դեմ կառնեն դռան սևաներուն: Էս մշակն է՝ տուր թե կուտաս գերոննեերով:

Տերտերը օր շատ կը չարչըրվի, զոռ կուտա, գավազանը կը կոտռե, քթինբեյնին կընկնի քարերուն: Ափալ-թափալ կելլե, վազզե կը տուն: Վազզելու վախտը մե կընիկմ ըռաստ քուքա, հարցընե կը, թը.

- Տերտեր, էսօր ամսու քանի՞սն է:

- Ախպա՛ր,- կըսե,- սրփերն էլել մարթ կը տանջեն, դունա ի՞նչ կը հարցընես:

Մշակը ժամեն քիչըմ էտև դուս քուքա, սուտ բիլմազ կը ձևանա, կերթա նես: Տերտերն օր կը տեսնի մշակին, կըսե.

- Տղա, ես քեզի քանի՞ տարվա հախ պիտի տամ:

- Ի՞նչ հախ, ի՞նչ բան, տերտեր,- կըսե մշակը,- մեր մեչ էտ մասին խոսիլն ամոթ չէ՞:

Չէ, կըսե տերտերը, ըսա քանի՞ տարվա հախ ունիս վրես: Կըսե՝ օխտը տարվա հախ ունիմ, տերտեր:

- Ահա՛ն,- կըսե տերտերը,- օղուլ, առ ութը տարվա հախ, մեննակ թե տնես քընա, պրծնիմ:

Մշակը հախը կառնե ու կերթա կը:

ԳԱՓՐԵԼ ՀՐԵՇՏԱԿՆ ՈՒ ԳԵՂԱՑԻՆ

Գափրել հրեշտակը կերթա գեղացու քովը, կըսե.

- Ինչ օր ապռար, հերիք է. հոքիդ տուր, էրթամ:

- Սուրփ հրիշտակ,- կըսե գեղացին,- կեցի մեմ աղոթքըս էնեմ, պըրծնիմ, նոր հոքիս առ, քընա:

Գեղացին աղոթքեն էրկու բառ կըսե ու կայնիկը: Շատ կը մնա, կաշե կը օր էսիկ աղոթքը չի ըսե, Գափրել հրիշտակը կելլե, կերթա կը: Հըմը թամբեյ կենե, թը էքսի օրը քուքամ օրա, աղոթքըդ կըսես կը պրծնիս, օր հոքիդ տանիմ: Էքսի օրը քուքա, կըսե.

- Աղոթքըդ ըսիր պրծա՞ր:

Գեղացին շատ հանգիստ կըսե՝ հըլը չեմ պրծե: Գափրել հրիշտակը արթըղ նորեն կըսե.

- Ա՛յ մարթ, դու ե՞փ պիտի քու աղոթքըդ պրծնիս. ես կըշտապիմ, ուրուշ տեղա պիտի էրթամ:

Մարթը էլի շատ հանքիստ կըսե.

- Կամքը իմըս չէ՞, եփ օր ուզեմ, էնչաղնե կըսեմ, կը պրծնիմ:

Էսմանութենով շատ տարիներ կանսնին, գեղացին աղոթքը չի ըսե ու էտմանա հըլը կապռի կը: Հրիշտակին հոքուն օր շատ կը հասնի, կերթա էտ գեղացուն գեղը, կաշե կը օր էտ գեղացին արխեին պտըտտիկը: Հրիշտակը էտտեղ դառնա կը մե պզտի աշակերտըմ ու լալով գեղացուն առաչը քուքա: Գեղացին հարցընե կը, թը.

- Ինչի՞ կուլաս, ծո մա՛նչ, ի՞նչ է էղե:

Աշակերտը, լացը խորացնելով, կըսե.

- Ի՞նչըդ չըլամ, տուն կերթամ հերըս կը ծեծե, ուսումնարան կերթամ՝ վարժապետս կը ծեծե:

Գյուղացին նորեն կը հարցընե, թը՝ ինչի՞ կը ծեծեն:

- Աղոթքըս չիտեմ,- կըսե էրեխեն, մոռացել եմ,- էտոր համար կըծեծեն:

- Է՛, լավ, մի՛լա,- կըսե բարեհոգի գեղացին,- արի ես սորվեսնեմ, քընա ըսե, թող չը ծեծեն:

Արթըղ գեղացին օր աղոթքը գլխե-գլոխ կըսե, պըրծընիկը օրա, աշակերտը հարցընե կը՝ պըրծար: Մարթնա, ըշտը, հպարտ-հպարտ կըսե օր՝ պըրծա՛, հըպը չըպըրծա՞: Դե օր պրծար, արի մեմ հոքիդ տուր,- կըսե արդեն հրիշտակի փոխված աշակերտը,- օր ես էրթամ իմ գործին: Ես քեզի պես օյալամիշ ըլլելու շատ ժամանակ չունիմ,- կըսե,- դեմ ընկած գեղացու հոքին կառնե, կերթա:

ԷՇԻ ԳԵՐԵԶՄԱՆԸ՝ ՍՐԲԱՎԱՅՐ

Մե աղքատ մարթըմ կըլլի, կելլե, կերթա օտարութուն, հըմը ո՛րթուն կերթա, գործը չի աչողվի: Շատ օր կըյնի, կելլե, բան դուս չի քա, վրայեն-գլխեն

շիաները պոկրոռթե կը, մե հինգ, տասսը մանեթ իճրթ կենե, մե թեթև էշրմ կառնե, օր չարչութեն էնե: Հրմը վրան իլլրջ չկա. կրյնի մուրացկութան: Գեղոցգեղ էրթրցած վախտը էշը ճամփուն օրթան կրյնի սատկի կը:

- Ծո՛,- կրսե իրեն-իրեն,- էս ի՞նչ ձախորթութուն է, օր ինձի փատտել է. մե էշրմ ունեի, էնա սատկավ: Կերթա մե բայրմ ձեռք կը ցրգե, փերե կը օր փորե, էշը թաղե: Էրթող-քալողը կը հարցրնե՝ ախպա՛ր, ի՞նչ կը փորես:

- Հեչ,- կրսե,- էրած եմ տեսսե, իստեղ սուրբ կը հանեմ:

- Եվ օր էրած ես տեսսե, Աստված մուրազրդ կատարե,- կրսեն անցուդարձողները ու մե քանիմ մանեթ կուտան, կանսնին կերթան:

Էս մարթը տեսնի կը օր սրբին անունը իմացան, իրեն փարա տվին: Իրեն-իրեն մտածե կը, կրսե՝ էսիկ լավ էղավ: Արթրղ էշը կը թաղե, կրյնի խարապանուն միչենա մե խաչքարրմ կը գտնի, փերեկը ու էշին վրեն տրնկե կը:

Էտ վախը չորս բոլորը այտնի է էղե, օր այսինչ տեղը մեկրմ էրծել, սուրբ է հանե: Քուքան, ըշտը, տեսնին կը օր, հա՛, հաստատ օր սուրբ է, ինքնա սրրբին առաչը չոքե, ուխտ կենե:

Ջենը կը մեծնա.

- Այսինչ տեղը թաժժա սուրբ է էլե,- կրսեն ու քուքան, կրսեն ու քուքան: Քուքան մոմ կը վառեն, խունկ կը ծխեն, մատաղ կենեն, փարա կը բաշխեն էս մարթուն:

- Ծո՛, կրսե, Իշալլա՜, Մաշալլա՜, էս նեղութենեն պրծա: Քանի կերթա, շելլիկը ճողե՛ կը էրթուքալը: Յայրնվորը քուքա, ձիավորը քուքա, սելավորը քուքա. քուքա՜ն, քուքա՜ն ու քուքա՜ն...

Արթրղ էս մարթը լավրմ հարրստնա կը ու դառնա կը իրեն էրկիրը:

ՎԵՂԱՐԸ ԻՐՈՒՆ ԳԼԽՈՒՆ

Վարթապետը վանքին աղոնը կը տանի ջաղասկը, օր աղա: Տանի կը գեղ, վար կառնե, ցորենը լրլե կը քարին, կաղա: Ջաղչրպանը կրսե.

- Հայր սուրփ, գեղը էսօր հարսնիք կա, արի էրթանք, քիչրմ պտտինք, ալուրնա կիշնի, քուքանք վեր կը հանենք: Դուռը կը կողպեն ու կերթան հարսնետուն: Կիմանան օր քալողը վարթապետ է, գեղացիք կանչեն կը վեր, նրստեսնեն կը ըստոլին գլխուն, պատիվ կուտան: Փերեն ամմենը մե բաժակրմ կուտա, կրսե.

- Էս մեկը խմե խաթերրս համար...Էս մեկն էլ իմ խաթեր համար... Խեղճ

մարթը սաղ հարսնևորներուն խաթեր համար մեկ-մեկ բաժակ կը խըմե: Խմեկը ու հարփի կը. էսթուն կըյնի, էնթուն կըյնի, ինչեր էնելնա լավ միտքը չէ, մեմե բիրտան միտքը կըյնի, օր ինքը ալուր ունի, էշ ունի: Ուշուրեկ խելքը գլոխը կը ժողվե, կերթա ջաղասկը: Կերթա օր ջաղչըպանը ալուրը վեր է հանե, սարքել-սուրքել է, բառնա կը իշուն: Վարթապետնա հեզնիկը իշուն, ճամփա կըյնի օր էրթա վանքը: Ջրեն անցած վախտը էշը ջուր կը խմե: Օր կը պրծնի, վարթապետը կըսե.

- Էշ ջան, մե քիչմա խմե, իմ խաթերըս համարա խմե:

Իշուն հեչ պետքը չէ, չի խմե: Իրան ծարավ ըլլիլն ու իշուն անտարբեր գտնըվիլը տերտերին փերե կը էն մտքին, օր ինքը էնքանա խաթըր չունի իշուն քով: Բայց գլխուն ցավը ուրուշ մե բանմա կը հուշե տերտերին.

- Ծո՛,- կըսե,- էս էշըս ինձեն խելացի է. ես էսքըղըր մարթոց խաթեր համար խմեցի, ձունը հալիս տվի, հըմը ես իրան տերն եմ, իմ խաթերս պուտմա չի խմե: Եվ օր էտման է, հարկ է օր խոստովանիմ՝ էս վեղարը իշուս է արժանի, ոչ թե ինձ:

Իրեն գլխեն վեղարը վար կառնե, կանցընե իշուն գլոխը: Վանքին օր մոտենա կը, էպիսկոպոսն ու վարթապետնին առաչ քուքան, կըսեն.

- Ծո՛, էս ի՞նչ ես էրե. վեղարըդ ինչո՞ւ ես իշուն գլոխը թրե:

- Էնոր համար օր,- կըսե իմաստնացած տերտերը,- էշը ինձեն խելացի է: Ու կը պատմե գլխուն էկած-անցածը:

ՁԱՆԳԻՆԸ

Զանգին մարթըմ է էղե, մշակ է բռնե, օր փառթուկը կապե, էրթա սոխըխները, չեփլեստանը պտտի, հացի մանռուքները ժողվե, փերե, օր ինքը իտոնք ուտե, մեղքերը քավե:

Մշակն էտմանա կենե: Կերթա օրթըլըղեն հացին մանռուքները թոփ կենե, լըլե կը գոքը: Մեմա կաշե, օր հացին մե կըտորը ընկել է ախբին մեչը:

- Իսիկ տանիմ աղայի՜ս,- կըսե,- ամոթ է, չը տանի՜մ, ախըր մեղք է: Ծատ օր կը մտածե, որոշե կը, օր հացը կեղտի միչեն հանե, փրկե, ինքը ուտե, պրծնի: Հանե կը ու կուտե: Եվ օր քուքա աղին քովը, աղան հարցընե կը, թե.

- Ինչ օր տեսաար, թոփ էրի՞ր:

- Էրի՛,- կըսե:

- Դու իտոնցեն հեչ կերա՞ր,- կը հարցընե:

- Կերա,- կըսե,- աղա ջան:

- Ի՞նչըղ օր կերար:

- Աղա ջան,- կըսե,- մեղքըս ի՞նչըղ պայեմ՝ էսման-էսման: Չուզեցա մունդըռած հացը քեզի փերե, եսա կերա:

- Է՛, դու Ասու առաչ արթար դուս էկար,- կըսե աղան,- իմըս էլի, չըստացվավ, չեղավ:

ՏԵՐՏԵՐԻՆ ԿԱԹՆՈՎ ՀԱՅԸ

Մե տերտերըմ կըլլի, ամմեն օր հաց ուտած տեղը շելլիկը կըսե.

- Վալլա, մեր տերտերը պասը կուտե:

Շատ օր մեխդըրեն կը, տերտերին հոքուն կը հասնի, գեղին մեծերուն թոփ կենե իրեն տունը, կըսե.

- Արիք տեսսիք, ես պասըս կուտեմ, թե չէ:

Հարսներուն ձեն կուտա, կը կանչէ, կըսե.

- Հարսնե՛ր, արի՛ք հացին տաշտը փերեք, հաց շաղվեցեք:

Հարսները կըսկըսեն հաց շաղվելը: Մեկը կը շաղվե, մեկալին կուտա, մեկալը՝ մեկալին: Վերչապես օխտը հարսներնա խմոր կը շաղվեն, կաթը կելլե էրեսը կառնե կը: Էտ մարթիքը մաթ կը մնան ու կըսեն.

- Ա՛յ քեզի բան. հացը կաթ կունենա էղե, մենքա խեղճ տերտերին պաս ուտող կըսենք:

Մարթոցը տերտերը պայե կը, օր էփելն էլ տեսնին: Խմորը կը թթվի, տերտերը իրիցկանը կը կանչե, էփել կուտա: Կաշեն օր հացն էղավ գաթայի պես:

Մարթիքը Մաշալլա՜ կըսեն ու կերթան:

ԺԱՄՆ ՈՒ ՁԱՄԻՆ

Դալի Բարսեղենց գեղին կեսը թուրք է էղե, կեսը՝ հայ: Մե անքամըմ էս Դալի Բարսեղը մե թուրք դըրկըցիմ հետ մոտկամ կըլլի, օրանն ու խոտը իրար հետ կը բերեն: Եվ օր հասնին կը արտը Դալի Բարսեղը կըսե.

- Ճոպանը թողել եմ տունը:

Մոտկամը կըսե՝ քընա փեր, առանց ճոպնի սել բառնալ, փերել չիլլի:

- Հեչ մի՛ վախենա,- կըսե Դալի Բարսեղը,- ես էման մե սելըմ բառնամ, օր հեչ ճոպան չուզե:

Թուրք մոտկամը օրանը վեր կուտա, Դալի Բարսեղնե բառնա կը: Բառնալը պըրծընին կը օրա, էզները կը լծեն: Էս Դալի Բարսեղը կըսե.

- Արի առաչ ես քըշեմ մեր ժամին անընովը, էտև դու քշե ձեր ջամուն անընովը:

- Յա՛ Սուրփ Աստված,- կըսե Դալի Բարսեղը,- յա՛ ժամի զորութեն, տեսնիմ ձեզի, օր առանց ճոպնի սելըս տեղ հասսըսնեք, ու յավաշ-յավաշ սելը տանիկը առաչ:

Եփ օր հասնի կը քարքարոտ ճամփեն, սատանութանը սելը կայնեսնե ու կըսե.

- Տը արի՛, հիմիա դու քշե:

Թուրքը նըստի կը լծին ու՝ յա՛ բալամ ջամու զորութեն, կըսե ու կը քշե: Քշեկը օրա, թաքըռը քարին կելլե ու օրանը սելին վրեցեն կը թափի, դարմադաղըն կըլլի կը: Էսոր հերսը էման կելլե օր ջամի, բան խառնեկը իրար, կերթա հերսեն իրենց ջամուն դուռը կը բանա, մե բելիկըմ շուն կը կանչե նես, դուռը վրաներեն կախե կը ու քուքա: Սապախտան կանուխ մոլլեն կերթա օր ջամին մտնի, դուռը կը բանա օր. է՜, մեչը լիքը շուն: Հերսեն՝ չիտե, թե ի՞նչ էնե: Մեմա կաշե օր Դալի Բարսեղն ու մոտկամը էկան:

- Ծո՛ էս շները վե՞վ է լցե ջամուն մեչը,- հարցընեկը մոլլեն:

Մոտկամը, ըշտը, կըսե՝ ես եմ նես առե:

- Իթոլլի,- կատղած կըսե մոլլան,- ինչի՞ համար ես էտ տեսակ պիղծ բան էրե:

- Իթոլլիթը դու ես, քավքառ թերմաշ,- կըսե մոտկամը ավելի կատաղած,- հըպը ես էս ջամին քանի՞ կափեկի կառնեմ, օր Դալի Բարսեղը իրենց ժամին անընովը մե վերսըմ տեղ սելը քշեց, մե օրանըմ սելեն չընկավ, հըմը մեր ջամուն անընովը շարժինըմ տեղ առաչ քընաց ու սաղ օրանը թափավ:

ՎԱՐԹԱՊԵՏՆ ՈՒ ՔՐԹԵՐԸ

Էչմիածնա վարթապետին ճամփեն կը, օր գեղաներեն վանքին հարկը փերե: Կերթա. ինքը խև-խելառ մարթ՝ զայնելեն, զոռելեն, քաշե, հարկը կառնե, կելլե քուքա: Քրթերը միշտ գանգատ քուքան եպիսկոպոսին.

- Ախպա՛ր,- կըսեն քրթերը,- քուքա, նա՛ ժամանակ կուտա, նա՛ բան. քաշկըռթե կը, զայնե կը, ջարթե կը, զոռով կը տանի: Հարկը հարկ, թող խաթրով տանի:

- Լա՛վ,- կըսեն հոգևորականին,- մենք թամբեյ կենենք, թող փափուկ վարվի:

Էս անքամ վարթապետին թամբեյ կենեն, կերթա, հետվին խելոք կը վարվի: Քրթերը կաշեն օր վարթապետը խոլոքցել է, կըսեն.

- Ծո՛, լավ էղավ, էսիկ էնքան ժամանակ մեզի զայնելեն սատկեցուցել է. էսօր օր էսոր հախեն չը քանք, էլ ե՞փ պիտի քանք: Էլ վե՞վ բանի տեղ կը թնե: Ինչ օր կենեն, վարթապետը բանի տեղ չի թնե, ձեն չի հանե: Կաշեն օր էղավ, ամմեն բան պրծավ, մե էրկրթե շիշըմ կը թընեն կրակին մեչ, օր տաքնա-շիկանա, վարթապետին նստատեղը պիտի դաղեն: Վարթապետնա հըլը օր ձե՞ն չի հանե: Կաշե օր չէ, իրեն պիտի դաղեն, գավազանը կառնե, կըյնի քըրթերուն ջանը: Էլ սալին, սոլին չի աշե. զայնե կը, ջարթե կը, թե՝ խարճը փերեք, կըսե, կապե կը ձեռք-մեռք, մալ, օչխար կառնե ու առաչ կը քշե: Քըրթերուն էլ հետը քշեկը վանքը: Կաշեն օր վարթապետը առաչվընեն բեթար բան կենե:

- Ծո՛,- կըսեն միաբերան,- խելառ, քեզի թամբեյ էրինք, օր փափուկ վարվիս, դու էս ի՞նչ է կենես:

- Ինչ օր ըսին, ձեն չհանեցի. զարկին, քըվըրտեցին, ձեն չհանեցի: Էտև օր շիշը տաքցուցին, օր էտևըս դաղեն, էտորա՞ ձեն չհանեի: Ըշտը էտորա համար կապկըպեցի:

- Էչմիածնա հոգևորականին միաբերան էլ կըսեն՝ Իյա՛...

ՆԱՄԻՔ - ՆԻՍԻՔ ԹԵՔԱՍԻ

Կնկան մեկը իրեն սիրականը նես կառնե. խաղան կը, կուտեն կը, քեֆերը չաղասնեն կը, հըմը էտ վախտը բիրտան դուռը կը զայնեն:

- Հա՛,- կըսե,- ես գիտեմ, էրիկըս էկավ, կըշտիս հետ արի, ես քեզի էման ճամփեմ, օր ինքնա չըտեսնի: Կըշտին հետ տանի կը սիրողին, դուռը բանակը ու տալտոքը դուս կը հանե: Դուս կը տանի, դուռը կախե, մարթուն հետ կերթան նես: Հըմը տարակուսանքի մեչ կըյնի թը՝ աշես տեսսա՞վ էրիկըս, օր ես սիրողիս դուս տարա: Վերչը մտածե կը, թը ի՞նչ հընար էնե, օր իմանա՝ տեսնիլն ու չըտեսնելը (ախըր գործը սաղը պիտի հանե, չէ՞):

- Մարթ,- կըսե,- մեր կատուն չորս հատ ըռունդ ձաք է փերե, էնքան ըռունդ են, օր հեչ մեկը չեմ ուզե օր ուրուշին տամ: Էկե ձաքերուն անուն թնենք, թող պիտտուննա մերը մնան:

- Թընենք,- կըսե մարթը:

Կընիկը կերթա կատվին ձաքերը գրկե փերե կը: Մեկը կառնե ձեռքը, կըսե՝ էսոր անունը ես կը թնեմ «Գերտի՞, յոխսա գերմաղի-տեսա՞վ, թե՞ չտեսավ»:

Էրիկը կըսե՝ լավ անուն էղավ վնաս չունի: Մեկալը կը վերցընե, կուտա էրկանը, կըսե՝ էսոր անուննա դու թի: Մարթը կըսե. էսոր անունը ես կը թընեմ «Գերտի, հըմը սեզտըրմատի-տեսավ, բայց չտեսնելու տվեց»:

Կընիկը կըսե՝ էտա լավ անուն է:

Մեկալը էլի կընիկը կառնե, կըսե՝ ա՛յ մարթ, էսոր անունը կը թընեմ «Նասիբ-Նիսիբ Թեբասի»:

Վերչինը կուտա էրկանը: Էրիկը կառնե, կատվին ձաքին վրային, գըլխուն կաշե, կընկանը էրեսնա կաշե, խնդա կը: Կըսե.

- Էսորա անունը կը թընեմ «Էկրանընն գօթինա թարբիա օլմազ-սորված հետույքին վստահել չի լինի»:

ՊԱՌԱՎԻՆ ՆՇԱՆԸ

Պառավը բռնե կը մանչերուն յախան.

- Օղո՛ւլ,- կըսե,- ես կարքվիլ գուզեմ:

Մանչերը կըսեն՝ ա՛յ մարըս, դու ի՞նչ կարքըվիլ գուզես, դու պառա՜վ, հասակըդ առա՜ծ:

- Դե կորե՛ք աշկես, շան լակոտներ,- նեղեցած կըսե պառավը,- պառավը դուք եք: Դուք օր գիշերը փաթտըվիք կը ձեր կընկթոցը, ախըր եսա գուզեմ փաթտըվիլ պառկիլ:

- Է՛, լավ, եփ օր գուզես կարքըվիլ,- կըսեն տղաքը,- մենքա կարքենք կը: Հըմը քեզի կուտանք տասսը հատ կաղին, դիորի լուս դու քու առկըներովըտ կե՛: Էփ օր կոտռեցիր, կերար. ասօրա կարքըված ես, էքվանա:

Պառավը համաձայնի կը, կըսե՝ շատ լավ: Փերեն կաղինները կուտան, դուռը վրայեն կողպեն կը: Պառավը քուքա, կաղինները կառնե, բաշլայե կը տրոտելը. օր կոտռե, ուտե: Մե էրկու-իրեք սահաթ կանսնի, կերթան դռնեն ձեն կը հանեն.

- Մարի՛, քանի՞ հատ ես կերե:

- Ահան այսի մեկն օր ուտեմ, ինընը կը մնա,- կըսե մարը:

Քանի անքամ հարցընեն կը, կըսե՝ էսա օր ուտեմ, ինընը կը մնա:

Դիորի լուս հեչ մեկնա չի կրնա ուտե, նայա կարքըվելու անունը կուտա:

ԳԵՐ ՅԱՐԱ

Մարթու մեկը վրեն գեշ յարա կունենա: Կերթա էտ մարթ դոխտուրին: Ինչքան դոխտուրի օր կերթա, չեն կըրնա էտոր յարեն սաղցուցնին: Վերչը էտ մարթ կերթա Լոխման հեքիմի քով: Լոխման հեքիմն օր կը տեսնի, կըսե.

- Ախպեր ջան, քու յարեն չը սաղնա:

Մարթ կը հարցընե. «Կըսես, օր չի՛ լավնա: Էտմալ լե յարա եղնի՞, օր չսաղնա»:

- Էնոր համար չսաղնա,- կըսե հեքիմը,- օր քու յարին դեղ չկա:

Կելնի, կերթա: Ճամփեն կմտածե, թե՝ էրթամ աղու կըտնամ, խմիմ, մեռնիմ լավ է, քանըս թե սաղ մնամ: Կերթա ճամփեն ըռաստ կիգա չոբնի կողմից կթած, կրիայի կոտի (կոտկիրիրի) մեչ լըցրած ամանով կաթի, որուն մեչը օցը փաթաթվել-նստել է: Մարթը կը մտածե, ըշտը, օր իտը բանը լավ էղավ: Խմիմ իտը կաթ, մեռնիմ լավ է, քանըս թե իտմըլա յարոտ մնամ: Վերուց էտ կաթն ու խմեց: Շոք էր, քունն էկավ: Ըսեց՝ պառկիմ քընիմ քիչումի, էտև էլլամ, էրթամ:

Պառկավ մե քըչումի քնավ, իմցավ տեսավ՝ վրեն կեռա: Սկսեց վրեն քերել: Մեկ լը տեսավ, օր յարեքը իստակ թափավ վրայեն, սաղ սաղցավ:

Դառցավ գնաց Լոխման հեքիմի քովը.

- Բարև, Ասու բարին տվին, առան, ըսեց՝ հեքիմ, ըպը կըսեր քու յարեսնուն դեղ չըկա՞: Ահա, իշե, տես յարեքըս:

Լոխման հեքիմ տեսավ, ըսեց.

- Ախպեր ջան, էս ո՞ւրդից գտնենք քըզի կոտկիրիրի կոտ, խըռ (մոխրագույն) մակու կաթ, օր յաշմար օց լը իկեր մեջ պառկեր, դու էրթեր խմեր, յարեքդի սաղներ:

- Լոխման իմաստուն հեքիմ,- վերցընե շիփ-շիտակ կըսե մարթը,- իրավունք ունիս չբուժելու, հիվընդին առողչ կյանք չը պարքևելու, դու էլի մեծ հեքիմ կը մնաս, բայց հիվընդին հույսը կըտրողը իրավունք կունենա՞ իմաստուն կոչվելու: Արթա՞ր է էտիկ, մարթ...

ԳԱՎԱՌԱԳԻՏՈՒՆՆԵՐԸ

Մարթումը մեկ էլավ գնաց գավառագիտունների գեղը, օր ցորեն գներ: Էտ մարթիք տեսան, օր էտուր էրկեն մորուք կար: Ըսեցին.

- Արի՛, դու մըզի էղի տերտեր, մենք տերտեր չունինք:

Մարթը բացատրեց, ըսեց.

- Ես գրել, կարթալ չըմ գի՛նա, տերտըրություն չըմ կըրնա էնի:

- Չէ՞, դու մորուք ունիս, դու անպատճառ տերտեր իս,- ըսին անոնք:

Էս մարթու ճար ը կտրավ, էղավ տերտեր, գնաց ժամ, ըսկըսեց Ավետարան կարթալ: Կարթալ չը գինե. կըսեր՝ Տաս օչխար ունիս, հինգը քըզի, հինգը՝ տերտըրոջ: Տաս սոմառ ցորեն ունիս, հինգը քըզի, հինգը՝ տերտերոջ: Էրկու հատ կով ունիս, մեկը քըզի, մեկը՝ տերտերոջ: Մե օրմե հարցուցին.

- Տերտեր, էտ ի՞նչ է կարթաս:

Ըսեց՝ ձա՛քըս, Ավետըրընի մեչ էտմալ է գրուկ: Ու էլավ գնաց ու կիսեց ժողովըրթի հետ: Մեռել օր կեղներ, էտ տերտեր ժողովուրթին դուս կեներ, ժամու դուռ կը փակեր, մեռելի կարգ կը կատարեր, նոր կը բաներ դուռ, կըսեր՝ արեք տարեք ձեր մեռելն:

Ավուր մեկ ը էտ գեղի քյոխվեն (քչումի խելացի մարթ էր) ըսեց ժողովըրթին.

- Ես կելնիմ սուտ մեռել, տարեք դրեք ինձի ժամ, տեսնեմ հըլը տերտեր օրի՞ դուս կենե ժողովուրթին, նոր կարգը կը կատարե:

Էղավ սուտման մեռել, տարան դրին ժամ: Տերտեր ժամերգություն պրծավ, ըսեց.

- Դե էլեք դուրս, օր դուռ փակիմ, մեռելի կարգ կատարիմ:

Ժողովուրթը էլավ դուրս, տերտերը դուռը փակեց, էկավ մեռելի կարգ կատարելու: Բուրվառ ը ցցեց խունկը, էկավ կայնավ մեռելի գըլխու վրեն, ըսեց.

- Գլխեն հա՛րի օտնե՞ր, գլխեն հա՛րի օտնե՞ր: Ընցավ օտներու տակը, ըսեց՝ օտներեն հա՛րի գլո՞խ, օտներեն հա՛րի գլո՞խ: Ընցավ կուշտը, ըսեց՝ ի՛տ կըշտեն էնթու կուշտը՞ն, ի՛տ կըշտեն էնթու կուշտը՞ն: Ընցավ մեկել կուշտը, ըսեց՝ ի՛տ կշտեն էն կուշտը՞ն, ի՛տ կշտեն էն կուշտը՞ն... Ու էտ վախտ քյոխվեն ծիծղաց: Տերտերն սրչեց բուրվառն ու բեյնին զարկեց: Էնքան զարկեց, էնքան զարկեց, հարի քյոխվի ճար կըտրավ: Նորեն տերտեր չոքավ քյոխվի բկին, բթներով սխմեց, խեղդեց: Դուռն բացեց, հերսոտ-հերսոտ ըսեց.

- Չէղնի՞մ, չէղնի՞մ, մեկ ը սաղ մեռել բերեք, ժամ դնիք: Հա՞րի մեռցուցեր իմ, բթներսի կայներ ը:

Ժողովուրթ օյմըռած ըսեց.

- Օ՞, օ՞օ՞, անԱստվա՛ծ, մըր քյոխվին մեռցուցե՞ր ը...

ՄԱՀՏԵՍ ՄԱՐԴԸ

Մարթումի մեկ էլավ կերթեր վանքն աղոթք էնելու: Գնաց սարի գլուխ վանքն, մտավ ներս, տեսավ օր մե մեծ կըտորմի օսկի կա հոտի թալած: Մարթը թողեց ու փախավ: Ճամփուն ըռաստ էկան վեց հատ գող, ըսին.

- Ա՛յ մարթ, դո՞ր փախնիս էտմալ:

- Մայսի,- ըսեց,- տեսա, փախնիմ:

- Դո՞ր քու մայն,- զարմացած հարցուցին փախչող մարթուն:

- Հոն ի,- ըսեց,- վանքին մեչը:

Գողեր գացին վանքի մեչ, էտ մարթու մայը տեսնելու: Մտան ներս, տեան օր հոտի մե մեծ կտորմի օսկի կա թալուկ: Իրենք իրենց ըսին՝ էտ շանօրթին ծո՞ւռ է, օր օսկին տեսեր ը, կըփախի:

Նորեն էտ մարթիքն էրկու ընկերոչն օղորկեցին քաղաքն, թե գացեք, հոնկուց ըրախ-գինի, հաց կերակուլ բերեք, ուտինք, խմինք, փայ էնինք օսկին ու էրթանք:

Էրկու ընկեր էլան, գացին քաղաք, առան գինին, ըրախին, հացն ու կերակուլն, մտածին, թե առնինք աղու, ըլնանք իտոնց մեչը, թույնավորինք, էտոնք ուտին, տրաքին, մենք առնենք օսկին, էրթանք էրկուսանց:

Էն չորսն էլ մտածան վանքի մեչն, թե էտ էրկուսն օր էկան, բըռնինք ըսպանինք, առնինք չորսսի օսկին, բաժնինք, էրթանք: Էտ մարթիք բերեցին կերակուլներն ու խմիչքներ, դրեցին օրթըլաղ: Չորսն էլան, էտ էրկուսին ըսպանեցին: Ըսին.

- Տը արեք ուտինք, խմինք, օսկին բաժնինք, էլլանք էրթանք: Նստան կերան, խմեցին, չորս լը տրաքան: Էն մարթն, օր թողեր էր, փախեր էր էտ օսկին, մեկել օր էլավ, գնաց, ըսեց.

- Էրթամ, տեսնամ՝ օսկին տարածը, թը տեղն ը: Գնաց տեսավ, օր վեց լը էտտեղ մեռած ին, ըսեց.

- Ըյմի նոր իտ օսկին կըտանիմ, կուտիմ:

ՏԵՐՏԵՐՆ ՈՒ ՏԻՐԱՑՈՒՆ

Կեղնի տերտերմի, մեկ լը տիրացումի: Տերտեր կըսե.

- Էրթանք սիրականիս տեսնալու:

Տիրացուն կը համաձայնի, կըսե՝ էրթանք, տեր հայր: Տերտերը կը պատ-

բաստվի, լավ հալվա, գաթա կը լցնե հաբիկեն, կհեծնան ձիանն ու կընկնան ճամփա: Տիրացուն ըշտը շատ անոթի կէղնի, հաբիկից կը գողնա գաթա, կը խանե, օր պիտի ուտե, տերտեր կը տեսնա: Կըսե.

- Տիրացու, էն գեղ մըզի ինչքա՞ն մատաղ խոստացան:

Տիրացուն բեյնեն կը թալե գաթան ու կըսե՝ տերտեր, չըմ գի՛նա:

Կերթան գեղին կը մոտենան, տիրացուն շատ կանոթնա, մեկ լե կը գողնա գաթա: Էտ է, օր պիտի ուտե, բիրտան տերտեր կը տեսնա, կըսե.

- Տիրացու, էն գեղ մըզի ինչքա՞ն մեռելի փող խոստացան:

Տիրացուն կը թալե գաթեն բեյնեն ու կըսե՝ տերտեր, չըմ գի՛նա:

Արթեն կը հասնին գեղը, կերթան կիշնան տերտրոջ սիրականի տունը, ուրախ-զվարթ հաց կուտին, ըրախ կը խմին, հետո կելլան կը պառկին: Տիրացուն կեղնի խըստու քուն. տերտեր կը տեսնա, օր տիրացուն քըներ է, կելլնա ուր տեղեն, օր պիտի էրթա սիրականի ծոցը պառկի: Տիրացուն մեկեն կը նստի տեղը ու կըսե.

- Տերտեր, կայնի, դո՞ր կերթաս, միտքըս նոր ընկավ, կըսե՝ էն գեղ մըզի խոստացավ հինգ գառ մատաղ:

Տերտեր կը փախնի, կիգա ուր տեղ: Մե քըչում լե կը մնան, տերտեր գինա, թը տիրացուն քնավ, կելլա, օր էրթա սիրականին քով: Տիրացուն նորեն կըսե.

- Տերտեր, կայնի, դո՞ր կերթաս, նոր միտըս ընկավ. էն գեղ էլ մըզի խոստացան տասնըհինգ կոտ ցորեն պտղի:

Տերտեր կը փախնի կիգա ուր տեղն: Գիշերն արթեն լուսանում է: Տերտեր կըսե.

- Իտի վերչին անքամ տիրացուն քընուկ կէղնի, էրթամ սիրականիս քով,- կըսե տերտերը:

Կելլա վերչապես, օր էրթա, տիրացուն էս անքամն էլ տեղին մեչը էլի կը տընկըվի ու նորեն կըսե.

- Տերտեր, կայնի, դո՞ր, անջաղ հիշեցի. էն գեղ,- կըսե տերտերին մեծ լավություն ընողի ձենով,- էն գեղ մըզի խոստացան հարուր իցցուն մանեթ մեռլի փարա:

Արթեն կը լուսանա՛: Կելլան, կիգան, օր շուտով հասնին ժամուն: Տերտեր կըսե.

- Տո՛, տիրացո՛ւ, էս էտքան խարճ ու խարաճ էրինք, օր սիրականիս տեսնինք, դու օրի՞ չքողիր:

- Տո՛, տերտե՛ր, դու գաթեն իմ քթեն բերիր, ես լե քու սիրականին քու քթեն բերի,- կըսե խաղաղված տիրացուն:

ՂԱՌՂԱՌ ԾՆՈՂ ՄԱՐԴԸ

Մարթն կընկան փորցելու համար ըսեց.

- Կնիկ ջան, Ասու սիրուն, մե բանըմ պիտի ըսիմ, մարթու չըսիս:

- Չէ՛, մարթ,- ըսավ,- կնիկ լե ուրան մարթուն սեկրետ դուրս ըսե՞:

- Շա՞տ գինամ, կնիկ, չըսիս մարթու, հոգուդ մեռնիմ:

- Չէ՛, մարթ,- ըսեց,- դու ըսե, մարթու չեմ ըսե:

- Կընի՛կ, էսօր ղառղառմի ծնա, փախավ: Կընիկ, ջանիդ մեռնիմ, մարթու չըսիս:

Քնան, սապախտան շուտ կընիկն էլավ ու վարտիքը քցեց փիճին, գընաց դրկցի տուն: Ըսեց.

- Լսե՞ր էք ինչ է էղի: Մըր մարթ սև ղառղառմի ծնի, շափղեն գլոխն փախեր ը:

Մարթը միամիտ. ըսկսեցին ժողովուրթ մարթու վրեն ծիծղալ, թե քըզի ի՞նչ ը էղի:

- Մարթը կըհարցընե, կըսե՝ ի՞նչ է էղի:

- Էտնդի սև ղառղառմի էլի,- կըսեն,- շափղեն գլոխ փախեր ի:

- Ա՛յ ժողովուրթ,- կըսե մարթը,- իմ ծնածն առանց շափղի էր, դուք շափղեն ո՞ւրդից գտաք դրիք գլոխ:

ՀԱՎԿԻԹ ԱԾՈՂ ՄԱՐԹԸ

Մարթուն մեկը կընկանը փորցելու համար կըսե թը.

- Կընի՛կ, գիտե՞ս, ես էսօր մե հավկիթըմ եմ ածե, հըմը հեչ մարթու չըպիտի ըսես, հա՛:

- Խելա՞ռ եմ, օր ուրուշին ըսեմ,- կըսե կընիկը:

Կանանի մե վախտըմ, էս կընիկը կերթա դըրկից կընկտացը կըսե, կըյնի բերնե բերան, կերթա հասնիկը թաքավորին անգաճը: Կըսեն.

- Թաքավորըն ապրած կենա, Ասվածազարմդ տեղյա՞կ է, որ էսինչ մարթը հարըրեն մե հատըմ պակաս հավկիթ է ածե:

- Կանչեցեք,- կըսե թաքավորը,- կանչեցեք էտ մարթուն:

Կանչեն կը, թաքավորը կաշե գլխեցեն ոտ, օտքեն գլուխ ու կհարցընե.

- Դո՞ւ ես հարուր հատ հավկիթ ածողը:

- Հա՛,- կըսե մարթը,- թաքավորն ապրած կենա,- դիորի քովըդ կանչելն ու քալը, ածել էի հարըրեն մե հատըմ պակաս: Ըշտը մեկնա դու ավելցուցիր, էղավ հարուր հատ:

Արթըղ թաքավորը գլխու կըյնի, հարց ու փորց կենե ու կիմանա, օր էս մարթը ընթամենը բերանբաց իր կընկանն է փորցե:

ԽԱԲՎԱԾ ՀԱՐՄՆԵՐԸ

Կիսուրն հիվանդ էր պառկե ջլերու մեչն, շատ հիվանդ էր: Հըմը ըսիմ, օր հոգուն հետն էր: Էտ կիսուրսի մտածեց, միտքը բանըմ ընկըցուց, թե՝ ի՞նչ էնիմ, օր իտ հարսներսի ինձի լավ իշեն: Մըտածեց, մըտածեց, էլավ մե նըվ-թոտ չարեկմի կար, ջա՜րթեց, լցեց տոպրակըն ու բերեց դրեց բարցի տակն, իմալ օր օսկի: Հոգու հետն էր, կանչեց մեծ հարսին, ըսեց.

- Հարս ջան, գինա՞ս, ես օր մեռա, բարցիս տակ տոպրակով օսկի կա, քըզի կիտամ:

Էտիկ քընաց, էկավ մեկել հարսըն: Կիսուրն էտուր լը ըսեց.

- Հարս ջան, ընձի լավ իշե, տոպրակով օսկի կա, քըզի կիտամ:

Էտ լը խընդացավ ու գնաց: Կանչեց մեկել հարսին, ըսեց.

- Օ՜յ, հարս ջան, հոգուտ մեռնիմ, ես կը մեռնիմ, տոպրակով օսկի կա բարցիս տակ, կառնիս քըզի:

Հարսներու ջանի՞ն մուննաթ, ըսկըսեցին խայրաթ էնել. օ՜, օսկու ձեն ի լըսած, կիսրոջ լա՜վ քյոմակ կենին:

Սապըխտան մեկ լը կը տեսնան, օր կիսուր մեռավ:

Բանան բարցի տակ կիշին, օր ի՞նչ իշին՝ կոտրուկ չարեկի կըտորներ:

Է՛, ի՞նչ պիտի ընեին. մեռնողին էտնեն կամ լավը պիտի ըսեն, կամ լե բանմը չպիտի ըսեն: Ըսին մե բերան՝ օղորմի՜...

ՄԱՐԹ ՈՒ ԿՆԻԿ

Մե մարթըմ ու կընիկմի կապրեին իրարու հետ ու իրուր շատ կուզեն: Ավուր մեկ մարթն խապար էղավ, օր առավոտ կընիկն դրսեն էկավ, մտավ ծոցը:

- Կընիկ ջան,- ըսեց,- էտ ո՞ւրդից կիգաս:

Կինը թե՝ դրսեն: Հըպը ըսեց՝ ի՞նչ կենեիր հոն:

- Մարթ ջան,- ըսեց կինը,- ես սապախտան կանուխ խնդրենք Աստուն, օր քըզի էրկար կիանք, ջանսաղություն ու աչողություն տա:

Մարթըն ուրախ մտքին մեջ խընդացավ: Էքսի օրն մարթն տեսավ, օր կընիկն սապախտան էլի էկավ, մտավ ծոցը: Մարթն ըսեց.

- Կընիկ ջան, էտ ո՞ւստից կիգաս:

- Մարթ ջան,- նորեն ըսավ կինը,- Աստուն կաղաչեի, օր քըզի էրկար կիանք տա, ջանսաղութուն տա:

Մարթն ընկավ կարծիքի մեչ: Էքսի օր մարթը սուտ քուն էղավ, տեսավ կընկան, օր հալավն թեզըմ հաքավ ու գնաց դուս: Ինքն հաքավ շալվարն ու կընկա էտեն գնաց: Տեսավ, օր կնիկը մտավ դըրկցի տուն, ըսկսեց մի ջայել տղայի հետ խաղալ: Էտն դուրս գալու վախտն մարթը դուռը կողպեց: Կընիկն ըսեց.

- Մարթ, դուռ բաց, թե չէ կերթամ հորը կընկնիմ: Խըստու վերուց մեծ քար մի, թալեց իտ հորն, մարթը գիտցավ, թե կընիկն պատավ հորը: Վազեց, ըսեց.

- Կընի՛կ, մի՛վախենա, ես քեզի կը հանիմ: Մեկ լե լըսեց, օր ուրանց դուռն կողպըվավ:

Գնաց տեսավ, օր ուր կընիկն ը, ըսեց.

- Տո՛ կընիկ, դուռ բաց:

Կընիկն լըրբացած նեսեն ըսեց.

- Գնա, գող ու բոզ. դու հար մըկա դո՞ր էր:

- Կընիկ ջան,- ըսեց ուրուշի տանը փակված մարթը,- դուռ բաց, հիմի փասբանդներ կուգան, տանին ընձի կախին:

Կընիկ չբացեց, փասբանդներ էկան, բռնին էտ մարթուն: Կընիկ լե ամմեն բառ գոռալով ավելցուց՝ տարե՛ք, տարե՛ք էտ գող ու բոզին:

Փասբանդներ տարան, մարթուն կախին:

ՄԱՐԹ, ԸՍԵ ԳԵԼԸ

Մարթ ու կընիկ լծին սել, գացին չայիր փոցխելու: Տեսան աղվեզ փախավ: Կին հարցուց՝ մարթ, էտ ի՞նչ էր փախավ:

- Աղվեզ էր, ինչ էր:

- Չէ՛, մարթ, աղվեզ չէր, գել էր:

- Չէ,- ըսեց,- կընիկ, իմ տեսած աղվեզ էր:

- Չէ՛, մարթ, ըսե գել ը. գամ հետդի աշխատանքի, չես ըսի՝ չըմի գա:

- Հե՛չ էլ մի գա,- կընիկ, ըսեց,- իմ տեսած աղվեզ ը:

- Չըմի՛գա,- ըսեց,- ու ետ դառցավ, եկավ տուն: Մարթն գնաց աշխատավ, դառցավ էկավ, տեսավ օր կընիկ պառկած ը:

- Կնի՛կ, էլի՛, ըսավ, հաց բի ուտինք:

Չէ՞, մարթ,- ըսավ,- ըսե գել ը,՞ հաց լը բերիմ, ջուր լը բերիմ: Չե՛ս ըսի, ես կը մեռնիմ:

- Մեռիս, մեռի, իմ տեսած աղվեզ ը:

Կընիկ պառկավ ու ըսկըսից մեռնիլ: Մարթը մոտեցավ, անգաճ դըրեց կընկա բերնին, կընիկն ըսեց.

- Մա՛րթ, ըսե գել ը, էլլամ սաղնամ:

- Չէ՞, կընիկ,- ըսավ,- մեռեր իս, մեռի, իմ տեսած աղվեզ ը:

Կինը մեռավ: Էլավ մարթն, կանչեց գեղացոց, թե՝ արիք, կընիկս մեռավ: Ժողովուրթ թափավ էկավ, տեսան օր օղորթ, հարիֆի կընիկ մեռեր ը: Գուբին բերեցին, դըրին մեչն, տարան ժամ, մոմեր վառեցին, լացին, խղճացին, թե ջայիլ կընիկ էր, էրեխեքը մնացին:

Մարթը էլի մոտեցավ կընկա բեյնին, թե տեսնեմ կընիկս օղո՞րթ մեռեր ը: Դրեց անգաճ, կընիկ ըսեց.

- Մա՛րթ, ըսե գել ը, էլլամ սաղնամ:

- Չէ՞,- ըսեց,- կընիկ, տեղ լը հազըր ը, գուբին լը, մեռեր իս, մեռի. իմ տեսածը աղվեզ ը:

Տերտեր վերչին թափշուրմեն կիտա, ժողովուրթ կընկան կը վերցու, կըտանի հորելու: Օր տարան դրին հորին կուշտն, մարթն էլի՛ գնաց, անգաճ դրեց կընկա բեյնին, ըսեց տեսնամ՝ օղո՞րթ կընիկսի մեռավ: Կնիկն ըսեց.

- Մա՛րթ, ըսե գել ը, սաղնամ, էլլամ:

Չէ՞,- ըսավ մարթն,- տեղդի հազըր ի, կընիկ, մեռեր իս, մեռի. իմ տեսածն աղվեզ ը:

Դրեցին հորն: Լըցին քըչումի հող, մեկ լը կընիկ բոռաց.

- Մա՛րթ, գել չէ՞, աղվեզ ը, աղվեզ ը:

Ժողովուրթ սաղ թողեցին փախան սարերն, թե էս քյոփօղլու մեռել սաղցավ: Մեռելի քով մնաց մեննակ մարթն: Հարցրեց՝ կընի՛կ, օղո՞րթ աղվեզ ը: Թե՝ հա, աղվեզ ը: Կընկան հորեն հանեց, գացին տուն:

ՔՐՈՂՈՒ ՏՂԵՆ

Քուրդը ուներ մե տղա: Դուրս էլլելուն պես հերը կըսեր՝ մարթ չես ըլլի՜, ներս մտնելուն պես կըսեր՝ մարթ չես ըլլի: Վերջ տղի հոգուն հասավ:

- Ախպա՛ր, ես ի՞նչ էնեմ, օր հերրս ըսե՝ մարթ կեղնիս:

Ըսավ ու տնից հելավ, գնաց սովրելու: Հասավ մե քաղաքըմ, մըտավ ըշկոլ, սովրավ, ավարտեց մելիցի նաչալնիկի կուրս: Վերջը նշանակեցին Աղբուլաղի շրջան: Խնդրեց, որ իրեն ղրկեն իրենց շրջան, չը մերժեցին, էկավ, դառցավ հենց իրենց շրջանի միլիցիայի նաչալնիկ: Կանչեց էրկու միլիցա, ըսեց.

- Գացեք ֆիլան գեղ, չոբան Ալուն կանչեք, թըխ իկա իմ քովնի: Թե չուզեց իկալ, ծեծելով, ջարթելով բերեք:

Միլիցեքն էկան մտան քրդու տուն, ըսին.

- Ալի, քելե էրթանք, նաչալնիկ կանչե:

- Տղեք, նաչալնիկ ընձի օրի՞ կանչե,- ըսեց մարթն,- ես ըտուր հետ կերեր ի՜մ, խմեր ի՜մ, կամ թէ չէ՝ ի՞նչ մեղք ունիմ, օր ինձի կանչե: Գացեք ասեք՝ ես չըմի՛գա:

- Քելե՜, ըսին ու ծեծին, ջարթին, կապին ձեռքերն ու խառնին առաչ, բերին, հանին նաչալնիկի քով:

Նաչալնիկն ըստոլ տվեց, ըսեց՝ նըստի: Ալին նըստեց: Նաչալնիկ հարցուց՝ ճանչընա՞ս ընձի:

- Ի՞նչ ճանչընամ քըզի, կերե՞ր եմ հետդ ի, խմե՞ր իմ, ի՞նչ էրեր իմ:

- Չըս ճանչնա,- ըսեց,- ես քու տղեն իմ: Միտը՞դ է, օր կըսեիր՝ մարթ չես ըլլի, մարթ չես ըլլի: Դե տես՝ ի՞նչ թավուր մենձ մարթ իմ էղի:

- Օղո՛ւլ, ըսեր իմ, էլի կըսիմ՝ մարթ չըս էղնի: Մարթ օր էղնիս, քու պապուն ծեծել տալով, ջարթելով չէիր բերի քովդի: Էսօր լե մարթ չես էղնի, լուսուն լը:

ԵՐԵՔ ՀԱՐՈՒՐ ԳԴԱԼԸ

Շատ հարուստ իշխանըմ կըլլի, կունենա մե լա՜վ կընիկըմ: Էսոր տունը Ասուն իրեն օրը միսավիրներ կըլլեին էղե: Միսավիրնուն փորցելու համար էս իշխանը վերցընե իրեք հարուր հատ գդալ շինել կուտա: Ամմեն օր քալող միսավիրին ձեռքը կուտա թամ-թազզա գդալ: Ուտելեն էտև միսավիրնին օր կերթան, էտ բանեցուցած գդըլնին թոփ կենե: Շատ օր էտման կենե, կընիկը կը հարցընե թը.

- Ա՛յ մարթ, էս ի՞նչ կենես:

- Կընիկ,- կըսե մարթը,- էսիկ հըլը դու մի՛ իմանա. եվ օր վախտը քա, կիմանաս:

Եվ օր իրեք հարուր գդալը կը վերչանա, իշխանը կանչե կը կընկանը, կըսե.

- Ըշպիշկեն առ, վառե իսի գըդըլնին:

Կընիկը կը վառե: Վառելուն պես գըդըլնուն բոցը կելլե: Էրիկ-կընիկ սեյր կենեն, կաշեն օր իրեք հարուր գըդըլնուն մեչ մեննակ իրեք գդալ չի վառի ու իրեքինե չորս թարաֆը ալ ու կանաչ կերևա կը:

Իշխանն էստեղ կընկանը կըսե.

- Աշե՛, աշե՛, իրեք հարուր մարթու հաց եմ ուտեցուցե, միշվին իրեք մարթն են հալալ բարեկամ էղե ինձի. մեկալները բիրատին էլ ծուռ ու փուչ մտքի տեր են էղե:

ՆԱՆՆԻԿ, ԲԱԼԱ ՋԱՆ, ՆԱՆՆԻԿ

Մե մարթըմ իրենց գեղեն քոչե, կերթա կը քաղաք: Քոչը բառնա կը դավին, հարսին նըստեսնե կը վրան, մեկալ դավինա վրան տղին օրոսկը կը բառնան ու կերթան: Դու մի՛սե, էտ հարսը օխտը տարի տղա չէր փերե: Օխտը տարուն էտ օրոսկին տղեն կըլլի: Գիշերն օր ճամփա կերթան էղե, օրոսկի կամարը կանսնի մեշին ծառին ճուղին ու կախվի մնա կը: Ծառին ճուղին օր կանսնի, մերը օ՛ սահաթ տեսնի կը էտ բանը, հըմը ամոթեն ձեն չի հանե, սնքըրթա, կոլըրթվի ու կուչուձիգ կըլլի, վերչնա ճարահատ կուլա ու ինքն իրեն կըսե.

Ալ դանավիզով փապրրել եմ,
Նաննիկ, բալա ջան, նաննիկ,
Օխտը տարուն մեկ գրել եմ,
Նաննիկ, բալա ջան, նաննիկ:
Քեզի նաննիկ ըսել չեմ,
Նաննիկ, բալա ջան, նաննիկ:

Կերսարն օր հարսին լացին ու երքին ձենը կիմանա, ետ կաշե օր՝ օրոսկը չկա: Հըմը ետ կդառնա տեսնի կը օր օրոսկը ծառին ճուղեն կախվել է, մայր եղնիկնա էկել, տղին ծիծ կուտա էղե: Արթըղ օրոսկը կառնե ու կերթա: Էտնա երքե կը. «Գիշերը բառցի դավին, Նաննիկ, բալա ջան, նաննիկ, Դավան քընաց ծերեծեր, Նաննիկ, բալա ջան, նաննիկ»:

ՇԱՅՄԱՐ ՕՑԻ ԱՌԱԿԸ

Թաքավորին մեկը ուներ մե շայմար օցմի, իրան բարեկամ էր: Էտիկ մեկավա (միշտ) կը նստեր թաքավորի բիլկին թե՛ հացի ժամանակ, թե՛ դիվան էնելու ժամանակ:

Թաքավորն օր շատ էխտյարցավ, թաքավորություն տվեց ուրան տղին, օցն էլ հետը: Օցը մեկավա գենա բիլկին փատվեր: Տղեն սինոթներ լը փոխեց, ըխտյարներուն հանեց, ջայելներուն դրեց սինոթ: Ջայել տղեկտիքըն ըսին իտ մուռտառ օցն ի՞նչ ը, պայեր իս բիլկիդի, չըս թալիս: Ըսեց.

- Իմ պապու բարեկամն ը:

- Թալ թուրդի, փիտցու,- ըսին ջայիլներ:

Տղեն համոզվավ, թալեց թուրն օցուն փիցուցնելու: Թուրն առավ պոչին, պոչն կտռավ: Օց լը դառցավ զարկեց տղի սրտին, տղեն մեռավ: Օց փախավ, մտավ ուր ծակն: Խապար տվեցին թաքավորին, թե՝ էսպես, էսպես. տղեդի զարկեց օցու պոչ կտռեց, օց լը հետ դառցավ զարկեց տղի սրտին, տղեդի մեռավ:

Թաքավորն էկավ, գենա նստավ թաքավոր, կանչեց Շայմար օցին, ըսեց.

- Արի՛, Շայմար օց ջան, արի բարեկամություն մըզի թաժացունք: Օց լը ըսեց՝ թաքավորն ապրած կենա, քանի իմ պոչըս իմ միտքըս կընկնա, քուկդ էլ քու տղեն, մենք բարեկամ չենք էղնի:

ՕՁՆ ՈՒ ՄԱՐԴԸ

Օցը կերքա մարքուն կըսե թը՝ արի ախպեր ըլլինք:

Համաձայնի կը մարքը, բայց կըսե՝ դուզ ախպար ըլլինք: Էրկուսն էլ համաձայն կըլլին ու կերքան ապրուստ գտնին, վաստակ ունենան ու հավասար կիսին:

Կըյնին ճամփա: Մարքը տեսնի կը օր ինքը շիտակ կերքա, հըմը օցը՝ ծուռ ու մուռ, մեմ էսքուն կընկնի, մեմ էնքուն: Մարքը հիշեսնե կը, օր իրենք դուզ ու շիտակ ընկերության պայման էին թըրե:

- Մարք ախպեր, կըսե օցը, ես էստից էլ շիտակ չեմ կըրնա քելե. դու ինձի խրատ տու, շիտակ քելեմ:

- Արի,- կըսե,- խրատ տամ:

Գլոխը թընե կը օտացը տակը, էրկու ձեռքով պոչեն բըռնե կը ու քաշե կը:

Կաշե կը, օր օցը շիտակ շիտկըվավ: Մեմե կաշե, օր խեղճ ախպարը շունչը կը փչե: Մարթը կըսե.

- Ա՛յ, ախպերությունը էսման կըլլի՝ շիփ-շիտակ:

ՎՐԵԺԽՆԴԻՐ ՕՁԸ

Հերրս պատմե կը օր պապըս էղել է քարվանճի, ունեցել է էռսուն-քառսուն հատ ղաթըր ու շատ նոքարներ: Նոքըրներուն մեկը գիշերները չի կրնա քնի էղե: Օրվանըմ մեկը պապըս կը հարցրնե թը.

- Ա՛յ մարթ, ինչի՞ զօ՜ր գիշեր չես քնի:

Ատիկա վերցրնե պատմե կը, թը.

- Հաջի պապ ջան, օրվանըմ մեկը մե օցըմ պիտի սըպանեի, հըմը պոչը կտռավ, ինքը փախավ: Էնտիցա մինչի էսօր չորս տարի է անցե, ես զօր ու գիշեր դաթարում չունիմ, չունքի քուքա էտ օցը, միշտ էտտիս կը պըտտի, ահը սիրտըս կը ցրգե ու քունըս աշկերես թռցրնե կը: Էտ խոսակցության վախտը մեմե կաշե օր էն օցը էկա՜վ, մտավ ցորնին եղրնին մեչը: Էտ մարթը վախեն փատտվի կը պապիս ու կըսե.

- Յամա՛ն, պապի, ահան, էն օցն է:

- Մի՛ վախենա,- կըսե պապըս,- մի՛վախենա: Ձեն կուտա բիտտունին, կը-սե՝ տղերք, փատտեցեք եղրնին չորս բոլորը, կըրակը չորս բոլորը տվեք, թող վառի:

Վառեն կը: Հավարը կըյնի գեղը: Ժողովուրթը ղալմաղալ էնելեն քուքան, օր կըրակը անցրնեն, պապըս չի թողնե: Արթըղ կըրակն օր կըհասնի օցին, օցը վառի կը ու կուռի, փաթլամիշ կըլլի, թըռնի կը վեր, նորեն կըրակը կընկնի, կվառի: Նոքարը հանգիստ շունչ կառնե:

ՄԵԾԱԳԼՈՒԽ ԴԱՏԱՎՈՐԸ

Գողը կերթա մեկիմ էրթեցեն մըտնի կը տունը, օսկին կը գողնա: Սա-պախտան տերը կելլե կաշե կը օր տունը գող է մտե, օսկին տարել է: Էտև էման կըլլի օր իրեն ապրանքին նշաններով գողին գտնի կը: Գողին օր կը գտնի, արթըղ հա՛, հա՛, պիտի բռնեն տանին: Հըմը գողը կերթա դատավորին քովը, կըսե.

- Հըպը չե՛ս ըսե, էսման մե բանըմ եմ էրե, ի՞նչ խորուրթ կուտաս: Էտոր հընարը գտի, օսկուն կեսը քեզի, կեսը ինձի:

- Դու քընե,- կըսե դատավորը,- գործն օր հասնի ինձի, ես մե բանըմ կենեմ:

Կանցնի ժամանակ, գործը կուտան դատը: Դատավորը կերթա ըսմոթի՝ տեսնի ի՞նչ է կատարվե: Տանը տերը կըսե, օր էրթեցեն է մտե: Դատավորը ժողովուրթին թոփ կենե, կըսե.

- Ի՞նչ կըսեք, իսի նեղ էրթեցեն մարթ հավքի՞ կը: Ծելլոցը շատը կըսե՝ հավքի կը, իսկ էտ մարթուն թշնամի էղողները կըսեն, թե՝ դժվար, չի հավքի: Էտև դատին ժամանակ դատավորը ատկազ կուտա, թը՝ էտ նեղ էրթեցեն մարթ չէր հավքի:

Օսկուն տերը տեսնի կը, օր դատավորը ջուր պղտորելով է զբաղված, մեծ էրթեցեն գող մտնիլը անհավանական է դարցնում, իրան-իրան կուտակառնե, շատ կը նեղվի: Էս մարթը նաև վաղուց նկատել էր, օր էս դատավորը էման մե մեծ գլոխըմ ունի, օր քթոցը չի հավքի: Տեսնի կը ու ձեռքերով չափե կը օթին մեչը, զարմանա ու նորեն կը չափե, յանի թե մե՞ծ գլոխ է: Դատավորը հարցընե կը.

- Էտ ի՞նչ կենես, ի՞նչ կը չափչըփես:

- Քու էս վճռեն,- կըսե մարթը,- ես շատ կը զարմանամ: Դու ատկազ տվիր, թը՝ էտ գողը, էտ ղոճա էրթեցեն չի հավքի, հըպը էտ քու ղո՞ճա գըլուխըդ մկին էն ծակեն ի՞նչըղ հավքավ, օր դու էլար:

ԵՐԿՈՒ ՆՎԵՐ

Թաքավորնուն մեկին տոնը կըլլի, մեկել թաքավորը բռնե մե հոխամ չայ կը փատտե, ղրկե կը փեշքաշ: Էտ թաքավորն օր փեշքաշը կը տեսնի, կըսե.

- Ա՛յ ջանըմ, էս սև խոտը ինչի՞ է փռշե, ինձի ղրկե:

Հերսը շատ կելլե, ոխը սիրտը կը պայե, ինքն իրեն կըսե՝ սապըռ էրե, էտոր ջուապը թեզ կըստանաս: Քանիմ տարի էտև մեկել թաքավորին տոնը կըլլի: Էն թաքավոր բռնե մե դաստեմ յոնջա խոտ կը կապե ու ղրկե կը էտոր, կըսե.

- Էսիկա քու բաժինդ է:

Չայ ղրկող թաքավորն օր ուղարկած փեշքաշը կստանա, օ՛ սահաթ գլխու կըյնի, թը բանն ինչ է: Նամակը կը գրե, թը՝ վնաս չունի. դու խոտ ուտող ես, գիտես թը ես եմ խոտ ուտող: Ես չայ խմող եմ, սխալվել քեզի էլ չայ խմողի տեղ եմ թըրե ու ղրկե:

ԱՐՅՈՒՆՈՏ ՁԵՌՔԵՐՈՎ ՄԱՐԴԸ

Մե մարթըմ օչխար քերթած վախտը տեսնի կը, օր կատուն էկավ, օչխըրին ջիգարն առավ ու փախավ: Օր տեսսավ, արնոտ ձեռքերով ու դանակը ձեռքին, ընկավ էտտին: Կատուն փախա՜վ, մտավ մե տունըմ ու կորավ ամբըրնուն տակը: Էս մարթը մեմե բոլորն աշեց ու տեսավ, օր մե մարթըմ էրկա՜ն էրկընցել է: Մոտիկ քընաց, աշեց, օր ըսպանված է: Դիորի էսթունէնթուն, մեմե տեսավ օր մե բելիկըմ մարթ փատտեցին իրեն, ու ոչ ավել, ոչ պակաս վրա տվին թե.

- Ախպա՛ր, ինչի՞ սըպանեցիր էս մարթուն: Խեղճ մարթը էրթում-կըրակ կը մտնի, թը Ասուն աշեցեք, ես չեմ սըպանե, ես կատվին էտտին եմ ընկե, որը դեպի էս կողմը փախավ:

- Չէ՜, օր չէ՜, դու ես սըպանե,- կըսեն շըրջանի մեջ առնողները,- դանակը ձեռքդ է, ձեռվիտ արընոտ են:

Արթըղ էս մարթը ձեռվընեռեն չի պրծնի, բռնեն տանին, դատը կուտան: Դատն օր կուտան, էս մարթուն կախարան կը որոշեն: Տանին կը, օր կախեն, մեմե էնթույեն մե ուրուշ մարթըմ վազզե կը ու կըյնի կը չվնին քովը, կըսե.

- Էսոր մի՛ք կախե, ինքը մեղք չունի. էն մարթուն ես եմ սըպանե:

Շենլլիկը տեսնի կը, օր էն մարթն անմեղ է, կազատեն: Հըմը նրան էլ կյանք կը բաշխեն, օր ազնիվ է ու մեղքը շիտակ սրտով վրան է առե:

ՀԱԲՈՒՐ ՏԱՐՎԱ ՔՆԱԾ ՄԱՐԹԸ

Մե քաղաքըմ սաղ մայլովըմ վառի կը: Էտ վերանաներուն մեչը, վառած վախտը մե վաճառական մարթըմ իրեն տանը վարի դաթը քնած է էղե. սահաթը կախած, օղենե սարքած: Մայլեն վառի վերանա օր կըլլի, հարուր տարի մնակը: Էտ վախտը վերանան փորեն կը, օր տուն շինեն, տեսնին կը, օր դուռը կը բացվի: Մըտնին կը նես, տեսնին կը, օր ի՞նչ, սարքած օղա, սահաթը կախ, էնթունա մարթը պառկած, քընած է: Արթըղ թոփ կըլլին, դոխտուր կը փերեն, կաշեն, օր սաղ-սալամաթ մարթ է: Զարթեսնեն կը: Մարթն օր կայեղնա կը, գառգիլամիշ կըլլի, կըսե.

- Ա՛յ մարթիք, ինչի ինձի վախտին ձեն չը տվիք. էսքան քընե՞լ կըլլի:

Հըմը մարթիքը չեն ըսե եղելությունը, օր բիրտան սրտապատառ չըլլի, խելքը չը թըռցնե:

Մարթը կելլե, պըտտի կը, կաշե, օր նը իրան գիտցած մարթիքը կան, նը իրենց քաղաքն ու տները:

Արթըղ իրեք օր պըտտի կը ու կըյնի, իսկական մեռնի կը:

ՀՆԱՁԱՆԳՆԵՐԸ

Ժամանակոց մեծ իշխան մարթըմ կըլլի, ինքնա շա՜տ հարըստնա կը: Հինգ հատ տղա կունենա: Տուննա քառսուն ջան կըլլին էղե: Գեղացիք բիրատի էտոր թշնամի կըլլին էղե, թը՝ ինչխո՞ր էտիկ էտման ու էտքան հարստութուն ունի, մենք չունինք:

Էտ իշխանն օր կիմանա, գեղին մարթոցը քովը կը կանչե, կըսե.

- Արիք տեսնինք, թը իմ դոլվաթըս ուրդից կըլլի կը: Քուքան օրա, էսիկ իրան մանչերուն կանչե կը.

- Տղե՛րք, արիք գերընդեստանըդ առեք, էքվան քընացեք այնի կանաչ արտը քաղեցեք:

- Ըսելը գիտեր, տղաքը հըմը առանց ձեն հանելու, կելլեն, գերընդեստանը կառնեն ու կերթան արտը, կըսկըսեն քաղելը:

Արթըղ հերը կելլե, դեմի տղոցը թարաֆը կաշե ու ճվա կը.

- Տղե՜ք, մի՛ք քաղե, մի՛ք քաղե, թողեք, դառցեք արիք:

Գեղացիք շշմին մնան կը ու կըսեն.

- Մա՛շալլա, ախպար, մաշալլա՜: Օր էսման է, հըլբըթ օր տունը պիտի հարըստնա:

Կը խոնարվին էտ շնորալի մարթու, նրա գերդաստանի ու դրած կարք ու սարքի առաչ: Էտտից էտև բարի աչքով կը նայեն աշխատավոր ու ըստեղծող էտ գերդաստանին:

ԴՈՎԼԱԹԸ ՇԻՏԿԸՎԱՎ

Ժամանակոց մե մարթըմ կըլլի, կունենա էրկու հարս, ինքնա էխտյար կըլլի: Էտ մարթը ամմեն օր նըստիկը իրենց դուռն ու ուշադիր կաշե, օր մըռչըմուկնին ի՜նչ օր ըռաստ քուքա, նես կը կրեն: Դու մի՛սե. էտիկ իրենց տան դոլվաթն է էղե: Օրըմա տեսնի կը, օր մըռչըմուկնին տնեն ի՜նչ ըսես դուս կը կրեն:

Հայ, հա՛յ կըսե. էստեղ բանըմ կա՜: Քուքա նես, հարսներուն կըսե.

- Հարսնե՛ր, էս ի՞նչ հարամ բան եք էրե, օր մըռչըմուկնին դուս կը կրեն:

Հարսները մայիլ կը կնան: Կերսարը կըսե.

- Չէ՛, աշեցեք, թը ի՞նչ ծռություն եք էրե:

Մեծ հարսին միտքը բանըմ կըյնի, կըսե.

- Աղամի, գիտե՞ս, էրեկ հավկիթ խաշեցի քանիմ հատ, մեծը իմ տղիս տվի, պըզտըկնինա՝ դեքերկանըս տղոցը:

- Հա՛,- կըսե աղամին,- գիտե՛մ օր ծռությունըմ կա: Տը մեղա՛ էկեք, մեղա՛:

Մեղա քուքան: Էքսի օրը մեծ հարսը հավկիթ կը խաշե, մեծերը դեքեր տղոցը կուտա, պզտիկնա՝ իրեն տղին:

Արթըղ աղամին նըստիկը դուռն ու կաշե կը, օր մըռչըմուկնին դառցան տուն կըրեցին: Էտ տան դոլվաթը շիտկըվավ:

ԾՈՒՅԼ ՏՂԵՆ

Հարը իր տան մեչ կըզգա, օր իր խոսքը գետինները կմնա շատ անգամ, չի հարգվի իր խոսքը. վերցնե տղին օրվան մե օրըմ կըսե.

- Քընե մեմ դըրկըցին գրվանքաները փե, հըլը աշենք իսի բուրթը ինչքան է:

- Հարի՛կ,- կըսե տղան,- այսի ծունկըս թա՛մամ գրվանքա է. փի էսով կըշռենք:

Անգաճ չի էնե:

- Ծո՛,- կըսե,- էտիկ չերիր-չերիր, քընա մեմ առշինը փե, իսի շալը չափինք:

- Հարիկ,- կըսե,- դիա, ա՛յ, կատուն կուշտըդ է, պոչին ծերեն թախի անգճին ծերը թամամ առշինըմ է. ըշտը էտով չափե, մեմա ի՞նչ էրթանք ուրուշեն ուզենք:

Գենա անգաճ չի էնե, թամբալուքանը իշուն քեռի կըսե:

- Ծո տղա՛,- հերը սրտնեղած կըսե,- հըլը մեմ ել, դուս աշե, թոն խո չի՞ քա, ես գործ ունիմ, էրթամ պիտի:

Ատոնքա շունըմ ունին էղե, տղան շան անունը կուտա, նես կը կանչե:

- Ծո՛,- կըսե հարը,- շանը ինչի՞ կը կանչես:

- Աշեմ վրեն թաց է, թը չոր է, մեմա դուս չելլեմ:

- Ծո տղա, քեզի օր շանը կուշտը կապենք, շնեն լսել սորվի՞ս կը:

- Մեր շունը խածելա չիտե, ի՞նչ սորվիմ...

- Քընա, քընա ջուրըմ փե, ինչ օր ըսի անգաճ չերիր:

- Սաղ ըսածներդ ըշտը էրեցի, ջուրնա դու փե, խմե,- կըսե ծույլ ու անպատկառ տղան:

ՊԱՌԿԱԾ ԿԸ ՔԱՂԵՄ

Կըլլի, չի՛լլի, մե թամբալ տղեմ կըլլի: Հերը ի՞նչ կենե էղե, չի կըրնա էղե բանի, գործի թընե: Մե օր մե տղան կերթա չայիրը, տեսնի կը օր ուրուշնին քաղ կենեն, խոտի թայա կը թընեն: Քուքա տուն, հորը կըսե.

- Հարի՛կ, ես էն չայիրնուն ծաղկընեռեն էնքան պիտի քաղեմ, օր իրեք թայա թընեմ:

- Թի՛ր, օղուլ, թի՛ր,- կըսե հարը,- չուզողին աշվին դուս քա:

Մե քանիմ օր կանսնի կը օրա, հերը կըսե՝ դե քընա՛, քաղե, վախտն անցավ: Կերթամ, կըսե, գերընդին կառնե ումուզին, կերթա ծաղիկ քաղելու: Կերթա, մեմ, էրկուս գերընդին կը փարդե, խոտերուն ու ծաղկընեռուն գըլխընները կը կըտրռտե, խոտին դաստան կառնե գըլխուն տակն ու պառկի, քընիկը:

Հերը ցորեկ հացն օր կը փերե, կաշե կը, օր հեչ բան չէ էրե, կըսե.

- Այ օղուլ, քաղե, է՞ս է քաղածդ,- ցուց կուտա գլխի տակի փունջը:

Տղան քիչըմ մըտածե, մտածե կը, էտև հորը կըսե.

- Հարիկ, ինձի մի խանքարե. ես պառկած կը քաղեմ:

- Մանչ ջան,- կըսե հարը,- պառկածըդ լավ տեսնիմ կը, լա՜վ կերևա, հըմը քաղածդ չեմ կըրնը տեղը փերե: Վա՜յ թե աշկի բըժըշկի էրթամ, մե հատըմ ըստուքվիմ, քանի շատ ուշ չէ:

ԹԱՄԲԱԼԸ

Մարթուն մեկը էնքան թամբալ կըլլի կը օր, հաց ուտելու համարա ալար կենե, օր վեր էլլե: Թամբալութենը իրեն շատ օր կառնե, կըսե.

- Ինձի տարեք, թաղեցեք, էլ էսդից էտև վե՞վ պիտի ապրի: Էտտըրողընա (այդքան էլ) դիորի կը զըրցի, իրեննա իրեն կառնե:

Արթըղ էսոր համար գուբի կը փերեն, թընեն կը մեչը: Ժողովուրթը թոփ կըլլի, տանին կը թաղելու: Դեմեն ճամփորթըմ քուքա, տեսնի կը, օր մեռել կը տանին: Ինքնա կը հետաքըրքըրվի, գուզե հուղարկավորնուն հետ գերեզմընոց էրթա: Մոտենա կը գուբուն, տեսնի կը, օր մարթը սաղ է: Զարմանա կը, կըսե.

- Ա՜յ մարթիք, էս սաղ մարթուն ո՞ւր կը տանիք:

- Մենք գիտենք, օր սաղ է,- կըսեն,- հըմը տանինք կը թաղելու, չունքի շատ թամբալ է:

- Ա՜յ մարթիք,- կըսե,- ե՛տ դառուցեք, ե՛տ դառուցեք, ես կը տանիմ իմ տու-

նը: Մե մարաքրմ լիքը էփած բաքսրմաթ ունիմ, թող էնտեղ պառկի, ինչքան գուզե ուտե, չի պարպի:

Գուբուն միչեն թամբալն անգաճ կենե, գլոխը վեր կը վերցրնե մե կերպրմ, կը հարցրնե՝ բաքսրմաթը թրռչա՞ծ է:

Չէ՛,- կրսե ճամփորթը,- ջուրը կը թնեմ քովրդ, թռչե՛, կե՛:

- Օ՜ֆ, տարեք,- կրսե,- վե՞վ պիտի թրռչե...ուտե...Տարե՛ք:

ԱԼԱՐ ԷԼ ՉԵՍ ԷՆԵ, ԽՈՍԻՍ ԿԸ

Կրլլի, չի՛լլի, ժամանակոց մե թաքավորրմ կրլլի, մե թամբալխանեմ կունենա: Էստեղ թոփ կրլլին իրեն էրկրրին թամբալները: Էսոնք բիրատի ձրի հաց կուտեն էղե: Վախտրմ օր կանսնի, էս թաքավորը տեսնի կը, օր թամբալխանեն թամբալներով լիքը լցվել է, շարժրվելու տեղ չկա: Մրտածե, մրտածե, ինքն իրեն կրսե.

- Էս ձրիակերները էրկիրրս պիտի քարուքանդ էնեն: Հա՜: Բրռնե լալավազիրնուն կրսե.

- Կրրակը տվեք թամբալխանեն, թող վառվին պրծնին: Վեվ օր թողնե փախիկը, էնոր էլ պետք չէ պայել էստեղ, վեվա օր չի փախի ու վառվելեն չի վախենա, էնիկ իսկական թամբալ է: Լալա-վեզիրնին կրրակը կուտան, գոմը կը վառեն: Թամբրլնուն շատ փայը փախնիկը դուս: Մնան կը մե քանիմ թամբալ, լերթերուն կրնկնին ու կը տրքան: Շատերնա վառին կը, հրմը ալարին կը, օր ձեն հանեն: Մեկին մեծ մատը կը վառի, կրսե.

- Մեծ մա՜տտրս վառավ:

Մեկելն էնթույեն կրսե.

- Ալար է՜լ չես էնե, խոսիս կը:

Արթրը թաքավորը կաշե կը, օր շիտակ, իսկական թամբալ օր կրսեն, ըշտը էսոնք են: Էտոնց կը պայե, մեկելոնց կը վռնդե:

ՍՏԱԽՈՍԸ

Կեղնի թաքավոր մի: Հրովարտակ կը հանե, կրսե.

- Ոյն օր լավ սուտ ըսեց, մե մեծ օսկե թոփ կիտամ ուրին:

Շատ մարթիք կերթան թաքավորի քովը, ինչքան օր սուտ կրսին, կրսի՝ կարելի է: Թաքավորրն հետն էլ կը մրտածե ու տխրութուն կիշնի վրեն, թե՝ էս ի՞նչ զուլում է, օր իմ էրկիր ու ժողովուրթ պատել է. չեն ի կրրնա մարթավարի

սուտ մը խոսիլ, ուրեմն էս իմ ժողովուրթ ոչ մե բանի էլ պետք ու պիտանի չի: Էտպես գալիս-գընում են ու անմիտ ստեր պատմում:

Մե մարթ մի կիգա, օրինակ էսպես կըսե.

- Թաքավոր, ես սապախտան դուս էլա, էրկընքի էրեսեն շան հաչոց կիգեր: Լուսումութն էր, յաման վախեցա, էսպես բան կըլլի՞:

Թաքավորն պատասխան տվեց էնոր, ըսեց.

- Մի վախենա: Կարելի է: Կեղնի օր չալաղան շունն առի էլիր է վերև, շուն լը կհաչա:

Մե խեղճ տղեմ ի կը մտածի, կը մտածի, կառնե մեծ բըղիկ մի, կերթա թաքավորի քով, կըսե.

- Քու պապ ին պապուն հըյտը բըղիկով օսկի է տալիք, տուրի՛:

- Ա՜յ սուտ,- կըսի թաքավոր,- ե՞փ է էղի:

- Թե սուտ ի,- կըսե տղեն,- թոփ տուրի՛, թե օղորթ ի, բըղիկ լիք օսկի տուրի՛:

ԲՈՐԻՆ ԱԽՉԻԿԸ

Թաքավորը բոշին ախչիկը մանչուն կառնե: Էտիկ ի՜շտըղըր հաց կուտե, չի կըշտանա: Իրիկընինին նեսը օր մարթ չի՛լլի, կելլե տեղանը կը ցըգե, ամմեն տեղին վրա մե հացըմ կը ցըգե, դագինակը կառնե ձեռքը, պարկը կը շալկե ու կըսկըսե հացերը մեկ-մեկ ժողվելը, թընե կը պարկը, տանի կը իր տեղին վըրեն նըստի կը ու կուտե, օր նոր կշտանա կը: Թաքավորը կանչե կը բոշին, կըսե.

- Խընամի օր դարձանք իրար, հո չե՞ս փոշմանե:

- Չէ, թաքավորն ապրած կենա,- ինչի՞ պիտի փոշմանիմ:

- Մեր խընամիանալուց հետո,- նորեն կը հարցընե թաքավորը,- քո կյանքում փոփոխություններ էղա՞ն, թե՞ չեղան:

- Թաքավոր խընամի,- կըսե բոշան,- իմ հարգանքըս մեծըցավ. հիմի ինձի շատերը կը նկատեն, շատերը բարև կուտան, հիմի ես ավելի եմ հարգված, քան առաչ էր:

- Չէ՛,- կըսե թաքավորը,- ավելի ծանտռուխոշոր փոփոխություն չեղա՞վ ձեր կյանքի մեչ:

- Էղավ, թաքավորն ապրած կենա, հըպը չեղավ,- կըսե բոշան,- առաչ ուքը ջան էինք, օրը վեց հաց կուտեինք, հիմի էտքան հացը յոթ հոգով կուտենք: Հընմի առաչվընե շատ լավ է:

- Ըշտը ըսե՝ հարսընս ձեզի փըրկեց,- կըսե թաքավորը:

ՉԵՓՉԻ ՄՈՒՍՏԱՖԱՆ

Ժամանակով կըլլի մե չեփ ժողվող Մուստաֆա, խելքե խեղճ, գործով աղքատ: Էտ չեփ ժողվելով ինքն իրան կառավարե կը: Օրվանըմ մեկը իրանց սըտըր-ազամը հիվընդնա, մեռնի կը: Էտև կաշեն օր իրանք մե ախր սըտըր-ազամըմ պիտի ունենան, հըմը չեն գտնի մե խոլոք, խելացի մարթըմ, օր փերեն էնեն իրենց սըտըր-ազամ: Կերթան բռնեն կը էտ չեփչի Մուստաֆային յախան, կըսեն.

- Ընտրել ենք, օր դու պիտի նըստիս մեզի սըտըր-ազամ:

- Ա՛յ մարթիք,- կըսե էս խեղճ չեփչի ժողվողը,- վրա՞ս կը խնդա՞ք, ի՞նչ կենեք: Ես վո՞վ, սըտըր-ազամը վո՞վ:

Չէ՛, ի՛նչ կենե, չի կըյնը պրծնի ձեռքերեն: Փերեն էսոր զոռ-շառ նըստեսնեն կը սըտըր-ազամ: Նըստիկը սըտըր-ազամի տեղը: Կանսնի ժամանակ: Օրվանըմ մեկը գեղին մեչը որպես թը մե անվանի մարթըմ հիվընդնա կը, էսիկա տեսնի կը, օր մարթը արթըղ իրեն մայվան առուտուրին հետ է:

- Ես գիտեմ,- կըսե,- դու էնթույի աշխարը կերթաս, քուքան քեզնեն տեղեկութեն գուզեն, թը՝ ի՞նչ կա, ի՞նչ չըկա: Էտ ժամանակ էտ հին մեռնողնեը հարցընենկը օրանա, ըշտը ըսա թե՝ Չեփչի Մուստաֆան սըտըր-ազամ է նըստե: Էս աշխըրի ի՞նչ ըլլիլը արթըղ էն վախտը էնոնք օ՛սահաթ թամամ հասկընան կը:

ՄԻՍԸ

Խազեինը ծառային կըսե, թը.

- Հիմի էն չեշիտ միսըմ պիտի փերես, օր ո՛չ էքի միս ըլլի, ո՛չ էլ օրցի:

- Լավ,- կըսե,- գըտնիմ կը:

Կերթա էս ծառան, կըյնի դաշտ ու ձոր, սունկ կը ժողվե, փերե սնկով ճաշ կը պատրաստե:

- Ան,- կըսե,- խազեին ջան, էս մսով ճաշը ո՛չ էքի է, ո՛չ էլ օրցի:

Խազեինը կուտե, զարմանա կը ու հարցընե կը.

- Էս ինչո՞ւ միս է, օր ո՛չ էքի է, ո՛չ էլ օրցի:

- Մե որսորթըմ կա,- խազեին ջան, կըսե,- էտ տեսակ որսեր կը բըռնե: Ատոնք ո՛չ էք են, ո՛չ էլ օրց:

- Հըպը էտ որսորթին ի՞նչըղ էնենք, օր ես մե հատըմ հանդիպիմ,- կըսե

խազեիՆը,- կըրՆա՞ս գլուխ փերե էտ գործը իմ խաթեր համար:

- Քու խաթեր համար, խազեին ջան,- կըսե ծառան,- ամմեն ինչ ձեռքես էկածն ու հըլը չեկածնա կենեմ, բայց դունա, խազեին ջան, էրկու պարտադիր պայման պիտի կատարես.

- Ի՞նչ պայման,- կըսե խազեիՆը:

- Պիտի էն աշխար գնաս ու հաջողացնես դրախտ ընկնիս: Ըշտը էտ մարքը դրախտում որս կենե:

ՀԻՄԱՐ ՈՐԴԻՆ

Թուրքը մե տղամ կունենա, մըտնի կը մեշան, կելլե չամի ծառին գըլոխը: Մեմա կաշե, օր հարամեստանը մեկիմ բըռնել, փերեն կը: Ըշտը տեսնի կը օր էտոնց փերածը իր հարն է:

Հարամեստանը էտոր մորեմերկ չըփլըղցընեն կը ու վեր կը վարեն: Չըփլաղ մարքը վազզե, կըյնի կը տուն: Մանչնա ծառեն կիշնի, վազզե կը տուն:

Ճամփան ինչքա՜ն մարքու հանդիպի կը, բոլորին էլ տղան նույն հարցը կուտա.

- Հորըս նոր իսաները տեսա՞ք, թե՞ չէք տեսսե:

Բիրատի կըսեն, օր չէ՛, հորըդ իսաները չենք տեսսե:

Տղան նորից էտ մարքկանց կըսե.

- Չըփլաղ մարքա՞ չըտեսսաք իսաները:

Բոլորն էլ կըսեն, օր չըփլաղ մարք տեսսանք:

- Ո՞վ էր հըպը էտ մարքը,- հարցընե կը տղան:

- Է՛, ի՞նչ իմանանք ով էր,- կըսեն,- չըր-չըփլաղ էր մարքը:

Քուքա տուն.

- Բաբա,- կըսե,- բիլե՞տսըն, սանի քի սոյդըլար, բան օ չամըն բաշընդա իդըմ:

- Բանի քի ֆայդան յոխտուր, ջալլամա օլ,- կըսե հարը:

ԿՈՒՅՐ ՁԻՈՒՑ ԳՈՂԱՑՈՂ ՏՂԱՆ

Մարքուն մեկը մե տըղամ ու մի աշկը քոռ ձիմ կունենա: Ձիուն քա՜նի գարի կուտա, էս տղան կերքա ձիուն քոռ աշքին թարաֆեն գարին կը գողնա: Կերքա հորնա կըսե, թը.

- Հարի՛կ, ձիուն քոռ աշկին թարաֆեն գարին կը գողնամ, հեչա չի իմանա:

- Մե օրըմ կիմանա, օղուլ,- կըսե հարը:

Տղան էլի ամմեն օր կը գողնա: Օրվանըմ մեկնա հարը մանչուն կըսե թը՝ ձին հեծի, էսինչ գործով քընա էսինչ գեղը: Մանչը ձին կը հեզնի, կերթա: Ձիուն վրեն իլլաջ չէ մնացե: Ճամփուն մե ճոճըմ կը պատայի, ձին կընկնի էտտեղ ու էլ չի կըյնը էլլե, սատկի կը:

Էս տղան իյարն ու գամը շալկե, կերթա տուն: Ճամփան շատ երկար է լինում, տղայի բեռն էլ՝ շատ ծանըր: Քըրտընմխած ու ուժասպառ՝ էս տըղեն ամբողջ ճանապարհին մըտածե կը, թը՝ իրենց ձին, էսքան անհարմար վախտ ինչի՞ սատկավ:

- Ծո՛, էտ ի՞նչ ես շալկե, կըսե հարը՝ տեսնելով որքուն:

- Ձին այնի ճոճն ընկավ, սատկավ ա՛յ հեր,- ափսոսանքով ու զարմանքով կըսե տղան:

- Է՜,- կըսե, հարը,- ես չըսի՞, օր մե օրըմ կիմանա քու գողութենըդ:

ՏԵՐՏԵՐԻ ՄԻՐՈՒՔԸ

Գեղացիք թոփ կըլլին ժամին դուռը, խոսին կը, թը՝ մեր ժամին տեղը լավը չէ, էսինչ տեղը ըլլիր, ավելի լավ կըլլիր: Մեկը կըսե՝ ժամը քակենք, հոն շինենք, մեկնա կըսե.

- Ախպար, օր քակենք, վախենամ չըկըրնանք շինե, էտնա գեղովի առանց ժամ մընանք:

Վերչապես կանչեն կը իրենց գեղին ամենագիտունին, կըսեն ժամը տեղափոխելու իրենց ցանկության մասին և կարծիքը գուզեն իմանալ.

- Լավ, կըսե, եփ օր էտման է, նա քակենք, նայա բան: Արիք առանց քակելու քաշենք, տեղափոխենք էնտեղ:

Գեղացիք կըսեն՝ կըյնը՞նք: Հա՛, կըսե, քնացեք տերտերին կանչեցեք, թող քա: Տերտերը քուքա: Էնորա կըսեն օր, ըշտը, էս ժամը պիտի տեղափոխենք: Արի դու մըտի ժամը, քու օրհնութենովըդ ու զորութենովըդ, մե քիչմա մեր օրհնութենով տեղափոխենք:

Տերտերը մըտնի կը ժամը՝ օրհնութան: Էտն տերտերին կըսեն.

- Այսի պզտի աքոշկեցեն գլոխըդ դուս հանե: Տերտերը, ըշտը, գլոխը մե կերպըմ դուս կը հանե: Գուբնին ժընջիլները փերեն, կանցընեն տերտերին ճիտը, կապեն կը: Գոմշընին, քանիմ ջուխտ բանող անասուն, փերեն լըծեն

կը: Տերտերը կըսկըսե Տերօղորմյա ըսելը: Մալը, հա՜յ ըսելուն պես, օր չի քաշե, տերտերին գլոխը կը թըռնի:

Ժամկոչը մեմա էն կը տեսնի օր, տերտերը ժամին մեչը կը շըփփա, գըլոխնա վրան չէ: Ափալ-թափալ վազզե կը դուզ տերտերանց տունը: Ճըվալեն մըտնի կը նես ու կըսե.

- Իրիցկին, տերտերն օր ժամ էկավ, գլոխը վրա՞ն էր:

- Գլոխը հըպը ո՞ւրտեղ պիտի ըլլիր,- կըսե իրիցկինը:

- Իրիցկին, հոքուդ մեռնիմ,- կըսե ժամկոչը,- հըլը մեմ լավ հիշե, էտիկ հիմի շատ կարևոր է:

- Վալլա՜,- կըսե իրիցկինը,- չեմ կըրնա ըսե, գլոխը վրան էր, թե չէ, հըմը էնքան գիտեմ, օր միրուքը շընկար կը:

ՁԿՆԿՈՒԼԸ ԹՈՌՆ Է ԸՆԿԵ

Տերտերին մեկը ժամկոչին կըսե, թը.

- Ե՞փ պիտի դու քիչըմ խելք առնես:

- Ինչի՞,- կըսե նեղսըրտած ժամկոչը,- ի՞նչ եմ էրե օր, տե՛ր հայր:

- Է՜,- կըսե տերտերը ուսուցողական տոնով,- քիչըմ բոլորդ աշե, քիչըմ աշխըրին կարքն ու սարքը սորվե:

- Ի՞նչըդ, թախի հիմի չիտե՞մ,- կըսե իր կյանքին մեծ մասը արքեն վաղուց էտնում թողած ժամկոչն:

Տերտերը հարկ կը համարե անփորց ժամկոչին քիչըմ կյանքին նըրբութունները հասկըսնե, հալե, ուղեղը լըսնե, օր խայտառակ չըլլին:

- Մեռել օր կըլլի, ինձի ըսա, օր թոռը ձուկ է ընկե, մի՛ըսե, թե մարթ է մեռե: Ժամկոչն մարթ մեռած վախտըն էտման կենե: Հըմը մարթիք թեզոք հասկընան կը, օր իտիկ մարթ մեռնելու նշանն է:

Կըլլի օր, օրվանըմ մեկը, տերտերը կը հիվընդնա ու մեռնիկը: Ժամկոչըն գեղին միչեն կանցնի ու ճվա կը.

- Ժողովո՜ւրթ, ձըկընկուլը թոռն է ընկե, ձըկընկուլը թոռն է ընկե՜:

Ժողովուրթը՝ քիչըմ ուրախ, քիչըմ տխուր կըսե.

- Հըպը՜...

ՏԵՐՏԵՐՆ ՈՒ ԿԻՆՏՈՆ

Կինտոն ժամ կերթա, օր խոստովանի: Չոքի կը տերտերին առաչը ու տեսնի կը, օր էնոր գեքսին մե լավ սահաթըմ կա: Խոստովանած վախտը մըտնի կը տերտերին թևերուն տակը ու սահաթը կը թըռցընե:

- Տե՛ր հայր,- կըսե կինտոն,- մե մեխկըմ եմ էրե:

- Ասա, որթի,- կըսե տերտերը:

- Մե սահաթըմ եմ գողցե:

- Տար, տերը տուր,- կըսե:

- Տերտեր, քեզի կուտամ,- կըսե կինտոն,- դու տուր իրեն:

- Չէ,- կը բացատրրե տեր հայրը,- քու ձեռքովըդ պիտի տաս, օր մեղքերին թողութուն ըլլի:

- Ես կուտամ, ինքը չի առնե, տե՛ր հայր:

- Է՜, կըսե տերտերը,- եվ օր դու կուտաս, ինքը չի առնե, թող Աստված քեզի թողութուն շնորեսցե:

Կինտոն խոստովանենքեն կելլե, կերթա տուն:

Էս տերտերը ձեռքը տանի կը, օր սահաթին աշե, տեսնի կը, օր կինտոն իրենն է գողցե.

- Ծո՛,- կըսե,- անիծածը իմ սահաթն է տարե՜...Եսա Տիրոչ անունով բարի վայելում ու մեղքի թողութուն էրա:

ԳԻՏՈՒՆ ՊԱՀԱԿՆԵՐԸ

Օրենքը մե դիրգըրիմ, տերտերիմ ու թարգում պահակ կը կայնեսնե: Տերտերն ու թըրգին քընին կը, դիրգարնե քունը փախցընելու համար ագլամիշ կըլլի, մե փատե մարթըմ կը շինե, կայնեսնե կը:

Թըրգին օր պահակ կը կայնի, կըսե.

- Ջանըմ, էտ մարթն օր իրեն շնորքըն է ցուց տվե, եսա իմ շընորքըս պիտի ցուց տամ: Մե ղաթըմ հալավ կը կարե ու հաքցընե կը: Հերթը քուքա տերտերին: Էսիկա տեսնի կը, օր զարմանալու բան են էրե, կըսե.

- Էս մարթիքը, օր իրենց ձեռքեն էկածն են էրե, հալբաթ օր Աստված էտման է կամեցե, արի եսե իմ գիտցածը էնեմ, իմ շընորհքըս ցուց տամ, թող Տիրոչը կամքը մինչև վերչ կատարվի:

Կըսե ու փետե մարթուն քովը կը չոքի, աղոթք կենե: Էնքան կաղոթե, օր

Ասսու հրամանով փետե մարթը հոքի կառնե, դառնա կը մեզի նըման իսկական մարթ:

Հիմի, թե դուք խելացի մարթ եք, ըսեք.

- Էտ իրեք շընորքեն վե՞րն է ամենազորավորը:

Ով էլ հոքով, սրտով ճիշտը գըտնի ու ըսե, ով էլ ամմեն մանրամասն ու նրբութուն մոռացութան չընտա, ապա հաստատ իմանա, օր.

- էրկընքեն ընկնող իրեք խնձորն էլ իրենն է ըլլելու:

ՊԵՇԲԵԹԱՐ

Գեղացուն մեկը մե թոփալ տղեմ կունենա, նշանել չի կըրնա. առնող ախչիկ չիլլի: Տղին հերը կաշե կը, օր էլ հնար չըկա, կելլե կերթա մե ուրուշ գեղըմ ախչիկ տեսնելու: Էտ գեղացիք տանին ցուց կուտան մեկիմ տունը: Կերթա, ըշտը, մարթը ախչըկանը տեսնի կը ու նշան, քեֆ կենեն կը: Նըշան-քիրիշանն օր կը պրծնի, տղին հերը ետ քուքա, աշկիլուս կենե իրենց տունը, լավ կուրախանան: Արթըղ պատրաստութեն կը տեսնին, օր էրթան, իրանց հարսընցուն փերեն: Հըմը վախենան կը, թե էն ախչըկա հերն ու մերը փեսացուի թոփլուութենը կիմանան, փոշմընին կը:

Դու արի տես, օր էտ ախչիկն է աշխըրին չիրքինն է էղե: Էտոր համար էնոնքա մըտածեն կը, թը չըլլի՞ տղին թարաֆը փոշմընի:

Տղին հերը պատրաստութեն տեսնելեն էտն գեղով-մաղարով կելլե, քուքա ախչըկա հոր տունը՝ հարսին տանելու: Կուտեն-խմեն, քեֆերն օր կը տաքնա, կելլեն հարսին թընեն կը սանքան: Կերսարը կերթա, օր մնաք բարով էնե, տեսնի կը, օր ի՞նչ տեսնի. տընեցիք պար են բըռնե, խաղան ու կըսեն.

- Քեթի ղըզի ա՜րա վերտը՜խ...Քեթի ղըզի ա՜րա վերտը՜խ:

(Արատավոր ախչիկը մարթու տըվինք): Աչքըդ սիրեմ կեսրար. մըտնիկը պարն ու կըսե. Օղլան ղըզտան պե՜շբեթա՜ր (Տղան աղջկանից ավելի վատ): (Պարերգը երգում էին՝ «Չեմ կըրնա խաղայի» եղանակով):

ՏԸԲԸՌ ԱԿՈՆ

Տըբըռ (կռտած) Ակոն առակախոս մարթ էր: Էտիկ մե օրըմ կերթա կը Դաղեշ: Գեղացիք կիմանան, օր էկել է, իրար իմաց կուտան, թե էրթանք գիշերը ժամանակ անցընենք: Էտիկ մե քանիմ առակ-զվարճախոսութուն կը պատմե, խընդան կը ու ուրախանան կը:

Էտև կըսեն.

- Ակո քեռի, արի մե լավ օյինըմ պատմե մեզի, քիչմա խընդացու:

Ակո քեռին կըսե.

- Քընացե՛ք մե ամանըմ ցորեն ալուր փերեք, էման մե օյինըմ հանեմ, օր դիորի լուս անջաղ դաթարիք:

Էս մարթիքը կըյնին սաղ գեղը ման քուքան, ցորեն ալուր չեն կըյնը գտնի: Քուքան ուղարկողի քովը.

- Ակո քեռի, ցորեն ալուր չըկա, ո՞ւրտուց գըտնինք: Ըշտը սաղ գեղը տակ-նուվրա աշեցինք, չըկա, ախպեր,- կըսեն:

Ակո քեռին կըսե.

- Ծո՛ վերվարած ավարաներ, հըպը սաղ գեղով, օր մե ամանըմ ցորեն ալուր չեք կըյնը գըտնի, էտտից լավ օյինը քանի՞ թավիր կըլլի:

- Էվալլա՜, Մաշալլա՜,- կըսեն թոփ էղած սաղ դաղեշցիք ու ուրախ սըրտով կերթան, ցըրվին կը իրենց տները:

ՀԱՐՍ ՈՒ ԿԵՍՈՒՐ

Գեղացի մե շընորքով ու բարեպաշտ կընիկըմ կունենա չորս հարս, չորսնա մեկը մեկեն լավ, մեկը մեկեն համավոր:

Գեղացի էս լավ կընիկը վըրա հինգին, օր հարս կը փերե, ինքնա չիտե, թե ինչի՞, սիրտը քիչըմ կախ կըլլի:

Էս նոր հարսին դեմքը քլադիատորի դեմքի պես կըռվարար ու սարթ կըլլի: Էտոր համարա էս խեղճ կընիկը, հարսին ոտքը հըլը շեմը չըմտած, հատուկ կըզգուշասնե, կըսե.

- Հարս ջան, գիտե՞ս, իմ հարսներըս քուլլի դեմըս չեն խոսի: Իմացի օր, էնոնց պես, դունա չպիտի խոսիս:

Նորեկ հարսը չիքիլան վար կը քաշե, դեմքին ինչքա՜ն կըրնա ժպիտ ու բարութուն կը նկարե ու, ուղիղ ապագա կեսերոչ աշքերուն մեչը խեթ-խեթ նայելով, կըսե.

- Ոտքըս շեմեն թընեմ նես,

Ես կը տըմփեն, դունա տե՛ս:

ՍԱՏԱՆԵՆ ԿԸՍԵ

Ավազակնին ճամփուն վրրա ըռաստ քուքան տերտերին ու հետը միազըմ տեղ առաչ կերթան: Առաչ օր կերթան, ավազակնուն մեկը վերցընե, կըսե.

- Տերտեր, սատանեն կըսե, թը քեզի թալնենք:

- Որթի,- կըսե տերտերը,- սատանին մի՛ք լսե. սատանեն խափ կուտա մարթուն: Տղեքը չեն թալե ու կերթան կը: Վախտըմ օր կանսնի, մեմե ըռաստ քուքա ավազակնուն:

Էս անքամ ավազակնին իրար հետ խոսք ու խորուրթ կենեն ու դառնան տերտերին կըսեն.

- Տե՛ր հայր, սատանեն կըսե, թը՝ քեզի մենք մե քանիմ մանեթ հանենք փարա տանք. ի՞նչ կարծիքի ես:

Տերտերը լուռ կը մնա, պատասխան չի տա, չունքի հասկըցած չի ըլլի ավազակնուն միտքը: Գիտե, թը՝ հըլը իրեն փորցեն կը:

Տերտե՛ր, ինչի՞ պատասխան չես տա, մենք, ախըր, շատ մաքուր սըրտով կըսենք ու գուզենք էնել էտ բանը:

- Որդյակներըս,- կըսե Աստծու հավատարիմ ծառան,- սատանին մեկ-մեկ հատ էլ պետք է անկաջ կախել, լսել:

ԲՌԱԹԸ

Ուռուս զորքն օր թափով քուքա, լըցվի կը Արզըրումա գեղանը, սալդըտնուն տեղավորեն կը տները: Մե վախտըմ օր կը մընան, հրաման կըլլի, օր էկած զորքը պիտի էրթա: Արթըղ կըսկըսեն տներեն էլլել ու թոփ ըլլիլը: Պառավ կընիկըմ կըլլի, կաշե օր իրեն տունը մնացող սալդաթ բռաթը մայրըմով կապած փարեն կողընքին տակը թողել, քընացել է:

- Վա՜յ, կըսե, քոռանա՜մ ես, իտոր ուրտե՞ղ գըտնիմ, օր տամ: Դուս կելլե, կայնի կը էրթըցող զորքին ճամփուն վրեն: Էն բըռաթին չի տեսնի ու մե ուրուշ սալդաթիմ կը կանչե, կըսե.

- Բռա՛թ, բռա՜թ, մեմ կայնե, իսի փարեն առ, տար ու տուր էն մեկել բռաթին, օր մեր տունը կըմնար:

Սալդատը խընդա կը, կառնե, տանի կը:

Իրիկունը մանչն օր տուն քուքա, կըսե.

- Մարտիրոս ջան, էն բըռաթը փարեն թողել էր, եսա տարա, տվի էն մեկել բռաթին, օր տանի, տա մեր բըռաթին:

- Լավ ես էրե, ա՛յ մարդս, չը մտածե, թը՝ փարեն մնաց մեր տունը, փարեն մենք չը տվինք,- կըսե տղան:

ՎԱ՞Յ, ԲՌԱԹ ՋԱՆ, ԿԵՂՏՈՏԵՍ ԿԸ

Հայաստանի հողի վրա պատերազմները անպակաս էին. Արզրրումի կողմերը ժողովուրթը զզվել էր արթեն թոփ-թըվանքի ձենեն. մեկ ըռուսներն էին առաչ գալիս, թուրքերն էին փախչում, գընում, հետո էլ ռուսները ետ էին քաշվում, էլի թուրքերն էին վրա գալիս: Սըպանություններն ու արնահեղութունը, թալանն ու քոչը, բըռնութունները, անիրավութունը անվերջ ու անպակաս էին:

Հայ մարթը իրեն դավանակից ու հավատակից ըռըսի կողմն էր հոքով ու սրտով, օքնում ու աչակցում էր նըրան ամմեն ինչով, հավատում էր նըրան, բայց իր հողում իր տառապանքները վերչ ու վախճան չունեին: Արթըղ չիտեր՝ վե՞վ է բարեկամ, վե՞վ՝ թըշնամի:

Ըռուսն օր ուզենար, իշխանութուն կուտար հային, քիչմա թիկունք կըլլիր: Էտիկ, ըշտը, բոլ-բոլ էր: Ըռուսն էլ հըմը էտիկ չէր էնե:

Մե անքամըմ էլ, էտ կըռիվների ժամանակը, մե գեղիմ համար յամա՜ն կըռիվ կուտան ըռուսն ու թուրքը: Օրերով էտ գեղին թաղերուն մեչը կըռիվ կերթա: Մե ալնոր հայըմ իր ընտանիքի հետ փակվել է իր տան մի անկյունում, ահն ու վախը սրտում կաշե, թը՝ ե՞փ պիտի վերչանա կըռիվը: Ժամանակ էտն, կրակոցներուն ձենն օր էլ չի քա, էս մարթը կելլե դուս, գուզե իմանա, թե վե՞վ է հաղթե: Մեմա տեսնի կը, օր ըռուս սալդաթը շալվարն իջուցե, նըստել է հենց իր տան մեչը.

- Վա՜յ, բըռաթ ջան,- կըսե ուրախացած,- կեղտոտես կը:

ԱՄԱՆ ՁԱՐԴՈՂ ՀԱՐՍԸ

Մարթուն մեկը մե շընորքով, շղվա բոյով հարսըմ կունենա: Էտ հարսը ամմեն օր մե ամանըմ կոռե կը լըվալու վախտը: Ինքնա շաշմի մնա կը, թը ջանըմ՝ ես ի՞նչըղ կենեմ, օր ձեռացըս մեչը ամանը կը ջարթեմ: Ամոթուն չիտե, թե ինչ էնե: Տնեցիքա գիտեն, թը մախսուզ կենե, հըմը ձեն չեն հանե, օր խաթերոչը չը դիպչին:

Էսոնք դռան առաչը մե աղըլըմ են ունեցե, կովերը կթեն կը էղե: Մե օրմե

հարսը մատակ կըթած վախտը գոմշին մեկը քուքա, կըթվող մատկին հետ խաղ կենե, չի թողնե, օր կըթե: Շատ օր զայլեն կը տանի, հարսին հերսը կելլե, քուղան էնթուն կը թնե ու կըսե.

- Ծո՛ թերմաշ, հերիք ու մեկ չեղա՞վ, օր քթե փերես ու բռնե կոտոշներեն, ճիտը կոլըրե, հա՛յտա բալամ, թապլե կը պատին էնթուն:

Դու մի՛սե կերսարնա էնթուն է էղե: Եվ օր այսի բանը աշկովը կը տեսնի, զար ու զարմանք կը մընա: Կըսե.

- Հալալ ըլլի ծծած կաթըդ, հարս:

Արթըղ էստից կիմանան, թը ամընինին ինչի կը ջարթըվին:

Ու հարսին հանդեպ սերն ու հարգանքը կավելանա:

ԴՈՒ ՉԸՍԻ՞Ր

Էրկու ճամփորթ կըլլին: Մեկը մեկելին կըսե.

- Խաչո՛, մարթիք սաղ սուտ կը զըրցին. ստախոս մարթկանց խոսքերին էլ հեչա չեմ հավատա:

- Մարթիք սըլթ խո սուտ չե զըրցի: Հալբաթ մեկմեկա ճիշտ բաներ կըսե, էտ ըսածներունա չե՞ս հավատա,- կըսե Խաչոն:

- Չիտեմ,- կըսե,- մարթկանց սուտն ու ճիշտը սաղ խառնըվել է իրար, արթըղ չիտեմ՝ ինչի՞ն հավատամ, ինչի՞ն չըհավատամ:

Ես կըմտածեմ, օր մարթը կամ հավատակը մեկալ մարթկանց կամ չի հավատա,- կըսե Խաչոն,- ու էտիկ մարթկանց սուտ զըրցիլ-չըզըրցելով չէ:

- Լավ,- կըսե մեկալ ճամփորթ ընկերը,- Խաչո՛, հը՛լը, հը՛լը ինան աշե, էրկու ջանավար քուքան կը մեզի:

- Ո՞ւր է,- կըսե Խաչոն:

- Դե՛յա՛, հա՛,- կըսե մեկելը:

- Հա՛,- կըսե Խաչոն:

- Ծո՛, ո՞ւր է, Խաչո՛, հըլը ցուց տու,- կըսե ընկերը:

- Եսի՛մ ուր է,- կըսե,- դու չըսի՞ր:

ՎԱՐԹԱՊԵՏՆՈՒՆ ՊԱՐԸ

Վարթապետնին վանքին մեչ կուտեն խմեն կը օրա, քեֆերը կը չաղանա, կըսեն՝ Տղաք, արի՛ք մե պարըմ խաղանք:

Էսոնց բանին-գործին անո՞ւնն ինչ է. բռնեն կը պարը, երքեն կը ու խաղան կը.

- Ա՜խ մե ճերմակ
Հա՜ոսըմ ըլլի՛ր,
Ա՜խ մե ճերմակ
Հա՜ոսըմ ըլլի՛ր:
Ան մեկալը անթիյեն կը դառնա կըսե.
Թո՜ղ սև ըլլիր,
Թո՜ղ բոլ ըլլիր,
Թո՜ղ սև ըլլիր,
Թո՜ղ բոլ ըլլիր:
Մեմա մեկալն էնթիյեն դառնա, կըսե.
Ա՜մենքիս մեկ,
Մե՜կ հատ ըլլիր,
Ա՜մենքիս մեկ,
Մե՜կ հատ ըլլիր:

ԱԼԻՆ ՈՒ ԿԱՐԿՈՒՏԸ

Կըլլի, չիլլի, մե Ալի անընով մարթըմ կըլլի: Սաղ աշխըրին մարթոցը պես իրա գործերով, իրա հոքս ու բանին կըլլի: Մտածե կը օր՝ ինքը շատ լավ մարթ է, մտածե կը օր՝ ինքը, ըշտը, ուրուշներեն էնքանա վատ մարթ չէ, արթար է ու շատ շիտակ: Ինքը իրան միշտ հավատասնե կը, թե հենց արթար, ազնիվ մարթ է ինքը...

Էս Ալին մե օրըմ կելլե, կերթա արտերը պտտելու: Մեմե կաշե, օր թոն քուքա: Եվ օր թոնը քուքա կը, Ալին իրեն արտին մեչը կայնի կը ու ձեռվընին վեր կը տընկե ու կըսե.

- Ալի-ղուլըն թառլասընա, Ալի-ղուլըն թառլասընա (Ալի-ղուլիի արտի վրա. Ալի-ղուլիի արտի վրա):

Աստված ղաբուլ չի էնե, կարկուտ կը թափե:

Ալին կաշե, օր կարկուտ քուքա, էտ վախտը փեշերը փռե կը արտին վրեն ու կըսե.

- Ջումլա՜-ալամըն թառլասընա. ջումլա-ալամըն թառլասընա, այսինքն՝ (Բոլորի՛ արտերի վըրա. բոլորի՛ արտերի վրա):

Էտև մե քանիմ անքամ վըրա-վըրա էլի կարկուտի ու հետո էլի թոնի կը փոխվի:

Ալին դիմումները դաթարեսնե կը ու իրան-իրան մտածե կը.

- Է՛ս ձե՞ռ է կառնեն ինձի վերևում...

ԷՇՆ ՈՒ ԹՐԻՔԸ

Էշը ջրեն անցած տեղը թրքե կը: Թրիքը կելլե ջրին էրեսը, իրմեն առաչ կանսնի, կերթա, ինքնա կըսկըսի խեխտըվիլը:

- Ծո՛, կըսե, իմ խեխտըվիլըս դարդ չեմ էնե, հըմը իմ թրիքըս ինձմեն առաչ է անցե. էտ է իմ դարդը:

ԴԱՎԵՆ ԲՈՍՏԸՆԻՆ ՄԵՋ

- Ծո՛, կըսե, դավեն բոստանն է մտե, քընացեք Դավիթին կանչեցեք, թող քա, աշենք՝ ի՞նչ հնար կենե, օր դավին բոստընեն հանե:

Կերթան կանչեն կը: Քուքա կըսե.

- Էնքան խելք չունի՞ք, օր դավեն դուս հանեք բոստընեն:

- Չիտենք, ի՞նչըղ հանենք,- կը խոստովանին գեղացիք:

- Դե քընացեք գութնին ժընջիլը փերեք, լծու մալ փերեք, դավեն պառկեսնենք, քաշենք:

Դավին մե կերպըմ կը պառկեսնեն, ժընջիլը բուկը կը կապեն, էգները կը լծեն ու կը քաշեն: Բոստընին հերը սաղ կանիծեն: Եգներուն մեկինա ոտքը կոլըրվի: Ժընջիլնա ահաքին վերք կենե դավին ճիտը...

- Ծո՛, տնա՛շեններ,- կըսե Դավոն,- ես օր չըլլիմ, ըշտը, սաղ գեղով կորիք կը:

ԴԱԼԻ ԲԱՐՍԵՂԸ

Օրվանըմ մեկը թուրքերը Դալի Բարսեղին կըսեն.

- Դալի Բարսեղ, ձեր մեծ պասին կըրնա՞ս մե հատըմ քըրֆե:

- Ինչի՞ չեմ կըրնա քըրֆե,- կըսե Դալի Բարսեղը,- հըմը տասն օր ինձի բաշխեցեք:

- Հա՛յտե,- կըսեն,- տասն օրը քեզի բաշխեցինք:

- Տասն օրնա Աստծուն բաշխեցեք:

- Հա՛յտե,- համաձայնին կը թուրքերը,- տասն օրնա Աստծուն բաշ-խեցինք:

- Մնացած էռսընավուր մեչը էսօրա նալլաթ, էքվանա նալլաթ:

- Ծո՛,- կըսեն թուրքերը,- Դալի Բարսեղը պտտցուց-պտտցուց, էլի մեր օրոճին քրֆեց:

ՄԱՄՄԱԴԻ ՄԱԼԸ

Մե օրըմ թուրքերը Դալի Բարսեղին կըսեն թը.

- Գիտե՞ս, ամպն օր կը գոռա, ի՞նչ ձեն է, օր քուքա:

- Չէ,- կըսե,- չիտեմ՝ ի՞նչ ձեն է քուքա:

- Մեր Մամմադը ձեր Քրիստոսին մալ է պայ տվե, Քրիստոսը մալը լավ չի պայե, բիրատի սատկել են: Սատկին կը օրա, կաշեստանը լըսնեն կը դուս՝ չորնալու: Վերցընե չոր կաշեստանը թընե կը էնթուն: Էտն Մամմադը կերթա, օր մալը ըստանա, կաշե օր քուլլի սատկել են: Կաշեստանը փերե Մամմըդին առաչը կը թընե: Մամմըդին հերսը կելլե, կաշեստանը մեկ-մեկ Քրիստոսին գլխուն կը զայնե: Ըշտը էն կաշեսնուն ձենն է, օր քուքա կը էրկընքեն:

- Ծո՛ վերվարածներ,- կըսե Դալի Բարսեղը,- դուքա, ձեր Մամմադնա Քրիստոսի ժամանակը չըկայիք, Մամմադն էլ, դուք էլ էտն եք մոգոնվե: Հըմը ուշացած գուզեք դուքա՞ զայնեք էնոր, զարկեք: Համ էլ ես էտման շան մալը ինչի՞ պայեմ, օր էնիկա կաշեստանը գլխուս զայնե:

ԷՓԻ, ԷՓԻ, ԷՓՆ Ի ՎՐԱՆ

Դըրկըցին կընիկը դըրկըցին հավը կը բռնե ու կոխե կը կըճուճը, թընե կը թունդրին վրեն: Էտ վախտը դըրկըցին կընիկը ճո՛ւ, ճո՛ւ, ճո՛ւ էնելով նես կը մտնի, օր իմանա՝ հավն էնոնց տո՞ւնն է, թը՝ չէ: Տան կընիկը իսի՛ էրթումը կուտե.

- Էփի-էփի, եփն ի վրան,
Աքն ի ցից, խուփն ի վրան.
Ագա՛ր խապար ունիմ,
Թընեմ բոխչան, տանիմ բաղչան,
Քըցընցե՛մ, միսն ուտե՛մ...

- Ամա՛ն, քուրը՛ս,

Մի՛ էրթըմնա,

Հավատա՞մ կը,- կըսե միամիտ կընիկը:

ԿԱՆԱՆՑ ԲՈՂՈՔԸ

Կընկտիքը հերսոտած թոփ կըլլին, Ասուն բողոք կենեն, թը.

- Աս ի՞նչըղ կըլլի, օր կովին հորթը, օչխըրին գառը նոր էղած օրեն քալեն-կը ու ծիծ կուտեն, հըմը մեր տղաքը իրեք տարի մեզի տանջեն կը:

- Դուքա կովին ու օչխըրին պես տարին մե անքամըմ մարթոցըդ քովը քնեցեք, ան վախտը ձերա տղաքը ասանք կըլլին:

Ատիկ օր կիմանան, կընկտիքը ճըվճըվոցը կը թնեն.

- Չէ՛, չէ՛, ախպար, ինչըղ օր կա, թող ատանքա մընա՛,- բիրատի մե խոս-քիմ կըլլին ու ըշտը էտմանա կանայք խաղաղվին կը:

ԷՇԵՐԻ ԳԱՆԳԱՏԸ

Հայր Աբրահամը կերթա Աստվածախոս: Ճամփան իշանը ըռաստ քու-քան էնոր:

- Հայր Աբրահամ, ո՞ւր կերթաս,- հարցընե կը իշանը:

- Կերթամ Աստվածախոս,- կըսե Աբրահամը:

- Մեզնենա,- կըսեն,- օր խընդրենք, մե դիմումըմ չե՞ս տանի:

- Ինչու չէ,- կըսե մարթը,- տանիմ կը:

Գրեն կը դիմումը, կուտան հայր Աբրահամին: Իշանը հույսով ու հավա-տով գրել էին.

- Տեր օղորմած Աստված, խնթրենք կը, օր մեզի իշութունից հանես, ուրուշ պաշտոնըմ տաս. էս բեռը մենք մինչի ե՞փ պիտի տանինք. կըռնակ չըմնաց, բոլոր յարա էղավ...Կըսպասենք անհամփեր...

Հայր Աբրահամը դիմումը կառնե, թընե կը ծոցը, կերթա: Հասնի կը Տեր Աստծուն, իր բոլոր բարեխոսումները կենե, դիմումնա կուտա էնոր: Աստված դիմումը կը կարթա, տակը գրե կը.

- Հանքիստ ձեր իշութունն էրեք, թե չէ իշութենից հանեմ, գեղացի կը շի-նեմ. ըշտը էն ժամանակ վեվ ըսես հեզնի կը:

ՄՇԱԿ՝ ՀԱՑՆ ԻՐԵՆԵՆ

- Հարի՛կ,- կըսե տղան,- մըշակըմ եմ բըռնե, հացն իրենեն:

- Ծո՛օղուլ,- կըսե հարը,- չըկրցա՞ր մեր հացն է իրեն վրեն հանեիր:

ՀԵԼԵԼՆ ՈՒ ԱՌՅՈՒԾԸ

Հելելը (ճնճղուկ) թըռչկոտելով օր կը քալե, առյուծին ղառղառ ղարաղոլը հարցընե կը.

- Ծո՛, դու քանի՞ կիլո ես, օր ատանք թըռչըտելով կը քելես:

- Իցցուն կիլո եմ,- կըսե:

Օր կըսե իցցուն կիլո, աս առյուծը աշվին կը բանա ու կըսե.

- Ծո՛, դու իցցուն գրամ շա՞տ կը քաշես, օր իցցուն կիլո քաշես:

- Հելելը կըսե,- ես՝ ի՛մ քաշովըս:

ՓԱԼԼՈՒՄՆ ՈՒ ՉԱՐՈՒԽԸ

Փալլուսն ու չարոխը մի անքամ հանդիպում են իրար ու պատմում են դարդերը: Չարոխն ասում է.

- Կյանքըս փչացավ էս անխիղճ, անօրեն մարթու ձեռքին: Ամբողջ օրը գցում է ոտների տակ, քայլում, տրորում, տանջում, հալից գցում ու իրիկունն էլ, օր տուն է գալիս, օտքերեն հանում դնում է ինձ ջրի մեջ, շնչակտուր անում:

- Տնաշեն, էտ ի՞նչ է օր,- ասում է փալլուսը,- հրպը մի արի ինձ մոտ ու տես, թե ամբողջ օրը ոնց են պատեպատ տալիս ինձ, հալից, ուժից գըցում... Իրիկունն էլ կախում են տաք թընդրրի մեչ, խեղդոտում, տանջում: Էհ, էնքա՜ն եմ հալից ընկնում, պատեպատ զարկվում, մինչև որ սիրտս, աղեմղիքըս չքանդեմ, ազատութուն չկա, չունեմ:

ՏՆԵԳՈՂ ՏՂԵՆ

Տղին մեկը տան մեչ ինչ օր կը տեսնի, գողնա, տանի ծախե կը: Հարը կը նկատե, օր տան ունեցածնին հետեն-հետե՜ն պակսին կը: Վերչը-վերչը գլխու կըյնի, օր տղեն կը տանի: Թե ո՞ւր կը տանի, ինքնա չիտե:

- Ա՛յ տղա,- կըսե հարը,- ախըր էս մեր տան մեչ էղած-չեղած բաները պակսին կը. ես կաշեմ, օր դու կը տանիս:

- Ո՞ւր կը տանիմ, տանիմ ծախե՞մ կը,- կըսե տղան:

- Չիտե՛մ,- կըսե հարը,- եթե էտմա՛ն է՝ լավ կըլլի ինձի ծախես:

- Լա՛վ կըլլի,- կըսե տղան,- էստից էտև քեզի կը ծախեմ:

Խոսքը բերանը կըսե.

- Հարիկ, այդի խալին, օր նստել ես վրեն, էքվընդա ծախելիքս է. ի՞նչ կուտաս, օր քեզի տամ:

- Ի՞նչ տամ,- հարցընեկը հարը:

- Էռսուն մանեթ տու,- կըսե:

- Օղո՛ւլ, թանկ կըլլի,- կըսե հերը:

- Հըպը ի՞նչ կուտաս,- կըսե արթըղ էտ գործին վըլըդ տղեն:

- Տասսը մանեթ կուտամ:

- Է՛,- կըսե,- հարիկ, էտա խի՞ղճ է, էտիկ տասսը մանեթով կորցընել կըլլի՞:

Մե քիչըմ լուռ մնալուց հետո, կավելացնե.

- Իմ ու քու մեչըդ մեր առուտուրը ուրմիշ չի քա. լավ է, օր էլի տանեմ, ուրուշին ծախեմ:

- Տա՛ր,- կըսե հարը,- եվ օր իրար չենք հարմարվի:

ՄԵՎ ԵՋԸ

Մարթուն մեկը մե սև եզըմ կունենա: Էս մարթը համա խելքեն դուս պարտք կունենա: Եզն օր կը պառկի, էս մարթնա կը պառկի ու հետը կը խոսի, կըսե.

- Պառկե՛, սև եզըս, պառկե, պարտքատերը քուքա, յա՛ քեզի կը տանի, յա՛ ինձի:

ՂԱՐԻԲ ՄԱՐԹՈՒՆ ՏՂԵՆ

Ջայիլ տղեմ կարքըվի կը ու, կընկանը թողնե, ղուրբաթ կերթա: Էնտեղ շատ կը մնա, հըմը ետքը քուքա: Քուքա, գիշերը վրա կուտա: Կելլե էրթիքը, էրթեցեն վար կաշե, օր տեղը ցըգած, մեչը մե ջայիլ-ջիվանըմ պառկել է, կընկանը չորս բոլորը պըտըտի, գործ կենե կը: Արունը թափեն կը զայնե. կենե թը ջայիլին տեղն ու տեղը զայնե, մեմե զարզըմբի կը:

Տեր Աստված,- կըսե,- դու համփերութեն տաս: Էտև առակով էրթեցեն կըսե.

- Ախշամի ենդըրմիշ սան,

Չըրայի յանդըրմիշ սան,

Կայնանդա յաթան իգիթ

Անընընն նայը՞նդրը, գալին:

- Ախշամի ենդըրմիշամ,

Չըրայի յանդըրմիշամ,

Կայնամա յաթան իգիթ

Մամանդան ենդըրմիշամ:

Էտ օր կը լսե, ղարիբն արթըղ կիշնի ցած, կընիկը դուռը կը բանա, նես կերթան, կուրախանան կը:

ՊԱՌՎԻՍ ՄԵԿ ԷԼ ՏԸՆԿՏԸՆԿԱՑՈՒ

Մե պառավ կընիկ պատանքը թևին գցում ու ընկնում է ճանապարհ՝ գնում է իր մահվանը ընդառաջ: Հոքնել է արթեն իր կյանքից էլ, աշխարհից էլ: Ուր մահըս վրա հասնի, մտածում է էս կընիկը, թող բարի մարթիք էնտեղ էլ հողին հանձնեն ինձ: Ճամփին պատահում է երիտասարդ տղաների, զրուցի են բըռնվում, ասում-խոսում են, կատակում, զվարճանում են, հետո էլ էս ջահելները մտքները փոխում են: Պառավը տեսնի կը օր էսոնց միտքը ծուռ է, փորցում է խելքի փերել էտոնց, քարոզներ է կարդում, խրատում, նախատում ու դաստիարակում է էս խելառ ջահելներին, թե՝ ախր շատ ամոթ է, ինքը՝ մեծ կընիկ, իր օր ծերության մեջ և այլն, չի օքնում: Գործի ժամանակ, երբ պառավի խոշը գալիս է, ասում է.

- Պառվի պատան քեզ շապկըցու,

Պառվիս մեկ էլ տընկտընկացու:

ԷՌՍՈՒՆ ԴԱԳԻՆԱԿ

Մարթուն մեկին գործը կըյնի փաշին, օր էնիկ վճիռ պիտի թընե: Փաշան գործի քննության ժամանակը էտոր մեղավոր կը ճանչե:

- Էսոր պառկեցուցեք,- կըսե փաշան,- էռսուն դագինակ զարկեք:

Ջղայնանա կը էս տղան, կըսե.

- Աֆֆարիմ զըռթո, էռսո՜ւն դագինակ. էռսուն դագինակ յա՛չես կերե դու, յա՜Ղ էտքանին համռանքը չիտես: Էռսուն դագինակին մարթ կը դիմանա՞, մեռնի կը:

Փաշան կըսե.

- Արցակեցեք, թող էրթա:

Կարցակեն, կերթա:

ՈՒՂՏԻ ՎԱԽԸ

Նալբանդը քուքա քաղաք՝ մալ նալելու: Դավան տեսնի կը օր նալբանդը էկավ, ինքը թողնե ու ափալ-թափալ փախնի կը: Դեմեն ուրուշ դավամ կը պատայի.

- Էտ ուր էտման էվրտի, ո՞ւր կը փախիս:

- Ո՞ւր կը փախնիմ,- կըսե ուղտը,- նալբանդը քաղաքն էկել է, մալ կը նալե:

- Մալ կը նալե քե՛զ ինչ, թող էրթա նալե:

- Ախպար ի՞նչ կըսես, էնիկ մեզիյա կը բռնե ու մալի պես նալե կը: Էտև դու ընկի դատարաններն, օր հաստատես, թը՝ ես դավա եմ, ես եզ չեմ: Ու թե ապացուցես էլ, կընքիդ կեսը կերթա:

ՈՐՍՈՐԴՆԵՐԸ

Գելը, աղվեզը, մեմա այրուծը կերթան կը որս էնելու: Ճամփան մե ձիմ ըռաստ քուքա. այրուծը կըսե.

- Ես իմ որսըս գտա:

Այրուծն օր գուզե ձիուն վրա հարցակվի, աշկերը գոմշի աշկերի պես դուս քուքան, մազերը փուշ-փուշ կըլլին կը կաշուն վըրա, պոչնա կըկըռըկցընե կը, զայնե կը մեշկին, պոչին տակնա արթըղ տըփտըփա կը: Գելը էտոնց բիրատնին սեյր կենե:

Այրուծը ձիուն վրա կը հարցակվի, պառկեսնե կը ու բաշլայե կը ուտելը: Ընկերներուն կըսե.

- Էսորեն ձեզի բաժին չկա, դուք ձեր որսը գտեք:

Գելը կըսե.

- Է՜, աղվեզ ախպար, էսորեն մեզի խեր չըկա, արի էրթանք, մենքա մեր ճարը տեսնինք: Կերթան, տեսնին կը, օր գեղացին փետ կը ճեղքե: Գելը կըսե.

- Աղվեզ ախպար, էն այրուծն, օր ձիուն կըրցավ ուտե, ես էս մարթուն չե՞մ կըյնա:

- Կըյնաս,- կըսե:

- Ես օր մարթուն ուտեմ, քեզի բաժին կուտամ,- կըսե գելը:

Կերթան մարթուն քով, կըսե.

- Այրուծին պես պատրաստվիմ, էրթամ ուտեմ:

Քիչըմ կը կայնի, աշվին կը բանա էսթին-էնթին կաշե, աղվեզին կըսե.

- Աղվեզ ախպեր, աշվիս հալղա-հալղա էղա՞վ:

- Չէ՛,- կըսե աղվեզը:

- Ըսա էղավ,- կըսե գելը:

- Է՞,- կըսե,- ախպար, հալղա-հալղա էղավ:

- Հըլը աշե մազերըս փուշ-փուշ էղա՞ն:

- Չէ՛,- կըսե,- չեղան:

- Ըսե էղա՛ն:

- Էղան, ախպար, էղան:

- Հըլը աշե պոչըս կըկըռըկցա՞վ:

- Չէ՛,- կըսե,- պոչըդ գետնեն չի վերցե:

- Ըսա էղա՛վ:

- Է՞,- կըսե,- էղավ:

- Աշե,- կըսե,- պոչիս տակնա փըթփըթա՞ կը:

- Չէ՛,- կըսե ախպար,- չի փըթփըթա:

- Ըսա փըթփըթա կը:

- Է՞,- կըսե,- փըթփըթա կը:

- Է՛,- կըսե գելը,- օր բիտտուն թըմմել է, ես այրուծի պես էղա: Դե քալե՛, աղվեզ ախպար:

Կելլեն, կերթան մարթուն քով: Աղվեզը թըփերուն տակը պայ կը մըտնի, գելը կերթա մարթուն քով:

- Հա՛, հա՛,- կըսե,- ես քեզի պիտի ուտեմ, կացինը ձեռքեդ վա՛ր թի:

- Է՛,- կըսե մարթը,- օր դու ինձի պիտի ուտես, ես քու ձեռքեդ չեմ պըրծնի. էկե մե քիչըմ օքնե, այսի չիվին այստից հանեմ, էտև կեր:

Գելը կերթա փատին քովը: Մարթը կըսե.

- Այսի ճեղքունին արան թիր ոտքըդ, ես չիվին հանեմ: Գելը ոտքը կը թընե ճեղքունուն մեչը, մարթը չիվին կը հանե, թե չէ, փատը կը սըխմե՞: Մարթը կերթա էնթույեն թաց փետը կը փերե ու գելին տո՛ւր թե կուտաս: Աղվեզը էնթույեն տեսնի կը, օր գելին բանը բուրթ է: Մարթն օր կերթա դանակ փերելու, օր կաշին քերթե, աղվեզը քուքա կը քովը: Կըսե.

- Այ, հիմի հավատամ կը, օր հաջող որս պիտի էնես ու ինձիա բաժին տի հանես:

- Աղվեզ, էտ ինչե՞ն իմացար, ցավից գռմըռում է գելը:

- Գել ախպար, նոր աշկերտ հալղա-հալղա էղան, մազերըդ փուշ-փուշ էղան, էտտիդա փըթփըթար կը: Կըսե աղվեզն ու կերթա:

ԽՈՐԱՄԱՆԿ ԱՂՎԵՋԸ

Աղվեզը կը մոտիկնա այռուծին, կըսե.

- Թաքավորը սաղ ըլլի, կըսեն, թե դուք շատ ուժով եք, հըլը փի՛ր փորցենք. ձեռվընիդ կապեմ, տեսնիմ՝ կըյնա՞ս պըրծըսնե: Այռուծնա խընդա կը, կըսե՝ դը կապե: Աղվեզը չէ՞ օր աղվեզ է. աղվեզ ինչի՞ են ըսե. քընաց մե սատկած ձիում պոչեն մազ քաշեց, փերեց այռուծին ձեռքերը կապեց:

Է՛, ձիուն պոչի մազին կապը այռուծը կըյնա՞ քակե. չաչափըռկա՜վ, չաչափըռկա՜վ, բանըմ էլ չը կըրցավ էնե: Աղվեզը տեսսավ, օր չի կըրնա քակե, ըսավ.

- Ահա՜ն, անջաղ ձեռքըս ընկար, տեսսար՝ ի՞նչըղ կապեցի ձեռվիդ: Հիմի պիտի էրթամ ասկերուս բիտտունին թոփ էնեմ, փերեմ, օր տեսնին քեզի, թքեն, մըրեն, թը ի՞նչըղ թաքավոր ես, օր ես՝ մե աղվեզըմ, թեերդ կապեցի:

Այռուծը ձե՜ն չէր հանե. ի՞նչ պիտի էներ:

Աղվեզը քընաց, օր ասկերուն թոփ էնե: Կերթա ու կը ճըվա.

- Հե՜յ, հարա՜յ, արի՜ք, արի՜ք, տեսսիք, թե ի՞նչըղ եմ կապե այռուծին:

Էտ վախտը մե պիճիլի շակալըմ քուքա կը այռուծին քովը, կայնի կաշե կը: Այռուծը կաղաչե, կըսե.

- Շակա՛լ ջան, ձեռվիս քակե, ինձ ազատե, ես քու ամագիտ տակը չեմ մընա:

Շակալը մոտիկնա կը, քակե կը, հըմը այռուծը կըսե.

- Կապերը թող մնան վըրան, բալքի բայլ չըլլի, աղվեզին հախեն քամ:

Ատպեսա էրին: Հըմը էնթին, աղվեզին ճըվոցին վըրեն, էտոր ասկերը թոփ էղան, էկան, օր այռուծին վըրեն խընդան, խայտառակեն: Օր էկան չորս թարաֆեն արթըղ պիտի թքնեին, մըրեին, հըմը այռուծը վեր էլավ ու բիտտունին ջարթ ու փուրթ էրա՜վ, սար ու ձոր փախուց, հըմը ինքը նըստավ, մըտածե՜ց, մըտածե՜ց, թը.

- Ես ըլլիմ այռուծը, իմ ձեռքըս կապե աղվեզը, շակալնա քա, ինձի ազատե: Էլ ինչո՞ւ պետք եմ ես: Ըսավ ու գլոխը քարին զարկեց, հայդա՜, քընաց էնթույի աշխարը:

ԱՆՏԵՐԸ ՏԱՐ, ԹԵՐՄԱՇԸ ԲԵՐ

Տերտեր մի կերթա սիրականին քով, գիշեր կը մնա հոնի: Կքնի, կըմնա, զանգեր կը զարկին: Կըսե.

- Տոյամա՛ն, անկըցա, ալուբ-զալուբ (հապճեպ) հալավ կը հաքնի, ուրարի տեղը հարսի վարտիք կընցու վիզն ու կիգա ժամ:

Տիրացուն կիշե, տեսնա, օր տերտեր ուրարի տեղ վարտիք ընցուցեր է վիզրն, կըսե.

- Տերտե՞ր,

Դարցի, իշի՛ փիճվընո՞ւդ,

Ջու�է էկե արևո՞ւդ:

Տերտեր դառնա կիշե, օր ուրարի տեղ թումբանն է, կըսե.

Տերտերացու, տիրացո՞ւ,

Թուշրտ ուռրցու,

Մոմերն անցո՞ւ,

Անտերը տար,

Թերմաշը բե՞ր,

Հոխեմ ի տանձ

Կառնեմի կե՞ր:

ԲԱՋԻ-ԲԱՋԻ

Մերն ու ախչիկը գացին ճամփա: Ախչիկն պզտիկ էր, բեզրեց: Տերտերն էկավ ըռաստ: Մամն տերտերոջն աղաչեց.

- Տերտե՞ր ջան, տերտեր, էրեխին հերսոտի՛ս, գա:

Տերտեր էրեխին ըսեց,

- Գնա՛, հասի մորրդ, քու մերը սրտով սիրիմ:

Մերը ըսեց.

- Տերտեր, դու հըմալ խալթ չէր էրե՞, հիմի ի՞նչ էղավ քըզի:

Տերտերն ըսավ՝ բազի-բազի:

ՄԵՌՆԻ ԿԻՆ, ԱՌՆԻ ՔԵՆԻՆ

Մի մարթու կինն ու բաճանաղրն կը մեռնին: Էս մարթրն կը սիրահարվի քենու հետ, կուզե առնիլ, կելլի կերթա տերտերին քով: Կըսե.

- Տերտե՛ր, կընիկս մեռեր ի, կուզիմ առնիմ քենիսի:

- Չէ՞,- կըսե, ձագո,- չի հասնի, խայտառակ կեղնենք սաղ աշխըրքի մեջ. Աստծու հերս վըրեն մըզի կելլա:

Էս մարթըն կելլի, տուն կիգա, բուռ մի օսկի կառնի, կիգա տերտերոջ քով, կըսե.

- Տերտեր ջան, բան մի էրե, իտա քենիս հասու. ահա քըզի բուռ մի օսկի:

Տերտեր կըսե.

- Կայնի, ձագո, բառարան բանամ, տեսնամ՝ ըտուր մեջ գըրո՞ւկ ը: Կը բացի բառարանն, կկարթա, կըսե՝ կա՞:

Արեգի՞ն, Գարեգին: Մեռնի կի՞ն, առնե քենին:

- Գնա,- ըսավ, ձագո ջան,- գնա, վայելե:

ԵԹԵ ՎԱՅԼԵՆ

Մե ջաղչըպանըմ կըլլի, ինքնե շատ ցիգան կըլլի: Խեղճ գեղացիք ինչքան օր էտ ջաղչըպանին ջաղասկը աղոն կը տանին, բռնե ամմե՛ն կոտին օխտը կուռիկ հախ կառնե էղե:

Օրվան մե օրն է մե խեղճըմ մե կոտըմ գարի կը տանի աղլու: Կաշե, օր հախսն առնելեն էտև, տակը բան չի մընա: Կելլե ջաղչին օլուղին կայնի կը ու կըսե.

- Ջուրը քուքա,
Ջուռիկ-մուռիկ,
Կոտին կառնե
Օխտը կուռիկ:
Օխտը կուռիկ
Կառնե կոտին.
Եթե վայլե,
Շատ ամոթ է...

ՊՐԱՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆԵԿԴՈՏՆԵՐ ԵՎ ՀՈՒՄՈՐԵՍԿՆԵՐ

✠ ✠ ✠

- Բալա ջան, արի՛ նշանվե, ճերմըկար, ամոթ է,- կըսե մարը:
- Քեզի ի՞նչ կա, ա՞յ մարս. ձերը հեշտ է. հորս էրեսն օր կաշեմ, լացս քուքա,- հնարագիտորեն արդարանում է տղան:

✠ ✠ ✠

- Էս ի՞նչըղ փոխվել ես Խաչո՛,- ասում է Սիմոնը ծանոթին,- քիչ մնաց չճանչեի, նիհարել ես, փոքրացել, մազերդ էլ թափել են...
Ես Խաչոն չեմ, անունս Մարգար է,- ներողամտորեն ժպտում է անծանոթ մարթը:
Ծո՛, անունդա՞ ես փոխել,- էլի իր էշն է քշում Սիմոնը:

✠ ✠ ✠

Ալեքի կինը, կյանքից դժգոհ, բողոքեց.
- Աստված ջան, երանի՞ մե օրըմ քնեի, չզարթնեի:
- Ա՛յ անխիղճ,- առարկեց ամուսինը,- սաղ օրը վրաս հաչես կը, ե՞փ կը քնիս օր, չըզարթիսա:

✠ ✠ ✠

- Լևան բիձա, վերչը ի՞նչ դի ըլլի. ամեն օր հողի համար կռիվ է: Լավ չէ՞ր ըլլի՝ այդի անպետք հողերը տային, էլ կռիվ չըլլիր:
- Ո՞ւր է անպետք հող, բալա ջան, անպետք հող ըլլիր, Լենինին թաղեին կը, ըշտը:

✠ ✠ ✠

- Լևան բիձա, տղոցդ օր բանակ տարան, գեղին ղեկավարները քեզի բանըմ կօքնե՞ն:
- Հըբը չե՞ն օքնե. քիչ ուտել սորվեցուցին, հիմիյա հեչ չուտելուն կընտելասնեն:
- Տունը հայմի ուտելու բան չունի՞ք:
- Ուտելիք ունենայինք, մկները տնեն չէին փախի:

✠ ✠ ✠

- Քառսուն տարվա չոբան ես, Մուշեղ պապ, առա՞չ շատ ջանավար (գայլ) կար, թե՞ հիմի:
- Առաչ ջանըվըրնին սարերն էին, սիրիեն (հոտից) ետ ընկածներին կուտեին, ահ ունեին, խի՛ղճ ունեին... Հիմիկվա ոհմակը շատ մեծ է. գրասենյակներն են տեղափոխվե, գառ-օչխարը ի՛նչ, արթըղ անմեղ մարթկանցա կուտեն:

✠ ✠ ✠

- Տըղա՛ք, ես օր մեռնիմ,- Վարազը դիմեց տղաներին,- գերեզմնիս վրա ի՞նչ դի շինեք:
Շատ բան խոստացան. փոքրը թե՝ հողաթմբիդ վրա սիրուն արձանըմ կը կայնեսնենք:
- Կայնած արձանը շատ թանկ կը նստի, համ էլ փարան էլի ինձեն դի ուզեք, էտքան փարա ուրտի՞ց: Օր կթաղեք (խորհրդավոր լռությունից հետո). կիսես հետ դուսը թողեք, կըլլի արձան:

✠ ✠ ✠

Գիքոն քառսուն տարեկանում ամուսնացավ թրքուհու հետ: Վարազը թե.
- Ծո՛, էտքան կեցար, ինչի՞ թուրքի աղջիկ առար, գոնե հայ կին առնեիր:
- Դու չիտես, օր թուրքերը հայերուն շատ են տանջել: Թուրքի աղջիկ առա, օր հայիֆըս (վրեժ) հանեմ:
- Է, ծո՛ դու էտ հալիդ մեննըկ ինչ հայիֆ պիտի հանես: Օր էտման է, ձեն հանե, սաղ գեղով հայիֆդ հանենք:

✠ ✠ ✠

- Ծո՛, ինի օրվա քեֆին Բաբուլը բանըմ չալե՞ց,- հարցրին ընկերները չմահավան Ռաֆոյին:
- Ծո՛, ինչ չալել, հեչ բան չըհասկըցա. իտոր չալածը նորեն դի չալվի,- էղավ պատասխանը:

✠ ✠ ✠

- Ծո՛, Մկո, հորդ ապերացին ինչքա՞ն նստավ վրանիդ:
- Է՛, իրեք հազար մանեթ, Փարան մամ:
- Վո՜ւյ քոռանամ, օղուլ, էտքան իզուր ծախսելը յանի արժեր. հազար մանեթ տայիք հարմ ճարեյիք, էրկու հազարինա հորդ վրա, ըշտը, քարըմ կը ցըգեիք:

✠ ✠ ✠

- Օհան, ահաքին վախտ է հարս ունիս, ձենդ չի էլլե, լա՛վ է, խո չի՞ խաղցնե:
- Էսման օր էրթա, շատ լավ է. սիֆտը (սկիզբը) կեսերմեն ըսկսեց, ես քընըրը փըստացի, գլուխ պահեցի: Թախ ինձի հասնիլը հույս ունիմ, օր յա ես չեմ ըլլի, յա հարսը:

✠ ✠ ✠

Փեթոն համոզում էր տղային, օր լավ սորվի, հորը պես էշ չը դառնա, մեղք է:
- Մարի ջան, ինչխո՞ր դու իշու կընիկ կը դառնաս, քեզի մեղք չէ, ես օր էշ դառնամ, ինձի մեղք է:

✠ ✠ ✠

Վեճի մեչ Փեթոն աչ ու ձախ բիրատունա վիրավորեց, հետո՝ դառցավ մարթուն՝ Ծո՛, դու ինչի՞ ձեն չես հանե:
- Է, ի՛նչ ձեն հանեմ, պակաս բան չթողիր:
Ներկարար Օննոն միչամտեց.
- Կընկա գերի ախպեր ջան, իսոր առաչ փերելունա երքել եք՝ «Պարտեզում վարթ է բացվե...»:

✠ ✠ ✠

Կնոչ մահից հետո Իշխանը նոր կին փերեց: Երեկոյան երկար նստելուց հետո, համփերուքունը կորցըրած, հրահանգեց.
- Զարուն, տեղս ցիկ, Միսա՛կ, դունա ըզիդ (ճամփուդ) աշե:

✠ ✠ ✠

- Հարի՛կ,- մի օր հարցըրի հորս,- Արմեն փեսան մորո՞ւթ թոփալ էր, թե՞ էտև էղավ:
- Արմենը վե՞վ է:
- Փեսադ՝ աղջըկանդ մարթը,- զարմացա ես:
- Ծո՛, թոփա՞լ է,- ինձեն ավելի զարմացած հարցուց ինքը:
- Հըբը ի՛նչ է. քառսուն տարի փեսա է, նո՞ր կիմանաս,- զարմանքս ինքնիրեն զայրույթի փոխվեց:
- Յավա՛շ հըլը, ի՞նչ իմանամ. քառսուն տարի քռչեն (ժայռից) վար չէ ինչ, էտոր էրեսը վե՞վ է տեսսե, օր ոտքը տեսնի:

✠ ✠ ✠

- Ըխչի՛,- դիմեց Իշխանը կնոչը,- իսի՛ կերածս ի՞նչ կերակուր էր, բան չհասկցա:
- Սուպ էր, ինչ էր:
- Ծո՛, հըբը ես բորշչ տեյի (որպես) կերա, վայ թե էնտի բան չհասկըցա: Հըլը մեկմա լից՝ սուպ տեի ուտեմ:

✠ ✠ ✠

- Օնե՞ս,- ընկերներն էին հարցընողը,- ինչի՞ ես Ակոփեն միշտ դժգոհ ու դժգոհ, ի՞նչ է էրե քեզ:
- Է՜, ախպեր էր, հըմը՝ ինչ. իր արհեստը մեկիս էլա չսորվեցուց: Ա՛յ, ախպեր Մզիկենց Պապն էր. մարթը խմող էր,

փեշրկը բիրատի ախպրրտանցնա սորվեցուց:

✠ ✠ ✠

- Վարպե՛տ, օտքիս նալրմ զարկ,- լոթի-փոթի տղերքն էին, քեֆները քոք, մտել էին մշակ Օնեսի արհեստանոցը, զվա-ճանալ էին ուզում:
- Այսիկ կրլլի՞,- կոշիկի սովորական պայտը մեկնեց ըսողին:
- Չէ՛, քիչրմ մեծ թող ըլլի:
- Ահան այսի՛կ:
- Ավելի մեծը չունի՞ս...
Մի քանի անքամ օր կրրկնվեց, Օնեսը տեսավ, օր ձեռ են առնում.
- Տղա՛ք,- ըսավ ժպտալով,- շատունց է էշ նալելը թրրկել էի, բայց փերիք էլի դեմ էրաք:

✠ ✠ ✠

Է՛, Օնեսես բան դուս չեկավ,- ըսավ Մանուկը,- բայց Ակոփս ձգտվող էր, ուսում առավ:
- Հարի՛կ, ինչի՞ էտման կրսես. մե մոզիկրմ ունեինք, ծախեցիր, Ակոփը քրնաց, սորվավ, ես ինչո՞վ սորվեի:
- Օնես ջան, մի՛նեղենա, քեզի նախրրմա, օր տայինք, օքուտ չունիր, տանեիր վեք կառնեիր:

✠ ✠ ✠

Խանչալու լիճը ցամքեցնելու համար մասնագետներ էին հավաքվե, հազար բան ըսին, հազար թրին-վերուցին...
- Ծո՛, ի՞նչ եք մոլրրե,- ըսավ մշակ Օնեսը,- մեչը քանիմ բանքա հացի ըրախի լցեք, Մզիկենց տղաքը շափտրվանրմ ցամքեսնեն կը:

✠ ✠ ✠

- Վարպետ ջան, տանի՞ս կը Բաքդանովկա,- հարցրեց Օնեսը:
- Քանի՞ հոքի եք:
- Ես եմ, իրեք մեշոքա օթռուպ (պարարտանյութ):
- Ո՞ւր են հրբը մեշոքներդ,- հարցրեց վարորդը:
- Ահան այսոնք են, շոֆեր ջան,- ցույց տվեց իրեք ընկերներին, որոնց ինքը պատիվ էր տվել, մտածելով՝ հետ գալուց էլ նրանք նույնը կանեն:

✠ ✠ ✠

- Ցոլակ, հերիք է, գիշերվա ժամը իրեքն էղավ, պարահրապարակը փոր չի կրշտացնե, քելե էրթանք: Էրթանք քընինք, օր վաղը աշխատիլ կրրնընանք:
- Իյա՛, ծո՛, հրլը բոլորդ աշե, Ռուսաստան մենք քնելո՞ւ ենք էկե:

✠ ✠ ✠

- Ցոլա՛կ, մոզիները ի՞նչ կենեն, լա՞վ են,- առանց Ցոլակի բարևին պատասխանելու, իր առանձնասենյակում չոր հարցրեց ղեկավար ընկերների հետ սուրճ խմող տնօրենը:
- Շա՛տ լավ են, կոֆե կխմեն,- պատասխանեց Ցոլակը:

✠ ✠ ✠

Ցոլակի հոր հուղարկավորմանը, փեսան միսն էր կտրատում, ճկույթը թեթևակի կտրեց ու ուշաթափվեց: Հետո Ցոլակը, թե.
- Ծո՛մոլրրած, իմ հարս է մեռե, քո՞ւ ուշքդ կասնի:

✠ ✠ ✠

Կարան մամին տարան թոքերը ստուգելու: Բժիշկը հարցրեց.
- Ա՞զգդ, անո՞ւնդ, տարի՞քդ, հասցե՞դ, քանի՞ երեխա ունիս, որտե՞ղ ես աշխատում...Մամը թե.

- Հըլը կեցի, բալա՛, դատավորի քո՞վ են փերե ինձի:
- Մամ, ես դատավոր չեմ, դոխտուր եմ:
- Է՛, օր դոխտուր ես, թոքերս քննե, ինձի ինչի՞ կը քննես:

✠ ✠ ✠

- Հարի՛կ, հեչ նեմեց սպանե՞լ ես,- հարցրեց Մխիթարը հորը:
- Չէ՛, ի՞նչ գործ ունեի թշնամի ճարելու:

✠ ✠ ✠

- Ծո՛, ինչի՞ ձեն չես հանե,- խառնված ու գունատված՝ Մաքսիմին հարցրեց կինը:
- Կըսեստե վրաս շուն է հաչե, ավարիա էրա, քիչ մնաց մեռնեի...
- Վո՜ւյ, ձունը քա գլխուս, ծո՛ ի՜նչ դուս կուտաս, բեռմ պարտք ունինք, սաբր էրե պարտքերս տանք գոնե:

✠ ✠ ✠

- Տղա՛ք, մենք էտ սատանի կշեռքեն բան չենք հասկընա,- ըսավ Զաքարը իրանց տուն պանիր առնելու էկած Գևորգին ու Ծառուկին,- արի՛ք ձեռվիդ Ավետարանի վրա թրեք, օր մեզի չխափեք:
Ձմեռ էր, Ծառուկն աղջրոտ ձեռքը թրեց Ավետարանին ու ըսավ.
- Գևորգ, հալալ կշռե, ձեռվիս քաշվավ, էրկուսսա չոլխինք կը:

✠ ✠ ✠

- Ինչի՞ ժամացույց չես առնե,- հարցուցին Քոռ Պողոսենց Գալուստին,- ժամանակը, ըշտը, կիմանաս:
- Ժամացուցը ի՞նչ պիտի էնեմ. էրկու անքամ շռելու էլա, գիտեմ օր լուսանա կը:

✠ ✠ ✠

- Պապ, ի՞նչ բողոք ունիս,- հարցրեց բժիշկը Գալուստին:
- Բողոք չունիմ, դոխտուր ջան, անգճնիս լավ չեն իմանա:
- Քանի՞ տարեկան ես:
- Ութանասունըինը:
- Ավելի լավ, օր չես իմանա. հիմի քու մասիդ ինչ լավ բան պիտի խոսին, օր իմանա՜սա,- մխիթարեց բժիշկը:

✠ ✠ ✠

- Ծո Համբո՛, ի՞նչ կենես,- վախեցած հարցրեց կինը. (Համբոն, արթնանալուց հետո թախտից կախվել էր, իբր՝ ուշաթափվել է):
- Չես տեսնի՞, հոգի կուտա՛մ, ինչ կենեմ:
- Համբո՜, Համբո՛,- արտասվելով, ճչալով վրա պրծավ կինը:
- Մի՛բոռբոռա լրփավարի, հոքեղարց կըլլիմ,- սաստեց Համբոն:

✠ ✠ ✠

- Էտ այծը, Համբո, թափորի առչևեն քաշելով ինչի՞ կը տանիս:
- Ըշտը իսիկ՛ է զոնքընչիս զարկե, էն աշխար ուղարկե,- ըսավ, կռացավ ու կսկուծ համփուրեց ճակատը:

✠ ✠ ✠

- Բարով ես էկե, Համբո, մերոնցեն խեր-խապար ունի՞ս:
- Ի՜նչ խապար գուզես, Համբարը յամա՜ն գեշ ղըզըմ անցուց:
- Ծո՛, ի՞նչ է էղե, ի՞նչ ղըզը:
- Է, ինչ պիտի ըլլի, ծառեն ընկավ, մեռավ:

✠ ✠ ✠

- Ինչո՞ւ ես կուսակցության շարքերը ընդունվում,- հարցրին Գալուստին:

- Ինչը՞ղ թե՝ ինչո՞ւ, օր լավ ապրիմ:
- Կուսակցությունը լավ ապրելու համար չէ, դո՛ւրս անցի:
- Է, օր լավ ապրելու համար չէ, գլխընիդ է կերե,- ըսավ Գալուստը ու, դուռը շըրխկացնելով, դուս էկավ շենքից:

ֆ ֆ ֆ

- Անհաջող են, լավ չեն,- գանձացիներից մի քանիսի բարձրաձայն կարծիքն էր գյուղի կենտրոնում կանգնեցված Զորավար Անդրանիկի ու Վահան Տերյանի արձանների վերաբերյալ:
- Ծո՛, ինչի՞ կվիճեք, չեք օր հավնի, տվեք տանիմ հորս վրա կայնեսնեմ,- ըսավ Փիլոսը:

ֆ ֆ ֆ

- Ըխչի, կսեիր վերջը լավ կըլլի, ո՞ւր է,- Ազնիվը միակ տղայի համար հարս փերեց չորրորդ անգամ, էլի լեզու չգտան:
- Է՛, հիմի խո էսիկ չէ վերչը, Գիքո,- ամուսնուն ըսավ Ազնիվը:

ֆ ֆ ֆ

- Գանձայից նշանավոր դեմքեր ո՞ւմ գիտեք,- աշակերտներին հարցրեց դասալման եկած լուսաբժնի տեսուչը:
- Շմավո՛ն, դու ասա, գիտեմ օր բանաստեղծ, գիտնական շատ ես սիրում՝ հուշելով հրահանգեց տնօրենը:
- Ես էտոնց գիտեմ, իրար բոյի են չէ՞,- ոգևորվեց տղան:
- Հա՛, հա՛, ասա, մի՛վախենա:
- Ջնդոն, Ճիդուռը, Ճուլուքը, Ջանոն, Ճնճղուզը, ճի՞շտ է...

ֆ ֆ ֆ

- Քուրի՛կ ջան,- հարփած Շմավոնն էր հարցընողը, ում մի կերպ, թևերի տակն անցած բերել էին իրենց տուն,- մեր Սոֆիկը տո՞ւնն է:
- Ի՞նչ Սոֆիկ, սխալ եք էկե,- ըսավ ու շուռ էկավ կինը:
- Հրպը չես ըսե՝ էսիկ ո՞ւմ տունն է:
- Գրողին տունն է, ում տունն է,- չէր հանգստանում կինը:
- Վա՜յ, խայտառակ էղանք. մեր մայլեն գրող չկա, էս ո՞ւր փերիք, հըլը դուս տարեք ինձի:

ֆ ֆ ֆ

- Էս ո՞ւր քնաց է՜, հե՛չ տեղը դաքար չի մնա,- դիահերձելու տարած Մուքոյի հասցեին սրամտեց Սաղաթելը:
- Քուքա-քուքա, Սաղաթել. քելեխին ծախսը հաշվեցին, շատ էլավ, սիրտը չբռնեց, դուս է էլե, քուքա:

ֆ ֆ ֆ

- Ներեցե՛ք, անծանոթ,- ավտոբուսի շրջադարձի ժամանակ շատախոս ու ճարպիկ մի կին ընկել էր Գալոյի գիրկը:
Ամեն շրջադարձի կրկնվեց նույնը: Հետո էտ հարսը, խլվլալով ու ժպտադեմ, ներողություն էր խնդրում՝ ամաչեցնելով Գալոյին: Մի անգամ էլ, որ կրկնվեց, Գալոն թե՝
- Էլ ինչ ներեցե՜ք, լավ տեղդ գտար, մեր Վարսոյեն շատ նստար, էլի՞ կսես անծանոթ:

ֆ ֆ ֆ

- Կերե՛ք, էրեխեք,- հարևան Ծառուկը նկատել էր, որ տանձ ծախող Արութը երեխաներին տանձ չի տալիս, կշռել տվեց մի վեդրո, դրեց դեմները՝ կերեք: Տուն գնալուց Արութը կանգնեցրեց.
- Ծառուկ, էս փարան չտվիր:
- Ծո՛, քու տղաքդ կերան, փարան ես ինչի՞ տամ,- ըսավ Ծառուկը:

✠ ✠ ✠

- Ծո՛, ինձի քիչըմ շատ լցեք,- հարբեցող իր ընկերներին հրահանգեց Աղանիկը:
- Ինչի՞, դու խո վերի արտի ցորենը չես, օր շատ լցենք:
- Ծո՛ անխիղճներ, իմ տղաքս շատ են,- պահանջը հիմնավորել փորձեց Աղանիկը:

✠ ✠ ✠

- Խնամի-բարեկա՛մ, էս մեր ինչի՞ն չհավնեցիր, օր անընդհատ գլուխդ ես տարուբերում՝ չէ, չէ: Թագադրման ժամանակ էլ Ավետարանին չենքարկվեցիր:
Հարցնողը մի քանի անգամ նկատել էր, որ Սիրան տատի սրտովը չէ իր թոռան ընտրությունը, նույնիսկ եկեղեցում էլ նկատվեց դա:
- Է՛, Անուշ խնամի, էս գլոխը ինձի չի ենքարկվի, ես Ավետարանին ինչը՞ղ ենքարկվիմ. էսորը մե գլոխ՝ չէ-չէ է,- արդարացավ Սիրան տատը:

✠ ✠ ✠

- Էտ ի՞նչ գիտուբուն է, օր հրբը մենք չիտենք,- իր տղայի ընկերների զարմանքի վրա զարմացավ հայրը:
- Այսի սեղանին դրված հավը, որ մենք պիտի ուտենք, ձեր տղան մաթեմատիկայի օրենքներով կարող է ապացուցել, որ ոչ թե մեկ, այլ երկու հավ է,- տպավորված՝ իր խոսքը ավարտեց տղայի ընկերը:
- Օր էտման է,- ըսավ տղայի հայրը,- ես էս հավը կուտեմ, դուքա ձեր ապացուցած հավը կերեք:

✠ ✠ ✠

- Ծո Դիվի՛ն, իտի գիզըլմ կնիկդ պռակաթ ինչի՞ չես տա, ափսոս չէ՞, աշե ժամանակ կը կորցրսնես:
- Միջամտելուդ շնորակալ եմ, Առշո ջան. ըշտը քեզի կաշեմ. թե դու քու կընիկդ սաղ-սալամաթ ետ կրցար առնե, եսա տամ:

✠ ✠ ✠

- Հը՜յ գիտի, Կախեթ, հը՜յ: Հոտիդ, ջրիդ մեռնեի, ի՜նչ կյանք ունեյինք, հա՜: Չդատած, աղի պես կապրեինք...
- Լավ ապրելնիդ հասկըցանք, ախըր ի՞նչ կենեիք, Էրանո՛, փեշըկ չունեիք, լիզու չիտեիք:
- Ծո՛, փեշըկ, լիզու պետք չէր. մուրայինք ու կուտեինք, մուրայինք ու կուտեինք:

✠ ✠ ✠

- Էշը չի ֆըյմե, օր ինքնա ուրախանա,- նկատեց հրճվանքից խենթացած փեսացուն՝ շոյելով իրենց իշուկին:
- Ես իմ իշուբունըս ֆըյմել եմ, դու քուկդ չես ֆըյմե. քեզի ուտողմ ավելացավ, ինձիա՝ ջուր խըմողմ:

✠ ✠ ✠

- Զանազան խնամի,- նորահարսին տանից հանելու ժամանակ ըսավ քավորը,- լաց, աղջիկդ տարան, էլ ի՞նչ կաշես:
- Է՜, քավոր ջան, քսանհինգ տարի ես եմ լացել, հիմիա թող տանողը լա, տանողին հերթն է:

✠ ✠ ✠

- Ծո՛, անամո՛թ, կինդ մեռել է, մեռելը գետինը, դու ամոթ-աբուռ չունի՞ս, էս ի՞նչ կենես, խելքըդ գըլխի՞դ է,- երկար ման գալուց հետո Ակոյին գտնում են հարևանի տանը, նրա կնոջը փաթաթված:

- Տղա՛ք, լավ օր էկաք, կսկծուց գլուխս խե՞լք է մնացե:

✠ ✠ ✠

- Բալա ջա՛ն, թամամ չբուժված, ինչի՞ էկար,- Գերմանիայում բուժումը կիսատ թողած տղային է դիմում մայրը:
- Կըսեին շատ երկար պիտի մնամ, այ մերս:
- Է, հըբը, մնայիր,- էլի իրենը պնդեց մերը:
- Ինչը՞ղ մնայի, զոքանչըս հոս առանց ինձի խելըռի կը:
- Է, էնորա հետդ տանեիր, բալաս:
- Տանեիա ես կը խելռեի, ա՛յ մերս:

✠ ✠ ✠

- Ծո՛, հըլը մեմ սալին աշեցեք՛, սալեն բանըմ ջարթա՞վ,- բարձած սայլը արտից տուն բերող Չիլարուքենց Մանուկը ձայնեց սայլի կողքից եկող իր տըղաներին:
- Բան չկա, Ափա՛ր,- սայլը չորս կողմից զզնելուց հետո, ասին տըղաները:
- Չէ՛, սալեն բանըմ ջարթավ,- իր կարծիքին մնաց հայրը:
Երբ տուն հասան, պարզվեց, որ հենց իր՝ Մանուկի ոտքն է ջարդվել. սկսեց գոռգոռալ, հայհոյել տղաների հասցեին.
- Ծո՛, խո քոռ չէիք, ես չըսի՞ ձեզի, օր սալեն բանըմ ջարթավ:

✠ ✠ ✠

- Ծո՛, դունա յաման մուխը թըրած ես. մեզի բան կըսեիր, ինիկ վե՞վ էր, օր պաչոտնի տարար,- Ռուբենը Ծավարշից մեքենան խնդրել էր ու ճանապարհին սիրունատես մի հարս նստեցրել կողքին:
- Ծո՛, ես խապարա չեղա,- արդարացավ Ռուբենը,- մաշինադա քու խըյսըթետ ունի: Էման ես սորվեցուցե, օր սիրուն հարս տեսավ, իրան-իրան կայնի կը: Ըշտը՝ մալնա տիրոչն է քաշե:

✠ ✠ ✠

- Ըխչի Անուշ, իտի մեր դրկըցին շանը ձենը հեչ կառնե՞ս:
- Հըբը չե՞մ առնե:
- Ըխչի, էտոր տերը խոլոք մարդ էր, զարմանամ կը, թե էտիկ իդման գըվըզը (շատախոս) ո՞ւմ է քաշե հըջըվի:
- Է՛, ում պիտի քաշե, յա՛ տիրոչը, յաէլ դրկըցին:

✠ ✠ ✠

- Վա՜յ, էս ինչ հետամնաց մարթ եք, ամոթ չունի՛ք, էշը աշխըրեն է վերացե, դուք էլի քընացե էշ եք առե, վա՜յ ձեզի հետ ապրողին,- հոր ու մոր վրա զայրացավ տղան:
- Բալա ջան, ինչի՞ կը նեղենաս, հորդ չե՞ս խղճա,- պարզաբանեց մայրը,- էսքա՜ն տարի հորդ իշու տեղ լծեցինք, հիմիա էշը լծենք:

✠ ✠ ✠

- Այ՛մարթ, բոլ է խմես, հերիք էղավ էլի. պարտք տալով հոքիս էլավ, ամե՜ն օր կիսամեռ տուն կը փերեն, մեռնիսա՝ չեն հավատա:
- Այ՛մարըս, օքուտ չունի, օր սորվել է, թողեք խմե,- սկեսրայրին պաշտպանեց նորահարսը,- շանը ոտքը դաշտեն կը խնայե՞ս:
Հարբած կեսրայրը չհասկցավ, պաքեց հարսի ճակատը, գովեց:

✠ ✠ ✠

- Էս ինչքա՜ն կնիկ փոխեցիր, ի՛նչ քոռիզան (թյուրատես) մարթ ես, ու հեչ ճաշակ չունիս, Սերգո: Մեմա օր կարքըվելու ըլլիս, լավ իմպըրտնի կնկամ տեղ ըսեմ՝ առ, օր էլ խայտառակ չըլլիս:

- Տարին մեկ կերեվաս, քեզի մեմա ե՞փ տեսնիմ, արի՛ հըյմի քու ճաշակով առած տեղական կընիկդ ինձի տուր, գիտցած իմպըրտնի կնիկըդա քնա դու առ:

ֆ ֆ ֆ

- Բոշին էշ վրա չէկավ, ձեզիա՝ մաշինա. էս ինչքա՜ն գնեցիք ու ծախեցիք, ըխչի Մաքո,- ըսավ հարևանուհին:
- Ինչի՞ պիտի վրա քա, է՜. սըլը մարքս առանց բենզինի էնքան խալխին կընկտոցը էտտին քշեց, օր մաշինանինա մեր տանը տեղը մտյան էրան:

ֆ ֆ ֆ

- Կընիկ ջան, լավ մարքըմ եմ փերե, նես կանչե, պատիվ տուր,- ըսավ մշտապես հարբած Արմինը: (Հարբածին տուն ուղեկցել Վարազին խնդրել էին սեղանակից ընկերները, ինչին նա դժկամորեն էր համաձայնել): Կինը պայթեց.
- Այ՛, հողըս գլուխդ, յընի քու տուն քալուդ շատ օժար էի, օրը մե անոթի շունմա կշտասնելու կը փերես:
- Ա՛յ կընիկ, արի՛ քու շանդ տեր էղի, ես շնորակալ եմ, օտքի տակ էր ընկե, փերել եմ,- ըսավ մեկեն այեղցած Վարազը:

ֆ ֆ ֆ

- Տարա՞ր, ծո՛,- հարցրեց Բեղեքը, որ Իշխան տղայի հետ քսան հավկըթով ձվածեղ էր ուղարկել Գաբրիել տացուին մանչ թոռ ծնվելու առիթով: Իշխանը մտել էր մարագը ու լրիվ կերել: Մոր հարցումին ըսավ.
- Հբը ինչ էրա:
- Չըսա՞վ՝ մարըդ ինչի՞ չեկավ:
- Չէ՛:
- Հըբը ի՞նչ ըսավ,- փորփըրում էր մայրը:
- Ըսավ՝ կենա օր տղա փերեմ, քարղանը (ծննդատեսի պաշար) էլի դու փիր:

ֆ ֆ ֆ

Իտի գիզըլըմ գեվդրտ (մարմինդ) ինչի՞ կառնես թուրքին ծոցը կը պառկիս, ամոթ չե՞ս էնե,- ըսավ Իշխանը Լեյլիին:
- Պապ, դու արխեին կեցի, ես մեր հայերունա զիրկ չեմ թողնե,- իբըր կատակով՝ ըսավ Լեյլին:

ֆ ֆ ֆ

- Արփենիկ խնամի, էս ի՜նչ ճերմակ գեվտամ ունիս, օ՜ էրնեկ ծոցդ պառկողին,- ըսավ Իշխանը անուշ խոսքուզրույցի ժամանակ՝ չզըսպելով իրեն:
- Քա՜ ամոթ է, խնամի, ի՞նչ կըսես, գիտես ծոցս պառկող ինչը՜ղ լավ մարթ ունեի:
- Ես նիսիա էտքան էլ լավ չեմ հասկընա, նաղդի զըրցե, օր բան հասկընամ,- ըսավ Իշխանը:

ֆ ֆ ֆ

- Ի՞նչ կը մտածես,- բողոքեց Իշխանի հարսը սկեսայրին,- տղադ դուս կը պըտրտի, գիշերները տուն չի քա...
- Է, ի՛նչ մտածեմ, թող քիչմա պըտրտի, զուլում չէղավ, հիմի մեր ցեղին ըղբը դո՞ւ պիտի փոխես,- յուրովի հիմնավորեց Իշխանը:

ֆ ֆ ֆ

- Ըխչի, քոռ էի՞ր, շան բերանն ինչի՞ ընկար, օր գգեց,- Ժանետին ըսավ ամուսինը:

- Ի՞նչ էնեմ, Գևորգ, վրաս շան ըշք (աչք) կա. ըշտը էնորնա, միամիտ պառկած տեղս՝ դու գգեցիր:

✠ ✠ ✠

- Էս ի՞նչ տեսա, ըխչի աննամուս,- վերջապես ամուսինը բռնացնում է կնոջը անբարոյականության մեջ, հարբած վիճակում:
- Ձենդ կտրե, մոլըրած, պակսեցուցել ես, ի՜նչ ըսես ըշքիդ կերևա:

✠ ✠ ✠

- Առավոտ ի՞նչ ես կերե,- հարցրեց բժիշկը փորացավից գանգատվող Են-կոյին:
- Սինձ, բաթաթուկ, մեմա քիչըմ ղմի:
- Ցերեկի՞ն:
- Մանանեղ, ավելուկով բանջար:
- Հըբը իրիկո՞ւնը:
- Թըթըռկիչ, նըյսըմա ջնջըլ...
- Ձո ե՛լ, մալի բժշկի քնե,- լուրջ-լուրջ ըսավ բժիշկը:

✠ ✠ ✠

- Ծո՛, յընի ամոթ չէր, մեռելը թողինք փախանք: Հիմի էս ղիամըթին մեննըկ ի՞նչ կենե խեղճը,- ըսավ տեղատարափ անձրևի պատճառով մեռելին թողած-փախած հուղարկավորներից մեկը:
- Լողանակը, ինչ կենե, քովեն հեռեցանք, օր չամընչե,- ըսավ մյուսը: Մեկն էլ, թե՝ թոքերի վասպալեննի ըսե չըստանա:

✠ ✠ ✠

Ծո՛, չես օր աշխատի, քեզի վե՞վ պիտի պայե, մտածե՞լ ես,- հարցըրին Մկոյին:
- Մտածել եմ, հա՛. թախ քառսուն տարիս հարըս կը պայե, քառսունեն էտևա՝ մանչս:
- Է, մանչուդ վե՞վ պիտի պայե:
- Խո ինձի պես էշ չէ, թող հարուստ կընիկմ առնե:
- Հարուստ կընիկ առնելը չիտեմ,- ըսավ հարց տվողը,- հըմը գիտեմ, օր տասը շայինոց իշեն, հինգ շայինոց սպա կըլլի:

✠ ✠ ✠

- Ծո՛ մեմ սանքեցեն իչի՛ք, օր ձիանը ջուր թափեն,- ըսավ Սաքոն չորս ջայիլ քաղքըցոնց, որոնք ձեռ առնելով իրեն հասկըցրին, թե գեղացիք ուշ հասկըցող են: Էտևա չորսին էլ էրկու կիլոմետրի չափ վազզեցուց սանքին էտևեն: Հետո էլ, թե՝ հըլը իսի իմ հարցին պատասխանեք՝ սանքեցեն ինչի՞ իչաք:
- Է, դու ըսիր՝ իչե՛ք:
- Դուք սանքին էիք նըստած, գոնյա ձիանուն վրայա չէիք...Հիմի ե՞ս եմ ուշ հասկըցողը, թե՞ դուք,- արդեն խաղաղված ըսավ Սաքոն:

✠ ✠ ✠

- Էս ի՞նչ էրել ես, իսի դագաղը պզտիկ է, տղան մեչը չի հաֆկի,- ըսավ սաղամոցի Մահմեդը գանձացի ուստա Ղազարին:
- Յոլդաշլար,- ըսավ Ղազարը,- էլ մեծցընելու հնար չկա, թաժա քընա փատ փի, ուրիշըմ շինեմ, էտիկա տար, դու շատ էրեխա ունիս, մեկնումեկին պետք քուքա:

✠ ✠ ✠

Շատ ամուր կընիկ ունիս, էվալլա քեզի,- հարևանների մոտ ըսավ Նազիկ մամը Վարթուշի ամուսնուն:
- Սուս, այ՛ կընիկ,- ըսավ հարևանուհին,- չես տեսնի՝ կռվելու համար մըհանա ման քուքան:
- Է թող կռվին. ես իմ դավուլս չզարկեմ, թե դըրկցիս էշը խրտի կը,- գույները ավելի թանձրացրեց կռվից չվախեցող Նազիկ մամը:

✠ ✠ ✠

- Անթո՛ն,- ուժեղ սեղմելով ամուսնու ձեռքը,- իսա՛ն աշե, շորացում առ. (Անթոն դիտավորյալ հեռացել էր կնոջից և սպասում էր, թե վերջն ինչ է լինելու) իսկ Հասմիկը, քաղաքի խանութում սխալմամբ անծանոթ մեկին թևանցուկ արած, պահանջներ էր դնում:
Անծանոթը լսում, ձեն չէր հանում մի քանի անգամ կրկնվող տարբեր պահանջները:
- Ծո խո՛զ, ձեն ինչի՞ չես հանե,- սրտնեղել սկսեց կինը:
- Ի՞նչ ձեն հանեմ, տիկին,- ժպտաց անծանոթը,- թևս թող, գնա քո խոզը գտի, թե չէ նոր տուրուն մսացու չես ունենա:

✠ ✠ ✠

- Եվ, ըխչի, սովխոզը սաղ ձեռքս է,- ըսավ Սիսակը ոգևորված:
Տնօրենը երկու օրով տեղ էր գնում, հավատարիմներին խոստումներ էր շռայլում, Սիսակին էլ իր կնիքը հանձնեց, թե՝ տիրություն արա:
- Սովխոզը քեզի վե՞վ կուտա. չքնած էրած ես տեսե, թե խմած ես, արի շընթըռկե, փչոցներիդ էլ թրրկ տուր:
- Չե՞ս հավատա, հա՛,- վիրավորվեց ամուսինը,- իստեղ աշե՝ փեչըտը թքոտեց ու զարկեց կընկա քամակին՝ հիմի հավտըցի՞ր:
- Հայմի հավտըցի՛: Ծո՛հիմիա դիրեկտորիդա փերես պիտի վրան մակագրե՞լ տաս:

✠ ✠ ✠

- Մաղը հավկըթով կուտա՞ս,- հարցրեց Կինոն բոշին:
- Էս հավկըթնիդ դարտա՞կ են,- հաշվելու ժամանակ ըսավ բոշան:
- Ծո՛, դարտակը դու ես, հավկըթնինա դարտակ ըլլի՞ն:
Անկյունում նստած տղան ծիծաղեց, մաղագործը հասկացավ ողջը, ջարթեց մի քանիսը և ըսավ.
- Քուրիկ, չնեղենաս, հավկըթնիդա վայթե փերած տղոցդ կլմանին. դարտակ են:
- Իյա՛, էս անտերները դարտակ են ածե,- հարմարվեց Կինոն,- դունա էրկու հատը մե հատըմ հաշվե:
- Չէ, ըսավ մաղագործը. դարտակը՝ քեզի, լիքը՝ ինձի:
- Է, ի՛նչ ես վրա տվե,- նեղ վիճակից դուս քալ ուզեց Կինոն,- քու մաղերդ յընի լիքն են:

✠ ✠ ✠

- Վիրահատել է պետք, համաձա՞յն եք,- հարցրեց բժիշկը հիվանդի հարազատներին:
Բաջանաղը փորձեց ճշգրտել ֆինանսական կողմը և շատ զարմացավ՝ տեսնելով հինգ մատը:
- Հինգ հարո՞ւր: Արի կըլլի՝հարուր մայթ դու տուր մեզ, օտնեն գլոխը քեզի ըլլի, մենք էրթանք:

✠ ✠ ✠

- Ակո՛, իսի ձիդ այբ (թերություն) խոչունի՞,- հարցրին Խաչոն ու Մանանը, ովքեր գնել էին ուզում նրա ձին:

- Ձիուս հատը չկա,- ըսավ Ակոն,- գիտցի, օր իմ ճրաքս մարես, քուկըդա վառես ու քովենա չես հեռենա:
Ձին առան, բերին տուն: Հենց առաջին գիշերը շըրխկոց լսեցին, վազեցին գոմ. տեսան ձին ընկած ոտքերը թափ կուտա: Մինչև լուս նույնը կրկնվեց մի քանի անգամ: Ամեն գիշեր միևնույն

պատկերն էր: Եվ Խաչոն խիստ դժգոհեց.
- Ըխչի Մանան, իտի շանորթուն տեսար՝ ինչը՞ղ մեզի խափեց:
- Դուզը խոսանք, ա՛յ մարթ, էտ մարթը չխափեց մեզ, ըսավ՝ իմ ճրաքըս մարեք, ձերը վառեք կը. ըշտը էտմանա էղա՛վ:

ֆ ֆ ֆ

- Շորիս կուրծքը և մեջքը լայն բացվածքով էրա,- դերձակին պահանջելու պես դիմեց ձևավոր տիկինը:
- Ինչո՞ւ, պատճառը ո՞րն է,- զարմացած ձևանալով՝ փորձեց պատասխան կորզել տղամարդ դերձակը:
- Առանձնանալ եմ ուզում, որ ոչ մեկը ինձ նման բարձր ճաշակով հագնվող չլինի:
- Մերկ ման արի, ճաշակիդ հետ անունդա թող բարձր լինի,- հորդորեց համեստության կողմնակից դերձակը:

ֆ ֆ ֆ

- Սո՛ւս մնացեք, խմում եմ զույգ ծաղիկների կենացը,- արդեն որերորդ անգամ հարսանքավորներից ապարդյուն լռություն էր պահանջում զայրացած քավորը:
- Ծո դե՛, խո շո՞ւն չի հաչե, ինչի՞ չեք իմանա,- չհամբերեց քավորկինը: Սանամերը ոտքի կանգնեց, գլուխ տվեց ու ասաց՝ հեռու իրմենեն:

ֆ ֆ ֆ

- Պապի, կալոշ հաքնիլ ինչի՞ էտքան շատ կը սիրես,- պարզամիտ հարցում ուղղեց թոռնուհին:
- Առնող օր ըլլի, բալա ջան, տուֆլիա շատ կը սիրեմ, հըմը առնող չկա,- անքեն ու անչար ըսավ պապը:

ֆ ֆ ֆ

- Էս ի՞նչ բան է, Դոխո, տղաքդ ոչ՝հորը կլմանին, ոչա՛ իրար:
- Հորերուն շատ կըլմանին, դո՛ւ տեղը չես փերե:
- Ինչի՞ տեղը չեմ փերե, խո քոռ չեմ, էսոնք Խաչոյին լման չեն:
- Է՜, Գիքո, Խաչոն իրան հորը ե՞փ լմանավ, օր էսոնքա լմանին:

ֆ ֆ ֆ

- Ըխչի, ես օր մեռա, քու հալըդ ի՞նչ տի ըլլի:
- Քեզնեն էտև մե օրմա չեմ մնա, Գրիշ ջան, էտևեդ քուքամ:
- Մամի՛, պապիս կըսեիր մե օրմա չեմ մնա, էտևեդ քուքամ,- հիշեցրին թոռները:
- Է, հիմի իրան հետ եմ էղե, օր իրան հետա էրթամ: Անջաղ պրծա, քանիմ տարի չապրի՞մ,- արդարացավ մամը:

ֆ ֆ ֆ

- Տղա՛ք, քավորիս հետ քանիմ հատ ըրախի թրե՛ք, խմող էր,- հուշեց Գիքոն (Մաթոսենք տոհմով խմող էին):
- Ծո՛,- տեղից վեր թռավ Սմոն,- ինչ ըրախի հետը թնել. ախպըրտիքը հոտն առան՝ բիրատի էտևեն կերթան:

ֆ ֆ ֆ

- Ալե, իսի փարան առ քովդ,- յայլավորների մոտ հյուրընկալվելիս ըսավ Օնեսը:
- Ինչի՞,- զարմացած հարցրեց Ալեն:
- Ծո՛, ես քու շան խըսյթդ լավ գիտեմ, մեկե դու սաղ գիշերը չքնիս, գողնաս տի, ավելի լավ է իրիկօրե առ, եսա միամտնամ, քնիմ, դունա:

ֆ ֆ ֆ

- Ծո՛, Եգըն, արի տանինք մարթու շարք խառնենք,- Եգըն Մերուժին ձեռ

առնել ուզեցին ընկերները:
- Չէ, տղաք ջան, ես էնտից քուքամ,- թեթև ժպիտով ըսավ Եգընը:
- Արի, ծո՛, թըզը կընիկ փերելու կերթանք, քեզիա պետք չէ՞:
- Հանգիստ քնացեք, տղաք ջան, ես ձեր հներովա յոլա կերթամ:

ֆ ֆ ֆ

- Մարտին ջան, հըլը աշե՝ էս ի՞նչ ըրախու հոտ քուքա,- ըսավ Մարտին պապը անվանակից թոռանը:
- Է՛, ի՞նչ աշեմ, ըշտը պապաս քալած կըլլի:

ֆ ֆ ֆ

- Հիվանդ եմ, Սոֆո, հեչ ճար չունիմ, չե՞ս տեսնի հալըս:
- Հըպը չե՞մ տեսնի, սև քեմիր ես դառցե, հեչ ըռընկ չի մնացե վրադ, ջանըդ ի՞նչ կուզե, ըսե էփեմ, կեր:
- Հըլը մե էրկու հատըմ հավկիթ խաշե, աշենք մեկը կըրնա՞մ ուտե:

ֆ ֆ ֆ

- Ծո՛, Նիկո, հըլը մե բանմա դու ըսե,- ուտող-խմող Նիկոյին ընկեր-տղերքը դագաղից հանել, մե աշկը բացել, օղու թասը տվել էին ձեռքը, ընկերներով կենացներ էին խմում:
- Քա՛, արևդ մեռնի,- շփոթված ճըչաց առավոտ շուտ ննջեցյալի սենյակ մտած կինը, բեռըմ կուբու փարա տվինք, չոռ բկիդ համար միչեն ինչխա՞ ես էլե, փախե: Քալե թեզ տեղդ շնթռկե, խայտառակ էղանք աշխըրով մեկ:

ֆ ֆ ֆ

Մի քանի բառ ես արտագրել, Հակոբիկ, և բոլոր մյախկի զնակները բաց ես թողել, դժգոհեց դասատուն:
- Հարգելի, մի՛ նեղենա, ես էտոնցեն հեչ հըզ չեմ էնե, չեմ ուզե տետրակս կեղտոտել,- ճարպկորեն արդարացավ աշակերտը:

ֆ ֆ ֆ

- Կեր տվեք, կերավ՝ կերավ, չկերավ՝ վիզը կտրեք,- բոլոր անասնատերերին անխտիր այս խորհուրդն էր տալիս անասնաբույժ Վահանը:
- Որտե՞ղդ է ցավում, Վահան,- բուժօգնության կարիք ու խորհուրդ հիմա ինքը ուներ, բայց լռում և բժշկի հարցերին չէր պատասխանում, իբր՝ հասկացեք, բուժեք իմ մեթոդով, առանց հարցեր տալու: Բժիշկը կռահեց միտքը, ծիծաղեց.
- Կերավ՝ կերավ, չկերավ՝:

ֆ ֆ ֆ

- Շահենը չէր աշխատում, Բաղդոն տղայի վարքագծից կռահեց նրա միտքը և ըսավ.
- Ըխչի, աշունը էշը ծախենք, տղին ենշանենք, հերիք է ավարա պտտի:
- Մարի՛,- ձմեռը եկել էր արդեն, և Շահենը ճարահատ հարցրեց,- ինչխո՞ր իշուն արարկան հեչ չեք էնե, պահե՞ք տի:

ֆ ֆ ֆ

- Էս սեփական եք դառուցե՞,- մեքենայի աներևակայելի թանկ մասերի արժեքներից ապշած, ասաց Գյումրվա մի խանութ մտած Գրիգորը:
- Ծո՛, ախրքըլքցի, մինչև հմի պետակա՞ն ես մնացե,- զարմացավ վաճառողը:
- Էվալլա՜, մորքուր ջան, էվալլա՛:
- Դե՛, յալլա՜, քեռի ջան, յալլա՛,- հանգաբանեց վաճառողուհին:

卐 卐 卐

- Ծո՛, էս չկա վախտը միս ումե՞ն ես առել,- կինը Գիքոյին ուղղեց նախատական իր հարցը:
- Սիրեկանեդ եմ առե, ումեն եմ առե,- կարճ կապեց ամուսինը:
- Քա վո՜ւյ, թըզզը խաբար է, մըկըր (իբր) Սըքոն ղասաբ է,- ինքն իրեն լսածը բարձրաձայն քննարկեց կինը:

卐 卐 卐

- Ըխչի Ծողե՛ր, հըլը բախտի աշե, ա՛յ փիրկութուն. տեքրըս մեռավ, տեքերկանըս տասնըհինգ հազար մանեթ փարա էկավ: Հայմի մեզի ըլլի՝ բիտտո՛ւ քոռանան կը:
- Է՜, աշխըրին բանը վե՞վ է հասկըցե, մի՛ տրորվի, Սուսան ջան, Աստված խո չի քոռանա, տառոսը քեզի կուտա,- սրտացավորեն մխիթարեց հարևանուհին:

卐 卐 卐

- Ահա՛ն, մարի, հեռագիրը տվի:
- Ինչքա՞ն բռնեց:
- Տասը մանեթ:
- Ամա՜ն, էս ի՛նչ շատ են առել:
- Հըմը տողեն վերն էր էտքան: Մեր հասցեն տողեն վար էի գրե, թե չէ ավելի շատ կը բռներ:
- Է, թող դունա բիրատտի տողեն վար գրեիր,- ափսոսանքով նկատեց մայրը:

卐 卐 卐

- Ծո՛, ինչ քանդած մալի պես հեռվեն քուքաս,- մտքերով տարված՝ մոտեցող Եգրն Մերուժին դիմեց ընկերներից մեկը:
- Կապած մալերուն տեսա, ըշտը, քովերն էկա ու հասկըցա, օր իսկական մալ եք, տղա՛ք, մսացու մալ,- ըսավ Եգրնը:

卐 卐 卐

- Ավո՛, էս ինչըդ ես փոխվե, լրիվ խոզ ես դառցե,- ըսավ Եգրն Մերուժը:
- Ծո՛, վրաս ինչ հոքի կա օր, մեր Սիսոն իմ էրկու քաշը ունի: Ե՞ս եմ խոզ դառցե:
- Է, խո ես գիրացուցած խոզ չըսի, զաբուն խոզ չկա՞: Սիսոն չաղ խոզ է, դունա՝ զաբուն: Ըշտը էրկուստա մե պառոդե եք:

卐 卐 卐

Գյումրվա մսի մի խանութում Խաչոն հերթ կանգնեց մի գեր տիկնոջ հետևից:
- Ըսիկ վո՞վ էր, էկավ հետես մտավ,- անհանգստացած ու արհամարհական ըսավ գեր կինը:
- Քույրիկ, հետեդ չես ուզե, թող առչնետ քամ կայնիմ,- ոչ այնքան նրբանկատ ասաց Խաչոն:
- Ընչի՞, պսակիս կերո՞նն ես. հացա չէ՝ գաթա,- նետեց տիկինը:

卐 卐 卐

- Վա՜յ, վառա, վա՜յ մեռա,- թնդրափից իջնելիս, Համբարը անզգուշորեն դիպավ խոնչին ու թեյնիկի ջուրը թափվեց ոտքին, և վախեցած Համբարը գոռգոռաց նորահարսի վրա:
- Պապ, ջուրը պաղ-պաղ էր, մի՛բոռբոռա,- լեզու առավ չխոսքան հարսը:
- Քիչը՛մ թեզ ըսեիր, շան ախչիկ, ոտքս վառավ, նոր կըսես,- չէր խաղաղվում Համբարը:

卐 卐 卐

- Նկարներս պատրա՞ստ են,- լուսանկարիչ Ավոյին դիմեց Կարոն:
- Հա՛, Կարո ջան, ահան աշե, իտոնց մեչ են:

- Ծո՛, էս ի՞նչ ես նկարե, էսոնց վե՞րն եմ ես:
- Ի՞նչ էիր հագե, չե՞ս հիշե,- ըսավ Ավոն:
- Է, եսիմ, տնաշեն, գոնե վրանին գրեիր: Դիա՛ իսիկ վե՞վ է, մեր գեղն էսման մարթ չկա:
- Կարո ջան, աշե՛, ինձի համար մեկ է. իտիկ լա՞վ է, իտիկ ա՛ռ:

ֆ ֆ ֆ

- Ծո՛, իսիկ Միխոն չէ՞, էս ինչի՞ է պառկե ցեխերուն մեչ,- Տըրդատի քեֆը լա՛վ-լա՛վ էր, բաժակակից նրա ընկերները, թևերի տակն անցած, տուն էին տանում:
- Ինքն է, հըբը էլ վե՞վ է,- հաստատեցին ընկերները:
- Տղա՛ք,- Տրդատը գլուխը մի կերպ բարձրացնելով ու Միխոյի կողմը նայելով ըսավ,- տեսա՛ք, լավ աշեցեք, այսորեն ավել խմելը հարա՛մ է:

ֆ ֆ ֆ

- Հերթը քուկդ է, պատրաստվի՛ր, մեծը դու ես,- Ապլայի հուղարկավորումից հետո Աղային դիմեցին ազգականները:
- Բան չունիմ ըսելու, տղաք ջան, հըմը ձեռքս շատ գործ կա: Էս անքամը մեր Ասքոն պարապ-սարապ է, թող ինքը էրթա, եսա, ըշտը, գործե կը թեթևնամ քիչըմ... Էտևա տեսնինք, եսա՛ կերթամ:

ֆ ֆ ֆ

- Այսի կնճռ (թզուկ) շոֆեռը մեր գլուխը վերչը ուտե տի,- ըսավ Ահարոնը, երբ Թորոս գյուղի շրջաղարձերին, ամեն մեքենա հանդիպելիս, վարորդը թռչում էր տեղից ու ձեռքը պարզում:
- Այ տղա,- հերթական անգամ նույնը կրկնվելուց հետո, Ահարոնը այլևս չհամբերեց,- չի՞ էղնի դու ղեկդ բռնես, բան չպատահի, ես ձեռս պարզեմ, մեկ է, օր դու չես էրևա:

ֆ ֆ ֆ

- Քեռի՛, կաթ խմե, քեռի, մոտ նստե, կաթ խմե,- Ահարոնը քրոջ տղայի տանն էր, մեծ ամանով կաթը դրել էին սեղանին ու ամեն կողմիս ստիպում էին՝ խմե՛:
- Ծո՛, ի՞նչ եք չորս կողմից՝ խմե, հա՛, խմե: Թե մտքերեդ խմելու բան կանցնի, փերե՛ք, թե չէ՝ վրա եք տվե, ես խո մատղաշ հորթ չեմ, օր կաթ խմեմ,- ոչ էնա կատակով, ոչ էնա լուրջ ըսավ քեռին:

ֆ ֆ ֆ

- Կարո, հըլը այսի մեղրին համին աշե, էրեկ առա,- ըսավ Սաքոն՝ Կարոյի առաջը դնելով մեկ ամիս առաջ հենց նրանից գնած մեղրը, որ արդեն ջուր էր դարձել:
- Էսոր տվողին չիտեմա ի՞նչ ըսեմ, մաքուր շըքըր է, տար ետ տուր:
- Ըշտը փերել եմ ահա՛ն, ե՛տ առ, քու մեղրդ է:
- Է, ծո՛, ի՛նչ անշնորք մարթ ես, ինչի՞ հըբը թեզ չըսիր:
- Անշնո՛րք եմ, ըշտը, էտոր համարա թեզ չըսի:

ֆ ֆ ֆ

- Ըսպես գերեզմընոնց կըրնա՞նք էրթա,- Ախալքալաքից Բոգդանովկա հուղարկավորման եկածները հարցրին Սատանա Արութին:

- Իյա՛, մեղա Ասսու, մեղա, ծո մեռելի չափ չըկա՞ք, մեռած մարթը կերթա, դուք սաղ չեք կըրնը էրթա,- ըսավ Արութը:

✠ ✠ ✠

- Ինստիտուտ ընթունվելու համար ո՞ւմ դիմենք օր,- խոպանից փող բերած Ակոն տղային ինստիտուտ ընդունել տալու կարգն էր ցանկանում իմանալ: Քարտուղարուհին ասաց, որ փաստաթղթերի հետ նաև դիմում է պետք գրել և թուղթ ու գրիչ դրեց դեմները: Տղան վերցրեց գրիչը, կենտրոնացավ, հետո էլ երկար ժամանակով հայացքը չէր կտրում առաստաղից: Ժամանակը անցնում էր, և հայրը չհամբերեց.

- Ծո՛, դրթում, հիմի դիմում գրելունա փարա տամ, թե էրթանք գեղ ըսենք՝ մենքա դիմում գրելեն կտըրվանք:

✠ ✠ ✠

- Ձեր տալոնը, քաղաքացի,- ամեն ավտոբուս բարձրանալուց հարցնում ու հարցնում էին գյուղացի Ժորային՝ Ձեր տալոնը:

- Ծո՛, դե հերիք է, քթե փերիք,- չհամբերեց Ժորան:

- Քաղաքացի, մի՛նեղանա, մենք հսկիչ ենք, մեր գործն ենք անում:

- Ծո՛, էս սաղ քաղաքով մեննըկ ինձի՞ կհսկեք, կընկանսա տվիք անցաք,- վիրավորանքը չթաքցրեց Ժորան:

✠ ✠ ✠

- Դուք ինչ տղամարթ եք, տղամարթը ե՛ս եմ, յոթը տղա եմ վաստկել,- համագյուղացիների առջև տեղի-անտեղի հոխորտում ու հոխորտում էր Ջորոն: Վերջապես Աշոյի համբերությունը հատեց.

- Վաստըկելուդ բան չունիմ ըսելու, հըմը տեսակըմ մարթ ես, Ջորո. սաղ գեղացոնց վաստակածը մեննըկ քու վրադ կառնես:

✠ ✠ ✠

- Ի՞նչ եք խնդրում դատարանից,- դատավորը վերջին խոսքի իրավունք տվեց մեծ գումար յուրացնելու համար տասնհինգ տարվա ազատազրկման դատապարտված Օվոյին:

- Է, ի՞նչ խնդրեմ, ալ ատ ցանցը աշխատիլ չարժե, ինձի ուրիշ գործ տվե՛ք,- հիասթափված ըսավ Օվոն:

✠ ✠ ✠

- Ի՞նչ կտանիս, ծո՛,- Գյումրիից գերեզմանաքար բերող Համլետին կանգնեցրեց ճանապարհային ոստիկանության տեսուչը:

- Գերեզմանաքար է,- ըսավ Համլետը:

- Իջեցրո՛ւ,- հստակ ու հատու պահանջեց տեսուչը:

- Որտե՞ղ,- պատրաստակամ համաձայնեց Համլետը:

Լռությունը երկարեց.տեսուչը նման ընթացքի պատրաստ չէր, իսկ Համլետը հարազատի սրտացավությամբ ավելացրեց.

- Հասցեդ ասա, տանեմ տուն, նեղություն չքաշես, ախպերս:

✠ ✠ ✠

- Ի՞նչ էնենք, ջուրնա չօքնեց,- Գոքորի հուղարկավորման ժամանակ հարսը մի քանի անգամ ուշաթափվեց: Թատերական այդ ներկայացումը ամեն կերպ լրջացնել էին ուզում հարսի հերանքը: Կերսանցից մի քանիսը նուրբ ծաղրեցին ձևական ուշաթափության ճիգերը.

- Ինչի՞ եք մոլըրե, հրշեջ մեքենա զանգեք, թող կազմ պատրաստ հետևից քա:

✠ ✠ ✠

- Հարգելի՛, բա երկրաշարժը չեղա՛վ,- հայտարարված ժամը վաղուց անցել էր, և երեխաները ուզում էին իմանալ՝ ինչո՞ւ:

- Երեխաներ, երկրաշարժը հետաձգել են,- թերևը դասատուն փորձեց որևէ համոզիչ բացատրություն տալ:

- Ո՞վ, հարգելի Մեսրոպյա՞նն է հետաձգել:

Հակառակի պես հենց այդ պահին ներս մտավ դպրոցի տնօրենը՝ Խստադեմ Մեսրոպյանը, լսեց այդ ամենը, իսկ մի աղջնակ ուղղակի դիմեց նրան.

- Անկյո՞ւն եք կանգնեցրել, հարգելի Մեսրոպյան:

Բոլորը, նաև տնօրենը, ծիծաղում էին: Ավելի ուշ, դասարանից դուրս գալիս, տնօրենը դասատուին մեկուսի ասաց.

- Ի՞նչ հիմար բաներ ես ասել իմ մասին: Կանցնե՛ս մոտս:

- Երկրաշարժից առա՞ջ, թե՞ հետո,- լայն ժպիտը դեմքին, հարցրեց դասատուն երեխաներից ապակողմնորոշված տնօրենին:

✠ ✠ ✠

- Գրողի չքար, շատ ջահել էր, յընի ի՞նչ տեսավ, օր մեռավ,- հարևաններն էին ափսոսում ու ողբում Շուշանի վաղաժամ մահը:

- Սրտը կրսե՛ք՝ ինչի՞ մեռավ: Էնիկ օր մնար, հրբը վե՞վ մեռնիր: Աստված օղորմի հոքուն. յընի ի՛նչ էներ մնար,- իր անհամաձայնությունն ու տագնապը արտահայտեց Հայկո մամը:

✠ ✠ ✠

- Ծո՛, Ակո, իտի թառլան կընիկդ մե տղիմ համար ինչի՞ կը պայես, թե խելքեդ վեր է, գոնե հարևաննուդ տուր,- փորձեցին Ակոյին ձեռ առնել գյուղացիք:

- Դիա՛ դուք տվիք, ի՞նչ խերվաք. ուրուշնուն տղաքը կը պահեք,- խորհրդավոր ժպտաց Ակոն:

✠ ✠ ✠

- Էս ի՛նչ զուլում էր, էկավ մեր գլխին,- գաղթից հետո կրկին Ջավախք վերադարձածները դժգոհում էին իրենց ավերակված տների համար:

Մաքոսենց գերդաստանից ոչ ոք կենդանի չէր մնացել, հարևան Զարիկը հիացմունքով նկատեց.

- Բախտավոր Մաքո՛ փաշա, ի՜նչ դրրդ ունիս. տներդ դուռուլի (կանգուն) մնացել են:

✠ ✠ ✠

- Ըխչի, կրսեիր ժամացուց պիտի առնեմ, հրբը ինչի՞ չառար,- կանայք գիտեին, օր Սրլվին ժամացուցից բան չի հասկանում:

- Քա՛չէ, պաշպորտս քովը չէր, թե չէ Մոսկվայու կառներ Սրքոն:

✠ ✠ ✠

- Վարպետ ջան,- տաքսու վարորդին դիմեց Համլետը,- մինչև Երևան ինչքանո՞վ կտանիս:

- Տասը մանեթ:

- Ութով հարմար չի՞:

- Ութով քու փոխարեն քարըմ կը տանիմ,- նեղսրտեց վարորդը:

- Տա՛ր,- ըսավ Համլետը,- բայց հարմար քար տար, օր ազգանունդ վրան տեղավորվի:

✠ ✠ ✠

- Փոքրիկնե՛ր, հրլը կողքի կայնեք, մեծերը նես քան, էտնա դուք,- Ոսկևազ

մաղար գնացած Փութուլենք դիմեցին շշերը ձեռներին պարելով իրենց դիմավորելու եկած խնամիներին՝ անտեղյակ լինելով խնամիների կարճահասակ լինելուն:
- Բոյերուս մի՛ աշե, խնամի, մեծերը մենք ենք, փոքրերը տանն են:

ֆ ֆ ֆ

- Ըխչի Նազո՛, էս ո՞ւմ ես իշու տեղ թրե,- Նազոն իր հարևանուհուն էր վերադարձնում պարտք վերցրած ձվերը,- ըխչի՛, էս ի՛նչըղ մանդռ են,- զարմանք-վիրավորանքը չը զըսպեց հարևանուհին:
- Քա՛, ինչի՞ եմ իշու տեղ թրե. ես ի՞նչ էնեմ, հա՛վն է ածե:
- Հա՞, հա՞, էման օր. եսե հավատացի՛, հա՞վն է ածե:

ֆ ֆ ֆ

- Օրը տղամ կունենաս, ըխչի, ուրտի՞ց են իսոնք, էս ո՞ւմ ես իշու տեղ թրե, հերի՛ք էղավ, էլի՛:
- Ինչու եմ իշու տեղ թրե, Մինա՛ս, ըլլելեն խեր կա, թող ըլլենան՝ ուրտից կըլլին, ըլլին, քու անունդ է:

ֆ ֆ ֆ

- Զանան մորքուր, կըսեն տղաղ նախագահ է էղել, ճի՛շտ է, հա՞:
- Իմ օրովս չէ էղե, ինձեն առաչ թե էղել է՝ չիտեմ,- պարզաբանեց Զանան մորքուրը:

ֆ ֆ ֆ

- Էս ի՞նչ խայտառակութուն է,- զոքանչին բողոքեց Խաչոն,- աղջիկդ հինգ ամիս չկա հարս քալը, տղա փերեց:
- Հըրքըշ (ուրիշները), բալա ջան, չունենալեն կռիվ քուքան, դունա՝ ունենալեդ քուքաս: Քեզի տղա է պետք, էղե՛լ է, ամսնուն հետ ի՞նչ գործ ունիս:
Փորձառու անները միջամտեց.
- Ա՛յ տղա, էս ցեղը վաղահաս է. մենքա ժամանակին շատ բողոքեցինք, օքուտն ի՞նչ:

ֆ ֆ ֆ

- Ի՞նչ է էղե, ինչի՞ կը բողոքես, քեռի Արութ,- հարցրին գերեզմանատան պահակ սատանա Արութին Զավեն պապի որդիները (Զավեն պապի անդամահատած ոտքը թաղել էին գերեզմանատանը):
- Ծո՛, տղաք ջան, հարըդ վրաս մարթ է հաշված, օրմեչ կամիսիա քուքա: Ես էտոնց բերանը չեմ կըրնը էլ փակե. ոտքը՝ կա, ինքը՝ չկա. կամ իրան փերեք, կամ՝ ոտքը տարեք, օր եսա ռաստրաթի տակ չընկնիմ,- լուրջ դեմքով պարզաբանեց հանաքչի Արութը:

ֆ ֆ ֆ

- Հարըս մեռել է 1943-ի հունվարին, եսա կըսես ծնվել եմ 1945-ի հուլիսին... Ա՛յ մարըս, այսի հանելուկը հըլը արի ինձի հասկըցու՝ ես ումե՞ն եմ էղե:
- Ահա՞ն քեզի լավութուն. փերել, մեծցուցել եմ, հերիք չէ, հիմիա քննութուն պիտի տամ... Ան վախտը աշխարը խառն էր, շունը Տերը չէր ճանչե, ես ի՞նչ գիտեմ՝ դու ումե՞ն ես էղե:

ֆ ֆ ֆ

- Ծո՛, վե՞վ է խմած, ինչի՞ եք ինձի իստեղ փերե,- սթափարանում բորբոքված հոխորտում էր Ակոն, որ Վալիկոյի հետ Սերոժին տարել էին ռեստորան՝ պատիվ տալու:
- Կըսես հարփած չե՛մ, ո՞ւմ հետ էիր խմում, չիտե՞ս, օր չի կարելի խմել ու գոռգոռալ,- հարցեր տվողը նույն Սե-

րոժն էր, ում հենց տարել էին պատիվ տալու:
- Ախպեր ջան,- հիշողությունը լարել էր Ակոն,- դեմքդ կըսես թե ծանոթ է, քեզի մե տեղըմ տեսել եմ, հըմը տեղը չեմ կըրնը փերե: Հըլը ըսե տեսնիմ, դու ինձի չե՞ս հիշե,- շըշկըլած ըսավ Ակոն:

卐 卐 卐

- Քիչըմ կեցիք, իտի շները էրթան, նոր թողնեմ,- ցածրաձայն ըսավ հիվանդանոցի պահակ Վարդգեսը երկու կնոջ: Գլխավոր բժիշկը լսել էր, մոտեցավ.
- Հըլը նորեն կըրկնե՝ ի՞նչ ըսիր:
- Հեչ, ըսի քիչըմ կեցիք, իտի շեֆերը էրթան, թողնեմ,- իրեն չկորցրեց պահակը:

卐 卐 卐

- Ակոփ,- վաճառողի մատը տեսնելով կշեռքի նժարին՝ դիտողություն արեց հաց առնողը,- մատդ ինձի պետք չէ:
- Եսա անհարմար կըզգամ,- փորձեց արդարանալ հացավաճառը,- չիտեմ ինչ սովորութուն է, ինչը՞ղ էնեմ, օր թըրկեմ:
- Օր թըրկել կուզես, էտ մատդ կտըրվի դի, օր մեկալոնցա չվարակե,- ըսավ գնորդը:

卐 卐 卐

Մուշոն հարբած տուն եկավ, փորձեց անաղմուկ հանվել, քնել:
- Ծո՛, Մուշո, շորերդ ինչի՞ կը հաքնիս,- քնից նոր արթնացած ձնացավ կինը:
- Խանութը գործ ունիմ,- հարմարվեց Մուշոն՝ ցանկանալով շարունակել կիսատ կերուխումը ընկերների հետ:
- Ծո՛, վե՞ր խանութը, գիշերո՞վ,- իրար անցավ կինը:
- Վերըսիաներուն (խելապակասնեռուն) խանութը,- ըսավ ու քնաց:

卐 卐 卐

- Առանց ինձի ինչի՞ եք սկսե. կամ նորից պիտի խաղաք, կամ չեմ հուշե,- պահանջեց լավ հարբած և ուշացած հուշարար Գառնիկը:
Ուրիշ հուշարար չունենինք, ստիպված Գյումրիի հանդիսատեսին հայտարարեցինք, որ ուշացողների պահանջով ներկայացումը նորից ենք սկսելու:
Մի սրամիտ գյումրեցի միջամտեց.
- Ծո՛, դուք ամեն ուշացողի համար օր նորից ըսկսեք, հըպը շտապողներուն համար ի՞նչ դի էնեք:

卐 卐 卐

- Քո կինն առա՜ջ ի՛մն է եղել,- գոռաց Սեյրանն ու մարտական կեցվածք ընդունեց:
Բոգդանովկայում բեմադրում էինք «Նամուսը», Ռուստամի դերակատար Չոբանյանը լավ հարբած էր, իսկ երբ այդ խոսքերից հետո Ռուստամը, հարբածին բնորոշ կատաղությամբ, խանչալը հանած քշեց Սեյրանի վրա, հասկացանք, որ բռնելու հնար չկա, բեմից թողինք, փախանք: Բեմում մնալով միայնակ՝ Ռուստամը գոռաց.
- Ծո՛, իշու ձաքեր, բիրըդիտ թողիք, փախաք, հըբը ինձի վե՞վ պիտի բռնե, օր դերս պրծնիմ:

卐 卐 卐

- Եվ մե բանըմ ըսե, նախագահ ջան,- դիմում էին նախագահին:
Մեծ Արագյալ գյուղում «Ատամնաբույժն արևելյանն» էր բեմադրվել: Բոլոր դերասանները նախքան ներկայացումը հարբած էին, նախագահն էլ նրանց հետ, ուստի վերջինիս շնորհա-

կալության խոսքը ընկալվեց կատակերգության շարունակություն որպես.
- Հարգելի սեղանակիցներ, գոհ ենք, մեկալ քալերուդ թատրոնով էկեք:

❀ ❀ ❀

- Սաղ էսոր մեղքն էր,- համերգը ձախողվել էր, կուսշրջկոմի աշխատողների սրտով չէր, և կուլտուրայի բաժինը մեղքը բարդեց գեղարվեստական մասի վարիչի վրա:
Թուքումուր տվին, հետո էլ, որպես մեղավորի, հարցրին.
- Դու ի՞նչ կասես:
- Ի՞նչ ըսեմ, քիչմա օր սխմեք, էսոնց ամենքը չորս-հինգ էրեխա ունի, կըսեն՝ էսոր էրածն է:

❀ ❀ ❀

- Քիչմըլ զրուցե, հերի՛ք է,- միջամտեցին կանայք մահացած հոր վրա լացող Գյուլնազին:
- Է, իմա զրուցեմ, Ափո՛ջան, քեռուս բարեվ տար, Պիջոյին ըսե՝ դարդ չենե, կնիկ ուր սիրականին առավ, Ապլայիս հույս տուր, Կարանիս ըսե՝ շոլքդ ծախեցի: Զուլոյիս իշե, տաք մնա, չըմսի, ըսե էրածդ էլավ. Կինոն ջուխտ տղա ունեցավ, Թաքոսին...
Գալոն թե.
- Էս ի՞նչ դուս կիտա. էն մեռած մարթ, գլոխը խառնը, էտքան բան իմա՞լ միտքը պահը: Մատներուն գույնզգույն թել կապե, չմոռնա:

❀ ❀ ❀

- Ըշկիս մարթ չերեվա, սաղ գեղը վառեմ, վերջասնե տի,- աղջըկան փախուցել էին, կատաղած, փրփրած, շորերը պատառոտելով՝ գյուղամիջում գոռգոռում ու անորոշ սպառնում էր Սարգիսը:
Վանոն դեմն էլավ.
- Գեղը վերջացնելուդ հեչ բան չունեմ ըսելու, քու իրավունքն է, բայց խիղճնա լավ բան է. գոնե էրկու հոքու սաղ թող, մեկը մալը տանի արծելու, մեկնա՝ օչխարը:

❀ ❀ ❀

- Ահա՜ն, փոսին մեչ մտնիմ, քանիմատ զարկ, թող սիրտդ հանքշի, էտեվա նստեսնեմ կը ձիուդ,- ըսավ Մկոն կարճահասակ Կամոյին, ով ձին Մկոյի վրա քշելը, մտրակը վրա բերելն ու, իր հարվածի հետ ձիուց ընկնել-ուշքը անցնիլը մեկ էր էղե:
- Զայնելն ի՜նչ է, մեմա հորթերը արտը տեսա, իստակ սատկեսնեմ կը, իմացար:
- Հա՜, նախագա ջան, թե մեմա ուշքի փերի՝ սատկեցու,- անչար ժպիտով ըսավ Մկոն:

❀ ❀ ❀

- Թաթո՜, մի էրկու անքամ լավ ծեծե, ըշքին առաչը կատվին բաջաղը պատռե, օր վախենա,- խրատեցին մեծերը Թաթոյի լիրբ կնոջը չափի մեչ դնելու համար:
Լավ ծեծ տալու փոխարեն էրկու կծու ապտակ ինքը կերավ, կատվին էր ուզում պատռել, բայց կինը ականջից բռնեց.
- Ծո, հայվա՜ն, մեկ է, օքուտ չունի, շատ ես ուշացել, խոլոք տեղդ կեցի. էտ խրաթողներըդ ո՞ւր էին մտել, օր նոր դուս քուքան:

❀ ❀ ❀

- Քանի՞ անքամ ես կռվել կնոջդ հետ,- կնոջ բողոքով ամուսնուն ոստիկանա-

տուն էին բերել:
- Չընք գինի քէնության գիտենք, օր հաշիվ տարուկ էղնենք:
- Շա՞տ եք կռվում:
- Շա՛տ:
- Իսկ չգիտե՞ք, որ կանանց վիրավորել, ծեծել չի կարելի:
- Իդը էդ վուոր գրքի մեջնը գրուկ, անգրագիետ ինք, չընք լըսիերի, օրի՞ չի կարելի. սիրեկանի հետն չընք ապրի, սեփական կընկա հետ կապրենք, իմա՞լ չկռվինք:

❀ ❀ ❀

Թատերախումբ էր եկել, պատրաստվում էին «Սպանված աղավնին» պիեսը ներկայացնել Հեշտիա գյուղում, բայց որոշակիորեն տեղի բարբառը հաղորդակցումը կարծես թե դժվարացնում էր.
- Այսօրվա ներկայացմանը ծանոթ ե՞ք,- հարցրին գյուղացիներին:
- Լսեր ինք, հոխպեր, «Փիցուկ դոյդոյնը», մենք լը խաղցիեր ինք:

❀ ❀ ❀

- Դու էլ, կինդ էլ հասկացող մարդիկ եք, ինչո՞ւ չեք հաշտվում:
- Է՜, ախպեր ջան, հայերիս մեչ սովորություն կա, օր մարթը տասը սանթի բարձր լինի կնոջից ամեն իրավունքով: Ռուսների մեջ կինը մարթուց մեկ մեթրով պիտի բարձր ըլլի: Հըմի ես իմ տասը սանթու, ինքնա իր մե մեթրին համար պայքարներ կը մղենք, ինչը՞ղ հաշտ ապրինք, ես չէ, դու:

❀ ❀ ❀

- Ըխչի Մայրո՛, իդ ֆասոնով դո՞ր կերթաս, հլը ցած իշը, չըս տեսնա՞ շապիկդի կերեվա:
- Անուշ մորքուր, օրի՞ չըմ տեսնա, փեշ մի փարա իմ տվի, օրի՞ չերեվա:
- Օր էդման փարա իս տվի, էլ օրի՞ իս տըկեն հաքի, տվուկ փարեդ շապկիդ վրեն դրը, հանը վրայեն հաքի:

❀ ❀ ❀

- Դուո՞ր կըվազիս, դոխտուր, վերջացրու, մարդս փիցծուկ կմեռնի է,- բժիշկը, լսելով փողի փոխվելը, հիվանդին անզգայացած վիճակում թողած, գլխակորույս վազում է:
- Ա՛յ կընիկ, տասշայինոց մարթուդ համար տասը հազարըս կորի՞:

❀ ❀ ❀

- Իմ հոր վրա օրի՞ իս դրրի, տղա՛,- Պլեճ Կարոն սխալմամբ մոր փոխարեն գերեզմանի վանդակաճաղը դրել էր ուրիշի շիրմի վրա:
- Էլ ինչ մուննաթ կիգաս, խմուկ իմ էղի: Դու լը իմ մամու վրեն դիր, հաշվը, թը ախպեր ինք, տղա՛:

❀ ❀ ❀

- Ինչո՞ւ ես էրկու հոքի նըստեցուցե կողքիդ, էն էլ աղջիկ, մեքենայի խցիկում նեղ չէ՞,- հարցրեց տեսուչը Պլեճ Կարոյին:
- Վա՜յ, Հիսուս Քրիստոս, եսը գինենք «Ջիլն» էր: Էրկուսը քզի էղնի, ձեն տակն, քարը՝ վրեն:

❀ ❀ ❀

- Փաստաթղթերդ, տալոնդ տո՛ւր,- տեսուչը կանգնեցրեց Պլեճ Կարոյին:
- Օրի՞ կը վերցուս,- հարցրեց Կարոն;
- Կարմիր լույսի տակով անցար:
- Վա՜յ, տնաշեն, եսը գինամ ցանուկ արտի միջեն ընցա,- իր մեղքը տեղնուտեղը թեթեվացրեց Կարոն:

- Տղա Կարո, իդ վախտն դուռ՞ր կերթաս,- նախագահ Քերոբը կեսգիշերն անց խոտերի եղբնների մոտ կանգնեց-րեց Կարոյին:
- Օյ՜, հաստատ մարթու գլուխ խելք մանցի, դու օր չեղնէր, նախագա ջան, ես դուռ՞ր կերթենք,- ասաց Կարոն:

❀ ❀ ❀

Խանչալլիում ներկայացումը շատ ուշ ավարտվեց: Մեկը ստիպեց.
- Գնում ենք մեր տուն:
Կինը այլայլված ու փնթփնթոցով բացեց դուռը, մինչ մարդը հրահանգեց.
- Սեղան սարքե, ըրախի փիր:
- Կրակն եմ ընկե. յընի ինքը հերիք չէ, սիրիմա անոթի շուն էտղին է լցե, թերմաշ անտեր,- մեկուսի ասաց կինը:
Վերջից եկող Ռոստոմը չէր լսել տիկնոջը, հարգալից ասաց.
- Հալալ ըլլի կերած կաթդ, քույրիկ, ամենքն օր էսման ընթունեն, էլ գրո՞ղ կդիպի մեզի:

❀ ❀ ❀

- Օ՜ֆ, տաք է, վառա, օ՜ֆ պաղ է, սառա,- դժգոհում էր հայրը աղջկանից. մոր բացակայության ժամանակ աղջիկն էր լողացնում քմահաճ հորը:
- Հարըս չըլլեի՛ր, մարթըս ըլլեիր, էման շամառըմ քաշեի, օր մեկըմ ինձեն առնեիր, տասը՝ գետնեն:
- Օղուլ, դունա մորդ կերածը կուտես. ես էտ շամռեն չպրծա՞:

❀ ❀ ❀

Ծո՛, աշե մատյաննին վառան,- գյուղի դպրոցը հրդեհվել էր:
- Մատյաննին ի՜նչ, դու ըսե էրկուս թընոողնին վառեին,- կարծիք հայտնեց Մաթոսիկը:

❀ ❀ ❀

- Բրազիլ...անձամբ Պելեից. Մոսկովին,- այս վերջին հեռագիրը կարդացին ավելի բարձր ու ընդգծված հանդիսավորությամբ:
Ախալքալաքցի Մոսկովը հայտնի էր իր ուրախ բնավորությամբ, ֆուտբոլի հանդեպ մեծ սիրով, և նրա տատի թաղմանը եկած հեռագրերի շարքում ընկերները կատակով ցավակցական հեռագիր կարդացին նաև ֆուտբոլի արքա Պելեի անունից: Մոսկովը նեղվեց.
- Ծո՛, հերիք է լզվիք, մամիս թաղումը կոմեդիայի թատրո՞ն է:

❀ ❀ ❀

- Մինաս, հըլը քիչմա դիմացի, թախ էս ախչկան հավ էնենք, թառը թնենք,- Մինասը ծանր հիվանդացել էր, աղջկան երկրորդ անգամ ամուսնացրել էին, բայց էլի բան չստացվեց. հետ էկավ:
- Կնիկ, հերիք է ինձի հոքեդարց էնես, թե էտիկ քու կաթըդ է կերե, էտորեն թառ բռնող դուս չի քա:

❀ ❀ ❀

- Նորի՛կ ջան,- ներկայացման ժամանակ դահլիճից հուշում են դերասանին,- խմած ես, զգուշ պտտե, բուֆետչի Արտաշը տեսսավ, վրադ փարա կը գրե:

❀ ❀ ❀

- Յաշա՛, խաբար չես, մեր կամբոտնեները վե՞վ է խմե,- Խորենենց պահածոները գիշերը մտել, գողացել էին:
- Խորեն ջան, ես զօրը խմած կըլլիմ, գիշերնա՝ քնած, եսի՜մ...

ֆ ֆ ֆ

- Դիր կշեռքին, ծո՛,- Վարթը տասը կիլո գարի ուներ ստանալու, զրոն ջնջվել էր, պահեստապետ Հնձոն հասկացավ ինչն-ինչոց է, կշեռքի լծակը դրեց մեկ կիլոգրամի վրա և սկսեց հրահանգներ տալ Վարթին:

- Ահա՛, ծո՛, դու հրմը ճիշտ կշռե,- նեղեցած ըսավ Վարթն ու գարին դրեց կշեռքին:

- Շատ է, ծո՛, դարտըկե,- ըսավ Հնձոն: Հետո մի քանի անգամ էլի նույնը կրկնեց: Մնաց դատարկ պարկը, և Վարդը ցուցադրաբար թափ տվեց պարկը, դրեց կշեռքին:

- Էդ է, վերու,- ըսավ պահեստապետը:

ֆ ֆ ֆ

- Հըլը վեր աշեցե՛ք, ժողովուրթ, մանչս է,- Եղսոյի տղան օդաչու էր, դուռդրկցի հավաքել էր գլխին ու ցույց էր տալիս շատ բարձրից թռչող ինքնաթիռը:

- Եղսո՛, ի՞նչ գիտցար, օր մանչդ է,- հարցրին հարևանները:

- Էման բան կըսեք օր, ես էնո՛ր քշելը չիտե՞մ:

ֆ ֆ ֆ

- Ե՛լ, Սոֆի ջան, մարթ եմ փերե, հաց ու ջուր էրե, շատվոր են,- ուշ էր, Առշոն մի մաշինա մարթ էր փերե, և կինը կարճ կապեց.

- Ինչըղ օր փերել ես, էտմանա ետ տար, ես էլլողը չեմ:

- Տղա՛ք, սամալյոտը ետ դառուցեք, յամա՞ն մառախուղ է:

ֆ ֆ ֆ

- Ծո՛, իսի մեռելներեն չե՞ս վախենա, օր էկար էս գերեզմընոնում կուշտը տուն շինեցիր,- Հիշինին հարցրին գյուղացիք:

- Ծո՛, էդոնք սաղ վախտերը ինձի չէին կըրնա վախեցնե, մեռած վախտերը ի՞նչ պիտի էնեն, «Բըը՞» էնեմ, սրտերը կը պատռի:

ֆ ֆ ֆ

- Ծո՛, էս հավին մե բուդը ո՞ւրենե,- զարմանում է Համլետը: Թիֆլիս միասին գործով գնացած ժամանակ սովածացած Հիշինը չի համբերում և, մինչ Համլետը կգար, հավի մի բուդը ուտում է:

- Ինչըղ թե՝ ո՞ւրենե, ախր օր մե բուդըմ է ունեցե, վայ թե էնտի են մորթե,- փորձեց հիմնավորել և զարմացած ձևանալ Հիշինը:

ֆ ֆ ֆ

- Էս հարսը ըմըկտըր է ու շատ խերով, էսոր տասը մարթնա հալալ է,- նվագակցող Հիշինը գովեց հարսին, քանի օր շատ փարա էկավ:

- Ծո՛, Հիշին, դու էս հարսին ախր ի՞նչ գիտես,- զարմացավ ուստա Արամը:

- Ուստա Արամ, էտ դու չիտես. էսոր հարսնիքը արթեն իրեք անքամ է չալենք կը:

ֆ ֆ ֆ

- Նախագան ո՞ւր է,- հարցըրին կուսշրջկոմից եկած մարդիկ:

- Զոնթ կուլ տալու,- Վանոն չըսավ էլ՝ ստամոքսն էր ցավում:

- Ի՞նչ զոնթ կուլ տալ, բուկը մեծըցնելու է քնացե,- ըսավ Հնձոն:

ֆ ֆ ֆ

- Ծո՛, էս յամա՞ն փող գրվան, մեռելովա էսոնք բիզնես էրին,- ո՛չ էնա զարմացած, ո՛չ էնա դժկամությամբ

բարձրաձայն իր կարծիքը հայտնեց մահվան արարողակարգի մասնակից մեկը Գանձայում:
- Վա՜յ, հարամ ըլլի իմ քոռուփուչ բախտըս,- մորմոքաց Վարդը,- հըրքըշ մեռելովա փարա շինեցին, ես հորս ու մորս անկճին գնին կորուցի:

***

- Ծո՛, աննամուս, էս մեր կոնդը ո՞ւր կտանիս,- հորեղբայրը ցերեկով նկատել էր կոնդերին հառած Սաքոյի հայացքը, հետևել, գիշերով բռնացրել էր:
- Այդի Կիրակոսին շնեն անցնելու, հոփար:
- Էս յեքը կոնդո՞վ, ուրիշ բան չըգտա՞ր:
- Պզտի փատե էտ անտերը էտքանա չի վախենա, հոփար, ի՞նչ էնեմ,- ճարպկորեն արդարացավ անճարպիկ, բռնված գողը:

***

- Ծո՛, հըլը կեցիք, էսիկ վայ թե մեր նշանը չէ,- Մուշեղի տղաքը շատ էին ու կռվարար: Կռվարարության համար մեկին բռնին, բերին ծնողների մոտ: Թուքումուր տալու ժամանակ Մուշեղը կասկած հայտնեց, իբր՝ իրենց էրեխեն չի:
- Ծո՛, ինչի՞ կխափես,- դժգոհեցին գյուղացիները,- Վարսո, հըլը աշե, իսիկ ձեր տղան չէ՞:
- Հա՛, հա՛, տղաք ջան, մերոնցեն է,- հաստատեց կինը,- Մուշեղը, ըշտը, կռիվ էր քնացե, խաբար չէ էտոր ըլլելեն:

***

- Մանան, իտոնք ի՞նչըղ են, մարթ ու կընիկ էլի չե՞ն կռվի,- հարցրեց Գիքոն:
- Չէ, շատ լավ են, էլ ինչ դի կռվին. վաղուց բաժնըվել են, իրար էլ չենա հանդիպում,- հանգիստ ըսավ Մանանը:

***

Գյումրի չհասած՝ տեսուչը կանգնեցրեց Կարոյին.
- Ծո՛, էդ դու վո՞վ ես օր, ըսպես քշած կանցնիս: Ըստեղ կարք կա, օրենք կա, հըպը մենք ինչի՞ ենք կայնե:
- Եղիշե Չարենցն եմ ես, վով եմ,- ըսավ Կարոն ու քշեց գնաց:
- Ծո՛, վո՞վ էր էդ բիջը, ինչի՞ թողիր,- մոտեցավ ընկերը:
- Սուս, այ մարթ, կրակը պիտի ընկնեինք, Չարենցն էր:
- Իյա՛, հըբը կսեին Չարենցը մեռել է:

***

- Վարդան, օխչըրները ի՞նչըղ են,- հարցրեց բուժքույրը, ով Վարդանի խնդրանքով եկել և հիվանդության դեմ սրսկել էր նրանց ոչխարներին:
- Գոհար ջան, ինչը՞ղ կուզեիր ըլլեին, քեզնեն շատ գոյ քընացին էնքուի աշխար,- ըսավ Վարդանը:

***

- Խնամի Կաթուշ, ի՞նչ է պատահել,- իմացա խնամուս հասած դժբախտության լուրը, քնացի տեսության:
- Ըսելու բան չէ, ինչ ըսեմ,- մի կերպ լացակումած պատմեց էդած-անցածը,- հարսիս հետ ամիսմե չէի զըրցի. բերանըս ախվիր, էլի ձեն չհանեի, ըշտը դրկըցին կովը էկել էր մեր խոտին, ջվացի.
- Ըխչի հասսի՛, զարկ անտերին, խոտը կերավ:
Ես կովին էտղին էի, դեմեն էկավ, քարը նետելը գիտեր՝ ուղիղ ճակտիս. ճրքի պես մարա, մեկեն խաղաղա: Ուշքի

էկա, օր արունվիկ խոշպիտալն եմ, կովնա չկա:

***

- Ծո՛, էս ինչ բեքըրը ցեղ եք. աշխըրին խառը սրան տունդ մե բանմ զափաս չկա,- Անուշը սրտնեղած խոսում էր ամուսնու վրա:
- Ի՞նչ փերեմ, ա՛յ կընիկ, դու ըսե փերեմ,- պակաս չէր սրտնեղում մարդը:
- Ծո՛, դե ձեռքդ ի՞նչ կընկնի, փի,- կոշտ հրահանգեց կինը:
Կնոջ խոսքով գնալը էս անգամ ձեռնտու թվաց իրան, կատարեց:
- Ծո՛, էս ի՞նչ ես փերե,- զարմանքը չկարողացավ թաքցնել կինը, երբ անծանոթ մի կին տեսավ իրենց տանը (Մարդը երկար մտածել և մի կերպ համոզել ու տուն էր բերել այդ կնոջը):
- Կընիկ, սուս, մե քանիմ տարի էտև էսիկա չի ճարվի, ըշտը զափաս եմ փերե, դու չըսի՞ր փիր,- ինքնագոհ ըսավ ամուսինը:

***

- Ջենդ չի էլլե՛, Անղըլաթ մամի, հարդ լա՞վ է,- հարցրին հարևանները:
- Հետն օր չընկնիմ՝ շատ լավ է:
- Բայց դե գործ է՝ կարքաղրել կա, լսելչլսել, նեղենալ կա:
- Քա՜ ինչ գործ ունիմ փեշս գոմշին կոտոշին ցըկեմ, փարա-փարա էնե, տղիս մեղք չէ՞:

***

- Հարըս է գնել, չէ՞,- ուրախ-ուրախ հարցրեց աղջիկը, երբ իր ծնունդին մայրը աղջկան նոր ու շքեղ վերարկու հագցըրեց:
- Ա՛յ, ձունըս հորդ մոլըրած գլխուն,- հոգոց հանեց Լուսվարդ մայրը,- հորդ ումուտին օր մնայինք, դունա չէիր ըլլի, աղջիկըս:

***

- Հըլը ըսե տեսնիմ՝ էսքան լավ աշելուս տղաքս ինչի՞ խռա հորթի պես էսման մանտըռ են,- կռվարար տոնով ու պատասխան պահանջողի պես սուրճի բաժակ նայողին հարցրեց Փեթռան:
- Կովին տեսա, բուղինա տեսնիմ՝ կըսեմ,- վստահեցրեց բաժակ նայողը:
- Է, դու իմ մարթուս չե՞ս տեսե,- բառերը ծոր տալով՝ արտաբերեց տիկին Փեթռանը:
- Մարթուդ տեսել եմ, դրա համար եմ ասում:

***

- Սիրան, Կարոն ուղիղ հարուր մանեթ տալիք փարա ունի, տո՛ւր,- բուֆետապան Համբոն, տնետուն ընկած, նիսիը (ապառիկ) խմողներից փողերն էր հավաքում:
- Ի՞նչ փարա, ինչի՞ է պարտք,- կռվարար տոնով ըսավ Սիրանը և ապա շարունակեց,- ծո՛, ե՞փ է խմե, Համբո:
- Ինչըղ թե՝ ե՞փ է խմե. այսի մայիսին:
- Ծո՛, Կարոն այնի մայիսին է մեռե, այսի մայիսին ի՞նչըղ է խմե:
- Ա՛յ, Սիրան, փարան չտալու համար ջայիլ մարթուդ ինչի՞ կը մեռցնես:
- Դե օր դու չես մեռցընե, քնե իրանեն առ,- կարճ կապեց Սիրանը:

***

- Ի՞նչ կըսես Իգիթի մասին,- հարցրեց քննիչը Ներսիկին (Իգիթին կասկածում էին ոչխարի գողության մեջ, և Իգիթի հարազատները Ներսիկին դատարան վկա էին բերել, որ վերջինս դրական բաներ ասի Իգիթի մասին):

- Շատ լավ բաներ կըրնամ ըսե, քաղաքացի դատավոր, ի՜նչ ըսեմ՝ դըլի՛ Իգիթ, մեմա տեսար մե սիրիմ օչխար փերեց, մալ փերեց. մարթ զարմանա կը, թե ուրտի՞ց փերեց, ի՞նչըղ փերեց, ո՞ւր տարավ: Էքսի օրը մե ուրուշ բանըմ, քըսըն՝ ամմեն բան պաշարե կը, ամմեն ինչուն տըկեն դուս քուքա: Հըլը էնքանա բան կա, օր չիտեմ կամ բիրատի խո չեմ հիշե:
- Լավ օր չես հիշե,- ըսավ դատավորը,- թե չէ էս մարթը արևի էրես էլ չէր տեսնի:

***

- Վազգեն, հըլը թեզըմ կայնեցու, սիրտըս խառնեց,- Մոսկվա թռչող ինքնաթիռում իրար անցավ Վազգենի կինը:
- Սուս, ա՛յ կընիկ, ի՞նչըղ կայնըսնեմ, ավտո խո չէ:
- Հըբը ի՞նչ էնեմ, սաղ ճամփան իսի անտերը էրկընքեն տի էրթա՞:
- Մարթա, քիչմա դիմացի, այդի սաբերն անցանք, կիշնի մնացածնա շոշեն կերթա:

***

- Էս մասդ ցավո՞ւմ է,- որովայնի տարբեր հատվածներ շոշափելով, հարցնում էր գինեկոլոգը Սեթոյի կնոջը, ում ատամնաբույժի փոխարեն սխալմամբ ուրիշ մասնագետի մոտ էին տարել:
- Չէ՛, չի ցավում, չէ՛,- անընդհատ կրկնում էր կինը:
- Բա որտե՞ղդ է ցավում,- զարմանքով ու վրդովմունքով հարցրեց գինեկոլոգը:
- Առկաս կը ցավի,- ոչ պակաս զարմացած ըսավ կինը:
- Իյա՛, բա ինչի՞ ինձ մոտ էկար, շորերդ հանեցիր, պառկար...
- Է, ես ի՞նչ գիտեմ, գիտեմ, թե առկիս քոքը ժուռ քուքաս,- միամտորեն արդարացավ կինը:

***

- Ծո՛, հըլը վար թըրեք, Օվակը շիտկավ դագաղի մեչ, բան տի ըսե,- թափորի մասնակիցները դագաղի թեքությունը ճիշտ չէին պահել, անակնկալի եկան:
- Բանմա չի ըսե, էդոր խանդոտ խըսյըթը չիտե՞ք. շիտկելե կաշե, թե տղամարթ խո չի մոտենա կընկանը,- ըսավ Հովհաննեսը:

***

- Եղիշ, քու ուսումդ ո՞ւմ է պետք. բուֆեթե խաբար տուր, մաշինեցե, ունեցվածքե,- վեճի մեջ պնդեց Հնձոն:
- Հնձո, վա՜յ թե քու վերնահարկըդ դարտակ է, բան չես հասկընա,- ներկաներին ի տես՝ ձեռքը թափ տվեց Եղիշը:
- Ծո՛, ո՞ւմ վերնահարկն է դարտակ, հլը մեմ վե՛ր ել. մեբել ու գարդիրոփ տեսսի՜,- հաղթական շուրջիններին նայեց Հնձոն:

***

- Ծո՛, դու ինի սուտ զըրցողին մա՞նչն էս,- աշուղ Ջիվանու որդուն՝ գրականագետ, արվեստաբան Գարեգին Լևոնյանին ըսավ Պոլոզ Մուկուչը:
- Ի՞նչ ստախոս, ուստա Մուկուչ,- վիրավորվեց հայտնի բանասերը:
- Ծո՛, հա՛, հա՜. հարըդ երքեր կը՝ «Ձախորդ օրերը ձմռան նման գուքան ու կերթան...», բոլշևիկները հըբը ինչի՞ էկան ու մնացին:
- Բոլշևիկներն էլ մի օր կերթան, ուստա Մուկուչ,- մեղմացած ու բարեհոգի ժպիտով նկատեց հոր արժանավոր

որդին:

***

- Վայ, մարի ջան, քեզի տարան խալատելնիկը թըրին, օր մեռար,- դիմեց վերջերս փոքր եղբոր մոտ քնացած ու մեռած մորը Հակոբը:
- Մենք փերինք խալատելնիկը թըրինք մեռուցինք, դուքա կիպիտելնիկը միացուցեք, սաղցուցեք,- չհամբերեց փոքր եղբոր կինը:

***

- Տղա՛ք, մոլախոտն ի՞նչ է,- նվագող ընկերներին հարցրեց Ռաֆոն:
- Չիտե՞ս ինչ է,- ըսավ Արտոն,- ցանածիդ մեչ օր ուրուշ խոտ կը բուսնի, ըշտը մոլախոտն է;
- Հա՛, ուրեմն չալղըջոնց մոլախոտնա Բաբուլն է,- ըսավ Ռաֆոն:

***

- Պլաններն ինչպե՞ս եք կատարում,- սիրտը շահելու համար կատակով հարցրի մեր կերուխումից ու համատարած թափթփվածությունից դժգոհող հավաքարարին (համերգից հետո նախագահը գառ էր մորթել, հյուրասիրել բոլորին):
- Է՜, ի՛նչ պլան պիտի կատարենք. օրը մե նախըրըմ քուքա: Գառ-օչխըրին փոստին պլանը էրկու հարուր տոկոսով կը կատարենք, ըշտը կաշուն պլաննա հորթերն ուտելեն էտև կը կատարենք:

***

- Խուճուճ, տեսնի՞ս կը այդի իրեք շենքը, լավ աշե, հորքուրդ ըշտը այտոնց մեչ կապրի,- Թիֆլիսում ման գալիս որդուն ըսավ Արմոն:
- Է, չերթա՞նք տի իրանցը,- հարցրեց որդին, երբ բավական տեղ անցել էին առաջ:
- Չեղավ, չէ. ի՞նչըղ էրթանք, ծո՛, դիա էլի՛ իրեք հատ էտման շենք:

***

- Արմո՛ եղբայր, ամոթ չէ՞, էսքան վախտ պարտքդ չես տա, արի թեզ էրե, տու,- հավաքված մարդկանց մոտ դիտմամբ բարձր ըսավ հարևան Սերգոյի կինը:
- Քու տիրոջդ հերն անիծած,- հայհոյեց անակնկալի եկած Արմոն կիսախուզ օչխըրի հասցեին ու բաց թողեց,- քնե՛ Սերգոյին կնկանը պես սուրույին (հոտին) մեչ խաղք ու խայտառակ էղի, ավելի բարձր ըսավ Արմոն:

***

- Էսքանը անջաղա ուտեմ,- ըսավ Բաթումիում հյուրընկալված Արմոն ու ընդհանուր ճաշը քաշեց առաջը:
- Հարի՛կ,- ըսավ Խուճուճ որդին,- էտիկ մե քեզի համար չէ:
- Է, էստեղ ինչ կա օր,- զարմացավ Արմոն, բայց տանտիկինը ճաշամանը վերադարձրեց սեղանի մեջտեղը:
- Ծո՛ Խուճո՛ւճ,- բեղերը ոլորեց Արմոն ու ըսավ,- դու ինչ ես օր, քու բարեկամդ ինչ ըլլի: Թող պարծենան, թե մեմա էսոնցը ղոնաղ էղա:

***

- Թաթո՛, ծո, դիա ձեր տունը, մենք քնացինք, բարի գիշեր,- ըսին հարբած Թաթոյին տուն բերող ընկերներն ու անհետացան գիշերվա խավարում: Թաթոն, չիմանալով, մտավ շան բունն ու քնեց: Քնի մեջ շոյե՜ց, ձեռքը փափուկ սահեցրեց ու զարմացավ.
- Շուշա՛ն, էս շբո՞վ ես քնե,- ու նորից

խռմփացրեց մարդը:

***

- Քնե Սիրան մորքուրեն հավըմ փիր, մարթ է էկե,- Հնձարի ձեռքը տվին հինգ ռուբլիանոցը:

- Սիրան մորքուր, հավըմ տուր. քանի՞ս կուզես:

- Է, ինչ ըսեմ ծո՛, իրեք մանեթ:

- Չէ, հնգով թե կըլլի, տուր, թե չէ՝ չի ուզե,- ըսավ Հնձարը:

***

- Գիտես, էրածս տեսա՝ թոռդ թոռիս ծեծեր կը,- կռվի տոնով ըսավ Օսանը Սաթոյին:

- Էտիկ հեչ, Օսան ջան, վրադ բաց ես պառկե. էտիկ էրած է:

- Է, դունա օր ծածկած ես պառկե, հըբը վրադ չես առնե. էսօր էրած է, էքվանա ղորթ կըլլի,- սարթ-սարթ ըսավ Օսանը:

***

- Ծո Կարո՛, էրեկ խելքե դուս խմեցինք, գլոխըս տրաքի կը, ի՞նչ էնեմ,- բողոքեց Խաչոն:

- Օյինբազ մարթ ես, Խաչո, եսա հավատացի,- ըսավ Կարոն զարմացած,- էրեկվա խմելներուս ես քու վրադ գլոխ չտեսա, չկար:

***

- Խմել չի կարելի, իմացա՞ր, խստիվ արգելում եմ,- զգուշացրեց բժիշկը Ալեքսանին. կինը մեկուսի ուրախացավ:

- Ըխչի, ինչուդ կուրախանաս, գիտես քեզի լավութո՞ւն են էրե. մեր տունը քանդեցին,- ըսավ Ալեքսանն ու դառնցավ բժշկին.

- Բժիշկ ջան, մե մարթավարի արհեստըմ ունեի, էնե դու թըրկել կուտաս, հըբը մենք էստից էտև ի՞նչըղ ապրինք:

***

- Տացու, քաղաք եմ գնում, արի՛քեզի պաչոտնի տանիմ,- ըսավ Կարոն ու իր հարևան Թորգոմ պապին ավտոբուսից իջեցրեց, նստեցրեց իր «Մոսկվիչ» ավտոմեքենան:

Ճանապարհին ջահելավարի մի քիչ արագ ու օյիններով քշեց, հետո էլ, խոսակցությամբ տարված, թափով բախվեց բեռնատարին, որի հետևանքով Թորգոմը, դիմապակին գլխով ջարդելով, դուրս թռավ մեքենայի խցիկից:

Երբ հաշմված, արնաշաղախ Թորգոմը, մի կերպ ոտքի կանգնելով, մոտեցավ մեքենային, Կարոն բացեց դուռը և շատ հանգիստ, ասես ոչինչ չէր պատահել, ըսավ.

- Տացո՛ւ, ինչի՞ ըշտապար, դուռը բանայի, իջնեի՛ր:

- Քյոփօղլու զավզա՛կ, մեկալ փերելուդա դուռը բաց, եթե կուշտըդ մեմա նստիմ,- ըսավ սըփըրթնած ու վախեցած պապը:

***

- Արի դեղեր տամ, խմցու, դիորի ես պրծնիմ, քամ,- ըսավ բժիշկ Գալոն օգնության կանչող մի մարդու, ում կնոջ վիճակը գնալով ծանրանում էր:

- Ծո՛, էս ի՞նչ էրիր,- բողոքեց մարդը, երբ Գալոն արդեն եկել էր,- դեղերը խմցուցի, մեռավ:

- Խմելեն էտև քրտինք տվա՞վ վրան,- հետաքրքրվեց բժիշկը:

- Հբը ինչ էրավ, պտուղ-պտուղ քըրտնավ:

- Օղորմի՞ իրան, ըշտը այդիկ է փրկե

հիվընդին,- հանգիստ խրոճով ասավ բժիշկը:

***

- Ծո Քերո՛փ, բաժունքին քեզի բանմ օրա հասա՞վ,- հետաքրքրվեց ծանոթներից մեկը:

- Է... է՜, շնեն շատ ենք, ի՞նչ դի հասնիր, էլի փա՜ռք Աստծու, օր կընկաս ինձեն չբաժնեցին, սաղ-սըլըմըթ ինձի տվին:

***

- Փեսան աներոջ ի՞նչն է, ծո՛,- հարցրեց լըվըռ (շատախոս) Գալոն փեսային:

- Փեսան է, ինչն է,- եղավ պատասխանը:

- Չէ՛, բալամ, լա՛վ մտածե:

- Բարեկա՞մն է:

- Չէ՛, բալամ:

- Հբը ի՞նչն է,- հետաքրքրվեց համբերությունը հատած փեսան:

- Փեսան աներոջ շունն է. հիշե ու էլ չմոռանաս:

- Ախըր դունա ես փեսա, չէ՞, աներոջ թափը կոտրել ուզեց փեսան, բայց վերջինս ապահովագրեց իրան՝ ես աներզոքանչ չունիմ:

- Է՛, անտեր շուն քի՞չ կա,- չխնայեց փեսան:

***

- Էդ ընչի՞ ես մռութըդ կախե, Գևո, բան խո չի՞ էղե:

- Բաղդո, էլ ինչ տի պատահի. կընիկս մեթի է վրես հաչըմ, զոքանչս՝ մեթի:

- Է, հըմի էդպես մարթ կա՞, օր վրեն հաչող չըլլի,- ասավ Բաղդոն:

- Հըլը դեմդ աշե, իդի խորոզին վրա վե՞վ տի հաչե. մենքե տի ասենք աշխար էկանք, էտիկե: Քառսուն կընիկ ունի, վրան հաչող մե զոքանչըմ չունի,- դժգոհեց Գևոն:

***

- Ըխչի Նազո, ընչի՞ ես մըռթոտվե, քունդ տանո՞ւմ է,- հարցրեց ամուսինը:

- Հըբը չի տանը՞մ. սաղ գիշեր դու խըռկում ես, շուննա՝ հավասար հաչում, թողնում ե՞ք՝ քնեմ,- դժգոհեց կինը:

- Է, քյոփօղլի՛, ես օր հաչեմ, շուննա խըռկա, քընի՞ս կը,- փորձեց իր մեղքը մեղմել ամուսինը:

***

- Գնա քաղաք,- Օննոյին պատվիրեցին առևտրականները,- Մոսկվայի համար «Տուդա ի աբրատնը» իրեք հատ տոմս առ:

- Դուք պատրաստվեք, թեզըմ առնեմ ու քամ,- ասավ ու էլավ դուս:

- Բերի՞ր,- հարցըրին ուշացումով եկած Օննոյին:

- «Տուդա» հնար չեղավ, վեց հատ «աբրատնի» եմ փերե,- հանգիստ հայտարարեց Օննոն ու ձեռքն առավ ճամպրուկը:

***

- Ուղեգիրդ տո՛ւր,- վարորդ Մաղոյից պահանջեց ավտոտեսուչը:

- Ընչի՞ համար,- նեղսրտեց վերջինը:

- Մաշինադ էլ տի առնենք ձեռքեդ:

- Ընչի՞ համար,- ավելի բորբոքվեց Մաղոն:

- Որովհետև վարել չիտես,- ասածը հիմնավորեց տեսուչը:

- Իյա՛, տունը դաշնամուրա ունինք, հըմը սաղ տնով չալել չիտենք, հըմի իդիկա տի առնե՞ք,- իր ասածն էլ հիմնավորեց Մաղոն:

***

- Մեր Արտոն ի՞նչըղ կը սորվի,- ծնողական ժողովին դասղեկին հարցրեց Վարոսը:

- Ի՛նչ ըսեմ, ամբողջ դասին գրիչը բերանն է, թվում է՝ դասը գիտի, բայց հարցընում ես՝ չի պատասխանում:

- Հարքելի,- ըսավ Ալեքը,- էտոր պապն էլ էդ էր. ղավալը թըներկը բերանը, մեռնեինք կը աղաչելով, չէր չալե:

***

- Բազմազավակ մայր եմ, քարածուխ չեն տա,- կուսշրջկոմի նախագահին բողոքեց կթվորուհիներից մեկը:

- Չիտե՞ք օր վեց երեխաների մայր է, ինչի՞ չեք տա,- քարտուղարին կշտամբեց նախագահը:

- Ընկեր Իվանյան,- արդարացավ վերջինս,- Փոկա վեց էրեխից պակաս ունեցող չկա, քուլլի բազմազավակ են, որի՞ն տամ:

***

- Սենեքի օջախը մարավ,- ըսավ Գիքոն,- երկաթգծի սյուները գողացել էին, միլիցիան ման էր գալիս (բարձրահասակ լինելու համար Սենեքի տղաներին ստոլբա էին ասում):

- Ինչի՞ ծո՛, Սենեքի օջախն ինչի՞ մարավ,- հարցրեց Վարոսը:

- Ի՞նչըղ թե՝ իրեք ստոլբա էտոնց տունը կա, ըշտը օր գտան, օջախը մարավ:

***

- Ըխչի, հըլը շիտակ ըսա՝ հեչ ընձի դավաճանե՞լ ես,- մահվան շեմին կնոջը հարցաքննել սկսեց Առշոն: Ըսա, իմանամ, տեսնում ես, մեռնըմ եմ, հըլը խոստովանցի: Էլ ինչի՞ ես վախենըմ, էսա մեռնըմ եմ, աշե՛:

- Հըբը օր չըմեռա՞ր,- կասկածանքով նայեց ու զգուշացավ կինը:

***

- Ըխչի՛, էդ վո՞ւր ես էրթըմ,- թունդ վեճից հետո կինը հավաքեց շորերը, գրկեց էրեխուն, օր էրթա:

- Քու գործդ չէ,- ըսավ բարձրը ու ջղային:

- Ետ ես էրթըմ, հա՛,- երգեցիկ ու ծաղրական ըսավ մարթը:

- Հա՛, ետ եմ էրթըմ,- կարճ կապեց կինը:

- Է, օր ետ քընացիր՝ մարթ չիտի՞ առնես:

- Հըբը ինչ տի էնեմ,- բավականությամբ հաստատեց կինը:

- Ըխչի՛, եսա օրփնարի, դունա, ըշտը մի՛ էրթա, մնա էլի:

***

- Դու ո՞վ ես, ո՞վ է քեզ նես թողե,- լուսը չբացված՝ քնած Խաչոյի բկին չոքեց մեկը: (Երեկոյան մարդ ու կին, թեև դժկամությամբ, հյուրընկալել էին նրան, իսկ առավոտյան սպանել էին ուզում):

- Ինձի տան տերն է նես թողե, էս կընկա մարթը,- զարմացած ու վիրավորված՝ հայտարարեց Խաչոն,- մե ըսե իմանամ՝ դու վո՞վ ես:

- Տո՛, շուն-շանորթի, ի՞նչ տանտեր, էս տանը տերը ես եմ,- ոչ մի կերպ չէր հանգստանում մարդը:

- Վա՛յ-վա՛յ, կրակը չի ընկնինք, արիք խելըռինք. էդ ի՞նչըղ էղավ, օր էս տանը տերը գիշերը ուրուշ մարթ էր, առավոտը իրո՞ւշ էղավ,- զարմանալուց չէր դադարում Խաչոն:

***

- Այսի մեր Անուշնա ճաշը էման կը պաղեցնե, օր հեչ համ չեմ առնե,- դժգոհեց Ակոն:
Հայրը միամտվեց, տաք խաշիլով լիքը գդալը տարավ բերանը, բերանը վառվեց, աչքերն արցունքոտվեցին, և Ակոն սրտացավ հետաքրքրվեց՝ Պիջը, ինչի՞ լացիր:
- Քեզի պես տղան պակսեցուցել է, ի՞նչը չլամ,- ըսավ հայրը:

***

- Շմո՛, Թանքմենք հետս չունին,- ըսավ Համունը,- այսի կընիկս անպետք տեյի տվին, հըմը լավ դուս էկավ, գոհ եմ:
- Ծո՛, չըլլի՞ պերզել ես, գովես կը, օր մեկիմ գլոխը հանես:

***

- Շմո՛, դու տրորվե, ես էրթամ սառը ջուր փերեմ,- ըսավ կինը:
Աղիողորմ լացի ու սրտաճմլիկ բոռբոռոցի վրա մայրը նես վազեց, տեսավ տղան այսահարի պես թևերն է թափահարում.
- Քա՜, քոռանամ ես, էս թերմաշը վայ թե տղուս գլխուն եռացրած ջուր լցեց... Բալա ջան, ի՞նչ էղավ, հըլը ձենըմ հանե:
- Ա՛յ, մարս, բան չկա՛. Սոֆիկն ըսավ՝ տրորվի, ըշտը եսա տրորվիմ կը:

***

- Տղա՛ք, Բաբուլը գալիս է,- գյուղամիջում կանգնած ջահելները խոսք մեկ էրան,- բարևը ոչ մեկըս չառնենք, տեսնինք՝ ի՞նչ տի էնե:
- Իյա՛,- իր անարձագանք բարևից զարմացած՝ արտաբերեց Բաբուլ Խաչոն,- էս գեղացիք ոտի վրա քուլլի մեռել են:
Մարդը հանեց գլխարկը, վշտալի դեմք ընդունեց, ասաց՝ օղորմի՛ Աստված իսոնց ջահել հոքիներուն:

***

- Ծո՛, ինձի՞ շատ կուզես, թե՞ մամիդ,- թոռնիկին հարցրեց Համբոն:
- Քեզի չեմ ուզե, մամիս շատ կուզեմ,- մեկեն ըսավ թոռնիկը:
- Ինչի՞, ծո, ինձի ինչի՞ չես ուզե օր,- նեղացած ձևացավ պապը:
- Է, ի՞նչ ուզեմ, դունա շան պես գզելով կը պաքնես:

***

- Ըխչի, արի դուռը բաց, չե՞ս իմանա,- գիշերվա կեսին, մեկը հարբած գոռումբակում էր դուռը, և կինը չէր բացում:
- Վե՞վ ես ու ի՞նչ կուզես,- վերջապես հարցրեց կինը:
- Ես եմ, մարթուդ չե՞ս ճանչե,- դժգոհեց հարբածավարի:
- Ի՞նչ մարթ, մարթս կուշտըս պառկած է:
- Իյա՛,- զարմացավ հարբածը,- մարթըդ օր կուշտըդ պառկած է, հը գոնե արի աշե՝ հըբը ես ո՞ւմ մարթն եմ:

***

Տղա՛ք, հեչ բան միտքս չի մնա. ինչ օր կըսեն, գլխուս մեթուեն մըտնի, մեթուենա կելլե,- անկեղծացավ Կարոն:
- Ծո՛, էլի քուկդ լավ է, օր գոնե մեթուեդ մտնի, մեթուեդա կելլե, հըբը ի՞նչ էնե մեր Առշոն, գլխուն գիլլովա օր զայնես, նես չի մտնի, դիպավա, վար կընկնի,- ցավակցական ձենով ըսավ մեկը:

***

- Լութո՜, չոբան ախպե՛ր, աչքդ լուս, քեզ ամուսնացրինք,- հարազատները վազեցին սար՝ աչքալուսանքի:

Աչքալուսանք տվողները ահագին հեռացել էին, Լուքոն ուրախությունից իրան կորցրեց, ոչխարների հետ էր բարձրաձայն խոսում, հետո ուշացումով գոռաց.
- Ծո՛, հըլը կայնեցե՛ք, անխիղճ-անհավատներ, հըբը ինչի՞ չըսիք՝ ո՞ւմ եմ առե:

***

- Օնե՛ս, քնել խո չե՞ս, ինչի՞ ձեն չես հանե,- կատակով հարցրին ընկերները, որ նրան բերել էին մարզադաշտ՝ «Արարատ» «Դինամո» Թիֆլիս խաղը դիտելու:
- Է, ինչ ձեն հանեմ, իզուրա փերիք,- դժգոհեց Օնեսը,- ես էս ֆուտբոլը հերու, տելևիզորով տեսել էի,- լո՞ւրջ, թե՞ կատակով ըսավ վերջինս:

***

- Համբո՛, ձեր գեղը սրամիտ մարթ կա՞:
- Սրամիտ շատ կա, աշխատող չունինք:

***

- Բուժքույր ունի՞ք գեղը, Համբո՛:
- Բուժքույր կա, բուժող չունինք:

***

- Բժշկի դուռ շատ ես ընկե, Համբո՛:
- Բժշկի դուռ օր ընկնեի, շան օրի կընկնեի:

***

- Քեզնեն արուն առա՞ն, Համբո՛:
- Խելքս գլխես առան, հըբը արուն չառա՞ն:

***

- Չըսի՞ր հերիք է, Համբո՛, մե քիչ էլ թող մնա:
- Մի՛լա, կըսե, քաշածիս չափ էլ տակը կը մնա:

***

- Գալո՛,- հարցրեց Թաքոն,- է՞շ կուզիս, թե՞ ափոյի նկարը,- տան ունեցվածքը բաժանել էին էրկու եղբոր կանայք, մնացել էր էդ էրկուսը: Գալոյի կինը քթի տակ փնթփնթաց.
- Չըր ափոն ինքը սաղ վախտ էշմի չարժըներ, ուր նկարն էշ կարժընա՞: Էշն առ, տղա՛, ափոյի նկար մզի իշուքուն չընի,- հրահանգեց Գալոյի կնիկ:

***

- Ա՛յ տղա, կնոջդ ինչո՞ւ ես ծեծում, էդ գազանությանը վերջ տալո՞ւ ես, թե՞ չէ,- Բաղդոյի կինը ճարահատ դիմել էր միլիցիա:
- Եսա քու խելքիդ էի, քննիչ ջան,- ըսավ Բաղդոն,- բայց օղորմածիկ պապս կըսեր՝ կնիկը թոզոտ քըչը է, թեզ-թեզ թափ տի տաս, օր թըզզընա, ըռընդնա: Մամսա կըսեր՝ կընիկարմատին ծործընկին տակը սատանան բուն կը թնե, էդ բունը միշտ քանդվի տի: Հըմի ես իմ պապ ու մամիս էսիրք-պատվիրանը թողած, քեզի անկաջ էնեմ:

***

- Վարպե՛տ, իսիկ գիլընկի է, շատ թանկ արժե, էսով չայ կը խմեն,- նեղսրտած ըսավ Հրանուշը մուրաբի ամանը գլխին քաշած իրենց տանը աշխատող վարպետին:
- Համով է, հա՜, հաստատ թանկ արժե էս անտերը, հըլը մե ամանմա լից,- ոգևորված ըսավ վարպետը:

***

- Չէ՛, Մանուկ, դուք քչվոր եք, մեր խոսքը տի անցնի,- ըսին դոջաբեկցիները չոբան ընտրելիս:
Մարդաքանակով նրանք շատ էին,

բայց Մանուկի էլ ոչխարներն էին շատ նրանց ոչխարներից, ուստի Մանուկը չզիջեց ու ըսավ.
- Ծո՛, դուք օր շատ եք, չոբանը խո ձեզի՞ չպիտի տանի արծելու, իմա օչխըրնիս են շատ:

***

- Հըմի իմ նշանածս վե՞վ է, ես ո՞ւմ հետ տի քնիմ,- նորահարս Մանանը հարցրեց տեգոր կնոջը (Մանանին առանց թագվոր հարս էին բերել, սկեսուր էլ չուներ):
Կեսրայրը կցկտուր «ես», «իմ» լսեց, վրդովվեց.
- Շան աղջիկ, մեմ ըսիր, մեմե չըսես, էլ ձենդ չիմանամ. մեր տունը իմ ու քուկ չկա:

***

- Բարև, ազգականնե՛ր,- հանդ գնալիս Չախոյենց ավանակներին սրտալի ողջունեց Թամբալ Օհանենց Վալոդը, որոնց ազգուտակին գյուղացիները «Էշ» մականունն էին կպցրել:
- Ծո՛, ախմախ, վերջ տու, մարթ կիմանա: Գեղացիք կըսեն, հերիք չէ, դունա ավելի կը հաստատես,- սրտնեղած ըսավ Նորսոն:
- Նորսո, ինչի՞ կը սխմըվիս. հըմի գեղացոնց ահուն հարազատներուսա՞ ուրանանք,- մինչև վերջ իրանը առաջ տարավ Վալոդը:

***

- Նազել, փորս ցավի կը, ըրախիմ փիր խմեմ,- Իշխանը դիմեց եղբոր կնոջը:
- Աղախպար, ըրախի չկա,- կարճ ըսավ հարսը:
- Իյա՛,- անկեղծ զարմացավ Իշխանը,- էրեկ քաշեցիք, ի՞նչ էրաք:
- Է, հեչ, կարասն է, փեչըտել ենք:
- Տղա՛ք, քնացի մեր Գալուստինը,- գյուղամիջում, եղբոր ներկայությամբ հայտարարեց Իշխանը,- ըրախիմ խմեմ, Մոսկվայու կամիսիա էր էկել, կարասը փեչըտել էին:

***

- Էս ի՞նչ բան է, Վարազ, էս տարի կըսեսթե քարթոլը ջրի է (Վարազենց, կարճահասակ լինելու համար, գյուղում ծաղրական «քարթոլ» էին ասում):
- Չէ, Վանիկ ջան, ջրիկ չէ. (Վանիկենց ծաղրանունն էլ «սըլը» է),- խոսքը կըտրեց Վարազը,- նայած, թե ինչ սըլով կը քամեն:

***

- Ազգո՛, փրկվանք. էրթամ խոփանեն էրեխեքս հավաքեմ փերեմ,- ըսավ Չախորդ Փառնոն, երբ իմացավ օր տասը էրեխա ունեցողին ԳԱԶ-24 մակնիշի մեքենա են տալու:
- Ո՞ւր են էրեխեքը,- վերադարձին տունը դատարկ գտնելով, հարցրեց Փառնոն:
- Էնոնց հարերնա էկան, ըշտը, էնոնց տարան,- պարզաբանեց կինը:

***

- Ծո՛, հորս հարմար բանըմ կըրնա՞ք չալե,- Ցոլակի տղան պատվել ուզեց հարազատ հորը:
- Էդ մարթը ցերեկները քնում, գիշերներնա գողության կելլե,- ծանուցման կարգով ըսավ Բամբեն ու առաջարկեց՝ «Լուսնյակ գիշեր բոլորովին քուն չունեմ» երգը, որը շատերի ժպիտը շարժեց, շատերը որսացին երգի ակնարկը:

***

- Ծո՛, դե քթե փերիք, վառանք էդ ձեր «Յարն անուշով»,- հըլը մե մարթավարի բանըմ չալեք. Փոկա հարսանիքի ժամանակ դժգոհեց Խաչոն:
- Ի՞նչ էնեմ, ծո՛, ըշտը չալում եմ չալում, մեննըկ «Յարն անուշն» ա դուս գալըմ,- մեղավոր-մեղավոր ըսավ նվագող Սրքոն:

***

- Դու գործը նըյսը առաջ տար, ես էսա տուն դիպնիմ ու դառնամ,- ըսավ Սաղաթելին մանչը հորը և գնդակից էլ արագ թռավ տուն:
Շատ ըսպասեց հայրը, սրտնեղեց, ջղայնացավ, տեսավ՝ չեկավ, ճարահատ ինքը մըտավ տուն ու տեսավ, օր տղան շատ հանգիստ փռվել է բազմոցին, կընոջ կուրծքն է համբուրում, էլ չհամբերեց.
- Ծո՛, շան լակոտ, գիտնայի ծծե չես կըտրե, նշանե՞ի կը քեզի,- իր զայրույթը էսպես կատակով մեղմեց կատակախոս հայրը:

***

- Ինչ ապրանք, մթերք ստացաք, առաջինը՝ մեզ՝ ղեկավարներիս,- կատեգորիկ կարգ սահմանեց շրջկոմի քարտուղարը:
- Սա մկնդեղ է, ղեկավարությանը պետք չի,- նկատեց գլխավոր անասնաբույժը,- սա մկներին է պետք:
- Մկներին պետք է, առնետներին պետք չէ՞,- չհամբերեց հավաքարարը,- թող տանին ուտեն, օր անուշ քնին:

- Գիտես, ծո՛, ըդիկ շատ թանկարագար մարթ է, հետը զգույշ կըլլիս մե քիչըմ,- խրատեցին գյումրեցի շոֆեռ Օննոյին ու ցույց տվեցին աշխատանքից նոր հեռացված շրջկոմի քարտուղարի տունը, ում ծաղրելու համար դռան առջևը անվադող էին կախել, իբրև կամեր կպցնող արհեստավորի:
- Գլոխը քարը, տղաք ջան, հինգի տեղը թող տասը առնե, մեննըկ գործըս էնե,- ըսավ անտեղյակ Օննոն ու դուս կանչեց Սասոյին:
- Ի՞նչ կա,- չոր հարցրեց տանտերը:
- Հե՛չ բանա չկա, վարպետ ջան, կամերըս տրաքավ, էկել եմ օր սարքես:
- Ծո, մեյմո՛ւն, քու կամերըդ ես տի, ուրեմն, կպցընե՞մ, հա՜. հըմի էման մե հատըմ կպցընեմ օր, պապ ու մամիդ հարսնիքը ջոկ-ջոկ հիշես: Ըզիդ աշե, իշու ձաք, քանի գլոխդ վրադ է:
- Ծո, փինըչի՛, արհեստավորն ըդպես չի էղնի: Քու շալակդ էլ խո բեռ չեն բառցե, օր տրաքիս կը: Չես էնե, մի էնե, քեզնենա լավ փինըչիներ կան, էնոնք կենեն,- ըսավ Օննոն ու քնաց:

***

- Ռոստոմ, էս գառներն օր կերանք, հըմի ի՞նչ տի ձևակերպես,- խորամանկ ժպիտով հարցրեց շրջանի դատախազը: Երկրորդ քարտուղարն էլ ավելացրեց՝ օր միլիցի, դատավոր-դատախազի ձեռվին չընկնիս, կաշիդ չքերթեն: Գանձայի յայլայում մարդիկ լավ կերել-խմել էին, քեֆները՝ հազար ու հիմա էլ, սուտ լրջություն կեղծելով, զոռբայավարի հետխրախճանյան իրենց հանգիստն էին վայելում: Դատավորն էլ իր հերթին նեղը լծեց Ռոստոմին. «Մենք չկանք, գլխիդ ճարը տես»:
- Չեզնեն օր հույս չկա,- հատ-հատ ար-

տաբերեց Ռոստոմը,- ակտ կը գրենք, օր սատկան, քցինք շների առաջը, կերան:

***

- Ա՛յ մարթ, պատերազմ կամավո՞ր քընացիր դու,- հարցրին Արտաշին գեղացիք, ում լավ երգելու համար գյուղում Ջիվանի էին ասում (պատերազմի ժամանակ բոլոր ղեկավարները թաքնվել էին. Արտաշին էլ նրանցից մեկի տեղն էին ուղարկել):

- Ժողովո՛ւրթ, քընացի տեսա, օր սաղ կուսակցականները Վավոյին վարտիքն էին մտել,- ըսավ Արտաշը,- որոշեցի էրթալ պատվով մեռնել, քան էդոնց պես անպատիվ վարտոց մուխ կուլ տալ:

***

- Լենինն անմահ է,- բարձրագոչ ճառերով նշում էին նրա մահվան տարեդարձը:

- Գանձացի Լևանը երկար նայեց նկարին, խոր հոգոցով ըսավ.

- Ի՞նչ կըլլիր՝ դու մեռնելուն, օրենքդ մեռնիր կամ էրկուստ էլ մե օրըմ վար անցնեիք, պրծնեինք:

***

- Լևան բիձա՛, ինչի՞ ես պառկե, օր նալոքդ չտա՞ս,- խորամանկ ժըպիտով չարախնդացին հարկահավաքները:

- Ծո՛, տա՞մ-տա՞մ, նալոքսա տամ, Ասսու կըրակնա ձեր ջանին տամ, ավչառքանե՛ր,- դժգոհեց հայտնի սրախոսը,- եսա գիտեմ՝ ինձի տեսնելու եք էկե:

***

- Լևան բիձա, աշես էս բոլշևիկները Լենինին ինչխո՞ր չթաղեցին, մավզալին մեչ կը պահեն:

- Դոյջա մարթ ես, ծո՛, էտքաննա չես հասկընա. ըշտը սաղ շելլոցը (ժողովրդին) վարաքեց, չեն ուզե, օր հողնա վարաքվի:

***

- Անձրև կգա՞, թե՞ չէ,- շրջկոմի քարտուղարը հարցրեց նախագահին՝ երկինք նայելով:

- Հարցրու իրան,- նախագահը մատնացույց արեց Ավոջ տացուին:

- Ամպերնա մեր օրն են ընկե,- ըսավ նա,- անոթի պըտտին կը:

***

- Լևան պապ, էս տարի բերք ըլլի՞ տի, թե՞ չէ,- խոսեցնել ուզեցին Լևան բիձուն Գանձայի ջահելները:

- Ա՛յ օղուլ, խըտվըտիկ կռախմալը (փողկապը) դու ես կախե, ինձի՞ կը հարցընես,- Էսպես խոսեց Լևան բիձան:

***

- Տեսնո՞ւմ եք, Լենինը ձեզ հող տվեց. հողը ձերն է,- լիազորներ էին եկել Գանձա՝ ժողովրդին համոզելու, որ ունեցվածքները ձեռքերից առնեն:

- Տեսնում եմ, տեսնում, բարեկա՛մ,- ըսավ Լևան բիձան,- հողը մերն է, հըմը սերմացու-ցորենը՝ ձերը:

***

- Ինչպե՞ս ես, Լևան բիձա,- շրջանից հեղինակավոր մարդիկ էին եկել՝ ցանքերը ստուգելու:

- Լենինին պես,- մեկեն ըսավ ժողովրդի մարդը:

- Ինչպե՛ս թե՝ Լենինի պես,- կասկածանք, զգուշավորություն կար նրանց երկրորդ հարցմունքի մեջ:

- Մեռած ենք, ըշտը, էնոր պես ու թաղած չենք, բալա՛մ:

***

- Լևան ես, ի՛նչ ես, դու ինչի՞ ես ուշացե: Բիրըտուդ կախեմ կը մեմա կըրկընվավ,- չէր խաղաղվում նախագահը:
- Լավ չէ՞ օր քեզի կախես, մենքե մարթավարի անատութուն էնենք:

***

- Ինչի՞ ես թթվե, Աշո՛,- հետաքրքրվեց կինը:
- Շան չափ հաչեցիր՝ պարտիա մտի, պարտիա մտի. մտա, ի՞նչ էնենք ահան:
- Ծո՛ դե չես ուզե, դուս արի,- ըսավ կինը:
- Իրեք հազարով մտանք, չորսա տանք, էլլե՞նք:
- Ու՞րա փարա, ա՛յ մարթ. հըլը էտման մտածա մնա...Խո շալակդ չեն էլե,- հրահանգեց կինը:

***

- Ախպա՛ր, ախըր մեր ինչուն է պետք կոլխոզը,- համառում էին գյուղացիք, որոնց նաև ստիպում էին:
- Ծո՛, ինչ եք փել գոմշի պես դեմ առել,- ըսավ Ավո տացուն,- էս խըշիմեն (արհավիրք) մեկե պրծում չկա, արիք թեզըմ մտնինք, թեզմա էլլենք:

***

- Տղա՛ք, աշես իսիկ մալնա (տավարը) կուտե՞,- բարձրաձայն հարց հնչեցրեց Խաչոն՝ տեսնելով, օր դիրեկտորն ու գյուղատնտեսը, գովելով ճակնդեղի ստացված լավ բերքը, վրա-վրա կլպեն ու կուտեն:
- Էս ի՞նչ դուս կուտաս,- ըսավ Վաղոն,- դիրեկտորն ու ագրանոմը օր կուտեն, մալը կուտե ու կուտե:

***

- Ես կմեռնիմ, սովխոզ չեմ մտնի,- մտքում որոշել էր Մարկոսը:
Էդպես էլ էղավ. ստիպում էին, և մարդը մտածմունքից գիշերը քնեց ու առավոտը չարթնացավ:
- Վա՜յ ես քու մեռելդ,- հուղարկավորման ժամին թասը տվել էին խընամի Դիվինին. սա գլխարկը հանեց, փեշով սրբեց ճակատի քըրտինքը և հեկեկալով ըսավ,- Մարկոս խնամի՛, ի՜նչ կըյին փերիր (հարմարեցրիր), փոստդ կոլխոզեն պրծուցիր:

***

- Մի՛ ծեծե, ա՛յ մարթ, օր վախենա կը, տված ծեծըդ ի՞նչ օքուտ,- համոզում էր պողոյենց Բասեն տացուի փեսան Մինազու կամրջից վախեցած «Կոմսոմոլ» տգեղ եզան համար:
Ախալցխայից խնձոր բերելու էին գնացել, չարչարվեցին, տարբեր հնարներ գործ դրին, բայց եզը կամրջին մոտ չեկավ:
- Ծո՛, խայտառակ էրավ էս անտերը. սաղ աշխարը էս անտեր, անոթի կոմսոմոլեն կը վախենա, ծո՛ իսի կապիկը ումե՞ն կը վախենա,- չէր խաղաղվում հետագա անելիքը չիմացող Բասենը:

***

- Հիմի մարթու տեսքով ծնված իսի շրջկոմի քարտուղար Վասոն, օր իսքան դաժան ու անգութ մարթ է, իդորա՞ է մար փերե, սնե, մեծցուցե,- հարց տվեց գյուղացիներից մեկը:
- Տղա՛ք, օչիլն օր օչիլ է,- ըսավ Վարազը,- մարթը օր մեռավ, գիմընը կտրե,

վրեցեն քաշվի, կերքա: Տզի պես կպե, մնացել է էսիկ:

***

- Վա՜յ, Հիսուս Քրիստոս, ըխչի քո՛ռ ես՝ էս ի՞նչ էրար, սիրտս պատռավ,- ճչաց Արմինը. լողացնելիս կինը սխալմամբ մեննըկ սառը ջուր էր լցե գլխուն:

- Ծո՛, հըլը իսի սուտ կուսակցականիս լիզվին աշեցեք,- ամանը թափով մարքու գլխին զարկեց կինը,- նեղը կըյնի մեր Քրիստոսին անունը կուտա, լենը կելլե՝ իրենց սատանա Լենինին կը կանչե:

***

- Ծո՛, Հակոբ ես, ինչ ես, քեզի կարքին պահե, ես քառսուն տարի ղեկավար եմ աշխատե, իմացա՞ր: Ես քու գինըդ մե ջեպես կը հանեմ,- ըսավ ու ջեպեն ղոյջա կապոցով հարուրանոց հանեց, ահա՛ն քու գինըդ, տե՛ս,- հոխորտաց կաշառակեր Համբարյանը:

- Օչխա՛ր, սաղ կյանքդ կատարածու ես մնացե, քու գինդա ահան ես փիստոնջիկես կը հանեմ,- էրկու մատով դուս քաշեց ժանգոտ իրեք կոպեկանոցըմ ու շպրտեց կատարածու կաշառակերի դեմքին՝ էդ էլ քու գինը:

***

- Ի՞նչ եք խառնվե իրար,- նկատեց Սուրենը,- աշխատանքից հեռացված ժողկրթբաժնի վարիչի փոխարեն նորեն մե անգրագետ հայվանիմ կը նշանակեն ու կկապեն մեր ջանը:

- Ըսածդ դիա՛ ըշտը էդավ,- ժպտալով շնորհավորում էին լրջացած Սուրենին, երբ պարզվեց, որ հենց իրեն էլ նշանակել են:

***

- Ծո՛, հըլը իդի երգ-երաժըշտության ձենը կտրեք,- ճաշարանում Արմոն դիմեց կերուխում անող ընկերներին,- Ստալինը մեռել է:

- Լա՛վ է,- ըսավ քեֆովցած Գնելը,- մեռել է, ջանը սաղ ըլլի. դիա մե լավ կենացմա ավելացավ:

- Ել, ծո՛, կըրակը կըյնինք,- Մուկուչին բոթեց Գալոն:

- Մեծ հայրիկը ըսին մեռե՛լ է,- քեֆը լավ տուն հասավ Օնեսը ու կարքադրեց կանանց,- հըլը դուք լացե՛ք, ես մեմ էրթամ, իմանամ՝ սուտ չըլլի հըջը՞փ (արդյոք):

***

- Խոստացե՛ք՝ որը՛դ ինչքան բերք եք տալու,- գյուղ եկած շրջկոմի քարտուղարը դիմեց բրիգադիրներին: Կարապետն ու Արշալույսը խոստացան քսանական ցենտներ, Աղասին՝ մի քիչ պակաս:

- Վանիկ, դո՛ւ ասա,- քարտուղարի ձայնը ազդու էր:

- Է, ի՞նչ ըսեմ, հլը ցանել չենք, սերմացու չունինք...Ինչ օր Աստված տվեց, խոստանում եմ, օր իստակ հանձնեմ պահեստ:

- Ինչ ես շատախոսում,- Վանիկի խոսքը կտրեց քարտուղարը,- կոնկրետ թիվ ասա: Ընկերներիցդ ինչո՞վ ես պակաս:

- Էդոնք,- ընկե՛ր քարտուղար,- վախենալնուն ու իրենց կաշին փրկելու համար, ձեզի իշու տեղ են թրե: Եսե՞ նույնը էնեմ:

***

- Ամոթ չէ՞, ծո՛, ավելցուկները ինչի՞ կը կմես,- բուֆետապան Նիկոն նախատեց Վալոյին,- արի՛ կարմիր Լենինըմ

տու, մարթավարի խմե, քնե:
- Ծո՛, դունա լավ գիտես, օր Լենինը սև աղվես է դառցե. համ էլ դունա, եսա գիտենք, օր էլի էդ ավելցուկները տի խմցնես, էլ Լենին ի՞նչ տեյի տամ:

***

- Ծո՛, դու քեզի-քեզի կը խնդաս, խո չը պակսեցուցի՞ր,- Երևանի Լենինի անվան հրապարակում զբոսնելիս, Հայկազին հարցրին ընկերները:
- Հըլը չեմ պակսեցուցել, տղաք,- խընդուքի միջից ըսավ Հայկազը,- իսի հրապարակը հըլը մեմ աշեցեք, թե ինչ բասմըլուղ (կունարկ՝ գոմաղը չորացնելու տեղ) կըլլի: Ըշտը Վալոդնա շահագործող հավերուն մոտիկ չէր թողնե:

***

- Չկերան, ի՞նչ էնենք, Վարդան,- հարցրեց շրջկոմի քարտուղարը չոբանին. գարունը ուշանում էր, անասնակեր չկար, չոր ծղոտը լցրին դեմները, օչխարը չկերավ:
- Փթած սալոմ, գույնա չունի, էդման չեն ուտե, ընկեր Քոչարյան: Էնե օր ձերը խափելով է, մե քանիմ հարուրատ կանաչ ակնոց փիր, ըշվընուն թընենք, բըլքի ուտե՞ն,- ըսավ Վարդանը:

***

- Ա՛յ, իսիկ տոնական սեղան է, զարմացան բանակայինները Ստալինի մահվան առիթով ճաշի նստելիս:
- Էսոր մեռնիլը արժեր, լավ քելեխ տվին,- ըսավ փոկացի Կոլան,- թե գիտնամ քուլլիքի քելեխը էսենց կըլլի, մեծերեն օրը թող մեկնա մեռնի, չըկան ինչ է, շնեն շատ են. մեկը մեռնի, մեկը էլլի էնոր տեղը նստի:

***

- Քեռի, հարսներդ ինչի՞ չեն գնում կոլխոզին աշխատելու,- Մեսրոպին հարցուց շրջկոմի բաժնի վարիչը:
- Տղա՛ք ջան, ի՞նչ ըսեմ՝ զօրը ծեծող չունին, գիշերնա՝ ծոցերը պառկող. կյանքես խո չեմ անցե, էդոնց ստիպել կըլլի՞:

***

- Կարելի՞ է մե հարցըմ տամ,- շրջկոմի քարտուղարի երկարաշունչ ճառից հետո հարցրեց Լևան բիձան,- ինչի՞ առաչ իրեքը իննին փակեր կը, հըմի իննը իրեքին չի փակե:
- Ըսածդ հիմիա մեկնաբանե, չենք հասկըցե, Լևան տացու,- հաջորդ ժողովին հարցրեց նույն քարտուղարը:
- Չհասկընալու ինչ կա. առաչ իրեք ամիս կաշխատեինք, իննը ամիս կուտեինք, հըմի իննը ամիս կաշխատինք, ընկեր քարտուղար, իրեք ամսուն չի հերիքե:

***

- Լևան, ջուրը ինչխո՞ր ընկար (գրասենյակ գալուց սառույցը ջարդվել էր),- հարցրեց Քցոենց Մակարը:
- Էս անտերը գիտցա, թե ամուր է, Մակար ջան, դու մի՛սե՝ մեր կոլխոզին պես տըկեն է դարտըկվե:

***

- Նման է, շա՜տ նման է. գովում էին տեսնողները,- օլիմպիադայի համար կավից Ստալինի արձանն էի քանդակել:
Չորս ախպորս էլ 41-ին պատերազմ տարան, երկար ժամանակ լուր չունեինք: Հայրս սրտնեղած մտավ տուն, նայեց քանդակին, մռլտաց.
- Ո՛ւյ ես քու չալփարա պեխերդ...Իսի

տունը հարդ է շինե, օր էլել աքոշկան տընկվել ես,- արձանի վզից բռնելը տեսսա ու մեկ էլ պատին զարկելը՝ կտոր-կտոր էղավ առաջնորդը:

***

- Ծո Ծմո՛, դու խըսում ես իսոնց, ձեզի սատանա կըսեն, հըլը ըսե՝ էսքան տարի կոմունիզմ քարոզեցին, ձեներն ինչխո՞ր մեկեն կըտրավ,- հարցուց Վարազը:

- Չտեսսա՞ր,- ըսավ Ծմոն,- Լենինը թաքավորնուն վերացուց, ըՍտալինանա՝ խելացի մարթոցը, շենլիքը թոփ էրան մե յորղընիմ տակ, անոթի, ծարավ տանջեցին, էտևա տեսսան՝ սովը տիրեց, բաց թողին ու կաշեն, ըշտը էղավ կոմունիզմ: Շատերը գիտեն թե՝ կոմունիզմը պոչ ու պոզ տի ունենա, օր իրանքա թեզըմ ճանչեն:

***

- Մասխարութուն հերիք է էնես, Մկո, շունըմ է պետք, լավ հաչան շանըմ տեղ չիտե՞ս,- հարցըրին կատակաբան Չլոյի Մկոյին:

- Լավ կոպալըմ առ ձեռդ, տեղը ըսեմ, քնե,- գիտակ մարդու տեսք ընդունեց Մկոն,- կերթաս շրջան, կըմտնիս ուղիղ ագիտացիայի բաժին, ծո՛, էնտեղ էման ազդուն թուլաներ կան՝ քիչ ուտող, սաղօրը հաչող, վերին կուզես փիր:

***

- Թե՛զ էրեք, պլանով նախատեսված պետության հացը փերեք,- և դեռ մի բուռ գարի կամ ցորեն չճաշակած, հացով բեռնված սայլերի շարանը ձգվեց Ախալքալաք:

- Հա՛, հա՛, ըշտը փերենք կը, փերենք,- ձեռքը հպարտորեն պարզած Լենինի արձանի մոտով անցնելիս, Լևան բիձան հանեց քրքրված գլխարկը և շարունակեց,- էլ ի՞նչ չըյրըդ թափած՝ բոշի պես ձեռքդ տնկել ես:

***

- Վերակառուցումը քեզի վրա էկավ, Զավեն. տուն շինեցիր, թըզը հարս փերիր:

- Տառոսը քեզի, Մարկոս, էդման հարսմա քեզի ըռաստ քա:

- Ինչըղ է ծո՛, բանըմ էնել գիտե՞:

- Մենք վարեն շինելով վեր էլանք, ինքը վերեն քանդելով վար իչավ, հըբը չիտե՞,- ըսավ Զավենը:

***

«Կորա՛նք,- ըսավ գույնը պատի ծեփ դարձած գյուղսովետի նախագահն ու հրամայեց,- սաղ շենքը քարուքանդ էնել, գտնել հայրենիքի դավաճան մկներին, բնաջնջել անխնա»: Ստալինի դրոշն էին բզիկ-բզիկ էրե մկները, որ այն ժամանակներում նույնիսկ թաղման թափորի առջևից էին տանում խաչված մեր Տիրոջ փոխարեն:

- Ի սե՛ր Աստծու, իդիկ, ըշտը, շատ լավ էղավ, ծո՛, մեր մկներուն հանկարծ ձեռք չտաք,- մեկուսի հրահանգեց Լևան բիձան,- բըլքի էն կռտած մոնդոլինա ուտեն:

***

- Ընկեր քննիչ, հըլը էրկու անքամա Ստալինին ու ձեզի քրֆեց,- Հայկոյի դեմ վկայեց Աչին, որ ամեն կերպ ուզում էր գործը իր օգտին շահել:

- Վա՜յ-վա՜յ,- վախից ճչաց Հայկոն,- ձունը քա գլխուս, ամա՜ն, նաչալնիկ ջան, չհավատաս էս դանջըղին (քաջին), ընկեր Ստալինին ու ձեզի քա-

նի՜-քանի՜ անքամ է իր քամակը թրե ու հանե:

***

- Ծային, քիչըմ ջուր թափել կուզեմ, հըմի իդի մարթը վե՞վ է, իդի պատին վրա կանգնել ու չի գնում. դարաղո՞ղ է:
- Ըխչի, ձենդ կտրե, ի՛նչ դարաղող, Լենինն է, բռնեն կը, սո՛ւս:
- Լենինն է, ինչի՞ է հրբը յաբանի ածի պես էլել քարերուն գլոխը տընկվե: Լա՜վ ջուր թափելու տեղ էր իդի պատը,- Երևանի Լենինի անվան հրապարակում ափսոսանքով ըսավ Փարան մամը:

***

- Հացը պատրաստ է, բայց քիչ-մա պատմե, համով կը զրցիս դու,- խնդմնդում ու խունջիկ-մունջիկ էր գալիս Մեծ Խանչալլիում հյուրասեր տանտիրոջ զվարճասեր կինը:
- Ըխչի, մոլըրա՛ծ,- մի պահ հարմաբացրեց, դուս կանչեց ու խրատատու ըսավ ամուսինը,- իդի իշուն ճաքին քով առկընիդ մի՛բանա, սըլը-սըլը դուս տա, էտիկ շան խըսյընթ ունի, քու վրադա կը բան սարքե, կերթա գեղանը խայտառակե կը:

***

- Համո՛, արի մահախոսականը դու ըսե,- հարևան գյուղ թաղման էի քնացե:
- Ա՛յ մարթ, ի՞նչ խոսիմ, ննջեցյալին ես դյուզգունի չեմա ճանչե:
- Ծո՛, խո քեզնեն կոտորակ լուծել չենք ուզե: Ընսուն տարեկան մարթ է, քանիմատ խընդրլու բան ըսե, քիչըմ ուրախանանք, էրթանք քելեխին,- կողքից համոզում էր մեկը:

***

- Էդ ի՞նչ էր, մո՞ւկ էր,- հարցրի քրոջս տանը, երբ դեմիցս պստլո մի բան փախավ ու արագ կորավ աչքիցս:
- Վո՜ւյ քոռանամ, Տուզիկս է,- ժպտադեմ ըսավ քուրըս, որ շատ էր հիացած տնային իր շնիկով,- քեռեցեն ամնչել, պատին ծակն է մտել:

***

- Ըխչի՛, ես օր մեռնիմ,- դիմեց ընսուանամյա մահամերձ Զարեն հողոբկինս իր հարսին,- դսի դուռը կողպ պահե, ըշկընդ բոլորդ էրե, Ասսու սիրուն, Քոռ Պողոսենք շնեն շատ են, տունը սաղ թալնեն-տանին կը, հասկընցա՞ր:
- Հասկընցա,- ըսավ,- մարի՛, և բոլորս, լացի փոխարեն, քա՜հ-քա՜հ ծիծաղել սկսեցինք:

***

- Պետք չէ, Համո՛, վերու փարադ, աշե՛ կնեղենամ,- ըսավ բժիշկը:
- Չտամ, էտև ավելի շատ տի նեղենաս, բժիշկ ջան,- ըսի ես:

***

- Ծո Համո՛, ամոթ է, մեռելին մարթավարի թրաշըմ էրե, օր իսման չտանինք թաղելու:
- Գերեզմանատուն կերթա, կարքըվելու խո չի էրթա, ի՞նչն է ամոթ,- իրանց տրամաբանությամբ պատասխանեցի ես:

***

- Հորողբա՛ր, Նազել հողոբկինս օր մեռնի, զոնքչիս քեզի տի տամ,- հիվանդ էր, սիրտը շահել ուզեցի, համ էլ գիտեի, օր վրան վաղուց աչք ունի:
- Էլ ի՞նչ հին էրթերը կերնես,- դեմքին ժպիտ էրևաց. էտևա, հարցնելու պես,

ցածրաձայն ըսավ՝ օրը քա՝ մըտեդ չելլե՞:

***

- Համո՛, ել գործի աշենք, ցորեկ էղավ,- առավոտից էդ էր ասում:
- Մի՛խանքարե, այ կընիկ, բան կը գրեմ,- ըսի նեղված:
- Վառեցիր քու գրելովդ,- ավելի նեղված ըսավ ինքը,- իդի գրածներդ հըլը կարքա, մնացածներնա էտև գրե, չը-փախան:

***

- Համո՛, կընկաս քանիմ ամիս քովդ փերեմ, վարցըդա տամ, գլխարկ կարել սորվեցու,- ըսավ Սանոն:
- Փի՛ր, ինչըդ օր կուզես, էտև վայթե ետ տանիլ չըկրնաս. փարեցեդա ըլլիս, կընկանեդա,- շիտակը ըսի ես:

***

- Ինքս ինձ, իմ չափով միշտա հարքել եմ: Իմ շրջապատն էլ է իմ նկատմամբ հարգանքով էղել,- այդպես մտածում էի թախի այնի օրը, երբ պատկերացումներս մի վայրկյանում հիմնիվեր փոխվան:
- Բաբկեն,- ամուսնուն ձեն տվեց մեզնից ոչ պակաս կատակասեր տիկին Օֆիկը,- շո՛ւտ արի, կապիկնին էլի էկել են:

***

- Ինչի՞ բժիշկ չես կանչե, տաքությունս 39 աստիճան է,- ըսի կնոջս:
- Քեզի տաքութուն վե՞վ է տվե, փեշկը կասնի, տաքութունդ կիշնի:
- Փեշկը անցավ, էլի չի իշնի,- բողոքեցի ես:
- Է, հիմի թողա չիշնի, ավելի լավ, առաչը ձմեռ է,- ըսավ կինս:

***

- Ախպորը հեզնիմ, ուրտի՞ց եք,- Խոջաբեկի կամրջից ասնելուց էրկու տղա գոռացին մեզ:
Ախպորնա հեզնիմ, քուրոշնա,- հույսս մորքուրիս տղաներուն վրա, պատասխանը տվեցի ես:
Գնացինք գիշերելու մորքուրանցըս տունը: Դուռը տղան բացեց, տեսավ ինձ ու հետ գնաց. մայրը ներսից ձեն տվեց.
- Արի՛, գառ ջան, մորքուրիդ տղուն հետ հարցուբարև էրե:
- Մորքուր ջան,- հարկ համարեցի միջամտել ես,- կարմնջին վրա մենք արդեն հարցուբարև էրել ենք:

***

- Բալա՛ ջան, թախ դու բանակեն քաս, ես խելքս թռցընեմ, խելռիմ կը հաստատ,- Վիկտորին բանակ ճամփելիս, արցունքախառն հավատացնում էր մայրը:
- Է, ի՞նչ էնեմ հիմի, այ մարս. բանակեն տո՞ւն քամ, թե գնամ ուղիղ Սուրամ՝ խելռնոց,- մեկնելուց առաջ կատակեց Վիկտորը:

***

- Ծո Վասո՛, ինչ շուն մարթ ես,- քաղքցի Գրիշան կըսե դաբուռցի Վասոյին:
- Մեզի պես շներն օր չըլլեին, ձեզի պես իշանուն ջանըվըրնին շատունց կերել էին,- կըսե Վասոն:

***

- Մոլլա՛, աս ի՞նչ կենես, հարցընում է մեկը,- մոլլան խարտոցով մթան մեջ մարքին դռան զըռզան կը կռե, օր դարման գողնա:
- Սազ կը չալեմ,- պատասխան կուտա

մոլլան:
- Ի՞նչըղ կը սազ չալես օր, ձենը չի էլ-
լե,- նորեն զարմացած հարց կուտա
մարդը:
- Սապախտա՛ն, էսոր ձենը սապախ-
տան քուքա,- կըսե մոլլան:

***

- Կնիկդ յամա՛ն-յամա՛ն պըտըտիկը,-
էս ծանը լուրը բարեկամաբար ծանու-
ցում են խոջային:
- Ուրտե՞ղ կը պըտըտի,- հետաքրքր-
վում է խոջան:
- Սաղ թաղով մեկ, խոջա,- լինում է
պատասխանը:
- Թաղով մեկ ի՞նչըղ կը պըտըտի օր,
մեր տունը հըբը հեչ չի քա,- իր զար-
մանք-տարակուսանքն է կրկին հայտ-
նում խոջան:

***

- Ծո՛, իսի կնիկը աշես ղո՞ղթ կուլա, թե՞
մեզի հըրիֆի տեղ է թրե,- զուռնաչի
Բաբանը բոթեց ընկերոջը:
- Չալե ջանըմ, քու ինչ գործդ է. իրեն
մարթը, ինքը,- ըսավ ընկերը:
- Ինչխո՞ր գործս չէ, մենք կընիկ չու-
նինք, ինչ է, էս դըվընն մե օրմա մեր դու-
ռը կը չոքի, ախր:

***

- Ծո՛, այսի մեր լակոտները խոճկորի
չափա խելք չունին, չիտեմ ի՞նչ էնեմ,-
բողոքեց Արմինը իր բախտից, երբ հա-
բազատ տղաները համագյուղացիներ-
ից մեկի քելեխին էլի հարբեցին:
- Ինչի՞ ես նեղեցե, Արմին, ի՞նչ են էրե,-
հետաքրքրվեցին մարդիկ:
- Ծո՛, ի՞նչըղ չնեղենամ. մեր խոզն օր
ցըկնի կը, ձաքերը կելլեն մոր պըտ-
կընուն կը վազեն: Էս բեդովլըթ շան
լակոտները մորերեն չեղած բութիլքա-
նուն կը վազեն:

***

- Վարդ, էս ի՞նչըղ ես զպնել, իսկական
անոթի տարվա վարժապետ ես դառ-
ցել, ծո՛,- ըսավ Մորիսը:
- Հա՜, Մորիս ջան,- ըսավ Վարդը,- ես
օր չըզպնեի, դու ինչը՞ղ տի չաղանա-
յիր, խոզ դառնայիր,- պատասխանը
տվեց Վարդը:

***

- Ես սաղ կյանքըս մարթես բան չհաս-
կըցա,- բողոքեց տիկին Սոֆոն,- քա՜,
իսկական պոլի չուլ կըլմանի:
- Ըխչի, օր էտքան դժգոհ ես, հիմի կու-
զե՞ս օր մարթդ մեռնի,- ըսավ Մայրոն:
- Է, իրան իշուն սատկիլը վե՞վ կու-
զե,- ամուսնուն պաշտպանեց տիկին
Սոֆոն:

***

- Մաթիկ հոփար,- փոքրիկ Արմոն Մեծ
Արագյալ գյուղի խանութում դիմեց վա-
ճառողին,- 900 գրամ շաքար տուր:
- Ծո՛, լակոտ, 900 գրամը վերն է, կիլոմ
ըսե, ըշտը:
- Ըշտը քու տված կիլոհիտ չափով կը-
սեմ, Մաթիկ հոփար, ժպիտով ըսավ
Արմոն:

***

- Մխիթա՛ր, էս ի՞նչ բան է,- հարցրի
եղբորս տղային,- ես բարձր կը խոսիմ,
հարդ չի իմանա, մարդ կամաց կխոսի՝
կիմանա:
- Էնորնա չի իմանա, հոփար ջան, ըշ-
տը վախենալուն «հա» կըսե:

***

- Գրազի պայմանը էս է,- ըսավ Բաբա-
նը մշակ Օնեսին,- ի՞նչ իրով խափեին

(ձեռքը տային) էդ իրը մնար պարտ-
վողին:
Ջինըկը (գրազը) քաշեցին, մրցանա-
կը թանկանոց էր, երկար ժամանակ
պարտվող չկար:
- Օնես ջան, յատա՛ստ,- Արզունի թաղ-
մանը, դագաղի բռնակը զիջելով Օնե-
սին, Բաքանը գոռաց,- դիա մեռելնա
քեզի:

***

- Հասնենք և անցնենք ԱՄՆ-ից,- այս
կոչով ավարտեց շըրջկենտրոնից
եկած և ուղիղ էրկու ժամ ճոռոմաբա-
նող քարոզիչը իր անլի ելույթը:
- Ամերիկա օր հասնինք, ես ու դու արի
իշնինք, էլ առաջ չանցնինք,- կողքինի
ականջին շըշընջաց Սեթո քեռին:

***

- Կարելի՞ է ձեր էս անարատ մեղրին
ինչ-որ բան ավելացնել,- մեղրը գնելուց
հետո, հարցընում է մի երիտասարդ իր
մեղրը գովող Սեթո քեռուն:
- Անհոգ կացեք, ամեն ինչ արված է,-
ասում է Սեթո քեռին:

***

- «Գործարանը՝ բանվորին, հողը՝
գյուղացուն» լոզունգին ես չեմ հավա-
տում,- անհատի պաշտամունքի տա-
րիներին միամտաբար հայտարարում
է քեռի Սեթոն:
- Չես հավատա, հա՛,- սպառնում է պե-
տական մի պաշտոնյա,- դե մե քիչըմ
սպասե, էման աքսոր քշել տանք քեզի:
- Ա՛յ, այդոր կհավատամ,- վստահ պա-
տասխանում է Սեթո քեռին:

***

- Կներես, նորից կտրեցի,- արդեն վե-
ցերորդ թղթի կտորն էր վարսավիրը
կպցնում Սիմոն քեռու դեմքին, արնա-
հոսությունը դադարեցնելու համար:
- Լավ կըլլի, ուստա, արհեստդ փոխես,
դու լավ շպալ (պաստառ) զայնող կըլ-
լիս,- խորհուրդ տվեց Սիմոն քեռին:

***

- Փառք Աստծու, սաղ ու սալամաթ
եմ,- պատերազմի մասնակից Սեթոն
նամակ գրում, հանգստացնում է տա-
նեցիներին:
- Ե՞փ տի մեմա քեզի տեսնինք, Սեթո
ջան,- գրում են ծնողները:
- Երկրորդ ամիսն է նահանջենք կը:
Իսման օր էրթա, ըշտը մի էրկու շա-
բաթից հույս ունիմ, օր տանը ըլլիմ:
Տեսնինք, համփերենք,- պատասխան
նամակով մխիթարում ու հույս է տալիս
Սեթոն:

***

- Ափա՛ր, կըրնաս մե հատըմ բաց թող-
նե,- ըսավ բժիշկ Արչիլը,- Ափարի աղի-
ները գալարվում էին, երրորդ օրը փորը
կապվել էր:
- Ծո՛, չըկա, Արչիլ ջան, չըկա՛. օր ըլլիր՝
քեզնեն վե՞վ կը խնայեր,- ցավից գա-
լարվելով էլ կատակեց Ափարը:

***

- Ափար ջան, դունոր մեռար, քընա-
ցի՜ր, հբը իդի բուխար փափաղդ վե՞վ
դի թընե, իդի խռոմ սափկնիդ վե՞վ դի
հաքնի...լացն ու կականը թընե կը Ջի-
լոն:
- Քա՛, հըլը սուս, հարսաբլա,- հար-
ցընում է տեգերկինը,- թե ես գիտեմ՝
Ափարը նը բուխար փափաղ ունիր, նը
էլ խռոմ սափոկ:
- Ա՛խ, գիտե՜մ, չունիր, չունիր, հըմը
առնելու միտք շատ ունիր,- իրեն չի

կորցնում հարսաբլան:

***

Զիլո մորքուր, ի՞նչ շորերով տի թաղենք մեր Ափարին:

- Ախ էնիկ ֆուտբոլ ըշտը շատ կը սիրեր. տրուսիկ-մայկով թաղենք:

***

- Ավետիք պապ, հազար տարի էս թաժա տունն ու էրթիքը թող ձեզի ծառայեն,- հողը կտուրը նետող հարևանները մաղթեցին խորովածի սեղանի շուրջ:

- Սաղ ըլլիք, տղաք ջան,- իր բաժակով օրհնանքի խոսք ըսավ պապը,- իշխոր դուք իմ էրթիքըս հողեցիք, էդմանա Աստված ձեզի հողե:

***

- Ըխչի՛, ի՞նչ էղավ,- տան մեջ բարձր ճիչ լսվեց,- հարցըրին տանեցիները հարսին:

- Մկեն վախեցա,- ըսավ գույնը քցած հարսը:

- Ա՛յ, հա՜յ,- քմծիծաղեց սկեսրայրը,- սաղ տունը քեզնեն կը վախենա, դունա՝ մկե՞ն: Էս ո՞ւր ենք հասել՝ ձեռքը թափով ծնկին զարկեց մարդը:

***

- Մարա՜լ է մարա՜լ,- Վարդավառին տեսած աղջկա համար ըսավ Խաչոն,- Օնես, ըշկըդ վրան պահե, ձեռքե բաց չթողնենք:

- Էլ ի՞նչ պրծում,- ոգևորվեց Օնեսը,- գիշերը զօր կենեմ, օր առիթ գտնիմ, հետը խոսիմ:

- Ծո՛, ես քեզի չըսի՝ ըշկըդ վրան պահե...

- Ըշկըս վրան է, արխային կաց, էսա-էսա կխոսիմ,- հանգստացրեց Օնեսը:

- Ծո՛, դըթում, ի՞նչ դի խոսիս, իդիկ մարն է, աղջկան տարել են:

***

- Ի՜նչ լավ ես բարձել, քանի՞ կուբամետր է,- հարցնում է Աշոցքից գյումրեցի Կարոյի մեքենայի խցիկ բարձրացած ուղևորը, որին Կարոն այդպես էլ չի պատասխանում:

Ուղևորը մեկ ռուբլի է տալիս և Բոգդանովկայում իջնում: Կարոն, խցիկից թեքված, փողը վերադարձնում է և բղավում՝ ուբ:

- Ա՛յ տղա, ուբ ռուբլով ես Ռոստով կհասնեմ,- ասում է ուղևորը:

- Չէ՛, փարա չմուզի, ուբ կուբամետրիմ բարձի,- ասում է Կարոն:

***

- Չմոռանա՛ս, առնելիք փարա ունինք՝ Արութը՝ 1200 ռուբլի, Օնեսը՝ 500 ռուբլի, Գինոսը, մարթը էրկու օր առաչ պարտքը տվեց,- մեկ-մեկ հիշում ու մոռացկոտ կնոջ հիշողությունն էր թարմացնում մահամերձ ամուսինը, ում ժամերն այլևս հաշված էին:

- Առնելիք փարան վե՞վ կմոռանա,- բարձրաձայն մտածեց կինը:

- Հա՛, տալիքա շատ ունինք. Ալեքին, Մկոյին, Չիլարուբենց Վարոյինա մենք ենք պարտք, չէ՞, ցուցակը կա...

- Մեղա՜, մեղա՜, քա՛ էս մարթը հոգուն հետ է, իրան-իրան զառանցեկը,- թաշկինակը չոր ըշկերուն տարավ կինը:

***

- Ծո՛, ինչի՞ միշտ Ժորային կուշտդ կառնես, մենքա մարթ չե՞նք,- վարորդ Ռուբենից դժգոհեցին ընկերները:

- Ժորային կարոտը խո չեմ, տղա՛ք,- պարզաբանեց Ռուբենը,- էնոր գլոխը, ըշտը, մեծ է, ինսպեկտորները չեն կայ-

նեսնե:

***

- Աստված այդի մե հատիկդ ամուր պահե, օրեօր վեր քա, չինըրի ծառ դառնա, քույրի՛կ ջան,- օրհնեց աղքատ մի մարդ, հույս ունենալով, որ հաց թխող Ֆլորը հացըմ կուտա:
Կոլլո Արութիկը, որ Ֆլորի ամուսինն էր, ոչ թե միանուճարը, տեղեն թիքցավ ու քըֆըրտել սկսեց, կարծելով, թե հարևաններն են սորվեցուցե, նես ուղարկե, բայց տիկին Ֆլորը, բարի ժպիտը դեմքին ու աչքերի մեջ, հասկացավ, որ աղքատ ու սոված մարդ է, մի քանի հաց փատտեց, թրեց ղոլթուղը՝ ականջին մեկուսի շշնջալով.
- Է՜, ախպեր ջան, էտոր չինըրի բոյ քաշելը բըյլի կենե մեկալ լուս աշխար քալուն:

***

- Մանան քուրիկ, բանըմ ըսեմ, չնեղենաս,- ըսավ քյոսա (ամուլ) Վալոդը՝ աչքը հավերին,- մեծ կընիկ ես, տասը հավին ինչի՞ տասը խորոզ կպայես, մեկը հերիք չէ՞:
- Վալոդ ջան, դիա այդի իննը հատը քեզի պես են, ըշտը, մեկն է հավերին պիտանի խորոզ,- ըսավ Մանանը:

***

Շրջկոմի քարտուղարը նեղսրտեց.
- Տո չոբա՛ն, աղայի պես ես կայնե, ըսես դու ըլլիս քարտուղարը:
- Ծառան ի՞նչըղ կը կայնի օր, ցուց տու, կայնիմ,- ըսավ չոբանը:
- Քարտուղարը լռեց, ըսելու բան չունիր: Չոբանը ավելացրեց.
- Դու աղայի պես կուտես, ես չեմ նախանձի, իմ աղայի պես կայնելուս դու ինչի՞ կը նախանձիս, մարթ Աստծո:

***

- Տեսա՞ք տղա՛ք, անտեր խոզը մտել խաղողը իստակ կերել է, խայտառակ էղանք,- ըսավ տանը աշխատողնուն համար խաղող գնած Հանումը:
- Ծո՛, ի՞նչ խոզ, թե խոզ է, չեչերը ինչի՞ չի կերե,- ըսավ վարպետը:
Հանումը ծիծաղեց (գիտեր, օր իրանց Հայկազին էրածն է).
- Էտիկ քեռանցըս խոզն է, ուստա, չեչերը շատ անքամ չիա ուտե:

***

- Օսեփ պապ, նամակը թուրքերեն է, գյուղում ոչ մեկը չըկըրցավ կարթա, դու ի՞նչըղ հայերեն կը կարթաս:
- Օղուլ, ինչի՞ գլխանց չըսիք, օր թուրքերեն կարթայի,- նեղեցավ պապը:

***

- Օսեփ պապ, խաբա՞ր ես, ամերիկացիք լուսին են թռե:
- Ե՞փ, ձաք ջան,- զարմացավ պապը:
- Էրեկ իրիկուն:
- Ծո՛, եսա կըսեմ՝ ինչի՞ իրիկունը գլխուս հող կը թափիր,- ավելի զարմացավ պապը:

***

- Ա՛յ մարթ, գոնե վերչինը էրեխուն տուր, ըշքը մեչը մնաց,- գայրացավ Երմոնը տանձ ուտող ամուսնու վրա:
- Կիսենք, հա՞, բալես, կեսը քեզի, կեսնա պապային,- ըսավ Մկոն:

❀ ❀ ❀

- Աշնան ամիս էր: Գանձացի Լուսոն, երեք տղաների հետ, գնաց հարևան գյուղերը՝ ձմռան պաշար ճարելու: Անցել էին մի քանի գյուղ, հասան Կարտիկամ: Ջրափին՝ բոստանների մոտ տեսան մի մարդու, բարևեցին և սկսեցին խոսակցել հետը:

- Քեռի, լավ բոստան ունիս, հարկ է, որ մեզ բարիքներով քիչըմ օքնես,- զրույցը սկսեց տղաներից մեկը:

- Հա՛, տղաք ջան, օքնեմ ամեն ինչով, թե խոսք կուտաք, օր դուքա ինձի օքնեք:

- Ըսե, քեռի, դու ինչի՞ կարիք ունիս:

- Եսա, տղաք ջան, թըքմ (մենակ) մարթ եմ, լավ հալ ու վախտ ունիմ, կնիկ չունիմ: Հիմի իմա խընթիրքըս էնե, օր ձեր գեղը լավ կընկանըմ տեղ էնեք, քամ փերեմ, ձեզա շատ բանով կօքնեմ,- ըսավ մարթը:

Եղբայրները իրար երես նայեցին, ժպտացին:

- Քեռի, թե գիտնանք՝ ըսածիդ տեր մարթ ես, գեղն ինչ պիտի էնես, ահան կընիկ, հավնի՞ս կը,- ըսավ Թեանը:

Բոստընջին նախօրոք զննել էր կնոջը, կամաց-կամաց, թուքը կուլ տալով, ժպտաց.

- Հավնիմ կը, տղաք ջան, հա՛,- հոժար ու անկեղծ ըսավ մարդը:

Կնոջն էլ հարցրին, մի քիչ շուռ ու մուռ գալով, մի քիչ «ամա՛ն, դե եսի՞մ» ըսելով, տվեց իր համաձայնությունը: Բոստանջու ուրախությունը չափ ու սահման չուներ. թողեց աշխատանքն ու հյուրերին տարավ տուն:

Ցույց տվավ տունուտեղը, ողջ ունեցվածքը, գառ մորթեց, գոհացրեց բոլորին, իր հավանած կնոջը թոնիրը վառել տվեց, կերակուրներ եփեցին, ընստեցին սեղան: Էկող-գնացող հարևանուն էլ աչքալույս տվեց, որ ինքը արդեն ամուսնացել է: Տղաներն էլ, իրար նայելով ու մեկուսի աչքով անելով, անակնկալ շրջադարձի առջև կանգնած մոլոր կնոջը համոզում ու հույս էին տալիս.

- Մորքուր, լավ մարթ է, շատ լավ տունուտեղ ունի, բիրտըմ (հանկարծ) միտքդ չփոխես, ամոթ է:

Տան տերն էլ, եռանդի գալով, կենացներ էր առաջարկում ու աշխուժացնում հյուրերին:

- Դե քեռի, դունա սաղ ըլլիս, ջուխտ մնաք, մեզի ամոթով չենես, մենքա այսի աղուհացը մտիան չենենք, ձեր թանկ կենացը: Ինչի՞ կըսեն թե՝ Աստված օր տա, չի հարցնե՝ ում տղան ես: Ըսավ Պետրեն ու շարունակեց՝ տղա՛ք, խմեցեք, քեռի, դունա ել գործի աշե, մենք կուշանանք: Մեր այսի ունեցածն ու քու տվածը քու սալով պիտի տանիս Գանձա: Էս կընկաննա մենք խո հոս չենք թողնե, դու քուքաս, մոտիկներուն միրոցը տկեն կանցնիս, ինքնա ունեցվածք, շոր ու կողինք, կարասի, ամա՛ն-չամա՛ն կունենա, քու ձեռքով քու սալիդ կբառնաս, իրար հետ էլ, լուսնյակ գիշերը պաքտըվելով, Ավջալեցեն քուքաք Կարտիկամ:

- Տղա՛ք, լավ չէր ըլլի, օր իմ հախլուս (բաժինը) մնար հոս, մեմա չտանջեինք:

- Չէ՛ քեռի, ջահել կընիկ, ինչ տանջանք, մեզի էտքան միանիտ մի գիտնա, իրան բարեկամնուն սրտերը շահել է պետք: Քու կընիկդ, քու սալըդ, դո՛ւ, էլ չուշանանք: Տանտերը ուրախությունից հարբեց, աղի պես հալվեց ու էրեխու պես ենթարկվեց հյուրերին:

- Քեռի՛, շատ բախտավոր մարթ ես, կեցած տեղդ էսման կընկա տեր էղար, մեզնեն ի՞նչըդ տի շնորհալալ ըլլիս:

- Հա՛, տղաք ջան, իմ ունեցվածքս, սալս-մալս ձեզի հալալ ըլլի, ինչ օր կուզեք, բառցեք, միք քաշվի, ես ձեզնեն շատ-շատ գոհ եմ:

Սայլը լծեցին, իրենց ուզածին չափ բերք ու բարիք բարձեցին, ճամփի հաց ու ջուր առան. Գանձա՜, ուր ես, օր էկանք: Ի՜նչ ուրախություն էր, որ բեռով, պաշարով տուն էին դառնում: Տանտերն ավելի էր ուրախ, օր հաջողությունը իր ոտքով իր դուռն էր էկել: Կնոջ ուրախությունն էլ էր նկատելի, թեպետ համեստության ու զսպվածության շղարշ կար դեմքին, սակայն տուն ու տեղով, ունեցվածքով մարթ էր գտել, և դա նրան իրապես չէր կարող չուրախացնել: Այդպես էլ, անո՜ւշ խոսակցելով, իրիկվա կողմ հասան Գանձա: Սայլը Պետրեի տանը բեռնաթափեցին, և տան տիկնոջը պատվիրեցին հաց ու ջուր պատրաստել: Հյուրը թե.

- Չէ Պետրոս ջան, իմ խուրջինը գիտեք՝ օրհաց ու ջուր կա, ելեք էրթանք, իմ հախլուս առնեմ, էրթամ, մի՛ք ուշացնե:

Որ գնացին կնոջ տունը, մեկը արդեն մթան մեջ աթար էր դալաղ («էրեբունի» շարվածքով շարել) դնում: Թևանը թե.

- Այդիկ է էս կընկա մոտիկ մարթը, մոտեցի, բարև տու:

- Դոնաղ ենք էկե,- բարևեց ու ըսավ անծանոթը,- կընթունե՞ք:

- Դոնաղն Աստծունն է, ինչի չէ, համեցեք, բարով էկաք, քալեք նես էրթանք,- ըսավ էդ մարդը:

Նես մտան, նստեցին, Թևանը բոթեց.

- Քեռի՛, ըսե, վախտ (ժամանակ) մի կորցնե: Մի էրկու անգամ, օր մարթուն ստիպելով մղեցին գործնական քայլի, հյուրը թե՝

- Բարեկամ, չես ըսե՝ ինչի՞ ես էկե:

- Է՜, ի՞նչ ըսեմ, բարով, հազար բարի:

- Չէ, իմ քալս այսի օղլուշաղին համար է. մեր տունը էղան, խոսք բացվավ օքնելու համար, եսա ըսի՝ տղաք ջան դուքա ինձի պիտի օքնեք, կընիկս մեռած է, ձեր գեղը կընկանըմ տեղ էրեք: Տղաքնա, ըշտը, ցուց տվին էս օղլուշաղին: Եսա հավնա, ինքնա իմ տունուտեղս, ունեցվածքըս տեսավ, հավնավ: Իրար լիզու հասկըցանք: Ըսին օր, դունա էսոր մոտիկ մարթն ես, կուզիմ, ըշտը, միջամտիք, առնեմ էրթամ: Էս բանի, գործի սրա (ժամանակ), մեննըկ եմ, տունըս կընիկմարթ չկա:

Անհարմար ու անսովոր լռություն տիրեց: Տանտերը փորձում ու չէր կարողանում

լսածները հասկանալ, չէր կարողանում ականջներին հավատալ, դեմքին հիմար ժպիտ էր գծագրվել: Տղաներն էլ մյուս կողմից մեկուսի բոթում ու բզում էին հյուրին.

- Քեռի՛, մի ուշացնե, ըսե, ճամփա տի էրթաս:

Քեռին, ուշացումով, ավելի հետևողական ու համառ կրկնեց.

- Ա՛յ մարթ, ձեն հանե, գլոխդ ինչի՞ կախեցիր, ազաբաղջիկ խո չես նշանե, մի՛ ծանրացնե, օրփեվարուն գործը էսման է: Ախըր էս հարսին խելքը կտրեց, օր համաձայնավ, չէ:

Տանտերը, անօգնական ու շվար, նայեց իր տղաներին, աչքի տակով նաև զննում էր հյուրին: Վերջապես խոսեց ասելիքը չիմացող մարդու անվճռականությամբ.

- Ծո, ա՛յ մարթ, լավ չէր ըլլի գեղեդ առնեիր, մեմա իսոնց խելքին չընկնեիր, հասնեիր իստեղ:

Գյուղական սովորույթով, մթնող օրվա հետ, տուն են մտնում Գասպարի եղբայրները՝ Մելքոնը, Երեմը, Պաղտոն, Տեփանը.

- Բարիրիկո՛ւն, Գասո, էս ի՞նչ խաբար է, ղոնաղ ունի՞ս:

- Հեչ խեր խաբար,- պարզաբանում է Գասոն,- մեր Լուսոյին ուզող է էկե, դիա, նստեցեք լսե՛ք:

- Ի՞նչըղ թե ուզող է էկե, ի՞նչ ուզող, ծո՛, խո քեֆով չե՞ս...

- Հըբը ինչ եմ, դիա այդոնց հարցուցեք,- նեղսրտած ակնարկում է հարազատ տղաներին:

Եղբայրները զարմացած նայում են տղաներին, նայում են իրար, բան չեն հասկանում: Դարձյալ լռություն է տիրում: Տղաներն էլ նստած տեղերը անհանգիստ են, հասկանում են, որ իրենց բռնած «գործը» իրենց ուզածի պես չի գնում, ձախողվում է, ուստի, նոթոտած, նորից են դիմում քեռուն, կողքից հրահանգներ տալիս.

- Ա՛յ քեռի, դունա ախր տեսակըմ մարթ ես, վրա տո՛ւր, զոռե, էտիկ ծանրաշունչ մարթ է, սխմե, օր քնդվի, գեղեդուս ես, դժվարանա կը:

Անտեղյակները՝ տարակուսած, իրազեկները՝ շրթունքները մի կերպ կծելով, հազիվհազ զսպվում, լսում են իրենց հյուրին, որն էլ դիմացինի համառությունը հաղթահարելու ակնհայտ ճիգեր է անում.

- Ա՛յ մարթ, էլ ի՛նչ կմտածես՝ մենք օր համաձայն ենք. ես ուզենայի գեղա չէի փերե: Ի՞նչ ես դեմ առե, տնաշեն, կըսես թե չըլլելու բան է: Տուր խոսքդ, պրծավ քնաց: Ախր մենք կռել-կապել ենք, կերել-խմել ենք: Էն օրհնածը ո՞ւր քընաց, կանչե ու տես, օր համաձայն է, քու դեմ առնելդ վերն է, չեմ հասկընա: Ահա՛ն էս հարսին բեյը. ծոցից հանեց էրկու շերիդ ոսկի ու դրեց խոնչին (փայտե ցածրոտ սեղան), շնավո՛ր ըլի:

Էստեղ, ոնց ասում են՝ «պարը բոլորավ». տղաներից մեկն էր մնացե նստած, մյուսները թախտից ընկել, թավալվում էին.

- Սաղ ըլլիս քեռի ջան, հաստատ օր խոսքիդ տերն ես, վրա տու:

Գասպարը մոլորված մեկ հյուրին էր նայում, մեկ եղբայրներին, հայացքով

նրանց էր օգնության կանչում.

- Ծո՛, դուք ինչի՞ ձեն չեք հանե, էս մարթուն ի՞նչ ըսենք...

Է, ի՞նչ ձեն հանենք. լավ միշտըրի (առնող) է, օր սրտով կպել է, տուր թող տանի, ինչ տի էնես օր չտաս,- ըսին եղբայրները:

- Ծո հեչ, տղաքս օր տվել են, կընիկս հավնել է, դուքա համաձայն եք, եսա տվել ու տվել եմ, տա՛ր, խերը տես, գեղեդուս բարեկամ:

Ահագնացող խնդուքի մեջ, բլբուլ դարձած հյուրը իրեն կորցրեց.

- Ամա՜ն մարի՛կ ջան, էս ո՞ւր եմ ընկե, սալըս փերեք, խայտառակ էղա,- մարդը ոտի կայնավ, նորեն նստավ տեղը, չիտեր՝ ի՞նչ էներ, էրեսներունա չէր կրնա աշե, ափերով դեմքը կը փակեր:

- Չէ, քեռի՛, դու քեզի մի կորցնե, մենք քու լավութունդ տեսել ենք, քեզի առանց կընիկ ետ չենք ճամփե,- բարեժպիտ ու հարգալից լրջացան տղաները:

- Ծո՛, չեմ ուզե, հոքեստնուդ մեռնիմ, թողեք ես էլլեմ, էրթամ, քանի չեմ խելռե:

Եղբայրներից մեկը կնոջ հարցով նախապատրաստական գործունեություն ծավալել էր արդեն, գործը տեղից ահագին շարժել էր առաջ:

Պահանջելով, խնդրելով, զոռով՝ հյուրը մի կերպ դուս էլավ, բայց եղբայրները արդեն որոշել էին իրենց անելիքը: Բերին Ղըրըկեզենց թոփալ Աղավնիկին, առանց կարքվողի կամքը հարցընելու, թրին սայլին:

- Քեռի՛, քու ղսմըթդ (բախտդ) դիա էսիկ է, ինքնա ազաբ աղջիկ, տար, խերը տես, էսորեն ավելը քեզ հարամ է:

Ստիպելով տարան մինչև Ավջալու գելը ճանապարհեցին: Մթության մեջ կողքից հեռացան: Քեռին բողոքում էր.

- Չեմ ուզե, ի սեր Աստծու, չեմ ուզե, ետ տարեք:

Է, խո քու խոսքդ չէ, մարթը գլխուն կնիկ վե՞վ քեզի կուտա:

Որոշ ժամանակ անց, սայլը շարժվեց:

- Հանաքչի Հովհաննեսը կողքի ակնարկներից արդեն լավ գիտեր,

որ աշխատակիցները առիթ են որոնում իրեն ծախսի տակ գցելու: Մարդը որոշեց խորամանկել, ուստի մի օր ըսավ.

- Վերջապես էսոր ինձի մանչ թոռ ծնվավ:

Չորս կողմից վրա տվին, փաթաթվող համբուրողներ էղան.

- Է՜, ըշկըդ լուս, Օվաննես: Պատրաստվե՛, հըմը քառսուն օրը թըմմավ, քուքանք:

Իրար ըշկով էրան, իմաց տվին քավոր Նըբի Նորիկին: Մե պոլկըմ (մեծ խումբ) էկան աչքալուս տալու: Օվաննեսը կարգին սեղան սարքեց, հատուկ խմեց քավորի կենացը, օր խնջույքը ղեկավարի: Առաջին մեկ-էրկու կենացը շախով-շուխով բարի

լուրի ու բարի հանդիպման կենացը խմեցին:

Կողքից հուշեցին, օր նորածնին մոռացաք, ա՛յ մարթ:

Քավորը կենացների, անգամ հուշելու համար շնորհակալ էղավ ու պահանջեց, օր սանիկին փերեն.

- Նորածին սանիկիս կենացը, ցա՜վը տանիմ, փերեք, գիրկըս թրեք, օր թասըս վայելեմ իր ներկայությամբ:

- Ըխչի Աննմա՛ն, փերեք սանիկին,- ձեն տվեց Օվաննեսը:

Կինը դժվարացավ, իբր՝ ամոթ է, բայց Օվաննեսը զայրացավ.

- Իր սանկին, ա՛յ անխիղճ, իրմենեն կը խնայես, փերեք գիրկը թըրեք, թող քավորս իշտըյով (ախորժակով) թասը խմե:

Էշի նորածին քուռակը, խնամքով փաթաթած, բերին դրին քավորի գիրկը: Երկար ու ձիգ ոռպեներ ծիծաղը չէր դադարում: Էտքան ժամանակ խեղճ քավորը ձեն-ծպտուն չհանեց, գրկել ու բաց չէր թողնում «սանիկին»: Վերջապես խնդրելով՝ Օվաննեսը լռություն պահանջեց.

- Աչքդ թող ջուր կտրած ճամփին մնա, քավոր ջան, մինչև սանիկդ լույս աշխար քա: Միա զարմանա, էսոր լուս աշխար քալը կտորըմ շուտ էղավ, հանե կարմիր տասնոցը, թիր դեշին, ճակատը պաք, օր թասդ զռոցով ծաղկեսնե, դունա անուշ վայելես: Էսիկ, ըշտը, քեզի «գեներալնի ռեպետիցիա»: Խմե՛, անուշ ըլլի:

❀ ❀ ❀

- Խաչո՛, կըսեիր կընիկդ հիվանդ է, ո՞ւր տարար,- հետաքրքրվեցին ընկերները:

- Տարա քաղաք, էլի, ստուքման տարա:

- Է՛, ի՞նչ հանեցին:

- Եսսի՜մ, մեկը ըսավ մաշվել է, սաղ տեղ չունի, մեկնա ըսավ՝ լեղին մեծցել է:

- Է, վե՞րջը:

- Վերչնա էդ ապենտիցիտ է, կուրաղիք է, ինչ է, հանեցին:

- Հըբը հիմի ի՞նչըղ կզգա:

- Է, ինչըղ տի ըզգա, կըսե, տարար, տունըս քանդեցիր: Մե բժիշկմա ըսավ՝ կուրաղիքը իզուր են հանե, տեղը դարտակ է մնացե, ըշտը, չըխկչըխկա կը:

- Հըբը հիմի ի՞նչ կըսեն;

- Հիմիա թոքերը խարապ հանեցին:

- Կըրնա՞ն բժշկե, չեն ըսե:

- Կըսեն՝ սաղ քանդվի, նորեն տի ռեմոնտ արվի, էնա զափչաստա չունեին: Ինքնա կըսե՝ մեմա կաշես սիրտս ըստուք կուտա:

- Է, ի՞նչ կը մտածես, հըբը:

- Ինչ մտածեմ: Կըսեն՝ արունը պակաս է, ճնշումը ավել է, սիրտը հանքշելով (հանգստանալով) կաշխատի: Քըսը, կեսը պռաք հանեցին:

- Խե՜ղճ կընիկ. Խաչո, մարընդ հընբը ի՞նչ կընսե:

- Մարսա կընսե՝ ա՜յ հողընս բժընշկնուն գլխնուն, էտոնց մի՛ հավատա, խո մաշինա չէ, օր զափչաստն ու բենզինը պակսեց: Էնոր լեղին չէ մեծցե, էնոր լիզուն է մեծցե, չեն հասկընցե: Թե հանող էին, երկար լիզուն թող քաշեին-հանեին, հոքեստանսա ազատվիր:

- Ծո Խաչո, հընբը հարևան-բարեկամ ի՞նչ կընսեն, չե՞ս հարցուցե:

- Հընբը չեմ հարցուցե. էնոնք սաղ նույն բանը կընսեն՝ Խաչո՛, մե մորընդ դիագնոզն օր ճիշտ է:

❀ ❀ ❀

- Գանձացի Ավենն ու Արթուրը երգեր էին հորինում, նաև լավ երգողներ էին: Իմացան, օր Թախչա գյուղում նոր եղանակով երգ է երգվել, Թաթոյին ուղարկեցին սորվելու: Թաթոն հասավ Թախչա: Հինգ ռուբլի ուզեցին նոր երգ-եղանակը սորվեցնելու համար:

- Իրեք մանեթ ունիմ, քեռի Արշո,- ի՞նչ էնենք,- հարցրեց Թաթոն:

- Է, ինչ պիտի էնես, մենքա իրեք մանեթի գերա (չափով) խրաթ կուտանք,- ընդհանուր հայտարարի եկան կողմերը:

Մի կերպ սովորեց, երգելով եկավ գյուղ: Գանձա մտնելիս, լընկլընկին (արագիլի) բնի տակը, շները հասան Թաթոյի վրա, շորերը բզիկ-բզիկ էրան: Հազիվ փրկված, հոքնած ու ուշացած մի կերպ էկավ տուն: Տընեցիք, դեմ վազեցին, օքնեցին, հանքընստացրին, հետո էլ հարցընրին.

- Թաթո՛, փերի՞ր...

- Հընբը ինչ էրի, փերի, ընշտը, հետս էր, հասցրի թախի լընկլընկին բնին տակը, էտ անտեր Օբլոենց շները վրաս թափան, կորցուցի: Շներեն օր ազատվա, ջրին էսթուն անցա, մեռա ժուռ քալեն, էտմանա էլ չընգտա:

- Վա՜յ ես քու,- ընսավ Ավենը,- տուքտուղդ (գանգատուփդ)... Ծո՛, մոլընրած, գլոխընդ հետդ չէր, ջրին էնթուն կորցուցիր, էկար ջրին էսթուն ժուռ քուքաս: Հմի էլ չերթաս, ման չպիտի քա՞ս:

- Էրթամ տի, թող քիչընմ թոռթոփ ընլիմ, խելքս գլոխս քա:

- Է, Բաթո՛, լավ է դու շներոց ընլեիր, քան թե ղևտընն (եղանակը) շներուն տայիր,- ափսոսանքով ընսավ Ավենը:

- Էղածն էղած է, Ավեն, հիմի աշե՝ ի՞նչ կընսեմ. դու շներուն լիզուն հասկնաս կը, էրթանք քիչընմ իրանց լիզվով խոսե, բընլքի...Հը՞, թե՞ չէ...

❀ ❀ ❀

Սանկտ Պետերբուրգից հայրենի գյուղ՝ Գանձա էր եկել բանասիրական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Կամսար Գրիգորյանը: Այցելեցինք հորեղբորս՝

Կամսարի մոտ ազգական Թաքուլ Ղազարյանին: Զրույցի և հյուրասիրության ժամանակ Կամսարն ասաց.

- Թաքո՛ւլ ջան, ըշկիս լավ չես էրևա, ինչի՞ ես խեղճըցե, քեզի էտման չի սազե, դու ուտող-խմող մարթ ես:

- Ծո՛, ինչ չըխեղճընամ, Կամսար ջան, Գոհարը Երևան քընաց, Սեդանա տանը գործե չի պրծնի, եսա այսման առանց կընիկ մնացի (Թաքուլը Գանձայում էրկու կին ունեցող միակ մարդն է), իսիկ վայել չէ ինձի պես մարթուն, ճիշտ ես ու ճիշտ, իսման բան կըլլի:

- Եսա գիտեմ հիվանդ ես,- ծիծաղեց Կամսարը,- ա՛յ անխիղճ, ես հեչ մե հատըմ օր ըսես կին չունիմ, դու էրկու կընիկ ունիս, էլի դժգոհ ես, այ քեզ անկուշտ մարդ:

- Է, դու կընկա գործեն ի՞նչ կը հասկընաս, Կամսար ջան, խելքդ թխտերուն-գըրքերուն ես տվե: Ըսեմ՝ չնեղենաս՝ դու, ըշտը, գիտության դոկտոր-պրոֆեսոր ես, եսա կընկա պրոֆեսոր եմ:

❀ ❀ ❀

Կտուց Ափարը մի օր անկողնուց չելավ, կանչեց մեծ հարսին.

- Բալա ջան, իսման բան կըլլի՞, փորս քընացել է, մեմ քայիք իստըկեիք:

Հարսը քիթը շուռ տվեց, քնաց, ուղարկեց միջնեկին:

- Վա՜յ, կըրակն ընկա,- ոտքի վրա հետ դառցավ, փոքրին ճամփեց:

Փոքրը, թեև լսեց, խղճահարվողի դեմք ընդունեց, բայց էլի մոտիկ չեկավ, քնաց սկեսուրին ըսավ: Սկեսուրն էլ, հացերը թոնրից չհանած, էկավ.

- Ի՜նչ կա, Ափար, տեղեդ ինչի՞ չես էլլե, հարսներուդ հերթով նազ կը ծախես:

- Նազն ի՞նչ է, ըխչի, տակրս մունտըռել եմ. հարսները տեսան, փախան, էսման ի՞նչըղ էլլեմ:

- Ե՛լ, ինչ կը սխմվիս, ել, իստըկեմ, բան չկա, մի խեղճընա: Վերմակը քաշեց, տեսավ՝ մաքո՜ւր-մաքո՜ւր է:

Մարթը տեղին մեջ ճմլկոտաց, շիտկավ ու գլուխը տարուբերեց...

- Ո՞ւր է բան, ա՛յ մարթ,- հարցրեց կինը,- հարսներուդ սիրտը պատռավ, շալովնին քթերուն են քաշե:

Ափարը, մտքերով տարված, քթի տակ ծիծաղեց.

- Ըխչի՛, ես ըշտը էտոնց փորձեցի, վերու այսի մայրըմին քիշմիշը, տար դու կեր, մե քեզի է հալալ,- հոգով-սրտով կամեցավ Ափարը:

❀ ❀ ❀

- Գանձացի Գալոն քնաց Բզավեթ, աներանցը՝ կնոջն ու էրեխեքին փերելու: Աներն էլ ուտող-խմող, շախով մարթ, իրիկունը լավ կերան, խմին, առավոտն էլ բարի լուսը շենքուշընորհքով բարին արին, էլավ Գալոս, ընկավ ճամփա: Աները կայնե-

ցուց, թե.

- Գալո ջան, մեր աղջըկան օժիտ չենք տվել, դիա այդի խոտի մեծ քթոցը շալկե ու քնե, էտիկա իրան օժիտ, ըշտը:

Նոր, մեծ ու լավ քթոց էր, մարթը խոսալով, խնդալով կամեցավ: Գալոն էրկու փոքրերին թրեց մեչը, շալակեց, էրկուսինա ձեռքերից մարթ ու կին բռնեցին, դեմի, Գանձա՛, ո՞ւր ես, գալի՞ս ենք: Մի քանի արտաբոյ օր էկան, քայլող էրեխեքը հոքնան: Համոզելով՝ մե քիչըմ տեղա տարան, բայց վերջը՝ էրկուսին էլ թրեց քթոցին մեչ: Մի քանի կիլոմետր ճամփա օր կտրեցին, կինը հետ ընկավ:

- Ըխչի՛, արի՛, ինչի՞ ետ կըյնիս,- ճվաց Գալոն:

- Է, ինչ էնեմ, Գալո, բերզել եմ, շոք է:

- Քյոփօղլի, նախըրըմ էրեխեքն ու քթոցը ես կը տանիմ, դու ես բերզել,- նեղսրտեց Գալոն,- կաշեմ օր քուկա միտքդ ծուռ է. արի՛, արի ե՛լ ընկի քթոցը:

Կնոջն էլ թրեց քթոցը, շարունակեց ճանապարհը: Արտըվորները, օր տեսա աժդահա էս մարթուն, հարցըրին.

- Հոփար, ի՞նչ կը տանիս ծախելու:

- Չիտեմ՝ ինչ կը տանիմ, բայց օր ձրիա ուզեք, կուտամ ձեզի,- կատակեց Գալոն:

- Հա՛, չիմանանք, թե՝ ի՞նչ տի առնենք,- համառեց մեկը:

- Ծախելու բան չէ, տղա՛ք ջան, մեր թուխսն ու ձաքերն են, Բզավեթու մեր գեղ կը տանիմ,- կես-կատակ, կես-լուրջ ըսավ Գալոն:

❀ ❀ ❀

- Կերուխումի համար հնձվորներին, որպես պարգևատրում, կոլտնտեսությունը ոչխար էր տվե: Աբրահամին, որպես տարեց, հարգված և, ամենակարևորը, կարճահասակ մարդու, հեռատեսորեն կարգեցին խոհարար: Աբրահամը միսը խնամքով մանրեց, լցրեց պղինձը, ջուր ու համեմունքներ ավելացրեց, թրեց կըրակին: Եփ քալուն հետ էլ անուշ հոտը տարածվեց՝ հիշեցնելով Աբրահամին, օր լավ ուտել կուզե: Մի էրկու-իրեք կտոր ուտելը մեծ մեղք չէ, մտածեց Աբրահամը ու հետն էլ հասկացավ, օր վայ թե էտևա չըկրնա կայնի: Մաքուր օդ, սոված մարդ. քանի կերավ, ախորժակը բացվավ:

- Իսիկա ուտեմ, էլ չուտեմ, իսիկա ուտեմ, էլ չուտեմ ըսելով, տեսավ օր պղնձի մեջ ընդամենը մի քանի կտոր մնաց...

Ինչ օր պիտի ըլլի, թող ըլլի, վերջին կտորն էլ կերավ, մնաց մեննըկ մսաջուրը: Հնձվորներն էկան սոված վրա թափան ամանին, տեսսան, ջուրն է մնացե:

- Պիջը, ո՞ւր է միսը, փի՛ր, մեռանք անոթի:

- Տղաք, հոքուս ինչ մեղք էնեմ, կերել եմ սաղ:

- Ծո՛, մենք քեզի պզտիկ դեի թողինք, օր վրեցեն քիչ ուտես, հիմի դու իստա՞կ կերար:

- Կերել եմ, տուն էրթանք, օչխարըմ տամ, ինչ էնեմ, էղավ:

Թե կերել ես, հալալ ըլլի, թե մեզնեն պայես կը, մենք քեզի սաղ չենք թողնե,- ի՞նչըղ գիտնանք հիմի,- ըսին հնձվորները:

- Էքվան անցնի, մեկալ օրը էլի օչխարըմ փերեք, ես էփեմ, դուքա կուշտըս նստեցեք: Ինչըղ օր էղել է՝ էլի ըսածներըս ըսեմ, ուտեմ, սհաթըմ էտև տեսնիք, օր օչխարը չըկա:

Համաձայնան պայմանին: Երրորդ օրը, ըշտը, Աբրահամը օչխարը կերավ, թասմա ջուր վրան խմեց, բերանը սրփեց, քաշվավ քընըր:

- Ահան եղելությունը,- ըսավ մարդը:

- Ծո՛, իմանայինք իսման է, կշտեն գոնե մենքա քիչըմ կուտեինք,- փոր-փոշման ըսին սոված մնացած տղերքը:

❖ ❖ ❖

- Պատահմամբ, թե Աստծո կամեցողությամբ, անտառից գալուց Համբարի Լևոնը դեմ-դիմաց էլավ Աբգարենց Շավարշին.

- Ծո Շավո՛, ձերոնցը գինի կա, քալե մեկ-մեկ հատ խմենք:

- Ինձի չի կարելի, Լևոն ջան, չէ, չեմ խմե,- ըսավ Շավոն:

- Իյա՛, ծո՛, կնիկըդ է ըսե՝ չի կարելի: Ծո՛, կընկադ ըսածը իմացի, օր չնեղենա, էնելուդ հակառակն էրե, հասկըցար, դե քալե:

Մի կերպ համոզելով՝ տարավ գինեաճառի մոտ, մի շիշ գինի առավ, լցրեց բաժակները:

- Վերու, գիտես ի՞նչ թանկագին կենաց տի խմենք,- ըսավ Լևոնը,- այսիկ քեզի փերող, մեծցնող անուշ մայրիկիդ կենացը: Խմե՛:

Խմեցին: Մյուս բաժակը լցրեց ու բարձրացրեց վեր.

- Այսիկա մեզի գաղթի ճամփին թալնող անամոթ թուրքերին շանսատակ էնող ավճի (ճարպիկ, համարձակ) հորդ կենացը, ըսե՝ կըրնը՞ս չխմե:

Խմեցին: Հիմի, Շավո ջան, քու հորդ ու մորդ կենացը խմեցինք, հըբը իմ լոթի-փոթի Համբարիս ու ինձի կաթ տվող մայրիկիս կենացը չխմե՞նք: Խմեցին անպայման:

Շավարշը ձեռքը տարավ գրպանը՝ գինի փերեք: Երեք-չորս շիշ խմել էին արդեն: Հաջորդ շշի վրա, Շավոն երգեց թախծոտ մ երգ:

- Կըսեիր՝ չեմ խմե, ինձի չի կարելի. էրկու շշով բլբուլ դառցար: Հերթական բաժակը դարտըկելուց հետո Լևոնը շարունակեց կիսատ թողած միտքը.

- Շատ չէ, էրկու օրըմ հետըս իսան-ինան քիչըմ պըտտիս, խմես, կոմպոզիտոր կը դառնաս կեցած տեղդ, օղուլ:

Տեսնելով, օր Շավարշը իրանը գտավ, Լևոնը փասա-փուսեն ուսուլով քաշեց, հեռացավ: Վրա երրորդ օրը Շավարշը նոր հազիվ խելքը գլուխը փերեց, քընաց աշխատանքի ու լսեց.

- Ո՞ւր էիր, ա՛յ մարթ, իրեք օր է տեղեկություն չունինք քու մասին,- նեղեցած ըսավ ֆերմայի վարիչը:

- Մեկ-մեկ հատ չխմե՞նք, Շավո,- օրեր անց ղեմն էլավ Լևոնը:

- Մեռելնուն կենացը էլ չեմ խմե,- ըսավ,- իրեք օրե քովերն էի:

Դիվինը Արտաշին, որպես լավ ձիապանի, պատվիրեց.

- Մեր ձին հասակով է, Արտաշ, տար Գյումրի, ծախե, լավ, ջահել թայըմ (մեկ տարեկան ձի) առ, արի:

Արտաշը ձին տարավ Գյումրի, մտավ շուկա, քաշեց մե անկյունըմ, կայնավ: Շուկայի գյումրեցի ճարպիկ տղերքը, տեսան գյուղացի մարդ, հավաքվան գլխուն.

- Քեռի՛, ձիդ ինչի՞ կը ծախես օր, ի՞նչ տի առնես...

- Թայըմ կուզեմ առնել տղաք ջան,- ըսավ Արտաշը ու բոլորն աշեց:

- Ծախու վերջնական գինդ քանի՞ս է օր, քեռի:

- Աստծուն օր չխափեմ,- ըսավ,- էռսընընիինգ մանեթ:

Վրա տվին էռսուն մանեթով առան: Տարան թաթարյախի բաշն ու պոչը խուզեցին, մաքրեցին, մաշկը փայլեցրին, քիթ-մռութը ներկեցին, մի լավ էլ ծեծեցին, որ զգաստանա, նորից մտցրին շուկա, կրկեսի ձիու պես սկսեցին խաղացնել: Արտաշը քայլերն արագացրեց, սրտի աշխատանքն էլ արագացավ, իրան թվաց, թե շատերուն ըշքը հըմը էտ թային վրա է:

Արտաշը մոտեցավ ու մտքում մտածեց՝ կա-չկա, էսիկ իմ ղսմըթս է: Նայեց, ուրախացավ, նայեց, թերություն չըգտավ, մոտեցավ ձեռքը թըրեց վրան ու հարցրեց.

- Իսի թային տերը վե՞վ է ու ի՞նչ արժե:

- Եթե առնող ես, իցցուն մանեթ է վերչին գինը, քեռի:

- Տղաք,- ըսավ,- եսա դիա նոր ձի ծախեցի, բայց խո իմ ըսած գնի վրա չկայնա, իչա. քիչըմ իչիք:

- Ղուրբանդ էղնիմ, էս տարիքի էշը համարյա էտ գնին կուտան, էտղից էժան չեն տա, դիա ում կուզես հարցու:

- Թանկ է, տղա՛ք, շատ թանկ է, իշնիք օրա, կառնեմ:

- Քեռի, պառավ ձիդ դու ծախեցիր էռսուն մանեթի, հըմի ջահել թայը թա՞նկ է իցցունի:

Արտաշը չիտեր՝ էրթա՞ր, չէրթա՞ր, ոտը կախ էր ցըկե, ու հենց էդ ժամանակ էլ «թայը» ծախողը հինգ մանեթ իչավ:

- Էվալլա՛,- ըսավ Արտաշը,- քառսընընիինգ մանեթով ձին առավ, փերեց գյուղ:

Տանեցիք ուրախացան, մոտիկցել, ձիուն էին շոյում, երբ Դիվինը եկավ: Դիվինն էկավ, բարևեց, նայեց ու, շըշմած-մոլըրածի պես, մի քանի անգամ պտտվում էր ձիուն շուրջը: Հետո կանգնած երկար էլի նայեց, շրջվեց հիմա էլ հակառակ ուղղութ-

յամբ էլ մի էրկու պտույտ արեց, վերջապես կանգ առավ և զարմանքով հարցրեց.

- Ծո՛, քանիսո՞վ առար:

- Էռսունի ծախեցի, քառսընընհնգի առա,- ըսավ Արտաշը:

- Վա՜յ ես քու...Ծո՛, գոնե իրան գնով առնեիր, ձեռքերը թափով իրար զարկեց Դիվինը:

- Է, կուտային, օր առնեի, իցուն կուզեին,- ըսավ Արտաշը:

- Ծո՛, ինչի՞ չէին տա. կապիկ են դառուցե հերիք չէ, մեր ձին մեզի չէին տա:

- Ի՞նչ մեր ձին. էսիկ ո՜ւր, էնիկ ուր: Էնիկ ծախել եմ, այ Դիվին, նոր եմ էսիկ առել, չէ՞,- ինքն էլ զարմանք արտահայտեց:

- Լավ էրար, ծախելուդ բան չեմ ըսե, գոնե նորեն էս անտերը չառնեիր: Ըշտը քսան տարի է՝ էտորեն գանել (զզվել) էինք: Էսի՛կ է, էսի՛կ չէ երկար վիճաբանությունից հետո, ձին բաց թողին ջուրը, որպեսզի տեսնեն՝ ձին տեղանքում կկողմնորոշվի և կվերադառնա տուն: Ձին ջուրը խմեց, սովորական ընթացքի մեջ, էկավ իր հին տեղը կայնավ:

- Ծո Արտա՛շ, իսիկ հիմի ո՞ւմ ձին է,- Արտաշը, արևը գլխուն, մոլըրել էր: Քու տունդ շինվի. քնացիր խայտառակ էղար, հերիք չէ, փերիր մեզիա խայտառակ էրար: Հիմի իտոնց շուկան էլ ինչը՞ղ էրթանք, ինչը՞ղ աշենք իտոնց էրեսնուն: Կամ թեկուզ մեր գեղացոնց էրեսը ինչը՞ղ աշենք...Առավոտը ես ճամփորթ եմ,- մեկեն ու միանքամից վճռեց Արտաշը: Լուսը չբացված՝ մարթը ձին նսըավ, գնաց:

❀ ❀ ❀

- Ժորժետը սիրած տղային քաղաքից բերեց գյուղ՝ տատին ծանոթացնելու:

Մամը նայեց բոյին, տեսքին, երկար բեխերին՝ ըսավ.

- Ըխչի՛, էս անկոթ, մաշված ցախավելը ուրտի՞ց ես փերե:

- Մամի, նիհարությանը, բոյին մի՛նայի, խելացի տղա է:

- Է, հա՛, բալա ջան, քեզի մարթ է պետք, խելքն ի՞նչ տի էնես:

- Այ մա՛մ, սուս, կը վիրավորվի:

- Էլ ինչ տի վիրավորվի, ըշտը վիրավոր է, կաշեմ օր բեխերուն ես հավնե, ախըր բեխերուն տակը մարթ չկա:

- Կա՛, կա՛, մամ, առաչ քուքա (կը կազդուրվի) էտման չի մնա:

- Էլ ինչ տի առաչ քա,- իրանը պնդեց աշխար տեսած մամը,- մեղք է, տար տեղը թի, առաչը ձմեռ է. յա՛, սառիկը, յա՜էլ քամին կտանի:

❀ ❀ ❀

- 1958 կամ 1959 թվականն էր: Հրահանգված էր որևէ ժամանակակից գործ բեմադրել: Մենք էլ տեղական ուժերով ու մեծ ջանքերով մե կերպըմ բեմ հանեցինք «Քեռիները քեֆ են անում» պիեսը: Ռոստոմ Ղարսլյան, Արամ Չոբանյան, Մոլիկ

Սեդրակյան, Հմայակ Գրիգորյան, Ոսկան Փութուլյան, Լյովա Չոբանյան, խոստումնալից այլ ուժեր: Բեմ դուրս գալուց առաջ դատարկել էինք օղու չորս-հինգ շիշ, բայց դահլիճը գնալով դատարկվում էր: Կամաց-կամաց, «...մնաք բարով» ասելով, մարդիկ հեռանում էին: Մենք էլ ճիգեր էինք թափում որևէ կերպ պահել դահլիճը լքող հանդիսատեսներին, և՝ իզո՜ւր: Հանկարծ կնոջական ճղճղան մի ճիչ տարածվեց դահլիճում: Խաղը բեմից տեղափոխվեց դահլիճ.

- Անխիղճնե՛ր, անամոթնե՛ր, էս ինչ անշնորք մարթիք եք, խըշկեցեք, տեղներդ վեր ընկեք, թող վերչանա, տղիս մեղք չէ՞, պատերուն համա՞ր տի խաղա:

Ներկայացումն ընդհատվեց, անհամ, անդուր վիճակ էր, դահլիճում մնացել էին Սեդրակյանի մայրը, ով շատ հուզված էր և չէր ուզում մենակ թողնել մեզ, նաև՝ երկու հարբած-քնած մարդիկ ու ակումբի պահակը, որ ակումբի դուռը փակելու համար էր մնացել և, բանալիները ձեռին, առանց նրբանկատության նշույլի, շտապեցնում էր մեզ:

Անմոռանալի էր առաջին մեր այս ներկայացումը և երբեք չի ջնջվի մեր հիշողությունից: Ցավոք, ավարտվեց չորս հանդիսատեսով՝ երկուսը՝ քնած: Եվ հազար ափսոս, որ հեղինակը ներկա չէր, թեպետ բացառված չէր, որ առաջին լքողներից մեկը հենց ինքը լիներ:

Տարինե՜ր, տարինե՜ր, ինչպես կասեր պոետը, ինչե՜ր եղան, ինչե՜ր անցան: Լույսն էլ էր մերը, ստվերն էլ: Մերը եղավ ե՛վ ընկճանքը, ե՛վ հրճվանքը: Խենթի սիրահարությո՞ւն էր մերը, թե՞ սիրահարի խենթություն, միևնույնն է՝ մենք այն էինք, ի վերջո, ինչ կայինք կամ պիտի լինեինք: Մենք չկորցրինք ժամանակը, բայց ժամանակը ինքը՝ անաղմուկ ու որոտաձայն, անցավ մեր կողքով, նկատե՞ց-չնկատե՞ց մեզ: Չիմացանք:

Հիմա մտածում եմ (մտածվում է ինքն իրեն)՝ Բարձրյալի կողմից հորինված բեմադրություն չէ մեր այս կյանքը, ուր ամենքս խաղում ենք նախասահմանված մեր դերը՝ անտրտունջ և առանց հուշարար: Ոմանք դարձյալ լքում են «դահլիճը»՝ անհուն ցավ պատճառելով մնացողներիս: Սպասենք ներկայացման ավարտին, պարոնա՛յք, զի այլ մի տեղ, այլ մի ժամանակ մենք այն երբևէ չենք տեսնի այլևս:

Իսկ մինչ այդ հրաշքը կրկին հայտնվի գուցե, Կաղանդ պապին գա՝ հեքիաթի հրեղեն նժույգներ հեծած, վերադառնան մեր խենթուխելառ ջահելության ապերասան ժամանակները, չմոռացվող մեր սերը առաջին, մեր լուսացնցուղ կարոտանքները բոլոր, առնեն մեզ իրենց ամպշող թևերին, ձուլեն երկնքի պայծառությանը, ուր մթին գիշերն ու դարանակալ խավարը տեղ չունեն բնավ, անմահությունն էլ, աստղալից երկնքի ֆոնին, հանց հավիտենության լուսերիզ ազդագիր, դառնա սուտ կյանքի հավերժ ուղեկից, հազարաճյուղ պատմության անարվեստ, անփայլ մի զարդանկար, դառնա դասագրքային պարզ ճշմարտություն: Պիեսը... Խավարում ընկղմվող դահլիճն ու դանդաղորեն լուսավորվող բեմը և, անդարձորեն, մեկիկ-մե-

կիկ մարող լույսերի նման, գլխիկոր հեռացող մարդիկ, որ հերոս են կոչվում: Ո՞ւր ենք հեռանում և ինչո՞ւ. և որոշողը մե՞նք ենք, թե՞ Մեծ Բեմադրիչը: Չէ՞ որ կյանքի խաղը վերջ ու վախճան չունի, ինչպես որ չունի ուղղություն բեմը դահլիճից բաժանող կարճլիկ փայտե աստիճանը, որի սուղ սահմաններում հենց սկսվում-ավարտվում է թերևս իրական մեր կյանքը: Մեր կյանքը, որ թիկնադարձ հեռանալո՛վ մեզանից՝ երբևէ անպայման ընդառաջ է գալու մեզ: Սպասենք ներկայացման ավարտին, պարոնայք, ինչպես որ սպասում են հրաշքի:

(Հմայակ Գրիգորյանի անդրադարձ հիշողությունը՝ որպես լույսով ու թախիծով թաթավուն երգի մարող հնչյունների հարազատ մեղեդի, ձեռքից անփութորեն թռցրած խենթուխելառ օրերի ու տարիների հրեղեն Հազարան հավք, որ... Կյանք է կոչվում):

ՈՂՈՎԸԴԻԿԱՅՆ ԵՐԳԵՐ

Ժողովրդական երգեր

(Գութանի երգեր)

Գութան, գութան, յուզբաշի
Գութանը խամին կը քաշի.
Մընճեղն հոտղին կը խաշի,
Հորովել հո՜, հո՜, հո՜:

Մաճկալն ասավ՝ խաշիլ բերեք,
Հոտաղներ ջան, արիք կերեք.
Օրավարը տեղը բերեք,
Հորովել հո՜, հո՜, հո՜:

Մաճը մաճին, մաճկալի ձեռն ականջին,
Գութան ջան, վարի, ակոսներ շարի.
Հոտաղ ջան, եզին ճիպոտդ քաշի,
Ես գութանի խերին ղուրբան:

Մաճկալը օլոր-մոլոր,
Գութանի հետև գնաց գլխիկոր.
Վալոդ հոտաղը ծիծաղեց,
Ես գութանի խերին ղուրբան:

Թան, թան, թթու թան,
Պապս ուտե, գնա գութան.
Թուման հոտաղ, մնա տանը,
Հորովել հո՜, հո՜, հո՜:

Մաճկալը մաճ կը մանե,
Ամուսինը կար կը մանե.
Մաճկալին քունն է տարել
Փայ հացը շունն է տարել:

Գութանն ասաց՝ լավ կը վարեմ
Ցնիչն ասաց՝ ձևեմ, դրզեմ,
Խոփից առաչ ես կը վազեմ,
Ես գութանի խերին մեռնեմ:

Շղթան ասավ՝ հուզանվել եմ,
Լծկանի հետ բզանվել եմ.
Նոր հարսի պես պսակվել եմ,
Հորովել հո՜, հո՜, հո՜:

Եզներիս փորին աշե,
Մաճկալիս բոյին աշե.
Հոտաղնուս օրին աշե,
Հորովել հո՜, հո՜, հո՜:

Գութանը ելավ խամին,
Կոտրավ էրկաթե սամին.
Տանջեց Վալոդ մաճկալին,
Հորովել հո՜, հո՜, հո՜:

Քաշե եզ ջան, քաշե,
Քո լուծը մաշե.
Քանի քու տերը սաղ է,
Ես գութանի խերին մեռնեմ:

Գութանն իզինի, հորովելն տիզինի,
Քիմ քի հորովելն էթմազ
Քեռեկինն տիզընի.
Հորովել հո՜, հո՜, հո՜:

Գութանն էլավ խամին,
Կոռավ շեկ գոմշի սամին.
Մաճկըլի քունը կը տանի,
Կընիկը շունը կը տանի:

Ըռեմ, ըռեմ...
Չարխըճուն բերանը...
Չարխըճուն չարոխն եմ հաքե,
Գռնելճուն բերանն եմ...

Մաճկալը մաճին,
Մանգիշ օղերն անգըճին,
Խապար տարեք զոնքընչին,
Հորովել հո՜, հո՜, հո՜:

Գութանն էլավ խամին,
Կոռավ էրկըթե սամին.
Վեվ օր հորովել չկանչե,
Էնոր հարսն ու խնամին:

Մաճկալը մաճին,
Գդալն անգըճին,
Շռեմ ավազին,
Էրթա բողազին:

Ուցը - ուցը,
Լըգլըգին կտուցը,
Վեվ օր հորովել չճվա,
Էնոր քեռեկան ...

Դեմեն քալողը հարս է,
Ծծերը դեշեն կախ է.
Ծոցը լիքը դախ է,
Հորովել հո՜, հո՜, հո՜:

Եզը-եզը, կարմիր եզը,
Լուծը՝ ճտին, շուքը՝ գետին,
Օրտնած գութանը էտըթին,
Վեվ օր հորովել չը ճվա,
Էնոր հարսն ու խնամին.
Հորովել, հո՜, հո՜, հո՜:

Գոմեշը քաշեց խամին,
Կոտռեց էրկըթե սամին,
Վեվ օր հրովել չը ճվա,
Էնոր հարսն ու խնամին.
Հրովել, հո՜, հո՜, հո՜:

Առավոտ փչեց քամին,
... Տերտերին .....
Քշեց իրիցկինին,
Հոռովել, հո՜, հո՜, հո՜:

Անտեր մնար էտ գութանը,
Հեղիկը մնաց մթանը.
Սրպրպն էղավ ավելուկը,
Արունք մտավ ջրին մուկը:
Նաղար է, նաղար է,
Քրոնելին հոտաղը զաղար է:

Մաճկալն էր մաճին,
Օսկե օղերն անգրճին.
Խապար տվեք զոնքընչին,
Թրխ իգա տանե մաճկըլին.
Հո՜, հո՜, հո՜, հո՛տաղ, հո՜, հո՜:

Մըր արտի գլոխն է ընդուկ-մընդուկ,
Ձըր արտի գլոխն է ընդուկ-մընդուկ.
Մըր մաճկալն առնե քեռընկանըդ,
Մըտնա սընդուկ.
Հո՜, հո՜, հո՜, հո՛տաղ, հո՜, հո՜:

Իմ ձեռքն է լոշ,
Քու ձեռքն է լոշ,
Առավ քեռընկիդ,
Պառկավ մենձ սարի դոշ,
Հո՜, հո՜, հո՜, հո՛տաղ, հո՜, հո՜:

Իմ ձեռքն էր գաբա,
Քու ձեռքն էր գաբա.
Մըր մաճկալ ք.....
Քեռընկաղ, արուն կաբա.
Հո՜, հո՜, հո՜, հո՛տաղ, հո՜, հո՜, հո՜:

Մըր գութանը էլավ, դառցավ,
Ձըր գութանը էլավ, դառցավ.
Մըր մաճկալ առավ
Քեռընկաղ՝ ծառցավ.
Հո՜, հո՜, հո՜, հո՛տաղ, հո՜, հո՜, հո՜:

Գութանն էլավ քար ու քըռին,
Մըր մաճկալն առավ քըրդու դռեն.
Հո՜, հո՜, հո՜, հո՛տաղ, հո՜, հո՜:

Առավոտվա ցուրտ ու քամին,
Կայնավ մըր մաճկըլի սամին.
Դեմ տվեց Լըժոյի խամին,
Հո՜, հո՜, հո՜, հո՛տաղ, հո՜, հո՜:

Արևն առավ էլիսաբեթին,
Մըր մաճկալ Լժոյի լերթին,
Հո՜, հո՜, հո՜, հո՛տաղ, հո՜, հո՜:

Մըր միլոնը բան չէ,
Գնա, Հայկոյին կանչե.
Հայկոն գնաց թատրոն,
... մտավ պատրոն.
Հո՜, հո՜, հո՜, հո՛տաղ, հո՜, հո՜:

Ամպ է, ամպ է,
Ըռեզինե զըմպ է,
Լըժոն գնաց խուցը,
Ճանճը մտավ.....
Հո՜, հո՜, հո՜, հո՛տաղ, հո՜, հո՜:

Ինչ օր կա էտին,
Շատ մանդր ու բեղին.
Ջայելներ տվեք,
Դընեմ գետին.
Հո՜, հո՜, հո՜, հո՛տաղ, հո՜, հո՜:

Գութանն էլավ արագ-արագ,
Ախչըկտիք փախան մարաք-մարաք,
Խամիշ կուզին հաստ ու բարակ,
Հո՛տաղ, հո՜, հո՜, հո՜:

Անձրև էկավ կաթե-կաթ,
Խամիշն էղավ էրկու դաթ.
Գնաց մտավ Գարանի ծ...
Հո՛տաղ, հո՜, հո՜, հո՜:

Դուռ դնիմ, էրթիք կալում,
Բառաբանին լըղըզցում.
Իրիցկընկան վըզվըզցում,
Պառկի բերե հոտղըցում,
Հանիմ դնիմ խարազանին՝ ճլվլցում,
Քըշե՜, հոտաղ, զորանաս:

Գութնի գոմեշ կռիվ կուզե,
Շեկ աչառը չիբուխ կուզե.
Հո՛տաղ, կանչե, հո՜, հո՜, հո՜:

Արևն առավ Ղարսա բերթին,
Մաճկալ թռավ իշու լերթին,
Հոտաղ, հո, հո, հո:

Գութանն ընկավ քար ու քըռա,
Մոլլեն սիրեց քրդու դըռա.
Հո՛տաղ, հո՜, հո՜, հո՜:

Մաճկալը կայնավ խամին,
Ք.....մաճկըլի խնամին
Հո՛տաղ, հո՜, հո՜, հո՜:

Ակոս խորուն է,
Ալաֆ դուշմընու փորին է.
Հոռովել կանչե, հո՜, հո՜, հո՜:

Արևն առավ սարին,
Կաքավ կայնավ քարին.
Չե՛ն տվեք ակոս մալին,
Հո՛տաղ, հո՜, հո՜, հո՜:

Արև գնաց մարը մտավ,
Մութը կոխեց.
Էրկու ախչիկ ջուրը մտան,
Միտքը փոխեց.
Հո՛տաղ, հո՜, հո՜, հո՜:

Գութանն ընկավ փոսն,
Շաղը դրեց ակոսն.
Թորյացու պատվավոր հարսը.
Խուլաճըմ Կ.....
Բաբուճը փոխեմ.
Հո՛տաղ, հո՜, հո՜, հո՜:

Մաճկալը կայնավ մաճին,
Օսկե գնդեր անգճին.
Խապար տվեք զոնքնչին,
Թող գա մեռնի կտրիճին.
Հո՛տաղ, հո՜, հո՜, հո՜:

Ցուրտն ու քամին մե թարաֆ,
Թաթարխամին մե թարաֆ,
Մուրքով ըմին մե թարաֆ.
Հո՛տաղ, հո՜, հո՜, հո՜:

Գութանը կապել ենք խամին,
Առավոտվա ցուրտ ու քամին.
Վիրն օր հոռովել չըկանչե,
Էնոր հարսն ու խնամին.
Հո՛տաղ, հո՜, հո՜, հո՜:

Եզ է, եզ է, կարմիր եզ է,
Լուծը ճտին, ծունկը գետին,
Օրհնյալ գութան մալի էտտին,
Հո՛տաղ, հո՜, հո՜, հո՜:

Գութանը վարում է, վարում է,
Ալաֆը շարում է, շարում է.
Հո՛տաղ, հո՜, հո՜, հո՜:

Գութանն ասավ՝ անգին քար եմ,
Դիզ ու դուրան ես կը վարեմ.
Կոկլի-կոկլի ակոս շարեմ,
Ես գութանի խերին մեռնիմ

Սարը, սարը, Տապպակ սարը,
Ախչըկնին բռնեցին կլորիկ պարը.
Ե՞փ տի պրծնինք էս անտեր վարը,
Մենք էլ մտնեինք կլորիկ պարը.
Գտնենք մեր սիրած յարը.
Հոռովել հո՜ո՜ո՜:

Սիրո երգեր

ՍԻՐԱԿԱՆՆ ԱՆՈՒՇ (ԽՆԿԱՆՈՍ)

Բացվեցավ դրախտը, տեսանք, ապշեցանք
Հոտավետ ծաղկունքներով բուրաստանն անուշ.
Առ հրիշտակաց քաղցր ձայնով կչալեն,
Տասնաղան երգարանն անուշ:
Սեյր էրի զանազան պտղալի ծառներին,
Թև թևի ճաղերը իրար են բռնում.
Տանձերը, սերկևիլները, հաղողի նռները,
Պատվական, խիստ համեղ, երգարանն անուշ:
Էրևեցավ մի թագույին պայծառ փառքերով,
Գլուխն էր թագազարդ կերպ-կերպ գովարով.
Լուս էրեադ սրբուին սրբունակ սիրով,
Մոտեցավ ինձ մոտ, խոսեցավ անուշ:
Հարբեցա սիրահար սիրուն խոսքերուդ,
Շարժեցավ, վառվեցավ իմ սիրտս նորից.
Գտավ Խնկանոսը զվարթ սրբերին,
Իրեն մենք սիրելի, սիրական անուշ:
Վառվի թոք ու սիրտս կյանքիս թերթի հետ,
Մոտեցի սիրով մայր սուրբ, ջուր մը տուր.
Կարոտ եմ սառը ջրիդ ի, սիրտս խիստ կերա,
Օղորմությանդ ի ծովերեն, մայր սուրբ, ջուր տուր.
Վերի էրկընքներեն, բուրաստաններեն,
Ծաղկալի դաշտերեն, վառած գետերեն,
Անուշ հեղեղներեդ, պաղ ախպըրներեդ,
Կենարար ձեռքովդ, մայր սուրբ, ջուր մը տուր:
Դեմդ էլա ամոթով, աղքատիկ լաթով,
Ինձ մի՛թալ աղտով, ինձ խնայի, տուր
Գթովդ ի, սիրուն գավաթովդ ի.
Եվ կարոտս լցվի, մեկ երկինք բացվի,
Գա իմ փափագս ի, ա՜խ արքայութուն, ա՜խ արքայութուն.
Կնքրուկներ կը բուրվին, խնկեր կը ծխվին,
Անուշիկ հոտերով, ա՜խ արքայութուն, ա՜խ արքայութուն:

ԱԽՉԻ ՏԻՐՈՒՆ

Ախչի Տիրուն, լավ Տիրուն,
Համ ըռունդ ես, համ սիրուն:
Տիրունի կարմիր թուշը,
Ախչի Տիրուն, լավ Տիրուն,
Համ ըռունդ ես, համ սիրուն.
Կայնել ես դսի դուռը,
Ախչի Տիրուն, լավ Տիրուն,
Համ ըռունդ ես, համ սիրուն:
Տիրունը մանչու գուզե,
Ախչի Տիրուն, լավ Տիրուն,
Համ ըռունդ ես, համ սիրուն.
Աքոշկեցեն դուս կաշե,
Ախչի Տիրուն, լավ Տիրուն,
Համ ըռունդ ես, համ սիրուն:
Տիրունի դայրի փեշը,
Ախչի Տիրուն, լավ Տիրուն,
Համ ըռունդ ես, համ սիրուն.
Առել է մանչու գեշը,
Ախչի Տիրուն, լավ Տիրուն,
Համ ըռունդ ես, համ սիրուն:

ՉԻՆԱՐ ԵՍ

Յար ջան, մանդըռ կը քալես,
Չինար ես, բարդու ծառ ես,
Նազիկ ես, մարթ կը վառես:
Սիրած յարիդ կը խափես.
Չինար ես, բարդու ծառ ես,
Նազիկ ես, մարթ կը վառես:
Յարիս գոտին կորել է,
Չինար ես, բարդու ծառ ես,
Նազիկ ես, մարթ կը վառես:
Ով օր գտել է, թող տա.
Չինար ես, բարդու ծառ ես,
Նազիկ ես, մարթ կը վառես:
Գիշերկիսին փերե տա.
Չինար ես, բարդու ծառ ես,
Նազիկ ես, մարթ կը վառես:
Չէ սը՝ ինձեն չը նեղանաս.
Չինար ես, բարդու ծառ ես,
Նազիկ ես, մարթ կը վառես:

ԱՐԻ, ՄԱՆԱՆ, ԱՐԻ

Արի՛, Մանան, արի՛,
Էրթանք ձեր տունը.
Գիշեր-ցերեկ կըտռավ
Իմ աչքի քունը:
Մանանըս կայնել է
Հերանցը պատին,
Աչք ու ունքով կենե
Իր սիրած գյաղին:
Էրկինքը ամպել է,
Գետինը թաց է,
Մանանիս թիկունքը
Կեսեն հետ բաց է:
Արի՛, Մանան, արի՛,
Խռով մի՛մնա,
Քո սիրած գյաղին
Խաթրը չի մնա:

ՅԱՐՍ ԾԱՌՆԵՐԻ ՏԱԿ Է

Արտեմը արտերեն քուքա,
Հոփ, ամպերի տակ է,
Յարս ծառների տակ է,
Թևերը թափ տալեն քուքա,
Հոփ, ամպերի տակ է:
Յարս ծառների տակ է,
Իրեք ախչիկ գուզեր,
Հոփ, ամպերի տակ է:
Յարս ծառների տակ է,
Իրեքեն մեկին չառավ,
Հոփ, ամպերի տակ է:
Յարս ծառների տակ է,
Վերչը մաքուշկի առավ,
Հոփ, ամպերի տակ է:
Յարս ծառների տակ է,
Իրեն սիրածին չառավ,
Հոփ, ամպերի տակ է,
Յարս ծառների տակ է:

ԱԽՉԻ ՇՈՂԻԿ

Շողիկի ֆասի փիսկիլը.
Ախչի Շողիկ, դու Շողիկ,
Կըլմանիս դու խնձորիկ.
Ընկել ես յարիդ ճիտը,
Ախչի Շողիկ, դու Շողիկ,
Կըլմանիս դու խնձորիկ:
Կայնել ես, բոյ կը քաշես,
Ախչի Շողիկ, դու Շողիկ,
Կըլմանիս դու խնձորիկ:
Ուզած մանչուդ կը վառես,
Ախչի Շողիկ, դու Շողիկ,
Կըլմանիս դու խնձորիկ:
Ախչի Շողիկ, խլվլան,
Ախչի Շողիկ, դու Շողիկ,
Կըլմանիս դու խնձորիկ:
Յարիդ համար աննման,
Ախչի Շողիկ, դու Շողիկ,
Կըլմանիս դու խնձորիկ:

ԱԽՉԻ ՋԱՆԻ՞ԿՍ, Ո՞�ՒՄ ՏՆԵՆ ԵՍ

Էլել ես, էրթեցեն կաշես,
Աթլաս խրխեդ բարով մաշես.
Պաքըմ գուզեմ, քար կը քաշես,
Ախչի, ջանի՞կըս, ո՞ւմ տնեն ես:
Ջուրը կերթաս ջուխտ լիլիկով,
Ինձ կը վառես ալ պիրիկով,
Պաքըմ գուզեմ, քար կը քաշես,
Ախչի՛, ջանի՞կս, ո՞ւմ տնեն ես:
Դու ման քուքաս ուշիկ-մուշիկ,
Դու թութուշիկ, պաքդ անուշիկ.
Պաքըմ գուզեմ, քար կը քաշես,
Ախչի, ջանի՞կս, ո՞ւմ տնեն ես:

ԱՌՆՈՂԻԴ ՀԱԶԱ՞Ր ԵՐԱՆԻ

Դու կայնել ես ձեր կալը,
Ա՜յ, բարի պախ, բարի պախ,
Աքոշկատան յարի պախ.
Սիրածդ քեզ կը վառե,
Ա՜յ, բարի պախ, բարի պախ,
Աքոշկատան յարի պախ.
Առնողիդ հազա՞ր երանի,
Ա՜յ, բարի պախ, բարի պախ,
Աքոշկատան յարի պախ.
Ալագեզ աչերդ,
Ա՜յ, բարի պախ, բարի պախ,
Աքոշկատան յարի պախ.
Կամար սիրուն օնքերըդ,
Ա՜յ, բարի պախ, բարի պախ,
Աքոշկատան յարի պախ.
Ուզում եմ ես հեռանալ,
Ա՜յ, բարի պախ, բարի պախ,
Աքոշկատան յարի պախ.

Չի թողնի քո սերըդ,
Ա՜յ, բարի պախ, բարի պախ,
Աքոշկատան յարի պախ:

ՀԱՅԿՈ ՋԱՆ

Հայկոյիս մի՛տանի յայլեն,
Հայկո ջա՜ն, Հայկո ջա՜ն.
Անտեր կը մնա մայլեն,
Հայկո ջա՜ն, Հայկո ջա՜ն:
Սարեր-ձորեր մշուշ է,
Հայկո ջա՜ն, Հայկո ջա՜ն.
Իմ յարը պանկլի ղուշ է,
Հայկո ջա՜ն, Հայկո ջա՜ն:
Վեվ օր կըսե, թե գեշ է,
Հայկո ջա՜ն, Հայկո ջա՜ն.
Մեղրեն, շաքրեն անուշ է,
Հայկո ջա՜ն, Հայկո ջա՜ն:
Ապուր եմ էփե՝ աղի,
Հայկո ջա՜ն, Հայկո ջա՜ն.
Ուտողին ջիգարը դաղի,
Հայկո ջա՜ն, Հայկո ջա՜ն:
Արևը դիպել է չոր պատին,
Հայկո ջա՜ն, Հայկո ջա՜ն.
Սերս ընկավ շեկ գյաղին,
Հայկո ջան՜, Հայկո ջա՜ն:

ՕՍԱՆՆԱ՞Ն ԵՄ, ՆԱՆԵ ՋԱՆ

Օսաննա՜, Օսաննա՜,
Օսաննան եմ, նանե ջան.
Սարի Մո՛սկով,
Անուշ խո՛սքով,
Յարո ջան:

Տուֆլիկներս լաքով է,
Օսաննա՜, Օսաննա՜.
Օսաննան եմ, նանե ջան.
Սարի Մո՛սկով,
Անուշ խո՛սքով,
Յարո ջան:

Իմ յարը պագոնով է
Օսաննա՜, Օսաննա՜.
Օսաննան եմ, նանե ջան,
Սարի Մո՛սկով,
Անուշ խո՛սքով,
Յարո ջան:

Սարի էտտեցի պուզը,
Օսաննա՜, Օսաննա՜,
Օսաննան եմ, նանե ջան,
Սարի Մո՛սկով,
Անուշ խո՛սքով,
Յարո ջան:

Թափ տու սեռքուկիդ թոզը,
Օսաննա՜, Օսաննա՜.
Օսաննան եմ, նանե ջան,
Սարի Մո՛սկով,
Անուշ խո՛սքով,
Յարո ջան:

ՎԱՌԵՑԻՐ ՄԵԶԻ

Յաման կերթաս Շերագալ,
Յաման, է՛լ ղրզի,
Վառեցիր մեզի.
Էսոր օրը կեսօր է,
Յաման, է՛լ ղրզի,
Վառեցիր մեզի.
Իմ կենալը էսոր է,
Յաման, է՛լ ղրզի,
Վառեցիր մեզի.
Գընա, արի, ման արի,
Յաման, է՛լ ղրզի,
Վառեցիր մեզի.
Յարիդ հետ յան արի,
Յաման է՛լ ղրզի,
Վառեցիր մեզի.
Ուր օր կերթաս Շերագալ,
Յաման, է՛լ ղրզի,
Վառեցիր մեզի.
Յարիդ առ ու հետդ տար,
Յաման է՛լ ղրզի,
Վառեցիր մեզի:

ՄԱՐԱԼԼՈ ԱԽՉԻԿ

Մտա բակը՝ ջոկեցի,
Մարալլո աղչիկ.
Սերըդ ինձի վառել է.
Սիրել եմ, կառնեմ՝
Ժամանակը անցել է:
Կարմիր վարթը պոկեցի,
Մարալլո ախչիկ.
Սերըդ ինձի վառել է.
Սիրել եմ, կառնեմ՝
Ժամանակը անցել է:
Ախպուր, պաղ ջուրը անուշ,
Մարալլո ախչիկ,
Սերըդ ինձի վառել է.
Սիրել եմ, կառնեմ՝
Ժամանակը անցել է:
Յարիս տված վարթն անուշ,
Մարալլո ախչիկ,
Սերըդ ինձի վառել է.
Սիրել եմ, կառնեմ՝
Ժամանակը անցել է:
Չեռքս ցըգի իմ յարին,
Մարալլո ախչիկ,
Սերըդ ինձի վառել է.
Սիրել եմ, կառնեմ՝
Ժամանակը անցել է:
Ահան՝ լըրացավ տարին,
Մարալլո ախչիկ,
Սերըդ ինձի վառել է.
Սիրել եմ, կառնեմ՝
Ժամանակը անցել է:

ՉՏԵՍԱ ՅԱՐԸՍ

Վերից այելով
Չըտեսսա յարըս.
Կրակը լըսվավ սիրտըս,
Վառավ ջիգարըս:
Չէիր առնե,
Խոսք չըտայիր, անԱստված,
Չանվանեիր ինձի
Քեզի սիրած յար:
Ով օր չիտե,
Թող կարթա, իմանա,
Դարտերիս սար ու ձոր
Չեն դիմանա:

ՈՒԼ ՈՒԼ ԲՈՒԼՈՒՉՈՎ ՏՂԱ

Սարեր-ձորեր լախանա,
Ուլ-ուլ բուլուզով տղա.
Շան տղեն սալախանա,
Սիպտակ բուլուզով տղա:
Կլոր արտը գարի է,
Ուլ-ուլ բուլուզով տղա.
Կոմսոմոլի տարի յա,
Սիպտակ բուլուզով տղա:
Ըստոլի վրա մանած,
Ուլ-ուլ բուլուզով տղա.
Խմենք ֆիդայու կենացը,
Սիպտակ բուլուզով տղա:
Սարեն քուքա ջուխտ աղչիկ,
Ուլ-ուլ բուլուզով տղա.
Ջխտին փառքուկն է լաստիկ,
Սիպտակ բուլուզով տղա:

ՕՏԱՆ ՆԱՆԵ

Ուր քընացիր, ուր էկար,
Օտան նանե, օտան նանե, ջանե ջան,
Սարի Մոսկով, անուշ խոսքով յարո ջան,
Դու իմ սրտին դուր էկար,
Օտան նանե, օտան նանե, նանե ջան,
Սարի Մոսկով, անուշ խոսքով յարո ջան:
Սարի էտկը դուտտիկ,
Օտան նանե, օտան նանե, նանե ջան,
Սարի Մոսկով, անուշ խոսքով յարո ջան,
Բոյիդ մեռնեմ, Արութիկ,
Օտան նանե, օտան նանե, նանե ջան,
Սարի Մոսկով, անուշ խոսքով յարո ջան,
Կարմընջին ակը կոտռավ,
Օտան նանե, օտան նանե, նանե ջան,
Սարի Մոսկով, անուշ խոսքով յարո ջան.
Շան տղի շախը կոտռավ,
Օտան նանե, օտան նանե, նանե ջան,
Սարի Մոսկով, անուշ խոսքով յարո ջան:
Էրթիկը բուն եմ թրե,
Օտան նանե, օտան նանե, նանե ջան,
Սարի Մոսկով, անուշ խոսքով յարո ջան:
Մանչերուն քուն եմ թրե,
Օտան նանե, օտան նանե, նանե ջան,
Սարի Մոսկով, անուշ խոսքով յարո ջան:
Քընա, արի, ման արի,
Օտան նանե, օտան նանե, նանե ջան,
Սարի Մոսկով, անուշ խոսքով յարո ջան.
Բարց կը թնեմ յան արի,
Օտան նանե, օտան նանե, նանե ջան,
Սարի Մոսկով, անուշ խոսքով յարո ջան:
Վերչ տանք էս պարի ղայտեն,
Օտան նանե, օտան նանե, նանե ջան,
Սարի Մոսկով, անուշ խոսքով յարո ջան:
Զայնենք դուխովնու ղայտեն,
Օտան նանե, օտան նանե, նանե ջան,
Սարի Մոսկով, անուշ խոսքով յարո ջան:

ԷՐԵՍԻԴ ԽԱԼԸ

Խալա, էրեսիդ խալը,
Պաքնեմ բոխախիդ ծալը:
Գնացիր, էկար բարով,
Սրտիս զարկիր լեռ քարով.
Խալա, էրեսիդ խալը,
Պաքնեմ բոխախիդ ծալը:
Այսօր օր ու արև ը,
Յարիս ղրկած բարևը,
Խալա, էրեսիդ խալը,
Պաքնեմ բոխախիդ ծալը:
Կանաչ արտը հաց տարա,
Յարիս տեսա ետ դառա,
Խալա, էրեսիդ խալը,
Պաքնեմ բոխախիդ ծալը:
Այսօր արտը հարոս ը,
Բանմ օր իմ յարը հոս է,
Խալա, էրեսիդ խալը,
Պաքնեմ բոխախիդ ծալը:
Էլա էրթիքն աշեցի,
Ջուխտըմ կոշիկ մաշեցի,
Խալա, էրեսիդ խալը,
Պաքնեմ բոխախիդ ծալը:
Վերի վանքը ճամով ա,
Սիրած յարը համով ա,

Խալա, էրեսիդ խալը,
Պաքնեմ բոխախիդ ծալը:
Ուր օր էրթաս, ինձ էլ տար,
Թե չէ ճարեմ ուրիշ յար,
Խալա, էրեսիդ խալը,
Պաքնեմ բոխախիդ ծալը:
Օչխարն էրել եմ բերը,
Քաշել եմ կաթի սերը,
Խալա, էրեսիդ խալը,
Պաքնեմ բոխախիդ ծալը:
Օչխարն էրել եմ բակը,
Դեմ տվել եմ սելի ակը,
Խալա, էրեսիդ խալը,
Պաքնեմ բոխախիդ ծալը:
Լամպը վառեմ լուս չի տա,
Իմ յարն ինձի խոսք չի տա,
Խալա, էրեսիդ խալը,
Պաքնեմ բոխախիդ ծալը:
Հերիք է իգաս իմ ըզին,
Շրտան փարտիմ քու վզին,
Խալա, էրեսիդ խալը,
Պաքնեմ բոխախիդ ծալը:
Պարի տեղ էղավ յաթաղ,
Ջահելներ դրին փափաղ,
Խալա, էրեսիդ խալը,
Պաքնեմ բոխախիդ ծալը:

ՃՈՐԱՆ ՆԱԶԼՈՒ

Գեղին վերև հերկեր-մերկեր,
Շապիկըտ սիրմալի ներկ էր.
Սիրել եմ, չեմ կրնա թարկե,
Արիխոսինք, ճորած Նազլու:
Ես քեզ տեսսա ծաղկանց միչին:
Աղաչեցի ես իմ Փրկչին.
Որ չկտրե հույսն իմ վերչին,
Արի՛ խոսինք, ճորած Նազլու:
Գեղին վերև արտըմ գարի,
Գարին քաղեմ, տամ խիարի,
Խիար ղրկեմ Նազլի յարիս,
Արի՛ խոսինք, ճորած Նազլու:
Էրևանա քուքար համեմ,
Ինչ էլ անես, քեզի ջա՜ն եմ,
Սիրտըս սրտիդ մեչը քամեմ,
Արի՛ խոսինք, ճորած Նազլու:
Էրևանա քուքա բազուկ,
Բոյըդ էրկան, մեջքդ նազուկ.
Թևերըդ չինի բիլազուկ,
Արիխոսինք, ճորած Նազլու:
Էրևանա քուքա նուռը,
Թափել տվի ժամին դուռը.
Ինձի տարան գլավնու դուռը,
Արիխոսինք, ճորած Նազլու:

ՏՈՒՆ ԱՐԻ

Հասակըս քսան տարի,
Ցորենի տեղ կուտեմ գարի,
Իրարու հետ ապրինք հարուր տարի,
Տո՛ւն արի, տուն արի, սիրուն յար:
Հարուր տարի անսեր մնաս,
Ախչի՛, չէ՛ղնի՝ ամուսնանաս.
Սերըդ կտրեց մեր սերը,
Պրծի, գնաց սեկտեմբերը:
Ման ես գալիս քուչա-քուչա,
Ջեբիդ բոլորները փունջ ա,
Շատ սիրուն ես, խելքըդ քիչ ա,
Մեռնիմ քեզի, դարտըդ ի՞նչ ա:

ԱՆԵԾՔ

Ես քեզ սիրեցի, որ դուն ինձ չքորկես,
Եթե քորկես, հոգով, մարմնով խարկվես.
Անիծում եմ տասը տարի տեղումդ պառկես,
Յորղանիդ մեչ տքան կողերդ, աղջիկ:
Մորդ լեզուն ուռչի, բերանում փակվի,
Քառսուն օր տանջվի, հոգին չքանդվի.
Ինձանից հետո ով որ հետդ պառկի,
Չվայլե քո վարսերդ, աղջիկ:
Ես մի խեղճ տղա էի քեզ գյուման,
Աստծմեն էղներ քո մոր դիվան.
Որ ինձ քցիր դարբեդարբ,
Տանողդ խերդ չտեսնի, ա՛յ աղջիկ,
Պատճառն ինչ էր, որ դու ինձ չավնեցիր,
Կարոտ էր դոլվաթի, փափագ էր գանձի,
Առաչ խոսք տվողի լեզուն պապանձի,
Տանողդ խերըդ չարժանիր, աղջիկ:
Չգտնես խամ կտավ, էնես ալխալուդ,
Լեն ու բոլ աշխարում օրդ անցնի սուգ,
Հացըդ կորեկ լինի, գարին ետ խառ,
Օձի նման սակավի կերըդ, աղջիկ:
Հյուսած մազերդ քըրքըրվի, հույս չունենաս,
Խավար ման գաս, աչքերդ լույս չբանաս,
Քո ընտրած սիրեկանիցդ հույս չունենաս,
Խավար.....արեգակըդ, աղջիկ:
Վարթ, սոխակ, կրակ ընկնի բաղումդ,
Երակներդ կոճ ընկնի կողումըդ,
Դուն տասը տարի տքաս տեղումըդ,
Չգտնվի ուզած դեղըդ, աղջիկ:

Անձրդ կրակ ընկնի տասը տեղով,
Որքան ցավ քալացիր տասը տարով,
Էրկու ծրծից ֆիթիլ բանիր տասը տեղով,
Կաթից կարոտ մնան զավակներդ, աղջիկ:

Ես Զուլալօղլին եմ, դարտովդ եմ գացել,
Գիշերն եմ մտածել, ցերեկն եմ լացել.
Քո խաթեր տասը տարի ազապ եմ մնացել,
Մնաս էրկու հոգով, չազատվիս, աղջիկ:

Ուր գնացիր, ուր էկար, էլլու յար,
Պարտամու սար գիլ ու շորոր, թելլու յար.
Դու իմ սրտին դուր էկար, էլլու յար,
Պարտամու սար գիլ ու շորոր, թելլու յար:
Յարիս մալը կորել է, էլլու յար,
Պարտամու սար գիլ ու շորոր, թելլու յար.
Ով որ գտել է, թող տա, թելլու յար,
Պարտամու սար գիլ ու շորոր, թելլու յար:
Էսօր շաբաթ էլլիր, էքվան կիրակի.
Լիզուս բալլիք ըլլիր, կուրծքը՝ ֆռանգի,
Բանայի սրտի վերքերը քննեյի:
Էսօր շափաթ ըլլիր, էքվան կիրակի,
Դիշմանըս դռնեն անսնիր, էրթար կրակի:
Լիզուս բալլիք ըլլիր,
Յարիս սիրտը բանայի,
Աշեի՝ յար, դարտըդ ի՞նչ էր,
Դարտըդ իմանայի, էտև մեռնեի:

Կանվի անեմ, յար յարո ջան,
Կեքսիդ սադաֆ շարեմ:
Մանր-մանր ման էկար,
Գիշերները տուն էկար,
Հայկո ջան,
Սարի սմբուլ, բաղի բլբուլ,
Հայկո ջան:
Մակարը օչխար կը խուզե,
Իրեք հատ ախչիկ գուզե.
Երեքից մեկին չառավ,
Գնաց՝ մաթուշկին առավ:
Թաշկինակս փռել եմ,
Ծառի տակը քնել եմ.
Հորս ու մորս ինադուն
Կոնսոմոլին սիրել եմ:
Սև ավտոմոբիլը,
Սև ավտոմոբիլը,
Խմեմ զուլալ ջուրը,
Թողնեմ տակի տիլը:
Արեքնազան-Արեքնազան, ախչիկ ջան,
Ծոցիդ միչին թիքեն բազան, ախչիկ ջան.
Արեքնազան-Արեքնազան, ախչիկ ջան,
Ծոցիդ միչին խանութ բազան, ախչիկ ջան:

Արևը մերեմեր է.
Մըռկատն առա, էլա վերի պալկոնը,
Պիտի ձևեմ յարիս փալքոնը:
Օչխարը գառի տեր է,
Մըռկատն առա, էլա վերի պալկոնը,
Պիտի ձևեմ յարիս փալքոնը:
Անցա ջրին օլորը,
Մըռկատն առա, էլա վերի պալկոնը,
Պիտի ձևեմ յարիս փալքոնը:
Քալեմ ջաղչի բոլորը,
Մըռկատն առա, էլա վերի պալկոնը,
Պիտի ձևեմ յարիս փալքոնը:
Բաղչի միչի վարքերը.
Մըռկատն առա, էլա վերի պալքոնը,
Պիտի ձևեմ յարիս փալքոնը:
Ջուր կը տանին հարսները,
Մըռկատն առա, էլա վերի պալկոնը,
Պիտի ձևեմ յարիս փալքոնը:
Հարս ջան, ըսի՝ ջուրըմ տուր.
Մըռկատն առա, էլա վերի պալկոնը,
Պիտի ձևեմ յարիս փալքոնը:
Ասավ՝ հետո զուլ ու մուր,
Մըռկատն առա, էլա վերի պալկոնը,
Պիտի ձևեմ յարիս փալքոնը:

Եսքերը քընաց չայիր-չիման լող տալու,
Մանչերը քընացինՖաս-փիսկիլը գողնալու.
Սարեն քուքան ջուխտ ախչիկ,
Եսքերը քընաց չայիր-չիման լող տալու,
Մանչերը քընացին ֆաս-փիսկիլը գողնալու.
Ջխտին գոգնոցն էր լաստիկ,
Եսքերը քընաց չայիր-չիման լող տալու,
Մանչերը քընացին ֆաս-փիսկիլը գողնալու:
Օսկին ինքը մանդրը է,
Եսքերը քընաց չայիր-չիման լող տալու,
Մանչերը քընացին ֆաս-փիսկիլը գողնալու:
Յարիս գինը ծանդրը է.
Եսքերը քընաց չայիր-չիման լող տալու,
Մանչերը քընացին ֆաս-փիսկիլը գողնալու:
Սարերը կըլլի մասուր.
Եսքերը քընաց չայիր-չիման լող տալու,
Մանչերը քընացին ֆաս-փիսկիլը գողնալու:
Ամմեն մարթ չի ըլլի կեսուր,
Եսքերը քընաց չայիր-չիման լող տալու,
Մանչերը քընացին ֆաս-փիսկիլը գողնալու:

Ըստամբոլտան թեքըլտի,
Բա՛ց խուրճինըդ, վե՛ր բիչաղը,
Խնձոր կպչեմ, տամ յարիս դիլիմ-դիլիմ:
Գյալ, օթուր սալդատ քիմի,
Բա՛ց խուրճինդ, վե՛ր բիչաղը,
Խնձոր կպչեմ, տամ յարիս դիլիմ-դիլիմ:
Կընկանը յար պիտի կանչեմ,
Բա՛ց խուրճինդ, վե՛ր բիչաղը,
Խնձոր կպչեմ, տամ յարիս դիլիմ-դիլիմ:
Եվ օր ուզեմ պաչպըչեմ,
Բա՛ց խուրճինդ, վե՛ր բիչաղը,
Խնձոր կպչեմ, տամ յարիս դիլիմ-դիլիմ:
Օր թշնամին ամաչի,
Բա՛ց խուրճինդ, վե՛ր բիչաղը,
Խնձոր կպչեմ, տամ յարիս դիլիմ-դիլիմ:

Ղարամանդուլ հաքել եմ,
Բուբբուն էկավ՝ արտս մնաց հերկելու.
Քունը տարավ, յարը մնաց գրկելու:
Հաքինըդ կանաչ ֆանել,
Բուբբուն էկավ՝ արտը մնաց հերկելու,
Քունը տարավ, յարս մնաց գրկելու:
Ինքը ծանոթ բան էր.
Բուբբուն էկավ՝ արտը մնաց հերկելու,
Քունը տարավ, յարը մնաց գրկելու:
Չարչուն տուն տի կանչեր.
Բուբբուն էկավ՝ արտը մնաց հերկելու,
Քունը տարավ, յարը մնաց գրկելու:
Կեսըրոչեն կամընչեր.
Բուբբուն էկավ՝ արտը մնաց հերկելու,
Քունը տարավ, յարը մնաց գրկելու:

Դու քելես կը ուսիկ-մուսիկ,
Ծիրան, ծիրանն է յարըս,
Հասսած ծիրանն է յարըս:
Չես էրթա յարիդ մոտիկ,
Ծիրան, ծիրանն է յարըս,
Հասսած ծիրանն է յարըս:
Յարըդ քեզնից ճորել է,
Ծիրան, ծիրանն է յարըս,
Հասսած ծիրանն է յարըս:
Սիրտը փորեն էլել է,
Ծիրան, ծիրանն է յարըս,
Հասսած ծիրանն է յարըս:
Կենա-կենա թոն քուքա,
Ծիրան, ծիրանն է յարըս,
Հասսած ծիրանն է յարրըս:
Իմ յարըս թեզ տուն քուքա,
Ծիրան, ծիրանն է յարըս,
Հասսած ծիրանն է յարըս:

Սարերը կըլի մասուր.
Օսկե գիգիմ առա, քընացի ջուրը,
Ա՜յ տղա, ինձի չառար, մնացի տունը:
Տղա, էտ խոսքըդ ինձի տուր.
Օսկե գիգիմ առա, քընացի ջուրը,
Ա՜յ տղա, ինձի չառար, մնացի տունը:
Արտի միչի սընձերը.
Օսկե գիգիմ առա, քընացի ջուրը,
Ա՜յ տղա, ինձի չառար, մնացի տունը:
Յարըս տանը նըստել է.
Օսկե գիգիմ առա, գընացի ջուրը,
Ա՜յ տղա, ինձի չառար, մնացի տունը:
Կուշտըմ ղըմի կերել է.
Օսկե գիգիմ առա, գնացի ջուրը,
Ա՜յ տղա, ինձի չառար, մնացի տունը:

Մեր տունը մարթ քուքա,
Ուզունբոյլի, ինճապելլի, իմ յարն է.
Օրթաբոյլի, ղարաղաշլի, քու յարն է:
Յարիս քովեն քուքա.
Ուզունբոյլի, ինճապելլի, իմ յարն է,
Օրթաբոյլի, ղարաղաշլի, քու յարն է:
Յար ջան, քեզի մեռնիմ.
Ուզունբոյլի, ինճապելլի, իմ յարն է,
Օրթաբոյլի, ղարաղաշլի, քու յարն է:
Անուշ բերանիդ մեռնիմ.
Ուզունբոյլի, ինճապելլի, իմ յարն է,
Օրթաբոյլի, ղարաղաշլի, քու յարն է:
Հեծել ես ղըռ ձիուն.
Ուզունբոյլի, ինճապելլի, իմ յարն է,
Օրթաբոյլի, ղարաղաշլի, քու յարն է:
Յարիս տանիս կը ձեր տուն.
Ուզունբոյլի, ինճապելլի, իմ յարն է,
Օրթաբոյլի, ղարաղաշլի, քու յարն է:
Տղա, քանքիլըդ սարքե.
Ուզունբոյլի, ինճապելլի, իմ յարն է,
Օրթաբոյլի, ղարաղաշլի քու յարն է:
Չեր մըյլի տղոցը աշե.
Ուզունբոյլի, ինճապելլի, իմ յարն է,
Օրթաբոյլի, ղարաղաշլի քու յարն է:

Սանդեռքը բուրթ կը գզե.
Օսկի-արծաթ ըլլեի, իրար խառնեի,
Նասիպ-ղըսմաթ ըլլիր, իրար առնեինք:
Յարըս քեզի չի ուզե.
Օսկի-արծաթ ըլլեի, իրար խառնեի,
Նասիպ-ղըսմաթըլլիր, իրար առնեինք:
Ախըսխու ճամփեն օլոր է.
Օսկի-արծաթ ըլլեի, իրար խառնեի,
Նասիպ-ղըսմաթ ըլլիր, իրար առնեինք:
Բոստընին ռեդուշկեն.
Օսկի-արծաթ ըլլեի, իրար խառնեի,
Նասիպ-ղըսմաթ ըլլիր, իրար առնեինք:
Ես ու յարըս պատռուշկա.
Օսկի-արծաթ ըլլեի, իրար խառնեի,
Նասիպ-ղըսմաթ ըլլիր, իրար առնեինք:
Հաքել ես ըռուբաշկա.
Օսկի-արծաթ ըլլեի, իրար խառնեի,
Նասիպ-ղըսմաթ ըլլիր, իրար առնեինք:
Ես ու յարըս ուրմիշ քուքանք.
Օսկի-արծաթ ըլլեի, իրար խառնեի,
Նասիպ-ղըսմաթ ըլլիր, իրար առնեինք:

Քաղաք մըտա միկիտան,
Անգին Աննան է յարըս,
Աղվան-Օսանն է յարըս.
Բըլքի վեղռեմ գինի տան.
Անգին Աննան է յարըս
Աղվան-Օսանն է յարըս.
Գինի խմեմ լիանամ,
Անգին Աննան է յարըս,
Աղվան-Օսանն է յարըս.
Հարս ու թաքվոր գիրանան.
Անգին Աննան էր յարըս,
Աղվան-Օսանն է յարըս.
Քաղաք մտա լամփը վառ.
Անգին Աննան էր յարըս,
Աղվան-Օսանն է յարըս.
Չիթ դայրավոր ախչիկն առ.
Անգին Աննան է յարըս,
Աղվան-Օսանն է յարըս.
Չիթ դայրավոր ախչիկը.
Անգին Աննան է յարըս,
Աղվան-Օսանն է յարըս.
Դեմքը ինձի վառե կը.
Անգին Աննան է յարըս,
Աղվան-Օսանն է յարըս:

Արևը կեռ ու կամար,
Ավտամաբիլ հանեի,
Յարիս մերը տանեի.
Ամպել է յարիս համար,
Ավտամաբիլ հանեի,
Յարիս մերը տանեի:
Լուս առա, էլա սարը,
Ավտամաբիլ հանեի,
Յարիս մերը տանեի.
Չըգտա ֆիդան յարըս,
Ավտամաբիլ հանեի,
Յարիս մերը տանեի:
Յար ջան, հեռու մի՛գնա.
Ավտամաբիլ հանեի,
Յարիս մերը տանեի.
Աշխարը մեզ չի մնա,
Ավտամաբիլ հանեի,
Յարիս մերը տանեի:
Սարեն-ձորեն ձեն քուքա.
Ավտամաբիլ հանեի.
Յարիս մերը տանեի:
Յարըս մոլոր ժուռ քուքա.
Ավտամաբիլ հանեի,
Յարիս մերը տանեի:

Արտի միչի ղամուշը.
Ես պուճուր, յարըս պառավ,
Էկան, ինձի զոռով տարան:
Շան տղի ձենն անուշ է.
Ես պուճուր, յարըս պառավ,
Էկան, ինձի զոռով տարան:
Չուխա-ճիպպա կարեցի.
Ես պուճուր, յարըս պառավ,
Էկան, ինձի զոռով տարան:
Կլապիտոն շարեցի.
Ես պուճուր, յարըս պառավ,
Էկան, ինձի զոռով տարան:
Պառավ յարըմ ճարեցի,
Ես պուճուր, յարըս պառավ,
Էկան, ինձի զոռով տարան:

Կայնել ես ախպրին ակը,
Ղըզ դիլեյ, դիլեյ, դիլեյ,
Ջան դիլեյ, դիլեյ, դիլեյ.
Քաշես կը յարիտ ախը.
Ղըզ դիլեյ, դիլեյ, դիլեյ,
Ջան դիլեյ, դիլեյ, դիլեյ.
Յար ջան, սիրել եմ քեզի.
Ղըզ դիլեյ, դիլեյ, դիլեյ,
Ջան դիլեյ, դիլեյ, դիլեյ.
Չենք մոռանա մենք մեզի.
Ղըզ դիլեյ, դիլեյ, դիլեյ,
Ջան դիլեյ, դիլեյ, դիլեյ:
Գարնան գըլխըվա ջուրը.
Ընտելե դե՛ ջան, դե՛ ջան.
Խըմե կոֆե, տո՛ւր ինձ ֆինջան:
Իզուր քընաց քու սերը,
Ընտելե դե՛ ջան, դե՛ ջան.
Խըմե կոֆե, տո՛ւր ինձ ֆինջան:
Պատի տակը դալտա է,
Ընտելե դե՛ ջան, դե՛ ջան,
Խըմե կոֆե, տո՛ւր ինձ ֆինջան:
Էս ի՞նչ ղուռի սավտա է,
Ընտելե դե՛ ջան, դե՛ ջան,
Խըմե կոֆե, տո՛ւր ինձ ֆինջան:
Պաղ ախպուր բաղի մեչը,
Ընտելե դե՛ ջան, դե՛ ջան,
Խըմե կոֆե, տո՛ւր ինձ ֆինջան:
Սիրուն ախչիկ պարի մեչը,
Ընտելե դե՛ ջան, դե՛ ջան,
Խըմե կոֆե, տո՛ւր ինձ ֆինջան:
Յար ջան, իզըլմիշ էրա,
Ընտելե դե՛ ջան, դե՛ ջան,
Խըմե կոֆե, տո՛ւր ինձ ֆինջան:
Ղայդեդ դիզըլմիշ էրա,
Ընտելե դե՛ ջան, դե՛ ջան,
Խըմե կոֆե, տո՛ւր ինձ ֆինջան:
Մեր գործը դավի մեչ է,
Ընտելե դե՛ ջան, դե՛ ջան,
Խըմե կոֆե, տո՛ւր ինձ ֆինջան:

Քորօղլին բանցըր սար է.
Հո՛փ, հո՛փ, յար, յա՛ր ու յաման,
Ասա, դարտերըդ իմանամ:
Տղա, խանչալըդ սուր է,
Հո՛փ, հո՛փ, յար, յա՛ր ու յաման,
Ասա, ցավերըդ իմանամ:
Ղուռիչայի ալ ջուրը,
Հո՛փ, հո՛փ, յար, յա՛ր ու յաման,
Ասա, ցավերըդ իմանամ:
Քորօղլուն ձին կապած է,
Հո՛փ, հո՛փ, յար, յա՛ր ու յաման,
Ասա, ցավերըդ իմանամ:
Տակը ժընջըլի քար է,
Հո՛փ, հո՛փ, յար, յա՛ր ու յաման:
Ասա, դարտերըդ իմանամ:
Օսկի այարով թամքած է,
Հո՛փ, հո՛փ, յար, յա՛ր ու յաման:
Ասա, ցավերըդ իմանամ:
Քորօղլուն քաչերը կայնած են,
Հո՛փ, հո՛փ, յար, յա՛ր ու յաման:
Ասա, ցավերըդ իմանամ:

Մեր կալը էրես-էրես,
Քելե, քելե, Էխսո ջան.
Տընկոզ քելե, Էխսո ջան:
Բազիրգան Ասված սիրե,
Քելե, քելե, Էխսո ջան,
Տընկոզ քելե, Էխսո ջան:
Ուր օր էրթաս հետըդ եմ,
Քելե-քելե, Էխսո ջան,
Տընկոզ քելե, Էխսո ջան:
Ալմաս խընձոր ջեբըդ եմ,
Քելե, քելե, Էխսո ջան,
Տընկոզ քելե, Էխսո ջան:
Թև ու թռիչկ քովըդ եմ,
Քելե-քելե, Էխսո ջան,
Տընկոզ քելե, Էխսո ջան:

Աբուլու սարին արեն,
Դիլեյ, դիլեյ յարըս,
Պեռվի դիլեյ թել ստացավ յարըս:
Չի լավնա սրտիս յարեն,
Դիլեյ, դիլեյ յարըս,
Պեռվի դիլեյ թել ստացավ յարըս:
Աբուլու տեղը փոս է,
Դիլեյ, դիլեյ յարըս,
Պեռվի դիլեյ թել ստացավ յարըս:
Ինչ օր խելառ կա հոս է,
Դիլեյ, դիլեյ յարըս,
Պեռվի դիլեյ թել ստացավ յարըս:
Գենա լավ են աբուլցիք,
Դիլեյ, դիլեյ յարըս,
Պեռվի դիլեյ թել ստացավ յարըս:
Անմեռոն են կարտիկամցիք,
Դիլեյ, դիլեյ յարըս,
Պեռվի դիլեյ թել ստացավ յարըս:

Բաղա կիրտըմ պար իչուն,
Հոփըլա բըլբուլ բաղընդա,
Նախանձ մարթը չը խնդա:
Կիրտըմ շիրին յար իչուն,
Հոփըլա բըլբուլ բաղընդա,
Նախանձ մարթը չը խնդա:
Ախպերըմ ունի ավճի է,
Հոփըլա բըլբուլ բաղընդա,
Նախանձ մարթը չը խնդա:
Մեշկը բարակ չամչի է,
Հոփըլա բըլբուլ բաղընդա,
Նախանձ մարթը չը խնդա:
Իրմովը թալանճի է,
Հոփըլա բըլբուլ բաղընդա,
Նախանձ մարթը չը խնդա:
Գդալը էղին մեչ է,
Հոփըլա բըլբուլ բաղընդա,
Նախանձ մարթը չը խնդա:
Յարըս գեղին մեչ է,
Հոփըլա բըլբուլ բաղընդա,
Նախանձ մարթը չը խնդա
Տղա հերիք է կայնիս,
Հոփպօղլու գըղը (գյադա),
Քոփպօղլու գըղը:
Նայվածքըդ ինձ կը վառե.
Հոփպօղլու գըղը,
Քոփպօղլու գըղը:
Սիրել եմ, քեզ կառնեմ,
Հոփպօղլու գըղը,
Քոփպօղլու գըղը:
Ինձ մտյան մի էնե,
Հոփպօղլու գըղը,
Քոփպօղլու գըղը:

Ախչի, անունըդ Աննա,
Սոնե կողպեքի մարալ,
Լցին վագոնը, տարան:
Քեզ ով կասեր, թե վատ է,
Սոնե կողպեքի մարալ,
Լցին վագոնը, տարան:
Ախչի, դու էդ ի՞նչ ասիր,
Սոնե կողպեքի մարալ,
Լցին վագոնը, տարան:
Խելքիդ դարտիցը վառար,
Սոնե կողպեքի մարալ,
Լցին վագոնը, տարան:
Ախչիկներուն մազերը,
Սոնե կողպեքի մարալ,
Լցին վագոնը, տարան:
Դուր քուքա քեզ նազերը,
Սոնե կողպեքի մարալ,
Լցին վագոնը, տարան:

Էրկան գոմերը ավլեցի.
Արի վարթը, բացվի վարթը կիրակի,
Սարեր շոք է, ես չեմ գընա կրակի:
Ալ ձին մեչը նալեցի.
Արի վարթը, բացվի վարթը կիրակի,
Սարեր շոք է, ես չեմ գընա կրակի:
Ալ ձին նալը ի՞նչ կանե.
Արի վարթը, բացվի վարթը կիրակի,
Սարերը շոք է, ես չեմ գընա կրակի:
Ոնքը խալին ի՞նչ կանե.
Արի վարթը, բացվի վարթը կիրակի,
Սարերը շոք է, ես չեմ գընա կրակի:
Քեզ պես մարալ յար ունեցող.
Արի վարթը, բացվի վարթը կիրակի,
Սարերը շոք է, ես չեմ գընա կրակի:
Դելվաթ մալը ի՞նչ կանե.
Արի վարթը, բացվի վարթը կիրակի,
Սարերը շոք է, ես չեմ գընա կրակի:

Մեր մեծ արտը գարի է,
Ավլեմ, թափեմ փոշին,
Բոլշևիկի գնդակը մենշևիկի դոշին,
Նիշանվելու տարի է:
Կանաչ արտը հաց տարա,
Յարիս տեսսա, հետ դառա,
Բոլշևիկի գնդակը մենշևիկի դոշին,
Նիշանվելու տարի է:
Մեր չիչակը նարընջի,
Մանչերն էղան զարընճի,
Բոլշևիկի գնդակը մենշևիկի դոշին,
Նիշանվելու տարի է:
Իմ չիչակը քաղած է,
Թմբի տակը թաղած է,
Բոլշևիկի գնդակը մենշևիկի դոշին,
Նիշանվելու տարի է:
Էտ սարը բանցըր սար է,
Տակը ղընչըֆիլ քար է,
Բոլշևիկի գնդակը մենշևիկի դոշին,
Նիշանվելու տարի է:
Կանաչ արտը հասսել է,
Մեր ծառները ծաղկել են,
Բոլշևիկի գնդակը մենշևիկի դոշին,
Նիշանվելու տարի է:
Սարեն էկավ լամպը վառ,
Ջինսը հարցու, ախչիկն ա՛ռ,
Բոլշևիկի գնդակը մենշևիկի դոշին,
Նիշանվելու տարի է:
Սև ախչիկ, սիրուն տղա,
Թող բռնեն իրար յախա,
Բոլշևիկի գնդակը մենշևիկի դոշին,
Նիշանվելու տարի է:

Այսօր օրը կիրակի,
Դիլիմ-դիլիմ, մեռնեմ էն օրերին,
Եղբայրս էկավ բալթոնը թեերին:
Բալկոնի վերի դաշը, դիլամ-դիլամ,
Մեռնիմ էն օրերին, դիլամ-դիլամ,
Եղբայրս էկավ բալթոնը թեերին,
դիլամ-դիլամ:
Թափ տամ ու ծառին փռեմ,
Ծալեմ ու ծոցըս թընեմ,
Պաքնեմ ու յարիս ղրկեմ:
Ալ ու կանաչ քեսացու,
Ճրագ թընեմ, լուսացու,
Ես քու նանին փեսացու:

Կաքավ թռավ, արտս մնաց հերկելու,
Չուխես ղըրկի Գյումրի քաղաք՝
ներկելու:
Կաքավ թռավ, արտս մնաց հերկելու,
Քունըս տարավ, յարըս մնաց գրկելու:
Բուբբուն էկավ, յարըս մնաց հերկելու,
Քունըս տարավ, յարըս մնաց գրկելու:
Լամպը սրփեցի, շիշան կոտրեցի,
անուշ ջան,
Շատ լավ արեցի, քեզի խափեցի,
անուշ ջան:
Ալ գոտի, կանաչ գոտի, գոտու պես,
Էլա էրթիք, վեր-վեր ընկա լոթու պես:
Լուսնիակը նորել է,
Համոս կոշկով կորել է:
Լուսնիակը նորել է,
Յարըս տնեն կորել է:
Եվա, Եվա, աչքերըդ սև ա,
Դոշըդ բաց արա, սարին դեմ արա:
Մոսես մարքարեն սանդր կը չալեր,
Մեկ կնիկ ուներ, թոփալ կը քալեր:

Խաղիկներ

Ծառըմ ունիմ տըպլըղի,
Պտուղները՝ օցի լեղի.
Իմ հորս ու մորս ի՞նչ ըսեմ,
Ինձի տվին դարիք տղի:

Գետը քընացի լըվասկ,
Սապոնս էր օսկեջրած.
Հերս ու մերս ի՞նչ էնեն,
Ճակտիս էս էր գրած:

Ծառի տակը կեցել եմ,
Լաչակըս լվացել եմ.
Խապար տարեք իմ մորը,
Ես դարտի տիրացել եմ:

Օչխարը էրի բակը,
Դեմ թըրի թաքըռ ակը.
Ով որ առնե իմ սիրած,
Չվայլե նազլու թագը:

Նըստել ես դոշակին,
Ուշկըդ-միտքըդ փեշակին.
Խմել ես նռան գինին,
Հոտ կանես մանուշակին:

Կանցնիմ գետի էն կուռը,
Քաղեմ կը դաստով նուռը.
Ով իմ սիրածն ինձ չի տա,
Քաշեմ կը խանին դուռը:

Մանի ըսեմ ու շարեմ,
Տոռպակը լըլեմ ու կարեմ.
Քաղքոց-քաղաք ժուռ ածեմ,
Սրտիս ուզածը ճարեմ:

Ընկա ջուրը, քընացի,
Խեխտըվա ու մնացի.
Թև չունեի, թռնեի,
Յար չունեի, բռնեի:

Տարիվար ջուր է գնում,
Հարցրեք՝ ո՞ւր է գնում.
Քենին մահանա է էրե,
Իր յարին հյուր է գնում:

Սարերը ուշ է, մուշ է,
Իմ յարը բանգլի դուշ է.
Սիրով սիրել, առել եմ,
Մեղրից-շաքրից անուշ է:

Կայնել ես ախա-պախա,
Լաչակիդ տուտը կախ ա.
Սև ախչիկ, սիպտակ տղա,
Բռնել են իրար յախա:

Յար, ծառավ եմ, ջուր չկա,
Իմ դարտիս չարա չկա.
Գեշ տներ լավ մանչեր կան,
Առնելու չարա չկա:

Ախչիկ-ախչիկ հալ ախչիկ,
Թըշներդ խալ-խալ ախչիկ.
Դու մեր տունը հարս քայիր,
Քույրս քեզ տալ՝ ախչիկ:

Կայնել ես, կանչելա չես,
Բոյեդ ամընչելա չես.
Կայնել ես, կաթ կըլմանիս,
Բացվել ես, վարթ կըլմանիս:

Էրկան արտը գարի է,
Նշանվելու տարի է.
Էրկան ու կարճ արտերը,
Չիմացա յարիս դարտերը:

Էրկընքեն մատնիմ իչավ,
Մատիս վրեն խաչվեցավ.
Ես իմ յարըս քամ գիտեի,
Ջավահիր քար բացվեցավ:

Վերևուց մատնիմ ընկավ,
Մատիս վրա բացվեցավ.
Ես իմ յարիս քամ գիտեմ,
Ջաֆայիլ քար բացվեցավ:

Վերևուց հավքըմ անցավ,
Տանը մեչ խելքըս անցավ.
Էրկուսիս խոսքը մեկ էր,
Օրթաներես մարթ անցավ:

Յարըս մեր դռնեն անցավ,
Սիրտս բացվավ, վարթ դառցավ.
Յարըս ինձի հետ խոսավ,
Թշնամու կյանքը մաշավ:

Յարո ջան, անունըդ Աննա,
Յարո ջան, յար.
Կայնել ես դու անլվա,
Յարո ջան, յար:

Յարո ջան, խասյաթըդ փոխե,
Յարո ջան, յար.
Յարըդ տնեն կը կորի,
Յարո ջան, յար:

Ամպել է ամպի տակը,
Ծունկըս էր ծընկիդ տակը.
Ես քեզի վե՞րտեղ սիրեցի,
Ծիրանի ծառի տակը:

Ա՛յ տղա, հերիս-մերիս,
Ո՞ւր էկար կեսգիշերիս.
Իմ ծոցում տեղ չկա,
Գլոխըդ դիր կռներիս:

Ախչի, ի՞նչ էր դիլագըդ,
Օղկուն, կոճկուն բիլագըդ,
Մի՛ բանար ճերմակ գյոքսըդ,
Ինձի վառեց կըրակդ:

Ծառին տակը տալդա է,
Քանի կայնիս՝ ֆայդա է.
Մի՛ք մեխդրրե, դրրկրցներ,
Էս էլ սեր ու սավդա է:

Ախպեր, բաղըդ անուշ է,
Բաղիդ մեյվան անուշ է.
Ախպեր, խաթրըդ չըմնա,
Իմ յարը քեզնեն անուշ է:

Ամպել է փարա-փարա,
Ես իմ ուզածը չառա.
Աստված, դիվանիդ մեռնիմ,
Յա էլիմ տու, յա չարա:

Ջուրն ընկա ու գնացի,
Խեխտըվա ու մնացի,
Իմ մեծին անգաճ չէրի,
Առանց Մուրազ մնացի:

Լուսնիակը նորել ա,
Յարիս եզը կորել ա.
Չեն տվի, ձենը չառավ,
Ինձեն վայ թե ճորել ա:

Տոտիկ-տոտիկն է յարը,
Հաստատ մոտիկն է յարը.
Վերի մայլեն է յարը,
Տոտիկ-տոտիկն է յարը:

Յար ծարավ եմ, ջուր չկա,
Սեր ու սավդի հույս չկա.
Գեշ տներ լավ մանչեր կա,
Առնելու չարա չկա:

Յար, ծարավ եմ, ջուր չկա,
Գետերուն կարմունջ չկա.
Գեշ տներ լավ մանչեր կա,
Առնելու չարա չկա:

Այսօր օրը նորել է,
Վե՛ր, բլուզըդ կարեմ.
Վեր, բլուզըդ կարեմ,
Յար, յար, յար, յար:

Էլա գնացի սար սնձի,
Ոտքս առավ էլ գընձի.
Մկո, քու մորուք խանձի,
Հայկոն չըտվիր ինձի:

Բարակ ճամփան մտել ես,
կորուցածըդ գտել ես,
Նոր սիրածդ չըվայլես,
Ինձի մըտքեդ ցըկել ես:

Ա՜յ տղա, բակովն արի,
Ոտներդ շաղովն արի.
Մեր դուռը դալմաղալ է,
Մորքուրիս թաղովն արի:

Ջուր եմ թողե ջաղչըներ
Ասված տանի ախչըկներ.
Ջուր եմ թողե աղեստան,
Ասված տանի գյաղեստան.
Ջուր եմ թողե առվըներ,
Գրողը տանի պառվըներ:

Սարեն ջուր է գալիս,
Խմելիս դուր է գալիս
Հարցնեք՝ ո՞ւր է գալիս,
Առանց յար քուն չի գալիս:

Լուսնյակ, ցածանց քընը,
Խորկըցի, բարցըրանց քընը.
Հեռու տեղ յարըմ ունիմ,
Բարև տու, անցի՜ քընը:

Լուսնյակ, ցածանց քընը,
Շաղ տուր ու ցածանց քընը.
Հեռու տեղ յար ունիմ,
Բարև տու, անցի քընը:

Կանչե, կռունկ, կանչե,
Տակըդ չիման է,
Աշխար արեքակ է,
Ինձի դուման է.
Կանչե, կռունկ, կանչե,
Հալըս յաման է:

Դու կերթաս, ուղուր ըլլի,
Սև ծովը ճամփադ ըլլի.
Ինձեն սավա թե յար սիրես,
Ջուխտ աչքերդդ քոռ ըլլի:

Բիլբիլն ըսաց՝ իրեք ամիս գարուն է,
Սիրտըս խոց էր, մեչը լիքը արուն է.
Հա՛նի գյուլ-գյուլ, հա՛նի բյուլ-բյուլ,
Իստար աղլար, իստար գյուլ:

Իմ ախպոր ձին փախել է,
Ընկել է Սարմա սարեր.
Կերել է ծառի պես խոտեր,
Խմել է պաղպաղ ջրեր:

Էրթամ ըՍտամբոլ,
Դատիմ՝ փարան բոլ.
Իմ յարի համար
Առնեմ ջուխտըմ սոլ.
Արի, յար, արի,
Խռով մի մնա:

Դանակ-դանակ կանչեցեք,
Փատե դանկով մորթեցեք,
Խշխշիկով էփեցեք,
Տարեք սարը թաղեցեք:

Ըսօր օրը ուրփաթ է,
Հաքածս աթլաս ու խաս է.
Էրկինք-գետինք կշռեցինք,
Մե գրվանքեմ պակաս է:

Ֆռանգների վերի օդան,
Մընկները կը որոտան.
Հարս ու թաքվոր
Իրար կուտան,
Եսա գիտեմ՝
Ինձի կուտան:

Հավի տոտիկ,
Բաղի տոտիկ,
Հալվաբարը
Մեզի մոտիկ,
Տոտի՜կ, տոտիկ:

Օյան է, դուրան է,
Կորխա ճամփան
Վրան է,
Հասսի Տրթատ,
Սըրան է:

Ցախավելը փափուկ է,
Ախչիկ մանչուն խափուկ է:
Չայիրները լաքած է,
Ախչիկ, քո թուշ պաքած է:

Բուխար փափախ դրել ես,
Գենա ճիտդ ծռել ես:
Գուրպընուդ ճիտը սև է,
Քեզի ուզողը վե՞վ է:

Գուլպընուդ ճիտը ալ է,
Քեզի ուզողը լալ է:
Փոխենք էս պարի դայդեն,
Ջայնենք դուխովնու դայդեն:

Կանաչ խալին մի կոխե,
Սիրած յարըդ մի փոխե:
Ախպերըմ ունիմ ավճի է,
Ում հետ ասես կը վիճե:

Դունա գիտես ախչիկ ես,
Էրկու խանա խաղ չիտես.
Ատտեղ կայնիլը բան չէ,
Արի, խաղմա դու կանչե:

Վերեն էկավ ջուխտըմ ղոչ,
Մեկը ֆիղայ, մեկը՝ ոչ.
Աստված, դարգայիդ մեռնիմ,
Մեկին կուտաս, մեկին՝ ոչ:

Մանի-մանի մանեցի,
Տոպրակ դրի շարեցի,
Քաղքե քաղաք ճամփեցի,
Սրտիս ուզածը ճարեցի:

Նազ մի՛անե, նազ մի՛անե, ջա՛ն տղա,
Քանքիլովըդ թոզ մի՛հանե, ա՛յ տղա:
. . . . . .
Ուր որ գնաս, առնելու եմ, շա՛ն տղա:

Ամպել էր ավուր-մավուր,
Սաղմոսքը ծոցիդ սովոր.
Սաղմոսքը գիլ կը տաներ,
Լիզուդ բիլբիլ կը տաներ:

Կայնել ես, կանչելու չես,
Բոյեդ ամընչելու չես.
Կայնել ես, կաք կըլմանիս,
Բացվել ես, վարթ կըլմանիս:

Կաքավ կայնավ կարմընջին,
Մանգիշ օղերն անգընճին.
Խապար տարեք զոնքընչին,
Ախչիկն առավ Մուկուչին:

Էրթիքը բուն եմ շինե,
Տղաներին շուն եմ շինե.
Օ՜շ, օ՜շ կանչեմ, չեն գալիս,
Լափի թարկը չեն տալիս:

Յար կայնել ես կարմընջին,
Փաթըթվել ես յափընջին,
Խապար տվեք զոնքընչին,
Մեռնի էտպես կտրիճին:

Կայնել ես, կաք կըլմանիս,
Բացվել ես, վարթ կըլմանիս.
Հայլին առ, էրեսըդ աշե,
Աշխարի զարթ կըլմանիս:

Բաղի մեչը բաղպանչի,
Անուշ-անուշ խաղ կանչի.
Թևերուդ թևիկ գործեմ,
Նոր գալած բեխիդ մեռնեմ:

Մեր մեծ արտը բոքի էր,
Սևը շեկին հոքի էր.
Կլապիտոն, ապրեշում,
Ֆլորրս ուտեր տապկած շուն:

Կայնել ես պատա տակը,
Ցոլա կը մատնուդ ակը.
Կայնել ես, կանչելա չես,
Բոյիցըդ ամընչելա չես:

Սարը սինձը ի՞նչ կենե,
Կաքը բրինձն ի՞նչ կենե,
Յարը յարին կը սիրե,
Խոսքը-զրույցն ի՞նչ կենե:

Մանի ըսեմ ու շարեմ,
Տոպրակ լըցեմ ու կարեմ.
Քաղքոց-քաղաք ժուռ քամ,
Սրտիս ուզածը ճարեմ:

Էրկու խանա խաղ չիտես,
Յափրաղ ու կեսն ալ չիտես.
Քընա քոփօղլու գյադա,
Ժամեն մոմ գողնալ չիտես:

Ես ախչիկ եմ, ալ գուզեմ,
Բոխչաս ծալեծալ գուզեմ.
Եփ օր էրթամ կերսանցըս,
Գոտիս թիրմալի գուզեմ:

Ջուր եմ թողե աղեքը,
Աստված պայե գյադեքը.
Ջուրը լցվավ ջաղչընին,
Աստված պայե ախչընկնին:

Լուսնի լուսը ես եմ,
Մեծ ծովի ձուկը ես եմ.
Գիշերվա փախչող ախչիկ,
Ծոցըդ պառկողը ես եմ:

Էլա սարը ես սընձի,
Ոտքըս դիպավ մեկ գընձի.
Ա՛յ մարթ, լեզուդ պապանձի,
Ախչիկըդ չըտվիր ինձի:

Անդր վերի տանձերը,
Հուպուպ կուտան մանչերը.
Քանի օր ախչիկ կը տեսնին,
Ծուռ կը թընեն ֆասերը:

Էրկան արտը գարի է,
Նշանվելու տարի է.
Էրկան ու կարճ արտերը,
Չիմացա յարիս դարտերը:

Կաքավ եմ քարա մեչը,
Խոսում եմ ձորա մեչը.
Աստված, իմ մուրադը տու
Էկող շաբթըվա մեչը:

Ալագազը տուն ունիմ,
Մեչը օսկե սուն ունիմ.
Քաշվե քոփօղլու գյադա,
Քեզ պես հազար շուն ունիմ:

Ամպել է ամպի նման,
Շաքարը ղանդի նման.
Ամպել է թոն չի գալիս,
Մթնել է, տուն չի գալիս:

Քաբաբչի եմ, շիշ չունեմ,
Ծերացել եմ, սեր չունեմ.
Էս աշխարում քեֆ կանեմ,
Էն աշխարում գործ չունեմ:

Կայնել ես բաղի միչին,
Ոտքերըդ շաղի միչին.
Կանչե յար, ձենիդ մեռնիմ,
Ես էլ քու խաղի միչին:

Սարի էտնը ղուտտիկ,
Բոյիդ մեռնիմ, Արութիկ.
Յար Սոնա, Յար Սոնա,
Ե՞փ պիտի լուսանա:

Սարի էտնը պուտ-պուտ,
Մանչերուն կանչեմ կուտ-կուտ.
Յար Սոնա, յար Սոնա,
Ե՞փ պիտի լուսանա:

Էրևան ման քուքանք,
Յոնջեքը յան քուքանք.
Քընացի օր յար չկա,
Ճորել եմ, տուն էկանք:

Էրևանուց դուս էկա,
Թիվլիզ քաղաքը մտա.
Քուչա-քուչա ման էկա,
Սիրած յարիս չըգտա:

Ջաղչիս դուռը տաշած էր,
Յայլըղիս գիլ քաշած էր.
Ջաղացըս մանի-մանի,
Անուշ քունըս կը տանի:

Հավոլենց կալը կլոր պար,
Ջա՜ն գյուլում, ջա՜ն, ջա՜ն,
Արաքը մեչը ֆըռֆըռար,
Ջա՜ն ծաղիկ, ջա՜ն, ջա՜ն:

Ջուր եմ թողե առվըներ,
Աստված, վերու պառվըներ.
Ջուր եմ թողե ջաղչըներ,
Աստված պայե ախչըկներ:

Ջուրը լլցվավ առվընին,
Գրողը տանի պառվընուն.
Ջուրը լցվավ փառչերը,
Շուտով տանին մանչերը:

Էլա սարը ես սընձի,
Ոտքըս կպավ մեկ գընձի.
Արո՛ւթ, միրուքդ խանձի,
Վարթը չըտվիր ինձի:

Ութը ծառ ունիմ թթի,
Ութը կով ունիմ կըթի.
Վեվ օր ինձի բամբասի,
Հոքին դժոխքը փըթի:

Մանիներ

(Ծալկահայոց բանաստեղծը)

Մանի ընելու էկա,
Սերուսկ ուտելու էկա,
Իմ դարդը սերուսկը չէ,
Յարիս տեսնելու էկա:

Այսօր բազար է, արի,
Հախըդ հազար է, արի,
Ճամփադ աշելով արի,
Չուչուստ քալելով արի:

Աս տներ, ծեփած տներ,
Մեջը կա օսկի սներ,
Սուն ու գերան պար պիտեր,
Սրտով սիրած յար պիտեր:

Էլա սարը, իջա կալը,
Անտեր տղի դիշ էղա,
Աշխեն, չիտեի՝ սիրտդ նեղ է,
Պաղ աղբրնուն ջուրը դեղ է:

Վերեն էկան սելերը,
Կտրավ չուլքուս թելերը,
Կամաց քշե, այ տղա,
Կապեմ չուլքուս թելերը:

Կռունկն իջավ կալերը,
Կտրավ չուլքուս թելերը,
Կռունկ, հոպ տուր ու թռի,
Ղանդընիդ թափ տուր ու թռի:

Մանի ըսի, շարեցի,
Տոպրակը լցի, կարեցի,
Քաղքե-քաղաք շուռ տվի,
Սիրած յարիս տուն բերի:

Մանի, մանի մի բերան,
Սելը տանի ջուխտ գերան,
Գեշը սիրունի ծոցում,
Հայ վախ ու հարյուր բերան:

Քարը տաշեցի, բոլորեցի,
Յարիս տեսա, մոլորեցի,
Անտեր մնա ան վախտը,
Օր ես անտեղ սիրեցի:

Թավան թնեմ ձու խաշեմ,
Նստիմ էրեսիդ աշեմ,
Տեսնիմ յարս քուքա,
Հասնիմ թուշը պագնեմ:

Ախպար, ամագիդ մեռնիմ,
Շեկ կոթ դանակիդ մեռնիմ,
Ախպարս էկավ կալասկով,
Ձեռքը պագի հավասով:

Գիշերը լուսըմ տեսա,
Յարիս տունը տեսա,
Ուզեցա հետը խոսել,
Դիշմնիս հետը տեսա:

Ղարսա բերդը բլել է,
Յարս մեչը քնել է,
Ձեն կուտամ, ձեն չի հանե,
Մըկըր ինքը ջորել է:

Թավան ծակ է, եղ չկա,
Փեսան էկավ, տեղ չկա,
Փեսին շատ էրես միք տա,
Փեսին էյթիպար չկա:

Կանաչ արտի քյանարը,
Թիֆլիս վառավ ֆանարը,
Կանաչ արտը մի կոխե,
Սիրած յարդ մի փոխե:

Ես մե քունքուլի դոխ եմ,
Կանաչ բոստընի սոխ եմ,
Ըռնտիկ խալին կկոխեմ,
Յար ջան, ոտիդ հողն եմ:

Արտը ցորեն ցանեցի,
Դարդըս հետը թաղեցի,
Հազար ու մեկ աղոթքներ
Ցանած վախտը շարեցի:

Ա՛յ աղչի, ցածեն աշե,
Քեզնեն շատ լավերը կան,
Լիզուդ քիչըմ քեզի քաշե,
Օր քեզի ուզողներ գան:

Աղջիկը տնեն փախել է,
Հորը ամոթվոր էրել է,
Հարը շան պես կատղել է,
Կոպալն առել ծեծել է:

Ախպար, նամակիդ մեռնիմ,
Ճեպիդ դանակին մեռնիմ.
Իմացել եմ՝ յար ես ճարել,
Ճարած յարիդ մեռնիմ:

Ճերմկավ գետինը ձնեն,
Աղջի, դուրս արի տնեն
Ջեռքովդ յարա սրտիս.
Յա՛դեղ էրե, յա՛ջուր լից:

Տանըս տկեն ջուր կըբխա,
Վառած սիրտս չի հովանա,
Յար, քու տված վերքերը
Շատըցուցին իմ դարդերը:

Ախջի անունդ Թաքուն
Դրել ես հորդ սաքուն,
Ինչ մե ֆիդան բոյմ ունիս,
Երանի յարիդ հոգուն:

Ճպռոտ տղուն քուրքին աշե,
Դառնա, դառնա ինձի կաշե,
Ինձմեն քեզի օգուտ չկա,
Քնե, գլխուտ չարան քաշե:

Պապս ունիր մի մեծ էշ,
Համ քոսոտ էր, համ էլ գեշ,
Բիրտըն կորավ մեր էշը,
Ափսոս վրայի վեշը:

Ախջի՝ հագիդ դեղին-մեղին,
Ով օր տեսնի պատռի լեղին,
Վեվ սիրածս ինձի չտա,
Ջօր ու գիշեր սիրուց նեղվի:

Աղբարմ ունիմ ավճի է,
Մեջքը բարակ դամչի է,
Նախշուն գուլպա հագել է,
Ազապ աղջիկ պագել է:

Ծարավ եմ, ջուր բերեք,
Սարերեն ձուն բերեք,
Սիրուց հալումաշ կըլլիմ,
Գերեզմանի փայ կըլլիմ:

Տալոն բերեց գութնի հացը,
Համոյին սիրտը մաշի,
Այսօր գութանը մերն է,
Գութան բռնողը իմ հերն է:

Կայնել ես Սարի ճոթին.
Քայլում ես կանաչ խոտին,
Քու անուշ, խորոտիկ բոյին,
Կարոտեմ քու համ ու հոտին:

Ծնած օրից միշտ էս է.
Մեկը ինձի դավել է,
Հալողը գիտի դարդ չունիմ,
Դարդը ինձի տարել է:

Աստղերուն լսին մեռնիմ,
Իմ յարի բոյին մեռնիմ,
Մե տարի է չեմ տեսսե,
Ես ինոր հոգուն մեռնիմ:

Տանս պատը բլել է,
Յարս մեջը քնել է,
Ջեն կուտամ, ձեն չի առնե,
Վախենամ ինձմեն ջորել է:

Աշխըրքին մալը ի՞նչ կենեմ,
Արի քեզ սարը հանեմ,
Ագյար թերս բերզավ,
Գլխուս վրա կհանեմ:

Ալ աղջիկը հաց կտանի,
Բերանը բաց կտանի,
Մեմ քալեկը, մեմ կկայնի,
Խելքս ու միտքս կտանի:

Ջաղասկը ման եմ էկե,
Սիրել եմ, ջան եմ տվե,
Օխտը տարվա մեջ
Ուխտ ու պայման եմ էրե:

Սարեն էկավ օշխարը,
Աս ի՞նչ էղավ աշխարը,
Աս ի՛նչ էղավ աշխարը,
Սրտիս չոքավ խավարը:

Նշի ծառին նուշ կըլլի.
Վարդի ծառին փուշ կըլլի,
Էրնեկ ան աղջըկանը,
Սիրած յարին դիշ կըլլի:

Քեզի վեվ ըսավ ձեն ցկես,
Աշխարքով մեմ էնես,
Ես քու ըսած վարդդ չեմ,
Օր հոտ քաշես, նան նետես:

Թավան հավկիթ դնեմ խաշեմ,
Էլլին էրթոցեն բոլորս աշեմ,
Տեսնիմ յարս խնդլման քուգա,
Վարդեր շարեմ սիրուն դեշին:

Սարերը ման գուքամ,
Յամջնին յան գուքամ,
Ըսան թե՝ յարդ էկավ,
խնդլման դեմ գուքամ:

Սարին տակը տուն ունիմ,
Մեջը օսկի սուն ունիմ,
Գընա, կորի, ա՛յ տղա,
Քեզ պես հազար շուն ունիմ:

Աղջի անունդ ասա,
Ֆասիդ փիսկիլը խաս է,
Գնա մորդ ըսե,
Թող ինձի էնե փեսա:

Աքոշկեցեն աշեցի,
Ալ փուշիս մաշեցի,
Վառա, ամա՜ն, վառա,
Ուզածիս չառա:

Սարը ձունը կոխել է,
Լորը բունը փոխել է,
Սարեր, ձորեր արոտ է,
Տերտեր, էլ քու օրը չէ:

Սարերը անձոտել է
Օշխարը բրդոտել է,
Ծո մա՛նչ, քու մարդ մեռնի,
Հալավդ աղտոտել է:

Փողս ցըկի բանկան,
Ըսի՝ թեզ լծե սանքան,
Լավ մարդիկս յան քան,
Թիֆլիս քաղաքը ման քան:

Վերեն հավքմ անցավ,
Սինիս խնձորով լցվավ,
Հալղին յարը տուն դարձավ,
Իմ յարը քյանրեն անցավ:

Խնձորը կարմիր է,
Ջուրը պղտոր է,
Աղջկնուն խասը
Ինձի համար է:

Մարին տակը էլ ունիմ,
Ռանգ-ռանգ թել ունիմ,
Ծո մա՛նչ, օշխարդ նան տար,
Ես քու վրադ սեր ունիմ:

Ղարանֆիլ եմ, դալ չունիմ,
Ես պճլիկ եմ, յար չունիմ,
Յարս դռնեն անցել էր,
Ջահել եմ, խաբար չունիմ:

Երկինքը կամար կապեց,
Սև մազերս ճերմըկավ,
Գեշ մարդու խոսքերը,
Քեզ ինձեն ջոկեց-ջորավ:

Ախպար, բախտդ անուշ էր,
Բախտիդ մեջ անուշ էր,
Ախպար, խաթրըդ չըմնա,
Յարս քեզնեն անուշ էր:

Սև ձին նալը ի՞նչ կենե,
Սիրունը խալն ի՞նչ կենե,
Ես ուզել եմ, ես կառնեմ,
Շելլոցը խոսքն ինչ կենեմ:

Կալին տակը տալդա է,
Քանի նստիս՝ ֆայդա է,
Ուզածը ուզածին չեն տա,
Էս ի՞նչ կանոն, ղայդա է:

Օղս ցկի փանջարան,
Հավկիթ լցի թանջարան,
Փեսաս էկավ՝ տեղ չկա,
Հավկիթ էփեմ՝ եղ չկա:

Սև փուշին ճիտս եմ ցկե,
Շեկ մանչը միտս եմ ցկե,
Երեք օր է չեմ տեսսե,
Կրակը սիրտս եմ ցկե:

Նախըրը զարկի դիզը,
Ջոկեցի դարագեզ եզը,
Ծո մանչ, մայրըմատ տու,
Առնեմ քյանքիլիդ թոզը:

Օշխարը էրա բակը,
Դեմ տվի սալին ակը,
Վեվ ուզածս ինձի չտա,
Չվայելե գլխուն թագը:

Վերևն Աստված շայաթ է,
Ես սիրել եմ, ես կառնեմ,
Բաղի չորս կողմը վարդ է,
Հերն ու մերը շատ դառն են:

Սև աղջկա մազին աշե,
Դառնա-դառնա էտտին կաշե,
Ինձմեն քեզի գիմըն չկա,
Քնե գլխուդ չարան քաշե:

Փերես կը նուռը,
Կայնիս կը դուռը,
Չես փերե նուռը,
Չես կայնի դուռը:

Ցունը էկել է, հալել է,
Լցվել գյոլը, սառել է,
Ադ էլօղլուն գեշ խոսքը,
Ինձի մոմի պես հալել է:

Օդին օջախը վառել է,
Մարնա ինձի տարել է,
Բոյ-բուսաթով աղջիկը,
Խելքս գլխես հանել է:

Թոն էրե, թոնջանք էրե,
Թոնին վրա ձուն էրե,
Յարս բոբիկ ջուրը գա,
Օտվին մսի, մերը գա:

Չբուխ ունիմ էրկնցնեմ,
Յարիս ճամփան սպասեմ,
Հեռու, մոտիկ հեչ չունիմ,
Ամեն օր վառիմ, թափիմ:

Գութանը հաց եմ տարե,
Բերանը բաց եմ տարե,
Էկան ըսին՝ յարդ էկավ,
Խելըռած տուն եմ էկե:

Բոյդ էրկան, բոյդ բարակ,
Քեզի տեսնողը կուտա էրնակ,
Վարդ թշերեդ լուս կկաթե.
Յա՛ խնայե, յա՛ սպանե:

Քեզի կաշեմ, խելքս կերթա,
Բոյեդ, բուսեդ վառա, թափա,
Դու կայնել ես յանա-յանա,
Քամին զայնե՝ դեշդ բանա:

Դու հագել ես դայրին խասը,
Թեզմ մաշես գլխուդ ֆասը,
Սիրուցդ վառիկը Անախասը,
Ջերդ դրել ես անգին քարը:

Հագել ես խաս ու ատլաս,
Ընկերներով դերի կերթաս,
Մեմետ կաշես, աչքով կենես,
Քիչ կմնա խելքե հանես:

Ընտիկ ես, փումփուշիկ ես,
Հերիք, աղջի, հոգիս հանես,
Խղճա ինձի՝ օտքդ պագնեմ,
Արի հոգիս հոգուդ խառնեմ:

Քամին քուգա Շավնաբաղեն,
Յարս կիջնի Էղոյի սարեն,
Գոքը լիքը ժախ ու քեղ է,
Սաբիտախչան հիվնդի տեղ է:

Սաքոն դուռը կայնել է,
Ճիտը տխուր ծռել է.
Աղջկանը ուզող չի քա,
Հերսը աղջըկմեն էլել է:

Ասքին յաշիկ,
Անքուն յաշիկ,
Սիրել եմ, կառնեմ,
Անունը՝ Աշիկ:

Ասքուն սար է,
Անքուն սար է,
Յարիս անունը
Սանասար է:

Տիրացուն աղբրին ակը
Վարդանին գուլպանուն ծակը,
Քոռանա Մեքոյին լուսը,
Թողել է Վարդանին դուսը:

Ալվարդի քերը ղրկե,
Աղջի, քու սերը ղրկե,
Հարդ ու մարդ չիմանան,
Մատնիդ մերը ղրկե:

Պառկել ես կակուղ հողին,
Մուրազս փորս թողին,
Կարմիր գիլլան դիպի
Էնողի կշտի կողին:

Ծառմ ունիմ թբխլի,
Պտուղն էր օձի լեղի,
Հորս ու մորս ի՞նչ ըսեմ,
Ինձի տվին դարիք տղի:

Ջուխտ գուքան սար կբանի,
Շեկ աղջիկնա հաց կտանի,
Մեմ քալե կը, մեմ կը կայնի,
Խելք ու հոգի կհանի:

Էլա գնացի սարը սնձի,
Ոտքս առավ մե գնձի,
Տեփան, բեղերդ խանձի,
Աղջիկդ չտվիր ինձի:

Անքուն քոստիկ,
Ասքուն քոստիկ,
Սիրել եմ, կառնեմ,
Անունը՝ Կոստիկ:

Սարերուն սինձը ի՞նչ է,
Կաքն ու բրինձը ի՞նչ է,
Յարն օր դյուրին սիրե,
Խոսքն ու խորաքան ի՞նչ է:

Սարին սինձը ի՞նչ կենեմ,
Կաթն ու բրինձը ի՞նչ կենեմ
Ես սիրել եմ, ես կառնեմ,
Խոսխորաթան ի՞նչ կենեմ:

Ընտիկ եմ՝ խալն ի՞նչ կենեմ,
Բոզ ձի եմ, նալն ի՞նչ կենեմ,
Սրտով սիրած յարս ըլլի,
Աշխրքին մալն ի՞նչ կենեմ:

Էլլիմ սարը ի՞նչ էնեմ,
Քարը գլխուս բարձ էնեմ,
Էրթող-քալողին հարցնեմ,
Թե հերսոտել է՝ դարձնեմ:

Կարմիր քուռիկը հեծել եմ,
Արազին ջրին մոտեցել եմ
Արազ ջան, ինձի ճամփա տուր,
Թմբլիկ յարին կարոտցել եմ:

Սարերը սնձոտել է,
Ոչխարը բրդոտել է,
Չոբան, քու մարդ մեռնի,
Շորերդ աղտոտել է:

Այ տղա, ղարաղաշ ես,
Բենջակդ բարով մաշես,
Ուր էրթաս, մեր դուռը աշես,
Կյանքդ ինձի հետ մաշես:

Հավքերուն մեջ լավ են
Կաքավն ու լորը,
Աղջկնուն մեջ լավ են
Կարճն ու կլորը:

Վարդ եմ քաղե մաղերով,
Վար եմ թրե շաղերով,
Իմ յարը բանցըրեն անցավ,
Ալ ձին տակը խաղալով:

Այ տներ, պզտի տներ,
Մեջը կա օսկի սներ,
Դռնեն անցա լամպը վառ,
Չիթ դայրավոր, ինձի առ:

Սարին ծաղիկները թազա,
Մեղրն ու շաքարը քեզի մազա,
Քեզի պես նազանի աղջիկը,
Ինձի պես տղին ի՞նչըղ սազա:

Վերեն հավքմ անցավ,
Խելքս գլխես թռավ,
Սարերը ման քուգամ,
Յարիս հետ ման քուգամ:

Ջաղչին դուռը փոս է
Քարը ցկեմ՝ խոսե,
Կանչե, կանչելուդ մեռնիմ,
Իմ մորս ազիզ փեսա:

Ամպել է ախա-բախա,
Շավարշի թուրը կախ է,
Շեկ աղջիկ, կարմիր տղա,
Թող բռնեն իրար յախա:

Սամավարը ցկի օդեն,
Չկշտացա յարիս հոտեն,
Սամավարի կողքը օսկի,
Ցիցքիթ յարս չեկավ խոսքի:

Թավան թնեմ հավկիթ խաշեմ,
Նստիմ էրեսին բոլմ աշեմ,
Տեսնիմ յարս քուքա,
Չոքիմ, չեքմեքը քաշեմ:

Թնդիրը վառավ, բոցկլտաց,
Էրթամ ուտեմ էրկու հաց.
Մարս էփե բանջարը,
Աշխար արժե իմ յարը:

Գեղին չորս դին սև հերկեր,
Չոբնին սև շունն է սատկել,
Չոբան կուլա, շուն չկա,
Չոբան գլխուն վայ կուտա:

Տեղ եմ ցկե սոթ քուգա,
Բարձ եմ դրե փոթ քուգա,
Մեռնիմ մեջը քնողին,
Անուշ խնկի հոտ քուգա:

Խելարին խոտ խաշեցեք,
Կուտե, կենա խաշեցեք,
Խելարին ի՞նչն է նշան,
Խելարն ինքն է փերուշան:

Ջաղչնուն էտի կուռը,
Հայկոյին տված նուռը,
Ինչ ըսեմ հորս ու մորս,
Աչքս թողեց այնի դուռը:

Ծիրանի ծառը ծռվել է,
Յարս բանակ գրվել է,
Յար ջան, բանակ մի՛գնա,
Սիրածդ տանը կմնա:

Ջիգյարդ սառն է, աղջիկ,
Խոսքերդ դառն է, աղջիկ,
Վայ թե մինչև ավարտեմ,
Քեզի ուրիշը առնե, աղջիկ:

Աստին տաշեղ,
Անթին տաշեղ,
Սիրել եմ կառնեմ,
Անունը Բարսեղ:

Աստին՝ բուլքի,
Անթին՝ բուլքի,
Քաղքցին քուքա,
Հագածն է չուլքի:

Ամպը էլավ փաթթեց սարը,
Վառեցիր իմ ջան-ջիգյարը,
Էլ չեմ դիմանա, կընկնեմ քարը,
Խիղճ ունեցի, խորոտ ախչիկ:

Էրթստանը ման քուգամ,
Յարիս խաբար ձեն կուտամ,
Յարս գնաց կալերը,
Պաչեմ յարիս խալերը:

Սերը սեր կբերե,
Սերը սեր կտանի,
Սերը գյոզալի սրտեն,
Սիրած տղան կտանի:

Վարդ աղջիկ, լուսե աղջիկ,
Քալեկը խունջիկ-մունջիկ,
Սև աչքերդ սև սալոր,
Ես՝ դշբախտ, դու՝ բախտավոր:

Վարին արտի ցորենն ես,
Սիրտս ու հոգիս հերիք մաշես,
Քո սիրուց ընկել եմ չոլերը,
Մի՛սպանիր իմ ջահել սերը:

Մեր դուռը լախանա,
Ձեր դուռը լախանա,
Էրկուսս իրար առնենք,
Թող ըսեն սալախանա:

Աղջի, նստե կար էրե,
Ինձի քեզի յար էրե,
Բաղին կշտեն արի,
Ձեռվիդ չարդախ էրե:

Ջաղչին ջուրը անցել եմ,
Բնաղոնը բերել եմ,
Աչքս ճամփադ բռնած,
Սիրուցդ քեֆովցել եմ:

Մե յարըմ ունիմ անուշ է,
Հալած արծաթե դուշ է,
Աղջկնուն մեջ տեսսա,
Ըսա՝ թառլան դուշ է:

Ծառը պատեն բանցր է,
Սիրուն յարնա քաղցր է,
Գնամ մորս հարցնեմ,
Ագյար չտա, փախցնեմ:

Արի էրթանք կալերը,
Կտրավ չուլքուս թելերը,
Հեռևանց քուքան սելերը,
Թափե քյանքիլիդ թոզերը:

Մարըս իմացավ, նեղեցավ,
Հորս հերսը շատ էլլավ,
Ինձի՝ քեզի չեն կամենա,
Յարա են դրե սրտիս վրա:

Էղոյին սարը էլլել եմ,
Թմբլիկ յարիս տեսսել եմ,
Թմբլիկ յար ջան, քեզի ղուրբան,
Արի մեր տուն, ջանե ջան:

Թեշիկ բռնե, թել մանե,
Ջուխտմ գուլպա գործե,
Հագնիմ էրթամ Վարդևոր,
Էրկուսս ըլլինք բախտավոր:

Նստել էի ծառին տակը,
Գրեիկը հիշատակը,
Հիշատակը չնչին էր,
Կարդացողը անգին էր:

Էրկինքը մութը կոխեց,
Գետինը շուքը կոխեց,
Էրա դե յարիս տեսնիմ,
Խայալ-խայալը կոխեց:

Սիրուն աղջիկ ալ վարդ ես,
Ձմեռ օրով դու զարդ ես,
Ըսե, աշեմ յարդ վեվ է,
Օր դու աղքան հպարտ ես:

Քանքիլդ սարքել ես,
Էլլել էրդիկը կայնել ես,
Հերիք աչքդ խաղցնես,
Ինձմեն օգուտ չկա քեզ:

Սարի լանջին պաղ աղբյուր,
Քովը էրկու քուռիկ ջուր,
Մեկը ես խմեմ, մեկը՝ դու,
Չմոռանանք մեկ-մեկու:

Անցա ջրին անթին,
Ժողվեցի մատղաշ ղմին,
Աչքս դիպավ երեսին,
Ուզածիս տվին ուրիշին:

Հըլը, հըլը իդոր աշե,
Կայնի, կայնի ինձի կաշե,
Քնե, քնե, գործիդ աշե,
Մարըս քեզնեն լավին կաշե:

Օդին պատը բլել է,
Յարս մեջը քնել է,
Ձեն կուտամ, ձեն չի հանե,
Դու մի ըսե ջորել է:

Յարըմ ունիմ քիշմիրի,
Նստել գործե կը խալի,
Թշները վարդ կըլմանի,
Հոգիս տեղեն կը հանի:

Ջաղացը մանի, մանի,
Անուշ քունս կըտանի,
Քուրը մեռնի ախպորը,
Էկել է, տուն կտ տանի:

Ես աղջիկ եմ, ալ կուզեմ,
Ալս ծալեծալ կուզեմ,
Վեր տունն օր մտնիմ,
Օսկին՝ սարե սար կուզեմ:

Սապոնըմ ունիմ օսկեջրած,
Յարիս չունիմ նամակ գրած,
Կելլիմ սարը, ճամփան կաշեմ,
Ե՞րբ պիտի գա, ցավը տանեմ:

Վալվալան ցկի գեղը,
Ուտեմ մածունն ու եղը,
Ապուրը լցնի մեծ գուշը,
Պագնեմ իմ յարի թուշը:

Էլել քուքաս՝ տոտիկ-տոտիկ,
Ինձ կվառես, ա՛յ խորոտիկ,
Լիզուդ քաղցր ու անուշիկ,
Արի՛, արի՛, իմ սիրունիկ:

Իրիկունը մութը կոխեց,
Գիշերը շուքը կոխեց,
Էրա թե յարիս տեսնիմ,
Խայալ-խայալը կոխեց:

Մոլորված օշխար եմ,
Կորուցի գառըս,
Հանդերը ման գալով,
Չըգտա յարըս:

Էրթեստանը ման քուքամ,
Աղջիկներուն ձեն կուտամ,
Ազաբ տղաք թոփ էղեք,
Աղջիկ, տըղա պարեցեք:

Առավոտ կանուխ էլանք,
Աղջիկներուն լավը տեսանք,
Չոբանը օշխարը քշեց սարը,
Ի՞նչըղ թողնեմ ես իմ յարը:

Աղբուրը գնացինք ջրի,
Դավո, միրուքդ խանձի,
Սոֆոն չըտվիր ինձի,
Էյթաջ ըլլիս ցամաք հացի:

Սարերուն հովին մեռնիմ,
Ախպորս բոյին մեռնիմ,
Բանակ էրթող ախպար ջան,
Սրտիդ մուրազին մեռնիմ:

Ինձի նման տեր ունիս,
Ագյար վրաս սեր ունիս,
Ուրախ սիրտդ բաց էրե,
Չոր պռոշս թաց էրա:

Ջունը էկել, հալել է,
Լցվել գելը սառել է,
Աս էլօղլուն գեշ խոսքը,
Ինձի մոմի պես վառել է:

Ա՛յ տղա, դու ո՞ւր ես,
Ծարավ եմ, դու ջուր ես,
Մուղանլվա քառլան դուշ ես,
Համբարձման գիշերը ո՞ւր ես:

Ծո մանչ, չուխան հագել,
Էկել էրթիկն ես կայնել,
Աչքով-ունքով կենես,
Հագած չարոխդ ես մաշել:

Սոնան էկավ մեր դուռը,
Մատնին դրի բուռը,
Անկջին անցուցի օղը,
Էրեսին դիպավ շողը:

Ես աղջիկ եմ, ալ կուզեմ,
Բարակ մեջքիս շալ կուզեմ,
Խնձորմ ունիմ կիսած է,
Յարիս թուշը խածած է:

Սարի պես դարդ եմ քաշե,
Ջահել եմ, կյանքս եմ մաշե,
Հեռու ես, չես իմանա,
Կարոտդ ինչըղ եմ քաշե:

Ջաղչին դռնեն անցա ես,
Թոնը էրավ, թռչա ես,
Արևը դիպավ, չորցա ես,
Վարդի նման բացվա ես:

Աղջի բաղին մեջը,
Օտվիդ շաղին մեջը,
Ճվա, ճվալուդ մեռնիմ,
Ես եմ քու խաղի մեջը:

Կայնել եմ, գալ չեմ կրնա,
Լցվել եմ, լալ չեմ կրնա,
Քանի օր հեռացել ես,
Անունդ տալ չեմ կրնա:

Ծառին դալը ծռեցի,
Փեշկիրս վրան փռեցի,
Ախ, անջիգյար, քու սիրով,
Ուշքս ու միտքս կորուցի:

Մեր սարերը կանաչ է,
Յարըս մեջը ճանաչ է,
Շաղին կերթա արոտը,
Ես չեմ առնե կարոտը:

Սարերը ման եմ էկե,
Յոնջանուն յան եմ էկե,
Էկան, ըսին՝ յարըդ էկավ,
Խելռած տուն եմ էկե:

Մանի ըսեմ ու շարեմ,
Տոպրակը լըլեմ ու կարեմ,
Քաղքե-քաղաք ղըրկեմ,
Սրտիդ ուզածը ճարեմ:

Դռնեն անցա, թընդիրը վառ,
Չիթ ալ խորոզ, մաշինի կար,
Չիթ դայրավոր ինձի առ,
Տղամարդ ես, փախու տար:

Ասօր շաբաթ ըլլի,
Էքվան՝ կիրակի,
Յարս դռնեն անցնիր,
Էրթար կրակի:

Էս գիշեր էրած տեսա,
Էրծիս մեջ քեզի տեսա,
Դու հարս էիր, ես՝ փեսա:
Կանաչ պարտեզում տեսա:

Կայնել ես ախա-բախա,
Լաչակիդ ծերը կախ է,
Շեկ աղջիկ, սև տղա,
Բռնել են իրար յախա:

Նամակս ընկավ փոշտերը,
Սար ու քարոտ դաշտերը,
Առ ու կարդա, ընկեր ջան,
Աս իմ գրած խոսքերը:

Խնամի ջան, խոշ ես էկե,
Դարտակ ու բոշ ես էկե,
Էրկու պուլուճ ես փերե,
Անա ճմփին ես կերե:

Մեր բաղը նռի ղրկե,
Նամակդ գրե, ղրկե,
Բան է՝ թուղթ չի ըլլի,
Տերևին գրե, ղրկե:

Աշխարին մեջ տեր ունիմ,
Յարիս վրա սեր ունիմ,
Ճակատը բաց, խոսքի տեր,
Ինձի պահող հեր ու մեր:

Դունա գիտես ախչիկ ես,
Էրկու խանա խաղ չիտես,
Էստեղ կայնիլը բան չէ,
Էրկու խանա խաղ կանչե:

Շատ մի զըրցի անառակ,
Քեզի կենեմ խայտառակ,
Արտերը վարել կուտամ,
Տըրվիկդ հանել կուտամ:

Ախ էնեմ գարուն քուգա,
Սև սրտես արուն քուգա,
Ի՞նչ էնեմ ադանք յարը,
Էրթա ու հետ չըգա:

Սիրուն աղջիկ, նազ ունիս,
Կրծքիդ վրա խալ ունիս,
Խնճիկ-մնճիկ մի էնե,
Ինձի առնելու բախտ ունիս:

Սարերուն մեջ տուն ունիմ,
Մեջը օսկե սուն ունիմ,
Տղա, քանքիլիդ թոզը թափե,
Խելքս գլխես մի հանե:

Քարը քարի վրա է,
Քարի տակը փարա է,
Բացեք սիրտըս աշեցեք,
Ամբողջովին յարա է:

Տղա, ադ ի՞նչ էրար,
Թամամ հոգիս կերար,
Ինձի պես ըռնտիկ աղջկան,
Էրար խոտ ու քաղհան:

Յայլեցեն էկա բարով,
Սրտիս կպուցիր քարով,
Խոսք տվիր, թե կառնեմ,
Մնացիր ահուզարով:

Թաքըռը ընկավ սև հերկը,
Շեկ քյանքիլիդ քսեցին ներկը,
Խաբեք մորս, ցավալի եմ,
Բացվի նամակ, զարկվել եմ:

Վրադ յորղան ես առել,
Սիրտս ու հոգիս ես հանել,
Աստված էնե լավանաս,
Մեզի սիրուն հարս դառնաս:

Ալուր մաղեմ թեփ քուգա,
Հըճըր յարս երբ քուգա,
Ակոշկեցեն աշեցի,
Ալ բիլոմբիս մաշեցի:

Խնձոր ցկեմ ֆըռֆըռա,
Թուշըդ խածեմ մռմռա,
Լամպի շուշան կըճնգա
Գիշերը ծոցըդ ընկա:

Գիշերն էլլա մեր բակը,
Քովս էկավ Յոսմա յարը,
Յոսման մարալ, ես մարալ,
Աստված, էրե մեզի հալալ:

Սարի հարոսիդ մեռնիմ,
Գինուդ կարասին մեռնիմ,
Ճամփա էրթող սև տղա,
Սրտիդ մուրազին մեռնիմ:

Ջահել եմ, ընկեր չունիմ,
Ընկել եմ, տեր չունիմ,
Աշխըրին մեջ ի՞նչըդ ապրիմ.
Հարստության սեր չունիմ:

Սնդուկը չկա քարթու հաց,
Տղա, շափղատ՝ կարկըտած,
Շատ մի՛ուռի, փշատ ես,
Հորս դռան մշակ ես:

Ես աղջիկ եմ, նազ կենեմ,
Տըղոցը տընազ կենեմ,
Քեզի պես հազար մանչուն,
Պտտեցնեմ, տանիմ կը տուն:

Դու մի ծաղիկ էիր,
Հողեն դուս էկար,
Մոտեցար բարև տվիր,
Թողեցիր, հեռացար:

Իմ յարը ալա է,
Ալա չէ, ալվալա է,
Սիրելը լավ բան է,
Թարկելը բալա է:

Վարդուն ջան, Վարդուն,
Քուն ես, թե զարթուն,
Փափախսս կորուցի,
Փափազին ջրին անթուն:

Ախ քաշելով մնացի,
Ինձի մաշելով մնացի,
Սիրածս ուրիշին առավ,
Ես աշելով մնացի:

Սարեն էկան սելերը,
Կտրան չուլքուս թելերը,
Կայնեցուցեք սելերը,
Կապեմ չուլքուս թելերը:

Էլլել ես, կերթաս կալը,
Դու կաշես թիքնին մալը,
Բարով մաշես գլխուդ շալը,
Կայնե՛, սեյրանդ եմ, սեյրանդ:

Հալավ եմ կարե, առ հագի,
Հենց օր արևը ծագի,
Հագած-կապած դուրս արի,
Թող դիշմանը տրաքի:

Սարերը մեզի-մեզի,
Ջիավոր, մեռնիմ քեզի,
Թասովրդ ջուր տու,
Մեծանամ, առնեմ քեզի:

Սարերը սերով մնաց,
Իմ յարը խռով մնաց,
Նա ղուշ էր, նա կաքավ,
Ջեռքես թըռավ քընաց:

Փերես կը կանֆետ,
Կայնիմ կը ճամփետ,
Ջես փերե կանֆետ,
Ջեմ կայնի ճամփետ:

Ալվարը՝ ալվարին,
Ճալվարը՝ շալվարին,
Ճան աղջիկը խաբվել է,
Իմ շալե շալվարին:

Ճափ, ծափ Նիկուլին,
Թռավ նստավ «Ժիգուլին»,
Դիտիդ տվին Ճուրիկին,
Առան տարան Նինային:

Քանի սաղ է յարս,
Սիրտս չի դաղե յարս,
Մե անգամըմ իրեն այեմ,
Թող մեռնիմ, թաղե յարս:

Ջոբանը աղ կը տանի,
Ուզածը սաղ կը տանի,
Ջոբանը իր ամլիկ գառը
Յարին մատաղ կը տանի:

Արխալուղը կարել եմ,
Օսկեցե կոճակ շարել եմ,
Մամի ջան, մի՛մտածե,
Սիրուն տղա ճարել եմ:

Մեկը մեկին դարդը չիտե,
Կեսգիշերին խաղ կը կանչե,
Դարդին դարման չըկա,
Խոշ յարին մայլամ չըկա:

Սիրուն տղա, սևիկն առ,
Խոնար ու հեզիկն առ,
Ծառը քոքեն է բուսնում,
Մորն աշե, աղջկան առ:

Քեխ ուտած քեխիդ մեռնիմ,
Նոր քալած բեխիդ մեռնիմ.
Էսօր օխտն օր չեմ տեսսե,
Տեսնողի աշկին մեռնիմ:

Ջուրն ընկա, քընացի,
Քեզնից կարոտ մնացի.
Ինձեն ղայրի յար ճարես,
Չիթ արխալուղ չմաշես:

Պանդխտության Երգեր

ԿՈՌՈՒՆԿ, ՍԻՐԵՍ ԷՐԿՈՒ ԲԱԼԻԴ ԱՐԵՎԸ

Կայնել ես սարա դեշը,
Կռունկ, սիրես էրկու բալիդ արևը,
Յարըս մնաց Արզիրիմու սարերը:
Չես քա մեր պարամեչը,
Կռունկ, սիրես էրկու բալիդ արևը,
Յարըս մնաց Արզիրիմու սարերը:
Դու ուզեցիր, դու առար,
Կռունկ, սիրես էրկու բալիդ արևը,
Յարըս մնաց Արզիրիմու սարերը.
Յարիդ դարտովը վառար,
Կռունկ, սիրես էրկու բալիդ արևը,
Յարըս մնաց Արզիրիմու սարերը:

ՆՇԱՆՎԱՐ, ԲԱՔՈՒ ՔՆԱՑԻՐ

Նշանվար, Բաքու քընացիր,
Սիրտըս յաղիքար թողիր.
Արժան չեղար ետ քալու,
Գլոխըս թըրիր սև շալովի:
Սարի պես դարտ եմ քաշում,
Ջայիլ եմ, կյանքս եմ մաշում,
Հեռու ես, չես իմանա,
Կարոտըդ որման եմ քաշում:
Մեռնիմ արևի լըսին,
Մեռնիմ քու բոյին-բուսին.
Եվ օր քալըդ իմանամ,
Մեռած ըլլիմ, կիմանամ:
Լուսնըկի լուսը դու ես,
Ծովերի ձուկը ես եմ.
Եթե քու լուսը չըլլի,
Ձըկի պես կը չորնամ:

ԷԼԻ ԷՐԿԻՆՔՆ ԱՄՊԵԼ Է

Էլի երկինքն ամպել է,
Յարրս ալ ձին թամբել է.
Ինձնից խռոված կերթա,
Բոխչան կապե, ճամփել է:
Նախշուն հավքեր,
Սիրուն հավքեր,
Շեն աշխարհ,
Ասեք յարիս,
Հերիք ցրգե
Սարե սար,
Քարե քար:
Կանչեմ, կանչեմ, չես գալիս,
Սերրս մընաց կիսկատար.
Քոռնար աչքդ, այ դուշման,
Ինձի ցրգիր
Սարե սար,
Քարե քար:
Նախշուն հավքեր,
Սիրուն հավքեր,
Շեն աշխարհ,
Ասեք յարիս,
Հերիք ցրգե
Սարե սար,
Քարե քար:

Թընդիրը հով է,
Բերանը բոֆ է.
Տասվերկու ջան է,
Մե ղրսրր կով է:

ՕՐՓԻ ՍԻՐՏԸ ՏԽՈՒՐ ՄՈԼՈՐ

Կիմռրվա ճամփեն օլոր-մոլոր,
Օրփերի սիրտը տխուր մոլոր.
Ամիրքեն էկավ, օրփերին կանչեց,
Օրփերին թիվը բիրատի հաշվեց:
Ա՜յ, նոր ծաղկեց ծաղկու բարև,
Ո՞ւմ հետ ճամփեմ հայրենիքրս՝
Օրփերին պայեմ.
Տեղանրս քաղաք է,
Ծովի արա է,
Էրթալ ու քալը
Ջուլում կրակ է:

ՉԵԿԱՎ ՅԱՐԸՍ

Հով արեք, հովիդ մատաղ,
Հեռվումը մնաց յարրս.
Չորան, բոյիդ մատաղ,
Մոսկովու չեկավ յարրս:
Հաքել ես, ալ ես էղե,
Հեռվումը մնաց յարրս.
Սրտեդ թիթար ես էղե,
Մոսկովու չեկավ յարրս;
Մրտա բաղին մեչը,
Հեռվումը մնաց յարրս.
Իմ յարը խաղի մեչ է,
Մոսկովու չեկավ յարրս:
Քաղաքը թափեն կը քիրամիտ,
Հեռվումը մնաց յարրս,
Ես ու յարրս միամիտ,
Մոսկովու չեկավ յարրս:

Պարերգեր

ՄԱՐԵ, ՍԻՐԱԾ ՅԱՐԻ ՏՈՒ

Էլա սարը, սար տեսսա,
Բարակ մեշկով յար տեսսա.
Ա՜խ տարի դու, տարի դու,
Մայրիկ, սիրած յարի տու:

Կանգնել ես պատա տակը.
Ցոլար կը մատնուդ ակը.
Ա՜խ տարի դու, տարի դու,
Մայրիկ, սիրած յարի տու:

Ախչիկ, դու ուր ես, մուր ես,
Ես ծառավ եմ, դու ջուր ես.
Ա՜խ տարի դու, տարի դու,
Մայրիկ, սիրած յարի տու:

ՊԱՐԻ ՄԻՉԻ ՎԱՐԹ ԵՄ

Կայնել ես ախա-պախա,
Խեյդան-խեյդան յար.
Օրթասի չամուռ
Սըչման յար.

Սիրած յարըդ հավնել է,
Խեյդան-խեյդան յար,
Օրթասի չամուռ,
Սըչման յար:

Դեմքը քեզի վառել է,
Խեյդան-խեյդան յար,
Օրթասի չամուռ,
Սըչման յար.

Պարի միչի վարթ եմ,
Խեյդան-խեյդան յար,
Օրթասի չամուռ,
Սըչման յար:

Տեսնողին խելքը կը տանի,
Խեյդան-խեյդան յար,
Օրթասի չամուռ,
Սըչման յար:

Սրտով սիրե, առել ենք,
Խեյդան-խեյդան յար,
Օրթասի չամուռ,
Սըչման յար:

ԴՈՒ ԻՄ ՍՐՏԻՆ ԴՈՒՐ ԷԿԱՐ

Ուր քընացիր, ուր էկար,
Ասկար ու սեյրան ու յար,
Ասկար ու սեյրան ու յար,
Մառալ ու ջեյրան ու յար:

Դու իմ սրտին դուր էկար,
Ասկար ու սեյրան ու յար,
Ասկար ու սեյրան ու յար,
Մառալ ու ջեյրան ու յար:

Գնա, գնա, գալիս եմ,
Ասկար ու սեյրան ու յար,
Ասկար ու սեյրան ու յար,
Մառալ ու ջեյրան ու յար:

Հետևիցըդ գալիս եմ,
Ասկար ու սեյրան ու յար,
Ասկար ու սեյրան ու յար,
Մառալ ու ջեյրան ու յար:

ՅԱՐՈ ՋԱՆ, ՅԱՐ

Հաքել ես, յար ես դառե,
Յարո ջան, յար.
Չինարի ծառ ես դառե,
Յարո ջան, յար:

Ախպըրին ձորին ջուրը,
Յարո ջան, յար.
Քանի խմեմ դուր քուքա,
Յարո ջան, յար:

Ջրի միչի ուղիլը,
Յարո ջան, յար.
Թեզ կը տանի յարիս քունը,
Յարո ջան, յար:

Յարո ջան, բոյիդ մեռնիմ,
Յարո ջան, յար,
Անուշ բերանիդ մեռնիմ,
Յարո ջան, յար:

Ամպել է, թոն չի քա,
Յարո ջան, յար.
Մթնել է, տուն չի քա,
Յարո ջան, յար:

Էսօր օրը պարզել է,
Յարո ջան, յար.
Յարիս ֆասը սազել է,
Յարո ջան, յար:

Յար ջան, ֆասիդ փիսկիլը,
Յարո ջան, յար.
Մեշկիդ վրա փռվել է,
Յարո ջան, յար:

ՏՈՒՏՈՒԼՆ ԷԿԱՎ ՄԵՐ ՏՈՒՆԸ

Տուտուլն էկավ մեր տունը,
Ա՜խ, տա տուտուլ, ջա՛ն տուտուլ,
Չալե, խաղամ ես տուտուլ.
Քըսքըս տվի սև շունը,
Ա՜խ, տա տուտուլ, ջա՛ն տուտուլ,
Չալե, խաղամ ես, տուտուլ:
Ջաղչին դռնեն մարթ անցավ,
Ա՜խ, տա տուտուլ, ջան տուտուլ,
Չալե խաղամ ես, տուտուլ.
Ձեռքըս դաստեմ վարթ անցա,
Ա՜խ, տա տուտուլ, ջան տուտուլ,
Չալե, խաղամ ես, տուտուլ:
Ախպերս ուզեց, չտվի,
Ա՜խ, տա տուտուլ, ջա՛ն տուտուլ,
Չալե, խաղամ ես, տուտուլ.
Ախպեր, խաթրըդ չմնա,
Ա՜խ, տա տուտուլ, ջա՛ն տուտուլ,
Չալե, խաղամ ես, տուտուլ.
Յարըս քեզնից անուշ է,
Ա՜խ, տա տուտուլ, ջա՜ն տուտուլ,
Չալե, խաղամ ես, տուտուլ:
Կըժին մեչը ջուր է,
Ա՜խ, տա տուտուլ, ջա՜ն տուտուլ,
Չալե, խաղամ ես, տուտուլ.
Յարըս ուզելը զուր է,
Ա՜խ, տա տուտուլ, ջա՜ն տուտուլ,
Չալե, խաղամ ես, տուտուլ:

ՍԱՐԵ՛Ր, Ե՛Տ ԳՆԱՑԵՔ

Տղեք, արիք խաղանք կլորիկ պարը,
Սարե՛ր, ե՛տ գնացեք, տեսնեմ իմ յարը.
Կանաչ արտը մի՛ կոխի,
Տղեք, արիք խաղանք կլորիկ պարը,
Սարե՛ր, ե՛տ գնացեք, տեսնեմ իմ յարը:
Սիրած յարը մի՛փոխի,
Տղեք, արիք խաղանք կլորիկ պարը,
Սարե՛ր, ե՛տ գնացեք, տեսնեմ իմ յարը:
Էլա սարը սընձի,
Սարե՛ր, ե՛տ գնացեք, տեսնեմ իմ յարը,
Սալվին կուզեին ինձի,
Սարե՛ր, ե՛տ գնացեք, տեսնեմ իմ յարը:
Արազը բուզ է բռնել,
Սարե՛ր, ե՛տ գնացեք, տեսնեմ իմ յարը.
Քանքուլը թոզ է բռնել,
Սարե՛ր, ե՛տ գնացեք, տեսնեմ իմ յարը.
Էլա խոտնոց, խոտ թափի,
Սարե՛ր, ե՛տ գնացեք, տեսնեմ իմ յարը.
Քեզ մի խնձորով խափի,
Սարե՛ր, ե՛տ գնացեք, տեսնեմ իմ յարը:
Ա՛յ տղա, սև չուխավոր,
Սարե՛ր, ե՛տ գնացեք, տեսնեմ իմ յարը.
Սաղմոցըդ ծոցիդ սովոր,
Սարե՛ր, ե՛տ գնացեք, տեսնեմ իմ յարը:
Խնձրըմ ունիմ խածած է,
Սարե՛ր, ե՛տ գնացեք, տեսնեմ իմ յարը.
Չորս բոլորը արծըքած է,
Սարե՛ր, ե՛տ գնացեք, տեսնեմ իմ յարը:
Ապուրն էփել ենք աղի,
Սարե՛ր, ե՛տ գնացեք, տեսնեմ իմ յարը.
Ուտողին սիրտը դաղի,
Սարե՛ր, ե՛տ գնացեք, տեսնեմ իմ յարը:
Լամպի շուշեն կը ճընկա,
Սարե՛ր, ե՛տ գնացեք, տեսնեմ իմ յարը.
Կլորա ծոցըդ ընկա,
Սարե՛ր, ե՛տ գնացեք, տեսնեմ իմ յարը:

ԷԼԻ ՊԱՐԸ ԲՈԼՈՐԱՎ

Էլի պարը բոլորավ.
Հո՛փ, տիլլոնի ղուրբան,
Ջա՛ն, տիլլոնի ղուրբան.
Յարըս մեչը մոլորավ,
Հո՛փ, տիլլոնի ղուրբան,
Ջա՛ն, տիլլոնի ղուրբան:
Պարի բաշի, բարի տաշի,
Հո՛փ, տիլլոնի ղուրբան,
Ջա՛ն, տիլլոնի ղուրբան,
Ախչի, անունըդ Հեղնար,
Հո՛փ, տիլլոնի ղուրբան,
Ջա՜ն, տիլլոնի ղուրբան:
Պարը մտար ու դեղնար,
Հո՛փ, տիլլոնի ղուրբան,
Ջա՜ն, տիլլոնի ղուրբան.
Ախչի, ինչի՞ վախեցար,
Հո՛փ, տիլլոնի ղուրբան,
Ջա՜ն, տիլլոնի ղուրբան.
Յարըդ քեզնից հեռացավ,
Հո՛փ, տիլլոնի ղուրբան,
Ջա՛ն, տիլլոնի ղուրբան:

ՍԱՐԵ՛Ր, ՀԵՏ ԳԸՆԱՑԵՔ

Նստել ես պատշգամբում,
Ելլենք սարը,
Բռնենք կլոր պարը.
Սարե՛ր, հետ գընացեք,
Տեսնիմ իմ յարը:
Գույնըդ վարթ է գուշակում.
Ելլենք սարը,
Բռնենք կլոր պարը.
Սարե՛ր, հետ գընացեք,
Տեսնեմ իմ յարը:
Խոսքըս մերժող ա՛յ ախչիկ,
Ելլենք սարը,
Բռնենք կլոր պարը.
Սարե՛ր, հետ գնացեք,
Տեսնեմ իմ յարը:
Ի՞նչ ես ինձի տանջում.
Ելլենք սարը,
Բռնենք կլոր պարը.
Սարե՛ր, հետ գնացեք
Տեսնեմ իմ յարը:
Քընը մորըդ ըսա,
Ելլենք սարը,
Բռնենք կլոր պարը.
Սարե՛ր, հետ գնացեք,
Տեսնիմ իմ յարը.
Պըլքի անե իր փեսա.
Ելլենք սարը,
Բռնենք կլոր պարը.
Սարե՛ր, հետ գնացեք,
Տեսնիմ իմ յարը:

ԹԵԼԼԻ ՅԱՐ ՈՒՆԻՄ

Մարալ, մարալ ման քուքաս,
Էլլի յար ունիմ,
Թելլի յար ունիմ.
Շահ Սանամի պես
Սիրած յար ունիմ:
Բարց կը թընեմ յան քուքաս,
Էլլի յար ունիմ,
Թելլի յար ունիմ,
Շահ Սանամի պես
Սիրած յար ունիմ:
Լուսնյակ գիշեր հովն անուշ,
Էլլի յար ունիմ,
Թելլի յար ունիմ,
Շահ Սանամի պես
Սիրած յար ունիմ:
Սիրած յարիս քունն անուշ,
Էլլի յար ունիմ,
Թելլի յար ունիմ,
Շահ Սանամի պես
Սիրած յար ունիմ:

ՏՂԱ, ԱՆՈՒՆԸԴ ԱՍԱ

Տղա, անունըդ ասա,
Նազանի եմ, նազանի եմ, յար.
Չինի չայ թապաղ դիզան եմ, յար.
Թե չէ կանեմ քեզ փեսա.
Նազանի եմ, Նազանի եմ, յար,
Չինի չայ թապաղ դիզան եմ, յար:
Էսօր օրը նորել է.
Նազանի եմ, նազանի եմ, յար,
Չինի չայ թապաղ դիզանի եմ, յար.
Յարըս տնեն կորել է,
Նազանի եմ, նազանի եմ, յար.
Չինի չայ թապաղ դիզան եմ, յար:
Գենա օրը ամպել է,
Նազանի եմ, նազանի եմ, յար,
Չինի չայ թապաղ դիզան եմ, յար:
Յարիս քունը տարել է,
Նազանի եմ, նազանի եմ, յար,
Չինի չայ թապաղ դիզան եմ, յար

ԼԱՉԱԿԸՍ ԼՎԱՑԵԼ ԵՄ

Դու չինարի յար ջան,
Կոտրել է Արազի պուզը,
Շըխշըխան բիլազիկ ղոլունա-ղոլունա.
Թափավ քանքիլիդ թոզը,
Ճերմակ թևիդ սև բիլազիկ մահանա:
Ես ուզել եմ, ես կառնեմ,
Շըխշըխան բիլազիկ ղոլունա-ղոլունա.
Ձեր կռիվ-դավեն ի՞նչ է,
Ճերմակ թևիդ սև բիլազիկ մահանա:
Ծառի տակը լացել եմ,
Խըշխըշան բիլազիկ ղոլունա-ղոլունա.
Լաչակըս լվացել եմ,
Ճերմակ թևիդ սև բիլազիկ մահանա:

ԹԵԼԼՈ, ԹԵԼԼՈ, ԹԵԼԼՈ ՋԱՆ

Ուր քընացիր, ուր էկար,
Թելլո, Թելլո, Թելլո ջան,
Շիրին շախով անուշ ջան,
Դու իմ սրտին դուր էկար,
Թելլո, Թելլո, Թելլո ջան,
Շիրին շախով անուշ ջան:
Շատացել են դարտերըս,
Թելլո, Թելլո, Թելլո ջան,
Շիրին շախով անուշ ջան.
Յարիս բախտը բարի է,
Թելլո, Թելլո, Թելլո ջան,
Շիրին շախով անուշ ջան:
Դու կայնել ես գերանին,
Թելլո, Թելլո, Թելլո ջան,
Շիրին շախով անուշ ջան.
Օսկե ղավալ բերանին,
Թելլո, Թելլո, Թելլո ջան,
Շիրին շախով անուշ ջան:

ԳՈՎԱԿԱՆ ՅԱՐ ՋԱՆ

Կակլի ծառը բանցըր է,
Իմ չինարի յար ջան.
Դու չինարի յար ջան,
Առել եմ, կառնեմ, գովական յար ջան:
Սիրած յարը քաղցըր է,
Իմ չինարի յար ջան.
Դու չինարի յար ջան,
Առել եմ, կառնեմ, գովական յար ջան:
Մազեր ունիմ թել-թել է,
Իմ չինարի յար ջան,
Դու չինարի յար ջան,
Առել եմ, կառնեմ, գովական յար ջան:
Քամին թել-թել կը տանի.
Իմ չինարի յար ջան.

Առել եմ, կառնեմ, գովական յար ջան:
Սարի էտտին դալտա է,
Իմ չինարի յար ջան.
Դու չինարի յար ջան,
Առել եմ, կառնեմ, գովական յար ջան:
Էս խաղը մեզ համար է,
Իմ չինարի յար ջան.
Դու չինարի յար ջան,
Առել եմ, կառնեմ, գովական յար ջան:
Քամուն տեղը ըսա,
Իմ չինարի յար ջան.
Դու չինարի յար ջան,
Առել եմ, կառնեմ, գովական յար ջան:
Քու տարածը իմ խասն է,
Իմ չինարի յար ջան.
Դու չինարի յար ջան,
Առել եմ, կառնեմ, գովական յար ջան:

ՏՈՒՐ ՆՈՐՈՐ ԱՏԻՆՆԵ

Մեր բակը բակ կըլմանի,
Տուր նորոր ատիններ.
Տուր շորոր ատիններ.
Գլխին թագ կըլմանի,
Տուր նորոր ատիններ,
Տուր շորոր ատիններ.
Էկավ անցավ քյոփհողլին,
Տուր նորոր ատիններ,
Տուշ շորոր ատիններ.
Իրմովը բակ կըլմանի,
Տուր նորոր ատիններ,
Տուշ շորոր ատիններ.
Ղըռ ձիուն նստել եմ,
Տո՛ւր նորոր ատիններ,
Տո՛ւշ շորոր ատիններ.
Արազին մոտեցել եմ,
Տո՛ւր նորոր ատիններ,
Տո՛ւշ շորոր ատիններ.
Արազ, յոլ տուր՝ ես ասնիմ,
Տո՛ւր նորոր ատիններ,
Տո՛ւր շորոր ատիններ.
Նոր եմ նըշնե իմ յարին,
Տո՛ւր նորոր ատիններ,
Տո՛ւշ շորոր ատիններ:
Հաքածըդ ալ լաստիկ է,
Տո՛ւր նորոր ատիններ,
Տո՛ւշ շորոր ատիններ.
Խաղաս կը, պարբաշի ես.
Տո՛ւր նորոր ատիններ,
Տո՛ւշ շորոր ատիններ.

ՔՈՉԱՐՈՒՆ ՂԱՅՏԻՆ ԱՐԻ

Քոչարին անուշ պա՛ր է,
Խաղցողը մեկ ու ճար է.
Օ՜յ, նեննիմ քոչարի՜,
Քոչարուն ղայտի՜ն արի:
Ես մի քանքուլլի դոխ եմ
Կանաչ խալին կը կոխեմ.
Օ՜յ, նեննիմ քոչարի,
Քոչարուն ղայտի՜ն արի:
Կանաչ խալու սազաղն եմ,
Շեկ աղչըկա դաչաղն եմ.
Օ՜յ, նեննիմ քոչարի,
Քոչարուն ղայտի՜ն արի:

ԹԵԼԼԻ ՅԱՄԱՆ ՔՈՉԱՐԻ

Կայնել ես, զարթ կըլմանիս,
Թելլի յաման քոչարի,
Զառ նըշան փափուրի.
Բացվել ես, վարթ կըլմանիս,
Թելլի յաման քոչարի,
Զառ նըշան փափուրի:
Բաղի միչի բաղմանչին,
Թելլի յաման քոչարի,
Զառ նըշան փափուրի,
Սիրած յարըդ կամանչի,
Թելլի յաման քոչարի,
Զառ նըշան փափուրի:
Բաղի միչի ընկուզը,
Թելլի յաման քոչարի,
Զառ նըշան փափուրի.
Յարըս գուզի բըլբուլը.
Թելլի յաման քոչարի,
Զառ նըշան փափուրի:
Կայնել ես, կարմրել ես,
Թելլի յաման փափուրի,
Զառ նըշան քոչարի,
Բոյեդ ամընչելա չես,
Թելլի յաման փափուրի,
Զառ նըշան քոչարի:

ՔՈՉԱՐԻՆ ԿՈՏԸՄ ԳԱՐԻ

Քոչարին կոտըմ գարի,
Ան ալ տվի խիարի.
Հո՜յ, աման-աման քոչարի,
Գիլ, աման-աման քոչարի:
Կանչում եմ արի՛, արի՛,
Թե չես քա՝ մուխըդ մարի.
Հո՜յ, աման-աման քոչարի,
Գիլ, աման-աման քոչարի:
Ախչիկ, անունըդ Պրաք,
Կըլմանիս հոքու ճըրաք.
Հո՜յ, աման-աման քոչարի,
Գիլ, աման-աման քոչարի:
Ախչի, անունըդ ասա,
Ֆասիդ փիսկիլը խաս ա.
Հո՜յ, աման-աման քոչարի,
Գիլ, աման-աման քոչարի:
Մաննուդ ակը կանանչ է,
Ուզածըդ ինձի ճանաչ է.
Հո՜յ, աման-աման քոչարի,
Գիլ, աման-աման քոչարի:
Ախչի, հաքինըդ պուրս է,
Առածըդ գեղեդուս է.
Հո՜յ, աման-աման քոչարի,
Գիլ, աման-աման քոչարի:

ԿԱՅՆԵԼ ԵՍ ԿԱՐՃ ՈՒ ԲԱՐԱԿ

Կայնել ես կարճ ու բարակ,
Ղարսաու խանում դիլինե, դիլինե,
Դիլինի ֆարման դիլինե, դիլինե.
Հիմա կանեմ քեզ խայտառակ,
Ղարսաու խանում դիլինե, դիլինե,
Դիլինի ֆարման դիլինե, դիլինե:
Կայնի, կայնի հետ կուգամ,
Ղարսաու խանում դիլինե, դիլինե,
Դիլինի ֆարման դիլինե, դիլինե.
Մի վախենա, թեզ կուգամ,
Ղարսաու խանում դիլինե, դիլինե,
Դիլինի ֆարման դիլինե, դիլինե,
Խոսքերդդ մեկ-մեկ ասա,
Ղարսաու խանում դիլինե, դիլինե,
Դիլինի ֆարման դիլինե, դիլինե.
Թե չէ կենեմ քեզ փեսա,
Ղարսաու խանում դիլինե, դիլինե,
Դիլինի ֆարման դիլինե, դիլինե:

ԵՍ ՄԱՐԱԼ

Էսիկ խաղանք՝ լավ պար է,
Ես մարալ, ես մարալ,
Յարըս մարալ, ճոլի ջեյրան,
Խաղցողներին համար է,
Ես մարալ, ես մարալ,
Յարըս մարալ, ճոլի ջեյրան:
Սիրել եմ սերն էրեսին,
Ես մարալ, ես մարալ,
Յարըս մարալ, ճոլի ջեյրան,
Պաքել եմ վարքն էրեսին,
Ես մարալ, ես մարալ,
Յարըս մարալ, ճոլի ջեյրան:
Գեղի անունն է Աբուլ,
Ես մարալ, ես մարալ,
Յարըս մարալ, ճոլի ջեյրան,
Էղածն է մեզի ղաբուլ,
Ես մարալ, ես մարալ,
Յարըս մարալ, ճոլի ջեյրան:

ԿԱՆԱՉ ԽԱԼԻՆ ՓՈՌԱԾ Է

Սարի էրես ղրռաճ է.
Մեր բամբակը, ձեր բամբակը քուլա է.
Յար սիրելը, յար թողնելը
Խաթա ու բալա է.
Կանաչ խալին փռած է,
Մեր բամբակը, ձեր բամբակը քուլա է.
Կանաչ խալին սաչաղ է,
Մեր բամբակը, ձեր բամբակը քուլա է.
Շեկ ախչկա ղաչաղն եմ,
Մեր բամբակը, ձեր բամբակը քուլա է.
Ախչի, կանանչ մի՛ կոխե,
Մեր բամբակը, ձեր բամբակը քուլա է.
Սիրած յարիդ մի՛ փոխե,
Մեր բամբակը, ձեր բամբակը քուլա է.
Սիրել եմ սերն էրեսին,
Մեր բամբակը, ձեր բամբակը քուլա է.
Անթառան թերը էրեսին,
Մեր բամբակը, ձեր բամբակը քուլա է.
Ով իմ սիրածին սիրե,
Մեր բամբակը, ձեր բամբակը քուլա է.
Գերեզմանի քարը տիրե,
Մեր բամբակը, ձեր բամբակը քուլա է:

ՀԱՔԵԼ ԵՍ, ԱԼ ԵՍ ԴԱՌԵԼ

Սարեն քուքա տավարը,
Ասկար ու սեյրան ու յար.
Ասկար ու սեյրան ու յար,
Մարալ ու ջեյրան ու յար:
Գեղը ընկավ հավարը,
Ասկար ու ջեյրան ու յար.
Ասկար ու ջեյրան ու յար,
Մարալ ու ջեյրան ու յար:
Հաքել ես խաս ու ղումաշ.
Ասկար ու սեյրան ու յար.
Ասկար ու սեյրան ու յար,
Մարալ ու ջեյրան ու յար:
Յարդդ ինձի ճանաչ է,
Ասկար ու սեյրան ու յար.
Ասկար ու սեյրան ու յար,
Մարալ ու ջեյրան ու յար:
Հաքել ես ալ ես դառել,
Ասկար ու սեյրան ու յար.
Ասկար ու սեյրան ու յար,
Մարալ ու ջեյրան ու յար:
Ուր քընացիր, ուր էկար,
Ասկար ու սեյրան ու յար.
Ասկար ու սեյրան ու յար,
Մարալ ու ջեյրան ու յար:
Դու իմ սրտին դուր էկար,
Ասկար ու սեյրան ու յար.
Ասկար ու սեյրան ու յար,
Մարալ ու ջեյրան ու յար:

ԿԱՅՆԵԼ ԵՄ՝ ԿԱԹ ԿԸԼՄԱՆԻՍ

Գուլպընուդ պուգը սև է,
Քո՛ւյրիկ, քամարիդ խոշումը գլորավ,
Յարըս սալդատ՝ սիրտը փորը մոլըրավ:
Քեզ առնողը ո՛վ է,
Քո՛ւյրիկ, քամարիդ խոշումը գլորավ,
Յարըս սալդատ՝ սիրտը փորը մոլըրավ:
Կայնել ես՝ կաթ կըլմանիս,
Քո՛ւյրիկ, քամարիդ խոշումը գլորավ,
Յարըս սալդատ՝ սիրտը փորը մոլըրավ:
Բացվել ես՝ վարթ կըլմանիս,
Քո՛ւյրիկ, քամարիդ խոշումը գլորավ,
Յարըս սալդատ՝ սիրտը փորը մոլըրավ:
Գնա՛, կորի՛, անառակ,
Դառնամ կանեմ խայտառակ.
Իմ թոփումը (խոշումը) չի գլորվի.
Յարըս սալդատ՝ չի՛մոլըրվի:

ՇԵԿ ԱԽՉԻԿ ՊԱՐԱ ՄԵՋԸ

Պաղ ախպուր՝ հորա մեչը,
Նազանի եմ, նազանի եմ.
Չինի չայ թապաղ դիզան եմ, յար:
Շեկ ախչիկ պարա մեչը,
Նազանի եմ, նազանի եմ,
Չինի չայ թապաղ դիզան եմ, յար:
Կանաչ արտը հաց տարա,
Նազանի եմ, նազանի եմ,
Չինի չայ թապաղ դիզան եմ, յար:
Խնձոր թապլեց, ես չառա,
Նազանի եմ, նազանի եմ,
Չինի չայ թապաղ դիզան եմ, յար:
Ուր քընացիր, ուր էկար,
Նազանի եմ, նազանի եմ,
Չինի չայ թապաղ դիզան եմ, յար:
Դու իմ սրտին դուր էկար,
Նազանի եմ, նազանի եմ,
Չինի չայ թապաղ դիզան եմ, յար:
Կանաչ արտի քանարը,
Նազանի եմ, նազանի եմ,
Չինի չայ թապաղ դիզան եմ, յար:
Վառավ սրտիս ֆանառը,
Նազանի եմ, նազանի եմ,
Չինի չայ թապաղ դիզան եմ, յար:
Արազը պուզատել է,
Նազանի եմ, նազանի եմ,
Չինի չայ թապաղ դիզան եմ, յար:
Դու կայնել ես գերանին,
Նազանի եմ, նազանի եմ,
Չինի չայ թապաղ դիզան եմ, յար:
Ոսկե օղերն ականջին,
Նազանի եմ, նազանի եմ,
Չինի չայ թապաղ դիզան եմ, յար:
Սարի էրես ղըռած է,
Նազանի եմ, նազանի,
Չինի չայ թապաղ դիզան եմ, յար:
Քըթին խալին փռած է,
Նազանի եմ, նազանի եմ,
Չինի չայ թապաղ դիզան եմ, յար:
Յարըս վրեն քնած է,
Նազանի եմ, նազանի եմ,
Չինի չայ թապաղ դիզան եմ, յար:
Էս ո՞ւմ արտն ու հարոսն է,
Նազանի եմ, նազանի եմ,
Չինի չայ թապաղ դիզան եմ, յար:
Հըճրփ իմ յարն էլ հոս է,
Նազանի եմ, նազանի եմ,
Չինի չայ թապաղ դիզան եմ, յար:
Չեն տըվի ձենըս չառավ,
Նազանի եմ, նազանի եմ,
Չինի չայ թապաղ դիզան եմ, յար:
Կանաչել են արտերը,
Նազանի եմ, նազանի եմ,
Չինի չայ թապաղ դիզան եմ, յար:
Շատացել են դարտերը,
Նազանի եմ, նազանի եմ,
Չինի չայ թապաղ դիզան եմ, յար:
Ախչի դու ուր ես, մուր ես,
Նազանի եմ, նազանի եմ,
Չինի չայ թապաղ դիզան եմ, յար:
Ես ծարավ եմ, դու ջուր ես,
Նազանի եմ, նազանի եմ,
Չինի չայ թապաղ դիզան եմ, յար:

ԾՈՒՆԿՍ Ի ՁԱՅՆԵՄ ԳԵՏԻՆԱ

Ա՜յ, էդինա, էդինա,
Ծունկս ի զայնեմ գետինա.
Ախչիկ, թե օր ինձ չառնես,
Սաղ-սաղ մտնես գետինա:
Դռան առչև մի պաղ կա,
Պաղի միչին ընկուզ կա.
Պառավ, շատ մի՛ տռտռա,
Ախչիկըդ ինձի կուզա:
Ծառի վրայի տանձերը,
Հո՛պ-հո՛պ կենեն մանչերը.
Քանի օր ախչիկ տեսնեն,
Ծուռ կը թընեն ֆասերը:
Այս մեր գեղի ջաղչընին,
Ցորեն ալուր աղցուցին.
Ցորեն ալուր աղցուցին,
Ազապ ախչիկ փախցուցին:
Լախանա, տա լախանա,
Բախչաները լախանա.
Մի քիչ ոտրս ամուր զայնեմ,
Տանտերը կուրախանա:
Ա՜յ, օշտերը, տա օշտերը,
Ծուռ կը տանին փոշտերը.
Ախչիկ, թե օր ինձ չուզես
Իզուր տեղը կը խոսես:

ԱԿՈՓ ՁԱՆ

Օչխարը մերեմեր է,
Ֆըռֆըռիկ ֆինջան,
Զա՛րկ քամանջան,
Մըտի բախչան, Ակոփ ջան:
Թըշնամին խոսքին տերն է,
Ֆըռֆըռիկ ֆինջան,
Զա՛րկ քամանջան,
Մըտի բախչան, Ակոփ ջան:
Օչխար, արոտիդ մեռնիմ,
Ֆըռֆըռիկ ֆինջան,
Զա՛րկ քամանջան,
Մըտի բախչան, Ակոփ ջան:
Յար քո կարոտիդ մեռնիմ,
Ֆըռֆըռիկ ֆինջան,
Զա՛րկ քամանջան,
Մըտի բախչան, Ակոփ ջան:
Յար, մի՛ սըխմե բիլագըս,
Ֆըռֆըռիկ ֆինջան,
Զա՛րկ քամանջան,
Մըտի բախչան, Ակոփ ջան:
Կոտռի կը բիլազիկըս,
Ֆըռֆըռիկ ֆինջան,
Զա՛րկ քամանջան,
Մտրի բախչան, Ակոփ ջան:
Բիլազիկըս բեյրս է
Ֆըռֆըռիկ ֆինջան,
Զա՛րկ քամանջան,
Մըտի բախչան, Ակոփ ջան:
Յարըս վերչի տերըս է,
Ֆըռֆըռիկ ֆինջան,
Զա՛րկ քամանջան,
Մըտի բախչան, Ակոփ ջան:

ԲԱԹՈՒԼՈ ՋԱՆ, ԲԱԹՈՒԼՈ

Մեր մեծ արտը գարի է,
Բաթոլլո ջան, բաթոլլո,
Յար սիրելու տարի է,
Շաքար ու շար, բաթոլլո:
Ինչ օր էղավ հերիք է,
Բաթոլլո ջան, բաթոլլո.
Յարիս անունը Մելիք է,
Շաքար ու շար, բաթոլլո:
Ուլիցի պախոքները,
Բաթոլլո ջան, բաթոլլո.
Շան տղի սափոքները,
Շաքար ու շար, բաթոլլո:
Լուսնյակ գիշեր դուս էլա,
Բաթոլլո ջան, բաթոլլո.
Լուսնյակն անուշ կը ցոլա,
Շաքար ու շար, բաթոլլո:
Պատա տակը դալտա է,
Բաթոլլո ջան, բաթոլլո.
Էս ինչ սիրուն դայդա է,
Շաքար ու շար, բաթոլլո:
Կանաչ արտը մի կոխե,
Բաթոլլո ջան, բաթոլլո.
Սիրած յարը դ մի՛ փոխե,
Շաքար ու շար, բաթոլլո:
Յարը էկավ, ո՞ւր քընաց,
Բաթոլլո ջան, բաթոլլո.
Բումաժնիկը հոդ մնաց,
Շաքար ու շար, բաթոլլո:
Բացի՝ մեչը փարա կա,
Բաթոլլո ջան, բաթոլլո.
Սիրտը դարթլի յարա կա,
Շաքար ու շար, բաթոլլո:
Թոնն էկավ պուտիկ-պուտիկ,
Բաթոլլո ջան, բաթոլլո.
Իմ հաքինն էր չըթչըթիկ,
Շաքար ու շար, բաթոլլո:
Աղամանին աղքասը,
Բաթոլլո ջան, բաթոլլո.
Դու ըլլիս հորը հարսը,
Շաքար ու շար, բաթոլլո:
Հերիք խոսիս անառակ,
Բաթոլլո ջան, բաթոլլո,
Դառնամ կենեմ խայտառակ,
Շաքար ու շար, բաթոլլո:
Հերիք էղավ, բոլ էղավ,
Բաթոլլո ջան, բաթոլլո.
Ջուրն աշկերը գոլ էղավ,
Շաքար ու շար, բաթոլլո:
Ասված էնե՝ լավանաս,
Բաթոլլո ջան, բաթոլլո.
Մեր տան միչի հարս դառնաս,
Շաքար ու շար, բաթոլլո:
Յար ջան, մի՛ գնա յայլեն,
Բաթոլլո ջան, բաթոլլո.
Եթում կը մնա մայլեն,
Շաքար ու շար, բաթոլլո:

ԲԱԹՈՒԼՈ ՋԱՆ, ԲԱԹՈՒԼՈ

Մեշոքները շարել եմ,
Բաթոլլո ջան, բաթոլլո.
Մուկը մռթեդ կախել եմ,
Շաքար ի շարբաթ օլլո:
Շատ մի խոսի ավարա,
Բաթոլլո ջան, բաթոլլո,
Ջուրը բեյնեդ կը վազզե,
Շաքար ի շարբաթ օլլո:
Ինչո՞ւ կերար մեր լոբին,
Բաթոլլո ջան, բաթոլլո.
Քեզի թընեմ սև գուբին,
Շաքար ի շարբաթ օլլո:
Գնա արի, ման արի,
Բաթոլլո ջան, բաթոլլո.
Բարց կը թընեմ յան արի,
Շաքար ի շարբաթ օլլո:

ԱԽ ՋԱՆ ԻՄԱՆ, ՋԱՆ ԻՄԱՆ

Տունըմ շինենք գետի բերան,
Ախ ջան իման, ջա՜ն իման.
Վրեն քցենք ջուխտըմ գերան,
Ախ ջան իման, ջա՜ն իման:
Մեկը խոխի, մեկը ծիրան,
Ախ ջան իման, ջա՜ն իման.
Խոխին կոտրավ, մնաց ծիրան,
Ախ ջան իման, ջա՜ն իման:
Էլա էրթիկ տփիկ-տփիկ,
Ախ ջան իման, ջա՜ն իման,
Յարըս տունը չէր, լացի,
Ախ ջան իման, ջա՜ն իման:
Մեր դռները դիմաց-դիմաց,
Ախ ջան իման, ջա՜ն իման.
Քեզ օր տեսսա խելքըս քընաց,
Ախ ջան իման, ջա՜ն իման:

ԿՈԽԲԱ ԷԿԱՆ ՍԵԼԵՐԸ

Կոխբա էկան սելերը,
Երի, երի յանդըմ, օ՜յ, օ՜յ.
Կապեմ չուլքուս թելերը,
Շեկո ջան, յանդըմ, օ՜յ, օ՜յ:
Ուր քընացիր, ուր էկար,
Երի, երի յանդըմ, օ՜յ, օ՜յ.
Դու իմ սրտին դուր էկար,
Շեկո ջան, յանդըմ, օ՜յ, օ՜յ:
Գուբանը հաց եմ տարե,
Երի, երի յանդըմ օ՜յ, օ՜յ.
Բերանը բաց եմ տարե,
Շեկո ջան, յանդըմ, օ՜յ, օ՜յ:
Էլա սարը սար տեսսա,
Երի, երի յանդըմ օ՜յ, օ՜յ.
. . . . . .
Շեկո ջան, յանդըմ, օ՜յ, օ՜յ:
Յար կայնել ես կարմնջին,
Երի, երի յանդըմ, օ՜յ, օ՜յ.
Փաթըթվել ես յափընճին,
Շեկո ջան, յանդըմ, օ՜յ, օ՜յ:

ՇԱԽՈՎ ՊԱՐ

Ուր քընացիր, ուր էկար, էլլի յար,
Դու իմ սրտին դուր էկար, թելլի յար.
Աֆտամաբիլ քիմի էկավ, էլլի յար,
Շախով պարը միխոռե, թելլի յար:
Ա՛յ ուզա պախ, ուզա պախ, էլլի յար,
Սույա գետան ղըզա պախ, թելլի յար.
Աֆտամաբիլ քիմի էկավ, էլլի յար,
Շախով պարը միխոռե, թելլի յար:
Ախչի դու ուր ես, մուր ես, էլլի յար,
Իրմովըդ թուք ու մուր ես, թելլի յար.
Աֆտամաբիլ քիմի էկավ, էլլի յար,
Շախով պարը միխոռե, թելլի յար:
Ուր օր կերթաս հետըդ եմ, էլլի յար,
Ալմաս խնձոր ջեբիդ եմ, թելլի յար.
Աֆտամաբիլ քիմի էկավ, էլլի յար,
Շախով պարը միխոռե, թելլի յար:
Հերիք հաչես գավազա, էլլի յար,
Ջուրը բեյնեդ կը վազզե, թելլի յար.
Աֆտամաբիլ քիմի էկավ, էլլի յար,
Շախով պարը միխոռե, թելլի յար:
Մեր գոմին ճրաքտիլը, էլլի յար,
Մանչերուն տրաքտիլը, թելլի յար.
Աֆտամաբիլ քիմի էկավ, էլլի յար,
Շախով պարը միխոռե, թելլի յար:
Էլա սարը, աշեցի, էլլի յար,
Կաթին սերը քաշեցի, թելլի յար.
Աֆտամաբիլ քիմի էկավ, էլլի յար,
Շախով պարը միխոռե, թելլի յար:
Դաղեշու ջուրը քիչ է, էլլի յար,
Շան տղին միտքը փուչ է, թելլի յար.
Աֆտամաբիլ քիմի էկավ, էլլի յար,
Շախով պարը միխոռե, թելլի յար:
Բուխար փափաղ թրել ես, էլլի յար,
Գենա ճիտդ ծռել ես, թելլու յար.
Էսօր օրը կիրակի, էլլու յար,
Թող թշնամին տրաքի, թելլու յար:
Ինչի կերար մեր հավը, էլլու յար,
Քեզի բռնե սև ցավը, թելլու յար:

ՓԱՓՈՒՐԻ

Կայնել ես ախա-պախա,
Փափուրի ջան, փափուրի,
Տաշ-տուշ փափուրի.
Լաչակիդ տուտը կախ ա,
Փափուրի ջան, փափուրի:
Տաշ-տուշ փափուրի:
Սրտիդ սիրածը հոս է,
Փափուրի ջան, փափուրի,
Տաշ-տուշ փափուրի:
Փափուրի ջան, փափուրի,
Տաշ-տուշ փափուրի:
Ես ախչիկ եմ, ալ գուզեմ,
Փափուրի ջան, փափուրի,
Տաշ-տուշ փափուրի.
Բարակ մեշկիս շալ գուզեմ,
Փափուրի ջան, փափուրի,
Տաշ-տուշ փափուրի:
Սարը քընացի սընձի,
Փափուրի ջան, փափուրի,
Տաշ-տուշ փափուրի.
Ոտքըս առավ մե գընձի,
Փափուրի ջան, փափուրի,
Տաշ-տուշ փափուրի:
Ախչիկ, թե օր ինձ չառնես,
Փափուրի ջան, փափուրի,
Տաշ-տուշ փափուրի.
Հորըդ բեխերը խանձի,
Փափուրի ջան, փափուրի,
Տաշ-տուշ փափուրի:
Չայնիկն ու չային թասը,
Փափուրի ջան, փափուրի,
Տաշ-տուշ փափուրի.
Գլավենց ըռունդ հարսը,
Փափուրի ջան, փափուրի,
Տաշ-տուշ փափուրի:
Ախպըրին ակը պուզ է,
Փափուրի ջան, փափուրի,
Տաշ-տուշ փափուրի.
Տիրուն մանչերուն գուզե,
Փափուրի ջան, փափուրի,
Տաշ-տուշ փափուրի:
Էլա էրթիք, աշեցի,
Փափուրի ջան, փափուրի,
Տաշ-տուշ փափուրի.
Կաթին սերը քաշեցի,
Փափուրի ջան, փափուրի,
Տաշ-տուշ փափուրի:
Կռունկն իչավ կալերը,
Փափուրի ջան, փափուրի,
Տաշ-տուշ փափուրի.
Կտռավ սազիս թելերը,
Փափուրի ջան, փափուրի,
Տաշ-տուշ փափուրի:

ԲՈՅՈՎ ԲՈՒՍՈՎ ԻՄ ՅԱՐՆ Է

Ամպել է՝ թոն չի գալիս,
Մթնել է՝ տուն չի գալիս.
Բոյով-բուսով իմ յարն է,
Շախով-շուխով իմ յարն է:
Հովփոփ թափ տուր ու թռի,
Ջայիլ տղա, մի վախի.
Բոյով-բուսով իմ յարն է,
Շախով-շուխով իմ յարն է:
Էրկան արտը ցորեն է,
Յարըս ինձի գովել է.
Բոյով-բուսով իմ յարն է,
Շախով-շուխով իմ յարն է:

ՀՈՅ ՆԱԶԸՄ

Էրթիքը բուն եմ թըրե,
Հո՜յ, նազըմ, նազըմ, նազըմ,
Տաշշի նազըմ, քանդըրբազըմ,
Մանչերուն շուն եմ թրե,
Հո՜յ, նազըմ, նազըմ, նազըմ,
Տաշշի նազըմ, քանդըրբազըմ:
Ճեպիս բերանը պուտիկ,
Հո՜յ, նազըմ, նազըմ, նազըմ,
Տաշշի նազըմ, քանդըրբազըմ.
Ախչըկնուն կանչել եմ կուտիկ,
Հո՜յ, նազըմ, նազըմ, նազըմ,
Տաշշի նազըմ, քանդըրբազըմ:
Լամպը տակը լուս չի տա,
Հո՜յ, նազըմ, նազըմ, նազըմ,
Հերըս գեղեղուս չի տա,
Տաշշի նազըմ, քանդըրբազըմ:

ԷԼԼԻ ՅԱՐ

Աֆտամաբիլ քիմի-քիմի, էլլի յար,
Շախով պարը խոռ մի անի, թելլի յար.
Ես ու դու ի՞նչ ունենք, էլլի յար,
Կոլխոզի հողերը վար անենք, թելլի յար:
Դուշմանի աչքը հանենք, էլլի յար,
Թոող թշնամու սրտով չըլլի, թելլի յար:
Կոլխոզի կամքովը ըլլի, էլլի յար,
Ես քու կամքովըդ էկա, թելլի յար,
Չար թշնամու կամքով չեկա, թելլի յար:

ՔԵԼԵ ՆԱԶԱՆ

Քելե, Նազան, քելե,
Ինչ նազ ես անում,
Սարի կաքավի պես
Փարվեզ ես անում:
Նազանըս սիրուն է,
Հայլին ի՞նչ կենե,
Բերանն անուշ է,
Շաքարն ի՞նչ կենե:
Մաքրունու ճամփեն
Էրկան ու դիզ է,
Նազանիս մազերը
Քառասուն հուս է:
Մաքրունու ճամփեն
Կարմիր քարած է,
Նազանիս մատները
Մատնիք շարած է:
Ուլիցեն անցնելիս,
Մեշկըս գոտի էր,
Էրի թե փախչեի,
Կիլլեն մոտիկ էր:
Նազանըս պառկել էր,
Ծանըր կը տըքար,
Չորս բոլորը կայեր,
Ազգական չկար:
Մաշինեն գալիս էր,
Փերածը եղ էր,
Նազանըս պառկել էր,
Ուզածը դեղ էր:
Մաշինեն գալիս է՝
Բերանը լուլա,
Նազանիս տանին կը,
Մայրիկը կուլա:
Ջուխտըմ կռունկ անցավ
Շայի հողերը,
Ֆալակն ինձի ջոկեց
Անուշ մորիցըս:
Կանչե, կռունկ, կանչե,
Տակըդ չիման է,
Աշխըրքին արև է,
Մեզի դուման է:
Գալոշնին հաքել ես,
Սալլամիշ կըլլիս,
Մայրիկըդ էկել է,
Տալամիշ կըլլիս:
Քելե Նազան, քելե,
Ինչ նազ ես անում,
Սարի կաքավի պես
Փարվեզ ես անում:

ՀԱՆԴԵ ԹԻԹԵՌՆԱԿ Է

Այսօր օրը նորել է,
Հա՛նդե թիթեռնակ է.
Հա՛նդե թիթեռնակ է,
Դայրիս չիթը թանգ է:
Գնա, գնա գալիս եմ,
Հա՛նդե թիթեռնակ է.
Հա՛նդե թիթեռնակ է,
Դայրիս չիթը թանգ է,
Հետևիցըդ գալիս եմ,
Հա՛նդե թիթեռնակ է,
Հա՛նդե թիթեռնակ է,
Դայրիս չիթը թանգ է:
Սարեր-ձորեր լախանա,
Հա՛նդե թիթեռնակ է,
Հա՛նդե թիթեռնակ է,
Դայրիս չիթը թանգ է,
Շան տղեն սալախանա,
Հա՛նդե թիթեռնակ է,
Հա՛նդե թիթեռնակ է,
Դայրիս չիթը թանգ է:
Սարին էտտին բազուկ է,
Հա՛նդե թիթեռնակ է,
Հա՛նդե թիթեռնակ է,
Դայրիս չիթը թանգ է,
Էտիկ մանչ չէ, մոզիկ է,
Հա՛նդե թիթեռնակ է,
Հա՛նդե թիթեռնակ է,
Դայրիս չիթը թանգ է:
Քաղքին բոլոր ժեշտ է,
Հա՛նդե թիթեռնակ է,
Հա՛նդե թիթեռնակ է,
Թուշըդ պաքնեմ, հեշտ է,
Հա՛նդե թիթեռնակ է,
Դայրիս չիթը թանգ է:
Մեր ըշպիշկեն թարեքն է,
Հա՛նդե թիթեռնակ է,
Հա՛նդե թիթեռնակ է,
Դայրիս չիթը թանգ է,
Մեր ջայիլը Ալեքն է,
Հա՛նդե թիթեռնակ է,
Հա՛նդե թիթեռնակ է,
Դայրիս չիթը թանգ է:
Փոխենք էս պարի ղայդեն,
Հա՛նդե թիթեռնակ է,
Հա՛նդե թիթեռնակ է,
Զայնենք դուխովնուն ղայդեն,
Հա՛նդե թիթեռնակ է,
Հա՛նդե թիթեռնակ է,
Դայրիս չիթը թանգ է:

ԷՐԹԻՔ, ԷՐԹԻՔ ԲՈՆԵԼ ԵՍ

Էրթիք, էրթիք բռնել ես,
Անթիկ լալա է յարըս,
Աղվան-Օսանն է յարըս.
Էրթմա տակը քնել ես.
Անթիկ լալա է յարըս,
Աղվան-Օսանն է յարըս.
Էլա խոտնոց խոտ թափի,
Անթիկ լալա է յարըս.
Աղվան-Օսանն է յարըս.
Քեզ մի խնձորով խափի,
Անթիկ լալա է յարըս,
Աղվան-Օսանն է յարըս.
Իմ չիչակը քաղած է,
Անթիկ լալա է յարըս.
Աղվան-Օսանն է յարըս.
Թմբի տակը թաղած է,
Անթիկ լալա է յարըս.
Աղվան-Օսանն է յարըս:
Մի աղլուղ վարթ եմ քաղե,
Անթիկ լալա է յարըս.
Աղվան-Օսանն է յարըս.
Ղրկեմ ախպորըս յարին,
Անթիկ լալա է յարըս.
Աղվան-Օսանն է յարըս:
Բարակ ճամփեն մտել ես,
Անթիկ լալա է յարըս.
Աղվան-Օսանն է յարըս:
Կորուցածըս գտել ես,
Անթիկ լալա է յարըս.
Աղվան-Օսանն է յարըս:
Յարըմ ունիմ Գիմռի է,
Անթիկ լալա է յարըս.
Աղվան-Օսանն է յարըս,
Դոխըմ ունիմ ղումռի է,
Անթիկ լալա է յարըս.
Աղվան-Օսանն է յարըս:
Իմ ճամփես կոշտե-կոշտ,
Անթիկ լալա է յարըս.
Աղվան-Օսանն է յարըս,
Նամակըս ընկավ փոշտե-փոշտ,
Անթիկ լալա է յարըս.
Աղվան-Օսանն է յարըս:
Բարակ ախպուր, զուլալ ջուր,
Անթիկ լալա է յարըս.
Աղվան-Օսանն է յարըս,
Լավ տղա ես, քուրրդ տուր,
Անթիկ լալա է յարըս,
Աղվան-Օսանն է յարըս:
Խնձորըն ընկավ ֆոֆռան,
Անթիկ լալա է յարըս,
Աղվան-Օսանն է յարըս,
Թուշրդ պագնեմ, մըռմըռան,
Անթիկ լալա է յարըս,
Աղվան-Օսանն է յարըս:
Էրևընու ղըշերը,
Անթիկ լալա է յարըս.
Աղվան-Օսանն է յարըս,
Թուշրդ պագնեմ գիշերը,
Անթիկ լալա է յարըս,
Աղվան-Օսանն է յարըս:
Ոտքըս թըրի բալկոնին,
Անթիկ լալա է յարըս.
Աղվան-Օսանն է յարըս,
Թռա հեծա ֆայթոնին,
Անթիկ լալա է յարըս,
Աղվան-Օսանն է յարըս:
Սարի սինձն ինչ կենեմ,
Անթիկ լալա է յարըս.
Աղվան-Օսանն է յարըս,
Կաթն ու բրինձն ինչ կենեմ,

Անթիկ լալա է յարրս,
Աղվան-Օսանն է յարրս:
Սարի էտտին Սոքոն,
Անթիկ լալա է յարրս.
Աղվան-Օսանն է յարրս,
Նանես թխել է բոքոն,
Անթիկ լալա է յարրս,
Աղվան-Օսանն է յարրս:

ՀԱՄԱՅԱԿ ՋԱՆ

Կը բերես նուռը,
Կը կայնիս դուռը,
Համայակ ջան.
Չե՞ս բերի նուռը,
Չե՛մ կայնի դուռը,
Համայակ ջան:
Կը բերես խնձոր,
Կըգամ հետըդ ձոր,
Համայակ ջան,
Չե՞ս բերի խնձոր,
Չե՛մ գա հետըդ ձոր,
Համայակ ջան:
Կը բերես կանֆեթ,
Կը կայնիմ ճամփեդ,
Համայակ ջան,
Չե՞ս բերի կանֆեթ,
Չե՛մ կայնի ճամփեդ,
Համայակ ջան:
Կը բերես մոմփազ,
Կը կայնիմ լոպպազ,
Համայակ ջան:
Չե՞ս բերի մոմփազ,
Չեմ կայնի լոպպազ,
Համայակ ջան:
Ինչի՞ կերար բուդը,
Որ խոսեցի սուտը,
Համայակ ջան,
Ինչի՞ կերար լոբին,
Քեզ դնեմ գուբին,
Համայակ ջան:

ՀԵՏԵՎԻՑՂ ԳԱԼԻՍ ԵՄ

Ուր քընացիր, ուր էկար,
Հոփ քամարըս, քամարըս,
Շախկուր-շուխկուր քամարըս:
Հետևիցըդ գալիս եմ,
Հոփ քամարըս, քամարըս,
Շախկուր-շուխկուր քամարըս:
Էրթիքը բուն եմ թրել,
Հոփ քամարըս, քամարըս,
Շախկուր-շուխկուր քամարըս,
Մանչերուն ղուն եմ թրել,
Հոփ քամարըս, քամարըս,
Շախկուր-շուխկուր քամարըս:
Էլա սարը ման էկա,
Հոփ քամարըս, քամարըս,
Շախկուր-շուխկուր քամարըս,
Ման էկա ու չը գտա,
Հոփ քամարըս, քամարըս,
Շախկուր-շուխկուր քամարըս:
Կաքավը քարի վրա,
Հոփ քամարըս, քամարըս,
Շախկուր-շուխկուր քամարըս,
Խնձորը ծառի վրա,
Հոփ քամարըս, քամարըս,
Շախկուր-շուխկուր քամարըս:
Էլա սարը, սար տեսսա,
Հոփ քամարըս, քամարըս,
Շախկուր-շուխկուր քամարըս,
Ճերմակ դեշով յար տեսսա,
Հոփ քամարըս, քամարըս,
Շախկուր-շուխկուր քամարըս:
Ջուրը լցվավ փառչերը,
Հոփ քամարըս, քամարըս,
Շախկուր-շուխկուր քամարըս,
Ասված պահե մանչերը,
Հոփ քամարըս, քամարըս,
Շախկուր-շուխկուր քամարըս:
Ջուրը լցվավ թասերը,
Հոփ քամարըս, քամարըս,
Շախկուր-շուխկուր քամարըս,
Ասված պայե հարսները,
Հոփ քամարըս, քամարըս,
Շախկուր-շուխկուր քամարըս:
Ջուրը լցվավ ջաղչընին,
Հոփ քամարըս, քամարըս,
Շախկուր-շուխկուր քամարըս,
Ասված պայե ախչըկնին,
Հոփ քամարըս, քամարըս,
Շախկուր-շուխկուր քամարըս:
Ջուրը լցվավ առվընին,
Հոփ քամարըս, քամարըս,
Շախկուր-շուխկուր քամարըս,
Ասված պայե պառվընին,
Հոփ քամարըս, քամարըս,
Շախկուր-շուխկուր քամարըս:
Փոխենք էս պարի ղայդեն,
Հոփ քամարըս, քամարըս,
Շախկուր-շուխկուր քամարըս,
Ջայնենք դուխովնու ղայդեն,
Հոփ քամարըս, քամարըս,
Շախկուր-շուխկուր քամարըս:

ՊԱՂ ԱԽՊՈՒՐԻ ՔԱՐԻ ՎՐԱ

Ուր քընացիր, ուր էկար,
Պաղ ախպուրի քարի վրա մի տղա,
Այս սենյակից հեռու կմնաս, կճվա,
Դուն իմ սրտին դուր էկար,
Պաղ ախպուրի քարի վրա մի տղա,
Այս սենյակից հեռու կմնաս, կճվա:
Սարեն քուքան ջուխտ ախչիկ,
. . . . . .
Սարեն քուքան ջուխտըմ ղոչ,
Պաղ ախպուրի քարի վրա մի տղա,
Այս սենյակից հեռու կմնաս, կճվա,
Ջխտին մեկն էր օրոջ.
Պաղ ախպուրի քարի վրա մի տղա,
Այս սենյակից հեռու կմնաս, կճվա:
Չայիր՝ օրքան ղոռուղ է,
Պաղ ախպուրի քարի վրա մի տղա,
Այս սենյակից հեռու կմնաս, կճվա,
Յափրաղը համայիլ է,
Պաղ ախպուրի քարի վրա մի տղա,
Այս սենյակից հեռու կմնաս, կճվա:
Սերկևիլը դեղին է,
Պաղ ախպուրի քարի վրա մի տղա,
Այս սենյակից հեռու կմնաս, կճվա,
Աշկըս այտի գեղին է,
Պաղ ախպուրի քարի վրա մի տղա,
Այս սենյակից հեռու կմնաս, կճվա:
Մազերըդ էրել ես խըսիր.
Պաղ ախպուրի քարի վրա մի տղա,
Այս սենյակից հեռու կմնաս, կճվա,
Մանչերուն՝ բոյիդ եսիր,
Պաղ ախպուրի քարի վրա մի տղա,
Այս սենյակից հեռու կմնաս, կճվա:
Փոխենք էս պարի ղայդեն,
Պաղ ախպուրի քարի վրա մի տղա,
Այս սենյակից հեռու կմնաս, կճվա,
Ջայնենք դուխովնուն ղայդեն,
Պաղ ախպուրի քարի վրա մի տղա,
Այս սենյակից հեռու կմնաս, կճվա:

ՍԵՐ ՉՄՆԱՑ, ԶՈՒՐ ՔՆԱՑ

Էսօր օրը կիրակի,
Բիլոր աքլորրըմ բաղն բուլ ու շեյթան,
Բիլոր չերքեզըմ բաղըմ բուլ ու շեյթան,
Թող թշնամին տրաքի,
Բիլոր աքլորրըմ բաղըն բուլ ու շեյթան,
Բիլոր չեչքեզըմ բաղըմ բուլ ու շեյթան:
Վագզալ, տըկեդ ջուր քընաց,
Բիլոր աքլորրըմ բաղըն բուլ ու շեյթան,
Բիլոր չերքեզըմ բաղըմ բուլ ու շեյթան
Սեր չմնաց, զուր քընաց,
Բիլոր աքլորրըմ բաղըն բուլ ու շեյթան,
Բիլոր չերքեզըմ բաղըմ բուլ ու շեյթան:
Այազը պուզ է բռնե,
Բիլոր աքլորրըմ բաղըն բուլ ու շեյթան,
Բիլոր չերքեզըմ բաղըմ բուլ ու շեյթան:
Քանքիլը թոզ է բռնե,
Բիլոր աքլորրըմ բաղըն բուլ ու շեյթան,
Բիլոր չերքեզըմ բաղըմ բուլ ու շեյթան:
Ախչիկ, անունըդ ասա,
Բիլոր աքլորրըմ բաղըն բուլ ու շեյթան,
Բիլոր չերքեզըմ բաղըմ բուլ ու շեյթան:
Ֆասիդ փիսկիլը խաս ա,
Բիլոր աքլորրըմ բաղըն բուլ ու շեյթան,
Բիլոր չերքեզըմ բաղըմ բուլ ու շեյթան:
Ջեբիս բերանը պուտիկ,
Բիլոր աքլորրըմ բաղըն բուլ ու շեյթան,
Բիլոր չերքեզըմ բաղըմ բուլ ու շեյթան:
Մանչերուն կանչեմ կուտիկ,
Բիլոր աքլորրըմ բաղըն բուլ ու շեյթան,
Բիլոր չերքեզըմ բաղըմ բուլ ու շեյթան:

ԳՆԱ, ԳՆԱ, ԳԱԼԻՍ ԵՄ

Գնա, գնա, գալիս եմ,
Լենինական-Լենինական, յարըս,
Էրկու քսան, վեց տարեկան յարըս,
Հետևիցդ գալիս եմ (կրկնել):
Ինչի՞ կերար մեր հավը,
Կըշտեդ բռնե սև ցավը:
Տեղ եմ ցըգե փոթ քուքա,
Միչեն խընկա հոտ քուքա:
Տեղ եմ ցըգե փաթուսխա,
Միչի պառկողը՝ Մաթուշկա:
Տեղ եմ ցըգե մինդար է,
Միչի պառկողը ճինդար է:
Կամաց քշեք սելերը,
Կապեմ չուլքուս թելերը:
Մենք էրկուսըս քուրիկ ենք,
Պարի միչի ժուլիկ ենք:
Հերիք հաչես գավազա,
Թուքը բեյնեդ կը վազզա:
Էտիկ խոսք չէր, օր ըսիր,
. . . . . .:
Գառին քիթը դաղած է,
Էտիկ մանչ չէ, պաղած է:
Սարերը անծոտել է,
Օչխարը բրթոտել է:
Սարերը սըռսըռում է,
Էրկընքնին կըռկըռում է:
Սարի էտևը դուտտիկ,
Բոյիդ մեռնիմ, Արութիկ:
Փոխենք էս պարի դայդեն,
Ջայնենք դուխովնու դայդեն:

ԲԱՂՈՒՄԸ ԾԻՐԱՆ ԿԸԼԼԻ

Բաղումը ծիրան կըլլի,
Ուտողաց անուշ ըլլի.
Այգեպան ջան, առանց քեզ,
Բաղն ավերակ կըլլի:
Ամպել ա փուքա-փուքա,
Իմ կերածն անուշ թուք ա,
Արի մենք իրար սիրենք,
Տեսնողը չասե՝ սուտ ա:
Կաքավը քարի վրա,
Խընձորը ծառի վրա.
Չէ՞ որ դու ինձ խոսք տվիր,
Մի բանցըր սարի վրա:
Էլա սարը ման էկա,
Ման էկա ու չը գտա.
Երանի թե գտնեի,
Ծով դարտերըս պատմեի:
Այս սարը բանցըր սար է,
Սիրած յարը քաղցըր է.
Գնամ մորըդ հարցընեմ,
Թե չտա, կը փախցընեմ:
Աշընքվա օրն անուշ է,
Շաֆտա խնձորն անուշ է.
Սիրած յարից բաժնըվելը
Նրանից նորն անուշ է:
Արազի քամին էլավ,
Քամու հետ քամին էլավ.
Սև աչեր, դուք լաց էղեք,
Բաժանման ժամը էկավ:
Խնամի ջան խոշ ես էկե,
Դարտակ ու բոշ ես էկե.
Էրկու գարի պլիկ ես փերե,
Էնե ճամփեն դու ես կերե:

ՕՍԱՆ ՅԱՐ

Ուր քընացիր, ուր էկար,
Օսան յար, յար ու յաման,
Օսան յար, յար ու յաման,
Ասա, դարտըդ իմանամ.
Դուն ինձի դուր չեկար,
Օսան յար, յար ու յաման,
Օսան յար, յար ու յաման,
Ասա դարտըդ իմանամ:

Քընա, արի, ման արի,
Տարնանիկ բալա.
Բարց կը թընեմ, յան արի,
Դարտովըդ վառվա:
Կայնել ես կարմընջին,
Տարնանիկ բալա.
Մանգիշ օղերն անգրճիդ,
Դարտովըդ վառվա:
Հոյ նընըմ քոչարի,
Տաշի-տուշի քոչարի.
Ալըլվե՞մ, ալըլվեմ,
Դոշիդ վրա ծալըլվեմ.
Տաշի-տուշի քոչարի,
Թուշըդ պաչեմ զօր գիշեր,
Հո՞յ նընըմ քոչարի,
Ես քու սիրած յարն ըլլեմ:

ՍԻՐԵԼ ԵՄ, ՍՐՏՈՎՍ ՉԷ

Սիրել եմ, սրտովս չէ,
Նար գիլո, ելո, ելո,
Նար գիլո, ելո, ելո,
Նաց վալո, կենացվալո, (կրկնել
եռատողը)
Կառնեմ՝ իմ բոյովըս չէ:
Ա՛յ տղա, ուր ես, մուր ես,
Իրմովդ թուք ու մուր ես:
Գնա, արի, ման արի,
Բարց կը թընեմ, յան արի:
Թռիք, թող թոզը էլլե,
Մեր միչի բոզը էլլե:
Էլա սարը, աշեցի,
Կաթին սերը քաշեցի:
Չոբան, տավարըդ քաշե,
Ետ դառի, յարիդ աշե:
Ջաղացաքարին աշե,
Քո սիրած յարին աշե:
Ես սիրել եմ, հալը տանի,
Աշխարի բանին աշե:
Լուսնյակ, դու կամաց քընա,
Բարև տու, անցի քընա:
Կաքավը կայնավ քարին,
Խընթրեմ Աստըծմեն բարին:
Փոխենք էս պարի դայդեն,
Ջայնենք դուխովնու դայդեն:

Հոյ Կիլին ջան, շատ մի ցանի բամբակ,
Կերթամ սիդը, վրեդ կենեմ գանգատ.
Ալ բլուզդ ես եմ, շալ բլուզդ ես եմ,
Սեստրի կարած բլուզդ ես եմ,
Մաթուշկի կարած բլուզըդ ես եմ,

Հոպլի բաղին տուր.
Սու ջեյրանի դաղին տուր.
Գնա, արի, յան արի,
Հոպլի-հոպլի, բաղին տուր,
Ոտքըդ վերու քարին տուր:
Երևընու ըշկոլի տակը,
Հոպլի-հոպլի, բաղին տուր.
Ղալամ-գրիչը ծակը,
Սու ջեյրանի բաղին տուր:
Բուխար փափաղ թրել ես, էլլու յար,
Գենա ճիտըդ ծռել ես, թելլու յար.
Աֆտամաբիլ քիմի էկավ էլլու յար,
Շախով պարը մի խոռե, թելլու յար:

Զոլի զոլը, զոլի զոլը, իմ յարը,
Ինքնե զոլը, կոմսոմոլը, իմ յարը.
Իման-իման իմանի,
Չեմ տա հազար թումանի,
Կուտամ կոմսոմոլ տղին,
Աֆտոն թընե ու տանի:

Կայնե յարո, կայնե շեկո, կայնե քամ,
Բոխչես առնեմ, էլլեմ քամ:
Այսօր օրը նորել է՞,
Օ՞ր, օ՞ր, օտինն է.
Յարիս մալը կորել է,
Տա՞շ շորո՞ր օտինն է:
Ով գտել է, փերե տա,
Օ՞ր, օ՞ր, օտինն է,
Մեշկիս քամարը միրտա,
Տա՞շ շորո՞ր օտինն է՞:

Հայրենասիրական երգեր

ԱՆԹՐԱՆԻԿԸ

Անթրանիկը տղամարթ է,
Անվախ, հերոս առաչնորթ է.
- Մի՛վախենա, հայի՛տղա,
Բա՛վ է մնաս թուրքի գյադա:
Անթրանիկի ձեռքի սուրը,
Փայլեց հայոց տերությունը.
- Չվախենաս, հայի՛տղա,
Բա՛վ է մնաս թուրքի գյադա:
Անթրանիկը ընկերներով,
Առաչ կերթա փայլուն սրով.
Չի՛վախենա իր օրով,
Առաչ կերթա ուժեղ հոքով:

...Շուն տաճիկը Արփաչայը անցկացավ,
Գերի վերուց, մարթ չթողեց Շերագալ.
Գարին, ցորեն, հաց չմնաց Շերագալ,
Մաքուր ծնված մարթ չմնաց Շերագալ:

Ջա՜ն, ջա՜ն, Մելիք ջան,
Ղոշունի սարդար Մելիք ջան.
Մելիքըս էլավ Ալաճեն,
Ղոշունը թափավ յամաջեն.
Արևն էլավ մեր մըտավ,
Մելիքըս Արզըրում գտավ:

Գերմանա, գերմանա,
Թոփլրդ մի՛բանա.
Մալադոյ սալդատ եմ,
Սիրտըս կը դողա:
Մաշինեն էկել էր՝
Տասվերկու վագոն,
Եղբայրս դռնից անցնում էր,
Բռնել էր դրակոն:

Գիմռու ճամփեն կոշտ էր, կոշտ,
Բի՜լբուլ, բի՜լբուլ.
Նամակըս ընկավ փոշտե-փոշտ,
Յանարըմ բի՜լբուլ:

Թաքավորին գլխուն թասը,
Ջոկեց ջայիլներուն խասը.
Թաքավորին ձին էր դաշղա,
Ջոկեց կարմիր բլեթը բաշղա:

ՀՈՓՈՓ ՄԱՐԱԼ

Արտըդ բուսնել է ղամուշ,
Հոփոփ մարալ,
Օ՜յ մարալոյ, մա՜ղալոյ.
Սալդատ տըղեքը
Դավալոյ, դա՜վալոյ.
Յարիս անունն է Մանուշ,
Հոփոփ մարալ,
Օ՜յ մարալոյ, մա՜ղալոյ,
Սալդատ տըղեքը
Դավալոյ, դա՜վալոյ.
Կանչում եմ յար, թեզ արի,
Հոփոփ մարալ,
Օ՜յ մարալոյ, մա՜ղալոյ,
Սալդատ տըղեքը
Դավալո, դա՜վալոյ.
Թշնամու սիրտը մարի,
Հոփոփ մարալ,
Օ՜յ մարալոյ, մարալոյ,
Սալդատ տըղեքը
Դավալոյ, դա՜վալոյ.
Փոս չայիրին ախպուրը,
Հոփոփ մարալ,
Օ՜յ մարալոյ, մա՜ղալոյ,
Սալդատ տըղեքը
Դավալոյ, դա՜վալոյ,
Հաց կը տանի Վարթունը,
Հոփոփ մարալ:
Օ՜յ մարալոյ, մա՜ղալոյ
Սալդատ տըղեքը
Դավալոյ, դա՜վալոյ:

ՇՈՒՆ ՏԱՃԻԿԸ ԱՐՓԱՉԱՅԸ ԱՆՑԵԼ Է

Յար ջան, քելե, չայիր-չիման ծաղկել է,
Շուն տաճիկը Արփաչայը անցել է.
Լուսնիակը նորել է,
Յար ջան, քելե, չայիր-չիման ծաղկել է,
Շուն տաճիկը Արփաչայը անցել է,
Յարըս մոլորվել է:
Յարըս քընաց՝ չայիր-չիման ծաղկել է,
Շուն տաճիկը Արփաչայը անցել է:
Յար ջան, յանանիդ մեռնիմ,
Յար ջան, քելե, չայիր-չիման ծաղկել է,
Շուն տաճիկը Արփաչայը անցել է:
Քո սիրած յարիդ մեռնիմ,
Յար ջան, քելե, չայիր-չիման ծաղկել է,
Շուն տաճիկը Արփաչայը անցել է:
Իմացա յար ես ճարե,
Յար ջան, քելե, չայիր-չիման ծաղկել է,
Շուն տաճիկը Արփաչայը անցել է:
Թազզա ճարածիդ մեռնիմ,
Յար ջան, քելե, չայիր-չիման ծաղկել է,
Շուն տաճիկը Արփաչայը անցել է:

ՄԻ՛ ՏԱՆԻ ՅԱՐԸՍ

- Ես քուր՝ քուրիկ եմ.
Զինվոր, մի՛տանի յարըս,
Մի՛վառե ջայիլ կյանքըս.
- Նշանվի, կերթա յարըս,
Չի՛մնա հարի քալըս:
- Պարի մեջ ժուլիկ եմ,
Զինվոր, մի՛տանի յարըս,
Մի՛վառե ջայիլ կյանքըս.
- Նշանվի, կերթա յարըս,
Չի՛մնա հարի քալըս:
- Քուր ջան, ձենըդ հանեցիր,
Զինվոր մի՛տանի յարըս,
Մի՛վառե ջայիլ կյանքըս.
- Նշանվի, կերթա յարըս,
Չի՛ մնա հարի քալըս:
- Պարին մեչը ցանեցիր,
Զինվոր, մի՛տանի յարըս,
Մի՛վառե ջայիլ կյանքըս.
- Նշանվի, կերթա յարըս,
Չի՛ մնա հարի քալըս:
- Հաստատ գիտենաս բանը,
Զինվոր, մի՛տանի յարըս,
Մի՛ վառե ջայիլ կյանքըս.
- Նշանվի կերթա յարըս,
Չի՛ մնա հարի քալըս:
- Ըսպասե յարիդ քալը.
Զինվոր, մի՛տանի յարըս,
Մի՛ վառե ջայիլ կյանքըս.
- Նշանվի, կերթա յարըս,
Չի՛ մնա հարի քալըս:

Խոտերի շուրջը ման եմ գալիս,
Տըխուր օրվանըս վրա՞եմ լալիս,
Բանակ տարան էրկու բալիս,
Աշխարի չափ ցավըս եմ լալիս:

ՀԱՍԱՆ-ՂԱԼԱ

Ես Թաքոսն եմ Պարնըգեղցի,
Այս խոսքերը հընարեցի.
Վերչը յարալու մնացի,
Վերա՞ն դառնանք, Հասան-Ղալա:
Էչմիածնա վանքի սըներ,
Աջամ քանդեց հայոց տըներ.
Օգնեցեք մեզի, հայ զավակներ,
Վերա՞ն դառնանք, Հասան-Ղալա:
Էկանք հասսանք Ղարա-Ղուրղան,
Վրաներս չունենք յորղան.
Էլ չենք տեսնի մենք Հայաստան,
Վերա՞ն դառնանք, Հասան-Ղալա:
Հասան-Ղալեն բանցը սար է,
Չորս բոլորը մառմառ քար է.
Բոլոր զինվոր հայ զավակ են,
Վերա՞ն դառնանք, Հասան-Ղալա:

ՏԱՐԻՆ ՎԱՏ Ը

Խնթրեցեք, եղբայրներ, միաբերան,
Որքան որ հայ զավակներ կան.
Աստվածն հասնի մեր օգնության.
Օրեր, անցեք, տարին վատ ը:
Բարախոթն էկավ Փոթիից,
Նամակ բերեց հայրենիքից.
Մարավ կըրակ սրտիս վերքից.
Օրեր, անցեք, տարին վատ ը:
Նամակ գրեմ իմ սիրուիս,
Պատվով ընդունիր, իմ սիրուիս.
Հնազանդվիր իմ ծնողիս,
Արժանի կլինես փափագիս:

ՄՈՒԺԸ ՊԱՏԵՑ

Մուժը պատեց, մայրիկ, մտանք
դիրքերը,
Կամանդիրս գոռաց՝ առե՛ք զենքերը.
Կռունկ, ո՞ւրդից քուքաս,
Գերմանու հողե՞ն.
Հըճըվի խապար ունի՞ք
Եղբորրս կողմեն.
Էլլի դարտերրս, մայրիկ ջան,
Թաժժացան ցավերրս:
Բարախոթը նստա անցա Սև ծովեն,
Մի նամակ գրեցի իմ ազիզ մորը.
Թաքավոր, թաքավոր,
Սալդատ մի տանի,
Յարրս տունը մնա,
Հալողը կը տանի.
Էլլի դարտերրս, մայրիկ ջան,
Թաժժացան ցավերրս.
Մաշինեն գալիս է տասվերկու վագոն,
Եղբորրս կտանին սալդատ դրագոն:
Քանցելարին դուռը
Փայ կենեն փարեն,
Անտեր մնա փարեն,
Խորունկ է յարեն:
Քանցելարին դուռը
Վառիր կը փուռը,
Սալդատ տղոց սրտեն
Չելավ մըռմուռը:
Ընկել եմ պըլեն,
Գիր չի քա տնեն.
Կարքաս նամակըս, մայրիկ,
Վատ ժամանակըս:
Էլլի դարտերրս, մայրիկ ջան,
Թաժժացան ցավերրս:
Մաշինեն գալիս է,
Փերածը եղ է,
Յարալուն պառկել է,
Ուզածը դեղ է:
Ընկել եմ գերի,
Գերմանի գերի,
Ղարիբ եմ սալդատ,
Ո՞ւմ էրթամ գանգատ.
Էլլի դարտերրս, մայրիկ ջան,
Թազացան ցավերրս:
Մի զույգ կռունկ էկան
Վերի կալերը,
Հավաքեցին տարան, մայրիկ,
Գյուղի լավերը.
Սարից ես էկա,
Դու դուռը բացիր,
Ձեռքդ ծոցդ թրիր,
Ա՜խ արիր, լացիր.
Էլլի դարտերրս, մայրիկ ջան,
Թազացան ցավերրս:
Գերմանացու գլխուն ընկնի մեծ քարը,
Կրակ լցեց վառեց ամբողջ աշխարը.
Ղարիբ եմ, սալդատ, մայրիկ ջան,
Ո՞ւմ էրթամ գանգատ.
Էլլի դարտերրս, մայրիկ ջան,
Թազացան ցավերրս:

ԷԼԵՔ ՏՂԵՔ, ԷԼԵՔ . . .

Էրթանք, տղեք, Գիմրվա դիզը,
Էլե՛ք, տղե՛ք, էլե՛ք, քոչերը բառնանք,
Հասնինք Թրապիզոն, շուտով ետ դառնանք:
Բռնել ենք մեր եռլի գործը,
Էլե՛ք, տղե՛ք, էլե՛ք, քոչերը բառնանք,
Հասնինք Թրապիզոն, շուտով ետ դառնանք:
Ալագեզը բանցը է.
Էլե՛ք, տղե՛ք, էլե՛ք, քոչերը բառնանք,
Հասնինք Թրապիզոն, շուտով ետ դառնանք:
Տըկի ջուրը քաղցը է,
Էլե՛ք, տղե՛ք, էլե՛ք, քոչերը բառնանք,
Հասնինք Թրապիզոն, շուտով ետ դառնանք:
Գիմրի էրթըցողը իմ յարն է,
Էլե՛ք, տղե՛ք, էլե՛ք, քոչերը բառնանք,
Հասնինք Թրապիզոն, շուտով ետ դառնանք:
Թող էրթա, մուրազը առնե,
Էլե՛ք, տղե՛ք, էլե՛ք, քոչերը բառնանք,
Հասնինք Թրապիզոն, շուտով ետ դառնանք:

ԿՈՌՈՒՆԿՆԵՐ

(Ենթադրաբար հորինել է ուճմանեցի Ներսես Գասպարյանը 1942-ին, Սևաստոպոլի կռիվներից հետո):

Կռունկներ, ձեր խանատներ բարցըր պայեցեք,
Այս նամակըս թեերիդ դրեցեք.
Ըզգույշ պայեցեք, Սև ծովը չըքցեք,
Տարե՛ք այս նամակըս, սիրուն կռունկներ:
Ունվար ամսի մեկին նավը նստեցինք,
Սևաստապոլ քաղաք ուղըվորվեցինք.
Մի քանի ժամանակ Սև ծովը մնացինք,
Տարե՛ք այս նամակըս, սիրուն կռունկներ:
Կանգնեցե՛ք, կռունկներ, մեկ նամակ գրեմ,
Ընտանիքիս հասցեն մեկ-մեկ ձեզի տամ.
Ցավալի սըրտիցըս դարտերըս ասեմ,
Տարե՛ք այս նամակըս, սիրուն կռունկներ:
Ընտանիքիցըս փափագըս չառա, գնացի,
Էրեխեքըս տունը լալով թողեցի.
Խեղճ մայրիկիս մնաս բարով չասեցի,
Տարե՛ք այս նամակըս, սիրուն կռունկներ:
Երբ Ղրիմը դուս էլանք, մարդիկ չտեսանք,
Սևաստապոլ քաղաք ավերակ տեսանք.
Ազատվելու անճար վիճակի հասանք.
Տարե՛ք այս նամակըս, սիրուն կռունկներ:
Մտածում եմ կյանքիս, օր լինի մի բան,
Գնդակը գալիս է ամմեն երեկոն.
Զօրը հանգիստ չունեմ, գիշեր անուշ քուն,
Տարե՛ք այս նամակըս, սիրուն կռունկներ:
Ղրիմի արտերը արյունով ներկված էր,
Մարդիկ չմնացին, զոյ գնացին.
Ըսպանվածների դիակներ դաշտերում մնացին,
Տարե՛ք այս նամակըս, սիրուն կռունկներ[4]:

ԿԵՐՉ

Էտ ..... Կերչը, մայրիկ ջան,
Հայոց գերեզման,
Հայոց արյունը, մայրիկ ջան,
Հեղեղի նման:
Սև ծովի ափին, մայրիկ ջան,
Փրփուր չի գալիս,
Իմ գրած նամակը, մայրիկ ջան,
Քեզի չի հասնի:
Գնացի Կերչը, մայրիկ ջան,
Տեսա այն ինչ էր,
Կանգնած նայում էր,
Չորս կողմը լիճ էր:
Լճի մեջ սուզվում էին
Անթիվ զինվորներ,
Որոնց մեջ, մայրիկ ջան,
Իմ մեծ եղբայրն էր:
Երազումս տեսա, մայրիկ,
Մեր ընտանիքը,
Մեկը հայրս, սիրած յարը,
Քույրը ու եղբայրս:
Գդալը կոտրավ, մայրիկ ջան,
Պարտեզը քցցիր,
Իմ բաժին ճաշը, մայրիկ ջան,
Աղքատներուն բաժանիր:
Էն ինչ սնդուկ է, մայրիկ ջան,
Մեր դռան առաջ,
Ա՜խ, մեռնում եմ 18 տարեկան,
Մուրազը չառած:
Մաշինեն շարժվեց, մայրիկ ջան,
Հետևը նայիր,
Հետևիցը նայիր, մայրիկ ջան,
Ումուտը դ կտրիր:
Մի՛ լար, մայրիկ ջան,
Մի՛ լար քույրիկ,
Էլի հետ քուքամ.
Մինչև կռվի վերչը, մայրիկ,
Երազը դ քուքամ:

ՓԱԽԻ՛Ր ՊՐՈՒՍ

Հազար ինը հարուր քառսունմեկ թվին,
Հանկարծակի գիշեր վրա տվին.
Էկան, տեսան ըռըսի սվին,
Հողերն իրենց գլխին տվին.
Փախի՛ր պռուս, էկավ ըռուսն:
Էկան էլան Կովկասյան լեռներ,
Դաղավ քու զորքի ձեռքն ու ոտները,
Թափեցիր թալանած բեռները,
Փախի՛ր պռուս, էկավ ըռուսն:
Էկար Մոզդոկ, տեսար, դառար,
Կիսաճամփա թալճըզ դառար,
Դու քու մտքով Մոսկովն առար,
Փախի՛ր պռուս, էկավ ըռուսն:
Հույսըդ դրիր Տուտա գեղին,
Պատռավ քու սիրտն ու լեղին,
Է՛լ չըգտար քու սրտի տեղին,
Փախի՛ր պռուս, էկավ ըռուսն:
Հիտլերին բառցանք չինի,
Ըստալին, դու ըմպե կարմիր գինի,
Որ անունըդ միշտ բանցըր լինի.
Փախի՛ր պռուս, էկավ ըռուսն:

ՓԱԽԻ ՊՈՌԻՍ

Մեզի կըսեն ըռուսական,
Բանակն ունի օսկե նագան.
Հիտլեր զարկեց ուրան կընկան,
Փախի՛պռուս, էկավ ըռուս:

Մըր խումփ կերթա արագ-արագ,
Շուտով մտանք Բեռլին քաղաք.
Ցորեն-գարին նորեն կաղանք,
Փախի պռուս, էկավ ըռուս:

Բեռլի ճամփան օլոր-մոլոր,
Ըռուս փաթեց Բեռլու բոլոր,
Հիտլերի աչքեր ընկավ խոլոր,
Փախի՛ պռուս, էկավ ըռուս:

Ախտանակը աշխար տիրեց,
Հիտլերն իրեն դռներ փակեց.
Բանակն էլավ ուրան զարկեց,
Փախի՛ պռուս, էկավ ըռուս:

Զարկին քըցին բանդն ու հորը,
Խորուրթ մնաց ուրան փորը,
Խապար տվեք դարտոտ մորը,
Փախի՛ պռուս, էկավ ըռուս:

Բեռլու ջուրը շատ լավ պաղ ը,
Հիմի գիտեք Հիտլեր սա՞ղ ը.
Մարթ չկա օր տանե թաղե,
Փախի՛ պռուս, էկավ ըռուս:

Հիտլեր գիտե՞ք հիմի ուր ը,
Նա էլ ունի էրկու քուրը.
Գնաց խմեց պղտոր ջուրը,
Փախի՛ պռուս, էկավ ըռուս:

Դոշոյանը կազմեց խոսքով,
Հիտլեր ծախեց իրեն Պոսկով.
Շուտով գրեք, խրկենք Մոսկով,
Փախի պռուս, էկավ ըռուս:

Կենցաղային երգեր

ՁԱԽՈՐԴ ՔԱՄԻՆ

Էլի փչեց ձախորդ քամին,
Չուման բռնեց ջայիլ մալին.
Մըրսեստանը մնաց չալին,
Տարավ չուման ազիզ մալին:

Ձեռքերըս ծոցումըս մնաց,
Մտածելով խելքըս քընաց.
Անլուծ մնաց տուլքա սալըս,
Տարավ չուման ազիզ մալըս:

Բժիշկն էկավ, կայնավ կալը,
Հարցրեց մալի լավն ու վատը.
Դու բժշկե մեր բոլորի մալը,
Տարավ չուման ազիզ մալը:

ՀՈՐԹԵՐՈՒՆ ԵՐԳԸ

Ամպը օցի պես կը սողա,
Հորթերը տակը կը դողան.
Կովերը հորթերուն կը բոռան,
Տարավ ջուրը, հորթերը տարավ:

Աբուլու սարը գոռքոռաց,
Հորթերը տակը փրփռած (փռված).
Աբուլը ընկավ սուգ ու լաց,
Տարավ ջուրը, հորթերը տարավ:

Յանջու անունն էր Հայք Շաշիկյան,
Սիքա՞ս, հորթերն էլի կա՞ն.
Մնացածները եղան ցիր ու ցան,
Տարավ ջուրը, հորթերը տարավ:

Խապարն էկավ Օրթայի ձորեն,
Ձենը չի էլլի չոբանի փորեն.
Սիքասը չը ծնվիր իր մորեն,
Տարավ ջուրը, հորթերը տարավ:

ԷԼԻ ՓՉԵՑ ՉԱՐ ՔԱՄԻՆ

Ղուռուտանու էլա, փչեց չար քամին,
Անտեր սանքան էլավ, սըրչավ սուր քարին,
Բախտ ու ղարա է, մայրիկ ջան, սիրտըս յարա է:
Թափկուլներս մնաց վարթա թարեքը,
Էկան տարան Տիքրան աղին փարեքը.
Բախտ ու ղարա է, մայրիկ ջան, սիրտըս յարա է:
Էլի փչեց Ղուռուտանու չար քամին,
Թերմաշ մնար էստարվա պես գեշ տարին,
Բախտ ու ղարա է, մայրիկ ջան, սիրտըս յարա է:

ՔԱՄԲԱԽ ԸԼԼԻՆ ՁԵՐ ՁԱՂՉԸՆԻՆ

Ջուխտըմ չարոխ շարեցի,
Էրկու ընկեր ճարեցի.
Կոտըմ գարի շալկեցի,
Դեպի Դիլիֆ վազզեցի:
Աղաբակին քարը լավ է,
Բդոյենցը մալի ցավ է.
Էտման քարը չըլլի լավ է,
Քամբախ ըլլին ձեր ջաղչընին:

ԵՍ ԱՂՎԱՆՆ ԵՄ

Ես Աղվանն եմ, Օրդաքլուա գուղացի,
Ծովի խորքին երկար տարի մնացի.
Նավապետ Հարություն, նավդ մի՛ քշի,
Թազա նշանլու եմ, կոսբանդիս բախշի:
Կոստումս պատից կախ, կոսբանդս կութուն,
Հայրս կգա, կասի՝ ո՞ւր է իմ որդին.
Դուշինկա մամա ջան, ըստացի թերթս,
Աղվան բալայիդ տանում են ծովային բերդը:
Նավի գնացած տեղը ջուրը շատ սառն է,
Դուշինկա մաման գիտե՝ Աղվանը սաղ է.
Նավի գնացած տեղը ջուրը դար ու փոս էր,
Մարթիկ կային, կասեն՝ Աղվան ափսոս է:
Խըշշա ծով ջան, խըշշա, Աղվանս տուն գա,
Ջիգարիս մրմուռ կտրեր, աչքերս քուն կեր.
Երկընքից կախված է ոսկի շըշերը,
Աղվան բալիդ տարան լուսնակ գիշերը:
Նըխշուն ալիքները կերթան ու կուգան,
Աղվանից Բուրոյին բարև են բերում,
Դուշինկա մամա ջան, Աստված կը սիրես,
Նկարներիս մինը Բուրոյին կը բախշես:
Բուրոյի դեյրի բոլոր օլոր ու մոլոր,
Աղվան ընկավ ծովը, սիրտըն է մոլոր.
Ավետիք հայրիկ ջան, գործիքդ պայի,
Աղվան բալիդ համար դագաղ պատրաստի:
Մառալ եզը բերին հարսանիք արին,
Դըհոլի ձենը կտրին, հոգուս հաց տվին:

ԶՈՒԼՈՒՄ Է, ՄԱՅՐԻԿ

Քընացիր թոխլի առնելու,
Ինձ թողիր այստեղ վառվելու.
Արժան չեղա պսակվելու,
Զուլում է, մայրիկ, զուլում է:
Էրթած գյուղըս Ճանճըղա է,
Սրտես արուն շատ կը վազզե.
Կարծես ինձի մի երազ է,
Զուլում է, մայրիկ, զուլում է:
Քոխը տարան ինձ ծեծելով,
Ընկա օտքերը ես լալով.
Ինձի մորթեցին խանչալով,
Զուլում է, մայրիկ, զուլում է:
Հավաս էրիր դու այդ փողին,
Մեռնիմ՝ խառնըվիմ քո հողին.
Մեռնիր քո մորթողի որթին,
Զուլում է, մայրիկ, զուլում է:
Երեք տարի ես թոռ չառա,
Նշանվեցա, ախչիկ դարցա.
Վերջը մուրազըս չառա,
Զուլում է, մայրիկ, զուլում է:
Պատճառն էղավ քեզի Մըքանը,
Միտք ունեիր բանալ թիքանը.
Կորուցի քեզ թանկ, աննըման,
Զուլում է, մայրիկ, զուլում է:

ԻՐԵՔ ԿՈՒՌԻԿ

Ուռիք, ամբըրներ, ուռիք,
Զուրն էլ չի քա էտման ճուռիկ.
Կոտին կառնե իրեք կուռիկ,
Եթե վայլե, շատ լավ մուլք է:

ԴԻԱ ԿԱՑԻՆ

Դիա կացին, *(տերտեր)*
Դռան տակին.
Ա՜լելույա՜, ա՜լելույա՜:

Անիրավի պոչն էրկան է *(տիրացու)*
Չի պարտըկվի մեչ տոպրակին.
Ա՜լելույա՜, ա՜լելույա՜:

Վերու կացին, *(տերտեր)*
Կըպու քարին,
Որ պարտըկվի
Մեչ տոպրակին.
Ա՜լելույա՜, ա՜լելույա՜:

Վերուցի, կըպուցի *(տիրացու)*
Զիտա քարին,
Որ պարտըկվավ
Մեչ տոպրակին.
Ա՜լելույա՜, ա՜լելույա՜:

ԱՄՈՒՄՆՈՒԹՅՈՒՆ

Էսօր օրը կեսօր է,
Տերտերն ինձի պսակե.
Յաման տերտերի դարտեր,
Ջանան տերտերի դարտեր:
Տերտեր կասե՝ չհաս է,
Թազա հարսի հավաս է,
Յաման տերտերի դարտեր,
Ջանան տերտերի դարտեր:
Էլել եմ սարի կեսը,
Չեմ առնի յարի գեշը.
Յաման տերտերի դարտեր,
Ջանան տերտերի դարտեր:

Հողոբկին, հոքո՜ւդ մեռնիմ,
Ես իմ ուզածին կառնեմ,
Ես ուզել եմ, ես կառնեմ,
Ձեր կռիվ-դավան ի՞նչ է:

Էրեսըս յարա էղավ,
Տեղը ալ մնաց,
Չուխա-ջուպպես
Բոխչիս մեչ ծալ մնաց:

Պուճուր ախչիկ, գնում ես,
Դարտակ բարև տալում ես.
Պուճուր ախչիկ, մի թռչի,
Բարով քու յարը մեռնի.
Պուճուր ախչիկ, լեն բերան,
Քու տանողի տուն վերան:

Աբուլու սարը փոս էր,
Ջոլլոյիս սիրտը հոս էր.
Վավիրե, Ջոլլո, վավիրե,
Քու տանողիդ տունն ավիրե:

Ջոլլոս քընաց մարքե-մարաք,
Ձեռքին ընկավ գունդրմ կարաք,
Վավիրե, Ջոլլո, վավիրե,
Քու տանողիդ տունն ավիրե:

Ա՜յ, հաքուցեք, հաքուցեք,
Ասենք շընավոր,
Հազա՜ր շընավոր,
Մեր թաքավորին
Ի՞նչն է շընավոր.
Ասենք շընավոր, հազա՜ր շընավոր,
Մեր թաքավորին շապիկն է շընավոր:
Ասենք շընավոր, հազա՜ր շընավոր,
Մեր թաքավորի օտընշորն է շընավոր:
Ասենք շընավոր, հազա՜ր շընավոր,
Մեր թաքավորին փոյքան է շընավոր:
Ասենք շընավոր, հազա՜ր շընավոր,
Մեր թաքավորի շալվարն է շընավոր:
Ասենք շընավոր, հազա՜ր շընավոր,
Մեր թաքավորի արխալղն է շընավոր:
Ասենք շընավոր, հազա՜ր շընավոր,
Մեր թաքավորի գուլպընին են շընավոր:
Ասենք շընավոր, հազա՜ր շընավոր,
Մեր թաքավորի օտնընմանն է շընավոր:
Ասենք շընավոր, հազա՜ր շընավոր,
Մեր թաքավորի տոլաղն է շընավոր:
Ասենք շընավոր, հազա՜ր շընավոր,
Մեր թաքավորի չուխան է շընավոր:
Ասենք շընավոր, հազա՜ր շընավոր,
Մեր թաքավորի խանչալն է շընավոր:
Ասենք շընավոր, հազա՜ր շընավոր,
Մեր թաքավորի քամարն է շընավոր:
Ասենք շընավոր, հազա՜ր շընավոր,
Մեր թաքավորի փափաղն է շընավոր:
Ասենք շընավոր, հազա՜ր շընավոր,
Մեր թաքավորի փեշկիրն է շընավոր:
Ասենք շընավոր, հազա՜ր շընավոր,
Մեր թաքավորի խաս փուշին է շնավոր:
Ասենք շընավոր, հազա՜ր շընավոր,
Մեր թաքավորի յափընջին է շընավոր:

ՀԱՐՍԱՆԻՔ

Պարտեզում վարթ է բացվե,
Կըսպասե սոխակին.
Առանց սոխակ վարթն ի՞նչ անե.
Կարոտ է պըսակին:

Տղեք, ձեզ բարի գիշեր,
Փերենք կը ձեր ծաղիկը.
Բարով վայլեք, խերով վայլեք,
Եկավ ձեր ծաղիկը:

Աշքերըդ լուս, կեսուր-կեսրար,
Եկավ ձեր ծաղիկը.
Բարով վայլեք, խերով վայլեք,
Եկավ ձեր ծաղիկը:

Աշկերըդ լուս, բարեկամներ,
Եկավ ձեր ծաղիկը.
Բարով վայլեք, խերով վայլեք,
Եկավ ձեր ծաղիկը:

Ահա էկավ ձեր ծաղիկը.
Ծաղկի հաքածը ալ է,
Ինքը ֆիդան, ծառի դալ է.
Հաքին ունի աթլազ ու խաս,
Կրծքին ունի վարթեր,
Դոշին ունի ալվարթ բացված:
*
Աշկերըդ լուս, բարեկամներ,
Էկավ ձեր ծաղիկը, էկավ.
Սինին ձեռը, մոմերը վառ,
Էկավ ձեր ծաղիկը, էկավ:

Հերն ուներ ազնիվ ընկերներ,
Էկավ ձեր ծաղիկը, էկավ.
Ձեռը ուներ գույնով գավաթ,
Էկավ ձեր ծաղիկը, էկավ:
*
Ջրին միչի ուդիլը,
Ըմմա՜ն, ըմմա՜ն, ի՛մ յարո ջան,
Տարան իմ ազիզ քուրը:
Տավուլն էկավ մեր տունը,
Ըմմա՜ն, ըմմա՜ն, ի՛մ յարո ջան,
Տարան իմ ազիզ քուրը:
Տավուլին ձենին մեռնիմ,
Ըմմա՜ն, ըմմա՜ն, ի՛մ յարո ջան,
Տարան ի՛մ ազիզ քուրը:
Սիրած յարիս կը տեսնիմ,
Ըմմա՜ն, ըմմա՜ն, ի՛մ յարո ջան,
Տարան ի՛մ ազիզ քուրը:
Տավուլ զայնողն իմ յարն է,
Ըմմա՜ն, ըմմա՜ն, իմ յարո ջան,
Տարան ի՛մ ազիզ քուրը:
Յար ջան, բոյիդ մեռնիմ,
Ըմմա՜ն, ըմմա՜ն, ի՛մ յարո ջան,
Տարան իմ ազիզ քուրը:

Գեշ կընիկն էկավ վերի թաղեն,
Ձուքը բերանը ճըռթացնելեն.
Ինչ օր կեփե, տակը կը վառե,
Յա աղի է, յա անլի:
Ալուր մաղե, թոզ կը հանե,
Թոնդիր վառե, մուխ կը հանե.
Ուրուշներուն չի հավանի,
Ինքն էլ բանիմ չի լըմանի:
Մարթըմ ունի կուզիկ-մուզիկ,
Կելլե էրթիք, կենե թոզիկ,
Իսկը լման է աշնան մոզիկ:
*
Կընիկըմ ունիմ կուզիկ-մուզիկ,
Լըմանի կը ցըռան մոզիկ.
Ա՜յ գեշ կընիկ, գետինը մըտնիս,
Վա՜յ գեշ կընիկ, գետինը մըտնիս:
Ալրմաղով ցան կը փերես,
Մածուն գուզեմ, թան կը փերես.
Ա՜յ գեշ կընիկ, գետինը մըտնիս,
Վա՜յ գեշ կընիկ, գետինը մըտնիս
Քիթըմ ունիս փուքըմ քուքա,
Վրադ կաշեմ՝ թուքըս քուքա.
Ա՜յ գեշ կընիկ, գետինը մըտնիս,
Վա՜յ գեշ կընիկ, գետինը մըտնիս:
*
Կընիկ, կընիկ, հոքու բընիկ,
Վառվելու կըրակ է, չմարելու կըրակ է:

Երբ որ մարտ ամիսն է գալիս,
Խոպան տղի կինն է լալիս.
Քարն ու փայտը գլխին տալիս,
- Կորավ կյանքս, ավա՜ղ, կորավ:

Խոպան տղան ուրախ-զվարթ,
Կնոջ կողքին կանգնած հպարտ.
- Թեկուզ դուք ինձ չանվանեք մարթ,
Պիտի գնամ խոպան-խոպան:

Երեխեքը վզները ծուռ,
Աղաչում են հայրիկին լուռ.
- Հայրիկ, խոպան էլ մի գնա,
Մի տարի էլ մեզ մոտ մնա:

Թող ճանաչենք մեր հայրիկին,
Ուրախ տեսնենք մեր մայրիկին.
Ապրենք մենք էլ մի քիչ կարգով,
Մենք էլ մարթ ենք մարթկանց շարքով:

Հե՜յ խոպանը ինչեր արեց,
Ինչքան մարթու օջախ մարեց,
Որին ընտանիքից զրկեց,
Որի կյանքը խոպան զոհեց:

Ով իմանա այս մեկ բանը,
Թե ինչ վատ բան է խոպանը.
Մոռացնում է իր աղջըկանը,
Եվ իր սրտով սիրած կընկանը:

ԸՆՏԱՆԻՔ

*

Շեն մընա հորրս տունը,
Կուտեմ ու կը շարեմ.
Անտեր մընա կերսանցրս տունը,
Կուտեմ ու կը լվամ:

*

Տեր Էփրիկյան վերին օդեն
Շելլիկը մեչը կը խորոտան.
Քառսուն ջանը
Սիրով կապրին:
Հարսը քառսուն ջանը կը շայե,
Էրեսը թոռով կը պայե,
Օր կեսուրը իրան լավ շայե:
Հաքինը անթիկմովի,
Գլոխը ունի ջուխտ շերիտ օսկի,
Լիզու ունի՝ հեչ չի խոսի:

*

Բոշին Մընոն էկել է,
Կիլոմ խնձոր փերել է,
Քալ կընիկը կերել է,
Էրկու ախչիկ փերել է:
Մեկին անունն է Արաք,
Մեկին անունն է Բալաք.
Մեկն է տվե Կարոյին,
Մեկնե տի տա Սեթոյին:

Փեսա-փեսա փստիկ արի,
Չարոխ-գուրպադ կըսկուծ արի.
Փեսան էկավ՝ տեղ չունինք,
Թավեն թըրինք՝ եղ չունինք:

Փեսա-փեսա փըստիկ արի,
Չարոխ-գուրպադ կըսկուծ արի.
Մեր փեսան ես, մեր քեսան ես,
Մեր հավերուն կըռճամանն ես:

Խառն երգեր

ԳԱՍՏԱՆ

Անմայ պատրանքներ բարեխոս ըլլիք,
Բըլքի տանք գովասանք Սուրփ իշման տեղին.
Արժանավորն է առաքյալ Սերոբբեք, Քերոբբեք, մաքուր
կուսանք,
Օր գնացին դուռը. համփուրենք, մտնենք ժամ,
Գենա մայիլ Սուրփ իշման տեղին:

Մայիլ եղա Սուրփ սեղանին, տաճարին,
Լուսեղեն ըսկեզտին, իլլահ ժամարարին.
Ծածկոցը զըբբբ է, Սուրփ իշման տեղի,
Ծածկոցն ու վեղարտը խիստ զանազանդ են:

. . . . . .
Տասնըվեց բոլորակ վերև դռանն են,
Լուսարարը կայնել է խըզմաթ կենե,
... Գլուխը վեր բերեց Սուրփ իշման տեղի:

Գլուխը վեր բերեց յոթը սեղանին,
Կանաչ ու կարմիր մեռոն ղազանին.
Լուսավորչա թախտին, Սուրփ ավազանին,
Էչվրդի ծահալա Սուրփ իշման տեղին:

Էչվրդի ծահալա սալվեքը նախշուն,
Չորս սուն առնված, ըռընդած, տաշած,
Գափրել հրշտակի սուրաքն էր քաշած,
Աչքից սեյրան եմ Սուրփ իշման տեղի:

Աչքից սեյրան եմ օսկե ճաղերուն,
Յաղութ, զըմրուղտ, ալմաստ չամ չրաներուն.
Օսկե հլգրերուն ակունանք քարերուն,
Ակունանք քնած Սուրփ իշման տեղի:

Ակունք անգին է. համ ճավայիլ է,
Ավետարան կազմած օսկե հլ գիր է.
Երանի էն մարթուն՝ սրտով կը սիրե,

Հայոց թաքավորը Սուրփ իշման տեղի:
Հայոց թաքավոր Սուրփ իշման տեղի,
Զանգերը քաշելու ժամանակ խոսին կը տեղով.
Վարթապետ, եկիսկոպոս, ձայնավոր են տիրացու,
Փուռով, փուռվառով քաղցա ազբարով,
Նրանք շարական ասելով խաչը ջուրը կը գցեն:

Խաչը ջուրը կը գցեն համաշա,
Ակունքնին անգին է, մեջկետը խոշա.
Կարանյա, Շողակատ էնենք մե փեշա,
Հոռոմսիմա վանքն է Նիյնոս սուրաշա:

Էնոնց ղրկած ղալաթ աթլաս ղումաշա,
Մակու ասած տեղըտ հըլբըթ վար կաշա.
Սելիվան ամենքուց շյրտ կը քաշա,
Չբուղլի Ըրզինկան վարն Արճոսա:

Հեչան, Բոթան, Բոքան Վանա չորս քեշա,
Խընըզ, Բուլանըղ, Մուշ Զանկլու փեշ քաշա.
Իր տեղը բարձրասար, չորս կողմը մեշա,
Ունի շար հուր փաշու քիրքիմի ճոշա:

Բաղդատու պարսանը, Հինդ ու Հաբաշա,
Վերի Սաղեմ, էրթող իշման տեղ կ (h) իշի.
Պետղեմ ու Նազարետ էնենք մե փեշա,
Հիրեիտ Արճնուտ զոռ Երևանու:

Ղթմըր ղափի դրբիան Արաբստանու,
Խաչբին Սըվազ Օլուն Սպհան.
Բըլքի բուղարվերմ ջանմ շիրվանըմ,
Բըլքի բաշար չխարտ Չինթանստանու:

Մարաղաղ Ղարաբաղ ղաբլանութ ղոշա,
Խնդիր քաղաք է Մաղլուղատ փոշա.
Չինիմաչին շիր ղումինան քեշա,
Շուռ քալով կը գովենք նախշքար նումուշա:

Ինգիլիզ, Մոսկով, Ֆրանգ փուլի Արանը,
Կազմել են հինգ գլուխ Ավետարանը.
Կարդալով խաչ կը հանեն, առել են, կերքան,
Համ սրբազան Հորը՝ Աստծու քովը:

ՆՈՐԸ ՆՈՐԵԼ Է

Ես գութանը հաց եմ տարե.
Վանքի տակի թաժժա նորը նորել է.
Ծախով Կարոյին սահաթն ընկե, կորել է.
Բերանը բաց եմ տարե,
Վանքի տակի թաժժա նորը նորել է,
Ծախով Կարոյին սահաթն ընկե, կորել է:
Եթում ես, ինչո՞ւ տեր ես,
Վանքի տակի թաժժա նորը նորել է,
Ծախով Կարոյին սահաթն ընկե, կորել է,
Խընդա, հորով-մորով ես,
Վանքի տակի թաժժա նորը նորել է,
Ծախով Կարոյին սահաթն ընկե, կորել է:
Կապուտ գուլպա, օտրման,
Վանքի տակի թաժժա նորը նորել է,
Ծախով Կարոյին սահաթն ընկե, կորել է.
Էրկուսս էլ իրար լրման,
Վանքի տակի թաժժա նորը նորել է,
Ծախով Կարոյին սահաթն ընկե, կորել է:

ՄԵՐ ՄԵԾ ԱՐՏԸ ՓՈՒՇ ԿԸԼԼԻ

Մեր մեծ արտը փուշ կըլլի,
Բախչա գիլլի՜, գիլլի՜, գիլլի՜, գիլլի՜ յար.
Գիտեմ յարըս հո՜ս կըլլի՜,
Սանամ-Սինամ թելլի՜, թելլի՜, թելլի՜, յա՜ր:
Էրկան արտը ցանել եմ,
Բախչա գիլլի՜, գիլլի՜, գիլլի՜, գիլլի՜, յա՜ր.
Միչեն սերմը հանել եմ,
Սանամ-սինամ թելլի՜, թելլի՜, թելլի՜ յա՜ր:

ԱՇՈՒՂՆԵՐԻ ՄՐՑՈՒՄԸ

- Դոշ եմ տալի դալղա-դալղա,
Ջուր եմ՝ ինձանից փախի՛ր.
Չկարծես թե՝ սաղրա-սաղրա,
Ջուր եմ՝ ինձանից փախի՛ր:
- Դոշ ես տալի դալղա-դալղա,
Ջուր ես՝ ինձի ի՞նչ կանես.
Ոտընլողա սովորել եմ,
Ջուր ես՝ ինձանից փախի՛ր:
Քարկաղան եմ մեկ պոզանի,
Աշխարի մեչ կյանք չունիմ.
Ես մի աշուղ՝ նոր եմ էկել,
Քեզանից էլ փակ չունիմ:
- Քարկաղան ես, մեկ պոզան ես,
Աշխարի մեչ կյանք չունիս.
Շահանի պես պարտեզ ունիս,
Յուր-յուր ես, տուն փախի՛ր:
- Էդպես դռներ շատ եմ բացել.
Քընա, գտի քեզ չարա.
Հասկանում ես, չես հասկանում,
Յուր-յուր ես, տուն փախի՛ր:
- Հենց գիտում եմ՝ սիլլա չունես,
Մերկ՝ առաչընդ կանգնած եմ.
Չորս գդակս մոտդ թաքմիլ,
Յուր-յուր ես, տուն փախի՛ր:
- Էդ Մարտիրոսին գյուրծ ես գալի,
Այդ գյուրծերը մե թարաֆ.
Նախավկա սարկավակին
Ծնունդն դո՛ւն քարա:
- Քաչալ չարքազ ջանդակ կերած,
Թռչունի էլ թափ չունիս.
Շապկիդ տրկեն զըռխ ես հաքել,
Յուր-յուր ես, ի՞նչ կենես:

ԹՈՒԹՈՒՆ

Եփ օր գացի բարակ,
Տարած էն հացը ու կարաք,
Կրակն ընկա ուրանց կիանք,
Տարա՛ն թութո՜ւնը, թութունը:
Փարվանու գոլը խոր ը,
Անոթի թողին իմ փորը.
Թութունը հիմա դո՞ր ը,
Տարա՛ն թութո՜ւնը, թութունը:
Կինս հավկիթ կխաշեր,
Հացերսի քուլլի լոշ էր.
Սեֆիր Պողոս կիանք մաշեր,
Տարա՛ն թութո՜ւնը, թութունը:
Հավքեր վերևեն խշեն,
Թութուն չէր դամար քաշեր.
Թութուն դրուկ էր սընդկի քոշեն,
Տարա՛ն թութո՜ւնը, թութունը:
- Տարան կեսրերիս թութունը,
Գիշեր կտրավ իմ անուշ քունը.
Ըճըպ կիսուրսի լըսե՞ր ը մըր տունը,
Տարա՛ն թութո՜ւնը, թութունը:
Շատ կարոտցեր եմ մըսին,
Հացն ու կարաք իրար քսին.
Թող էրքան Գորգինին ըսին,
Տարա՛ն, թութո՜ւնը, թութունը:
Կտրավ մեր միչի սերը,
Շուն ք.... ուրանց հերն ու մերը.
Գևորգն ինձի հաց կը բերե,
Տարա՛ն թութո՜ւնը, թութունը:

ԻՄ ԴԱՐՏԵՐՍ Ո՞ՒՄ ՊԱՏՄԵՄ

Սալդատ տղեն տուն չունիր,
Չորս-հինգ տարով քուն չունիր.
Տրորվիմ, չը լամ, ի՞նչ անեմ,
Իմ դարտերրս ո՞ւմ պատմեմ:
Գարուն-ձմեռ մառշ կը խաղանք,
Օցի պես գետնին կը սողանք.
Տրորվիմ, չը լամ, ի՞նչ անեմ,
Իմ դարտերրս ո՞ւմ պատմեմ:
Տղերք, թեր վեր քաշեցեք,
Թթու բոռշին լավ աշեցեք.
Տրորվիմ, չը լամ, ի՞նչ անեմ,
Իմ դարտերրս ո՞ւմ պատմեմ:

ԹՈՒԹՈՒՆ

Արտրս ցանել եմ թութուն,
Կարկուտն էկավ, տարավ բիթուն.
Վառվա, էրվա ես անթութուն,
Վատ է հալերրս, հալերրս:
Էկանք էլանք Դամալու քալլեն,
Չարխըներս սառավ, մանցի յայլեն.
Շուն ք... Կիրոյի հոր քալլեն,
Տարան թութունրս, թութունրս:
Թութուններ դրեցին սանքին,
Տարան անցնին քաղաքի բանքին.
Աստված կտրեր Գոզալնու Բենոյի
կիանքեն,
Տարան թութունրս, թութունրս:
Փչեց Աբուլու պաղ քամին,
Կիրոն սատկիր, դնենք կամին.
Աժնիկ չէղներ մեր սուրփ ժամին,
Տանին դնին թուրքի ջամին:
Թութուն տվողի անունն էր Օրոն,
Խապար տվող ՝ թոյրացի Թորոն.
Եփ օր էկավ Գոզալնու Բենոն,
Տարա՛ն թութո՞ւնրս, թութունրս:

ԷԼԵՔ ԱՇԵՔ ՎԵՎ ՔՈՒՔԱ

Ծափին-ծափին պուլպուլա,
Հալվա, շաքար կուլ կուտա.
Էլեք աշեք վեվ քուքա,
Աղա քեռին տուն քուքա,
Պիճիլիկին տանելու,
Պիճիլիկ է, չեմ տա,
Սարերուն սըմբուլն է,
Բաղչաներուն բուլբուլն է,
Պաղ ախպըրին ջուրն է,
Հորն ու մորը դոխսն է,
Մամին, պապինի գառն է,
Հորոխպորը ձաքն է:

ԻՄԱ՞Լ ԷՆԻՄ

Դոխտուրն էկավ ընձի իշեց,
Ոտքերս բռնեց, ուրան քաշեց.
Կնիկս ուրան կիանք մաշեց,
Իմա՞լ էնիմ, օտքեր ձըզի:
Դոխտուր ինչ օր գինաս էրե,
Տո՛ւր իմ տղիս՝ դեղերս բերե.
Սա տղես է, սա լե հերը,
Իմա՞լ էնիմ, օտքեր ձըզի:
Ինչ դեղ օր քսեցի՝ հեչ ը,
Սըզուն ընկավ օսկըռի մեչը.
Պաղ քամին վերևեն կփչե,
Իմա՞լ էնիմ, օտքեր ձըզի:
Ընձի տարան դարբեդարա,
Ջեբսի չունիմ կափեք փարա.
Իտը ցավիս էրեք չարա,
Իմա՞լ էնիմ, օտքեր ձըզի:
Կուրսանք որթիս, հորըդ աշե,
Այս իմ ցավին դարդը քաշե.
Ծնողն ամենքից բաշ էլ բաշ ը,
Իմա՞լ էնիմ, օտքեր ձըզի:
Որթուս անուն Ալեքսան ը,
Շատ կը ցավա իրեն տանը.
Անտեր ջիգարն անուշ բան ը,
Իմա՞լ էնիմ, օտքեր ձըզի:

Ահա մտանք կռվի տարին,
Տունը չունինք ցորեն, գարի.
Մտածելով խելքըս մարի,
Իմա՞լ էնիմ, օտքեր ձըզի:
Գիշեր դրեց վրես ղըռավ,
Ջայել կիանքըս ձեռքես թռավ.
Կընիկըս ինձեն փափագ չառավ,
Իմա՞լ էնիմ, օտքեր ձըզի:
Կինըս վառե լամպ ու ճրագ,
Ես իմ ձեռքով ընկա կրակ.
Ամմեն կողմով դռներս է փակ,
Իմա՞լ էնիմ, օտքեր ձըզի:
Ազգըս կարցուս՝ Դոշոյան ը,
Շատ դդժվար ը այս իմ բանը.
Ջանըս կարցուս՝ յոթ-ութ ջան ը,
Իմա՞լ էնիմ, օտքեր ձըզի:
Ես Պողոսն եմ թոյրացի,
Ոչ բարով Ղարաղոլ գացի.
Ցորեն հացի կարոտ մացի,
Իմա՞լ էնիմ, օտքեր ձըզի:

ՎԱՐԹ ԿՈՇԻԿԸՍ

Բաղըմ ունիմ ծառներով,
Վարթ կոշիկըս, վարթ կոշիկըս,
Վարթից գեղեցիկ մաշիկըս.
Մեչը լիքը վարթերով,
Վարթ կոշիկըս, վարթ կոշիկըս,
Վարթից գեղեցիկ մաշիկըս:
Վարթերը թուփ-թուփ կանեմ,
Վարթ կոշիկըս, վարթ կոշիկըս,
Վարթից գեղեցիկ մաշիկըս.
Յարիս մեր տունը տանեմ,
Վարթ կոշիկըս, վարթ կոշիկըս,
Վարթից գեղեցիկ մաշիկըս:
Յար, քու բոյրդ չինար է,
Վարթ կոշիկըս, վարթ կոշիկըս,
Վարթից գեղեցիկ մաշիկըս.
Մեչքիդ օսկե քամար է,
Վարթ կոշիկըս, վարթ կոշիկըս,
Վարթից գեղեցիկ մաշիկըս:
Յարըս ինձի համար է.
Վարթ կոշիկըս, վարթ կոշիկըս,
Վարթից գեղեցիկ մաշիկըս:

ՎԱՐԹ ԿՈՇԻԿԸՍ

Վեր պալքոնի նըստող տղա,
Կարմիր խնձոր ծախող տղա.
Վարթ կոշիկըս, վարթ կոշիկըս,
Վարթից գեղեցիկ մաշիկըս:
Օդին դաշը դեղին է,
Իմ աշկըս այնի տեղին է.
Վարթ կոշիկըս, վարթ կոշիկըս,
Վարթից գեղեցիկ մաշիկըս:
Մեր տան միչին քընող տղա,
Ալմաս խնձոր ծախող տղա.
Վարթ կոշիկըս, վարթ կոշիկըս,
Վարթից գեղեցիկ մաշիկըս:
Ցախավելը փափուկ է,
Ախչիկը մանչուն խափուկ է.
Վարթ կոշիկըս, վարթ կոշիկըս,
Վարթից գեղեցիկ մաշիկըս:
Ցախավելին ցախերը,
Շեկ ախչըկան մազերը.
Վարթ կոշիկըս, վարթ կոշիկըս,
Վարթից գեղեցիկ մաշիկըս:
Մեր պալքոնի վերի ղուշը,
Շեկ ախչըկան կարմիր թուշը,
Վարթ կոշիկըս, վարթ կոշիկըս,
Վարթից գեղեցիկ մաշիկըս:

ԿՈՌՈՒՆԿ, ԹԵ ԿԸ ՍԻՐԵՍ ԱՐԹԱՐՈՒԹՈՒՆԸ

Յար ջան, ինչո՞ւ հեռացար.
Կռունկ, թե կը սիրես արթարութունը,
Քընե, պատմե յարիս իմ դրութունը.
Անտանելի ցավ է բանտարկութունը,
Կռունկ, թե կը սիրես արթարութունը,
Քընե, պատմե յարիս իմ դրութունը:
Արևի տակ տանջանքութունը,
Կռունկ, թե կը սիրես արթարութունը,
Քընե, պատմե յարիս իմ դրութունը.
Սարեն էլլեմ, սար տեսնիմ,

Կռունկ, թե կը սիրես արթարութունը,
Քընե, պատմե յարիս իմ դրությունը.
Հընճրվի պիտի յար տեսնի՞մ,
Կռունկ, թե կը սիրես արթարութունը,
Քընե, պատմե յարիս իմ դրութունը:
Յար ջան, իլիկիդ մեռնիմ,
Կռունկ, թե կը սիրես արթարութունը,
Քընե, պատմե յարիս իմ դրութունը.
Սրտիդ դիլագին մեռնիմ,
Կռունկ, թե կը սիրես արթարութունը,
Քընե, պատմե յարիս իմ դրութունը:
. . . Իզուր տեղը մոռացար,
Կռունկ, թե կը սիրես արթարութունը,
Քընե, պատմե յարիս իմ դրութունը:

ԼԵԼԻԿ

Լելիկ-լելիկ լուսացավ,
Թաթոն քընաց, չուշացավ,
Բանջար չկար, խոտ կար,
Խոտի տակը ծիտ կար:
Ծիտը թռավ գերանին,
Մեռնիմ Ավետարանին.
Ձեռիցըս բռնեց նես տարավ,
Գդալըմ խավիծ տվեց.
Հա լեղի է, լեղի է.
Գինի-գինի նաչարնիկս,
Վարդ մանուշակ հարսներուն,
Տանձ ու խնձոր մանչերուն,
Քթոցըմ . . . . . ախչըկնուն:

ՍԵՐԸՍ ՔԸՆԱՑ ԱՎԵԼԻ

Սերըս քընաց ավելի,
Ավել չկար, խոտ կար,
Խոտի տակը ծիտըմ կար,
Ծիտը թռավ գերանին,
Մեռնիմ Ավետարանին:
Ձախալ կովը տուն էկավ,
Ֆըշֆըշալով կաթ տվեց,
Կաթը թըրին թընդըրին,
Էլավ թափավ կրակին,
Համաս-Համաս դեքերկին,
Վազզե իշուն քուռակին:

ՀԵՔԱԹ-ՀԵՔԱԹ

Հեքաթ-հեքաթ պապլս,
Ղաշխա քուռիկը տակլս.
Ջընկըլլի հարսը զավակս.
Անոթնամ՝ գաթեն ուտեմ,
Ծառվընամ՝ հարսին պագնեմ:

ՀԵՔԱԹ-ՀԵՔԱԹ

Հեքաթ-հեքաթ պապլս ը,
Քայլան քուռակ տակլս ը.
Հեծնամ էրթամ Էրևան,
Գինի խմեմ գինովնամ,
Հիգամ հավերուս կուտ տամ,
Հավերըս ընձի հավկիթ տան,
Հավկիթ տանիմ տամ բոշին,
Բոշեն ընձի ասեղ մի տա,
Ասեղ տանիմ տամ չոբնին,
Չոբանն ընձի գառ մի տա,
Գառ տանիմ տամ Ասուն,
Աստված ընձի ախպեր մի տա,
Տփիմ օռին, դուրս էնիմ:

ՉԻՏԵՄ, ՎԵ՞ՐԱՆ ԷՐԹԱՄ

Չիտեմ, վե՞րան էրթամ,
Կըտրել է չարես.
Բանի կը հիժանըս,
Չի լավնա յարես:
Հոքսերըս՝ առանց թիվ,
Ցավերըս՝ անհամփեր.
Չիտեմ, վերա՞ն էրթամ,
Կըտրել է չարես:
Էրել եմ ձեռքովըս,
Քաշեմ կը հոքովըս.
Մարթ մեխկ չունի,
Ես իմ խելքի կորածն եմ:

ՀՈ՛Փ ՏԻՐՈՒՆ

Ճըրքի բոլոր հըսոտ է,
Տերտեր բերան պասոտ է.
Տիրունս հագավ ալերեն,
Տրթատ տարան կալերեն.
Հո՛փ Տիրուն, ջան Տիրուն,
Հըմ ըռունդ ես, հըմ սիրուն:
Տիրուն Տիրունի հոպե,
Տիրունիս դայրի քոպե.
Տիրունիս դայրեն կարճ է,
Մեծ օրփնարու խարճ է.
Հո՛փ Տիրուն, ջան Տիրուն,
Հըմ ըռունդ ես, հըմ սիրուն:

ԶԸՄԲԱԹՆ ԵՄ

Զըմբաթն եմ, ծերացել եմ,
Աշխարից հեռացել եմ.
Ազգ ու բարեկամ մոռացել եմ,
Ծերությանը վրա լացել եմ:
Ծերունու դեմքը խոժոռված,
Ամոթանքից նայում է ցած.
Աչքերը արտասունքով լցված,
Բռոշները դեպի վար կախած:
Ո՞վ անիրավ ծերություն,
Իսպառ չունես լավ բնություն.
Օրորում ես միշտ հնություն,
Գիշեր չունես հանգիստ քուն:
Քունը աչքերիցս հատել է,
Չորս կողմս դարտը պատել է.
Ծերունին վերջինը գտել է,
Կենքանի՝ գերեզման մտել է:
Պիտի մտնիմ գերեզման,
Դուս չի քա իմ շիրին ջանը.
Դժվար է այս անտանելի բանը,
Մարթու խելք ցիր ու ցան կենե:
Ծերունուն կասեն վատ է,
Ծերունու դարտերը շատ է.
Ամմեն ոք ծերունուն կատե,
Չորս կողմը պարիստ ու պատ է:
Պատից չեմ կարող անց կենալ,
Լեզուս թանձրացել է ու լալ.
Կարծես թե ոտներից են կախ,
Ոչ կենքանի եմ, ոչ էլ սաղ:
Էկա աշխարը, կերթամ աշխարից,
Չառա լազաթ ու համ.
Ուզում եմ կյանքս աշխարին տամ,
Աշխար չունե լազաթ ու համ:
Այսուհետև իմը անցավ,
Այլևս չի պատահի ինձ լավ.
Օրեցօր ծերությունը ցավ,
Տարել եմ ինչպես մի խեղճ հավ:
Հավն էլ ծերերից լավ է,
Այս խոսքերը այլոց ցավ է.
Իշքան երքեցիր, Զըմբաթ, բավ է,
Այսօր իմ փառքի հետ լավ է:

ՉԵՄ ԸԼԼԻ ՀԱՎՏԵՍ

Չեմ կոխե կակաչ,
Կոխեմ կը կանանչ.
Չեմ ըլլի Հավտես,
Կանանիմ մուրադես:
Թասը ղրզմիշ էրին,
Գլոխըս անցուցին.
Նալերըս տաքցուցին,
Ծըծերըս դաղեցին;
Դեռ լեզուս սաղ է,
Կանանիմ կյանքես,
Չե՛մ ըլլի Հավտես:

ՊՍԱԿՎԵՍ ՆԵ, ԼԱՎԱՍՆԵ

Հայրիկ չունիմ օր՝
Բերթին նամակ հասըսնե.
Մայրիկ չունիմ՝
Դարտըս ու հալըս հարցըսնե:
Քույրիկ չունիմ՝
Բարցըս բարին դարցըսնե,
Եղբայր չունիմ՝
Ձին ըյարած կայնեսնե:
Յար չունիմ օր՝
Պսակվես նե՝ լավասնե:

ԵՍ ՄԵԿ ԾԱՌ ԵՄ ԾԻՐԱՆԻ

Ես մեկ ծառ եմ ծիրանի,
Հինարի մատ եմ անվանի.
Չունիմ ես մեկ այգեպան,
Բոլոր մարթկանց պիտանի:
Հին ծառ եմ արևելքյան,
Իմ պտուղն է քաղցրահամ.
Բայց ապրում եմ ես հիմա
Բաժան ու դաժան:

ՆՇԱՆ ՆԿԱՐԸ

Դուսքանդրը, դուսքանդրը,
Ինձ վառեց քո տված նշան նկարը.
Սարեր-ձորեր լախանա.
Դուսքանդրը, դուսքանդրը,
Ինձ վառել է քո տված նշան նկարը:
Շան գաղեն սալախանա,
Դուսքանդրը, դուսքանդրը,
Ինձ վառեց քո տված նշան նկարը:
Մտա բաղը, վարթ տեսսա,
Դուսքանդրը, դուսքանդրը,
Ինձ վառեց քո տված նշան նկարը:
Շան տղին տխրած տեսսա,
Դուսքանդրը, դուսքանդրը,
Ինձ վառեց քո տված նշան նկարը:
Քընացի քովը, հարցուցի,
Դուսքանդրը, դուսքանդրը,
Ինձ վառեց քո տված նշան նկարը:

ՍԱՐԸՆԳԻԼ

Սարընգիլ, բիլբիլ ու գիլգիլ,
Սարընգի՜լ:
Սահաթը օսկի է յարիս.
Սարընգիլ, բիլբիլ ու գիլգիլ,
Սարընգի՜լ:
Կայնել ես անուշ խոսքի.
Սարընգիլ, բիլբիլ ու գիլգիլ,
Սարընգի՜լ:
Հաքել ես սև պլուզկա,
Սարընգիլ, բիլբիլ ու գիլգիլ,
Սարընգի՜լ:
Կանչում եմ, մոտըս չես գալիս,
Սարընգիլ, բիլբիլ ու գիլգիլ,
Սարընգի՜լ:

ՇՈՒՌ ՏԱՄ ՓՈՒԹԱԼՈՒՍ ԾԱԼԵՐԸ

Սարեն էկավ մատակը,
Աբուլու կալերը,
Իթին փերեք, շուռ տամ
Փութալուս ծալերը:
Կըթեմ, առնեմ փափագըս,
Աբուլու կալերը,
Իթին փերեք, շուռ տամ
Փութալուս ծալերը:
Կըթեմ, կըթեմ, փրփրի,
Աբուլու կալերը,
Իթին փերեք, շուռ տամ
Փութալուս ծալերը:
Դիշման ունիմ, քըրքըրի,
Աբուլու կալերը,
Իթին փերեք, շուռ տամ
Փութալուս ծալերը:
Էրևան բաղ եմ առե,
Աբուլու կալերը,
Իթին փերեք, շուռ տամ
Փութալուս ծալերը:
Ջիգարըս դաղ եմ արե,
Աբուլու կալերը,
Իթին փերեք, շուռ տամ
Փութալուս ծալերը:
Դոստ ու դիշմընիս եմ վառե,
Աբուլու կալերը,
Իթին փերեք, շուռ տամ
Փութալուս ծալերը:

Մեչը լաց ու ծիծաղ եմ արե,
Աբուլու կալերը,
Իթին փերեք, շուռ տամ
Փութալուս ծալերը:
Էշտիայու սելերն էկան,
Աբուլու կալերը,
Իթին փերեք, շուռ տամ
Փութալուս ծալերը:
Շարվե շարան,
Աբուլու կալերը,
Իթին փերեք, շուռ տամ
Փութալուս ծալերը:
Մեչը լիքը մարալ ու ջեյրան,
Աբուլու կալերը,
Իթին փերեք, շուռ տամ
Փութալուս ծալերը
Ես իմ սիրածին չառա,
Աբուլու կալերը,
Իթին փերեք, շուռ տամ
Փութալուս ծալերը:
Սիրելու ուղուրին վառա,
Աբուլու կալերը,
Իթին փերեք, շուռ տամ
Փութալուս ծալերը:

ԷՐԵՎԱՆ ԲԱՂ ԵՄ ԱՌԵ

Էրևան բաղ եմ առե,
Ջիգարը դաղ եմ առե,
Անտունը քընաց յարը,
Բանտունը չէկավ յարը:
Դոստ ու դիշմընիս քով
Լացը ծիծաղ եմ արե,
Անտունը քընաց յարը,
Բանտունը չէկավ յարը:
Էրևան՝ թիքան-թիքան,
Մեչը լիքը ըստաքան.
Անտունը քընաց յարը,
Բանտունը չէկավ յարը:
Պաղ ախպուր՝ բաղի միչի,
Գըլգըլան ձորի միչի.
Անտունը քընաց յարը,
Բանտունը չէկավ յարը:
Ես իմ սիրածին չառա,
Սելերի ուղուրին վառա.
Անտունը քընաց յարը,
Բանտունը չէկավ յարը:

ՕՎԱՆԵՍ

Օվանես սրտում կար մի նպատակ,
Կացինը ձեռին՝ որպես մի քանդակ.
Կացին ու սատուռը որտեղից ճարին,
Կացինով խփեցին, կանչի մամա ջան:
Ո՛վ է տեսել եղբայր եղբոր դավաճան,
Աչքերս քոռանա, Գուրգեն բալա ջան.
Էս ինչ զուլում ցավ էր,
Ընտանիք Տիրուն:
Քնից զարթնեցա, աչքերս բացի,
Թևերս թուլացան, լեզվով խնթրեցի.
Դուռս փակեցիր, մուխըս մարեցիր,
Խնդրեմ պետության՝ անի Հախ-դիվան:
Տիրունս վեր կացավ շապիկը հագին,
Փոքրիկ բալեն սեղմած էր կրծքին.
Մեկ հարվածով հանեց երկուսի հոգին,
Խնդրեմ պետության՝ անի Հախ-դիվան:
Ընտանիքիս թիվն էր բոլորը հինգ ջան,
Ընտանիքս մորթեց ոչխարի նման.
Համ ինձ ըսպանեց, համ իմ գառներին,
Արմատից հանեց նոճի ծառներին:
Լսեցեք եղբայրներ, Մուկուչիս դատը,
Հազար տեսակ դարդ է Մուկուչիս դարդը.
Մուկուչիս դարդից կուլան սարերը,
Խնդրեմ պետության՝ անի Հախ-դիվան:
Մարտի 11-ին մեզի սև գարուն,
Ընտանիքս թափեց գիշերով արուն.
Դուռըս փակեցիր, մուխըս մարեցիր,
Խնդրեմ պետության՝ անի Հախ-դիվան:

ԿՈԼԽՈԶՆԻԿՆ ՈՒ ՄԵՆԱՏՆՏԵՍԸ

- Արի մտի կոլխոզ, ուսատմա կիտանք:
- Ի՞նչ անեմ, օր լծկան չունեմ ես:
- Գնա գանգատ, լծկան կիտան քեզ:
- Ի՞նչ անեմ ես, վարել չիտեմ ես:
- Գնա գանգատ, վարեն, կիտան քեզ:
- Ի՞նչ անեմ ես, ցանել չիտեմ ես:
- Գնա գանգատ, ցանին, կիտան քեզ:
- Ի՞նչ անեմ ես, փոցխել չիտեմ ես:
- Գնա գանգատ, փոցխեն, կիտան քեզ:
- Ի՞նչ անեմ ես, եղը դնել չիտեմ ես:
- Գնա գանգատ, դնեն, կիտան քեզ:
- Ի՞նչ անեմ ես, ծեծել չիտեմ ես:
- Գնա գանգատ, ծեծեն, կիտան քեզ:
- Ի՞նչ անեմ, օր էյնել չիտեմ ես:
- Գնա գանգատ, կեյնեն, կիտան քեզ:
- Ի՞նչ անեմ, օր մաղիլ չիտեմ ես:
- Գնա գանգատ, մաղեն, կիտան քեզ:
- Ի՞նչ անեմ, օր կին չունեմ ես:
- Գնա գանգատ, կին մի կիտան քեզ:
- Ի՞նչ անեմ, օր կ . . . չունեմ ես:
- Գնա գանգատ, ք . . . . կիտան քեզ:

ՁԱՎԱԽՔԻ ԳՅՈՒՂԵՐԻ ԾԱՂՐԱՆՈՒՆՆԵՐԸ

Քարոտ, քրռչոտ ազարվետցիք,
Օսկոռ կրռծող կուռնաշետցիք,
Լվոտ գեղեն ականեցիք,
Արաղ քաշող գամանցիք,
Ջուռնա չալող սամսարցիք,
Ներկած հավկիթ ղադոցիք,
Քարխորիզ են էխտիլեցիք,
Խոզի կաշի ուտող մերենեցիք,
Հավկիթ ժողվող մաճատեցիք,
Լավ ֆուրղունճի արապովցիք,
Մաուզերիստ զակցիք,
Վրացու բոշա կոթելեցիք,
Քարտիկա են բարալետցիք,
Քարթոլ ուտող դամալեցիք,
Հայ կաթոլիկ ալաստանցիք,
Ուտող-խմող ճանճրղեցիք,
Միշտ միրգ ուտող խանդոցիք,
Շատ քնող են օրջացիք,
Քարի ուստա կորխրցիք,
Մանրաբազ են դիլիսկեցիք,
Դարիվար հաչող գիմբիրդեցիք,
Ջաղչի ուստա չանդուրեցիք,
Խումարբազ են վաչիանցիք,
Անոնցեն բեթար են սուլդացիք,
Առուշի վաթան հեքաթ ասող ղարզաղցիք,
Ջրի կարոտ դաղեշցիք,
Աղալար են գյոնդուրեցիք,
Փիանից են նամզարեցիք,
Թիք կոլոտ են դիլիֆցիք,
Ըռուսի բրռաթ խոջաբեկցիք,
Ջրի ձուկ են խանչալլեցիք,
Քալ գլոխ են ջիգրաշենցիք,
Հնչակյան են օրոջալացիք,
Քյուրք կարող են սաթխացիք,
Ջրի բերան ապրող արագյալցիք,

Հռչակավոր են գանձացիք,
Ձուկ ուտող են փոկացիք,
Պաղ ախպուր են աբուլցիք,
Ծախգամի տեր են կուլիկամցիք,
Անոթի քնող կարտիկամցիք,
Մեռել լողացնող բավրացիք,
Սըրվի տեր են խոսպիեցիք,
Արևին մոտիկ խորենեցիք,
Քաղքըցու ծառա խուլգումեցիք,
Բուղա . . . . նստող քաղքըցիք:

ԹՈՅՐԱՑՈՑ ԴԱՍՏԱՆ

Ո՞վ է տեսի դևի չիֆտա,
Կուլուլեն, կը զարկին կըֆտա.
Շան ճռներ էրին քուֆտա,
Կերա՛ն թոյրեցիք, թոյրեցիք:
Թոյրեցոց ուլիցեքն էր՝ էրկեն ու նեղ,
Շուն քաշելով իչուցին գեղ.
Շրտանն էրին պանրի դեղ,
Կեսն էլ օղորկին Կաթնատու՝ Թաժժա գեղ,
Կերա՛ն թոյրեցիք, թոյրեցիք:
Թոյրեցիք էղան էրան-էրան,
Շան օտներն էղան մեկ-մեկ գերան.
Ակռեք շարեցին Աբգարի բերան,
Շարի՛ն թոյրեցիք, թոյրեցիք:
Թոյրեցոց ծառն էր շրջի քոքին,
Ակռա չունեցողները
Բաղդի դուռը կը չոքին,
Բաքլամիշ կենեն շան սև թոքին,
Կերա՛ն թոյրեցիք, թոյրեցիք:
Վրացերեն մսին կըսեն խորցի,
Լալով Դուխոյի Արշակի
Աչքերն է քոռցի.
Տո՛, յամա՛ն, քռսոտ Ավոն
Բլրկի տակն ենք մոռցի,
Բաժնեցին, ամենքին հասավ
Մեկ-մեկ բոռցի,
Կերա՛ն թոյրեցիք, թոյրեցիք:

ԼՈՒՍԸՄ ՏԵՍՍԱ

Էլա դուս, լուսըմ տեսսա,
Բիլբիլի բաղից քուքա անուշ հոտ,
Իչանք հարոսները, շատ կա չալի հոտ.
Իմ յարին դուսը տեսսա,
Բիլբիլի բաղից քուքա անուշ հոտ,
Իչանք հարոսները, շատ կա չալի խոտ:
Էլել էր մեշեն կերթար,
Բիլբիլի բաղից քուքա անուշ հոտ,
Իչանք հարոսները, շատ կա չալի խոտ.
Կաշին ումուզին տեսսա,
Բիլբիլի բաղից քուքա անուշ հոտ,
Իչանք հարոսները, շատ կա չալի խոտ:
Յար ջան, խռով մի գնա,
Բիլբիլի բաղից քուքա անուշ հոտ,
Իչանք հարոսները, շատ կա չալի խոտ.
Յարըս խղճուկ կը մնա,
Բիլբիլի բաղից քուքա անուշ հոտ,
Իչանք հարոսները, շատ կա չալի խոտ:

ԳՅՈՒՂԵՐԻ ԾԱՂՐԱՆՈՒՆՆԵՐ

Ջրի կարոտ դաղեշցիք,
Բուղա ք.... նամզարեցիք,
Քալ-քաչալ ջիգրաշենցիք,
Մազըխ օչխար խանչալլեցիք, *(Մեծ Խանչալլի)*
Մըրդո ղոչաբակցիք,
Էշ ուտող գենդիրեցիք *(Մեծ Գյոնդուրա),*
Ղազ ուտող մուրճախերցիք,
Գենա լավ են աբուլեցիք,
Անմեռոն են կարտիկամցիք:

ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԵՐԳԵՐ

Պուրպատիկը եկել է, *(Պուրպատիկ)*
Շալե շապիկ հաքել է,
Կեմե գոտի կապել է,
Դռանն էտտին կայնել է:

Նուրին-Նուրին էկեր ը, *(Նուրին)*
Աջբա գոտին կապեր ը,
Էրկընքուց անձրև կուզ ը,
Գետնից ցող կուզ ը:

ԱՐԵՎ - ԱՐԵՎ

Արև-արև, էլլի,
Չինի թապաղ թելլի.
Արև-արև, կարմըրցու,
Ճիտու արուն կաթըցու:

Ազի, ուզի,
Թարքի թուզի,
Խըլըճի բեզի,
Չարոխ, չըմբըլ,
Պուպուզակ:

Ուրբաթ, շաբաթ, կիրակի,
Ուռմին տղան տրաքի,
Չեռվին, օդվին խաշ դրի,
Քավորն Էկավ՝ հաց դրի:

Աղվեսն էկավ վերի՛ն թաղե՛ն
Օ՞ո՞ւ, պը՛ճինգո՞ո՞ւ, պը՛ճինգո՞ո՞ւ,
Մածուն կերավ թափավ վըրեն,
Օ՞ո՞ւ, պը՛ճինգո՞ո՞ւ, պը՛ճինգո՞ո՞ւ...

Հեքիաթ, հեքիաթ պապս,
Ղաշխա քուռիկը տակըս,
Հեծնիմ Էրթամ, Երևան,
Երևընու չըլտիկ փերեմ,
Չըլտիկը փերեմ հավին տամ,
Հավը ինձի հավկիթ տա,
Հավկիթը տանեմ չարչուն տամ,
Չարչին ինձի հըլուն տա,
Հըլունը տանիմ աղջկան տամ,
Աղջիկն ինձի հաց տա,
Հացը տանիմ աղքըտին տամ,
Աղքատն ինձի գառըմ տա,
Գառը տանիմ Աստծուն տամ,
Աստված ինձի աղբարըմ տա...

Ես կգնամ դեպի Վան,
Այնտեղից (էլ) Երևան.
Երևան, ջան Երևան,
Խաղող կերցուր, գիրանամ,
Գինի խմցուր, զորանամ,
Գոռամ ամպեր փախցնեմ,
Փայտ գցեմ, ծովեր ցամքեն,
Քար գցեմ, աշխարհ քանդեմ,
Թռչեմ այս սարն անց կենամ,
Թող փեշերս չդիպչեն,
Գդակ դնեմ վայր չընկնի...

Երևան, ջան Երևան,
Գինի խմեմ, գիրանամ,
Խաղող ուտեմ, զորանամ,
Փայտը գցեմ, ծովը ցամքի:
Քարը գցեմ, աշխարհը քանդեմ,
Շալվարքս հեչ չը կպչի,
Գլխարկքս վեր չը ընկնի,
Գդակները վերցնեմ...

Հավալլա ջան, հավալլա,
Թըքմիկ զայնեմ դիմանա,
Գաթաղ ուտեմ, գիրանամ,
Գինիդ խմեմ, զորանամ,
Քալ է բաղի մեր ճանճուլը,
Ոտներս հատակին չդիպչի,
Փափաղ թնեմ, վար չընկնի...

ՄԵԾ ՊԱՍ

Բարեկենդընքին օրերը,
Գաթեն ծոցեն կորել է,
Ախըլոճը գտել է,
Ուզողին գլխուն տվել է:
Բարով էկար թթու մախոխ,
Էրեսըդ թթու, պըճպըճալով,
Ես չեմ ուտեր թթու հոտով,
Քընե, հեռեցի՛, փառքով-պատվով:
Չորեքշաբթին ու ուրբաթը,
Պասերըդ չուտենք, մեղք բան է.
Իմացողին խելքը կը տանի,
Թեզոք քընե՛, թթու մախոխ:
Մամըս ժամեն քուքա փուխարի շալով,
Թընռին մեչը թաղած է հերիսեն հավով:

ԾԱՐԾԱԹԱՐ

Ծարծաթարը էկել է,
Կարմիր գոտի կապել է,
Փուքըմ հատիկ փերել է,
Ջեբը լիքը լցել է.
Ծարին-ծարին, Ծարծաթարին
Սև հավին հավկիթը գուզեմ,
Կարմիր կովին եղը գուզեմ:

Երակ-երակ ետ էրե
Հասնիմ մըր տուն՝
Գետ էրե:

Անձրև-անձրև ցած արի,
Բուսըցու ցորեն ու գարի:

Թո՛ն էրա, թոնճա՛կ էրա,
Գարի, ցորեն բո՛լ էրա:

Արև, արև, ել, ել,
Հերդ ու մերդ էկել են,
Օսկի բլեթ փերել են,
Պատին ծակը թրել են,
Գոմեշն էկել տարել է,
Գոմշին ոտքը կոտռել է,
Փթանոցը փթել է,
Նավթը միչեն թափել է:

Աղոթքներ

ԳԵԼԿԱՊԵՐ

Գայլը կապեմ էրկու բթով,
Աստվածածնա քաղցր կաթով,
Սուրփ Սարգըսի ձիու սանձով,
Սուրփ Մոսեսի գավազանով,
Լեզուն կապվի, ակռեքը խաչվի,
Տիրոչ խաչը տեսնի,
Դիվահարի ու սասանի:

Գելը կապեմ ջուխտակ բթով,
Սուրփ Սարքըսի ձիու մազով,
Աստվածածնա քաղցր կաթով,
Թուքը թափի, մեշկը կոտրի,
Քալած ճամփան ինքը մոլըրի:

Գայլը կապեմ էրկու բթով,
Ասվածածնա քաղցր կաթով,
Լուսավորչա լույս հավատով,
Տեր Մովսեսի գավազանով,
Սուրփ Սարքըսի ձիու ճարով,
Լեզուն կապի, առկան թափի,
Գալած ճամփան նա մոլորի:

ՇԱՆ ԿԱՊ

Քրիստոս էկավ աշխարք,
Շուն կար, գլոխ չկար:

ՔՆԵԼԻՍ

Գլոխ բարց դնիմ,
Բարցս սուրփ գերեզման դնիմ,
Հոգիս քու սուրփ ձեռքը կավանդիմ,
Մայրի՛կ, Աստվածածին,
Ամմեն:

ՕԽՉՈՒՄ

Օխչում Մայրամ անապատին,
Ակներ բոլոր պատարագին,
Իսուս ծնավ բերեց որդին,
Բուրթ խանձուրով փաթաթեցին,
Գետ Հորդանան մկրտեցին,
Սուրփ Օվանես էղավ քավոր,
Մեկ դեն Իսուս,
Մեկ դեն Քրիստոս,
Խաչելություն,
Սրտիս վրա դրվեցավ.
Ամմեն:

ԵՐԿՈՒՆՔԻ ՊԱՀԻՆ

Ճրագ-ճրագ ճշմարիտ,
Ալմա խաթուն Մարտիրոս,
Իմ սիրելի Քրիստոս:
Քրիստոսն հեծավ կապուտ քուռակ,
Գնաց էլավ Ամրի քաղաք,
Ծաղիկ քաղեց ծերացավ,
Գլխին զարկեց զարթարեցավ,
Բալլիք դրեց վերա բարցին,
Չպապանձի լեզուն բեյնին:

ՃՐԱԳ ՎԱՌԵԼԻՍ

Ճրագ-ճրագ ճշմարիտ,
Ալ վառ խաթուն Մարտիրոս,
Իմ սիրելի Քրիստոս:

ՃՐԱԳ ՄԱՐԵԼԻՍ

Ճրագ մարավ,
Հրիշտակ զարթավ,
Աստված գալոց,
Չար խափանոց: Ամմեն:

ԿԵՍԳԻՇԵՐԻՆ

Կեսգիշերին դուրս էլա,
Զարմանալի լույս տեսա.
Շատ աղաչի, ոտքն ընկա,
Ասի, թե դու ո՞վ ես:
- Ես Սուրփ Սարգիսն եմ,
Գալիս եմ Մասիս սարից,
Գնում եմ Արբիտոն քաղաք:
Որդուս անունն է Մարտիրոս:
Բուրվառս է հրեղեն,
Գավազանս՝ ոսկեղեն:
Ով օր ինձի հիշե երեք անգամ,
Նրան կազատեմ՝
Սրից, թրից, ջրից և կրակից.
Ամմեն:

Կուս մայրիկ Աստվածածին,
Օր դու կուս ես,
Հոգով-սրտով դու լուս ես,
Կապեր ես լուսեղեն կամար,
Հոգիս մաքուր պայես քեզ համար:
Տե՜ր իմ, մեղա, տեր մեղա,
Քու սարսափեն էրկինք-գետինք կղողա.
Կապեր ես լուսեղեն կամար,
Հոգիս մաքուր պայես քեզ համար:

Աշկն ու խաչ Քրիստոսին,
Սուրփ գավազան Մովսեսին
Քսան ու չորս տուն Ներսեսին,
Օգնական, պահապան Հրոռմա,
Սուրփ էկեղեցին,
Իմ անձին, իմ տեղին, իմ բարցին,
Օր ըսինք, սապախտան լուս էլլանք:

ՎԱՏ ԵՐԱՉ ՏԵՄՆԵԼԻՍ

Անթանակետ Սուբ Կարապետ,
Գնացիր նստար գետ Հորթանեն,
Մկրտեցիր Տեր Միածին,
Չար էրածըս դառցընես բարին:

ԱՌԱՎՈՏՅԱՆ ԱՆԿՈՂՆՈՒՄ

Բարի լուսո քաղցրակաթ հայր Իսուս, կաղաչենք և քեզ կը խնթրենք, ինչպես լույսը բացիր ընթանուր էրկրի վրա, լույսը բանաս քու արարածոց, ստեղծած հոգոց վրա: Հասնիս հավատացյալ քրիստոնեից ազգն անօրենեից, հերձվածողաց, տաս էրկրին խաղաղություն, թաքավորաց հաշտություն, քու դուռը բանաս օղորմության քու ստեղծած հոգոց վրա: Փառք ես Աստված, փառք քեզ Աստված, իրեք հարուր բյուրապատիկ անվան տեր Աստված, դու խնայես, քու մեծ բարկության սուրը դադրեցուս: Վերչի սատաղեն հասնիս իմ հոգուս, որ բոլորի համար խնթրեցի:

ԴՈՒՌԸ ՓԱԿԵԼԻՍ

Ես խաչակնքեմ զքեզ, որ քո Սուրփ խաչովըդ դուռը փակեմ, չար թշնամին խորտակվի, թշնամական ձեռքով դուռ չբանաս: Որ քո սուրփ խաչովդ խաչակնքեմ, որ դուռը չար թշնամու ձեռքով չբացվի, քու սուրփ խաչիդ զորությամբ դուռը բանամ:

ԱՂՈԹԱՐԱՆԻՆ ԱՂՈԹԵԼԻՍ

Տե՜ր Աստված,
Ամենան չարեն,
Փորցանքներեն,
Ազատ էնես,
Անկարծակի ցավեն,
Մահեն ու մեջրեն,
Հոտած բեյնեն,
Հում լեզվեն,
Դառնիկ դժոխքեն,
Մազե կարմընջեն,
Հըրե՜ն, թըրե՜ն,
Ամենան չար
Փորցանքներուց
Դո՛ւ ազատես:

- Նոր-նոր նորավոր,
Իրեքավուր թաքավոր.
Ծեր քընացիր, մանուկ էկար,
Էն աշխըրեն ի՞նչ խապար:
- Հորս ու մորըս արքաութեն,
Տղոցըս արեվշատութեն,
Բաներուն, գործերուն աչողութեն:

ԴՈՒՌԸ ԲԱՆԱԼԻՍ

Լուսացավ, լուսն ի բարին,
Ես հավատամ Տեր Կենդանին,
Մայրամ նստի սուրփ սեղանին,
Արքայության դռները բացին,
Արդարները ուրախացին,
Մեղավորներ նստան լացին:

ԷՇՄ

Էրկու ուրագ, էրկու կացին,
Էկան, իշուս վրա լացին.
Քընացի տերտերին ըսի,
Տերտերն էլավ ու էկավ,
Փիլոնը մտյան էրավ:
Իշուս սամարը ծախեցի,
Խունկառը հոքուն ծխեցի,
Բելչաքին ու փորին եղը
Տվի թաղող չեքին տեղը:

Վիոլական բանաձևային ստեղծագործություններ

(Հանելուկներ Փոքր Խանչալլի գյուղում)

- Ուլի-ուլի, ելլ, ածերը վար առ: *(ածելի)*.

- Փքած փատը փորեցի, ասլանը մեչը քաղեցի: *(անթեղ)*.

- Մութ տուն, դավիթը մեչը քուն: *(անթեղ)*.

- Ուր թրի, կպավ: *(անուն)*.

- Էն ի՞նչն է, օր բիտտունն ունին: *(անուն)*.

- Մի բան ունիմ՝ ճիճա է,
  Ճիճի տակը մեյդան է,
  Մեյդընի տակը հայլի է,
  Հայլու տակը զուռնա է,
  Զուռնի տակը մարաք է,
  Մարքի մեչը ուրաք է: *(աչքեր, գլուխ, քիթ, բերան, ատամներ)*.

- Մի բան գիտեմ մեյդան է,
  Մեյդընի տակը ճիճա է,
  Ճիճի տակը լիլիկ է,
  Լիլիկի տակը մարաք է,
  Մարքի մեչը ուրաք է: *(գլուխ, աչքեր, քիթ, բերան, ատամներ)*.

- Մաղըմ վեք, մեչը մե հանաքըմ: *(ասպղեր ու լուսին)*.

- Սև է, սաթի նման,
  Կարմիր է վարթի նման,
  Սիպտակ է կաթի նման: *(արագիլ)*.

- Լուն թռավ կարպետին,
  Չեն տվեց վարպետին: *(աքլոր)*.

+ Առանց ներկի ներկած է,
Առանց դանկի քառքած է: *(աքլորի կաւրար).*

+ Հանքըմ ըսեմ հանա-հանա,
Կոտոշները՝ մըսըրխանա,
Ուրտեղ զայնեմ, էնտեղ բանա:
(բանալի).

+ Սընչավորը սարքեց, անշունչը բռնեց,
Սարքողն էկավ ազատեց:
(թակարդ).

+ Ալա եզրս, դալա եզրս,
Ինչքան բառնամ՝ տանի եզրս:
(գդալ).

+ Սար, ձոր կարծի կը չագիլին.
Բոլորը չի արծի: *(գերանդի).*

+ Սարեն քուքա սըլվըլալեն,
Օսկի բեխեր պըլպըլալեն:
(գերանդի).

+ Պիճիլի խոզան,
Գառները մեչը
Դողդողան: *(գլուխ և ոջիլներ).*

+ Սըլըլիկ սուլթան,
Տասվերկու չորթան,
Շարվել են կերթան: *(գութան).*

+ Չոքեմ առաչըդ,
Կռկռասնեմ ծակըդ: *(երկանք).*

+ Փթած փետը փորեցի,
Ասլանը մեչը թաղեցի: *(թուր).*

+ Ալըրեն մանդըռ,
Դավեցեն բանցըռ: *(ծուխ).*

+ Զօրը կուռչի, գիշերը կը կպչի:
(ծալք).

+ Ութն ունի Ավիթ տան մոլլեն,
Չորսն ունի Դավիթ տան մոլլեն,
Էրկուսն ունի մաքիկը,
Հեչ չունի աքիկը,
Ինչպես պայե ձաքիկը: *(խոզի, կովի և ոչխարի պտուկներ).*

+ Պապըս օխտը քիրք է հաքե,
Տըռ կը մըսի, տըռ կը մըսի:
(կաղամբ).

+ Պիճիլի գուշիկ,
Մեչն անուշիկ: *(կաղին).*

+ Էրկու խըշտիչ, չորս կոխիչ,
Մեկ դըմբդըմբիչ: *(կովի կոտոշներ, ուրներ և պոչ).*

+ Կըռեմ-կըռեմ՝ էրկընննա,
Տաշշեմ-տաշշեմ՝ լեննա: *(հոր).*

+ Սարեն-ձորեն ձեն քուքա,
Ձին անոթի տուն քուքա:
(հրացան).

+ Առակ-առակ դաստրռակ,
Կեսը գործած, կեսը չգործած:
(ֆեռնաթաթ).

+ Հինգ ախպեր են, մեկը քար կը կրե,
Մեկելոնք պատ կը շարեն:
(ճաղեր).

+ Աշշըղ կերքար՝ ճամփան դուր,
Մե փառչիմ մեչ՝ էրկու ջուր.
Կամ հոնքըս հանե,
Կամ սազըդ տուր: *(ֆոյ).*

+ Բռնեմ՝ բռովըս մեմ,
Թողնեմ՝ տընովըս մեմ: *(ճրագ).*

+ Հանք-հանք, հրամանք,
Օխտը դռան դեմ առանք: *(մեծ պաս).*

+ Սարը էրկու էշ իրար յալ կը
կըռծեն: *(մկրատ).*

+ Ջրե կողպանք, փետե բանլիք,
Ավը փախավ, ավճին բռնվավ:
(Մովսես մարգարեի գավազան).

+ Կերքա-կերքա՝ իզը չկա,
Էտտին կաշե՝ թոզը չկա.
Գոմեշ է՝ պճեղ չունի,
Հավք է՝ կաթ չունի: *(նավ).*

+ Կերքա-կերքա, ճամփա կերքա,
Ճամփա կերքա, փոշի չկա: *(նավ).*

+ Ութը հատ ունի փափերց,
Չորս հատ ունի ապտաբըլան,
Էրկու հատ ունի մաքիկը,
Իսկի չունի աքիկը,
Ի՞նչըղ կը պայե ձաքիկը: *(շան, կովի, ոչխարի պտրուկներ և հավ).*

+ Ձին ձորը՝ քուռիկը փորը: *(չիր).*

+ Արի, արի՝ չի քա,
Մի՛ քա, մի՛ քա, քուքա:
(շրթունքներ).

+ Տակը ախպուր՝ խըմվի կը,
Վրեն չայիր՝ քաղվի կը: *(ոչխար).*

+ Ինքը չնչին բան,
Մորթին անպիտան,
Ոչ վաճառողը կա,
Ոչ գինը գիտես,
Մորթես կը, ծախես կը,
Գին չունի: *(ոջիլ).*

+ Սարեն գլորես՝ չի կոտռի, էրկու
Սարին արան թընես՝ կոտռի կը:
(ոջիլ).

+ Անծիլը անծինին բառցեցին,
Անդաթարենց էրթեցեն անցուցին:
(աղ, ջորի և կամուրջ).

+ Անծինը անծինին հեծուցին,
Անդաթարենց էրթեցեն անցուցին:
(ջորի և կամուրջ).

+ Սարեն կախած է ճընկըլը,
Վրեն կախած վեռեստանը:
(ստրինքներ).

+ Մեկը սընանի, մեկը տընանի,
Հարուր-բյուր տախտականի:
(սունկ).

✣ Էն ի՞նչ է, օր նը չարսուն կը
ծախվի,
Նը էլ մարթը կը փերե: *(քուն).*

(Հանելուկներ Թորիայում և Ուճմանայում)

✣ Սկմբըլի սուսան, անհող բուսան:
(ածիկ).

✣ Ինչն օր կըսինք, մեչն ը: *(ականջ).*

✣ Անի, անի, մըսըր խանի,
Քանի կաթ կիտամ, տունը չի
կայնի: *(ամպ).*

✣ Սև սատանեն պատեն կախ:
(այծենակաճ).

✣ Բանսի բազում, բալլիքսի
Տրապիզոն: *(աչքեր).*

✣ Իմ էզներ քու արտըդ կը վարեն,
Քու էզներ լե՝ իմ արտը: *(աչքեր).*

✣ Էրկըթե կտեիս, մազե ֆալլուս:
(ասեղ ու թել).

✣ Արևը մեկմ է, էրկուս չէ՛ղնի,
լուսնակն ու արևը էրկուսն են,
իրեք չէ՛ղնի, Սեղրակ, Միսակ,
Աբեթնակ, հարավ, հուսիս, արևելք,
արևմուտք չորս են, հինգ չէ՛ղնի...
Մեկը էրկուս չէ՛ղնի
Էրկուսն իրեք չէ՛ղնի,
Իրեքը չորս չէ՛ղնի,
Չորսն էլ հինգ չէ՛ղնի:
Քըստ էստեղ, քըստ էնտեղ,
Բուրուստ էնտեղ: *(ավել).*

✣ Օսկե սուն՝ էրթիկից կախված:
(արև).

✣ Իքի-իքի, ինքն արարի,
Լեզուն՝ թուրքի: *(աքլոր).*

✣ Պտղի մարագ, մեչը լիք ուրաք:
(բերան և ատամներ).

✣ Խլուզ աշներ, պլուզ անգճներ,
Փոստե բերան, բրթե պոչ: *(գայլ).*

✣ Էլա սարը սըլվըլալեն,
Օսկի բեխեր պըլպըլալեն:
(գերանդի).

✣ Ձեռքով ցանես, բեյնով քաղես:
(գիր).

✣ Բերան ունի, ո. չունի: *(գյանա).*

✣ Ես իմ, ես իմ, ինչ կա դառնամ.
Էտեսի թոշ կա, գոմեշ կա, պճեղ
չկա: *(գնացք).*

(Ուճմանեցիք զավեշտով պատմում էին, որ իբր մի մայր է եղել, որի որդուն գայլը փախցնելիս այս երկտողն է արտասանել, կարծելով, թե գայլը կամաչի արածի համար):

+ Էրկու մոթեն բռնիմ,
Չիփլաղ մեչ կոխիմ: *(գուլպա և ոտքեր).*

+ Առակ-առակ դաստառակ.
Կես գործած, կես խայտառակ:
(թաթ).

+ Պտղի ուխլիկ, մեչն անուշիկ:
(ընկույզ).

+ Իմ տափակ, տափակըդ,
Իմ սլիկըս քո ծ . . . .: *(երկանք).*

+ Խալին դնեմ տակըդ,
Զըոզըոոց քցեմ ծ . . . .: *(երկանք).*

+ Նստիմ տակըդ,
Լըոզրոցում ծ . . . . .: *(երկանք).*

+ Գոլ մի կա գոլի մեչ,
Ձուկ մի՝ ձկի բերան
Կրակ մի կա: *(լամպ).*

+ Հանելուկ, հանմանելուկ,
Ծիլ ծլուկ, տակն ավելուկ: *(լամպ).*

+ Ավե լորիկ, կավե կլորիկ,
Դեղին թաքավոր, ճերմակ
ձիավոր: *(խնոցի).*

+ Կերթա, կիգա
Մամու փորին
Բարև կիտա: *(խնոցի).*

+ Չինը գնաց, թամքը մնաց: *(ծուխ).*

+ Ոտքերը շենքում,
Գլուխն էրկընքում: *(ծուխ).*

+ Սև կով դուս կը բոռա,
Կարմիր կով տուն կը բոռա: *(ծուխ և բոց).*

+ Չին գնաց, թամքը մնաց:
(կամուրջ).

+ Քանի սաղ է, աշխարք ման կիգա,
Եվ օր մեռնի՝ ճամփա կերթա:
(կաշի, տրեխ).

+ Պառավ գնաց առուն,
Քոչեր թոփ էրեց 0 ...: *(կաղամբ).*

+ Վրեն տախտակ, տակը քար,
Իրեք գլխանի, տաս ոտանի: *(կամ-մարդ-եզներ).*

+ Չորս՝ հողին, էրկուս՝ կողին,
Պ . . . լե պառեկին: *(կին՝ ֆիու վրա).*

+ Հավք մի ինչավ երկնքեն, հա՛ էրեց,
հո՛ էրեց, սանամերն ըսեց.
- Յամա՛ն իմ պ . . ., քավորն էկավ
պրծուց: *(կողպեք և բանալի).*

+ Մսից սուսեղ, անհող բուսեղ:
(կտրեխ).

+ Աններկ ներկած, անդանակ
շերտած: *(հավի կաւրար).*

- Դըմբ-դըմբ ու վըզ-վըզ,
  Էկան ու լցվան,
  Կատղան ու կցվան: *(հարսանիք և շուրջպար).*

- Մինը տեսավ՝ անցավ,
  Մինը քայլեց՝ անցավ,
  Մինն էլ ոչ քայլեց, ոչ տեսավ,
  Մեննակ թե՝ անցավ: *(հղի կինը, գըրկին՝ երեխա).*

- Դուրսը արծաթ, մեչը՝ օսկի:
  (հավկիթ).

- Մե փառչի մեչ էրկու գույնի ջուր:
  (հավկիթ).

- Մեչն օսկի, բոլորն արծաթ:
  (հավկիթ).

- Չորս ախպեր պատ կը շարեն,
  Մե ախպեր ջուր կը կրե, չի հասվենա: *(ճաղեր).*

- Դաստեմ ժախ, պատեն կախ:
  (մազեր).

- Բալակ բոջին նստել է կոճին:
  (ճրագ).

- Ինք՝ մեկ, աչքեր՝ հազար,
  Էտ իշանով՝ կերթա բազար: *(մաղ).*

- Նը՛ էրկինքն ը, նը՛ գետինն ը:
  (մանուկն օրորոցում).

- Մսե շիշ, էրկըթե քյաբաբ:
  (մատանի).

- Հանք-հանք, հրամանք,
  Յոթը քարին դեմ առանք: *(մեծ պաս).*

- Էրկու ախպեր ջուխտ կերթեն,
  Ես էլ գիտեմ՝ ուխտ կերթեն:
  (մկրատ).

- Օջլի բուն, լվի քաղաք,
  Շոքուն՝ թևաշալակ,
  Անձրևուն՝ խախկ ու խայտառակ:
  (մուշտակ).

- Էրկան արտ, կարճ գարի,
  Սմբուլ, դու գնա ու արի: *(մքուր).*

- Էլա, էլա, էլ մի տեսա,
  Անսոնի սել մի տեսա,
  Անոթի գել մի տեսա: *(ենջեցյալ).*

- Քյարվան ախպեր, արի առ ամպ ախպոր,
  Գնա ամպ ախպեր, հոտ մանցի,
  Քյարվան ախպեր ետ դարցի:
  (ենջեցյալ և թափոր).

- Դնիս՝ խժժա, վերցնիս՝ վժժա:
  (շղթա).

+ Ութ հատ ունի Աֆեթի Ֆլլան,
Չորս հատ ունի Բաբերսի մոլլան,
Էրկու հատ ունի մաքիկը,
Հեչ չունի Գաքիկը,
Ինչպե՞ս պահե ձաքիկը: *(շուն՝ 8 պտրուկ, կով՝ 4 պտրուկ, ոչխար՝ 2 պտրուկ, աղավնի).*

+ Էլա ել, կտրավ սրտիս թել,
Թափավ օսկե սեռ: *(ոչխարի փսկուլ).*

+ Սարեն քցես, չի կոտրի,
Էրկրնքեն քցես, չի կոտրի,
Էրկու քարին արանքն օր ընկնի, կրկոտրի: *(ոջիլ).*

+ Չօր ու գիշեր ման կիգա, չի բեզրի: *(ջուր).*

+ Լապրստրակ, քարե վաստակ.
Քանի կերթա, փորը դարտակ: *(ջրաղաց).*

+ Պորտեն կուտե,
Կռնկեն կարտաթորե: *(ռանդա).*

+ Էրկու քուր մե մարթու առած,
Աշխարն էր նրա դեմ վառած: *(սայլի ակներ).*

+ Չոր կոխեմ, թաց հանեմ: *(սանչ).*

+ Մութ փողան, էրկեն սողան,
Սերկնիլներ կերթան կուգան: *(ստինքներ).*

+ Մե քիթըմ ունի, քառասուն աչք: *(տրեխ).*

+ Արիեգ տղու, սարիեգ տղու,
Գիշերանա՝ ո-ի մըտու: *(վարտիք).*

+ Արեկ գըտա, սարեկ գըտա,
Գիշերհանա ո-ի մըտա: *(տաբատ).*

- Ախչի, անկ (դեռ չքայլող) ուլն
  Կալեն բեր: *(ուլ)*.

- Ծով կեղնի՞, օր չոր չէղնի,
  Քաղաք կեղնի՞, օր տուն չեղնի:
  (քարտեզ).

- Չեն ունի, մարմին չունի: *(քամի)*.

- Սև հավ, փորը բաց: *(օջախ)*.

- Էրկու տուն, մե սուն: *(քիթ)*.

- Հավքը բռնեցինք,
  Վիզը կտրեցինք,
  Ջիգարն հանեցինք,
  Գինի խմցուցինք,
  Լեզուն բացվավ,
  Խոսելն սկսավ: *(փեսրուրե գրիչ)*.

Շուտասելուկներ

- Մեր տան դռան դիմաց կա տասսը հատ ծանդրը-ծանդրը տանձի ծառ, ձեր դռան դիմացնա կա տասսը հատ ծանդրը-ծանդրը տանձի ծառ. քալե էրթանք աշենք, թը ձեր դռան դիմացի տասսը հատ ծանդրը-ծանդրը տանձի ծա՞ռն է ծանդրը, թե՞ մեր դռան դիմացի տասսը հատ տանձի ծառն է ծանդրը:

- Պապրս էլավ բոքուն ծառին,
Բոքին պաքեց, կոպին ք . . . .:

- Ջուխտըմ չարոխ թրչեցի,
Թրչավ-թրչավ, չթրչավ-չթրչավ:

- Տապաղ Ակոյենց տապպակ քարը տա՛ր ու փեր:

- Ուլն էլավ ուռի ծառին,
Ուլ տեղոքը ուռ օլրրեց.
Ա՛յ անիծյալ ուլ, ինչի՞ էլար ծառին,
Ուլ տեղոքրդ ո՛ւռ օլրրեցիր:

Առածներ և ասացվածքներ

(Առածները, ասացվածքները, երդումները, օրհնանքները, հանելուկները և շուրջասելուկները գրի են առնված Փոքր Խանչալլի գյուղի բարբառով, 1938-1944թ.թ.):

- Աժնիկ ես օր բորոտիս, անուշ-անուշ քերվըտիս:

- Ալան թալանի աշխար է:

- Ալրրութանը իշուն քեռի կըսե:

- Ալ ու կուլ էղավ:

- Ալ ու կուլով վերչացուցին:

- Ալուն կուլայինք, Վալին էկավ կարպետով:

- Ա՜խ, ախ, օ՜ֆ, օֆ, հիմի մերոնք հաց կուտեն:

- Ախչիկ տղա է, մեղք է:

- Ախչիկ, քեզի կըսեմ, հարս՝ դո՛ւ հասկըցի:

- Ախպուր կա, օր հողին տըկեն կերթա, ջուրը խըմվի կը, ախպուր էլ կա, օր հողի էրեսեն կերթա, ջուրը չի խըմվի:

- Ածան հավը կըխկըխան (կչկչան) կըլլի:

- Ածը մտավ բոստանը, հարված տվեց Կոստանը:

- Ակոն տունը չէ (խելքը գլուխը չէ):

- Աղըդ է պակաս, թե՞ մաղըդ:

- Աղոթեմ, աղոթեմ լավանա, չորս գաթա գողանաս, ես ուտեմ, դու լավնաս:

- Աղվեզը մսին չհասսավ, ըսավ՝ Փի՜ֆ, հոտած է:

- Աղվեզին ըսին՝ վկադ վե՞վ է, ըսավ՝ պոչըս:

- Աղվեզին կըսեն՝ փախի՛ր, թազուն կըսեն՝ բռնե՛:

- Աղվեզին վկան իրեն պոչն է:

- Աղքատ հպարտ է:

- Աղքըտին հալեն աղքատը կը հասկընա:

- Աղքըտին դարտակ մի՛ք դառցնե:

- Աճալն էկել է:

- Աճալով մեռավ:

- Ամաև լիզող կըլմանի:

- Ամաև լիզող շուն է:

- Ամանաթ հացը փոր կը պառռե:

- Ամանաթը տիրոչը կուտան:

- Ամընչես օրա գիլի պես կապրիս:

- Ամմեն ամպ թոն չի փերե:

- Ամմեն բան զոռին գլոխն է:

- Ամմեն բան իրեն վախտն ունի:

- Ամմեն բան իրեն տեղն ունի:

- Ամմեն բանի մեչ չեն ընկնի:

- Ամմեն բանի վերչն է գովելի:

- Ամմեն էշ մե չըփխովըմ չեն քշե:

- Ամմեն կանուխ էլլողը մե օրենքըմ կը հանե:

- Ամմեն մարթ իրեն կը հավնի:

- Ամմեն մարթ իրեն էղով կը տապկըտի:

- Ամմեն մարթ իրեն ղըսմաթը կուտե:

- Ամմեն մարթ իրեն օքուտը գուզե:

- Ամմեն մարթ կըսե՞, թե իրեն թանը թքու է:

- Ամմեն մարթ մե դարտըմ կունենա:

- Ամմեն մարթու հավտալ չի՛լլի:

- Ամմեն մարթու պատիվն իրեն ձեռքն է:

- Ամմենն էրիր, էտիկ էր մնացե:

- Ամմենն իրեն ցավին կուլա:

- Ամմենն իրեն տունը, հավերն իրենց բունը:

- Ամմենն ճակտիս էր գրված, էսիկե կըրընկիս գրվավ:

- Ամմեն օր կեչունն է բաց, մե օրմե օչխըրինը թող բաց ըլլի:

- Ամպը գոռաց, մուկը ճըռաց, աթմաթիթոնի համը գնաց:

- Ամպը գոռաց, մուկը ճըռաց, նազ խաթունը վարտիքն առավ, դուս թռավ:

- Ամպը գոռաց, մուկը ճըռաց, հարս խանումըս տակը մնաց:

- Ամպ օրը գելը կը խնդա:

- Ամուր տեղեն բռնեցուց:

- Այդի մտքիդ քըշո՛ ըսե:

- Ա՜յ, մեր տղա, ջա՛ն տղա, էլի տղա, շա՛ն տղա:

- Այը մայեն վեր է:

- Այը սիրտն է պայե:

- Այպըս հանեմ, վրեդ թընեմ:

- Անգաճըդ փակե, անցի:

- Անգաճը կախե, անցի:

- Անգաճը բամբակ է կոխե:

- Անգաճը կանչե:

- Անգրճովը մեմ թան չաժե:

- Անընիդ մեռնիմ, Աստվա՜ծ, մե քիշմե մեզի աշե:

- Անընիոր, տերտերի փոր, իստեղ էփեմ, իստեղ թափեմ, իստեղ ուտեմ:

- Անլի-անլի դուս կուտաս:

- Անկրշտում է:

- Անճարը կերել է չաչե բանջարը:

- Անոթի փորիս, ջուր տամ օռիս:

- Անպեճար է:

- Անսխալ մարթ չկա:

- Անվերի (մարթ) է:

- Անցած օրը անուշ կըլլի:

- Անունը կա, ինքը չկա:

- Անունըս հանեմ վրադ թընեմ (քո հանցանքը ինձ մի վերագրի):

- Անուշ-անուշ կուտեն, լեղի-լեղի կը թքեն:

- Աշխարը մեզի հետ չի էրթա, մենք աշխըրի հետ կերթանք:

- Աշխարը վառի, էնոր չոփը չի վառի:

- Աշխարը շինողն էլ ուսումովն է, քակողն էլ:

- Աշխարը ուսումովնին են քակե:

- Աշխարը քարվանսարա է, մեկը կը մտնի, մեկելը դուս կելլե:

- Աշխարն էսման էկել է, էսմանե կերթա:

- Աշխարքը խելքով են կերե:

- Աշխարքըս հեչ մեկին չէ մնացե:

- Աշխարքը նարդըվան է. մեկը կելլե, մեկը կիշնի:

- Աշխարքը քոռ էկանք, քոռ էլ կերթանք:

- Աշխըրեն ի՞նչ պիտի տանիս՝ օխտը ոտք:

- Աշխըրեն չենք կըրնա բան տանի:

- Աշխարն անոթի չի՛ մնա:

- Աշկեն բարդան կը պառռի:

- Աշկից հեռու, սրտից հեռու:

- Աշկը դուսն է:

- Աշկը շոռաղ է:

- Աշկ տվող է:

- Աշվընուս տերն էկել է:

- Աշվին-օնքվին թը՛պղի (իսկական) հորն է քաշե:

- Աչքի տեսսածը անձի կուսութեն է:

- Ապրա՜նք, ապրանք, մեռա՜նք, մեռանք:

- Առաչըդ աշե՜:

- Առաչ մտածե, էտև խոսե:

- Առաչը չի աշե:

- Առկեցեն անուշ բան չկա, հըմը օր ցավավ, քաշեն կը:

- Առչինին պաքն է անուշ, էտինին՝ . . . . .

- Առսըզ աթ, յուլարսըզ առվատ:

- Առ ու ապուռը կորել է:

- Ասսեղը քեզի կոխե, մախաթնա՝ ուրուշին:

- Ասսեղ ցըգելու տեղ չկար:

- Ասսու պահած գառը գելը չի տանի:

- Ասսու պայածը գելը չի կերե:

- Աստըծուն աշե:

- Աստըծու խեղճն է:

- Աստըծու կրակ է:

- Ասել են՝ ա՛ռ ու կեր, չեն ասել՝ առ ու կուլ:

- Աստված բանին աչողութեն տա:

- Աստվածն էլ է շաշմե, չիտե թե ինչ էնե:

- Աստվա՜ծ, էս շներն ինչի՞ ես վրես բաց թողե:

- Աստված էրկու դռնեն մեկը բանա (հիվանդը կա՛մ լավանա, կա՛մ մահանա):

- Աստված թշնամուս չկամենա:

- Աստված խո մատը աշկըդ չպիտի կոխե, օր հավատաս:

- Աստված կանչողը դուսը չի մնա:

- Աստված հոքիս առնե, պըրծընիմ:

- Աստված ձեռք է տվե:

- Աստված մարթուս էլին ապովը չթողնե:

- Աստված մարթուս խիղճն է:

- Աստված շառ ու շուռեն հեռու պայե:

- Աստված չէնե:

- Աստված սարը տեսսել, ձունը թրել է:

- Աստված սիրտրդ է:

- Աստված տնե-տեղե հեռու պայե:

- Աստված օր դառողրռին ձենն իմանար, Վարթևորին ձուն քուքար:

- Աստված օր մարթուս հախեն քալ ուզենա, առաչ խելքը կառնե, էտև՝ կարողութենը:

- Աստված օր տվել է, բարինե հետը:

- Աստված օր չտվեց, ինչ գուզես էրա:

- Ավելի թիքեն փոր չի ցավեսնե:

- Ավետարանին միչեն կը խոսի:

- Ավետիս, տոռպակրս թ., Ձայնեմ գետնին, տրաքիս:

- Ավզին վրեն տուն կը շինե:

- Արևով թոն էկավ, աղվեզը ձաք կը հանե:

- Արի՛, էտ բանը մի՛ էնե:

- Արի՛, էտ քարը գոքեդ թափե՛:

- Արտը խախուտ, մահանեն կարկուտ:

- Արտրսունքիս տեղը արուն էլավ:

- Աֆֆարիմ համար փուքրմ ջուր կը խմե:

- Բախտիդ քարով մի՛ զայնե:

- Բանին անունը կուտան թե չէ, փորին ցավը կը բռնե:

- Բան թրի՝ փախավ, հաց թրի՝ հասսավ:

- Բանիդ աշե, ջանը՞մ:

- Բանը կենեն, էտև կը պարզենան:

- Բանը բերանրս, մոլրրել եմ:

- Բարի տղեն օրոսկեն բարի կըլլի:

- Բարակ կը մանե:

- Բարեկամին հետ առուտուր միէնե:

- Բեղելվաթ դուս էկավ:

- Բերանը բան մի՛ ցրգե:

- Բերանն անգրճին էտտին է դառցե:

- Բերանս ժուռ քուքան (ուզում են գաղտնիքս իմանալ):

- Բերանը ղրռն է կապե:

- Բեյնես կրտռեցի, իրեն ուտեցուցի, օր էլլեր, ճրտիս նստիր:

- Բեյնեն կրակ կը թափի:

- Բեյնեն հըլը կաթի հոտ քուքա:

- Բեյնեն շաքար կը թափի:

- Բեյնեն քիրա (վարձ) գուզե:

- Բիտտուն մորըս քեֆը կը հարցընեն, հորըս քեֆը հարցնող չկա:

- Բոբլիկի մեկն է:

- Բոյ են առե (ուրախացել են ուրիշի դժբախտության վրա):

- Բուխուրիկե էլած կըլմանի:

- Բուրթը տերը կը ճանաչե (վատ գզված բուրդը ոչխարը կճանաչե):

- Գառի հազ կը հազա:

- Գարի հաց, անժուր ապուր:

- Գդալ-դգալ ժողվեց, շերեփ-շերեփ պարպեց:

- Գելին բերանը ջիգար են կախե:

- Գելի գլխուն Ավետարան կարթացին, օր օչխար չուտե, ըսավ՝ թե՛զ էրեք, օչխարը սարն անցավ:

- Գելի հետ կուտեն, տիրոչը հետ դիվան կը նստին:

- Գեղ գեղի վրա կըլլի, տուն տան վրա չի՛լլի:

- Գեղ գզե, գավառ մանե, Անունն ըլլի ճարտըրին:

- Գեղ կայնի, գերան կը կոտրի:

- Գեղ մըտի, պզտըկեն խապար առ:

- Գեղեն չեն առնե պաքած, Գեղեդուս կառնեն կեսը տարած:

- Գենա էն ալուրն է:

- Գեշ բան գեշ բանե առաչ քուքա:

- Գեշ դեքերկնկա պես կը խոնքխոնքա:

- Գեշ դրկիցը լավ գործիքի տեր կենե:

- Գեշը լավին գրած է:

- Գեշ խոսքը թեզ տեղ կը հասնի:

- Գետն անցավ, առուն խեխտըվավ:

- Գետն անցնողը առվեն չի վախենա:

- Գիշերվա կերածը կորած է:

- Գիշերվա սատանա է կըտռե:

- Գիշուքուն էնողի գիշուքունը իրեն կը մնա:

- Գիշուքուն էնողին լավուքուն էրա:

- Գիտես թը աշխըրքի դարդը իրեն են տվե:

- Գիտես թը գութնեն է էկե:

- Գիտես թը էրկընքեն է իչե:

- Գիտես թը փորը հարամի է մտե:

- Գիտես թը լուս աշխար իչան:

- Գիտցողին մեկ ըսա, չըգիտցողին՝ հազար ու մեկ:

- Գիտցողին մեկ, չըգիտցողին դավուլ-զուռնեն հերիք չէ:

- Գիտունը կուտե, օր բան սորվի, իսկ չըքետը ուտելուն կը մտածե: (Պահպանված է ժողովրդի գործածած բառը):

- Գլխե՛ն բռնեցու:

- Գլոխգովան է:

- Գլոխըդ Ավետըրընի տակ մի՛ թնե:

- Գլոխը խելքի ծով է:

- Գլոխը խելք չկա:

- Գլոխը մազի չափ խելք չկա:

- Գլոխը չի՛ մտնի:

- Գլոխըս էրկուս էղա (ամուսնացա).

- Գլոխըս հըլը չէ մեռե:

- Գլոխըս փափաղ կա:

- Գլխուդ ճարին աշե:

- Գլխուս եղ կը քսե (շողոքորթում է).

- Գլխու կրակ է դառցե:

- Գողերեն Աստված հեռու պայե:

- Գողը մեկմ է, կարզիքը՝ հազար: (Պահպանված է ժողովրդի արտասանությունը. իմաստն այս է՝ Գողոնը մեկ ուղղությամբ է գնում, կասկածը՝ հազար):

- Գող ու բոզ է:

- Գողն ու բոզը էրեսներեն կը ճանչվին:

- Գողինն ու բոզինը քառասուն օր է:

- Գողն օր տնեն ըլլի, եզը էրթեցեն կելլե:

- Գոնե հորեդ ամընչե:

- Գուզեր կաքավի քելք քելեր, ղառղըռինեն մտեն էլավ:

- Գույն էրեսաց, ոտն քելքից:

- Գրի սևն ու ճերմակը չի ջոկե:

- Դանակը օսկըռին է հասսե:

- Դավին ըսին ճիտըդ ծուռ է, ըսավ ո՞ւրտեղս է շիտակ, օր ճիտըս շիտակ ըլլիր:

- Դարդ էնողին դարդը չի պակսե, քեֆ էնողին՝ քեֆը:

- Դարդ դարդի վրա, Պռկոշնե պառկե ախչիկ է փերե:

- Դաքեր պայած հարսը մեռնի, ախպոր պայած՝ քուրը:

- Դե՛ քընա քռչեն ընկի, վե՞վ տի աֆֆա՜րըմ ըսե:

- Դե քընա ջուրն ընկի, վե՞վ պիտի աֆֆարըմ ըսե:

- Դիորի աղն էկավ, մատաղը վերչացավ:

- Դիորի առուն ջուր քա, գորտին աշվին դուս քուքա:

- Դոխի պես կը դունդունան:

- Դու Ասսու փեշեն բռնե:

- Դուն էիր պակաս:

- Դուքարե ընկել է:

- Դու մի՛զայնե ուրուշին դռանը քարով, Աստված քու դռանըդ կզայնե թոփով:

- Դուռը կողպ պայեմ, դրկըցիս գող չըբռնեմ:

- Դուսը ամպել է (խռովել է).

- Դու քեզի համա՜ր, ես՝ ինձի համար:

- Դու օր գործ էնող ըլլիս, սար ու ձոր գործ կը կըտռի:

- Եթում է. վեվ ըսես շալակը կելլե:

- Եթումը ե՞փ է խնդացե, օր հիմի խնդա:

- Եթումն օր գողութան էլլե, լուսնիակը առչի իրիկօրե կելլե:

- Եթումին օրն էտ է:

- Եթումին օրը սև ըլլեր, օր ծնվավ:

- Եթումին օրը սևով էկել է, սևով էլ կերթա:

- Ես ամմեն խաղ խաղցել եմ, դու չես կըրնա ինձի հասնի:

- Ես ի՞նչ ձուն տամ գլխուս:

- Ես իրեն ժուռ քուքամ, ինքնա՝ ինձի (կորցրած իր որոնելիս է ասվում).

- Ես խառնեմ կը նախիրը, էնիկ կերթա հորթերը:

- Ես խըմեցի, դո՞ւ հարփար:

- Ես կուտեմ մարքու պես, դու կաշես թազու պես:

- Ես տանձ կըսեմ, էնիկ գանձ կը հասկընա:

- Երեխին՝ կակա, շանը՝ փափա:

- Զոնքանչըդ քեզի հըզ չի էնե:

- Զոռով կըսե՝ շո՛ւն, արի, ինձի խածե:

- Զուքվե, զուքվե, մաղարըդ էկավ:

- Էլած (էլլած) աշկը տեղ չի բռնե:

- Էլած սրտի մխիթարանք:

- Էլի էն ալուրն է, էն մաղը:

- Էլի թուրքըցա՞ր:

- Էլի իրեն էշը կը քշե:

- Էլի շան պես վրես կը հաչե:

- Էլլե սիրտ, կըտռե գլոխ, իշնի սիրտ՝ չի գտնի գլոխ:

- Էլի չանգա-չանգա տվին:

- Էլօղլին միխաննաթ է:

- Էլօղլու տղի պետքը չէ:

- Էղածն էղած է, անցածը՝ անցած:

- Էղին կճճին վրեն գորտ է նստե (ուտել չի կարելի).

- Էման բան է, օր ախպերն ախպորը չի բաշխե:

- Էման էրե օր նը շիշը վառի, նը խորոված:

- Էման մեռնիս օր էտրթիդ լան:

- Էնիկ անոթութանը առչի իրիկօրե կը պառկի:

- Էնիկ հա՛ բուրդա, հա՛ Բաղդատա:

- Էնոնցեն ասեղ ուտողը մախաթ կը ք ....:

- Էնոր էրեսը շան կաշի է:

- Էնոր ձենը գիտես թը կարսեն (կարասի միջից) քուքար:

- Էնոր տախտակը մըխ չի վերցնե:

- Էնոր քթին ջուրը չի՛ քաշվի:

- Էնոր օր աշեի, հիմի կորած էի:

- Էշը դատի, ձին ուտե:

- Էշն ի՞նչ գիտե՝ նուշն ի՛նչ է:

- Էշը ինքն է, տոպրակը հալղին ճտեն կը կախե:

- Էշ կերել, էշ մեծցել է:

- Էշը մատաղ չի՛լլի, հըմը կաշու գինը կըլլի:

- Էշը մեր էշն է, փալանն է փոխվե:

- Էշը չկերած խոտն օր ուտե, գլոխը կուռի կը:

- Էս խմորը ջուր շատ կը վերցընե:

- Էսոր արունը պղտոր է:

- Էստեղ բոյախանա են դառուցե:

- Էսօր դու ցանիդ բանլիքը կորուցել ես:

- Էսօր սատանի կ. է հեծե:

- Էսօրվա կերածդ շատունց եմ կերե:

- Էտ խոսքը փուքըմ մեղրով չի ուտվի:

- Էտման բարեկամը արտը ցանեմ, թա(ու)մբը բուսնի:

- Էտոր հացը չի՛ ուտվի:

- Էրսանց՝ հայլի, տըկևանց՝ ածըլի:

- Էրես առած է:

- Էրես առել է, աստառ գուզե:

- Էրեսիդ կաշին շան կաշի է:

- Էրեսի ջուր չունի:

- Էրեսի ֆարդեն պատռել է:

- Էրեսը կատվի լիզած կըլմանի:

- Էրես մի՛ք տա:

- Էրկաթ ըլլիր, կը հալվիր:

- Էրեկ մեկ, էսօր էրկուս, դեմըս կը խոսի:

- Էրկան զոզո է:

- Էրկանը բոյին է խնդացե, կարճընա՝ շորին:

- Էրիկ-կընիկ էրիր (բրդի լավն ու վատը իրար խառնեցիր):

- Էրիկ չունի վախենա, օտվին թնդիր կախենա:

- Էրիկն օր կա կընկա բանավոր էշն է, եփ օր սատկավ, կընիկը նալերը կը քաշե:

- Էրկանը հացը մեղան է, դեքեր հացը՝ զնդան է:

- Էրկու իշու գարի չի կրնա փայ էնե:

- Էրկուս ծովեն, մեկըմ կովեն:

- Էրկու կրակին մեչն եմ ընկե:

- Էրկու տան կատու է:

- Էփած ապրին ջուր կը լըլե:

- Ընկերով արտը կռունկն է կերե:

- Ընկերդ ճանչե, շա՛նորթի:

- Ըխտավորի էշը կը զռա:

- Ռբիկըմ կաղա, խաղը կը խաղա:

- Ըսելեն բերանը մազ բուսնավ:

- Ըսելը դոլայ է:

- Ըսելն էլ չի՛լլի, չըսելն էլ:

- Ըսին՝ վարթապետ, կընիկըդ մեռնի, ըսավ՝ կընիկ չունիմ, հըմը փառը փառ չէր:

- Ըսողին լըսող պիտի ըլլի:

- Թազա հավ էլել, թազա հավկիթ կածե:

- Թաժժա հարս կըլմանի:

- Թանգ տարին ի՞նչ էիր, օր աժան տարին ինչ ըլլիս:

- Թան-թան, թթու թան, պապն ուտե, էրթա գուբան:

- Թան ունենամ, ճանճը Բաղդըտեն էլ քուքա:

- Թարս կողին է պառկե:

- Թաքավորի ղիապն էլ կենեն:

- Թաքավորն օր թաքավոր է, դրկցի մոխրին էյթաճ է:

- Թաք ձեռքով հաց չեն կտռե:

- Թե բախտ ունենաս, ուզածըդ կըլլի:

- Թե դու սատանա ես, ես պոչն եմ:

- Թե էտոնք եսե գիտնայի, մե մարթմե ես կըլլեի:

- Թե էնիկ մարթ դառնա, ես իշու պես կը զռամ:

- Թե մոռանաս, քոռանաս:

- Թե սոխին անուշը կա, էլօղլուն անուշնե կըլլի:

- Թեփը պարպել է:

- Թըթու է, թան չէ, ամմեն մարթու բան չէ:

- Թթվել է (տխուր է):

- Թիուն թրին, դուս թապլեցին:

- Թընդրի կատու է:

- Թշնամու խոսքովն էդավ:

- Թոկե փախած:

- Թող մարթ չըսե, թե իմ ճրաքըս մինչի լուս կը վառի:

- Թող սաղ ըլլի, օխտը սարին էտտին ըլլի:

- Թոփալ իշով քարվան կը խառնվի:

- Թուխս է նստե:

- Թուք բուռըս, զայնեմ ճակատըդ:

- Թքած ամնին մեչը չեն լիզե:

- Ժամեն ես քուքամ, «Տերօղորմյան» դու կըսես:

- Ժամ չի էրթա, հըմը գործը աչող է:

- Ինատ էրավ էլերուն, Ո-ը տվեց գելերուն:

- Ինձեն էլել է, ինձի լող խրատ կուտա:

- Ինձե քեզի հետ փչացուցիր:

- Ինձի անդանակ մորթեց:

- Ինձի թանգ տարին դո՞ւ ես պայե, օր զայնես կը:

- Ինձի դաբուլ է:

- Ինձի տեսսի, քեզի օղորմե:

- Ինչ բրթես քարղանըդ, էն քուքա գդալըդ:

- Ինչ էնես, էն կը լսես:

- Ի՜նչ դուս կուտաս (հիմար բաներ ես խոսում):

- Ինչքան չեղար ինձի պես, օր ես էղա քեզի պես:

- Ինչքան օր գետնի էրեսն է, էնքանե գետնի տակն է:

- Ինչ օր կըսե, իրեն ըլլի:

- Ինքը էստեղ չէ, իրեն փայ Աստվածն է էստեղ:

- Ինքը քնած, բախտը զարթուն:

- Իշեն ընկնողը կը մեռնի, ձիեն ընկնողը չի՛ մեռնի:

- Իշու դեմ է խաղցե:

- Իշուն ըսին մարիֆաթըդ ինչ է, պոչը վերուց տ . . .:

- Իշուն մըսուրքը պառկել է, թաքավորի էրած կը տեսնի:

- Իշուն նըստիլը մե այպըմ է, իշնիլը՝ էրկու:

- Իշուն նըստիլը մե այպըմ է, ընկնիլը՝ էրկու:

- Իշու չափ մեծցել է:

- Իսիկ կենա-կենա ինչի՞ վեր-վեր կըյնի:

- Իրար միս կը ծամեն:

- Իրարու պատիվ պայեցեք:

- Իրեն աշկի գերանը թողել, ուրուշի չոփին է աշկ տնկե:

- Իրեն էշը կը քշե:

- Իրեն թրած տուզաղը ինքը կըյնի:

- Իրեն լիզվովը կրակն ընկավ:

- Իրեն մուրը հալղին էրեսին կը քսե:

- Իրեն շքեն կը վախենա:

- Իրրիկունը պուտըմ ջրով, սապախտանը՝ գեղըմ ջրով (ման լվանալու առթիվ):

- Լագլագը վերան կերթա, իրեն ծիրտը իրեն հետ է:

- Լավ էլ էնես, քեզի կենես, գեշե էնես, քեզի կենես:

- Լավ ձին գարին կավելցընե, գեշ ձին՝ ղամչին:

- Լավութենը չի կորի (չի անսնի):

- Լացին տեղը բաշխա է, հացին տեղը՝ բաշխա:

- Լափաստակ, չորե վաստակ, Քանի վազզես, փորըդ դարտակ:

- Լեն մտնին, արցակ կելլեն:

- Լիզու կա, բերան չկա:

- Լիզո՛ւն խածե:

- Լիզուն օր չըլլի, ղառղըռնին կուտեն:

- Լիզվընները թաթխըվել է:

- Լիզվին տակը օսկոռ չկա, օր խրի:

- Լուն դավա կը շինեն:

- Լուսինը լուս կենե, Ափարը դուռը թոզ կենե:

- Խամերը կը քակե (անմեղ է ձևանում):

- Խաչը իմն է, զորութենը ե՛ս գիտեմ:

- Խավիծ-խավիծ խավլորիծ, պապն ուտե, ընկնի օտից:

- Խելացի մարթը անխելքին զոյ է քնացե:

- Խելառ մարթու պես օրը տասսը տեսսակ դառնա կը:

- Խելառ խոտ կերած է դառցե:

- Խելրռի հետ խելառ չեն ըլլի:

- Խելրռի համար ամմեն օր զատիկ է:

- Խելրռին գարի խաշե, չի ուտե, գլխուն քաշե:

- Խելրռին ջաղասքը Աստված կաղա:

- Խեր մե քարըմ ցրգեց հորը, քառսուն խելացին չկրցան հանե:

- Խեր չունեցող մալին քոքը Ասված կըտռե:

- Խելքեդ դուս մի՛ տա:

- Խելքը գալ-գեթ է:

- Խելքը կարճ է:

- Խելքը կըրընկին վրեն է:

- Խելքըդ խելքին մի՛ տա:

- Խելքը հացին հետ է կերե:

- Խելքը-միտքը դուսն է:

- Խելքե չուստ է:

- Խելքը օնքերուն վրեն է:

- Խելք օր կը բաժնեին, դու ո՞ւրտեղ էիր:

- Խելք օր փայ կենեին, ո՞ւր էիր:

- Խիղճ կա, Աստված կա:

- Խոռթլաղ կըլմանի:

- Խոզին գլոխը թրին խալուն, գլորավ, կռանոցն ընկավ:

- Խոսքերըս մեր մեչ մնա:

- Խոսքմեկ էղիք:

- Խոսք տանող-փերող է:

- Խոսքը թաքվորցավ:

- Խոսքը խոսք կը բանա:

- Խոսքըդ ճանչե, էտև ուրուշին ըսա:

- Խորոզիմ չափ էրիկ ունենամ, կալիմ չափ տեղ կունենամ:

- Խուրցըմ խոտ առ, քընա քամուն ծակը գոցե:

- Ծակ աշկ է:

- Ծակբուկ է (բկլատ է):

- Ծամած ձուք է դառցե:

- Ծանդրռ քարը տեղեն չի վերնա:

- Ծանդրռ քընա, հեռուն մտածե:

- Ծանդրռ քընաց, թեթև էկավ (Խելացի գնաց, անխելք վերադարձավ):

- Ծերանաս, ծերի պատիվն իմանաս:

- Ծուռ նըստինք, շիտակ խոսինք:

- Կաթի հետ մտածը հոքու հետ դուս քուքա:

- Կալեն ի՞նչ խեր տեսսանք, օր կալատրկեն ինչ խեր տեսնինք:

- Կալին կուտը, մամին հարսնիքը:

- Կախգլոխ է:

- Կախգլխեն հեռու մնա:

- Կախվողը խեխտըվողին վրեն կը խնդա:

- Կարճ մարթը թաքավորութեն կերծե:

- Կատղած շան պես կատղել է:

- Կատվին ըսին իքըդ դարման է, տարավ խորունկը թաղեց:

- Կատուն վարտիք չունիր, տունը չէր կայնի, հիմի վարտիք ունեցավ, էլ ո՞ւրտեղ կը կայնի:

- Կատուն օր լվասվի, միսավիր քուքա:

- Կարմիր կովը իրեն կաշեցեն դուս չի քա:

- Կարպետը ջրեն կը հանե:

- Կափեքի վրա շան պես կը դողա:

- Կեչեստանն էկել են (աղջիկը կամ հարսը խռովել են):

- Կեսուրըս մեռավ, տեղըս լենցավ:

- Կերավ, թասմե ջուր վրեն խմեց:

- Կծու է, հա՜ (թանկ է):

- Կրծոտած դանճըդ է:

- Կրնկտացրդ անգաճ մի՛ք էնե:

- Կրնկտոց վրեն կնիկութեն չի մնացե:

- Կրնկա մազն էրկան է, խելքը՝ կարճ:

- Կիվկիվի ձաք կըլմանի:

- Կնիկ-կնիք կնքվիս, թըփիդ վրա տնկվիս:

- Կնկա խելքին մի՛ էրթա:

- Կճան-կճան մի՛ կճե, Սալվի քուրըս քեզ կուտամ:

- Կռնակը հաստ է:

- Կոտըմ գնաց, ըռուբըմ դառցավ (խելացի գնաց, անխելք վերադարձավ):

- Կոտրած շերեփի պես մեչ կըյնի:

- Կոտրած շիշեն չի՛ սաղնա:

- Կորցնողը հազար մեղքի տեր կըլլի, գտնողը՝ մե:

- Կրա՜կ չուտես:

- Կրակի պես ինձի վառեց:

- Կուկկուն ածի, բուբբուն տանի:

- Կուշտը անոթուն մանդրը կը բրթե:

- Կուտը կուտե, էրկինք կելլե:

- Կուտը մեր տունը կուտե, ուրուշինը կածե:

- Կուտը պոլոզ է:

- Հազար տեղ հաց է կերե:

- Հազըր ըլլի, ուտե:

- Հազըր ուտողներեն է:

- Հա՜յ, հա՜յ:

- Հայը ո՛չ միաբանի:

- Հայհայներս քընացե, վայվայներս է մնացե:

- Հայիֆն ինձեն կառնե:

- Հանած աշկը տեղը չի քա:

- Հավկիթըմ կենես, պատը կը զայնես:

- Հավն օր ղազին աշե, հավկիթ ածե, . . . կպատռի:

- Հաստ ու բարակ մեկ է. վա՜յ բարակ մանողին:

- Հարամ բանը փորը կը ծակե:

- Հարցնելով աշխար կերթաս:

- Հացը դեմ էկավ:

- Հացը թողել են, կտորին էտտին կը վազզեն:

- Հաց թընեմ հասսի, բան թընեմ՝ փախի:

- Հացը թըրած, բանն անիծած:

- Հացը ծնկին մարթ է:

- Հացի ցեց (է), պանրի՝ գրող:

- Հացին էրածը հե՛չ մեկը չի էնե:

- Հացին տեղը հե՛չ մեկը չի բռնե:

- Հաց-հաց, բերանըդ բաց, ել առիքը՝ լաց:

- Հաց-հաց, բերանըդ բաց, վազզե ջաղաց:

- Հեչ մեկը մեկին ցավին չի մտածե:

- Հեչ չի ուզե, օր իրեն մալին ձեռք տանք:

- Հե՛չ ոռը չի բռնե, օր աշխատի:

- Հե՞տըդ պիտի տանես (մահվան դեպքում):

- Հերըդ էդ օրը ջաղասկը էրթար, դու չըլլեիր:

- Հերսը էնոր վրեն իչուց:

- Հերվա մեռելը էս տարի չեն թաղի:

- Հերունի ծերին մուշտով չեն զայնե:

- Հըլբըթ Աստված մե բանըմ կենե:

- Հըլը իտի թոկե փախածին աշե:

- Հըշտիկի ծերին մատով չեն զայնե:

- Հին էրթերը կերնե:

- Հիվընդութենը շերեփ-շերեփ կը մտնի, գդալ-գդալ դուս կելլե:

- Հոքին անուշ բան է:

- Հո՞ր է, թե՞ փոր է:

- Հում կաթկեր է:

- Ձենը տակը, քարը վրեն:

- Ձեռքեն չի՛ պրծնի:

- Ձեռքը ձեռք կը լվա, էրկուսնա էրես կը լվան:

- Ձեռքեն չի քա:

- Ձեռվընուն մատվին հավասար չեն, ո՞ւր մնաց թե մարթիք հավասար ըլլին:

- Ձեր ոտքն եմ ընկե:

- Ձեր օդին փետը հացենի՞ է, թե՞ սապռենի:

- Ձին ձիավորեն կը խլե:

- Ձին չառած, նալն է առե, մսուրքնա առաչ է կապե:

- Ձվածեղին սիրուն թավին տակը կը լիզե:

- Ձվածեղին սիրուն թավին տակը կը պաքնե:

- Ձուկը գլխեն է բռնե:

- Ձուկը գլխեն է հոտե:

- Ձուկը ծովը՝ բազար կենե:

- Ձուկը ջրին մեչ մեծ կերևա:

- Ձուննե՛ ճերմակ է, հըմը վրեն կը շռեն:

- Ձունը քուքա օր յա ձեռք մսի, յա ոտք:

- Ղազ պիտի մորթես, օր հասկընա:

- Ղանճըղը կըծոտել է:

- Ղաշավին օր առնես, բորոտ եզը վեր-վեր կընկնի:

- Ղավաղի (բարդի) պես մեչը դարտակ է:

- Ղըզիկ է:

- Ղորթ խոսողին թափան ծակ է:

- Ղորթ խոսողին ձին դուռը պիտի ըլլի:

- Ղուռի շառ է:

- Ճանկըս է ընկե, չի պրծնի:

- Ճակտի գիրը չի ջնջվի:

- Ճակտին գիրն է, պիտի տանի:

- Ճամփին աշելով աշկերրս մաշավ:

- Ճամփեն աշեմ, սիրտրս մաշեմ:

- Ճանճրն ի՞նչ է, օր ճենճրն ինչ ըլլի:

- Ճանճը քթեն ընկնի, հազար թիքա կըլլի:

- Ճարահատյալ կըլլի կը:

- Ճարը կըռել է:

- Ճերմակ շունը պահիր տեյ կը վռնդե:

- Ճըրքի պես մարավ:

- Ճրաքը տակը լուս չի տա:

- Մազե մանած է, մե օրմե իրենց օտվին կը փաթթըվի:

- Մազեն մանանեղ կը ջոկե:

- Մազը քաշես՝ եղը կելլե:

- Մազը քաշես՝ հոքին կուտա:

- Մալովրս կրակն ընկա:

- Մալը մալին կերթա:

- Մալոխըմ գտար՝ տար պատիդ ծակը կոխե:

- Մաղարրդ դուռն է հասսե:

- Մաղը կախել (նշանել):

- Մանեն մանած, պատեն կախած:

- Մանչուն տունը խապար չկա, ախչկա տունը հարսնիք է:

- Մատին վրեն կը խաղցընե:

- Մարթ իրեն աշկին քոռ ըլլիլը չի ուզե:

- Մարթը մարթով կըլլի:

- Մարթը մարթուն նեղ օրը պետք քուքա:

- Մարթը մե խոսքիմ տեր պիտի ըլլի:

- Մարթ կա տերտերին կը սիրե, մարթ էլ կա՝ իրիցկանը:

- Մարթու մեչ մարթ ունենամ, հազար մանեթ պարտք ունենամ:

- Մարթը նեղ օրվա շատ կը դիմանա, հըմը լեն օրվա չի դիմանա:

- Մարթ շուն ըլլի, տան մեծ չըլլի:

- Մարթ չկա, գեղացի է:

- Մարթը ջուխտ է:

- Մարթիք օր էշ չըլլին, իշուն գինը հազար կըլլի:

- Մարթուն բախտը փերել է:

- Մարքուն մեմ կըսեն:

- Մարքուս ալաճան նեսն է:

- Մարքն օր խելք ունենա, քիչմե իրեն կաշե:

- Մարք օր ըլլիր, իրեն մեյմունի տեղ չէր թընե:

- Մարաքը հորքն է պարպե, սընդուկը՝ տղեն:

- Մարխի ճրաք կըլմանի:

- Մե աշկը մեկալին լուս չունի:

- Մեզի նեղ կենենք, քեզի տեղ կենենք:

- Մեզի տվածուրիկ է:

- Մե խնձորին հազար թավիր քար կը թապլեն:

- Մեծ էշը ախոռն ենք մոռացե:

- Մեծի ըսած, պզտըկի լսած:

- Մեծն իր տեղը, պզտիկն՝ իր տեղը:

- Մեծին խոսքը գետինը չի մնա:

- Մեծին խոսքը ետ չեն դառցընե:

- Մեծ քիթ է:

- Մեկ-էրկու՝ էրկընանաս, իրեք-չորս՝ չոր չորնաս, հինգ-վեց՝ վեր վերնաս, օխտը-ութը՝ ո՞ւր կերթաս, Իննը-տասսը՝ տուն կերթաս:

- Մեկը էրկուս չիլլի:

- Մեկը մեկիմ բաղըմ է կամեցե, մեկելը ճուքըմ հաղող չէ կամեցե:

- Մեկին բեյնեն հանե, մեկելին բերանը կը թընե:

- Մեկին թանն է թափե, մեկալնա ըսել է՝ տուր կատվիս տանիմ:

- Մեկը ըսել է՝ հոքիս դուս էկավ, մեկալնա թե՝ տուր տամ կատվիս, թող ուտե:

- Մկին շեռը ջաղչին օքուտ է:

- Մե ձեռով տասսը ձմերուկ կը բռնե:

- Մե ձեռքը մեկելին ապովը չմնա:

- Մե ձեռքով տուր, էրկու ձեռքով առ:

- Մեղաց մեչ կորել ենք:

- Մեղըր ծախողը մատը կը լիզե:

- Մեմ նալին կը զայնե, մեմ՝ մըխին:

- Մեմ սապախտան կանուխ էլլողը չի խափվե, մեմե՝ թեզ կարքըվողը:

- Մեյդանն իրեն է մնացե, թող ֆռֆռա:

- Մեննըկ Աստված է անսխալ:

- Մենք ձիավոր, հացը յայանվոր, չենք կըրնա հասնի:

- Մեշրն քիչ բառցողն է պարպե:

- Մեշկը բարակ է:

- Մեշկը բարակ ղամչի կըլմանի:

- Մե չանթով օխտը սոխախ կը պտտի:

- Մեչը հեչ աղ չէ ցըգած:

- Մեռելը գետինը չի՛ մնա:

- Մեռնողի հետ վե՞վ է մեռե:

- Մեր լակը կուտե, ուրուշին դուռը կը հաչե:

- Մեր հարսը պատի դալտա կը խոսի:

- Մեր հացին աղ չէ ցըգած:

- Մեր միչեն կատու է անցե:

- Մերն օր անալըդ ըլլի, հերը բաբալըդ կըլլի:

- Մերը տե՛ս, ախչիկն ա՛ռ:

- Մե ցռան կովը նախրին անունը կը խայտառակե:

- Մի՛ ըսե՝ մեննակ ես եմ ու կամ:

- Մինչի աշկովըդ չտեսնիս, մի՛ հավատա:

- Միշտ ղոլային կը վազզես:

- Միշտ տո՛ւր հա տո՛ւր, ինքը հե՛չ տալու չէ:

- Միսավիրի պես ի՞նչ ես բաբըռլամիշ էղե:

- Միսըս անուշ է, բիրատիքնե ծամեն կը:

- Միրքին տըկեն անցի:

- Մորես մեմ եմ ծնվե (նույնը երկրորդ անգամ չեմ ասի կամ անի):

- Մրեն էլավ, մրջուրն ընկավ:

- Մրոտ կճուճին քովեն էրթըցողը կը մրոտի:

- Մուքը մըքին, ժամը ուքին, կելլենք կուտենք, փաքի-փուքին:

- Մուխն է մոլըրե:

- Մուկը ծակը չի հավքի, ցախավելնա պոչին է կապե:

- Մուրը մունդառ չի վերցընե:

- Յադ մարքն էլ էտ խորաքեն չէր էնե:

- Յա հա՛, յա չէ՛, ի՞նչ ես ցերեմոնի ցըգե:

- Յավաշ էրքամ՝ կըսեն յավա է, չուչուստ էրքամ՝ խելառ է:

- Յավաշ էրթողը թեզ կը հասնի:

- Նազ կենե, հըմը հըզ կենե:

- Նախրի մեչ մտել, իշուն ճակատն է պաքե:

- Նարդըվընններեն էլլել էլ կա՞, իչնել էլ:

- Նեղն օր ընկնի Ասված կը կանչե:

- Նստած տեղը վեր-վեր կըյնի:

- Նստե՛, նստե՛, հավկըթներըդ չպաղին:

- Ծան անունը կուտան, էնոր անունը չեն տա:

- Ծան արծիլը թանգութան նշանա է:

- Ծան դեմ է խաղցե:

- Ծան բախտ ունի:

- Ծան թ. (թուլի՞) պես կորավ:

- Ծան հաչելով ժամը չի կայնի:

- Ծան պես ցընգնի կը, կատվի պես հորե կը:

- Ծան պես կը ոռնա:

- Ծանը բերանը մատնիք մի՛ ցըգե, հաչե կը, բեյնեն վար կը ցըգե:

- Ծան էրեսին թքել են, ըսել է՝ էս ի՞նչ թոն քուքա:

- Ծան սատկիլն օր քուքա, կերթա ճամուն (մզկիթ) դուռը կը մունդրռե:

- Ծան տեղ մի՛ թընե:

- Ծան ու կատվի արծիլը թանգութան նշանա է:

- Ծայիմ տվի, առաչ փերի, տասսը շայի կուտամ, ետ չի էրթա:

- Ծապալակ կըլմանի:

- Ծապիքը կարճ է (մտավորական է, անխելք է):

- Ծապիք է հաքե (ուրիշի դժբախտությանն է ուրախացել):

- Ծառ է:

- Ծատ գիտես, քիչ խոսե:

- Ծատ դատողին շալե շապիք:

- Ծատ գիտուն մարթ է:

- Ծա՞տ է լըպըստվե (երես առե):

- Ծատ խաղ գիտեմ, հըմը ձենըս չի քա:

- Ծատ հանք (հանելուկ) օր ըսես, ալուրը կը պակսե:

- Ծատ մի՛ատե, սիրել կա, շատ մի՛սիրե, ատել կա:

- Ծաքարը շանը բերանը կըյնի:

- Ծեն տան տղա, տաք հացի կարոտ (երբ վերջում էին կերակրում երեխաներին):

- Ծիտակ քելե:

- Ծնեն մազըմ քաշելը խեր է:

- Ծներոց-գելերոց է էղե:

- Ծոռաղ է (շոռաղ աշկ է):

- Ծորը կըսե՝ լավ պայե դու ինձի սնդուկի մեչ, ես լավ կերևցընեմ քեզի մարթկանց մեչ:

- Ծռան-շռան, գոմշի կռան, մազե չվան, սև կարկըտան: Ծռան-շռան, գոմշի կըռան, մկներն էկան, գարիդ տարան, վազզե՛-վազզե՛, պոչեն խածե (այսպես էին ասում տակը միզող երեխային, միզելը կանխելու համար):

- Ծուն է, թե գել է, մերն է:

- Ծունը մի յարովըմ չի՛ սատկի:

- Ծունը շան թաթը չի ծամե:

- Ծունը շան միսը չի ուտե:

- Ծունը շապիք է հաքե, կատուն՝ վարտիք (այն է՝ խառնակություն է տիրում):

- Ծունը շեմը, հարսը ՝ կեսուրը:

- Ծունը շնութենը կենե:

- Ծունը շուն է, ճերմակը վե՛րն է, սևը վե՛րն է:

- Ծունը տերը չի ճանչե (խառնակություն է տիրում. խորքային իմաստը այլ է):

- Ծուններ գարուն կելլե, հըմը կաշուն հարցուցեք:

- Չալողինե խաղցող է պետք:

- Չամիչը՝ հատ-հատ, մեղրը՝ մատ-մատ:

- Չար աշկը քար կը տրաքեսնե:

- Չարը բարուն հակառակ է:

- Չափած-ձնած խոսե:

- Չափե, չըվնե էլել է:

- Չեն ըսե՝ աշկիդ վերըթին օնք կա:

- Չեն թողնե, օր տղեն հորը քաշե:

- Չեղավ յար, ըլլի սանամար:(Չեղար յար, էղար սանամար):

- Չը լսելու տուր:

- Չըփլաղ ձորի աղվեզ կըլմանի:

- Չհավան քարը աշկ կը հանե:

- Չոռը բկիդ, չորթանն օռիդ, տանիմ թաղեմ, հող տամ գոռիդ:

- Ձորի հետ թացն էլ կը վառի:

- Ձորս պատը էնոր համար է, օր խոսքը մեչը մնա:

- Ձպուխը թրեց կամին:

- Ձվախեցողին մարը կուլա:

- Ձվնե թռած է:

- Ձունորին սիրտը լեն կըլլի:

- Ձվլաղ աշխար էկանք, չվլաղ կերթանք:

- Պապը միշտ գաթա չի ուտե:

- Պատիվըդ ձեռքդ պայե:

- Պար էնենք, մեր հարսներուն խապար էնենք:

- Պզտի հարսին մեծ կ . . . . չեն վախեսնե:

- Պտղով ծառին քար կը թապլեն:

- Ջաղասկը կորուցել է, չախչախը ժուռ քուքա:

- Ջան ըսա, ջան լսե:

- Ջաղչեն քուքամ, գլոխըս ալրոտ է (այսպես հարբուխով հիվանդի հանդիպելիս էին ասում՝ վարակը կանխելու նպատակով):

- Ջանըվըրի պես հեչ չի կշտանա:

- Ջեբը Քրիստոս կը փսփսա (փողազուրկ է):

- Ջուրը իրեն ճամփեն գիտե:

- Ջուրը կերթա, ավազը կը մնա:

- Ջուրը կերթա, ծառավ քուքա:

- Ջուրը իրեն ճամփեն կը գտնի:

- Ջուրը տանիմ, ծառավ կը փերեմ:

- Ջուրը մտնի, չոր դուս քուքա:

- Ջուրը միշտ ավազ չի փերե:

- Ջուրը չըտեսած կը բոբլիկնա:

- Ջուրը պըզտըկին կուտան, օր էնոր աղիքը կարճ չմնա:

- Ջուրը փերելը բան (աշխատանք) է, տալը՝ խեր:

- Ջուրն էրթամ, ախպուրը կը ցամքի:

- Ջուրն օր մե տեղըմ կայնի, հոտի կը:

- Ջրին ել քալը կտրելու նշանա է:

- Ջրերն իրար հետ չեն վազզե (անհաշտ են):

- Սաթայել կըլմանի:

- Սաճի լոշի պես մեմ էսթուն կը դառնա, մեմ՝ էնթուն:

- Սավդեն աթրին էլ կը կըպչի:

- Սատանի ձի է նստե (հեծե):

- Սատանի ճամփի ես ըռաստ էկե:

- Սատանի շապպալաղ է:

- Սատանի չարոխ է հաքե:

- Սատանի անգաճը խուլ:

- Սատանին չարոխը մի՛ մաշե:

- Սատանա-սատանա, պոչիդ տակը բանըմ կա, կեսը քեզի, կեսն ինձի (կորած իր որոնելիս են ասում):

- Սատկած էշ է գտե, նալերը կը քաշե:

- Սատկիս օրա, իտիկ գո՞ռըդ տի թընես:

- Սարեկի ձաք կըլմանի:

- Սար-սարի չի պատայի, մարթ մարթու կը պատայի:

- Սար ու ձոր, իրիցու փոր:

- Սև գառ անթես, իշու քուռակ չանթես:

- Սև չուխա, սպիտակ չուխա, ինչ օր ըսեն՝ վրեն հախ ա:

- Սևին սապոնն ի՛նչ էնե, խևին խրատն ի՛նչ էնե:

- Սևսիրտ մարթ է:

- Սերը սովորն է կերե, թաննա՝ մոլորը:

- Սիմ-սիմ Սիմավոն (ինչ անես՝ իրենն է պնդելու):

- Սիրտը էլած է:

- Սիրտը շիշա է, կոտրավ՝ կոտրավ:

- Սիրտը չաթալ է (անվախ ու քաջ է, նաև՝ մեծահոգի):

- Սոթոմ-գոռոմ են դառուցե:

- Սոլաղ ձեռով հաց չեն կտռե:

- Սոխ չես կերե, սիրտըդ ինչի՞ կը կսկըծե:

- Սոխով սիրտըս է, սխտորով աշկըս է:

- Սրտեն արուն կը կաթե:

- Սուտ խոսողի տունը վառավ, ըսին սուտ է:

- Սուրիկն էլավ թարաքը, կերավ գունդըմ կարաքը. մարը առավ ուրաքը, Սուրիկը մտավ մարաքը:

- Վախեցողին մոր աչքերը չոր կը մնան:

- Վախտըմ պզտիկ էինք, մեծերեն կը վախենայինք, հիմի մեծըցանք, պըզտըկներեն կը վախենանք:

- Վա՜յ, կարմիր գոգնոցավո՜ր, վա՜յ կարմիր գոգնոցավո՜ր:

- Վայ տեր, վա՜յ անտեր:

- Վանքի պես տուն է:

- Վանքի պես տուն ենք, փրկութեն չունենք (չունենոր ենք դառձել):

- Վասակ է:

- Վասակութեն մի՛ էնե:

- Վարքան, հավերըդ ջարքան, Թիվլիզու օրքան, շարվել են կերքան:

- Վե՞վ գիտե թե՝ վեվ կաշխատի, վեվ կուտե:

- Վե՞վ կըրնա ասե, թե աշկիդ վերևը օնք կա:

- Վեվ ուտե եղն ու ճմուռը, վեվ տա գլոխը դուրը:

- Վեվ օր իրեն չը հավնի, վերեն գլխուն քար կըյնի:

- Վեվ օր կըսե՝ կ . . . . խիար է, բուռըմ աղ կառնեն, վազզեն կը:

- Վեվ օր քեզի չարը կը կամենա, դու էնոր բարին կամեցի:

- Վերնատունը դարտակ է:

- Վեր թըքնեմ՝ բեխըս է, ցած թքնեմ՝ միրուքըս է:

- Վերտեղ հաց, էնտեղ կաց:

- Վե՞րտեղըդ կըտռես, օր չը ցավի:

- Վրայեն մարքու հոտ չի քա:

- Վրեդ մի՛ խոսեցնե:

- Վրես աշկ ունի, լուս չունի:

- Վրես էրկու թիզ կանանչ բուսնի, մտես չի՛ էլլե:

- Վրին-գլխուն աշե՜, իրեն աշե՜:

- Տալու վախտը՝ տուր, առնելու վախտը՝ առ:

- Տան տերտերին «Օրհնյա ի տեր» չեն ըսե:

- Տանտիկնոչ մե ձեռքը գող պիտի ըլլի:

- Տաշվանը սելով կը բռնե:

- Տասսը մաղե հաց է կերե, էնորեն հեռու կեցի:

- Տ . . . օռին գարի հացը մահանա;

- Տեռե ընկավ, տըռճիկե չընկավ:

- Տիրացուի արժան մարթ է:

- Տղեն լալով կը մեծընա:

- Տղեն հորը կը քաշե, ախչիկը՝ մորը:

- Տղեն ճիավոր է էկե (մանկիկը թարս է ծնվում):

- Տոտիկ-տոտիկ կը քալես, սիրտ վեր-վեր կը հանես:

- Տոտոն բարուճի սովոր չէ:

- Տվողն էլ է Աստված, առնողն էլ:

- Տունը Բարկենդանք է (ուրախության մեջ է):

- Տունը մեր, խոսքը մեր:

- Ցորեկվան պտտած տեղերըդ, գիշերն եմ պտտե:

- Ուզան բերանը կովին մասխուլեն շատ կը վաստըկե:

- Ուզողը մե էրեսըմ ունի, չտվողը՝ էրկու:

- Ո՞ւմ էի խեր էրե, օր ազատվա:

- Ում սելին նստի, էնոր խաղը կը կանչե:

- Ունիս կին բարի, ի՞նչ ունիս հարսնետուն.
Օր ունիս կին չար, ի՞նչ ունիս սքի տուն:

- Ունիս պլիկ-բաղա՜րջ, իմ աշկի լուսը դու ես,
Չունիս պլիկ-բաղարջ՝ իմ աշկի դնը դու ես:

- Ուռմի պես ինադ է:

- Ուսումնականին շապիքը կարճ կըլլի:

- Ուտել կա, ուրանալ չկա:

- Ուտողն ի՞նչ գիտե, բրթողը գիտե:

- Ուրուշի աշկը լուս չի տա:

- Ուրուշին գործին մեչ մի՛ ընկնի:

- Ուրուշին զիան միք էնե:

- Ուրուշին խելքին աշողը էտքան անճաղ կըլլի:

- Ուրուշին հըպիկին մի՛ զռա:

- Ուրուշին հացը մարթու փոր չի կըշտասնե:

- Ուրուշին մալին թամայ մի՛ք էնե:

- Ուրուշին քարոզ, քեզի լոլոզ մի՛ էնե:

- Ուրփաթ-շափաթ-կիրակի, ուռմին տղեն տրաքի:

- Փարա կա՞. ձեռքըդ կը պաքնեն:

- Փարա ունի՞ս, ամմեն ինչ ունիս:

- Փարեն ձեռքի աղտ է, քուքայա, կերքայա:

- Փարեն մարքուն չի վաստըկե, մարքը փարեն կը վաստըկե:

- Փափաղըդ ծեծե, ծեծե, թիր գլոխըդ. մեկ է, թե կընկանըդ ծեծե, ծեծե, առ ծոցըդ:

- Փափաղըդ ծրռե ու քընա:

- Փեսան էկավ տեղ չկա, թավեն թրին՝ եղ չկա:

- Փեսա-փեսա, թիթինի քեսա, ես քեզի բաղնիքը չըփլաղ տեսսա:

- Փոխինդ էնողին քիրք են հաքուցե, աղցողեն՝ ճառմա են առե:

- Փչան է:

- Քա՛, խո սատանա չե՛ս կըտռե:

- Ք. . . . մեչ հըլուն է գտե:

- Քալը քընաց տանձի, վախենամ գլոխը խանձի:

- Քալըդ բարի:

- Քաչալը դեղ ունենա, իրեն գլխուն կը քսե:

- Քառսուն օր միս չուտողն իրեն մսեն կուտե:

- Քար ես թապլե, թե՞ըդ է ցավե:

- Քար ըլլիր, չէր դիմանա:

- Քարը սըխմե, ձեթը կը հանե:

- Քացաղը իշքան սարթ ըլլի, իրեն բոշկեն կը տրաքի:

- Քեզի զայմաթ, ինձի խըզմաթ:

- Քեզի էստեղ չիտեն, օր էրթաս վարի գեղանը (Թիֆլիզ), ղազնոցը կենեն:

- Քեզի լացընողին քընա, քեզի խընդացնողին մի էրթա:

- Քեզնեն քարվան կըտռող դուս չի քա:

- Քեզի չընկած բանին մեչը մի խառնվի:

- Քեզի պիտի հավնի՞ն, թե՞ շորերուդ:

- Քելեխի քշող է:

- Քընա շենը, կը շինվիս, մի՛ էրթա ավերակը՝ կավըրվիս:

- Քըսի-փըսին օսմանին տունը կը քակե:

- Քթին ջուրը չի քաշվի:

- Քիթը սըխմես՝ հոքին կուտա:

- Քիթը բանցըր է, ասղեր կը համռե:

- Քիթը վեր է:

- Քիթը վեր կը տընկե:

- Քիչ բառցի, շուտ դառցի:

- Քիչ խոսե, լավ խոսե:

- Քիչ կը մնա, թե գլխուս նստի:

- Քոռ է, թե թոփալ, ինձի ղաբուլ է:

- Քոռը ճըպռոտին չի հավնի:

- Քոռի շատ պետքն է, թե մոմը թանգ է:

- Քոռը շըլին՝ մատըս աշկըդ:

- Քռչի միչի ղուղան եմ, ախչըկներուն բ. եմ:

- Քրթի պես ինադ է:

- Քունըս աշկերես կորել է:

- Քու տերն էլ պիտի ըսե, թե նախրին մեչ էշ ունիմ:

- Քուրն ըսել է՝ ախպեր ունիմ, ախպերն ըսել է՝ քուր չունիմ:

- Քու փորըդ ինչի՞ կը ցավի:

- Օխտը իշու մսուրք կըլլի:

- Օխտը հորե, մե մորե ես:

- Օխտը տարվա մեռելնուն խառնըվավ:

- Օնքը շինելուն տեղ աշկն էլ հանեց:

- Օռե խելառ է:

- Օռե խրտան է:

- Օռի կարկըտան է:

- Օսկեցե բախտ ունենաս, մարքըրիտե թախտ ունենաս:

- Օսկին պզտիկ է, գինը՝ թանգ:

- Օսկոռ կըռծող է:

- Օսկոռ փերողը օսկոռ էլ կը տանի:

- Օտքերը մանե կը (ծուռտիկ-ծուռտիկ է քայլում):

- Օրե մալեզ, օրե խըլեզ:

- Օրըս հասնիս, ինձի իմանաս:

- Օրթըղուց մալը կռունկն է կերե:

- Օրհնած Ասված:

- Օց է:

- Օցի խածած է:

- Օցի խեթած է:

- Օցը կերթա, ձաքնե հետը թող էրթա:

Երդումներ

- Աժնիկ չըլլիմ, օր տունըս հասնիմ:

- Ախպորըս արևը վկա:

- Աստըծուն քար ցըգեմ (թե օր սուտ ըսեմ):

- Աստված շահատ ըլլի:

- Արևիս խերը չը տեսնեմ, թե սուտ կըսեմ:

- Բարի լուսը շահատ ըլլի:

- Բերընսողս էրթում (թե սուտ կըսեմ):

- Դժոխքի փայ ըլլիմ:

- Ե՛ս, իմ Աստվածըս:

- Ե՛ս, իմ Քրիստոսըս:

- Էն անուշ մորըդ գերեզմանը կը սիրես:

- Էս հացի խերը վկա:

- Էրկինք-գետի՛նքը վկա:

- Թե զուր ու շառ կենեմ, դժոխքի փայ դառնամ:

- Թե սուտ կըսիմ, գետինը մտնիմ:

- Թե սուտ կըսեմ, ջուխտ տղիս խերը չտեսնիմ:

- Թե սուտ կըսեմ, տղես մեռնի:

- Ժա՛մեր (ժամը վկա):

- Լուսըս քոռանա (թե սուտ կըսեմ):

- Խա՛չ (խաչը վկա):

- Խա՛չը վկա:

- Է՛ն խաչը:

- Խավարի՛մ (կուրանամ, թե սուտ կըսեմ):

- Կանանչ մեռոնը վկա:

- Հացը աշվիս քոռասնե, թե խապար եմ:

- Հացի արժան չըլլիմ:

- Հորըդ գերեզմանը կը սիրես:

- Ճա՛շակ (հաղորդություն):

- Ճաշակի՛ խերը (վկա):

- Մայրիկ մայր Աստվածածի՛նը վկա:

- Մեր Սուրփ հավատքը վկա:

- Մե՛ռոն:

- Մեռո՛նը վկա:

- Նասիպ չըլլիմ գերեզմընի (թե օր սուտ ըսեմ):

- Նարե՛կը վկա:

- Պա՛տարաք:

- Պատարա՛քը վկա:

- Ջայիլ էմրըս վկա:

- Սուրփ Կարապետը վկա:

- Սուրփ մեռո՛նը վկա:

- Տաք հացի հրեշտա՛կը վկա:

- Տեղես վեր չկենամ (թե սուտ է):

- Տղիդ գերեզմա՛նը կըսիրես (ճիշտն ասա):

- Տղիս միսն ուտեմ, թե սուտ է:

- Տղոցըս վրա եմին կենեմ:

- Քրի՛ստոս: (Քրիստոսը թող հախ ու դատ էնե):

- Քրիստո՛սը վկա:

Orհնանմեր

- Ապրիս, զորանաս:

- Առաչըդ կանընչի:

- Աստըծու շնորքը վրայեդ չպակսե:

- Աստըծու օրհնութենը վրեդ ըլլի:

- Աստված ամմեն չար ու փորցանքեն ազատ պայե:

- Աստված ամոթալի չէնե:

- Աստված արևըդ շատըսնե:

- Աստծու աշկը միշտ վրեդ ըլլի:

- Աստված բանիդ, գործիդ աչողութեն տա:

- Աստված բարի վայելում տա:

- Աստված տա, չը խնայե:

- Աստված զավալ չը տա:

- Աստված էնոր հոքին լուսավորե:

- Աստված իմ հոքին առնե, քու գեշ օրը չտեսնիմ:

- Աստված իրեն դրախտի բաժին դառցընե:

- Աստված կարողութենըդ շատըսնե:

- Աստված ձեզի խելք տա:

- Աստծու ձեռքը վրեդ ըլլի:

- Աստված մեկիդ տասսը տա:

- Աստված մեկուճարըդ քաղարսըզ պայե:

- Աստված մեղքերը էրեսը չտա:

- Աստված նորեն տա, նորեն խընդասնե:

- Աստված շառ մարքուց հեռու պայե:

- Աստված ջանիդ սաղութեն տա:

- Աստված սըրտիդ գյորա տա:

- Աստված սուրփ պսակին արժանացնե:

- Աստված տղեքըդ քեզի բաշխե:

- Աստված տնեդ բան պակաս չէնե:

- Ասված քաղարսըզ պայե:

- Աստված քեզ ուժ ու կարողութեն տա:

- Աստված քեզի էրկան կյանք տա:

- Աստված քեզի շեն ու պայծառ պայե:

- Աստված քեզի շառ ու շալտաղե հեռու պայե:

- Աստված քեզի հետ ըլլի:

- Աստված հասնի:

- Աստված էրկան արև տա:

- Աստծու հացը ուտես:

- Աստըծու հետ հաղորդակցվիս:

- Աստված քեզի պահապան:

- Բարով էրթաս, բարով քաս:

- Բարով-խերով տղոցըդ ձեռքով հողը մտնիս:

- Բարով-խերով վայելես:

- Բարութենով հողը մտնիս:

- Դիշմընիդ աշկը քոռանա:

- Դու սաղ ըլլիս, էտոնք բիրատի կըլլին:

- Էրկան արև ըլլիս:

- Էրկան ձեռքերդ չը կարճընան:

- Էրկուշափքի էրթաս բազար, վաստակըդ ըլլի բյուր-հազար, Հեչ չը դիպչի չար ու նազար:

- Թագ ու պսակիդ արժանանաս:

- Թշնամիդ տրաքի:

- Թոռիդ թոռը տեսնիս:

- Ինչ բարին կամենաս, Աստված կատարե:

- Լավ օրով ապրիս:

- Լրսի փայ ըլլիս:

- Ծըլի՜ս, ծաղկիս:

- Կընկա դուռի շառեն հեռու մնաս:

- Հալալ հաց ուտես:

- Հեչ գեշ օր չը տեսնիս:

- Հեչ նեղ օր չը տեսնիս:

- Հող բռնես, օսկի դառնա:

- Հորով-մորով մեծընաս:

- Ձեռքերըդ կանընչին:

- Մայր Աստվածածնա օրհնանքը առնես:

- Մե բարցի ծերանաք:

- Մեկ ցանես, հազար քաղես:

- Մուրադիդ հասնիս:

- Շատ ապրիս, լավ ապրիս:

- Շընավոր ըլլի:

- Ոտքըդ քարին չառնե:

- Ջրի պես էրկան արև ըլլիս:

- Սիմավոն ծերունի ըլլիս:

- Սուրբ Սարքիսը քեզի օգնական-պահապան ըլլի:

- Տղոցըդ վրեն խնդաս:

- Տղոցմովըդ խնդաս:

- Ուղուրով հարս ըլլիս, ոտքըդ լիքը բարի ըլլի:

- Ումուդըդ Աստըծմեն չըկտրես:

- Ուրախութենով Զատիկ ըլլի:

- Քալած ճամփուդ մեռնիմ:

- Քիչ դատիս, շատ ուտես:

- Քու թըշնամիդ մեռնի:

- Օղորմի հորըդ անուշ հոքուն:

- Օջաղըդ շեն ըլլի:

- Օրըդ ուրախութենով անցնի:

Անեծքներ

- Ազիզըդ մեռնի:

- Ազիզըդ առնես առաչըդ, մալամիշ ըլլիս:

- Ալըդ ու եշիլըդ ծալը մնան:

- Անունդ մնա:

- Ամմայ (կույր) նստիս:

- Անեծքըդ բեյնեդ էլլե, ծոցըդ թափի:

- Անոթի շան պես մնաս:

- Աշխըրքի էրեսին լավ օր չըտեսնիս:

- Աշկըդ էրկինքը մաշի, կուռըդ՝ գետինը:

- Աշկիդ լուսը քաղվի:

- Աստված ամանաթըդ առնե:

- Աստված քեզի քոր տա, էղունգ չըտա:

- Աստված քեզի դժոխքի բաժին դառցնե:

- Աստծու դատաստընին ըռաստ քաս:

- Աստըծու կրակն ու բոցը վրեդ թափի:

- Աստծու փոփոլական կրակը գլխուդ թափի:

- Արևիդ խերը չըտեսնիս:

- Արևըդ մեռնի:

- Արևին քոռ աշելով մեռնիս:

- Արժանի չըլլիս, օր պսակվիս:

- Արտը ցանեմ, թումբը բուսնիս:

- Բարկընաս, ասղին ծակեն ասնիս:

- Բարցերուն տակը ուտեն:

- Բեմուրադ ըլլիս:

- Բեյնեդ արուն քա:

- Բերա՜նըդ ծըռի:

- Բերանըդ էտտիդ դառնա:

- Բերանըդ պապանձվի:

- Բկեդ քա:

- Բուկըդ շիշըմ բանի:

- Գարդանըդ (վիզ) խուրդ ըլլի:

- Գետինը մտնիս:

- Գետնին օխտը դաթը անսնիս:

- Գլո՜խըդ թաղեմ:

- Գոռ ու ջալլամն էրթաս:

- Գրո՜ղը էրեսիդ (էրեսըդ):

- Գրողի՜ տարած:

- Գրողըմ բուկըդ բանի:

- Գրողե չելլես:

- Գրողի ու մայի բաժին դառնաս:

- Դառը դատիս, դարտակ նստիս:

- Դառցըվորի՜ս:

- Դեղին ջրե՜ըդ վազզեն:

- Դըժոխքի փայ ըլլիս:

- Դուռըդ սև քարով շարվի:

- Դև ու հարամու ըռաստ քաս:

- Դուռըս քալողը էրկաթ կըտռի, էրթիք քալողը՝ քար կըտռի:

- Դըռնեդուռ ընկնիս:

- Զահրումա՜յ:

- Զահըր ու զըխկըլթի ուտես:

- Զուխկում քեզի:

- Զուլումի ըռաստ քաս:

- Զուլումե չը պրծնիս:

- Զուգսըդ ու տեսակըդ հողին տակն անցնի:

- Էլիմի ըռաստ քաս:

- Էղած օրըդ սև ըլլիր:

- Էման մե ղըզիմ ըռաստ քաս, օր օցը պորտով, հավքը թևով սեյրիդ կայնին:

- Էման կրակն ընկնիս, օր չըպրծնիս:

- Էնոր միսը կայնի, կայնած թափի, նստի՝ նստած թափի:

- Էտ էլ քեզի, Աստծու կրակն էլ քեզի:

- Էտ ցավեն չըպրծնիս:

- Էրեսըդ էտտիդ դառնա:

- Էրեսըդ սև ըլլի:

- Էրեխեքիդ խերը չըտեսնիս:

- Էրթալըդ ըլլի, քալըդ չըլլի:

- Էրեկդ ու էսօրըդ չիմանաս:

- Էրկընքեն պատիժըդ գտնիս:

- Ընկնավորի՜ս:

- Թագըդ ու պսակըդ կիսատ մնա:

- Թընդիրն ընկնիս, վառվիս:

- Թշնամիներիդ էյթըճին մնաս:

- Ինձեն պրծընիս, դարդեդ չըպրծնիս:

- Ինչըղ օր ինձի կենես, դուսե էտ օրին ընկնիս:

- Լաչակըս գլոխըդ ըլլի (ինձ նման սգո լաչակ կրես):

- Լալըլմիշով օրըդ անցընես:

- Լավ օրի էրես չըտեսնիս:

- Լարըդ լարեմ, պատանքըդ կարեմ:

- Լիզուդ ծործըկեդ էլլե:

- Խոխուրթըդ փորըդ մնա:

- Ծակծըկիս, ծակ-ծակ շապիք հաքնիս (զրահաշապիկով պատիժ կրես):

- Ծընած օրըդ սև ըլլիր:

- Ծովը էրթաս, ծառավ ետ դառնաս:

- Ծուխըդ մարի:

- Կայծըկի ըռաստ քաս:

- Կատղիս, սարերն ընկնիս:

- Կերածըդ փորըդ մնա:

- Կերած կաթըդ քթեդ քա:

- Կըտոր-բրթուճ ըլլիս:

- Կրակ ուտես, արուն փսխես:

- Հացը՝ յայան, դու՝ ձիավոր՝ չըհասնիս:

- Հեչ ուրախութուն չըտեսնիս:

- Հեչ մե լավ օրըմ չըտեսնիս:

- Հինադ քամին տանի:

- Ձեռվիդ հինած մնա:

- Ձեռքըդ կուշտ փորիդ չըդնես:

- Ձեռքըդ օ. . . չհասնի:

- Ճանճ ըլլիս, պատը կպչիս:

- Ճաշակին (հաղորդությանը) արժան չըլլիս:

- Մազերըդ էնքան էրեսիդ վըրեն ցախ-ցախ ըլլին, օր բառբառի էրես չըտեսնիս:

- Մեկըդ էրկուս չըլլի:

- Մեյմո՛ւն:

- Մեշկըդ կոտռի՞:

- Մուրադըդ աշկըդ մնա:

- Յող դաֆտարը գրվիս:

- Յուրդ ու յուրեդ քամին տանի:

- Շալե շապիք հաքնիս, կեմե գոտի կապես:

- Շան ղանճըդ:

- Շատ ապրիս, վատ ապրիս:

- Շատ ապրիս, շատ դարդ քաշես:

- Շատ դատիս, քիչ ուտես, քչիցա զուրկ մնաս:

- Շան օրի մնաս:

- Շան կըռըջիկ լվասվիս:

- Շուն հաչե վրադ:

- Շընեռոց-գելեռոց ըլլիս:

- Ոտքըդ կոտռի:

- Ոտքըդ քարին առնե:

- Չմեռնի՞ս, մե՞ռ մնաս:

- Չվայլե՛ս:

- Չխընդաս, օր ու արև չընտեսնիս:

- Պատանքըդ կարեմ:

- Պատանք չունենաս:

- Պատանքի չարժանանաս:

- Ջաղասկըդ թարս դառնա:

- Ջուխտ ախպորըդ մե օրըմ թաղես:

- Սապախտան էլլեինք, սև գուբիդ տեսնեինք:

- Սատանի դաս դասվիս:

- Սևը առնես, սուքը նստիս:

- Սև գիլլի ըռաստ քաս:

- Սև դիշիմ ըռաստ քայիր:

- Սև գիրըդ քա:

- Սև ղադայիմ ըռաստ քաս:

- Սև օրվա ըռաստ քաս:

- Սև ըլլիս:

- Սուտ ըսողը գոռբագոռ ըլլի:

- Սուտ ըսողը հեչ լավ օր չընտեսնի:

- Սուֆաքըդ մեռնի:

- Վարող վաստըկողըդ սև ըլլիր:

- Վրեդ արեքակ չընդիպնի:

- Տանըդ տեղը գարի ցանեմ:

- Տառոսիս տառոսվիս:

- Տըղոցըդ խերը չընտեսնիս:

- Ցավը Աստըզմեն գընտնի:

- Ո՞ւ, ո՞ւ, շապալակ, շապարա՞կ:

- Փորրդ սով մրտնի:

- Փորրդ չրկրշտանա:

- Քանի վազզես, փորրդ անոթի մնա:

- Քրթեն ու բրնչեն քա:

- Քոքրդ վար անսնի:

- Քոքրդ Աստված կրտռե:

- Քոքահան ըլլին տնով-տեղով:

- Օխտը դուռ մուրաս:

- Օխտը ղրզի ըռաստ քաս:

- Օխտը կրնիկ անսնիս, օխտենե չրխերվիս:

- Օխտը մուրազ ունենաս, օխտնե փորրդ մնա:

- Օխտը սարին էտտին մեռնիս:

- Օջաղրդ մարի:

- Օջաղրդ ելումուտ չունենա:

- Օջախիդ դուռը սև քարով շարվի:

- Օջախիդ ճամփան մոռանան:

- Օջղիդ ծուխը կրտռի:

- Օջաղրդ օրորոց չունենա:

- Օտով-գլխով կորցրվիս:

- Օր ու արև չրտեսնիս:

- Օրրդ ու արևդ լալով անցրնես:

- Օր ու արևրդ սևով ըլլի:

- Օրիդ կեսը լալով անցրսնես:

- Օրրդ ախուվախով անսնի:

- Օրրդ սև տարի դառնա:

- Օրրդ սև լուրով ըսկսվի:

- Օրրդ գլխուդ սննա, ձեռքեդ բռնող չունենաս:

- Օրերուդ համրանքը կորցրսնես:

- Օրեօր վատանաս:

- Օրրդ սուք ու շիվանի տարի դառնա:

- Օրվանդ միակ հույսը սև մահդ ըլլի:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1

Թուրքերեն վիճակի երգերը Փոքր Խանչալլի գյուղում:

(Երկու խոսք)

Մինչև 1830 թվականի արտագաղթը Կարնո հայ ժողովրդի զգալի մասը թուրքերեն էր խոսում: Նա իր երգերի մեծ մասը թուրքերեն էր հորինում: Թուրքերեն էին հորինում բոլոր հայ աշուղները, որովհետև տիրող իրավակարգը հայերենը չէր հանդուրժում:

Գաղթից հետո երկար տարիներ Ջավախքի կարնոհայերը շարունակում էին երգել թուրքերեն, մինչև որ, տեղական ավանդների ազդեցությամբ, աստիճանաբար վերականգնվեց բնաշխարհիկ հայ երգը: Այնուամենայնիվ, մինչև 1930-ական թվականները որոշ գյուղերում թուրքերեն ժողովրդական երգերը երգվում էին հայերեն երգերին զուգընթաց: Իսկ աշուղական գրականության մեջ հեղաշրջում մտցվեց շնորհիվ աշուղ Ջիվանու խիզախության, ով էլ արժանապատվորեն սրբագրեց պատմությամբ պարտադրված թրքապատկեր ողբերգությունը:

Թուրքերեն վիճակի երգերը, սակայն, ունեին սեզոնային բնույթ: Կաթնապրի ծեսերից հետո դրանք լռում էին, որովհետև բոլոր պարերգերը հայերեն էին:

Կաթնապրի թուրքերեն երգերը պետք է համարել բուն հայկական, որովհետև դրանք ելնում են Համբարձման ծիսակատարությունից և ծառայում են նրան: Իսկ դա նշանակում է, որ թուրքերեն լեզվով ստեղծված երգերը թրքախոս հայոց ստեղծագործություններ են և մահմեդականության հետ առնչություն չունեն: Երգերի մի զգալի մասի մեջ բուն ազգայինը երևում է թե՛ հարկադրաբար օգտագործված հայերեն բառերից, և թե՛ բովանդակությունից: Որպես ստույգ փաստեր կներկայացնենք այդ երգերից մի քանիսի վկայությունները՝ մեր բացատրություններով հանդերձ:

Հայտնի է, որ Կարնո նահանգի հայոց մեջ մինչև վերջերս նշանված տղային իրավունք էր վերապահվում այցելել իր նշանածին և գիշերել նրա հետ: Այդ սովորությունն անքող ձևով արտահայտված է թիվ 28 քառատողում, ուր ասված է, թե աղջկա ծոցումն է փեսացուն, հետևապես «Խապար էրեք խորոզա», որ այս գիշեր նա չկանչի, որ ուշ լուսանա: Միևնույն միտքն առկա է նաև թիվ 29 քառատողում:

Պանդխտությունը Թուրքիայում հայոց ազգային դառն ճակատագրի դրսևորումներից էր: Կյանքը հեռուներում մաշող երիտասարդների սիրած ու վշտախորով աղջիկները կամ նորատի կանայք լուռ ծերանում էին՝ սպասելով ու պանդխտության երգեր հորինելով: Թիվ 3 քառատողում աչքը ջուր կըտրած հերոսուհին ուշանալու համար մեղադրում է պանդուխտ իր սիրեցյալին:

Որոշ քառատողերում հիշատակված են Երևան քաղաքը և հարակիցները: Այսպես, թիվ 5 քառատողում խոսք կա Երևանի, նրա բերդի, ինչպես նաև քառատողի հերոսուհու սիրեցյալի՝ բերդում գտնվելու, նաև՝ քաղաքի երեք եկեղեցիների անունով երդվելու մասին հիշատակում-հաղորդումը: Թիվ 118 քառատողն սկսվում է «Երևանըն աղ տուզի», իսկ թիվ 119-ը՝ «Երևան մառմառ տաշի» սկզբնատողերով, որոնք բուն հայկական կյանքից են բխում:

Թիվ 25 քառատողում հերոսուհին «ալամ ուռուս իչընդա» անանուն տղային հատուկ սիրով սիրելու մասին է խոսում: Ակնարկը, ինչպես երևում է, հայ բանակայինին է վերաբերում:

Կիսով չափ հայերեն է հորինված թիվ 27 քառատողի «Բոստանըմ բազուկի յամ, իգիթըն նազիկի յամ» երկտողը:

Հետևյալ երկտողում (թիվ 77) ասված է.

Օթուրմիշ յազի յազար

Քրիստոսն էշխընա:

Հայերեն «շատ» բառը օգտագործված է թիվ 57, իսկ «արտ» բառը՝ թիվ 124 քառատողերում:

Այս տվյալները հաստատում են, որ հայերեն բառեր չունեցող բազում երգեր նույնպես ստեղծված են հայերի կողմից: Անշուշտ, մեր պնդումը բնավ չի նշանակում, որ մեր կողմից գրի առնված երգերի մեջ չեն կարող չլինել բուն թուրքական երգեր նույնպես, որոնք փոխառված թուրքական ժողովրդական ստեղծագործություններ են: Այդպիսիներից են հատկապես այն սիրո երգերը, որոնք Համբարձման հետ անմիջական առնչություն չունեն:

Այս իրողությունները մեզ հայտնի էին, ուստի 1940 թվականի ամռանը, երբ արձակուրդը անցկացնում էի հայրենի գյուղում, ազգագրական և բանահյուսական այլևայլ նյութերի հետ գրի առա նաև թուրքերեն մանիներ, որոնք հիշում էին ավագ սերնդի կանայք: Այդ երգերը հայերեն վիճակի երգերին հավասար արտասանվում էին Կաթնապրի ծաղկահավաքի, ծաղկեփնջերը ընտանիքներին բաժանելու և վիճակահանության ժամանակ:

Գրի առնվածը, դժբախտաբար, եղածի աննշան մասն է միայն. ընդամենը 135 քառատող-մանիներ[368]:

368 Թուրքերեն մանիների թեմատիկ-բովանդակային ուղղվածության գոնե մոտավոր շրջանակը ընթերցողին հրամցնելու իմ ցանկությանը սիրահոժար արձագանքեց և շուրջ մեկուկես տասնյակ քառատող հայերեն տողացիների վերածեց բանիբուն բանասեր, թուրքագետ Արամ Թումասյանը, ում էլ հայտնում ենք անկեղծ մեր շնորհակալությունը: Տողացիները ներկայացվում են բնագրերին զուգահեռ: (Կազմող՝ Ռաֆայել Ղարիբյան):

Յոլտըմըզ տիշտի իրաղա,
Ջանդա յանամազ բու ֆիրաղա.
Ջանըմ՝ ղարտաշ ղա՛խ այաղա,
Տոլտուր վերվիալա վախտի:

Սապախ սահարընդա բան գազար իքան
Ալըմա բիր ալմա տալ ըռաստ գալտի.
Տետըմ ալմա տալի, ջան ըռաստ գալտի,
Գյոնիլ իստատիկիմ յար ըռաստ գալտի:

Ըստամբոլ յոլ օլտի բա՛լ,
Գեզլարըմ սել օլտի, գալ.
Կիտըն միխաննաթ յարըմ,
Կիտըն թամամ օլտի, գա՛լ:

Էրևան ասի յարըմ,
Բաղդատ խուրմասի յարըմ,
Շամի շամախե յարըմ,
Թավրիզ աղասի յարըմ:

Էրիվան էրքի յարըմ,
Ուստինդա քուրքի յարըմ.
Ուչ քիլիսա հախ իչուն,
Ուստունդա քուրքի յարըմ:

Ալար ախչին չին-չինի,
Էփեմ աղզըն իզըներ.
Ներալարդա՞ գազերսան,
Գենգըմըն գոգառչինի:

Ալար ախչին թեքմիշ ամ,
Ղոյնումդա ղուռութմիշ ամ.
Բու նա՞սըլ սավդա իտի,
Նամազըմ ունութմիշ ամ:

Սիա փուշում սարարամ,
Իթըրմիշամ արարամ.
Այվանըմ յոլ իստատըր,
Իթըրմիշամ արարամ:

Սիա փուշում սանդա տըր,
Բիր ուճիտա բանտա տըր.
Ջանլատտան յուրի չխսա,
Գենա մելըմ սանդա տըր:

Մեր ճանապարհը հեռուն ընկավ,
Հոգին չի դիմանա այս կարոտին.
Հոգիս, եղբայրս, ուրքի ել,
Լցրու, տո՛ւր, հարբելու ժամն է:

Երբ շրջում էի արշալույսին,
Խնձորի մի ճյուղ դիպավ ձեռքիս.
Հոգի հանդիպեց քեզ, ասի ճյուղին,
Սրտի ցանկալի յար հանդիպեց:

Ստամբուլի ճանապարհը կիավեց,
Աչքերս հեղեղից լիճ դարձան.
Գնացիր, ցավ տվող սիրելի,
Տարիդ լրացել է, արի՛:

Էրիվանի դնգոզ յարըս,
Բաղդատի արմավիկ յարըս,
Դամասկի շամախե յարըս,
Թավրիզի աղայիկ յարըս:

Էրիվանի առնական յարըս,
Քուրքը հագուկապ յարըս.
Ասրըծո երեք եկեղեցուն համար,
Քուրքը հագուկապ յարըս:

Փայլուն դրամը զրնգուն է,
Կարոտ եմ բերանիդ համբույրին.
Ո՞ր տեղերում ես ման գալի,
Հոգուս աղավնյակ թռչուն:

Զրնգուն դրամներս նետել եմ,
Գիրկըս չոր է ու դատարկ.
Էս ինչ տեսակ սեր էր,
Աղոթելս մոռացել եմ:

Սև քոլոզս փաթաթել եմ,
Կորցրածս ման եմ գալի.
Իջևանա ճամփու վրա,
Կորցրածս ման եմ գալի:

Սև քոլոզս քո մուր է,
Ծայրի մեկը ինչ մուր է.
Դրախտից հուրի էլ ելնի,
Ուշք ու միտքս քո մուր է:

Ղարանֆիլ ամ տատըմ յոխ,
Ղոչա գերան յարըմ յոխ.
Յար մալատա տոլաներ,
Ջահիլ ամ, խապարըմ յոխ:

Ղըզըլ ալամ օլասըն,
Դիլիմ-դիլիմ դիլասան.
Բիլսա իտըմ յար գետա՞ իտի,
Արասընա կիրասան:

Քուփուչընդա իզըմ վար,
Քիչիկընդա գեզըմ վար.
Բան գուզալ, յարըմ գուզալ,
Ույդուրմիշամ գյաղըմի:

Բաղան ղուբունըն խասի,
Սիլտըմ իրակըմ փասի.
Էլլար նա տիար տեսըն,
Ալտըմ իգիթըն խասի:

Բաղան զուբում բիշտիկիմ,
Թաֆտի ճիչան դիշտիկիմ.
Յուզ բին իգիթ իչընդա,
Ալիմինան շեշտիկիմ:

Մենակ եմ, հույր չունեմ,
Խոյանման յար չունեմ.
Յարըս շուրջս էր պտտվում,
Անփորձ, անտեղյակ եմ:

Առել եմ խնձորը կարմիր,
Շերտատել՝ շերտ-շերտ.
Յարիս գնալն իմանայի՞,
Շերտերի արանքը կմտնեի:

Քույրերի հետքով եմ գնում,
Փոքրի վրա աչք ունեմ.
Ես սիրուն, յարըս սիրուն,
Հարմարվել եմ, կատարվի:

Ընտրել եմ նիհար լավը,
Սրբել եմ սրտիս ժանգը.
Ինչ կուզեն, թող ասեն,
Ընտրել եմ քաջերից լավը:

Մարմնիդ համար ցնածս,
Թաֆտա կտորով կարածս.
Անթիվ քաջերի միջից,
Իմ սրտով ընտրածն ես:

***

Ղըզըլ ալմա բու ալմա,
Սույա սալմա բու ալմա.
Հախվերանի սավերսան,
Յարա՛ գեթսըն բու ալմա:

Ղատիֆա յաստըղ իզի,
Բիզ նա՞ թաներտըխ սիզի.
Բիզ սավտա բիլմազ իտըխ,
Սավտիա ալտըն բիզի:

Ինճաճիկ սուտան օլտում,
Հար դարտըն յուդան օլտում.
Գինիզմ խայալըմ խայալ,
Գեճա ույխուտան օլտում:

Ըստամբոլ թանըմ բաղըմ,
Խոշ գերտըմ աղա յարըմ.
Ալթընինան բարաբար,
Շաքարինան դաթլի յարըմ:

Ղըռ աթ ղաշխա սավտիկըմ,
Սանի էշխա սավտիկըմ.
Ալամ ուռուս իզընդա
Սանի բաշխա սավտիկըմ:

Ղըռաթ իչընտա գազար,
Հալի ղըչընդա գազար.
Ղուրբան օլեմ բու քևա,
Յարըմ իչինդա գազար:

Բոստանըմ բազուկի յամ,
Իգիթըն նազիկի յամ.
Բոստանտա յաշըլ խիար,
Բոյըմ բոյընտա սիար:

Չիբուխ ատտըմ, գեթ գաթար,
Յարընան բեր ումուդ գաթըր.
Ալքա յարըմ գալմասըն,
Քանքիլանըն թութ գաթըր:

Ղալատան ենդըմ ենիշ,
Մայրըմամ դոլի եմիշ.
Յոլլատըմ յար եմամիշ,
«Գանդի գալսըն» տեմիշ:

Ղարանֆիլամ թիթարամ,
Տաշ ալթընդա բիթարամ.
Անամտամ էքսիկ դալտըմ
Բոյնում ակրիթութարամ:

Ղարանֆիլամ բիր սինի,
Քիչիկտան սավտըմ սանի.
Փատիշայ յարըմ օլսա,
(Գենա) ունութմամ սանի:

Մանի-մանի ման թութար,
Չայ քանարի չիմ թութար.
Յարըմ աթլամմիշ գետար,
Իզանգըսը քի՞մ թութար:

Քաբաբչիամ շիշըմ յոխ,
Ղոջալմիշամ դիշըմ յոխ.
Բու դունյադա քեֆ չաքախ,
Օ դունյադա իշըմ յոխ:

Տաղլար տաղլատի բանի,
Գերան աղլատի բանի.
Բան ֆալագա նեյնատըմ,
Չափռաստ բաղլատի բանի:

Բու տաղլար օլմասահտի,
Չիչակլար սոլմասահտի.
Բիր այրըլըղ, բիր էլիմ,
Իքիսի օլմասահտի:

Ալար ախչին չին չինի,
Օփեմ աղզըն իչընի.
Նե՞բալարդա գազարսան,
Գոյնըմըն գոգառչինի:

Ալար ախչի ումմիշամ,
Ղոյնումդա ղուռութմիշամ.
Ղարըն սավդասընանան,
Նամազըմ ունութմիշամ:

Դագիրման իստինտայամ,
Դալ բոյնուն դաստընսայամ.
Ղնա՛յմայըն ղոմշուլար,
Բան մուրադ իստինդայամ:

Մանի յամ խոշըմ գալդի,
Աղլամա, յաշըմ գալդի.
Զխեմ ղափըտա բախեմ,
Գերեմ ղարտաշըմ գալդի:

Ղարտաշ աթըն յոխմիտի,
Բինիփ գալմախ չո՞խմիտի.
Ետտի իլըն հարսաթի,
Սանդա իման յո՞խմիտի:

Դալտան յուռքուտտում ղուռտի,
Աթըմ թառլատտի, դուտտի.
Չըխտըմ յար գյորմատըմ,
Յըխըլսըն բելա յուրտի:

Կուզղըկի ատտըմ բայիրա,
Շոլվա վերտի չայիրա.
Էշիտան ամին էտըսն,
Իշըմ դուշտի խեյրա:

Մանի յամ մաթլի յարըմ,
Փուլուսի ղաթլի յարըմ.
Այանդա ղարտաշըմ սան,
Գեչլինճա ղաթլի յարըմ:

Փունղարըմ բաշի բանի,
Դիպըն էյ տաշի բանի.
Գունուզ գազան յոսմա յար,
Գեճալար յոլդաշի բանի:

Արզիրիմտա բիր ղուշ վար,
Ղանատլարա պիպիլ վար.
Յարըմ գետտի, գալմատի,
Հալբաթ օնտա բիր իշ վար:

Արզիրիմտա ղա՛խ տա գալ,
Սուլարինան ա՛խ տա գալ,
Ման բուրտա ահ, էտանդա,
Սան ալլայդա ղո՛ռխ տա, գալ:

Տալդա գազարսան, օղլան,
Բոյըն սուզարսըն, օղլան.
Ֆաս նա՞ տըր, փուսկուլ նա՞ տըր,
Զաթի գոզալսան, օղլան:

Գոգդա ելտըզ մայ գեդար,
Կայ ագլաներ, կայ գեթար.
Գոգդա ելտըզ սայըլմազ,
Չիկ յումուրթա սոյուլմազ:
Բիր ջան բիր ջանա սավասա,
Օնա չարա բալումմազ:

Դագիրման բոլ դոլաներ,
Սուր սարխոշ դոլաներ.
Աղամ բիր փուշի ալմիշ,
Բելըմա բեշ դոլաներ:

Սողան ախտըմ ալագ-ալագ,
Դատանդի դարա լագլագ.
Տերըմ քիմուրտա ալեմ,
Ղոյմատի դայֆա ֆալագ:

Սողանըն զարի նեյնիմ,
Բաշընդա չարի նեյնիմ.
Գին գալդի բու վախտ օլտի,
Ման էլա յարի նե՞յնիմ:

Աֆ սիփիրեր թոզ էտեր,
Ղըզ օղլանա գոզ էտեր.
Օղլանըն նա՞ սուչի վար,
Սեզըն դայփա դըզ էտեր:

Մանի տետըմ հեչ տետըմ,
Գալ դափըտա քեչ տետըմ.
Օ սավտա, սավտա տագիլ,
Օ սավտադան քե՛չ տետըմ:

Մանի յամ, մանըճի յամ,
Լապլարա գամըճի յամ.
Դունյայի սել ափարա,
Ման յարա գամըճի յամ:

Թաս իչընդա յումուրթա,
Անա բանի ունութմա.
Ունութերսան սան բիլերսան,
Գեզըն յաշի դուռութմա:

Ղարա չուխան գեյմիշսան,
Դուվարա յան վերմիշսան.
Հար սաթլիկըմ բան չաքտըմ,
Ման նիա՞ սաթըլմիշսան:

Թաս իչընդա ինճի յամ,
Ման անամըմ գանջի յամ.
Խապար էտըն նանամա,
Ման բուրտա զարընճի յամ:

Մանի դեմիա գալտըմ,
Ղայմաղ էմիա գալտըմ.
Մարամըմ դայմաղ դագիլ,
Յարի գերմիա գալտըմ:

Աշշըղ տիեր քի յուզ օլա,
Տարա զիլֆրն դուզ օլա.
Տոխսան տոխխուզ յարամ վար,
Բիրտա սան վար, յո՛ւզ օլա:

Ղարա տըր դաշրն, օրդագ,
Եղիլ տըր բաշրն, օրդագ.
Չիֆտ իտրն, թաք դալտրն,
Հա՞նի յոլտաշրն, օրդագ:

Ղարա չուխան դայթանի,
Չըխ յար յոլդան ութանի.
Էլա բիր յար սավմիշամ,
Ալամլարրն սուլթանի:

Բախչա աքտըմ, բար գալտի,
Հայվա աքտըմ, նար գալտի.
Ղափիի քոլգա բաստի,
Էլա բիլդրմ, յար գալտի:

Բու տաղտա մարալ ազ տըր,
Ալճի չոխ, մարալ ազ տըր.
Աղլամա քոմի՛ր գեզլամ,
Էլմարամ յարամ աղ տըր:

Բու տաղ մարալա ղալտի,
Չիչակ սարալա ղալտի.
Սովուխ բուլաղ գյոգ յայլաղ,
Օտա մարալա ղալտի:

Ղալատան ընդրմ դուզա,
Սու բաղլատըմ նարգիզա.
Ետտի իլ խըզմաթ էտտըմ,
Բիր ալագյոզլի ղըզա:

Սու գալեր բանդի բուլուր,
Տոլաներ գանդի բուլուր.
Բիր ղուլ քի ալտա տուրմազ,
Ղո՛յ վերըն գանդի բուլուր:

Բու տաղըն արտի մեշա,
Գուն աշա քոլգա դոշա.
Բանըմ յարըմ գուլ իսա,
Սանըն քի մոռ մանամշա:

Բու տաղըն արտընդա յամ,
Ալ օսման յուրտընդա յամ,
Բան բուրդա, յարըմ օրդա,
Ղավուշմաղ դարտընդա յամ:

Սու գալար, ախար գետար,
Դարալար ախար գետար.
Դունյա բիր փանջարա տըր,
Հար գալան պախար գետար:

Էրևան ասի յարըմ,
Բաղդատ խուրմասի յարըմ.
Շախի շանգի Շամախի,
Թավրիզ աղասի յարըմ:

Բախչանըն խչընա ղըզըլ գիլ օլուր,
Ման սանի սավմիշամ, ետտի իլ օրուր.
Դիվանա գետարամ, սեզըմ բիր օլուր,
Սոյլա ալագոզլի, քիմը՞ն յարի սան:

Բախչալարտա փաթարաղ,
Գալիզ քիմի օթուրաղ.
Ալ բանի, ալեմ սանի,
Էլ դիլընան ղուրթուլաղ:

Բախչալարտա ղուլ բուռնի,
Դիպի դոլի էշխընի.
Բան յարըմի սավմիշամ,
Յալըն այաղ ղըշ գյունի:

Երևանըն աղ տուզի,
Ղայնաշըր ղոյին, ղուզի.
Բան յարըմա ջան տետըմ,
Հար սուրիտան բիր ղուզի:

Երևան մամառ տաշի,
Յարըմ տըր քարվանբաշի.
Յուտտուրտուն յոլա վուրտուն,
Համ յարի, համ յոլտաշի:

Աշշըղ տըր ավըմ սաննան,
Չախմախըմ, ղավըմ սաննան.
Էլսըն մասարա կիրսըն,
Քասլամազ դավամ սաննան:

Ինճաճիկ սուտան օլտում,
Հար դարտըն յուդան օլտում.
Գինիզ խայալըմ, խայալ,
Գեճա ույխուտան օլտում:

Ալմամ դալտա բեշ-բեշ օլուր,
Երա դուշար օնբեշ օլուր,
Մանի սավան սարխոշ օլուր:
Ալմամ դալտա ալ-ալ օլուր,
Երա դիշար բալ-բալ օլուր,
Սանի սավան աբդալ օլուր:

Արաբա բիզըմ օլա իտի,
Թաքառի ղըզըլ օլա իտի.
Կիրարտըմ յար ղոյնունա,
Գեճալար ուզուն օլա իտի:

Բախչանըն իչընդա
Թոփուղլի խըզմա,
Ման սանա դիերամ
Սան բանա գյոզլա:

Ինճաճիկ սուտան օլտում,
Հար դարտըն յուտան օլտում.
Գունուզ խայալըմ խայալ,
Գեճա ույխուտան օլտում:

Ալ չուխա, ֆարա չուխա,
Յարաշեր յարա չուխա.
Քիմ քի յարա չոռ դիա,
Դիլընա յարա չըխա:

Բեգին եմիշ եմիշամ,
Յարա բիլ սեզտեմիշամ.
Աղզըմ դիլըմ ղուռուլսուն,
Աճի դիլնան տեմիշամ:

Թուք աղաճի թուքինճա,
Թուք եմատըմ դոյունճա.
Աղղըմ դիլըմ ղուռուլսուն,
Յար սավմատըմ դոյունճա:

Թաս իչընդա ինճի յամ,
Բան անամըն գյանջի յամ.
Խապար էտըն նանամա,
Բան բուրտա յարընճի յամ:

Ղարանֆիլ օյտի բանի,
Հարամի սոյտի բանի.
Սոյտի բեճարամատի,
Յարալի ղոյտի բանի:

Յուք ուստունդա փիրուզա,
Խապար էրեք խորոզա.
Բու գեճա սաս վերմասըն,
Յար գալտի բիզա:

Յուքուն յուքսի թապախ տըր,
Աննըն ղաշխա ղապախ տըր.
Խորո՛զ, դիլըն ղուռուլսուն,
Նե՞չըն տետըն սապախ տըր:

Խալիի վուրտում յուքա,
Ետտի ղաթ բիքա-բիքա.
Բան յարտան քեչմերամ,
Էթսալար թիքա-թիքա:

Սապախ աչըլտա յարըմ,
Աթի ղամչըտա յարըմ.
Բիր բարմաղ քաղըզ յոլլա,
Գենգըմ աչըլա յարըմ:

Գեգդա ելտըզ սոուլմազ,
Չիկ յումուրթա սոուլմազ.
Բիր ջան, բիր ջանա սավըստըն
Անա չարա բուլումմազ:

Չիբուխ ատտըմ չիմանա,
Չիմանըն չիչակընա.
Իփակ օլեմ սարլեմ,
Իգիթ սանըմ գեգչընա:

Այվան յափտըմ, բան յափտըմ,
Փանջարասի գեն յափտըմ.
Այվան այվանըն իստի տըր,
Այվան յոլըն իստի տըր:

Ըստամբոլ մինարասի,
Ալ չուխա քանարասի.
Ղըզըմ մեիչ սանտա տըր,
Վերմաղ քաֆիրանասի:

Ըստամբուլ ուղուր օլսուն,
Դերթ յանի չուղուր օլսուն.
Բանդան այրի յար սավարսան,
Հարամի բոյնուն վուրսուն:

Ղառշըտա աթլի կեշտի,
Նալի փառատտի կեշտի.
Էլլարա սալամ վերդի,
Բանի աղլատտի կեշտի:

Մանի յամ քալամ-քալամ,
Յարա յոլլատըմ սալամ.
Քիսմայըն, ինճիմմաըն,
Բալքի դոլանեմ գալեմ:

Աշշըղ տիեր յարալի բանըմ,
Ֆիթիլ յարալար բանի.
Յարասըզ յաթաղա կիրսան,
Յաթաղ փարալար բանի:

Աշշըղ դիրեր գինա դուշտըխ,
Քոլգադան գունա դուշտըխ.
Դիշման գեզըն քոռ օլսուն,
Տետըղըն գունա դուշտըխ:

Աշշըղ տիեր նաչա ա՛ղլամա,
Գուն տուր, գեչար, ա՛ղլամա.
Բու ղափի ղափան ալլայ,
Հալբաթ աչար, ա՛ղլամա:

Գոգառչին հավատա տըր,
Ալըմ էթմազ յուվորտա տըր.
Գոգառչին վուրտում յախմազ,
Յանի սել օլմիշ օխմազ:

Ղուշ բայիրդա օրուրեր,
Ղուշ-ղուշա եմ գեթիրեր.
Ավալ գենգլում շատ իտի,
Ինտի բայղուշօրուրեր:

Գեգդա ելտըզ սայըլմազ,
Չիք յումուրթա սոյուլմազ.
Բիր ջան քի բիր ջանա սավար,
Օնա չարա բուլումմազ:

Գեգդա ելտըզ օլեյիմ,
Տուբուկտա դուզ օլեյիմ.
Յար ղափըդա գեչանդա,
Ավտա յալղըզ օլե տըմ:

Բայազ դալմալի յարըմ,
Գեբրն ալմալի յարըմ.
Բայազ դալմա բոյնունդա,
Ալթրն սահաթ ղոյնունդա:
Ալթրն սահաթլի յարըմ,
Հաճափ քիմը՞ն ղոյունդա:

Այ չըխար բաբըռ ալլայ,
Բու սավտա նատըր, ալլայ.
Յա յարա սալամ գեթուր,
Յա բանի սապըռ, ալլայ:

Սապախտան ել ղալտըրեր,
Էյրամըմ ել ղալտըրեր.
Չոխտա գիզալ դագիլամ,
Ճուվլամ բանի էլտուրեր:

Ղանթալի տըր ղափըսի,
Գանդի մալաթ յափըսի.
Էլրն աթախ սավարըմ,
Ղոյ չաթլասրն հաքըսի:

Սիա փուշըմ սարարամ,
Իթըրմիշամ արարամ.
Սիա փուշըմ միլ-միլի,
Գալ էրկաթ բիզըմ դիլի.
Ման բուրալի դագիլամ,
Մըսըրրն ղոնճա կիլի:

Սիա փուլըմ միլինան,
Յարըմ այնար գիլինան.
Էլլարա մեյիլ վերեր,
Մանա յալդատ դիլինա:

Փեշկիր-փեշկիր իստինդա,
Փեշկիր դիզրն իստինդա.
Օթուրմիշյազի յազար,
Քրիստոսրն էշխրնա:

Սապախտան չըխտըմ իշըմա,
Շաքար դոշտատըմ աշըմա.
Էլլար շիրին ույխուտի,
Դովլաթ ղոնդի բաշըմա:

Այ տագիլամ, յըլտըզ ամ,
Գալրն տագիլ ամ, ղկզ ամ.
Բաճատա դուրան օղլան,
Իչարի գալ, յալդրզ ամ:

Այ բախ, յըլտըզա բախ,
Գալրնա բախ, ղրզա բախ.
Ղրզ, ալլահրն սավարսան,
Իզրն չավիր բիզա բախ:

Փունղար նա՞ ճոշ ախարսան,
Մոռ մանամշա ղոխարսան.
Փունղար բախտըլի սանա,
Յար գալանդա բախարսան:

Փունղարրն բալի բան ամ,
Տիպրնդա դալի բան ամ.
Գունուզ խայալըմ խայալ,
Գեճա յոլտաշի բան ամ:

Բու տաղրն սըրտրնդա յամ,
Ալօսման յուրտունդա յամ.
Բան բուրտա, յարըմ օրտա,
Ղավուշմաղ դարտրնդա յամ:

Բու տաղընն օ՛ յուրզընդա,
Մառալ օթլար դուզընդա.
Բան յարընմի թանարամ,
Չիվտա խալլար ուզընդա:

Նախընրընն էկի գալտի,
Չիմանընն գեգի գալտի.
Գերի տուրուն աղալար,
Մահլանընն բակի գալտի:

Աշշընղ տընր քի գուլասար,
Գյուլ յափրաղի գուլասար.
Բաղպանչի, դատան ալեմ,
Յար յաթաղի գալասար:

Չընխտընմ Թիֆլիզ գյորընդի,
Յոլի դումղուզ գյորընդի.
Չինի չուխալի յարընմ
Հասի գուլգազ գորունդի:

Չընխտընմ չինար դալընա,
Չոխ ագլատտընն սան բանի.
Ջանի դիլդան սավտիգընմ,
Ավտա դոգան վար բանի:

Չընխտընմ էշիկ աթասի,
Բուլտընմ աթլազ փարասի.
Գյոզ գյորտի, գյոնուլ սավտի,
Նա՞ տընր բունընն չարասի:

Ղալատան ենդընմ ենիշ,
Մայրընմամ դոլի եմիշ.
Յոլլատընմ, յար եմամիշ,
Յոլլիան գալսընն՝ տեմիշ:

Ընստամբոլ բաղի բանընմ,
Խոշ գալդընն, աղա յարընմ.
Ալթընինան բարաբար,
Շաքարինան դաթլի յարընմ:

Խալիի վուրդում իքա,
Ետտի դաթ բիքա, բիքա,
Ման յարընմնան քեշմերամ,
Էտսընլար թիքա-թիքա:

Յուք ուստունդա խալի յամ,
Խալընընն խայալի յամ.
Դագմա զիլիֆ թելընմա,
Բան բիր իգիթ մալի յամ:

Ալ չուխա խընշընր-խընշընր,
Փունդարտա դում դայնաշեր.
Օդատան սասընն ալտընմ,
Ավտա դիլի դոլաշեր:

Քիփ իչընդա իզընմ վար,
Իզընմ սանդա, իզընմ վար.
Անասընընն իչ օդլի,
Քիչիկընդա գյոզընմ վար:

Քիփ իչընդա բանդընմա,
Մայիլընմ աֆանդընմա.
Ման գիզալ, յարընմ գիզալ,
Ույդուրմիշամ գանդընա:

Քոյնակի քետան օդլան,
Բախապար յաթան օդլան.
Նընշանլընն է՛լ ափարտի,
Բեխապար յաթան օդլան:

Յազի յազդրմ ղրշ իտի,
Ղալամրմ գումուշ իտի.
Օխիան ինճրմմասրն,
Իրակրմ յամմիշ իտի:

Յազի յազտրմ բիլասան,
Օխիյասան, գուլասան.
Բու յազրնրն ուստրնա,
Տուրմիասան, գալասան:

Սու գալեր արտրմ-արտրմ,
Քիմ բիլեր բանրմ դարտրմ.
Սուլար միրաքաբ օլսա,
Յազրլմազ բանրմ դարտրմ:

Օդամ, օդամ, օդամա,
Խոշ գալմիշսան բու դամա.
Անամ սանի ղրզ վերմազ,
Գենա յալվար բաբամա:

Ինճա չիբուխ, իշտա գալ,
Ինճա յոլրն, դի՛շ տա գալ.
Ակար յոլրն ղալարսան,
Քարվանա ղառրշ տա, գալ:

Բան բիր մառալ իտրմ,
Բիր չոճուղա վերտրլար.
Նա՞սրլ լայեղ գորտիլար:
Տաղ բիզրմ, մառալ բիզրմ,
Նա՞սրլ լայեղ գորտիլար:

Բանրմ յարրմ հար տրր,
Իգիթլարրն խասի տրր.
Ասմա խանչալ բեշրնդան,
Դորթ յանի աբասի տրր:

Մանի յամ քալամ-քալամ,
Յարա յոլլատրմ սալամ.
Սապախտան չրխտրմ իշրմա,
Դոլվաթ ղանդի բաշրմա:

Ղոյնրնդա քի յուզ,
Մինդարրն ալթրնա դուզ.
Սան օ ղափրտան վը՛զ,
Բիզ բիլերրխ բիզ:

Հավելված 2

Զրույցներ գրողների մասին

Գրիգոր Նարեկացի

Գրիքոր Նարեկացին մե եթում տղա էր, հորից-մորից զրկված, անբախտ վիճակով մեծըցած: Էնիկ կապրիր իրան քեռի վարքապետին քովը և մալի չոբնուբեն կեներ: Ուներ ուրուշ վեց ընկեր չոբան: Էտ ընկերները իրան անունը Խըշո էին թրե և վրեն կը խնդային: Օրվանըմ մե օրը Խըշոյին ընկերներն ըսին.

- Ծո՛, Խըշո՛:

- Ի՞նչ է,- ըսավ:

- Արի դու քընա մալին առաչը կայնե,- ըսին,- մենք հաց ուտենք, էտևե դո՛ւ արի, նստե, կեր:

Խեղճ Խըշոն ձեն չհանեց. էլավ, սուս ու փուս, դագինակը ումուզին առավ, քընաց, մալին առաչը կայնավ: Օրը շատ քամի էր. Խըշոն մըսիր կը:

Տըղեքը Խըշոյին օր ճամփեցին, իրենք նստան, տավարճուղնին առաչ փերին, կերան, կշտացան, Խըշոյին էլ բա՛ն չթողին: Էնոր վրեն խընդըլու համար իրեն տավարճուղին մեչը Էրկու հատ թիթեն թրին ու կանչեցին, տվին ձեռքը: Խըշոն տավարճուղը վերուց, բաշլայեց լվասվիլն ու աղոթք էնելը, չունքի էնոր պարտականուբենն էր՝ ամմեն օր իրեք անքամ, հաց ուտելեն առաչ լվասվիլ, Աստուն փառափանել, էտև ուտել: Ամմեն անքամ էնիկ իրեն աղոթքեն առաչ կըսեր.

- Տե՛ր Աստված, դու գիտես օր ես իմ մանկուբենեն որվի եմ մնացե, անտեր, անտիրական եմ էղե, ուրուշներուն դուռն եմ ընկե, Տե՛ր, էրկնային լուսավոր թաքավոր Ասված, մե լուսըմ բաց իմ առաչ, մե գիտուբենըմ տուր ինձի, քամ դուռըդ, ծառայեմ:

Լվասվավ, աղոթքն էրավ, պրծավ, տավարճուղին հալդեստանը քակեց, թափ տվեց ու տեսսավ օր ի՞նչ տեսնի. իրեն սև կլիկ հացերը դառցել են էրկնային լուս, անմահական հացեր: Հացեն քիչիկըմ դուս քաշեց ու ըսաց.

- Տե՞ր Աստված, մի՞թե ես արժանի էի քու լուսեղեն հացին, ու դառցավ Ասված փառափանեց, բաշլայեց ուտելը: Եվ օր էնիկ հացը կուտեր, տավարճուղեն դուս քաշած վախտը պակսածին տեղը կավելնար:

Ընկերներն օր հեռուն նստել, սեյր կենեին, թը՝ աշենք Խըշոն թիթենը հացի տեղ պիտի ուտե՞: Տեսսան օր ճե՞րմակ լավաշը խըփըշտալով նես կուտա, զարմանքից լրջացան ու ըսին.

- Ծո՛, ծո՛, հըլը բանի աշեցեք, թիթենը կերավ, թիթենը հացի տեղ կերավ: Եվ չորս

թարաֆեն խընդրլով վրա վազզեցին:

Խրշոն հացին մեկն օր կերավ, ձեռքը տարավ օր մեկելն էլ դուս հաներ ուտեր, տղեքը վրա պրծան ու ի՞նչ տեսսան՝ թիթենի տեղ՝ էրկնային հաց: Ըսկըսեցին իրար էրես աշել ու պաղան, մնացին: Խրշոն գլխու չընկավ, չունքի բանի էղելութենը չիտեր: Տըղեքը էտ բանի համար մալը թեզըմ թափեցին գեղ ու, հացը ձեռքերը, վազզեցին վարթապետին քովը: Վարթապետին օր բացատրեցին, էնիկ ըսավ.

- Որթյակներս, էնիկ մե անմեղ տղայիմ Աստվածութան տված ցուցումն է (Անուշ ապլայի պատումի տարբերակում տավարածները հանդիպում են ջրաղացի համար ջրանցք կառուցողներին. այս և հաջորդ երկու համեմատումը կազմողինն է):

Վարթապետը Խրշոյի հրաշագործությունն իմանալով, էնոր նախրեն ետ առավ: Էտ վախտերը վանքին համար մե ջաղասկըմ կը շինեին: Ջաղչին համար վազզան ջուր չկար: Գուզեին օր ծովեն մե հնարքով ջուր վեր առնեն ու ջաղասկը դառցնեն: Էտ բանին վրա կաշխատեին կը տասվերկու ուստեստան: Էտ ուստեստանը ամմեն բան էրել էին, հըմը մե բանիմ դեմ էին առե. բանդին տեղը մե մեծ քարըմ կար. ինչ-քան օր կաս կենեին, էրկրքե չիվիները կուտային, քարը չէր տրաքի, կասը դապպաղ կուտար ու կանցնիր կը:

Օրը շափաթ օր էր, լուսը՝ կիրակի:

Վարթապետը Խրշոյին հաց տվեց ու ճամփեց ուստեսնուն, հետն էլ ըսավ.

- Որթիս, թը կըրնաս, բանըմ էլ օքնե էնոնց:

Գիրքորը հացն առավ, բառցեց ավանակին, ընկավ ճամփա: Ուստեստանը Գիրքորին հոչակը իմացել էին. եփ օր էնոր տեսսան, ճվացին.

- Գիրքորն էկավ, տըղեք, Գիրքորն էկավ, ու վրա պրծան:

Գիրքորը հացը ավանակին վրայեն վեր առավ, ըսավ՝ կերեք, խմեք:

Ուստեստանը հացի կերութունը մըտյան էրին. բաշլայեցին հարց ու փորց էնելը, թե՝ Գիրքոր ջան, էս ջրի ճամփին օրթեն դեմ ենք առե այսի քարին, չենք կըրնա ճեղքե. հընար ունիս, հընարըդ տե՛ս: Գիրքորն ըսավ.

- Էտիկ հեչ, դուք նստեցեք հացերդ կերեք, ես հիմի էտոր հընարը կենեմ:

Ըսելն ու ծերին (կտուցածն մուրճ, որով քարի վրա կաս-ակոս են փորում, ապա պողպատե սեպերով քարը ճեղքում) առնելը մեկ էղավ: Մոտեցավ քարին, վրեն խաչածն գիծ քաշեց, Ասված կանչեց ու ըսավ.

- Ծո՛, օրհնած քար, տասվերկու ուստեն ի՞նչ կը տանջես. Ասու օղորմութենովը տրաքե աշեմ (Անուշ ապլայի փոփոխակում վարպետները շղթաներով կապկպում և մի քանի լուծ եզներով քաշում են այդ ժայռը): Գրիգոր Նարեկացին նստում է լծին և՝ «Դե՛ բալամ եզներ, քաշեցեք աշեմ»: Այդ ասելուն պես ժայռը տեղահանվում է, և քարը մեչտեղեն հազար կըտոր ըլլիլը մեկ է լինում: Ուստեստանը ուտելը մըտյան էրին, օտվին գետնեն կըռավ: Էնոնցեն մեկը ափալ-թափալ վազզեց վանք, օր աշկիլուս էնե վարթապետին:

- Հա՛յ սուրվ, ըսավ, չես ըսե, մեր Գիրքորը էսման-էսման հրաշագործութեն գործեց, քարը հազար կտոր էրավ:

Վարքապետին օտվին գետնեն կըռավ: Գիրքորի հռչակը սաղ աշխարը հրատարակվավ: Ուստեստանը Գիրքորին հետ իրիկունն էկան տուն: Էկան, քնան, լուսը կիրակի՝ վեր էլան օր Գիրքորը չկա՞: Էսան զարկին, էնան զարկին, չգտան: Դու միսե, Գիրքորը ժողովրթին աշկեն թողել փախել էր, չունքի էնիկ միշտա կըսեր, թը ես արժանի չեմ, օր մարթիք քան, ինձի սրվի տեղ թընեն:

Գիրքորը էստից օր փախավ, շատ քընաց, քիչ քընաց, էտ էլ Աստված գիտե, հասսավ մե գեղըմ, դառցավ մե աղքատ, տնանկ մարթում ծառա (Անուշ ապլայի պատումի տարբերակում Գրիգորը ոչ թե ծառա է դառնում, այլ պատահաբար հանդիպում է այդ աղքատ մարթուն այն ժամանակ, երբ վերջինս պարտապաններին ցորեն բաժանելիս է լինում): Խեղճ վարքապետը էսթուն ընկավ, էնթուն ընկավ, Գրիքորին չընկըրցավ գտնի օրա, մե այտարարութենըմ տվեց աշխըրին. «Վեվ օր էսման-էսման նշաններով մանչըմ տեսնի, Ասված սիրողը թող բռնե, էսինչ վանքը փերե»: Իսկ Գրիքորը չկա՞ր ու չկար:

Գարունը էկավ, Գրիքորին աղեն բաշլայեց ցանքը: Իրար հետ կերթային, ցանքը կենեին, քուքային: Շատ էլ ցանելու բան չունեին: Ցանքը պրծան, վրա հասսավ գարունը (այսինքն՝ ամառը): Էկավ քաղին ժամանակը: Գրիքորը աղին հետ հացը քաղեց: Օրանը փերին, կալ էրին, ծեծեցին, թեջը զարկին, մեմե տեսսան օր չորս թարաֆեն պարտքատերերը վրա պրծան: Գրիքորին աղեն, ձեռվին ծոցը թրած, կայնավ մնաց: Գրիքորն ըսաց.

- Աղա՛, ինչի՞ շվարած մնացիր:

- Ի՞նչ էնեմ,- ըսավ օղուլ,- տեսնի՞ս կը, ունեցածնիս էս է: Պարտքերըս օր տամ, տակը բան չի մնա:

- Փե՛ կոտը,- ըսավ Գիրքորը,- Ասսու ձեռնեն ի՞նչ է պրծե, օր էտիկ պրծնի:

Կոտն առավ, ծո՛ւնկ չոքեց թեղին առաչը, Աստված փառափանեց, իրեն աղոթքն էրավ ու ըսավ.

- Պարտքատերե՛ր, փերե՛ք ջըվալները:

Կանչեց, իրեն ձեռքովը ցորենը չափեց ու տվեց, չափեց ու տվեց, ամմենին իրեն տեղը ճամփեց:

Աղեն էտ վախտը շվարած կայնե-մնացել էր, չէր հասկընա, թե ինքը ուրտե՞ղ կը գտնվի: Աշկին տըկով ցորենին թեջին օր կաշեր, տեսնիրկը, օր քանի Գրիքորը կոտը թեջին կը զայներ, ցորենը ջվալը կը լըլեր, թեջը էնքանեն ավելի կուռչեր, շատընար կը: Էս մարթը էստեղ ավելի շվար մնաց:

Համբավն ընկավ գեղը, անցավ գեղանը: Գիրքորը տեսսավ, օր իրեն պիտի երկրպաքեն, գլոխն առավ ու մե քարեմ փախավ: Եփ օր փախավ, դեմ առավ մե դուրան մեյդանիմ: Տերըդ մեռնի դուրան. մե ծերն էստեղ է, մեկելը չկա: Էս դուրանին

մեչը էնիկ տեսսավ մեծ-մեծ եղընները: Գիշերը վրա հասսավ: Գիրքորը մնաց եղընուն մեչը ու ինքն իրեն դիշիմմիշ կըլլիր, թե Տեր Աստված, էս ի՞նչ է իմ վիճակը. ո՞ւր եմ ես, ինձի ինչի՞ կը տանջես: Էս մտածմունքին հետ էր, մեմե աշեց օր գայլերի ուլուլոցին ձենը մոտենա կը իրեն:

- Տե՛ր Աստված,- ինքն իրեն մըտածեց, ըսավ,- մի՞թե իմ աջալըս էկել է, մի՞թե գայլերուն բաժին պիտի դառնամ: Մեմե աշեց օր ի՜նչ աշեց, էրկընքեն կանթեղի պես բանովըմ գայլերուն ամմեն մեկին առանձին-առանձին հաց իչավ: Գայլերը կերան ու քընացին: Գրիքորը, եղընին մեչ մտած, սեյր կեներ:

Գիշերը ցուրտ էր. մե կերպըմ լուսացուց: Եվ օր լուսացավ, Գրիքորը տեսսավ, օր էրկընքի դռները բացվեցան. Հայր Աստվածն էրևաց՝ աթոռին նստած, հրեշտակնին բոլորը բռնած: Գիրքորը սուրվ հոքով լցվեցավ: Խեյլըմ օր անցավ, էլավ նըստավ խրցիմ վրեն, էրկընքի դռները փակվեցան:

- Է՛ս ինչ էր,- ըսավ: Ինչի՞ էրկընքին դուռը փակվեցավ: Էնտից էտև նստավ մե ուրուշ խրցիմ, մեմե մե ուրուշիմ, վերչը էրկընքին բան չտեսավ: Էս անքամ էլավ նստավ առաչվա խրցին ու տեսսավ, օր բիրտան էրկնքի դռվին բացվան: Հիմի ըսկըսեց էտ խրցին խոտերը մեկ-մեկ ձեռքն առնել ու հետն էլ էրկինք աշել: Ամմեն խոտին էսման ձեռք տալով՝ գտավ է՛ն խոտը, որն օր հրաշք ցուց կուտար: Իտիկ օր գտավ, էս անքամին ավելի լրումն առավ: Լրումն օր առավ, ըսավ.

- Օ՜յ Աստված, մի՞թե ես արժանի էի, օր տեսնեի քու լուս էրեսըդ: Նստավ, էրկան ու բարակ մտածեց: Հիմի էս խոտն ի՞նչ էնեմ, ըսավ ինքն իրեն: Ծոցըս պայե՜մ, պիտի չորնա, թափի, կորի: Թե չտանի՜մ, հրաշագործութենեն պիտի զրկվիմ: Որոշեց միանքամից փռշել, կուլ տալ: Էտմանե էրավ: Փռշեց, կուլ տվեց ու ճիպտան էրկընքին դռները լեն-լեն բացվեցան:

Մեր Գրիքորն էտտից էլավ քընաց դեմի մե քաղաքըմ, ուրտեղ օր կապրեին իսկական քրիստոնական հայերը: Հասսավ քաղաքը, մտավ մե պառավիմ տունը: Գիրքորը մնաց մե գիշերըմ: Պառավին հետ հաց կերավ, ջուր խմեց: Մեկել օրը տեսսավ, օր պառավը կուլա կը:

- Ի՞նչ է էղե, օր կուլաս,- հարցրեց պառավին:

Պառավը ըսավ, թե տասվերկու հատ հավի ծիքծիք թնդրին մեչը սատկել են, տանիրկը օր թափեր չեփլիկը:

- Մամի, մի վախենա, մեծ է Աստու օղորմութունը: Դու քընա,- ըսավ Գրիքորը,- ինձի համար մե խմելու ջուրըմ փեր, ես էտոնց խոսք կը հասկըսնեմ: Ըսավ ու ձեռքն առավ մաղով սատկած ծիքծիքները: Պառավը դիորի ծեծկըվելով ախպուրը քնաց էկավ, Գիրքորը ծիքծիքնուն ձեռք տվեց, հետները խոսակցութեն էրավ, ըսավ.

- Թլռե՛ք, ձաքերըս, թռե՛ք մերերուդ քով: Ծիքծիքնին 0՛ սահաթ սաղցան ու ըսկըսեցին ճըվճըվալ: Գիրքորն էնոնց մորը տվեց ու ինքնա ուրախ-ուրախ էնոնց վրեն կաշեր: Ծիքծիքնին կոչկոչալով մորը հետ կերթային, եվ օր պառավը նես մտավ ու

ուրախութունից էլ շատ զարմացավ: Էղելութենն օր իմացավ, ընկավ Գիրքորին օտ-գին: Գիրքորն էնոր վեր հանեց, ջուրը խմեց, նստավ: Էս բանն օր պառավը հրա-տարակեց, քաղքին շենլիկը իրար անցավ: Դիորի էնոնք թափան պառավին տունը, Գիրքորս գլոխն առավ, էլի փախավ: Էն էր, գուզեր քաղքեն դուս քար, վանքին լուսա-բար տիրացուն էնոր թևը բռնեց:

- Ո՞ւր կերթաս,- ըսավ տիրացուն,- էրկինքը ժուռ քուքայինք, գետինը գտանք, էլ ո՞ւր պիտի պրծնիս մեր ձեռքեն:

Գիրքորին տարան վանք: Հաքուցին հրաշալի ըսքերքներ (զգեստներ) ու թրին կամունեթը (կաբինետը): Վանքը կըսեն թե մեկեն լուսավորվավ:

Էս էղավ ու էս, ու Գիրքորը աշխար չըմտավ: Դառցավ վարթապետ ու սկսեց թարքմանել (ստեղծագործել) իրեն Նարեկը, հազար ու մեկ անվանով: Իրեն հոքին սուրփ ըլլելով, գիրքնե լուս հոքով լցվեցավ: Էնիկ գըրվավ Ասսու բեյնով, Ասսու շնչով, էտոր համար էլ Նարեկը դառցավ կրոնի գրքերուն մեչ ամմենեն ունքունականը աշ-խըրին վրեն:

Նարեկն օր թարքմանեց պրծավ, էնոր անունը աշխըրին մեչ մնաց Սուրփ Գրի-գոր Նարեկացի:

Աշըղ Ջիվանին մշակ

Ջիվանին ջայիլ վախտը Ջանդուրա մշակ կըլլի: Իրեն ընկերտանցը հետ գիշեր-ները քնի կը մալին քովը: Մե օրմե առավոտ վեր կելլե, ընկերտանցը կըսե.

- Ես աղոնցը տնեն փախչիմ պիտի:

- Է՛, ինչի՞ կը փախնիս,- կըսեն տղեքը:

- Էնոր համար կը փախնիմ, օր ես պիտի էրթամ աշշըղութեն էնեմ:

- Ծո՛,- կըսեն տղաքը,- աշշըղութենը քու իտի ղոռ-ղոռ ձենի՞դ պիտի ուրմիշ քա, թե՞ իտի փատե ձեռվընուդ: Արի կըլլի, թարկը տուր, նստե վար:

- Չէ՜,- կըսե,- ես գիշերը էրածըս տեսսա, օր աշշըղ պիտի ըլլիմ:

- Է՛, էրածըդ պատմե հըլը, աշենք ի՞նչ տեսսար:

- Տեսսա, օր գիշերը փերին մե կոտըմ կորեկ գլխես դարիվար լցին: Էս խոսքը կը-սե ու փախնի կը, շիտակ կերթա Ղարզաղ:

Աղան կաշե, օր մշակը չկա: Կերթա ընկերտանցեն խապար կառնե, կըսեն.

- Աղա, մշակըդ փախավ, քընաց իրենց գեղը:

Աղան կերթա էտըթին, հասնի կը Ղարզաղ, հորը կըսե՝ Տղեդ էկե՞լ է:

- Հա՛,- կըսե հարը,- հըմը չիտեմ՝ ինչի՞ է էկե:

- Հըլը կանչե քա,- կըսե աղան,- հարցընենք ինչի՞ է էկե, ինչե՞ն է դժգոյ, աշենք, թե ախըր մե պատճառըմ կա:

Կանչեն կը, քուքա, հարնա, աղանա հարցնեն կը պատճառը թե՝ օղուլ, ինչի՞ ես էկե:

- Էկել եմ, օր էլ մըշակութուն չենեմ,- կըսե տըղան: Ես աշշըղութուն պիտի էնեմ: Իմ զբաղմունքըս էտիկ տի ըլլի:

Հարնա հերսոտի կը, տղուն կըստիպե, օր դարտակ բաներուն վրա ժամանակ չըվատնե, բայց իլլաջ չիլլի, չի էրթա: Աղան քոռ-փոշման դառնա, կերթա ետ:

Սուլդայի մեչը էն վախտը համբավավոր աշշըղ Սիային (Ղարա Ղազար) կար: Ջիվանին կելլե, կերթա անոր տունը: Կերթա, բարև կուտա, կըսե.

- Ուստա Սիայի, ես էկել եմ, օր քովըդ աշկերտ մնամ:

- Ծո՛, կըսե, դու ո՞ւմ տղան ես:

- Ես դարզաղցի էսինչ մարքու տղեն եմ,- վճռական տոնով կըսե տղան:

- Է, լա՜վ, դու բանըմ օրա գիտե՞ս, օր էկել ես:

- Բանըմա չիտեմ, կըսե. հըմը պիտի սորվիմ:

- Լա՛վ, կըսե, օր գուզես, կեցի, սորվե:

Արթըղ մնա կը աշկերտութան: Սիային էսոր չալել կուտա, երքել կուտա, քիչ-քի՜չ սորվեսնե կը:

Ջիվանին սավդան կը ցըգե ուստի՜ն, սազի՜ն, արեստի՜ն, օր զօր ու գիշեր չալեկու, չալե կը:

Կանսնի մե ժամանակ, տեսնիկը օր իրեն ուստան դիորի մե բանըմ խրատ կուտա, ինքը իրմեն տասսը բան կստեղծե կը: Սիային կը զարմանա՜, թե՝ էս տղան էս ի՜նչ կենե, էս բաները ո՞ւրտից կը թարգմանե: Վերչը, մե քիչ ժամանակ օր կանսնի, Ջիվանին դիմե կը իր ուստին, կըսե.

- Ուստա, ինձի ուստա հանե, օր էրթամ պիտի: Սիային չի ուզե բաց թողնել, չունքի տեսնիկը, օր Ջիվանեցեն ավելի բան կը սորվի, քանց թե ինքը կը սորվեսնե:

- Է՜, լավ, կըսե, օղո՛ւլ,- որոշ ժամանակ անցնելուց հետո,- եվ օր չես կենա, ուստա հանենք:

Կանչե կը իրեն գիտցած աշշըղներուն, քուքան թոփ կըլլին, հացկերույթ կենեն, էտև էսոր անունը փոխենկը ու թընեն կը Աշշըղ Ջիվանի, քանի օր ջայիլ ջիվան է էղե: Փերեն էսոր մե սազըմ կը բաշխեն, նորեն նըստեսնեն երքել կուտան: Էս ուրախության առիթով էլ Ջիվանին մե քանիմ բան կըսե, աշշըղները բիտտուն կը զարմանան էնոր մարքարեութան վրա: Արթըղ առոք-փառոք ճամփու կը թընեն, կըսեն.

- Քընը, օղուլ, Աստված հետըդ ըլլի:

Էտտից կելլե, կերթա շիտակ Թիվլիզ: Թիվլիզու դայֆախանեն ամմեն օր չալեկու, ուրախասնե կը բիտտունին: Հետո՝ Գյումրի-Ալեքպոլ: Գրե ու կստեղծագործե, երքե, չալեկը տնական մի ժամանակ էլ Ալեքպոլում, դիորի 1895 թվականը՝ հայ աշուղական արվեստը բարձրացնե կը նոր մակարդակի: Ջիվանին ստեղծե կը նաև իր դպրոցը, բուն ժողովրդական (գեղջկական) մոտիվներ կը փերե աշուղական եր-

գարվեստ՝ իր երգով զարգացնե ու հարստացնե կը Նաղաշ Հովնաթանի հիմք թըրած և Սայաթ-նովայի զարգացրած երգարվեստի ավանդոյթները: Ալեքպոլում Ջիվանին մեծ սիրով կապվի կը աշուղներ Մալուլի, Զահրիի, Ղեյրաթիի, Ֆիզայիի և այլոց հետ. նրանց կողմից էլ կընտրվի ուստաբաշի՝ գլխ. վարպետ:

Զրույցներ Վահան Տերյանի մասին (Շուշան աղլայի պատմածը)

Վանոն ինքը ճերմակ, չայրան գընտրլիկ մանչըմ էր: Էնոր հետ պզտկուց մոտիկ դրկցի տղա էինք: Էնոնք շախգամ ցանել շատ գիտեին, մերա խելքը, միտքը շախգամն էր: Գուզեինք օր Վանոյին տըլմըզտեինք ու շախգամը փերել տայինք: Էնոր համար կըսեինք.

- Վանո, էրթանք Քռչերը (ժայռերը) խաղլու, որ հենց Տերտերանց տանը մոտիկ էին: Մենքա օր խաղլու կերթայինք, հետվընիս անպայման քիչըմ ուտելու բան կը տանեինք:

- Դուք հավկիթ փերեք, եսա՝ շախգամ,- կըսեր Վանոն:

Համաձայն կըլլեինք, տռճիկ տալով վազզեինք կը տուն: Ամենքըս իրեն խոսք տվածն օր կը փերեինք, կերթայինք Քռչերն ու բաշլայեինք կը թիթեն ժողվելը: Տներեն յամաղ (յուղհալիկ) կտանեինք ու օջաղը կը վառեինք, յամաղով հավկիթը կը խաշեինք: Շատ վախտ էտ խաշած հավկըթնին կուտայինք Վանոյին, օր էնիկ էրթար շախգըմի: Կերթար իրենց բոստանը, հըմը չէր ղըմըշի, օր խոշորներեն փերեր. մանղըռները ժողվեր, փերեր կը մեզի: Մե օրմա էնքան քիչ փերեց, օր բիտտունին չըհասսավ: Ձեն չհանեցինք, ըսինք՝ լավ, ջանըմ, մեր Վանոն է. մեմա տեսսար էնքան կը փերեր, օր մե քանիմ հատ կը հասնիր ամեն մեկիս:

Մեկել օրվա համար միշավարա օր էրինք, Վանոն ըսավ.

- Տղեք, էքվան օր քանք, դուք հավկըթները էլի հում-հում փերեք, չեփեք, դուք տվեք ինձի, ես շախգամ շատ կը փերեմ: Համաձայնանք ու էքսի օրն էլ թոփ էղանք, հում հավկըթները տարանք, տվինք Վահանին: Վահանը ձուքը բերանը ծամելեն առաչ էր ընկե, կերթար կը սեիզի պես, մենքա՝ էտրթին: Հավկըթնին օր առավ, գեզընասավտիգըմ Վանո, քընաց ու էլ չեկավ: Մեր հերսը շատ-շատ էլավ, միշավարա էրինք, թե ի՞նչըղ էնենք, օր էտոր հախեն քանք: Տղաքը գլոխ չը թրին. ես էի, օղորմած հոգի Յաղուբն էր, Դեստիկն էր, Բեթխենն էր՝ բիտտուննա ախչիկ: Էքսի օրն օր էկանք, ըսինք.

- Յավա՛շ, Վանո մանչ, յավաշ, աշե քու հախեդ քուքանք թե չէ:

- Դուք ինձի ի՞նչ պիտի էնեք,- ըսավ Վանոն,- շատ-շատ շախգամ տի գողնաք. եսա ձեզի վերտեղ օր բռնեցի, էնտեղ քեթըկ կուտամ:

Մենք էնքան միամիտ էինք, օր գիտեինք, թե Վանոն մեր հավկըթնին առել, տարել իրիսկանն է տվել: Դու մի՛սե, մեզնեն օր կը ջոկվի, կերթա տուն, բընկըլտոցենա էլի մե քանիմ հավկիթ կը գողնա, մե ածան հավըմ կը բռնե ու կերթա խոտնոցը: Խոտնոցին քովը Վանոն մե տունտուլիկըմ էր շինե: Հավկըթնին սաղ թընե կը տունտուլիկը, էս ածան հավնա վըրեն, օր թուխս նստի: Խեղճ հավնա ածան հավ, է՜, խելքդ ի՞նչ կը կըտռե, թուխս կըրնա՞ նստի: Տունտուլիկի դուռը քարով վեր կը շարե ու քուքա տուն: Է՛, Վահանի շատ պետքն է, թե հավը թուխս չի նստի: Իրիկուն օր կըլլի, իրիսկինը կաշե օր մե հավըմ պակաս է: Նես ու դուս կենե, չկա, կըսե.

- Տերտեր, մեր բայլըլի չթչթիկ հավը չկա:

- Ինչ էնեմ, չկա, աշե, գտի,- կըսե տերտերը,- հավերուն ղորուխչին դու ես:

Քանիմ օր էտև մենք ախչըկներով միշավարա էրինք, քընացինք Վանոյենց բոստընեն շախգամ գողցանք: Ես իմ փայըս օր տուն տարա, մերըս տեսսավ: Վանոն կաշե կը օր շախգամը գողցած է, իրան իրան կըսե. «Կա, չկա, էսիկ էն ախչըկնուն էրածն է»: Քուքա մեր տունը, մորս կըսե.

- Թաքուն շաքար, Շուշանը շախգամ փերել է ձերը: Մարսա կըսե՝ հա, ձեռքը քանիմ հատ կար: Վանոն կերթա տուն, մեծ ախպորը՝ Արամին խապար կուտա, թե ախչըկնին շախգամը գողցել են: Մեմա այեմ՝ Արամը քուքա մերը: Մերս այեց օր բանը ղապացավ, էս անքամը ինքար էրավ: Արամի էտտեցեն Վահաննա էկավ ու կըռիվը ընկավ մեր մեչը: Ես առա ճակկըլը, էնոնք՝ ակիշը, զարկինք իրար: Մերսա անցավ էնոնց թարաֆը, ու ես լացի:

Էքսի օրը սապախտան վայնան ընկավ, թե չեք ըսե, իրիսկինը չընթչընթիկ հավը գտել է: Էտև իմացանք օր տերտերը քընացել է խոտնոց խոտ փերելու, անգընճին հավի ձեն է ընկե ու, ձենին էրթըլով էլ, հավը գտել է: Իրիսկինը կերթա տունտուլիկի դուռը կը քակե, կաշե օր հավն ու օխտը հատ հավկիթն էլ մեչն են:

Վախտըմ օր անցավ, Վահանի հետ էլի բարըշանք, էղանք առաչվա պես: Հիմի խորուրթ կենենք, թե ի՞նչ փերենք, օր էրթանք գեղեն դուս, լավ տեղըմ գտնինք, ըշտը էփենք, ուտենք ու խաղանք: Ըսինք՝ արիք կարաք գողնանք: Ամմեն մեկըս մեր տներեն կարաքը քիչ-քիչ գողցանք, փերինք, հըմը դուս էկավ օր բիտտունինսա աղի կարաք է էղե: Քընացինք ախպըրին քովի մարաքը, հացը բրթեցինք ու բաշլայեցինք ճըմուռ էնելը: Ճըմուռ էրանք պրծանք, Վահանը փանչեն զարկեց, ճմուռը տարավ բերանը, էսթուն ծամեց, էնթուն ծամեց, աշեց օր ուտելու բան չէ: Մենքա փորցեցինք ու թողինք: Վահանը չուզեց, օր ճմուռը թափենք, ըսավ՝ կեցիք, ես էրթամ Լուլուկենց Օսկան աղամուն կանչեմ, թող քա ուտե: Կանչեց: Ճըմուռն էնոր տվինք, քընացինք: Էքսի օրը իմացանք, օր Օսկան աղամին ճմուռը կերել, վրեն էնքան ջուր է խըմել, օր քիչ է մնացե գիշերը մեռնի: Խապարն օր տղոցը անգաճն ընկավ, Վանոն ըսավ.

- Յաման գիտի, չըլլի թե դուս ըսեք, չունքի աղամին օր մեռնի, մեզի կը բռնեն,- ընդհանուրիս զգուշացրեց Վանոն, ինքն էր, ախըր, էնոր քընացե կանչե:

Մե օրմա Վանոյի Նախշուն քուրոչը հետ քընացինք ղմու: Վանոն թե՝ եսե քուքամ: Մենք չէինք ուզե, թե քուքա քըթերես կը փերե, մեզի խայտառակ կենե: Չէ, մեզի անգաճ չերավ. սև մաշկա շունն առավ ու ընկավ արտերը: Մենք ղմի կը ժողվենք, էնիկ իրեն համար ավճուքեն կենե, շունը կը ցրգե լորերուն էտտին, լորերը կը թըռչին: Էտ օրնե էտման արտերը կոխկըռտեց ու էկանք տուն:

Մե օրմե խորուրթ էրինք, օր էրթանք ժամին դուռը կրակ վառենք: Հըմը մեծերը մեզի կրակ չտվին: Վահանը Համասին ըսավ.

- Համաս, արի կրակը դիր ջեբըդ, էրթանք ժամին քով: Համաս, դու Համա՜ս, կըրակը թրեց ջեբը ու, դիորի ժամին հասնիլը, ջեբը վառավ, ճըվըրթին ընկավ: Էտ վախտը մեզի հետ խաղցող Իշխանին հերը պատայավ: Վանոն գլոխն առավ փախավ տուն: Քիչըմ էտև խապարն էկավ, թե խեղճ Համասին փորը կլոր վառել է: Մենք էտ դեպքից հետո լավ վախեցել էինք. այվընուս մե շափաթըմ տներեն դուս չեկանք: Վանոյի էրած օյինները վե՞վ գիտե: Տնաշենը պզտըկուց այտնի էր. հըմը շատ չար էր: Օր չէր ըլլի, օր էնիկ ջրվորներուն հոքեստնուն հետ չը խաղար: Ջրից դառցող ախչըկնում լիքը վեդռեսնուն մեջ հող կը լըլեր, օր էնոնք գենա դառնային ախպուրը: Նեղենային կը ու չէին նեղենա էնորեն:

Մեզի հետ էն վախտը բազի-բազի խաղալու քուքար մեր գեղի քուրթ չորնին ախչիկը՝ Ջեյթոն: Վանոն էտոր հոքուն հետ շատ կը խաղար: Միամիտ վախտը էտոր չորս բոլորը ճիզ կը քաշեր: Ջեյթոնը կուլար ու ճզեն դուս չէր քա: Վանոն կը խընդար, էնիկ կուլար: Մեխքն օր կուտար, ուշուրեկ ճիզը կը քակեր:

(Այս հուշերը 1947 թվականի օգոստոսի 18-ին պատմեց գանձացի Շուշանիկ Աղանիկի Իգիթյանը, ծնված՝ 1872-ին: Շուշանիկը Գանձայում եղել է Վահան Տերյանի մանկության շրջանի ամենամտերիմ խաղընկերներից մեկը: Տե՛ս ԱԱ թիվ 47, էջ 1-7):

Մեսրոպ Անտոնյանի պատմածները

ՎԱՀԱՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Մե անքամըմ գարնան գլխուն աշակերտ վախտերս դասամիչոցին ես ու Վանոն, մեմա Պլիկենց Համոն քնացինք զավոդը (օղու գործարան Գանձայում) պտտելու: Շատ օր պտտանք, դասեն ուշացանք. էկանք օր դասարան է էղե: Դասարանին դռան արեցեն աշեցինք, օր վաժապետը դաս կը պարապի: Դուռը մե քիչըմ բացինք, վաժապետը նես կանչեց, ըսավ.

- Վանո՛, դու քընա նստե տեղըդ, իսկ մեզիա թե՝ չոքեցեք պոլին: Մենք չոքանք: Վանոն ետ դառցավ, էկավ մեզի հետ չոքավ պոլին: Վաժապետն էլի ըսավ.

- Վանո, դու մի չոքի, քընը տեղըդ նստե:

- Չէ,- ըսավ Վանոն,- թե մեղավոր ենք, իրեքսա մեղավոր ենք, պիտի չոքինք, թե օր մեղավոր չենք, էնոնքա թող նստին, եսա նստիմ:

Էտ բանի համար վաժապետն ու Վանոն շատ դավա էրին իրար հետ: Վաժապետի դասն օր վերչացավ, ըսավ՝ Լավ, էլեք, քընացեք տեղերդ: Վանոն էտման տղա էր, միշտ խեղճերուն տղոցը հետ կը խաղար:

Իմ հերը Դիլիսկու Գանձա գաղթած մարթ էր: Ինձի էտոր համար վաժատուն չէին ընթունել: Վանոն իմ ընկերքս ըլլելով, հորը միչոցով ինձի ընթունել տվեց վաժատուն, և մենք էղանք դասընկերներ ու իրար հետ սորվանք թախի եկրորթ դասարանը: Էտև ինձի էլի դուս էրան, չունքի մենք վրաբնակիչ էինք:

ՄԵ ՊՈՒԼԻԿԸ ՉԻ ՊԱՑԻ

Վանոն շատ հրզ կեներ ծիքծիքնուն ու ղազի պուլիկնուն հետ խաղալ: Օրվան մեկը մարը կըսե թե, հըլը քընե մեմ մեր ղազի պուլիկնուն այե, օր աքիստը չուտե: Էկավ ինձի առավ, էլանք քընացինք պուլիկնուն քովը: Էտ վախտը պուլիկներն օր մտան ախպըրին ջրին մեչը, Վանոն վախեցավ, ըսավ.

- Մեսրոպ, արի պուլկընին պառկեսնենք, օր ջուրը չմտնին, չխեխտըվին: Բընեցինք բիտտունին ճտերը օլըրեցինք, թըրինք ղանդընուն տակը, պառկեցուցինք ջըրին քանարը, հըմը մորը բռնել չկրցանք: Քիչըմ էտև քընացինք Վանոյին մորը քովը, ըսինք.

- Իրիսկին ապլա, բիրատի ճուճունին պաջան, մե ճուճուն չպաջավ: Իրիսկին ապլան օր իմացավ, հելթըփավ, դուս էկավ, վազզեց ախպըրին ջուրն օր ի՞նչ տեսնի. Պուլիկնին բիտտուն սատկեցուցուցել ենք, մեննակ մերն է մնացե: Իր ծընկվընուն զայնելով ու մեր էտտեստանը ընկնելով, ըսավ. «Ձունը քա գլխուս, էս ի՞նչ եք էրե»: Դե մենք էլ փախանք, օր ծեծ չուտենք:

ՎԱՆՈՆ ԱՎՃԻ ԷՐ

Վանոն ավճուբեն կեներ. շատ յամանն էր: Կերթայինք լողանալու, էնիկ վրեն չամուռ կը քսեր, մտնիր կը ջուրը, օր օրտըկնին չփախչին: Պատայիր կը օր պզտի օրտըկնին խափվեինկը ու բռնըվեին կը: Բռնած ձաքին օտքին թել կը կապեր: Էման կըլլիր օր բաց թողած էտ ձաքը մեկալ տարիե էլի մեր գեղը քուքար:

Վանոն ջրի մեչը խելառ-խոլոք բաներ շատ կեներ. տընեն տախտակ կը փերեր, ցըգեր կը ջուրը, ձիու պես հեզնիր կը վրեն: Ջուրն իրեն տանիր կը վար, ու ինքը շատ կուրախանար: Մե օրմա էլի տախտակով լողանալու վախտը գետի խոր տեղերն էր հասսե, ջուրը քշեց, ինքնա շրջըվեց, տախտըկին վրայեն ընկավ ու քիչ մնաց թե խեխտըվիր: Լողեն կելլեինք, վազզեինք կը Ավճալու հոտած գելը՝ օրտըկի հավկիթ գողնալու: Էտ հավկըթները տանեինք կը տուն, մերերես եղ ու յամաղ կառնեինք, տա-

նեինք կը բոստանը, էնտեղ, դաշտում ձվածեղ կեփեինք, ուրախ-ուրախ կուտեինք:

ԷՇ ՀԵՁՆՈՂՆԵՐԸ

Իրիկվընկտիքը, հորթերը քալուն մահալը (ժամանակ) ընկերներով կերթայինք էշ հեզնելու: Ամմենըս մե էշըմ կը բռնեինք, հեզնեինկը ու քշեինք կը գեղին մեչ: Պատայիր կը, օր մեր իշանը տանեինք կը գոմը, պայեինք կը, օր սապախտան հեզնեինք, էրթայինք դիզը (դաշտը) քիլիլի: Շատա թե իշանուն տիրվընտանքը ճինլամիշ կըլլեին. մեր շատ պետքն էր:

ՔԱՐ ԳԼԻ ՏԱԼԸ և ԽԱՍՅԱԹԸ

Վանոն ու ես շատ հըզ կենեինք սարեն քար գլի տալ: Կերթայինք Քոչուտը, քարեր կը հանեինք ու գլի կուտայինք ցած:

Վանոյի խասյըթին մեչը չավվնելու բանը էղունգները կըռծըռթելն էր, մեմա ձուք ծամելը: Տնաշենի տղեն խաղին վախտը կը ծամեր, կռվի վախտը կը ծամեր: Ինքը խոլոք էր, խասյաթը լավ էր: Բիտտունըս էնոր լսեինք կը: Հըմը մե քիչըմ էրես առած էր, չունքի տերտերի տղա էր: Չար էր. մե տեղըմ մնալ չէր կըրնա:

(Այս հուշերը 1947 թվականի օգոստոսի 17-ին պատմեց գանձացի Մեսրոպ Աղանիկի Անտոնյանը՝ ծնված 1884թվականին, չքավորի ընտանիքում: Մեսրոպը Վահան Տերյանի մանկության մտերիմ ընկերն էր, ում հետ ապագա բանաստեղծը բաժանել է մանկական ուրախություններն ու տխրությունները: Վահանը նրա ջերմ պաշտպանն է եղել միշտ):

ՄԻՍԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ

Մեր գեղի քուրթ չոբան Չաչոյի ախչկա անունը Զեյթոն էր. շատ ըռընտլիկ ախչիկ էր էնիկ, մեզի պես պըզտըլիկ-մըզտըլիկ: Վահանը էնոր էնքան գուզեր, օր խելքը գլխեն կերթար: Բազի վախտա մեզի համոզեր կը, թը՝ Զեյթոնին էլ հետներս խաղալու կանչենք: Սատանուություններ կը բանեսներ, տարբեր-տարբեր պատմուություններ կը հորիներ, օր մենք էրթայինք Զեյթոնին կանչեինք: Վահանը գիտեր թե, մենք էտոնք չէինք հասկընա: Ու երբ կերթայինք կանչեինք կը, Վահանի քեֆին էլ քեֆ չէր հասնի: Զեյթոնը, ըշտը, Վահանին սրտին դուր քուքար:

ԹԹՈՒ ԹԱՆԸ

Վահանենց տունն օր կըլլեինք, իրիսկինը մեզի թթու մածուն կուտար. ցորեն հացը մեջը կը բրթեինք, կուտեինք: Հըմը Վահանը թթու բան հըզ չէր էնե: Միշտա կըսեր.- Մարի, քու թթու մածունդ չի ուտվի: Ես պիտի էրթամ Պողոս տացույենց (հորեղբոր)

տունը, օր էնոնց համով թթու թանը ուտեմ: Մեր տունն օր կերթայինք, էնիկ մորես թան գուզեր: Մերս կելլեր թանը կը փերեր, գարի հացը կը բրթեինք ու կուտեինք: Վահանը ուտելու մեչ էլ շատ կոկիկ էր ու նուրփ:

ՁԿՆՈՐՍՈՒԹՅՈՒՆ

Մե օրըմ Վահանը մեզի առավ տարավ բերթի տակը, ըսավ.

- Տղեք, արիք էստեղ հավուզըմ շինենք, քարերուն տակը ձուկ բռնենք:

Հավուզը շինեցինք, պրծանք, մտանք ջուրը, բաշլայեցինք պզտի-պզտի ձկներ բռնել ու էտ հավուզին մեչ լըցնել: Ահաքին ժամանակ օր անցավ, էտ ձկները լավ խոշորցան: Մենք էնտից էտև արթըղ ըսկըսեցինք քալ, բռնել էտ ձկներից, օջաղ վառել, խորովել ու ուտել:

ՍԱՀՆԱԿԱԽԱՂ

Ձմեռն օր քուքար, խըզակ կը խաղայինք: Վահանն էս խաղեն շատ հըզ կեներ: Էնոր հետ մեր խըզկըները կը շալկեինք ու կելլեինք գեղին դեմը, Շապկանենց ջաղչին վերըթին, նըստեինք կը ու իրար էտև դարիվար կը ղըժժայինք: Էտ խըզկի օրերին մեր ընկեր Համբարը խըզկով ընկավ Շապկանենց ջաղչին բանդին ջուրը: Ձըմեռ, սառցակալած ջուր, իրար վրա հաքած հաստ շորեր... Ես ու Վանոն օքնեցինք, Համբարին հանեցինք ջրից ու շատ արագ հասցուցինք իրանց տունը: Խեղճը դողար կը, լավ սառել էր. օքնեցինք նաև շորերը փոխելուն: Հետո, եփ նրանց տնից դուս էլանք, Վահանը, տեսակըմ փոշման քալով, ափսոսանք հայտնեց Համբարին օքնելու համար: Իսկ իմ զարմացական հայացքին պատասխանեց, թե.

- Նոր տարուն մե քանիմ օր է մնացե, ափսոս չէ՞ր. Համբարը, ըշտը, օտքով-գըլխով շատ բնական Ձմեռ պապ կըլլիր:

ՎԱՀԱՆԻ ՄԱԾՆՈՏ ԿԱՏՈՒՆ

Հեչ մտես չի էլլե. եփ օր Վահանը կատվին ձաքը տարավ կոխեց իրենց մածնին փառչը, մածնոտեց ու թըրեց իրեն շինած տունտուլիկին մեչը, դուռնա վեր շարեց, օր դուս չելլե: Ինչի՞ էտման բան էրավ, չիտեինք պատճառը: Զաթի Վահանը խընդրլու բաներ շատ կը մոգոներ, ջարթեինք կը խընդրլեն: Էտև բացատրեց, թե՝ տեսնինք մարը ճանչե՞ կը իր ձաքին, ճանչելեն էտևա ի՞նչ տի էնե, եփ ձաքին մոտենալ չը կըրնա: Վահանին էտման բաները, ըշտը, շատ կը հետաքըրքըրեին:

ՎԱՀԱՆԻ ԹԱՄՔԱԾ ՇՈՒՆԸ

Մե հեղմա էս Վահանը էլավ, իյըրը փերեց, թրես իրենց շան վրեն, կապկըպեց ու

նստավ վրեն, բաշլայեց քշել: Խեղճ շունը, չըկրնալով տանիլ Վահանի ծանրութունը, պառկավ-փռվեց գետնին ու վընկըստաց՝ գլուխը էս ու էն կողմ նետելով: Վահանը շանը ծեծեց: Շուննա հերսեն շիտակ Վահանի վրեն «հա՛ֆ» էրավ, թեը կծեց ու, իյաբը վրեն, փախավ տուն: Էտև Արամը վրան ջղայնացել էր:

ՊԻՊԻԼՈՎ ԽԱՂԸ

Վահանը պզտիկ վախտը շատ կը սիրեր պիպիլներով խաղալ: Գույնավոր պիպիլնուն համար խելքը իրանը չէր. ամմեն մե ըռանգ պիպիլը ջոկ-ջոկ կը շարեր ու կը խաղար: Մենք էտ պիպիլների համար առանձին տունտուլիկ կը շինեինք: Մեկը մեկին պիպիլ փոխ կուտար ու եվ օր փոխ առածներըս չէինք տա, մեզի սիդ կենեին: Սիդյան Վահանը կըլլիր, չունքի մեզնեն մեծ էր ու զոռ կուտար, հա՜:

(Այս հիշողությունները պատմեց Միսակ Պողոսի Գրիգորյանը՝ Վահան Տերյանի հորեղբոր թոռը, 1947-ի օգոստոսի 18-ին: Բանասացը ծնվել է 1887 թվականին: Վերջինը քարտաշ - որմնդիր է աշխատում գյուղում (Տե՛ս ԱԱ թիվ 74, էջ 15-17):

Սեղրակ Հախվերդյանի պատմածները

Ես քարերի տկեն ձուկ բռնել շատ կը սիրեյի: Մեր Լուսախպըրին քոչերուն մեչը շատ վախտ տեսնեյի կը Վահանին գիր գրելիս: Լավ միտքըս չէ, տասնըմե՞կ թվին էր, թե՞ տասվերկու, Վահան Տերյանը մեծ-մեծ գրքերը թևին տակը թըրած, կերթար Գնդլիկ թըվին ծերը, էնտեղ նստիր կը, կարթար ու գրեր կը: Մե օրըմ ես պատայա Վահանին էլի էտտեղ, տեսսա օր գնձերեն սեղան է կառուցե, իր գրքերը դարզել է վրեն, կաշխատի կը: Ինձի օր տեսսավ, քովը կանչեց ու ըսավ.

- Սեղրակ, դու գրել-կարթալ գիտե՞ս:

Ըսի՝ հա, գիտեմ: Մե գիրքըմ բացեց, ըսավ՝ կարթա: Ես առա էտ գիրքն ու բաշլայեցի կարթալը: Վահանը կարթալըս հավնավ: Գովելեն էտևա ըսավ, օր կարթըլեն ետ չը կայնիմ, օր ժամանակին եսա կըրնընամ մեծ-մեծ գրքեր գրեմ:

- Ա՛յ,- ըսավ Վահանը ինձ համոզող տոնով,- էս մեծ գրքերը մեզի պես մարդիկ են գրե:

Էրկօրըմ էտև մեր Լուլուկյան Աղասի վարժապետին հետ մեր երորթ դասարանի աշակերտներս քընացինք Քոռօղլու բերթը՝ պտտելու: Տեսսանք օր ի՞նչ, Վահան Տերյանը նստել է էնտեղ մե կարմիր քարիմ տակ, գիր կը գրե: Մեր վարժապետը բարևեց, բարևն առավ, գրքերն ու տետրակները թոփ էրավ իրան սունքին մեչ, բաշլայեց մեզի հետ յարանութեն էնելը: Էտ վախտը մեզի մե քանիմ թազա բան էլ ըսավ աշխըրքին վրեն ու ետ դառցանք, էկանք տուն:

Վահանը արթեն օտքով-գլխով թաղվել էր գրքերուն մեչ: Գյուղացիները էն ժա-

մանակ էլ առանձին սիրով ու հարգանքով էին նայում նրան:

(1947-ի օգոստոսի 18-ին պատմեց 1892-ին ծնված Սեդրակ Կարապետի Հախվերդյանը, ով 1914-ին Լեհաստանի ռազմաճակատում մասնակցել է Գերմանիայի դեմ պատերազմին, կուրացել գերմանացիների կողմից կիրառած թունավոր գազից: Դրանից նա ընկղմվել է անփարատ վշտի մեջ, երգեր էր հորինում: (Տե՛ս ԱԱ թիվ 74, էջ 18-19):

ՄԱՆՐ ԴՐՎԱԳՆԵՐ ՄԵԾ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԿՅԱՆՔԻՑ

Ծերունիները պատմում են, թե Վահանը հոր կրոնի դասին մի անգամ չարություն անելիս, նրա կողմից քոթակվել է:

Վարդ Ղազարյանը պատմում է, որ մի անգամ Վահանը մեկի հավի ճուտիկները սպանեց, տարավ թաղեց, որ տերը չիմանար:

Վկայում են, թե Վահանը ճըղրզ (անհաշտ, իրասածի) էր, ընկերների հետ յոլա չէր գնում: Վեգ խաղալիս, հիշում է Վարդ Ղազարյանը, այնքան ճըղրզութեն էր անում, որ տղաները հերսից բռնում մի լավ քոթակ էին տալիս:

Երբ Վահանը կարգին երիտասարդ էր արդեն ու գալիս էր հայրենի գյուղը, ամեն մի հասարակ մարդու հետ բարևում, զրույց էր անում: Առանձնահատուկ սիրով էր հացկերույթի նստում իրենց մշակների հետ: Պատմում են, օրինակ, թանապուր ուտելիս, գդալով զանազան կատակներ էր անում մշակների հետ, որոնք միևնույն բացսրտությամբ էին վերաբերվում նրան:

Ամառանոց եկած օրերին զուգադիպում է այնպես, որ ինչ-որ մի ռուս «նաչալնիկ» է գալիս Գանձա և, տեղի-անտեղի, սկսում է բարկանալ գյուղացիների վրա: Ականատես լինելով նրա ջղային նոպաներին՝ Տերյանը ծաղրի է առել այդ նաչալնիկին՝ Պահ, պահ, պահ, տեսե՞ք, տեսե՞ք, բացականչություններ անելով: Ասում են՝ նաչալնիկը թարս նայել է նրա վրա և մրթմրթալով հեռացել (Տե՛ս ԱԱ թիվ 74, էջ 19-21):

Հավելված 3

Անուշ ապլայի երգերը

Անուշ Մաթևոսի Բդոյանը ծնվել է Ջիգրաշենում, 1880 թվականին: Ամուսնացել-հարսնացել է Փոքր Խանչալլիում: Նրա ամուսինը Մեսրոպ Բդոյանն էր, ով կռվեց և սպանվեց Դիլիֆի լեռնանցքում, թուրքական խուժանի ձեռքով, 1918-ի մայիսյան ճակատամարտին մասնակցելիս: Տեգրը՝ Խնկոն, սպանվեց 1919-ի հունվարին Փոքր Խանչալլիում վերաբնակություն հաստատած թուրքերի կողմից: Երկու տղաները՝ Գրիգորը և Զավիկը, նահատակվեցին 1941-1942-ի ծանր տարիներին: Անուշ ապլան խորովվեց իր վշտերի մեջ և դրանք արտացոլեց ցավից ու մորմոքից ծնված իր բանաստեղծություններում: Իր հորից Անուշը ժառանգել էր բանաստեղծելու անուրանալի ձիրք ու ընդունակություն: Կյանքի ծանր պայմանները և Հայ եկեղեցու հանդեպ մաքրակրոն իր հավատքը ելք ու կերպարանք էին առնում ոտանավորներ հորինելու կարողության մեջ: Անգրագետ էր: Հորինածները անգիր էր հիշում, արտասանում ու մորմոքուն լալիս էր առաջացած տարիքում: Նրան ցավ պատճառելու չափ շատ էր մտահոգել Չամդուրայում եկեղեցու քանդելը և առհասարակ Աստվածանարգումի աթեիստական անասնականությունը: Լինելով անպաշտոն եկեղեցական գործիչ՝ Անուշ ապլան սխալների համար դիտողություններ էր անում կիսագրագետ քահանաներին ու տիրացուներին: Նա իրեն համարում էր Եկեղեցու և եկեղեցիների պաշտպան: Շատ-շատ հատվածներ անգիր գիտեր Նարեկացուց, Աստվածաշնչից:

Ահա այսպիսին էր Անուշ ապլա Բդոյանը, ում անձի հանդեպ սիրուց ու հարգանքից էլ առավել, խոր ակնածանք եմ տածել միշտ: Գրի առածս չնչին է 1953-ին իր հետ գերեզման տարածի համեմատ: Գրառել եմ նաև որոշ առակներ, երգեր:

Սիրականին մոտ գնալը դիրին է,
Բայց զատվիլը՝ շատ դժվար է, սիրելիս.
Սեր քաշողին խելքն ու միտքը խորին է,
Մի ծածկված գաղափար է, սիրելիս:

Կուլամ կը լալու նման,
Դարդ ունիմ սարի նման.
Կյանքիս մեչ ղազալն է ընկե,
Անտեր բաղչեքի նման:

ԵՍ ԱՆՈՒՇՆ ԵՄ

Ես Անուշն եմ, անցուցել եմ սև անբախտ օրեր,
Հայրենիքե չեմ տեսսել խնդում ու արև.
Չեմ ունեցե հայր ու մայր, մի մտերիմ ախպեր,
Անբախտ աշխարը թափեց թևերրս:

Վերչի ժամանակիս գլխատերրս առավ,
Առյուծի պես դեմքը խոշոր՝ տղեքս էլ տարավ.
Ապերախտ աշխարը թափեց թևերս:

Ղարաբախ վիճակիս ծնվեցա մորես,
Խնդում, ուրախութեն չունիմ աշխարից,
Ի՞նչ բանով գանգատ տամ ես իմ օրեն,
Ասղրս ալ տեսնում եմ խավարի նման:
Ես Անուշն եմ, Մաթևոսեն եմ ծնվե,
Անգին քարով, մատնու ակով եմ շինվե,
Վառված սրտով ոտանավոր եմ կապե,
Ապերախտ աշխարը թափեց թևերս:

Մաթևոս օր կրսեմ, մե հայտնի մարթ էր,
Բանաստեղծությունն ամենից բարձր էր.
Անբախտ հայր ըլլելով՝ որթի չունեցավ,
Այդ պատճառով թանկ անունն էլ կորավ:

Ես Անուշն եմ, Աստրծու հետ ուխտ ու պայման էրել եմ,
Բավականի կյանքիս օպպուզ առել եմ.
Տված ամանաթը անքին քարով պայել եմ,
Նպատակի հասնելույա միտք ունիմ:

Նպատակրս էն է՝ ժամերը շինվին,
Տասվերկու աշկերտ մեչը կը կայնի.
Իմ դիակրս ժամի օրթան կը թրվի.
Գուբիս ճերմակ՝ վրան սևով կը ներկեն,
Ալ խաչերով փերեն ըռունդ կը նախշեն:
Ջանրս ու ջիգրրներրս մոմեր կը վառեն,
Ինձի տանին պատարաքով կը թաղեն.

Սերոբբե, Քերոբբե նախավկա են,
Հոգիս կառնեն Հայր Աստըծու կը տանեն,
Չարե, վտանգներե ազատ կը պայեն,
Այն ժամանակ ուղուր օլսուն մեռնելը:
Նորից կը հասկըսնեմ ձեզի այդ բանը.
Գուբիս օր կը տանիք հախ գերեզմանը,
Դիակըս կը հանեք, հողին փաթաթեք.
Ինձեն իշատակ կը մնա ժամին,
Հոգիս շատ ուրախ է մեմա այդ բանին:
Ես Անուշն եմ, տեղական եմ բոլորից.
Անհամբեր կըսպասեմ ես այդ օրին:
Հազար ինը հարուր եռեսուն թվին,
Միչամըտան եկեղեցյա սիամը քակեն.
Ըսին ու կատարեցին այդ բանը,
Փերին ու քակեցին ժամերուն դուռը:
Խղճալի կանայքը քընացին ժամը,
Քընացին ու տեսսան, շըվար մնացին,
Արտասվելով աղոթք էրին ու լացին,
Վրա գլխու ետ դառցան ու քընացին.
Մեծ կընկտիքը կայնան խորուրթ էրեցին,
Եկեղեցնա մասին ըսին ու լացին:
Մեր ժամը փակվելը մեզ մեծ մայ է,
Այսուհետև մեր մնալը շատ վատ է.
Մեծ կընկտիքը կայնան խորուրթ էրեցին,
Եկեղեցնա մասին ըսին ու լացին,
Կոնցոմոլեն էկան, կայնան, խընդացին,
Մեծ կընկտիքը բերընները բացին,
Անեցք կարթացին,
Յոթը խորուրթ եկեղեցնա խընթրեցին,
Ձեռքերը առ Աստվածնա բընեցին:
Թող թեզ տեսնի վերատեսիլ Աստվածը,
Թող ազատե երկարամիտ Աստվածը:
Մարթիք կան օր ըսին սիրտըդ է ժամը,
Բամբասանքի համար դուք կերթաք ժամը.
Այդ խոսքը խոսելով, կրոնը կորավ,
Կրոնը կորելով՝ սրտերըս վառավ:
Օրինակի համար մեզի՝ ղալայչին.

Առանց աշխատանքի չի սրփե թասը,
Այդ օրինակն է մեր ժամ էրթալը,
Ընթունելի էնե մեր աղոթանքը.
Օտքերրս ու ձեռքերրս մըսելու բանը:

Հիշտեկը քուքա, Կիրակին հետը,
Մութ տեղը մնաց մերա Հախ տեղը.
Սուրբ Աստվածն ու սուրբ Եսթերը մեչը,
Լույսու վարդն ու սուրբ Կարապետը մեչը:
Կիրակի առավոտ յուղափեր կանայք
Ձենը չը լսելով դառցանք կըռապաշտ.
Կրոններս կորավ, սրտերս վառավ,
Թող թեզ տեսնի վերատեսիչ Աստվածը,
Թող լուս էնե երկարամիտ Աստվածը:
Ես Անուշն եմ, տեղական եմ բոլորից,
Անհամբեր կըսպասեմ այդ օրին:

Հավելված 4

Միխայել Հովսեփյանի ստեղծագործություններից

Կազմողի կողմից վերջին՝ 4-րդ հավելվածի ընդգրկումը կարևոր մեկ այլ նպատակ էլ է հետապնդում. չընդհատվող, մշտատևորեն կենդանի կապի մեջ տեսնել ժամանակների ու սերունդների հոգևոր հաղորդակցումը, ժամանակների հոլովույթի անընդհատականությունը հավիտենական ընթացք որպես առ լույսը Աստվածային:

Շուրջ երեսուն տարվա վաղեմության հուշը անաղմուկ վերաթարմացնում է հիշողությանս մեջ իմ առաջին հանդիպումը բանաստեղծ Միքայել Հովսեփյանի հետ: Ներկայանում է որպես փոկացի բանաստեղծ, որն իմ հայրենի Գանձայից 6-7 կմ հեռավորության վրա է գտնվում և փռված է Փարվանա գեղատեսիլ լճի ափին: Թերևս ինձ համար էլ, անակնկալորեն անբացատրելի, տաք, ավելին՝ հրաշունչ մի ալիք ողողում է ներսս. միջահասակ է, շարժմունքը, խոսելաձևը զուսպ են, խոհուն և շիտակ հայացք ունի: Հրատարակչության իմ սենյակում ենք նստած, երկարորեն զրուցում ենք մեր հող ու ջրից, և ես ինքնաբերաբար վերցնում եմ նրա ձեռքից բանաստեղծությունների բարակ տետրն ու սկսում եմ թերթել: Մեջտեղներից սկսում եմ կարդալ: Հիմա դժվարանում եմ ասել, թե ինչքան ժամանակ եմ կլանված այդպես կարդացել: Հետո երկուսով եկանք մեր տուն, շոգ ամառ էր, փոքր-ինչ թարմացանք, նույնիսկ պառկեցինք-հանգստացանք, ու դարձյալ մեր զրույցը շարունակվեց: Տարվա գրահրատարակչական պլանավորումը արդեն վաղուց եղել էր, Միքայելի բանաստեղծությունները առանձին գրքով հնարավոր չէր տպագրել, ուստի մենք ճիշտ գտանք երկու այլ բանաստեղծների գործերի հետ ալմանախի տեսքով լույս աշխարհ բերել նրա՝ իմ կարծիքով զուլալորեն մաքրահնչուն երախայրիքները: (Ի դեպ, հենց այդ տետրից բարեբախտաբար ինձ մոտ էին մնացել Միշայի պոետական ձեռագրով գրված մի քանի բանաստեղծություն, որոնք էլ ես նպատակահարմար գտա զետեղել ժողովրդի հոգուն ու սրտին հարազատ սույն հրաշալի գրքում՝ ընդգծելով, ի ցույց հանելով պարզ, հիմնավոր այն համոզումը, որ ճշմարիտ բանաստեղծությունը միշտ էլ ժողովրդական հենք ու հանգրվան ունի):

Մեր առաջին հանդիպումից թերևս երկու տարի անց իմ հայրենի Գանձայում էի, Միշան ինչ-որ կերպ տեղեկացել էր այդ մասին, մանկությանս ընկերներից Վաղինակ Թանգամյան հետ (Վ. Տերյանի տուն-թանգարանի տնօրենը) եկան, գտան ինձ: Հետո մենք Սաղամո լճի ափին կերուխում կազմակերպեցինք, անմոռանալի օր անցկացրինք, որը, ցավոք, մեզ նաև ստվերող ամոթանքի չափաբաժին թողեց:

Երկու մեքենայով Սաղամո գյումրեցիներ էին եկել բաղի որսի, հրավիրեցինք հացկերույթի, և թեպետ նրանք, խորապես զգացված, հրաժարվեցին, ես, սակայն, փոքր-ինչ համառեցի, նստեցրի սեղան: Հետո ինչ-որ կերպ անհամաձայնություն ու սուր լեզվակռիվ սկսվեց, որը նաև աստիճանաբար խորանալու կերպարանք առավ: Մերոնք խմած էին, և իմ ջանադիր սաստումները բանի տեղ չանցան: Երկուստեք խճճվել էին անցյալից եկող «հաշիվների» մեջ: Ստիպված եղա ձայնս բարձրացնել և ուժով լռեցնել մերոնց, քանի որ գյումրեցիները, գրողը տանի, կատարելապես ճիշտ էին, իսկ մերոնք՝ կատարելապես սխալ: Մենք, ախր, նաև մեր տանն էինք, ինչը մեզ որևէ առումով, երբևիցե պարզերես չէր դարձնի: Ինձ անկեղծորեն շատ զարմացրել էր հատկապես Միշայի ակտիվությունը. ես կարծում էի, թե գոնե նա բաժանող-խաղաղեցնող պետք է լիներ:

Տարիները գլխիվայր թավալումներով անցան, և ես կորցրի փոկացի Միշա-Միքայել բանաստեղծի հետքը, թեպետ միշտ հիշել եմ նրան և նախանձախնդրորեն ցանկացել եմ իմանալ նրա ստեղծագործական ընթացքի ու հաջողությունների մասին: Մի քանի տարի առաջ դիպվածով հանդիպեցի նրա հարազատներից մեկին, իմացա նրա կյանքից մանրամասներ, և ափսոսանքի պահեր ապրեցի բնությունից օժտված հայ բանաստեղծի համար: Նամակ էր ուղարկել ինձ Ռուսաստանի հյուսիսային մասերում գտնվող հեռավոր Սուրգուտ քաղաքից: Պանդխտական՝ կյանքի, գոյության ամենօրյա խնդիրներ էր լուծում բանաստեղծը: Մեկ նախադասություն մտապահվել է հատկապես. «Որպես բանաստեղծ ես այլևս չկամ, ես մեռա»: Ինձ մխիթարող բաներ էլ էր գրել, որ ինքը ստեղծագործում է այնուամենայնիվ: Հետաքրքրվել էր Երևանում գրքի հրատարակման ծախքերով: Այսպես, ահա: Կարծում եմ՝ փոկացի Միքայելի ներկայացվող ստեղծագործությունները՝ քնքշորեն քնարական՝ հարազատ են սույն ժողովածուի ոգուն, ծրարում են մեր ժողովրդի բնապաշտական խոր ակունքները, լուսաժպիտ հայացքը, կենդանի շունչն ու մաքրամաքուր սպասումները, կենսասիրությունն ու խոր հավատը ապագայի հանդեպ: Բայց առավել կարևորը, որ առավել է զարմացնում ինձ, բանաստեղծի ենթագիտակցականի շերտերում ծփացող նախնական ակունքային ինֆորմացիան է, մեր թանձրամշուշ անցյալի անէացող հուշը, որ բանաստեղծական կատարյալ ձևերի մեջ, որպես նրբազգայուն կռահողականություն, ընձայաբերվում է ընթերցողին:

Ռաֆայել Ղարիբյան

11.08.2013թ.

ԱՂՋԻԿ

(Ժողովրդական)

Զուրը տարավ: Զուրը գնաց:
Տակը՝ ոսկի ավազ մնաց:
Հո՜յ, մայրիկ:

Սերը կաթ էր: Մեր սիրտը՝ փարչ:
Կերանք օրը՝ կարմիր բաղարջ:
Հո՜յ, աղջիկ:

Մազե կամուրջ: Մեր միջև՝ սուր:
Աղջիկ, անուշ մի պաչիկ տո՛ւր,
Հո՜յ, ծաղիկ:

Կարմիր հավկիթ ընկավ գետին:
Իմ եղունգին փայլ է ձեթի...
Հո՜յ, Զատիկ:

ՏՈՆԻ ՀՐԱՎԵՐ

Աչքերս՝ զույգ ցողեր, իջան:
Ծափ տուր, ծաղիկ եղեգնածուխ:
Ցայնեղ արյունս ձեզ ընծա,
Երփնաջրեր նվագածու:

Ով որ ունի սրինգ ու դափ,
Ալ է հագնում, կանաչ կապում...
Եկեք՝ ցնծուն լացով, ձեզ տամ
Սիրտս՝ բացդուռ աղավնատուն:

Վարդի վրա ու Բանի մեջ
Հոգիս լույս է ընթեռնելի:
Հո՜յ, եկեք ինձ, երեխաներ,
Ժամը ընկավ՝ էլ չեմ լինի:

ՏՈՆ Է ՀՈԳՈՒ ՈՒ ՄԱՐՄՆԻ

Ժպիտներդ՝ աղավնիներ,
Բույն են հյուսում իմ աչքերում:
Ոսկեսայլը իջնում է դեռ՝
Իբրև պարգև, իբրև ներում:

Ողբերգության բառերը հին
Դեռ ծխում են ջրի վրա:
«Ի՞նչ անուն տամ ես իմ գոյին»,
Հարցնում են ձյուն ու կրակ:

Քանի՜ անգամ կյանքը փորձեց
Դանակների բութ շեղբերով:
Բայց արյունս ճերմակ հորդեց
Սիրո, Գեղի նոր շերտերով:

Հե՜յ, ուխտավոր, անցնենք թեթև
Լույսի միջով ու Կարմիրի...
Ցավի համար չեկանք այստեղ:
Տոն է հոգու ու մարմնի:

ՎԵՐՋԻՆ ԸՆԾԱ

Աչքերս մոմեր էին ձեռքերիդ:
Իմ լույսն էր գլխիդ վերևը:
Պոկեցինք մեր մերկ մարմնից
Թզենու դեղնած տերևը:

Ինչո՞ւ են բաժանվում կես ճամփին:
Չգիտի, օ՜, ինքը Տերը:
Զարմանք են աստղերը գետափի:
Զարմանք են թափվող խոտերը:

Գնում ես: Մրսում են երգերս:
Ծաղիկ է լալիս մասրենին:
Թող հանգչեն վիրավոր ձեռքերս
Քո այդ մեղավոր վարսերին:

Լույս մնաց ու մոխիր թևերիս:
Գնա: Արցունքներն իզուր են...
Ի վերուստ տրված է երևի.
«Հեռվից կարոտեն ու սիրեն»:

ՆՎԱԳ ՆԱԻՐՅԱՆ ՔԱՐԻ

Ես քար չեմ: Այլ մի քարացած Ոգի:
Ես շունչ եմ, խորան, մագաղաթ, խաչքար:
Սափոր եմ՝ լեցուն ասքերով ոսկի:
Ես՝ ձեռն ի ծնոտ՝ ծերուկ բամբռահար:

Իմ քարե գինին Աստվածներն ըմպում,
Առավոտի պես ծավալվում են տաք...
Եվ իմ ծաղիկը՝ արմատն իմ խորքում,
Իմ Ծուռ Սիերի պատրանքն է ճերմակ:

Վերքերս՝ վարդեր: Բոց բերանիս շուրջ
Լուսնի եղջյուրը սրվակ է թույնի...
Հին սպիներս Լույս են արձակում:
Օտար մեղուն է բզզում իմ բույրից:

Դեռ պիտի բխեմ, դեռ բացեմ լեզուս:
Եվ կարմիր օղում սիրտս բուրվառեմ:
Վիշապաձուկ եմ տոչոր Երկնի տակ,
Դեռ պիտ բարբառեմ...

Ես սափոր եմ լի թույնով ու մեղրով:
Ծեծե՛ք կողերս, ժամանակ, քամի...
Թող Լույսի նման ժայթքի արյունս:
Օ՜, սուրբ է Ոգին իմ՝ Նաիրյան քարի:

ՕՐ ԱՐԵԳԱԿԱՆ

Օր արեգական, ես քո պատկերն եմ:
Եվ իմ արյունը գինիդ է հրկեզ:
Ահա իջնում են ոսկե մուրճերդ,
Ահա լույսերդ խմորում են մեզ:

Սիրո խարույկը իմ մատների մեջ՝
Նշան մատանի: Ինձ ո՞ւր է տանում:
Ես ինձ բացում եմ ողջ իրերի մեջ:
Հոսում եմ...Մի կերպ չեմ ամբողջանում:

Ինչպե՞ս Անհունիդ ձայնը թագակիր
Ամփոփեմ Բանի մեջ, բերեմ ընծա:
Լռության թասերդ իմ մեջ դատարկիր:
Մենակ եմ: Ուրիշ ձեն ու ձուն չկա:

Ա՜խ, քանի անգամ սրինգով արծաթ
Երփնաջրերիդ մոտենամ, ծնկեմ...
Օր, կրակիդ մեջ հեթանոս՝ մի վարդ
Սպասում է ինձ, եկա, որ գտնեմ:

Ա՜խ, իմ կյանքը կարճ՝ փետուր է ոսկյա
Վիրավոր հավքի, որ չվեց անլուր:
Օր, պաշտպան եղիր, աջս պտուղ տա:
Քայլերս են բոցեր դեպ դրախտի դուռ:

Դու սնիր որդուդ կաթով Հավատի:
Տար հիշատակաց հովիտները խաս:
Նոր օրն իմ արյան Կարմիր գույնն ունի:
Կմնամ այստեղ՝ մոխիրդ վրաս:

ՓԱԿ ԿՐԱԿ

Ես հոսում եմ առվի հունով,
Ուր ապրում է կապույտ քարը:
Երկինք, բաց է վերքի նման
Կակաչների վայրի պարը...

Ա՜խ, լույսերն են անիրական:
Մեր այցը՝ կարճ, անկրկնելի:
Ժամն է հոսում: Էլ ինձ համար
Չի շողշողում պտուղն երկրի:

Գաղտնիքների գավաթները
Տեղից տեղ են մեզ դատարկում:
Ամեն հայցվոր՝ աջը կրծքին,
Դեպի երկինք է նավարկում:

Պաղ դիմակներ: Ու ծուխ ծաղկի:
Ո՞ւր է դեմքը մեր բնածին...
Քիչ հեթանոս գինի լիներ
Ու մի խաչված Աստվածածին:

ԼՈՒՍԻՆ

Լուսին՝ գնչու ոսկեատամ:
Խածիր խնձորը գիշերվա:
Ինչո՞ւ եկա: Ինչո՞ւ գնամ՝
Գաղտնիքիդ աղն հոգուս վրա:

Տես աչքերս տաք բներն են
Նոյան ճերմակ զույգ աղավնու:
Մեկ օրով եմ այստեղ եկել...
Ա՜խ, պսակվիր ինձ հետ, գնչու:

Բայց մի պագ են քեզնից առել:
Չեմ հասցնի սիրել և ես...
Լուսին, լուսին, ա՜խ, ի՞նչ անեմ,
Ջրույց անենք գոնե...Այսպես...

ՕԳՈՍՏՈՍ

Ցուրտ են շնչում սարերս:
Ի՞նչ արցունք է այտերիդ:
Ինչպե՞ս ժողվեմ սերերս,
Օգոստոս, քո արտերից:

Ինչ կարմիր է երեկոն՝
Հուշերի պես հարբածի:
Ես խառնում եմ իմն ու քոն:
Ո՞ւր է ճամփան հետդարձի:

Քույր, ի՜նչ ջրեր մենք անցանք:
Սրբիր մութը աչքերիս:
Ես արցունքն եմ քո պայծառ,
Շշուկները աստղերիդ:

ՀՐԱՎԵՐ ԵՐԳՈՎ

Օրը ընկավ արցունքի պես:
Այտերս ի վար՝ ճերմակ առու:
Ջա՜ն, աղջիկներ, ջրերն ի վեր
Խարույկներ են բոցավառվում:

Ջա՛ն աղջիկներ, նետեք ի ծով
Հուռութքները ձեր հմայքի:
Թևերս օծեք ձիթայուղով
Եվ ինձ սուզեք խորքը ծայգի:

Ես գալիս եմ տեսքով ջրի:
Ո՞վ եմ: Ես ինձ չեմ ճանաչում:
Տաք վայրերում հրապույրի,
Հո՜յ, իմ մարմինն է կանաչում:

Հոգիս զատվում, Լույսի նման
Իջնում է վար՝ ջրի վրա:
Իսկ մարմինս՝ հողի ընծան,
Լուռ սուզվում է խորքը նրա:

Ջա՜ն, աղջիկներ, զուգսեր հագեք:
Կրծքիս շարեք ծաղիկ ու դաղձ:
Օրը ընկավ՝ Տիրոջ պարգև:
Հեռանում ենք ու չկա դարձ:

ԱՂՋԻԿ՝ ԿՐԱԿ ՈՒ ԿԱՅԾ

Աղջիկ, աչքերդ սև-սև սարյակներ,
Կտցեցին սիրտս: Կարմիր էր, ջա՜ն:
Աղջիկ, ծոցիդ մեջ զույգ խնձորնե՜ր,
Կծեցի, բերանս ոսկի է, ջա՜ն...

Աղջիկ, անձրևը քո կուժը լցրեց:
Սերս է թափվում շուրթերից, ջա՜ն...
Աղջիկ, ի՜նչ կլնի չիթ շորդ հանես...
Քամին կրակ ու կայծեր փռի, ջա՜ն...

ՁԱՎԱԽՔ

Եվ ձյունե դուռ՝ երկնից կախված:
Եվ ջրերի կանաչ կանչեր:
Ես գալիս եմ՝ թևերս բաց,
Բերանիս մեջ՝ ալ կակաչներ:

Ես բացում եմ դուռը: Դրա՜խտ:
Բլուրներն են ուսիս պառկում:
Ի՜նչ մաքուր են արցունք ու աղ:
Ամպրոպներն են կուրծքս պատռում:

Եվ փշոտ է արյունս հին:
Դեմքս են հյուսում խոտերը պերճ:
Այստեղ կապրեմ հազար տարի,
Աստղերի մոտ, երկնքի մեջ:

ԶՐՈՒՅՑ

(Մորս՝ «Ճերմակ աբայիս»)

- Մայրի՛կ, ասա, ինձ ո՞վ բերեց:
- Քեզ՝ Հազարան հավքը, որդիս:

Դեռ չէր քաղել մորդ հանդից
Նախշուն քամին, ա՜հ, էն տարին...
Դեռ չէր բերել հորդ արտից
Առվի ջուրը Աբուլ սարի:

Ձայնդ առա: Ձայն չէր, ջուր էր:
Կուժս լցվեց: Ջուրն էր ոսկի:
Ձայնդ առավ՝ հայրդ զարթնեց
Հատիկի մեջ ցորեն հասկի:

Հավքը թռավ: Քո սրտի տեղ
Արծաթ սրինգ էր դրել նա:
Վարդավառի թերթերի մեջ
Ես քեզ ինչպե՞ս անուն գտա:

Մենք հյուսեցինք կտուրը մեր
Թարմ խոտերից կանաչ-կարմիր...
Մենք՝ երկու հավք: Առանք թևեր,
Երբ քայլ արիր, երբ քայլ արիր...

ՁԻՎԱՆԻ

Ելավ, գնաց ինքն իրենից՝
Մախաղի մեջ աստղեր ու երգ:
Գյուղ ու բլուր իջան երկնից.
- Էդ ո՞ւր, որբուկ, բոբիկ ու մերկ:

Ջուր էր՝ կանչեց, դարձավ ծաղիկ:
Բախտը բնից թռած դուշ էր:
Խոտ էր՝ կանչեց, դարձավ խաղիկ:
Գնալը՝ շուտ, մնալն ուշ էր...

Տեսավ՝ քար էր: Կրակ էր հորդ:
Տեսավ՝ սով էր: Իր երգը՝ հաց:
Խնջույք արեց: Արքա ու ճորտ
Ճաշակեցին գինի ու լաց:

Սիրո, հուսո հանդերձ կարեց
Քանի սև-սուգ սիրավորի:
Չիմացավ էլ՝ ի՜նչ նախշ արեց
Աչքերի մեջ ուխտավորի:

Անցավ վարդի ցոլքի միջով՝
Սրինգի մեջ սիրտը դրած:
Սեր էր: Ծաղիկ: Ծարավ մի ծով:
Հոսեց սրտից սիրտ ու...մնա՛ց:

ՉԱՓԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ ԵՎ ՄԻԱՎՈՐՆԵՐ

Մարդկային հարևանական ամենօրյա հարաբերությունները, ինչպես և հասարակությունների, ժողովուրդների շփումներն ու պարզ փոխհարաբերությունները կանգնեցրել են նրանց չափումների, հետևաբար նաև չափերի առաջացման անհրաժեշտության առջև: Չափային համակարգերի, նաև ընդհանրական միավորների պահանջը պարտադիր է դարձել հատկապես ապրանքափոխանակության աճող ծավալներին զուգընթաց, որոնք նախնական վիճակում խիստ պայմանական և մոտավոր են եղել: Եվ այնուամենայնիվ, անհրաժեշտ մեկ վերապահում պարտավոր ենք անել. մարդը իր ֆենոմենալության մեջ, որպես համեմատող կենդանի, կրում է հաշվարկ ու հաշիվ անելու, գցել-բռնելու, չափ ու չվան դնելու հատկանիշ-որակը:

Չափագիտությունը (մետրոլոգիան), որպես օժանդակ մի գիտություն, զբաղված է հենց խոր անցյալում նախաժողովրդի, նաև հետագայում՝ ինքնուրույնացած ժողովուրդների կողմից օգտագործված ամենատարբեր չափերի (ժամանակաչափական միավոր, քանակություն, ծանրություն, երկարություն, ծավալ, տարողություն, մակերես ևն) առաջացման, գործածման և դրանց զարգացման առանձնահատկությունների ուսումնասիրությամբ: Այս գիտությունը ուղղակիորեն աղերսվում է դրամագիտությանը (նումիզմատիկա), քանի որ առաջներում դրամական միավորները և կշռաչափերը համապատասխանեցվել են՝ կրելով միևնույն անվանումները:

Հարկ կա՞, արդյոք, փաստարկել հօգուտ այն բանի, թե առանց սույն գիտության վերաբերյալ ստույգ, նաև համակողմանի գիտելիքների տիրապետման ճշգրիտ պատկերացում կկազմենք մարդկային քաղաքակրթության անցած փուլերի, գաղափար կունենանք ապրանքների գների, դրանց պահանջարկի և շրջանառության, երկրների տնտեսական կապերի, միմյանցից կախվածության և հարակից այլ խնդիրների վերաբերյալ: Վերջապես չափագիտական միավորների հավաստիությամբ կարող են վավերական համարվել պատմական աղբյուրները, պատմական կոնկրետ տեղն ու միջավայրը, ժամանակաշրջանը:

Մարդկության զարգացման վաղագույն ժամանակներում նախնական չափեր հանդիսացել են մարդու մարմնի մասերը, քայլը, առանձին ամաններ, որոշակի գործիքներ, զենքի տեսակներ, գիրկը, բուռը, փեշը, քիլը և այլն: Այս առումով թերևս Հայաստանը շահեկան դիրքում է, և հարկավոր չէ սույն փաստը մատնել մոռացության: Ամենայն հայկականը ածանցյալ է դառնում, ստորադասվում է ամենուր ու միշտ ոչ միայն կողմնակալ օտարների, այլ, ցավոք, նաև հայերիս կողմից: Արդարատես չլինելով հանդերձ, ինքնանվաստացումի հասնող բեռ-բարդույթ է առկա այստեղ, որը, ինչ-որ կերպ, պետք է հաղթահարել կարողանանք:

Հին Արևելքում և անտիկ պետությունների միջերկրածովային տարածաշրջա-

նում չափերի համակարգերը ձևավորվել են բաբելականի ազդեցությամբ՝ հիմնվելով հաշվարկման 60-երորդական համակարգի վրա: Անգամ կենտրոնացված պետություններում (Եգիպտոս, Հին Հունաստան) չափերի միասնականությունը եղել է հարաբերական: Մինչև անգամ միևնույն պետության սահմաններում նույնանուն չափերն էլ հաճախ տարբեր են եղել: Գուցե նաև այս անհարթությունները հաղթահարել-դյուրացնելու նկատառումով, հռոմայեցիները իրենց նվաճած բոլոր երկրներում պարտադրեցին սեփական չափակշռային համակարգը:

Հնագույն ժամանակներից մինչև 20-րդ դարի սկիզբը Հայաստանում օգտագործվել են տարբեր չափումների՝ երկարություն, ծանրություն, տարողություն, մակերես ևն, որոշակի չափային համակարգեր: Այսպես, ըստ Էրեբունի և Կայալի Դերե հնավայրերում հետազոտված տաճարների հիմնական չափումների.

Ուրարտական միջին ոտնաչափը հավասար էր՝ 31,4սմ.

Փոքր կանգունը՝ 1,5 ոտնաչափ՝ 47,1սմ.

Մեծ կամ փիլետերյան ոտնաչափը, (Գառնու տաճար)՝ 35,31սմ.

Միջին կանգունը՝ 1,5 մեծ կամ փիլետերյան ոտնաչափի՝ 53սմ.

Մեծ կանգունը՝ 2 մեծ կամ փիլետերյան ոտնաչափի՝ 70,62սմ.

Միջնադարյան Հայաստանում (4-16-րդ դարերում կառուցված ճարտարապետական հուշարձանների զննումների համաձայն) կիրառվել են՝

Փոքր ոտնաչափը՝ 26,5սմ.

Միջին ոտնաչափը՝ 30,9սմ.

Մեծ կամ փիլետերյան ոտնաչափը՝ 35,6սմ.

Համաձայն հայկական միջնադարյան չափագիտական սկզբնաղբյուրների՝ կարող ենք առանձնացնել երկարության հետևյալ չափերը՝

- Գարին (գարեհատը).
- Փոքր մատնաչափը՝ 1,66սմ.
- Մեծ մատնաչափը կամ եղունգը՝ 2,22սմ.
- Կոճը՝ 2,90սմ.
- Բոյթը՝ 4,43սմ.
- Բուռը՝ 10սմ.
- Ներբանը՝ 20սմ.
- Թիզը՝ 23,175սմ.
- Փոքր, միջին և մեծ ոտնաչափերը՝ 26,5սմ, 30,9սմ, 35,6սմ:
- Փոքր, միջին և մեծ կանգունները՝ 46,35սմ, 53սմ, 71սմ.
- Փոքր, միջին մեծ և երկրաչափական սովորական քայլերը՝ համապատասխանաբար՝ 71,2սմ, 79,5սմ, 92,7սմ, 105-108սմ.

- Փոքր, միջին, մեծ և երկրաչափական-թագավորական գիրկ-կրկնաքայլ-մարդաչափերը՝ համապատասխանաբար՝ 1,4մ, 1,54-1,59մ, 1,85մ և
2,11-2,16մ.
- Ձողը՝ 3,09մ.
- Խրասխ-պլեթրոնը՝ 30,09մ.
- Ասպարեզը կամ ըստ օդաչափության՝ վտավան-ասպարեզը՝ 213մ.
- Ասպարիզաց ասպարեզ, պարսից ասպարեզ կամ ասպարեզ նետաձիգ՝ 227մ.
- Հռոմեական մղոնը՝ 1480մ.
- Փիլետերյան կամ եգիպտական մղոնը՝ 1575-1590մ.
- Հրասախ, փարսախ կամ մեկ ժամվա հետիոտնի ճանապարհը՝ 4770մ.
- Մեկ օրվա ճանապարհը՝ 31,4-38,2կմ:

Ուշ միջնադարում և 19-րդ դարում ճանապարհի չափման հիմնական միավորը սովորաբար ընդունվել է 1(մեկ) ժամվա ճանապարհը, որը հայտնի է **փարսախ, ֆարսանգ, աղաճ, սահաթ** անվանումներով:
- Մարդու 1 ժամվա անցած միջինացված ճանապարհը եղել է՝ 5կմ.
- Մաքսային կարճահասակ ձիունը՝ 5,3-6,4կմ.
- Երկարահասակ ձիունը՝ 7,5կմ.
- Մեկ օրվա ճանապարհի մեծությունը միջին հաշվով հավասար է եղել 7-8 ժամվա ճանապարհի՝ 35-40կմ:

19-րդ դարում և մինչև 20-րդ դարի սկիզբը Հայաստանի և Անդրկովկասի բնակչության ամենօրյա կենցաղում կիրառվել է **գազ կամ խանական արշին** միավորի վրա հիմնված երկարության չափական համակարգը, որը հավասար էր՝
- Երևանի նահանգ՝ 102,4սմ.
- Շամախի նահանգ՝ 102սմ.
- Դարբանդի նահանգ՝ 101,8սմ.
- Թիֆլիսի նահանգ՝ 100,5սմ.
- Զանգեզուրի և Նախիջևանի գավառներում գազը՝ 94,4սմ.
- Շուշիում՝ խանական արշինը կամ գազը՝ 72,13սմ.
- Օրդուբադի գավառում կիրառված գազ-կանգունը՝ 44,7սմ.
- Նախիջևանում կիրառված գազ-կանգունը՝ 112,7սմ:

Այժմ ընտրողաբար ներկայացնենք չափերի ռուսական համակարգը, որը ավանդաբար կիրառվել է Հին Ռուսիայում և ռուսական կայսրության սահմաններում, որոնց փոխարինելու եկավ չափի մետրական համակարգը (4 հունիսի, 1899թ.), որը և նախապես ՌՍՖՍՀ-ում՝ 1918թ. սեպտեմբերի 14-ին, ապա և ԽՍՀՄ-ում՝ 1925թ. հուլիսի 21-ին, համարվեց պարտադիր:

- Դյույմ՝ մատնաչափ՝ 2,54սմ.
- Վերշոկ՝ 4,4սմ.
- Թիզ՝ 22-23սմ.
- Թիզ (շրջված)՝ 27-31սմ.
- Ֆուտ՝ 30,5սմ.
- Արշին՝ 71,12սմ.
- Սաժեն՝ 213,4սմ.
- Վերստ՝ 1068մ.
- մղոն (ծովայիուն)՝ 1852մ.
- մղոն (աշխարհագրական)՝ 7420մ.
- մղոն (հին ռուսական)՝ 7 վերստ՝ 7,4676կմ.
- ֆունտ՝ 409,5գ.
- Ֆունտ (Անգլիայում)՝ 453,6գ.
- Դույլ՝ 12,29941լ.
- Շտոֆ (շտոֆանոց՝ գավաթ)՝ 1/10 դույլ.
- Գարնեց՝ 3,28լ (սորուն նյութերի չափ)՝ քառորդ դույլ՝ 12 բաժակ.
- Կորչագա՝ մեծ կճուճ, կարաս, թաղար, խեցաման՝ 2 դույլ՝ 25լ.
- Քառորդ (չետվերտ)՝ 200լ.
- Տակառ՝ 40 դույլ՝ 491, 96լ.
- Շիշ՝ 0,6լ. (հեղուկների ռուսական չափ).
- Շիշ (կոսուշկա)՝ կես շիշ (0,307475լ.).
- Բաժակ՝ 0,273լ.
- Գավաթ (չետուշկա)՝ 1/50 դույլ.
- Գավաթ (չարկա)՝ 1/100 դույլ.
- Գավաթ (շկալիկ)՝ 1/200 դույլ՝ 61,5մլ.
- Լաստ՝ 3000լ.՝ 72փուդ (նավաբեռների կշռաչափ).
- Բերկովեց՝ 10 փթի ծանրության հին ռուսական չափ.
- Բաթման՝ 4,095կգ.
- Բեզմեն՝ 1,022կգ (նաև՝ ձեռքի զսպանակավոր կշռեք).
- Կիսաբեզմեն՝ 0,511կգ.
- Մեծ գրիվենկա՝ 409,5գ.
- Փոքր գրիվենկա՝ 204, 8գ.
- Գրոս՝ 12 դյուժին՝ 144 հատ.
- Դյուժին՝ 12 հատ.
- Ստոպա՝ (կապոց, կույտ, դեզ)՝ 20 դաստա՝ 480թերթ թուղթ.
- Դաստա՝ 1/20 ստոպա՝ 24 թերթ թուղթ.

Դեղատնային կշռաչափեր

- Ֆունտ՝ 12 ունցիա՝ 358,323գ.
- Ունցիա՝ 8 դրախմ (Արևելյան փող)՝ 29,860գ.
- Դրախմ՝ 1/8 ունցիա՝ 3 սկրուպուլ՝ 3,732գ.
- Սկրուպուլ՝ 1/3 դրախմ՝ 20 գրան՝ 1,244գ.
- Գրան (գրամ)՝ 62,209 մգ:

Համաշխարհային չափանիշներով գիտատեխնիկական առաջընթացը և ակտիվացող շփումները որոշակի կարգավորումներ մտցրին նաև չափերի համընդհանրացման բնագավառում: Այլևս ֆրանսիական մեծ հեղափոխության տարիներին ստեղծվեց մետրական համակարգը, որն այնուհետև դարձավ միջազգային: 1791-ին Ֆրանսիայի ԳԱ հանձնաժողովի առաջարկությամբ Ազգային Ժողովը հաստատեց չափերի նոր համակարգը:

- Երկարության միավորը դարձավ **մետրը.**
- Մակերեսի միավորը՝ **արը.**
- Տարողության միավորը՝ **լիտրը.**
- Ծանրության միավորը՝ **գրամը:**

Չափային ընդունված նոր միավորները կազմվեցին տասնորդականի սկզբունքով (այն է՝ տարբեր աստիճաններում հիմնական միավորը 10-ով բազմապատկելու կամ բաժանելու միջոցով):

Եվ այնուամենայնիվ, չափակշռային հին միավորները որքան էլ չունենան այլևս գործնական կիրառություն, նրանց իմացությունը անհրաժեշտություն է, քանի որ նրանք շրջանառված են մնում վաղ, միջին և ուշ շրջանի պատմական տարաբնույթ փաստաթղթերում ու վավերագրերում, ժողովրդական բանարվեստում, հատկապես դարձվածաբանություններում և, իհարկե, պատմագիտական աշխատություններում ու պատմավեպերում:

Ընդգրկված նյութերի պարտադրանքով՝ չափագիտական տվյալների սույն քաղվածքը ժողովածուում զետեղելը, կարծում եմ, անհրաժեշտություն էր: Խնդիրը լուծելիս, օգտվեցի բառարաններից, մանավանդ Հայկական Սովետական Հանրագիտարանի համապատասխան բառահոդվածից: Այդ նյութերի հեղինակներին էլ հայտնում եմ իմ շնորհակալությունը:

Ռաֆայել Ղարիբյան

ԲԱՌԱՐԱՆ

Ագլամիշ լինել - զբաղվել, ժամանակ անցկացնել

Ադամն նասլի՞ գարակ, յոխսա՞ ուսլի - մարդու ցե՞ղն է կարևոր, թե՞ կրթությունը

Ազատլամա - փրկարար

Ազմզել - շոշափել

Աթմաթիթոն - ատող (՞)

Ալաճա - խատուտիկ

Ալաճա կտոր - զոլավոր գործվածք ներքնակի համար

Ալխալուղ - տե՛ս արխալուղ

Արխալուղ - 1. կնոջ երկար զգեստ. 2. տղամարդու կարճ զգեստ՝ բաճկոն

Աղու - թույն

Աճալ - տե՛ս աջալ

Աճալով մեռնել - տե՛ս աջալով մեռնել

Ամանաթ - ուրիշին պատկանող առարկա

Ամմայ - կույր

Ամռայը բռնել - ալարել, ծուլանալ. 2. զարմանալ

Այման - տուն, տեղ

Այսանես - այս տեղերը

Անալը՝ղ - մորու (մերացու)

Անթարի - կնոջ և տղամարդու շրջազգեստ

Անկան - ուշ

Անկենանալ - ուշանալ

Անպեճար - անճար

Անվերի - անբնակ. 2. անբուն

Ապելենին - հայտարարություն

Ապրաստ - ողջություն, ողջ լինել

Աջալ - մահ

Աջալով մեռնել - բառացի՝ բնական մահով մեռնել

Աջամ - պարսիկ

Ասսա - անպայման

Ավղուշություն - թռչնորսություն

Ավճի - որսորդ

Արա - մեջտեղ, կենտրոն

Արիկ - ծիրանի չիր

Ար ու էք - արու և էգ

Աֆիոնի ղուտտիկ - աֆիոնի (ափիոնի) տուփ

Աֆֆարըմ - կեցցես, ապրես

Բազի - երբեմն

Բազիրգան - վաճառական

Բալլի - հայտնի

Բալքի - գուցե, որպեսզի

Բաշղա - առանձին, ջոկ

Բաս բռնել - գրազ գալ

Բաքլայել - սպասել, համբերել

Բեդելվաթ - տնավեր, անօգտակար

Բելիկ - բոլուկ, խումբ

Բեյ - նշան, նշանադրություն

Բիլազուկ - ապարանջան

Բիլմազ - անտեղյակ

Բիրատի - բոլորը

Բիրտանբիր - հանկարծ, իսկույն նեթ

Գամ - սանձ

Գամակ - տե՛ս կամակ

Գառգիլամիշ լինել - հորանջելով ու գալարվելով՝ մարմինը վեր ձգել

Գարդան - վիզ, պարանոց

Գեզա - աղբյուր

Գեզաթ էնել - ճամփա պահել, մեկին սպասել, դիտել

Գեզընասավտիկըմ - աչքդ սիրեմ

Գեզլիկ - ակնոց

Գենա - նորից, դարձյալ

Գեստ - զգեստ

Գետան-գալան - բառացի՝ գնացողը վերադառնում է

Գետան գալմազ - գնացողը չի վերադառնա

Գիգիմ - թեյնիկ, թեյ եփելու պղնձե աման

Գիլ - վարդ

Գյուման - հույս

Դալ - ճյուղ

Դարթլամիշ լինել - վշտանալ, մտածմունքի մեջ լինել

Դարմադաղըն լինել - տե՛ս տարմատաղըն լինել

Դիզգին - սանձ

Դիշիմմիշ լինել - խորհել

Դիվան - դատ, դատաստան

Դոլվաթ - հարստության ոգի

Դոշ - կուրծք

Դուզ - ուղիղ, ուղղամիտ

Դուքար - ուժ, կարողություն

Դուխուրել - նիրհել

Ելտողտի - բառացի՝ քամի ծնեց

Եմին - երդում

Եսիր - գերի

Եվից ըլլիլ - ներկայանալ

Զայրումար - գրող ու ցավ

Զառաֆաթի առնել - ծաղր ու ծանակի են-թարկել

Զարզըմբել - զարհուրել

Զարընճի - տե՛ս զարնջի

Զարնջի - անքուն մնացած

Էլիմ - մահ

Էլլիկ - ժողովուրդ

Էլ ղըզի - ուրիշի աղջիկ

Էլօղլի - ուրիշի տղա

Էմր - կյանք

Էյթաճ լինել - կարոտ լինել, պահանջ զգալ

Էնթարի - տե՛ս անթարի

Էպպեճա - բավականին

Էսթըղըր - այսքան

Էրած - երազ

Էրդագ - բադ

Էրթըմնալ - երդվել

Էվատի - շտապ

Էտմըլ - այդպես

Ըզին - գծահետքին

Ըխտյար - ծերունի

Ըռաստ գալ - հանդիպել

Ըսկուտ - այդպիսի

Ըսմոթ - տեղազննում

Ըրազի լինել - հոժարվել

Թաբիաթ - բնավորություն

Թաբտիրի ղըլըղ հագնել - ծպտվել (այլ հագուստ կրել)

Թազա - նոր

Թազբեյ - համրիչ, տերողորմյա, մեղեսիկ

Թակար - թե որ, եթե որ

Թամալ - հիմք

Թամալլա տալ - բարևել

Թամբալխանա - անկելանոց

Թամբեյ էնել - ապսպրել, պատվիրել, հանձնարարել

Թամ-թազա - բոլորովին նոր

Թավլի խանա - ախոռ

Թավիրըմ լինել - մի տեսակ վատ զգալ

Թատառիկ - պատրաստություն

Թարաֆ - կողմ

Թարքար - նորից, կրկին

Թարքարտան - կրկին անգամ

Թարքրել - կրկնել

Թաք - կենտ

Թաքըռ - անիվ

Թքնկել - համառել

Թիրմա - բանտ

Թիքա - պատառ

Թիքան - խանութ-արհեստանոց

Թղի մնալ - հղիանալ

Թպղի - իսկական

Ժիժի կայնիլ - նույն բանը շատ կրկնելով՝ համբերությունից հանել

Ժուռ ածել - փնտրել

Իլլաճ - դեղ, միջոց, հնար

Իճաթ անել - հնարել, մտածել

Իյար - թամբ, թամք

Ինչ օր իսա - ինչ որ է

Ինսան - մարդ

Ինսանօղլի - մարդու տղա

Ինտատ - օգնություն

Իշտղղը - ինչքան որ

Իպտիտա - սկիզբ

Իսոնք - սրանք

Իտ-իտիկ - այդ բանը. 2. նա

Իք-իքը - բան

Լախանա - կաղամբ

Լաչառ - անզգամ

Խազինա - գանձ, գանձանակ, մթերանոց

Խալթ - հիմարություն

Խապար - լուր

Խասյաթ - բնավորություն

Խեր - օգուտ, բարիք

Խըստու - դիտմամբ

Խեյլի վախտ - բավականին ժամանակ

Խեյրաթխանա - բարեգործական տուն, հյուրատուն

Խեյրաթութեն անել - բարիք գործել

Խոխուրթ - խորհուրդ

Խոնախ - հյուր

Կամակ - հիվանդի կամ բանտարկյալի ցանկացած ուտելիք

Կենացվալո - ցավդ տանեմ

Կեչի - այծ

Կեքս - կուրծք

Կծոտել - գիջանալ

Կոտկիրիրի կոտ - կրիայի գոգավոր պատյան, կոնք

Կռանոց - գոմի աղբափոս

Կուլաբ - այծենակաճ

Կուրղան - սահմանանշան

Հըզ գալ - դուր գալ, դուրեկան

Հալղա - օղակ

Հախխաթ - իսկապես, ճշմարիտ

Համաշա - շարունակ

Հայիֆ - վրեժ

Հաջ գնալ - մահտեսի գնալ (Տիրոջ գերեզմանը, Երուսաղեմ)

Հարամօղասի - ավազակատուն

Հարի - մինչև որ

Հարիֆ - միամիտ

Հարի որն օր - ովքեր որ

Հըյտը բղիկով - այս կճուճով

Հիժան - թարախ

Հոր - տե՛ս շալագործի դազգահ

Ղազա - փորձանք

Ղաթըր - ջորի

Ղալմաղալ - աղմուկ, խառնակություն

Ղամուշ - եղեգն

Ղայա - ժայռ

Ղայդա - եղանակ, մեղեղի

Ղայփախանա - հասարակաց տուն

Ղանթարմա - սանձ

Ղանճըղ - քած

Ղառղառ - ագռավ

Ղաչաղ - ավազակ

Ղասաբօղլի - մսագործի տղա

Ղաշղա - պիսակ, պիսակավոր

Ղավալ - սրինգ

Ղավաղ - բարդի

Ղարաղոլ - պահակ

Ղարամանդուլ - սատինից կարված սև զգեստ

Ղըմի - վայրի բանջար՝ հում ուտելու և թթու դնելու

Ղըռ ձի - սպիտակ ձի

Ղիապին խոսել - հասցեին խոսել, բամբասել

Ղոլայ - դյուրին

Ղսմաթ - բախտ

Ղութնի-ղումաշ - զոլավոր գործվածք ներքնակի համար

Ղումռի դոխ - երգող աղավնի

Ղուշ - թռչուն

Ղուռի շառ - զրպարտություն

Ղուտտիկ - տուփ

Ճաշակ - հաղորդություն

Ճեռ - աքլոր

Ճիպպա - կնոջ տոնական երկար զգեստ

Ճիտ - վիզ, պարանոց

Ճորել - խռովել

Մաթ մնալ - զարմանալ

Մալամիշ լինել - ողբալ

Մախսիզ - դիտմամբ, դիտավորյալ

Մաղարա - քարանձավ

Մայրըմա - թաշկինակ, լաչակ

Մայիլ մնալ - զարմանալ, շշմել

Մաշալլա - ջահ. 2. սքանչելի

Մարիֆաթ - շնորհք

Մեզեթ - շուկա (՞)

Մեկավա - միշտ

Մեյմուն - կապիկ

Մեյվա - միրգ

Մըկըր, մակար - Դու մի՛ ասի

Մըկիտան - գինետուն

Մըռչըմուկ - մրջյուն

Միազըմ - բավականին

Միշավարա էնել - խորհրդակցել

Մինչևական - մինչև իսկ

Միսավիր - հյուր

Մոհլաթ առնել - ժամանակ սահմանել

Մուլք - կալվածք

Մուխանանաթ - երախտամոռ

Յադիքար - հիշատակ

Յաքաղ - անկողին

Յամաջ - լանջ

Յայան - հետիոտն

Յավաշ - դանդաղ

Յոլ - ճանապարհ. 2. պարտականություն

Յող դավքար գրվել - բնաջինջ անել, չքացնել

Յուզբաշի - հարյուրապետ

Յուլար - սանձ

Նը - ոչ

Նապախտ - բանտ

Նարդվան - սանդուղք

Նոքար - ծառա, մշակ

Շահատ - վկա

Շապալակ - այլանդակ, չար ոգի

Շառ - զրպարտություն

Շափալաղ - ապտակ

Շելլիկ - ժողովուրդ

Շեյշեյբաթ - գույք

Շղվա - բարակիրան, սլացիկ հասակ

Շոռաղ - վավաշոտ

Շորորլամիշ ըլլել - շորորալով քայլել

Չագիլ - քարացրոն

Չաթին - դժվար

Չալղըճի - նվագածու

Չամ-չրաղ մարել - Եղևնյա ճրագ մարել (տունն ավերել)

Չանգա - ծնոտ

Չարա - հնար, փրկություն

Չարասի՞ նա - ի՞նչ հնար կա

Չարխ ու ֆալակ - բախտի անիվ

Չար մըկա - մինչև այժմ

Չարսու - հրապարակ, վաճառանոց, փողոց

Չաչափըռկել - ճանկել, խլելով յուրացնել

Չափառ - միլիցիոներ

Չեփլիկ - աղբանոց

Չեփչի - հնոտի հավաքող

Չըռ զարկած - չոռի զարկած, գրողի տարած

Չինի - հախճապակի

Չիչակ - ծաղիկ

Չուչուստ - արագ, շտապ, ճեպով

Չուռ - «Բերդ» խաղ

Պապ - հայր

Պատվիրաք - Պատրիարք

Պիպիլ - ապակու կտոր

Պիտվանալ - դուր գալ

Ջալլաթ - դահիճ

Ջալլամ - գրողի ծոց

Ջաղչի կուռիկ - Կավե փոքրիկ աման, որով ջրաղացպանը վարձ էր առնում

Ջաղչի օլուղ - ջաղացի ճնշման խողովակ

Ջանսըզ - անհոգի

Ջինս - ցեղ

Ջվուտ-ջֆուտ - հրեա

Սալախանա - թափառող

Սալ ու սոլ - աջ ու ձախ

Սակաֆել - սակավանալ

Սանյաթքար - արհեստավոր

Սավա - բացի

Սավդա - սեր

Սարդար - զորագլուխ, պարագլուխ

Սեպող - հնազանդ, լսող-կատարող

Սևա - դռան շրջանակ

Սիլայ - զենք, զենքուզրահ

Սիլլա - ապտակ

Սիլսիլա - արյանառու, սերունդ

Սըռ - գաղտնիք

Սնունք - սերունդ, ցեղ

Վարավիրտ - ուշադիր լինել

Վերանա - ավերակ

Տարմատաղըն լինել - ցաքուցրիվ գալ, տակնուվրա լինել

Տըռըսխա էնել - ծաղրել

Տղզել - կռանալ

Տոլաղ - պատատանք սրունքների

Տուզաղ - թակարդ

Տուրմա - բանտ

Ուզբաշի - տե՛ս յուզբաշի

Ումուդ - հույս, ապավեն

Ումուզ - ուս

Ույմիշվիլ - հարմարվել, փոխադարձորեն միմյանց ըմբռնել

Ուրմիշ գալ - իրար սազել

Փալի - գոնե

Փաջ - մաքս (՞ բաժ)

Փասբանդ - գիշերապահ (՞)

Փեշակ - արհեստ

Փեշկիր - թաշկինակ

Փիճվներ - ուսեր (տղեկներ ՞)

Փուշի - ծաղկավոր գլխաշոր

Քալլա - գլուխ. 2. հասկ

Քալփաքին - աքցան

Քայրըբար - սաթ

Քանար - կողմ, եզր

Քանքիլ - խոպոպիք

Քարվան - քարավան

Քարվանբաշի - քարավանապետ

Քեխ - վայրի բանջար

Քեխ - ջրկիր էշի համետ

Քեչակ խաղալ - կենտ պար պարել

Քընծղալ - ծիծաղել

Քըշո-քըշ - հավին վռնդելու ձայնարկություն

Քիթիկ - գերան

Քիսաճի - բաղնիքում մարդկանց լողացնող

Քիսկի - լոմ

Քիրա - վարձ

Քոք - արմատ

Քոթուկ - կոճղ

Քոփակ - զառամյալ ծերունի

Քոչիկ - կաղամբով ճաշ

Քութուկ - գերան

Քուլլահ-Սըրքուլլահ - գլխարկ, որի կրողն անտեսանելի է դառնում

Քուլլի - բոլորը

Օդա - ձմեռնատուն, գոմին կից. հաճախ ծառայել է հյուրասենյակ

Օդի ոտք - ձմեռնատան մուտք

Օլան - տո, ծո

Օխտը ոտք - գերեզմանափոսի երկարություն (աշխըրեն ի՞նչ պիտի տանիս՝ օխտը ոտք)

Օղլուշաղ - կին

Օղուլ - որդի

Օյալամիշ լինել - զբաղվել ժամանակ վատնելով. 2. ձգձգել

Օյին փերել - փորձանքի բերել

Օ՛սահաթ - այդ ժամին, անմիջապես

Օրթա - մեջտեղ, կենտրոն

Օրթանջիլ - միջնեկ

Ֆանդ խաղալ - հնարքի դիմել

Ֆայդա - օգուտ, շահ

Ֆանել - կտորի տեսակ

Ֆավն - այծամարդ

Ֆասի փիսկիլ - օրիորդական ֆեսից կախվող փարթամ մետաքսաթել, ծոպ

Ֆասոն - տեսք, կերպարանք. 2. տարազ, տիպար (հագնելիքի)

Ֆասֆասութեն - կասկածամտություն

Ֆարաջա - քահանայի վերարկու

Ֆարդա - քող, վարագույր. 2. կուսաթաղանթ

Ֆիդան - նորատունկ, մատաղատունկ

Ֆիլան - այսինչ

Ֆռանգի - եվրոպական սնդուկի կողպեք

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՏՐԹԱՏ ԹԱՔԱՎՈՐԻՆ ԲԵՐԹԸ

Պատմել է Գևորգ Բդոյանը, 1940թ., Երևանում: Ծնվել է Ախալքալաքում, 1890թ., կոշկակար Թադևոսի ընտանիքում: Մասնագիտությամբ կոշկակար էր. ապրել է ծննդավայրում, Խարկովում, Երևանում և Ռոստովի մարզի, Մյասնիկյանի շրջանի Չալթըր գյուղում: Շատ նշանավոր բանասաց էր՝ հեքիաթասաց, առակախոս և երգիչ: (Բնագիրը տ. իմ անձնական արխիվում. այսուհետև՝ ԱԱ թիվ 79, էջ 127-128):

ՆԱԴԻՐ ՇԱՀՆ ՈՒ ՀԱԿՈԲ ՄԶՄՆԱՆ

1940թ. հունիսի 11-ին պատմեց Ջավախքի Փոքր Խանչալի գյուղացի, ինքնուս տիրացու և կարկտակապ Մինաս Իսկանյան-Եսոյանը: Ծնվել է1870 թ.: Առակախոս էր: Զբաղվում էր հողագործությամբ և «Գիր կապելով»: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 67, էջ 134):

ԿԱԹՔԱՐԸ

1940-ի ամռանը պատմեց Փոքր Խանչալեցի Անուշ ապլա Բդոյանը: Ծնվել է Ջիգրաշենում, մանկավարժ և ինքնուս բանաստեղծ Մաքենոսի ընտանիքում, 1880թ.: Անգրաճետ էր: Հայտնի առակախոս էր, երգասաց և ոտանավորներ հորինող: Նրանից գրի եմ առել մի շարք երգեր ու առակներ. նրա ոտանավորները զետեղված են «Հավելված 3-ում»: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 139-140):

ՄՈՒՐՃԱԽԵԹԻ ԿԱԹՔԱՐԸ

1940թ. հունիսի 13-ին պատմեց Փոքր Խանչալեցի Վարվառե Բդոյանը: Ծնվել է Ծալկայի Նարդիվան գյուղում, 1870թ.: Ապրել է Ջավախքի Ղուլալիս գյուղում և ամուսնացել Փոքր Խանչալի գյուղում, Հարություն Բդոյանի հետ, 1887թ.: Հմուտ տնտեսուհի էր, կաթնամշակ և կավագործ: Գիտեր ընտանեկան հարաբերություններն ընդգրկող բազմաթիվ առակներ, թուրքերեն մանիներ, որոնց զգալի մասը գրի եմ առել 1940-ական թթ.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 137-138):

ԽԱՉԱՓԱՅՏԻ ԱՂԲՅՈՒՐԸ

1959-ի հուլիսին պատմեց Կարնո Դինարիգում գյուղի բնակիչ Սիմոն Մկրտչի Դավթյանը (նախկինում՝ Կոպալյան): Ապրել է Լենինականում: Հոր գերդաստանը կազմված էր 33 անձից. տանը օրորվում էր հինգ օրորոց: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 19, էջ 76):

ՄՇՈ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

1944-ին պատմեց Փոքր Խանչալի գյուղից դուդուկահար Արամ Իսպիրյանը: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 67, էջ 117):

ԽՈՋԱՊԻՆ ԼՃԻ ԱՆՈՒՆԸ

1982թ. փետրվարի 2-ին պատմեց սուլդացի մանկավարժ, ներկայումս Երևանի բնակիչ Պետրոս Թորոյանը: Ունի բարձրագույն կրթություն: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 126, էջ 9-10):

ԱՆԻ ՔԱՂՔԻՆ ԱՆԱՍՏՎԱԾՆԵՐԸ

1939-ին պատմեց Փոքր Խանչալի գյուղից Սանդուխտ Իսպիրյանը: Ծնվել է 1875-ին, Կարապետ Հուբոյանի ընտանիքում: Ամուսնացել է Մաթևոս Իսպիրյանի հետ: Անգրագետ էր: Զբաղվել է տնային տնտեսությամբ: Առակախոս էր, նրանից գրի եմ առել մի շարք առակներ ու երգեր: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 72):

ՀԱՐՍ - ՂԱՐՍ

1940-ին պատմեց Փոքր Խանչալի գյուղից Վարվառե Բդոյանը: Նրա մասին ակնարկը տե՛ս թիվ 4 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 126-127):

ՀԱՅԲԱՇ - ՀԱԲԱՇ

1940թ. հունիսի 17-ին պատմեց Փոքր Խանչալի գյուղից Հովսեփ Իսպիրյանը՝ ծնված 1892-ին: Առակախոս և երգասաց է: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 176-177):

ՀԱՅՐ ԱԲՐԱՄԻ ՏՂԵՆ

1980թ. մայիսի 27-ին պատմեց մերենեցի Մամբրե Գոմկցյանը՝ ծնված 1901թ.: Ամբողջ կյանքում զբաղվել է հովվությամբ: Նշանավոր առակախոս և ազգագրության բանասաց էր, ումից գրի եմ առել մի քանի առակ: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ126, էջ 8):

ՄԱՐԻԱՄ ԱՍՏՎԱԾԱԾԻՆԸ

1980թ.մայիսի 27-ին այս նյութը պատմեց մերենեցի Մամբրե Գոմկցյանը: Նրա վերաբերյալ ակնարկը տե՛ս թիվ 11 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 126, էջ 5-6):

ՉՈՒԿ ԴԱՌՅՈՂ ԻՐԻՍԿԻՆԸ

1940թ. հունիսի 16-ին պատմեց Անուշ ապլա Բդոյանը (գյուղ Փոքր Խանչալի): Նրա մասին ակնարկը տե՛ս թիվ 3 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 155-158):

ՔԱՐՎԱՆ ՂՌԱՆ

1942-ի հոկտեմբերի 18-ին պատմեց ախալքալաքցի Գևորգ Բդոյանը: Նրա վերաբերյալ ակնարկը տե՛ս թիվ 1 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 179):

ԿԱՂԸՆԴԻՆ ԳԻՇԵՐՎԱ ՋՈՒՐԸ

1940թ.-ի ամռանը պատմեց Փոքր Խանչալի գյուղից Վարվառե Բդոյանը: Նրա վերաբերյալ ակնարկը տե՛ս թիվ 4 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 83):

ՃԳՆԱՎՈՐ ՏՂԱՆ

1940-ի ամռանը պատմեց Փոքր Խանչալի գյուղից Վարվառե Բդոյանը: Բանասացի մասին ակնարկը տ. թիվ 4 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 104-105):

ՄԵՂԱՎՈՐՆԵՐԻ ՔԵԽԵՐԸ
1980թ. մայիսի 27-ին պատմեց մերենեցի Մամբրե Գոմկցյանը Երևանում: Նրա մասին ակնարկը տ. թիվ 11 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 126, էջ 6-7):

ՀԱԲԱՇ ԷՐԹԸՑՈՂ ՏԵՐՏԵՐԸ
1940թ. հունիսի 17-ին պատմեց Անուշ ապլա Բդոյանը: Բանասացի մասին ակնարկը տ.թիվ 3 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 174-176):

ՀԱՅԵՐԻ ՈՒ ԵԶԴԻՆԵՐԻ ՖԱՐԴԵՆ
1944թ. դեկտեմբերի 2-ին պատմեց Փոքր Խանչալլի գյուղից Մուշեղ Հաբոյանը՝ ծնված 1873-ին: Ականավոր առակախոս և երգիծաբան էր: Զբաղվում էր հողագործությամբ: Նրա ձմեռնատունը գյուղում հեքիաթասացության վայր էր, որտեղ գլխավոր պատմողը ինքը՝ Մուշեղն էր: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 67, էջ 124):

ԳԱՅԼԵՐԻ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՀԱՅԸ
1940-ի ամռանը պատմեց Վարվառե Բդոյանը: Նրա վերաբերյալ ակնարկը տ. թիվ 4 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 110-111):

ՕՋԱՂ ԽԱՌՆՈՂ ՀԱՅԸ
1940-ի ամռանը պատմեց Վարվառե Բդոյանը: Նրա մասին ակնարկը տ. թիվ 4 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ79, էջ 86-87):

ՔԱ՞Մ ԹԵ՞ ՉԸՔԱՄ
1940-ին պատմեց Գևորգ Բդոյանը: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 103-104):

ՕՉԻԼԸ ՄԱՏԱՂ: Պատմեց Վարվառե Բդոյանը:(Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ67, էջ 112):

ՀԵՔԻԱԹՆԵՐ

ՂԱՍԱԲՕՂԼԻ
1940-ին պատմեց ախալքալաքցի Գևորգ Բդոյանը: Հեքիաթն անավարտ է: Բանասացի մասին տ. թիվ 1 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 67, էջ 71-102):

ԴԱՐՎԵՇԸ
1940-ի հունվար-փետրվար ամիսներին պատմեց Գևորգ Բդոյանը և Փոքր Խանչալլի գյուղի բարբառով գրի առավ Վ. Բդոյանը: Բանասացի մասին ակնարկը տ. թիվ 1 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 67, էջ 52-70):

ՊԵԽՈ
1938թ. պատմեց ախալքալաքցի Գևորգ Բդոյանը: Նրա մասին ակնարկը տե՛ս թիվ 1 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 67, էջ 5-18):

ՃԻՏՈՒ ԽՐԱՏԸ

1947-ի օգոստոսին պատմեց Ջավախքի Ուճմանա գյուղի բնակիչ Վաչագան Թումասյանը՝ ծնված 1921թ.: Առակախոս է. նրանից գրի եմ առել մի քանի առակ: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ65, էջ 100):

ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

1938-ին պատմեց Գևորգ Բդոյանը: Նրա մասին ակնարկը տ. թիվ 1 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 67, էջ 19):

ՆԱԽՐՃԻՆ ՈՒ ԹԱՔԱՎՈՐԻ ԱԽՉԻԿԸ

1947-ի օգոստոսին պատմեց Ջավախքի Բոգդանովկայի շրջանի Թորիա գյուղի բնակիչ Պողոս Գալոյանը՝ ծնված 1910թ.: Կիսագրագետ էր, բայց հմուտ առակախոս. նրանից գրի եմ առել մի շարք առակներ: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 114):

ՋՐԱՏԱՐՆ ՈՒ ԳԱՅԼԱՏԱՐԸ

1968-ին պատմեց Ջավախքի Բոգդանովկայի շրջանի Փոքր Գյոնդուրա գյուղի բնակիչ, ատաղձագործ Թորոս Պողոսյանը՝ ծնված1886-ին: Կիսագրագետ էր, սակայն հայտնի հեքիաթասաց էր: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 67, էջ 166-180):

ԹԱՔԱՎՈՐԻՆ ԿԸՆԿՏԻՔԸ

1938-ին պատմեց չամդուրեցի Գարեգին Հայրապետյանը՝ ծնված 1870թ.: Անգրագետ էր, զբաղմունքով՝ երկրագործ: 1930-ական թվականներին ընտանիքով տեղափոխվել է Երևան: Կատակաբան էր և ընտիր առակախոս: Երևանում նրանից գրի եմ առել բազմաթիվ առակներ և զվարճախոսություններ: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 91-99):

ՕՑՆ ՈՒ ՄԱՐԹԸ

1947-ի օգոստոսին պատմեց Ջավախքի Բոգդանովկայի շրջանի Ուճմանա գյուղի բնակիչ Մկրտիչ Թումասյանը՝ ծնված 1901թ.: Երկրագործ էր, առակախոս ու հեքիաթասաց: Նրանից գրի եմ առել մի քանի առակ: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 90):

ԻՇՈՒ ԴԵՄ ԽԱՂՑԱԾ ԹԱՔԱՎՈՐԸ

1947-ի օգոստոսին պատմեց Ջավախքի Ուճմանա գյուղի բնակիչ, 1910թ. ծնված Լևոն Թումասյանը: Առակախոսից գրի եմ առել մի քանի առակ: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 104):

ԿԱՐԿՏԻ ՏԱՐՎԱ ՀԱՐՍԸ

1938թ. պատմեց չամդուրեցի Գարեգին Հայրապետյանը: Նրա վերաբերյալ ակնարկը տ.թիվ 31 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 35-39):

ԹԱԳԱՎՈՐ ԳՈՂԱՅՈՂ ՏՂԱՆ

1939-ի փետրվարի 19-ին և 20-ին պատմեց Գևորգ Բդոյանը: Փոքր Խանչալլի գյուղի բարբառով գրի առավ Վ. Բդոյանը: Բնագրի մասին ակնարկը տ. թիվ 1 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 67, էջ 30-51):

ԿԵՑԻ ՄԵՄ ՉԱՐԽ ՈՒ ՖԱԼԱԿԻՍ ԱՇԵՄ

1944թ. դեկտեմբերի 2-ին պատմեց Փոքր Խանչալլի գյուղի բնակիչ Խաչատուր Գրիգորի Բդոյանը՝ ծնված 1888թ., նույն գյուղում: Ապրել է հայրենի գյուղում, Մամզարայում և Ախալցխայում: Զբաղվել է հողագործությամբ և ջրաղացպանությամբ: Կիսագրագետ էր, բնույթով՝ զվարճաբան: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 67, էջ 119-123):

ՀԱՎՔԵՐՈՒՆ ԹԱՔԱՎՈՐԸ

1942թ. նոյեմբերի 28-ին պատմեց Փոքր Խանչալլի գյուղի բնակիչ Սանդուխտ Իսպիրյանը: Նրա մասին ակնարկը տ. թիվ 8 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 181-183):

ԱՍՏՎԱԾ ՈՐ ՉԸՏԱ, ՄԱՀՄՈՒԴՆ Ի՞ՆՉ ԷՆԵ

1940թ. հունիսի 16-ին պատմեց Փոքր Խանչալլի գյուղի բնակիչ Անուշ ապլա Բդոյանը: Նրա մասին ակնարկը տ. թիվ 3 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 158-161):

ԶՐՈՒՅՑՆԵՐ, ԱՌԱԿՆԵՐ ԵՎ ԶՎԱՐՃԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱԼԱԼ ՈՒ ՀԱՐԱՄ ՍԵՐՄԵՐԸ

1940թ. հունիսի 16-ին պատմեց Փոքր Խանչալլի գյուղի բնակիչ Անուշ ապլա Բդոյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 3 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 162-166):

ԷՏ ԷԼ ՉԻ ՄՆԱ

1940-ին պատմեց ախալքալաքցի Գևորգ Բդոյանը: Նրա մասին տ. թիվ1 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 128-132):

ԱՏԱՆՔ ՕՐ ՉԸԼԼԻՐ, ԱՍԱՆՔԱ ՉԷՐ ԸԼԼԻ

1980թ. մայիսի 24-ին պատմեց մերենեցի Մամբրե Գոմկցյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 11 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 126, էջ 1-4):

ԻՄԱՍՏՈՒՆ ՍՈՂՈՄՈՆՆ ՈՒ ՔՈՌ ԲՈՒԲԲՈՒՆ

1940թ. հունիսի 17-ին պատմեց Փոքր Խանչալլի գյուղի բնակիչ Անուշ ապլա Բդոյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 3 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 168-173):

ԻՄԱՍՏՈՒՆ ՏՂԱՆԵՐԸ

1940թ. հունիսի 8-ին պատմեց Փոքր Խանչալլի գյուղի բնակիչ Մուշեղ Հաբոյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ19 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 148-151):

ԻՄԱՍՏՈՒՆ ՍՈՂՈՄՈՆԻՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳԻՆԸ

1940 թ. հունիսի 8-ին պատմեց Փոքր Խանչալլի գյուղի բնակիչ Մուշեղ Հաբոյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 19 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 146-148):

ԻՄԱՍՏՈՒՆ ՍՈՂՈՄՈՆՆ ՈՒ ՍԱՏԱՆԵՆ
1940թ. հունիսի 8-ին պատմեց Փոքր Խանչալլի գյուղի բնակիչ Մուշեղ Հաբոյանը: Նրա վերաբերյալ ակնարկը՝ թիվ 19 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 143-145):

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍԸ
1947-ի օգոստոսին պատմեց ուճմանեցի Մկրտիչ Թումասյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 32 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 92):

ԱԿՈԲ ՊԱՏՎԻՐԱՔՆ ՈՒ ՍՈՒԼԹԱՆԸ
1940թ. հունիսի 20-ին պատմեց Ջավախքի Բոգդանովկայի շրջանի Փոքր Խանչալլի գյուղի բնակիչ, հմուտ երկրագործ, ականավոր առակախոս Եղիշե Պոտոսյանը՝ ծնված 1877թ. շալագործ Մովսեսի ընտանիքում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 67, էջ 145-152):

ՊՅՈՏՐ ՎԵԼԻՔԻՆ ԵՎ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐԸ
1940 թ. պատմեց ախալքալաքցի Գևորգ Բդոյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 1 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 113):

ԿԱՇԱՌՔՎԱԾ ՏԵՐՏԵՐԸ
1944թ. նոյեմբերի 27-ին պատմեց Փոքր Խանչալլի գյուղի բնակիչ Վարվառե Բդոյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 4 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ67, էջ 160-163):

ՄԵԿ ՕՐԸ ՏԱՍԸ ՏԱՐԻ
1947-ի օգոստոսին պատմեց ուճմանեցի Լևոն Թումասյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 32 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 103):

ՏՈՒՆ ՇԻՆՈՂ ՏՂԵՔԸ
1947-ի օգոստոսին պատմեց Ջավախքի Բոգդանովկայի շրջանի Թորիա գյուղի բնակիչ Սուրեն Ասլանյանը: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 103):

ԱՌԱՆՑ ԲԱԽՏԻ ԲՐԴՈՒՃ ՉԵՍ ՈՒՏԻ
1944թ. դեկտեմբերի 16-ին պատմեց Ջավախքի Բոգդանովկայի շրջանի Փոքր Խանչալլի գյուղի բնակիչ Սողոմոն Վարդանյանը՝ ծնված 1901թ.: Զբաղմունքով հողագործ էր: Ապրել է նաև Չամդուրա գյուղում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 67, էջ 158-160):

ՕԽՏՆ ԱԽՊՈՐ ԱՌԱԿԸ
1944թ. նոյեմբերի 27-ին պատմեց Փոքր Խանչալլի գյուղի բնակիչ Անուշ ապլա Բդոյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 3 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 67, էջ 156-158):

ԼՈՐԵՐՆ ՈՒ ԾՈՒՅԼ ՀՆՁՎՈՐԸ
1938-ին պատմեց չամդուրեցի Գարեգին Հայրապետյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 31 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 14-16):

ՏԵՐՏԵՐԻՆ ՀԱՐՄՆԻՔԸ
1938-ին պատմեց չամդուրեցի Գարեգին Հայրապետյանը: Նրա մասին ակնարկը տ. թիվ 31 ծան.:

ՏԵՐՏԵՐՆ ՈՒ ՄՇԱԿԸ
1940 թ. հունիսի 11-ին պատմեց Փոքր Խանչալլի գյուղի բնակիչ Մինաս Իսկանյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 2 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 67, էջ 153-155):

ԳԱՓԲԵԼ ՀՐԻՇՏԱԿՆ ՈՒ ԳԵՂԱՑԻՆ
1942թ. նոյեմբերի 25-ին պատմեց Փոքր Խանչալլի գյուղի բնակիչ Սանդուխտ Իսպիրյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 8 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 179-180):

ԷՇԻ ԳԵՐԵԶՄԱՆԸ՝ ՍՐԲԱՎԱՅՐ
1938-ին պատմեց չամդուրեցի Գարեգին Հայրապետյանը: Նրա մասին տվյալները ՝ թիվ 31 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 27-29):

ՎԵՂԱՐԸ ԻՇՈՒՆ ԳԼԽՈՒՆ
1938-ին պատմեց չամդուրեցի Գարեգին Հայրապետյանը: Նրա մասին ակնարկը ՝ թիվ 31 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 22-23):

ԶԱՆԳԻՆԸ
1940-ին պատմեց Փոքր Խանչալլի գյուղի բնակիչ Վարվառե Բդոյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 4 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 85-86):

ՏԵՐՏԵՐԻՆ ԿԱԹՆՈՎ ՀԱՑԸ
1940-ին պատմեց Փոքր Խանչալլի գյուղի բնակիչ Վարվառե Բդոյանը: Նրա մասին տեղեկությունները՝ թիվ 4 ծան.: (Բնագիրը իմ ԱԱ թիվ 79, էջ 106-107):

ԺԱՄՆ ՈՒ ՋԱՄԻՆ
1940-ին պատմեց Փոքր Խանչալլի գյուղի բնակիչ Վարվառե Բդոյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 4 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 119-121):

ՎԱՐԴԱՊԵՏՆ ՈՒ ՔՐԴԵՐԸ
1938-ին պատմեց չամդուրեցի Գարեգին Հայրապետյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 31 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 67, էջ 182-183):

ՆԱՍԻԲ - ՆԻՍԻԲ ԹԵԲԱՍԻ
1940-ին պատմեց Փառանձեմ Հայրապետյանը: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 33):

ՊԱՌՎԻ ՆՇԱՆԸ
1938-ին պատմեց չամդուրեցի Գարեգին Հայրապետյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 31 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 20):

ԳԵԾ ՅԱՐԱ
1947-ի օգոստոսին պատմեց ուճմանեցի Մկրտիչ Թումասյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 32 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 89):

ԳԱՎՌԱԳԻՏՈՒՆՆԵՐԸ
1947-ի օգոստոսին պատմեց ուճմանեցի Լևոն Թումասյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 33 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 107):

ՄԱՀՏԵՍ ՄԱՐԴԸ
Պատմեց ուճմանեցի Լևոն Թումասյանը 1947-ի օգոստոսին: Նրա մասին ակնարկը՝ թիվ 33 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 106):

ՏԵՐՏԵՐՆ ՈՒ ՏԻՐԱՑՈՒՆ
1947-ի օգոստոսին պատմեց ուճմանեցի Վաչագան Թումասյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 27 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 101):

ՂԱՌՂԱՌ ԾՆՈՂ ՄԱՐԴԸ
1947-ի օգոստոսին պատմեց թորիեցի Պողոս Գալոյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 29 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 119):

ՀԱՎԿԻԹ ԱԾՈՂ ՄԱՐԴԸ
1939 - ին պատմեց Փոքր Խանչալլի գյուղի բնակիչ Սանդուխտ Իսպիրյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 8 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 74-75):

ԽԱԲՎԱԾ ՀԱՐՄՆԵՐԸ
1947-ի օգոստոսին պատմեց Ջավախքի թորիացի Սուրեն Ասլանյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 50 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 121):

ՄԱՐԹ ՈՒ ԿՆԻԿ
1947-ի օգոստոսին պատմեց Ջավախքի Բոգդանովկայի շրջանի Թորիա գյուղի բնակիչ, 1901թ. ծնված Նիկոլայ Տոնականյանը: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ65, էջ 116):

ՄԱՐԹ, ԸՍԵ ԳԵԼԸ
1947-ի օգոստոսին պատմեց թորիացի Պողոս Գալոյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 29 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65 էջ 117):

ՔՐԴՈՒ ՏՂԵՆ
1947-ի օգոստոսին պատմեց թորիացի Պողոս Գալոյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 29 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 114):

ԵՐԵՔ ՀԱՐՈՒՐ ԳԴԱԼԸ
1940թ. հունիսի 16-ին պատմեց Փոքր Խանչալլի գյուղի բնակիչ Անուշ ապլա Բդոյանը: Նրա մասին ակնարկը ՝ թիվ 3 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 167-168):

ՆԱՆՆԻԿ, ԲԱԼԱ ՋԱՆ, ՆԱՆՆԻԿ
1940-ին պատմեց Փոքր Խանչալլի գյուղի բնակիչ Վարվառե Բդոյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 4 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 84-85):

ՇԱՅՄԱՐ ՕՑԻ ԱՌԱԿԸ
1947-ի օգոստոսին պատմեց ուճմանեցի Լևոն Թումասյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 33 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 104):

ՕՑՆ ՈՒ ՄԱՐԹԸ
1938-ին պատմեց չամդուրեցի Գարեգին Հայրապետյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 31 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 6-7):

ՎՐԵԺԽՆԴԻՐ ՕՋԸ
1940-ին պատմեց ախալքալաքցի Գևորգ Բդոյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 1 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 89):

ՄԵԾԱԳԼՈՒԽ ԴԱՏԱՎՈՐԸ
1938-ին պատմեց չամդուրեցի Գարեգին Հայրապետյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 31 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 4-5):

ԵՐԿՈՒ ՆՎԵՐ
1940-ին պատմեց Փոքր Խանչալլի գյուղի բնակիչ Վարվառե Բդոյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 4 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 109):

ԱՐՅՈՒՆՈՏ ՁԵՌՔԵՐՈՎ ՄԱՐԴԸ
1940-ին պատմեց Փոքր Խանչալլի գյուղի բնակիչ Վարվառե Բդոյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 4 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ79, էջ 125-126):

ՀԱՐՈՒՐ ՏԱՐՎԱ ՔՆԱԾ ՄԱՐԹԸ
1939-ին պատմեց Փոքր Խանչալլի գյուղի բնակիչ Սանդուխտ Իսպիրյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 8 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 73-74):

ՀՆԱՁԱՆԴՆԵՐԸ
1940-ին պատմեց Փոքր Խանչալլի գյուղի բնակիչ Վարվառե Բդոյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 4 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 101):

ԴՈԼՎԱԹԸ ՇԻՏԿԸՎԱՎ
1940-ին պատմեց Փոքր Խանչալլի գյուղի բնակիչ Վարվառե Բդոյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 4 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 100-101):

ԾՈՒՅԼ ՏՂԵՆ
1938-ին պատմեց չամդուրեցի Գարեգին Հայրապետյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 31 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 67, էջ 184):

ՊԱՌԿԱԾ ԿԸ ՔԱՂԵՄ
1940-ին պատմեց Փոքր Խանչալլի գյուղի բնակիչ Վարվառե Բդոյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ4 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 111-112):

ԹԱՄԲԱԼԸ
1938-ին պատմեց չամդուրեցի Գարեգին Հայրապետյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 31 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ79, էջ 25-26):

ԱԼԱՐ ԷԼ ՉԵՍ ԷՆԵ, ԽՈՍԻՍ ԿԸ
1940-ին պատմեց Փոքր Խանչալլի գյուղի բնակիչ Վարվառե Բդոյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 4 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 132-133):

ՍՏԱԽՈՍԸ
Պատմեց ուճմանեցի Վաչագան Թումասյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 27 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 99):

ԲՈՇԻՆ ԱԽՉԻԿԸ
1940-ին պատմեց Փոքր Խանչալլի գյուղի բնակիչ Վարվառե Բդոյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 4 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 107):

ՉԵՓՉԻ ՄՈՒՍՏԱՖԱՆ
1938-ին պատմեց չամդուրեցի Գարեգին Հայրապետյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 31 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 19):

ՄԻՍԸ
1938-ին պատմեց չամդուրեցի Գարեգին Հայրապետյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 31 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 33):

ՀԻՄԱԲ ՈՐԴԻՆ
1938-ին պատմեց Գարեգին Հայրապետյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 31 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 32):

ԿՈՒՅԲ ՁԻՈՒՑ ԳՈՂԱՑՈՂ ՏՂԱՆ
1938-ին պատմեց Գարեգին Հայրապետյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 31 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 31-32):

ՏԵՐՏԵՐԻ ՄԻՐՈՒՔԸ
1938-ին պատմեց Գարեգին Հայրապետյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 31 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 29-31):

ՁԿՆԿՈՒԼԸ ԹՈՌՆ Է ԸՆԿԵ
1938-ին պատմեց Գարեգին Հայրապետյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 31 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 27):

ՏԵՐՏԵՐՆ ՈՒ ԿԻՆՏՈՆ
1938-ին պատմեց Գարեգին Հայրապետյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 31 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 24):

ԳԻՏՈՒՆ ՊԱՀԱԿՆԵՐԸ
1939-ին պատմեց Սանդուխտ Իսպիրյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 8 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 75-76):

ՊԵՇԲԵԹԱՐ
1940-ին պատմեց Վարվառե Բդոյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 4 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 81-82):

ՏԸԲԸՌ ԱԿՈՆ
1938-ին պատմեց Գարեգին Հայրապետյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 31 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 1):

ՀԱՐՍ ՈՒ ԿԵՍՈՒՐ
1939-ին պատմեց չամդուրեցի Անահիտ Հայրապետյանը: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 73):

ՍԱՏԱՆԵՆ ԿԸՍԵ
1940թ. հունիսի 6-ին պատմեց Գևորգ Բդոյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 1 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ79, էջ 136):

ԲՌԱԹԸ
Պատմեց ախալքալաքցի Փառանձեմ Հայրապետյանը: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 102-103):

ՎԱ՜Յ, ԲՌԱԹ ՋԱՆ, ԿԵՂՏՈՏԵՍ ԿԸ
1988թ. պատմեց գրող Վլադիմիր Դանիելյանը: Գրի է առել կազմողը՝ Ռ. Ղարիբյանը:

ԱՄԱՆ ՋԱՐԴՈՂ ՀԱՐՍԸ
1940-ին պատմեց Վարվառե Բդոյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 4 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 108):

ԴՈՒ ՉԸՍԻ՞Ր
1940-ին պատմեց Հովսեփ Իսպիրյանը: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 135):

ՎԱՐԹԱՊԵՏՆՈՒՆ ՊԱՐԸ
1938-ին պատմեց Գարեգին Հայրապետյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 31 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 17):

ԱԼԻՆ ՈՒ ԿԱՐԿՈՒՏԸ
1940-ին պատմեց Հովսեփ Իսպիրյանը: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 135):

ԷՇՆ ՈՒ ԹՐԻՔԸ
1938-ին պատմեց Գարեգին Հայրապետյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 31 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 18):

ԴԱՎԵՆ ԲՈՍՏԸՆԻՆ ՄԵՂ
1938-ին պատմեց Գարեգին Հայրապետյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 31 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 18):

ԴԱԼԻ ԲԱՐՍԵՂԸ
1938-ին պատմեց Գարեգին Հայրապետյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 31 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 19):

ՄԱՄՄԱԴԻ ՄԱԼԸ
1938-ին պատմեց Գարեգին Հայրապետյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 31 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 3):

ԷՓԻ - ԷՓԻ ԵՓՆ Ի ՎՐԱՆ
Գրի է առնվել Ջավախքի Ախալքալաքի շրջանի Կուլիկամ գյուղում, 1941-ին: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 67, էջ 152):

ԿԱՆԱՆՑ ԲՈՂՈՔԸ
1980թ. փետրվարի 4-ին պատմեց Մամբրե Գոմկցյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 11 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 67, էջ 192):

ԷՇԵՐԻ ԳԱՆԳԱՏԸ
1938-ին պատմեց Գարեգին Հայրապետյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 31 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 2):

ՄՇԱԿ՝ ՀԱՑՆ ԻՐԵՆԵՆ
1980թ. փետրվարի 1-ին պատմեց Մամբրե Գոմկցյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 11 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 67, էջ 192):

ՀԵԼԵԼՆ ՈՒ ԱՌՅՈՒԾԸ
1980թ, փետրվարի 1-ին պատմեց Մամբրե Գոմկցյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 11 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 67, էջ 191):

ՖԱԼԼՈՒՄՆ ՈՒ ՉԱՐՈԽԸ
1942-ին Երևանում պատմեց չամդուրեցի Հերիքնազ Բրուտյանը: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 67, էջ 190):

ՏՆԵԳՈՂ ՏՂԵՆ
1938-ին պատմեց Գարեգին Հայրապետյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 31 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 67, էջ 188-189):

ՍԵՎ ԵԶԸ
1938-ին պատմեց Սանդուխտ Իսպիրյանը: Նրա մասին ակնարկը ՝ թիվ 8 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 67, էջ 164):

ՂԱՐԻԲ ՄԱՐԹՈՒՆ ՏՂԵՆ
1938-ին պատմեց Սանդուխտ Իսպիրյանը: Նրա մասին՝ թիվ 8 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 67, էջ 164-165):

ՊԱՌՎԻՍ ՄԵԿ ԷԼ ՏԸՆԿՏԸՆԿԱՑՈՒ
(Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 67, էջ 103):

ԷՌՍՈՒՆ ԴԱԳԻՆԱՊԿ
1938-ին պատմեց Գարեգին Հայրապետյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 31 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 12):

ՈՒՂՏԻ ՎԱԽԸ
1938-ին պատմեց Գարեգին Հայրապետյանը: Նրա մասին ակնարկը ՝ թիվ 31 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 26):

ՈՐՍՈՐԴՆԵՐԸ
1938-ին պատմեց Գարեգին Հայրապետյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ31 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 133):

ԽՈՐԱՄԱՆԿ ԱՂՎԵՍԸ
1938-ին պատմեց Գևորգ Բդոյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 1 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 87-89):

ԱՆՏԵՐԸ ՏԱՐ ԹԵՐՄԱՇԸ ԲԵՐ
1947-ին պատմեց ուճմանեցի Վաչագան Թումասյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 27 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 102):

ԲԱՋԻ - ԲԱՋԻ
1947-ի օգոստոսին պատմեց Պողոս Գալոյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 29 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 119):

ՄԵՌՆԻ ԿԻՆ, ԱՌՆԻ ՔԵՆԻՆ
1947-ին պատմեց Պողոս Գալոյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 29 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 118):

ԵԹԵ ՎԱՅԼԵՆ
1940 -ին պատմեց Վարվառե Բդոյանը: Նրա մասին ակնարկը՝ թիվ 4 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 133):

ԵՐԳԵՐ

ԳՈՒԹԱՆԻ ԵՐԳԵՐ

Գրի է առնվել Ջավախքում, 1940-ին: (1-ին էջ.....: Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 160-162):
Գրի է առնվել 1940-ին Փոքր Գյոնդուրայում: (2-3 էջ....: Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 68, էջ 23):
Գրի է առնվել Խոջաբեկ գյուղում, 1940-ին: (4 էջ.....: Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 68, էջ 26):
Գրի են առնվել Փոքր Խանչալլիում 1940-ին: (5-10 էջ....: Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 68, էջ 18, 48):
Գրի է առնվել Թորիայում, 1947-ին: (11 էջ ....: Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 109):
Գրի են առնվել 1947-ին, Ուճմանայում: (12-13 էջ ...: Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 87):
Գրի է առնվել Բալխո գյուղում, 1980-ին: (14 էջ...: Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 127, էջ 136):
Գրի է առնվել Փոքր Խանչալլիում, 1980-ին: (15 էջ...: Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 127, էջ 32):

ՍԻՐՈ ԵՐԳԵՐ

ԽՆԿԱՆՈՍ. 1. ՍԻՐԱԿԱՆՆ ԱՆՈՒՇ
Գրի է առնվել1947-ին, Ուճմանայում, տիկին Չեչիլ Խաչատրյանից: Վերջինս տնային տնտեսուհի էր՝ ծնված 1908թ.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 97):

ԱԽՉԻ ՏԻՐՈՒՆ
Գրի է առնվել 1965թ-ին Երևանում, Ջավախքի Աբուլ գյուղից ամուսիններ Ռուբեն և Սիրուն Բդոյաններից՝ ծնված 1908թ-ին:1920-ական թվականներին ընտանիքով տեղափոխվել են- Բոգդանովկայի Կաթնատու գյուղը, իսկ 1964-ին՝ Երևան: Ռուբենը ողջ կյանքում հովիվ է եղել, իսկ Սիրունը՝ տնային տնտեսուհի: Երկուսն էլ գյուղական երգիչներ էին, որոնց երգերն իրենց մեղեդիներով մեզ էին հասել Կարնո Ումուդում գյուղից: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 47-48):

ՉԻՆԱՐ ԵՍ
1965-ին ասացին Ռուբեն և Սիրուն Բդոյանները: Նրանց մասին ակնարկը տ.թիվ 2 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 66):

ՅԱՐԲՍ ԾԱՌՆԵՐԻ ՏԱԿ Է

1965-ին ասացին Ռուբեն և Սիրուն Բդոյանները: Նրանց մասին ակնարկը տ. թիվ 2 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 45):

ԱԽՉԻ ՇՈՂԻԿ

1965-ի ասացին Ռուբեն և Սիրուն Բդոյանները: Նրանց մասին ակնարկը տ. թիվ 2 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 46):

ԱԽՉԻ ՋԱՆԻԿԸՍ, Ո՞ՒՄ ՏՆԵՆ ԵՍ

1965-ին ասացին Ռուբեն և Սիրուն Բդոյանները: Նրանց մասին ակնարկը ՝ թիվ 2 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 26):

ԱՐԻ ՄԱՆԱՆ, ԱՐԻ

Ասացին Ռուբեն և Սիրուն Բդոյանները 1965-ին: Նրանց մասին ակնարկը՝ թիվ 2 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 111):

ԱՌՆՈՂԻԴ ՀԱԶԱՐ ԵՐԱՆԻ

Ասացին Ռուբեն և Սիրուն Բդոյանները 1965-ին: Նրանց մասին ակնարկը ՝ թիվ 2 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 112):

ՀԱՅԿՈ ՋԱՆ

1965-ին ասացին Ռուբեն և Սիրուն Բդոյանները: Նրանց մասին ակնարկը՝ թիվ 2 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 115):

ՕՍԱՆՆԱՆ ԵՄ, ՆԱՆԵ ՋԱՆ

1965-ին ասացին Ռուբեն և Սիրուն Բդոյանները: Նրանց մասին ակնարկը՝ թիվ 2 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 117-118):

ՎԱՌԵՑԻՐ ՄԵՋԻ

Ասացին Ռուբեն և Սիրուն Բդոյանները 1965-ին: Նրանց մասին ակնարկը՝ թիվ 2 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 120-121):

ՄԱՐԱԼՈ ԱԽՉԻԿ

Ասացին Ռուբեն և Սիրուն Բդոյանները 1965-ին: Նրանց մասին ակնարկը՝ թիվ 2 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 123-124):

ՕՏԱՆ ՆԱՆԵ

Գրի է առնվել 1939-ին Փոքր Խանչալլիում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 68, էջ 4-5):

ՉԸՏԵՍՍԱ ՅԱՐԲՍ

1965-ին ասացին Ռուբեն և Սիրուն Բդոյանները: Նրանց մասին ակնարկը՝ թիվ 2 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 132-133):

ՈՒԼ ՈՒԼ ԲՈՒԼՈՒՉՈՎ ՏՂԱ
Գրի է առնվել Փոքր Խանչալլիում, 1940-ին: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 68, էջ 15):

ԷՐԵՍԻԴ ԽԱԼԸ
Գրի է առնվել Ուճմանայում, 1947-ին: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 98):

ՃՈՐԱՆ ՆԱՉԼՈՒ
Գրի է առնվել Ջավախքում, հավանորեն 1940-ին: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ79, էջ 49):

ՏՈՒՆ ԱՐԻ
Գրի է առնվել Թորիայում, 1947-ի օգոստոսին: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 112):

ԱՆԵՃՔ
1947-ի օգոստոսին ասաց ուճմանեցի Ներսես Գասպարյանը՝ ծնված 1910թ.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 94):

ԽԱՂԻԿՆԵՐ

Գրի է առնվել (1. էջ.....) 1940-ին: Ասացին խմբված աղջիկները:
(Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 68, էջ 32-33, 47-48):

1940-ին գրի է առնվել (2. էջ ..... .) Փոքր Գյոնդուրայում, խմբված աղջիկներից ու պատանի-ներից: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 68, էջ 24):

1940-ին գրի է առնվել (3. էջ..... ..) Դիլիֆում, խմբված պատանիներից:
(Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 68, էջ 22-23):

1965-ին ասացին (4. էջ .....) Ռուբեն և Սիրուն Բդոյանները: Նրանց մասին ակնարկը՝ «Սիրո երգերի» թիվ 2 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 136-137):

1965-ին ասացին (5. էջ.....) Սիրուն և Ռուբեն Բդոյանները: Նրանց մասին ակնարկը տ. «Սի-րո երգերի» թիվ 2 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 72- 73):

1965-ին ասացին (6. էջ.....) Սիրուն և Ռուբեն Բդոյանները: Նրանց մասին՝ «Սիրո երգերի» թիվ 2. ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 56-57):

1965-ին ասացին (7. էջ.....) Սիրուն և Ռուբեն Բդոյանները: Նրանց մասին ակնարկը՝ «Սիրո երգերի» թիվ 2. ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 51-52):

1965-ին ասացին (8. էջ.....) Սիրուն և Ռուբեն Բդոյանները: Նրանց մասին ակնարկը՝ «Սիրո երգերի» թիվ 2. ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 52-53):

1965-ին ասացին (9. էջ.....) Սիրուն և Ռուբեն Բդոյանները: Նրանց մասին ակնարկը՝ «Սիրո երգերի» թիվ 2. ծան.: (Բնագիրը տ . իմ ԱԱ թիվ 75, էջ 91):

1965-ին ասացին (10. էջ.....) Սիրուն և Ռուբեն Բդոյանները: Նրանց մասին ակնարկը՝ «Սիրո երգերի» թիվ 2. ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 92):

1965-ին ասացին (11. էջ.....) Սիրուն և Ռուբեն Բդոյանները: Նրանց մասին ակնարկը՝ «Սիրո երգերի» թիվ 2. ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 96-97):

1965-ին ասացին (12. էջ.....) Ռուբեն և Սիրուն Բդոյանները: Նրանց մասին ակնարկը՝ «Սիրո երգերի» թիվ 2. ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 97-98):

1965-ին ասացին (13. էջ.....) Ռուբեն և Սիրուն Բդոյանները: Նրանց մասին ակնարկը՝ «Սիրո երգերի» թիվ 2. ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 99-100):

1965-ին ասացին (14. էջ....) Ռուբեն և Սիրուն Բդոյանները: Նրանց մասին ակնարկը՝ «Սիրո երգերի» թիվ 2. ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 100-101):

1965-ին ասացին (15. էջ.....) Սիրուն և Ռուբեն Բդոյանները: Նրանց մասին ակնարկը՝ «Սիրո երգերի» թիվ 2 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 144):

1965-ին ասացին (16. էջ ....) Սիրուն և Ռուբեն Բդոյանները: Նրանց մասին ակնարկը ՝ «Սիրո երգերի» թիվ 2 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 61-62):

1965-ին ասացին (17. էջ ....) Սիրուն և Ռուբեն Բդոյանները
(Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75 էջ 89-90):

1965-ին ասացին (18. էջ ....) Ռուբեն և Սիրուն Բդոյանները: Նրանց մասին ակնարկը՝ «Սիրո երգերի» թիվ 2 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 93):

1965-ին ասացին (19-23. էջ ....) Ռուբեն և Սիրուն Բդոյանները: Նրանց մասին ակնարկը՝ «Սի-րո երգերի» թիվ 2 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 94-96, 101-102, 30, 64-65):

Գրի է առնվել (24-25. էջ ....) Փոքր Խանչալլիում, 1947-ին:
(Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 81):

ՄԱՆԻՆԵՐ

Ծալկահայոց բանավոր ստեղծագործության արժեքավոր և խիստ ինքնատիպ մասը հանդիսացող **մանիները** մամուլից և գրավոր այլ աղբյուրներից հավաքել, դասակարգել և ժողովածուի մեջ է մցրել գիրքը կազմող և գրքի պատասխանատու խմբագիր Ռաֆայել Ղարիբյանը:

ՊԱՆԴԽՏՈՒԹՅԱՆ ԵՐԳԵՐ

ԿՌՈՒՆԿ ՍԻՐԵՍ ԷՐԿՈՒ ԲԱԼԻԴ ԱՐԵՎԸ (1)
1965-ին ասացին Ռուբեն և Սիրուն Բդոյանները: Նրանց մասին ակնարկը՝ «Սիրո երգերի» թիվ 2. ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 29):

ԷԼԻ ԵՐԿԻՆՔՆ ԱՄՊԵԼ Է (2)
1965-ին ասացին Ռուբեն և Սիրուն Բդոյանները: Նրանց մասին ակնարկը՝ «Սիրո երգերի» թիվ 2 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 128-129):

ՉԵԿԱՎ ՅԱՐԸՍ (3)
1965-ին ասացին Ռուբեն և Սիրուն Բդոյանները: Նրանց մասին ակնարկը՝ «Սիրո երգերի» թիվ 2 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 106-107):

ՆՇԱՆՎԱՐ, ԲԱՔՈՒ ՔԸՆԱՑԻՐ (4)
1965-ին ասացին Ռուբեն և Սիրուն Բդոյանները: Նրանց մասին ակնարկը՝ «Սիրո երգերի» թիվ 2 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 127):

ՕՐՓԵՐԻ ՍԻՐՏԸ ՏԽՈՒՐ ՄՈԼՈՐ (5)
Ասաց Ռուբեն Բդոյանը 1965-ին: Նրա մասին ակնարկը ՝ «Սիրո երգերի» թիվ 2 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 160):

Գրի են առնվել Ջավախքում, 1940 թվականին (6-10):

ՊԱՐԵՐԳԵՐ

ՄԱՅՐԻԿ, ՍԻՐԱԾ ՅԱՐԻ ՏՈՒ
Գրի է առնվել 1939-ին, Խոջաբեկում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 68, էջ 11):

ԴՈՒ ԻՄ ՍԻՐՏԻՆ ԴՈՒՐ ԷԿԱՐ
Գրի է առնվել Փոքր Խանչալլիում, 1939թ.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 68, էջ 7):

ՊԱՐԻ ՄԻՉԻ ՎԱՐԹ ԵՄ
1965-ին ասացին Ռուբեն և Սիրուն Բդոյանները: Նրանց մասին ակնարկը՝ «Սիրո երգերի» թիվ 2 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 114-115):

ՅԱՐՈ ՋԱՆ, ՅԱՐ
1965-ին ասացին Սիրուն և Ռուբեն Բդոյանները: Նրանց մասին ակնարկը՝ «Սիրո երգերի» թիվ 2 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 102-103):

ՏՈՒՏՈՒԼՆ ԷԿԱՎ ՄԵՐ ՏՈՒՆԸ
1965-ին ասացին Ռուբեն և Սիրուն Բդոյանները: (Բնագիրը՝ իմ ԱԱ թիվ 75, էջ 54-55):

ԷԼԻ ՊԱՐԸ ԲՈԼՈՐԱՎ
Ասացին Ռուբեն և Սիրուն Բդոյանները: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 57-58):

ՍԱՐԵՐ, ՀԵՏ ԳՆԱՑԵՔ
1965-ին ասացին Սիրուն և Ռուբեն Բդոյանները: (Բնագիրը՝ իմ ԱԱ թիվ 75, էջ 59-60):

ՍԱՐԵՐ, ԵՏ ԳՆԱՑԵՔ
Գրի է առնվել Ուճմանայում, 1947-ին: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 85):

ՀՈՎ ԱՐԵՔ, ՍԱՐԵՐ, ՀՈՎ ԱՐԵՔ
1965-ին ասացին Ռուբեն և Սիրուն Բդոյանները: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 74):

ԹԵԼԼԻ ՅԱՐ ՈՒՆԻՄ
Ասացին Ռուբեն և Սիրուն Բդոյանները: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 71):

ՏՈՒՐ ՆՈՐՈՐ ԱՏԻՆՆԵ
1965-ին ասացին Ռուբեն և Սիրուն Բդոյանները: (Բնագիրը՝ իմ ԱԱ թիվ 75, էջ 69-70):

ՏՂԱ, ԱՆՈՒՆԸԴ ԱՍԱ
1965-ին ասացին Սիրուն և Ռուբեն Բդոյանները: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 75):

ԳՈՎԱԿԱՆ ՅԱՐ ՋԱՆ
1965-ին ասացին Ռուբեն և Սիրուն Բդոյանները: (Բնագիրը՝ իմ ԱԱ թիվ 75, էջ 84-85):

ԼԱՉԱԿԸՍ ԼՎԱՑԵԼ ԵՄ
1965-ին ասացինՌուբեն և Սիրուն Բդոյանները: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 28):

ԹԵԼԼՈ, ԹԵԼԼՈ, ԹԵԼԼՈ ՋԱՆ
1965-ին ասացին Ռուբեն և Սիրուն Բդոյանները: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 31):

ՔՈՉԱՐՈՒՆ ՂԱՅՏԻՆ ԱՐԻ
1939-ին ասաց Գևորգ Բդոյանը: Նրա մասին ակնարկը ՝ «Ավանդությունների» թիվ 1 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 68, էջ 1):

ԹԵԼԼԻ ՅԱՄԱՆ ՔՈՉԱՐԻ
1965-ին ասացին Սիրուն և Ռուբեն Բդոյանները: (Բնագիրը՝ իմ ԱԱ թիվ 75, էջ 32-33):

ՔՈՉԱՐԻՆ ԿՈՏԸՄ ԳԱՐԻ
Ասացին Ռուբեն և Սիրուն Բդոյանները: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 12-13):

ԿԱՅՆԵԼ ԵՍ ԿԱՐՃ ՈՒ ԲԱՐԱԿ
1965-ին ասացին Ռուբեն և Սիրուն Բդոյանները: Նրանց մասին ակնարկը՝ «Սիրո երգերի» թիվ 2 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 34-35):

ԿԱՆԱՉ ԽԱԼԻՆ ՓՌԱԾ Է

Ասացին Սիրուն և Ռուբեն Բդոյանները: Նրանց մասին ակնարկը՝ «Սիրո երգերի» թիվ 2 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 41-42):

ԵՍ ՄԱՐԱԼ

1965-ին ասացին Սիրուն և Ռուբեն Բդոյանները: Նրանց մասին ակնարկը՝ «Սիրո երգերի» թիվ 2 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 11-12):

ՀԱՔԵԼ ԵՍ, ԱԼ ԵՍ ԴԱՌԵԼ

1965-ին ասացին Ռուբեն և Սիրուն Բդոյանները: Նրանց մասին ակնարկը՝ «Սիրո երգերի» թիվ 2 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 9-11):

ՇԵԿ ԱԽՉԻԿ ՊԱՐԱ ՄԵՋԸ

1965-ին ասաց Ռուբեն Բդոյանը: Նրա մասին ակնարկը՝ «Սիրո երգերի» թիվ 2 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 6-9):

ԿԱՅՆԵԼ ԵՄ՝ ԿԱԹ ԿԸԼՄԱՆԻՍ

1965-ին ասաց Սիրուն Բդոյանը: Նրա մասին ակնարկը՝ «Սիրո երգերի» թիվ 2 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 5):

ԾՈՒՆԿՍ Ի ՋԱՅՆԵՄ ԳԵՏԻՆԱ

1965-ին ասաց Սիրուն Բդոյանը: Նրա մասին ակնարկը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 4:

ԲԱԹՈՒԼԼՈ ՋԱՆ, ԲԱԹՈՒԼԼՈ

1965-ին ասացին Ռուբեն և Սիրուն Բդոյանները: Նրանց մասին ակնարկը՝ «Սիրո երգերի» թիվ 2 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 14-17):

ԲԱԹՈՒԼԼՈ ՋԱՆ, ԲԱԹՈՒԼԼՈ

Գրի է առնվել Ջավախքում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 66):

ԱԿՈՓ ՋԱՆ

1965-ին ասացին Սիրուն և Ռուբեն Բդոյանները: Նրանց մասին ակնարկը՝ «Սիրո երգերի» թիվ 2 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 67-68):

ԱԽ ՋԱՆ ԻՄԱՆ, ՋԱՆ ԻՄԱՆ

Գրի է առնվել Ջավախքում, հավանորեն 1940-ին: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 57):

ԿՈԽԲԱ ԷԿԱՆ ՍԵԼԵՐԸ

Գրի է առնվել Ջավախքում, հավանորեն 1940-ին: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 58):

ՇԱԽՈՎ ՊԱՐ

Գրի է առնվել Փոքր Խանչալլիում, 1939-ին: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 68, էջ 6-7):

Փափուրի
1965-ին ասացին Ռուբեն և Սիրուն Բդոյանները: Նրանց մասին ակնարկը՝ «Սիրո երգերի» թիվ 2 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 17-20):

ԲՈՅՈՎ ԲՈՒՍՈՎ ԻՄ ՅԱՐՆ Է
Ասաց Սիրուն Բդոյանը: Նրա մասին ակնարկը՝ «Սիրո երգերի» թիվ 2 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 25):

ՀՈՅ ՆԱԶԸՄ
Գրի է առնվել 1940-ին, Փոքր Խանչալլիում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 68, էջ 16):

ԷԼԼԻ ՅԱՐ
Գրի է առնվել Փոքր Գյոնդուրայում, 1940-ին: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 68, էջ 25):

ԷՐԹԻՔ, ԷՐԹԻՔ ԲՌՆԵԼ ԵՄ
Գրի է առնվել Փոքր Խանչալլիում, 1947-ին: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 79):

ՔԵԼԵ ՆԱԶԱՆ
Գրի է առնվել 1947-ի օգոստոսին: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 81):

ՀԱՄԱՅԱԿ ՋԱՆ
1947-ին գրի եմ առել Փոքր Խանչալլի գյուղի բնակիչ Բալասան Բդոյանից՝ ծնված 1930թ.- ին: Ապրել է հայրենի գյուղում, Ալթայում և Երևանում: Հմուտ երգասաց և պարող է: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 76):

ՀԱՆԴԵ ԹԻԹԵՌՆԱԿ
Գրի եմ առել 1947-ին, Փոքր Խանչալլիում, Բալասան Բդոյանից, Սանդուխտ Վարդանյանից: Վերջինս ծնվել է 1912թ.: Երգասաց և պարող է: Զբաղվում է տնային տնտեսությամբ: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 76):

ՀԵՏԵՎԻՑԴ ԳԱԼԻՍ ԵՄ
Գրի է առնվել Փոքր Խանչալլիում, 1947-ին: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 77):

ՊԱՂ ԱԽՊՈՒՐԻ ՔԱՐԻ ՎՐԱ
Գրի է առնվել 1947-ի օգոստոսին, Փոքր Խանչալլիում: (Բնագիրը՝ իմ ԱԱ թիվ 65, էջ 78):

ՍԵՐ ՉՄՆԱՑ, ՋՈՒՐ ՔՆԱՑ
Գրի է առնված Փոքր Խանչալլիում, 1947-ին: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 78):

ԳՆԱ, ԳՆԱ, ԳԱԼԻՍ ԵՄ
Գրի է առնված1947-ի օգոստոսին, Փոքր Խանչալլիում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 79):

ԲԱՂՈՒՄԸ ԾԻՐԱՆ ԿԸԼԼԻ
Գրի է առնվել Փոքր Խանչալլիում, 1947-ի օգոստոսին: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 80):

ՍԻՐԵԼ ԵՄ, ՍՐՏՈՎՍ ՉԷ
Գրի է առնվել 1947-ի օգոստոսին, Փոքր Խանչալլիում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 80):

ՕՍԱՆ ՅԱՐ
Գրի է առնվել 1947-ի օգոստոսին, Փոքր Խանչալլիում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 77):

ԹԻՎ 47
Գրի է առնվել Ջավախքում, հավանորեն 1940-ին: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 60-61):

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՐԳԵՐ

ԱՆԹՐԱՆԻԿԸ (1- ին)
1965-ին հիշեց և երգեց աբուլցի Ռուբեն Բդոյանը: Նա այս երգը լսել է1914 թվականին, երբ գառնարած էր: Մթնով տուն վերադառնալիս՝ այդ գյուղի գառնարածները, սրտապնդվելու և իրենց քաջ զգալու համար սովորություն էին դարձրել երգել այս երգը: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 126):

(2 - րդ)
Ասաց Ռուբեն Բդոյանը 1965-ին, հավաստելով, թե իբր այս երգը հորինել է պարնիգեղցի Թաթոսը 1920 թվականին, որտեղից էլ տարածվել է Ջավախքում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 27):
(3-րդ)
Գրի է առնվել 1942թ.-ին, Փոքր Խանչալլիում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 68, էջ 40):

(4-րդ)
Գրի է առնվել 1940-ին, Փոքր Խանչալլիում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 68, էջ 34):

(5-րդ)
Գրի է առնվել 1939-ին, Փոքր Խանչալլիում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 68, էջ 10):

(6-րդ)
Գրի է առնվել 1944-ին, Փոքր Խանչալլիում:

ՇՈՒՆ ՏԱՃԻԿԸ ԱՐՓԱՉԱՅԸ ԱՆՑԵԼ Է (7-րդ)
Գրի է առնվել Երևանում, Ռուբեն և Սիրուն Բդոյաններից, 1965-ին: Նրանց մասին ակնարկը՝ «Սիրո երգերի» թիվ 2 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 88-89):

ՀԱՍԱՆ ՂԱԼԱ (8-րդ)
Ասացին Ռուբեն և Սիրուն Բդոյանները 1965-ին: Նրանց մասին ակնարկը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 24:

ԷԼԵՔ, ՏՂԵՔ, ԷԼԵՔ (9-րդ)
1965-ին ասացին Ռուբեն և Սիրուն Բդոյանները: Նրանց մասին ակնարկը՝ «Սիրո երգերի» թիվ 2 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 87-88):

ՀՈՓՈՓ ՄԱՐԱԼ (10-րդ)
Ասացին Ռուբեն և Սիրուն Բդոյանները, 1965-ին: Նրանց մասին ակնարկը՝ «Սիրո երգերի» թիվ 2 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 121-123):

ՄԻ ՏԱՆԻ ՅԱՐԸՍ (11-րդ)
1965-ին ասացին Ռուբեն և Սիրուն Բդոյանները: Նրանց մասին՝ «Սիրո երգերի» թիվ 2 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 48-49):

(12-րդ)
Հորինել է աբուլցի Սմբատ Բդոյանը Հայրենական պատերազմի տարիներին: Ասաց Ռուբեն Բդոյանը 1965-ին: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 159):

ՏԱՐԻՆ ՎԱՏ Ը (13-րդ)
Գրի է առնվել 1947-ի օգոստոսին, Ուճմանայում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 94):

ՄՈՒԺԸ ՊԱՏԵՑ (14-րդ)
Գրի է առնվել 1947-ի օգոստոսին, Փոքր Խանչալլիում, Բալասան Բդոյանից: Նրա մասին տես «Պարերգերի» թիվ 38 ծան.:
ԿՌՈՒՆԿՆԵՐ (15-րդ)
Գրի է առնվել 1947-ի օգոստոսին: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 94):

ԿԵՐՉ (16-րդ)
Ասաց Բալասան Բդոյանը Փոքր Խանչալլիում, 1947-ին: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 83):

ՓԱԽԻՐ ՊՐՈՒՍ (17-րդ)
Գրի է առնվել Թորիայում, 1947-ի օգոստոսին: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 120):

ՓԱԽԻ ՊՌՈՒՍ (18-րդ)
Գրի է առնվել 1947-ի օգոստոսին, Թորիայում: Հավաստվում է, որ իբր հորինել է թորիացի Պողոս Դոշոյանը: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 111):

ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԵՐԳԵՐ

ՉԱԽՈՐԴ ՔԱՄԻՆ (1-ին)
Երգը հորինել է աբուլցի Սմբատ Բդոյանը, 1926-ին՝ անասունների համաճարակային հիվանդության անկման տարում: Հիշեց և հուշեց Ռուբեն Բդոյանը, 1965-ին: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 157):

ՀՈՐԹԵՐՈՒՆ ԵՐԳԸ (2-րդ)
Երգը հորինել է Սմբատ Բդոյանը Աբուլ գյուղում, 1920-ական թվականների մի հեղեղատից հետո: Հիշեց Ռուբեն Բդոյանը 1965-ին: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 158):

ԷԼԻ ՓՉԵՑ ՉԱՐ ՔԱՄԻՆ (3-րդ)
1965-ին ասաց Ռուբեն Բդոյանը: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 128):

ԵՍ ԱՂՎԱՆՆ ԵՄ (4-րդ)
1941թ.-ի փետրվարի 20-ին ասաց Հրազդանի շրջանի Ախպար գյուղի բնակչուհի Աշխեն Միքայելյանը:

ԶՈՒԼՈՒՄ Է, ՄԱՅՐԻԿ (5-րդ)
Երգի մեջ հիշատակվող սպանվածը գանձացի է: Դեպքը տեղի է ունեցել 1914-ին: Հորինել են Աբուլում: Ասաց Ռուբեն Բդոյանը, 1965-ին: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 63-64):

ՔԱՄԲԱԽ ԸԼԼԻՆ ՁԵՐ ՁԱՂՁԸՆԻՆ (6-րդ)
Երգը հորինվել է 20-րդ դարի սկզբներին, Փոքր Խանչալի գյուղի բնակիչ Մանուկենց Գևոյի կողմից: Հիշեցին և հուշեցին նույն գյուղի բնակիչներ Խաչատուր Բդոյանը և Հովսեփ Իսպիրյանը, 1944-ի նոյեմբերին: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 144):

Ծանոթություն. - 1830-ական թվականներին Փոքր Խանչալլիում առաջին ջրաղացը կառուցել է Բդոյենց Պապոն՝ այս գյուղի Բդոյանների նահապետը: Ջրաղացը, որը հիմնվել է Աթորիկ կոչված բլրի լանջին, ջրի սակավության պատճառով ունեցել է մեկ քար: Պապոյից հետո այս ջրաղացը գործել է երկար ժամանակ: Բայց երբ այն հասել է Պապոյի ծոռներին, գյուղին ավելի մոտ ու հարմար տեղում ջրաղաց են կառուցում Այվազենք (Դավիթենք), որը հայտնի էր «Աղաբակի ջաղասկ» անունով: Այս նորի պատճառով Բդոյենց ջրաղացը շարքից դուրս է գալիս և ծաղրվում: Բայց որովհետև Աղաբեկը շատ ծույլ և անտարբեր մարդ էր, նրա ջրաղացն էլ աստիճանաբար դադարում է գործելուց:
1918-ին Բդոյենց և Դավիթենց ջրաղացները հիմնովին ավերակ դարձրին ավարառու, ամեն ինչ վատնող, ոչնչացնող թուրքերը: Գյուղացիները հարկադրաբար օգտվում էին Դիլիֆի ջրաղացներից:

ԻՐԵՔ ԿՈՒՌԻԿ (7-րդ)
Երգը 1944-ին հիշեցին Փոքր Խանչալլի գյուղի բնակիչներ Խաչատուր Բդոյանը և Հովսեփ Իսպիրյանը: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 146):

Ծանոթություն. - Դաղեշցի Դժիր Մարգարը, որը «տնավան աշշըղ» էր, Դիլիֆի մի ջրաղացում աղուն աղալու համար 1 կոռիկի փոխարեն 3 կոռիկ վարձ է տալիս և հորինում է այս երգը: Վերջինս տարածված էր նաև շրջակա գյուղերում: (Մարգարը մահացել է 1920- ական թվականներին):

ԴԻԼ ԿԱՑԻՆ (8-րդ)
Գրի է առնվել Փոքր Խանչալլիում, 1939թ.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 68, էջ 3):

ԱՄՈՒՄՆՈՒԹՅՈՒՆ (9-12-րդ)
Գրի է առնվել 1940 թվականին, Փոքր Խանչալլիում:

ՀԱՐՍԱՆԻՔ (13-րդ)
Ասացին Սիրուն և Ռուբեն Բդոյանները: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75,, էջ 89):

Ծանոթություն. - Նշանադրվող տղայի բարեկամները հարսնացուին նշան տալու գնալիս, նրանց տանը բավական ժամանակ քեֆ են անում առանց հարսնացուի: Եվ ապա հեղինակավոր մեկի առաջարկով պահանջվում է, որ հարսնացուն «առաջ բերվի»: Նվագախումբը կարծես թե հրաժեշտ է տալիս խնջույքի մասնակիցներին՝ «տղեք, ձեզի բարի գիշեր» մաղթելով և երգում ու նվագում է նշանտվեքի երգի առաջին տունը: Քիչ հետո լսվում են նվագն ու երգը: Նվագողներն առջևից և հարսնացուն մի հարսի ուղեկցությամբ նրա ետևից՝ գալիս են խնջույքի սրահ: Հարսնացուն և ուղեկցող հարսը, գլուխ խոնարհելով, ողջունում են հասարակությանը: Երգիչները երգով սոխակին ներկայացնում են վարդին:
Աբուլ գյուղի երգը Ջավախքի մյուս վայրերի նույնանուն երգից տարբերվում է հրաժեշտի քառյակով, որը հնագույն երգի վերապրուկն էր լինելու:

(14-րդ)
Գրի է առնվել Մեծ Գյոնդուրայում, 1944-ին: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 68, էջ 48-49):

(15-րդ)
Գրի է առնվել1944-ին, Փոքր Խանչալլիում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 68, էջ 49): Այս երգը երգում էին թմբկահարները կամ դուդուկահարի դամ բռնողները՝ նոր նշանված աղջկանը թոնրատնից ձմեռնատուն նվագախմբով առաջ բերելիս:

(16-րդ)
Գրի է առնվել 1940-ին Փոքր Խանչալլիում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 68, էջ 50-51): Հալավօրհնեքի երգը Ջավախքում երգում էին թագվորցիներն ու ծաղկվորները՝ փեսային պսակի տանելուց առաջ:

(17-րդ)
(Գրի է առնվել Ջավախքում, հավանորեն 1940-ին):

ԸՆՏԱՆԻՔ

(18-րդ)
Գրի է առնվել 1930-ական թվականների վերջերին:

(19-րդ)
Գրի է առնվել 1965-ին: Երգը հորինվել է Աբուլ գյուղից Էփրիկյանների գերդաստանի հասցեին, 20-րդ դարի սկզբին:

(20-րդ)
Գրի է առնվել Ջավախքում, հավանորեն 1939-ին: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 62):

(21-26-րդ)
Գրի են առնվել հավանորեն 1930-ական թվականներին:

(27-րդ)
Գրի է առնվել 1980-ին, Փոքր Խանչալլիում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 127, էջ 34-35):

Ծանոթություն. - Գանձայում հորինվել և Փոքր Խանչալլի է անցել «Խոպան» չվողներին մտրակող այս երգը, որը սրտառուչ մեղեդիով երգեց 14 տարեկան Սանդուխտ Լևոնի Ավագյանը:

ԽԱՌՆ ԵՐԳԵՐ

ԴԱՍՏԱՆ (1-ին)
1965-ին հիշեց Ռուբեն Բդոյանը: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 138-143):
Ծանոթություն.- Ըստ բանասաց Ռուբեն Բդոյանի և նրա հորաքույր Հռոմսիմա Ավագյանի, այս «Դաստանը» երգվել է Կարնո այն գավառում, որտեղ ապրել են Աբուլ գյուղի այժմյան բնակիչները 1890 թվականից առաջ: Աբուլ տեղափոխվող Ստեփան Բդոյանը հիշել է այս պոեմը և փոխանցել իր ժառանգներին՝ հատկապես երգիչ Սմբատին ու Հռոմսիմային: Սմբատը բոլոր «օդա նստողներին» և հարսանեկան հանդեսների ժամանակ **Դաստանն** արտասանելիս է եղել ժողովրդի խնդրանքով: Արտասանել է երգեցիկ ձայնով, որից էլ երևում է, որ այն ժամանակին երգվել է հատուկ մեղեդիով: Արտասանելիս Սմբատն իր գավազանը որպես սազ է ձևացրել և օդա-ձմեռնատան նավի մեջ քայլել է ետևառաջ: Դաստանը իմ խնդրանքով գրի է առել Հռոմսիմայի թոռը՝ Վալյան և ուղարկել Երևանում բնակվող Ռուբեն Բդոյանին, ումից էլ ես արտագրել եմ: Կան սխալագրություններ, աղավաղումներ, որոնք բանասացից կամ Վալյայից են գալիս: Որոշակիորեն երևում է, թե «Դաստանը» երկու պոեմների խառնուրդ է:
Այնպես է թվում, թե այս դաստանը Խնկանոսի (Ղունկիանոսի) ստեղծագործությունն է լինելու:

ԱՇՈՒՂՆԵՐԻ ՄՐՅՈՒՄԸ (2-րդ)
1965-ին ասաց Ռուբեն Բդոյանը: Վերջինիս մասին ակնարկը՝ «Սիրո երգերի» թիվ 2 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 22-23):

ԹՈՒԹՈՒՆ (3-րդ)
Գրի է առնվել Թորիայում, 1947-ի օգոստոսին: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 111):

ԹՈՒԹՈՒՆ (4-րդ)
Գրի է առնվել 1947-ի օգոստոսին, Ուճմանայում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 110):

ԻՄ ԴԱՐՏԵՐՍ ՈՒՄ ՊԱՏՄԵՄ (5-րդ)
Գրի է առնվել Ջավախքում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 69):

ՄԵՐ ՄԵԾ ԱՐՏԸ ՓՈՒՇ ԿԸԼԼԻ (6-րդ)
Գրի է առնվել Ջավախքում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 68):

ԷԼԵՔ ԱՇԵՔ ՎԵՎ ՔՈՒՔԱ (7-րդ)
Գրի է առնվել Ջավախքում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 77):

ԻՄԱԼ ԷՆԻՄ (8-րդ)
Գրի է առնվել1947-ին, Թորիայում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 112):

ՎԱՐԹ ԿՈՇԻԿԸՍ (9-րդ)
1965-ին ասաց Սիրուն Բդոյանը: Նրա վերաբերյալ ակնարկը՝ «Սիրո երգերի» թիվ 2 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 36-37):

ՎԱՐԹ ԿՈՇԻԿԸՍ (10-րդ)
1965-ին ասացին Սիրուն և Ռուբեն Բդոյանները: Նրանց վերաբերյալ ակնարկը՝ «Սիրո երգերի» թիվ 2 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 80-81):

ԼՈՒՍԸՄ ՏԵՍՍԱ (11-րդ)
1965-ին ասացին Սիրուն և Ռուբեն Բդոյանները: Նրանց վերաբերյալ ակնարկը՝ «Սիրո երգերի» թիվ 2 ծան.: (Բնագիրը տ, իմ ԱԱ թիվ 75, էջ 35-36):

ԿՌՈՒՆԿ, ԹԵ ԿԸ ՍԻՐԵՍ ԱՐԹԱՐՈՒԹՈՒՆԸ (12-րդ)
1965-ին ասաց Ռուբեն Բդոյանը: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 42-43):

ԼԵԼԻԿ (13-րդ)
Գրի է առնվել 1940-ին, Փոքր Խանչալլիում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 68, էջ 13):

ՄԵՐԸՍ ՔԸՆԱՑ ԱՎԵԼԻ (14-րդ)
1940-ին գրի է առնվել Փոքր Խանչալլիում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 68, էջ 14):

ՆՈՐԸ ՆՈՐԵԼ Է (15-րդ)
Գրի է առնվել Ջավախքում, հավանորեն 1965-ին: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 44):

ՀԵՔԱԹ - ՀԵՔԱԹ (16-րդ)
1944-ին գրի է առնվել Փոքր Խանչալլիում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 154):

ՀԵՔԱԹ - ՀԵՔԱԹ (17-րդ):
1947-ի օգոստոսին գրի է առնվել Ուճմանայում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 95):

ԶԸՄԲԱԹՆ ԵՄ (18-րդ)
1965-ին ասաց Ռուբեն Բդոյանը: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 154-156):

Ծանոթություն. - Զմբաթ էին անվանում աբուլցի Սմբատ Բդոյանին՝ ծնված 1887 թվականին: Հողագործ էր, տիրացու և երգիչ: Նրա պապը՝ Հակոբ Բդոյանը, Կարնո Ումուդում գյուղից էր: Աբուլ էր գաղթել 1830-ին: Սմբատը մահացել է 1963-ին: Իր կյանքի երգը հորինել է1943 թվականին:

ՉԻՏԵՄ՝ ՎԵՐԱ՞Ն ԷՐԹԱՄ (19-րդ)
1965-ին ասաց Ռուբեն Բդոյանը: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 129):

ՀՈՓ ՏԻՐՈՒՆ (20-րդ)
Երևանում բնակվող գյումբուրդեցուց գրի է առնվել1940-ին: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 68, էջ 40):

ՉԵՄ ԸԼԼԻ ՀԱՎՏԵՍ (21-րդ)
1965-ին ասացին Ռուբեն և Սիրուն Բդոյանները: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 132):

ԵՍ ՄԵԿ ԾԱՌ ԵՄ ԾԻՐԱՆԻ (22-րդ)
1965-ին ասացին Ռուբեն և Սիրուն Բդոյանները: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 131):

ՍԱՐԸՆԳԻԼ (23)
1965-ին ասացին Ռուբեն և Սիրուն Բդոյանները: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 104):

ՊՍԱԿՎԵՍ ՆԵ, ԼԱՎԱՄՆԵ (24-րդ)
1965-ին ասացին Սիրուն և Ռուբեն Բդոյանները: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 135):

ՆՇԱՆ ՆԿԱՐԸ (25-րդ)
1965-ին ասացին Ռուբեն և Սիրուն Բդոյանները: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 105):

ՇՈՒՌ ՏԱՄ ՓՈՒԹԱԼՈՒՍ ԾԱԼԵՐԸ (26-րդ)
1965-ին ասացին Ռուբեն և Սիրուն Բդոյանները: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 107-110):

ԵՐԵՎԱՆ ԲԱՂ ԵՄ ԱՌԵ (27-րդ)
1965-ին ասացին Ռուբեն և Սիրուն Բդոյանները: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 110-111):

ՕՎԱՆԵՍ (28-րդ)
1947-ին ասացին Բալասան Բդոյանը և Սանդուխտ Վարդանյանը Փոքր Խանչալլիում:

ԿՈԼԽՈԶՆԻԿՆ ՈՒ ՄԵՆԱՏՆՏԵՍԸ (29-րդ)
1947-ի օգոստոսին գրի է առնվել Թորիայում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 120):

(30-րդ)
Գրի է առնվել1940-ին, Փոքր Գյոնդուրայում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 68, էջ 25):

(31-րդ)
Գրի է առնվել Ջավախքում, հավանորեն 1940-ին: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 48):

(32-րդ)
Գրի է առնվել Փոքր Խանչալլիում, հավանորեն 1940-ին: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 68, էջ 2):

(33-34-րդ)
Գրի են առնվել 1940-ին, Փոքր Գյոնդուրայում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 68, էջ 24, 26):

(35-րդ)
Գրի է առնվել1940-ին, Մեծ Գյոնդուրայում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 68, էջ 52):

(36-37-րդ)
Գրի են առնվել Ջավախքում, հավանորեն 1940-ին:

Ջավախքի գյուղերի ծաղրանունները (38-րդ)
Գրի է առել բնիկ ախալքալաքցի Սերգեյ Շիրինյանը: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 126, էջ 11-13):

Գյուղերի ծաղրանունները (39-րդ):
«Ջավախքի գյուղերի ծաղրանունները» ոտանավորի համեմատ այս մեկը համառոտ մի հորինվածք է: Պահպանված սահմանափակ գյուղերի քանակությունը հիմք է տալիս ենթադրելու, որ այն անավարտ է եղել ի սկզբանե և կամ մեզ է հասել առանձին մի հատվածը միայն: (Կազմող և պատասխանատու խմբագիր՝ Ռ. Ղարիբյան):

Թոյրացոց դաստան (40-րդ):
Գրի է առնվել 1947-ին, Ուճմանայում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 98):

Ծանոթություն. - Հորինել է Ուճմանայի հանդապահ Թումասյանը այն բանից հետո, երբ թորիացիք, բռնություն գործելով հանդապահի վրա և ծեծելով նրան, հոտը և նախիրը արածացրել են Ուճմանայի արգելված մարգագետիններում: Ուճմանեցոց այս զավեշտական երգը թորիացիք լսում են մեծ զայրույթով և անծանոթների մոտ հարմարեցնելով այն երգում են՝ ծաղրելով Ուճմանային: 1985-ին լսեցի, որ թորիացիք, մի բանաստեղծի օգնությամբ, մի պատասխան քառյակ են ստեղծել, որը շատ սուր և հայհոյախառն լինելով, չեմ ներկայացնում ընթերցողի դատին (Վ. Բ.):

ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԵՐԳԵՐ

ՊՈՒՐՊԱՏԻԿ (1-ին)
1965-ին ասաց Սիրուն Բդոյանը: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 85):

ՆՈՒՐԻՆ (2-րդ)
1947-ի օգոստոսին գրի է առնվել Ուճմանայում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 95):

ԾԱՐԾԱԹԱՐ (3-րդ)
1940-ին գրի է առնվել Փոքր Գյոնդուրայում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 68, էջ 27):

(4-5-րդ)
1947-ի օգոստոսին գրի են առնվել Ուճմանայում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 95):

(6-7-րդ)
1940-ին գրի են առնվել Փոքր Խանչալլիում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 68, էջ 17):

ԱՐԵՎ-ԱՐԵՎ (8-րդ)
1947-ի օգոստոսին գրի է առնվել Ուճմանայում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 95):

Ծանոթություն. - Արտասանում են երեխաները՝ քարաքոսով ափերը ներկելիս և արևին դեմ անելիս:

ՄԵԾ ՊԱՍ (9-րդ)
Գրի է առնվել 1965-ին: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 75, էջ 86):

Ծանոթություն. - Սույն բաժնի վերջին՝ 9-16-րդ միավորները գրառել է ժողովածուն կազմողը՝ Ռ. Ղարիբյանը:

ԱՂՈԹՔՆԵՐ

ԳԵԼԿԱՊԵՐ (10-րդ)
Գրի են առնվել. Ուճմանայում՝ 1947-ին, Դիլիֆում՝ 1939-ին, Խոջաբեկում՝ 1940-ին: (Բնագրերը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 85, թիվ 68, էջ 9, թիվ 68, էջ 26:)

ՇԱՆ ԿԱՊ (11-րդ)
1947-ի օգոստոսին գրի է առնվել Ուճմանայում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 85):

ՕԽՉՈՒՄ (12-րդ)
1947-ի օգոստոսին գրի է առնվել Ուճմանայում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 86):

ԵՐԿՈՒՆՔԻ ՊԱՀԻՆ (13-րդ)
1947-ի օգոստոսին գրի է առնվել Ուճմանայում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 96):

ՃՐԱԳ ՎԱՌԵԼԻՍ (14-րդ)
1947-ի օգոստոսին գրի է առնվել Ուճմանայում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 86):

ՃՐԱԳ ՄԱՐԵԼԻՍ (15-րդ)
1947-ի օգոստոսին գրի է առնվել Ուճմանայում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 86):

ՔՆԵԼԻՍ (16-րդ)
Գրի են առնվել 1947-ին Ուճմանայում (ԱԱ թիվ 65, էջ 6), Դիլիֆում՝ 1940-ին (ԱԱ թիվ 68, էջ 19) և դարձյալ Ուճմանայում (ԱԱ թիվ 65, էջ 95):

ԿԵՍԳԻՇԵՐԻՆ (17-րդ)
1947-ի օգոստոսին գրի է առնվել Ուճմանայում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 86): Արտասանվում է գիշերն արթնանալիս կամ ճանապարհ գնալիս:

ՎԱՏ ԵՐԱՉ ՏԵՄՆԵԼԻՍ (18-րդ)
1940-ին գրի է առնվել Դիլիֆում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 68, էջ 19):

ԱՌԱՎՈՏՅԱՆ ԱՆԿՈՂՆՈՒՄ (19-րդ)
Գրի է առնվել Ուճմանայում, Անուրկայից, 1947-ի օգոստոսին: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 85):

ԴՈՒՌԸ ԲԱՆԱԼԻՍ (20-րդ)
1947-ի օգոստոսին ասաց ուճմանեցի Անուտկան: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 26):

ԱՂՈԹԱՐԱՆԻՆ ԱՂՈԹԵԼԻՍ (21-րդ)
Գրի է առնվել Դիլիֆում, 1940-ին: (Բնագիրը տ. իմ ԱԱ 68, էջ 19):

ԴՈՒՌԸ ՓԱԿԵԼԻՍ (22-րդ)
Գրի է առնվել Ուճմանայում, 1947-ի օգոստոսին: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65, էջ 85):

ԷՇՍ (23-րդ)
Գրի է առնվել Փոքր Խանչալլիում, 1940-ին: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 68, էջ 12):

(24-րդ)
Գրի է առնվել Դիլիֆում, 1940-ին: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 68, էջ 23):

ՎԻՊԱԿԱՆ ԲԱՆԱՁԵՎԱՅԻՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ ՓՈՔՐ ԽԱՆՉԱԼԼԻՈՒՄ (1-ին)
Գրի են առնվել տարբեր ժամանակներում՝ սկսած 1938 թվականից: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 66):

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ ԹՈՐԻԱՅՈՒՄ և ՈՒՃՄԱՆԱՅՈՒՄ (2-րդ)
Գրի են առնվել 1947-ի օգոստոսին՝ խմբված երիտասարդներից և պատանիներից: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 65):

ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿՆԵՐ (3-րդ)

ԱՌԱԾՆԵՐ և ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐ (4-րդ)
Գրի են առնվել Ջավախքում և Երևանում վերաբնակված ջավախքցիներից, 1938-1944 թվականներին: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 66):

ԵՐԳՈՒՄՆԵՐ (5-րդ)
Տարբեր ժամանակներում գրի են առնվել Ջավախքում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 66):

ՕՐՀՆԱՆՔՆԵՐ (6-րդ)
Գրի են առնվել տարբեր ժամանակներում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 66):

ԱՆԵԾՔՆԵՐ (7-րդ)
Գրի են առնվել տարբեր ժամանակներում: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 66):

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԹՈՒՐՔԵՐԵՆ ՎԻՃԱԿԻ ԵՐԳԵՐԸ ՋԱՎԱԽՔԻ ՓՈՔՐ ԽԱՆՉԱԼԼԻ ԳՅՈՒՂՈՒՄ

Գրի են առնվել 1940 թվականի հունիսի 21-ին: Ասացողներ՝ Վարվառե Բդոյանը, Սանդուխտ Իսպիրյանը, Վերոն և Նազո Եսոյանները, Եվա Հաբոյանը, Եփրեմ Վարդանյանը և Նվարդ Ավագյանը:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԶՐՈՒՅՑՆԵՐ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գրիգոր Նարեկացի (1)
1944թ. պատմեց Փոքր Խանչալլի գյուղի բնակիչ Եղիշե Մովսեսի Պոտոսյանը՝ Անուշ ապլա Բդոյանի լրացումներով: Եղիշեի մասին ակնարկը տես առակների բաժնի թիվ 46 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 184-194):

Աշշըղ Ջիվանին մշակ (2)
1938-ին պատմեց չամդուրեցի Գարեգին Հայրապետյանը: Նրա մասին գրված ակնարկը տես հեքիաթների բաժնի թիվ 31 ծան.: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 79, էջ 40-43):

Զրույցներ Վահան Տերյանի մասին (3)
Գրի է առնվել 1947-ի օգոստոսի 17-18-ին, Գանձայում: Հուշ-զրույցներ պատմողները, բացի Սեդրակ Հախվերդյանից, Վահանի խաղընկերներն են եղել: Զրույցները գրի եմ առել բարբառով, որպեսզի պահպանեմ միջավայրի կոլորիտային համն ու հոտը:

Պատմողներն են՝ Մեսրոպ Անտոնյանը, Միսակ Գրիգորյանը,, Սեդրակ Հախվերդյանը: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 74, էջ 1-21):

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԱՆՈՒՇ ԱՊԼԱՅԻ ԵՐԳԵՐԸ

Հորինել է 1930-ական թվականներին: (Բնագիրը տ. իմ ԱԱ թիվ 68, էջ 44, 46, թիվ 75, էջ 147-148):

ՀԱՎԵԼՎԱԾ 4. Միքայել Հովսեփյանի ստեղծագործություններից... Ներկայացված է Միքայել Հովսեփյանի (Ջավախք. գյուղ Փոկա) մեկ տասնյակի հասնող առաջին շրջանի ստեղծագործություններից փոքրիկ մի փունջ, ուր, աներևույթ ու աշկարա, ներկա են հարազատ լեռնաշխարհի համն ու հոտը, բուրմունքը, կանչող գունապատկերները: (Կազմող և պատասխանատու խմբագիր՝ Ռ. Ղարիբյան):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 5
Հեղինակի կողմից 26

ՋԱՎԱԽՔԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՊԱՏՄԱ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ 31

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՋԱՎԱԽՔԻ ՀԱՅՈՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆՑԱՂԸ 73
Երկրագործական չորս համակարգերն էին. 83
Բերքահավաքը և նրա տեխնիկան 89
Կալսոցը և նրա տեխնիկան 93

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԱՆԱՄՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱԹՆԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ 95

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ 115

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՆԵՐ 139

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ
ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ 147
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ 147
ՇԵՆՔԵՐ 160
ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ 192
ԿԱՀԿԱՐԱՍԻ 201

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ
ԶԳԵՍՏՆԵՐ ԵՎ ԶԱՐԴԵՐ 209
ԳՅՈՒՂԱԿԱՆ ԱՐԱԿԱՆ ՍԵՌԻ ԶԳԵՍՏՆԵՐ 222

ՁԱՎԱԽՔԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՐՎԵՍՏԸ 255

ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ 257

ՏՐԹԱՏ ԹԱՔԱՎՈՐԻՆ ԲԵՐԹԸ 258
ՆԱԴԻՐ ՇԱՀՆ ՈՒ ՀԱԿՈԲ ՄԶՄՆԱՆ 258
ԿԱԹՔԱՐԸ 262
ՄՈՒՐՃԱԽԵԹՈՒ ԿԱԹՔԱՐԸ 263
ԽԱՉԱՓԱՅՏԻ ԱՂԲՅՈՒՐԸ 264
ՄՇՈ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ 264
ԽՈՋԱՊԻՆ ԼՃԻ ԱՆՈՒՆԸ 264
ԱՆԻ ՔԱՂՔԻՆ ԱՆԱՍՏՎԱԾՆԵՐԸ 265
ՀԱՐՍ - ՂԱՐՍ 266
ՀԱՅԲԱՇ - ՀԱԲԱՇ 266
ՀԱՅՐ ԱԲՐԱՄԻՆ ՏՂԵՆ 267
ՄԱՐԻԱՄ ԱՍՏՎԱԾԱԾԻՆԸ 267
ՁՈՒԿ ԴԱՌՅՈՂ ԻՐԻՍԿԻՆԸ 268
ՔԱՐՎԱՆ - ՂԲՌԱՆ 269
ԿԱՂԸՆԴԻՆ ԳԻՇԵՐՎԱ ՁՈՒՐԸ 269
ՃՔՆԱՎՈՐ ՏՂԱՆ 270
ՄԵՂԱՎՈՐՆԵՐԻ ՔԵԽԵՐԸ 271
ՀԱԲԱՇ ԷՐԹԸՅՈՂ ՏԵՐՏԵՐԸ 272
ՀԱՅԵՐԻ ՈՒ ԵԶԴԻՆԵՐԻ ՖԱՐԴԵՆ 273
ԳԱՅԼԵՐԻ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՀԱՅԸ 273
ՕՁԱՂ ԽԱՌՆՈՂ ՀԱՅԸ 273
ՔԱ՞Մ, ԹԵ՞ ՉԸՔԱՄ 274
ՕՉԻԼԸ՝ ՄԱՏԱՂ 274

ՀԵՔԻԱԹՆԵՐ 275
ՂԱՍԱԲՕՂԼԻ 276
ԴԱՐՎԵՇԸ 290
ՊԵԽՈ 299
ՃԻՏՈՒ ԽՐԱՏԸ 305
ՃԱԿԱՏԱԳԻՐԸ 307
ՆԱԽԸՐՃԻՆ ՈՒ ԹԱՔԱՎՈՐԻ ԱԽՉԻԿԸ 312
ՋՐԱՏԱՐՆ ՈՒ ԳԱՅԼԱՏԱՐԸ 315

ԹԱՔԱՎՈՐԻՆ ԿԸՆԿՏԻՔԸ 322
ՕՑՆ ՈՒ ՄԱՐԹԸ 326
ԻԾՈՒ ԴԵՄ ԽԱՂՑԱԾ ԹԱՔԱՎՈՐԸ 328
ԿԱՐԿՏԻ ՏԱՐՎԱ ՀԱՐՍԸ 330
ԹԱՔԱՎՈՐ ԳՈՂՑՈՂ ՏՂԵՆ 332
ԿԵՑԻ ՄԵՄ ՉԱՐԽ ՈՒ ՖԱԼԱԿԻՍ ԱՇԵՄ 341
ՀԱՎՔԵՐՈՒՆ ԹԱՔԱՎՈՐԸ 343
ԱՍՏՎԱԾ ՕՐ ՉԸՏԱ, ՄԱՀՄՈՒԴՆ Ի՞ՆՉ ԷՆԵ 345

ԶՐՈՒՅՑՆԵՐ, ԱՌԱԿՆԵՐ ԵՎ ԶՎԱՐՃԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ 347

ՀԱԼԱԼ ՈՒ ՀԱՐԱՄ ՍԵՐՄԵՐԸ 348
ԷՏ ԷԼ ՉԻ ՄՆԱ 349
ԱՏԱՆՔ ՕՐ ՉԸԼԼԻՐ, ԱՍԱՆՔԱ ՉԷՐ ԸԼԼԻ 351
ԻՄԱՍՏՈՒՆ ՍՈՂՈՄՈՆՆ ՈՒ ՔՈՌ ԲՈՒԲԲՈՒՆ 353
ԻՄԱՍՏՈՒՆ ՏՂԱՆԵՐԸ 355
ԻՄԱՍՏՈՒՆ ՍՈՂՈՄՈՆԻՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳԻՆԸ 356
ԻՄԱՍՏՈՒՆ ՍՈՂՈՄՈՆՆ ՈՒ ՍԱՏԱՆԵՆ 357
ՍՈՒՐԲ ՍԱՐՔԻՍԸ 358
ԱԿՈԲ ՊԱՏՎԻՐԱՔՆ ՈՒ ՍՈՒԼԹԱՆԸ 360
ՊՅՈՏՐ ՎԵԼԻՔԻՆ ՈՒ ՎԱՐԹԱՊԵՏՆԵՐԸ 362
ԿԱՇԱՌՔՎԱԾ ՏԵՐՏԵՐԸ 365
ՄԵԿ ՕՐԸ ՏԱՍԸ ՏԱՐԻ 366
ՏՈՒՆ ՇԻՆՈՂ ՏՂԵՔԸ 367
ԱՌԱՆՑ ԲԱԽՏԻ ԲՐԴՈՒՃ ՉԵՍ ՈՒՏԻ 368
ՕԽՏՆ ԱԽՊՈՐ ԱՌԱԿԸ 369
ԼՈՐԵՐՆ ՈՒ ԾՈՒՅԼ ՀՆՁՎՈՐԸ 370
ՏԵՐՏԵՐԻՆ ՀԱՐՄՆԻՔԸ 371
ՏԵՐՏԵՐՆ ՈՒ ՄՇԱԿԸ 372
ԳԱՓՐԵԼ ՀՐԵՇՏԱԿՆ ՈՒ ԳԵՂԱՑԻՆ 373
ԷՇԻ ԳԵՐԵԶՄԱՆԸ՝ ՍՐԲԱՎԱՅՐ 374
ՎԵՂԱՐԸ ԻԾՈՒՆ ԳԼԽՈՒՆ 375
ԶԱՆԳԻՆԸ 376
ՏԵՐՏԵՐԻՆ ԿԱԹՆՈՎ ՀԱՑԸ 377
ԺԱՄՆ ՈՒ ՋԱՄԻՆ 377
ՎԱՐԹԱՊԵՏՆ ՈՒ ՔՐԹԵՐԸ 378
ՆԱՍԻԲ - ՆԻՍԻԲ ԹԵԲԱՍԻ 379

ՊԱՌՎԻՆ ՆՇԱՆԸ 380
ԳԵՇ ՅԱՐԱ 381
ԳԱՎԱՌԱԳԻՏՈՒՆՆԵՐԸ 381
ՄԱՀՏԵՍ ՄԱՐԴԸ 383
ՏԵՐՏԵՐՆ ՈՒ ՏԻՐԱՑՈՒՆ 383
ՂԱՌՂԱՌ ԾՆՈՂ ՄԱՐԴԸ 385
ՀԱՎԿԻԹ ԱԾՈՂ ՄԱՐԹԸ 385
ԽԱԲՎԱԾ ՀԱՐՄՆԵՐԸ 386
ՄԱՐԹ ՈՒ ԿՆԻԿ 386
ՄԱՐԹ, ԸՍԵ ԳԵԼԸ 387
ՔՐԴՈՒ ՏՂԵՆ 389
ԵՐԵՔ ՀԱՐՈՒՐ ԳԴԱԼԸ 389
ՆԱՆՆԻԿ, ԲԱԼԱ ՋԱՆ, ՆԱՆՆԻԿ 390
ՇԱՅՄԱՐ ՕՑԻ ԱՌԱԿԸ 391
ՕՁՆ ՈՒ ՄԱՐԴԸ 391
ՎՐԵԺԽՆԴԻՐ ՕՁԸ 392
ՄԵԾԱԳԼՈՒԽ ԴԱՏԱՎՈՐԸ 392
ԵՐԿՈՒ ՆՎԵՐ 393
ԱՐՅՈՒՆՈՏ ՁԵՌՔԵՐՈՎ ՄԱՐԴԸ 394
ՀԱՐՈՒՐ ՏԱՐՎԱ ՔՆԱԾ ՄԱՐԹԸ 394
ՀՆԱՁԱՆԴՆԵՐԸ 395
ԴՈՎԼԱԹԸ ՇԻՏԿԸՎԱՎ 395
ԾՈՒՅԼ ՏՂԵՆ 396
ՊԱՌԿԱԾ ԿԸ ՔԱՂԵՄ 397
ԹԱՄԲԱԼԸ 397
ԱԼԱՐ ԷԼ ՉԵՍ ԷՆԵ, ԽՈՍԻՍ ԿԸ 398
ՍՏԱԽՈՍԸ 398
ԲՈՇԻՆ ԱԽՉԻԿԸ 399
ՉԵՓՉԻ ՄՈՒՍՏԱՖԱՆ 400
ՄԻՍԸ 400
ՀԻՄԱՐ ՈՐԴԻՆ 401
ԿՈՒՅՐ ՁԻՈՒՑ ԳՈՂԱՑՈՂ ՏՂԱՆ 401
ՏԵՐՏԵՐԻ ՄԻՐՈՒՔԸ 402
ՁԿՆԿՈՒԼԸ ԹՈՌՆ Է ԸՆԿԵ 403
ՏԵՐՏԵՐՆ ՈՒ ԿԻՆՏՈՆ 404
ԳԻՏՈՒՆ ՊԱՀԱԿՆԵՐԸ 404
ՊԵՇԲԵԹԱՐ 405

ՏԸԲԸՌ ԱԿՈՆ 405
ՀԱՐՍ ՈՒ ԿԵՍՈՒՐ 406
ՍԱՏԱՆԵՆ ԿԸՍԵ 407
ԲՌԱԹԸ 407
ՎԱ՜Յ, ԲՌԱԹ ՋԱՆ, ԿԵՂՏՈՏԵՍ ԿԸ 408
ԱՄԱՆ ՋԱՐԴՈՂ ՀԱՐՍԸ 408
ԴՈՒ ՉԸՍԻ՞Ր 409
ՎԱՐԹԱՊԵՏՆՈՒՆ ՊԱՐԸ 409
ԱԼԻՆ ՈՒ ԿԱՐԿՈՒՏԸ 410
ԷՇՆ ՈՒ ԹՐԻՔԸ 411
ԴԱՎԵՆ ԲՈՍՏԸՆԻՆ ՄԵՋ 411
ԴԱԼԻ ԲԱՐՍԵՂԸ 411
ՄԱՄՄԱԴԻ ՄԱԼԸ 412
ԷՓԻ, ԷՓԻ, ԷՓՆ Ի ՎՐԱՆ 412
ԿԱՆԱՆՑ ԲՈՂՔԸ 413
ԷՇԵՐԻ ԳԱՆԳԱՏԸ 413
ՄՇԱԿ՝ ՀԱՑՆ ԻՐԵՆԵՆ 414
ՀԵԼԵԼՆ ՈՒ ԱՌՅՈՒՇԸ 414
ՖԱԼԼՈՒՄՆ ՈՒ ՉԱՐՈՒԽԸ 414
ՏՆԵԳՈՂ ՏՂԵՆ 414
ՄԵՎ ԵԶԸ 415
ՂԱՐԻԲ ՄԱՐԹՈՒՆ ՏՂԵՆ 415
ՊԱՌՎԻՍ ՄԵԿ ԷԼ ՏԸՆԿՏԸՆԿԱՑՈՒ 416
ԷՌՍՈՒՆ ԴԱԳԻՆԱԿ 416
ՈՒՂՏԻ ՎԱԽԸ 417
ՈՐՍՈՐԴՆԵՐԸ 417
ԽՈՐԱՄԱՆԿ ԱՂՎԵԶԸ 419
ԱՆՏԵՐԸ ՏԱՐ, ԹԵՐՄԱՇԸ ԲԵՐ 420
ԲԱԶԻ-ԲԱԶԻ 420
ՄԵՌՆԻ ԿԻՆ, ԱՌՆԻ ՔԵՆԻՆ 420
ԵԹԵ ՎԱՅԼԵՆ 421

ՍՐԱՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆԵԿԴՈՏՆԵՐ ԵՎ ՀՈՒՄՈՐԵՍԿՆԵՐ 423

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ 481
Ժողովրդական երգեր (Գութանի երգեր) 482
Սիրո երգեր 487

Խաղիկներ 509
Մանիներ (Ծալկահայոց բանարվեստը) 516
Պանդխտության Երգեր 531
Պարերգեր 533
Հայրենասիրական երգեր 562
Կենցաղային երգեր 574
Խառն երգեր 583
Աղոթքներ 604

Վիպական բանաձևային ստեղծագործություններ 608
Շուտասելուկներ 616
Առածներ և ասացվածքներ 617
Երդումներ 645
Օրհնանքներ 646
Անեծքներ 649

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 655

Հավելված 1
Թուրքերեն վիճակի երգերը
Փոքր Խանչալլի գյուղում: 656

Հավելված 2
Զրույցներ գրողների մասին 669
Գրիգոր Նարեկացի 669
Աշշըղ Ջիվանին մշակ 673
Զրույցներ Վահան Տերյանի մասին 675

Հավելված 3
Անուշ ապլայի երգերը 683

Հավելված 4
Միքայել Հովսեփյանի ստեղծագործություններից 687

ՉԱՓԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ ԵՎ ՄԻԱՎՈՐՆԵՐ 696
ԲԱՌԱՐԱՆ 701
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 707

Վարդ Հարությունի Բդոյանը ծնվել է 1910 թվականի մարտի 4-ին, Ջավախքի Փոքր Խանչալլի գյուղում (այժմ՝ Վրաստանի Հանրապետության Նինոծմինդայի շրջան): Ազգագրագետ-բանահավաքը 1959-1986 թվականներին եղել է ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող: Հավաքել և հրատարակել է հայ ազգագրությանն ու բանահյուսությանը վերաբերող արժեքավոր բազմաթիվ նյութեր: Առանձին գրքերով լույս են տեսել «Հայ ժողովրդական խաղեր» (3 հատորով. 1963-1983թթ.), «Երկրագործական մշակույթը Հայաստանում» (1972թ.) աշխատությունները և «Հայ ազգագրություն» (1974թ.) ուսումնական ձեռնարկը: Պատմական գիտությունների դոկտոր է 1970 թվականից: Հեղինակ է բազմաթիվ գիտական հոդվածների: «Ջավախքի հայոց ազգագրությունը և ժողովրդական բանարվեստը» ծավալուն աշխատությունը, որը մեծարժեք ներդրում է հայագիտության բնագավառում, ցավոք, լույս է տեսնում հետմահու: Վաստակաշատ գիտնականը իր մահկանացուն կնքել է 1986 թվականի փետրվարի 19-ին, Երևանում:

ՎԱՐԴ ԲԴՈՅԱՆ

ՋԱՎԱԽՔԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՐՎԵՍՏԸ

Պատասխանատու խմբագիր՝ Ռաֆայել Ղարիբյան
Խմբագիրներ՝ Լիլյա Մելքոնյան, Լիլիթ Ստեփանյան
Գեղարվեստական խմբագիր՝ Արմեն Պատվականյան
Համակարգչային ձևավորումը՝ Արևիկ Ղարիբյանի

Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝
Տպաքանակը՝ 500 օր.:

ԵՊՀ հրատարակչություն
Երևան, Ալ. Մանուկյան 1